Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

ՀԱՅ ԴԱՍԱԿԱՆՆԵՐԻ
ԳՐԱԴԱՐԱՆ

ԾԵՐԵՆՑ

ԵՐԿԵՐ

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ»
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ– 1985

ԳՄԴ 84 Հ1
Ծ 450

Տեքստը կազմեց՝ Ռ. Գ. ՍԱՐԳՍՅԱՆ

Մերենց
Ծ 450 Երկեր/ Տեքստը կազմ.՝ Ռ. Գ. Սարգսյան.— Եր.: Սովետ. գրող, 1985.—640 էջ.—(Հայ դաս. գ-բան).
Հատորում զետեղված են գրողի երեք պատմական վեպերը՝ «Թորոս Լևոնի», «Երկունք Թ դարու» և «Թեոդորոս Ռշտունի»։

4702080100 ԳՄԴ 84 Հ1
Ծ 705(01)85 85 «Տ»

© «Սովետական գրող»— կազմելու, առաջաբանի և ձևավորման համար

ՊԱՏՄԱԿԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆ ԻՄԱՍՏԱՎՈՐՈՒՄԸ

Ժողովրդի և նրա գրականության պատմության մեջ լինում են շրջաններ, երբ հասարակական հրատապ խնդիրների թելադրանքով պատմական հիշողությունը տիրապես ներխուժելով արդիականություն՝ դառնում է ազգային ինքնագիտակցման և ինքնադրսևորման կարևորագույն լծակներից մեկը։ Մեր գրականության համար այդպիսի շրջան էին XIX դարի 70—80-ական թվականները։ Գրականության զարգացման ներքին օրինաչափությունների խորհրդով Ծերենցն ու Ռաֆֆին, որոշ ժամանակ անց նաև Մուրացանը, ոչ միայն ստեղծեցին, այլև բարձր մակարդակի հասցրին մեր դասական պատմավիպասանությունը։

Ռաֆֆու պատկերավոր արտահայտությամբ՝ մեր նոր շրջանի գրականության մեջ «Աբովյանի «Վերք Հայաստանին» հրաբխային զորության առաջին ժայթքումն էր»։ Այդ ժայթքումը ռուս-պարսկական պատերազմի ընթացքում մեր ժողովրդի մղած ազատագրական պայքարի կախարդական արտացոլումն էր։ Եվ ահա, հիսուն տարի անց, 1876 թ. ռուս թուրքական պատերազմով հայությանը համակած հայրենասիրության պոռթկումը կյանքի կոչեց Ծերենցի ու Ռաֆֆու դասական պատմավիպասանությունը։

Կարճ ժամանակահատվածում Ծերենցը հանդես եկավ «Թորոս Լևոնի», «Երկունք Թ դարու» և «Թեոդորոս Ռշտունի» պատմավեպերով։ Իր ստեղծագործությամբ Ծերենցը առաջադրեց ազգային գործունեության մի ամբողջական ծրագիր, որը շոշափում էր մեր ժողովրդի գոյության կարևորագույն հարցադրումները՝ օտարերկրյա գերիշխանություն և ազատություն, ազգային ճակատագիր ու բնավորություն, ժողովրդի և անհատի փոխհարաբերություն, ազգային ու անձնական ներքին պատասխանատվության զգացում։

Մեր պատմավիպասանությունն այնուհետև հասավ գեղարվեստական ավելի բարձր մակարդակի, բայց Ծերենցը մնաց մեր պատմավիպասանության առաջին մեծ ճամփորդներից մեկը, որ քայլելով պատմության քառուղիներով՝ անցյալի փորձով ձգտեց ոչ միայն իմաստավորել ներկան, այլև լուսարձակել ապագան։

1

Ծերենցը (Հովսեփ Շիշմանյան) ծնվել է 1822 թ. սեպտեմբերի 16-ին Կ. Պոլսում: Հովսեփը վաղ է կորցնում իր ծնողներին, մորը՝ երբ ընդամենը երեք տարեկան էր, իսկ հորը՝ տասնմեկ տարեկան հասակում:

Մի տարի Կ. Պոլսի Միջագյուղի Լուսավորչյան վարժարանում սովորելուց հետո 1831-ին նրան ուղարկում են Վենետիկ՝ Մխիթարյանների մոտ ուսանելու: 1837 թվականին Ծերենցը վերադառնում է Կ. Պոլիս և ուսումը շարունակելու անհաջող փորձից հետո չնչին վարձատրությամբ ընդունվում է դեղագործի աշակերտ:

Ծերենցի երիտասարդությունը համընկնում է արևմտահայ իրականության մեջ ծավալվող Ազգային զարթոնքի բուռն իրադարձություններին: Արմատական փոփոխություններ են տեղի ունենում հասարակական գիտակցության բնագավառում: Ծավալված լեզվապայքարում աշխարհաբարը վերջնականապես կենսահաստատում է իր գոյության ու զարգացման իրավունքը: Մեծ թափ են ստանում մամուլը, հայրենասիրական դրամատուրգիան, թատրոնը, գրականությունը: Հասարակական կյանքում ձևավորվում են հակոտնյա՝ առաջադիմական և հետադիմական դիրքորոշումներ ու խմբակցություններ: Կազմակերպվում են ընկերություններ:

Կյանքի փորձով, անհագ ընթերցանությամբ ու հարցասիրությամբ ձեռք բերած իր գիտելիքներով, երիտասարդական խանդավառությամբ Ծերենցը ներգրավվում է առաջադեմ երիտասարդության ծավալած հասարակական գործունեության մեջ: Նա անդամակցվում և գործունյա մասնակցություն է ունենում 1846 թվականին Մ. Պեշիկթաշլյանի գլխավորությամբ հիմնադրված Համազգյաց ընկերության աշխատանքներին: Այդ տարիներին Ծերենցը Կ. Պոլսի Միջագյուղի Լուսավորչյան վարժարանի ուսուցիչն էր:

1848 թվականի սկզբներին բժշկություն ուսանելու նպատակով Ծերենցը մեկնում է Փարիզ: Դասավանդելով Մխիթարյանների Մուրադյան վարժարանում, նա սովորում է Սորբոնի համալսարանի բժշկական բաժնում: Ծերենցի Ֆրանսիա ժամանելու օրերին 1848 թվականի փետրվարյան բուրժուադեմոկրատական հեղափոխությունը արդեն հաղթանակել էր, և նա ականատես է լինում այն խանդավառությանը, որ իշխում էր Փարիզում: Բայց փետրվարին հաջորդում են հունիսյան իրադարձությունները, երբ Փարիզի բանվորությունը ապստամբում ու հանդես է գալիս իր ինքնուրույն պահանջներով: Ընդունելով փետրվարյան հեղափոխությունը՝ Ծերենցը չընմբռնեց ու չհասկացավ հունիսյան դեպքերի պատմական էությունը: Նրան թվում էր, որ եթե չլինեին աշխատավորության ելույթները, ֆրանսիական բուրժուազիան չէր դաշնակցի միապետության ու Վատիկանի հետ, և երկրում չէր հաստատվի բացահայտ հետադիմական իշխանություն: Պոլսահայ իրականության փորձից ելնելով՝ նա գտնում էր, որ բոլոր առաջադեմ ուժերը պետք է համախմբվեն և միասնական ճակատով պայքարեն ավատական հետամնացության դեմ: Բայց Ֆրանսիայում դրությունը այլ էր: 1848 թվականի փետրվարյան բուրժուադեմոկրատական հեղափոխությամբ այդ խնդրի վերջնական լուծումով խորտակվել էր նաև երրորդ դասի ներքին միասնությունը, և բանվոր դասակարգը հանդես էր գալիս իր ինքնուրույն շահերի գիտակցությամբ: Տվյալ հարցում Ծերենցը,

ըստ էության, հետևում էր ֆրանսիացի ժամանակակից պատմաբաններ Օ. Թիերիին, Ֆ. Գիզոյին ու Ժ. Միշլեին, որոնք, չընմբռնելով հունիսյան իրադարձությունների պատմական օրինաչափությունը, այն համարեցին պատմական անբացատրելի թյուրիմացություն և մոլորություն:

Տվյալ ժամանակաշրջանում Փարիզում սովորող հայ ուսանողները 1849 թ. ապրիլի 27-ին հիմնում են Արարատյան ընկերությունը, որի ատենադպրությունը ստանձնում է Ծերենցը: Ավարտելով ուսումը և ստանալով բժշկի վկայական՝ 1853-ին Ծերենցը վերադառնում է Կ. Պոլիս: Աշխատելով իր նոր մասնագիտությամբ՝ նա միաժամանակ ամբողջությամբ նվիրվում է հասարակական գործունեության:

Դեռևս Փարիզում գտնվելու ժամանակ Ծերենցը ականատես է լինում ծայրահեղ հետադիմական ուժերի ու Վատիկանի անսքող դաշնությանը: Վերադառնալով Կ. Պոլիս՝ նա բախվում է կաթոլիկ հայերի հովվապետ Անտոն Հասունյանի հետ: Ծերենցը դավանափոխության դեմ պայքարում էր ազգային ուծացման վտանգի գիտակցումով, աչքի առաջ ունենալով նաև Լեհաստանի հայության կորուստը: Հասունյանի դեմ պայքարել են շատերը, բայց այդ պայքարի ճանաչված ղեկավարը, Հ. Պարոնյանի արտահայտությամբ, «հակահասունյաններու հրամանատարը», Ծերենցն էր:

1860 թ. մայիսի 24-ին Կ. Պոլսի Ազգային ժողովը ընդունում է Արևմտահայության ներքին կյանքը կարգավորելու կոչված Ազգային սահմանադրությունը (սուլթանական կառավարությունը այն վավերացրեց 1863 թ. մարտի 17-ին): Չնայած դրանով նախատեսված խիստ սահմանափակ իրավունքներին, այն որոշակի աշխուժացում է մտցնում ազգային կյանքում:

1866 թ. սեպտեմբերի 1-ին Մ. Պեշիկթաշլյանի, Ծերենցի, Ս. Թագվորյանի և այլոց գործուն մասնակցությամբ Կ. Պոլսում հիմնադրվում է Բարեգործական ընկերություն հայոցը: Մինչ այդ կազմակերպված բոլոր ընկերությունների համեմատությամբ՝ Բարեգործականը, անկասկած, ամենաարմատականն էր: Արևմտահայությանը հայ հողում պահելու ու զարգացնելու նպատակով ընկերության կանոնադրությունը նախատեսում էր հասարակատնտեսական լուրջ միջոցառումներ:

Բայց դա երևույթի սոսկ երևացող կողմն էր, կային նաև քաղաքական բնույթի հետևում գնացող նպատակադրումներ՝ մասնավորապես կապված Կիլիկիայի հետ: Դեռևս 1860 թ. փետրվարին արևմտահայ հասարակական առաջադեմ գործիչ Գալուստ Կոստանդյանը իր «Միություն, միաբանություն» հոդվածում նշելով, որ Ռուբինյան թագավորության անկումից հետո ցրվելով աշխարհով մեկ, հայության մի մասը իսպառ կորել է, գրում էր. «Հայաստանը մերկ է և կործանված, յուր զավակները օտարացած և ցրված՝ միշտ կորսվելու ենթակա: Եվ մեր պարտքը ի՞նչ է հիմա. **չկորսվելու համար ճար մը գտնելու ջանալ»:** Անհրաժեշտ է նոր կենտրոնացում, բայց ո՞ր, ինարկե, Հայաստանի մեջ: Նրա կարծիքով, սակայն, նոր ժամանակներում տնտեսությունն ու մշակույթը առավելապես զարգանում են ոչ թե մայրցամաքների ներքին տարածություններում, այլ ծովեզերքներում... «Այսու պատճառավ,— եզրակացնում է նա,— **պետք եմք** ընտրել այնպիսի երկիր մը, ուր թե՛ հայրենիք **եղած ըլլա և՛ թե ընդարձակ** ծովեզր մը ունենա: Այսպիսի երկիր մը կրնամք **կա** ըսել,

ցուցընելով Կիլիկիան» («Միություն». հանդես Հաշտենից, Զմյուռնիա, 1860, № 4, էջ 27):

Արևմտահայ առաջադեմ գործիչների հետաքրքրությունը Կիլիկիայի նկատմամբ առավել սրվեց ու հստակվեց դեռևս 1860 թ. ամռանը զեյթունցիների կողմից Մարաշի կառավարիչ Խուրշիդ փաշայի զորքերը փախուստի մատնելու, 1860 և 1861 թվականների ընթացքում Մ. Նալբանդյանի Կ. Պոլիս գտնվելու և հատկապես 1862 թ. կեսերին Զեյթունի հերոսական ապստամբության ընթացքում:

Բարեգործական ընկերության հանձնարարությամբ Զեյթունի ապստամբության նախօրյակին Ծերենցը մեկնում է Կիլիկիա, բայց Անտոն Հասունյանի բանսարկությունների հետևանքով ապստամբության սկզբում՝ կառավարության հրամանի համաձայն, ստիպված է լինում վերադառնալ Կ. Պոլիս:

Զեյթունի ապստամբությունը առաջ բերեց ազգային ինքնագիտակցության հզոր վերելք: Նահապետ Ռուսինյանն ու Արմենակ Հայկունին հանդես եկան Կիլիկիային և զեյթունցիներին նվիրված բանաստեղծություններով, Մկրտիչ Պեշիկթաշլյանը՝ իր ոգեշունչ Զեյթունյան երգաշարով: Հենց այդ թվականներից Ծերենցի մոտ ևս տևական հետաքրքրություն է առաջանում Կիլիկիայի նկատմամբ, որի արտահայտությունը ոչ միայն հետագայում գրված նրա առաջին՝ «Թորոս Լևոնի» պատմավեպն է, այլև «Կիլիկիա» հանգամանալից ուսումնասիրությունը:

Վերոհիշյալ դեպքերից հետո մոտ 10 տարի Ծերենցը աշխատում է որպես դատական բժիշկ, ապա տեղավորվում է Կ. Պոլսի հիվանդանոցներից մեկում: 1868 թ. նոյեմբերի 29-ին մահանում է հայ մեծ բանաստեղծ Մկրտիչ Պեշիկթաշլյանը: Ծերենցի նախաձեռնությամբ ու անմիջական մասնակցությամբ, որ բանաստեղծի ամենամոտ գաղափարակիցն ու մտերիմն էր, սեղմ ժամկետում հավաքվում են նրա գրեթե բոլոր ստեղծագործությունները և 1870 թվականին Կ. Պոլսում լույս է տեսնում «Մատենագրությունք» խորագրով Մ. Պեշիկթաշլյանի նշանավոր ժողովածուն:

Նույն այդ տարիներին կարճ ժամանակով Ծերենցը նշանակվում է Կ. Պոլսի Միջազգային Լուսավորչյան վարժարանի տնօրեն: Թարգմանչաց վարժարանից այստեղ տեղափոխված Գրիգոր Զոհրապը հետագայում գրված իր «Ուղևորություն մը հիշատակներու մեջ» ակնարկաշարում դրվատանքով է հիշում իր տնօրեն-ուսուցչին.

«Տնօրենը միջահասակ մեկն էր. հաստաբուն և կայծակնահար ծառի մը նոճին տպավորությունը կթողուր զինքը տեսնողին վրա. արևակեզ ու թխաթույր դեմքին խստությանը տակ անուշությունը կպահվըտեր...

Իր ալևորած մազերը կերկարեին, կծփային ուսին վրա բանաստեղծի մը, արվեստագետի մը հողմածածան մազերուն պես, ու ճերմակած մորուքն կուրծքին վրա փռված, վեհության շուքը կավելցներ իր պատկառելի երեսին վրա:

Զայնը խորունկեն եկող արձագանքի մը պես թավ ու տրտում շեշտ մը ուներ:

Այդ տնօրենը տոքթոր Շիշմանյանն էր:

...Վերջեն թողուց գնաց զմեզ, ամենուս հոգվույն մեջ դնելով իր մեծ հոգիեն մաս մը»(«Մասիս», Կ. Պոլիս, 1893, № 3978):

1874 թվականին, կնոջ մահից հետո, Ծերենցը մնում է իր 14-ամյա աղջկա՝ Թագուհու հետ:

1876 թ. հունվարին Ծերենցը դստեր հետ մեկնում է Կիպրոս: Մոտ մեկուկես տարի մնում են Կիպրոսում: Ազատագրական տրամադրությունների վերելքի այդ օրերին Ծերենցը մտահղանում ու սեղմ ժամկետում (1877 թ. հունվար-ապրիլ) գրում է իր «Թորոս Լևոնի» պատմավեպը, որը նույն՝ 1877 թվականին լույս է տեսնում Կ. Պոլսում:

Մինչ այդ արդեն սկսվել էր 1877—1878 թվականների ռուս-թուրքական պատերազմը, ռուսական զորքերի ու ժողովրդական աշխարհազորի հաղթարշավը: 1878 թ. փետրվարի 19-ին (մարտի 3) Սան-Ստեֆանոյում կնքված խաղաղության պայմանագրի 16-րդ հոդվածի համաձայն՝ որոշակի ազատություններ էին նախատեսվում նաև արևմտահայության համար: Սակայն նույն՝ 1878 թ. հունիսին Անգլիայի պահանջով տեղի ունեցած Բեռլինի վեհաժողովը ի չիք դարձրեց այդ հույսերը:

Հենց այդ օրերին Ծերենցը իր դստեր՝ Թագուհու հետ հեռանալով Կիպրոսից, Զմյուռնիայի վրայով վերադառնում է Կ. Պոլիս: Մի քանի ամիս ապրելով Պոլսում, 1878 թ. հոկտեմբերին Ծերենցը հեռանում է այնտեղից և բնակություն է հաստատում Թիֆլիսում:

Արևելահայ մտավորականությունը ջերմորեն է ընդունում Ծերենցին: Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում նա դասավանդում է հայոց պատմություն, գրականություն ու ֆրանսերեն:

Շարունակելով ստեղծագործել՝ Ծերենցը գրում ու Թիֆլիսում հրատարակում է «Երկունք Թ դարու» (1879) և «Թեոդորոս Ռշտունի» (1881) պատմավեպերը:

1879 թ. ապրիլի 29-ին Ծերենցը Թիֆլիսում հանդես է գալիս Կիլիկիայի անցյալին ու ներկային նվիրված հրապարակային դասախոսությամբ, որը տպվում է «Փորձ» հանդեսի 1879 թ. № 11-ում (էջ 1—30): «Փորձում» լույս են տեսնում նաև նրա «Ժամանակիս ոգին և հայ ապագան» և «Ամանյան ինքնակալություն. Տաճկահայք և Ռուսահայք» ուշագրավ հոդվածները:

Տեղին է նշել, որ վերը հիշատակված գրական-հասարակական աշխատանքներին զուգահեռ՝ Ծերենցը գրեթե իր ողջ գիտակցական կյանքի ընթացքում ծավալել է նաև հրապարակախոսական աշխույժ գործունեություն: Դրա վկայությունը Հ. Սվազյանի «Մեղու», Մատթեոս Մամուրյանի «Արևելյան մամուլ», ինչպես նաև «Սիոն», «Փորձ» և այլ պարբերականներում լույս տեսած նրա հոդվածներն ու թղթակցություններն են, որոնց մի մասը ամփոփված են նրա «Հրատարակության հավաքմունք» ժողովածուում:

Ամբողջությամբ վերցրած Ծերենցի հրապարակախոսական ժառանգությունը իր ներքին էությամբ հակասական է: Ի տարբերություն նրա գործունեության վերջին տարիներին գրված խիստ ուշագրավ մի քանի հոդվածների՝ 70-ական թվականներին գրված որոշ հոդվածներ ու ելույթներ ժամանակակից հայացքով ակնհայտորեն վիճելի են:

Ժամանակակիցների վկայությամբ Ծերենցը եղել է փխրուն բնավորության տեր անձնավորություն, չափազանց արագ ու անմիջականորեն է արձագանքել ազգային կյանքի թե՛ նպաստավոր, թե՛ աննպաստ երևույթներին: 1876 թ. հոկտեմբերին Զմյուռնիայի «Արևելյան մամուլում» տպված իր մի հոդ-

վածում Ծերենցը հայտարարում է, որ ինքը վերեն և ոչ թե վարեն եկող հեղափոխությունների կողմնակից է, որովհետև վարեն եկող հեղափոխությունները մեծ արյունահեղություններ են պահանջում: Գրեթե լրիվ անտեսելով Ծերենցի այս միանգամայն սխալ ընդհանրացման անմիջական շարժառիթը (1876 թ. բուլղարների ապրիլյան ապստամբության գազանային հաշվեհարդարը թուրքերի կողմից), որոշ ուսումնասիրողներ հեռուն գնացող ընդհանրացումներ են կատարել առհասարակ նրա աշխարհայացքի մասին: Բայց չէ՞ որ ընդամենը մեկ տարի անց լույս է տեսնում նրա «Թորոս Լևոնի» վեպը, ուր բացահայտորեն գովերգվում է ազատագրական զինված պայքարը:

Այո՛, անվիճելի է, որ իր հոդվածներում Ծերենցը հաճախ արտահայտել ու պաշտպանել է վիճելի, երբեմն բացահայտորեն սխալ տեսակետներ, որոնց պատճառը, անկասկած, առաջին հերթին օսմանյան վայրագ ինքնակալության պայմաններում արևմտահայ հասարակաքաղաքական կյանքի թերզարգացածությունն էր:

Բայց հազիվ թե ճիշտ կլինի այդ թյուր կարծիքները բացարձակացնել ու տարածել նրա գեղարվեստական ժառանգության վրա: Տվյալ դեպքում, մեր կարծիքով, հավասարապես սխալ կլինի նրա հրապարակախոսության ու գեղարվեստի թե՛ լրիվ հակադրությունը (քանի որ այդ ըմբռնումների ինչ-ինչ արձագանքներ զգացվում են նրա գեղարվեստական ստեղծագործության մեջ), թե՛ լրիվ հավասարեցումը: Հրապարակախոսության մեջ նրա արտահայտած ըմբռնումները երբեմն խաչաձևվում են նրա գեղարվեստական ելակետների հետ, բայց երբեք չեն նույնանում:

1880 թվականին Արևմտահայաստանում սովի ու հիվանդությունների բռնկման կապակցությամբ որպես բժիշկ Ծերենցը մեկնում է այնտեղ, լինում է Վանում, Ալաշկերտում, Բասենում: Բեռլինի վեհաժողովից հետո Ռուսաստանն ու Անգլիան 1878 թ. սեպտեմբերից հյուպատոսություններ էին հաստատել Վանում: Ռուսաստանի առաջին հյուպատոսը զորավար Կոստանդին Կամսարականն էր, որ մասնակցել էր պատերազմին և նշանակվել Կարինի քաղաքապետ: Համբարձում Երամյանը իր «Հուշարձանի» Ա հատորում գրում է, որ Ծերենցի հետ նա ծանոթացել է Վանում, Կ. Կամսարականի տանը:

Վանում Ծերենցը Կ. Կամսարականի ու Մ. Խրիմյանի հետ ծավալում է ակտիվ գործունեություն: Նրանց կարծիքով՝ այժմյան նոր պայմաններում, ապստամբությունը անիմաստ է, քանի որ «մենք ուժ չունենք Օսման տերությանը հաղթելու»: Նրանք առաջարկում են Կարինում մի մեծ ուսումնարան բաց անել և առհասարակ զարկ տալ լուսավորությանը: Նախքան զենքի դիմելը, նրանց կարծիքով, անհրաժեշտ է գինել արևմտահայ անգեն բնակչությանը, նրան ընդունակ դարձնել գեթ ինքնապաշտպանության:

1883 թվականին Ծերենցը մեկնում է Կ. Պոլիս, ապա Փարիզ և կրկին Կ. Պոլիս: Նա գործոն մասնակցություն է ունենում Մ. Խրիմյանի կաթողիկոսության թեկնածու առաջադրելու գործում:

1885 թվականին մահանում է Ծերենցի դուստրը՝ Թագուհին: Հոգեկան ցնցումի հետևանքով, որոշ ժամանակ անց, Ծերենցը կաթված է ստանում: Այդ վիճակում ևս նա աշխատում, գրի է առնում ինքնակենսագրական նշմարներ, մտորում է հայ ժողովրդի ճակատագրի, իր սերնդի գործիչների կատարած աշխատանքի մասին:

Ծերենցը վախճանվեց 1888 թ. փետրվարի 17-ին և թաղվեց Թիֆլիսի Խոջիվանքի գերեզմանատանը:

Նա մեծ հարգանք է վայելել թե՛ արևմտահայ, թե՛ արևելահայ մտավորականության շրջանում: 1881 թվականին Զմյուռնիայում առանձին գրքով հրատարակելով իր «Անգլիական նամականի կամ հայու մը ճակատագիրը» ստեղծագործությունը՝ Մ. Մամուրյանն այն ձոնում է Ծերենցին: Հ. Պարոնյանը, որ չէր բաժանում Ծերենցի ռոմանտիկական արվեստի սկզբունքները, նշելով, որ նա «Իբրև պատմագետ մեծ համբավ կվայելէ և որուն իրավամբ արժանի է», եզրակացնում է.

«Թե՛ հրապարակի, թե՛ լսարաններու և թե՛ վեպերու մեջ Շիշմանյան էֆենտին աշխատած է և կաշխատի երիտասարդներու սրտին մեջ հայրենասիրություն արծարծել. ուստի յուր խոսքերն միշտ սիրով մտիկ ըլլվելու արժանի են»:

Հ. Թումանյանը, որ Ներսիսյան դպրոցում սովորելու տարիներին լսել էր Ծերենցի հայոց պատմության դասերը, ընթերցել ու ոգեշնչվել էր նրա պատմավեպերով, նրա անվանակոչության առթիվ իր դասընկերների հետ այցելել էր գրողին, Ծերենցի մահվան 25-ամյակի առթիվ՝ 1913 թ. մայիսի 26-ին արտասանած իր խոսքում նշելով, որ «Ծերենցը եղավ մեր նոր պատմական վիպագրության հիմնադիրը» և վերհիշելով իր ուսուցչի մարդկային բարձր արժանիքները՝ շեշտում էր.

«Զգիտեք նրա ազատասեր ոգու վրա հիանաք, նրա վառ հայրենասիրության ու ժողովրդասիրության վրա զարմանաք, նրա հոգու ազնվության մաքրության վրա ուրախանաք, թե սրտի քնքշության ու ճաշակի նրբության վրա»:

2

Ծերենցը «Թորոս Լևոնի», «Երկունք Թ դարու» և «Թեոդորոս Ռշտունի» երեք պատմավեպերի հեղինակ է, որոնք գրել և հրատարակել է 1877—1881 թվականների ընթացքում: Վեպերի գրության հաջորդականությամբ առաջինը «Թորոս Լևոնին» է, որը նկարագրում է Կիլիկիայի պետական անկախության վերականգնման համար 12-րդ դարի կեսերին ծավալված պայքարը, երկրորդը «Երկունք Թ դարու» վեպն է՝ 9-րդ դարի կեսերին արաբական խալիֆայության դեմ հերոսական ընդվզման պատկերումը, երրորդը «Թեոդորոս Ռշտունին» է, որն արտացոլում է 7-րդ դարում արաբների ներխուժումը Հայաստան, և մեր ժողովրդի օրհասական պայքարը նրանց դեմ:

Անկախ վեպերի գրվելու վերոհիշյալ հաջորդականությունից՝ ընդգրկված պատմական ժամանակագրության առումով դրանց գաղափարական միասնությունը ապահովվում է հեղինակի կողմից 7—12-րդ դարերի այն իրադարձությունների ընտրությամբ ու պատկերմամբ, երբ հայ ժողովուրդը ոտքի էր կանգնել իր պատիվն ու ազատությունը պաշտպանելու ու վերականգնելու համար:

Ծերենցի գեղարվեստական հետաքրքրություններից դուրս են պատմության համեմատաբար խաղաղ ու բարեկեցիկ ժամանակների կյանքի պատկերումը: «Երկունք Թ դարու» վեպում իր ուշադրությունը կենտրոնացնելով 9-րդ դարի երկրորդ կեսին ծավալված ազատագրական պայքարի վրա՝ նա բոլորովին չի անդրադառնում այդ պայքարի շնորհիվ քիչ անց Բագրատունյաց

թագավորության հաստատմանը: «Թորոս Լևոնի» վեպում ևս նրա ուշադրությունը հայկական ընդհատված պետականության վերականգնման փոթորկալի ժամանակին է բևեռված: Հեղինակի գեղարվեստական հետաքրքրությունից դուրս է մնում Թորոսի մահից որոշ ժամանակ անց Լևոն II-ի կողմից Կիլիկիայում հայկական թագավորության հաստատումը և համեմատաբար բարեկեցիկ կյանքի պատկերումը: Ծերենցի գեղարվեստական ժառանգության համար վերոհիշյալ ելակետի շեշտումը կարևոր է, քանի որ միանգամայն գիտակցորեն նա ընտրում է պատմության այն շրջանները, երբ օտարերկրյա զավթիչների դեմ ոտքի կանգնելով՝ ժողովուրդը բացահայտում է իր ազգային բնավորության՝ անհուն ազատասիրության ու հայրենասիրության ամենավսեմ առանձնահատկությունները:

Վեպերի գաղափարական տվյալ ելակետը անմիջականորեն արտացոլում էր օսմանյան ինքնակալության պայմաններում ապրող արևմտահայության իրավիճակը: Ծերենցի մտահղացմամբ՝ այն կոչված էր ժամանակակիցներին գեղարվեստորեն հուշելու, որ անելանելի իրավիճակներ չկան, որ ազգը, անցյալի սերունդների փորձից ելնելով, չպետք է հաշտվի անարգ լուծին, պետք է իր մեջ կորով և ուժ գտնի այն թոթափելու:

Վերոհիշյալ առումով բոլորովին էլ պատահական չէր, որ, ելնելով իր փորձից, Կիլիկիայի պատմության ու արդիականության նկատմամբ ունեցած տևական հետաքրքրությունից, իտալական ու բալկանյան ժողովուրդների ազատագրական պայքարի վերելքից, Ծերենցի երախայրիքը հանդիսացավ «Թորոս Լևոնի» վեպը: Միանգամայն իրավացի էր Ստ. Պալասանյանը, որը Գրիչ ստորագրությամբ Ծերենցի վեպին նվիրված իր գրախոսությունում գրում էր. «Քիչ գիրք կպատահի, որ «Թորոս Լևոնիի» նման յուր ժամանակին գրված ու հրատարակված լինի» («Փորձ», 1879, № 2, էջ 135—136):

Ճիշտ ժամանակին են գրված ու հրատարակված նաև Ծերենցի «Երկունք Թ դարու» և «Թեոդորոս Ռշտունի» պատմավեպերը: Խնդիրն այն է, որ 1877—78 թթ. ռուս-թուրքական պատերազմում ռուսական զենքի փայլուն հաղթանակի և դրան հաջորդած Սան-Ստեֆանոյի պայմանագրով հայերի համար նախատեսվող ազատությունների վարդապետի տրամադրություններին (որոնց արտահայտությունն էր «Թորոս Լևոնին») հաջորդեց Բեռլինի վեհաժողովը, որը գրեթե իսպառ ցրեց այդ հույսերը:

Քաղաքական իրադարձություններին ուշիուշով հետևող Ծերենցը խորությամբ զգաց տեղի ունեցած փոփոխությունը: 1878 թ. դեկտեմբերի 20 թվագրված «Ժամանակիս ոգին և հայ ապագան» իր հոդվածում թեև նա շարունակում էր հույսը դնել մարդու և հասարակության բնականոն առաջադիմության և բարեշրջության վրա, որի համաձայն իբրև թե ժամանակի տիրապետող ոգին «արդարությունն» է, այդուամենայնիվ սուր քննադատության է ենթարկվում Բեռլինի կոնգրեսում Անգլիայի դիրքորոշումը:

«Անգլիա բարոյապես և նյութապես պատասխանատու և գործակից է սմեն անիրավությանց, որ Ասիո Տաճկաստանի մեջ տեղի ունին 1878 հունիսի 4-են վերջը: Այո՛,— շարունակում է Ծերենցը,— այն օրվնե, որ Անգլիա Կիպրոսը Օսմանյան տերութենեն առնելով յուր սեփականություն ընելով, փոխարեն նրա Ասիական ստացվածքը կերաշխավորե, աշխարհք զի՛նքը պատասխանատու կճանաչե լինելիք թե՛ լավ և թե՛ վատ գործունեությանց» («Փորձ», 1879, №1, էջ 208):

Ծերենցը նկատի ուներ 1878 թ. հունիսի 4-ին Անգլիայի և Թուրքիայի միջև կնքված պայմանագիրը, որի համաձայն Թուրքիայից ստանալով Կիպրոսը՝ Անգլիան պարտավորվում էր ապահովել նրա ասիական տարածքի, այդ թվում նաև Արևմտյան Հայաստանի, անձեռնմխելիությունը Օսմանյան կայսրության կազմում: Եվ իրոք, նույն թվականին տեղի ունեցած Բեռլինի կոնգրեսը ընթացավ հենց այդ բեմարկությամբ, որը Ծերենցին հիմք տվեց եզրակացնելու, թե «Անգլիա Օսմանյան պետության կամ յուր անձնական շահերուն միայն բարեկամն է»:

Վերոհիշելով անցյալում Բյուզանդիայի նենգ քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ և այն բաղդատելով Անգլիայի և Արևմուտքի մյուս մեծ տերությունների իր ժամանակի քաղաքականության հետ, Ծերենցը խորությամբ գիտակցեց, որ սին պատրանք է հայության ազատությունը Արևմուտքից ակնկալելը: Իրականության դասերը, սակայն, միայն վերոհիշյալով չվերջացան: Որոշ ժամանակ անց Ծերենցը տագնապով գիտակցեց ազգային բնաջնջման այն անարկու վտանգը, որ օսմանյան կերպարանք ստացած դամոկլյան սրի նման կախվել էր արևմտահայության գլխին:

Խնդիրն այն է, որ բալկանյան ժողովուրդների մասնակի ազատագրումից հետո ձգտելով ամեն կերպ կանխել օսմանյան կայսրության հետագա քայքայումը, Թուրքիայի վերնախավը սկսեց ծրագրեր մշակել հայ ժողովրդի բնաջնջման համար: «Օսմանյան ինքնակալություն. Տաճկահայք և Ռուսահայք» իր հոդվածում Ծերենցը ընդարձակ մեջբերումներ է կատարում սուլթանի մեծ վեզիր Քյամիլ փաշայի մշակած ծրագրից: Պանօսմանիզմի գաղափարներով ղեկավարվող «նոր օսմանները» անօգուտ ու սխալ էին համարում Թուրքիայի եվրոպական մասում ապրող ժողովուրդներին ժամանակին տրված արտոնությունները:

«Եթե Եվրոպիո մասին մեջ մեր ծոցը օձ սնուցինք, պետք չէ որ նույն հիմարությունն ընենք մեր ասիական Տաճկաստանի մեջ,— մտորում է Քյամիլ փաշան.— խելոքությունը ջնջել վերցնել է այն ամեն տարերքը, որ օր մը կրնան մեզ նույն վտանգը ծնանիլ և օտարին ձեռնամխության առիթ և գործիք լինել: Ուրեմն,— եզրակացնում է Քյամիլ փաշան,— այդ հայ ազգը վերցնելու, անհետ և անհետ ընելու ենք: Եվ այդ ի գլուխ հանելու համար բան չի պակսիր մեզ. ամեն գործիք պատրաստ ունինք— քուրդ, չերքեզ, կուսակալ, դատավոր, հարկահան, ոստիկան, վերջապես ամենայն ինչ. կրոնական պատերազմ մը կհրատարակենք և դյուրին պատերազմ այնպիսի ազգի մը դեմ, որ ոչ զենք ունի, ոչ զինվորություն և ոչ պաշտպան» («Փորձ», 1879, № 7—8, էջ 204—205):

Քաղաքական վերոհիշյալ իրադարձությունները և հայ ժողովրդի համար ստեղծված նոր իրավիճակը անմիջական նշանակություն ունեցան Ծերենցի ստեղծագործական որոնումների համար: Արևմտաեվրոպական դիվանագիտության հակահայկական գործարքներից հիասթափված Ծերենցը զգաց, որ ազատությունը անհնարին կլինի առանց ժողովրդի ազգային ինքնագիտակցության բարձրացման, նրա ներքին ուժերի ու ջանքերի գերագույն լարման: Եթե առաջ, հատկապես իր հրապարակախոսության մեջ, ինչ-ինչ հույսեր էր

կապում վերևից շնորհվող ազատության հնարավորությունների նկատմամբ, ապա այժմ անվերապահորեն գիտակցեց, որ ազատությունը երբեք չի շնորհվում. ժողովուրդները այն նվաճում են զինված պայքարով: Իր ուշադրությունը կենտրոնացնելով բուն Հայաստանի տարածքի և մասնավորապես Այրարատի, Վասպուրականի, Տարոնի, Սյունիքի, Կարնո աշխարհների վրա, ուր դեռևս շարունակում էր ապրել հայ ժողովրդի ճնշող մեծամասնությունը, Ծերենցը վերհիշեց 7—9-րդ դարերում արաբական նվաճողների դեմ մեր ժողովրդի հերոսական ընդվզումները:

«Երկունք Թ դարու» և «Թեոդորոս Ռշտունի» պատմավեպերը Ծերենցին համակած գաղափարական ու գեղարվեստական այդ նոր որոնումների արտահայտությունն են: Համաժողովրդական ազատագրական պայքարի անհրաժեշտության վեհացնող պաթոսով գրված «Երկունք Թ դարու» վեպը իրոք նոր խոսք էր մեր գեղարվեստական գրականության մեջ և անկասկած Ծերենցի լավագույն պատմավեպն է: Ավելին, «Երկունքը» պայծառորեն լուսաբանեց ոչ միայն դրանից առաջ գրված «Թորոս Լևոնի», այլև «Երկունքից» հետո լույս տեսած «Թեոդորոս Ռշտունի» պատմավեպերի ազատագրական պայքարի խինդով տոգորված գաղափարագեղարվեստական մտահղացման միասնությունը: Գաղափարական այդ համահնչությունը միանգամայն ակնառու է, բայց չափազանցություն կլինի դրա հիման վրա Ծերենցի երեք պատմավեպերը որպես եռագրություն դիտարկելը:

«Երկունք» և «Թեոդորոս Ռշտունի» վեպերի փոխկապակցությունը, սակայն, մի քիչ այլ է: Ծերենցի ստեղծագործությանը անդրադարձած գրեթե բոլոր ուսումնասիրողները ըստ արժանվույն գնահատելով «Թորոս Լևոնին», ապա իրավացիորեն բարձր գնահատելով «Երկունքը»՝ կամ առհասարակ անտեսել են, կամ ոչ միայն վերապահությամբ են խոսել «Թեոդորոս Ռշտունիի» մասին, այլև դրա մեջ տեսել են 80-ական թվականների սկզբին ազգային-ազատագրական պայքարի տեղատվության, Ծերենցին համակած հոռետեսության արտահայտություններ: «Թեոդորոս Ռշտունին», իրոք, լույս է տեսել 1881 թ. սկզբներին, իրոք լույս է տեսել «Երկունքից» հետո: Եվ թերագնահատման ելակետը պատրաստ է. «Երկունքում» հեղինակը արտացոլում է 9-րդ դարի ազգային-ազատագրական պայքարի վերելքը, իսկ «Թեոդորոս Ռշտունիում» նայում է ոչ թե առաջ, այլ վերադառնում է 7-րդ դար, արաբների ներխուժման ազգային ողբերգական իրադարձությունների շրջանին:

Այս պատկերը, սակայն, սոսկ արտաքին առումով է իրավացի թվում: Ճշմարտությունն այն է, որ 1879-ին «Երկունքը» տպագրվելուց անմիջապես հետո Ծերենցը ձեռնամուխ է լինում «Թեոդորոս Ռշտունի» վեպի գրմանը և, որոշ ժամանակ անց ավարտելով այն, հանձնում է տպագրության: Այս երկու վեպերը հեղինակը գրել է գրեթե առանց ընդհատման, գաղափարագեղարվեստական ընդհանուր ու միասնական ելակետով, որպես յուրահատուկ երկպատում, որի երկու ինքնուրույն վեպերից յուրաքանչյուրը առանձին վերցրած ու միասնության մեջ արտացոլում են արաբների դեմ 7—9-րդ դարերում հայ ժողովրդի մղած ազգային-ազատագրական պայքարի երկու կարևորագույն փուլերը: Այն վերապահությամբ, որ սկզբում լույս է տեսել երկպատումի ոչ թե առաջին, այլ երկրորդ վեպը:

Ինչ խոսք, իզուր չէր, որ մենք օգտագործեցինք յուրահատուկ երկպատում

արտահայտությունը: «Թեոդորոս Ռշտունի» և «Երկունք Թ դարու» վեպերում պատկերվող պատմական իրադարձությունների միջև ընկած է մոտ երկու դար տևող ընդհատումներով մի ժամանակահատված, որն ինքնին բացառում է միասնական գլխավոր հերոսների առկայությունը: Բայց դրա փոխարեն, ինչպես ասվեց, երկու վեպերը գրված են գաղափարական նույն ելակետով՝ պետական ինքնուրույնության վերականգնման ձգտում, դրան հասնելու միջոցը՝ ազգային ինքնագիտակցության բարձրագույն դրսևորում և ազգային-ազատագրական անզիջում պայքար, այդ պայքարի հաջողության գրավականը՝ համաժողովրդայնություն, որի հիմքերի հիմքը և շարժիչ գերագույն ուժը ժողովրդական հոծ զանգվածների ընդվզումն է: Գաղափարական ու թեմատիկ այս միասնությունը ապահովվում է նաև տարածքային միասնությամբ: Մոտ երկու դար հարատևող պայքարը ծավալվում է հայկական բնաշխարհի նույն տարածքում, նախարարական տների անջատվածության և մրցակցության, ժողովրդի տնտեսական ու ֆիզիկական ահարկու անապահովության գրեթե նույն պայմաններում: Եվ վերջապես, թեև երկու վեպերում գործող գլխավոր հերոսները տարբեր են, բայց իրենց ծագումով, իրենց առաջ ծառացած ցավերի լուծման հարատևող ձգտումներով հասարակական նույն ուժերի շառավիղներն են:

Ճիշտ է, «Թեոդորոս Ռշտունիում» պատկերվող ազգային-ազատագրական պայքարի դրվագները անկասկած ավելի ողբերգական բովանդակություն ունեն, քան «Երկունքի» համանման դրվագները, բայց դա ոչ թե հեղինակի հոռետեսության, այլ պատմական բուն իրադարձությունների, պատմական հավաստի սկզբնաղբյուրների արտահայտություն է: Իսկ ավելի որոշակի՝ պատմական ի՞նչ սկզբնաղբյուրներից է օգտվել հեղինակը և իր վեպերում պատմական ո՞ր ժամանակաշրջանների վրա է կենտրոնացրել ընթերցողի ուշադրությունը:

Արդեն նշվեց, որ «Թեոդորոս Ռշտունիում» Ծերենցը արտացոլում է 7-րդ դարի առաջին կեսում արաբների ներխուժումը Հայաստան, և հայ ժողովրդի զրհասական ընդվզումը իր հարաբերական ինքնուրույնությունը պահպանելու համար: Այդ պայքարը կազմակերպող ու ղեկավարող հիմնական դեմքը պետական նշանավոր գործիչ, հայոց սպարապետ Թեոդորոս Ռշտունին էր: Վեպի պատմական հենքը միանգամայն հավաստի է: Հավաստի են Հայաստանի երկու մասերի միավորումն և ինքնուրույնության վերականգնումը, հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի վերելքի ու վայրէջքի դրվագները, հայ, բյուզանդացի ու արաբ պետական գործիչների վարքագծի հիմնական արտահայտությունները, Թեոդորոս Ռշտունու կողմից արաբների հետ դաշինքի կնքումը (652 թ.), ընդհուպ հետագայում նրա գերեվարումն ու մահը: Հավաստի են նաև բյուզանդական պալատական վերնախավի սադրանքները հայերի դեմ:

«Թեոդորոս Ռշտունի» վեպը գրելիս Ծերենցը առատորեն օգտվել է 7-րդ դարի պատմիչ Սեբեոսի «Պատմություն» և 8-րդ դարի պատմիչ Ղևոնդի «Պատմություն» աշխատություններից: Ծերենցի ստեղծագործական աշխատանքի հիշատակության արժանի առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ նա պատմական սկզբնաղբյուրներից վերցնում է ոչ միայն պատմական իրադարձությունների ընդհանուր հենքը, այլև պատմականորեն բնորոշ ստույգ

մանրամասներ, որոնք կոչված են հավաստի պատմականություն հաղորդելու վիպական պատումին:

Սեբեոսից վերցրած այդպիսի բնորոշ մանրամասներից է, օրինակ, վեպի ԻԴ գլխում մեջբերված բյուզանդական վերնախավի հակահայկական լկտի քաղաքականությունը բացահայտող Մորիկ կայսեր (582—602) նամակը պարսից Խոսրով Բ արքային. «Մի խոտոր ու անհնազանդ ազգ կա մեր մեջ և պղտորում է: Բայց ես իմը ժողովեմ և Թրակիայում գումարեմ, իսկ դու քոնը ժողովիր և հրամայիր արևելք տանել: Եթե նրանք մեռնեն, ապա կմեռնեն մեր թշնամիները և եթե սպանեն, մեր թշնամիներին կսպանեն, և մենք խաղաղությամբ կապրենք: Որովհետև եթե դրանք իրենց երկրում մնան, մենք հանգիստ չենք լինի» (Սեբեոս, գլ. ԺԵ):

Վեպի պատմական հենքի բազմաթիվ իրադարձություններ՝ բյուզանդական պալատի ներքին դավերը, Թումա զորավարի խարդավանքները, Թեոդորոսի կալանավորումն ու ազատումը, հայ-արաբական դաշինքի կնքումն և այլն նույնպես վերցված են Սեբեոսից:

Նույն սկզբունքով Ծերենցը օգտվել է նաև Ղևոնդի «Պատմությունից»: Վեպի Գ գլխում հույն զորավար Պրոկոպիոսի և Թեոդորոսի միջև ծագած վեճի գեղարվեստական նկարագրության հիմքը գալիս է Ղևոնդից. «Զորավարը բարկանալով իշխանի վրա, իր ձեռքում եղած գավազանը նետեց նրա ետևից» (Ղևոնդ, Պատմություն, Երևան, 1982, էջ 21): Ղևոնդից է նաև վեպի ԺԴ գլխում թշնամիներին թևավոր օձերի նմանեցնելու հիպերբոլիկ պատկերը: Տեղեկանալով որ թշնամին ներխուժել է երկիր, Թեոդորոս իշխանը ձգտում է փակել կիրճերը և կասեցնել նրանց առաջխաղացումը, «սակայն չկարողացավ նրանցից առաջ ժամանել, քանզի թշնամիները, թևավոր օձերի նման, օդաթև արագությամբ հարձակվելով, իրենց ետևում թողեցին հայկական զորքը և առաջանալով ընթացան դեպի Դվին մայրաքաղաքը» (Ղևոնդ, էջ 22): Գրեթե բառացի Ղևոնդից է վերցված վեպի նույն գլխում նկարագրված արաբների հարձակումը Դվինի վրա, ամրոցի գրավումը և ժողովրդի անխնա կոտորածը:

Վեպում նկարագրված բազմաթիվ իրադարձություններ, ինչպես օրինակ՝ պահապանների անզգուշության հետևանքով արաբների կողմից Արծափ բերդի գրավումը, կոտորածը, ապա Թեոդորոս Ռշտունու վրա հասնելը, արաբների ջախջախումն ու գերեվարվածների ազատումը (վեպի ԺԴ գլուխ), որոշ տարբերություններով առկա են և Սեբեոսի (էջ 145—146), և Ղևոնդի (էջ 23—24) մոտ: Այդպիսի դեպքերում Ծերենցը օգտվում է կամ առավել տիպականից, կամ էլ համադրում է երկու պատմիչների տված տեղեկությունները:

Պատմական բազմաթիվ փաստերի հիշատակումներ կան նաև այլ պատմիչների մոտ, որոնց գործերին Ծերենցը ծանոթ էր: Վեպի ԻԴ գլխում հիշատակված Եզր կաթողիկոսի հունադավանության ընդունումը և բյուզանդական Հերակլ կայսեր կողմից Կողբի աղի հանքերը որպես պարգև ստանալն, օրինակ, առկա է թե՛ Սեբեոսի, թե՛ հետագայում Կիրակոս Գանձակեցու մոտ. «Իսկ Հերակլ կայսրը գալիս է Կարին քաղաքը, ժողով է անում, կանչում է նաև հայոց Եզր կաթողիկոսին: .... Գնաց, ընդունեց Քաղկեդոնի աղանդը: Կայսրը նրան պարգևեց Կողբի երրորդ մասը և ամբողջ աղահանքը» (Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն Երևան, 1982, էջ 52):

Ցոթերորդ դարի առաջին կեսից՝ Թեոդորոս Ռշտունու ժամանակաշրջանից սկսած, գրեթե ամբողջ 8-րդ դարի ընթացքում, հայ ժողովուրդը անընդհատ պայքար է մղել արաբական նվաճողների դեմ: Այդ ժամանակաշրջանում թեև խալիֆայությանը հաջողվեց քայքայել և վերացնել նախարարական մի շարք տներ, բայց նրանց փոխարեն սկսում են հզորանալ Բագրատունիների, Արծրունիների և Սյունիքի իշխանական տները: Հաշվարարվելով մինչ այդ կատարած ավերածություններով, 9-րդ դարի կեսերին խալիֆայությունը որոշում է վերջնականապես ճնշել, վերացնել հայ ժողովրդի ամեն մի ինքնուրույնություն: Այդ նպատակով արաբական բանակների գլուխ կանգնած իրար ետևից Հայաստան են ուղարկվում մի շարք ոճրագործներ, այդ թվում նաև Աբդամիտ Յուսուֆ ոստիկանն ու արյունարբու Բուղան:

Այդ պայմաններում խալիֆայության դեմ հայ ժողովրդի մոտ երկու դար տևող ազգային ազատագրական պայքարը թևակոխում է իր նոր ու բարձրագույն փուլը:

«Երկունք Թ դարու» վեպում Ծերենցն սրտացոլում է ժողովրդական զանգվածներին համակած հայրենասիրական այդ հուժկու վերելքը: Ինչպես նախորդ վեպում, այս վեպում ևս ծավալվող իրադարձությունների հենքը պատմականորեն միանգամայն հավաստի է: Որպես պատմական սկզբնաղբյուր՝ «Երկունքում» Ծերենցին ուղենիշ է ծառայել նկարագրվող դեպքերին ժամանակակից Թովմա Արծրունու «Արծրունյաց տան պատմությունը» աշխատությունը: Թովմա Արծրունու «Արծրունյաց տան պատմությունից» են գալիս Ծերենցի այս վեպին հատուկ ոչ միայն համաժողովրդական պայքարի տեսարանների, Յուսուֆի ու Բուղայի վայրագությունների նկարագրությունների, մի շարք հայ իշխանների վարքագծի ամենաընդհանուր բնութագրումների, Խութեցի Հովնանի ու Գուրգեն Արծրունի Ապուպելճի հերոսական կերպարների, այլև սասունցիների յուրահատուկ կենցաղի, պատմական բազմաթիվ այլ երևույթների ու իրադարձությունների պատմական հենքը:

Վեպի «Ժողովուրդը» խոսուն վերնագիրը ունեցող գլխում Ծերենցը նկարագրում է Հովնանի գլխավորությամբ սասունցիների հարձակումը Մուշում ապաստանած Յուսուֆ (Հովսեփ) ոստիկանի զորքերի վրա: Յուսուֆը փախչում և ապաստանում է Փրկչի եկեղեցու գմբեթում, որտեղ վրա հասած սասունցիներից մեկը «նիզակով կոնկեն զարկավ և թևին տակեն թոքերն հանելով սատակեց»:

Սկզբնաղբյուրը Թովմա Արծրունու նկարագրությունն է. «Եվ այն ժամանակ նա սարսափից դողահար թաքնվեց գմբեթում: Մենկնազեները շրջապատեցին եկեղեցին, նրանցից ոմանք բարձրացան մինչև գմբեթի փորվածքը և ինչ-որ մեկը աշտեղով հարվածեց [Հովսեփի] թիկունքի մեջտեղը և դուրս հանեց թևատակից՝ թոքերի միջով: Նա փչեց շունչը և թաղվեց էշի պես» (Թովմա Արծրունի և Անանուն, Պատմություն Արծրունյաց տան, Երևան, 1978, էջ 136—137): Տվյալ նկարագրությունից անմիջապես հետո պատմիչը ավելացնում է. «Ես իմ աչքով տեսել եմ այն մարդուն, ով հարվածել էր [Հովսեփին]: Սրա մասին տեղեկացա նրանից»:

Վեպի «Աշոտ Արծրունի և դավանանք», ապա «Դատաստան» գլուխներում Մուշեղ և Վահրամ իշխանների և Վահրամ թիկնապահի դավանանության, Բուղային ուղղված նրանց նամակի նկարագրության էջերը, որոնք առա-

ջին հայացքից զուտ գեղարվեստական երևակայության արդյունք են թվում, իրենց պատմական հենքով նույնպես գալիս են Թովմա Արծրունուց:

«Եվ արդ մենք՝ Վասպուրականի ազատների ու իշխանների նահապետներս, Վահևունյաց տոհմից Մուշեղը, Տրունյաց տոհմից Վահրամը, մյուս Վահրամը, որը և իշխանի թիկնապահն է, ... գրեցինք քեզ, Բուղա, արաբացոց զորապետների գլխավոր և բարձակից մեծն թագավորի: Միայն թե ազատ արձակի մեզ և մեր ազգատոհմին մեր տները և թույլ տուր յուրաքանչյուրիս խաղաղ ապրելու այնտեղ: Մենք Աշոտին կտանք քո ձեռքը, առանց զենքի, մարտի ու ճակատ կազմելու, և չես չարչարվի նրա պատճառով» (Թովմա Արծրունի..., էջ 150):

«Թորոս Լևոնի» վեպում Ծերենցը պատկերում է Կիլիկիայի Լևոն իշխանի որդու՝ Թորոսի կողմից 12-րդ դարի կեսերին Կիլիկիայի հայկական պետականության վերականգնման պատմությունը: Խնդիրն այն է, որ 1137 թվականին արշավելով Կիլիկիա, Բյուզանդիայի Հովհան Կոմնենոս կայսրը Լևոնին և նրա երկու որդիներին գերեվարում և շղթայակապ ուղարկում է Կոստանդնուպոլիս: (Լևոնի մյուս երկու որդիները՝ Ստեփանեն ու Մլեհը, այդ տարիներին գտնվում էին Հալեպի ամիրայի մոտ): Լևոնը և մի որդին մահանում են գերության մեջ: 1145-ին Թորոսը փախչում և վերադառնում է Կիլիկիա, ուր նրան հաջողվում է վերականգնել հոր գերեվարությամբ ընդհատված Կիլիկիայի ինքնուրույնությունը:

Վեպում պատկերված պատմական տվյալ ժամանակաշրջանի իրադարձություններն իրենց արտացոլումն են գտել միջնադարի մեր մի շարք պատմիչների գործերում, բայց Ծերենցի համար որպես հիմնական սկզբնաղբյուր ծառայել են Մատթեոս Ուռհայեցու և նրա երկը շարունակող Գրիգոր Երեցի «Ժամանակագրությունն» և Սմբատ Սպարապետի «Տարեգիրքը»: Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրությունն» ընդհատվում է Լևոն իշխանի գերեվարությամբ, և ճիշտ այդտեղից էլ նրա գործը շարունակում է Գրիգոր Երեցը: Այնուհետև վեպի գրեթե բոլոր իրադարձությունների պատմական հենքը այս կամ այն կերպ առկա է տվյալ «Ժամանակագրությունում»: Ըստ որում, Գրիգոր Երեցը այդ բոլորը հիշատակում է որպես ժամանակակից. «Մինչև այստեղ մենք պատմեցինք այն անցքերի մասին, որոնց ականջալուր և ականատես եղանք»,— գրում է նա (Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, Երևան, 1973, էջ 276):

Ինչպես նախորդ ստեղծագործություններում, «Թորոս Լևոնի» վեպում ևս Ծերենցը պատմիչներից օգտվում է ոչ միայն սյուժեի պատմական հենքի ստեղծման առումով, այլև որոշ խոսուն մանրամասնությունների օգտագործումով: Այս վեպում բյուզանդացի զորավարի գոռոզամտությունը բնորոշող այդպիսի մանրամասնություններից է, օրինակ, «Անդրոնիկոս Կեսար» գլխում նկարագրված այն տեսարանը, ուր Անդրոնիկոսը ոչ միայն մերժում է Թորոսի հաշտության առաջարկը, այլև ամբարտավանորեն հիշեցնում է հոր գերեվարության շղթաները, որի հիմքը գալիս է Գրիգոր Երեցից. «Մեզ մոտ են այն շղթաները, որոնցով հորդ կապած տարանք, դրանցով քեզ էլ ենք կապելու և տանելու»,— հաղորդում է Անդրոնիկոսը (Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, էջ 271):

Պատմական բնույթի որոշ մանրամասներ, հատկապես Մլեհի քաղաքա-

կան վարքագծի և նրա բնավորության հոռի արտահայտությունների մասին, Ծերենցը վերցրել է Սմբատ Սպարապետի «Տարեգրքից»: Բացի հիշատակված երկու հիմնական սկզբնաղբյուրներից, Ծերենցը օգտվել է նաև Ղևոնդ Ալիշանի 1873 թ. Վենետիկում լույս տեսած «Շնորհալի և պարագայ իր» աշխատությունից: Այդ մենագրության գրեթե կեսը նվիրված է Ներսես Շնորհալու կենսագրությանը, ուր Ալիշանը տպագիր ու անտիպ, այդ թվում նաև օտար սկզբնաղբյուրների հիման վրա, վերարտադրում է Շնորհալու և Թորոսի ապրած ժամանակաշրջանի ընդհանուր պատկերը:

Ընթերցողի մոտ ակամա հարց կարող է առաջանալ, թե Ծերենցի կողմից պատմիչներից օգտվելու տվյալ երևույթը արդյոք չի՞ սահմանափակել նրա ստեղծագործական ինքնուրույնությունը: Բոլորովին ոչ: Իզուր չէր, որ մենք մի քանի անգամ շեշտեցինք, որ այդ բոլորը հեղինակի համար ծառայել է սոսկ վիպական գործողությունների պատմական հենք: Չպետք է մոռանալ, որ Ծերենցը հայ առաջին հեղինակն էր, որ հայկական միջնադարը՝ իրենից ավելի քան հազար տարի առաջ գոյություն ունեցող կյանքը, դարձրեց պատմավեպի նյութ:

Հայտնի է, թե որպես սկզբունք գրեթե ոչ մի պատմիչ իր պատմությունը չի ծանրաբեռնում իրեն ոչ կարևոր թվացող կենսական մանրամասներով, հասարակ ծագում ունեցող մարդկանց գործունեության հիշատակումներով, մարդկային մտերմիկ հարաբերությունների նկարագրումով: Նրանց տարերքը հայրենիքի անկախության, ժողովրդի հավաքականության, նրա նյութական ու մշակութային ինքնուրույնության հարցադրումներն են, պատմական գործող դեմքերը հիմնականում աշխարհիկ ու հոգևորական վերնախավի մարդիկ: Ըստ որում, նրանց գործունեությունն իսկ մեծ մասամբ տրվում է ոչ թե ծավալվող պատկերներով, այլ մերկ թվարկումներով, հաճախ գնահատվում է ընդամենը մեկ-երկու բառով:

Այնինչ պատմավիպասանի խնդիրն է ստեղծել իր նկարագրած ժամանակաշրջանի լիարժեք կյանքը՝ հասարաքաղաքական, տնտեսական, բարոյահոգեբանական, ընտանեկան, կենսահմաստասիրական անհատականացված ըմբռնումների ու փոխհարաբերությունների ողջ բարդությամբ ու ամբողջականությամբ: Նկատի առնելով ժամանակակից մասսայական ընթերցողի մակարդակը, Ծերենցն ամեն կերպ ձգտում էր հավաստիության դրոշմ հաղորդել իր պատումին, ընթերցողին փորձում էր համոզել, որ իր նկարագրած իրականությունը երևակայության արդյունք չէ, այլ տվյալ ժամանակաշրջանի բուն կյանքն է: Եվ այդ նպատակով նա ուղղակի և անուղղակի մեջբերումներ է կատարում տվյալ ժամանակի կյանքի մասին պատմող հեղինակներից: Բայց այդ բոլորը պատմական իրական պատումներից վերցված հենասյուներ են, որոնց օգնությամբ Ծերենցը կերտել է միանգամայն ինքնուրույն իր սյուժեները:

Եվ դա խորապես օրինաչափ է: Պատմավիպասանի խնդիրը պատմիչների տված տեղեկությունների ժողովրդականացումը չէ: «Ինչու՞ պիտի գոյություն ունենային պոետները,— ասում է Գյոթեն,— եթե նրանք սոսկ կրկնեին պատմիչների պատմածները: Պոետը պետք է գնա ավելի հեռու և մեզ տա ավելի վեհ ու գեղեցիկ բան»: Ոչ մի լուրջ պատմավիպասանի համար պատմության դրվագների վերարտադրումը հնարավորություն չէ. նույնիսկ դրանց ընտրության հարցում նկատելի է առոհականության ամենահուզող խնդիրնե-

ի անդրադարձը: Պատահական չէ, որ 18-րդ դարի առաջին կեսի անգլիացի լուսավորիչ Բոլինգբրոկը իր «Նամակներ պատմության ուսումնասիրման և օգտակարության մասին» աշխատության մեջ ջատագովելով պատմության օգտակարությունը, միաժամանակ խորաթափանցորեն նշում է, որ ամեն մի սերնդին հուզող խնդիրները նրան հուշում է ոչ թե պատմությունը, այլ արդիականությունը: «Նույնիսկ հասուն հասակում,— գրում է Բոլինգբրոկը,— մեր փափագը իմանալու, թե ի՞նչ է տեղի ունեցել անցյալում, բացառապես ենթարկված է մեր ցանկությանը այն հարաբերակցելու մեր օրերում տեղի ունեցածի հետ»:

Պատմավեպում իրար են հանդիպում փաստորեն երեք ժամանակներ՝ անցյալ, ներկա և ապագա: Դասական պատմավեպում գեղարվեստորեն մարմնավորվածը թեև անցյալի կյանքն է, բայց այդ կյանքի իմաստավորումը իրագործվում է արդիական ժամանակի բարձունքից, որը չի կարող իր դրոշմը չդնել պատմավեպի գաղափարական ընդհանրացության վրա: Առանց խախտելու վիպական օբյեկտիվ պատումի ամբողջականությունը, «Թորոս Լևոնի» վեպի առաջին իսկ նախադասությունում («Բոլորովին տարբեր քաղաք մ'էր 1142 Քրիստոսի թվականին Կոստանդնուպոլիս քաղաքը, որ այսօր Ստամբոլ կանվանի») Ծերենցը չի թաքցնում, որ թեև պատմվող դեպքերը տեղի են ունենում 12-րդ դարում, բայց պատմող հեղինակը ընթերցողի ժամանակակիցն է և իր ժամանակի բարձունքից է գնահատում անցյալը (անցյալի արդիական իմաստավորումը չպետք է շփոթել պատմության արդիականացման՝ մոդեռնացման, հետ. դրանք տարբեր երևույթներ են): Պատմական և արդիական ժամանակները փոխադարձորեն պայմանավորվելով և միահյուսվելով իրար՝ լուսաբանում են ներկայի ընդերքում տեղի ունեցող ապագայի հնարավոր դրական ու բացասական խմորումները: Դեռևս 60-ական թվականների սկզբին պատմության և համապատասխանաբար պատմական ստեղծագործության մասին մոտավորապես նման տեսակետ է արտահայտել արևմտահայ անվանի գրական-հասարակական գործիչ, ֆրանսիական գրականության բեղմնավոր թարգմանիչ Գր. Չիլինկիրյանն իր խմբագրած «Ծաղիկ» տասնօրյա հանդեսում. «... ամեն մեկ ազնիւ ալ կպարտավորի անցյալեն օրինակ առնուլ, ազգային պատմության փոշին խառնելով, իր վաղեմի տոհմային թշվառության պատճառները փնտրել և, ներկային մեջ այն պատճառներեն խորշելով՝ պատրաստվիլ ապագային հաղթության համար, որ է ազգին բարօրության շենքին կանգնումը» («Ծաղիկ», 1861, № 1):

Ծերենցը պատմավեպը դիտում է որպես մեր ժողովրդի ճակատագրով պայմանավորված ազգային բնավորության հերոսական ավանդույթների բացահայտման ու ձևավորման հզոր զինարան: Այստեղից և նրա գեղարվեստական համակարգի միաձույլ ամբողջությունը, որն իր մեջ ներառնում է ոչ միայն պատմիչներից վերցրածը, այլև տվյալ ժամանակով պայմանավորված նրանց տված երբեմն սահմանափակ գնահատումներից գիտակցական հեռացումը, շեղումն ու թաքուն հակադրությունը: Ըստ որում, այդ շեղումն ու հեռացումը երևում է ոչ միայն սյուժեի զուտ վիպական հանգույցներում, որն ինքնին հասկանալի է, այլև պատմական որոշ անձանց կերպարների կերտման, նրանց անունների և իրավիճակների փոփոխման, կենցաղի և մի շարք այլ երևույթների մեկնաբանման հարցում:

Սմբատ Սպարապետի «Տարեգրքում», օրինակ, Պապեռոնի Սմբատ իշխանը ընկնում է Մսիսի ճակատամարտում Անդրոնիկոսի կողմնակիցների շարքում Թորոսի դեմ պատերազմելիս: Ծերենցի մոտ այլ է: Ժողովրդին կեղեքող և նրա ատելությանն արժանացած հայրենադավ իշխանը ստիպված է ինքնասպանությամբ ավարտել իր կյանքը: Եվ դա միանգամայն օրինաչափ է «Թորոս Լևոնի» վեպի գեղարվեստական համակարգում: Նույն «Տարեգրքում» Պապեռոնի իշխանի հայրենասեր դուստրը կոչվում է Ռիտա, այնինչ Ծերենցը նրա անունը հայացրել և դարձրել է Մարգարիտ:

«Երկունք Թ դարու» վեպում ևս Ծերենցը ոչ միայն օգտվել, այլև անտեսել, շեղվել և նույնիսկ հակադրվել է Թովմա Արծրունու տված մի շարք բացատրություններին: Պատմիչն, օրինակ, իր «Արծրունյաց տան պատմության» Երկրորդ դպրության Է գլխում (էջ 135—138) սասունցիների չարքաշ կենցաղը պատկերելիս, նրանց քաջագործությունները գովերգելիս, նրանց հոգեկան կերտվածքի մասին արտահայտում է նաև խիստ վիճելի տեսակետներ: Ծերենցը վեպում ոչ միայն անտեսել, այլև գեղարվեստորեն հակադրվել է դրանց:

Որպես ստեղծագործող՝ Ծերենցը ինքնուրույն է և՛ պատմիչներից օգտվելիս, և՛ նրանց բացատրություններին հակադրվելիս, որովհետև երկու դեպքում էլ նա այդ բոլորը ենթարկում է իր ստեղծագործական մտահղացումներին, վիպական սյուժեների գեղարվեստական ներքին օրինաչափություններին: Իր պատմավեպերում Ծերենցը ստեղծեց մեր միջնադարյան կյանքի մի նոր ու լիարժեք պատկեր, ուր ամեն ինչ կենդանի է, շարժման ու բախման, ազգային բնավորության լինելիության ընթացքում, ուր ճակատագրական իրադարձությունների ազդեցության ներքո Թորոսի, Հովնանի, Թեոդորոսի, Գուրգենի նման հայրենասեր մարդկանց կերպարները ստանում են էպոսային լիցքավորումներ, ուր ձևավորվում են հայ կանանց վեհ ու առինքնող կերպարներ, հասարակ ծագում ունեցող մարդկանց ժողովրդական հմայիչ բնավորություններ, ուր գրեթե ամենուրեք գերիշխում է վեհորեն հնչող հերոսական ողբերգությունը: Այս հարցադրումներով, սակայն, մենք ընդհուպ մոտենում ենք Ծերենցի գեղարվեստական վարպետության, նրա արվեստի էության թեկուզև համառոտ բացահայտման անհրաժեշտությանը:

3

Ծերենցի արվեստի էությունը ճիշտ ընկալելու համար սկզբից ևեթ պիտի շեշտել, որ իրականության ու արվեստի փոխհարաբերության ըմբռնումով, կյանքի արտացոլման գեղարվեստական իր սկզբունքներով նա ռոմանտիկական ուղղությամբ ստեղծագործող էր: Եվ ռոմանտիզմի հետևող էր ոչ միայն իրականության գեղարվեստական մարմնավորման սկզբունքներով, այլև իր պատմագիտական, իմաստասիրական, հասարակաքաղաքական, բարոյահոգեբանական ըմբռնումներով, նաև իր անձնական ու քաղաքացիական կյանքի խառնվածքով ու վարքագծով: Այդ տեսակետից նրա մարդկային անկրկնելի բնավորության, աշխարհայացքի ու գեղարվեստական ստեղծագործության միջև միասնությունը գրեթե կատարյալ է: Հայ գրականության մեջ Բաֆֆու հետ միասին նա Ղևոնդ Ալիշանի ու Խաչատուր Աբովյանի ավանդույթների շարու-

նակողն էր, իսկ եվրոպական գրականությունից անգլիացի ու ֆրանսիացի նշանավոր ռոմանտիկների համաստեղության մեջ նրա համար ամենահոգեհարազատը Վ. Հյուգոյի ստեղծագործությունն էր, որի գործերը նա կարդում էր բնագրով:

Պատմական անցյալի իմաստավորման ու գեղարվեստական մարմնավորման գեղագիտական հիմնական ելակետերի մշակման գործում Ծերենցի համար հավասարապես վճռական են եղել թե՛ հայ իրականության հասարաքաղաքական ու մշակութային ընդհանուր մթնոլորտը, թե՛ եվրոպական ռոմանտիկական պատմավեպի արդեն բարձր զարգացման հասած փորձը, այդ թվում՝ նաև Վ. Հյուգոյի ռոմանտիկական արվեստի տեսությանը նվիրված աշխատությունները: 1827-ին «Կրոմվել» դրամայի առաջաբանում, շարադրելով այդ արվեստի էությունն ու պատկերվող իրականության ճշմարտացիության ռոմանտիկական նոր չափանիշները, Հյուգոն շեշտում էր, որ նոր արվեստը վճռականապես պետք է զգա և արտահայտի, որ «մարդկայնության տեսակետից ամեն ինչ գեղեցիկ չէ այս աշխարհում, որ նրանում այլանդակը ապրում է հոյակապի կողքին, տգեղը՝ գեղեցիկի, գրոտեսկայինը՝ վեհի, չարը՝ բարու, խավարը՝ լույսի կողքին»:

Ծերենցի վեպերը վկայում են, որ նա խորապես գիտակցել է, թե ռոմանտիզմի հակադրամիասնությունների գեղագիտական վերոհիշյալ ելակետը ոչ թե պոետիկական վերացական դրույթ է, այլ կյանքի իրական բախումների, կյանքի անսպառ պեսպիսության ու հարստության, գրական նախորդ ուղղության՝ կլասիցիզմի համեմատությամբ, կյանքի գեղարվեստական ճշմարտացի վերարտադրման մի նոր առաջընթաց:

Իրականության ճշմարտացի վերարտադրման այդ առաջընթացը ամենից առաջ իր արտահայտությունն է գտնում նրա վեպերում արտացոլված հայկական միջնադարի գեղարվեստական պատկերավորման միանգամայն նոր համակարգում: Դա հավասարապես վերաբերում է այդ կյանքի թե՛ բովանդակային-գաղափարական, թե՛ գեղարվեստական մարմնավորման առանձնահատկություններին: Ըստ էության, Ծերենցը առաջադրեց մեր միջնադարյան կյանքի մի նոր պատկերացում, որն իր ներքին հարստությամբ էականորեն տարբերվում էր մինչ այդ մեր նոր շրջանի գրականության մեջ (հատկապես՝ դրամատուրգիայի) տիրապետող կանխամտածվածորեն պարզունակացված, գրեթե անլիարժեքության աստիճանի հասցված կյանքի պատկերներից: Լայնորեն բացելով մեր միջնադարի իրական կյանքը ծածկող վարագույրը՝ Ծերենցը ցույց տվեց, որ այնտեղ էլ, ինչպես ժամանակակից կյանքում, մարդկային բարձր առաքինությունը գոյակցում է ստորության, անշահախնդիր, բոցավառ հայրենասիրությունը՝ դավաճանության, վեհ, հավերժական արժեքները՝ անցողիկ շահամոլության հետ: Նա այդ կյանքը ներկայացրեց իր ներքին բարդ հակասականությամբ, ուր իրար են բախվում ոչ թե կանխամտածված սկզբունքներ, այլ իրական անհաշտ շահեր, մարդկային տարբեր ճակատագրեր ու բնավորություններ: Ընթերցողի առաջ դարաշրջանը հառնեց իր լույսով ու ստվերով, մարդկային նրբագույն ապրումներով ու բիրտ, անողոք բարքերով, հերոսական, դրամատիկական ու ողբերգական վերելքներով ու անկումներով:

Ծերենցի ստեղծագործության հարատևության գաղտնիքներից մեկն, անկասկած, այն է, որ նա մեր պատմությունից ընտրել ու մշակել է ոչ թե մեր

սնափառությունը շոյող թեմաներ, այլ պրոբլեմներ, որոնք և՛ պատմական, և՛ արդիական առումով շարունակում են անդրադարձնել մեր ազգային ճակատագրի ու բնավորության կարևորագույն առանձնահատկությունները: Այդ տեսակետից, ինչպես ասվեց, բոլորովին էլ պատահական չէ, որ նա թե՛ «Թորոս Լևոնի», թե՛ «Թեոդորոս Ռշտունի» և «Երկունք Թ դարու» վեպերի պրոբլեմային առանցքը դարձրել է մեր ժողովրդի համար ճակատագրական նշանակություն ունեցող պատմության այն շրջանները, երբ ժողովուրդն իր ֆիզիկական գոյությունն ու ազգային ինքնուրույնությունը պահպանելու համար ստիպված էր օրհասական պայքար մղել երկիր ներխուժած օտար նվաճողների դեմ: Այստեղից և վեպերի կոնֆլիկտային համակարգի պատմագեղարվեստական մեծ ընդգրկումները, որոնք շոշափում են ոչ միայն ազգային-ազատագրական ու նվաճողական պատերազմների անհաշտությունը, այլև բարոյաէթիկական ու կենսափիլիսոփայական մի շարք այլ հակադիր ըմբռնումներ ու դիրքորոշումներ:

Ըստ ամենայնի՝ Ծերենցը իր վեպերում առաջադրեց ազատագրական պայքարի ու ազգային գոյատևման մի ամբողջական ծրագիր, որն իր մեջ արտացոլում է մեր ժողովրդին բնորոշ, բայց նաև զարգացման ու ամրապնդման կարոտ հասարաքաղաքական, ընտանեկան, մարդկային-անձնական կյանքի մի շարք էական արժեքներ: Ծերենցի ազգային ծրագրի էությունը և նրա միջուկը խորհրդանշող գեղարվեստական հիմնադրույթը կարելի է արտահայտել սեղմ, բայց տարողունակ **մաքառման կենսափիլիսոփայություն** հասկացությամբ: Երբեմն արտակարգ, երբեմն առօրեական բնույթի պատկերներով մարմնավորելով կյանք-պատմություն լինելիության բուն ընթացքը, Ծերենցը բացահայտում է, որ մեր ժողովրդի հարատևության գաղտնիքը ոչ այլ ինչ է, եթե ոչ իր ազատության ու ինքնուրույնության, իր հոգեկան կերտվածքն ու մարդկային արժանապատվությունը պահպանելու համար սերնդից սերունդ փոխանցվող մի անվերջ ոգորում:

Ծերենցի գեղարվեստական տվյալ հիմնադրույթը ներքուստ լուսաբանում ու միաձուլում է նրա վիպական պոետիկայի բոլոր բաղադրամասերը՝ գաղափարական բովանդակությունը, սյուժեն ու կոնֆլիկտը, կերպարների համակարգը, վիպական կառուցվածքը, պատկերավորման էպիկականությունը, գեղագիտական հնչեղությունը և առհասարակ գեղարվեստական բոլոր որակները:

Վեպերի գաղափարական բովանդակության առումով ամենահիմնական ելակետը հայ ժողովրդի ազատության ու ինքնուրույնության կենսահաստատումն է և օտարերկրյա լծի ժխտումը: Ըստ այդմ, վիպական կոնֆլիկտները երեք վեպերում էլ ունեն սուր, անողոք հակադրության բնույթ: Եվ դա ինքնին հասկանալի է, ազգային անկախությունը օտար բռնության իսպառ ժխտումն է: Այստեղից և վեպերի կերպարային համակարգում նկատելի հակադրամիասնությունը: Թշնամի բանակներով երկիր ներխուժած Յուսուֆի, Բուղայի, Անդրոնիկոսի և այլ նվաճողների դեմ դուրս են գալիս Թեոդորոս Ռշտունին, Խութեցի Հովնանը, Գուրգենը, Թորոսը և բազմաթիվ այլ հայրենասերներ: Վեպերի կոնֆլիկտում առաջին հայացքից պարզունակ թվացող կերպարների այս հակադրությունը համապատասխանում է պատմական ճշմարտությանը:

Գլխավոր կերպարների նմանատիպ հանդիպակցումը, ինչ խոսք, գեղար-

վեստական պարզունակության վտանգ է պարունակում: Բայց Ծերենցը վարպետորեն խուսափել է դրանից: Չնայած իրենց նախնիրային դիտավորությունների համախոհության՝ Յուսուֆն ու Բուլան անհատականացված կերպարներ են: Այդպիսին է նաև շեյխ Ալիի կերպարը «Թեոդորոս Ռշտունի» վեպում: Միանգամայն ինքնատիպ է Անդրոնիկոսի կերպարը, որն իր բյուզանդական գոռոզությամբ, շվայտությամբ ու նենգությամբ էապես տարբերվում է նախորդներից: Առավել մեծ չափով դա վերաբերում է հայրենիքի ազատության համար մարտնչող Թեոդորոս Ռշտունու, Խութեցի Հովնանի, Թորոսի կերպարներին, որոնք չնայած հայրենասիրական միախոհության, իրենց բնավորությամբ, գործելակերպով, ըմբռնումներով ու ճակատագրով գեղարվեստորեն միանգամայն անհատականացված անկրկնելի կերպարներ են:

Վեպերի գաղափարական բովանդակության մեջ կոնֆլիկտային վերոհիշյալ երևույթը իր պատմականության ու գեղարվեստական կարևորությամբ հանդերձ, այդուամենայնիվ, սոսկ ելակետ է ավելի խոր ընդհանրացումների համար: Մարմնավորելով ու հիմնավորելով մաքառման կենսափիլիսոփայության գեղարվեստական իր հիմնադրույթը, Ծերենցը օրինաչափորեն փնտրտ է բացահայտեր, թե սոցիալական ինչ ուժեր են գործել ու վառ պահել այդ պայքարը, ոչ միայն արտաքին, այլև ներազգային ինչ հանգամանքներ են նպաստել ու խանգարել դրան (ազատեղից և ազգային ներքին պատասխանատվության հարցադրումը), ինչպես և ինչ ճանապարհով կարելի է հասնել ազատության...

Խոսելով ավատական Հայաստանի ազգաբնակչության սոցիալական կազմի մասին, «Թեոդորոս Ռշտունի» վեպի Զ գլխում հեղինակը երեք դաս է տարբերում Եկեղեցական մարմինը, Նախարարական մարմինը և Ազատաց խումբը ու Ժողովուրդը, «որոց երկուքը ամեն բան էին, իսկ երրորդը նշանակություն չուներ»: Նշանակություն չունեցողն, իհարկե, ժողովուրդն էր, «որուն մեկ իրավունքը չհիշվիր մեկ տեղ մը, չի կար հաստատություն մը, որուն վրա ինք հենվեր, չի կար կազմակերպյալ օրենք մը, որ զինք պաշտպաներ. եթե լիներ ևս՝ ե՞րբ օրենքը առանց զորության կրցեր է մեկուն պաշտպանություն լինիլ»:

Ժողովրդի դասային հակադրությանն այս ըմբռնումը առկա է նաև «Թորոս Լևոնի» և «Երկունք Թ դարու» վեպերում: Իր առաջին վեպի՝ «Թորոս Լևոնիի» մեջ Ծերենցը հակված է այն դիտել որպես բնականոն, ի սկզբանե տրված երևույթ: «Անարգաբա կուսակալը» գլխում նա ուղղակի գրում է. «Բայց ժողովուրդը միշտ առաջնորդի պետք ուներ, ինչպես ամեն ժողովուրդք ունեցեր են և պիտի ունենան, հավասարություն, որ Սպարտիոր օրենսդիրն անգամ չէր երևակայած՝ անկարելի է, քանի որ բնությունը զմարդիկ հավասար չէ ստեղծած նյութական և մտավորական կատարելությամբ...»:

Բայց հեղինակը և նրա ստեղծած գրեթե բոլոր հայրենասեր իշխանների կերպարները զգում են, որ առանց ժողովրդի, առավել ևս ընդդեմ ժողովրդի, ազգային ազատություն ձեռք բերել հնարավոր չէ: Ուրեմն ինչ անել, ինչպես լուծել գորդյան հանգույցը: Սա հեղինակի առաջադրած ազգային ծրագրի կարևորագույն հարցադրումներից է: Իր ըմբռնումներով ու խառնվածքով Ծերենցն, անկասկած, ժողովրդական մարդ էր, բայց հնարավոր չէ խախտել

7—12-րդ դարերի պատմության օրինաչափությունները: Հավատարիմ մնալով պատմության տվյալներին, նա ընդունում է, որ հայ նախարարությունը մեր պատմության մեջ ունեցել է նաև «դյուցազնական վայրկյաններ», որ դավանաց վասակների և մերուժան արծրունիների կողքին եղել են Վարդան ու Վահան Մամիկոնյանների, իր իսկ վեպերում արտացոլված ժամանակաշրջանում ապրած Թեոդորոս Ռշտունու, Գուրգեն Արծրունի Ապուպելճի, Աշոտ Բագրատունու, Թորոսի նման հայրենասեր իշխաններ: Որպես սկզբունք՝ Ծերենցի հայրենասեր իշխանները կոչ են անում չափավորել ժողովրդի շահագործումն ու կեղեքումը, մարդավարի վերաբերվել ժողովրդի նկատմամբ, ամեն կերպ հենվել նրան: Այստեղից էլ երեք վեպերում գոյություն ունեցող ժողովրդական մարդկանց հմայիչ կերպարների ստեղծումը. «Թորոս Լևոնիում»՝ Բաբկենի, «Թեոդորոս Ռշտունիում»՝ Զավենի, «Երկունքում»՝ Վահրիճի կերպարները:

Այս բոլորը, ըստ էության, իր մեջ պարունակում է դասային համերաշխության ինչ-ինչ արտահայտություններ: Նկատելի են վերը հիշատակված ֆրանսիացի պատմաբանների գաղափարների և հենց իր՝ Ծերենցի հրապարակախոսության որոշ ըմբռնումների արձագանքներ: Բայց նաև «Թորոս Լևոնի» վեպի պատմական հերոսներից մեկի՝ 12-րդ դարի մեր անվանի բանաստեղծ ու քաղաքական գործիչ Ներսես Շնորհալու ազդեցությունը, որի կյանքին ու գործունեությանը Ծերենցը ծանոթ էր ոչ միայն Ալիշանի «Շնորհալի և պարագայ իւր» աշխատությունից, այլև ուղղակիորեն Շնորհալու ստեղծագործությունից: Նկատի առնելով հայ աշխատավոր ժողովրդի աննկարագրելի շահագործումը, Շնորհալին իր «Թուղթ ընդհանրականում» հայ իշխաններին հորդորում էր. «մի անիրաւաբար վարիք առ հնազանդեալսդ ծանր և դժուարակիր հարկադրութեամբ՝ զոր ոչ կարեն բառնալ, այլ օրինօք դատեցէք և ըստ չափոյ զօրութեան զիւրաքանչիւր ոք...»:

Այդպիսին էր տվյալ դարաշրջանի հումանիզմի բարձրության աստիճանը, և Ծերենցը չխախտեց այդ ճշմարտությունը: Չխախտեց, բայց և այնպես լրիվ չենթարկվեց դրան: Առանց արդիականացնելու պատմությունը, նա միջոցներ որոնեց ազատագրական պայքարում ժողովրդի վճռական դերի շեշտման համար: «Թորոս Լևոնիի» համեմատությամբ «Երկունք» և «Թեոդորոս Ռշտունի» վեպերը այդ առումով մի զգալի առաջընթաց են: Այդ երկու վեպերում էլ ժողովրդի դերի մասին խոսվում է ավելի համարձակ և բարձր ձայնով: Թեոդորոս Ռշտունին, որ հոգնել է բարձր հոգևորականության ու ազնվական դասի մարդկանց անվերջ խարդավանքներից ու բացահայտ դավաճանությունից, զրուցելով «ազատ և չքավոր ծնողաց զաւակ» Ներսեսի հետ, որ հուսալքության նշաններ է ցույց տալիս, ծանր խոսքեր ասելով ժողովրդին կեղեքող ազնվականների հասցեին, նշում է. «Այո՛, կուգա անշուշտ օր մը, օրը ապագա դարուց ստվերներու մեջ ծածկյալ, այն օրը, ուր մեր նախարարական անունները անհետ, աներևույթ լինին Հայաստան աշխարքի վրայեն և ազատն ու անազատ ի մի ձուլյալ բոնության մուրճերու հարվածներեն՝ միաբան և միասիրտ թոթափեն շղթայները և եղբայր զիրար անվանեն» (գլուխ Ը):

Ազգային ազատագրական պայքարում ժողովրդի դերի բարձրագույն գիտակցումը, սակայն, իր արտահայտությունն է գտել «Երկունք Թ դարու»

վեպում: Հովնանի գլխավորությամբ սասունցիների ժողովրդական զանգվածներն են, որ ոչնչացնում են Յուսուֆ ոստիկանին, ջախջախում նրա բանակը, հաջողությամբ պայքարում արյունարբու Բուղայի զորքերի դեմ: Հովնանը իսկական ժողովրդական առաջնորդի կերպար է, մեր դասական պատմավեպագրության ամենահաջող կերպարներից մեկը: Իր ամբողջ էությամբ հայրենիքի ազատության գործին նվիրված Հովնանը երբեմն սուր խոսքեր է ասում ազնվական դասի դեմ, նոր, չլսված գաղափարներ է արտահայտում: Դրանց հիման վրա որոշ ուսումնասիրողներ Հովնանի կերպարում արդիականացման պահեր են տեսել: Դա մասամբ գուցե իրավացի է: Բայց չպետք է մոռանալ, որ Հովնանն, ըստ էության, չի ժխտում հայրենասեր ազնվականության դերը, ընդհակառակը, կոչում է ընդհանուր համաժողովրդական պայքարի, բայց տեսնելով թշնամու նկատմամբ ազնվականության անհետևողականությունն ու թուլամորթությունը՝ զայրալից խոսքեր է շպրտում նրա հասցեին: Այնինչ նա քաջ գիտակցում է, որ առանց համաժողովրդական պայքարի անհնարին է ժողովրդի ազատագրումը:

Ինչ խոսք, այստեղ առկա են նաև հեղինակի ապրած ժամանակաշրջանի քաղաքական հոգսերի անուղղակի արձագանքները: Բայց Ծերենցը չի փոխում վեպում նկարագրված պատմական ժամանակի իրական ընթացքը: Նրա հերոսը գաղափարներ է արծարծում, որոնց միջոցով հեղինակը պատմական անցյալը շաղկապում է արդիականության հետ: Վերջին հաշվով, ժողովուրդն իր պատմությունը վերապրում է առնվազն երկու անգամ. առաջին անգամ անմիջականորեն մասնակցելով պատմական բուն իրադարձություններին և երկրորդ անգամ՝ հետագայում այդ բոլորն իր հիշողության մեջ վերահիմնավորելով արդիականության թելադրանքով: Ծերենցը ռոմանտիկական արվեստի գրող էր, և նրա համար հավասարապես կարևոր էր ոչ միայն պատմական հավաստի երևույթների վերարտադրումը, այլև նոր, առավել գործունյա ազգային բնավորության ու հոգեբանության ձևավորումը: Պատմական գաղափարները առհասարակ ավելի հարատև և ուժեղ են, քան այն փաստերը, որոնց հիման վրա ժողովրդական հոգեբանության մեջ ձևավորվել են դրանք: Զմոռանանք, որ պատմականորեն ոչ այնքան մեծ մի իրադարձություն, ինչպիսին սասունցիների կողմից Յուսուֆ ոստիկանի սպանությունն է, այն երևույթներից մեկն է, որի հիման վրա ժողովրդական ստեղծագործական երևակայության մեջ ձևավորվել է «Սասունցի Դավիթ» մեր հոյակապ էպոսը:

Ծերենցի առաջադրած ազգային ծրագրի բովանդակությունը, իհարկե, չի սպառվում մինչև այժմ ասվածով: Նա հաջողությամբ է վերանայում ժողովրդի դժբախտության հարցում մեր ազգային բնավորությանը իբր թե առանձնահատուկ անմիաբանության հին պատկերացումները և առաջ է քաշում պետական կենտրոնական ուժեղ իշխանության բացակայության գործոնի գիտակցման անհրաժեշտությունը: Հայոց եկեղեցուն նա հատկացնում է հիմնականում հոգեկան-մշակութային, ազգային ինքնագիտակցության պահպանման դեր և սուր քննադատության է ենթարկում ոչ միայն մեր բարձր հոգևորականության որոշ ներկայացուցիչների անտարբերությունը ազգային ճակատագրի նկատմամբ, այլև բյուզանդական վերնախավին հատկանշական ան-

բովանդակ բանավիճային մոլուցքը: Իսպառ բացառելով բյուզանդական բրոնությունները ու ասիմիլյացիոն ոտնձգությունները, Ծերենցի վեպերի մի շարք հերոսներ՝ Գրիգոր Մամիկոնյանը, Թորոսը և այլք, իրավացիորեն բարձր են գնահատում նրանց մշակույթը և ամեն կերպ օգտվում են դրանից: Ծերենցի առաջադրած ազգային ծրագիրը հայ ժողովրդին չի առանձնացնում ու մեկուսացնում այլ ժողովուրդների մշակույթից: Ընդհակառակը, այն ենթադրում է ոչ միայն մշակութային, այլև հասարակաքաղաքական գործունյա հարաբերություններ: Այդ տեսակետից առանձնապես հետաքրքիր է անդրկովկասյան ժողովուրդների մարտական բարեկամության դրսևորումների պատկերումը «Թեոդորոս Ռշտունի» վեպում:

Տեղի սղության պատճառով մեր խոսքից դուրս է մնում Ծերենցի ռոմանտիկական արվեստում կերպարների կերտման գործում նրա վեպերում նկատելի բարելրջությունը: Եթե իր առաջին՝ «Թորոս Լևոնի» վեպում հեղինակը նախընտրում է կերպարների բարոյաէթիկական բացահայտ բևեռացման սկզբունքը (Թորոս—Անդրոնիկոս, Ստեփանե—Մլեհ, Մարգարիտը և հայրը), ապա հետագա երկու վեպերում հակադրության բացահայտ մոտեցումը, գեթ մասամբ, իր տեղը զիջում է մարդկային կերպարների ներքին ցայտերանգների բացահայտման սկզբունքին («Երկունքում» Գուրգենի, Սմբատ Բագրատունու, Հռիփսիմե տիկնոջ կերպարները. «Թեոդորոս Ռշտունիում» Թեոդորոսի, Հուսիկ Արտամետցու, Քահինայի կերպարները):

Նույն պատճառով դուրս է մնում նաև Ծերենցի արվեստի հոգեբանական զուսպ, բայց նուրբ ներթափանցումների հարցի քննարկումը, որ առկա է Վասկանուշի ու Հովնանի, Թենիի ու Գրիգորի փոխհարաբերություններում: Եվ առհասարակ պետք է նշել, որ Ծերենցի կերտած հայրենասեր հերոսները ոչ միայն արիաբար կռվել ու զոհվել գիտեն, այլև հոգեկան նուրբ, փիրուզ ներաշխարհ ունեցող մարդիկ են: Այդպիսիք են, օրինակ, ոչ միայն Հովնանն ու Գրիգորը, այլև առաջին հայացքից բիրտ թվացող ծեր զորավար Ատոմ Շահունին: Ընթերցողն, անկասկած, մեծ հետաքրքրությամբ պիտի կարդա Վասկանուշի ու Հովնանի, Թենիի ու Գրիգորի, Հեղինեի ու Գուրգենի, Զարուհու ու Աշոտի չկայացած երջանկության պատկերմանը նվիրված էջերը: Ծերենցը այն գաղափարն է զարգացնում, որ օտարերկրյա բռնությունը, ներքին դասային խտրականությունն ու շահամոլությունը ի չիք են դարձնում ոչ միայն ազգի ու անհատի ազատությունը, այլև մարդու անձնական երջանկությունը:

Ծերենցը ծանոթ էր եվրոպական պատմավեպի նվաճումներին, օգտվեց նրա փորձից (երբեմն նաև տուրք տալով հետաքրքրաշարժության պահանջից բխող արկածային պատկերների), բայց ստեղծեց մեր ազգային պատմավեպի մի մոդել, ուր պատմական իրադարձությունները ծավալվում ու ժողովրդի ազատության բախտը որոշվում է ոչ թե պալատներում ու նախարարական դղյակներում, այլ բաց տարածություններում, հրապարակներում ու լեռնային կածաններում մղվող ժողովրդական զանգվածների հերոսական պայքարի շնորհիվ: Վերակենդանացնելով մեր պատմական կյանքի դրվագները, Ծերենցը ցույց տվեց, որ ժողովրդի պատմությունը դադար չունի, այն հարատև շարժում ու զարգացում է: Ավելի քան հարյուր տարի առաջ ստեղծված Բրա

վեպերը շարունակում են ապրել նաև մեր օրերում, որովհետև ժխտելով բրոնությունը՝ կենսահաստատում են ազատությունը, գեղեցիկը, մարդկայինն ու հերոսականը։

Եթե հայ գրականության մեջ կան գեղարվեստական մի քանի կերպարներ, որոնք արժանի են քանդակվելու, ապա Խութեցի Հովնանն իր նիզակով այն հերոսներից է, որի բրոնզաձույլ արձանը միանգամայն արժանի է հայրենի հողում կանգնեցվելու։

ՀԱԿՈԲ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԹՈՐՈՍ ԼԵՎՈՆԻ

ԳԼՈՒԽ Ա

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 1145-ԻՆ

Բոլորովին տարբեր քաղաք մ'էր 1142 Քրիստոսի թվականին Կոստանդնուպոլիս քաղաքը, որ այսօր Ստամբոլ կանվանի. ամեն պատմիչք և ճանապարհորդք սքանչանալով կը պատմեն անոր հրաշալիքը, որ թե Եվրոպիո ժողովրդոց և թե Ասիո արաբացվոց զարմանքը կը շարժեր։ Հիմկու Նուրի Օսմանիեին տեղը՝ համբավավոր հռոմեական Ֆորում ըսված կրկեսն էր, ընդարձակ ձվաձև տարածությամբ, փառավոր կամարակապ դահլիճներե և արձաններե շրջապատյալ, և մտից համար երկու հաղթական կամարք կը հաջորդեին, 120 ոտք վերամբարձ տորիկյան սյուն մը Փիդիասի ձեռագործ պղնձե Ապոլոնի արձան մը կը կրեր, որու գլուխը արևու ճառագայթներ կը ցոլային՝ գավազան և գունդ ի ձեռին։ Պուքոլեոնյան արքունիքը, որ հազար տարի կայսերաց բնակարանն եղավ, իր փառավորությամբ, ընդարձակությամբ և ամրակառույց հաստատությամբ՝ գեր ի վերո էր, քան զԿապիտոլեոն, քան զՊերկամայի արքունիքը, Ադրիանոսի Կիզիքի տաճարը, եգիպտական բուրգերը և փարոսը։ Երեք գմբեթք անոր գլուխը կը պսակեին և պղնձե ոսկեզօծ երդիկը իտալացի մարմար սյուներ կը վերցնեին. իր ահագին պարտեզները աստիճանաբար Պրոպոնդիտի ծովեզրը կ'իջնեին, հինգ եկեղեցի իր մեջ կը պարփակեր. փոյուղացի կճյա սյուներով կամարակապ և անբավ սենյակներն ու սրահները մոզաիկներով, արձաններով, պատկերներով, որ տեսնողաց զարմանք կը պատճառեին։ Արևելյան պերճանք և արևմտյան ճաշակ միացեր էին զարդարելու համար աս քաղաքը, օտարականը ապուշ կը մնար, երբ ամեն անկյան գլուխ՝ հոս ոսկեղեն դուռ, հոն մարմարիոնե մարդկանց և կենդանյաց արձաններ, անդին պղնձե փիղեր կը տեսներ։ Եվ գարնան ժամանակ բնության գեղեցկության չափ չի կար. այդ

գեղեցիկ ծովը ցամաք կը շրջապատեր իր հսկա ծառերով, իր հարուստ բույսերով, իր համով պտուղներով, իր գեղեցիկ առվակներով, սոխակներու երգերով, և Կոստանդնի քաղաքը կանգուն իր բարձր պարիսպներով, որու ամրությունն էին երեք հարյուր ութսուն և վեց աշտարակք, վեհ կերևար, քան զամեն մայրաքաղաք, դիրքով, օդով և իշխանությամբ. և մոռցնել կուտար Հռոմ, Երուսաղեմ և Բաբելոն։

Ժողովուրդը, ինչպես բոլոր մեծ քաղաքներու մեջ, ամեն վիճակի մարդիկներով լեցուն, ամեն տեսակ կերպարանքներու և հագուստներու զանազանություն կ'ընծայեր աչաց. իսկ այն պալատին և կրկիսուն շրջակայքը, իշխանավորաց գահավորակները, ասպետաց ձևերուն խրոխտությունը, զինվորաց արհամարհոտ գոռոզությունը, հասարակ ժողովրդյան զբաղման երթևեկը դիտող աչքերու զբոսանք մ'էր։ Բայց այս ժողովրդյան բարոյական և ներքին վիճակը արտաքին տեսքին տարբեր կերպով կը պատասխաներ. մեկ մասը քաղաքին աղտոտ, զազիր, մշտընջենավոր մութի դատապարտյալ, վասնզի հարուստները՝ տուներով կը նեղցնեին ճամփաները և աղքատներուն խավար և աղտեղություն կը թողվին։ Նեղ ճամփաներուն մեջ գողերն ու մարդասպանք կը վխտային, և ամեն չարագործություն կը դյուրանար խավարին մեջ։ Արդարություն չի կար ամենևին և ոչ ամոթ, վասնզի անզգամությունը օրենքներե չէր պատժվեր և ոչ ալ հեղինակը կը նշմարվեր։

Այս վիճակին մեջ անշարժ բան մը թե կար, որ փոփոխություն չէ կրած տարիներե ի վեր, ծովն էր օձապտույտ շրջաններով, որ Վոսփորե ի վար, նույնպես անփոփոխ կը տարածվեր իր փայլփլուն և գեղեցիկ ալիքներով և երկինքը իր անջինջ պայծառությամբ։ Եվ աս ծովուն վրա, ինչպես այսօր, նավերը, նավակները կը վխտային, նավաստիներուն աղաղակը, խուժանին շարժմունքն ու ժխորը ամեն բան կը կենդանացներ ձայները՝ փոխանակ թրքերեն լինելու՝ հունարեն էր, շարժմունքը ավելի եռանդուն էր և ասիական ծանրության տիպն քիչ ուներ։

Վեցաթի նավակ մը Իշխանի կղզիներեն կ'իջներ ան միջոցին, ճղքելով ջուրը ուժգնությամբ և կը մերձենար արքունյաց ծովեզրին, որ դեպի Պրոպոնտոս կը խոնարհեր։ Պալատական պաշտոնյա մը նավուն մեջ ղեկին քով նստած էր, քովը երիտասարդ մը, որ գրեթե չէր խոսեր, և հազիվ միավանկերով քովը շարունակ խոսող պաշտոնատարին երբեմն կը պատասխաներ. ճերմակ բեհեզյա նյութ մը գլուխը փաթթած, լայն և բարակ մոխրագույն վերարկու մը վրան, ասվե բանված բաճկոն մը հազիվ կերևար, որ իր անդրավարտյաց վրա կ'իջներ, ոտքերը՝ կոշիկներ և վրան ամենևին զենք չի կար. կը նայեր, կը լսեր, կը տեսներ, բայց իր սուր և խոր ու սև աչքերն իր երկայն արտևանունքներեն ծածկյալ, երբ

դիմացինին երեսը կը նայեին, այն ժամանակ միայն պարզության և միամտության քող մը կ'առնվին. և իր միտքը բոլորովին հեռու էր։

Կարելի չէր սուր աչքի մը իր կորովի ձևը չի նկատել, թեպետ ինք թույլ և անհոգ կերպ մը առնելու կը ձևանար. և աչքերը, որ մարած էին ընդհանրապես, հանկարծ ի մոռացության փայլակներ կարձակեին, իր դեռաբույս ընչացքն և գանդուր մորուքը մասամբ իր ծնոտը կը ծածկեին, մազերը գլուխը կը պսակեին. և այդ զորավոր ու ջղուտ կազմվածքը հազիվ քսան-քսաներկու տարու զինք կարծել կուտար տեսողաց. միայն երկու հոնից մեջ խորհրդածության ուղիղ գիծը կրնար մատնել, թե այս պարզության տակ խորին խորհուրդներ կը ծածկվեին։

Նավակը ծովեզրը գտավ, և պաշտոնատարին զինվորներն ու ծառաները դուրս թափվեցին օգնելու իրենց տիրոջը, որ իշխանական ծանրությամբ քայլերն կ'առնուր. իսկ մեր երիտասարդը առանց բերանը բանալու, տարեց, գրեթե հիսնամյա, մարդու մը ձեռք տվավ և ելավ, և իբրու թե աչքերը գոց՝ կը հետևեր պաշտոնատարին, որ երբեմն ետին դառնալով իրեն աչք մը ձգելով պարտեզներու, ծաղիկներու, արվեստական վտակներու, կամուրջներու և արձաններու մեջեն կը շարունակեր իր ճամփան մինչև հասան փառավոր դռան մը առջև, ուր շքեղազարդ սպասավորաց և թիկնապահաց խումբ մը կ'իմացներ ինքնակալին ներկայությունը. հոն պաշտոնատարը առաջ անցնելով՝ նվաստ խոնարհությամբ ողջունելով գոռոզ երիտասարդ մը, որ անձնապահապետի պաշտոնը ունել կ'երևար, անոր ցույց տվավ պատանին և կամաց ձայնով մը՝ «ահա ապստամբ հայուն որդին, զոր ըստ բարձր հրամանի բերի» ըսավ։ Երիտասարդ անձնապահապետը, որ կոմսի տիտղոսն ուներ, ամենայն ամբարհավաճությամբ «սպասեցե՛ք» պատասխանեց և գլուխը անդին դարձուց։ Իսկ ապստամբին որդին բառի մը, շարժմունքի մը, վատության մը, ամբարտավանության մը և ոչ փոքրիկ մասնիկը կորսընցուց, իր ծածկյալ աչքերը ամեն բան կը տեսնեին, և իր անտարբերությունը ամեն բան կը լսեր։ Եվ որ զարմանալին է, այդ ամբարհավաճ արհամարհանաց, այդ երիտասարդին հունական տիտղոսին ներքև հայ մը նշմարելով նաև՝ անդրդվելի կերպարանքը հաստատ պահեց։ Վասընզի սրտին անթափանց խորերուն մեջ յուր արհամարհանքը կայսերական պալատին գմբեթներեն ալ ավելի բարձր էին. վասնզի արդեն որոշած էր իր նշանավճիռը՝ համբերություն անխռով։ Ուստի նույնպես մարած աչքերու քողով կը դիտեր այդ թիկնապահաց զինվորական խումբը, որ 3500 հոգի էին ի հայոց մեծավ մասամբ կազմյալ՝ ոսկի և արծաթ զենքերով պերճացյալ։ Ամեն վայրկյան շարունակ կը հասնեին երևելիք, հարգասպատիվ, ամենապայծառ և ամենակատարյալ, նաև ամենա-

ազնվական անդամք կայսերական ընտանյաց։ Իսկ ծերակուտական ծերոց, հյուպատոսներու, ներքինապետներու, պատրիկներու, սենաստոսներու, զորավարներու, կյուրապաղատներու, գանձապետներու, մետրապոլիտներու և ուրիշ բարձրաստիճան կղերականաց և իշխանազուն տիկնանց և օրիորդաց անբավ շարժմունքը, անոնց ճոխ պերճանքն, ուր ոսկեթել կերպասներ, ծիրանիներ, ակունք և մարգրիտք աչքերը կը շլացնեին՝ աննկարագրելի էր, ինչպես յուրաքանչյուր իրարու հանդիպած վայրկենին սիրո, բարեկամության, քաղաքավարության ցույցերը, որ աստված միայն գիտեր, թե ինչչափ ատելություն, ինչչափ նախանձ, ինչչափ հեռ կը ծածկեին ըստ մեծի մասին։ Եվ Ապստամբին որդին այս ամեն կը դիտեր և կը խորհրդածեր իր միամիտ կերպարանաց տակ, մինչ մեծ շարժմունք մը բոլոր պալատականք կը դղրդեր իմացնելով, թե կայսերական ներքին սենյակները բացվեցան։ Նույն վայրկենին զինվորական հագուստներու պարզությամբ մարդ մը կորովի և քաջակառույց կազմվածքով, դիտող աչք մը հանկարծ նետեց մեր պատանվույն, և դեպ՝ իրեն ուղղելով քալվածքը, հեղնող ամբարտավանությամբ վերեն վար զննելով, «Կերդնում,—ըսավ,— որ ապստամբ Լեոնին տղան ես դու». և առանց պատասխանին սպասելու՝ «հայրդ նախ երբեմն Կիլիկիա ճանչցա, եղբայրդ հոս ճանչցա», և քանի մը ներկայից դառնալով արհամարհանք մը ավելցուց. «Առյուծներն ալ իրենց վիժածը ունին»։ Եվ իր երկայն սուրին շառաչյունովը հեռացավ, և ամեն սեթևեթյալ պալատականք խորշելով ճամփա կուտային իրեն, մինչև անհետացավ։

Ները, որ իր երիտասարդ տիրոջ քով կեցեր, հարգանք և արձանի պես մինչև նույն վայրկյան կենաց նշան ամենևին չէր տված, աս վերջի նախատանաց ձայնեն հանկարծ ցնցվելով մը անոր աչքերը դարձուց, որ անշարժ, իբր անզգա, հանդարտ ձայնով մը «ի՞նչ է, Բարկեն» հարցուց։

— Լսեցի՞ր, տեր, աս մարդուն հայհոյությունը։

— Լսեցի։

— Գիտե՞ս, թե ով է այն անզգամը։

— Գիտեմ, Անդրոնիկոսն է։

— Ո՜հ, թե որ ինձի թողվիր...

— Գիտեմ ինչ պիտի զրուցես, գիտեմ, թե ի՞նչ կ'ընեիր, բայց քեզի զրուցեր եմ, թե ես և ինձի հետ գտնվողները ոչ կիրք, ոչ բարկություն, ոչ զորություն, ոչ ցույց, ոչ խելք և ոչ զգայություն պիտի ունենան. ուրեմն պետք է իմ օրինակիս հետևիս և դու՝ մինչև որ ժամանակը գա Համբերել և լռել, ա՛յս է մեր օրենքը։

Եվ այս խոսքերը այնպիսի ցուրտ արյամբ և անհոգությամբ և կամաց ձայնով զրուցվեցան, և Բարկեն վայրկենին այնպիսի անհոգ ձև մը առավ, որ ոչ ոք կրցավ նշմարել, թե աս խոսքերը ապագային վրեժխնդրության օրենքը կը պարունակեին։

Եվ ահա արքունի սենեկապետ մը մոտենալով այս մեր խումբին՝ «հայ Լեոնի որդին Թորոս ո՞վ է» հարցուց։ Երիտասարդը իբր քունե արթնցած՝ «Ես եմ» պատասխանեց։ «Եկ ուրեմն, կայսրը քեզ կուզե» ըսավ։ Նրբ գահույից սենեկին առջև հասան, պահապանք ըստ սովորության Թորոսի վրա փնտրեցին, որ զենք չի գտնվի. արարողապետն իրեն իմացուց, թե ի՞նչ էր երկրպագության և շարժման ձևը, և իբրև թե կասկածելով լսողին իմացականության վրա՝ կրկնեց ու ներս մտուց։

Արծաթե պատվանդաններով ոսկեղեն գահույից վրա նստած էր Մանուել Կոմնենոս կայսրը, զոր մեր պատմիչք Կիր Մանուել կ'անվանեն, Կոստանդին Պերպերուժենին որդին էր, որ զվևոն գերի տարեր էր։ Հաղթանդամ և կորովի երիտասարդ մ'էր, պսակն ի գլուխ, գավազան ի ձեռին՝ շրջապատյալ ինչ որ բնությունը և մարդկային արհեստներն սքանչելիք կրցեր են ստեղծել, շորս կողմը պար առյալ, մեծամեծաց և տիկնանց. «Վե՛ր կաց, որդիդ Լեոնի,—ըսավ կայսրը,— արև և ազատություն կը շնորհեմ քեզ, տուն և ոռճիկ և ամեն պիտույքդ գանձեն պիտի հոդացվին. ջանա՛ արժանի լինիլ բարությանցս, և երախտագիտությունն լինի քու առաքինությունդ»։ Եվ դառնալով կղերականաց բազմաթիվ խումբին, ուր բարձր աստիճանի պատրիարքք, մետրապոլիտք և եպիսկոպոսք ծանր և պատկառելի շարված էին՝ «Իմ կրոնական դիտավորությունս ալ, սուրբ հարք, ետքը ձեզի կ'իմացնեմ և կը փափագիմ, որ այս ազնվական երիտասարդին հոգեկան դաստիրակությանն ալ խնամք չի մոռնաք»։ Խորին խոնարհությամբ սուրբ հարք պատասխանեցին՝ իրենց սայրասուր աչքերը հայ երիտասարդին վրա նետելով։

Կայսերական ընդունելությունը վերջացավ, և Թորոս դուրս ելավ գահույից սենեկեն և հազիվ թե քանի մը քայլ հեռացավ, փոքրահասակ մարդ մը, որ անձին մեծություն տալու համար՝ կրցածին չափ կանգուն վիզը կ'երկնցներ, զվարթ երեսով մը իրեն մոտենալով՝ «Կայսրը ինձի հրամայեց ձեր անձին պիտույքը խնամք հոգալ, ուստի հրամայե, որ երթանք միատեղ ձեր բնակարանը ձեզի ցույց տալու»։ Թորոս անխոս սկսավ հետևիլ մարդուն։

Հազիվ թե քանի մը քայլ մնացեր էր պալատին մեծ դռան, և ահա պարզ հագված մարդ մը մոտեցավ մեր կարճահասակ կոկոզավիզ պաշտոնատարին և կամաց ձայնով մը սկսավ խոսիլ, և քիչ մ'առաջ անցնելով, մեր կարճուկը կանգ առավ, և բարձրկեկ ձայնով, բայց խոնարհաբար՝ «Խնդրեմ,— ըսավ, իր բարձր վիզը վար առնելով,— խնդրեմ քիչ մը սա սենյակը մտնենք, որպեսզի լավ իմանամ, թե ի՞նչ է ձեր հանձ-

նարարությունը»։ Երբ սենյակը մտան մեր չորս անձինքը, Թորոսին նստարան մը հրամցնելով, որու մոտ արձանի պես կանգնեցավ Բարկեն, իրենք բավական հեռացան, ան ատեն պաշտոնատարը ըսավ չփոթ ձայնով մը.

— Չեմ կրնար հասկնալ, թե իմ պաշտոնս ի՞նչ պիտի լինի ան ատեն։

— Ձեր պաշտոնը պարզ ձև մը պիտի ունենա և շատ հանգիստ. ի՛նչ ոռճիկ, ի՛նչ ծախք որ պիտի ընեք կամ պիտի համարվիք ընելու թե տան վարձու, թե սննդյան, թե զգեստի, թե ծառայի և վերջապես ամեն բանի համար, պարզապես ծոցերնիդ դնելու նեղությունը պիտի քաշեք։ Ահա այսչափ և աս ալ կարծեմ շատ ծանր և անտանելի բեռ մը չի կրնար համարվիլ ո՞ևիցե մարդու համար։

— Իսկ իմ պաշտոնս ի՞նչ պիտի ըլլա։

— Կ'երևա, որ չի կրցա իմացնել, թեպետ շատ որոշ զրուցել կարծեցի։ Փոխանակ այս ազնվական երիտասարդին խնամոց հոգը ունենալու, ծախքերն ընելու, վերջապես իր մատակարարը լինելու, ամենևին բան մը պիտի չընեք. երբ կայսերական թոշակներն կ'ելնեն, կ'առնեք ծոցերնիդ կը դնեք, ողորմությունն կ'ընեք, եկեղեցյաց կուտաք, ի՞նչ կ'ուզեք կ'ընեք։

— Այդ իմացա, բայց ես ի՞նչ պիտի լինիմ։

— Տեր եք լինիլ ի՛նչ որ կամիք լինիլ, ինչո՛վ որ կ'ուզեք զբաղիլ։

— Ի՞նչ զրուցեմ, թե որ հարցնեն այս երիտասարդին համար։

— Ես ձեզ կ'ապահովեմ, որ մեկը բան մը պիտի չի հարցնե և դուք ալ ազատ կ'ըլլաք չի պատասխանելու։

— Բայց թե որ ետքը խնդիր ըլլա...

— Իմ, այսինքն՝ ինձի հանձնողաց կողմանե, և սա հայ երիտասարդին կողմանե ամենևին խնդիր մը չի կրնար ծագիլ, միայն քեզի կը մնա խոհեմությամբ վարվիլ քու հաշիվներուդ մեջ և չափազանցությամբ բան ամենևին չընել, որպեսզի վերջը խույզ խնդիր լինելով թե դու քու վաստակդ չի կորսնցնես և թե... վերջապես դու չի վնասվիս։

— Հիմա հասկցա,— ըսավ մեր բարեկամը խորին հարգանոք և զվարթությամբ,— շատ շնորհակալ եմ, որ ինձի այսպես տիրություն մը կ'ընեք և իմ շահերուս այսպես կը պատասխանեք, աս ձեր բարեկամության չեմ գիտեր, թե ի՞նչ տեսակ շնորհակալություն ընեմ։

— Միմիայն մեկ կերպով, այսինքն՝ լուռ և անշշունջ մնալով, ամենևին եղածին վրա ուրիշներու հետ չի խոսելով և թե որ կներեք ըսել՝ չի շաղակրատելով. վասնզի ան ատեն կիմացվի և գանձը ձեզի բան մը չի վճարեր։

— Իրավունք ունիք. ուրեմն ես երթամ, քանի որ իմ պաշտոնս հայտնի եղավ։

— Այո՛, բայց միայն սա դռնեն դռնե մեկտեղ դուրս ելնենք։

— Շատ լավ, սիրով,— ըսավ մարդը և քանի մը քայլ առավ դեպի դուռը, հանդարծ իբրև ի քունե արթննալով և խելաբերելով դարձավ ի բարի խրատտուին՝ «Բայց դուք ի՞նչ շահ ունիք,— ըսավ,— այս գործիս այսպես լինելուն, որ ինձ այսչափ բարություն կ'ուզեք ընել, ա՛յդ կ'ուզեմ իմանալ»։

— Թե որ դուք այսչափ շատ հետաքրքրություն ընել կուզեք և ինձի այնպես բաներ կը հարցնեք, որոց պատասխանը չեմ գիտեր, ինձի ուրիշ բան չի մնար, այլ միայն քալել երթալ, վասնզի ինչպես դուք բարձը հրամանց հնազանդելու պարտավոր եք, նույնպես և ես, և թերևս ավելի։

Ուստի քիչ մը ատեն կանգ առավ, և դարձյալ մտածելեն վերջը արթուն պաշտոնատարը հաշիվ մ'ընելով, որ այն մարդուն խոսքին մը-տիկ ընելն էր իրեն համար շահավոր՝ «Դոնե,— ըսավ,—ինձ իմացուցեք, որ ո՞ւր պիտի նստին աս անձինքը, որ երբ ինձ տեղեկություն մը հարցընեն, կարենամ պատասխանել»։

— Շատ լավ,— ըսավ խոսակիցը,— երթանք մեկտեղ

ԳԼՈՒԽ Բ

ԲՆԱԿԱՐԱՆ ԹԵ ԴԱՐԱՆ

Այսպես երկու հույն առջևեն և Թորոս ու իր ծառան ետևնուն անցան արքունի դռնեն, որ ի կրկես կը հաներ, նույնպես կրկին հաղթական կամարներեն, և վերջապես մտան բուն քաղաքը, ուր բարձր երկայն պատեր, մեծամեծ դռներով պալատներ և երևելյաց տուներ կը նշանակեին, որոց երբեմն կը հաջորդեին փոքր և ցած փայտաշեն տներ, և ուր տեղ-տեղ ժողովուրդը կը խռնվեր, ինչպես ամեն մեծ քաղաքներու սովորական է, և դարձյալ ամայի փողոցներ, մինչև հասան պարզ դռան մը առջև, որ բարձր քառակուսի պատի մեջտեղ բացված էր, և երբ դուռը զարնվեցավ, շուտ մը բացվեցավ, սովորական պարտեզ մը տեսնըվեցավ քանի մը մեծամեծ ծառերով և խիտ առ խիտ վարդենիներով զարդարված, պարտեզին վերջին ծայրը բնակության տունն էր. կրկնահարկ տուն՝ բոլոր պատուհաններն պարտեզի վրա կը հայեին երեք կող-

մեն. իսկ ինչ որ ծառայության կը վերաբերեր՝ միահարկ պարտեզին դռան քովի պատերուն տակ շինված էր։

Դուռը բացողը իր հագուստներեն հայտնի՝ սովորական մաքուր տոնի մը ծառա էր, և երբ աս մեր չորս անձինքը ներս կը մտնեին, տարեց կին մը խոհանոցին դռնեն գլուխը դուրս երկնցնելով կը նայեր բնական հետաքրքրությամբ մը։ Դռնեն ներս ոտքերնին դրաՀնուն պես առաջնորդը դարձավ ըսավ կարճուկին։

— Բարեկամ, ահա տունը ճանաչեցիք կարծեմ, ունի՞ք ուրիշ փափագ մ՝ալ։

— Ո՛չ, այլ…

— Ուրեմն մեր կողմնակի դաշնադրությունը կատարյալ է,— ըսելով այնպիսի ձև մ՝առավ, որ կ՝իմացներ դիմացինին, թե երկայն խոսելու ժամանակ չի կար. ուստի նա ալ հասկնալով, բարև մը տվավ և դուրս ելավ, թողլով իր երեք ընկերները այդ տան առանձնության շորս պատերուն մեջ, որ տաճկի կանանոցի կամ կուսանաց վանքի մը կը նմաներ, եթե իր փոքրկությունը չլիներ։ Երբ դուռը գոցվեցավ, ան ատեն անծանոթը պարզ և խորին հարգանոք դարձավ Թորոսին և ձեռոք տանը ներքին դուռը ցցնելով՝ «Կուզե՞ք, իշխան, ձեր բնակարանը տեսնել,— ըսավ,— և ինչ որ պակաս կա հրամայել ձեր ծառային»։ Իսկ նա, որ տարիներե ի վեր բացի իր Բաբկենեն ուրիշ մը այսպիսի վարմունք չէր տեսած, դարձյալ ամենեին զարմանք ցույց չի տալով իր անտարբեր կերպովն առաջ անցավ, գտավ փոքրիկ սրահ մը, երկու սենյակ երկու կողմը, որոնց մեկը սեղանատուն էր, մյուսը՝ հյուր ընդունելու սենյակ, իրենց ամեն կարասիքով. սրահին ծայրը սանդուխ մը, որ վերի հարկը կը տաներ, ուր նույնպես երկու սենյակ կար, մին անկողնո, մյուսը՝ աշխատության, ուր բացի կարևոր բազմոցներե և կարասիքներե, կային մաքուր զենքեր պատերեն կախված. անկողնո սենյակը ազնվական երտիասարդի մը պետք եղած ամեն զգեստեղենք կային, նույնպես անկողնույն պարզ և ազնիվ հանդերձանքը կիմացնեին, թե արթուն կնոջ մը աչք կամ ձեռք անցեր էին հոնկից. փոքրիկ բաղանյաց խուց մը անկողնի սենեկեն դռով մը կը զատվեր։ Երբ այս ամենքը տեսան, առաջնորդը դարձյալ «դեռ ի՛նչ բանի որ պետք ունիք, իշխան, խնդրեմ, հրամայեք» ըսավ։ Իսկ Թորոս առաջին անգամ իր սուր աչքերը ցցնելով դիմացինին, ըսավ. «Վայրկյան մ՝ալ սա սենյակը դառնանք»։ Եվ երկրորդ անգամ դիմացի սենյակը մտնելով՝ շիտակ ձեռքը երկնցուց կորաձև ահագին սուսերին, որ պատեն վար կախված էր, վար առավ, կես մը քաշեց պատենեն, զննեց, և ճանչնալով իր հոր՝ Լևոնին սուրը, և դարձյալ իր տեղը զետեղելով՝ «Բաբեկամ,— զրուցեց հատիկ-

հատիկ բառերուն վրա կենալով,— կը զրուցես անոր, որ աս տունը պատրաստեց, եթե հրեշտակ է՝ իմ սրտիս կեսն իրն է այս վայրկենես», և կեցավ։ Մարդը «երբ հրաման ընեք հոստեղի սպասավորին՝ պատրաստեմ միշտ ձեր ծառայության» ըսավ և խոնարհ ձևով ողջունեց ու գնաց։

Ան ատեն Թորոս դառնալով ծառային՝ «Բաբկեն հայրիկ,— ըսավ,— սա տանը գիրքը տեսա՞ր, ել, քանի որ մութը չէ կոխած, շուրջ պտույտ մը ըրե, դիտե առանց դիտելու, տես առանց նայելու, նայե սա տանը կռնակը ի՞նչ տեղի կը պատասխանե, սա պատը ինչի՞ հեցյալ է, տուն է, թե պարտեզ, տեղեկություն մը. մ՝ուշանար, որ կերակուր ուտենք»։

Երբ Բաբկեն գնաց, ելավ Թորոս անշշունջ քննելու տախտակամած պատերուն շենքերը, ամենեն փոքրիկ ճեղքը մանր զննության նյութ եղավ իր արծվի աչքերուն, և վերջապես անկողնո սենեկին մեջ կանգնեցավ հատվածո տախտակի մը առջև և հեգնական ժպիտ մը ծնավ իր շրթանց վրա։ «Ահա իմ փնտրածս,— կ՝ըսեր,— դավաճան տախտակ, դուն բյուզանդացի դուռ մ՝ես, բայց ի՞նչ կը ծածկես քու կռնակդ, իրավ սա անկողինը, սա բեհեզյա վարագույրները, սա զգեստներուն ծալքերը նաև կը զրուցեն թե հրեշտակի մը թևերը անցեր են անոնց վրայեն, բայց հազար տարի առաջ վկայված է, թե խավարի հրեշտակներ կային, որ լուսո հրեշտակաց կերպարանք կ՝առնվին, և սա քաղքիս մեջ, սա անիծյալ Բաբելոնին մեջ լուսո հրեշտակ, ի՞նչ անկարելի հրաշք է. լա՜վ, այս ամեն բան աղե՜կ, բայց հորս սուրը ներսի սենյակը կախվա՞ծ, ի՞նչ կը նշանակե, ո՞վ կը նշանակե. կի՞ն մը. բայց այդ սուրը հաղթանակի հիշատակաց գանձատունեն հանված է, ի՞նչ տեսակ կին կրնա լինել։ Բայց այսօր ինչչա՞փ նոր պատահարք իրարու կը հաջորդեն. բանտե ազատիլ, եղբորս դավաճանը տեսնել, որ զիս կ՝արհամարհե, կայսրը ու իր ամբարտավան պատգամը, որ մինչև իմ հոգիս հայությենե հանել կ՝ուզե, ինչպես իր բոլոր ժողովրդյան հոգին քաղեր, իր քահանաներուն հետ բաժներ և աստուծո բան մը չէ ձգեր։ Ո՜հ, թե որ այդ մարդը իր թագին և իր ժողովրդոց օգուտը ճանչեր, կամ թե ես իր տեղը լինեի՜։ Ես իմ բանտիս մեջ ի՞նչ որ իմ ազգիս, իմ տոհմիս անցյալին վրա սովրեցա իմ հորմես, ի՞նչ որ աս հին հունաց և արդի հոռոմոց վրա ուսա իրենց գրքերեն, որ իրենց վանքերուն գրքատանց մեջ փոշոտած և որդնոտած էին, թե որ այդ մեծ թագով պսակյալ գլուխը ուսած լիներ, անշուշտ այդ հիմար ճառատանքը ինձի չէր ըներ. և փոխանակ զիս նկունս արհամարհելու, իմ ազգս հալածելու՝ արևելյան քրիստոնեության փաղանգ մը կը կազմեր կեդրոնացնելու համար իր ազգը և զմեզ, որպեսզի արևելքի և արևմուտքի հարձակմանց կարենար դիմանալ, որոց կամ մեկուն և կամ մյուսին առջև օր մը դիաթավալ պիտի կործանի, և այս

Մայրաքաղաքը պիտի դառնա Անի մը հափափյալ և առևանգյալ։ Բայց ո՞վ զիս՝ մոռացյալս, ծովուն անապատի բանտյալս՝ հիշել տվավ այդ տղայամիտ կայսեր, որ ինձ արև և ազատություն կը շնորհեր. ո՜հ, իմ Սև լեռան պածյառ արև, ե՞րբ քու սև ժայռերուդ վրա պիտի կանգնիմ, և զԹորոս ան ատեն պիտի տեսնեն իմ ազգս և օտարները, չէ՞ թե տղա մը, որ վերեն վար կը կշռեն, այլ հսկա մը, որու հետ խոսելու համար պետք է վարեն վեր խոսին. և պետք է այդ Անդրոնիկոս համոզվի,թե կորյունը առյուծ է. ո՜հ դավաճաններ, խեղճ երիտասարդ մը իրոք առյուծ էր, կորյուն առյուծու, իմ եղբայրս, իմ Ռուբենս, ճիշտ այսօրվան տարիքս ուներ, առյուծի ուժ, առյուծի սիրտ ուներ. աչքին լույսն առիք՝ արևը խավարեցուցիք. երեք մտանք բանտ, անոնք հոն հալումաշ մեռան, և ես մենակ կ'ելնեմ, բայց խրատված անոնց օրինակեն և անոնց սխալներեն։ Ո՞վ ասված իմ, տու՛ր ինձ մտաց կարողություն չի մատնելու զիս, մինչև որ Ռուբինյան խաչին դրոշակը տնկեմ Տորոսի բարձանց վրա։ Բայց ահա առջի քայլերս ինձի կը ցցնեն աս խավարին մեջ, աս անոք, անօգնական թշնամի երկրին մեջ բարեկամ ձեռք մը առ իս կարկառյալ. բայց բարեկամ հազար ձեռքեր միթե իմ հարազատիս չէի՞ն կարկառյալ. գեղեցիկ, անձնյա, կորովի, անվեհեր, սիրելու համար, բարեկամության համար միայն ստեղծված, ո՞վ կրնար ըսել, թե մարդ մը կրնար գտնվիլ, որ զինքն ատեր, կանայք բոլոր իրեն սիրահար էին, երիտասարդք բոլոր իր ձեռքը կը փնտրեին, ո՜հ բյուզանդյան սեր, ո՜հ բյուզանդյան բարեկամություն. աս քաղքին պարիսպները ինչչա՞փ անիծյալ կիրք կը պատսպարեն. այդ պալատին ոսկեզօծ շողշողուն գմբեթները քանի՞ զազիր ապականության շիրիմներ են։ Իրավ հորս սուրը իմ սիրտս շարժեց, բայց միթե Անդրոնիկոս ինք չի կրնա՞ր լինիլ այդ սուրը հոս՝ սա՛ պատեն վար կախել տվողը, որպեսզի զիս ալ եղբորս ճամփան ղրկե և ազատի ան վրեժխնդրութենեն, թե որ Ռուբենի նման եղբայր մը կա... բայց Ստեփանե՛, բայց Մլե՜հ ի՞նչ եղան, ձայներնին չի կա. թե որ անոնք շարժեին, կյանքի նշան տային, զիս բանտեն հանող մը անշուշտ չէր գտնվեր... Կիլիկիա ի՞նչ վիճակի մեջ է, ո՞վ ինձի տեղեկություն մը պիտի կարենա տալ... Ես... այո՛, ես. պետք է անձամբ երթամ, բայց մինչև այն օրը ես պետք է լինիմ ան հոռվմայեցվույն պես, որ իր հայրենիքը ազատելու համար սուտ խենթ մ'եղավ, ես ապուշ մը կ'ըլլամ, և թե որ նա զիս այնպես կարծե՝ հավանական է թե բոլոր պալատականք այնպես պիտի կարծեն։ Բայց ապուշ մը կին կրնա՞ սիրել... այդ դուռը դնող, այդ սուրը կախող ձեռքը իմ դիմակս հավանական թե կ'ուզե սկրդել... տեսնենք ո՞վ պիտի հաջողի այս խաղին մեջ, և հաղթությունը որո՞ւ պիտի լինի։ Անշուշտ իմս, այո՛, իմս պետք է լինի.

վասնզի ես ցամաքի և ծովու պիտի տիրեմ. այս է գուշակությունը... այո՛, գուշակություն երազի. բայց ի՞նչ է երազը, ո՞վ կրցեր է մեկնել անոր ուսկից գալը, ի՞նչ է անոր նշանակությունը... ես ուզեցի իմանալ երազը՝ Մովսեսի Ծննդոց գրքեն մինչև Գորգիաս Լեոնդացի, Դանիելի Բաղդասարեն մինչև Բոռթակոր Ասպերացի, և համոզված եմ, թե երազները նշանակություն ունին, երբ որոշ են, պարզ հոգվո հստակության քունի մեջ և ծնունդ հանդարտության մտաց, և իմ փառավոր ծերս հիրավի աստվածային կերպարանք ուներ իր վսեմ և լուսալիր դեմքով, իր փառահեղ մորուքով, իր նշուլագեղ աչոք, որու ակնթարթը զիս տղայությենն ի մարդ փոխարկած էր, երբ արթնցա։ «Ի՞նչ,— ըսավ հայրս Լևոն,— հացը՝ հայրենի հող, ձուկը՝ ծով կը նշանակե, դու ծովու և ցամաքի պիտի տիրես, ու ես չպիտի տեսնեմ»։ Եվ իրոք քանի մը օր անցավ, ու ինք մեռավ, և ես մնացի մինակ, աս աշխարհիս վրա օտար, բանտարկյալ, պաշարյալ բոլոր իր թշնամիներեն... իր թշնամիները թե որ մինակ լինեի՞ն, բոլոր հայության թշնամիներեն. վասնզի ես թե որ բանտեն կ'ազատիմ այսօր, անշուշտ հայ մը չի կա աշխարքիս վրա, որ հայուն անկախությունը և ազատությունը մտածե։ Մի՞թե իմ պապերս, Ռուբեն Կոստանդին, հորեղբայրս Թորոս և հայրս Լևոն թե որ ուզեին, թե որ խնդրեին հունական արծվույն սոթտած թևերուն տակ մտնել Լամբրոնական Օշիններու, Հեթումներու պես ուրանալով հայության իրավունքը, հայրենյաց և ազգության սերը, մի՞թե այս թուլամորթ և քնեած կայսերք, որոնք անգործ ամբարտավանության, վավաշոտության և աստվածաբանական վարդապետությանց ստվերներու տակ կը թավալին, կը մերժե՞ն զանոնք. քա՛վ լիցի։ Բայց անոնք արքայական արյուն ունեին երակներու մեջ, և այն նշանավոր օրը կը հիշեին՝ ուր հայ ժողովուրդը՝ սինլքորը, ռամիկը, շինականը, որ ազնվական չէր, որ ազատ չէր, որ եկեղեցական չէր, ոչ Վեստ Սարգսի պես, ոչ հրաշագործ Գետադարձ կաթողիկոսին պես, ոչ Կիրակոս Երեցի պես, կ'երթար կը դիմեր առ Վահրամ, և անոր քաջության ընկերացած ջարդուբուրդ փախստական ընելեն վերջ հունական բանակը, որ Անիի բանլիքները, մատնության նշան, ձեռքը կուդար քաղաքը պահանջելու, և եռքը թողած զենքերը՝ հուսահատ և լքյալ Աշոտներու, Սմբատներու, Գագիկներու գերեզմանաց վրա վերջի և անհուսության արցունքը կը թափեր. ահա այդ ժողովրդյան սերն էր, որ կ'ոգևորեր իմ պապերս և հունական ատելությամբ և արդար վրեժխնդրությամբ կ'ելնեին Տորոսի բարձանց վրա կանգնելու ազատության դրոշակը, և ես այդ սիրտը ունիմ և կ'զգամ, ե՛ս որ չէ թե միայն իմ նախահարցս զավակն եմ, այլ այս օտարախորթ հունաց գրականության, որ չեն գիտեր և չեն ճանչեր իրենց Լիգուրկները, իրենց Լեոնիտասները, իրենց

Արքեոդիտները, այլ կը նստին ժամերով և օրերով կը վիճեն, կը կռվին և կը հալածեն իրենց դավանակից եղբարքը կաթիլ մը ջուրի, հացի մը խմորի, անիմանալի բառի մը մեկնության համար։ Խելագարնե՞ր, թե որ աստված տա ինձ կատարել իմ փափագները, ո՜հ, գիտեմ, թե ի՞նչ կ'ընեմ. բայց հույսերս մեծ, և վիճակս դժվարին. տեսնե՞նք...»։

Այս խորհրդածության վրա էր, երբ Բաբկեն ներս մտավ։ Իսկ Թորոս զինքը առանց խոսեցնելու մյուս սենյակ տանելով հարցուց թե ի՞նչ տեսավ. և ինչպես կերևակայեր, բարձր պատերե զատ բան մը չէր կրցած նշմարել։ Ուստի առանց ժամանակ անցնելու իշան ընթրելու, վասնզի արդեն ճաշու ժամանակը անցեր էր, և իրենք առտվնե մինչև երեկո դեռ բան չէին կրցեր ուտել։ Բայց անոթութենեն ավելի հետաքրքիր էր Թորոս իմանալու, թե ի՞նչ էր կերակրո պատրաստությունը այս անսովոր տան մեջ՝ ուր դարանակալ ձեռք մը կը նշմարվեր կամ սրտի, կամ կենաց. ուստի իշավ սեղանատուն և երբ ակնարկեց Բաբկենին նըստիլ սեղան իրեն հետ, երբ նա կը քաշվեր, «Բաբկեն հայրիկ։ թե որ պարագները պահանջեն, ես քեզի կ'իմացնեմ, թե ե՞րբ ինձի սեղանակից պիտի չլինիս, իսկ ուրիշ ժամանակ մեր բանտի սովորությունը չենք փոխեր. և որոշ գիտցիր թե ինձ ավելի ախորժելի է հորս հավատարմին և իմ տղայությանս խնամածուին հետ անուշ հացն ու պանիրն ուտել, քան թագավորաց շնորհյալ խորտիկներն օտարներու հետ վայելել», և նստան։ Կերակուրներն ընտիր և համեղ էին առանց շռայլության, գինին ազնիվ էր և պտուղներն պատվական, Թորոս առանց բառ մը զրուցելու ելավ սեղանեն, տան սպասավորը, որ կը ծառայեր, հարցուց ան ատեն, թե՝ «ի՞նչ հրաման ուներ երկրորդ օրվան կերակրին համար». իսկ Թորոս պարզությամբ պատասխանեց. «Այսօրվան կերակուրը ով քեզի պատրաստել հրամայեց՝ անոր կը հարցնես»։

Եվ ինք քաշվեցավ վերնահարկը. նախ Բաբկենի ապսպրելով վարի հյուրի սենյակը անկողին մը տարածել և պառկիլ և միշտ արթուն քնանալ. «Թեպետ, հավել ժպտելով, այդպիսի պատվեր մը ավելորդ էր այնպիսի մարդու մը համար, որ 12 տարեկան սկսած էր հորեղբորը և հորը ամեն պատերազմց գտնվիլ և խելամուտ էր թե թշնամյաց բանակե մը շրջապատյալ՝ միշտ զգույշ պետք էր լինել»։ Եվ առանց երկար խորհրդածության մտավ անկողին և պառկեցավ, իբրև թե իր հայրենի վահկա բերդին տղայության ապահով սենյակը լիներ, և քունն թեպետ քանի մը ժամ ուշացավ վրա հասնելու, բայց վերջապես այնպիսի տարիքի մը մեջ՝ օրվան զանազան դիպվածներու պատճառած սրտահուզությունը հաղթեցին կամքին զորության և քնացավ. երբ արթնցավ, ինչպես տղայության սովորությունն էր, մեկեն ցատկեց անկողնեն և բնականաբար աչքը դարձուց խաբուսիկ դռան, որ անշարժ պատի մը կերպարանք կը պահեր. պատուհանը բացավ և տեսավ, որ Բաբկեն պարտեզին մեջ անխոով կը շրջագայեր. երիտասարդին ակնարկին վրա վեր ելավ, և առջի նայվածքը, հար և նման Թորոսի, խաբուսիկ դռանը եղավ։

— Բաբկեն հայրիկ,— ըսավ իշխանազունն,— ի՞նչ հետաքրքին աչք կը նետես այդ պատին վրա, ի՞նչ տեսար։

— Հիմա չէ որ տեսա,—պատասխանեց Բաբկեն,— երեկ տեսա ես այդ դավը, բայց վտանգը իմ կարծածիս պես չելավ։

— Ի՞նչ ըսել կ'ուզես։

— Ան կ'ուզեմ ըսել, թե ես կարծեի, որ այդ դռնեն սուսերավոր թշնամի մը պիտի ելնե, իրոք թշնամի մը ելավ, բայց իմ կարծած տեսակես չէ։

— Ի՞նչ կ'ըսես, Բաբկեն, բան մը չեմ հասկնար։

— Դու ինձի ըսիր թե «արթուն քնացիր», և ես արդեն միտքս դրած էի. բայց ի՞նչ օգուտ արթուն քնանալ վարի սենյակը անկողնի մը վրա տարածյալ, ուստի պետք էր այնպես դիրք մ'առնեի, որ տան մեջի շարժումները տեսնեի և հայոց միակ հուսույն վրա հսկեի. ուստի երբ ամեն ձայն դադրեցավ քաղքին մեջ, քիչ մ'ալ անկողին փոխենք, ըսի, ելա կամաց մը իշա պարտեզ ու սոսի ծառեն հարմար անկողին մը չի դտնելով, անոր վրա զետեղեցա. և իրոք մինչև կեսգիշեր ամեն տեղ լուռ էր և խավար, բայց հանկարծ քու պատդ տեսա, որ ճեղքեցավ, և տկար լուսո գիծ մը նկարվեցավ. ձեռքս սա պահած թուրիս տարի, ս. Գրիգոր Լուսավորիչ, ըսի, ինձի համբերություն տա...

— Ի՞նչ. պիտի պոռայի՞ր։

— Աստված չընե՛. ճյուղեն ներս պիտի ցատկեի, մենք մեր Սև լեռը լավ կը ցատկենք, բայց միջոցը շատ էր, պատուհանը նեղ, անշշունջ ցատկելն անհնար, եկողը կրնար փախչիլ, մանավանդ որ լույսը տկար էր, ուրեմն՝ եկողը վախկոտ, ուրեմն՝ պետք էր սպասել. և վայրկյանը տարի մը եղավ, լուսո երկայն, վերեն վար գիծը սկսավ շարժիլ, բայց անզգալի կերպով, և ահա գլուխ մը տեսա. փա՜ռք քեզ, Լուսավորիչ, ըսի, սուրը տեղը դրի. սատանի գլուխը կնկան մ'էր. բայց ի՞նչ կ'ուզեր. մտիկ կ'ըներ, կ'ուզեր իմանալ, թե դու իրոք քուն ե՞ս. երբ ապահով եղավ, դուռը կատարյալ բացվեցավ, քողարկած լուսով մը ի ձեռին մտավ սենյակը, նախ զգուշությամբ սենյակը զննեց, վերջը կամաց-կամաց մոտեցավ դեպի քեզ, և երբ իր երեսը տեսա, գիս դող առավ...

— Ինչո՞ւ, ի՞նչ կար երեսին վրա, ի՞նչ էր։

— Լուսո պես աղվոր էր. սատանան երբ աղվոր է, ես շատ կը վախեմ, մանավանդ հիմա, քեզ կը դիտեր, քու վրադ կ'աղոթեր, ես ալ

կ'աղոթեի, որ այդ գեղեցիկ սատանային ճանկեն լուսավորիչ քեզ ազատե, քանի մը վայրկյան կեցավ, և վերջը գիտես թե մեկը զինք ցնցեց, առավ իր լույսը և ինչպես անշշունջ մտավ, նույնպես հալածեցավ գնաց։ Տեսիլն աներևույթ եղավ։

— Ա՞յս էր բոլոր քու տեսիլքդ ու վախդ, Բարկեն հայրիկ,— ըսավ ծիծաղելով Թորոս։

— Այդ կինը թե որ շատ աղվոր չըլլար, չէի վախեր։

— Կ'իմանամ, կը վախես, որ խելքս անոր կ'երթա և մեր լեռները կը մոռնամ, այնպես չէ՞։

— Այո՛, ստույգ ալ ատ է։ Թե որ այդ կինը աս քաղաքը ձգե, քեզի հետ գա, իր նեղով հավատքը թողու, Լուսավորչի հավատա, մենք անիկա մեր լեռներուն թագուհի կ'ընենք, բայց հոռոմ կինը անիծած է. դու ալ մեր իշխանը՝ լավ ես, խելոք ես, գիտուն ես, շատ կարդացող ես, վարդապետի չափ բան գիտես, բայց կնիկ տեսած չունիս. վախեմ, որ ինչպես մեր հայու գրքերը մոռցար ու վանքին բանտը հոռոմի գրքերը կը կարդայիր, մեր կնիկներն ալ չի մոռնաս այդ հոռոմին կնկան համար։ Ես լուսահոգի հորդ կ'ըսեի. «Տե՛ր, մեր Թորոս իշխանը լավ է, բայց այդ նեղված աղգին գրքերը կը կարդա, վախեմ Լուսավորչի հավատքն մոռնա»։ Նա ինձ կ'ըսեր. «Բարկեն, Թորոսեն մի վախեր, նա ինձմե խելոք, հորեղբոր պես է, օր մը մեզ պիտի մոռցնե, մեզմե քաջ, մեզմե լավ պիտի լինի. դու հոգ մ'ըներ, կը տեսնես»։ Ես ալ անհոգ կը լինեի, բայց երբ կը տեսնեի Նարեկ բարձիթողի, ու որդնոտած, փոշոտած հոռոմի գրքերը գաղտուկ կը բերեիր ու գիշերն ի լուռ կը կարդայիր՝ «Աստված պահե մեր իշխանիկը» կ'ըսեի։ Հիմա տեսա այդ կինը, իր դեղձան մազերը ոսկեկապ ձգած կոնկեն, որ ականջդ ի վար քեզ դյութել կը ջանար, վախն առավ զիս, աստված քեզ պահե, լուսավորիչ քեզ լույս տա։

— Հոգ մ'ըներ, Բարկեն հայրիկ, աստված կը պահե. իմ սիրտս քիչ մ'ապահովցավ. ինչպես հոռոմոց գրքերը զիս ապահով ըրին իրենց կրոնքին վտանգեն, իրենց կանայք ալ զմեզ կ'ապահովեն իրենց արանց վտանգեն։ Դու շատ լավ ըրեր ես, այս գիշեր անկողինդ՝ թռչուններեն փոխ առեր ես, ա՛լ ապահով կրնաս գիշերները քնանալ, վասնզի թշնամին քու կարծածիդ չափ զորավոր չէ. ո՞ գիտե թե նիզակակից մ'ալ չէ մեզի։

— Աստված պահե հոռոմի մը նիզակակցութենեն,— ըսավ ծերուկն, երեսը խաչակնքելով,— հարցո՛ւ այդ փռանկներուն, թե ի՞նչ վաստակ ըրին ատոնց օգնութենեն, հոռոմը կը խոստանար անուշ-անուշ բարեկամություն, պաշար, առատություն, մյուս կողմե ձեռքի տակե խոտերն ու արտերը կայրեր, ցորենն ու գարին ջուրը կը թափեր, գեղն ու քաղաք անապատ կ'ըներ, երբ մեր Կիլիկիա հասան քու պապուդ օրը, հայրս կը պատմեր, աստված լուսավորե անոնց հոգին, ձի չէր մնացեր տակերնին, ճամփան ամենն ալ սատկած էին, մարդիկ ըսես հալումաշ եղած անութութենե, հիվանդութենե, գիտես թե բարակ ցավի էին հանդիպեր, մենք կ'ըսեինք, որ ամենն կը մեռնին, ան քաջ պարոններ ու փռերներն, թե որ մեր հայու հացն չուտեին՝ Երուսաղեմ չէին մտներ, բայց նա, որ շատ խելոք մարդ էր, աստուծո սիրուն համար ալ, իր սիրուն համար ալ, անոնց թագավորին գնաց, պետքերնին լցուց. կիրան, խմեցին, ութ օր չանցավ, ամեն մեկը մեյմեկ ցուլ դարձան, ուժովացան, գնացին ամեն տեղ առին, ս. գերեզմանն ալ ազատեցին, ի՞նչ օգուտ, սա փռանկները ուժով են, քաջ են, լավ բազուկ ունին, բայց գլուխնին դատարկ է, խելք չունին, սա հոռոմք հակառակն են, ուժ չունին, բայց շատ գիտեն, խորը կը տեսնեն, նայե՛ ատոնց տերտերներուն աչքին, դժոխքի ճրագ կը նմանի, գիտես թե սատանան մեջը կը ալպալա։ Ես աս գիշերվնե ի վեր հոռոմ մարդկանցմե ավելի կնիկներեն կը վախնամ։

— Փուճ տեղ կը հոգնիս, Բարկեն,— ըսավ Թորոս լուրջ կերպով,— մենք հիմա քարե, փայտե բարեկամ մը չունինք, պետք է որ պատրաստվինք աս անիծյալ քաղաքեն փախչելու, ծոցերնիս ստակ մը չունինք, որ նավու մը վարձք կարենանք ընել, քու ըսածիդ պես թե որ խելոք լինինք և առիթ մը երբ պատահի անկից օգուտ քաղել չգիտնանք, մենք ալ քու փռանկներեդ ավելի դատարկ գլուխ կը լինինք։ Դու նայե սա քաղաքս, այսօր պտույտ մը ըրե. տե՛ս, նայե՛ հայ մը կը տեսնես թերևս, ամեն հայու ականջ մի՛ դներ, հայերեն խոսող ուրացյալ հայ կարելի է շատ գտնես, բայց սրտով հայ շատ քիչ կա, մանավանդ տերտերներեն զգուշացիր, անոնց լավը սուրբ է, բայց գեշը սատանայեն ալ վատ է։ Երբ իմ վրա խոսք դառնա, զրուցե՛ թե ապուշին մեկն է, զրուցե թե միտքը բռնված տարտամ մարդ մ'է, հորը հիվանդութենեն վերջը փոխվեցավ զրուցե, ցավե, ողբա իմ վրաս. իսկ թե որ մարդ մը հանդիպես, իրոք ճշմարիտ մարդ մը, քանի մը տեսութենե վերջ ինձ իմաց տուր անունով, տեղով, անցյալով և հետո, երբ որ ուզեմ, ինձի կը բերես։ Ահա քու ընելիքդ։

— Լավ,— ըսավ Բարկեն, ելավ երթալու։

Շատոնց էր, Լևոնի մեռնելեն վերջը, այսչափ երկար խոսակցություն չէր ունեցեր իր երիտասարդ տիրոջ հետ, ուստի ուրախ էր սրտով, թեպետ դեմքը ծիծաղի սովորությունը մոռցեր էր։ Եվ երբ դուրս կ'ելներ, ձայնեց Թորոս.

— Բարկեն հայրիկ, փող ունի՞ս։

— Մեկ փող չի կա, բայց աստված ողորմած է։

— Ինչպե՞ս։

— Երբ ոտք չունեիք, աստված ոտք տվավ, հիմա ալ ստակ չունինք, աստված մեծ է, կուտա, դու հոգ մ'ըներ։

ԳԼՈՒԽ Գ

ԽՆԱՄԱԿԱԼ ՁԵՌՔԸ

«Լա՜վ,— ըսավ Թորոս ժպտելով, երբ Բաբկեն գնաց,— աղեկ գիտե ծերուկն, որ ես ալ փող մը չունիմ. պատվակա՞ն մարդ, աստված իրեն հաջողություն տա. տեսնենք ինչպե՞ս կը դառնա և երբ, վասնզի ան մարդկանց մին էր, որ պարապ դառնալ չեն գիտեր։ Ի՞նչ մտածություն՝ ծառին վրայեն հսկել իմ վրաս, և շնորհս Բաբկենի իմացա, թե ո՞վ է անձը, որ զիս կը խնամե, թե որ այդ խնամքը ծուղակ մը չէ. վանքի մը մեջ բանտարկյալ անձի մը սիրահարվիլ, ուսկի՞ց զիս տեսեր է, ո՞ւր ճանչեր է. ահա չորս տարի է, որ աշխարհքի հետ մեր ամեն հարաբերությունք կտրված էին, սենյակ մը երկթե վանդակներով մեզի կը ներեր կղզվույն բարձրությենեն տեսնել ծովը շրջապատյալ, և խեղճ հայրս երկու հողի վրա աչերը սևեռյալ՝ կը նայեր հողը, որ Ռուբենի գերեզմանն էր, և որու քով ինք պիտի թաղվեր, և ծովեն անդին քիչ մը հեռուն Ասիո ծովափունքը, որոնց շարունակությունը կ'երթա մինչև Կիլիկիա։ Կիլիկիա՜, ուր երբեմն թեպետ տղա, կը հիշեի առյուծը, որ Տորոսի բարձանց վրա կանգնած կը դիտե՝ ահա մեր սահմանը կ'ըսեր, որ աստված որոշեր է. ահա սա լեռներուն գիծը և ծովու ալյաց փայլը, թե որ կարենայի՞նք հայությամբ լեցնել այդ երկիրը, կը հիշեմ նաև այն օրը, որ նա դղյակը դարձավ մեծ պատերազմե մը վերջը, ուր շարունակ ամիսով հորեղբորս հետ մեկտեղ սկյութացվոց ահագին բանակի մը արշավանաց դեմ կը պատրաստվեին, ի՞նչ սոսկալի ամիս էր ան։ Ես մորս և եղբորս հետ կ'ելնեինք մեր լեռանց վրա այցելության ան խեղճ ժողովրդյան, որ փախեր լցվեր էին կանանց, աղայոց և կենդանյաց բազմությամբ ապաստարան գտնելու Տորոսի ժայռերու վրա, մարդիկ բոլոր զինյալ հորեղբորս և հորս հետ բարբարոսաց բանակը կը դիտեին, որ չբավականանալով ավարավ, գերությամբ ու կործանմամբ՝ կայրեին, կը վառեին գյուղեր, ավաններ ու քաղաքներ, արհավիրք և սարսափ պատած էր զամենքը, ամեն անհամբեր հորեղբորմես ակնածողք՝ հորս աննկուն և հանդուգն քաջությունը գիտնալով իրեն կը դիմեին. «Մինչև ե՞րբ պիտի սպասենք,— կ'ըսեին,— դու ե՛լ, մենք ամենքս քեզի հետ ենք, հատանք, լմնցանք, մինչև ե՞րբ սպասենք»,— իսկ Լևոն, հայրս՝ «Տղա՜ք, խենթեցա՞ք,— կ'ըսեր,— ես մեծ եղբորս այսպիսի վտանգավոր ժամանակ անհնազանդ լինիմ, աստված չընե, ես լավ կշռած և խելամուտ եղած եմ, որ առաքինի իշխան և հմուտ ու իմաստուն զորավար է նա, այսպես ժամանակ խորհուրդ տալն անգամ հանցանք է. երբ ըսե՝ պատերազմինք, պատերազմինք ու մեռնինք, բայց ան ատեն միայն»։ Եթքը տեսանք, որ հասնեին Տիգրան, Սպլասաթ իրենց խումբերով, Գող Վասիլ իր աննկուն վաշտերով, և ահա լատինացի սպառազինաց փոքրիկ խումբ մ'ալ վրա հասավ, և պատերազմի փողը սկսավ հնչել Վահկա բերդին վրայեն, փողհարք լեռները կը հնչեցնեին, և ամենքը գնացին։ Ես ան ատեն տասը տարու էի, և Ռուբեն, որ ինձմե երեք տարու մեծ էր, սուր մը ձեռքը եկավ զիս գտավ. «Քալե՛, Թորոս,— ըսավ,— մենք ալ երթանք պատերազմի, մենք կնիկ ե՞նք, որ հոս դղյակը նստինք». ես տարտամ կը մտածեի, վասնզի սուր չունեի, երբ մայրս վրա հասավ, երկուքնիս ալ զինյալ և անզեն բերդին աշտարակին մեջ բանտարկել տվավ։

Օր մը հոն կեցանք, մեկ մ'ալ հաղթության ձայներ լսվեցան, մեր բանտին դռներ բացվեցան. իրավ, թեպետ ամեն աչք սգո արցունք կուլային, բայց դարձյալ հաղթության ուրախությունը զամենքը գինովցուցեր էր. իսկ հայրս երբ տեսանք, շփոթեցանք, չէինք գիտեր ո՞ղջ էր թե մեռած, վիրավոր կարծեցինք և իմացանք թե հոգնած էր և թե հաղթությունը գրեթե նորա քաջության սքանչելիքն էր։ Անկողնին մեջ պառկած օրերով՝ բոլոր զորագլուխները կուգային զինքը փրկիչ կանվանեին, և հորեղբայրս նախ կը վկայեր աննախանձ, թե աստուծմե վերջը Լևոն Կիլիկիո ազատարարն և առյուծն եղավ։ Ամեն օր կուգար զինք տեսնելու։ Ի՞նչ ուրախ օրեր անցան մինչև գերության օրերն, որ եկան. ո՜հ, մոռնամ այն օրերը և չհիշեմ։ Ներկային վրա՝ այո՛, պետք է մտածել, բայց ներկան անծանոթ ապագա մը ունի. տեսնենք սա կինը անշուշտ ինձի պիտի երևա, և սա քողը պիտի վերնա. ի՞նչ կը նշանակե. թե որ հույները զիս սպաննել ուզեին՝ ի՞նչ դժվարություն կար իրենց համար. սպասենք ուրեմն»։

Սպասավորը եկավ ճաշի հրավիրելու. իշխանը, որ երբ իջավ, տեսավ, որ հարգանոք կ'ողջուներ զինք առջի օրվան մարդը, որ տուն առաջնորդեր էր և բնակեցուցեր, դարձյալ իմացնելով, թե պատրաստ էր ամեն հրամանները կատարել. իսկ Թորոս իր անհոգ և միամիտ ձեր հագնելով, պատասխանեց, թե գոհ է և գանգատի նյութ ամենևին չունի։ Ուստի ճաշը կատարելեն վերջը առանց երկար խոսակցության մտնելու այդ

մատակարարին հետ, քաշվեցավ դարձյալ վերի սենյակը՝ իմացնելով, թե քուն ունի։

Թե որ Ալեքսանդրե սկսյալ բոլոր երևելի մարդիկ ծանր պարագաներու նախերգանաց մեջ կրցեր են քնանալ, պետք չէ զարմանալ, հաջողության ապահովությունը միշտ հոգնած մտքի մը քուն կը պարգևե, այսպես եղավ նաև մեր Թորոսին, որ դարձյալ քունի թաղվեցավ. բայց քուն մը, ուր իրեն կերևար, թե գեղեցիկ, ոսկեթել մազերով կին մը թեթև քայլերով իբր ստվեր անկողնին շուրջը կը պտտի, ու քանի անգամ, որ ձեռքը իրեն կ'երկնցներ՝ փախուստ կուտար. ան խաղը շատ անգամ հանդիպելով վերջապես աչքերը բացավ և մարդ չի կար. աչքը խաբուսիկ դռանը դարձուց և տեսավ կիսաբաց, թեպետ կորովի, թեպետ բնութենեն աներկյուղ, սաստիկ զարմացավ տեսնելով, որ իր անշարժ սիրտը կը թնդար, կը բաբախեր և զորություն մը զինք կը ձգեր, կը քաշեր դեպ այդ կիսաբաց դուռը. ուստի կանգնեցավ գինովի մը պես, դռները սողաց, անհետ եղավ իր մատանց դպելուն և մտավ նա նոր սենյակ մը, ուր լռություն և միայնություն կը տիրեր. քողարկյալ վարագույրներով պատուհաններ լույս կը նվազեցնեին, բազմոց մը և խորանի պես բան մը կար մեկ կողմը, դեպի հոն դիմեց և հազիվ թե քայլ մը առավ, մնաց... Եղբորը՝ Ռուբենին, կենդանի պատկերը պատին վրա կախված, գույնզգույն, թարմ ծաղիկներով պսակված տեսավ. ան տեսարանը մեկեն զինք փոխեց, սրտին փոթորիկը դադրեցավ, ալեկոծությունը հանդարտեցավ, և հորդառատ արցունքի հեղեղ մը երեսնիվար կը վազեր, ձեռքը՝ ճակատն ու մթնցած աչքերը կը գոցեին, արձան մը տխրության հոն կեցեր էր, երբ փափուկ, պզտի ձեռքը մը՝ անուշ ձայն մը, որ իր անունը կուտար, զինքն ի խորունկ քունե արթնցուց. և երբ տղու մը պես իր ձեռքը թույլ տվավ այն ձեռքին և աչքերը դարձուց անոր, որ զինք կը կոչեր, հիրավի սքանչելի, ազնվական և լուրջ կերպարանք մը տեսավ, պարզ՝ զգեստներուն, պարզ՝ զարդարանաց և պարզ իր գեղեցիկ հասակին համեմատության մեջ։ Աչքերը իրեն հառյալ՝ «Բավ է այդչափը, իմ սիրուն Թորոս,— ըսավ,— արցունքը մեր կանանց իրավունքն է, ձեր բաժինը վրեժն է. ես շատ գիշերներ անցուցեր եմ այդ պատկերին առջև արցունքով»։ Իսկ Թորոս այդ ձյունափայլ ձեռքը իր շրթանց տարավ, ոչ ոչ խոսիլ, չի կրցավ, վասնզի արցունք և սրտի հուզմունք ձայնը խեղդեր էին. իր քաղցր խրատտուն իբր գորովալի մայր՝ ձեռքեն բռնած տարավ բազմոցին վրա քովը նստեցուց և բեհեզյա թաշկինակավ իր և անոր արցունքները կը սրբեր։ Երկայն վայրկյաններ անցան և այս երկու տարբեր գեղեցկության սքանչելիքն իբրև հին բարեկամներ ձեռք-ձեռքի, ծունկ-ծունկի, աչք-աչքի կիսանվաղ կը նայեին, մինչև աչքերը կենդանություն առին,

և վերջապես Թորոս կամաց ձայնով մը ըսավ. «Չեմ գիտեր ով ես. բայց հրեշտակ մը չի կրնար ուրիշ կերպարանք մը ունենալ և ոչ ուրիշ ձայն մը և ոչ այդ գորովալից խնամքը. դիս թշվառ պանդուխտս, հեգ բանտարկյալս, դժբախտ գերիս, ո՞ւր տեսար, ինչո՞ւ կարեկցեցար և ինչպե՞ս սիրեցիր. ան պատկերին առջև չի հասած հանելուկը հանել անկարելի էր, բայց հիմա կարծեմ թե կը խելամտիմ»։

— Այս էր իմ փափագս ալ. երկայն. սովորական և անհամ տարփական խաղեր ինձի սիրելի չեն։ Ուստի նախ զիս, իմ անցյալս պիտի ճանչես։ Իմ անունս Եվփիմե է. իմ հայրս՝ Ալեքսիս, Փոքր Հայոց կուսակալ. երբ Սեբաստիա Հայոց թագավորաց հանձնվեցավ, Արծրունի իշխանի մը աղջկան հետ կ'ամուսնանա, և Պոլիս դառնալեն տարիներե վերջը ես կը ծնիմ. ես կաթնկեր տղա՝ միակ մխիթարություն կը մնամ մորս, որ իր նոր ազգության հետ բոլորովին չէր կրցեր հաշտվիլ մինչև իր մեռած վայրկյանը, ուստի ես հազիվ չափահաս եղած Կոստանդին կայսրը զձեզ կալանավոր բերավ Կիլիկիայե, մայրս առանց ձեզ ճանչելու անմխիթար էր ձեր անկման համար. ընկերացյալ հորս հին բարեկամաց՝ ամեն ջանք ի գործ դրավ՝ առանց երբեք երևալու և հաջողեցավ զձեզ բանտեն ազատել և արքունյաց դուռը նաև բանալ ձեզի. այն օրեն՝ և առջի տեսնվելուն զիս Ռուբենի հետ նշանելու միտք հայտնեց, մանավանդ որ տարեկից էինք։ Բայց Ռուբենի սրտաբաց կերպը, գեղեցկությունը, բյուզանդացի կանանց անբարոյական վրաձգողությունը, նորա ալ զվարճությանց անհագ սերը մորս մտաց հաստատությունը խախտեց, և դեռ մեկուն չի բացված սկսավ ջանալ զիս համոզել, որ այդ երիտասարդեն անցնիմ, քանի որ ապագա դժբախտություն մը ակներև էր, բայց իմ սիրտս այդ պատճառաբանությանց չէր կրնար համոզվիլ, նախանձը զիս կ'ուտեր, և անտարբեր կը ձևացնեի ինքզինքս. պատերազմ կար ներսս, և մեկուն չէի կրնար բանալ. ուստի մորս հնազանդելու համար ամեն ջանք ըրի, և Ռուբենի անունն անգամ ալ բերնես չելավ. մայրս կարծեր, թե մոռցեր էի, և ես Ռուբեն կերազեի։ Ջանազան անձանց հետ ամուսնության առաջարկներ ըրավ, բայց ես միշտ կը հեռացնեի, մինչև որ ծանր հիվանդությամբ պառկեցա, և բանդագուշանքս մորս հայտնած էին գաղտնիքս, ուստի խեղճը բժշկին խորհրդով զիս Ռուբենի հետ ամուսնացնելու ամեն ջանք ընելու խոստմունք ըրավ, և հիվանդությունը նույն վայրկենին բարեփոխություն ունեցավ, և օրավուր ես առողջության մեջ հաստատվեցա, գույներս եկան. Ռուբենի հետ մեկ քանի տեսություն իր կյանքի ձևը փոխեցին, և Ռուբեն առանց մեզի սպասելու առաջարկություն մը ըրավ մորս՝ հորը հավանությունն ընդունելու պայմանավ։ Մեր ուրախությունը, մանավանդ մորս ուրախությունը, անկարելի է պատմել. բայց

ինչչա՜փ կարճ եղան ուրախության օրերը։ Հանկարծ դժբախտ դիպվածին լուրը տարածվեցավ, մայրս զիս մխիթարելու կը ջանար, երբ ինք ինձմե ավելի հիվանդ էր, ես անկողին ինկա, սաստիկ ջերմ մը զիս կը տանջեր. նույն միջոցին մայրս ուրիշ սենյակ մը մեռեր էր։ Պառավ հորաքույր մը իմ վրաս կը հսկեր երկու տարի, և հորս բարեկամ, ծեր և փորձ բժիշկ մը, որ հազիվ թե ես քիչ մը շարժելու սկսա՝ զիս հյուծյալ և մաշյալ՝ Իշխանաց կղզին օդափոխության տանել հրամայեց, մեր բնակարան տունն ինք որոշելով. հոն հորաքույրս և ինք ինձի հետ միայն կ'ղբաղեին և կ'առնեին զիս մոտակա վանքը կը տանեին մեծավորին, և բժիշկը կը նստեցներ զիս պատուհանի մը առջև, բարի և սրամիտ ծերուն դիտավորությունը իմացա այն օրը, երբ զքեզ հորդ հետ տեսա, պարտեզին մեջ կը շրջագայեիք. Ռուբեն կենդանացած կարծեցի, և գետին պիտի գլորեի, թե որ արթուն ծերը, որ զիս աչքեն չէր կորցներ, զիս չբռներ. մարելուն հետևանք սոսկալի ջղային ցնցմունքներ եկան, և այն օրեն կյանքը իմ երակներուս դարձավ. զքեզ երբեմն տեսնել նույն պատուհանեն իմ դեղս եղավ. տեսա դարձյալ զքեզ հորդ դագաղին ետևեն, երբ բանտեն գերեզմանատունը կը տանեին, երդում ըրի ան ատեն զքեզ ազատելու համար ամեն ջանք ընել. տարի մը անօգուտ աշխատեցա իմ պատվական բժշկիս հետ, և երբ Մանվել հորը տեղն անցավ, ալ ապահովեցա, իսկ քու սրտիդ համար ամենևին երկբայություն չունեի. և այնպես համոզված էի, թե Ռուբենի այնչափ նման եղբայրը, որ զիս այնչափ սիրեց, անկարելի էր, որ անոր սրտին նման սիրտ չունենար, և թե նորա հիշատակը մեր սրտերուն հանգույց չլիներ։

— Այսպիսի ազնիվ սրտի, այդ հրաշագեղ կերպարանաց, այդչափ իմ ազատությանս համար եղած ճգանց, եղո՜ւկ, դառնացյալ սրտե մը զատ ոչինչ չունիմ, և այն կրնա՞ բավական փոխարեն համարվիլ։

— Ի՞նչ,— ըսավ աղջիկը, և աչքերն այնպիսի լուսո նշույլ մը փայլատակեցին այս հարցական բառին հետ, որ Թորոս զարմացավ,— դու սի՞րտ մը միայն ունիս. չէ՛, Թորոս, դու այդ սրտիդ հավասար ապաստա մ'ալ ունիս, դու իշխանության ընդարձակ երկիր մ'ալ ունիս և անոնք կը մոռնա՞ս. ես քու ձեռքիդ երբ փափագեցա, քու իշխանությանդ փառքին ալ մասնակցիլ փափագեցա, ահա կը տեսնես, որ ես շատ շահասեր եմ և շատ փառասեր, մի՛ կարծեր զիս այն կանանցմե, որոնց մտքին ընդարձակությունը իրենց սրսկապանեն անդին չի կրնար տարածվիլ, ո՛հ, չէ՛, ես քեզի՝ ինչպես Ռուբենին՝ իշխանական աթոռ մը կը փափագիմ, ես ձեր այս տոհմական կազմվածքին մեջ Պլուտարքոսի դյուցազուններ կը տեսնեմ. ներե՛, ես դեռ մորս ազգին դյուցազունքը չեմ ճանչեր, և կրնաս ապահով լինել, որ անխոնջ գործակից մը և ամենայն վտանգաց անվեհեր դիմագրավ մը հիս պիտի գտնես։ Դու ճանչցար հորդ սուրը, զոր քեզի համար պարտավորեցա զինարանեն գողնալու հարյուրապատիկ իր գնույն վճարելով (նյութական գնույն է խոսքս), և դու արժանի մնացիր զայն կրելու։

Թորոս առանց իմանալու բազմոցեն ծունկի վրա եկեր էր աս հրաշագեղ մարգարեուհվույն առջև, իր բոլոր խոհեմության առաջադրությունները մեկդի դնելով, և երբ դադարեցավ խոսքեն՝

— Քուկդ եմ,— ըսավ,— ըրե զիս ինչ որ կուզես. դու փառասեր ես, կըսես, կ'ուզես թագուհի ըլլալ, եղի՛ր, միայն հայ եղիր, և առաջին սպասավորդ, և խոնարհ ծառադ ես կը լինեմ, և բոլոր իմ ազգս քու հպատակդ կը լինի, միայն թե օտարին գերությենեն ազատի։

Եվ աս խոսքերն ըսելով ձեռքերը կը պագներ, իսկ նա, որ հանդարտեր էր, ելավ վերցուց Թորոսը, և թեր մտնելով դեպի կեղծ դուռը գնաց, որ կիսաբաց մնացեր էր, և երբ կ'ուզեր մտնել ու Թորոս զինք կ'արգիլեր՝

«Մի՛ վախեր,— ըսավ,— քու սպասավորքդ իմ միամիտներս են, մորս ձեռքը մեծցած. դու ալ անշուշտ քու ծառայիդ վրա ապահով ես, ուսկի՞ց կը վախես, մանավանդ որ իրենց ապսպրած է, առանց քու կոչիդ, սանդուխեն վեր չելնել։ Կ'ուզեմ տեսնել անձամբ, թե բանի մը պետք ունի՞ս, ի՞նչ կը պակսի քեզի»։ Եվ այս ըսելով դարանները կը բանար, գզրոցները կը զններ և տեսնելով, որ բանի մը ձեռք դպված դեռ չի կար՝ «Պե՞տք է զրուցել, ավելցուց, որ ի՞նչ որ իմս է, քուկդ է, ի՞նչ որ հոս կա, քու գործածությանդ համար է, անշուշտ դու ստկի պետք ունիս, և ապահով եմ, որ գզրոցին բանալին դեռ դարձած չէ. հիմա որ մենք ալ իրարու ենք՝ կը հուսամ, թե իմս քուկդ է, քուկդ իմս է»։

— Քու աս խնամքդ, քու այսչափ երկար...

— Մի՛...— ըսավ օրիորդը, իր ձյունափայլ մատը Թորոսի շրթանց վրա դնելով, ժպիտով մը,— մի՛ զուցե ասկից վերջը շնորհակալություն բառը բերնեդ հանես, մեր մեջ առևտուր մը կա, չէ՞ մի, որ դու ինձի աս փոքրիկ տան փոխարեն արքայական աթոռ մը պիտի տաս, աս շորերուն փոխարեն ծիրանի, աս երկու ապուշ սպասավորաց փոխարեն աղդ մը հպատակ, թե որ խաբվող մը կա, ես չեմ, Թորոս։

Փոխանակ պատասխանի Թորոս ան սիրուն ձեռքը համբույրներով ծածկեց, երբ աղջիկը ցնցվելով մը՝ «Մենք չմացանք ժամանակը. պետք է երթամ,— ըսավ,— երբ զիս տեսնել ուզես, սա դարանին խորը սա օղակը քաշե, և ես կուգամ»։

— Թե որ ես չհամարձակիմ օղակը քաշելու։

— Ամեն համարձակություն ինձմե՞ կ'սպասես։

— Ես որ կարծեի, թե աշխարհիս վրա բան մը չի կար, որ զիս շփոթեր և վախեցներ, ինքզինքս փոխված կը գտնեմ։ Ես որ երեք կայսեր գահույից առջև սրտի տրոփ մը չունեցա, ի՞նչ եղա, չեմ գիտեր։ Հիմա տղու մը պես կը դողամ քու առջևդ. ի՞նչ է աս։

— Աս կնշանակե, որ դու դեռ տղա ես, և պետք է քու դաստիարակությանդ վրա հսկեմ ես։ Այս երեկո ուրեմն կերակուրեն վերջը կը տեսնվինք, երբ ամենքը պառկին։

Եվ աս ըսելով ձեռքը տվավ, որ պագնե, և դռնեն անհետ եղավ ու գնաց։ Իսկ Թորոս մնաց հոն այն դռան առջև, փոխված մարդ մը բոլորովին, սիրտը նոր, անծանոթ զվարթությամբ մը զեղուն, և խավար աշխարհք լուսավոր եղած էր իրեն համար. երեկոյան արևուն վերջի ճառագայթները վճիտ ոսկեղեն էին, ծառերու և ծաղկանց կանաչը շատ ավելի գեղեցիկ էր, քան մեկ քանի ժամ առաջ, օդը առողջ և թեթև էր շնչելու, և վերջապես երբ պատուհանեն վար նայելով տեսավ զԲաբկեն, այնչափ իրեն գեղեցիկ երևցավ իր փշոտ և հաստ հոնքերով և իր հիսուն, բայց կորովի տարիներով, որ եթե չամչնար, պիտի ցատկեր, իջներ և համբուրեր։

Բայց ինքզինք զսպելով, ակնարկ ըրավ, որ վեր գա։

ԳԼՈՒԽ Դ

ԿԻԼԻԿԻՈ ՎԻՃԱԿԸ

Թեպետ զվարթությունը կը փայլեր Թորոսի բոլոր կերպարանաց վրա, թեպետ ամեն պատրաստություն ուներ խոսելու, քան լսելու, բայց Բաբկենի լուրջ և տխուր կերպարանքը առժամայն ազդեցություն մը ըրին սրամիտ երիտասարդին վրա, որ իր տարիքեն անհամեմատ վեր էր իր քսան տարիներուն մեջեն ալ։ Բաբկեն՝ թեպետ հաղիվ թե պարզ կարդալ և անունը ստորագրել միայն գիտեր, արտաքո կարգի խոհուն, անհամեմատ ուժով, տոկուն և անխոնջ պատերազմի մեջ, անդրդվելի, հավատարիմ և նախանձահույզ ազգասեր մարդ մ'էր։

Թորոսի և Լևոնի հաջողությանց անթույլ գործակից, և առաջինին պաշտող՝ հիշատակին երկրպագու կրոնամոլ, միտքը դրած էր, որ եթե Թորոս երկայն ապրեր, անտարակույս Կիլիկիո անկախությունը ան ողորմելի վիճակը չէր ընկներ. ուստի Լևոն իրեն համար աննման քաջակորով երիտասարդ մ'էր, զուրկ ան խորագիտութենեն և նախատեսութենեն, որ իշխանի մը և զորավարի առաջին հատկությունքն են։ Բայց որովհետև

հավատարմության մեջ անդրդվելի էր, խնդրեց Լևոնի ծառայության մեջ մտնել և նորա գերության անբաժանելի ընկեր եղավ. բանտին մեջ երկրորդական անձինք էին իրեն համար Լևոն ալ, Ռուբեն ալ. ամենքը երկու եղբայր նման կը գտնեին իրարու, ինք Թորոսի և իր եղբոր մեջ անբավ հեռավորություն կը գտներ։ «Ռուբեն,— կ'ըսեր,— հորը ճիշտ զավակն է, ուժով, թեթևամիտ, քաջ մինչև ի հանդգնություն և ի հրաշագործություն ծանր վտանգի մեջ, որ կրնան զինք երբեմն ի հուսահատություն տանիլ, բայց պզտիկը, ո՜հ իր գլուխը երբեք պիտի չի կորսնցնե, իր հորեղբորը պես պիտի լինի անհույս վիճակներու մեջ՝ անխոով և հնարագետ»։ Ուստի Թորոս իր հայրենասեր հույսերուն զավակն էր։

Ոչ Ռուբենի աշագրավությունը և մահը, և ոչ Լևոնի վախճանը, որ զինք տխրեցուցեր և դառնացուցեր էին, կարելի էր բաղդատել Թորոսի փոքրիկ մեկ հիվանդության հետ, ուր Բաբկեն ինքզինք կը մոռնար, ա՛լ պարտավորությունը չէր, որ անքուն կը հսկեր պատանվույն սնարին քով, այլ գորովագութ մոր մը աշալրջությունն էր. մինչև իր խոշոր և հաստ ձայնը դայլայլիկ մը առնուլ կը ձևանար և կը փափկանար, թե որ կարելի ըլլար՝ իր ահագին ձեռքերը նաև պիտի մանրանային, երբ դեղին սկահակը իրեն կ'երկնցներ. այնչափ խնամք կը տաներ զինքը խնամելու և տածելու ժամանակ։

Ուստի հիմա երբ տխուր ու դառն ներկայացավ, Թորոս՝ «Ի՞նչ կա, Բաբկեն հայրիկ, ընքվիներդ շատ խավար կ'երևան այսօր,— հարցուց,— միթե ամենեին հայ սրտով մարդ մը չի կրցա՞ր գտնել»։

— Երանի՜ թե չի գտնեի· գե՜շ, իշխանիկս, գե՜շ։

— Ի՞նչ գեշ, զրուցե՛ գլուխդ երերցնելուդ, ո՞ւր է գեշությունը։

— Միտ դիր, իշխանիկս. ես հոսկից ելա այս անծայր քաղքին մեջ բոլոր շուկաները պտտեցա, մեկ կիլիկեցի հայ մը տեսնելու համար, որ կարենամ լուր մը առնուլ, թե մեր լեռները, մեր տղաքը ի՞նչ եղան. իրիկուն եղավ, ալ հույսս կտրեր էի, մեյ մ'ալ մեկը զիս դրդեց կամաց ձայնով՝ «Բաբկեն եղբայր» ձայնեց. գլուխս վերուցի, նայիմ՝ երկայն հասակով մեկը, բեռնակրի հագուստներով, չի ճանչցի. «Մի՛ խոսիր,— ըսավ,— միայն ետևես եկու, ես ալ զքեզ կ'ուզեի տեսնել»։ Ո՞վ էր չգիտեի, ան քիչ մը առջևեն, ես ալ անոր հետևելով շարունակեցինք ճամփան մինչև խրոնուկ իջևան մը հասանք, և սենյակ մը բացավ։ Երբ դուռը գոցեց «Զիս չի ճանչցի՞ր» հարցուց. «Չէ» ըսի։ «Բարի նշան, թե որ դու ալ զիս չի ճանչցիր, ուրեմն սատանան ալ զիս չի կրնար ճանչել։ Վահկեցի Կոստանդինը չե՞ս ճանչեր»։ Իրոք Վահկեցի բերդակալն էր, և սկսավ ինձի պատմել, թե ինչպե՞ս բերդին անձնատուր լինելեն վերջը, բռներ էին զինք հոռոմք ու շղթայակապ նավու մը մեջ դրած Պոլիս կը ղրկեին, և թե ինչպե՞ս շղթաները

կոտրելով նավաստիներն ու պահապանները սպաններ և նավը Սելևկիո ծովեզերը կրցեր էր խրել և անկից Տորոսի ծովեզրյա ժայռերուն և մացառներուն մեջեն՝ գիշեր-ցերեկ, շատ անգամ անոթի, ծարավ՝ քանի մը ձիթուն, քանի մը եղջյուր միայն ուտելով վերջապես Սև լեռ գտեր էր, և թե ինչպե՞ս հոռոմները ամեն տեղ զմեր հայերը կը հալածեին, կը շարշարեին, և թե ամենքը կը մրմռային, և թե ան մեր անպիտան ազգուրաց Լամբրոնի իշխանները անհոգ, անկարեկիր էին անոնց նեղությանց, որովհետև իրենք իրենց առ կայսր հավատարմության վարձք առած էին պատիվ և իշխանություն։ Իսկ Մամեստյա հոռոմ կուսակալը ամեն օր զհայն ու իր հավատքը կը հայհոյեր, և ամենքը աստուծմեն Լևոնի տղոց մեկուն հասնելուն կ'ըսպասեին, որ զենքի վազեն։ Ուստի Կոստանդին հարցուցեր էր, թե ո՞ւր են Մլեհ և Ստեփանե. և իմացեր էր, թե Հալեպու Նուրեստին ամիրային ծառայության մեջ մտած էին. ելեր գնացեր էր զանոնք գտնելու, և հազիվ թե Ստեփանե համոզվեր էր Կոստանդինի հետ Կիլիկիա դառնալու, Մլեհ վրա հասնելով, ոչ թե միայն իր եղբորը միտքը շրջելու, այլև զԿոստանդին մատնելու երդում ըրած էր, եթե նույն օրը տաճկին հողերեն դուրս չելներ։

Կոստանդին ալ՝ հույսը կտրած եկեր էր Պոլիս, որ թե կարելի է մեր կղզվույն բանտը կոխե, հայրդ ու զքեզ աղատե և տանի Կիլիկիա կամ մեռնի. ուստի զքեզ կ'ուզե հիմա տեսնել։

Իսկ Թորոս աս պատմությունը մտիկ ընելեն վերջը առանց պատասխան մը տալու եղավ և մտախոհ սենեկին մեջ վեր-վար կը շրջագայեր, երբ Բաբկեն արձանի պես անշարժ կեցեր էր. վերջապես Թորոս դառն ժպիտով մը՝

— Բաբկեն հայրիկ,—ըսավ,— շատ կ'ուզեի Կոստանդինը տեսնել, վասնզի կ'երևակայեմ, թե ինչչափ որ շատախոս է, նույնչափ և ավելի ալ քաջ է, բայց այս անիծյալ կառավարությունը, որ ավաղակներու, գողերու համար ինչչափ անփույթ է, այնչափ արթուն է մեզի պես գերիներու համար, ո՞վ գիտե, թե Կոստանդին հոս գտնվելը ոստիկանության լրտեսները չեն գիտեր, և արդեն կամավ թողած են, որ պտտի և տեսած ու տեսնված մարդիկը նշանակեն։ Քանի որ Մլեհ այդչափ անարգ սիրտ մը ունի, և Ստեփանե այդչափ հողդողդ է, քանի որ Լամբրոնի իշխանքը հոռոմոց զերութենեն չեն ձանձրացեր, ես պետք է իմ ազգիս գլխուն ճարը տեսնեմ. զրուցե Կոստանդինին, որ զիս տեսնել անօգուտ է, թող զիս Սև լեռը ըսպասե։ Այսչափ տարի համբերեց, շատ-շատ՝ տարի մ'ալ համբերեն։ Ի՞նչ տեղեկություն որ բերեր է, ինձի բավական է։ Բայց չի հարցուցի՞ր, թե ինչ միջոց, քանի՞ հոգի ունի եղեր, որ աս մայրաքաղաքին դառն առջև կղզիի մը բանտ մը կոխելու հանդգնությունը ունեցեր է։

— Քիչ մը դրամական օգնություն գտնելով քանի մի եկեղեցականներե, գինովացի նավ մը վարձեր է, հինգ ալ ընկեր գտեր է իրեն պես անվեհեր մարդիկ և աս խորհուրդը մտածեր է։

— Բայց դու ի՞նչ ըսիր, Բաբկեն, աս մեր Կոստանդինին մտածությանը։

— Ըսի, թե հիմարություն է, և բարեբախտություն մ'է, որ արդեն բանտին դուռ բացված լինելով իրենց քաջության կարոտություն չէ մընացած, որ Կիլիկիո միմիայն հուսույն թերևս անօգուտ մահը պիտի պատճառեր։ Ուստի չե՞ս ուզեր իրեն գալը քեզի հետ տեսության։

— Չեմ ուզեր, որ այսպիսի քաջ մարդիկ հուսակտոր լինին, ուստի դու կրնաս խոհեմաբար զիս տեսնելու անօգուտ և վնասակար հետևանքը իմացնել։

— Արդեն գրեթե իմացուցի, և ինք շատ տխրեցավ, վերջին պատասխանի մը կ'սպասե վաղը շուկայի մեծ դռան առջև։

— Ահա, վերջին պատասխանն ալ դարձյալ պիտի լինի։ Երթալ և մեր լեռներուն մեջ ինձի սպասել։

— Այսչա՞փ։ Ուրի՞շ։

— Կ'երևա թե ուրիշ մտածություն մ'ալ դու ունիս, Բաբկեն հայրիկ։

— Այո՛, ունիմ։

— Զրուցե՛ ուրեմն։

— Կը հրամայե՞ս, որ զրուցեմ։ Ի՞նչ կ'արդիլե, որ մենք ալ Կոստանդնի պատրաստ նավով դառնանք Կիլիկիա. կարելի չէ՞, որ Կոստանդին հազիվ հասած՝ դեռ մարդ իր գալուն հոտը չառած, մտնենք իրեն հետ նավը և շուտով ճամփա ելնենք։

Եվ այս խոսքերը ըսելուն՝ Բաբկեն իր երկայն ընքվիներուն տակեն իր սուր աչքերը Թորոսի բիբերուն վրա տնկած պատասխանի մը կ'սպասեր։ Այդ նայվածքը և նորա նշանակությունը միայն Թորոս կրնար իմանալ, ուստի անխոսով պատասխանեց, ոչ թե Բաբկենի մտքին, այլ սրտին խոսակցով։

— Մենք մեր բանտեն ելնելուն երկրորդ օրը թե որ այս բնակարանը թողունք և փախինք, կարելի՞ է, որ կարենանք ողջ-առողջ Կիլիկիա հասնիլ, միթե բոլոր հունաց սրընթաց նավերը մեր ետևեն չե՞ն սրանար, միթե ան կառավարությունը, որ Լևոնի մահվընեն գրեթե տարի մը վերջը իր ապուշ տղան բանտեն ազատելու համար այնչափ բարեխնամ աղաչանաց խուզ եղավ, և հազիվ շնորհք մը ընելու զիջավ, կը հուսա՞ս, թե գաղտնի մեր վրա չի հսկեր և մեր առաջին անխոհեմության անհուշ բանտի զմեզ չի դատապարտեր։ Ես ալ կը սիրեմ ազատություն, ես ալ կը հիշեմ մեր լեռներուն պայծառ արևը, երեկոյան զով քամին և անչինչ երկնքին պարզությունը, և բան մը չի կա, աս լավ լսե՛, Բաբկեն, բան մը, որ կարենա զիս

իմ պարտքես, իմ առաջադրութենես կասեցնել, բայց ուխտ ալ ունիմ, որ հախուռն բան մը չընեմ։

Այս վերջին խոսքերը, որ Բարկենի ճակատը պարզեցին և հոնքերը իրենց բուն տեղը տեղավորեցին, դեռ իր վստահությունը ամբողջ չի կրցան գրավել, և Թորոս լուռ կը նշմարեր, ուստի իբրև թե նորա մտաց խորունկը չի թափանցած՝ քանի մը պտույտ ընելե վերջ, սենեկին մեջ, ըսավ.

— Ես քեզի ուրիշ գաղտնիք մը պիտի հաղորդեի, սա դռան գաղտնիքը, որ պարզվեցավ։ Օրիորդը, որ դու նախ տեսար, որու թերևս միայն պարտական ենք մեր ազատությունը, հայ է մոր կողմե և սրտով բոլորովին։

— Փ՚առք աստուծո։

— Այդ կողմեն ալ սիրտդ հանգիստ բռնե. առ սա քանի մը ոսկին, անցիր դիմացի կողմը Ղալաթիո քաղաքը, հոն հայոց եկեղեցի ալ կա՝ նայե՛, տեսնվե՛ ազգայնոց հետ, ի՞նչ վիճակի մեջ են, իմացիր, թե որ առանց կասկածի ստվեր տալու կրնաս իմանալ, թե գենուացի նավեր կան, որ ոչ Միջերկրական միայն, այլ նաև Պոնտոսի ծով կ՚երթան, տեղեկություն ա՛ռ, ամեն ճամփա լավ է Կիլիկիա մտնելու համար։ Ամենեն ապահով տեղ տեսնվելու համար՝ հայ եկեղեցին կրնա լինիլ. բայց այդ նաև ինձի համար արգիլված է, թերևս, ինձի համար աս բանը չեմ գիտեր առաջինեն որչափ ընդարձակ է։ Տեսնենք... Դու խոհեմություն ունիս, պետք չէ, որ ես քեզի կրկնեմ, թե ինչ վիճակի մեջ ալ լինիս, պետք է ջանաս իմանալ, բայց միշտ առանց հարցնելու։ Ժամանակը արդեն ուշ է, դու ալ հոգնած ու անոթի, երթանք կերակուրի։

Թեպետ Բարկեն իրոք անոթի էր, բայց կար բան մը, որ դեռ իրեն համար վարագուրյալ էր մասամբ, այսինքն՝ աղջիկը, որ «մոր կողմե հայ էր և որ իրենց ազատության համար աշխատեր էր». և քանի որ մանրամասն պատճառները չէր իմացեր, իր ախորժակը կատարյալ չէր. բայց որպեսզի Թորոսի կամաց դեմ չի մեղանչե, որ աններելի հանցանք կը համարեր, ամեն կերակուրներեն կշտապինդ կերավ, Կիզիկոնի վճիտ գինին լավ մը խմեց, և երբ Թորոս ելավ քաշվեցավ իր սենյակը, իր լայն հոնքերը վեր առնելով և իր սուր աչքերը գոհության ժպիտով մը անոր հետոց վրա բարձնելով «Աստված հաջողություն տա, իշխանիկս» կը մռմռար քթին տակեն, «Դու շատ խելոք տղա ես, որ աղջիկ մը խելքդ հափափե ու քեզ կնիկ դարձնե, ալ ես այս գիշեր հանգիստ կրնամ քնանալ. դու զվարճացիր ինչչափ կ՚ուզես, բավական է, որ տարին չանցած աս նզովված քաղքին պարիսպներեն մեկ մը դուրս նետվինք...։ Մեր լեռները հարցուցի, մեր ազգին ընդհանուր վիճակը հարցուցի... իմիններս ամչցա հարցնելու՝ վախեցա հարցնելու... ո՞վ գիտե, ի՞նչ եղան. ո՞ղջ են, մեռա՞ծ են, ու՞ր են... իրավ է որ անոնք հարցնելու ժամանակ ալ չի կար, անշուշտ ան ալ չէր

գիտեր... Լավ տղա է Կոստանդին, քաջ է, ի՞նչ օգուտ, որ թեթև է, ո՛ գիտե Մլեհի՞ն էր հանցանքը թե իրեն...»։

Այս մտածություններով սկսավ մրափել Բարկեն հայրիկ իր նստած տեղը, և իրոք ալ իրեն ան մրափը տղայությենեն ի վեր ամենուն քունին տեղ կը բռներ, և որ իրեն համար բավական էր քսանչորս ժամ պատերազմելու և քառասունութ ժամ քալելու։

ԳԼՈՒԽ Ե

ԴԻՈՆԻՍ

Այս փոքրիկ տան անմիջապես կից տուն մը կար, որու մեկ սենյակը միայն տեսանք մենք՝ սենյակ կամ մատուռ աղջկան մը սիրույն, որ գաղտնիք մ՚էր ամենուն համար, բացի ծեր Դիոնիսեն, որ աս որբ աղջկան ոչ միայն բժիշկ, այլև խնամակալ, խորհրդական, սրտակից վարժապետ և հայր եղած էր միանգամայն։

Դիոնիս տկար և նիհար մարմնո մեջ կորովի սիրտ ուներ և մեծահանճար գլուխ մը, ի բաց առյալ իր արհեստը, որ զինք ուսմանց և գիտությանց տարեր էր ի տղա տիոց, իր վանազան ճամփորդությունքը ի Փոքր Ասիա, Հարաբիա, Եգիպտոս և Հասորեստան իր միտքը ընդարձակեր և հարստացուցեր էին, և դիտող ու հետաքնին բնութենեն ամեն գաղտնյաց պատճառը փնտրելով, մոռցեր և թերևս արհամարհեր էր սրտի զգացմունքները։ Եվ վերջապես, երբ հոգնած և տկարացած երկար և բազմամյա պանդխտություններեն Բյուզանդիոն դարձեր էր, իբրև թե հանկարծ աչքերը բացվեր էին տեսնելու և իմանալու, թե ժամանակը անցեր էր. ուստի փիլիսոփայաբար որոշեր էր իր միայնությունը ուսմամբ մխիթարել, և իր արհեստին պատճառավ Ալեքսիսի՝ Եվփիմեի հոր հետ վերաբերություն ունենալով քիչ-քիչ անոր բարեկամաբար և եղբայրաբար կապվեցավ, անոր ընդարձակ պալատին մեջ իր սենյակները ունեցավ, և առանց զգալու ան մարդը, որ կարծեր, թե ընտանյաց սեր, զավկի սեր իր սիրտը մուտք պիտի չունենային, իր սիրտը գորովալից գտավ անոնց ամենուն համար, որ Ալեքսիսի էին. անոր կինը իր քույրն էր, անոր որդիքը իր ալ հարազատ զավկներ եղան, և ազատ սիրտ ունեցող կարծեցնող օր մը տեսավ թե իր խեղճ սիրտն ալ գերի էր տղոց ճչերուն, խնդալուն, տխրությանց և ուրախությանց, և ինքնաբերաբար քարող և դաստիարակ եղած էր անոնց բարոյականին, ինչպես բժիշկ և խնամածու էր անոնց կենսականին։ Իր

աս պարտավորությունները կրկնապատկեցան, երբ Ալեքսիս իր մահվան անկողնին մեջ ծեր բարեկամին հանձնեց իր ընտանիքը։ Ալ ան օրեն վերջը Դիոնիս տան հայրը եղավ, և տեսանք, թե ինչպե՛ս ոչ միայն անոնց պիտոյից, այլ նաև անոնց ամեն քմոյշներուն կը ծառայեր, և Եվփիմե իր ազնիվ բնավորությամբն ու կարեկից սրտովն բռնավոր մ'էր խեղճ ծերուն դլխուն, որ նորա կամաց հակառակել չէր գիտեր, և անձնասեր ծերությունը ժամանակ չէր գտներ իր բերմանն հետևելու։ Ուստի ինչ որ Եվփիմե կ'ուզեր, Դիոնիս կը կատարեր. և որովհետև իր արհեստին և ուսմանց համար մեծ համբավ ուներ և ծանր պարագաներու մեջ կը փնտրվեր թե կայսերական և թե մեծատոհմ ընտանիքներե և ամենքը զինք կհարգեին, ուստի կրցեր էր հաջողիլ յուր աղդեցությամբն ու խնդրանոք զմեր Թորոսն ալ բանտեն աղատել, և այդ տան մեջ, որ անհայտ մաս մ'էր Եվփիմեի պալատին, տեղավորել։

Այս ընդարձակ բնակարանին նկարագիրն ընել ավելորդ է։ Ժամանակին շռայլությունը ինչ-որ սովորություն ըրած էր զարդարելու համար մեծամեծաց պալատները, ընդարձակ ոսկեձկուն սրահներ և սենյակներ պատկերներով՝ արձաններով, գորգերով, բազմոցներով հոն ավելիով կը գտնվեին, և բնական է, որ տարիներով ընդարձակ գավառի մը կուսակալ իր կողոպուտները մայրաքաղաքին մեջ վայելե։ Ուստի Ալեքսիս Ծերակույտի անդամ անվանյալ և իր քաղցր բնավորության համար կայսեր սիրելի՝ տանը շքեղությունն ու պերճանքը մեծ պարտավորություն կը համարեր մանավանդ որ իր հայ թագավորաղն կինը ամեն բանե ավելի գոհ ընել կ'ուզեր, վասնզի սաստիկ կը սիրեր, և նորա մաղձոտ և տխուր վայրկեններեն կ'ակնածեր, որ առանց դանդատ մը հայտնելու, հայրենի երկրին հիշատակին՝ աչքի փայլ մը կ'ունենար, և եռանդյամբ իրավ շատ քիչ անդամ՝ իր տղայության ձիարշավները և խաղերը տարեկից աղջկանց հետ կը հիշեր։

Եվ աս կինը թեպետ բուն հայրենիքեն վտարանդի, վասնզի իր պապը՝ Սենեքերիմ, թողեր էր Վասպուրական աշխարհը և եկեր էր բնակելու Սեբաստիա, բայց դարձյալ հին հայրենյաց հիշատակներով սնյալ՝ ինչչափ հեռացեր էր, նույնչափ ալ անոր վրա սեր ուներ. ուստի իր էրիկը միշտ տխրությամբ կուտար իրեն հին Հայաստանի ցանցառ նամակները, որ երբեմն-երբեմն իրեն տեղեկություն կը բերեին նորա թշվառությանց։

Ուստի իրեն մխիթարություն միայն Կիլիկիո Ռուբինյանց հաջողությունքն էին, և ինչ որ անոնց հառաջադիմության համար կը խոսվեր՝ զինքը գաղտնի ուրախությամբ կը լեցնեին, և Ալեքսիս Թորոսի և Լևոնի քաջագործությանց լուրերը ինք կը բերեր կատակով և միշտ կ'ավելցներ. «Մեզի համար անհաճո, և քեզի շատ հաճո լուրեր կան դարձյալ»։ Իսկ երբ

Լևոն իր զավակներով գերի բերվեցան մեծ քաղաքը, այս կինը սրտի սուգ առավ և կրցած օգնությունը ըրավ եռանդագին, ինչպես վերը հիշեցինք։ Եվ երբ ինքն ալ մեռավ, Եվփիմե մնաց միմիայն ժառանգ հայրենի ստացվածոց և մայրենի հայասիրության։ Թեպետ իր սերը ավելի հետևանք կըրնար համարվիլ ուրիշ դժբախտ սիրո, ինչպես երբեմն կը հայտներ Դիոնիս փոքրիկ ժպիտով մը առանց վիրավորելու իր սանուհին, որ անտարակույս ո՞ւիցե կատակի կրնար համբերել, երբ ան մարդեն կուգար. և աններելի կը համարեր այնպիսի զավեշտի ստվեր մը նաև թե ուրիշը համարձակեր հանդգնել։ Վասնզի այդ չքնաղ և արքունի կերպարանքին փափկության և մտավորական սրամտության ներքև բուռն և խրոխտ բնավորություն մը կար, որ կարելի էր կոտրտել և փշրել, բայց ոչ երբեք ծռել և հակել. և ծերուն բոլոր խրատները ու հայրական հորդորները անօգուտ կը լինեին, երբ իր լուսալիր աչքերը հրալիր կը դառնային շանթահարելու համար իր կամաց ընդդիմահարները։ Բայց ժամանակը և բախտին խիստ հարվածները, որ իր երիտասարդ տարիքին վրա բռնացան, սկսած էին զինք համոզել իր խնամակալին խորհուրդներուն ջանալ զիջանիլ և ավելի խոհեմություն ունենալ մեր այս պատմության օրերուն։ Ուստի երբ Եվփիմե անմիտ, համառ և անիրավ վիճաբանի մը կը պատահեր և կ'զգար հրալից ամպը, որ ճակտին վրա կը դիզվեր, կը լռեր և իր դաստիարակին ժպիտ մ'արձակելով կ'առներ կը քալեր, և հանդարտությունը հասնելեն վերջը՝ դարձյալ կուգար ի կոիվ, բայց ալ զենքերը փոխված էին, իր սուր միտքը փոխանակ շանթերու՝ թունավոր նետեր կ'արձակեր, հեգնություն և երգիծանք կը սրանային իր շրթունքներեն։ Եվ դարձյալ այս ամենը բնավորության խստությամբ ալ թե որ կանայք փախչեին իսկ իր ընկերութենեն, էրիկ մարդիկ գիտնալով ալ, թե անխոց պիտի չելնեն իր պալատեն, դարձյալ կը վազեին փափագով իր տեսության։ Այսչափ զորավոր են կնկան մը գեղեցկության հրապույրքը։

Ուստի նույն գարնան երեկոյին, Բյուզանդիոնի վճիտ երկնքին լիալիր լուսնով մը, նստած էին Եվփիմյա մեծ սրահին հարակից կախաղանավոր կիտրոնյա պարտիզին մեջ քանի մը հյուրեր Օրիորդին բազմոցին շուրջը։ Իսկ նա իրենց սիրաշունչ շողոքորթությանց այնպիսի ժպիտներով կը պատասխաներ, որ անկարելի էր որոշել, թե հաճոյի՞ց էին արգասիք, թե արհամարհանաց։ Վերջապես երիտասարդ մը, որու սնապարծությունը հագուստներեն կը վազեր, որու պչրանքը հոգվույն նվաստության հայելին էր, սրտնեղությամբ ոտք ելավ և կիսով գլուխը դեպ Օրիորդը դարձնելով՝

— Զարմանք է,— ըսավ,— որ Կոմենոսի մը նաև ձեր գեղեցկությունը սեուշ բան մը չունի պատասխանելու, արքայազուն մը ինձի պես,

որ կայսերական պատվանդաններուն վրա է իր ծննդյամբ, թերևս շատ նվաստացավ հաճոյանալու համար ձեզի։

Եվփիմի առաջին շարժմունքը նետի հարված մը ընդունող առյուծին էր, և հազիվ թե իր գեղեցիկ ճակատը ցնցեց և աչքերը փայլատակեցին. միտքը եկավ, թե իր բախտը իրեն կ'սպասեր, և ինք երջանիկ էր, ուստի ելավ հանդարտ ձևով՝

— Ներե՛, արքայազն իշխան, թե որ ես անզգա կը գտնվիմ ձեր կառարելությանց, որոնց բարձրությունը մեկը չի կրնար ուրանալ. ուստի ձերն է հանցանքը, թե որ ձեզի հավասարները չի փնտրեցիք։

Եվ այս խոսքերը աղնվական ծանրությամբ մը զրուցելեն վերջը՝ նույնպես զամենքը ողջունելով, գլուխը բարձր՝ թագուհվո մը պես իր սենյակները քաշվեցավ, ուրախ, որ դյուրությամբ ազատեցավ ընկերութենե մը, որ գինքը կը ձանձրացներ, ուրախ՝ գտնելու համար ան ընկերությունը, որուն համար սիրտը կը տրոփեր։

Իսկ նոքա, որ մնացին՝ մեղադրեցին Իսաք Կոմնենոս, որ այնպիսի նախատանոք և կոպտությամբ վարվեցան գեղեցիկ Օրիորդին հետ, և զրկեց զիրենք անոր ընկերութենեն։ Իսկ Դիոնիս, որ անշշունչ կը դիտեր աս ամեն եղածները, զիրենք ամենն ալ ճամփա դնելեն վերջը, ուղղվեցավ գտնելու իր սանուհին, որ իրեն կսպասեր և որ զինք տեսածին պես, մեկեն դիմավորելով «ի՞նչ է կարևոր զրուցելիքդ» ըսավ։

— Իմ զրուցելիքս հարցմունք մ'է, ի՞նչ է քու միտքդ հայ երիտասարդին համար։

— Այս հարցունքդ զիս կը զարմացնե, դու լավ գիտես իմ միտքս։

— Անոր միտքն ի՞նչ է։

— Անշուշտ իմ միտքս ինչ որ է, անորն ալ նույնը պետք է ըլլա։

— Խնդրեմ ուրեմն ես ալ մեկ մը տեսնվիմ իրեն հետ և իր բերնեն լսեմ և ըստ այնմ շարժիմ։

— Վտանգ մը կա՞ արդյոք, շուտ մը ինձի զրուցե։

— Նատ անհամբեր ես, զավակս, դու իմ ըսածս ըրե։

Եվփիմե առանց ժամանակ անցնելու աս վերջի խոսքերուն վրա մեկեն սրացավ սենյակե սենյակ և, գաղտնի դուռը բանալով, տեսավ, որ Թորոս ոտքի վրա իրեն կ'սպասեր. առանց ամենևին խոսելու ձեռքեն բռնեց և շիտակ հոն տարավ, ուր Դիոնիս նստած կը մտածեր, և երբ երկուքն ալ իր առջևը կանգնած տեսավ, առանց կերպարանքը փոխելու և առանց շարժմունք մը ընելու միայն իր սուր աչքերը Թորոսին վրա ուղղելով՝

— Եվփիմե զրուցած է քեզի իմ ով ըլլալս, ինք իմ զավակս է, ուրեմն պետք է ինձ միտքդ շուտով հայտնես։

Այս առանց հառաջաբանի լակոնական հարցմունքին հետևանքը թե-

պետ երկայն էր, բայց Թորոս մեկեն, մեկ նայվածքով դատեց դիմացի մարդը, հարցմունքին նշանակությունը և մոտակա վտանգ մը։

Ուստի առանց դանդաղելու պատասխանեց.

— Թե որ Օրիորդը այսչափ գեղեցիկ և սիրելի հատկություններ ալ չունենար, միայն ինձի ըրած բարերարությունքն բավական էին ինչ որ ունիմ՝ իմ անձս իրեն նվիրելու։

— Բավական է, աղնիվ երիտասարդ, ես ալ քեզմե սա պատասխանին կսպասեի։ Հիմա նստեք և մտիկ ըրեք, որ ըստ այնմ շարժինք։ Վտանգ մը կա, և վտանգը քու ազգայիններեդ մեկեն կհասնի, որ երբեմն քու հորդ բերդակալն է եղեր և շատ ալ վտանգավոր մարդ, և հիմա Պոլիս կը գտնվի ծպտյալ ու ոստիկանության լրտեսները զինք ճանաչեր են և իրեն հետքը նաև գտեր. աս գիշեր խորհուրդ ալ կա զինք ձերբակալելու. բայց այս դիպվածեն վերջ կայսեր շնորհքին վրա վստահիլ անկարելի է և մեծ անխոհեմություն. ուրեմն դու ի՞նչ կը մտածես, ի՞նչ պիտի ընես։

— Դեռ հիմա աս վայրկենիս կ'իմանամ մոտալուտ վտանգը, թե որ կարելի է փախիլ՝ հիմա փախինք, կ'ըսեմ։ Բայց ո՞րն է ապահով ճամփան։

— Հիմա ապահով ճամփան սա տունը չի կենալն է, և ամիսի մը չափ ժամանակ ծածկվիլն ու ոստիկանության կարծեցնել, թե դու փախած ես։

— Ես բանտե նոր ելած՝ աս ընդարձակ քաղաքին ոչ լավ տեղյակն եմ և ոչ ծանոթ մը ունիմ. ինչ որ ըսես, կը կատարեմ։

— Լավ, ուրեմն պատրաստվե շուտով դու և ծառադ։ Զգեստդ և հունարենե կատարյալ գիտությունդ զքեզ չեն մատներ. խոհեմություն քեզի չեմ հիշեցներ. ես զքեզ կը ճանչեմ։ Հիմա ուրեմն պետք է ճամփա ելնես։

Ելավ ծերուկը և դռան մոտենալով «Լավա՞ր» կանչեց։ Մեկեն երևցավ արդեն մեզ ծանոթ տնտեսը։

— Պատրա՞ստ է ամեն բան։

— Այո՛, տիար։

— Ուրեմն,— ըսավ Թորոսի,— քու ծառադ ալ պետք է պատրաստվի։

— Ան միշտ պատրաստ է,— պատասխանեց Թորոս և շտկվեցավ դեպի դուռը։ Իսկ Եվփիմե առանց մեկ բառ մը կորսնցնելու, մեկ մը ծերուն, մեկ մը Թորոսին կը նայեր և առանց Թորոսի թևը թողլու եկավ մինչև նորա սենյակը, և փոքրիկ կապոց մը շինելով ստկի ու ճերմկեղենի կ'սպասեր՝ երբ Բաբկեն իր տիրոջ հետ վեր ելավ։ Եվփիմե առանց բան մը զրուցելու կապոցը Բաբկենի ձեռքը տվավ. անկից վաղեց Լևոնի կախված սուրը առավ, Թորոսի երկնցուց, որ ան սիրուն ձեռքը իր շրթանց տանելով սուրը առավ մեջքը կապեց։ Եվ ասոնք ամենը արագ, բայց անխռով կա-

տարվեցան, իբրև թե շատոնց որոշված լինեին, և երեքը մեկեն ծերուն քով գտնվեցան։

— Լավ,— ըսավ ծերը,— հիմա, Լազար, նայե՛ ծառա, աղախին չի գտնվի դուրսը։

— Մարդ չի կա, տիար. և բոլոր լույսերը մարած են։

— Աստված բարի հաջողություն տա ձեզի,— ըսավ ծերը և Թորոսի ձեռքը տվավ, որ նույնպես ձեռքով պատասխանեց։

Եվ երբ սենեկին դռան քով եկավ, դարձյալ պագավ Եվփիմեի ձեռքը, որ մինչև ան վայրկյան բառ մը բերնեն չէր հանած և միայն այն ատեն աչքերը արցունքով՝ «աստված հետդ ըլլա» ըսավ. իսկ Թորոս մեյ մը երկինք նայեցավ, մ'ել մ'ալ անոր, և գլուխը դարձուց դեպ իր ճամփան ամենայն արագությամբ, ծածկելու համար սրտին հուզմունքը. Բաբկեն անշշունչ կ'երթար իբրև իրեն շուքը։

Պալատին մեկ պզտի դռնեն Լազար դիրենք դուրս հանեց, և լուռ անձայն փողոցներու մեջեն արագ-արագ կ'երթային այս երեք անձինքը, երբ իրենց քովեն կ'անցնեին խավարի և անզգամության արբանյակներ. մինչև որ իրենց սահմանյալ տեղը իջան, քանի մը գիշերապահ խմբիկներ ալ եղան, որ իրենց հարցմունք ընելու եթե պատրաստվեին, Լազար անոնց գլխավորին ականջեն բան մը ըրուցելով ճամփա կ'առներ, մինչև հասան տան մը դռան առջև. հոն Լազար բանալի մը հանելով դուռը բացավ և իր ընկերները ներս մտցնելով դուռը կամացուկ մը գոցեց։

— Շնորհե՛ ձեռքդ, իշխանդ իմ,— ըսավ,— որ աս մութուն ձեղ առաջնորդեմ,— և, Թորոսի ձեռքն առնելով, տարավ սենյակ մը. Բաբկենի համար դժվարություն չի կար, վասնզի մութուն ալ կը տեսներ. «Դուք հոս նստեք» ըսավ Լազար և աներևույթ եղավ։ Իսկ մեր երկու հայերն մնացին մթության և խավարի մեջ, գոնի Թորոս գիտեր թե ի՛նչ բանի համար էր այս գիշերային փախուստը. երբ Բաբկեն, որ կարծեր գուշակել՝ ինքնիրեն կ'ըսեր. «Իշխանիկս աս գիշեր աչք գոցած չէ, ես լավ քնացա... արդյոք Կոստանդնի գալը իմացա՞ծ են. երբ այդպես է, իրավ աս հոռոմները սատանա են. ես չի կրցա ճանաչել, անոնք ինչպե՞ս ճանաչեցին... հիմա ո՞ւր կ'երթանք, անտարակույս պիտի տեսնենք... հոռոմ աղջիկը իրավ գեղեցիկ է... բայց ան սուր աչվի, մեծճակատ ծերը ո՞վ էր... է՜հ, Բաբկեն, ամեն բան կ'իմանանք... աստված տար հաջող լինենք, մեկ մը մեր Սև լեռը գտնենք...»։

Այսպես կխորհրդածեր Բաբկեն, երբ Լազար երևցավ՝ «երթանք, տիար իշխան» ըսավ։ Քանի մը քայլ առնելով դուռ մը բացավ և ինքզինքին լուսնի լուսո մեջ և ծովեզերը գտան։ Երեք ջուխտակ նավ մը կ'սպասեր։

Հազիվ թե տեղավորեցան՝ նավը սկսավ սուրալ պատռելով ծովը՝ թողլով աջ կողմը մայրաքաղաքին և ձախ կողմը Պալատիոն ափունքը. քանի մը ձկնորսի նավեր և քանի մը պարնակ նավեր միայն կային ծովուն վրա, որոնց մեկ հատը միայն մոտենալով նավուն և Լազար իր նշանի բառը տալով ազատ իրենց ճամփան կը շարունակեին նավուն գլուխը դեպի Վոսփոր միշտ ուղղելով։ Կ'անցնեին շարունակ և ետ կը ձգեին այսօրվան Պեշիքթաշ, Օրթագեղ, Առնավուտ գեղ և կանգավ արվարձանաց շարունակությունքը դեպի վեր, մինչև որ հասան Թարաբիայի ծովեզերը տան մը առջև, և հոն նավակը կեցավ։ Ան ատեն Լազար ելավ ցամաք և ձեռամբ հրամցնելով զԹորոս, որ ցատկեց ելավ նավեն Բաբկենի հետ, նավավարներուն քանի մը խոսք ըրավ ու ճամփեց։ Հոն ծովեզերը զիրենք թողլով պտույտ մը ըրավ, մտավ տան քովի ճամփան, զարկավ ցած երկաթապատ պատուհան մը, և պառավ կին մը ձայն տվավ ներսեն. երբ իր անունը տվավ՝ «աստվածածին,— ըսավ կինը,— այս ատեն, Լազար, ի՛նչ կ'ուզես»։

— Բա՛ց, մայրիկս,— ըսավ ձայնը,— հիմա խոսելու ժամանակ չէ, զովը զմեզ սառեցուց։

Պառավը նիգերը խախտեց, և քովնտի դուռը բացվեցավ։ Լազար ներս մտնելով նշանացի լռություն հրամայեց պառավին, և կանթեղը առնելով ձեռքեն հյուրերը ներս մտուց և, դռնապանի բնակարանը թողլով, շիտակ զիրենք մաքուր սենյակ մը հանեց, ուր անկողին ամենայն ինչ պատրաստ կար իրենց պիտույից համար։

Գիշերը հառաջացեր էր, լուսինը լիալիր կը թագավորեր երկնքին վրա և հանդարտ ընթացքը կը շարունակեր, ծովը հանդարտ նույնպես, իբրև թե երբեք ալեկոծություն չէր ունեցեր. բնությունը վերջապես իր բոլոր գեղեցկությամբ զարդարյալ խաղաղության կերպարանքն ուներ. Թորոս պատուհանին առջև նստած կը նայեր, բայց տեսարանին գեղեցկությունը ոչ կը տեսներ, ոչ կ'զգար, այլ նամանավանդ թե ատելի կ'երևար իրեն ամեն բան, և դժվար էր որոշել թե վերահաս վտանգը արդյոք թե գեղեցիկին երեսեն հապճեպ աքսորն էր, որ իրեն ծանր կը թվեր, բայց ստույգն հոն էր, որ լուսինը արյունագույն կ'երևեր աչքին, ծովը պղտոր հայելի մ'էր, ծաղիկները հոտ չունեին, և սոխակը, որ վարդերուն մեջ կը դայլայլեր, մահվան երգի պես ատելի էր իրեն, վասնզի Եվփիմե չի կար։ «Ավա՜ղ, ուրեմն առանց անոր հայրենյաց փրկությունն նաև իմ սրտիս չպիտի քաղցրանա՞»,— մրմնջաց և շտկվեցավ դեպ անկողին, երբ հանկարծ միտքը եկավ Բաբկեն, որ հոն կեցեր էր արձանի պես. միտքը նաև եկավ, թե քանի որ դուրս ելած էին իրենց տունեն ոչ բառ մը նա արտասանած և ոչ ինք յուր պապանձման մեջ խոսք մը անոր ուղղած էր. թեպետ սերը

խիստ, նախանձոտ և անողոք խորհրդական մ'է և կը մերժե ամեն բան, որ սեր չէ, բայց Թորոս շատ մեծ սիրտ ուներ մոռնալու համար այդ ազնիվ մարդուն հավատարմությունը իրեններուն և իրեն. ուստի ճամփան փոխեց և անոր մոտենալով՝ «Բաբկե՛ն հայրիկ. դու ի՞նչ կը խորհիս աս մեր դիպվածին» ըսավ դառն և մտերմական ժպիտով մը միանգամայն։

— Ի՞նչ զրուցեմ, իշխանիկս, վտանգ մը թեպետ կ'երևա մեր փախուստեն, բայց կը թվի նաև, թե հաջող ելք պիտի ունենանք, վասնզի մինչև հիմա կոտրած, թափած չունինք։ Ոչ թշնամին զմեզ հալածեց և ոչ ճամփանիս կտրեց. ու սուրը պատյանեն հանելու չի պարտավորեցանք։

— Ճշմարիտ է, Բաբկեն, թե վտանգավոր դիպվածներ կրնայինք ունենալ, բայց հազիվ թե բանտեն ելած՝ բանտի սպառնալյաց ներքև գտնվիլ շատ ծանր է։ Հավերը կը խոսին. արշալույսը մոտ է, երթանք քնանալ. քու անկողինդ...

— Ո՜հ, իմ անկողինս հոն է, ուր որ բազմոց մը կա, աստված քեզի հանգստություն տա, իշխանիկս։

Թորոս հազիվ թե անկողին մտավ, քունն ալ իր աչաց վրա ծանրացավ, վասնզի հոգն ու հոգնածություն այն տարիքին մեջ քուն չէր վտարեր, նամանավանդ թե կ'անուշացնեն։ Երբ արթնցավ, արդեն արեգակը իր ճառագայթներով երկնքի վրա կը թագավորեր, և բնություն բոլոր ոտքի վրա էր։ Նույնպես Բաբկեն դուրսի սենյակը արևուն հետ ելած՝ անձայն և անշշունջ կը պտտեր և առանց երևալու ձկնորսներու, նավավարներու, ծովու և ցամաքի անցորդներու երթևեկը ու իրենց օթևանած ամառանոցը կը դիտեր և ակռաները կճրտելով՝ «անիծյա՛լ քաղաք, նզովի՛ց քաղաք, հիմնահատակ ըլլա՛ս» կը մռմռար։ Եվ վերջը երբեմն աչք մը կը ձգեր կապոցին, որ Օրիորդը իրեն հանձնած էր իր այլայլության մեջ առանց բառ մը զրուցելու, «Մեր Տիկինը, աստված լուսավորե հոգին, երբեք ինձի այդպիսի ամբարտավան աչք ձգած չուներ, Բաբկեն հայրիկ, հոգիս, հայրիկ, Ռուբենս քեզ եմ հանձներ, նայե՛, կրակոտ է... Թորոս խելոք է, բայց տղա է...» մեղր կը վազեր շրթունքներեն, ան մեռավ, մեր բախտը դարձավ, վերջի անկողին ընկնելն էր. նորեն ինձի հիշեց, հանձնեց և աչքերը իր խոշոր ձեռքերով բռնեցի, կը սրբեր։ «Ո՞ւր է անանկ տիկին... աս հոռի կանանց քիթն երկինքն է...»։ Եվ Թորոսի ներսը ոտքի ձայնը լսելով՝ տղու մը պես աչքերը դարձյալ լավ մը շփեց ու սենյակը մտավ, գնաց։

ԳԼՈՒԽ Զ

ԱՌՅՈՒԾԻՆ ԿՈՐՅՈՒՆԸ ԱՌՅՈՒԾ Է

Մենք տեսանք, որ Եվփիմե մինչև վերջը առանց դիմադրության կամ խորհրդածության բառ արտասանելու օգներ էր նաև Թորոսի փախստյան, վասնզի յուր սրամտությունը վտանգը հայտներ, նշմարեր էր։ Բայց երբ սրահներու մթության մեջ տեսավ, թե իր սիրելին անհետացավ՝ «ո՜հ, աստված իմ» ըսավ և բազմոցի մը վրա ընկավ երկու ձեռքերն երեսին վրա սքողելով, իսկ Դիոնիս անխռով մոտենալով՝

— Եվփիմե՛,— ըսավ,— տխրության և արտասվաց ժամանակ չէ, քա՛ջ եղիր, որպեսզի կարենանք կատարյալ վտանգին առաջն առնուլ։

— Դեռ վտանգ մնա՞ց ուրեմն,— ըսավ աղջիկը սոսկումով։

— Անշուշտ՝ թե որ անհոգ նստինք, ոչինչ՝ թե որ աշխատինք։

— Բայց չեմ գիտեր, թե ի՞նչ պետք է ընեմ։

— Ես ամեն բան պատրաստեր եմ, անհոգ եղիր, միայն զիս մի՛ շփոթեր։

— Ո՜հ, ինչպե՞ս կ'ուզես, որ անհոգ լինիմ, երբ իմ Թորոսս կորսվի։

— Թորոս կորսված չէ, և վաղը ես ձեր պսակը կատարել պիտի տամ։

— Ի՞նչ կը զրուցես...

— Այո՛, այդ արարողությունը զրավական մ'է քու ապագա երջանկության համար, և ո՜ գիտե թերևս զենք մ'ալ է ապագայի անկարծելի արկածից համար։

— Բայց ես Թորոսին վրա ամենևին կասկած չունիմ։

— Ես ալ չունիմ, մանավանդ թե շատ համարմունք ալ ունիմ. բայց ժամանակը, պարագաները, բախտին փոփոխությունները մարդկային խեղճ սրտին վրա շատ և անկասկածելի ազդեցություններ ունին։ Ես չեմ կրնար իմ Եվփիմես՝ իր պատիվը, իր ստացվածքը, իր գեղեցկությունը երիտասարդության փոփոխամտության անձնատուր ընել. պսակի արարողությունը բավական զրավական մ'է։

— Ես բոլորովին քու կամացդ հետևելով ալ՝ չեմ կրնար մոռնալ ամեն օրվան պսակներու ոչնչանալն պատրիարքական վճիռներով։

— Մեր եկեղեցին շատ թուլցուցած է ամուսնության կանոնաց խստությունը, բայց հայոց մեջ այդպես չէ.[1] Անվո թագավորներն նաև գիտեմ

[1] Սմբատ Տիեզերակալի իր քրոջ աղջկան հետ ամուսնանալն գայթակղության դեպք իբրև կը հիշվի պատմության մեջ։

թե ամուսնության կանոնաց անհնազանդ գտնվելու հանդգնություն շատ քիչ անգամ ունեցեր են։ Բայց ժամանակ կորսնցնել պետք չէ։

— Ես քեզի արգելք չեմ, հայրիկ, ըրե՛ ինչ որ կուզես։

Ծերը շուտ մը նկավ ծառա մը կանչեց, ապսպրեց Թորոսի տան ծառայող երկու անձինքը առնուլ, դեռ չի լուսցած՝ նավակ մը դնել Թարապիա տանիլ. երկու որմնագործ, որ արդեն իր հրամանին կսպասեին, բերել տվավ և գաղտնի դուռը ամրացնելեն վերջը հռոմայեցի ծեփով[1] (որու գաղտնյաց հմուտ էր ինք) որմնել տվավ նեռսեն և անմիջապես նըստավ թուղթ մը գրեց բարեկամ հայ վարդապետի մը, ուսկից կը խնդրեր ծպտյալ իր ցույց տված ժամատեղն գտնվիլ և երբ այս ամեն բանն կարգադրեց ու կատարեց՝ բարի գիշեր մաղթելով յուր սանուհվույն, գնաց իր սենյակը, քաշվեցավ քնանալու։

Իսկ Եվփիմե, տեսնելով իր ծեր խնամակալին անխռով վստահությունը, հանդարտեցավ. կանչեց իր նաժիշտները զինքը հանվեցնելու և, իր երկրորդ օրվան երջանկության մտածությամբ կբաղած, մոռցավ գրեթե ալեկոծությունը, որ քանի ժամ առաջ զինք կը տարուբերեր, և երջանիկ քունի մեջ ընկղմեցավ։ Երբ առավոտուն արթնցավ, Դիոնիս եկած՝ քանի մը երեկի անձանց այցելություն ըրած, իր է՛ն կարևոր տեղեկություններն ստացած և վտանգը հեռացնելու ամեն հնարք ի գործ դրած էր։ Ուստի երբ Եվփիմեին քով մտավ, նա յուր առջի նայվածքեն ապահովյալ՝

— Հայրիկ, ի՞նչ պիտի ընենք այսօր,— հարցուց։

— Կը հագվինք, կը զարդարվինք և կ'երթանք զվարճանալու։

— Զվարճությո՛ւն... ո՜հ, բառը գեղեցիկ է, զվարճություն Դիոնիսի համար, իր գրքերեն, իր ուսմունքներեն դուրս, ինչչա՜փ սուղի կը լինիմ քեզի, սիրո՛ն հայրիկ,— ըսավ Եվփիմե և ծերուն երեսները պագավ։ Դիոնիս իր բոլոր փիլիսոփայական ծանրությամբ չի կրցավ ախորժանաց ժպիտ մը չարձակել, վասնզի ծերերուն բնական է ախորժիլ երիտասարդ զգվանքեն։ Բայց դարձյալ պետք եղած պատրաստությունները տեսնել հրամայեց, ամեն բան կարգի դրավ, և երբ ճաշն ըրին, ու Եվփիմե կը հարցներ, թե պետք չէ՞ր պատրաստվիլ, «քիչ մ'ալ, կ'ըսեր, ծերը, պետք է համբերել, վասնզի ոստիկանության կ'սպասեմ». և, իրոք, ծառա մը եկավ իմացնելու, թե ոստիկանության մեծը կը խնդրեր այցելություն մ'ընել պալատին՝ Տիկին օրիորդի հրամանավ։

Եվ ահա ոստիկանապետն ներս մտավ ու ամենայն մեծարանոք ողջունելե վերջ՝

— Տիկին օրիորդ,— ըսավ,— խնդրեմ հրաման տաք, որ քանի մը սենյակներու փոքրիկ խուզարկություն մը ընեն մեր պաշտոնատարք։

— Ի՞նչ արդյոք,— ըսավ Եվփիմե,— միթե մեծ հանցա՞նք մը՝ ոճի՞ր մը իմ տանս մեջ կը հուսացվի։

— Հուսացվի՛լ, չէ, բայց ո՞ գիտե, տանը հարմարությունը, գիրքը՝ կասկածներ կրնան տալ, ուստի ամեն անոնք փարատելու համար...

— Լա՛վ, տիար, ի՞նչ խուզարկություն, որ ուզեք՝ տեր եք։

Ան ատեն, շիտակ արդեն մեզի ծանոթ կողմը երթալով, ան սենյակը, որ Թորոսի անկողնին կը պատասխաներ, փնտրեցին, նայեցին և երբ տախտակամածին բերանը քարածեփ պատ մը գտան՝ ամեն իրենց կասկածները փարատեցան. և ոստիկանաց գլուխն խստությամբ կարճահասակ մարդու մը դառնալով, որ արդեն մեզի ծանոթ է, վասնզի անգամ մը տեսանք՝

— Աս երիտասարդին փախստյան պատասխանատու դո՞ւ ես, տիար Միքայել,— ըսավ,— հսկողությունը քեզ կ'ինկներ. պետք էր, որ դու անոր ամեն շարժմունքը գիտնայիր, և ահա մարդը անհայտ կը լինի, և ոչ միայն ինք, այլ նաև անոնք, որ դու տված էիր իրեն ծառայելու, և դու, ապուշ ու անմիտ բառ մը չունիս պատասխան. դատաստանին կը մնա քեզի պատասխանելու. փուճ տեղ բերանդ մի՛ բանար հոս խոսելու։

— Բայց, տիար...

— Մի՛ խոսիր, անօգուտ կ'աշխատիս ինձ պատասխան տալու համար, պահե քու բոլոր ճարտասանությունդ դատավորին, անոր առջև միայն պետք կա խոսելու։ Ոստիկա՛նք, այս մարդը դատարան տարեք։

— Բայց անգամ մ'ալ մտիկ ըրեք, ես այդ երիտասարդին ծառայողները չեմ ճանչեր, անգամ մը միայն տեսա, երկու օր առաջ և այսօր...

— Այդ խոսքով քու հանցանքդ կը ծանրացնես, դու չի՞ ճանչցած մարդկա՞նցդ հանձնեցի՞ր քու հսկողությանդ հանձնյալ մարդիկ։ Տարե՛ք, տարե՛ք։

Իսկ խեղճ Միքայել, զարմացական ձևեր ընելով և ճակտեն ջրի պես քրտինք թափելով, երկու ոստիկանաց մեջեն դուրս ելավ դատարան երթալու։

Ոստիկանության գլուխը հարգանոք ողջունելով զԵվփիմե և Դիոնիսի կամաց ձայնով հայտնելով իր զարմանքը՝ կ'ըսեր. «Տերությունը կառավարող մեր մեծերը հիրավի զարմանալի են, ազատ կը թողուն ասանկ վտանգավոր մարդ մը աս ծովու պես քաղքին մեջ, մեզի լուր մը չեն տար, և խեղճ մարդու մը, որ իր գլխուն տերը չէ, կը հանձնեն, և հիմա կ'ելնեն մեզմե կը փնտրեն»։

— Եվ դու, տիար, անշուշտ երբ փնտրես՝ մեկը կրնաս գտնել։

[1] Ciment romain, որու բաղադրությունը հիմա կորսված է։

— Անշուշտ,— ըսավ ոստիկանության պետը,— թե որ փախցնողը Դիոնիս չէ։

— Թե որ նա ինքն է՞։

— Ուրեմն չեմ գտներ,— ըսավ ժպտելով պաշտոնատարը։

— Լավ կ'ընես,— զրուցեց ծերը նույնպիսի ժպիտով մը։

— Բավական է այսչափս, իմացա, ե՞րբ ինձի հրաման մը եկավ ձեզմե և չի կատարվեցավ, սիրտդ հանգիստ բռնե, թող հայ երիտասարդը հանգիստ պտտի, միայն թե Անդրոնիկոսեն զգուշանա, վասնզի ամեն շարյաց պատճառ նա է, բավական է, թե հայ մը գտնվի խնդիրի մը մեջ՝ իր ատելությունը դավ և վտանգ կը տեսնե հոն, երկինք, երկիր իրար կը խառնե։ Քանի՞-քանի՞ անգամ կայսրը և Ներակույտը աս ապուշ երիտասարդին ազատություն տալու հրաման ըրին, և ինք միշտ արգիլելու ճարը գտավ, և հիմա, որովհետև ապստամբ ու վտանգավոր հայ մը տեսնված կա եղեր քաղքիս մեջ, իր գրգռությամբ երիտասարդը կ'ուզվի, որպեսզի բանտի դատապարտվի, և այդ Միքայելը Անդրոնիկոսի մարդն է։— Աս խոսքերն ըսելով ոստիկանապետը թողուց և գնաց։

Իսկ Դիոնիս սանուհույն գալով, հրավիրեց պատրաստվիլ երթալու և գտնելու համար Թորոս։ Եվ քիչ մը ժամանակեն վերջը երկու դեսպակ կը թողվին պալատը և կը շտկվեին դեպի ծովեզրը, ուր գեղեցիկ նավակ մը իրենց կ'սպասեր։

Նույն գիշերը Թարաբիայի ամառանոցին մեծ սրահին մեջ Թորոսի և Եվփիմեի պսակի հանդեսը կը կատարվեր հայկական արարողությամբ, Բարկեն կնքահոր պաշտոն կը կատարեր ամենայն գոհությամբ, ներելով սրտանց Եվփիմեի արյան մեջ ինչ որ հունական կաթիլներ կը գտնվեին և ծածկելով ինչչափ որ կարելի էր տրտմախառն ուրախության արցունքին քանի մը կաթիլներն։

— Երբ ամեն բան կատարվեցավ և գիշեր կես եղավ, Դիոնիսի կարգադրությամբ մեր հարսն ու փեսան հասարակ նավակ մը մտած Բարկենով, երկու ծառայով և մեկ նաժիշտով կ'անցնեին դիմացի Ասիո ծովափունքը , և ծովեզրեն մղոն մը հեռավորությամբ անտառախիտ ծառերի շրջապատյալ գյուղական ամայի տուն մը պատրաստ կը գտնեին զիրենք ընդունելու համար. հոն ի՜նչ որ բնության սքանչելիք կար, այս երկու գեղեցիկ անձանց ուրախությունը կը պակեր. Բարկեն իր լեռներուն գարունը կը հիշեր, և երբ իր երկու սաները կ'ելնեին բնակարանեն և կ'սկսեին հեռանալ, իր երկսայրին մեջքը՝ հեռվանց անտեսանելի՝ անոնց հետոց կը հետևեր, պահապան և աշալուրջ գամփռի մը պես ամեն ծառի՝ ամեն բլրակի շուքը կը քններ, որ վտանգ մը անոնց չի պատահի։

Ութ օր աս երջանիկ կյանքն անցուցին մեր նորապսակ ամուսինք,

և Թորոս իր հարսին քով կը գտներ ամեն գեղեցիկ և բարձր զգացմունքները, որ երազն են երիտասարդության փափագանաց, ու յուր երջանկության՝ միայն իր լեռները կը պակսեին, և այն ազգային ազատության սերը, որ իր նախահոր՝ Ռուբենի արյան հետ իր երակներուն մեջ կը շրջեր։

Ութ օր էր նաև, որ Դիոնիսեն լուր ամենևին չի կար, այլ ըստ սովորության տնտեսը ամեն օր կերակուրը կը բերեր արշալույսին հետ և մեկեն կը հեռանար, որպեսզի կասկածի տեղիք մը չի տա։ Հանկարծ երեկո մը ծեր Դիոնիս երևցավ. թեպետ շատ դժվար էր նորա երեսին վրա գաղտնիք մը նշմարել, բայց Եվփիմե իրեն սիրալիր ընդունելություն մը ընելե վերջը, երբ քիչ մ'ատեն տան առջև աղբյուրին քով նստան, կասկածոտ ծիծաղով մը ըսավ.

— Հայրիկ, դու մեզի բան մ'ունիս զրուցելիք, և կ'երևա, թե կը դանդաղիս։

— Այո՛, Եվփիմե, լավ գիտցար, թե բան ունիմ ձեզի հետ խոսելիք, և շատ կարևոր բան։

— Ինչո՞ւ կ'ուշացնես, կ'երևա, թե շատ անախորժ լուր մը պիտի ըլլա։

— Ես, քանի օր է, Թորոսի փախստյան համար նավ մը կը նայիմ, և այսօր հազիվ թե փնտրածս գտա...

— Ինչո՞ւ այդչափ շուտով, հայրիկ, միթե ինձի համար նավուն մեջ տեղ չի կա՞։

— Մանավանդ թե ան կը ցավիմ, որ իմ կարծածիս չափ շուտ չի կրցա շարժիլ· վասնզի այսօր փոքրիկ նավակ մը ինձ կ'իմացներ, թե ձեր փախստյան տեղն իմացավեր է ձեր թշնամիներեն, ուստի արտորնոք եկա զքեզ տանելու, Եվփիմե։ Մինչև որ Թորոս իր գործերը կարգի չդնե, մինչև որ հաջողությունը իրեն չի ծիծաղի, դու ոչ թե իրեն օգտակար, այլ վնասակար կրնաս լինիլ։

— Ամենևի՜ն,— ըսավ Եվփիմե որոշ և վճռողական ձայնով,— կը փափագեի մանավանդ, որ դիպվածը այնպես բերեր, որ կարենայի զքեզ համոզել իմ ըսածիս ճշմարտության։

— Քեզի հետ այս նյութիս վրա վիճել ինձ ավելորդ է, տեր և դատավոր՝ այս խնդրույս մեջ՝ ինձմե և քեզմե շատ ավելի ուրիշ մը կա,— ըսավ ծերը Թորոսին դառնալով։

Իսկ Թորոս այն միջոցին դեպի անտառի խորը աչքերը տնկած կը դիտեր՝ կես ուշադրություն մ'ընելով այս խոսակցության, ու երբ ծերը՝

— Իշխա՜ն, դու մեր խոսակցության կ'երևա, թե ուշ չես դներ, բայց ես շատ կարևոր նյութի մը վրա կը խոսիմ։

— Այո՛, ձեզ ալ ուշ կը դնեմ, բայց ուրիշ բանի մ՚ալ ուշ կը դնեմ,— ըսավ առանց յուր սուր աչքը խախտելու յուր նպատակեն։

Ան ատեն Դիոնիս ու Եվփիմե նույն կողմը դարձուցին իրենց աչքը և բան մը չի տեսնելով դարձան Թորոսի, որ տեսնելով ալ՝ իրենց հարցնող նայվածքին առանց պատասխանելու, ոտք ելավ, մեկ ձայնով՝

— Բաբկե՞ն,— կանչեց։

— Բաբկեն հոն չէ,— ըսավ ծառա մը։

— Ուրեմն,— զրուցեց Թորոս,— հիմա կ՚ուգա և մեզի որոշ լուր մը կը բերե։

— Ի՞նչ բանի լուր,— հարցուց Եվփիմե, այլայլելով։

— Կ՚երևա թե, սիրելի Եվփիմե, մեր թշնամիները, որոնց համար լուր առած ըլլալը իմացուց Դիոնիս, մեզի այցելություն մ՚ընել կը փափագին։

— Եվ դու հիմա որ բան մը կը դիտեիր, անո՞նք էին, տեսա՞ր...

— Հինգ-վեց հոգի և զենքի փայլյուն տեսա...

— Ի՞նչ կըսես, հինգ-վեց հոգի՞...

— Թե որ այդչափ են մեր թշնամիները,— ըսավ Թորոս ժպտելով,— Բաբկեն միայն բավական է զանոնք ցրվելու, իսկ թե որ անոր կրկինն են, պետք է որ ես ալ օգնեմ։ Բայց խնդիրը հոն չէ,— ավելցուց Թորոս Դիոնիսի դառնալով,— «մեր թշնամիները» կրնա՞նք իմանալ, թե որոնք են. կայսրը և իր ոստիկանությո՞ւնն է, թե մասնավոր մարդիկ։

— Հիմա աս միջոցին քու թշնամիդ Անդրոնիկոս Կեսարն է. բայց թե որ իր փոքրիկ խումբը վիրավորվի և ցրվի՝ իրենց վերադարձը չգիտեմ, թե ինչչափ բազմությամբ կրնա լինիլ։

— Ուրեմն մեզի պարտք կը ձգես այնպես շարժելու, որ ասոնցմե ողջ չի դառնա։

— Ան չէ իմ միտքս, բայց ըլլալիքը հայտնի է, մեկ փախստական մը տասնապատիկ բազմությամբ կը դառնա։

— Քու նավդ ե՞րբ կուգա հոս՝ աս ծովեզրը։

— Վաղն առավոտ կանուխ։

— Ահա, Բաբկեն,— ըսավ Թորոս, որ ծովեզրին կողմեն կուգա,— հիմա ճիշտ լուր կ՚առնունք... աս ծանր քայլվածքեն ալ կը ցցնե, թե վտանգը մեծ չէ։

Սպասելու լռություն մը տիրեց, մինչև որ Բաբկեն հասավ, առանց աջողության նշան մը ունենալու իր կերպարանքին վրա, իբրև թե բան մը տեսած չէր, իսկ երբ որ Թորոս նշանացի հարցուց ի՞նչ լուր կար, ան ատեն պատասխանեց.

— Ես անտառին մեջ պտույտ մը կ՚ընեի երբ, տեսա, որ քալելու և

կամաց խոսելու ձայն կուգար ծառերու մեջ քիչ մը հեռվեն, ուստի թումբի մը խստության մեջ ծածկվեցա և տեսա, որ երկուք-երկուք 12,13 հոգի չափ զինյալ մարդիկ քովես անցան· և այնչափ մոտ, որ մեկ հատը, որ տեսած էի արդեն, ճանչցա. նույն մարդն էր, որ ասկից տասն օր առաջ առյուծին կորյունը կը նախատեր։ Վերջապես տեսա, որ անոնք պտույտներ կ՚ընեին անտառին մեջ խուզարկության համար, ուստի, ես ալ կամաց մը ելա, դեպ իրենց եկած ճամփան գնացի և տեսա, որ մակույկ մը զիրենք բերած էր, և մեջը պահապան մեկ հոգի մը ձգեր էին։

— Լավ,— ըսավ Թորոս անխռով,— կարծեմ թե մեր կերակուրի ժամանակն է և պետք է քիչ մը բան ուտել, որովհետև հավանական է, թե վերջը ժամանակ չունենանք։

Եվ չորսերնին մեկտեղ շտկվեցան դեպի տունը. երբ դռնեն մտան, պարտեզին վրա դիտող աչք մը պտտուց Թորոս և Բաբկենին քանի մը բան ապսպրեց կամաց ձայնով, որ անմիջապես դռներուն մեկը քարերով ամրցուց և մյուսը առջի վիճակին մեջ ձգեց. երբ նստան կերակուրի մեր երկու հայերը՝ ըստ իրենց սովորության կերան, Եվփիմե կը խաղար, քան թե կ՚ուտեր, իսկ ծերը մտախոհ քանի մը պատառ առնելեն վերջ՝ «ի՞նչ է քու միտքդ» ըսավ Թորոսի, երբ նա դադրեր էր ուտելե և անհոգ կը խորհեր։

— Մենք պարտական ենք ինքզինքնիս պաշտպանելու. մանավանդ, որ մասնավոր անձի մը թշնամությունն է, որ մեր կենաց ոխերմաբար կը դարանի, և գիշերվան մութը իրեն ընկեր կ՚առնու։ Կը տեսնեմ, թե դու, իմաստուն մարդ մը, որու նման ես շատ քիչ տեսեր եմ, կը վարանիս. կ՚երևակայեմ, թե քսանը հազիվ անցած երիտասարդի մը զինուց վարժության վրա վստահություն չունենաս, բայց այդ մի՛ հոգար, ես տղա տարիքես զենքի վարժության և վտանգի մեջ ծներ և սներ եմ. անոր համար ալ աս իրիկունը չեմ մտածեր, վաղը կը մտածեմ. այս իրիկուն ան մարդիկը ժամ մը չի քաշեր, հավու պես կը թոթափին։

Եվ աս խոսքերը այնպիսի անհոգ արհամարհանք մը ունեին, և իր հստակ ու որոշ ձայնը այնչափ փոխված չէր, որ եթե իր մեծ աչքերուն բոցը չիներ, որ ամեն շարժմունքին կայծակ կը հաներ, արձան կը կարծվեր. այն միջոցին Բաբկեն ներս մտավ.

— Ե՛լ, իշխանիկս,— ըսավ,— մարդիկը կ՚ուգան, ինչպե՞ս պիտի ընենք։

— Թո՛ղ զիրենք, որ մեծ դռնեն ներս մտնեն, դու, երբ ամենքը կը մտնեն, դուրսը կեցիր, ո՛վ որ ելնե՝ մահվան հարված մը տուր։

— Բայց դու հոս մինակ ես, անոնք կամ տասներկու կամ տասներեք են։

— Դու լսեցի՞ր, Բաբկե՛ն հայրիկ, ու պաշտոնդ դռանը դուրսը՝ մարդ ողջ չի հանելն է։

Այնպիսի անդիմադրելի եղանակով մը զրուցվեցավ այս, որ Բաբկեն դուրս ելավ առանց խոսելու, քթին տակեն աղոթք մը մմռալով. անտարակույս աղոթքը Թորոսին համար էր։

Տան վարի պատուհանները երկթե վանդակներ ունեին. ճրագները վերցնել տվավ. վերի փեղկերը՝ ըսավ Դիոնիսին թե՝ պետք է պաշտպանել, որպեսզի Եվփիմե չի վախնա։ Իսկ ինք թռավ սանդուխներեն վեր, Լևոնի ահագին սուրը մերկ աջ ձեռքը բռնած և երկսայրի սուրը մեջքը, իշավ փայլակի մը պես. Եվփիմեի, որ անխոս կեցեր էր, գգվանոք ձեռքը պագավ. «Սիրտդ հանգիստ բռնե, ժամ մը չի տեեր, ասիկա դիպված մ'է,— ըսավ,— վաղվան համար մտածենք»։ Սա անխոով խոսքերը թեպետ կ'ապահովեին քիչ մը անոր սիրտը, և կ'ուզեր խոսիլ, բայց չի կրցավ, ու նույն միջոցին տեսավ, որ Թորոս զինք ձգեց, դուրս ելավ պարտեզ և տան դուռը վրայեն գոցեց ու պատին քով թուփերուն մեջ ծածկվեցավ։ Ինք տան շուքին մեջն էր, ո՛վ որ դռնեն մտներ, որոշ կը տեսներ լուսնի լուսով. և ահա կիսաբաց դուռը բացվեցավ, և մեկիկ-մեկիկ գողի պես կը մտնեին իր սպասած մարդիկը. մտնողը մեկ մը կանգ կառնուր, չորս կողմը կը դիտեր և դեպի դուռը կը հառաջանար։ Երբ յոթ-ութ հոգի ներս մտան և առջի մտնողները տան դռանը և թուփերուն մոտեցան, ահագին և սոսկալի ձայն մը որոտաց. Թորոս ինքն էր, և հարված հարվածի վրա կը հաջորդեր. արդեն երեք հոգի գետինը կը տապլտկեին, և երկուքը փախան. հազիվ ան ատեն երեք հոգի թշնամիներեն կարողացան նորա վրա հարձակիլ, բայց այս հարձակմունքն ալ նույնչափ օգտակար եղավ իրենց, որչափ առջի հանկարծակի գալն. երկու հոգի դարձյալ մահացու վիրավոր կ'ինկնեին, և իր ահագին սուրը մեկդի կը թոցներ զենքերու բեկորները, թևեր, մատեր, և վիրավորք կամ վատք, որ դուրս կելնեին, Քաբկենը կը գտնեին, որ հարված մը միայն տալով կը պառկեցներ զիրենք. և որպեսզի արգելք չըլլան ուրիշ ելլողներուն խղճմտանքաբար ոտքերնին կը քաշեր և պատին տակ կը դիզեր։ Երբ երեք-չորս եղավ դիակը և տեսավ, որ դեռ ներսը զինուց հարվածները չեն դադրիր, «քիչ մ'ալ ներս մտնենք,— ըսավ,—վասնզի երկայն եղավ»։ Ճիշտ ժամանակին մտավ, վասնզի չորս-հինգ զԹորոս շրջապատած սուրերնին ձեռքնին կանոնավոր հարձակում կ'ընեին. ասոնց մեկուն կռնկին Բաբկենի սուրին հարվածը զայն գետին գլորցուց, և աս անակնկալ օգնությունը մյուս ամենքը հուսահատեցուց. փախչելու որոշումն տվին։ Թորոս սաստիկ հոգնած էր, իսկ Բաբկեն՝ «ասոնք ալ թող երթան սատանային գիրկը, ու՞մ հոգն է,—

կ'ըսեր,— բավական է, որ սա ինկածներուն մեջ ան անպիտան մեծաբանն ալ գտնվի՝ որ չէր հավտար, թե առյուծու կորյունն միշտ առյուծ է։ Ապրի՞ս, իշխանիկս, տես քանի՛ մարդ դիաթավալ կացուցեր է... ես գիտեի, որ քաջ էր, բայց ինչչափ ժամանակ է ոչ կռիվ տեսած էր, ոչ զենք գործածած... լա՛վ սկսանք, մեր Սև լեռն հասնինք, ան ատեն տառնապատիկ պիտի մեծնա...»։

Աս միջոցին լռություն տիրած էր պարտեզին մեջ, զինուց շաչյուն և շառաչյուն ամեն բան դադրած էր, միայն քանի մը վիրավորք կը տքային. ան ատեն Թորոս՝ «բացե՛ք դռներն» գոչեց, և տան դռներն բացվեցան. ճրագներն վազցուցին, տունն ու պարտեզը լուսավորեցան. դուրսն ու ներսը յոթ-ութ դիակք կային, և մեր քաջակորովը կանգնած էր անոնց մեջ, կ'ապսպրեր ծառաներուն ողջ մնացողներն ներս առնուլ և դարմանել։ Իսկ Եվփիմե, երբ տեսավ զԹորոս ողջ, բայց արյունով ներկված, և երբ իմացավ, թե չէր անգամ վիրավորված, աչքերը ուրախությամբ երկինք կը վերցներ, գոհություն կուտար աստուծու։ Եվ առանց ծառաներու սպասելու ինք ջուր կը բերեր, որ իր փեսան մաքրվի, լվացվի։ Եվ երբ Թորոս ան ահագին աշխատությենեն վերջը բազմոցին վրա տարածվեցավ, Եվփիմեի երևակայության մեջ աշխարհիս բոլոր Աքյուլլեսներեն և Հերակլեսներեն ավելի բարձր էր, ուստի դառնալով Դիոնիսին՝

— Վաղը նավը, որ պիտի գա, մենք ալ մեկտեղ կ'երթանք, այնպես չէ՞, հայրիկ,— ըսավ։

Իսկ Դիոնիս, առանց պատասխանելու աս հարցման, Թորոսին կը նայեր, որ նույնպես պատասխան չտալով ծերուն կարծիքը կ'ուզեր իմանալ։ Իսկ նա երբ տեսավ, թե երկուքն ալ լուռ կեցեր են՝ «ու՞ր է Բաբկեն, Բաբկեն հայրի՞կ» սկսավ կանչել։ Բաբկեն ներս մտավ գլուխն ու երեսը ծածկած և հազիվ քանի մի քայլ կրցավ առնուլ միայն, նստավ և գլորեցավ. ամենքը տեղերնեն ցատկեցին ելան և գլուխը բոլոր արնաշաղախ տեսան. ինք մարած էր կամ մեռած։ Դիոնիս մեկեն մոտեցավ, զննեց գլխուն պատռածը, լվաց, վերքերը դարմանեց, պատեց և իմացուց, թե սուրի հարված մը ճակտին ոսկորը թեպետ կտրեր էր, բայց ուղեղին չէր վնասած, ուստի ապահովցուց զամենքը՝ հուսացնելով թե քիչ մը ժամանակեն կրնար առողջանալ բոլորովին։ Աս վերջին խոսքը մխիթարեց զԹորոս, բայց Եվփիմեի խնդիրը չի լուծեց։

ԱՐԾՐՈՒՆՅԱՑ ՇԱՌԱՎԻԼ ՄԸ

Դիոնիս Թեպետ ուրիշները ապահովցուց Բաբկենի համար, բայց զինքը մեկ-երկու ժամ ամենևին չի թողուց, և պաղ ջուր շարունակ գլխուն վրա դնել հրամայելեն և իրեն խոսիլն արգիլելեն վերջ, ելավ պտույտ մը ըրավ անկելոց մեջ, ամենքը մեռած կամ հոգեվարք էին, տասնմեկ հոգի։ Մերը սկսավ մտածել. ուրեմն երկուքը փախած էին, և առավոտուն երկրորդ այցելություն մը կարելի էր Անդրոնիկոսի կողմեն, որ անոնց մեջ չի կար. և Դիոնիս կ'երևակայեր, թե անշուշտ այդ խումբին գլխավորը գտնված էր նա, ուրեմն փախած էր և պիտի դառնար, և թերևս Բաբկենի հարվածը տվողը նա ինքն էր։ Ուստի ծառա մը առած հետն և լապտեր մը, դեպի ծովեզրն գնաց և ծովուն քով մարդ մը տեսավ, որ կը ջանար գրկելու ուրիշ ահագին մարդ մը, որ ինկած էր գետին, և որ տեսնելով, թե երկու հոգի դեպ իրեն կուգան՝ ցատկեց մակույկի մը մեջ, որ ծովեզրն էր, ու միջոց մը անցնելով կեցավ և սկսավ դիտել. ծռեցավ Դիոնիս և զննեց մարդն ու իր վերքը. մարդը Անդրոնիկոս ինքն էր, վերքը սուրի մը հարված, որ աջ թոքը վիրավորած էր, և թե որ թողվեր, մահաբեր կրնար լինել, ուստի շուտ մը ծոցեն շիշ մը հանելով թաշկինակը թրջեց և վերքին բերանը խցեց, արյան դադրիլը և դեղին զորությունը Անդրոնիկոսի հառաչանաց ձայն մը հանել տվին։ Այն ատեն ծերը քիչ մը մտածելեն վերջ դեպի ծովեզրը գնաց և մակույկի մեջ կեցող մարդուն ձայն արձակեց.

— Բարեկամ,— ըսավ,— դու կը տեսնես, որ մենք քու տիրոջդ թշնամի չենք, իր վերքը պատեցինք, և թե որ կ'ուզես իր կյանքը ազատել՝ եկ մեզի օգնե, որպեսզի կատարելապես մահվենե ազատենք զինքն։

Մարդը քիչ մը մտածելեն ետք խրեց իր մակույկը ցամաք, ելավ նավեն և ծառային հետ շալկելով վիրավորը շտկվեցան դեպի տուն։ Եվ այսպես Դիոնիս ապահովեցավ, թե ալ մարդ չի կար լուր տանելու մայրաքաղաքը։ Մանավանդ, որ բուն թշնամին իրեն ձեռքն էր։ Միայն չէր կրնա գուշակել, թե ի՞նչ ընդունելություն պիտի ըներ Թորոս իր մահացու թշնամին տանն անցնելով. և գոհ եղավ, երբ լույսը մոտեցնելով տեսավ, որ նա անտարբեր և հազիվ թե արհամարհոտ աչք մը ձգեց իր ոխերիմ թշնամվուն վրա, և Բաբկենին մոտ կուզեր տեղավորել, որպեսզի դյուրին լինի երկուքին ալ միասին խնամք տանիլ։ Բայց ծեր բժիշկը, որ Թորոսի մեծահոգությունը կը տեսներ, նույնը չէր հավատար ոչ Անդրոնիկոսի և ոչ Բաբկենի համար, ուստի զատ սենյակներ երկուքն ալ զետեղել կը մտածեր։

Եվ հիմա Եվփիմե երևցավ սենեկին դուռը Բաբկենի ձեռքեն բռնած, որուն անխռով կ'առաջնորդեր դեպի սենյակը, իմացնելով Դիոնիսի թե ինչ ցուր հիվանդը նայելու մտադիր էր, իսկ թշնամվույն խնամքը ուրիշներուն կը վերաբերեր։

Դիոնիս՝ մակույկին պատուհանը և ծառա մը Անդրոնիկոսի քով ձգելեն վերջ, երկու մնացած ծառայից հետ մոտակա ամայի և անջրդի հեղեղատի մը մեջ նետել տվավ դիակները ու երբ ամեն բան կարգի դրավ, դարձավ տուն իր վիրավորները տեսնելու։ Անդրոնիկոս կը զառանցեր, ուստի պետք եղած դարմանները՝ ինչ որ կարելի էր այնպիսի տեղ ապսպրելեն վերջ, Եվփիմեի սենյակը դռան առջև եկավ և տեսավ Բաբկեն, որ անկողնին մեջ նստած կը պատմեր Թորոսին։

— ...Ինձի ըսեիր, թե դռնեն ողջ մարդ պիտի չելնե, ես տեսա փախչողները, ըսածդ մոռցա. հորեղբայրդ ըսած էր մեզ. «Տղա՛ք, փախչողին մի՛ դպիք, թողեք երթան», միտքս հոն գնաց. երբ ուշաբերեցի, վազեցի ետևնուն, մեկը դռնեն տասը քայլ անդին գետին փռեցի, մյուսը մեծ էր, ուժով կը թվեր. ծովուն մոտ հասա, դարձավ, ի՞նչ տեսնեմ, մեր մարդն էր։ «Աղվե՛ս, կա՛ց,— ըսի,— առյուծին ձագը տեսա՞ր». հազիվ թե սուրը կուրծքին դրի, գլուխս սուրի լավ հարված մը իջուց, ինք ալ գլորեցավ։ Աչքերս մթնցան, աղբյուրին վազեցի, լվացի արյունը, տեսա որ չի կտրիր. վերարկուս վերքին վրա բռնեցի գոցեցի. հոս եկա. գլուխս պտույտ կուգար։ Տիկինին ձայնը լսեցի, որ «Բաբկեն հայրիկ» կը կանչեր, և ալ ինչ եղա, չիմացա...

— Լավ,— ըսավ Դիոնիս,— ես ալ քեզի արգիլած եմ, որ չխոսիս, հանգարտ պետք է նստիս։— Բաբկեն լռեց և Եվփիմե ամենը ճամփեց ու իր վրա առավ զնա խնամել. դուրս ելան և հոն Թորոս ու Դիոնիս սկսան խորհուրդ ընել երկրորդ օրվան ճամփորդության վրա՝ եթե նավը գա, և որոշեցին, որ Թորոս երթա, իսկ Բաբկեն առողջանալեն վերջ Դիոնիսի և Եվփիմեի հետ գա։

Ուստի աս որոշմունքն ընելե վերջ արդեն կեսգիշերն անցած էր, Թորոս ընկողմանեցավ բազմոցի մը վրա, իսկ ծերը երբեմն իր հիվանդներուն այցելություն կ'ըներ, երբեմն կը մրափեր, մինչև արշալույսը երևցավ։ Բաբկեն քանի-քանի անգամ նույն գիշերն ազաչեց Եվփիմեի, որ զինքը թողու և հանգչի, բայց նա շարունակ պաղ ջուր դնելով գլխուն և լռել հրամայելով լուսցուց։ Եվ երբ տնտեսն, ըստ սովորության, իրենց պատրաստ կերակուրը բերավ, իջավ առանձին պատվերներ տալու և ետքը իր հիվանդին քով քաշվեցավ։

Թորոս և Դիոնիս նավու գալը կը դիտեին, և նավ չէր երևար, ծովեզրը կիջնեին, լուր չի կար, և այսպես կանցուցեին ժամանակը մինչև կեսօր։

Անդրոնիկոսի վիճակը ավելի ծանր էր, թեպետ Դիոնիս չէր հուսահատած, իսկ Բաբկեն թեպետ ինքզինքը լավ կը գտներ՝ կամա ակամա իր բռնավոր տիրուհվույն ձեռքը մնացեր, Թորոսի կը հարցներ՝ «Ա՛լ բավական չէ՞», որ կը ժպտեր և պատասխան չէր տար։ Կեսօր եղավ, և ճաշի նստան, թեպետ ամենուն սիրտը անհանդարտ։ Դիոնիս երևակայելով, որ Անդրոնիկոսի մը անհետանալը չէր կրնար հուզմունք մը չհանել, և ոստիկանությունը Թորոս փնտրելով զանի պիտի գտներ. Թորոս, որ նավուն կ՝սպասեր և Եվփիմենն ու Բաբկենն պիտի բաժնվեր. Բաբկեն, որ իր տիկնոջ խնամքներեն կը քաշվեր, կ՝ամաչեր և ձեռքեն ազատելու ճարը չէր տեսներ. միայն Եվփիմե անխոս, անմոռուչ բժշկին հրամայած պաղ ջուրը Բաբկենին գլխուն առանց պակաս ընելու՝ նստած տեղեն ծովը կը դիտեր. անոր համար ալ հազիվ քանի մը պատառ առած ելավ հիվանդին քով երթալու։ Դիոնիս իմացուց, թե ալ Բաբկենին համար վտանգ չի կար. և թե ուղեղին ցնցմունքն, վերքին և հարվածույն հետևանք հիվանդությունն ալ անցեր էին, ուստի հանգիստ կրնար ընել. իսկ Եվփիմե առանց պատասխան տալու գնաց վեր և հազիվ թե սենյակը ելավ և պատուհանին աչք մը ձգեց՝ գողի մը պես մատվրներուն վրա կոխելով՝ իջավ սանդուխեն և պարտեղին դուռը գտավ. հոն տնտեսը դիմավորելով՝ ձեռքի կապոցը առավ.

— Նավեն լուր առի՞ր,— հարցուց։

— Գենովացի նավը կուգա, ջուրը պիտի առնու և ճամփա ելնե։

— Լավ, դու մտիր սեղանատուն և իմաց տուր։

Եվ ինք կապոցը ձեռքը սրացավ վեր, մտավ իր սենյակը։

— Բաբկեն հայրիկ, բժիշկը քեզի հրաման կուտա ելնելու և հանդարտ ծանր քալելու. դու ինչպե՞ս ես։

— Ո՜հ, Տիկինս, աստված քեզի երկար կյանք տա, ես լավ եմ, ահա կը տեսնես,— ըսավ ճակտին լաթը վերցնելով և կանգնելով։

— Չէ, մ՝արտորար,— ըսավ Եվփիմե, վերքը լավ մը փաթթեց, ինչպես տեսեր էր Դիոնիսեն, գլխարկը գլուխը դրավ,— հիմա հանդարտ քայլերով դուրսի սրահը գնա, ինձի սպասե։

Եվ աս խոսքերը այնպես մայրենի անուշությամբ մը ըսավ, որ խեղճ Բաբկենի աչքերը լցվեցան, և առանց բերանը բանալու ձեռքը երկնցուց. Եվփիմե ձեռքը տվավ և կորովի ծերը իր շրթունքները վրան դնելուն՝ երախտագիտությունն և որ մեծն է մանավանդ իր համարմունքը կը հայտներ, բոլորովին զղջալով յուր առաջին գիշերվան կասկածանաց վրա։ Ուստի դուրս ելավ, նստավ սրահը և որովհետև Տիկինը ըսած էր, թե ալ առողջ էր, միտքն ինկավ, թե անոթի է, և զղջաց թե ինչպե՞ս Տիկնոջը չէր հարցուցեր, թե ի՞նչ կրնար ուտել։

Այս ծանր խորհրդածության վրա էր Բաբկեն, երբ Թորոս և Դիոնիս սանդուխին վրա երեցան կամաց ձայնով խոսելով։

— Դու չե՞ս ճանչեր Եվփիմեն,— կ՝ըսեր ծերը,— ոչ թե միայն դու, ես նաև չգիտեմ, թե ի՞նչ կերպով պիտի կարենամ ազատել ձեռքեն։

— Ես ալ չեմ ուզեր և չեմ կրնար իրմե զատվիլ, բայց դու, ազնիվ բարեկամդ իմ, դու որ աշխարհք կը ճանչես, լավ կրնաս դատել իմ վիճակս և թե ի՞նչ վտանգներու դիմագրավ պիտի երթամ. ինչպե՜ս այսպիսի անձ մը... բայց դուռը կը բացվի...

Երկու խոսակիցք ապուշ մնացին, տեսնելով, որ սենեկեն դուրս ցատկեց վայելուչ և պարզ հագուստով, մեջքը դաշույնով, խիստ ժպիտով՝ տասնութ տարեկան զեղեցիկ և կորովի պատանի մը, որ առանց խոսելու սրահին մեջ կանգնեցավ և անքթիթ իրենց կը նայեր։ Անոնց զարմանքեն ավելի մեծ եղավ Բաբկենի հիացումը, որ ձեռքերը երկինք վերցընելով՝

— Փա՜ռք աստուծո, կեցցե՜ մեր քաջ Տիրուհին,— կանչեց։

Եվ լռությունը դարձյալ հաջորդեց։ Վերջապես Դիոնիս դառնալով Թորոսի՝

— Տեսա՞ր, իշխան,— զրուցեց,— ես քեզի չասի՞...

— Լա՛վ,— ըսավ Թորոս,— ես կյանք մը ունեի զոհելու ազգիս համար, կեսը դու կը հափշտակես, Եվփիմե։

— Ոչ այդպես, կյանք մը ունեիր նվիրելիք ազգիդ, ահա երկուք ունիս անոր նվիրելիք, իմ երակաց մեջ ալ կա այդ քու Արծրունյաց արյունեդ.— և Դիոնիսին դառնալով ավելցուց Եվփիմե անխռով,— ժամանակ պետք չէ կորսնցնել, երթանք։ Բաբկեն բավական զորեղ է, ի՞նչ կը դանդաղինք։

— Դու պետք է մտածես, թե ձեր օգտին համար ես հոս պետք է մնամ, գոնե քիչ մ՝ատեն։

— Մեր օգուտը՝ աստված և քու ընկերությունդ է։ Անոնք փուճ խոսքեր են, հայրիկ, ո՛չ դու առանց ինձի կրնաս ապրիլ, և ոչ ես առանց քեզի և Թորոսի։ Ահա ինչ որ ստացվածք ունիմ, հոս է, իսկ մնացածը՝ որ չեմ կրնար տանիլ, կը թողում հափշտակողին, կա՛մ ան է, որ Թորոսի բախտը ինձի հազարապատիկը կուտա, կա՛մ ան է, որ եթե ողջ մնացինք, անշուք և առանձին կյանք մը կը վարենք գոհությամբ աստուծո այն անհամար արարածոց պես, որոց վաղիվն նա ինք կը հոգա։

Եվ ձեռքը ծերուն բերնին վրա դնելով, ժպտելով մը, որ չի պատասխանե, ձեռքեն բռնեց և Թորոսի ալ ակնարկեց ծրարը առնուլ, որ ներսն էր, ու ինք առջևեն կ՝իջներ։ իսկ Թորոս, երբ սենյակը մտավ, իր աչքին առջի բանը որ դիպավ, Եվփիմեի դեղձան մազերու ոսկեփայլ կույտն էր, որ գետինը փռված կը կենային, առավ համբուրեց անոնք և նայեցավ

երկինք, շնորհակալ եղավ, որ աստված այսպիսի կին մը իր առջև կը հաներ, որ հայրենյաց զոհողությանց առաջինը իր գլխուն վրայեն կ'սկսեր։ Ուստի առանց երկմտելու առավ վերարկուն, զենքերը ու ծրարը և սկսավ հետևիլ անոր, որ զվարթ երեսով ամենեն առաջ կ'երթար անվախ և համարձակ։

Հյուսիսային հովը ուժով և հաջող կը փչեր. նավը իր բոլոր առագաստները բացած կը սահեր, կը թռեր, և մեր չորս ճամփորդները երևալե զգուշանալով՝ նավակներու հետաքրքիր նայվածքներեն կը հեռանային Վոսփորի ափունքներեն, և վերջը ահագին մայրաքաղաքին տեսությենեն գոհ և ուրախ սրտով, և դեռ մութը չի հասած, ցամաքը սկսավ անհետանալ, և Մարմարայի մեջ կը հառաչանային հանդարտ ու խաղաղ։

Խեղճ Բաբկեն դեռ անոթի էր, թեպետ ուրախ, և իր ուրախությունը ի'ավելանար, քանի որ միայն երկինք ու ծով կը տեսնվեր։ Երբ մեր նավորդքն իրենց սպարտական ընթրիքն ըրին, և վերջը Դիոնիս Բաբկենի վերքը զննեց և լավ վիճակի մեջ գտավ, երբ ամեն բան հաջող և երջանիկ սկիզբով երջանիկ կատարած կը խոստանար, Բաբկեն ոչ թե առողջ, այլև երիտասարդ կ'երևեր, և երբ Եվփիմե իրեն աս աշխույժին վրա կը կատակեր, նա, Տարտանելը թեպետ դեռ չէին անցեր, ծիծաղելով կ'ըսեր՝ «Տիկին, մի՛ զարմանար, իմ լեռներուս հոտը ես արդեն շնչեցի»։

ԳԼՈՒԽ Ը

ՀԱՅՐ ՍՈՒՐԲՔ

Եվփիմե ուրախ էր, վասնզի ինչ որ սրտին սիրական ուներ՝ հետն էր. Բաբկեն ուրախ էր, վասնզի կին, զավակ և հայրենիք պիտի տեսներ. Թորոս, թեպետ անթափանց, ուրախ էր, վասնզի կը հուսար, քանի որ կը հեռանար՝ աղատություն, փառք, հայրենի ժառանգություն և ամենայն ունենալու. թե որ մեկը կար, որ անտարբեր կ'երևար և որ թերևս դժգոհ ալ էր առանց հայտնելու, Դիոնիս էր. սրամիտ, փորձ և նախատես. ամեն բան կը քններ, ամեն բան կը հարցներ. նավապետին, նավաստիներուն հետ կը խոսեր, հեռուն նավ մը, ծոց մը իր սուր աչքերեն չէր փախչեր. և դիտակը, նորահնար գործիք ձեռքը, իր հետաքրքրության օգնականն էր։ Նավը, որ ինք վարձեր էր թեպետ Կիլիկիա երթալու նպատակավ, բայց Գենուացի նավապետին Կիպրոս զրուցեր էր. ան միտքով, որ Կիլիկիո սահմանները երբ հասնին, հոն ելնեն։ Մանավանդ, որ ինք համոզված էր,

թե Կիլիկիո բոլոր ծովեզերքը խիստ պահպանության վիճակի մեջ էին, և տերության նավեր Թորոսի սպասելու հրաման առած էին։ Ուստի երբ առանձին իր մտածության հետ կը մնար, Եվփիմեի հանդուգն համառությունը կը նեղվեր և ինքզինք կը մեղադրեր, որ բավական քաջություն չէր ունեցեր դիմադրելու նորա աս ուղևորության. թեպետ երբ անոր մոտենար, յուր բոլոր մաղձը, տխուր նախատեսությունքը, անոր զվարթ կատակներուն և ծիծաղներուն առջև կ'անհետանային։ Եվ եթե մխիթարության առիթ մը կար, այն էր, որ, տասն օր հալիվ թե եղած՝ նեղուցները անցեր և միշտ հաջողակ հողմով աջ ու ձախ Արշիպեղագոսի կղզիներու մեջեն կը սահեին. ոչ Սարակինոսաց հեն, ոչ ասպատակ, որ այն ժամանակներ սովորական էին և ոչ Բյուզանդական կայսրության պատերազմական նավ մը իրենց հանդպած չուներ։ Ձախ կողմը Տորոսի լեռներ արդեն իրենց ժայռոտ գլուխները կը ցցնեին, որոնց վրայեն Բաբկենի աչքերը չէին զատվեր. վասնզի սկիզբն և նախաշավիղ էին իր Սև լեռներուն. ուստի կամաց և անմռունչ կ'երգեր երգը, զոր Ռուբենի առջի ընկերները՝ Տորոսի բարձանց վրա նոր հասած՝ երգեր էին

Սև լեռներ, սև լեռներ,
Ձեր գլուխներ է համպերե մրթընցեր,
Դուք, ամպեր, սև ամպեր,
Ուսկի՞ց կուգաք, ո՞վ ամպեր,
Ինչո՞ւ մութ եք, ո՞վ ամպեր։

Հեռու երկիր բարձրաբերձ են մեր լերինք,
Սպիտակափայլ միշտ ձյունազարդ գլուխընին,
Հոն արեգին պայծառ նշույլք չեն տոչոր,
Ի բնակիչսն նոքա անուշ կ'ակնարկեն։

Սև լեռներ, սև լեռներ,
Ձեր գլուխներ է համպերե մրթընցեր,
Դուք, ամպեր, սև ամպեր,
Ուսկի՞ց կուգաք, ո՞վ ամպեր,
Ինչո՞ւ մութ եք, ո՞վ ամպեր։

Փոթորկալից մեզ բուռն հողմեր հոս բերին,
Մեծին Հայոց Մասիսն էր մեր խանձարուրք,
Արագածու գլուխն էր մեր արքունիք,
Նքպատ, Գրգուռ, Բյուրակն էր մեր շտեմարան։

Սև լեռներ, սև լեռներ,
Ձեր գլուխներ է համպերե մրթընցեր,
Դուք, ամպեր, սև ամպեր,

Ուսկի՞ց կուգաք, ո՞վ ամպեր,
Ինչո՞ւ մութ եք, ո՞վ ամպեր։

Ըսեք ուրեմն թե օտար չեմք, ո՞վ ամպեր,
Մեծին Հայոց մենք ևս որդիք հարազատ,
Հոս վըտարյալ ի մարդադեմ գազանաց,
Ազատության ի սուրբ անուն կը գոռամք։

Սև լեռներ, սև լեռներ,
Ձեր գըլուխներ է համպերե մըթընցեր,
Դուք, ամպեր, սև ամպեր,
Ուսկի՞ց կուգաք, ո՞վ ամպեր,
Ինչո՞ւ մութ եք, ո՞վ ամպեր։
Ո՞վ բարեկամ դուք, ամպեր,
Տո՛ւք մեզ ձեր շուք, ո՞վ ամպեր,
Եվ ի շոնդ և հոր մարտի,
Մեզ օգնություն տո՛ւք շանթեր։

Պայծառ գիշեր մ'էր, նա կ'երգեր. երիտասարդության գեղեցիկ օրեր, սիրո և հաղթության հիշատակներ՝ ամենքն այն երգի հետ իր անդըրդվելի սիրտն կը տրոփեին, երբ փոքրիկ թաթի հարված մը հուս զինք հուշի բերավ։

— Ի՞նչ է, Տիրուհիս։

— Բարկեն հայրիկ,— ըսավ Եվփիմեի անուշ ձայնը,— ի՞նչ կ'երգեիր։

— Է՜հ, մեր լեռները, մեր երիտասարդության հիշատակները կ'երգեի, մեր տղաքը ո՞ գիտե ի՞նչ կ'երգեն, ննջեցելոց երգեր թերևս. տեսնենք, թե մեռելներու քունեն ինչպե՞ս պիտի արթննան։

— Ի՞նչ կարծես, հիմա որ երթանք, չէ՞ կարելի, որ անտարբեր մընան ձեր իշխանները Թորոսի ձայնին։

— Մեր իշխանները, Տիրուհիս, միշտ անտարբեր կը մնան. բայց մեր լեռնցիք զանոնք կ'արթնցնեն, թե որ պետք ալ լինի, կը բռնադատեն, որ միանան և նաև հնազանդին. թե որ իշխաններուն մնա, որ թեպետ քաջ են, բայց նախանձոտ և հպարտ, մենք միշտ ողորմելի գերի կը լինեինք ամենուն՝ հույնին և սարակինոսին։ Բայց ժողովուրդը տեսա՞ր, ամենքն ալ զինվոր են, ամենքը կը կռվին. անոնք էին, որ Ռուբենի, Կոստանդնի, Թորոսի ձայնին միացան ու ժողվվեցան. ո՜հ Թորոսը տեսնեի՜ր, հա՜, մեր իշխանիկը անոր կը նմանի. բայց ի՞նչ մարդ էր, երկու աչերն երբ մեկուն վրա ձգեր, գիտեիր, թե սիրտդ կը կարդա, գեշ մտածողն ալ, լավ մտածողն ալ աչքին երևալեն կը վախնային. մեր մեծ վարդապետները, ան մեծմորուք եպիսկոպոսներդ՝ ամենքը կը վախնային իրմե. ինչ

խոսք, որ զրուցեին, կը չափեին. մեր լեռը՝ բոլոր վանք ու անապատ է, կարգավոր աբեղա լեցուն է, մեկ հատ չի կար, որ անկից չակնածեր. շատին խոսիլ չէր տար. մարգարեի պես գիտեր, թե ինչի՞ համար եկած են, ի՞նչ կուզեն. մենք անոնց սև հրեշտակ կ'ըսեինք, Թորոսին սպիտակ հրեշտակ կ'ըսեինք. նա անոնցմե խոլոք էր. լա՜վ, բայց բան մը զրուցե՞մ, Տիրուհի, օր մ'եղավ, որ մենք անկից խելոք բան խորհուրդ տվինք, նա մտիկ չըրավ։ Ան մեծ կռիվն, որ եղավ, ուր Լևոն՝ աս մեր իշխանիկին հայրը, որ առյուծի կը նմաներ, այնպես քաջացավ, որ ողջ բանակի մը գործ կատարեց, ամեն իշխանք զարմացեր մնացեր էին, ժողովուրդը՝ «Միայն Ռուբինյանք կ'ուզենք» ըսին. մենք ալ կայինք հոն՝ ժողովրդյան քանի մը հարյուր խելոքները. ըսինք, որ այդ իշխանները այսօր Թորոսի ու Լևոնի քաջությամբ ազատեցան սկյութներեն, վաղը անոնց դեմ դավաճանություն կ'ընեն. քանի որ պատրաստ այստեղ են, ամենքը բռնենք հավի պես կտրտենք՝ արքայություն ուղարկենք. շատ չէ հիսուն-վաթսուն հոգի մեծ ճոճերեն, բոլոր երկիրը կը խաղաղի, ամենքն ասոնց կը հնազանդին, հայը կը լինի մեկ սիրտ, մեկ հոգի։ Իրենք ներս էին Վահկա բերդին ավազանին վրա նստած մեծ ու պզտիկ իշխանք. մենք պարտեզին ծայրը կայնած էինք։ Հոն մեծ իշխանը, մենք ինչ որ առանձին խոսեր էինք, բառ առ բառ իշխանաց ըսավ, թե ասոնք ազգին խաղաղության համար, հիմա այս վայրկենին դուրսն այսպես խոսեցան և խորհուրդ ըրին, թե զձեզ ջարդեն. մենք ապուշ մնացինք, իսկ Թորոս մեզ հանդիմանեց, իշխանները վստահեցուց, սիրո, խաղաղության հորդորեց և ըսավ, որ «Եթե աստված իր ծառաներեն ոմանց առավելություն տա, պետք չէ հպարտանալ և ոչ ալ նախանձիլ, այլ հօգուտ ժողովրդյան և ի սեր աղգության և արդարության գործածել», ու ամենքը սիրով ու ընծայոք ճամփեց։ Այսպիսի անձ մ'էր, որ իր թշնամիներն անգամ գիտեր բարեկամ ընել, թե որ անգամ մը միայն տեսնվեր։ Ետքը իր եղբոր օրով, մենք գիտեինք, որ հայ իշխաններ, լատին իշխաններ եկան ձեր թագավորին հետ միացան, որ առաջ բարեկամ էին, կ'ուտեին, կը խմեին մեկտեղ, թե որ մենք անոնք ամենքը սպաննած լինեինք, ուսկից ետք մեր վրա պիտի ժողվվեին։ Էն խելոքն ան անիրավութենեն որ վախնա, անիրավին կերակուր կը լինի։

— Չէ՛, այնպես չէ, Բարկեն,— ըսավ Թորոսի կամաց, բայց խիստ ձայնը,— անիրավություն միշտ վատ բան է. ան կարծված այսօրվան օգուտը շատ և չի կարծված վնասներ կը ծնանի. ավելի լավ է արդարությամբ մեռնիլ, քան թե անիրավությամբ իշխել։

— Ես գիտեմ, որ դու հորեղբորդ պես կը մտածես, փառք աստուծո, որ անոր ալ կը նմանիս, և կը հուսամ, թե նույնպես ալ հաջողիս։

— Բայց ո՞ւր պիտի հանե դմեզ նավը,— հարցուց Բարկենն։

— Այդ ինձ չի վերաբերիր, ահա մարդը, որ պաշտոն ստանձնյալ է զմեզ ցամաք հանելուն։ Ան վայրկենին իր պաշտոնը կը լմննա, իմս կ'սկսի։

— Այո՛,— ըսավ Դիոնիս, որ Կիլիկիո ափանց վրա շտկած իր դիտակը անթարթափ կը նայեր,— բայց մենք, իշխան, չպիտի կարենանք հոս ցամաք ելնել, այլ պետք է շիտակ Կիպրոս երթալ, վասնզի շարունակ ծովեզերը նավեր կ'երևան, որ կ'երթևեկեն, անշուշտ մեզի համար է իրենց զգուշությունը։

— Ո՛վ որ հնազանդիլ չգիտեր, չգիտեր հրամայել, քու է հիմա իշխանությունը, ըրե՛ ինչպես գիտես, ինչպես արժան կը դատես։

Ուստի Դիոնիս ուղղվելով նավապետին և իրեն հետ քիչ մը խորհրդակցելեն վերջ, նավը շտկեցին Կիպրոսի վրա, մանավանդ որ հովը հաջող էր, և քիչ վերջը ահա ցամաք սկսավ անհետանալ, և կղզին երևիլ։ Իրոք մեր ճանապարհորդքը բավական ձանձրացեր էին ծովեն, ցամաքի զուրկը սկսեր էր զիրենք հոգնեցնել, ուստի Եվփիմե առանց իր զվարթությունը կորսնցնելու նաև ցամաք մը ոտք կոխելու մեծ փափագ ուներ, և երբ Կիպրոսի հյուսիսային կողմը սկսավ նկարվիլ, արմավենյաց բարձրը գլուխներն երևիլ, Դիոնիս, որ զգուշություն և նախատեսություն ինքըն էր, կասկածելով խնդրեց նավապետեն, որ փոխանակ Կյուրինն քաղքին մոտենալու քիչ մը դեպի արևելք անշեն տեղ մը ցամաք հանե, ուր գյուղ մը և քանի մը հյուղեր կ'երևեին ցիր և ցան. շուտով մակույկ մը մեր չորս ճանապարհորդքն ծովեզերը դրավ, և նավն սկսավ հեռանալ իր ճամփան։

Թեպետ Բարկենի սիրտը տխուր էր Կիլիկիո ափանց հեռանալուն, բայց զարմանքով կը նայեր այս կղզուն, որ շատ նմանություն ուներ յուր հայրենի երկրին հետ. նույն ծառերն էին, նույն բերքերն և նույն լեռներու գոտիներն, նույն կլիման ու բրինձն. միայն հոս հայու լեզու և հայու կերպարանք չի կար։ Ուստի տրտում կ'երթային ծովեզերը հյուրընկալ տեղ մը գտնելու համար, երբ Եվփիմե, որ Թորոսին թևն ի վար կախված կը քալեր՝

— Տե՛ս,— ըսավ,— աս սևազգեստ մարվոք հեծյալը, որ անսովոր գլխարկ մը դրած լեռան ստորոտը կը ձիավարե։

Թորոս մեկեն թևն ազատեց և սրացավ դեպի այն կողմն, վասնզի հայու վարդապետ մը տեսավ վեղարավոր, և երբ «Հայր սո՛ւրբ» ձայնեց ուժգին, եկեղեցականը ձին դարձուց և սկսավ դեպի նա ձիավարել հանդարտիկ և երբ հասավ՝ մոտեցավ Թորոս ակնարկ մը նետելով և երկայնահասակ թիկնավետ, կենդանի աչքերով վաթսուն տարեկան ծեր մը տեսավ, որ ավելի զինվորի կը նմաներ իր շարժմունքներեն, քան թե խաղաղության քարոզ սեղանի պաշտոնեի մը, որ նույնպես, իր սուր աչքերն Թորոսի ուղղելով, կը զններ։

— Աստված օգնական, հայր սուրբ։

— Աստված պահապան, որդյակ։

— Այս կողմերը հայոց բնակարան ո՞ւր կրնա գտնվիլ։

— Հոս՝ մեր ս. Մակարա վանքը կա։

— Ձեզ նեղություն ընել չէ մեր միտքը, բայց քանի որ ազգային անձինք կան, մեզ ավելի սիրելի է անոնց հյուր լինիլ։ Հեռո՞ւ է շատ վանքը հոսկից, հայր սուրբ։

— Երկու ժամի չափ կը տևե։

— Ուրեմն ներեցեք մեզի՝ ձեր ազգայնոց, որ ձեզ ընկերանանք։

— Սիրով և ուրախությամբ, որդյակ,— ըսավ վարդապետը, և խորաշնին ակնարկ մը ձգելով ամենուն վրա և երիտասարդի մը պես ցատկելով ձիեն ու Եվփիմեին նայելով, ավելցուց.

— Կը տեսնեմ, որ ձեր մեջ այնչափ երիտասարդ և տկար անձինք ալ կան և որ ավազի վրա քալելեն այնչափ հոգնած ու կարմրած են, որ աս դաշտերն շատ նեղությամբ պիտի ելնեն. ուստի սիրով կ'ընծայեմ իրենց իմ կենդանիս։

Այս խոսքին շնորհակալության բառ մ'ըսելով Թորոս, փետուրի պես ձիուն վրա դրավ զԵվփիմե և Բարկենին հանձնելով, ինքն ալ հայր սուրբին ընկերությամբ սկսան հառաջանալ։ Քիչ մը ատեն լռությամբ ճամփան շարունակելեն վերջ, իբրև թե երկու կողմն ալ կ'սպասեին իրարու, որ առաջին լինին խոսելու, վերջապես հայր սուրբ չի կրնալով համբերել և Թորոսի համառությենեն ձանձրացած՝ ըսավ ժպտելով.

— Զարմանք է, տիար, որ այդպիսի թարմ պատանյակ մը հետերնիդ աս օտար երկրները կը պտտցնեք։

— Զարմանքի ժամանակի մեջ կ'ապրինք, հայր սուրբ,— ըսավ Թորոս անխռով,— անոր համար կը տեսնեք զիս, որ բանի մը վրա և ոչ ձեզի պես աստվածաշնորհ անձի մը երկսայրի սուրին վրա կը զարմանամ և մանավանդ թե ուրախություն նաև կ'զգամ, որ քաջ նիզակակից մը մեզի կ'ավելնա։

— Լա՜վ, որդյակ,— ըսավ վարդապետը,— ուրախ եմ, որ ժամանակին հարկը կը ճանչեք, և ես ձեր աս տարիքին վրա, տեսնելով այդ սրատես խոհեմությունը, մեծ հույս կ'առնում և իմ փափագներս ու երազներս գրեթե կատարյալ կը տեսնեմ։

— Շատ մութ կը խոսիք, հայր սուրբ։

— Ես շատ պայծառ կը խոսիմ, բայց դուք, իշխան, չեք ուզեր հասկընալ և ձեր խոհեմությունը չափազանցության կը տանիք, և ան մար-

դուն, որ իր կյանքը քառասուն անգամ՝ մանավանդ թե հազար անգամ ձեր և ազգին փրկության համար վտանգի դրած է, վստահություն ցցնելն ալ կ'զգուշանար, և դեռ նոր տեսություն մը իրմե զլացար։

— Խնդրեմ ձեր անունը ինձ շնորհել,— ըսավ Թորոս՝ հետաքնին և հրամայական այք մը դարձյալ հայր սուրբին վրա նետելով։

— Կոստանդին Բարձրբերդցին եմ, որ անցյալները դեռ ամիս ու կես հաղիվ կա Բարկենին հետ տեսնվեցա Պոլիս, դուք զիս չեք ճանչեր, և ես ալ կձեզ Բարկենին ընկերութենեն երևակայեցի։

— Եվ Բարկեն դարձյալ քեզ չի ճանչե՞ց։

— Ան ատեն զիս ուրիշ հագուստներով տեսավ և սև մորվոք։

— Բայց դու վտանգ մը անցուցիր Պոլիս, և շատ չէ, որ հոս եկար։

— Այո՛, աս նզովից արմատ հույները իմացեր էին իմ գալուստս, ուստի նույն գիշեր զիս բռնել միտք դրած էին, և ես փոխանակ դռնեն անցնելու, ինչպես կ'սպասեին, երդիկեն անցա և իմ ճամփաս գնացի խաղաղությամբ և փոխանակ Կիլիկիա ելնելու, ինչպես կը հուսային, եկա Ս. Մակար քանի մը ամիս ճգնելու, մինչև որ այցելություն լինի հաստատուն։

Եվ երբ Թորոս աս խոսքին վրա փոքրիկ ժպիտ մ'արձակեց, Կոստանդին ծիծաղով մը պատասխանեց, բայց դարձյալ շուտով ծանրություն մը առավ, վանդի երիտասարդին վսեմ կերպն ակնածություն կը հրամայեր, և Կոստանդին կ'ըսեր ինքն իրեն, թե «հիրավի Թորոս անունովն ալ, բնությամբ ալ կենդանացեր է հեղբրորդին. տեսնենք քաջությամբ ալ թե անոր կը նմանի՝ Թորոս Բ. կ'ունենանք»։

Ծովեզրը արդեն ձգեր էին և դար վեր կ'ելնեին անտառոտ ժայռերու և պարտեզներու մեջեն, հեղեղատի մը աջն ու ձախ շավիղին հետևելով. և Բարկեն, անկարծելի տեղ մը հայոց վանք գտնելուն ուրախ էր և շատ ալ նմանություն իր Սև լեռան բնության և կղզույն մեջ և նաև Եվ-ի իմեի անվեհեր ձիավարության վրա, զվարթ դեմքը զգեցավ բոլորովին։ Անոր՝ հայր սուրբի պաշտոնին վրա, հայոց ընդհանուր եկեղեցականաց վրա տեղեկություն կուտար, անոնց ճգնավորական կյանքին վրա գալով, կը պատրաստեր Եվփիմե անապատական ընթրիքի մը, վանդի օրն ալ արդեն սկսած էր երեկոյի։ Եվ ահա մեծամեծ ավազաններ և տեղ-տեղ պարտեզներ, ուր մշտադալար նարնջենի և կիտրոնի էր, շենքի մը մոտիը կը ցուցնեին, և վերջապես եղեգնի անտառի մը ստորոտը երևցավ Սբրբույն Մակարու վանքը, և մեր հինգ բարեկամները քանի մը վայրկյան ետքը, առաջնորդությամբ վանահոր, իրենց բնակարանը կը հանգչեին։

ԿԻՊՐՈՍԻ ՍՈՒՐԲ ՄԱԿԱՐ

Այն գիշերը մեծ ուրախությամբ և զվարթությամբ վայելեցին վանքին հյուրընկալությունը մեր ուղևորք, և Բարկեն զարմանքով տեսավ սեղանին վրա իր քով նստած աշխարհականի զգեստներով ճերմակ մորվոք մը, որ առանց խոսելու՝ իր բոլոր ծանրությամբ և լավ ախորժակով կ'ուտեր, Բարկեն երբեմն-երբեմն քովնտի ակնարկ մը կը նետեր սա նոր սեղանակցին, որ ամենևին իրեն ուշ չէր դներ։ Վերջապես վանահայրը տեսնելով, թե սեղանին վրայի լռությունը այս պատճառով իրոք վանականաց սեղան մը կը դառնար, ինք որ աբեղաթող կը համարեր այն օրը իր միաբանից՝

— Բարկեն հայրիկ,— ըսավ,— ձեր ճամփու ընկեր վարդապետը չե՞ս փնտրեր։

— Հայր սուրբ, ես կը հուսայի և կը փափագեի զինքն հոս գտնել, բայց ձեր հրամանը գիտե տնօրինել. մենք զինվոր ենք՝ կրոնավորաց համար ալ լսեր ենք, թե զինվոր են՝ իրենց վանահոր կը հնազանդին։

— Նորա փոխարեն ահա քեզի ուրիշ բարեկամ մը ես գտա, Սև լեռնեն է նա ալ, իրեն տեղեկություն ինչո՞ւ չես հարցներ։

Բարկեն քննող աչոք դարձյալ նայեցավ քովինին, բայց չի կրնալով ճանչել, և սեղանին հորթի, կաքավի և կաթնեղենի պատրաստված խորտիկներն ու համադամներն, Կիպրոսի տեսակ-տեսակ իր ախորժակին հարմար գալով, և նորա համառ լռութենեն ձանձրացած՝

— Հայր սուրբ,— ըսավ,— սա բարեկամը ինձմե անոթի կ'երևա. ոչ անուն կուտա և ոչ ձայն կը հանե։

— Բարկե՛ն,— ըսավ քովինը շեշտակի իրեն նայելով,— զիս չե՞ս ճանչեր։

— Աստված վկա, Կոստանդին ինքն է, անոր ձայնն է,— ըսավ Բարկեն, դեպ անոր դառնալով և աչքերը խոշոր-խոշոր բանալով,— փառք աստուծո, ողջ է։

— Փառք աստուծո, որ զիս ճանչեցիր։

— Թե որ ձայնդ չի լսեի, խա՛չ, որ պիտի չճանչեի։

Ամենքը սկսան խնդալ, ուրախությունը կը տիրեր սեղանին վրա. վանահայրը, որ պատվական և իմաստուն անձ մ'էր և որու իմացուցած էր Կոստանդին ո՛վ ոք լինելն, կատարյալ հյուրամեծար գտնվեցավ իրենց, և խոստացավ ամեն դրություն և ապահովություն ճարելու Տորոսի լեռ-

ները գտնել տալու համար հայ իշխանին։ Այն գիշերը ապահովության և վստահության վիճակի մեջ՝ Դիոնիս իր տաժանելի աշխատանքներեն հոգնություն կ'առնուր, Բաբկեն ուրախ էր ամեն բան դյուրանալուն. Թորոս թեպետ սակավախոս՝ գոհ էր ամեն բան մինչև այն օր անվտանգ հաջողելուն։ Եվփիմե մյուսին գոհությունը տեսնելով՝ զվարթությունը գեղեցկության հավասար կը փայլեցներ, իսկ Կոստանդնի ուրախությունը անպատմելի էր։ Այս մարդը շարունակ իր Մեծին Հայաստանի ճամփորդությունները կը պատմեր, վասնզի հայաբնակ երկիր չի կար, որ հինգ տարի շարունակ պատմած չլիներ, Վրաստանե մինչև Միջագետք, Սպիրե մինչև Ատրպատական՝ տեղ չէր ձգած, որ խուզած չըլլար, վասնզի կենաց հույս մը կը փնտրեր Կիլիկիայե դուրս և չէր գտներ. հայ թագերու պաշտպանության համար շինված բերդեր, բերդաքաղաքներ օտարին իշխանության և բռնության գործիք ու ամրություն եղած էին։ Անի նաև, մեծ Անին, հազար ու մեկ եկեղեցվո Անին, նա՛ ալ կենդանության հույս չէր տար. և ժողովուրդը, որ անգամ մը գնացեր իր թագավորաց գերեզմաններուն վրա ողբ դրեր լացեր էր, ալ չէր հավատար, թե նոցա ստվերներեն դարձյալ պիտի ելնեն կանգնին, փրկել Հայաստան։ Քրիստոնյա դրացի և ազգակից ժողովուրդ վիրք, նաև հայ զորավարաց ձեռամբ վարյալ, հայ ազգը հալածելու և հարստահարելու կը նկրտեին. Վասպուրականի դասալիք Արծրունյաց հիշատակը անհետացյալ էր գրեթե, և հիմար ժողովուրդ մը կործանյալ գահին պատվանդաններուն վրա կաթողիկոսական բաժանման աթոռ մը հաստատելով կը մխիթարվեր։

Այս երկար պատմության ամենքը կը մրափեին, Թորոս միայն այս կենդանի աշխարհագրության և վիճակագրության մեկ բառը չէր կորսընցներ և մութ մնացած խնդիրները կը պրպտեր, կը լուսաբաներ. Կոստանդին կը զարմանար, կը շփոթեր իր իմաստալից հարցաքննության առջև, որ ամեն բան կը ճշտեր՝ տեղերը, վիճակները, հեռավորությունները։ Երբ ամենքը իրենց տեղը գնացին ննջելու՝ դեռ աս երկու անձինքը նստած կը խոսեին Կիլիկիո վրա. հայ և օտար ժողովրդոց թվույն, վիճակին, հույսերուն, իշխանաց, կառավարության ձևին, զորավոր դիրքերուն և ամրության վրա. մինչև որ նաև հավերն ալ սկսան խոսիլ, և Կոստանդին ինք պարտավորեցավ հորդորել զԹորոս երթալ քնո հանգիստն առնուլ։ Երբ Թորոս գնաց, տեսավ, որ իր սենեկին դռանն առջև Բաբկեն մեկ աչքը քուն, մյուսն արթուն կը պտտի. և երբ զինքը տեսավ, գնաց իր հին զինվորակիցը գտնելու։ Մտավ սենյակը, ուր Կոստանդնի հետ պիտի պառկեին. առջի խոսքը, որ ըսավ Կոստանդին՝ աս եղավ.

— Բաբկեն, ասուած վկա, որ աս իրիկուն համոզվեցա, թե Կիլիկիա իր փրկիչը գտավ. սա երիտասարդը՝ թե որ ինչչափ խելք ունի, այն-

չա՛փ ալ քաջություն ունի՝ հորմեն ալ վեր, հորեղբորմեն ալ վեր պիտի լինի։

— Դու ի՞նչ կ'ըսես, եղբա՛յր, անցյալ օր վեց-յոթ հոգի իրարու վրա անշունչ գետինը ձգեց, տասներեք հոգի էին մեր վրա հարձակողները։

— Այդ հոռոմ ծերը և իր աղջիկն ի՞նչ բան ունին ձեր հետ։

— Աղջիկը հոռոմ չէ, իշխանին պսակյալ կինն է. մեր Արծրունի թագավորաց ցեղեն է։

— Իշխանը պսակվեցա՞վ... Արծրունի կին առա՞վ... լավ, հա՛, քիչ մ'ալ սա ծերն հայ մկրտիր, Բաբկեն։

— Ծերը հայ չէ, բայց հոռոմ ալ չէ, վասնզի շատ լավ է և հայու բարություն կ'ուզե։

— Բաբկեն, դու ցնդեր ես, խելքդ կորուսեր ես, այս մարդը հոռոմ է, ուրեմն լավ մարդ չի կրնար ըլլալ, հայու ալ բարություն չի կրնար ուզել։

— Տե՛, ի՞նչ կըսես. նայե՛ աս իմ գլուխը հայու գլուխ է, խոթե սա մատդ ոսկորին մեջ, աս գլուխը հոռոմները կոտրեցին՝ այդ մարդ լավցուց. հիմա հավատացի՞ր... մենք բանտեն ուսկի՞ց պիտի ելնեինք, թե որ աս մարդը չըլլար, թե դա աղջիկը չըլլար։ Ատոնք մեզ ազատեցին. մենք նորեն բանտ մտած էինք քու պատճառավդ, թե որ աս ծերը մեզ չի փախցներ... թե որ աս ծերը մեզ հետ չլիներ, մենք հոռոմի նավերուն մեջ ինկած բռնված էինք. ծոցը պզտի, հաստ գավազան մ'ունի ծակած, մեջը փայլուն. կը դնե աչքին, կը նայի աշխարհքին ծայրը ինչ կ'ընեն մարդիկ, կը տեսնե, կիմանա։

— Հիմա հավատացի, թե լավ մարդ է այդ ծերը և հոռոմ չէ,— ըսավ Կոստանդին և կոշիկները հանելով վերարկուն քաշեց գլուխն՝ երկնցավ պառկելու։

Նույնը ըրավ Բաբկեն, բազմոցին մյուս կողմը, և սկսան քնել։

Վանահայրն իր հյուրերուն քունը չի խանգարելու համար առանց զանգակի իջեր էր իր միաբանից հետ Վանա անշուք և փոքրիկ եկեղեցին, ժամերգություն կատարելու. պատարագին ամենը ներկա էին, և երբ սարկավագը «Աղաչեցուք ընդարց մերոց գերելոց» կ'երգեր, Բաբկեն մեծաձայն «Ամեն» գոռաց, ու ամեն գլուխ, երբ իրեն կը դառնային, ինք անխռով և մեծ հավատոք յուր աղոթքը կը շարունակեր։

Երբ եկեղեցին ելան, վանահայրը լավ ճաշ մը պատրաստել տվեր էր իր հյուրերուն. և վերջը անոնց փափագը կատարելու համար ինքն ալ իրենց հետ սրտի ընկերացավ։ Կոստանդին ուրախ աչքը կը տեսներ և կը համոզվեր Թորոսի թեին զորության և աչքին ճշտության ի նետաձգու-

թյուն, նորա սրընթաց կորովույն, որ այծեման պես վախերու և դահավեժներու եզերքը կը վազեր, և այնչափ տարվան անշարժությունն, որ իր միտքը սրացուցեր և բարձրացուցեր էր, ջիղերուն ուժը չէր թմրեցուցեր։ «Ահա երիտասարդը, որ մեկ հատիկ մարդ է մեր փրկության համար. ես հիմա՜ր, որ Հալեպու ամիրային պալատը կ'երթայի մարդ փնտրելու և երկու թեթևամիտ տղաք կը գտնեի, որոնց մեկուն սիրտը այնչափ չար էր, որչափ գլուխը թեթև. իրավ աստված մեր խեղճ լեռները կը սիրե եղեր»։ Ետքը կը դիտեր Եվփիմեն, որ ծերուն հետ կը քալեր միշտ աչքը Թորոսեն չի զատելով։ «Հա՜, մեր Լևոնին տղան բարեբախտ ալ է, այդ կինը գեղեցիկ և ազնվական է, և մեր իշխանը սրտանց կը սիրե. բայց այդ ծերը ի՞նչ է իր սուր և արհամարհոտ աչքերով, հազիվ թե աղջկան ըսածներուն պատասխան կուտա, միտքն ալ գիտես թե ուրիշ տեղվանք կը պտտի...»։ Եվ աս խորհրդածության մեջ հանկարծ, երբ որսը միտքը գար, երկու նետ կը նետեր, որք երբեք պարապը չէին սլանար։ Երբ Թորոս բավական զվարճացավ, և որսն ալ առատ դիզվեցավ, վանքին վերի գլուխը, ուր վանահայրը եղևնի ծառերուն շուքին տակ սեղանը պատրաստել տված էր կանաչ խոտին վրա՝ ծովը առջևնին և անդին ամպերու պես դիզված Տորոսի լեռները, բաժակներ քամվեցան Կիլիկիո ազատության և անոնց կենդանության համար, որ կյանքերնին այդ սուրբ նպատակին համար պիտի վտանգեին։

Երկրորդ օրը, Թորոս՝ վանահոր և Կոստանդնի ընկերությամբ՝ ծրպտյալ սրընթաց կենդանյոք կերթար Լեֆքոսիա քաղաքը տեսնելու և անկից վերջը ութ օր շարունակ բոլոր շրջակայքը կը պտտեր, կը քններ բնակչաց կյանքը, իրենց զվարճությանց զեղծմունքը, կղզվույն պաշտպանության զորությունը, բերդերուն վիճակը կ'ուսներ։ Իր սուր դիտողութենեն բան մը չէր ազատեր։ Իր բոլոր աս արշավանաց ընկեր էր նաև Եվփիմե, որ թեպետ ի բնութենե հետաքրքիր՝ տեղյակ լինել կ'ուզեր այն ամենուն, որ Թորոսի խուզարկությանց պատճառ էին։

Բայց ամենքը, որ կը պտտեին Թորոսի հետ, մեկը չի կար, որ հասկրնար իր միտքը, բացի Դիոնիսեն, որ հեռվեն կը դիտեր և կիմանար այդ լուռ և անխոնջ բնության նպատակը, ուր կը նշմարեր հայրենասիրության հետ նաև վրեժխնդրության ոգին։ Ուստի ինք բնության ուսմունքով պարապյալ և ոչ կ'ուզեր տեսնել քաղաքական կիրքերը, որ իր շուրջը կը հուզեին. և կը վերադառնար բույսի մը, քարի մը, խոտի մը կտորի վրա հառիլ, պշնուլ, քան թե ուրիշ բանով զբաղիլ։

Այսպես լեռները կը պտտեր Դիոնիս, երբ երեկո մը Թորոս արշավանքե դարձած և տեսնելով զծերը լեռան բարձր գագաթան վրա մուրճ ի ձեռին՝ ժայռի կտոր մը զննելով, ելավ քովը գնաց.

— Հայրիկ Դիոնիս,— ըսավ,— մենք այս դի, այն դի կը վազվըռտենք, դու ուրիշ աշխատությամբ կը տաժանիս. ինչո՞ւ այս ժայռերը կը կոտրտես։

— Տե՛ս,— ըսավ ծերը,— տե՛ս, այս կոտրած ժայռերու կոտորվանքին մեջ ծովային խեցիները, որ կը վկայեն, թե անհիշատակ ժամանակաց մեջ ծովը կը ծածկեր աս լեռներուն գլուխները։

Եվ իրոք կը տեսներ Թորոս ծովային խեցին ժայռին ծոցը փակված. երկայն լռություն մը հաջորդեց. նստավ ծերը և Թորոսին ակնարկ մը ըրավ քովը նստելու, սուր աչքերը երիտասարդին հառնելով՝ ծանր-ծանր աս խոսքերն սկսավ զրուցել.

— Ո՜վ երիտասարդ, կը տեսնեմ թե որչափ հեռու ենք մենք իրարմե. դու երիտասարդ, կորովի, եռանդուն՝ վաղը միայն կը նշմարես և ապագային կը դիմես. ես ծեր, տկար, դանդաղ՝ երեկվան և հազարավոր տարվան անցյալին կը նայիմ։ Բայց օր մը կար, որ ես ալ ներկան և ապագան կը դիտեի և իմ շրջանիս մեջ հայրենիք, փառք, մեծություն և թագավորություն կ'ուզեի. բարեբախտաբար երկար չի քշեցին ան փափագները, և ուսմունք բնության՝ մարդկային սրտին ու մարդկության անցելույն զիս բժշկեցին այն անձուկեն, որ զքեզ կը տոչորե. անոր համար է, որ դու կը տեսնես զիս անցելույն խորը իջած, և ես զքեզ կը նշմարեմ, որ ապագային բարձունքը կը մագլցես։ Չեմ զարմանար, դու երիտասարդ ես, և անուն մ'ունիս ազգիդ մեջ, հայրենիք մ'ունիս կորած և ինկած, անձնական ու ընտանեկան նախատինք՝ բանտն և քուկիններուդ մահվան հիշատակն մտքիդ մեջ կը հածին և շարունակ կը մտածես վերականգնել, սրբել և վրեժ առնուլ։ Քեզի հետ խոսողը պետք է համոզվիս, որ ազգի մը չի վերաբերիր. մարդկության զավակն է, և ամենեն ատելի մարդիկ իրեն՝ աշխարհակալներն են. ուստի քեզի՝ զինվորիդ իմ խրատս այս կ'ուզեմ լինի, որ անիրավ և անգութ չլինիս վրեժխնդրության հոգվով. հիրավի՝ անիրավ աշխարհիս մեջ չանիրավել դժվար է, բայց դու մեծ հոգի ունիս, և ես կը ճանչեմ մարդկային բնությունը, անոր համար այս խոսքերը քեզի կ'ընեմ։ Չեմ ես այն անմիտ փիլիսոփայական կարծված դպրոցեն, որ հայրենասիրության գաղափարը կը վտարե մարդասիրության գաղափար մը առաջ քշելով. անոնք, որ այդ վարդապետությանց քարոզք են, իրենց սրտին անարգ անտարբերությունը և վատ անձնասիրությունը սուտ և սխալ տրամաբանությամբ վարագուրել կ'ուզեն։ Թե որ այսօր ազգության և հայրենյաց գաղափարը վերցնենք, վաղը գերդաստանի և ընտանյաց գաղափարը ո՞ր դնենք։ Ուրեմն լավ իմացիր իմ միտքս, իշխանդ, ինձի փափագելի էր, որ Հայքդ նեցուկ լինեիք Հունաց կայսրության Ասիո մեջ, բայց որովհետև ատելություն և արյանց հեղեղներ զձեզ կը բաժնեն, և ի՜նչ որ

անոնցմէ առնված քաղաքականություն և ուսմունք կա՝ եղած վնասներուն չեն փոխարիներ. դուք հավիտյան պիտի չի մոռնաք ձեր Անվո հոգեվարք թագավորության ընդունած վերջի դավաճան հարվածը հունական ձեռքերե, և մեր հունական ամբարտավանությունն ալ երբեք պիտի չի մոռնա ձեր Կիլիկիո հափշտակությունը և անկախ եկեղեցին։ Որովհետև մարդիկ երբ զորավոր են, կ՚ուզեն իշխել, երբ տկար են՝ ազատ լինիլ։ Ուստի դու ալ քու իրավունքդ պիտի ձեռք բերես այսօր, վաղն ալ վրեժ խնդրելու պիտի ելնես. բայց քու անձիդ և քու ազգիդ օգտին համար միշտ հիշե ծերու մը վերջին խոսքերը. միշտ չափավոր եղիր, և չըլլա թե հաջողությունը զքեզ կուրացնե, վասնզի մարդկանց կյանքին մեջ հաջողություն և անհաջողություն իրարու կը հաջորդեն։ Ես, որ կտակ մը կընեմ, ավելորդ կը համարիմ քու սիրտդ հանձնարարել Եվփիմեն, գիտեմ, որ նա զքեզ ինչպես կը սիրե, դու ալ զնա նույնպես կը սիրես...

Աս խոսքերուն ծերուն ձայնը փոխվեցավ, և աչքերը լցվեցան.

— Դու որ խելք ալ ունիս, սիրտ ալ ունիս, կ՚իմանաս ծերուն փափագները, երբ ձայնը իրեն կը պակսի. գնա, աստված հետդ ըլլա, գնա՜, շենքդ, որ պիտի շինես՝ երկարատև ըլլա...

— Եվ ի՞նչ պետք է ընել,— ըսավ Թորոս,— որ երկարատև կարենա լինիլ։

— Թե որ աստված լավ հաջողություն մը տա, և քեզի պես չորս-հինգ հաջորդ ունենաս՝ կրնաս տեղական Հայաստան սա լեռներուն վրա փոխադրել. թե ոչ՝ առօրյա ստվեր մը և քանի մը ավերակ ավելի կը ձգես այդ ավերակաց երկիրը Սարդանաբալին[1] գերեզմանին քով։ Նայե, որ զավկներդ քաջ, գործունյա և օգտակարացն գիտուն լինին։ Թե որ դու բանտիդ մեջ վանքին գրատունը և կարդալու փափագ չունենայիր՝ ոչ քու գեղեցկությունդ, ոչ սրամտությունդ, ոչ բազուկներուդ կորովը չէին կրնար զքեզ բարձրացնել. այլ դարձյալ բնության ամեն ձիրքերովդ ալ պակասավոր էակ մը կը լիներիր փոխանակ այդ խոհեմության հանձնապաստանություն, փոխանակ հետաքննության անհոգություն, փոխանակ համբերող դիտողության հապճեպ դատաստան բաժին պիտի լիներ։ Տամ նաև քեզի օրինակ ալ, տխուր օրինակ, եղերական օրինակ, բայց դու շատ զորավոր սիրտ ունիս և կրնաս մտիկ ընել։ Քու եղբայրդ՝ Ռուբեն, թեպետ սրամիտ, գեղեցիկ և կորովի, բայց չուներ ոչ քու համբերությունդ, ոչ գիտությանց սերդ, ոչ քու խոհեմությունդ. և անոր համար ալ ամեն բան և կյանքն ալ կորսնցուց. գիտեմ, նախանձը կըսե աշխարհք, բայց նախանձի չի գրգռ-

[1] Տարսոն՝ Սարդանաբալի գերեզմանի մը ավերակներ դեռ մինչև հիմա ցույց կուտան։

ռելն ալ իմաստության մասն է. ի՞նչ որ դու համբերություն ցույց տվիր տարիներով, նա օր մը չի ցցուց. թշնամի արքունյաց մեջ նվիրական բան մը չի կար իրեն համար, երբ բարկությունը սիրտը լեցներ, և հազիվ թե Գառագեղեն դուրս մեկ ոտքը դրած սարսափելի մռնչյուններ կը ձգեր։ Ես փուճ տեղը զինքը կը խրատեի և կ՚զգուշացնեի։ Քեզի համար այս խոսքերս միայն անոր համար է, որ վրեժխնդրությանդ մեջ չափավոր լինիս, միշտ ջանաս թշնամությունը անհաշտ վիճակի մեջ չի մտցնել։

Ծերուն այս խոսքերը անօգուտ չէին այնպիսի երիտասարդի մը համար, որ ծանր միտ կը դներ լսածներուն և կը խորհրդածեր տխուր լռությամբ։

Եվ ահա Եվփիմե լեռն ի վեր կուգար կ՚ելներ, երկուքն իրեն նայելով կ՚սպասեին, երբ անոնց մեջ եկավ նստավ և քիչ մը շունչ առավ՝

— Մինչ ե՞րբ սա կղզին պիտի նստինք,—ըսավ,— ա՛լ ձանձրացա. ես չեմ կրնար քեզի պես, Թորոս, լեռներու, գյուղերու, բերդերու ծակուծուկը խառնել և զվարճանալ, և ոչ քեզի պես, հայրիկ, մուրճ մը ձեռքս քարեր կոտրտել, բույսի մը երակներուն վրա ժամերով հափշտակությամբ սքանչանալ. չէ՛, այդ իմ կարողությունս վեր է. ժամ մը առաջ ջանանք մեր տեղն հասնիլ և գործի սկսինք։

— Ո՜հ,— ըսավ Դիոնիս փոքր հեգնության ժպիտով,— Եվփիմե ալ գործի պիտի սկսի, պետք չէ ժամանակ կորսնցնել, երբ որ լեռներուն վրա փողերը գոչեն, զինուց շռինդը սկսի, քաղաքներու, գյուղերու մուխն ու մոխիրը երկինք բարձրանա, վիրավորներն հառաչեն, տղայք և կանայք անտեր, անբնակարան, որբ և այրի լան ու կսկծին, ան ատեն գործի պիտի սկսիս։

— Այո՜, ճիշտ ան ատենն է իմ գործիս ժամանակը,— պատասխանեց Եվփիմե եռանդով և ձայնը բարձրացնելով,— իմ պարտքս է վիրավորները դարմանել, որբերու, այրիներու հաց, բնակարան ու մխիթարություն ճարել, հուսահատները քաջալերել, այո՜, գիտեմ իմ պարտքս ասոնք են, և թե որ ասոնք ես չի կատարեմ՝ արժանի չեմ իշխանի մը ոչ թե կին, այլև ոչ աղախին լինելու։

— Եվփիմե, ես քու սկզբունքներդ գիտեմ, գիտեմ նաև, թե ինչ առնացի սիրտ մը ունիս, բայց այսպիսի հանդուգն և մեծ զոհողության մեջ գիտեմ նույնպես, թե ի՞նչ վտանգներ կան ծածկված, որոնք նախատեսել անկարելի է շատ անգամ, ուստի հեգնություն մ՚իմանար իմ խոսքերս, այլ խոհեմություն, կ՚ուզես ծերերու վատ խոհեմություն համարե, բայց միտքդ դիր ու դու հիմա Թորոսի անբաժանելի ուղեկից լինելովդ ավելի իրեն արգելք մը, հոգ մ՚ես, քան թե օգնություն։

— Նայե՛, հայրիկ, աս քարոզները, քանի որ կը նորոգվին, ինձի ոչ թե հուսահատություն, այլ կիրք կը բերեն և վիս ի խոր կը վիրավորեն, թե որ...

— Ո՛չ, ո՛չ,— ըսավ Դիոնիս տեսնելով, որ խոսակցությունը անախորժ ձև մը կ'առնուր,— դու կիրք մ'ելներ. մենք ինչպես ճամփա ելանք, նույնպես կը կատարենք։

— Հա՛, այս է իմ փնտրածս, հիմա, ահա գոհ եմ, և ձեզի խոսք կուտամ, որ իմ բերնես ամենևին չպիտի լսեք ոչ հոգնություն, ոչ երկյուղ, ոչ հուսահատություն և ոչ հառաչանք անգամ, այլ թե պետք լինի անշըշունջ հանձն պիտի առնում իյնալ մեռնիլ, քան թե գանգտիլ։

— Ծանր պարագաներու մեջ խոհեմությամբ տեղի տալ հարկին առջև՝ սկզբունք մեզի դնելով, իմ սիրելի Եվփիմես,— ըսավ Թորոս ոտքի վրա ելնելով և ծանրությամբ,— միշտ կը ջանանք իրարմե վայրկյան մը չի զատվիլ։

Եվ երեքը միատեղ սկսան լեռնեն ծանր-ծանր վար իջնել։

ԳԼՈՒԽ Ժ

ՔԱՐԱՅԻՆ ԿԻԼԻԿԻԱ

Նույն միջոցին վանահայրը վանքին դռան դրսի դին կեցած թիկնավետ, հաստաբազուկ և արևեն սեցած երիտասարդի մը հետ կը խոսեր կամաց ձայնով և շարունակ հարցմունքներ կ'ըներ իրեն, և թեպետ հայտնի էր, թե ախորժելի չէին իրեն առած պատասխանները, բայց դարձյալ, երբ իր հյուրերը տեսավ, զվարթ ընդունելությամբ հրամցուց զիրենք և ինք ամենեն վերջը դռները գոցել հրամայեց, վասնզի արդեն ժամանակը ուշ էր։

Ընթրիքը ընելե վերջ, Թորոսի ակնարկ մ'ընելով և առանձին սենյակ մը հրավիրելով ու երիտասարդը ցցնելով՝

— Ահա, իշխանդ,— ըսավ,— սա երիտասարդը հիմա նոր կը հասնի Կիլիկիայե, ես չեմ կարծեր, թե գտնվի մեկը, որ ասոր չափ լավ ճանչե այդ երկրին զանազան կողմերը և վիճակը. թե որ ընդունելիք տեղեկությանց վրա ուզեք դարձյալ ամե՛ն վտանգաց դիմագրավել և երթալ, չեմ կարծեր, թե ասկից քաջ, ասկից լավ և ասկից հավատարիմ առաջնորդ մը կարենաք գտնել։

Թորոս այս խոսքերը լսելուն, ուշիուշով տղան կը դիտեր, որու բաց

ճակտին վրա անվեհերություն դրոշմած էր, և իր նայվածքը կը զրուցեր, թե մարդիկ, տարերք և մահ գիտեր արհամարհել։

— Անունդ ի՞նչ է, բարեկամ,— հարցուց Թորոս։

— Սարգիս ծառա,— ըսավ տղան՝ ձեռքը իր լայն կուրծքին վրա դնելով։

— Ի՞նչչափ ժամանակ է, որ Կիլիկիո ափունքը թողիր։

— Այս առավոտ։

— Ի՞նչ նավով էիր։

— Մեր նավով։

— Դու նա՞վ ունիս։

— Պզտի նավ մը,— ըսավ երիտասարդը ժպիտով՝ վանահոր նայելով։

— Դու կը կառավարե՞ս նավը։

— Այո՛։

— Ուրեմն ի՞նչ կարոտություն ունինք ուրիշի դիմելու, երբ հայը սուրբը զքեզ կը ճանչե և քու քաջությունդ և տեղեկությունդ կը գովե։

— Բայց իմ նավուս թշնամին շատ է, իշխան, և բոլոր հունաց նավեր զիս խեղդելու կ'աշխատին, բոլոր ծովեղերը զիս կը փնտրեն, ես ալ ծածկվելու համար հոս անցա քանի մ'օր։

— Ըսես, որ ընկեր ենք. ինձ ալ կը հավատացնեն, թե զիս կը փնտրեն։

— Այո՛, քեզ ալ կը փնտրեն։

— Ի՞նչ գիտես. զիս ուսկի՞ց կը ճանչես, զրուցե ի՞նչ որ գիտես։

— Նախ ես զքեզ կը ճանչեմ, տղայությանս ամեն օր մեկտեղ էինք վահկա բերդը, Թաթուլին Սարգիսն եմ. այս իրիկուն, երբ վանքին դուռը տեսա, հայը սուրբ բան չըսած, զրուցեցի, թե Թորոս իշխանն է (մեծավորը գլխովը նշանացի կը հաստատեր)։ Ես քանի տարի է ծովու վրա ասպատակություն կ'ընեմ, հոռոմները իմ երեք նավս այրեցին, ես անոնց քսանը կողոպտեցի այրեցի, ես նավու ստակ չեմ տար, բայց տասնհինգ օր մը կա, որ պահպանությունը սաստկացուցին. մեր ծովուն ամեն ժայռերը, ծակն ու ծուկը կը քննեն, կը նային, ցամաքն ալ Մամեստիո իշխանին զորքերը ավելցուցին, անզգամությունը շատցուցին, հայը ամեն տեղ կը հալածեն, և կը զրուցեն, թե ձեր իշխանը փախեր է բանտեն արքայական քաղաքը, ան կը փնտրեն։ Ձեզ ամենքդ ալ պիտի ջարդենք։ Մեր ծերերը կ'ըսեն, թե այսպիսի հալածանք չենք տեսեր։ Ուր որ երկայն հասակ, սև աչվի, սև ընքվի երիտասարդ կը տեսնեն, կը կապեն Մամեստիա կը տանին. մեր լեռներն ալ այդպիսի մարդ շա՛տ. մինչև հիմա քսան,

երեսուն մը տարին։ Թե որ մեկ ոտք կոխես, աստված վկա, ամենքը ոտք պիտի ելնեն։ Բայց ծովեզերին պահպանությունը խիստ է։

— Ըսել է, որ դու ալ կը վախե՞ս, Սարգիս։

— Աստված չընե, իշխան, որ ես բանե մը վախեմ, հիմա հրաման ըրե Տարսոնի գետն ի վեր շտկեմ պզտի նավս, աս մարմինը (կուրծքին մեծաձայն հարված մը տալով) մեկ անգամ միայն պիտի մեռնի։

— Լավ,— ըսավ Թորոս գոհության ժպիտով և ուսին պզտի հարված մը տալով,— կը տեսնեմ, թե քաջ ես, քու նավդ պիտի տանի զիս Կիլիկիա։

— Հե՜... հիմա ահա սկսեցի վախել,— ըսավ երիտասարդը քայլ մը ետ առնելով և մտածելով։— Գիշերները մթնելեն երեք ժամ ետքը արևմտյան հով մը կը փչե, կրնանք Ամանուրի և Կորիկոսի մեջ հազար ծոցերուն մեկը խոյանալ և մտնել, մեկ մը ցամաք որ ելնենք, ո՞վ կարող է մեզ ժայռերուն և անտառներուն մեջ համարձակիլ հալածել։ Ես հինգ տղա ունիմ, մեկը տասն մարդ կ'արժե, Բաբկենը տեսա, տասն մարդ ալ այն կ'արժե. ծերացեր է, բայց ամուր շինած է. մենք յոթն հոգի կրնանք այդ լեռան ժայռերու ճամփորդությունն ընել, և աստուծով կը հասնինք։ Այն օր Սև լեռները հարսնիք կը լինի։

Սարգիս իր անվեհեր արիությունը գտավ աս վերջի խոսքերուն հետ. և աջ թևը գոտին մեջ դրած կ'սպասեր, բայց Թորոս էր հիմա, որ կը մտածեր։ Հայտնի է, թե իրեն համար չէր մտածությունը, Եվփիմե էր, որ իր միտքը կը տանջեր։ Վանդի ինք լավ կը հիշեր և կը ճանչեր Տորոսի ափափայքն ու գահավեժները և կ'երևակայեր, թե ինչչա՜փ տաժանելի պիտի լիներ այս ըսած ուղեղնացությունը քաջակորով մարդկանց համար, ո՞ւր կը մնար բյուզանդական պալատներու մեջ քնքուշ սնած աղջկան մը համար զանի դիմագրավել։

— Ե՞րբ կրնանք ուրեմն,— ըսավ իշխանը,— այս կզզին թողուլ։

— Չորս օրեն։ Հիմա ես վազն պետք է դառնամ և հեն իմ պատրաստություններս տեսնեմ, թե որ անկարծելի արգելքի մը չի հանդիպիմ, շորբոդ գիշերն հոս եմ, և նույն իրիկուն ճամփա կ'ելնենք։

— Ինչո՞ւ համար հիմա ճամփա չելնենք մենք ալ միատեղ։

— Պատրաստությունը, իշխան, ոչ քեզի և ոչ ինձի համար է,— ըսավ Սարգիս դանդաղելով,— ես այնպես կարծեմ, թե դու չես ուզեր այդ ծերը և այդ... պատանին, որ քեզ հետ այս իրիկուն լեռնեն իջավ՝ հոս թողուլ, ուստի անոնց համար գոնե երկու շորի՞ պետք է ճարել. քիչ մը ճամփու պաշար ժայռերու մեջ տեղ-տեղ ծածկել և մեկ քանի տղա հոն ձգել, որպեսզի որոշյալ գիշերին ու ժամուն կրակ վառելով մեզի ուղեցույց լինին։

— Ապրիս, Սարգիս, գնա՛ ուրեմն և պատրաստություններդ տես։ Կարելի է ստեպ պետք ունենաս. ա՛ռ,— ըսավ ու քսակ մը իրեն երկընցուց։

Սարգիս ետ քաշվելով՝

— Ներե, իշխան, ես փառք աստուծո, հարուստ եմ, քանի որ ծովուն վրա հոռմի նավ կը պտտի և ես ալ կը պտտիմ, ստկի նեղություն չեմ գիտեր ի՞նչ է։ Ուրիշ ազգի՝ աստված վկա դպած չունիմ, ասոնք մեզի ի՞նչ ըրին և ինչե՞ր կընեն։ Մնա՛ս բարով ուրեմն,— ըսավ և անհետ եղավ։

Երբ վարդապետն ու Թորոս մնացին՝

— Չորս օր դեռ ձեզի հետ պիտի լինիմք,— ըսավ Թորոս։

— Երանի՜ թե ավելի երկայն ժամանակ զՁեզ հյուր ունենայի,— պատասխանեց վանահայրն,— բայց կ'երևա, թե այս օրերս հոս ալ նաև իրենց չարությունը ավելցուցեր են հոռոմք, վասնզի սկսեր են թշնամական հոգի ցուցնել և նեղության տալ Լեֆքոշյա մեր ազգանց. ամեն կողմ հալածանք մեր անտերունչ ազգին վրա կը տեղա, աստված մեր աղաչանաց լսեր և փրկության դրոշակը տար ան ձեռքին, որ իր ընտրյալն է արդեն, տա՛ր իրեն զորություն և հաջողություն իր գործը ի գլուխ հանելու։

Այս է ահա մեր ցերեկվան ու գիշերվան աղոթքը, երանի՜ թե մեր ձայնը ընդունելի լիներ։

— Հայր սուրբ, թե որ ձեր ցցված նավավարին և ձեր հյուրընկալության հավասար է աղոթքը՝ մեր ամեն գործը պետք է հաջող երթա։ Աս երիտասարդը, որ հիշեցի, իմ տղայությանս ընկեր, երբ անունը տվավ, շատ քաջ և սրամիտ տղա կ'երևա, ես շատ շնորհակալ եմ ձեզի։

— Մենք ձեզի շնորհակալ պետք է լինինք, ազգ և եկեղեցի, երբ հաջողիք մեծ գործը ի գլուխ հանել. քանի որ ձեր հայրը՝ Լևոն և դուք գերի եղաք, ալ հունաց լրբության չափը անցավ ամեն տեղ, ամեն հարստահարությանց, ամեն բռնությանց, ամեն նախատանաց ենթակա եղավ մեր ազգը. մեր եկեղեցին, մեր խաչն ու ավետարանը կը հայհոյեն, չի կրցանք հասկցնել այս ամբարտավան ազգին, թե խաչ և ավետարան միևնույն է ամեն քրիստոնեի համար. տերն ինք այց ընե մեր տառապյալ ազգին. քանի անգամ աղերսագիր ըրինք կաթողիկոսին, որ գոնե Լամբրոնի իշխանաց ձեռք կայսեր խնդիրք անե, որ զմեզ չի չարչարեն. բայց Կիպրոս ո՞ւր, կայսր ո՞ւր. Լամբրոնի իշխանքն ալ կես հոռոմցած, թե որ կաթողիկոսն իրենց ազգակից չլիներ, մինչև հիմա բոլորովին հոռոմ եղած էին։ Դարձյալ կ'ըսեմ, աստված քու սուրդ հատու ընե, իշխան։

Աս խոսքերուն վրա ելան, Թորոս ամեն բան Եվփիմեի հաղորդեց, ամեն վտանգ աչքին առջև դրավ, որ հանդարտ մտիկ ընելեն վերջ՝

— Քու այդ Սարգիսդ շատ լավ տղա մի է,— ըսավ ծիծաղելով,— թե

որ աստված հաջողե մեր ձեռնարկությունը, գերագույն ծովապետ մը ունինք։ Հիմա ես օրերը պիտի համրեմ. ուրբաթ առտու հոս է Սարգիս, նույն իրիկուն ճամփա կելնենք։

Եվ այսպես պատրաստ ամեն վտանգի այս դյուցազն կինը անհամբեր կ'սպասեր ուրբաթին, և ամեն երեկո կ'առնուր իր ծեր Բաբկենը, կիջներ ծովեզրը տեսնելու, թե նավը եկա՞ծ էր, և սրտնեղ վանք կը դառնար մութուն անօգուտ սպասելեն վերջ։

Երկրորդ ուրբաթ մը եկավ, և Թորոս անգամ կայլայլեր, թեպետ երեսեն բան մը չէր իմացներ... Եվփիմե՝ այդ ջղային կազմվածքը, գաղտուկ արցունք կը թափեր, այնչափ իրեն նեղ կուգար կղզին և Թորոսի անտարբերության դեմ կը գանգտեր, որ զինք հանդարտեցնելու կը նայեր և համբերություն սորվիլ կը հորդորեր։ Ուրիշ ճար մը կը մտածեր այս երկրորդ բանտեն ազատելու, և Կոստանդին՝ նավու մը խոսք կ'ըներ, որ Անտիոք պիտի երթար, և կը համոզեր, թե ապահով միմիայն ճամփան այն էր Սև լեռն երթալու և երբ աս խորհուրդին վրա էին, Բաբկեն ներս մտավ շունչը հատած.

— Ավետիս, իշխանիկս, Սարգիսն եկավ, հիմա հոս կը հասնի։

— Ի՞նչ վիճակի մեջ,— հարցուց Եվփիմե։

— Լավ, շատ լավ վիճակի մեջ, Տիրուհիս,— պատասխանեց Բաբկենն։

Եվ իրոք Սարգսին սև երեսը երևեցավ, բայց աչքերն ուրախության հուր կը ցոլացնեին. դեռ մութը չէր կոխած։

— Կը ներես, իշխան,— ըսավ,— բայց կիսակատար գործ չեմ սիրեր, ամեն բան պատրաստ ընելու համար պետք էր անձամբ Վահկա մոտերն երթալ, և ձեր ապահովության համար օգնական խումբ մը բերել։ Բոլոր լեռը ոտք հանել կընայի, թե որ անունդ տայի, բայց խոհեմություն չի սեպեցի, տասներկու տղաք առի ընտրանոք, ո՛վ Լուսավորիչ կը սիրե, չի հարցնե, թո՛ղ հետս գա ըսելով ամենքը լեռներուն վրա ցրվեցի, իրենց սպասելու տեղերը ցցուցի, պաշար, գրաստ, ամեն բան զետեղեցի, դուք միայն պակաս եք, թե որ կ'ուզեք աս գիշեր կ'երթանք, օդն ալ հաջող է, փառք աստուծո։

— Ո՜ւր,— ըսավ վանահայրը,— այսպես անոթի-ծարավ, անկարելի է։ Մեկեն սեղան դնել տվավ, ընթրիքը շուտ մը պատրաստեցին, բարի հաջողության համար գավաթը պարպեցին, ետքը իջան եկեղեցին, «Տեր ուղղեան» ըսին, և մութը կոխեր էր, երբ Եվփիմե ջորին հեծած, Բաբկեն քովեն անբաժանելի, ելան և իջան ծովեզրը. նավը արդեն պատրաստ էր, և երբ ամենքը մտան, իր բոլոր առագաստները պարզեց և հաջողակ հողմով սկսավ սուրալ ծովուն վրա, ձայն չի կար ամենեին, բացի

Սարգսի ձայնեն, որ երբեմն համառոտ հրամաններ կուտար ղեկին գլուխը նստած։

Այս լուությունը շատերուն քունը բերավ, արդեն Եվփիմե հանգիստ և ուրախ գլուխը Թորոսին կուրծքը դրած շատոնց քուն էր, և Կիպրոսի եզերքը կ'անհետանային, երբ Սարգիս քովինին, որ անշշունչ նստած էր՝ ըսավ.

— Հայր սուրբ, դու սա ղեկը գործածե, ես պետք է նավուն ծայրը երթամ և զինեմ։

Եվ իրոք, իր սուր աչքերով, որ մութուն ալ ամեն բան կը տեսնեին, իր բոլոր նավաստյանց և Կոստանդնի օգնությամբ անցուց նավուն քիթը տապարաձև երկաթ մը և եկավ իր տեղը նստավ։

— Հիմա թող թշնամի նավն ալ գա,— ըսավ ղեկավարին, զոր «հայր սուրբ» կ'անվաներ,— կ'իջեցնեմ մեկ հարվածով ծովուն տակ։

— Չի գա թող, որդյակ Սարգիս,— պատասխանեց նա,— և խաղաղությամբ ցամաք մեկ մը գտնեինք։

Թորոս, որ աս խոսքերը կը՝ լսեր և անշարժության դատապարտված էր Եվփիմեի պատճառավ, ալ չի կրցավ համբերել և կամաց մը ձայնեց.

— Սարգիս, ո՞վ է հայր սուրբը։

— Վանահայրը, իշխան։

— Մեր հե՞տն է։

— Այո՛, իշխան,— պատասխանեց վարդապետը,— ես ալ ծովու լեզվեն կը հասկնամ քիչ մը, քսանհինգ տարի է նավավար էի, և ձեզի օգտակար լինելու հուսով մեկտեղ եկա։

— Շնորհակալ եմ։ Բայց ի՞նչ է գործիքդ, Սարգիս, որ թշնամի նավը մեկ հարվածով ծովուն տակ կ'իջեցնե։

— Նորաձև ցոուկ մ'է, իշխան, Անտաքցի Ավետիք վարպետի շինած, մինչև հիմա տասը հոռոմի նավ իջեցուցի անով։ Քամին լավ է, արդեն կես ճամփան առինք, քիչ մ'ալ ասանկ երթանք, կիջեցնեմ այս առագաստները, սև առագաստ միայն կը թողում։

— Լա՛վ, չի տեսնվելու համար թշնամիեն. լավ խելք է։

Դարձյալ լուռ և հաջող գնացին. ձայն չի կար նավուն մեջ, Թորոս լուռ կը դիտեր. երբ հանկարծ Սարգիս ցատկեց տեղաց՝ «Տղա՛ք,— ըսավ,— պատրաստ կացեք, նավ մը կը տեսնեմ մեր ճամփուն վրա, իջուցեք հիմա առագաստները». վայրկենին առագաստները իջան, հաղիվ թե ճախարակաց ձայները կը լսվեին, այնչափ խնամքով եղոտած էին։ Թորոս կը նայեր, բայց բան մը չէր տեսներ, ինքնիրեն կ'ըսեր, թե պետք է գիշերային թռչնո մը աչք ունենալ Սարգիսին պես մութուն տեսնելու հա-

մար։ Անցան նավը հեռվանց և շարունակեցին իրենց ճամփան անվտանգ։ Կեսգիշերն անցել էր, առվոտյան երկու ժամ հազիվ կար, և ահա Սարգիս «Փառք աստուծո» գոչեց. և երբ Թորոս պատճառն իմանալ ուզեց՝

— Կը տեսնե՞ս սա լույսը դիմացը, որ մութը կը տատանի, խաչաձև կը շինե, ահա մեր նշանն է. Թշնամի չի կա և մենք ալ մոտ ենք ցամաքին,— ըսավ։— Հա՜, տղաք, թիակները օգնության, բացե՛ք բոլոր առագաստները, ալ ո՞վ որ կուզե, թո՛ղ գա։ Ամենքը արթնցան. լուսնո վերջին ճառագայթը աղոտ լույս մը ձգեց ծովուն վրա։ Հազիվ թե կես ժամ վերջը նավը կը խրեր ավազին վրա և վեց կորովի տղաք զայն կը շրջապատեին ջահեր ձեռքերնին. Սարգիս նավուն ծայրը կեցած՝ «սանդուխը» ըսավ, և սանդուխ մը դրվեցավ նավուն։

— Իշխան,— ըսավ Սարգիս,— ահա հարցդ երկիրը, քեզ կը վայելե նախ ոտք դնել հոս։

— Հանուն աստուծո ամենակարողի,— ըսավ Թորոս և ցատկեց դուրս, ու Եվփիմեի, որ սանդուխին գլուխն էր, ձեռք տվավ և վար առավ։

Հոն ան փոքրիկ խմբակը Կոստանդնի առաջնորդությամբ ավազին վրա ձեռքերնին երկինք տարածելով հավատարմության երդում ըրին՝ «Հանուն աստուծո» մեռնիլ հայության և Թորոսի համար։

Նավը քանի մը վայրկենի մեջ յուր ամեն կարասիքեն մերկացավ, առագաստ, ղեկ, զենք, պաշար վերի անելանելի մացառներուն և ժայռերուն մեջ ծածկվեցան, և երբ ամեն բան անհետացավ, Սարգիս հրամցուց խորը լեռան ստորոտը ջուրին գլուխը յուր հյուրերը նախաճաշիկ ընելու։ Պայծառ և աննման ադբյուր մ'էր, որ գետնեն կը բխեր, ամեն դար, ամեն լեզու գեղեցիկ աչքի մը կը նմանցնեին զայն, որ հանդարտ և լայնաբերան՝ վճիտ ջուր մը կը պոռթկար։

— Բայց նախ, Բարկեն հայրիկ,— ըսավ Սարգիս,— քու տղաքդ ահա հոս են։— Երկու կորովի տղաք Բարկենի ձեռքերուն պլլվեցան, և Բարկեն հավատարիմ ասիական սովորության՝ հայրական սերը խեղդել կը ջանար սրտի՛ն մեջ, թեպետ ապստամբ աչքերը ուրախության արցունք կը թափեին։

Նահապետական էր սեղանը. ահագին ոչխար մը խորոված իր մորթին մեջ փոսի մը խորշեն դուրս ելավ։ Կիպրոսի գինին կուժերով առատապես գավաթներու մեջ կը փրփրար. երբ ամենքը կերան և հագեցան, Եվփիմե ուրախ և զվարթ Սարգսի ծովապետին կենաց խմել առաջարկեց գինին, որ զիրենք անվտանգ անցուց և բերավ։

Երբ ելան կերակուրեն, երեք հատ շոր, ջղուտ ջորիներ մոտեցուցին հայ տղաքը, ուր Եվփիմե և վերջը Դիոնիս նստան, երրորդը Թորոսի համար էր, բայց նա մերժեց և հրամայեց ջուրի տիկեր բեռցնել և ինք սկսավ Սարգսի առաջնորդությամբ լեռն ի վեր շահատակել։ Ետևեն կուգար Բարկեն շատ անգամ ձեռքը Եվփիմեի ջորվույն գլուխը բռնած, վերջը Դիոնիս, ետքը մեր բոլոր զինվոր և նավաստի տղոց խումբը, և էն վերջը Կոստանդին իր հասակավը, և այլոք վարդապետին հետ։

Սելևկիո և Կորիկոսի մեջտեղ հրվանդանի մը քով կ'իյնար այս կետը, ուր մեր կարավանը կապվեցավ, և իրավունք ունեին հիները անվանելու զնա Կուբակեսիոն զեղեցիկ, վասնզի ժայռն ու անտառ, ծովն ու վտակ, երկինք ու երկիր հոս գեղեցկությամբ զարդարած էին. կետ մը՝ ուր ժայռ ու մացառ իրարու հետ կը կռվեին, ուր ոտից կռվան մը գտնել միշտ դժվարին և երբեմն գրեթե անհնար կը լիներ, մանավանդ մեր ճամփորդներուն համար, որ ժայռերու ընկերությունը ավելի կը վերադասեին, քան մարդկանց թշնամությունը։ Այդ Տորոսի գոտիները երբեմն հանկարծ կը պատռեին տեղի տալու համար հեղեղատի մը. երբեմն բոլորակ թատրոն մը կը ձևանային ծոց մը շինելու համար ծովուն, և երբեմն ճանապարհորդ լեռան գագաթը ելնել կը պարտավորեին, երբեմն ծովեզրը իջնել. ելևէջ միշտ վտանգավոր, միշտ տաժանելի սոսկում կը բերեր նայողին, բայց մեր կարավանը անխոս, անշշունջ կը շարունակեր իր ճամփան սպառնալից, վասնզի նիզակներուն շողյունը, վահաններու, սուրերու և սաղավարտներու շառաչը, և այդ հաստատ երիտասարդաց քայլերը այդ փոքրիկ և ընտրյալ խմբին անընկճելի լինելուն վկայքն էին։

Երեք ժամու չափ ճամփա հազիվ առած էին, և Սարգիս իր սուր աչքերը կը նետեր քննելու համար լեռանց գագաթները, երբ տեսավ, որ ճերմակ դրոշակ մը կը ծածաներ, մատնանիշ ցուցնելով զայն Թորոսի՝ «հաջող և բաց է ճամփանիս, իշխան,— ըսավ,— ահա նշանը»։ Քիչ մը վերջը սպառազեն երիտասարդ մը խառնվեցավ խմբին, իմացնելով, թե վտանգ չի կար, և ոչ ոք տեսած չէր։

— Կորիկոսի պահապանք ի՞նչ կընեին,— հարցուց Սարգիս։

— Մեռելի պես դռներ գոցեր նստեր էին, բերդի շուրջը բնակող գյուղացիք ալ չեն գիտեր, թե բերդապա՞հք ավելի վնասակար են իրենց, թե ավազակք։

Եվ իրոք քիչ մը առաջ, երբ եկան մերայինք Կորիկոսի կրկին բերդերն՝ ցամաքային ու ծովային երևեցան. ցամաքի բերդը իր բարձր քառակուսի և բոլորշի աշտարակներով, երկաթապատ դռներով պզտիկ քաղքի մը երևույթն ուներ. անոր դիմաց, մոտը, ծովուն մեջ բերդապատ կղզի մը արհեստական լեզվով մը մյուսին հետ իբրև կամրջով միացած կ'երևար։ Հոս Սարգիս կեցավ և սկսավ մտածել։

— Ի՞նչ կը մտածես,— ըսավ Թորոս։

— Կը տեսնես, իշխան, ճամփան երկուք է, մեկը կարճ, որ բերդին ստորոտեն կ՝անցնի, մյուսը՝ երկայն՝ և ուր լեռան վրայեն պետք է պտըտիլ։

— Երկայն ճամփեն երթանք. քար մը, նետ մը կրնա մեր մեջեն մեկուն կյանքը վտանգի դնել, անօգուտ քաջությունը մեղք է։

Երկայն ճամփան բռնեցին և գեղեզմաններու մեջե կ՝անցնեին. ի՞նչ անհատնում և քարակոփ գերեզմաններ, և ի՞նչ բարբարոս ու սեղանակապուտ ժողովուրդք անցեր էին հոնկից. գերեզման մը չի կար, որու կափարիչը խախտած չլիներ, կային գերեզմանք չորս բարձր սյուներու վրա հաստատված, բայց ամբարիշտ և գերեզմանակրկիտ ձեռքը հոն ալ հասեր էր և ահագին միակտուր երեք կանգուն և ավելի մեծ կափարիչը խախտեր էր, աճյունն ու ոսկորը ցրվեր էր։ Երկայն մղոններ աս տեսարանը կը շարունակվեր և ճամփորդք իրենց ճամփան կ՝երթային, երբ հանկարծ վարեն վայելու ձայն լսվեցավ, և ամենքը կանգ առին. բերդապահ մը Կորիկոսեն ելած արտորնոք կը դիմեր խումբեն առաջ անցնելու վարի ճամփով, երբ նետի հարված մը Կոստանդինին աղեղեն եկած խեղճ մարդը հերկիր կործանեց, երկրորդ նետ մը անշուշտ մահացու հարվածով մարդուն հողին պիտի հաներ, երբ Թորոս բարձր ձայնով՝

— Մի՛, բավ է,— կանչեց։

Կեցավ Կոստանդին՝ «Թե որ,— կ՝ըսեր ինքն իրեն մտմտալով,— մենք այսպես պիտի պատերազմինք աս անիծած ազգին հետ, վերջը շատ կը զղջամք, և անոնք կ՝ուտեն կը հատցնեն մեզ»։

Շարունակեցին իրենց ճամփան։ Կեսօրվան արևը իր կրակը կը թափեր. Թորոս ետ դարձավ Եվփիմեի երեսները տեսավ կարմրած տաքին և հոգնութենեն. վար նայեցավ, տեսավ գեղեցիկ դղյակ մը, որուն պարիսպները դեպի ծով կը խոնարհեին, փորձություն մը եկավ հյուրընկալություն խնդրելու հոն, բայց միշտ շրջահայաց և խոհեմ՝

— Սարգիս,— ըսավ,— մենք ո՞ւր դադար պիտի առնունք։

— Հոս, սա դղեկին մեջ, որ առջևիս է, տե՛ս, ահա մեր ճերմակ դրոշակը կը ծածանի։

Եվ, իրոք, զարմանքով տեսավ Թորոս, որ դրոշակ մը կը ծածաներ։

— Մարդ չի կա՞ ուրեմն հոդ։

— Ոչ, տեր իմ, լքյալ դղյակ մ՝է, Այաշ կանվանեն զայդ տաճիկք, մենք ճերմակ բերդ կըսենք, և երբ ծովեզրը ապահով է մեզի համար, հոս կուգանք հոռոմները կատղեցնելու համար, քանի մը ժամ կ՝անցնենք, քանի մը նետ կուղարկենք իրարու ի նշան սիրո և բարեկամության, որ մեր

երկու ազգաց մեջ միշտ հարատև եղած է և պիտի լինի. անկից կը մըտնենք նավ և կը հեռանանք։

Եվ աս ըսելով կը մտնեին դղեկին ներս, որու մուտքը միայն կար, և դուռը արդեն հարություն առեր էր։

ԳԼՈՒԽ ԺԱ

ՏՈՐՈՍ

Սոսկալի ելևէջները, արևուն կիզանուտ ճառագայթները զամենքը վաստակաբեկ ըրած էին, ուստի ամենը շատ գոհությամբ ընդունեցան այս դադարը, զոր պատրաստած էր իրենց համար Սարգիս. մսին խորոված ը ախորժանոք կերան. և զարմանքով կը նայեին Եվփիմեի, որ հազիվ թե պզտի հոգնություն մը առած, Թորոսին հետ դղյակը կը պտտեր, որ իրոք այն ժամանակի շենքերուն վայելուչներեն մեկն կրնար համարվիլ, ընդարձակ սենյակներով, գեղեցիկ մատուռով, ջրի կապարյա ագուգաներովն և ընդարձակ պարտեզովն, ուր խառնիխուռն անտառաց ներ և վայրենացեր էին կիտրոնիք, ձիթենիք, թթենիք, բրաբյանք և դափնիք։ Սարգիս, որ կիսակատար գործ չէր ըներ, ճամփուն վրա երկու պահապան դրած՝ կես ժամը մեյ մը զանոնք կը փոխեր և հրաման ըրած էր ոչ ոք չանցնել, իսկ եթե մեկը համարձակեր հրամանը ոտնակոխել, առանց սպասելու փողոտել, և այս զինվորական ճշտությունը կը տեսներ Թորոս ու գոհ կը լիներ խորհրդածելով, թե լեռնցի ազատ ժողովրդյան այս կամավոր հնազանդությունը զինվորական կանոնաց հայրենի ազատության երաշխավոր էր։

Դիոնիս նույն միջոցին, իր անցելույն դիտողությունները կըներ. ուսման նյութ էր իրեն համար, թե շենքը ո՞ր դարու, ո՞ր ժամանակի կը վերաբերեր, թե մատուռը երբեմն թերափներու տաճար եղած և ետքը քրիստոնե կրոնքին պատկանյալ էր։ Բաբկեն իր տղոց հետ նստած կնոջը, աղջկանց և պզտի մանչուն վրա տեղեկություն կառնուր, իր գերութենեն վերջը անոնց քաշած նեղությանց և հալածանաց պատմությունը մտիկ կ՝ըներ, վասնզի հոռոմք, որ Ռուբինյանց իշխանությունը կործանել հաջողած էին, երբեք ի տաճկաց, ի լատինաց և ի քրդաց բռնութենեն չէին կրցեր պահպանել երկիրը, որ կատարյալ անիշխանության մեջ՝ կը հեծեր ավուր առաջին բռնավորին։ Անդին խումբ մը հինգ-վեց երիտասարդներու, Թորոսի և հետևաբար Եվփիմյա վրա կը խոսեին կամաց և գաղտա-

զնդի. Մեկ երկուքը կը կարծեին, թե հուլն պատանի մ'էր, որ ընկերաքեր էր իշխանին, իսկ ավելի խորագետները կը պնդեին, թե կին էր. իսկ ուրիշներ՝ թե Թորոսի կինն էր, և իրենց անժխտելի փաստ կը ցուցնեին Բաբկենի պես խիստ մարդու մը անոր ըրած պատիվն ու պատկառանքը, և թե ինչպե՞ս անոր կապոցը Բաբկեն զգուշությամբ իր ուսեն չէր բաժներ։ Կային նաև քանի մը երիտասարդ ի նավաստյաց, որ բոլոր գիշերն անքուն՝ ծառերու շուքին տակ դալաքի վրա ահագնաձայն կը խորդային՝ ծովուն վրայեն փչած կենդանացուցիչ հովին տված քթերնին։

Իսկ Թորոս՝ Սարգսին, Կոստանդինին և վարդապետին հետ կը խորհրդակցեր իրենց հետևելիք ճամփուն վրա. և որոշեցին Սարգսի խորհրդյան հետևիլ, գիշերով՝ մութուն ճամփա չընել, այլ ցերեկվան և արևու լուսով շարունակել ընթացքը. ուստի առանց ուշանալու ելան ճամփա, երբ արևը սկսեր էր գեռ նոր խոնարհիլ, ձայն տվին աղոց, խոտքը կազմեցին կանոնով՝ կազդուրյալ և ոգևորյալ ճամփա ընկան։ Թեպետ ժայռ և անտառ պակաս չէր, բայց ոչ երբեք անցյալին կրնար համեմատիլ, առվակներ, որ բլուրները կը կտրեին, անտառներ, որ երբեմն գեպի ծով կ'երկնային. գեղեցիկ ծովափնյա ավաղուտ մը երբենց ճամփան կը կազմեին։ Լամոսի բերդին հեռվանց շրջան մը տվին, որուն սակավաթիվ բնակչապահը ոչ թշնամության ցույց և ոչ կենաց նշան տվին, և մեր խումբը մտավ թավ անտառի մը մեջ, ուր դարավոր ծառեր իրենց հովանին խաղաղ լռության մը վրա կը տարածեին։ Սրընթաց վտակ մը անտառը կը կտրեր, և երբ ջրին ընթացքին հետևելով կարավանը վեր ելավ բլուրին գլուխը՝ նոնենյաց անտառ մը զանի կը պատեր և Սարգսին պահապանք իր ճեմական դրոշակը ձեռքը զիրենք դիմավորեց։

Ան գիշեր ճամփաներուն պահապաններ դրվելեն վերջ հանգիստ քնացան պայծառ երկնքի տակ և առավոտուն կանուխ կելնեին ճամփա, և դեռ արևը չելած Պոմպեուպոլսո ավերակներն ու ծովը հաչ կոզմը ձգելով, Տորոսի գոտիներեն անբաժան կը ջանային անցնիլ անծանոթ Լամբրոնի բերդին քովեն, ուր գիտեին, թե լավ հսկողություն և պահպանություն կար ճանապարհաց։ Ուստի մեր Սարգիսն շատ անհանգիստ էր, և իր աչքերը լեռանց գագաթները կը քննեին, թե պիտի տեսնե՞ր իր ճեմական դրոշակի ծածանումը, բայց ժամը երեկո կը լիներ, և նշան չի կար։ Հոն ժամադրության տեղը իր պահապանը չէր երևաց, ուստի կեցաց կարավանը, վազեց դեպի քարակերտի մը և քանի մը քար խափանելեն վերջ գտավ իր ծածուկ պաշարները՝ պաքսիմաթ, պանիր, կարագ, ձիթապտուղ, վասնզի թշնամվույն մոտությունը չէր ներեր կրակ վառել. բայց գարձյալ առանց հայտնի ընելու իր մեծ անհանգստությունը ամենուն՝ հոգդոքեց ուտել և կշտանալ, վասնզի կ'ըսեր տաժանելի է ճամփանիս. և Թորոսիս

Կոստանդինի միայն հայտնեց, թե իր պահապանին անհետանալը վտանգավոր գուշակություն մ'էր նույն գիշերվա համար։

Այս հայտնության վրա Թորոս, առանց Կոստանդինի ժամանակ տալու, որու հախտուն և հանդուգն քաջությունը լավ կշռեր էր, երկայն հարցաքննության մը սկսավ։

— Լամբրոնի բերդը հոսկից ինչչա՞փ կը տեղ։

— Ժամ մը։

— Ինչչա՞փ զինվոր կարծես թե ունին։

— Քառասուն-հիսուն, բայց ընտրանոք մարդիկ։

— Հոսկից ինչվան Կիլիկիո կիրճերն ինչչա՞փ կը տևեն։

— Չորս ժամ։

— Հոն դարձյալ բերդք և պահակազորք միշտ կը գտնվի՞ն։

— Միշտ։

— Հո՞ւյն են զորքերը թե հայ։

— Խառնակ, կես-կես։

— Հոսկից Տարսոն ինչչա՞փ կը քաշե։

— Մե՞ր ընթացքով. չորս ժամ։

— Ատանա՞։

— Գրեթե նույնչափ։

— Ատանայե Միսի՞ս։

— Նույնչափ։

— Բավական է,— ըսավ Թորոս,— շարունակենք մեր ճամփան։ Թշնամին թե որ գա, թո՛ղ այս լեռնկուն վրա մեզ գտնե։ Դու, Սարգիս, նայե՛, որ միշտ ճամփան բարձրերը բռնես՝ միշտ ապահովությամբ նայի՛, որ անցնինք մեկ մը սա Լամբրոնի բերդը հեռվեն։

— Կա մեկ ճամփա մը, բայց երեք ժամ ճամփանիս կը հեռացնե։

— Չի զրուցե՞ս, այն ճամփեն գնա ուրեմն։

— Բայց երեք ժա՜մ,— ըսավ Կոստանդին։

— Այո՛, երեք ժամ, բայց Լամբրոնի բնիկ և ընդոծին հայոց հետ կռվիլ իրենց լեռներուն մեջ՝ հիմարություն է,— պատասխանեց Թորոս ապնապիսի նեղով մը, որ պատասխան չէր փերցներ։

Ուստի մեր խումբը բռնեց ամենամոտիկ ճամփան և մութ տեղ մը կը մտցուցեին. Սարգիս առջևեն, Թորոս ետևեն և վարդապետը վերջը գլուխը Թորոսի անմիջապես քովին. սուրերը կարճ բռնված էին, որպեսզի նայն չի հանեն ժայռերու զարնվելով. զենքերը չի փայլելու համար լաթերով ծածկված էին, և այսպես ժամ մը շարունակեցին իրենց ընթացքը, և դա թերդիս Թորոս զվարդապետ կը կարդացներ։

Սարգիս, որ առջևեն կը քալեր, ետ դարձավ և Թորոսին կամաց ձայնով մը ըսավ.

— Իշխանդ, հոս թշնամին հեռու չէ, վասնզի ահա ճամփուն վրա պատնիշապես քարեր դիզեր են. կարելի է կռնակը քանի մը հոգի պահապան կան. ի՞նչ ընենք, հարձակի՞նք։

— Կա՛ց,— ըսավ Թորոս,— լռությո՛ւն, չորս հատ նիզակավոր կորովիներեն բեր պատնեշի տակ կենան, ո՛վ որ գա, անխնա զարնեն, ա՛ռ Կոստանդինն ալ, և մենք երեքնիս բավական ենք սա ժայռերեն շրջան մը ընելով անոնց կռնակը անցնելու և վրանին իյնալու. բայց անշշունչ, առանց ձայնի։ Եվ ինք մոտենալով Բաբկենի, Եվփիմեն դարձյալ իրեն հանձնեց պատսպարել վահանավ, որ նետ մը, քար մը, վտանգ չի հանե։ Սկսավ իր ընկերներով աղեղնաձև շրջան մը ընել անելանելի ժայռերուն վրայեն, որոնց անդունդներուն վտանգ չէր երևար գիշեր ատեն, բայց կրնար երևակայվիլ. շատ ծանր կը շարժեին մեր երեք անձինք, զի երբեմն պետք չը լիներ ոտք մը, ձեռք մը փոխելու համար հինգ-տասը վայրկյան կենալ և խարխափել. վերջապես ճամփուն վրա ելան. հոն թեպետ Կոստանդին կուզեր առաջ անցնիլ, բայց Թորոս անոր հանդգնութենեն կասկածելով՝ ինք առաջ անցավ, և երբ մոտեցավ, նշմարեց չորս հոգի, որ պատնեշեն քիչ մը ասդին պառկեր էին և անոր վստահացած հանգիստ քուն կը լինեին։

Մերկ սուրը ձեռքը՝ Թորոս «Պահապա՛նք,— կանչեց,— թե որ շարժիք, կը մեռնիք», ու երբ մարդիկ քունե արթնցած ելնելու փորձ մը կ՚ընեին՝ «մի՛ շարժիք, ապա թե ոչ կը մեռնիք» որոտաց. մարդիկը անշարժ մնացին այս սպառնալյաց առջև, երբ նույն միջոցին Սարգիս ու Կոստանդին գինաթափ ընելով զիրենք, պատնեշը հարթ հատակ կ՚ընեին. և այս գործողությունը այնպիսի արագությամբ կը կատարվեր, որ քանի մը վայրկենի մեջ մարդիկը անզեն և թևերնին կապած մեր կարավանին հետ խաղաղ, հանդարտ կը քալեին։

Լամբրոնի դղյակը հեռացեր, անհետացեր էր. կարավանը հասավ լեռներու գլուխը ծառազարդ խոտավետ բարձրավանդակի մը վրա, հոն Թորոս, Սարգսի հավանությունն առնելով, հոգնություն մը տվավ իր խմբին և հրամայեց իր չորս կալանավորները բերել և ինչ որ կ՚երևակայեր, իմացավ, այսինքն, թե Լամբրոնի իշխանքը Սարգսին դրած պահապանը բռնած էին և իմանալով, թե հոնկից պիտի անցներ Սև լեռնցվոց խումբ մը, վարի ճամփան քառասունհինգ հոգով պահպանել որոշած էին, իսկ վերեն, ուսկից չէին հուսար, որ համարձակի մարդ հասնիլ, ճամփան խցել և չորս պահապան դնել հրամայած էին։ Պահապաններն ալ, անկարելի համարելով այս օղագնաց շրջանը, հանգիստ և ապահով քուն եղած էին։

Ժամու մը չափ հոգնություն առնելե վերջ՝ դարձյալ տաժանելի ուղևորության ընկան մեր ճամփորդները. և մեկը չէր համարձակեր դանդատ մը մտքեն անցունել, երբ կը տեսնեին Ռուբենի պայազատը, որ անխոս հետևակ առջևեն կ՚երթար ու ոչ թե վտանգաց մասնակից, այլ դիմագրավ կը լիներ։ Այսպես շարունակելով, վերջապես մոտեցան Կիլիկյան համբավավոր կիրճերուն, ուր զորաց խումբ մը և կիսակործան բերդ մը կար, որ թշնամյաց հարձակումն արգիլելի ավելի անցորդաց նեղություն տալու պաշտոն կը վարեր։ Թորոս, որ իր ճամփան կ՚ուզեր վարել խաղաղությամբ, եթե կարելի էր, քան թե անօգուտ կռվելով, զՍարգիս հուղարկեց բերդապահ ավազակին, որ քանի մը ոսկվով իրեն ճամփա տվավ առանց նեղելու, ի մեծ գայթակղություն Կոստանդնի, որ կը զարմանար, թե Թորոս քաջութենե զուրկ չլինելով ինչպե՞ս հանձ կ՚առնուր այսպիսի բանագնացության մտնել։ Բայց Կոստանդին Փիլիպոսի պատմությունը չէր կարդացեր, և Թորոս կարդացեր էր։

Վերջապես լեռներու մեջ հայոց գեղեր սկսան երևիլ, Սարոս գետին վտակներու վրա. խստությամբ արգիլվեցավ մեր խմբին Թորոսի ո՛վ լինելն հայտնել. մինչև Վահկա բերդն՝ արծվո բույն, լեռներու մեջ երևցավ։ Բաբկեն արտասվոք կը նայեր այն բարձանց, որոնց պաշտպանության համար այնչափ արյան թափվիլն տեսած էր. քանի՞ անգամ կյանքը վտանգի դրած և հիմա օտարներու բնակարան եղած էր...

Անմիջական վտանգը կարավանին համար թեպետ հեռացյալ կը կարծվեր, բայց պետք էր, որ Թորոս հենակետ մ՚ունենար հրապարակվելեն առաջ, ուստի Կոստանդին, Բաբկեն, Սարգիս և վարդապետ խորհրդի նստան. Եվփիմե նաև ներկա էր։ Նախ որոշվեցավ, որ Բաբկեն զԵվփիմե և զԴիոնիս առած անցներ Ամանոսի հյուսիսային ծայրը, ուր էր իր բնակությունը. Սարգիս առնուր իր երիտասարդները, որոնք իրենց տունը միշտ պատրաստ պիտի գտնվեին առաջին ձայնին ժողովվելու համար հոն, ուր հրաման դա հանուն Թորոսի։ Կոստանդին պիտի երթար իր քանի մը բաջակորովները ժողվելու և պատրաստ պիտի կենար առաջին փողի ձայնին՝ հոն, ուր պիտի գտնվեր Թորոս։

Այս խորհրդին վրա Թորոս բերել տվավ չորս կալանավորները և հրաման տվավ իրենց կապերը արձկել և ազատություն շնորհել, դարձյալ ի մեծ զայթակղություն Կոստանդնի. ու երբ երթալու վրա էին, դարձավ իրենց ծանր-ծանր և որոշ ձայնով սա խոսքերը ուղղեց. «Դուք, որ հայ ազգի զավակներ եք, մտիկ ըրեք իմ խոսքերս. մտածեցեք, որ ձեր եղբարց արյունը պիտի մտնիք և անոր համար մահապարտ էիք, և մեկի շատ դյուրին էր ձեզ հավու պես մորթել, ձեր հայությունն է միմիայն պատճառ, որ մենք ձեր ազատության, ձեր կենաց խնայեցինք. գնացե՛ք

ձեր Լամբրոնի տերերուն բարև զրուցեցեք և ըսեք, թե Լևոնի տղան Թորոսը տեսանք, և նա երդում կ'ըներ հանուն աստուծո ամենակարողի և սրտագիտի, թե երբեք մեծութիւն, փառք և իշխանութիւն պիտի չլինի իր գործոց նպատակը, այլ իր ազգին օգուտն ու երջանկութիւնը և եթե հայր, եղբայր, զավակ պիտի համարի ամեն հայ, որ նույն հոգվով շարժի. իմացա՞ք, հասկացա՞ք ըսածներս, պիտի կարենա՞ք կրկնել»։

Իսկ մարդիկը աս խոսքերուն վրա ապուշ դարձած ելան և իրենց ճամփան գնացին, վասնզի ըստ ժամանակին սովորության՝ նոր էր աս վարմունքը, և աս խոսակցությունը ոչ միայն աս խեղճ զինվորներուն համար, այլ թերևս վարդապետին համար նաև, որ Թորոսի քով նստած էր։

ԳԼՈՒԽ ԺԲ

ՍԵՎ ԼԵՌ

Այս տեսարանը կ'անցներ Վահկա բերդին շրջակայքը մացառուտ բլրի մը վրա. առավոտը շատ հեռու չէր։

— Հապա՛, ամեն մարդ իր ճամփան,— ըսավ Թորոս իր խումբին,— ասկից տասն օր չեղած, աստուծով կը լսենք փողերուն ձայնը, և ամենքս ալ կը ժողովվինք։

Այս անգամ Եվփիմե գոհ հանձն առած էր բաժանվիլ իր փեսեն. ուստի պագտվելեն վերջ իրեն հետ, դարձյալ անոր օգնությամբ հեծավ ջորվույն վրա Դիոնիսի ընկերությամբ, շրջապատյալ Բաբկենեն և նորա աղոցմեն՝ շտկվեցավ դեպի Սև լեռը, ուր առջևեն քիչ մը հեռվանց կերթային Սարգսի խումբը. քանի մը ժամվան ճամփա հազիվ կը բաժներ զիրենք իրենց գյուղեն։ Թորոս քիչ մը աչոք ընկերանալեն վերջը իր հարսին, որ գիշերվան սովերներուն և ծառերուն մեջ ծածկվեցավ, շուրջը նայեցավ, որ Կոստանդին և վարդապետը միայն մնացեր էին։

Ուստի Կոստանդինն ալ բարի հաջողում մաղթեց, որ իր քաջերը առաջին ձայնին բերել խոստանալով՝ Վահկա արևելյան կողմի ժայռերուն մեջ անհետացավ։ Երբ երկու հոգի մնացին, դարձավ վարդապետին ու ըսավ.

— Հիմա, հայր սուրբ, մեր երկուքին կը մնա խնդիրը, դու՝ քու ասորի մետրապոլիտդ ավելի ապահով կը համարիս և անոր վրա ավելի վստահություն ունիս, քան թե մեր հայ եկեղեցականաց։

— Ո՜, իշխանդ,— ըսավ վանահայրը,— իմ միտքս սխալ հասկըցեր ես. ես մեր եկեղեցականաց վրա վստահություն չունիմ չըսի, այլ թե հիմա, հոռոմները, մեր վրա կասկած ունենալով՝ շարունակ խուզարկության վրա են և մեր վանքերն ու անապատները տակնուվրա կընեն, երբ, ընդհակառակն, Ասորվոց վանքը օտարին վերաբերելուն ամենևին իրենց կասկածի տեղի չի տար. դու քու դիտողություններդ ընելու համար հոն հանգիստ առանձնարան ունիս, հիմա զանխուլ ճամփաներե քեզի հոն կ'առաջնորդեմ, և կը տեսնես, թե ասորի եպիսկոպոսը ինչպես գոհ պիտի լինի Լևոնի տղան տեսնելուն, վասնզի քու հորդ և հորեղբորդ պաշտպանությամբ կրցեր է իր վանքը շինել, և ձեր իյնալեն վերջը շատ զբրկումներ քաշեր է հոռոմներեն։

— Երթանք ուրեմն։

Մեր երկու ճամփորդներն սկսան իրենց շահատակության ընդ ժայռ և ընդ մացառ. լուռումունջ կ'երթային, գետ և վտակ երբեմն զիրենք կը զովացներ և վերջապես Ամանոսի էն բարձր գլուխները գտան՝ երկու ժամ շարունակ երթալեն վերջ. հոնկից շրջակա վանքեր, գյուղեր, անառիկ բերդեր իրենց ոտքին առջև կ'երևային, իբրև ողորմելի ոչնչություն, և այսպես երկու ժամ ալ դեռ քալելեն ու քիչ մը իջնելեն վերջ դեպի հարավ, հասան ժայռերու մեջ բերդանման վանք մը, որուն դռները չէին բացվեր, վասնզի մեծ խստությամբ արգիլյալ էր առանց մեծավորին հրամանին դուռ բանալ. ուստի երկայն բանագնացությենե վերջ նախ վարդապետը վեր առին, և քառորդե մը վերջը դռները բացվեցան նաև Թորոսի։ Մեր մետրապոլիտը, երբ զԹորոս տեսավ, աչվները արցունքը լցված, ձեռքերը երկինք տարածելով փառք կուտար աստուծո, որ Թորոսի ամենանման եղբորորդի մը հարուցեր էր, ի փրկություն հայ և ասորի եկեղեցյաց, որք միայն խաղաղությամբ կ'ապրեին և հանուն Քրիստոսի զիրար չէին ըզկտեր։ Եվ ինչպես ծերերու սովորությունն է միշտ անցյալին վրա անսպառ խոսիլ և պատմել, նույնպես մետրոպոլիտն Աթանաս կը պատմեր, թե քանի անգամ Վահկա բերդը գնացեր էի զԼևոն և զԹորոս տեսնելու, և թե նոքա ինչպե՞ս սիրով զինք ընդունած էին և իր խնդիրքները կատարած, թե դրամական օգնությամբ թե պաշտպանությամբ ընդդեմ անհավատից, հունաց և լատինաց։ Բայց վերջապես մտածելով, թե մեր ճամփորդներն տաժանելի ճամփե մը կուգան, հրաման տվավ իրենց կերակուր և սենյակ տալ, և այսպես Թորոս քիչ մը հանգստանալեն վերջ, երբ ծեր եպիսկոպոսին ներկայացավ, նա սկսավ իրենց հարցնել, թե ի՞նչ էր իր դիտավորությունը և գործերու հատակագիծը։ Թորոս իմացուց, թե իր հատակագիծը պատրաստելու համար իրեն հյուր եղած էր և թե կ'ուզեր բոլոր շրջակայքը պատիլ, ամեն տեղ ճանչել և ուսնիլ և ըստ այնմ գործի սկսիլ։ «Ուստի,— ըսավ,— ես ձեզմե քանի մը այծ և հովվի մը զգեստ կ'ուզեմ,

որ առանց թշնամի կասկած հարուցանելու կարենամ իմ դատողությունքս ընել»։

Եպիսկոպոսն ալ այսպես աժան աղատելուն վրա ուրախ՝ մեկեն ուզածն իրեն շնորհեց, և ահա մեր Թորոսն գլուխը հովվի դդակ և վերարկու մը վրան ձգած միանակուկ լեռն ու հովիտ կը պտտեր, և թե որ իր այծերը բերդորեից շրջակա խոտերը և թուփերը կը սիրեին, զարմանք չէր։

Կը մտներ երբեմն գյուղերը, կը տեսներ հայ ժողովրդյան մռնչյունը ընդդեմ նախատող և հարստահարող հույն վարձկանաց. կը լսեր անոնց հայհոյությունքը ընդդեմ հայ հավատոց. կը տեսներ իրեն ծանոթ հայրենի կալվածները հափշտակող հույն իշխանաց գոռոզ ամբարտավանությունը, և այսպես ութ օր դիտելով, զննելով, Ալեքսանդրիո ծոցեն մինչև Ամանոսի հյուսիսային ծայրերը շրջագայեցավ, քայլ առ քայլ գրելթե նշանելով մտքին մեջ ծառ, թուփ, ժայռ, բլուր, լեռ, բերդ, ավան, գյուղ և ավերակ։ Ամեն տեսակ մարդ, ճամփորդ և ավազակ, կողոպտող և կողոպտյալ իր առջևեն կ'անցնեին, ամեն ազգ՝ հայ, ասորի, հույն, արաբ և թուրքմեն իր շուրջը կը պտտեին։ Իսկ անտարբեր հովիվը անխոս և անշշունջ Մաթիանու հովվին պես, իր ժողովրդյան փրկությունն կ'երկներ, կը շարունակեր իր ճամփան խորհրդածելով, և այսպես հասավ Ամուտա բերդին ստորոտը, իր այծերուն ընթացքը ուղղելով դեպի վեր, դռան հակառակ կողմեն տեսավ պատուհանի նման ծակ մը պարսպին վրա, որ ժայռին վրա հաստատված էր, այդ անառիկ բերդին ջրի մը ճամփա լինել մակաբերեց հորդ անձրևներուն ժամանակ, կամաց մը փորձ փորձեց և տեսավ, թե հանգիստ կրցավ անցնիլ. թուփերը, որ ծակին երկու կողմերը ծածկեր էին, զգուշությամբ իր գավազանով բաժնեց և բերդին մեջ շարունակեց իր ելքը ու երբ երեք-չորս մարդաչափ բարձրությամբ վեր ելավ, հասավ ծառազարդ գեղեցիկ հողաբլուր մը, և քիչ մը անդին վայելուչ պալատանման բնակարան մը բերդին իշխանին. ծառերու մեջ ծածկված կը դիտեր տղոց խաղալը, կը լսեր կանանց և ծառայից ձայները, և թե որ խոհեմությունն յուր բնական առաքինություններեն մեկը չլիներ և չգիտենար սանձել յուր քաջությունը, կրնար միանակուկ ամրոցին տիրանալ, բայց անխոհեմ բան մը չընելու համար նույն զգուշությամբ, որով մտեր էր ներս, իջավ փոքրիկ հեղեղատը և առանց թուփերուն վնասելու ելավ դուրս և շուտ մը իր այծերն ալ հեռացուց հոնկից, ինչպես ագահ մը իր գանձը թաղած տեղեն ամեն ոտից հետք կը ջանա հեռացնել։ Կը մնար իրեն իմանալ, թե ի՞նչ է անունը և ո՞ւմ կը վերաբերեր այդ բերդը։ Ուստի աչքը սկսավ պտտցնել և տեսավ շրջակա բլրո մը ստորոտը քանի մը ցանեցիր տներ և մեկ հատ մը՝ ամենեն հեռավոր. հոն իր փոքրիկ հոտին հետ շտկվեցավ և զանոնք թուփերուն մեջ ցրվելեն վերջ վայելուչ աղա մը

տեսավ տասը-տասներկու տարեկան, որ կասկածոտ աչոք իրեն կը նայեր և պատրաստ էր անհետանալու. պետք էր բան մը զրուցել, և Թորոս տղուն անուշ ձայնով մը՝

— Ջուր մը տո՛ւր ինձի, տղաս, — ըսավ։

— Հիմա,— պատասխանեց տղան և ներս վազեց։

Իսկ Թորոս իբր հոգնած նստավ տունեն քիչ մը հեռու, և երբ տղան երևցավ իր փայտափոր ջրի ամանով, լավ մը խմելեն վերջը՝

— Սիրուն տղեկ,— ըսավ,— աստված քեզ օրհնե, դու որո՞ւ տղան ես։

— Վարոսենց Բաբկենին։

— Քու հայրդ նոր հասավ. այնպես չէ՞։

— Այո՛, դու կը ճանչե՞ս զինքը։

— Իմ շատ բարեկամս է, հիմա ո՞ւր է, նե՞րսն է։

— Այո՛, եթե կ'ուզես, կանչեմ։

— Լա՛վ, կանչե, որդյակ։

Տղան ներս գնաց. և քիչ մը ետքը Բաբկենին խիստ դեմքը երևցավ, որ երբ զԹորոս տեսավ այդ հովվական հագուստով, հեցյալ իր ահագին գավազանին վրա, ըսավ.

— Աստված քեզ օգնական լինի, իշ...

— Բաբկեն հայրիկ,— վրա բերավ Թորոս,— քեզ հետ առանձին խոսել կ'ուզեի։

— Լավ, շատ լավ։ Գրիգո՛ր,— ըսավ տղուն, որ դռան քով կեցեր կը նայեր,— դու ներս գնա.— և երբ տղան հեռացավ՝

— Ինչպե՞ս հոս եկար, իշխանիկս,— ըսավ,— ինչպե՞ս իմ տունս գտար։

— Դիպվածով. միայն ինձի զրուցե, ինչպե՞ս է Եվփիմե, ինչպե՞ս եք դուք։

— Փառք աստուծո, արժանի չէի, Տիրուհին հանգիստ է և ուրախ, ամենքը ողջ-առողջ գտա, իրավ շատ նեղություն քաշեր են իմ երթալես վերջը, իմ խեղճ Շուշիկս որբերը մեծցուցեր է տառապանոք. բայց տղաքը քանի մեծցեր են, հանգստությունը եկեր է. գերության հանգստություն. ինձմե ալ բոլորովին հույսերնին կտրեր են, ննջեցելոց կարգը անցուցեր են։ Բայց դու, իշխանիկս, ի՞նչ կընես աս հովվի հագուստներով. չե՞ս մտներ ներս, իմ տունս չե՞ս պատվեր։

— Բաբկեն, չեմ ուզեր ճանչցվիլ, դու ինձի կրնա՞ս զրուցել, թե ինչ է սա բերդը։

— Ամուտա բերդն է։

— Ո՞ւմն է. ո՞վ է հիմկու տերն։

— Այս Ամուտա բերդը քու հոյրեղբայրդ՝ Թորոս իշխանը, Ապլղարիպ

Գիրի իշխանին պաբգև տվավ, երբ փռանգները զինքը իր երկրեն զբկեցին հափշտակությամբ և երբ փախստական, անոր տպավինեցավ։ Հիմա մեր գերությենեն վերջը հոռոմ իշխան մը տեր եղեր է բերդին և կը բնակի իր ընտանյոք։

— Ինչչա՞փ բերդապահ կա, կրցա՞ր իմանալ։

— Ոչ, իշխանս, այդ չհարցուցի։ Ե՛կ աս գիշեր մե՛զ մնացիր, մեր տղաքը կուգան՝ տեղն ի տեղ կ'իմանանք։ Թե որ Տիրուհին ետքը իմանա, որ օր մը մինչև այս դուռը եկար, երբ ինք ալ այս մեր տնակը կը բնակեր, և ներս չի մտար, շատ կը տխրի։

— Բաբկեն, տղու պես կը խոսիս. դու գիտես, որ ես նախ մեծ գործը, ետքը ուրիշ ամեն բան դրած եմ. շաբաթ մ'է ճիշտ այսօր, որ ես հարկի տակ չեմ պառկեր վախես, որ չըլլա թե հանկարծ ժամանակեն առաջ մատնվիմ...

— Բաբկենի խոսք վկա՞, թե մարդ չիմանար, թե դու աս գիշեր հոս անցուցեր ես. տղաքս մեկուն խոսք չըբին, քու անունդ անգամ չտվին ան օրեն, ուր իրարմե բաժնվեցանք։ Ես եկա, քանի օր է տնեն դուրս չեմ ելած, որ հանկարծ համբավ չի տարածվի, և հոռոմները չարթնան քու գալուդ համար։ Գրիգոր միայն առաջին անգամ քեզի տվեր է իմ անունը։ Տիկինն ու Դիոնիս գիշերներն միայն դուրս կելնեն օդ շնչելու համար։ Եկ, իշխանիկս, ուրախացո՛ւ Բաբկենի տնակը։

— Լավ, Բաբկեն, քու կամքդ թող կատարվի։

Եվ դռնեն ներս մտավ. Բաբկենի ցցուց ձեռք իր հինգ-վեց այծերը որ կոչածեին. և նա կանչեց զԳրիգոր, որ քշեց բերավ այծերը՝ գոմը փակեց։

Բաբկենի տունը թեև պալատ մը չէր, բայց բնական դիրքովն ու օդով ախորժելի բնակարան մ'էր բլրակի մը ստորոտը շինված, մեկ կողմը ահագին խորաձորի մը վրա կը նայեր, ուր կենդանի ջուր մը ժայռերու վրայեն շառաչմամբ կ'իջներ, բլրակը և տնակը ծածկված էին զանազան պտղատու ծառերու ճյուղերուն և տերևներուն մեջ, և որոնց շուքին տակ գետնեն ութ-տասը կանգուն բարձրությամբ տախտակամած մը կար ընդարձակ, պարզ փայտե նստարաններե շրջապատյալ և վանդակապատ, որ ամառ գիշերներ ննջարանի համար նաև կը ծառայեր այդ տաք երկիրներու մեջ։

Ճիշտ նույն ժամուն ալ Շուշիկ իր երկու աղջկանց և Եվփիմեի հետ տախտին վրա ելած նստած էին։ Եվփիմե իր առնացի զգեստները թողած, յուր սեռինները հագած իրոք թագուհի մը կ'երևեր, և թագուհվո մը պատիվ կ'ընդուներ այդ լեռան բնակիչներեն, որոնց սիրտը իրենց հորը անկարծելի դարձին համար անպատմելի ուրախությամբ և շնորհակալությամբ գեղուն էր, և այդ տիկնոջ համար Թորոսի և իրենց հորը ազատարարը լինելն գիտնալով, երախտագետ ակնածությամբ և հարգանոք կը մոտենային իրեն, իբրև գերագույն էակի մը։ Իսկ Եվփիմե անոնց գեղեցիկ պարզությանց վրա կը զարմանար, այդ սև, լայն, նշաձև աչքերուն կրակը կը դիտեր, որոնց մեջ թեպետ լեռնային ազատության հոգին կը փայլեր, բայց սքանչելի հլության մը ունեին ծնողական հրամանաց, սև ոպնիազե մազերնին բարակ և խիստ հյուսքերը ուսերնին բոլոր կը պատեր, և պարզ գունավոր կտավե հագուստ մը անոնց երկայն և ճոխ հասակին միակ զարդարանքն էր։

Երբ Բաբկեն իր հովիվ ընկերը առած տախտին մոտեցավ, արդեն աբևը քաշված և մութը սկսած ըլլալով հազիվ թե կերպարանքները կ'որոշվեին. ուստի աղջիկներն իրենց հայրը տեսնելով ոտք ելան, Եվփիմե տեսնելով զԲաբկեն, որ անծանոթի մը հետ վեր կ'ելներ, անտարբեր նայված մը ձգեց և դարձյալ աչքերը ջուրին սահանքին վրա դարձուց, երբ միտքը իր Թորոսին վրա կը պտտեր։ Իսկ երբ անծանոթը ձեռքը իր լայն կուրծքին վրա դնելով անձայն ողջունեց և եկավ Եվփիմեի մոտ նստավ, ան ատեն Եվփիմե զայրագին և դիտող աչքերը դարձնելով այս համարձակության վրա, նորա երեսը նայեցավ և զԹորոս տեսավ. փոխվեցավ բոլորովին և ուրախությամբ ցատկեց ու վիզը փաթթվելով՝

— Այս ի՞նչ կերպարանք է, —կ'ըսեր,— այս ի՞նչ փոփոխություն։

Իսկ Թորոս կատակելով իրեն կըսեր, թե՝ «պետք էր մոռնալ ազնվապետական գաղափարները, որ Տորոսի ռամկական և ազատ լեռանց վրա ազդեցություն չունեին, և թե երբ Եվփիմե անգործ նստած էր, ինք Թորոս այծ արածելով՝ գիշերները բացօթյա կ'անցներ»։

— Կատակը մեկդի՛, ինչչա՞փ ժամանակ դեռ աս կյանքը պիտի տևե։

— Դեռ մինչև վաղն իրիկուն։

— Անկից վե՞րջը։

— Անկից վերջն զքեզ այս վայրենի լեռանց իշխանուհի պիտի հրատարակեմ։

— Իսկ հիմա՞։

— Կերակուր պիտի ուտեմ քեզի հետ և պիտի երթամ։

— Գիշերո՞վ։

— Գործի մարդուն համար գիշեր և ցերեկ զանազանություն չունին։ Բայց ո՞ւր է Դիոնիս։

— Հոն վարը՝ սա ժայռին վրա նստած կը խորհրդածե ջուրին սահանքը դիտելով։— Հայրի՛կ, հայրի՛կ, ե՛կ։

Սև շուքը շարժեցավ, ելավ և սկսավ դեպի տախտը գալ. և, տեսնելով զԹորոս, յուր ուրախությունը հայտնեց ու նստավ։ Ընտանիքը մեկ կողմեն կ'ամբողջանային, մեծ տղայքն ալ եկան և հարգանոք ողջունեցին զԹորոս

և իրենց ծնողքը։ Բաբկենի ուրախությունը մեծ էր, պատվական մարդը չէր կրնար նստիլ, վասնզի իր իշխանիկը իրեն հյուր էր, և որ իրեն ծանր կը թվեր, կը տեսներ, թե ամբողջ գիշեր մը նաև իր տունը պիտի չկենար։ Բայց տղա տարիքեն սովրած էր իշխաններուն ընդդիմանալ, ուստի ալ չի համարձակեցավ բառ մ'ավելցնել։ Իսկ Թորոս՝ «Բաբկեն հայրիկ,— զրուցեց,— այս տղաքը Սարգիսին տունը գիտե՞ն, կարելի՞ է զինքն հոս բերել տալ հիմա»։

— Հիմա, իշխան. տղա՛ք, մեկերնիդ շուտ մը գնացեք ըսեք Սարգըսին իմ կողմես, որ հոս գա։

Տղուն մեկը թռա՛վ, շուտ մը անհետացավ, երբ աղջիկները տախտին մեջտեղի կախված կանթեղը վառեցին և սեղանը կը պատրաստեին, կերակուրը չեկած Սարգիս եկավ, և ամենքը նստան կերակուրի։ Սեղանին վրա Թորոսի անսովոր զվարթությունը ամենուն սիրտը ուրախությամբ լցուց, և Եվփիմն քանի մը անգամ կրկնեց թե անտարակույս առանց պատճառի չէր իր փեսին այս զվարթությունը։

Երբ սեղանեն ելան, Բաբկեն ամենը հեռացուց տախտեն Թորոսի ակնարկությամբ. Եվփիմն, Դիոնիս, Բաբկեն և Սարգիս միայն մնացին. հոն Թորոս դարձյալ կրկնեց այն հարցմունքը.

— Ամուտա բերդին տերը ո՞վ է։

— Զենոն անունով հույն իշխան մ'է, քեռայր Մամեստիո հույն իշխանին։

— Ինչչա՞փ բերդապահ զինվոր ունի ներսը այդ իշխանը։

— Քսան-քսան և հինգ հոգի մը կ'ելնեն ընդամենը, նույնչափ մ'ալ ծառայք կան, որ թե պետք լինի, կրնան զինվել, և բերդին անառիկ դռիցը և պատերու ամրությանը նայելով, բավական, մանավանդ թե շատ ալ են։

— Լա՛վ,— ըսավ Թորոս,— վաղը մեր հայու տղաքներեն պատրաստ զինյալ քսան հոգի կրնա՞ն ժողովվիլ անձայն, անշշունջ։

— Ես քսան հոգի կրնամ ժողվել։

— Բայց լա՞վ, ընտրյա՞լ և կորովի՞։

— Լա՛վ, ընտրյա՛լ և կորովի՛։

— Կոստանդինեն լուր ունի՞ք։

— Կոստանդին այս առավոտ տղա մը ղրկեր էր ինձի, քու վրադ լուր կը հարցներ և ինձի կ'իմացներ, թե հիսուն չափ մարդիկներով պատրաստ էր երևալու, ե՛րբ և ո՛ր ժամ իրեն լուր ղրկվեր Կարմիր վանաց ավերակները, որուն շրջակայքը կը գտնվեր։

— Վաղը ճիշտ կեսօրին դու հոս գտնվե քու քսան մարդիկներովդ, բայց ոչ ժամ մը առաջ, ոչ ժամ մը ետքը. նույնպես Կոստանդինին ալ լուր

ղրկե նույն ճշտությամբ Ամուտա բերդին մեծ դռան առջև ճիշտ կեսօրին գտնվիլ, բայց ճիշտ։

— Լա՛վ։

— Քեզ տեսնամ, Սարգիս, պետք է ճիշտ լինիլ։

— Իմ ճշտությանս վրա մի՛ կասկածիր, իշխա՛ն, բայց...

— Ի՞նչ։

— Այսինքն, եթե համարձակություն տայիք, այն պիտի ըսեի, թե Ամուտա բերդը վերջի ձգելու բան մ'է։

— Դու պիտի չերթաս Ամուտա բերդին վրա, և Կոստանդին հարձակում պիտի չընե. այլ կեսօրին, ճիշտ կեսօրին հեռվեն իր խմբով մեծ դռան առջև պիտի կանգնի։

Սարգիս ալ պատասխան չի տվավ, և Թորոս ավելցուց.

— Ուրեմն, իմ քաջ Սարգիս, գնա և պատրաստվե։

Երբ Սարգիս գնաց, Բաբկենին դարձավ՝

— Ավելորդ է քեզի ալ զրուցել, թե պատրաստ ինձի պիտի սպասես հոս՝ քուկիններովդ։

— Հայտնի բան է,— պատասխանեց Բաբկեն։

Ան ատեն «Մնաք բարյավ» ըսելով և Եվփիմեի, և ամենուն, իր հովվի գլխարկը և ցուպը առավ, իր այծերը առջև ձգեց և ասորվոց վանքին ճամփան բռնեց, ուր հայ վարդապետը և ասորի մետրապոլիտը սկսեր էին կասկածիլ իր ուշանալուն վրա։ Եվ երբ կեսգիշեր անցած հասավ, դուռը զարկավ, երկայն արարողությունները կատարելով դուռը բացին և ներս առին զինքն ու այծերը։

ԳԼՈՒԽ ԺԳ

ԽԱՉԻ ԴՐՈՇԸ

Առավոտուն ասորվոց վանքին դռները երբ բացվեցան, տասներկու զինյալ մարդիկ ելան դուրս, և առջևեն բոլորովին սպառազեն, արաբ ձիու մը վրա հեծյալ ասպետ մը նոցա կ'առաջնորդեր. իր երկայն հասակը, իր անվեհեր և խոր նայվածքը մեզի հայտնի կ'ընեն, թե ո՞վ էր այդ անձը, որուն խաղալիք մ'էր ձիուն յուրաքանչյուր ծածանմունքը, և որ արդեն իրրև լեռներուն իշխան և տեր կը թվեր իր ընթացքին մեջ։

Լուռումունջ կընթանային ետևեն տասներկու երիտասարդները, այն Սև լեռան խորդուբորդ ճամփաներուն վրայեն. երիտասարդը գրեթե մոռ-

ցած էր թե իրեն հետևող մարդիկ կային, որոնց ճակտին քրտինք կը վազեր, բայց ոչ հոգնած կ'երևեին և ոչ լքյալ։ Սակայն երբեմն իրենց քաջալերիչ աչք մը կը նետեր առանց ընթացքը երբեք ընդհատելու. երբեմն նաև առանց արհամարհանաց և մանավանդ թե բարեգութ խերպիվ մը՝ «ո՛վ որ հոգնած է ձեզմե, տղաք, թո՛ղ տուն դառնա» կ'ըսեր։ Բայց ոչ ոք այս հորդորանաց հնազանդելու պատրաստություն կը ցուցներ, և ամենքը հաստատ և փորձի իր ճամփան կը շարունակեր։

Երեք ժամ միակերպ այս ընթացքը շարունակելեն վերջ, մեր տատիրը, որ Թորոս ինքն էր, ժայռերու և թուփերու մեջ կեցավ, ձեռն վար ցատկեց և հանձնելով զայն ուղղոց մեկուն՝ «դուք հա՝ առ ուղ պետք է ապասեք,— ըսավ,— մինչև որ փոքրիկ տասը-տասներկու տարեկան ուղեկ մը ձեզի գա և ճերմակ գլուխկ մը ցույց տա. հետևեցեք անոր անկասկած»։ Այս խոսքերն ընելով սրացավ և մեծաքայլ իջավ լեռնեն վար, շտկվեցավ Բաբկենին տունը, ուր առջի իրիկուն զինքը տեսած էինք։ Երբ դռնեն ներս մտավ, ծառերուն տակ երեք-երեք, չորս-չորս զինյալ երիտասարդներ ցրված էին. ոմանք նստած, ոմանք ընկողմանյալ, և երբ զինքը տեսան, ամենքը ցատկեցին ոտք ելան իբրև թե անհերևույթ զորությունեն մը ցնցյալ։ Ամենեին իր պարզ ձևը առանց փոխելու, մեջերնին կեցավ, իր կենդանի աչքերը ամեն աչքերու մեջ մը պտտցուց, Սարգիս, Բաբկեն և Տորոսի ճամփորդության ընկերները ամենքը տեսավ, նաև տեսնելը, որ առաջին անգամ կը նշմարեր։ «Հայու տղա՛ք, Թորան եմ ես՝ Վասեի որդի, ես բանտեն, ջղթանելե ազատած եկա ձեր մեջ, բայց ձեզ ալ կը տեսնեմ, որ գերության մեջ կը հեծեք. մեր հայրերը այդ գերությենեն ազատելու համար իրենց Հայաստանի դաշտերն ու քաղաքները թողին և աս լեռները եկան. թե որ գերությունը նախատինք էր, օտարության մեջ նույն վիճակին մատնվիլ՝ այդ՝ նախատանաց անտանելի է. ես ուրեմն եկա, որ ձեզի հետ այս գերության, ամոթո և նախատանաց շղթաները կոտրեմ. ո՛վ որ ինձի պես սրտին մեջ այդ փափագը կ'ունա և մահվընե չի վախնար, թո՛ղ ետևես գա, լուռումունջ ինձի հետևե, և ես ի՞նչ որ ընեմ, նույնը ընե՛»։

Ամենքը շարվեցան կարգավ և լռությամբ իրեն կը նայեին։ Բաբկենին ակնարկ ըրավ Թորոս և կամաց ձայնով մը հրամաններ տալեն վերջը, ուսեսավ Եվփիմե, որ տանջաց վրա փեցած իրեն կը նայեր, գլխով զինքը բարեևց. երբ տեսավ արանալ, ամենքը՝ քսան և հինգի շափ երիտասարդք իր ետևեն գացին, ու մինք Ամուտա ամրոցին տեսանելի կողմը վերելակեցք։

Ամառվան տաք օրերն էին, և կեսօրվան ժամանակը շատ մոտ էր. մարդ չի կար դրսը ամենեին. ուստի մեր գրեպտոները մեկուն չի հանդիպեցան, բայց արդեն շատերը գայթակղած էին իրենց զորապարեն

հանդուգն ձեռնարկության և տղայական խաղու մը տեղ կը դնեին. այս ընթացքը գիտեն, որ շատ երկայն չի կրնար քշել. բայց տեսնելով զՄարգիս, որ անմոռուշ և լուրջ հավատով իշխանին կը հետևեր, նույնը ամենը միաժամանակ կատարեցին, մինչև Թորոս իր թուփերուն առջև հասավ, հոն առանց խոսելու սրուն օգնությամբ թուփերը մեկդի ընելով, երբ գետին պատկեցավ և քիչ-քիչ զգուշությամբ ծակեն ներս մտավ և անհետացավ, ամենքը զարմացան մնացին, ահա Սարգիս ալ նույնպես և անոր ետևեն ութ, տասը, քսան, և բոլոր խումբը ներս մտան։

Վերջի մտնողները երբ հասան, ծառատունկին մեջտեղը կեցած էր Թորոս և անխոով իրեններուն կ'սպասեր, դարձավ. «Տղա՛ք,— ըսավ,— անօգուտ արյուն-եղեռն է. ո՛վ որ անզեն և անդիմադիր մեկուն զենք վերցնե, մարդասպան է և վատ. եկեք ուրեմն»։ Կեսօրը արդեն քիչ մ'ալ անցեր էր, ուստի երբ հարձակեցավ Թորոս սպառազեն, և իր զինյալ մարդկանց ընթացքը բնակարանին դռան առջև լսվեցան, իրենց զենքերուն փայլը տեսնվեցավ, վայնասուն և աղաղակ մը փրթավ. պահապանք և զորավարք զենքի կը դիմեին. կանայք և տղայք կուլային, կը ողբային և կը ճչեին. դռներ, վանդակներ, փեղկեր շառաչմամբ կը գոցվեին. վերջապես սոսկալի շփոթություն մը տիրեց բնակարանին մեջ։ Իսկ Թորոս անխոով, Մարգարին հրաման տվավ բերդին մեծ դռան վրա վազել, քանի մ'ընկերով բանալ, և Կոստանդնի զորքը թե որ հասած էին՝ ներս առնուլ ու բերդեն ողջ մարդ ամենեին դուրս չի թողուլ։ Իրոք Սարգիս հաջողեցավ դուռը գտնել և քանի մը պահապաններն, որ հոն կեցեր էին, սպաննել և զինաթափ ընել. բայց Կոստանդին չի կար. ուստի ինք հոն սպասելու հետ եղավ. իսկ Թորոս առանց ժամանակ կորանցնելու հարձակեցավ բնակարանին դռանը, մեկ-երկու զինվոր, որ իրեն դեմ կը խիզախեին, յուր սոսկալի սուրին հատվածով գետինը փռեց և շարունակ ահագին ձայնով կը գոչեր, թե՝ «Ո՞վ որ անձնատուր լիներ, անոր մահ չի կար. վա՛յ դեմ դնողին», բայց ներսի աղաղակները ավելի կը բարձրանային. ամեն դուռ, ամեն ռանդուխ, ամեն սրահ, ամեն պատուհան կռվի տեղ եղած էր. վահան, նիզակ, սուր, կացին ամեն տեղ կը շողար. հերարձակ և կիսազգեստ կատաղի կանայք՝ պատուհաններե ձեռվնին եկածը կը նետեին. հոռոմ իշխանը հանկարծակի վախեն և ընտանյաց վտանգեն խենթեցած՝ ներքնաբերդին դռանը նեղ սրահին առջև կանգնած սուր մը և վահան ձեռքը հուսահատաբար կը կռվեր, և արդեն քանի մը հոգի Թորոսիններեն այս կատաղության զոհ ինկած էին, երբ Թորոս ինք վրա եկավ և հրավիրեց թողուլ զենքը ու անձնատուր լինիլ. ասոր պատասխան իշխանին սուրը շողաց, որուն ընդդեմ՝ կայծակի պես Թորոսի սուրը, որ թշնամի թուրը թռուց, և անզեն հոռոմը Թորոսի զինվորները բռնեցին ու կապեցին։

Ան միջոցին համրոցը կը խուժեին Կոստանդին իրեններով և Բաբկեն ասորիներով. պարտեզը լցվեցավ պատերազմողաց բազմությամբ, զոր երբ տեսան հունաց մնացյալ պահապանք՝ զենքերը թողլով անձնատուր կը լինեին, կանանց հուսահատ կատաղության լքում հաջորդեց, և Թորոս Բաբկենին հրամայեց կանայք և տղաք սենյակ մը փակել և զինվորաց հրամայեց բոլոր ամրությունները գրավել, դիակները վերցնել, արյան նշանները մաքրել. երբ ամեն բան կարգի մտավ, Բաբկեն տեսնելվեցավ, որ իր տղոց մեկուն օգնությամբ եկած ներքնաբերդին տանյաց վրա, հունական արծվեկիր դրոշը վար ձգեր և տեղը Ռուբինյան խաչակիր դրոշը կը հաստատեր։ Բոլոր բազմությունը ան տեսնելուն ուրախության աղաղակներով օդը կը լեցներ, որոնց արձագանքը լեռնելեռ տարածվելով՝ շրջակա բնակիչք՝ արք, կանայք և տղայք այս խաչակիր դրոշակին փոխարեն ուրախության աղաղակավ ու խաչակնքելով, երկինք նայելով աստուծո շնորհակալությամբ ողջույն կուտային, ծերերն ու պառավները կուլային։ Եվ ահա գեղեցիկ տիկին մը բեհեղյա ոսկեթել զգեստներ հագված, արաբ ձիուն վրա հեծած, Բաբկենի կինն ու աղջիկները եկան, կը մտներ բերդին դռնեն ներս. ամենքը հարգանոք կը շարվեին իր առջև, զենքերը կը խոնարհեին, և զինք ճանչցող, չի ճանչցող երևակայելով, թե Թորոսի էր նա, համակիր աղաղակներն կը կրկնեին, երբ նա իբր թագուհի մը՝ իր ժողովուրդը սիրալիր կը բարևեր։ Թորոս զինք դիմավորեց՝ ձիեն վար առավ և հոն ներքնաբերդին դռանն առջև ամենուն, որ դիմած էին ամրոցն ի վեր խուժելով, նշան ըրավ, թե կ'ուզեր խոսիլ. «Ո՞վ հայեր, ո՞վ իմ ազգս, Լեռնի որդին Թորոսն է, որ ձեզի կը խոսի. աստված ի՞նք բանտին դռները բացավ և զիս հոս բերավ, որպեսզի ձեզի ալ օգնեմ, հայկական գերությունը և նախատինքը մեկտեղ ջնջեմք և այդ ազատ լեռներուն վրա ազատ մարդիկ միայն երևանք։ Աստված, որ ամեն ձեռնարկություն մինչև այսօրս ինձի հաջողեց, անտարակույս իմ բոլոր փափագներս պիտի լեցնե և այս լեռներուն գլխեն մինչև ծով մեզի նոր Հայաստան մը պիտի շնորհե. միայն թե գիտնանք սիրով և միաբան լինիլ, իրարու օգնել. անարգ նախանձ և պզտիկ սիրտ չունենալ. մեր անձնական շահուն հասարակաց օգուտը նախադասել։ Կինը, որ հոս քովս կը տեսնեք, որ իմ ազատությանս առաջին գործիքն եղավ, այս՝ իմ հորս սուրը ձեռքս տվավ, մինչև այսօր իմ փախստյանս բոլոր վտանգներուն անբաժան մասնակից եղավ, ահա ձեզի կը ներկայացնեմ, անոր պատիվը իմ և ձեր պատիվն է, ինչպես ձեր մարց, կանանց և զավակաց պատիվը իմս է...»։

Ուրախության և «ապրի՞»-ներու աղաղակներ ու երդումներ իր ձայնը ծածկեցին, և բոլոր ժողովուրդը զԹորոս իր քաջությունը և իր իմաստությունը կը պատմեին և, ինչպես սովորություն է, շատ մը չափազանցական վրադիրներ դնողներ ալ կը գտնվեին. յուրաքանչյուրն յուր տեղ սկսան ցրվիլ, և փողահարները ամեն լեռան և բլրոց գլուխները կ'ընթանային զենքի կոչելու հայ ժողովուրդը, որովհետև Թորոս՝ Լեռնի որդին, զիրենք կը հրավիրեր Ամուտա բերդին ստորոտը, որու վրա հայկական խաչադրոշը կը ծածաներ։

Իսկ երբ ժողովուրդը ցրվեցան գնացին, Թորոս զվարթ կերպարանքով, պարզ ճակատով բոլոր զորաց առջին՝

— Բաբկեն հայրիկ,— ըսավ,— այս բերդը, որ տեր չունի հիմա, վասնզի Ապլղարիպ չի կա, ըստ դրացության իրավանց՝ տերը դու ես իր բոլոր կալվածներով, մենք, որ քու հյուրդ ենք, ամենիս ալ, շատերնիս հեռու տեղվանքներե եկած, կեսօրը անցած լինելուն անոթի, ծարավ կը ջարդվինք, մեր այս վիճակին ճար և ճարակ քեզմե կսպասենք։

— Տե՛ր մեր և իշխան,— ըսավ Բաբկեն աչքերը լցվելով և Թորոսի խոսքին մեջ տեսնելով իր այնչափ տարվան հավատարմության վարձատրությունը,— ի՞նչ որ կա, ամենն ալ ձերն է, ինչպես որ գիտեք, թե ես ալ ձերն եմ, եղած եմ և պիտի ըլլամ միշտ. տեսնենք ուրեմն, թե աս հոռոմները մեզի համար ի՞նչ պատրաստեր են, և վայելեմք։

Մեկեն Բաբկեն հրամայեց հույն իշխանին տնտեսը առջևը բերել և կապանքը քակել, խոստացավ իրեն, թե որ հավատարմությամբ ծառայե և թե որ իր հյուրերը զոհ ընե, վարձատրություն և ազատություն։ Նույնպես Շուշիկ տիկին՝ շուտ մը իր տանտիկին սովորությամբ և աղջկանց հետ թևերը սոթտեց և գործին գլուխը անցավ։ Հորթ, ոչխար, այծ և հավ կը մորթվեին, կը խորվեին, իրակներու մուխը երկինք կը բարձրանար, գինվո կարասներ կը պարպվեին, դաս-դաս հայ զինվորը բերդին գլխեն Կիլիկիո դաշտին ընդարձակության հանդիսատես այսօր և վաղը տեր՝ կ'ուտեր, կը խմեր, կ'երգեր, կը զվարճանար։

Իսկ Թորոս միշտ արթուն, միշտ անկարելին, նաև մտածող, իբրև թե զվարճության համար, բայց բուն դիտելու համար զինվորին բարոյական և նյութական վիճակը, պահպանության կետերը կ'ելներ պտտելու հետն առած Կոստանդին, Սարգիս և քանի մը գյուղապետներ, որ կամավ եկեր իրանվեր էին զորաց խումբին հետ և առանց պատերազմի հաղթության մասնակից էին, բայց որոնց համար երկրորդ օրը խիստ և հարատև աշխատություն կար, երկրին կատարյալ ազատության համար հոն Թորոս, որ իր սրամտության և քաջության փորձը անոնց քանի մը հատին ցցուցեր էր քանի մը շաբաթվան մեջ, միշտ Կոստանդնի հետ խոսելով՝ «լավ,— կ'ըսեր,— պետք է զինվորը ուրախ լինի. բայց հոս պետք էր պահապան դնել, հոս պետք էր դետ մ'ունենալ, հոս այս դուռն ամրացնել», և այս-

պես կը շարունակեր յոգ այցելութիւնը։ Իրարու երես կը նայէին, և Կոստանդին, որ նորա հոգն ու հոգեղբարը ծառայած և քանի մը օր առաջ ինքնիրեն կը մտմտար երբեմն Թորոսի արարքներուն, հիմա ամէն ըրածներուն գլխով և աչքով իրավացի լինելն կը հաստատեր և այցելութենեն վերջը Թորոս դարձավ հոն, ուր իրենց կ'սպասեր սեղանը։

— Իշխան մեր,— ըսավ Կոստանդին,— ներե՛, որ երթամ ձեր արդար դիտողութիւնները գործադրեմ, և ներե՛ մեր պակասութեանց, որ անկարծելի հաղթութեան ուրախ հետեւանքն եղան, հաղթութեան, որուն բոլոր արժանիքը ձերն է միայն։

— Ոչ ոք միայնակ հաղթութեան չի կրնար տանիլ,— պատասխանեց Թորոս,— հետին հիվանդապահ զինվորը մասնակից է մեր հաղթութեանց, և մենք եղածը գործողութեանց սկիզբն պիտի համարենք, իշխան Կոստանդին, գնա և շուտով դարձիր, որպէսզի անոթի չի մնանք։

Ցեղանին գլուխը նստած էր Եվփիմե, Թորոսի քով, Շուշիկ իր կերակրոց հանդերձանքներուն զբաղած չէր երևար, բայց Բարկենին աղջիկները իրենց տիրուհիին հետ նստած անոր կը ծառայեին. նույն միջոցին և հագիվ թե նստեր էին, մեր Կիպրոսի վանուց վանահայր վարդապետը ջորվո մը վրա հեծած, կեսօրվան արևուն բոլոր ճառագայթներեն այրած և մրկած՝ կը հասներ, և ուրախութիւնը ավելցավ, երբ տեսավ, թե ճիշտ ժամանակին և սեղանի մը սիրտը կը հասներ։

— Բարի եկա՛ր, հայր սուրբ, մեր սեղանը օրհնելու,— կանչեց Թորոս։

— Ինչ եղանների վիճակ վարդապետի մը համար,— կ'ըսեր բաղմական մը ծիծաղելով։

— Այո՛, մանավանդ ան վարդապետին համար, որ մեզ արքայաբար հյուրընկալելեն վերջը մեր փախստական և թաքթաքուն վիճակին մեջ, մեր նավուն ղեկավարը նաև գիտեր լինել, նեղ ժամանակին և իր կյանքը վտանգի մեջ դնել նաև Կիլիկիո ափափայից վրա տաժանելի ուղեգնացութեանց մեջ։ Պետք չէ մոռնալ, թե որովայնապարար և խաբեբա եկեղեցականաց քով կան գործունյա և աշխատասեր եկեղեցականք ալ, որ իրենց ազգը և ժողովուրդը կը սիրեն և գիտեն նաև զիրենք անոնց համար զոհել. անոնց սեղանն ալ, պատիվն ալ, ատոհանն ալ...

Դեռ խոսք չէր լմնցուցեր, որ զինվորաց խումբը միաձայն Ռուբենի երգը կ'երգեր, Ռուբենի անվան տեղ Թորոսինը դնելով։

ԵՐԳ ՌՈՒԲԵՆԻ

Ի դառն հողմոց արտասահման հայրենական մեր երկրեն,
Ծառայ դաշտեր՝ Սև լեռներու պանդուխտ եղանք տարաղմ.
Ցի խար Մովսես, ոչ զորավար և սյուն լուսո ուղեցույց,
Մեզ զորավար և սյուն լուսո արքայական արմատեն՝
Ընձյուղ պատվո՝ հույս ծագեցավ քաջն ու արին մեզ Ռուբեն։

Հայկա տոհոց աղեղանց լարք թուլցեր էին և թևեր,
Վահան, սուսեր, նիզակ և տեգ անկյան կային ժանգոտեր.
Հայրն անուն վատթարացյալ՝ Էրմեն[1] ոչ ոք կ'անվաներ,
Մինչ մեր անշուք անկյալ փառաց արքայական արմատեն
Ընձյուղ փառաց՝ լույս ծագեցավ քաջն և արին մեզ Ռուբեն։

Մեր այգիներն փուչ բուսուցին, դարձավ քացախ մեր գինին,
Ուրախութիւն հաղածեցավ, և սուգ տիրեց սրտերին.
Հարսի հարսին, փեսի ձայնին փոխան բուեր ողբացին,
Մինչ կործանյալ ավերակաց արքունական արմատեն՝
Ընձյուղ դալար՝ հույս ծագեցավ քաջն և արին մեզ Ռուբեն։

Մեր այգիներն ոսկի ողկույզ, անուշ գինի կը հասեն,
Մեր աղջիկներն քաղցր ձայնիվ և գնարիվ գեղգեղեն.
Մեր կարիներ ազատության զեն և սուսեր ըշկահեն,
Չի կործանյալ մեր գահույից արքայական արմատեն՝
Ընձյուղ դալար՝ հույս ծագեցավ քաջակորովն մեզ Ռուբեն։

ԳԼՈՒԽ ԺԹ

ԹԵ ԻՆՉՊԵ՞Ս ԿՍԿԱՍԻ ԿԱՔՄՎԵԼ ԹՈՐՈՍԻ ԵՐԿԻՐԸ

Դեռ արևը չէր ծագած, Թորոս Ճամուտա բերդին իշխանական տեղյակները կը հանդիպեր իր այնչափ օրվան հոգնութենեն, դեռ ամրոցին դռները չէին բացված, երբ բյուրավորաց բազմություն մը ծածկեր էր լեռ, բլուր, դաշտ. զենքերը կը փայլեին, ցիցակիր դրոշներ կը պարզեին և մարդկային ձայնը ծովու հեռավոր ձայնին պես կը բարձրանար դեպ Հմամուտա դղյակը։

Անհամբեր երիտասարդությունը ապրիներու, ձիացեներու աղաղակներով երբեմն կը որոտար, և ժողովուրդը խումբ-խումբ նստած, ազա-

[1] Էրմեն, թարգմանի այր մարդ, արի մարդ։

թության և ուրախության անցյալ օրերուն հիշատակները կը նորոգեր, մինչև որ ամրոցին դռները բացվեցան, և Թորոս շրջապատյալ իր քաջերեն իջավ ժողովրդյան քով. հոն քանի մը խոսք զրուցելեն վերջը ծեր և փորձ զինվորաց և գյուղապետաց հրամայեց, որ գյուղ-գյուղ իրենց հարյուրապետներն ընտրեն և իրեն ներկայացնեն. շուտ մը ընտրություններ եղան, և առանց վայրկյան մը կորսնցնելու, այն բոլոր բազմությամբ հարձակեցան Վահկա հայրենական բերդին վրա, ուր փոքրիկ խումբ հունաց ավազակաբար կ'ապրեին Լևոնի անկմանեն ի վեր. որք, երբ տեսան այն ահագին բազմությունը՝ շփոթած կը նայեին, թե ե՞րբ և ինչպե՞ս այն սմքած հայերը կրցեր էին գլուխ վերցնել։ Իսկ Թորոս յուր դեսպանը արդեն իր հետ բերած էր։ Ամուտա բերդին բերդապահներեն խարդախ, շտահասեր, ճոռոմարան մարդ մը ընտրած էր, որու ոչ թե միայն ազատություն, այլ նաև հարստություն և գանձ խոստացեր էր թե որ կարենար համոզել բերդակալը՝ բերդը տալու առանց պատերազմի, և գաղտնի վարձք ալ խոստանալով կ'ավելցներ, որ, եթե դիմադրությամբ և արյունահեղությամբ առնվեր բերդը, երդում կ'ըներ իր նախահարց վրա, թե իրմե գթության պետք չէր ոք սպասեր։

Ուստի հույն պատգամավորը, երբ գնաց և հայտնի ու գաղտնի պատգամները կատարեց, բերդակալը ժողովք մը ըրավ. Ամուտա բերդին սքանչելյոք առումը, վախն ու վարձքը, պաշարի պակասությունը, ռոճիկներու չհասնիլը, պահապանաց թվույն սակավությունը բավական պատճառ եղան բերդը հանձնելու Թորոսի։ Նույն իրիկուն բերդին դռները բացվեցան ու բանալիները տրվեցան Թորոսի, որ հաղթանակավ իր հարցը բուն ժառանգության բնակարանը կը մտներ և կը տիրանար. մեկին պետք եղած հրամանները տրվեցան նորոգության համար, որ հոն հաստատվի ինք, և ան գիշեր իր բոլոր խումբերը կը բաժներ ընդ ձեռամբ Բաբկենի, Կոստանդնի և Սարգսի զանազան բերդերու վրա. իսկ ինք ընտրանյոք երեք հազար մարդ հետն առած, ճամփա կ'ելներ ուղղակի Մամեստիո վրա, ուր կայսեր կուսակալը կը նստեր. առավոտ չեղած իր զորքերը հոն հասան, ուր իր անվան երկյուղը արդեն իրմեն առաջ հասեր էր։

Հետն էր նաև կապանոք Ամուտա բերդակալ իշխանը, փեսա Մամեստիո կուսակալին, զոր կանչեց Թորոս յուր առջև և հետը քաղցրությամբ խոսեցավ. խոստացավ իրեն Ամուտա բերդին յուր բոլոր ստացվածքը, զավկները, կինը, ծառայքը, ամենն ալ ողջ ամբողջ դարձնել թե որ կարենա համոզել յուր խնամին, նույնպես կը խոստանար Մամեստիո իշխանին ամեն դյուրություն, ազատ երթալու իր բոլոր ընտանյոք և զորքերով, միայն թե խաղաղությամբ իր ձեռքն հանձներ քաղաքը։ Իսկ,

ընդհակառակն, եթե պարտավորեր պատերազմի սկսիլ, պետք էին որոշ գիտենալ հոռոմք, որ առջի թափված արյան կաթիլին՝ հրաման պիտի ղրկեր տանելու ծախելու Հալապու ամիրային կինն ալ, զավկներն ալ և ամեն ծառաները, որ բերդին մեջ կալանավոր էին։ Եվ ա՛լ անկից վերջ դաշինքի ու գթության չսպասեին իրմեն։ Երեք ժամու չափ միջոց տվավ իրեն և հուղարկեց։

Բայց Թորոս ան մարդիկներեն էր, որ պարապ ժամ անցունել չեն գիտեր. ուստի զորաց երրորդ մասը գենքի վրա պատրաստ՝ քաղքին դռան առջև ճակատեցնելով, մյուս երկու մասին հրամայեց գոց խրամը փորել. ինք գլխունուն վերև կեցած կը ցուցներ, կ'աշխատեր և իր օրինակավը ամենքը կը քաջալերեր, և աս գործողության հանդիսատես ու մասնակից կ'ըներ բոլոր հոռոմ գերիներն, որ բռնված, բանակը բերված էին, գաղտնի ապսպրելով իր զորաց, որ եթե ոմանք մեջերնեն քաղաք փախչելու փորձ ընեն, թո՛ղ տան և աչք գոցեն։

Թորոսի բոլոր փափագն այն էր, որ առանց արյան, ճապաղյաց և արագությամբ գործը լմնցնե, ժամանակ չի տա թշնամվույն ուշաբերելու, լասնդի գիտեր, թե առաջի արհավիրքը մարդկանց սրտին վրա ինչչա՛փ զորավոր է. ուստի իր զորաց մեջ վերջի աստիճանի գործունեություն մը էր տիրեր. հյուսները բոլոր սանդուխ շինելու զբաղած էին, խումբ մը զինվոր դեռ՝ Տարսոնի ճամփուն վրա կ'սպասեին, որ օգնություն թե գար քաղքին՝ ժամանակին դիմավորեին. բոլոր Սև լեռը հրաման գնացած էր քանի մը օրվան պաշար հասցնելու բանակին. ուստի ժողովուրդ՝ արք և կանայք, ծերք և տղայք, որ պատերազմի չէին եկած՝ գունդագունդ ունեցածն կը բերեին, և երեկո չեղած բանակը առատությամբ լցվեցավ։

Մամեստիո իշխանը ձայն չէր տար, Ամուտա իշխանը չէր երևար, ուստի Թորոս քաղքին դիրքը լավ մը քննելեն վերջ, անձամբ բոլոր փախրստյան ճամփաները գոցեց, լաստափայտ մը Բիռամոս գետին վրա իջեցուց, որպեսզի քաղքին ամեն հաղորդակցությունքը կտրե։ Երբ իրեն յուր տվին, թե գերի հոռոմոց մեկ քանի հատը քաղաք փախչիլ հաջողեր էին, սպասեց։ Եվ իր հույսը պարապ չելավ, վասնզի քաղքին դռները բացվեցան, և պատգամավոր մը երևցավ, որ դաշնադրության կ'ուզեր մտնել. կայսեր կողմեն Թորոսի ներումն, Ամուտա բերդը իրեն թողուլ՝ Սև լեռան բնակչաց տարվան մը հարկաց թողություն կը խոստանար, միայն թե բանակը վերցներ ու երթար, և իշխանին կինը ու զավակները դարձներ։ Թորոս այս պատգամները հանդարտությամբ մտիկ ընելեն վերջ՝ «Ամուտա ամբոցը առնողին շատ ավելի դյուրին է Մամեստիա առնուլ. միայն կը ցավիմ,— ըսավ,— որ փուճ տեղ արյուն պիտի թափի, բայց արյունը ձեր իշխանին գլուխը լինի, ես անպարտ եմ, ես իմ

հայրենի ծառանգությունս եկեր եմ առնելու, իմ իրավունքս պահանջելու, վա՜յ անոնց, որ իրենց վիճակին անգետ՝ դաշնադրության եկած են ինձի հետ. թե որ Մամեստիան ալ, ինչպես տարակույս չունիմ, Ամուտա բերդին պես առնվի. ես չեմ կրնար արգիլեր զորացս, որ անգթությունք չի կատարվին։ Վասնզի երկայն տարիներու վրեժխնդրությունք գիզված են սրտերու մեջ և վախեմ թե զեղանին։ Վաղը արևուն հետ պատերազմ կ՝սկսի. այսպես գնացեք ըսեք ձեր տիրոջ»։

Ինք մեծ հույս ուներ, թե երկրորդ առավոտուն քաղաքը անձնատուր լինի, վասնզի ժամանակ չէր տված պաշար ունենալու, վասնզի միայն ի հունաց բնակյալ չէր, այլ բավական հայ ժողովուրդ ալ կար, որ կրնար խռովություն մը հանել, և մեկ մ՝ալ, որ Ամուտա իշխանը իր դժբախտությամբ կրնար մեծ ազդեցություն գործադրել Մամեստիո կուսակալին վրա։ Դուքսի հետ ամեն հաղորդակցություն արգիլելովն կը հուսար, որ վախը ավելի սաստկացնե։ Պաշարյալք գիշերվան վրա հույս ունեին, որ կարենան սուրհանդակ մը թուցնել ի Տարսոն, բայց թե գետին վրայեն և թե ցամաքեն թղթատար մը հանելու փորձը անկարելի եղավ, վասնզի արթուն պահապանք խստիվ ամեն ճամփաները բռնած էին։

Երբ առտու եղավ, արշալույսին հետ Թորոս կ՝սպասեր պատգամավորի մը, որ չէր երևար, ուստի աղեղնավորաց և պարսավորաց ընտիր խումբ մը շարեց պարսպին ան կողմերը, որ հարմար էին սանդուխներ կոթնցնելու, որպեսզի պարսպին վրա գտնվողները մեկդի վարեն, որ արգելք չլինեին անոնց, որ վերելակել պիտի փորձեին, և որոնց գլուխ կանգնել որոշած էր մտքեն. իսկ խրամին համար ալ խումբ մը գործավորք անխոնջ կ՝աշխատեին, երբ քաղքին դռները բացվեցան, և պատգամավորք երևցան։ Այս անգամ հունական գոռոզությունն եթե խոնարհած ալ չէր՝ գոնե տեղի կուտար։ Ամուտա իշխանն էր պատգամավորաց գլուխ, որ կ՝իմացներ թե Մամեստիո կուսակալը հանձն կառնուր քաղաքը տալ այն դաշինքներն ընդունելով, զորս առաջարկած էր Թորոս։ Ուստի շուտ մը հրամանը ղրկեց Թորոս Ամուտա ամրոցը՝ բերելու իշխանին ընտանիքը և ամեն ստացվածքը. նույնպես ամեն թույլտվություն ըրավ կուսակալին, որ տհագին կարավանավ մը քիչ ատենեն երևցավ իր պահապաններով և, ընտանիքով և ամեն ինչքերով, որ կրնար տանիլ։ Լավ ընդունելություն ըրավ Թորոս և ամենայն դրություն տվավ իրեն ու մեկեն տիրացավ քաղքին, վասնզի, ինչպես խրավամբ կը կասկածեր, իրեն ղրկած լրտեսները քիչ մը վերջը լուր բերին, թե Տարսոնի կուսակալը արդեն ճամփա ելած էր իր բոլոր զորությամբ Մամեստիո օգնության հասնելու և ամեն տեղ հույն և կայսեր հնազանդ հայ իշխանաց հրաման ղրկած էր, որ գան Ատանա, ժողվվին իրեն քով, ամենեին չի կրնալով երևակայել, թե գոզի պես մտած

կեռ ապուշ երիտասարդ մը, ինչպես իրեն կը նկարագրեին Կոստանդնուպոլսեն եկած թղթերը, բավական զորություն ժողված լիներ իրեն դիմադրելու համար։

Կային շատեր նաև իր բանակին մեջ, որ տեսնելով Մամեստիո կուսակալին իր բոլոր հարստությամբ ազատ երթալը, կը մոմոային, կը հառաչեին և կը մեղադրեին զԹորոս, որ չէր դրժեր խոստմունքին այնպիսի մարդկանց, որ դրժանքը և խաբեությունը պատիվ և հաջողակություն կը համարեին։ Բայց Թորոս հաստատ յուր խոստման, գուշակելով նաև իր շուրջ եղած լռելյայն խորհրդածությունքը, վասնզի ժամանակին ոգին լավ կը ճանչեր, կը քարոզեր, թե ինչ վստահություն, որ ուրիշներուն վրա կը քամահրենք, պետք չէ երբեք ի գործ դնենք։

Եվ Մամեստիա մտնելով, շուտ մը պետք եղած ամրությունները հրամայեց ավելցնել. և ինչպես լավ երևակայեր էր, իմացավ, թե քաղքին անձնատուր լինելուն գլխավոր պատճառներուն մեկն ալ քաղաքին մեջի հայոց խլրտումն եղած էր։ Ուստի նույն օրը զորաց լավ հանգիստ մը տալեն, երեք օրվան պաշար յուրաքանչյուրին բաժնել տալեն և քաղքին պաշտպանությունը Մամեստիո հայոց հանձնելեն վերջ՝ մութն ի լուսուն ճամփա ելավ դեպ Ատանա իր երեք հազար հոգիով, որ ամենեն ընտիրներն էին բոլոր Տորոսի լեռանց. կը հուսար հանկարծակի հասնելով Տարսոնի կուսակալին վրա, քանի՜ որ նիզակակիցներու օգնությամբ չէր զորացած, հաղթություն մը կանգնել և իր համբավը բարձրացնել։

Իր բանակին մեջ հազիվ թե ձիավորաց փոքրիկ խումբ մը կար, մնացյալ բոլորն ալ հետևակ էին, բայց այս հետևակները լեռներու բնակիչ՝ պղնձե սրունքներ ունեին և որ մեծն է, կը տեսնեին Ռուբենի ժառանգը՝ արտաքո կարգի էակ մը իրենց աչքերուն, որ սպառազեն վահան ու բոլոր զենքերն ստանձնյալ ամենուն առջևեն կը քալեր հսկայաբար, իբրև թե իրեն համար խաղալիք լիներին տաժանմունք, վտանգ, արև, փոշի, ծարավ և անոթություն։ Հիրավի այդ զարմանալի զորավոր կազմվածքը, այդ վսեմ նայվածքը, այդ համառոտ և ազդու խոսքերը, այդ կերուխումի ժուժկալ չափավորությունը ամենուն պատկառանք, վստահություն և հպատակություն կ՝ազդեին, որ օրավուր պաշտոնի պիտի դառնար։

Երբ այսպես լռիկ կ՝արշավեր բանակը, և միայն երեք հազար մարդու ոտից տրոփն ի զատ ձայն չէր լսվեր, և ծարավի զինվորը Մարուս գետին հասնելու, իր ծարավը զովացնելու հուսով կարտորաբ, հառաջապահ գունդը, որոնց գլուխն էր Թորոս, կանգ առավ, վասնզի դժբախտ տեսարան մը զինք արգիլեց։ Հայ ջորեպաններու խումբ մը ութ-տասը հոգի, մեռյալ և վիրավոր, ճամփուն վրա արյունլվա ինկած մնացեր էին. հալիմ թե մեկ-երկուքը իյանքի նշան կուտային. պետք եղած դարման-

ներ, քիչ մը գինեխառն ջուր տրվելով, քիչ մը զորացան։ Այն ատեն իմացան, թե Մամեստիոյ իշխանին գունդը այս խեղճերուն հանդիպելով ճամփան վրեժխնդրության ոգվով զիրենք զարկեր սպաններ և վիրավորեր էին և իրենց ցորենաբարձ գրաստներն հափշտակեր տարեր էին։ Քանի մը ձիավոր իջեցնել տվավ Թորոս, իր և անոնց ձիերը տվավ թե վիրավորները և թե մեռելները բեռնավորելու համար, մինչև որ հայու գեղ մը հասան, հոն զանոնք հանձնեց գյուղացվոց, որ թաղելիքը թաղեն, դարմանելիքը դարմանեն, մինչև որ Ատանա ու քաղաքը երևցավ իր ծառաստաններով. այն ատեն ձիավորաց խումբին հրամայեց զգուշությամբ հառաջանցնել և քննել, թե արդյոք ո՞ւր էր թշնամին, և ինք գնտին եզերքը նստավ իր բանակավ, զորքը իրենց աղքատիկ պաշարը հանեցին ու կերան, և ինք Թորոս քանի մը ձիթունով ու կտոր մը պանրով, անոնց պես կը շատանար, և միայն իր ղրկած տեղեկաբեր խումբին կ'սպասեր, որ որոշ լուր մը առնու։

Մեծ եղավ իր ուրախությունը, երբ լուր բերին իր թեթև ձիավորները, թե հունաց բանակը Տարսոնի ճամփուն վրա Ատանայի երկու ժամ մնացած ծառաստաններու տակ կը հանգչեին կեսօրվան արևուն տաքության չենթարկվելու համար։

Անպարիսպ Ատանա մտնել և տիրանալ բան մը չէր և զարմանալի օգուտ չուներ, բայց տարսոնացի զորքին վրա հանկարծուստ հասնիլ, ջարդուբուրդ, ցիրուցան ընել՝ գեղեցիկ և շահավետ գործողություն մ'էր. այս էր, որ զինք կը դրդեր, բայց երբ կը մտածեր, որ զորքը դեռ երկու ժամ ճամփա պիտի քալեին և հանգչած ու դադրած զորաց հետ պիտի կռվեին՝ կը վարաներ. ուստի փորձ մը փորձել մտածեց և զորքը ժողովելով իրենց հետ այս կերպով սկսավ խոսիլ.

«Ո՜վ իմ հայերս, մեկ քանի օրվան մեջ ես ձեր քաջության փորձը արի, կը տեսնեմ, թե տոկուն եք աշխատության և ձեր զորավարաց գիտեք հնազանդիլ, որ զինվորի մը է՛ն մեծ կատարելությունն է. բայց այսօր շատ հոգնեցանք, և ես հարկավոր կը տեսնեմ երթալ գտնել մեր թշնամիները և հունաց զորքին վրա քալիլ, ուզողը թող ետևես գա, մնացյալքդ հանգչեցնք և վերջը մեզի հասեք»։

Այս կարճ, բայց որոշ խոսքերուն վրա աղաղակ մը փրթավ, ամեն ձեռքեր երկնցան, և ամեն ոք իրեն հետ մահվան նաև երթալ հանձն կ'առնուր։ Ուստի առանց ժամանակ կորսնցնելու հրամայեց ճամփա ելնել, և ինք կ'առաջնորդեր տեղեկաբեր հեծելագունդը առջևն ձգած։ Այն եռանդով շուտ մը հասան թշնամվույն բանակը, որ հազիվ դեռ քուն կը թոթափեր և կը խլրտեր. երբ երեք հազար հոգվո աղաղակը օդը թնդացուց, և սուրերը ձեռվնին կատաղի խումբ մը այրած, մրկած, արևեն սևացած՝ սատանաներուն պես նոցա մեջն ինկան և սկսան կոտորել, սոսկալի վայրկյան մը եղավ, ուր նոցա համար վերջին օրն գրեթե հասած կարծեցին։ Բայց նոքա թվով կրկին էին, քան զհայս, ուստի վերջապահ խումբը կրցավ փաղանգ մը կազմել և փախչողներուն պատսպարան լինիլ և ժամանակ տալ, որ ինքզինքին զանեն և խմբվին պատերազմի, այս որ տեսավ Թորոս, քաջակորով խումբ մը իրեն միացուցած՝ ինկավ սաստկությամբ աս փաղանգին վրա, որպեսզի կանոնավորյալ նահանջի մը տեղի չի տա. երկու կողմեն ալ արյունը գետորեն սկսավ վազել, նիզակները կը կոտրտեին, վահաններ կը ջախջախեին, սուրերու բեկորներ կը թռչտեին, մինչև որ դեռակազմ փաղանգը ցրվեցավ, և հունաց խումբերը ցան և ցիր սկսան փախչիլ. իրենց կոտորածը շատ ավելի պիտի լիներ, եթե հայոց խումբը հոգնած չլիներ, բայց Թորոս դարձյալ չի կեցավ, այլ հեծնելով իր արաբ ձիուն վրա, իր ան փոքրիկ հեծելագունդը առած, երկու-երեք ժամու միջոց կը ջարդեր, կը հալածեր փախստականները։ Եվ թերևս չդադրեր ղիրենք հալածելեն մինչև Տարսոնի դռները, եթե հանկարծ ամպի պես փոշի մը երկինք բարձրանալով հեռվանց չիմացներ իրեն, թե հեծելագունդ մեծ խումբ մը օգնության կը հասներ թշնամվույն. աս խումբը, որ Լամբրոնի կողմեն կուգար, կ'իմացներ Թորոսի, թե որոնք էին եկողները, ուստի խոհեմություն սեպեց ետ դառնալ, բավական համարելով եղածը։

Երկու հազարի չափ մարդ կորուսած էր թշնամին. իրեն կորուստն ալ հինգ հարյուրեն ավելի էր՝ մեռած և վիրավոր. մեռյալները պատվով թաղել, վիրավորները այն գիշեր ճամփա հանել, որպեսզի իրենց տունները, իրենց ընտանյաց քով դարմանվին և ցերեկվան արևու ճառագայթներեն չի նեղվին՝ իր առաջին գործն եղավ, նույնպես մեռյալներու ընտանյաց և վիրավորաց ավարին ընտիր մասը նախ բաժին հանեց անոնց, որ իրենց արյունը թափած էին քաջությամբ պատերազմելով։ Անկից վերջը արդարությամբ բաժնեց ավարը պատերազմողաց, իսկ իրեն ամենեին բան մը չի պահելով զարմացուց ամենքը։ Այն գիշերը թշնամվույն բնակած տեղը անցուցին զինվորները։ Երկրորդ առավոտուն կանուխ Ատանա քաղաքը պաշարել տվավ Թորոս և հազար ոսկվո տուրք մը ձգեց քաղքին վրա ժամվան մը միջոց թողլով և երբ պահանջածն առավ, վերցուց բանակը ու եկավ Մամեստիա, ուր տեսավ, թե իրեն կ'սպասեին Բաքկենի հետ Եվփիմե և Դիոնիս։ Եվ փառավոր հաղթանակի մուտք մը իրեն պատրաստեր էին։

Արդեն իր անունը քանի մը օրվան մեջ բոլոր Կիլիկիա և ավելի հեռու տեղվանք սկսեր էր տարածվիլ, ու Լևոնի որդվույն դարձը՝ հայոց ուրախություն և օտարաց երկյուղ դառնալ։

ԱՆԱՐՁԱԲԱ ԿՈՒՍԱԿԱԼԸ

Արտաքո կարգի վիճակ մ'էր այն ատեն Կիլիկիո վիճակը. հայ ժողովուրդ մը Տորոսի լեռներուն մեջ օրավուր կ'ավելնար, վասնզի Հայաստան և Փոքր Ասիա այլակրոնք տիրանալով անտանելի կրնեին հայուն հայրենական, անձնական և կրոնական ազատությունը, հալածանք և գերություն իր և ամենքին բաժինն էին։

Ժողովուրդը, ինչպես ասիական ամեն ժողովուրդք, երբեք չէր երևակայած այնպիսի ազատ կառավարություն մը, ինչպես որ հույնք և հռովմայեցիք իրենց պատմության մեկ ժամանակին կրցեր էին ունենալ և ի գործ դնել՝ և զոր հանրապետություն անվանած էին ի փառս և ի պատիվ հայրենյաց ու մարդկային ազգին։ Մեր եկեղեցական նախնի հայրապետք հազիվ թե քրիստոնեական կրոնից գրքեր ու գաղափարներ թարգմանելու և տարածելու ժամանակ ունեցեր էին, և ազգային պատմության մշուշ համառոտությունը Մովսես Խորենացվո շնորհիվք այնչափ տկար էր ժողովրդյան մտքին մեջ, որ հայ զորավարներ իրենց զորաց քաջալերության օրինակի համար հրեից պատմության դիմելու պարտավորված էին։ Եվ ի՞նչ զարմանք։ Թե որ եվրոպական ժողովուրդք ասկից հարյուր հիսուն տարի առաջ հայրենյաց և ազգության գաղափար հազիվ թե ունեին, ասիական ժողովրդոց համար նույնը երևակայել ասկից յոթը հարյուր տարի առաջ, բոլորովին տղայամտություն կրնա համարվիլ։ Ուստի Տորոսի վրա ժողովված հայուն բազմությունը, ինչպես նաև ժամանակակից օտարազգիք ալ կը վկայեն, երկու կատարելություն ուներ. պատերազմական քաջություն, քրիստոնեական հավատք, ամեն մարդ գինվոր և ամեն մարդ իր հայրենի կրոնին գերին էր։ Իրեն համար ազգային դրոշակ խաչն էր, և իր բոլոր աստվածաբանությունը Լուսավորչա կրոնք անփոփոխ պահպանելն, ուրիշ նրբամիտ ժողովրդոց բաժինն էր իրեն համար կրոնական դավանությանց, արարողությանց և վարդապետությանց համար փոփոխություններ մտցնել, ինք որ պարսից, հունաց և արաբացվոց դեմ իր բոլոր զորությամբ այն յուր կրոնքին պաշտպանության համար ամեն բան զոհած էր, աս մասին անդրդվելի էր։ Ուստի հալածանք սելջուկյանց, հալածանք ամիրապետաց և անթիվ մահմեդական ամիրայից, հալածանք բյուզանդական կայսերաց, հալածանք նաև ի վրաց, զինք քշեր բերեր էին Տորոսի բարձունքը, և հոն կը լեցվեր, կը դիզվեր ամբի պես ժողովուրդը,

որ կարելի չէր թե քիչ-քիչ իբրև վտակ, վերջը իբրև գետ և է՛ն վերջը իբրև հեղեղ չիջներ և դաշտը չողողեր։

Բայց ժողովուրդը միշտ առաջնորդի պետք ուներ, ինչպես ամեն ժողովուրդք ունեցեր են և պիտի ունենան. հավասարություն, որ Սպարտիո օրենսդիրն անգամ չէր երևակայած, անկարելի է, քանի որ բնությունը զմարդիկ հավասար չէ ստեղծած նյութական և մտավորական կատարելությամբք, ուրեմն մեր հայ ժողովուրդը միշտ կը նկատեր երկու տեսակ մարդիկ. իր կրոնական գլուխները, որ զինք միշտ կը հորդորեին Պողոսի հետ «Հնազանդ լինիլ մարմնավոր տերանց» և նախարարական հին սերնդոց պայազատքը, որ իբրև թե փառաց ճաճանչ մը գլխուն վրա կը կրեին, հարդանք, պատիվ և իշխանություն աննախանձ և անուրանալի սեփականություն անձանց համարելով։

Ամեն ամրոց, բերդ, դղյակ, իշխանի մը ստացվածքն էր, որ միշտ Արծրունի, Բագրատունի, Կամսարական, Սյունի, Պահլավունի, Մամիկոնյան և ուրիշ ասոնց նման սերնդոց կը վերաբերեին, որք ազնվականաց բնական առաքինությամբք և թերությամբք առաջ կամ ետ կ'երթային, հօգուտ կամ ի վնաս անձանց և հայության, ժողովուրդը միշտ իր սրտի ձայնին և մտքին համողման հետևելով, այս իշխանաց և բերդակալաց մեջ զանոնք կը վերադասեր, որ առավել ինքնիշխանության և հայրենի հնամանդ կրոնից և սովորությանց պաշտպան էին, և հետևապես իրենց ազգին անհատից։ Ասկից նաև Ռուբինյանց ժողովրդականությունը, որոնք հայության բուն ներկայացուցիչքն էին իր աչքին, մինչև իբրև օտարածին կ'արհամարհեր հունացյալք և լատինացյալք, որք Սեբաստոսության, Տուքության և այլ ուրիշ տիտղոսներով բյուզանդական կայսրեն մեծապատիվ կը վարձատրվեին։

Կային նաև անոնց մեջ այնպիսիները, որ ոչ միայն իրենց ազգին պաշտպանությունը կ'արհամարհեին, այլ օտարաց հաճո լինելու համար իրենց ազգը արհամարհել, և անկից օտարանալն ու զանի հարստահարելն իրենց սովորություն ըրած էին։

Երբ Թորոս, հաղթանակավ և ավարավ, ժողովրդյան ծափահարությամբ և գովասանական երգերով կը մտներ Մամեստիա, իր ամուսինը քովն ունենալով, որուն ազնվական գեղեցկությունը ժողովրդյան աչխույժը կը ոգևորեր, հոն իրարու վրա կը հասնեին իր տեղակալքը. Կոստանդին, որ Բարձր բերդի տիրեր էր, և Սարգիս, որ Սոյուծ բերդն առեր էր, և այսպես իրարու վրա հաջողությունք կրնային ո՛ևիցե գլուխ մը գինեհարել, բայց Թորոսի ուշիմ լրջությունը շատ հեռու էր ինքզինքն կորսնցնելե։ Անոր համար միշտ կը հարցներ և կը տեղեկանար, թե ո՞ւր էր թշնամվույն զորությունը. ի՞նչ դիրք կար, ի՞նչ զորություն կար իրեն վնասակար լի-

նելու։ Քաղքի մը անուն կար իր մտքին մեջ, ժառանգություն հայրենական, ուր իր տղայության մեկ մասը ուրախ, զվարթ անցուցեր էր, բայց կ՚սպասեր, որ ուրիշները զրուցեն և հիշեն։ Վերջապես Կոստանդին զրուցեց. «Թե որ կուզեք աս հողը անպիտան և վնասակար խոտերև մաքրել, պետք է բոլոր զորությամբ Անարզաբա տիրենք»։

— Ո՞վ է անոր կուսակալը։

— Մանավանդ թե ըսենք՝ ո՞վ է անոր տերը, ո՞վ է անոր բռնավորը։

— Ինքիշխան ուրեմն հոն կը տիրե։

— Պապեռոնի տերը, որ հունաց հավատարիմն էր, հորդ գերութենեն վերջը Անարզաբայի կուսակալ եղավ, ես անարզաբացի հայերեն քանի մը հոգի, որ ինձ եկեր էին դողալով, հոս մեկտեղ բերի և իրենց վիճակին ինչ-որ պատմեցին, ինձի զզվանք բերավ. լսեցեք ու դատեցեք։

Այս խոսքերն ըսելով, Կոստանդին հրամայեց իր մարդկանց, որ ներս բերեն անարզաբացիքը։ Ցնցոտիներով ծածկված երեք-չորս հոգի մտան շարվեցան սրահին մեջ, նոցա խոնարհ կերպարանքը, վզերնուն կորությունը, հուսահատ նայվածքը, որ շատ հեռի էին իրենց լեռնաբնակ ազգայնոց խրոխտութենեն, հայտնի կը քարոզեին իրենց վիճակին թշվառությունը։

— Ի՞նչ կ՚ուզեք, ինչո՞ւ եկեր եք մեզի,— հարցուց Թորոս։

— Ո՞վ որդի մեր իշխանին,— ըսավ ծեր քահանա մը մեջերնեն,— տասը տարի է, քանի որ դուք մեզ թողիք գնացիք, տասը անհատնում տարի եղան, որ մենք՝ անարզաբացիքս, խիստ կը չարչարվինք։ Թե որ բռնավորը պարսիկ լիներ, արաբ լիներ, հույն լիներ, խաչ չունի, հավատք չունի, լուսավորիչ չի ճանչեր կ՚ըսեինք, կը համբերեինք, բայց այդպես չէ, այս անիծից ծնունդը ազգավ հայ է, անունով Սմբատ է, ցեղով Մամիկոնյան է կըսե, կը պարծի, Վասակի գործ կը կատարե, հարկ՝ տուրք կ՚առնե, մեզ ու մեր տղաքը անոթի կը մեռցնե, ի՞նք չի կշտանար. մարդ մ՚ունի, որ արդարության համար դատավոր դրած է, դատաստան ուզող չի լա՝ դատ կը հնարե, սուտ վկա կ՚ստեղծե, որ բանտի, պատժո, տուգանքի ճար գտնե, կաշառք առնե, արյուն թափե, չար սիրտը զովացնե. ուրիշ մարդ մ՚ալ ունի, որ աստուծո պաշտոնյա՝ քահանա, վարդապետ, եպիսկոպոս է կըսեն, բայց մենք պճնասեր, արծաթասեր և հեշտասեր տեսանք դինք. այր է կ՚ըսեն, կնկան պես բեհեզներ կը հագնի, սնգուրով ներկված կը տեսնենք։ Պատուհաս քահանայից, պատիժ ժողովրդյան, բարեկամ օտարաց և անհավատից։ Մեր գեղերը քանդվեցան, մեր տուներն ավերակ դարձան, ինք պալատներ կը շինե, պարտեզներ կը շինե մեր ավերակաց վրա. իր ամեն ազատքը մեյ մեկ ավազակ, մեյ մեկ պատուհաս են գըլխունուս վերև, մեր տղայքը, մեր աղջկունքը իրենց ծառայության և զվարճության համար են ստեղծված. մեր լեզուն, մեր հավատքը հոռոմեն ավելի կը նախատեն, օտարին նախատել կուտան. քաղաքը գեղ դարձավ, միջնաբերդ ապարանքը Բաբիլոն, Սոդոմ Գոմոր եղավ։ Ես ա՛լ չեմ խոսիր, մնացածը դու գնա, հասկցիր։ Մենք հոս եկանք, թե որ դու ճար-ճարակ չընես, մենք մեր տունները չենք կրնար դառնալ. մեր զավկներուն կյանքը, ո՞ գիտե, հիմա ի՞նչ վտանգի մեջ է, վասնզի երկիրը լրտեսներով լեցուն է։ Մենք անգամ մը Տարսոնի կուսակալին բողոքեցինք. անոնք, որ Տարսոն գնացին, չգիտենք, թե ո՞ղջ են թե մեռած. բանտ մտան, մեկ մ՚ալ չելան. կնիկներն, զավկրներն Հալեպ ծախվեցան, ա՛յն գիտենք։

Քահանան լռեց, տխուր լռություն մը տիրեց ամենուն. ամեն աչք Թորոսին կը նայեր, և ոչ ոք հարցմունք ընել չէր համարձակեր, մինչև որ Թորոս՝

— Տեր հայր,— ըսավ,— թե որ տխուր մտածություն մը եկավ մեզ ամենուս՝ սա ձեր պատմածներուն վրա, մի՛ կարծեք, թե դժկամակություն մ՚ունինք ձեզի օգնելու, կամ աշխատութենե կը փախչինք անոր համար, ո՛չ երբեք. մենք ըսածներուդ վրա տխրեցանք, որովհետև աս ձեր իշխանը հայ է, որովհետև դուք ալ իրեն կրոնակից և ազգակից եղբարքն եք, և մենք ձեր փրկության համար պիտի պարտավորինք հայու հետ պատերազմիլ՝ հայի արյուն թափել. զոր մեծ մեղք կը համարինք։ Բայց քեզի բան մը պիտի հարցնեմ. չե՞ք ճանչեր մեկը, որու խոսքը անցուկ լինի այդ ձեր իշխանին առջև։

— Մարդու խոսք ազդեցություն ունե՞, հրեշտակ ամենակալին գա՝ մտիկ չըներ։ Այդ իր եպիսկոպոսին անարգանաց և վատության վարմունքը կաթողիկոսին ականջ գնացեր հասեր էր, չենք գիտեր ի՞նչ կերպով. նա ալ իշխանին օրհնության թուղթ գրած, զեպիսկոպոսն ուղած էր Ծովք՝ ի կաթողիկոսարանն, որ խրատե. քաղաքն ու դղյակ տակնուվրա եղան, կաթողիկոսի հիշատակությունն արգիլվեցավ պատարագի մեջ, և քահանա մը, որ կամ անգիտությամբ հրամանին կամ գիտությամբ հիշած էր Սրբազանին անունը, այնչափ ծեծ կերավ և այնչափ ամիս բանտը կեցավ, որ ելնելեն վերջը հազիվ երեք ամիս ապրեցավ։

— Լավ,— ըսավ Թորոս,— մենք իրեն քաղցրությամբ ազդարարություն կ՚ուղարկեմք, և թե որ իր ընթացքը չի փոխե, այն ատեն միայն խոսքով չեմք շատանար և պետք եղածը կը գործադրեմք։

Մարդիկը դուրս ելան, բայց հոն՝ վարը դռան քով մնացին, և հայտնի կը զրուցեին, թե իրենց իշխանին խրատ, ազդարարություն ոչինչ օգուտ չէր ըներ, սուրը միմիայն մեկ հատիկ դարման էր, «բայց ա՛ն ալ,— կ՚ըսեին,— ինչ օգուտ ունի Անարզաբա պարիսպներուն. արդեն իշխանը սելուն Մամեստիո առնվիլը, թո՛ղ հոս մեր վրա գային, տեսնեինք ո՞վ

որի անձնատուր կը լիներ. կը կանչեիներ, առաջած ինք մեզի ողորմեա։

Նույն միջոցին երիտասարդ մը եկավ պատգամավոր, որ մեկեն ձի հեծավ և Անարզաբա ճամփան բռնեց արագաթաց. հրաման ուներ նույն իրիկունը դառնալու։ Ուստի տղան կ'երթար անդադար կրակի պես, ոչ հաց և ոչ հանգիստ նայելով, և երեք ժամ հազիվ թե եղած, կ'իջներ Անարզաբա միջնաբերդին դուռն առջև, իմացնելով, թե պատգամավոր էր Ռուբինյանց Թորոսի, որովհետև, իշխանին Վահան, Մամեստոն, Առյուծու, Ամուրա, Բարձր բերդի և Սիմանակլա Թեպեռ երիտասարդը անհամբեր կսպասեր, բայց Սմբատ իշխանը կամավ քամահրելու համար զԹորոս անոր սպասել կուտար։ Բայց Թորոս գուշակության ոգին ուներ, ուստի թեպետ երիտասարդ մը ընտրած էր իրեն պատգամավոր, բայց լավ քներ էր զանի և առաձին խրատեր էր, թե ինչպե՞ս պիտի վարվի։ Ուստի տղան թեպետ անհամբեր, բայց նույն միջոցին իր իշխանին պատմություններ կ'ըներ բերդապահաց, թե ինչպե՞ս հինգ-վեց օրվան մեջ անառիկ բերդերը առնի ընելու սքանչելի զորություն մը կար իր քով, թե ինչպե՞ս անշահատեր և առատաձեռն էր և թե ինչչա՞փ որ խիստ էր պատերազմի մեջ՝ նույնչափ ալ գթած էր խաղաղության մեջ և նայելով Անարզաբա միջնաբերդին ամրությանց, կը բաղդատեր Սմուռա, Վահկա բերդերուն հետ և ոչինչ կը գտնար անոնց քով դաս. և այնպիսի վստահություն ու պովություն կար իր խոսակցության մեջ, որ պահապանաց ամենկրտունները նաև վառված մը սկսան հղանալ։

Վերջապես ժամին ամենի տրամաբանելին վերջ՝ հրաման ղրաձ իշխանը պատգամավորը բերելու։

Հովանոցի մը մեջ՝ բազմոցներու վրա ընկողմանյալ էր Սմբատ. ծաղկազարդ մտրմարն ավաղան մը իր ցնցուղով կը զովացներ օդը. զինյալ ծառաներ առջևը բարև կեցած էին անշշունչ. ինք դաժան կերպարանքով հարցուց երիտասարդին.

— Ո՞վ ես, ուստի՞ գաս։

— Մամեստիո իշխան Թորոս՝ որդի Լևոնի, զիս ձեզի պատգամավոր կ'ուղարկեն։

— Ի՞նչ կ'ուզեն ինձմե, ի՞նչ հարաբերություն կա իմ և ապստամբ փախստականի մը մեջ։

— Ձեր այն փախստական և ապստամբ քաջը, այսպես, առաջ-տասնվեցեակ հազար պատերազմողի հրամանատար է, և այսօր շարաթի մը չկա, վեց ամսության տեր է, դեռ հերկ Տարոնի կատաղիին քանակը չարտաքսուած հանեց և ցիրուցան քրաձ. մատնս քարաքը ընդ հարիւով քրաձ, և վաղը իր ձայնին եկուսն հազար հոգի պատրաստ են գիմելու. դարձեալ

թե շատ հավատարիմ հպատակներ այս ապստամբին հավատարիմ երդանկությունն պիտի հատատին։

Արդեն դաժան իշխանին աչքերը կրակով լեցվեցան և իր դիրքը փոխելով ու շտկվելով՝

— Ինձգա՞մ,— որոտաց,— որովհետև գիտես թե պատգամաբեր ես, անոր համար կը համարձակիս իմ առջև այդպես խոսելու, բայց միտքդ դիր, թե ես անոնցմե եմ, որ ուշ, կանուխ գիտեն մրեժ հանել։ Ինչ ի՞ուզե ինձմե քու տերդ։

— Իմ տերս՝ Թորոս իշխանը՝ Լևոնի որդին, Անարզաբա քաղքին օրինավոր ժառանգը,— ըսավ երիտասարդը,— միշտ հանդարտ և անխռով չի կրնար անտարբեր մնալ այս քաղքիս և իր շրջակա գյուղերուն բնակչաց աղերսանաց և պաղատանաց, ուստի անոր համար զիս ձեզի կ'ուղարկեն, որ ձեր գործակալաց խիստ և անլուր վարմունքը, որ անշուշտ ձեր անգիտությամբ կը գործվի, չափավորեք և արգիլեք, բարի դրացությունն, որ հայ իշխանաց կը վայլե, չավրվի և հայ արյուն փուռ տեղ չի վազե։

— Ի՞նչ, քու իշխանդ օրինավոր ժառա՞նգ է այս քերդաքաղաքիս... ի՞նչ, քու փախստական ավազակդ ինձի հետ բարի դրացությո՞ւնը կ'ուզե պահել... իմ գործակալացս անգթությունը և խստությո՞ւնը կ'ուզե չափավորել... ո՞հ, հիրավի աս անտանելի է... կորի՛ր առջևս, թե որ չես ուզեր հիմա հաշան սատակ իյնալ, և գնա՛, զրուցե՛ տիրոջդ, թե ավազակ մ'է իր հորը և հարևրորը պես, և թե շատ չի քշեր, ուսկից, որ գազի պես եկավ, հոն պիտի դառնա, և կախաղան իրեն կ'սպասե։ Տե՛, ելի՛ր ուկորի՛ր։

Երիտասարդն այս խոսքերը դարձյալ անխռով մտիկ ընելեն վերջ, առանց ոտտասխան տալու և առանց եկեղեցի նշան մը ցուցնելու իշխանին կատաղի և թունավոր նայվածքներեն, գլխով բարև մը տվավ, իջավ դուռը, հեծավ իր ձիուն վրա և նույնպես սրարշավ անհետացավ. ու երբ հասավ Մամեստիա, արդեն մութը տարածված էր քաղքին վրա։ Բայց ամեն հայու տուն ուրախության, երգերու և նվագարանաց ձայներ կը լսվեին, զինվորները եկեղեցյաց բակերն ու գավիթները և հրապարակները կը լեցնեին. լեռնցի հայն ու դաշտեցին իրարու հետ կը պարտվեին, սատուռն այցելության հանդիսը կը պատմեին, երբ անոնց հոնաց քաղքեն ու տունները լեռն տիրություն կը թափվորեր, և հազիվ թե դիպվածական անցորդ մը միայնաբնությունը կ'ընդհատեր։

Բայց մենք դառնանք Անարզաբա, ուր տեսարանը բոլորովին տարբեր էր։ Հոն միջնաբերդին մեջ Սմբատ իշխանը կատղած կը պտտեր,

մոմոաբով և հայհոյելով, բայց ամեն բան վերջ մը ունի, ուստի այս կատաղությունն ալ երկայն չի տևեց, վասնզի երբ հիսուն տարիքին կը հասնի մարդ և կ'անցնի, կամա-ակամա խոհեմություն մը կ'սկսի՝ կատարյալ կամ անկատար. ուստի թեպետ բնավորությամբ դեգ, ժանտ և կամակոր, բայց վերջապես սկսավ մտածել լսածներուն վրա. և դժբախտաբար դյուրագրգիռ լինելուն չէր կրցեր հանդարտ մտիկ ընել պատգամավորին ըսածներուն, ուստի թեպետ գիտեր Ամուտա և Մամեստիո առումը, բայց «Տարսոնի կուսակալին զորաց ջարդուբուրդ և ցանուցիր» բառերը դեռ իր ականջին կը հնչեին. արդյոք իրա՞վ էր, թե՞ զինքը վախեցնելու համար շինծու խոսք մը. տե՛ս դժբախտությունն ալ, որ ուրիշներու հարցնել տեղեկանալու ալ կ'ամաչեր. ուստի վեր-վար պտտելով կ'անցներ ժամանակը. ահա ուրիշ դժբախտություն մ'ալ, որ երբ այն հուզյալ վիճակին մեջ կը գտնվեր՝ հաղիվ քանի մը հոգի միայն կային, որ կարենային համարձակիլ քովը մոտենալ և հետը խոսակցիլ, և անոնց երկուքն ալ այն միջոցին ձիերով ժուռ գալու ելեր էին մեկտեղ, այսինքն՝ եպիսկոպոսը և յուր կինը, որու ամենքը սրբազան անունը կուտային։ Ուստի մեր Սմբատ իշխանը, իր բարկության և հանդարտության սահմանակետը հասած՝ ուժովուժով իր պիսակ մորուքը կը խառներ. բարեբախտաբար այս իր տանջանքեն ազատելու համար վրա հասան Տիկինը և երիտասարդ եպիսկոպոսը։

Դիտելու արժանի էր այս երկու անձանց մուտքը, և այս մուտքը խոստովանություն մ'էր դիտող աչքի մը, մանավանդ թե ամեն աչքերու, որ նայիլ գիտեն, և միայն էրիկներու աչքերը տեսնել չեն գիտեր։ Կինը, որ արդեն քառասուն և քիչ մ'ալ ավելի տարիք ուներ, համարձակ և զվարթ կերպ, ձայն ուժով՝ քիչ մը կերկեր, նայվածք՝ հաստատուն, քայլվածք՝ վճռեմ, գրեթե խրոխտ, երես՝ սնգուրած, արտևանունք՝ ներկված, ձեռքը՝ խարազան, մատերը՝ մատնի. երբ իր էրկան և տիրոջ մեկ նայվածքով ճակատը տեսավ, իրը քաջ նավապետ ճանչցավ, թե փոթորիկ մը անցեր է հոնկից, բայց խնդիրը պետք էր իմանալ, ուստի զորավոր ձայնով մը, զոր պարագան ավելի կը զորացներ՝

— Այս ի՞նչ է, տխուր ենք, տեր իմ, ի՞նչ, մտածելու նյո՞ւթ մը, կիրք ելլելու առի՞թ մը ունեցանք դարձյալ,— ըսավ։

— Ոչի՛նչ,— պատասխանեց իշխանը իր հոնքերը խոժոռ իջեցնելով։

Այս «ոչի՛նչ»-ը, հոնքերու խոժոռ խոնարհումը, մեկ երկու ամոլներուն ահուդող պատճառեցին, և փայլակի պես ակնարկ մը իրարու ձգելեն վերջ, ակնարկ մը, ուր խղճի խայթը, ոճիրը, հայտնության երկյուղը, հետևանքը՝ ամենքը կը պարունակեր, Տիկինը դարձյալ խոսքը առավ անհամբեր ձևով մը.

— Թե որ մարդ իր կնոջ և բարեկամաց ալ իր սրտնեղության պատճառները ծածկե, սուտ են ուրեմն ընտանություն, բարեկամություն և վստահություն։

— Քիչ մը առաջ հոս որ լինեիք, կրնայիք տեսնել ապստամբին որդվույն ինձի ըրած պատգամավորությունը, և դուք ալ անձամբ կրնայիք դատել, թե իրավունք ունի՞մ բարկության շարժելու։

Այս հայտնությունը մեր երկու սիրասուն անձանց մեծ շունչ մը առնել տվավ, և գոհության ակնարկ մը այս անգամ հաջորդեց. և ալ խոսելու կարգը սրբազանին է։, որ մինչև հիմա երկյուղալի լռություն մը կը պահեր, բայց ալ երկյուղը փարատելով, երեսին վստահություն եկավ, թեպետ շատ դժվարին լիներ շպարյալ երեսի մը վրա բարոյական կիրքերը նըշմարել։ Եվ հիրավի, այս անձը, որ ճանչեցինք քիչ մը վերը, երբ շատ խիստ կը նկարագրեր մեր խղճուկ տերտերը՝ ի Մամեստիա Թորոսի և յուր խորհրդականաց առջին գրեթե երեսունհինգ տարեկան երիտասարդ մ'էր, միջահասակ, համեմատ և վայելուչ կերպարանքով, որու շնորհիվք և հետևաբար շնորհիվք մեր Մամիկոնյան տիկնոջ (և այս երկու շնորհքներուն մեջ հայտնի է, թե երկնային շնորհք ամենևին միջամտություն չընելով) քիչ ժամանակի մեջ եպիսկոպոսության աստիճանի արժանի եղավ։ Բնականաբար այսպիսի երկնային տուրք մը, այսինքն՝ դիմաց վայելչություն, որ իրեն հառաջադիմության այնչափ օգներ էր, մեծ խնամքով կը տարածեր և օրվան քանի մը վայրկյաններ անոր զոհել իրավունք կը համարեր։ Ինչ գործիք, որ մարդկությունը գտեր էր գեղեցկանալու, ածելի, խլիչ, վրձին, զանազան հեղուկներ և փոշիներ, Բյուզանդիոն իրեն կը մատակարարեր։ Ավելցնենք ասոնց վրա քնքուշ և շինծու ձայն, նազելի, գրեթե իգական քալվածք մը, մատնիներով զարդարված ձեռքեր, որոնց ճերմակությունը պահելու համար սրբազանը փոքրիկ բազկատարածություն մը հնարած էր, որ արմունկներեն կ'սկսեր. մարդը կատարյալ կ'ունենանք, եթե հիշենք, որ իր հասարակ սերունդեն դժգոհ՝ նախարարական տոհմերու կը դիմեր ազնվական ճյուղագրություններ հնարելով։ Ուստի, աղու ձայնով և գլխու կոտրտուք շարժմունքով սկսավ խոսիլ.

— Մեծազոր իշխան, Ձեր տերությունը այս ամուր բերդաքաղաքին մեջ ոչ միայն ապստամբի որդի մը արհամարհելու, այլ նաև զորավոր ինքնակալության մը զորության դեմ խիզախելու իրավունք ունի։

— Այո՛, սրբազան,— պատասխանեց իշխանը,— բայց թե որ իրավ է պատգամավորին մեծաբանությունը, այս տղան շաբաթվան մը մեջ այնչափ առաջ անցեր գնացեր է, որ իր հայրն ու հորեղբայրը տարիներու մեջ մտքերնեն չանցուցին երթալ։ Տասը-տասներկու հազար հոգի բանակ կազմել... Տարսոնի դքսին բանակը խորտակել, ցիրուցան ընել... և մեզի

ազգարարական պատգամ ղրկել, որ մեր ժողովուրդը քաղցրությամբ կառավարենք...

— Ի՞նչ,— ըսավ Տիկինը վեր ցատկելով վիրավորյալ վագրի մը պես,— ա՛յս միայն կը պակսեր, այս երեկվան սրիկան մեզի հրաման խրկելու ելե՞ր է. շա՛տ բան, իրե՞ն էր մնացեր։

— Բայց հոս խնդիրը,— ըսավ սրբազանը խորհրդածելով,— երկու կետ ուշի ստուգության արժանի. ճշմարի՞տ է, որ կրցեր է տասներկու հազար հոգի գլուխը ժողվել, ճշմարի՞տ է, որ խորտակեր է Տարսոնի դքսին բանակը։

— Տեսնենք մեր տղաքը բանի մը տեղեկություն ունի՞ն, —ըսավ իշխանը, որ կ'ուզեր անհոգ և արհամարհոտ ձևին տակ իր սրտին մեծ տանջանքը հանդարտեցնել։—Տղա՛ք, Վասիլին ձայն տվեք։

Լռություն մը հաջորդեց այս մեր երեք ժողովրդականաց մեջ, ուր Տիկինը շատ հուզյալ ինքզինքն կը ցուցներ, քան թե ինչ որ էր, և ուր սրբազանը իր իգական փափուկ շարժմունքներուն մեջ գոհության ժպիտներ առ նա կ'արձակեր, վասնզի ներկա վտանգը անցեր, և հեռավոր ու կասկածելի ապագայի մը վրա էր խնդիրը. երբ որ Վասիլ երևցավ իր տխուր և կատվի աչքերով (այս անարգ անձը իշխանին երևելի լրտեսն էր, իր տանը ընդհանուր գործակալն էր և առաջին գողը ու մեր երկու հրեշտակային անձանց կցորդակից միանգամայն) իշխանը ըսավ.

— Վասիլ, դու ի՞նչ կը լսես ապստամբին համար, իրա՞վ է, որ Մամեստիայի զատ քանի մը բերդերու ալ տիրեր է։

— Տե՛ր, իմ լսածիս թե որ հավատալ պետք լինի, այս շրջակայքը Անաբզաբայի զատ ամեն տեղի տեր եղեր է, և բոլոր Տորոսի ժողովուրդը զենք առած գունդագունդ կը վազեն իր դրոշակին տակ մտնելու համար. կը պատմեն նաև թե Տարսոնի դուքսը արտորնոք զորքը առած Մամեստիոյ վրա գալու առեն ապստամբը զինքը գիմավորեր, մեծ հաղթություն մը ըրեր է. այս վերջինը ստուգության է արժանի։

— Լա՛վ, իմացա, Վասիլ,— ըսավ իշխանը, և գործակալը կրցածին չափ պզտիկնալով և ետ-ետ քաշվելով՝ անհետ եղավ։

— Ինչպե՞ս, սրբազան, լսեցի՞ք հիմա։

— Զարմա՞նք։ Բայց Վասիլ ալ կը զրուցեր, թե ստուգության կարոտ է այս վերջի լուրը։

— Փուճ տեղ կայլայլիք,— ըսավ Տիկինը քաջասրտությամբ,— անոր հորն համար ալ կ'ըսեին, մեծ-մեծ կը ջարդեին, երբ ես նոր հարս էի, գեռ տղա էի, ետքը կայսրը եկավ, հայրն ալ, մայրն ալ, տղաքն ալ ամենն ալ կապեց, առավ Պոլիս տարավ, երկիրն ալ խաղաղեցավ։

Տիկնոջ ամեն ըսածը շիտակ էր, բա՛ց իր տարիքեն, վասնզի այն ժամանակներն ալ երեսուն տարու և ավելի կար և արդեն տասներկու տարեկան տղու մը տեր էր։

Իսկ Սմբատ, որ թեպետ Մամիկոնյան ալ լիներ, փոքրոգի մեկն էր, հաջողության մեջ մեծամիտ. հիմա ավելի կը մտածեր մերձակա վտանգին վրա, քան թե իր Տիկնոջ տարիքին սխալը շտկելու. կերակուրի նստած՝ ախորժակ չուներ, անկողին մտավ՝ քուն չուներ, և երբ վերջապես շատ դժվարավ քունը տարավ, անհանգիստ երազներ, որոնց մեջ Թորոս մեծ դեր կը խաղար՝ զինքը անհանգիստ ըրին։

ԳԼՈՒԽ ԺԶ

ՄԱՐԳՐԻՏ

Երբ միջնաբերդին վերնագավառները զանազան կիրքեր կը հուզվին, վարը պահապան զորաց խումբը նստած կը խորհրդածեին պատգամավոր երիտասարդին տված լուրերուն վրա։

— Տղա՛,— կ'ըսեր տարեց, կորովի քառակուսի մարդ մը, որուն աչքերը կը փայլեին իր արևեն թխացյալ դեմքին վրա,— ի՞նչ, խելա՞ռ ես, ի՞նչ ես, թող դա ըսելն դյուրին բան է... «Ապստամբ, ապստամբ» ի՞նչն կ'երթան. անոր հայրն ալ ապստամբ էր, հորեղբայրն ալ ապըստամբ էր, բայց տանիկն ալ, փոանգն ալ, հոռոմն ալ անոնց անունեն կը գազային։ Այս մեր բոլոր իշխաններն անոնց առջև բարև կը կենային, երբ հրամայեր, կը նստեին. նեղն որ մտնեին, անոնց ծոցը կ'ընկնեին. անիրավություն մեկն որ ըներ՝ անոնցմե կ'ակնածեր։ Հոռոմն, որ կայսր ունինք, մեծ քաղաքը կըսեր, կը պարծեր, տարին տասն անգամ ալ անոնց ճամփան կը չափեր, կը շողոքորթեր, վասնզի գիտեր, որ այն կայսրը շատ հեռու էր թե որ քուն չէր. փոանգը, որ մեծ թագավորներ ունինք արևմուտք կ'ըսեր, գիտեր, որ եթե երբ գան, ճամփան անոթի չմեռնին, ողջ հասնին այստեղ, շատ բան կրնան ընել. բայց ծովն ու ցամաքը անոնց ոսկորները լցուցին ամեն անգամ, որ եկան. անոր համար էր, որ երկուքն ալ անոնց հետ լավ կը վարվեին, մինչև որ մեկ անգամ կայսրն եկավ, այն աղվեսները քովն եկան ժողովվեցան, և ապստամբներուն վրա ինկան, տունը քանդեցին. ես այս մեր իշխանին հետ մեկտեղ էի, երբ Լևոն բռնեցին կայսեր բերին, ատված վկա՛, ես ամչցա, երբ նա հայ իշխաններուն ու զորքերուն վրա աչքը դարձուց. չգիտեմ ի՞նչ կար այն աչքերուն, այն նայվածքին մեջ։ Այն լամբրոնի սեքասառոնները, այն

մեծ հայ իշխանները մինչև ականջ կարմրեցան, երբ այն մարդուն ձեռքերը շղթաներ անցուցին, ես չի կրցա դիմանալ, լացի...

— Դո՞ւն լացիր,— ըսավ անդիեն զվարթ ու սկրդած երիտասարդ մը,— տե՛, տղայք, Ավագ աղբարն լացեր է, կը լսե՞ք. գետնաշա՞րժ եղավ այն օր թե փոթորիկ։

— Հա՛,— զրուցեց Ավագ,— անանկ փոթորիկ մը եղավ, որ հայուն անուն՝ ինչ պատիվ ուներ տարավ այն օր, այսօր, հոռոմն ու փռանգը, տաճիկն ու թուրքը մեր վրա քամահրանքով կը նային. մեր իշխանը Պապերոնի տերն է, Անարզաբայի կուսակալն է կ'ըսենք, քանի մը մուրիկ հոռոմ, որ կա քաղքին մեջ, անկից ավելի մեծ ձայնով կը խոսին. ամեն օր մենք ենք քաղքին տեր, կ'ըսեն, ձեր իշխանը մեր կայսեր ծառան է, կ'ըսեն, և մեր իշխանը անոնց ձայնը չի լսեր, ու մնացյալ ո՞վ որ մնա, կը դողացնե...

— Մինակ ինքն ալ Տիկինեն կը դողա,— ըսավ մեկ ձայն մը քրքջիլով։

— Ինչպե՞ս, Տիկի՞նն ալ սրբազանեն կը դողա,— ըսավ ուրիշ մը, և ծիծաղը ընդհանուր եղավ։

Միայն Ավագ՝ խոժոռ, չէր խնդար և դաժան կերպով մը ըսավ՝

— Իրավ որ ես չեմ կրնար խնդալ այդ ըսածնուդ վրա, վախեմ այդ եպիսկոպոսին պատիժը մենք ամենքս պիտի քաշենք. կաթողիկոսին հրամանին չի հնազանդեցավ մեր իշխանը, այն ալ նզովեց. մեր բանը բոլսած է. մարդ սխալական է, այսօր կ'սպաննե, վաղը կ'ավազակե, կը հափշտակե, անգթություն կ'ընե, աստված կը բարկանա, տերտերն «ողորմիս» կըսե, թողություն կուտա. բայց երբ կաթողիկոսի հրամանը, որ Լուսավորչա փոխանորդ է, եպիսկոպոս՝ կ'արհամարհե, աստված տերտերին ողորմիսին չի լսեր, մեղքերն ա՛լ չեն արձակվիր, աստված ալ թողություն չի տար. մենք փա՛ռք աստուծո, մեղավոր ենք ամենքս, հոս՝ վարը, ժողովուրդն արյուն արցունք կուլա ձեր ձեռքեն, թե որ երբեմն-երբեմն մեր մեղքերը չի քավվին Անարզաբա վրա երկնքեն կրակ մը թափի, ամենքս ալ կը լափե, և մենք ոչինչ կը լինինք։

— Ի՞նչ կ'ըսես, մարդ,— ըսավ ուրիշ մը,— թե որ կրակ կա երկինք թափելու, թող եպիսկոպոսին վրա թափի, նա է չարյաց պատճառ։

— Փա՛ռք տվեք աստուծո, որ Մարգրիտ օրիորդը կա,— ըսավ անդիեն ուրիշ մ'ալ,— մեկ հոգի մը, թե որ կա, որ մաքուր է աստուծո առջև՝ այդ աղջիկն է այս միջնաբերդին մեջ. թե ոչ՝ աստված իրավ կը կործաներ, և ամենքս քարին-հողին տակ կը ծածկեր։

— Թե որ պատգամավորին պատմածն իրավ է Թորոսի համար,

քարն ու հողը նա պիտի ծածկե մեր գլխուն,— ձայնեց թեթևսոլիկ տղամը։

— Տե՛, մանուկ, դո՞ւն ուսկի՞ց գիտես անոր պատմածն,— ըսավ խստությամբ Ավագ։

— Ես հոս էի, երբ խոսեցավ ձեր հետ, ետքը, երբ իշխանին քովն ելավ, ես ալ ետևեն ելա... Իշխանին ըսավ, որ քու մարդիկդ գող են. ժողովուրդը մի՛ չարչարեք. քու մարդիկդ զայն կը չարչարեն. ետքը իշխանը բարկացավ, տեղաց ցատկեց, փրփրած՝ աչքերը սանկ-սանկ շարժեց. ես փախա. ետքը մարդն ալ ելավ, ձին հեծավ, հա՛ կը վազեր, կը վազեր...

— Տե՛, լռե՛,— ըսավ Ավագ,— հիմա ծեծը կ'ուտես։— Տղան այս լսածին պես՝ հեռացավ, զգուշությամբ միջոց մը ձգելով իր և Ավագին մեջ։

— Կատակը մեկդի, Ավագ եղբայր,— հարցուց երիտասարդ մը,— թե որ այս մեր Անարզաբան պաշարեն, դու ի՞նչ կարծես, վտանգ կա՞ առնվելու։

— Պաշարմունքը գիտե. Անարզաբա կայսրը պաշարեց՝ առավ Լևոնեն, թե որ տկար մեկը պաշարեր, Լևոնին ճանկեն ի՞նչ կ'առներ։

— Ամուտա բերդապահ զինվոր մը տեսա այսօր՝ վարը՝ քաղաքը. դուք պատրաստ եղեք, կ'ըսե, ձեր բերդը մերինեն շատ տկար է։ Ապըստամբին համար կը պատմե, թե մեկ հարվածը չի կրկներ. աչքերեն կրակ կը թափի, ինք մինակ ութ-տասը հոգի գետին փռեց, անոր ձեռքեն ինկնողն ողջ չելավ։

— Չըսե՞ս, այդ նզովից արմատ՝ հորը զավակն է,— ըսավ Ավագ ճակատը թթվեցնելով։

— Երբ ես լսեցի, վախն զիս առավ, թե որ հոս մեկ մը երևա, վարի քաղաքացին դռները մեկեն իրեն կը բանա, մենք միջնաբերդին հետ կը մնանք։

— Ես ալ քաղաքացի որ լինիմ, դռները կը բանամ, դուք ծեծ ու փետ, հայհոյություն միայն գիտեք. թե որ ապստամբը ձենե աղեկ է...

— Տե՛,— պոռաց Ավագ,— դու դեռ հո՞ս ես և կը խոսի՞ս, ես այդ լեզուդ չի կտրեմ՝ մարդ չեմ,— և դեռ նա ոտք չելած մանուկ աներևույթ եղավ։

Ամենը սկսան ծիծաղիլ, և Ավագ, որ ծիծաղելու արհեստը չէր գիտեր, գլուխը շարժելով՝

— Հիմկու խենթերն ամենեն խելոք կը խոսին, քաղաքացին մենե ի՞նչ աղեկություն տեսած է, որ հավատարիմ մնա։

Այն միջոցին Վասիլի սուր քիթը երևեցավ գավթին ծայրը, և լռու-

թյուն մեկեն հաջորդեց, վասնզի գիտեին, թե իշխանին լրտեսն է։ Երբ աներևույթ եղավ՝

— Դժոխքի պատուհա՜ս, սատանայի գիրկն իյնա՜ս,— ըսավ մռմռալով երիտասարդ մը՝ մուր տալով ետևեն,— ես քեզի լրտեսություն կը սորվեցնեմ, վաթսուն գավազան, ութ օր բանտ, չոր հաց, հե՞։

— Թե որ իշխանին օրիորդը քու ձայնդ չիմանար, չաղաչեր, հարյուր հիսունը պիտի ուտեիր, բախտ ունիս եղեր։

— Ինչ որ կերա, խմեցի, բախտ է ատիկա, բայց հոգ չէ. Վասիլին չի մնար, օր մը ես ան կը հոգամ։

— Այդ շանը հետ մ'իյնար, տղա՜, կ'ըսեմ քեզի,— ըսավ Ավագ,— ետքը հանգիստդ կ'ավրես, տեղդ-հացեդ կ'ըլլաս, փորձով քեզի հետ կը խոսիմ։ Երբ քսան տարու էի, Լամբրոնի իշխանին քովն էի, հոն վերակացու մը կար, իրավ՝ ասոր պես անպիտան չէր, բայց խիստ մարդ էր. պզտի բաներու համար խարազանի հարված կը բաժներ, օր մ'ալ աղջիկ մը փախուցեր էի լեռը, հայրն ու մայրն եկան գանգատեցան... ի՞նչ կը վարմանաք, հոն՝ Լամբրոն ասանկ բանի համար կատակ չեն ըներ, Անարզաբա չէ։ Վերակացուն զիս բռնեց, իշխանին պիտի տաներ, շատ աղաչեցի, որ թող տա. բերդին դռան առջև էինք, ազատելու ճար չի կար. դանակը մեյ մը որ կողը մշտեցի, այն ելնելն էր, մեկ մ'ալ այն տեղվանք չի տեսանք։ Բայց լավ դուռ էր, հոն մնացողը մարդ կը լինի, սրիկա չլիներ։

— Հոս այդպես բանի նեղություն չի կա։ Ահա իշխանիկը կուգա։

Եվ ամենքը ոտք ելան, շարվեցան։

Քսանհինգ տարու երիտասարդ մը ներս կը մտներ նույն միջոցին, երեք-չորս զենյալ ծառաներով, բարակներով և բազեներով որսե կը դառնար։ Գեղեցիկ և գոռոզ երիտասարդ մ'էր, հազիվ թե աչք մը ձգեց պահապանաց խումբին վրա, առանց բարևելու իջավ ձիեն և յուր սենյակները գնաց։ Հայտնի է, թե մորը ամենասիրելի տղան էր այս. ինչ հաճույք, որ կարելի էր հոգալ իր անդրանկին՝ հոր կամքը կ'ըներ և կը ճարեր, և որպեսզի աչքին առջևեն չի կորսնցնե, դեռ տասն և ութ տարեկան կարգած էր վայելուչ, թարմ և միամիտ աղջկան մը հետ, որ այս շփացած տղուն հաճույից համար ստեղծված լինելն հավատալով, նորա բռնավորության և ամեն կոպիտ վարմունքներուն աղախնաբար կը տաներ։ Խեղճ կինը, որ արդեն երկու զավկի ալ տեր էր, միմիայն մխիթարություն մը ուներ և խորհրդատու իր տալը՝ Օրիորդն էր, որուն սուր միտքը, առաքինի ծանրությունը ամենուն ակնածություն կը բերեին, մանավանդ որ հորը ամենասիրելին էր։ Սև աչք, սև ընքվի, սև մազե-

րե պսակյալ բարձր ճակատ մը, վայելուչ հասակ մը, նայվածք, որ դիմացինին սրտին գաղտնյաց կը թափանցեր. տարիքեն առաջ անսովոր ուշիմություն յուր բնավորությունն էին. ներքին և արտաքին ամեն իր հորը տան և իշխանության անկարգությանց տեղյակ և վերահաս, և դարմաններու անհնարության նախատես՝ շատ անգամ ուզեր էր կուսանաց վանք մը քաշվիլ և միայն հորը աղաչանաց զիջեր էր և ոչ թե մորը հրամանաց, որ շարունակ զինք կարգելու կ'ելներ, միշտ մերժվելով և աղջիկը տեսակ մը անզգա կը համարեր։ Իր կյանքը կ'անցուներ աղոթքի, բարեգործության, իր հարսին մխիթարության և նորա տղայոց խնամքներու հետ. թե որ բարի նախախնամության մեկ նշույլը Անարզաբայի պարիսպներեն կրցեր էր սպրդիլ, անշուշտ այդ աղջիկն էր, և տառապելոց միակ հույսը իր վրա էր, թե որ կարենային հաջողիլ իմացնելու անոր իրենց վիճակը՝ անհողդողդ պաշտպան մը կը գտնեին. բայց շատ անգամ, նաև այն պաշտպանությունը վերջը սոսկալի վտանգներ և վրեժխնդրություն կրնային պատճառել, անոր համար շատերը իրենց վիշտերը անկից նաև կը ծածկեին։ Այսպիսի էր Մարգրիտ այդ պալատին մեջ՝ փշոտ մացառներու և տատասկներու մեջ աննման ծաղիկ մը, որ ամենեն ժպիրհները և անզգամները կը հարգեին ու կը պատվեին, բացի մեկ անձե, որու անարգ բզեզի սիրտը և վատ զգացմունքները՝ այդ աղավնույն մաքուր սրտին բարձրությունը չէին կրնար հասկնալ։ Մինչև անգամ մի հարմար առիթ գտնելով համարձակեր էր աղտեղի սրտին գարշությունքը իբրև փափուկ զգացմունք Օրիորդին առջև տարածել, իսկ նա այնպիսի արհամարհոտ ծիծաղով մը պատասխանեց սրբազանին և իր պզտիկ ոտվներով այնպիսի անխնա սաստկությամբ կոխկռտեց այդ գարշությամբ լեցուն փամփուշտը, զոր նա սիրտ կ'անվաներ, որ ալ պայթելով, զեղանելով՝ համարձակեցավ Օրիորդին թևը բռնել, իբրև թե բռնությամբ առ ինք ձգելու համար, բայց չէր գիտեր նա ի՞նչ անընկճելի բնավորություն կան. մեկեն սոսկալով ետ քաշվեցավ, վասնզի Օրիորդին աջ ձեռքին մեջ փոքրիկ սայրասուր դաշույն մը այնպիսի արագությամբ իր աչքերուն փայլեցավ, որ նվիրական անձը բոլոր իր սրբության վերարկուն հագնելով, ինչպես օձն իր շապիկը, խոստովանեցավ, թե փորձելու համար էին ամեն խոսքերն ու շարժմունքները, և թե շատ գոհ էր Օրիորդին առաքինությենեն, որ նույնպես պարզությամբ խնդրեց իրմե յուր միամտությունը ուրիշ անգամ չի փորձել, վասնզի այդ տեսակ փորձությանց ու կատակներու փոխարեն կրնար հարված մը տալ և ամեն բան հորը խմացնել. և ոսկեպատյան փոքրիկ դաշույնը իր զգեստներուն մեջ դարձյալ ամփոփեց և հեռացավ։

Նույնպես սրբազանը իր ճամփան գնաց՝ ուխտ և դաշինք դնելով

մտքեն, ուրիշ անգամ այսպիսի վայրենի և անամոթ սրտերու փորձութեան խաղ ամենևին չի խաղալ։

Գիտեն մեր ընթերցողը, թե ինչ տաժանելի գիշեր մ'անցուց Սմբատ իշխանը. ուստի առտուն կանուխ ելավ ծաղկանց պարտեզը պտույտ մ'ընելու համար, և զարմացավ այն ժամանակ հոն գտնելով իր աղջիկը, որ վարդի կոկոն մը ձեռքը կը պտըտեր։

— Աս ատեն դու ելեր ես, աղջի՛կս, ի՞նչ զարմանք։

— Զարմանք թե որ կա՝ քեզի համար է, հայրիկ, որ միշտ ուշ կ'ելնես, իմ սովորությունս միշտ այս ատեն հոս գտնվիլն է։ Ուրեմն արտաքո կարգի վիճակի մը մեջ ես։

— Այո՛, արտաքո կարգի երազներ զիս անհանգիստ ըրին։ Ցե՞ս հարցներ, թե ի՞նչ երազներ էին։

— Գիտեմ,— ըսավ Օրիորդը։

— Ի՞նչ, իմ երազներս գիտե՞ս,— հարցուց իշխանը, աչքերը մեծ, մեծ բանալով։

— Գիտեմ թե Թորոսի հետ էիր բոլոր գիշերը։

— Ինչե՞ն գիտես։

— Անկից գիտեմ, որ մենք տասը տարիե ի վեր, քանի որ ես ինքզինքս կը ճանչեմ, այսպիսի վտանգի մը մեջ չէինք գտնվեր, և կարելի է, որ քանի մը օր վերջը, թե որ չընկնինք իր ձեռքը, փախստական և թափառական օտարներու դուռը պիտի զարնենք ասպնջականություն փնտրելու համար։

— Այս ի՞նչ հուսահատ և թշվառ գուշակություններ են, քու աչքերեդ կ'երևա թե ամեն բան սև ու տխուր կը տեսնես։

— Թե որ ես սև ու տխուր կը տեսնեմ, միթե ի՞մ է հանցանքը։ Հինգ տարի է, հայր իմ, որ ամենուն և քեզի շատ անգամ աղաչեցի, որ քիչ մը գութ ունենաք խեղճերուն վրա, որոնց բախտը ձեր ձեռքն է հանձներ աստված. և ինձի մտիկ չըրիք։ Այնչափ աղաչեցի, որ սա անպիտան, անգութ և սրիկա զինվորաց տեղ պարկեշտ, համեստ և ուղիղ մարդիկներե խումբ մը կազմել, և թե որ ավելի քիչ ալ լինեին՝ կարելի էր ավելի վստահություն ունենալ, մտիկ չըրիք։

— Ավելի քիչվոր թե լինեին, ինչպե՞ս ավելի վստահության արժանի կ'ըլլային։ Ցեմ հասկնար։

— Շատ պարզ էր. քաղաքին բոլոր ժողովուրդը մեզի հետ կը լիներ. երբ հիմա աս ավազակներուն պատճառավ, նաև մեր հարստահարությանց պատճառավ՝ ամենքը մեզի հետ թշնամի են և վաղը առաջին վտանգին մեզի դեմ պիտի միաբանին։ Եվ որ ավելի մեծն է, այս անպիտան ավազակներուն վստահիլ կարելի չէ, և մեծ անխոհեմություն։

Այս խոսքերուն իշխանը տխուր՝ աչքերը գետինը սևեռած կը մտածեր և լռությունը երկար քշելեն վերջ, ըսավ.

— Ուրեմն ես շատ գեշ ըրի, երբ երեկ բարկությամբ և նախատանոք մեժեցի Թորոսի պատգամավորը։

— Անտարակույս, դժբախտաբար ես երբ իմացա՝, շատ ուշ էր, և պատգամավորը արդեն ձի կը հեծներ։

— Բայց դու իմացա՞ր, թե ինչ ամբարտավան պատգամ ինձ հուղարկել հանդգներ էր այդ ապստամբը։

— Ամենն ալ իմացա տեղն ի տեղ։

— Է՛յ...

— Կեցի՛, սիրելի հայրիկ, արդար լինելու համար դու ինքզինքդ Թորոսի տեղ դիր, Թորոս եղիր վայրկյան մը, բանտեն փախած՝ ութը-տասը օրվան մեջ հինգ-վեց բերդի տեր եղիր, տասը, քսան հազար զորաց հրամայե, եղի՛ր քաջ, եղիր խելոք, Տարսոնի կուսակալը խորտակե...

— Բայց դու այս առասպելներուն կը հավատա՞ս, աղջիկ։

— Բայց ասոնք առասպել չեն, ստուգություն են։

— Դու ուսկի՞ց գիտես։

— Ես այս քաղքիս մեջ քու լրտեսներեդ, ամենեն և Վասիլեն շատ ավելի աղեկ գիտեմ ինչ որ կ'անցնի։

— Ի՞նչ կըսես։

— Այո՛, ես երբ առտուները իմ ծերուկ Մարտիրոսը հետ առած, իմ գեղերու տուփս մեկտեղ կիջնեմ քաղաք, ամեն տուն կը մտնեմ, հայ, հույն, տաճիկ իրենց հիվանդությունները և վերքերը, ինչպես տուները, ինձի կը բանան, ամեն բան կ'իմանամ. գիտեմ, որ բոլոր քաղաք այր և կին, ծեր և տղա, քահանա և աշխարհական մեզի թշնամի են, գիտեմ, որ երբ թշնամին գա ու բանակը զարնե, առանց նետ մը, քար մը նետվելու, դռները պիտի բացվին. ետքը այս միջնաբերդը իր բերդապահները պիտի մատնեն։ Եվ գիտեմ թե թշնամին, որ մենք ապստամբ կ'անվանենք, մեր կ'արծածեն և լսածեն շատ ավելի զորավոր է։

— Բայց դու ինչե՞ն իմացար այս ամեն բան։

— Ես քանի օր է հույն այրի կնկան մը աղջիկը կը նայիմ, որ ծանը ջերմով կը պառկի, և որուն եղբայրը Մամեստիո իշխանին ծառայության լինելն գիտեի, երեկ, կեսօրին վերջը, երիտասարդ մը տեսա հիվանդին սենյակը վիրավոր, որ էշ մը հեծուցած բերեր էին Ատանայի պատերազմեն իր մորը տունը. տղուն վերքը նայեցա, որ ծանր չէր, այլ անխնամ մնալեն ծանրացեր էր. ետքը իրեն պատմել տվի ամեն բան, իմացա թե այդ ապստամբը սովորական մարդ մը չէր և ինքնիրեն ամ-

բողջ բանակ մը կարժեր իր քաջությամբ, խոհեմությամբ և առաքինությամբ։

— Թողունք հիմա այդ մարդը իր կատարելություններով։ Բայց դու ըսիր, թե քահանաներն ալ մեզի թշնամի են հոս, այս քաղքիս մեջ։ Ես անոնց ամենուն փիլոնն առնուլ կուտամ։ Հիմա սրբազանին հրաման կ'ուղարկեմ։

— Ի՞նչ օգուտ անոնց փիլոնը առնելեն. անով մեզի ավելի բարեկա՞մ կ'ընենք զիրենք։ Արդեն այդ սրբազանն ալ միթե մեր վերքերուն մեկը և մեծը չէ՞... ի՞նչ պարապ տեղը կխոսիմ այս նյութերուն վրա, տեսնենք դիպվածները մեզի ի՞նչ կը պատրաստեն։

Երկար լռություն մը հաջորդեց։ Իշխանը իր պտույտը սկսավ շարունակել պարտեզին մեջ վայրկյան մը, և վերջը անհետացավ գնաց իր սենյակը՝ իր լրտեսներուն հետ խորհրդակցելու համար։

ԳԼՈՒԽ ԺԵ

ՍՏԵՓԱՆԵ ԵՎ ՄԼԵՀ

Անարզաբա իշխանը անձամբ յուր համբարանոցները աչքե կ'անցուցեր, տարիեն ավելի ժամանակի պաշար գտնելով՝ կը հանդարտեր. նույնպես ամեն տեսակ զենք քննության կ'առնվեին, զորաց կրթության հանդեսներ կը լինեին. բոլոր ճամփաները ասդիս, անդին լրտեսներ կ'ուղարկեին. և ամեն օր նոր-նոր լուրեր կ'առներ նա ի շրջակայից՝ նաև ի հեռուստ. և ոչ մեկը գոհացուցիչ չէին։ Հինգ օրեն վերջը Տարսոնի իշխանեն նամակ մը առավ, որ իրեն կ'իմացներ, թե թեպետ անկարող էր առժամայն իրեն հասնելուն, բայց թե հույս ուներ քիչ ատենեն մեծ և զորավոր օգնություն գտնելու Կոստանդնուպոլսեն. վասնզի գրած և իմացուցած էր, թե Հայք բոլոր ապստամբին հետ միանալով, ինք պաշտպանողական դիրք մը բռնելու պարտավորված էր։

Ամեն օր քանի մը կասկածելի անձինք ոչինչ պատճառներու համար, նաև մեկ թշնամական գրգռության համար՝ միջնաբերդը կը բերվեին, կը տանջվեին, կը բանտարկվեին, բայց ապսպրված էր ամենուն, որ ամեն այս տեսակ գործեր գաղտնի և լռելյայն լինին ըստ կարելվույն, որ «մարդ չիմանա», այսինքն՝ Օրիորդը չիմանա։ Վասնզի իշխանը, որ իր աղջիկը կը սիրեր առաջ, քանի կ'երթար կը հարգեր նաև զանի և քիչ-քիչ կ'սկսեր ակնածել իրմե։

Այս ակնածությունը բոլոր ընտանյաց յուրաքանչյուրը մեկ-մեկ կերպով ունեին իրեն համար, Տիկինը առանց սիրելու այս զավակը՝ կը դողար, որ հանկարծ իր անկարգությունքը չի նշմարե աղջիկը, ինչպես ամեն հանցավոր մայր՝ նաև նա, որուն բարոյականը ի մեծ նավակոծության կը գտնվի, կ'ուզե անվտանգ երևնալ իր զավկին. անդրանիկը իր կնոջը թափած արցունքներու մխիթարիչ ի նա կը գտներ. սրբազանը, որովհետև նա ալ կերպով մը ընտանյաց մաս կը համարվեր, որ զինք կ'ատեր հիմա սրտին բոլոր զորությամբ՝ բոլորովին իր ձայնին անուշությունը, բառերու և իմաստներու վայելչությունը ու ձևերու քաղաքավարությունը պատրաստի ուներ անոր համար։

Թորոսի դեմ եղած պատրաստության մեջ կար նաև քաղքին պարիսպներեն հեռանալու արգելքը, որով մեր որսորդ իշխանիկը՝ Բակուրան, կը պարտավորեր ակամա բանտվիլ, ինչպես Տիկինը և սրբազանը, որ իրենց ձիարշավները դադրեցնելու պարտավորված էին։ Այս արգելքները բոլորովին անհիմն չէին, վասնզի ասպատակ ձիավորաց խմբեր երբեմն քաղքին պատերեն կ'երևային և անհետ կը լինեին։ Իսկ քաղքին մեջ բոլոր դեմքեր թեպետ տխուր կը տեսնվեին, բայց մեծին ու պզտկին սիրտը ուրախությամբ կը տրոփեր, և անհամբեր կ'սպասեին, թե ե՞րբ պիտի երևա ազատարար դրոշը։

Այս սպասողներուն հույսը պարապը չելավ, վերջապես պատգամավորին եկած օրեն ութ օր վերջը, առավոտուն մեծ ամպ մը փոշվո քաղաքը պատեց, և երբ փոշին անհետացավ, տեսնվեցավ Թորոսի բանակը, ուր քսան հազարի մոտ մարդ վարժ աչք մը կրնար դատել. և ուր զարմանալի բարեկարգություն մը կը տիրեր անծանոթ բոլորովին երկրին բնակչաց. վրանները կանոնավոր՝ ի կարգ շարված էին, բանակին չորս կողմը խրամեր կը փորվեին, և անոնցմե պեղած հողը պարսպապես ամուր պատնեշ մը կը կազմեր բանակին չորս կողմը. մեքենաներ կը բերվեին կարգավ կը շարվեին հարմար դիրքերու դեմ, ուր պիտի գործադրվեին, և որ դիտելու արժանի էր, գեղեցիկ և բազմաթիվ հեծելազորաց խումբ մը կ'երևար, որոնց կես մասը արաբացի ձիերե կազմված էր։ Եվ երբ Թորոս տեսնվեցավ բարձր և ահիպարանոց ձիու մը վրա, զինվորաց ուրախության աղաղակը բոլոր Անարզաբա կը թնդացներ։

Իր աջ կողմեն բեհեղներով և ծիրանիներով զարդարված, իշխանական պսակ ի գլուխ, ճերմակ ձիու մը վրա առնաբար հեծած կուգար Եվտիմե, և երկուքին քովեն երկու երիտասարդք ոսկեփայլ սաղավարտներով և արծաթապատ վահաններով ճոխացյալ՝ նժույգներու վրա կը շահատակեին. ասոնք էին Մլեհ և Ստեփանե, որ իրենց եղբոր հաջող գալուստը լսելով, Հալապու ամիրային ընծաներով և հինգ հարյուրի չափ հեծելազորք կուգային ուրախությամբ իրենց եղբորը դարձը վայելելու, որ կի-

լիկիո դռները կը բանար հաղթապես այնչափ տարվան օտարին ծառայութենեն վերջ։ Այս երկու երիտասարդք ալ իրենց եղբորը կը նմանեին կերպարանքք և քաջությամբ, և իրոք առյուծու կորյուններ էին. ամեն աչք զիրենք տեսնելուն միայն կրնար վկայել, թե մեծ պատերազմական զորություն մը կը հաներ Թորոսի։ Թեպետ Թորոսի հեռատես աչքերը մեկեն կշռեցին զիրենք, օգտի և վնասու բաժինը նշմարեցին վայրկենին, բայց դարձյալ միշտ անթափանցելի՝ եղբայրական սրտով և սիրով գրկեց, ընդունեցավ զիրենք բոլոր բանակին առջև, ներկայացուց իր սիրասուն կնոջ, որ անկեղծ սրտով իբր եղբայր ընդունեց զիրենք, և ամեն սիրտ ուրախությամբ լցվեցան և նոցա գալուստը տոնեցին։ Եվ որովհետև ժամ էր ելնելու ի Մամեստիո հԱնարզաբա, բանակը արդեն ելած էր, և հարազատք քիչ մը հանգչելե վերջ՝ ելան նույնպես բանակին ետևեն։

Երկայն տարիներու պարագաներ այս ճամփորդության մեջ կը պատմվեին, ծնողաց կորուստ, դժբախտ և ուրախ օրեր, արկածներ կը հիշատակվեին։ Նույն միջոցին Կոստանդին և Բարկեն զրահավորք, որ քովեքով կը ձիավարեին, իրարու աչք մը նետեցին, Բարկենի սպարտական բնությունը գոհ եղավ ակնարկեն, բայց Կոստանդին՝

— Կը հիշե՞ս, Բարկեն, Կոստանդնուպոլսո մեր տեսությունը և քեզի ինչ որ պատմեցի այս տղոց համար,— ըսավ,— հիմա ես կը վախեմ, թե իշխանին գլուխն ասոնք մեյ-մեկ փուշե պսակ լինին... Ստեփանե անվնաս թերևս, բայց պզտիկը աստված հեռի ընե։ Իրավ, Բարկեն, առաջի նայելուդ ասոնք եղբայր են կերպարանքք, բայց նայե, դիտե, Մլեհին աչքերուն մեջ բան մը կա, որ մարդուս սիրտը կը ճմլե և կը քստմնեցնե։ Պատասխան չե՞ս տար։

— Եղբա՛յր, ի՛նչ զրուցեմ, քիչ մը կամաց խոսե։

— Դու ալ լավ մարդ ես, եղբայր, բերանդ չի բացվեր, բացվի ալ, խրատ տալու համար միայն կը բացվի։

— Դու ալ լավ մարդ ես, քաջ մարդ ես, ինձի պես վաթսունը կը գտնես քանի մը տարիեն, բայց բերանդ շարունակ կը բացվի՝ միշտ գանգատի համար կը բացվի։

— Հա՛, խո՞սք էր ըսածդ, թե որ միշտ գանգատի համար կը բացվի իմ բերանը, քանի ամիս է մեկտեղ ենք, ո՞վ օր մը Թորոսի համար բան մը, խոսք մը լսեց բերնես։

— Ես։

— Տե՛, ե՞րբ, զրուցե նայիմ։

— Թե որ կամաց խոսիս, չի պոռաս, կիրք չելնես, կը զրուցեմ,— ըսավ Բարկեն ծիծաղելով և ձայնը ավելի ցածցնելով։

— Լա՛վ, մտիկ ըրե։ Լամբրոնի առաջ, այն գիշերը մի՞տքդ է, երբ իշխանիկը մարդիկը կապեց, դու կ՚ուզեիր մեռցնել...

— Ես ի՞նչ ըսի...

— Է՛հ. թե որ իմ ըսածս ասանկ արգիլես, ես խոսք մը չունիմ։

— Կը լռեմ, զրուցե՛։

— Անկից առաջ երկայն լեռան ճամփան բռնել տվավ իշխանը, դու ալ գանգատողներուն առաջինն էիր... Է՛հ, համբերե՛, լմնցուցի։ Ամուտա բերդին առջև հասար չի հասար՝ «այս բերդը կ՚առնվի՞» ձայնդ ձգող տղոց առջև դու էիր, միտքդ կուգա՞։ Իշխանը ասոնք գիտե, բայց ես լավ զինքը կը ճանչեմ, չի խոսի, չի մոռնար, և մարդկանց գործը միշտ բարի կողմը կ՚ուզե մեկնել։

— Քեզի բան մը ըսա՞վ... Մարդ գտանք հարցնելու, այդչափ որ խոսեցար, շնորհակալ պետք է լինիլ։

— Կոստանդին եղբայր, իշխանը չի խոսիր, ես քեզի ըսի, բայց ամեն բան կը տեսնե ու կը լսե։ Քու քաջությունդ կը գովե, միայն մեկ բանի մը սիրտը նեղացավ, և ինձի հատկապես ապսպրեց քեզի լսել, թե Սարգսին հետ լավ վարվիս։

— Ես Սարգսին ի՞նչ ըրի։

— Կամաց, եղբա՛յր, հիմա կը ձգեմ կ՚երթամ,— ըսավ Բարկեն ձին մեկդի քշելով։

— Մի՛ նեղանար, Բարկեն, ինձի անհամբեր կ՚ըսեն, դու ինձմե անհամբեր ես, ես Սարգսին ի՞նչ եմ ըրեր, որ իշխանին սիրտը նեղացեր է։

— Ես գիտե՞մ, դու մտածե, անշուշտ կը գտնես։

— Երբ իշխանը անոր տասը բերդ ալ տա՝ իմ ի՞նչ հոգս. միայն այնչափ ըսի, չեմ ուրանար, թե մենք բոլոր Կիլիկիո ալ տիրենք, ածեմին-չածեմին պարգևելով քաղաք ու բերդ՝ իշխանի բնակության տեղ չպիտի մնա։ Ինձի Բարձր բերդը տվավ, քեզի՝ Ամուտան, Սարգսին՝ Առյուծը, խեղճուկ գյուղացվո մը տղուն բերդ մը տալ՝ ինձի առատաձեռնություն չերևար, այլ շռայլություն։ Այս զրուցեր եմ, հանցա՞նք մի ըրեր եմ։ Եղբայրները եկան. անոնց ի՞նչ պիտի տա. թե որ Վահկա մեկուն տա, Մամեստիա ալ մյուսին՝ ինք գետի՞նը պիտի նստի։

— Այս խոսքերը իշխանին իրեն կրնա՞ս զրուցել։

— Ինչո՞ւ պիտի չի զրուցեմ։

— Երբ դու այս խոսքերը կը կրկնես, ալ մի՛ զրուցեր, թե Սարգսին ի՞նչ ըրի. երբ անի ածեմին-չածեմին կարգը կը դնես, երբ գեղացվո տղա լինելուն բերդ մը իրեն շատ կը տեսնես. իշխանին առատաձեռնության վրա չէ քու կիրքդ. ուրիշ տեղ փնտրե դու անոր պատճառը։ Աստված

վկա՛, ես Սարգսի առ իշխանն ըրած ծառայությունը չեմ կրնար մոռնալ. ի՞նչ որ տրվի իրեն՝ արժանավոր է։ Մեր պարտքն ի՞նչ է, Թորոս մենք ի՞նչ կուզե. սիրով վարվիլ իրարու հետ, ազգին ազատության և լավության համար աշխատիլ. գոհ լինինք, եղբայր, մեր և ազգին վիճակեն, փառք տանք աստուծո. փուչ խոսքերով ինչո՞ւ իրար թունավորենք. ես ծերացա. դու ալ ծերանալու վրա ես. քիչ մը հանդարտե. խելոք եղիր. ազաքը որ կը հասնին, շահելու նայե. չի տեսա՞ր քանի անգամ իշխանը մեր երկուքը ցուցնելով տղոց՝ «ասոնք մեր հայրերն են, ասոնք մեր խելոքներն են, մենք ասոնց խոսքը մտիկ ընելու ենք» ըսավ. հիմա կ՚ըլլի՞, որ մենք անոնց սիրտը կոտրենք, կարծել տանք, թե մենք կը չարանանք և կը նախանձինք։

Բաբկենի այս ճառին վրա Կոստանդին տխրեցավ, ձայնը քաշեց։ Եվ ինչպես որ զրուցեցինք՝ զորաց աղաղակը՝ իրենց զորավարին ընդունելության համար, մեր երկու ընկերները իրրև քունե մը արթնցուցին՝ իմացնելով, թե Անարգաբա առջև հասեր էին։

Սարգիս սրամիտ և արթուն, ինչպես որ հասկցուցեր էր Թորոս իրենց, նույն կերպով ճիշտ բանակը ճակատեցուցեր էր բերդաքաղաքին պարիսպներուն դեմ, երեքի բաժնելով, յուրաքանչյուրին իրեն խրամները և պատնեշները որոշելով ու ցուցնելով, վրանները կանոնավորյալ շարել տալով. վրան չեղածներուն՝ ծառերու ճյուղեր բերել տալու հրաման ընելով, որպեսզի տաղավարներ շինվին, և ամենքը կանոնավոր միակարգ և ոչ խառնիխուռն անկարգ։

Երբ Մլեհ և Ստեփանե, որ տաճկաց զինվորական ծառայության մեջ անցուցեր էին իրենց օրերը, այս կանոնավորությունը տեսան, զարմանոք Սարգսի մոտենալով, սկսան հարցնել, թե ուսկի՞ց ուսեր էր այսպես բանակ զարնել տալ. իսկ նա ցուցնելով զԹորոս՝ «Իշխանին հրամանավն և կարգադրությամբ ամեն բան ընել կուտամ» ըսավ։ Իսկ Թորոս այն միջոցին հրավիրելով զԵվփիմե և Դիոնիս հանգչելու՝ իրեն պատրաստված վրանին տակ, քաղաքին շուրջը պտույտ մը կ՚ըներ թե՛ քաղաքը դիտելու և թե՛ բանակը զննելու համար, ամեն տեղ ինչ պակասություն կար Բաբկենի, Կոստանդնի և ուրիշ զորավարաց կը ցուցներ համառոտ և ճիշտ խոսքերով։ Երբ յուր քննությունը լրացուց, եկավ հանգչելու վրանին տակ։ Խոսեցավ եղբարցը հետ դարձյալ, շատ մը հարցմունքներ ըրավ Հալէպու ամիրայի Նուրեդտինին վրա, անոր բնավորության, վարմունքին, զորության, տաճկաց պատերազմելու ընդհանուր կերպին վրա։ Վերջը սեղանը պատրաստել հրամայեց, հրավիրեց զամենքը, որ նստին կեթակուրի, հանձնելով Եվփիմեի պատվել իր նորեկ եղբայրները, որ դեռ հյուր էին քանի մը ժամու համար, և որ քիչ մը վերջը տնեցի

պիտի լինեին բոլորովին. զինվորներուն հետ պատառ մը հաց կերավ և հետո ելավ դարձյալ պտույտ մ՚ընելու, ամենուն տեղեկություն հարցնելով Անարգաբա վրա, մանավանդ անոնց, որ նույն քաղաքացի էին. տեսավ նաև մեկ քանի երիտասարդ ալ, որ Սմբատի ծառայության մեջ գտնված էին, անոնք առանձին հարցուփորձ ըրավ և ինչ տեղեկություն որ կ՚առներ, ամենքն օգտակար համարելով, բան մը չէր արհամարհեր։ Երբ նորեն յուր վրանը եկավ, տեսավ, որ անոնք իրենց կերակուրը կերած էին, սկսավ Բաբկենի հարցմունքներ ընել Վահկա բերդին նորոգության վրա, որուն համար ապսպրեր էր բոլորովին նույնպես ընել, ինչպես իրեն հորեղբոր և հոր ժամանակ. ու երբ իմացավ, թե նույնպես կատարվեր է, գոհ եղավ և ամենքը արձակելով հանգչեցավ քունի։

Թեպետ հազիվ թե ամիս մը եղած էր, բայց զինվոր և զորավար ամենքը գիտեին իրենց իշխանին արթուն սովորությունը, ուստի ամենքը գիտեին իրենց իշխանին արթուն սովորությունը, ուստի ամենքը թե որ գիշերապահ և գիշերահած իր պաշտոնը ճշտիվ կը կատարեր, վասնզի որոշ գիտեր, թե չի կարծած և չսպասած վայրկենին զորապետը ներկա էր, խիստ և ներողամիտ միանգամայն, որ գիտեր, թե երբ գործադրելու է պատիժ և վարձատրություն, ուստի ամենքը թե կը վախեին և թե կը սիրեին զինքը։

Երբ առավոտ եղավ, ամենքը տեսան զԹորոս, որ ոտքի վրա էր, և Սարգսի միջոցով աղեղնավորաց խմբի մը կը հրամայեր նետաձիգ լինել ի քաղաք։ Նետերուն վրա թուղթեր կապել տվավ, որոնց վրա գրված էր. «Թե որ կ՚ուզեք պաշարման նեղութենեն և ձեր իշխանին բռնութենեն ժամառաջ փրկվիլ, միացե՛ք և բացե՛ք դռները, մենք ձեզ ազատելու համար եկեր ենք, գիտցեք, որ թշնամի չենք, այլ բարեկամ»։ Այսպիսի հարյուրավոր նետեր նետվեցան քաղքին մեջ. Սմբատ իմանալով, խստիվ հրաման ըրավ, որ ժողովվին և իրեն բերվին։

Երբ խուրձեր այս նետերեն կը բերին և իշխանին առաջին կը լեցնեին, ինք կատաղությամբ ակռաները կը կրճատեր ու կը հայհոյեր. «վատ, դավաճան, մատնիչ» բառեր բերանեն դուրս կը թափվեին շարունակ և իր բորբոքած փրփրած ժամանակը կ՚սպառնար, կը հրամայեր կրակի տալ քաղաքը, Թորոսեն ալ, բնակիչներեն ալ վրեժ առնելու համար։ Այսպիսի ժամանակ ոչ կինը, ոչ տղան, ոչ սրբազանը և ո՛չ ոք չէր համարձակեր իրեն մատենալու. ուստի ամենքը հեռու կը պտրտեին։ Նույն միջոցին էր, որ Մարգրիտ իր ծերուկ Մարտիրոս ծառային հետ քաղքին հիցին էր, որ Մարգրիտ իր ծերուկ Մարտիրոս ծառային հետ քաղքին հիվանդաց այցելությենեն ետ կը դառնար, ձեռքն առած այն նետերեն մեկ հատ մը։ Իր ծանր և լուրջ գեմքը, որ ամեն ժպիրհ նայվածք կը խոնարհեցներ, հրեշտակի կերպարանք մը ուներ, երբ իր հորը կատաղության

վայրկյանները կ'արթննային. ուստի երբ միջնաբերդը մտավ և իր սենյակները երթալու ատեն իր հորը գոռգոռալուն ձայնը լսեց, ճամփան շեղեց և հորը հովանոցն ուղղվեցավ ու ձեռքը նետը դեպի հայրը գնաց, որ զինքը տեսածին պես, անցավ դառն գանգատներու՝ ընդդեմ Թորոսի, ընդդեմ քաղաքացվոց, ընդդեմ բերդապահ զորականաց, ընդդեմ իր ծառայից և նաև ընտանյաց։ Մարգրիտ արձանի մը պես մտիկ կ'ըներ այս խոսքերը, և երբ հայրը իր բոլոր կատաղության ճարտասանությունը և շունչը հատուց ու լռեց, այն ատեն քովը մոտենալով ու կարեկից աչքով սկսավ նայիլ դարձյալ առանց խոսելու. Սմբատ վերջապես կանչեց. «Զրուցե՛, Մարգրիտ, դո՛ւ զրուցե, միթե ես իրավունք չունի՞մ այս անիծյալ քաղաքը այրելու»։ Երկայն լռություն մը այս խոսքերուն հաջորդեց, և իշխանը տեսնելով իր զավկին ձեռքը այն նետերեն, որ իր բարկությունը գրգռել էին.

— Դո՞ւ ալ այդ նետերեն ձեռքդ կը պտրտեցնես։

— Քաղաքը կ'երևա թե ողողած էր ասոնցմով, որովհետև ես ալ հատ մը գտա։

— Անիծի՜ց քաղաք, հիմն ի վեր տապալելու արժանի. անիծյա՜լ բնակիչք։

Այս խոսքերը դեռ բերանն էին, երբ աղմուկ և աղաղակ լսվեցավ. ձայները վերը միջնաբերդն կը բարձրանային, և պարիսպներուն միայն մոտենալով, կը տեսնվեր, որ ժողովուրդը և պահապանները իրարու հետ կը կռվեին, անոնք ուզելով դռները բանալ և ասոնք արգիլել։ Ա՛լ կատարյալ մոլեգնելով Սմբատ զենքերն առավ, և առանց աղջկան ձայնին լսելու դիմեց օգնելու իր զորականաց, որ ժողովրդյան բազմության դեմ կը մաքառեին։ Իշխանին տեսությունը փոխանակ հանդարտեցնելու, ալ ավելի զայրացուց ամբոխը. քարեր անձրևի պես կը տեղային, և միջնաբերդին դռնեն մինչև պարիսպները տուն, տանիք չի կար, որ զորաց վրա ունեցածը չի պարպեր, իշխանը, տեսնելով վտանգը, ետ դառնալ կ'ուզեր, բայց անկարելի էր, շվարյալ մնացեր էր. իրավ իր զորքերը անգործ չէին կենար, արյունը կը վազեր, բայց ի՞նչ օգուտ, որ մեկ ինկածին տեղ տասը-քսան կը բուսեր. վերջապես ձայն մը ելավ, թե ժողովուրդը կրցավ դռներուն մեկուն տիրանալ՝ բանալ և թշնամին ներս խուժել. ուստի Սմբատ նույն միջոցին գոնե միջնաբերդը կ'ուզեր ինքզինքը նետել, բայց կարելի չէր. այս հուսահատ վայրկենին ձայն փրթավ ժողովրդյան և զորաց մեջ։

— Օրիո՛րդն, Օրիո՛րդն,— պոռացին երկու կողմեն և լռություն մը տիրեց, քարի և նետի կարկուտը դադրեցավ. Մարգրիտ երևցավ գլուխը բաց, անպատսպար. վազելով գնաց և ինք հորը ձեռքեն բռնած, իբրև

վահան զինքը ծածկելով, զորքերն ալ ետևեն բերավ մտուց միջնաբերդը, և դռները գոցվեցան։ Ժամանակ էր, վասնզի մյուս դռնեն Թորոսի զորքերը գունդագունդ ներս կը խուժեին և քաղաքացվոց հետ եղբայրաբար կը գրկվեին, և միջնաբերդին վրայեն տեսնողներուն հայտնի էր, որ եթե Մարգրիտ քանի մը վայրկյան ալ ուշանար՝ հայրը ողջ կամ մեռած թշնամյաց ձեռքն ինկած էր։

ԳԼՈՒԽ ԺԸ

ԱՌԱՔԻՆՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՆԱԿԸ

Այս առաքինության հաղթանակեն վերջը, ուր անզեն աղջկան մը երևույթը զինաթափ ըրավ պատերազմող ձեռքերն և իր հայրը կորըստենե ազատեց, Սմբատ փոխվեցավ բոլորովին։ Իր հովանոցին մեջ նստած ոչ կը խոսեր, ոչ կուտեր, ոչ կը խմեր. Տիկինը և սրբազանը մեկ քանի մը ջանացին իր համառ և անտարբեր լռությունը ընդմիջել, բայց ճար չելավ. ուստի Օրիորդին դիմեցին, որ հորը հետ խոսի, բայց ի՞նչ խոսեր, այն չէին կրնար որոշել։

Իսկ թշնամին քաղքին ամեն կողմին տիրելեն վերջ պատրաստություններ կը տեսներ, հողապատնեշներ կը շիներ, ճամփաներ, տուներ, հաղորդակցության միջոցներ կ'ապահովեր, բերդականաց ձգողական զենքերեն պաշտպանվելու համար, ինչ որ պետք էր, կ'ըներ և կը զարմանար, թե նոքա կենաց նշան ամենևին չէին տար։

Եվ իրոք, իշխանին այն վիճակը ամենը լքույց, պատճառը ոչ ոք չէր հասկնար, վարձկան զորականք սկսած էին քրթմնջել, և վերը արդեն Տիկինն, նամանավանդ սրբազանը, իշխանին խելքին վրա ցնորք մը նշմարելով լռութենեն, սկսած էին դավադիր լինել՝ կերպով մը տղան՝ Բակուրա տեղը նստեցնել խորհելով, երբ նա, որ մինչև այն օրը վտանգ մը տեսած չուներ, և իր հաճույքներեն ու զվարճություններեն զատ բան մը չէր երևակայեր, այս միջնաբերդին մեջ բանտյալ վիճակեն ազատելն ուրիշ բան չէր մտածեր, ուստի իր այս թեթևությունն ալ ավելի խայծ մ'էր տիկին մորը, տղուն անունով կառավարել։

Երբ Մարգրիտ այս վիճակը տեսավ և գուշակեց, երբ կիսակտուր բառեր ամեն բան հայտնեցին և երևակայեց, թե չարյաց չարագույն վիճակ մը պիտի ծագի, որոշեց հորը մոտենալ և իր պարզությամբ քովը նստելով սկսավ հարցմունքներ ընել, թե ինչո՞ւ տխուր էր, թե ինչո՞ւ չէր

ուտեր խմեր... և առանց ձանձրանալու այնչափ անուշ և այնչափ երկար խոսեցավ և կրկնեց հարցմունքները, որ Սմբատ սկսավ փոխվիլ, իր գետին սևեռող նայվածքն ու խլությունը անհետացավ, սկսավ իր աղջկան խոսքերուն ուշադրություն ընելն հայտնել և վերջապես, երբև քունե մը ցնցվելով և արթնանալով, պատասխանեց։

— Դու, Մարգրիտ, դու չէի՞ր, որ ըսիր, թե քաղաքացիք պիտի ապըստամբին։

— Այո՛, հայր իմ,— ըսավ աղջիկը, հորը աջն իր ձեռքերուն մեջ ամփոփելով փաղաքշանոք։

— Ապստամբեցան և քաղաքը մատնեցին։

— Այո՛, հայր իմ։

— Դու, չէի՞ր, որ ըսիր, այս վարձկան և սրիկա զինվորները զիս պիտի մատնեն։

— Այո՛, հայր իմ։

— Ուրեմն ճար չի կա, պետք է սպասել այս վիճակիս, պետք է ըսպասել գերության, պետք է սպասել աստանդական շրջելու ապաստարան մը փնտրելու համար. դու ըսիր՝ ուրեմն, ասոնք պիտի լինին. դու գուշակեցիր՝ ուրեմն վերահաս է և պիտի հանդիպի. լա՛վ է ուրեմն մեռնիլ։

— Ինչո՞ւ համար դու այսպես կը հուսահատիս, հայր իմ,— ըսավ Մարգրիտ՝ տեսնելով, թե իր նախատեսությունքը ինչչա՛փ վնասակար եղած էին հորը,— ես մարգարեության հոգվով չի զրուցեցի բան մը, այլ բոլոր իմ խոսքերս ըրած դիտողությանցս վրա երևակայական ձգտումներ էին. դու թե որ ուզես, ես հիմա, ես տկար աղջիկ մը, ամեն բան կարգի կը դնեմ, միայն հրաման տուր։

— Ինչպե՞ս կարգի կը դնես դու այս վիճակը, որ արգեն իր վախճանը գտած է։

— Հիմա Թորոսին քու կողմանեդ...

— Թորոսին իմ կողմանես պատգամավոր կամ նավակ չի՛ կրնար երթալ և պետք չէ՛ երթա։

— Բայց, հայր իմ։

— Հայր, մայր չի կա, փուչ տեղ ինձի հետ մի խոսակցիր, զիս մի նեղիր. ամեն մարդ իր բախտին պետք է հետևի. ի՛նչ որ մինչև հիմա քու հորդ համար ըրիր, բավական է, աստված քեզ օրհնե և վարձատրե. ինչչափ որ դեշ, անպիտան և չարագործ ալ լինի մեկը, իր զավկին համար մանավանդ, երբ զավակը այնչափ առաքինի է քեզի պես, մեկ անգամվա համար երբ աղոթե, աստված անոր ձայնը կը լսե, ուստի նորեն կ'ըսեմ, ես ա՛լ բան մը չունիմ, ամեն բան լմնցած է ինձի համար, ոչ իշխանություն, ոչ կարողություն, ոչ հարստություն, ամեն բան կորան և անոնց հետքն անգամ չի մնաց. հոս անզգամության չափը լցվեցավ, դու միայն մնացիր անարատ այս գարշության մեջ, աստված քեզ վարձատրե՛, աստված քու վերջդ բարին ընե՛։

Եվ այս խոսքերը դրուցելուն իշխանը ձեռքը զավկին գլխուն դրած, աչքերը արտասվայից երկինք վերուցած էր։

Տխուր և դառն սրտիվ մտիկ կ'ըներ այս խոսքերը Օրիորդը, երբ հայրը ոտքի վրա ելավ, հանդարտ էր բոլորովին և սկսավ վեր-վար շրջագայել ու հանկարծ կենալով հրամայեց, որ Վասիլ կանչեն, և երբ նա սոսկումով ներս մտավ՝

— Գնա՛,— ըսավ,— բոլոր բանտարկյալները հոս բեր հիմա։

Քանի մը վայրկյան վերջը քառասունի չափ անձինք իր առջև շարվեցան շղթայակապ։

— Ամենքն ասոնք ամբողջ ներկա՞ են,— հարցուց իշխանը,— չի կա՞ ոք պակաս։

— Ո՛չ, տեր,— պատասխանեց Վասիլի ոնգային ձայնը։

— Շուտ ասոնց շղթաները քակեցե՛ք։

Եվ երբ հրամանը կատարվեցավ՝

— Գնացեք ձեր տունները, ազատ եք ասկից վերջը զիս և իմ հիշատակս նզովելու, անիծելու և հայհոյելու, միայն շնորհակալ եղեք և օրհնեցեք այս աղջիկը, ինչ որ մինչև հիմա ապրեցաք և պիտի ապրիք, գիտցեք ի շնորհս նորա է։ Տե՛, մ'երևաք աչքիս, գնացե՛ք։

Այնպիսի դառնությամբ զրուցվեցան այս խոսքերը, որ իրև թե ինքնիրեն կը վախեր, որ կրնար զղջալ և հրամանը հետս կոչել։ Ուստի մարդիկն ալ զարմանքով և ահով-դողով, երբ միջնաբերդին դռնեն դուրս ելան, մեծ ծանրություն մը գնաց իրենց վրայեն։ Բայց այս ամեն եղելությանց Մարգրիտ նստած ձեռք-ձեռքի վրա դրած կը մտածեր, թե ինչպե՞ս կարելի էր այս քարասիրտ մարդուն սիրտը կակղեցնել. ուստի ելավ վերջին ճիգ մ'ալ ընելու, վասնզի այս մարդը ինչ աստիճանի անզգամ ալ որ լիներ, իր հայրն էր, քովը մոտեցավ.

— Սիրելի հայր իմ,— ըսավ,— կը տեսնեմ, թե սոսկալի որոշումնք մը ունիս, բայց դու չես մտածեր, թե ես քեզմե զատ մեկը չունիմ աշխարհիս վերա, դու միայն իմ հույսս և իմ պաշտպանս ես, ես առանց քեզի ի՞նչ պիտի լինիմ։

Այս խոսքերով կը հուսար, որ հուսահատ որոշումնքե մը զինք ետ կեցնե, բայց իշխանը այնչափ միամիտ չէր։

— Դու փուչ տեղ կը վախես, աղջիկս,— ըսավ,— ես դեռ իմ վերջին որոշումնքս չեմ ըրած, և զքեզ ալ պաշտպանության կարոտ չեմ

գտներ, վասնզի երեկ դու զիս պաշտպաններիր, արդեն քու փափագդ հայտնի է ինձի. դու միշտ մենաստան մը քաշվիլ կ'ուզեիր, մենք զքեզ արգիլեցինք մինչև այսօրս. ուստի դու հանգիստ եղիր. բոլոր քաղաքը զքեզ կը պաշտպանե, և դու ո՛ւր որ ուզես, կրնաս քաշվիլ։

Այս խոսքերը խստությամբ զրուցվեցան. ուստի իմանալով Օրիորդը, որ ճար չի կար, տխուր իր սենյակը քաշվեցավ՝ աստուծո հանձնելով ինքզինքը և երեք անմեղները՝ հարսը և յուր պզտի տղայքը, որ ուրիշներուն հանցանքը կը տուժեին։

Նույն միջոցին, որ ինք հորը հետ վերոհիշյալ խոսակցությունը կ'ըներ, Տիկինը, տղան Բակուրա և սրբազանը մեկտեղ կ'իջնեին վարի մեծ գավիթը, ուր զինվորաց խումբը կը կենային։ Քանի մը ճրագներ և քանի մը կանթեղ տկար և տխուր լույս մը կը ձգեին. ուստի երբ այս մեր երեք անձինքը սանդուխին վարը կեցան, բոլոր խումբը հոն ժողովվեցան իմանալու համար, թե ի՞նչ կը նշանակեր այս անսովոր այցելությունը։

Սրբազանը սկսավ տխուր ձայնով մը վիճակին ծանրությունը նկարագրել, վերջը հոն բերավ խոսքը, թե ինչպե՛ս իշխանը հուսահատ՝ բոլորովին հակասական հրամաններ կուտար. երեկվան դատապարտվածները այսօր կարձակեր, թե ինչպե՛ս փոխանակ պատերազմի պատրաստության կամ բանագնացության, մունջ և համր եղած, հարցմունքներուն նաև պատասխան չէր տար, և թե ինչպես Օրիորդն անգամ իրմե գոհացուցիչ պատասխան մը չէր կրցած առնուլ... Ուստի,— ավելցուց սրբազանը,— թե այսպիսի պարագայի մեջ Տիկինը և ինք, և Օրիորդը աղաչեր էին Բակուրա իշխանազունը, որ հանձն առնու կառավարությունը այսպիսի ծանր պարագայի մեջ, որպեսզի քաղաքն անիշխանության չի մատնվի։

— Մենք իշխա՛նը միայն մեզի տեր կը ճանաչենք, ու՞ր է, թող գա,— ըսավ ձայն մը։

— Մենք ձեզի հավատարմություն չունինք,— աղաղակեց ուրիշ մը։

— Օրիո՛րդը թող գա, այն խոսի,— ըսավ մեկ ուրիշ ձայն մ'ալ։

— Անոր միայն վստահություն ունինք։

— Օրիո՛րդը, Օրիո՛րդը կ'ուզենք,— սկսան գոչել խառն ձայներու բազմություն մը։

— Դուք ալ մեզի պես անպիտան եք, անպիտանն՛եր, անզգամն՛եր։ Եվ ձայները կը բարձրանային, ու գավիթը կը թնդար, մեր երեք անձանց վիճակը վտանգավոր էր. ետ դառնալ և սանդուխներեն վեր փախչիլ անկարելի էր, գազանի մը կոնակը դարձնելն հայտնի է, թե հիմարություն է։ Երեք անձինք, որ ինքզինքնին ծուղակի մեջ ձգեցին՝ բոլորովին շփոթեցան. և հիրավի ամենեն քաջ մարդիկն նաև այդ արյունալի և գազանային աչքերը որ տեսնեին, կարելի չէր սոսկում զիրենք չի պատեր։ Տիկինը յուր բոլոր հնարիմացությունը ժողվելով նշան ըրավ, որ կուզեր խոսիլ. բայց հազիվ թե փոքրիկ լռություն մը կ'սկսեր, աղաղակները դարձյալ կը բարձրանային, և անհնար կը լիներ խոսք լսեցնել. այս տագնապին մեջ էին, երբ հանկարծ ճերմակ գիշերազգեստ հագած, մազերը կոնակն ի վար թափած երևցավ Մարգրիտ, որ խառնակ աղաղակներեն կարծելով, թե միջնաբերդն ալ առնվեր էր, մեկ ձեռքը ճրագ, մյուսով եղբորը փոքրիկ տղան գրկած դեպի սանդուխը կը վազեր, հարսն ալ մյուս տղան գիրկը իրեն կը հետևեր, երբ զինքը տեսան այն կես գազան զինվորները, պատկառանաց լռություն մը տիրեց, և Տիկինը սիրտ առնելով՝ «ե՛կ աղջիկս, ե՛կ, մեր զինվորները քեզ կ'ուզեն, որ խոսիս, և հանդարտին» կանչեց։ Եվ երեքն ալ մեկեն դեպ անոր կ'երթեին սանդուխներեն ապահովելու համար։

— Ապրի՜ Օրիորդը, կեցցե՜ Օրիորդը,— կը կանչեին զինվորները մեկ բերան։

Այս խառնակության և աղաղակներուն մեջ մայրը աղջկանը իմացուց քանի մը խոսքով, թե ինչե՞ն էր այս գրգռությունը, և թե ինք միայն կրնա այս մոլեգին զորականը հանդարտեցնել։ Ուստի Մարգրիտ առաջ անցնելով սանդուխներեն քանի մը ոտք իջավ՝ միշտ տղան գիրկը, ձեռքով նշանացի ըրավ, որ լռեն։

Գեղեցկություն, երիտասարդություն և առաքինության դրոշմ կնկան ճակատի վրա՝ այնպիսի ազդեցություն ունի մարդկանց, որ անոնց գազանները նաև անկից աղատ չեն, ուստի շուտ մը լռությունը տիրեց, և Օրիորդը այսպես խոսեցավ։

— Ձեզմե շատերը իմ տղայությունս գիտեն, կան միջերնեդ մարդիկ, որ ես իբրև հայր ճանչցեր եմ և որոնց պաշտպանությունը վայելեր եմ զանազան ուխտագնացությանց մեջ. մեկ հարկի տակ բնակյալ՝ ամենքնիդ իբրև եղբայր ճանչեր էի մինչև այսօր, և այնպես կը հուսայի, թե մեր այս թշվառ վայրկյաններուն, մեկ սիրտ, մեկ հոգի՝ մեր ցավերը պիտի չավելցնեք, և այս վիճակեն ելնելու համար ինչ կերպով որ կարելի է ճարը մեկտեղ միաբան պիտի հոգանք։ Այս բարկացայտ աղաղակները, որ զիս այս վիճակիս մեջ դուրս ձգեցին սենեկես, այս անմեղ տղայոց արցունքը, որ զիս շփոթեցին, ինձ այսպես կարծել տվին, թե թշնամին առեր է այս մեր վերջի ապաստանն ալ, և մեզ գերությենե զատ ուրիշ բան չէ մնացեր։ Իսկ հիմա կը տեսնեմ, թե մենք մեր տանը մեջ խռովություն կը հանենք, զիրար կ'ուզենք հարվածել. մի՛ կարծիք, թե այսպես մեջերնես մեկը օգուտ կրնա քաղել. պետք է ամենքս լավ ըմբռնենք, թե մեր մեջեն նա, որ հիմա վազե այս դուռը բանալու և ներս

հրավիրե թշնամին, է՛ն արհամարհը ինքն է նորա աչքին. մատնության պես անարգ ի՛նչ կա աշխարհիս վրա, ո՛վ մեջերնես Հուդայի անունը և բաժինը կ'ուզե ժառանգել։ Ո՛չ ոք։ Այս աղաղակները, այս կիրքը նաև մեզի ի՞նչ գեշ հետևանքներ պիտի բերեն։ Հանդարտինք, եղբարք իմ, ձեր մեջեն կը տեսնեմ ես քանի մը խոհեմ ծերեր, անոնց խորհուրդ հարցուցեք, անոնք իրրև հայր հարգեցեք, անոնց խոսքը մտիկ ըրեք, բանի մը թե կը փափագիք՝ անոնցմով մեզի իմացուցեք. իշխանը՝ իմ հայրս, գիտեք, որ քիչ մը հիվանդ է, այսպիսի աղաղակներով իր վիճակը կը ծանրանա, և դուք տիրասպան լինելու նախատինքն ու աղտը ձեր անվան վրա կը դրոշմեք, զգուշացե՛ք։

Այս խոսքերը լուրջ և տխուր դառնությամբ մը զրուցված, բեմի վրայե տրված քարոզե մը ավելի ազդեցություն ըրին այս ավազակաց վրա, և այս մաքուր շրթունքներեն ելած խոսքերը իրրև թե զանոնք մկրտեցին, հազիվ թե մեկ-երկու խենթուկներ «կեցցե՛ Օրիորդը» պոռացին, «լռություն» բառը ամեն բերնե զանոնք պապանձեցուց, և մեր իշխանական ընտանիքը խաղաղությամբ ելավ իր սենյակները։ Մարգրիտ տղեկը հանձնեց հարսին, և ինք առանց ուշադրություն ընելու մորը, եղբորը և սրբազանին գովասանական անհամ խոսքերուն, որ վտանգե ազատելնուն ի՛նչ զրուցածնին չէին գիտեր, լի դառն գուշակությամբ հորը հովանոցը ուղղվեցավ, հազիվ թե դռանը մոտեցավ, իր ծեր և մոնջ Մարտիրոսը տեսավ, որ անսովոր համարձակությամբ «Օրիորդ, մի՛ մտներ. հոս ի՞նչ բան ունիս» ըսելով կ'ուզեր զինք արգելուլ։ Այս արգելքը զինք իր համոզման մեջ հաստատելով՝ արգելքը վանեց և տախտին մոտեցավ, ուր սովորաբար իր հայրը կը հանգչեր, և տեսավ զնա տարածյալ՝ սուր մը սրտին մեջ գամված, արյունը, որ առվակի պես կը վազեր, հասկցավ, որ ամեն բան լմնցեր էր. չոքեցավ հոն, բազմոցին եզերքը, նայեցավ այն աստեղազարդ երկնքին, իր մտքին աչքերը դեռ անդին ավելի բարձրը ողորմության աստվածը տեսան, որուն գթությունը անսահման է և անչափ, անոր աղոթեց, իր թշվառ հորը ձեռքերուն վրա դրավ իր շրթունքները, յուր մաքուր և որդիական արցունքները, որ արյունը կը լվային, ինք կը հավատար, թե ոճիրները նաև կը լվային երկինքը. և երբ աղոթքը լմնցուց և հովանոցին դռնեն դուրս ելավ, տեսավ զինվորաց ութ-տասը հատ ծերերը շարված, որ իրեն կ'սպասեին, ամենայն հարգանոք իրեն ըսին.

— Ո՛վ ազնիվ Օրիորդ, աստված քեզ մխիթարություն տա, ինք տերն ողորմի մեր իշխանին հոգվույն, մեր բոլոր զինվորակիցքը իրենց ցավակցությունք քեզ կը հայտնեն զմեզ պատգամավոր հուղարկելով և կը խնդրեն, որ իրենց աղաչանաց մտիկ ընես և հանձն առնուս հաջորդ լինել հորդ, քո իմաստությամբ և առաքինությամբ տնօրինես։ Իրենք հայտնի կիմացնեն, թե ոչ տիկինը, ոչ սրբազանը և ոչ քու եղբայրդ՝ Բակուրա իշխանը, կրնան ճանչել հաջորդ իշխանին. իսկ եթե դու հանձն չես առնուր, այն ատեն իրենք գիտեն իրենց ընելիքը և անոր համար ալ առաջուց թողություն կ'ուզեն։

— Ասանկ վայրկենի մը մեջ զոնե մինչև վաղն առավոտ ինձի ժամանակ պետք է տաք խորհրդածելու. ձեր այս առաջարկությունը գիտե՞ք որչափ ծանր է, ամեն կարգ ու կանոն տակնուվրա կ'ընե, և աշխարհը ի՞նչ կը զրուցե, երբ ես իմ մեկ հատիկ եղբայրս զրկեմ ժառանգությենե՝ հորս դիակը դեռ հող չի մտած։ Խնդրեմ, այսպիսի բռնավորական գործ մի՛ ընեք, և նայինք, թե ոչ վերը, ոչ վարը բաժանմունք չինի մեջերնիս. ձեզ իբրև հոր, անոնց իբրև եղբոր կ'աղաչեմ իմ այս խոսքերուս վրա մտածելու։

Առանց պատասխանելու ծերերը ելան գնացին, և Օրիորդը հազիվ թե իր սենյակը մտավ, զարմացավ տեսնելով հոն մայրը, եղբայրը և անբաժանելի սրբազանը, որոնք սոսկումով պատած սկսան աղաչել իրեն, որ հանձն առնու ամեն առաջարկություն, ամեն իշխանություն, միայն թե զիրենք և իրենց կյանքը ազատե այս կատաղի ավազակաց գնդին ձեռքեն, որ իրմե զատ բան մը չէին ակնածեր, և որ վարը արդեն զվասիլ հոշ-հոշ պատառելով սպանված էին, իբրև լրտես և բանսարկու։ Իսկ երբ Օրիորդը իրենց պատմեց, թե ինք ինչպես պայման դրած էր մինչև առավոտ սպասելու, սկսան երեքը միաբերան լալ, ողբալ և կոծվիլ, մանավանդ սրբազանը, թե շատ գեշ բան եղած էր, թե շատ կարելի էր, որ «այդ անզգամ չարագործները, որ ոչ աստուծմե կը վախեին և ոչ մարդկանե կ'ամաչեին, դառնային գային և անկարծելի ոճրագործությանց ձեռք զարնեին»։

Սենեկին դուռը բաց էր, երբ այս խոսքերը զրուցվեցան՝ Ավազին գլուխը ներս երկնցավ նույն վայրկենին, և իր երկու բոցի պես աչքերը յուր սևացյալ երեսին վրա փայլեցան նստողներուն աչքին. դաժան երեսով և սպառնալից ձայնով այս խոսքերն արտասանեց.

— Օրիո՛րդ, մեր գունդին կամքն այս է, որ կամ հիմա հանձն առնուս ամեն իշխանություն, կամ թե ոչ, որոշ հայտնես, և մենք գիտենք ընելիքնիս։

— Թե որ միաբան այդ որոշմունքը ունիք մեջերնիդ, թե որ միաբան իմ ամեն հրամանացս պիտի հնազանդիք, ինչպես հորս միշտ կը հնազանդեիք, լա՛վ, կ'ընդունիմ. բայց թե որ իմ անունիս քողին տակ ամեն անկարգություն պիտի տիրե, ես գիտեմ հորս ետևեն երթալու ճամփան։

— Մի՛ վախեր, մենք ամենքս կեցեր ենք, քու խոսքերդ Աստվածամոր խոսքի պես պիտի ընդունվին. հոգ մ'ըներ, Օրիո՛ր։

— Մենք կեցեր ենք հոս ամենքս,— ըսին տասը ձայնը, որ դուրսը կեցած էին և որոց ոմանց գլուխները կ'երևար՝ ոչինչ պակաս ահարկու, քան զԱվագինը։

— Հրամայե ուրեմն, իշխանուհիդ,— ըսավ Ավագ,— որ երևաս մեր զորականին։

— Վայրկյան մը ինձի ժամանակ տվեք,— ըսավ խեղճ աղջիկը արցունքը սրբելով և վրան սև հագուստ մը ձգեց, ու ետքը միայն իր Մարտիրոսը առած իջավ վարի գավիթը, ուր բոլոր զինվորները ժողովված իրեն կ'սպասեին։

Հոն, Ավագ Օրիորդին կողմանե եղած պատասխանը հաղորդեց, այն ատեն գավիթը թնդաց, վասնզի «կեցցե՛ մեր իշխանուհին» բառերը երեք հարյուր բերան որոտացին։ Օրիորդն ալ քանի մը բառով հորդորեց զիրենք, որ երթան հանգչին և իրեն ալ ժամանակ տան, որ կարենա հանդարտիլ և գիտենա, թե ինչ պիտի ընե։ Զինվորները իրենց խշտիները քաշվեցան։ Օրիորդը ծանր-ծանր և մտախոհ կ'երթար իր սենյակը պարագաներուն դառնությանը վրա խորհրդածելով և առաջադրելով, որ այս վիճակեն ազատած օրը իր փափագած կուսանաց վանքը քաշվի անդանդաղ։ Մյուս կողմեն կը կշռեր վիճակը, կը տեսներ, թե անկարելի էր դեմ դնել այսպիսի անկարգ ավազակներով Թորոսի պես թշնամվո մը առջև, ուստի կը մտածեր, թե ի՞նչ դաշինքներով կարելի էր պատվով ազատել ընտանիքը, և այս խորհրդածությամբ հուզյալ հազիվ թե առավոտյան դեմ մրափ մը առավ իր անկողնին վրա նստած և արշալույսին հետ արթնցավ։

Առավոտուն Սմբատա մարմինը դիապատեցավ, սենեկի մը մեջ դրվեցավ Օրիորդին հրամանավ։ Ընտանիքը ժողովքի կանչեց և անոնց միտքը հարցուց, բայց անոնք տեսավ, թե ահաբեկյալ՝ ազատիլ միայն այն վիճակեն կը փափագեին և ամեն բան իրեն կը թողնեին։ Ուստի առանց ժամանակ կորսնցնելու ձի մը պատրաստել, քանի մը ծեր զորագլուխներուն իրեն հետևիլ և միջնաբերդին դուռը բանալ հրամայելով՝ ուզեց որ իմացնեն Թորոսի, թե պատգամավոր պիտի գա խաղաղություն խոսելու։

Բոլորովին սևեր հագած, սև ձիու մը վրա հեծած, տխուր և դիմացը նայելով՝ մազերնին ճերմկցած, արևեն սևցած զինվորներե շրջապատյալ կ'երթար իշխանուհին, և բոլոր քաղաքը, որ արդեն զինքը կը ճանչեին և կը հարգեին, գիտենալով, թե հորը սգավորն էր, ավելի ակնածություն կը ցուցնեին. կանայք դռները և տանիքները կը լցվեին տեսնելու համար զինքը՝ «աստված զքեզ մխիթարե, աստված զքեզ օրհնե, աստված քեզի երկայն օրեր տա» ձայները ետևեն կը հասնեին։ Ոչ միայն զարմանալի էր Սմբատա մահվան լուրին տարածվիլը բոլոր քաղքին մեջ, այլ նաև ժողովրդյան կրից ներողամիտ լռությունը, որ թեպետ լի էր ատելությամբ նորա հիշատակին դեմ՝ այլ թշվառ և առաքինի աղջկան մը ականջին ծանր ու նախատանաց բառ մը չի լսեցուց։ Երբ քաղքին դռնեն ելավ Օրիորդը և բանակին մոտեցավ, տեսավ խումբ մը հետևակ մարդիկ, որ իրեն կուգային, առաջնորդները իմացուցին, թե իշխանը անձամբ կուգար զինքը դիմավորելու. մեկեն Մարգրիտ իջավ ձիեն։ Թորոս մոտենալով և ողջունելով, կրկին-կրկին հրավիրեց դարձյալ ձի հեծնել մինչև վրանները. իսկ Օրիորդը հրաժարելով հետի կը քայլեր իրեն հետ լռությամբ, մինչև որ հասան իշխանական վրանը, ուր Եվփիմե ևս պատվով ընդունեցավ զպատգամաբերը։

Մարգրիտ այն ընտրյալ և արտաքո կարգի բնավորություններեն էր, որոնց լռությունը, նայվածքը, շարժմունքը նաև՝ կը խոսի և կ'արտահայտե հոգվույն կատարելությունքը, և նույն բնության վիճակյալ անձինք իրար շուտ կը հասկնան։ Այնպես ալ հոս հիմա հանդիպեցավ, Թորոս ու Եվփիմե վայրկենին ճանչեցին Օրիորդին բարձր բնությունը, ինչպես նա ալ զանոնք ճանչեց և դատեց։

Քանի մը վայրկյան լուռ կենալեն վերջ, Թորոս հարկ համարեցավ խոսքը բանալու։

— Ազնիվ իշխանուհի, ձեր այսպիսի պատգամավորությունը պատիվ կը համարիմ և կը փափագիմ, որ այնպիսի առաջարկություններ ընեք, որ առանց արյան կաթիլ մը թափելու կարենանք խաղաղությունը կնքել և այս կռիվը, որ եղբայրասպան կրնա համարվիլ, վերջացնենք։

— Ո՛վ մեծ իշխան,— պատասխանեց Մարգրիտ,— ես պայման չեմ բերած. հոն՝ ներսը, ընտանիք մը կան, որ իրենց սուգին մեջ՝ դաշնագրաց պայմաններու վրա մտածելու վիճակի մեջ չեն. ձեր իմաստությունը կրնա երևակայել, ես չեմ երկայնաբաներ. ձեր վեհանձնությունը ինչ որ կամի, պատրաստ եմ ստորագրել, միայն թե ձեր սրտեն և ոչ մեր վարմունքեն, կը խնդրեմ, որ թելադրեք։

— Ես ներսի միջնաբերդին ընտանյաց վիճակեն և սրտիս վեհանձնական թելադրությենեն ավելի առաքինության տիպար մ'ունիմ առջևս, ուրեմն, նա հիմա թող հրամայե և երաշխավորե, որ ասկից վերջը մարդասիրության օրենքներ միայն պիտի կառավարեն Անարզաբան, ես իմ ժառանգական բոլոր իրավունքներեն կը հրաժարիմ և բանակիս կը հրամայեմ հիմա, այս վայրկյանիս ասկից հեռանալ։

— Այսչափ վեհանձնության և այսչափ մարդասեր առաջարկության

պետք էր, որ ես ուրախությամբ հանձնառություն ցուցնեի, և դժբախտաբար պիտի չի կարենամ. ո՞վ եմ ես, որու երաշխավորությունը այնչափ արժեք ունենա. թշվառ աղջիկ մը պատրաստ է սիրով և սրտանց աշխարհես հրաժարելու և այս պաշտոնը միայն քանի մը անմեղ անձանց ապագային համար հանձն առած է։

— Բայց ես իմացա, թե բոլոր զորականաց և ընտանյաց միաբան ընկերությամբ ձեզի կատարյալ հաջորդական իշխանություն տրվեր է, և դուք ընդուներ եք։

— Այո՛, ընդուներ եմ, որպեսզի ինչչափ որ կարելի է, մարդկային արյան հեղեղներ կարենամ արգիլել և անկարգություններ սանձահարել. միմիայն ասոնց համար։

— Լա՛վ, իշխանազուն Օրիորդ, ես իմ պայմաններս զրուցեցի, ձեզի կը մնա ձերիններն ինձ հաղորդել։

— Իմիններս չափավոր են և գոհացուցիչ մեր վիճակին և մեր անցյալին համար։ Ա. փոխարեն Անարզաբա՝ մեր հայրենի Պապեռոնի դրդյակը շնորհվի, ուր եղբայրս իր ընտանյոք և մայրս բնակին ու ապրին՝ իրենց ամեն ստացվածքը հոն փոխադրելու իրավունք ունենալով։ Բ. մինչև ցայսօր հորս ծառայող զինվորները յուրաքանչյուրն իրենց աստիճանավ ընդունվին ձեր բանակին մեջ ծառայելու պայմանավ։

— Միայն բան մը մոռցաք. ձեր անձին համար բան մը չորոշեցիք։

— Շատոնց որոշած էի վիճակս՝ թե որ թշվառ հորս կամքը արգելք չիներ. ուրեմն, հիմա աստված ի՞նչ տնօրինած է, թող կատարվի։

Այս խոսակցության երկու հոգի միայն ներկա էին. Եվփիմե և Ստեփանե։ Ամենն ալ այս ազնվական աղջկան պարզ համարձակության վրա կը զարմանային. վասնզի յուր որոշմունքը հայտնի կերևար, և այդ չնաշխարհիկ ծաղկին թառամիլը տխրությամբ կը լցներ զիրենք։

— Ճշտենք ամեն պայմանները,— ըսավ Թորոս։— Ա. Անարզաբա միջնաբերդը ինձի պիտի հանձնվի։ Բ. Ես ձերայնոց՝ հոս մոտիկ՝ Պապեռոնի ամուր բերդը պիտի տամ, որու հիմա բանալիները ինձի բերվեցան։ Գ. Ձերայինք իրավունք ունին ամեն ինչք և ստացվածք առնուլ և ելնել։ Դ. Ո՛վ որ ձեր հայրենի զինվորաց հանձն առնու իմ ծառայությանս մտնել՝ յուրաքանչյուրն յուր աստիճանավ ընդունելի լինի։

— Ե...— ըսավ և կեցավ Թորոս, առանց շարունակելու։ Օրիորդը ուշադրությամբ սպասեց. և երբ տեսավ, որ չէր խոսեր, ըսավ.

— Խիստ դաշինք մը կերևա, թե ձեր վեհանձնությունը կարգիլեր։

— Դուք դատեցեք, Ե. Անարզաբա քաղաքին կառավարությունը և եկամուտը Մարգրիտ իշխանուհվույն կը վերաբերի հաջորդաբար։

Այս խոսքերը լսելուն, կարմրություն մը պատեց Օրիորդին երեսը և պատասխանեց.

— Ո՛վ մեծ իշխան, ձեր հինգերորդ դաշինքը ձեր սրտին վեհանձնության արդյունքն է, ես իբրև կատակ մը կը լսեմ. արդեն նա, որ աշխարհք կը ձգե առանձնության և աստուծո համար, ոչ ժառանգության պետք ունի և ոչ հաջորդության։ Դարձյալ ձեր մեծությունը պետք է գիտենա, թե ես շատ ուշացա հոս, և սիրտս հանգիստ չէ. վասնզի հոս ինչ որ կը խոստանամ, չգիտեմ թե ազատ պիտի լինի՞մ հոն բերդի մեջ գործադրելու։

— Առջի ըսածներուդ վրա իբրև հին և բաղմամյա բարեկամ մը կը խնդրեմ և կը պահանջեմ, որ արտորնոք որոշմունք մը չընեք. ես թե որ անհոգանամ, ապահով եմ, որ հոս ուրիշ մը կա, որուն ձեռքեն չեք կրնար ազատիլ,— ըսավ Թորոս Եվփիմեի նայելով, որ գլխով ըրածը կը հաստատեր.— իսկ վերջի ըսածնիդ կը խնդրեմ մեկնել, վասնզի չեմ կրնար հասկնալ։

Այն ատեն Մարգրիտ վրանին դռանը աչք մը ձգեց. Թորոս զինքը ապահովցուց, թե մեկը չի կար իրենց խոսքը մտիկ ընելու համար. ուստի Օրիորդը բերդապահ զորականին նկարագիրը ըրավ համառոտիվ և պատմեց, թե ինչպե՞ս իր ներկայությունը միայն բոլոր գիշեր կրցեր էր զիրենք հանդարտեցնել։ Թեպետ այս պատմությունը՝ իր գովասանության մասին շատ համառոտ էր, բայց իրերը և վիճակը այնչափ հայտնի էին, որ ամենքը զարմանքով լեցվեցան, և Թորոս, որ բավական սրամիտ էր մասեն ամբողջը գտնելու համար, ոտքի վրա ելավ և ձեռքը տալով Օրիորդին՝

— Ի՞նչ պարագայի և ի՞նչ վիճակի մեջ որ գտնվիք հիմա, վաղը և ապագային, կը խնդրեմ և պարտավորություն կը ձգեմ ձեզ ինձի դիմել, և ես ձեռքես եկածը թե որ չընեմ, հանցավոր եմ առաջի աստուծո։ Ահա եղբայրս՝ Ստեփանե, և կինս՝ Եվփիմե վկա լինին իմ երդմանս։ Արդեն ես հիմա քաղաքապահ զորաց հրաման կ'ուղարկեմ, որ ձեր ամեն ակնարկությանց հնազանդին իբրև ինձի։

— Թե որ հրաման ընեք,— ըսավ եղբորը Ստեփանե, որ մինչև այն վայրկյանը բերանը չէր բացեր, այլ խորին ուշադրությամբ մտիկ կ'ըներ եղբորը և Օրիորդին խոսակցությունը,— ես ալ կընկերանամ իշխանուհվույն և ինչ որ հարկ տեսնե, կը գործադրեմ։

— Շատ լավ կը լինի, եղբայր իմ, միայն թե ինք ինչ որ հրամայե, այն մինակ ի գործ դիր։

— Այո՛, այդպես։

Եվ ահա պատգամավոր խումբը ճամփա ելավ, և Թորոս մեկ-երկու

անգամ հանձնարարելով Ստեփանեի զգույշ լինիլ, և ընկերանալով նոցա մինչև բանակին մուտքը, ետ դարձավ։

— Ի՞նչ կը մտածես, Եվփիմե,— ըսավ Թորոս,— Սմբատի պես գազանի մը այս հրեշտակ զավկին, թե որ բոլոր Անարզաբա բնակիչք և գործքերը չի վկայեին, թե իմաստություն և առաքինություն անձնավորյալ է ի նմա, չէի հավատար։

— Շատ լավ եղավ, որ Ստեփանե ներկա էր այս խոսակցության,— ըսավ Եվփիմե, ուրախ ժպիտով մը,— թե որ մեր երկուքին վրա այնչափ ազդեցություն ըրավ Օրիորդին հոգվույն և դեմքին գեղեցկությունը, ի՞նչ կը հուսաս Ստեփանեի վրա։

— Թե որ Ստեփանե ուզե, և Մարգրիտ հանձն առնու, ասկից հարմար և օգտակար բան մը չեմ կրնար երևակայել ու փափագիլ. Ստեփանե այն ատեն ապահով մերն է։

— Ինչ ըսել կուզես, չեմ հասկնար։

— Այն կուզեմ ըսել, որ իմ այս երկու եղբայրներս, որոնց քաջության և կորովին համար կասկած ունենալ կարելի չէ, դժբախտաբար մեզի հետ գերի չէին եկած Պոլիս, այլ աստանդական, բարբարոսաց մեջ, զուրկ ամեն բարոյականե, ամեն կրոնական սկզբունքե, ամեն ուսմունքե, ամեն բանի օրինակե, իրենց փափուկ տարիները անցուցեր են սուր և նիզակ շարժելով՝ հաջ ու ձախ շահատակելով և ամեն անգթությանց, ոճիրներու մասնակցելով։ Մլեհի համար ես հույս չունիմ, վստահություն չունիմ, ինք կորսված երիտասարդ մ'է։ Ստեփանեի համար կը մտածեի, հիմա թե որ այս դիտողությունդ ստուգվի, այսպիսի կին մը, ինչ որ իրեն կը պակսի, կը լեցնե, և ես այս ծանր գործիս մեջ, որուն դեռ սկիզբն ենք, աջ բազուկս գտած կը լինիմ և դժվարության մը տեղ, օգնություն մը կ'ունենամ։

— Դու անհոգ եղիր, այս գործը ի՛մս է, և ես կը խոստանամ ի գլուխ հանել։

— Ինչ դյուրություն, որ ուզես, իմ կողմես ամենն ալ քեզի կուտամ։ Անարզաբան արդեն ես Օրիորդին ժառանգություն համարեցի. դու կ'ուզես օժիտ համարե, կ'ուզես սեփականություն. Ստեփանե իրմով գեղագույն կին մը և դաստիարակ մը կունենա, և իր զավակներուն ալ սքանչելի մայր մը։

— Ուրեմն անոնց ետևեն ես ալ քաղաք կ'երթամ։

Եվփիմե ելավ Բաբկենին հետ հԱնարզաբա երթալու, երբ Թորոս իր անբավ զբաղմանց հետ սկսավ պարապիլ։

ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹՅԱՆՑ ԱՐԳԵԼՔՆԵՐԸ

Հարմար և ճիշտ ժամանակին հասավ Մարգրիտ Անարզաբա միջնաբերդը, և իրեն կասկածները արդեն այդ սրիկա և անզգամ զինվորաց համար շատ իրավացի էին, վասնզի ոմանք մեջերնեն սկսած էին մտածել, թե կարելի չէ՞ր արդյոք իշխանուհվույն ընտանիքը պատանդ ունենալով ձեռվընին, Սմբատա բոլոր ստացվածքը իրենց գրավել և այնպես իրենց օգտակար դաշինք մը դնելով հանձնել թշնամվույն միջնաբերդը։ Սակայն իր ներկայությունն ամեն այդ խորհուրդները հալածեց և ամեն գրգռություն հանդարտեցուց. առանց ժամանակ տալու, միջնաբերդին դռանը տիրեց Ստեփանե, և Ռուբինյան խաչի դրոշը սկսավ ծածանիլ փոխանակ հունական դրոշին, որ բոլոր քաղքին և բանակին ուրախության աղաղակը իմացուց Թորոսի։

Նույն միջոցին էր, որ Մարգրիտ կ'իմացներ մորը և եղբորը, թե իրենց համար շնորհված կար Պապեռոն, և անոնք մեծ ուրախությամբ ընդունեցին այս պայմանը և սկսան իրենց փոխադրության պատրաստությունն։ Միայն թե երբ սրբազանը միջնաբերդեն դուրս ելավ, քահանա և ժողովուրդ միաբան դատախազ կայնեցան և խնդրեցին, որ օրինավորապես դատվի և մինչև նույն ժամանակ եպիսկոպոսարանը արգիլվի, և Թորոս հավանեցավ կաթողիկոսին գրել ի Սովք դղյակը, որպեսզի ժողովրդյան արդար պահանջը կատարվի։ Մենք ավելորդ կը համարինք անարժան և գայթակղեցուցիչ եպիսկոպոսի մը վրա դառնալ, որ ըստ յուր անառակության արժանյաց՝ վանքի մը մեջ ապաշխարելու դատապարտեցավ. երանի թե իր զղջումն ալ սրտանց լիներ, որպեսզի հանդերձյալ կենաց մեջ երկրորդ և մեծ դատապարտությենե մը ազատ լիներ։

Իսկ Մարգրիտ, որ որոշած էր՝ ոչ այլոց բռնադատությամբ, այլ իր կամոք և փափագանոք հեռանալ հաշխարհե և չի գործած մեղքերուն համար ապաշխարհել, պարտավորեցավ Եվփիմեի ու Ստեփանեի աղաչանաց զիջանիլ, և քանի մը ամիս վերջը Անարզաբա իշխանական պալատին մեջ իր պսակի հանդեսը կը կատարվեր լռելյայն՝ հուրախություն բոլոր քաղքին բնակչաց, որ տղայությենե իր առաքինության և իմաստության վրա մեծ համարմունք ունեին և զինքը կը սիրեին։ Ավելորդ է զրուցել, թե Թորոսի գուշակությունը իր եղբոր վրա բավական կատարվեցավ. Ստեփանե իր կնոջ ազդեցությամբ սիրելի եղավ ժողովրդոց և

եղբորը և շատ անգամ օգտակար գործիք նորա դիտավորությանց գործադրության։ Ընդհակառակն, Մլեհի խստերախ և վայրենի բնավորությունն վտանգ մ'էր նորածին իշխանության։ Ինչչափ որ Թորոս արդարության և քաղցրության վրա հիմնել կը ջանար յուր տիրապետությունը, նույնչափ Մլեհ ամբարհավաճությամբ և անխորհուրդ խստությամբ կ'օտարացներ սրտերը իրմե, և եղբորը բոլոր արթնությունն պետք էր անոր բոլոր զառանցանքն ուղղելու համար։

Անարգաբա առումը երկրին ամբողջությունը մասամբ կ'ապահովեր. Թորոս հայրենի իշխանության կատարյալ տերն լինելով, սկսավ ներքին բարեկարգության. զինվորական կրթությունը ընդհանուր ըրավ, այնպես որ տորոսաբնակ ամեն հայ զինվոր էր տղայութենե մինչև ի ծերություն դատավորական իշխանության և իրավանց վրա խստիվ կը հսկեր, ոչ միայն որ ի բնուստ անիրավության թշնամի էր, այլ նաև անոր համար, որ լավ համոզված էր, թե առանց արդարության ո՞ւիցե իշխանություն՝ մեծ ու փոքր կը կործանի։ Ելևմտական մասակարարությունը լավ և խնայուն վիճակին մեջ դնելով, չափազանց տուրքերե կ'զգուշանար և կ'զգուշացներ։ Կրոնասեր էր առանց կրոնամոլության, գիտեր հարգել կրոնքն ու եկեղեցին, չի շփոթելով նոցա հետ եկեղեցականին անկարգությունն ու տգիտությունը։ Այնպիսի խառնաշփոթ և անիշխանության ժամանակի մեջ, ուր ակարելի էր ապահովություն, ամեն շրջակա իշխանությանց քով լրտեսներ կը հաստատեր, գիտնալու համար, թե ուստկից իրեն վտանգ կրնար հասնիլ կամ օգուտ. վասնզի ոչ խոստմունք, ոչ դաշնադրություն, ոչ երդմունք նշանակություն չունեին ամենևին. քրիստոնյա և մահմեդական իրենց օրինաց գրքերը խաբեության գործիք ըրած էին, դյուրությամբ խարդավանելու համար այլակրոնն ու կրոնակիցը. ընտանյաց և բարեկամաց մեջ դավաճանություն օրենք էր դարձած, անգթություն և մատնություն բնություն էր եղած։ Հույն և փռանգ, հայ և ասորի, պարսիկ և արաբ, թուրք և թաթար կատաղի պատերազմներ կը մղեին, երեկ զորավոր թագավոր մը, վաղը մուրացկան մը, գերի մը, փախստական մը կրնար դառնալ. երեկ տկար կին մը, վաղը բերդերու, գյուղերու և քաղաքներու տիրուհի կը լիներ, և այսպես անհաստատ և անկայուն վիճակի մը դատապարտյալ էր ամեն ոք. հոս գերի ժողովուրդ մը, անդին ազատ էր և տեր. ճիշտ այս ժամանակին համար էր գուշակությունը՝ «Ցարիցեն ազգ ազգի վերայ և թագաւորութիւն ի թագաւորութեան վերայ». Եվրոպա իր հրոսը Փոքր Ասիո և Պաղեստինու վրա կը պարպեր, և թաթարաց խուժանը ելը հորդեր կասպիականին ետևեն. հին ազգությանց արմատներ կը ցնցվեին. նոր ազգություններ կընձյուղեին. քաղաքներ և ամրություններ ելը տապալեին, նորեր անոնց տեղ կը բուսնեին։ Այս վիճակը կը տեսներ Թորոս և կը մտածեր իր շինության հաստատ հիմ մը ձգել։

Ինք կը տեսներ Կիլիկիա, ուր ամեն ազգաց խառնուրդ մը կը բնակեր. հույն, արաբ, թուրք, հայ, ասորի ցիրուցան իրենց արքերը շինած էին։ Բյուզանդական կայսրությունը ինքզինքը տեր կանվաներ երկրին, թեպետ շատ տարիներե ի վեր իր իշխանության ոչ միայն հիմունքն խախտյալ էին, այլ նաև եռևույթն անգամ կ'անհետանար. արաբք առջի հարվածը տված էին նույն իշխանության, և անոնց տկարանալեն վերջը շարունակ պատերազմի գաշտ մը եղած էր երկիրը այս զանազան ժողովրդոց մեջ։ Իր ջանքն եղավ՝ իր ազգը, որ ցրված էր ի Փոքր Ասիա, հնասրիս, ի Միջագետս և մինչև Եգիպտոս, գաղտնի հրավիրակներով ժողվել ի Կիլիկիա և զորացնել, մանավանդ որ կը տեսներ վտանգը, որ ամեն կողմե իրեն կ'սպառնար, իր գիտող, հեռատես և խոհուն սրամտությունը շատ հեռու էր այն անհոգությենեն, որ եղած հաջողությանց վրա կը քնանա և զվարճության ու թուլության կը մատնե ինքզինքը։

Ուստի քանի մը ամսվան մեջ ոչ միայն իր հայրենական երկրին տերն էր Թորոս, այլ երջանիկ, գոհ ու զվարթ ժողովրդյան մը հայրն էր, նա, որ երբեմն միայնակ իբրև հավիվ Սև լեռան խարաքիտները այծերու հետ շատեր էր հետի. հիմա շատ անգամ փոքրիկ, բայց ընտիր գունդ մը առնելով՝ բոլոր Տորոսի բերդերուն, ավաններուն, գյուղերուն անխոնջ այցելություն կ'ըներ՝ ամեն բան անձամբ կը տեսներ, կը քներ, ամեն տեղ հանկարծական զինուց հանդեսներ կ'ըներ, դատավորներու և իրավարարներու վրա տեղեկություն կ'առնուր, անիրավները կը պատժեր, քաջերն ու առաքինիները կը վարձատրեր, ավերակները կը շիներ, կը քնակեցներ. ամեն տեղ ժողովրդոց ապաստաններ կը պատրաստեր, և միանգամայն խստիվ կը պատվիրեր թշնամի չի գրգռել՝ չի զարթուցանել այնպիսի ժամանակ և այնպիսի դրացնությամբ, ուր բարեկամ գտնել անհնարին էր, իսկ թշնամին միշտ ինքնահորդոր ի պատրաստի։ Երբ իր անհնարին էր, իսկ թշնամին միշտ ինքնահորդոր ի պատրաստի։ Երբ իր անհամբեր եղբարքն ու զորավարք կը ցուցնեին իրեն Կիլիկիո լայնարձակ գաշտերն լի հարստությամբ անպատապարան որս ամենայն հարձակմանց, երբ Մլեհ իրմե կը խնդրեր ուր հազար զինվոր միայն տիրելու համար Տարսոնի և մինչև ի ծով՝ Թորոս անուշ ժպտով մը կը պատասխաներ.

— Ես քու քաջությանդ վրա վստահ եմ, Մլեհ, և կը հավատամ, որ դու ավելի պակաս զորքով կրնաս հաղթել ոչ միայն Տարսոնի, այլ մինչև Սելևկիո ալ տիրելու, և թե որ չեմ ուզեր՝ միմիայն պատճառը այն է, որ հոս, այս փոքրիկ զորությամբ հունական թեև վատթարացյալ, մեծատարած կայսրության դեմ պատերազմիլ եթե անկարելի ալ չէ, շատ դժվար

ին է։ Ասոր փորձը մեր հայրը ունեցավ երբեմն, և մենք ալ իրեն հետ շղթաներու, գերության և օտարին ծառայության մատնվեցանք տարիներով։ Հիմա որ աստված մեզի ողորմեցավ, մեր պարտքը մեր ժողովուրդը զորացնել և աղեկ կառավարելն է։ Օգնենք իրարու, սիրենք մեկզմեկ, ըլլանք մեկ սիրտ, մեկ հոգի, զորացնենք, շատցնենք մեր ժողովուրդը, քնակինք լեռները, ուր մեր ցուրտ երկրին բնիկ հայը կորովի և քաջ կը լինի. օրը հեռու չէ, որ դաշտը մերինն է, գիտնանք համբերել և մեր փառասիրությունը չափավորել։

Այս խոսքերուն պատասխան չէին տար Մլեհ և իր նմանիքը, այլ առանձին գանգատներ և լուտանքներ կը թափեին անոր դեմ, որ իբր թե կորովի բազուկներ կը ջլատեր և եռանդուն սրտեր կը սառեցներ իր խոհեմության քարոզներովն։

Շատ անգամ կը տեսնվեր Մլեհ Վահկա բերդին մոտ փոքրիկ հովանոցի մը մեջ իր մտերիմներեն շրջապատյալ, խնջույից և գիներբուաց տված ինքզինքն, որ եղբորը դեմ կ'որոտար, մանավանդ այն միջոցներուն. երբ Թորոս օրերով իր քննությանց կը պտտեր։

— Տեսե՛ք այս իշխանաց իշխանը, որ սուրհանդակի պես լեռնելեռ կը վազվռտե. ի՞նչ ընելու համար՝ հոս տասը-քսան տուն գյուղացիներու հետ խոսելու, համոզելու համար, ճղճիմությամբ, անդին դատավորի մը վճիռն անիրավ գտնելու համար, քիչ մը հեռուն ժայռ մը պարսպով պատելու համար և ավելի հեռուն եկեղեցի մը շինել տալու համար, և ասոնք ընողը այն մարդն է, որուն խիստ կերպարանքը, կամաց ձայնը և ծանր-ծանր խոսակցությունը և ձեր՝ իշխանաց, ազատաց, ազնվականաց և ինձի՝ իր հարազատ եղբորն անգամ, սանձ մ'է ոչ թե վիճելու այլ խոսելու նաև։ Ստեփանեի համար ի՞նչ զրուցեմ. տղուն գլուխն այնպես կախարդ կին մը հանեց, որ ոտքով-ձեռքով կաշկանդեցավ և եղբորը կապիկը դարձավ. ի՛նչ որ զրուցես, ի՛նչ որ առաջարկես, «մեր մեծ եղբորը պետք է հարցնել, անոր հավանությունը պետք է առնել» կ'ըսե և կնկանը երեսը կը նայի, երես մը, ուր օր մը ժպիտ չէ ծագած. լուրջ կերպարանք մը, որ իբրև թե միշտ աստուծո սեղանին առջևն է։ Ես՝ եղբայրը, ես՝ իր այնչափ տարվան ընկերը, խնջույքի մը զինքը չկրցի հրավիրել. կինը հրաման չի տար, ի՛նչ որ առաջարկես, մեկ մը աչքը կնկանը կը դարձնե, բան մը կը հարցնես՝ կնկանը կը նայի. առանց կնկանը հրամանին ոչ կուտե, ոչ կը խմե և ոչ Անարզաբա պարիսպներեն դուրս կ'ելնե... Բայց մի՛ կարծեք, թե կախարդը միայն հԱնարզաբա է. չէ՛, կախարդին մեծը այս դիմացի մեր Վահկա բերդը կը բնակի. այս հայ-հոռոմ կինը տեսա՞ք, որ միշտ կը ծիծաղի, միշտ անուշ կը խոսի, միշտ խոսքդ կատակի կը դարձնե, միշտ հագված սգված ծիրանիներով, բեհեզներով կը պտտի, ճշմարիտ կախարդը նա է. աստված վկա՛, քանի անգամ ես կռիվ փնտրելու համար գացի, ծանր, խիստ խոսեցա, նա, կարծես թե ոչ իրեն համար, ոչ էրկանը համար էր խոսքերս, ժպտեցավ, ծիծաղեցավ, մրմնջեց, երգեց, վերջապես հուսահատեցա, առի քալեցի։ Եղբարք, ես այս կյանքին չեմ սորված, նստե՛, նստե՛, նստե՛, սպասե՛, որ աստված պատերազմ մը ղրկե, որ կռվիս։ Եթե կարող ես, գնա գեղ մը, երկու բարեկամիդ հետ, հաճույքիդ եկավ՝ գառնուկ մը մորթել հրամայե, երկրորդ օրը կ'իմանաս, թե լուրը և հաշիվդ ալ մեկտեղ եղբորդ հասեր է։ Ինչպե՞ս կախարդ չըսեմ ես այս մարդկանց, անուշ-անուշ առջի օրեն քեզի հետ կը խոսին, քույր եղբայր կը լինին քեզի, հայրենի ժառանգության խոսք չեն ըներ, հայրենի բերդդ ահա կեցած է, նահապետական կյանքը գեղեցիկ է, եղբայրներ մեկտեղ բնակին՝ վայելուչ է,— սուրբին մեկն է ըսեր. այս կախարդները՝ սատանային ալ, հրեշտակին ալ կարդալ կը սորվեցնեն. պետք եղածը առ ինչչափ ուզես իշխանական գանձեն, մի՛ քաշվիր. նույն գանձը կը վճարե հեծելազորիդ թոշակն ու ռոճիկը. բայց զինվորական ատյան մը կա, որ քու մարդիկդ կը դատե, կը դատապարտե, կը պատժե առանց քեզի հարցնելու, շատ անգամ ոչինչ պատճառներու համար. ալ անկից վերջը միտքդ դիր, որ քու մարդիկդ քուկդ են. Անարզաբան Ստեփանեին որ տվին, այն հիմարն ալ կարծե, թե իրենն է, օտարին՝ թշնամվույն աղջկանը տվին... ըսեք թե՝ առ քու բաժինդ, ուզե. գեղացիին տղուն ինչպես բերդ մը տվին, քեզ ալ բան մը կուտան.. ծովասպատակին հավասար եղիր. դու՝ Ռուբենի շառավիղը։ Դու, որ իշխան մ'ես, դու Ռուբենի թոռը, պետք եղավ, հարկ եղավ գեղացի մը հանդիմանել, պատժել, ծեծել. երկրորդ օրը իշխան եղբորդ քիթը կախ, ընքվիները քթին ծայրը իջած կը տեսնես. շաբաթ մը ժանիքը կախ, ի՞նչ բանի համար, ուսկի՞ց, ժանտերես մ'ալ կա, ծառա մը մեր տղայության ատեն՝ հիմա բերդակալ իշխան դարձած անոր բերանը փնտրե, քարե մարդու բերան, շնորհք ընե մեկ մ'որ խոսի, կ'իմանաս, թե մեծ հանցանքը ո՞ւր է եղել։ Ես Հալեպու ամիրային քով շատ մեծ մարդ էի, երբ ձիս կը հեծնեի կ'ելնեի, ամենքը կը դողային. հոս արտի մը մեջ կոխես, անպիտան քոսոտ գեղացի մը՝ «հոս արտ է, իշխանս, անդիեն անցիր» կ'ըսե. քու պարտքդ անչափ ցածեն ելած հրամանին չհնազանդիլն է, խուվ ըլլալ չի լսելն է. ակոա կը կրճտեցնե ետևդ։ Այս է վիճակը, աստված համբերություն տա՛... ամեն օր համբերության քարոզ մտիկ կ'ընենք... բայց թե անոր Թորոս կ'ըսեն, ինձի ալ Մլեհ կ'ըսեն։ Օրը թե մեկ մը հասնի՞...

Այս ձևով՝ այս կերպով խոսքեր միշտ անպակաս էին։ Եվփիմե անոնք կը լսեր՝ երբեմն Թորոսին կ'իմացներ, որ իրմե առաջ իմացած արդեն՝

կը ժպտեր, անհոգ լինել կը հորդորեր, թեպետ ինք ամենայն աբթնությամբ կը հսկեր, և այս տեսակ ապառնալյաց անհոգ ձևանալով՝ ժողովրդյան հարատահարության մասին միայն խիստ կերպարանք մը կ'առնուր։

Իրավ գոհ էր Ստեփանեն, մանավանդ, երբ Մարգրիտ նորա գլխուն վերևն էր՝ կատարյալ իշխան էր նա. Անարզաբա բնակիչք, որ Սըմբատա ժամանակ այնչափ հարատահարյալ էին, Կիլիկիո ամենեն երջանիկ ժողովուրդը կը համարվեին հիմա, գանգատ մը ամենևին չէր լսվեր, ոչ իշխանին, ոչ դատավորաց, ոչ հարկահանաց և ոչ եկեղեցականաց դեմ. վասնզի ժողովուրդը բողոքելու անձ մը ուներ պատարաստ. ամենոք և ամենեն ողորմելին մատնանիշ միջնաբերդը կը ցուցներ, և «Տիկինը հոն է» կ'ըսեր, և այս սպառնալիքը ժողովուրդը անխտիր ամենուն կը գործածեր, բավական էր, թե իրավունք ունենալուն վրա վստահ լիներ։ Եվ զավեշտական մասը հոն էր, երբ միամիտ և տգետ մարդ մը՝ սխալ համոզմամբ, առանց իրավունք ունենալու դիմեր Տիկնոջ, և նա երբ՝ «Դու իրավունք չունիս» ըսելով ճամփեր, Մարգրիտի անսխալականության վրա ընդհանուր այնպիսի համոզմունք մը կար, որ նույն անձը պարզաբար կը խոստովաներ իր սխալմունքը, վասնզի Տիկինն «իրավունք չունիս» ըսեր էր։

Մարգրիտ սիրտը միշտ կը տրոփեր, երբ տարբը իրեն այցելության գար, վասնզի Թորոս սովորաբար ամբաստանություն մը ուներ՝ գրեթե միշտ՝ այն Հալեպեն Ստեփանեի հետ եկած հեծելազորին անկարգության համար։ Որ թեպետ շատ փոխված էին Տիկնոջ հակողությենեն և Ստեփանեի խստությենեն, բայց գրեթե կատարյալ ավազակության և անառակության սովրած մարդիկ՝ նեղ կը գտնեին Կիլիկիան, և Հարեպու հիշատակը՝ Եգիպտոսի սոխն ու սխտորն էր իրենց փափագանաց։

Թորոսի գաղափարներն իր ընթերցմունքը նաև շատ փոխած էին զինվորության վրա, և արևելքի մեջ ընդհանուր եղած սովորությունը, որ արևմուտք նաև այն ժամանակը ընդունած էր՝ բանակի զորություն հեծելազնդին համարելու, ինք սկսած էր փոխել. հետևակ զորքը կրթությամբ ու զինուք կը կատարելագործեր, որով իշխանաց զորությունը կը տկարանար և իրենց գոռոզությունը կոչնչանար, բայց պատերազմ մը պետք էր, որ Թորոսի այս կարծիքը ապացուցաներ. իսկ նա համբերել գիտնալով, ամենուն հետ աղեկ վարվելով՝ միշտ աչքն արևմուտք դարձուցած կ'սպասեր, ամիսները կը համբեր և ուրախությամբ կը տեսներ, որ կայսրը ձայն-ձուն չուներ, և գոհ էր նորա շատ զբաղված լինելուն Եվրոպիո կողմերը ընդդեմ Ունկարաց և Պուլղարաց։

ԳԼՈՒԽ Ի

ԱՆԴՐՈՆԻԿՈՍ ԿԵՍԱՐ

Քանի մը տարիներ անցան, Տորոսի հայը Թորոսի լավ խնամատարությամբ և իմաստուն կառավարությամբ երջանիկ վիճակի մեջ մտեր էր. քաղաք, գյուղ, և խրճիթ ուրախության երգոց և նվագարանաց արձագանքներով լեռները կը զվարթացնեին։ Ռուբինյանց տունը գրեթե միևնույն ժամանակին մեծ հրճվանք մը կը տոներ. երկու ծնունդ ի միասին. Եվփիմե աղջիկ մը, Մարգրիտ մանչ մը կը ծներ, որ Ռուբեն անվանվեցավ և ետքը իր նախնյաց աթոռը նաև ժառանգեց։ Վահկա և Անարզաբա իրենց նորեկ հյուրերը կը տոնեին։ Ամուսա բերդը հազիվ թե լուրը հասավ՝ Բաբկենի երեսը խնդաց, որ, ինչպես գիտենք, ցանցառ պատահար մ'էր, վասնզի իշխանիկը աղջիկ մ'ուներ և ինք ալ սանուհի մը։ Ուրիշ ծեր մ'ալ, որ հազիվ թե Վահկա բերդին մեջ լույս աչքով կը տեսնվեր, վասնզի օրնիբուն Տորոսի ժայռերուն և բույսերուն հետ զբաղած էր՝ հիմա օրրանի մը շուրջը զվարթագեմ կը պտտեր փոքրիկ էակին վերաբերյալ նաժշտաց խորհուրդներ տալով։ Մլեհ միայն կը մոռոար, կը զանգատեր աստուծմե, բախտեն և կնոջմեն, որ իրեն զավակ մը չէին տար, և թե բոլոր բնություն դավադիր էր իր երջանկության։

Նույն միջոցին հաջող լուրեր նաև ամեն կողմեն կը հասնեին Թորոսի. Մաղասա սուլթանն Իկոնիո և Միջագետաց, Նուրեդտին ամիրայն Հալեպու, լատինաց բրինձն Անտիոքա, տաճարական կրոնավոր ասպետք լեպու, լատինաց բրինձն Անտիոքա, տաճարական կրոնավոր ասպետք լեպու, և հայոց մեծ կաթողիկոսն իր հայրենի ժառանգության մտնելու ուրախակցության դեսպաններ կ'ուղարկեին և խաղաղության դաշինքներ կ'առաջարկեին։ Հայ գաղթականներ խումբ-խումբ կուգային կը դիմեր կ'առաջարկեին։ Հայ գաղթականներ խումբ-խումբ կուգային կը դիմեին Տորոս, ոչ միայն ի Փոքր Ասիո և ի Միջագետաց, այլ մինչև հնգիպտեին Տորոս, ոչ միայն ի Փոքր Ասիո և ի Միջագետաց, այլ մինչև հնգիպտ. Մաղասա սուլթանն Իկոնիո և Միջագետաց, Նուրեդտին ամիրայն Հալեպու, լատինաց բրինձն Անտիոքա, տաճարական կրոնավոր ասպետք լեպու, լատինաց բրինձն Անտիոքա, տաճարական կրոնավոր ասպետք լեպու, և հայոց մեծ կաթողիկոսն իր հայրենի ժառանգության մտնելու ուրախակցության դեսպաններ կ'ուղարկեին և խաղաղության դաշինքներ կ'առաջարկեին։ Հայ գաղթականներ խումբ-խումբ կուգային կը դիմ

բոցներ, որոնք Լևոնի գերության ժամանակ Պերպերուժեն կայսրը առած էր ի փոանգաց. հիմա, երբ Թորոս անոնց տիրացավ, լատին իշխանք կը պահանջեին զանոնք հանուն տաճարականաց, վասնզի անոնք ալ հավատոց համար եկած են պատերազմելու կ'ըսեին, թեպետ իրենք ամենքն ալ հավատոց համար պատերազմելու եկած ալ լինելով, և ի հայոց երբեմն օգնություն գտած և երբեմն օգնություն նոցա մատուցած, ժամանակին ամեն հարստահարությունքը քրիստոնեից, մանավանդ հայոց վրա ծանրաբեռնել չէին զգուշացած։ Ժամանակակից հեղինակ մը խստիվ կը նկարագրե քսանհինգ-երեսուն տարի առաջ անցած դիպվածները։ «Հոն,— կը ցուցնե նա,— ֆռանգ իշխանները կը հարձակեին նախանձելով հայ իշխանաց վրա, որք փոքր զորությամբ պարսից ձեռքեն առած էին շատ տեղվանք իրենց քաջությամբ և բնակարան կերտած էին, ավելի քան զթուրքն կը նեղեին զանոնք ու տարիով պաշարելով իրենց բոլոր գավառները ձեռքերեն կ'առնվին, որոնցմե ոմանք Ապլխարիպ Պիրի իշխանին պես կը թողվին ամեն կալվածքնին և անճարյալ կ'երթային սա իշխանն հայոց Թորոս (հորեղբայր մեր Թորոսին) հանարզարա. ինչպես տղա Վասիլն տեր Քեսնո, որ կ'երթար փախստական ի Կոստանդնուպոլիս ամենայն ազատոքն. ինչպես Բագարատ, այր քաջ, տեր Արևընդունի, որ հաղիվ կը ճողոպրեր, ինչպես Կոստանդին, տեր Կառկոա, որ Սամոսատա բերդին մեջ ի կապանս կը մեռներ, նաև շատեր կային գեղեցիկ իշխանք, որ ի բանտի շարշարանաց և կապանաց մեջ կը մեռնեին, և շատեր ալ կային, որոնց աչքերը խալարեցուցած էին, ձեռքերնին, քթերնին և այլ անդամներնին կտրած և ի կախաղան սպաննած էին. անմեղ տղայոց հետ նաև խստությամբ և շարշարանոք կը վարվեին։ Այսպիսի անհամար անզգամությամբք զանձեր ժողովելու համար երկիրը բոլոր ավերակ կը դարձնեին. միշտ զբաղած էին ոչ աշխատությամբ, այլ նստած չարություն և նենգություն կը խորհեին, և ամեն չարյաց ճանապարհներ կը սիրեին, բարյաց և երախտյաց մոռացողք լինելով։ Նոցա շատ անիրավությունները կ'ուզեի գրել, բայց չի համարձակեցա, վասընզի նոցա իշխանության ներքև էինք»։ Այսպես կը խոսի Մատթեոս Ուռհայեցի։

Թորոս ասոնք ամենքը կը ճանչեր. բայց յուր դրությունն էր համառ և անդառնալի՝ խստություն չի բանեցնել, ժամանակին գիտնալ, տեղի տալ, հարմարիլ և իրեն դեմ թշնամի չի հարուցանել. վասնզի կը տեսներ, թե ուշ, կանուխ՝ օրը հեռի չէր, որ Կոստանդնուպոլսո վրա ժողվված սպառնալից ամպերն փոթորկալից իրեն պիտի դիմեին։ Եվ իր տեսությունն ստուգվեցավ, իմացա, թե այն Անդրոնիկոս կեսարն, որ հայոց ընդհանուր և Իուրինյանց դեմ մասնավոր ատելությամբ լեցուն սիրտ մ'ուներ՝ զորավար կարգյալ ի Մանուելե, կը դիմեր բանակավ ի Կիլիկիա։ Գիտեր նաև, թե մեծ բանակի մը օգնականք միշտ անպակաս կը գտնվեին այնպիսի ժամանակի մեջ, ուր բարեկամությունը հզորաց և հաղթողաց համար էր։ Ուստի բոլոր իր պատրաստությունքը տեսավ, իր բերդերը, ամրոցներն ու լեռները զորացուց, իր ընտանիքը ապահովեց, և զորքերուն ընտիր-ընտիր խումբերը միայն հետն առած և իր երկու եղբարքը՝ գնաց Մամեստիա սպասել թշնամվույն, և հոնկից հագուրդ տալու համար Մլեհ եղբոր անհամբերության, որ միշտ անգործությենեն կը գանգատեր, կ'ուղարկեր զանի զորավար հեծելոց՝ հունաց սահմանները հասպատակություն։ Տեսնելու էր այն ատեն զՄլեհ, որ քանի մը տարի գրեթե անգործ մնացած՝ ի՞նչ գործունեություն ձեռք կառնուր, ի՞նչ կողոպուտ և ավար կը հաներ երկրեն, միայն մեկ հանձնարարություն եղբորը հիշելով՝ խնայել մարդկային կյանքին, անօգուտ անգթությամբ պատերազմի դառն գործը ավելի չի դառնացնելով։ Այսպես կը հասներ Մլեհ մինչև Տարսոնի պարիսպներուն տակ ազատություն գտած բազեի պես, ուր իր առջևեն՝ մերկ փախստականներ իր խստության համբավը բերած էին և իր սպառնալիքը՝ «Թե շնորհակալ լինին հոռոմք իր եղբոր հրամանաց, ապա թե ոչ՝ ոչ ոք ի գերությենե ազատ պիտի մնար իր ձեռքեն»։ Եվ թեպետ Տարսոնի մեջ վեց-յոթ հազար հոգի հառաջապահ խումբ մը կար պատրաստ Անդրոնիկոսի բանակին սպասող, բայց մեկը չէր համարձակեր դեմ ելնել այս երկու հազար և քիչ մը ավելի հեծելոց գնդին. ոչ գրգռություն, ոչ նախատինք, ոչ շրջակա գյուղորեից ավերմունք և ծուխ չի տվին հանդգնություն այս մոլեկան զորավարին դեմ դնելու։ Ուստի Մլեհ տարսոնացվոցմե հուսահատելով՝ հարձակեցավ ի Լամբրոն, վասնզի գիտեր, թե նորա իշխանը հունաց համամիտ և նիզակակից էր. ինչ որ համրությանց դուրս գտավ՝ ապականեց, անբավ պաշար՝ արջառ, ոչխար, գրաստ բերավ ի Մամեստիա՝ ավելիով կատարելով Թորոսի հրամանը, որուն փափագը զԱնդրոնիկոս սովով նաև նեղել էր։

Անդրոնիկոսի բնական կատաղությունը չափ չունեցավ, երբ իմացավ Մլեհի ըրածները, հազարապատիկ վրեժ հանել ի հայոց կը խոստանար՝ կ'երդնույր և առանց դադրելու կը քշեր բանակը հառաջ. երկայն կ'երևար իրեն ճամփան Տարսոնե մինչև Մամեստիա, ուր լսեր էր թե Թորոս կը բանակեր։ Արդեն իր տասներկու հազար զորաց վրա նույնչափ մ'ալ ավելցեր էին նիզակակիցք, որոնց մեջ քանի մը հատ երևելի հայկազն իշխանք ալ կային, ոմանք հավատարիմք հունական կայսրության, ոմանք ի Թորոսե և ոմանք իրենց բռնության համար ժողովրդյան ապստամբությամբ զրկված իրենց կալվածներեն։

Իսկ հայոց իշխանը յուր զորոք նստած ի Մամեստիա, կ'սպասեր Թշնամվույն. իր հանդարտ և զվարթ երեսը մեծ վստահություն մ'էր իր զորաց, և իրեւ ավետիս ընդունեցավ Թշնամվույն հասնելուն լուրը։

Բայց զորապետաց և գնդապետաց զարմանքը բոլորովին այլայլություն դարձավ, և Մլեհինը կատաղության, երբ առ ժամայն զամենքը խորհուրդի հրավիրելով հրամայեց Բաբկենի առնուլ իրեն լավ թարգման մը և երթալ հունաց բանակը առ Անդրոնիկոս կեսար՝ խաղաղություն խնդրելու համար, ըսելով. «Մենք ալ կայսեր ծառայքն ենք, միայն կը խնդրենք, որ նա հաճի մեզի հետ բարեսրտությամբ վարվիլ. ինչպես մենք մեր հայրենի ժառանգական երկրին սահմաններեն դուրս չելանք և թեպետ դյուրին էր Տարսոնի նաև տիրանալ, բայց չուզեցինք, որպեսզի կայսեր իրավացի բարկությունը չի շարժենք. ուստի ինչ արդար խաղաղության պայմաններ որ ունի, առաջարկե, և անօգուտ արյուն և ավերմունք չի բերենք այս երկրին վրա»։

Իսկ Բաբկեն այս խոսքերը լսելուն թեպետ սառեցավ վայրկյան մը, բայց որովհետև լավ կը ճանչեր զԹորոս և գիտեր անոր քաջության չափը ու միանգամայն խոհեմությունը, դանդաղ քայլ մը առավ երթալու՝ թեպետ ակամայն իր երեսին վրա նկարված էր և կը մտածեր, թե արդյոք սիա՞լ հասկցավ, երբ տեսավ, թե իշխանը խոսք մը չավելցընեք՝ եկավ հրամայվածը կատարելու։

Բայց ապուշ սառնությունը, որ ընդհանուր էր, անհետացավ, և ընդհակառակն, բորբոք մը սկսեր էր հաջորդել ամենուն սրտին մեջ. արդեն Մլեհի երեսները կարմրեցան, և աչքերը արյուն լցվեցան, և Թորոս անոր սրտին տրոփը քովեն գրեթե կը լսեր. միայն ինքն կայր անխռով և սկսավ խոսիլ։

— «Ո՜վ իմ քաջ նիզակակիցքս, կը զարմանաք իմ այս դեսպանությանը վրա, և կարելի է, որ ձեր մեջեն ոմանք, և թերևս ամենքդ ալ բարկությամբ և դառնությամբ կը լցվիք լսելով այս իմ խոնարհական լեզուս, և ես թե որ իմ սրտիս ձայնը լսեի ոչ երբեք այդ խոսքերը Թշնամվո մը՝ և այսպիսի անզգամ Թշնամվո մը պիտի ընեի. բայց ո՜վ որ ժողովրդոց առաջնորդ և իշխան է, պետք է մարդկանց, աստուծո և իր խղճմտանքին առջև լավ քննե ամեն բան և արդարություն գործե։ Մենք մարդկային արյան ամեն մեկ կաթիլին համար պատասխան պիտի տանք աստուծո. անոր համար մեր փառասիրությունն ու մեր ամբարտավանությունը պետք չէ որ մեզի առաջնորդ առնունք, այլ մեր ազգին օգուտը։ Ես ձեզի հայտնի կը խոստովանիմ, թե հայ ազգին օգուտը կը պահանջե, որ հունաց հետ եղբայրաբար երթանք, անոնց նիզակակից լինինք ընդդեմ այն Թշնամյաց, որ զմեզ կը շրջապատեն և օրավուր կը զորանան։ Հունաց կայսրությունը թե որ ճանչեր իր օգուտը՝ փոխանակ զմեզ նեղելու, զմեզ կը զորացներ և պատնեշ մը զմեզ կը կանգներ այն ամեն այլակրոնից դեմ, որ մեծ ծովու պես կը դիզվին՝ կը բաթձրանան և զինքն ալ պիտի ողողեն։ Ես իբր քրիստոնեի և իբր հեռատես իշխան պարտավոր էի այս դեսպանությունն ընելու և խաղաղության սկիզբը մ'ընելով զորավոր դաշնակցություն մը հաստատելու ջանալ ի մեջ երեք քրիստոնյա ազգաց, որ միաբան կրնային թումբ մը կազմել ընդդեմ այլակրոնության, մինչդեռ հիմա, ընդհակառակն, բաժանյալ ատելությամբ պիտի կործանին և անհետ պիտի լինին։ Պետք էր քրիստոնեից՝ նույնիսկ մահմեդականաց օրինակին հետևիլ[1], որ իրենց մեջ ծագած պատերազմներու մեջ իրենց կրոնապետք ամեն ջանք կ'ընեն խաղաղություն հաստատելու և արյունը դադրեցնելու։ Երբ համոթ և ի նախատինս քրիստոնեության մերայինք չնչին և մտաց անհաս խնդիրներու համար արյանց գետերու պատճառ կը լինին... Բայց դուք ինչո՞ւ գայթակղեցաք, ինչո՞ւ զայրացաք, դուք Թշնամին չե՞ք ճանչեր, դուք Անդրոնիկոս չե՞ք տեսեր. ես տեսեր եմ. ես պատերազմեր եմ իրեն դեմ, և մեր մեջ ամենեն աղեկ զինքը ճանչցող մեկը թե որ կա և սուր սուրի եկած է իր հետ, նա է, որ հիմա իբրև դեսպան խաղաղության՝ գնաց իրեն հետ խոսելու։ Անդրոնիկոս ոչ միայն խաղաղություն պիտի չընդունի, այլ մեր խոնարհական դեսպանությունը մեր տկարության նշան պիտի համարի, և մենք անպարտ կը մնանք աստուծո առջև այն արյունեն, որ պիտի թափի։ Բայց թե որ անհավատալին հավատալի լինի և հույնք շնորհեն մեզի խաղաղությունն, որ մենք կը խնդրենք, արդար և իրավացի ասպարեզ մը կա մեր առջև արևելք ու հարավ ընդարձակելու և զորանալու համար և մեր խեղճ, անտերունչ ազգը ժողվելու և գերությենե ազատելու համար։ Ահա պատճառները, որ զիս այս պատգամավորության հորդորեցին, ո՜վ որ կամի բացատրություն մ'ուզել, պատրաստ եմ տալու»։

Քանի որ խոսեցավ Թորոս, կիրքերը խաղաղեցան և նույն ինքն Մլեհ հանդարտեցավ, մանավանդ երբ Թորոս Անդրոնիկոսի խաղաղության ընդունելությունը անկարելյաց կարգը դրավ՝ զվարթություն մը եկավ երեսին վրա և ըսավ.

— Բացատրության պետք չունինք, երբ կը տեսնենք, թե այս դեսպանությունը նախատինք մը չի կրնար բերել մեր պատվույն և մեր քաջության։

Ժողովքը ցրվեցավ դարձյալ գումարվելու համար Բաբկենի վերա-

1 «Մի անայր առներ զտուն Մուսուլմանաց». Գրիգոր Երեց. 520։

դարձին. երբ քաղաքին դռները բացվեցան, և ծեր զինվորը մտավ և եկավ կայնեցավ ատյանին մեջ, լուռ՝ ամենքը պշուցյալ իրեն կը նայեին և կ՝սպասեին։

— Իշխանդ մեծ,— ըսավ Բաբկեն,— հոռոմք մեզի հետ խաղաղություն ընել չեն ուզեր։

— Ի՞նչ կ՝ըսեն, այն պատմե մեզի, Բաբկեն իշխան,— զրուցեց Թորոս։

— Որովհետև կ՝ուզեք, որ ձեզի պատմեմ և այն Անդրոնիկոսին ըսածները կրկնեմ, լավ լսեցե՛ք։ Նախ մեզ տարին վրան մը գոցեցին, իբր թե անպիտան գերիներ լինեինք, ի՞նչ նախատական խոսքեր, որ ամեն ատեն սովորությունն է զրուցել հայուն անձին ու հավատքին, ականջնուս կը մոռային վրանին շուրջը, ետքը զմեզ առին Անդրոնիկոսի առջև հանեցին, որ մեծ վրանի մը մեջ բարձր ուռած նստած, մեր խոնարհ պատգամը մտիկ ըրավ և անարգանոք ու քամահրանոք այս խոսքերը զրուցեց. «Գնա՛, զրուցե ապստամբին՝ ապստամբին տղուն թե՝ շղթաները, որով քու հայրդ կապեցինք, մեկտեղ ունիմք, որ զքեզ ալ կապենք, տանինք»։ Եվ ձեռամբ ըրավ, որ զմեզ դուրս հանեն, Մենք ալ բոլոր հունական բանակին հայհոյանքներն ու քրքիջները ետևնես՝ հեծանք մեր ձիերն ու դարձանք։ Ահա մեր դեսպանության բոլոր պատմությունը։

Եվ այս խոսքերն ըսելով զայրագին նստավ Բաբկեն։

— Լսեցիք, իշխանք,— ըսավ Թորոս,— տեսնենք հիմա աստված զո՞վ պիտի խնդացնե։ Ես նորա արդարության միշտ հավատացեր եմ, ինք վկա է, որ ես չանացի խնայել մարդկային արյան, կայսրը և Անդրոնիկոս չուզեցին. ընենք ուրեմն մեր պարտքը, ցուցնենք, թե մեր հարց որդիքն եմք, և թե դյուրին չէ ամեն անգամ շղթա անցնել Ռուբենի թոռներուն վիզը և հայուն համբերության հետ խաղալ։

Այս խոսքերը ըսավ և ելավ, ու ամենքը ցրվեցան իրենց տեղը. ինք միայն պարսպին բարձր մեկ կողմը Դիոնիսին դիտակը ձեռքը կը դիտեր, կը նայեր այդ բանակին, ուր խառնակություն և վստահություն կը թագավորեին. կը տեսներ երաժիշտներ և գուսաններ, կը տեսներ զինվորաց հետ խառնակյաց կանանց խումբեր և ինքնիրեն կ՝ըսեր. «Այդպիսի անկարգ բանակ մը հիմա զորավոր հարձակմամբ մը անկարելի չէ ցրվել, բայց ավելի ապահով միջոցներ ինչո՞ւ չի գործածենք, խնայենք մեր արյան, սպասենք հարմար առթին, հեռու չէ, անշուշտ»։

Երբ իջավ պարսպեն, անմիջապես կանչել տվավ Սարգիսը, որուն հաջողակության և արթնության վրա մեծ համարմունք ուներ.

— Այս գիշեր պետք է Անարզաբա երթալ։

— Լա՛վ, իշխան։

— Ստեփանեի իմացնել, թե պահեստի գտնված բոլոր զորքերը գումարելու և թշնամվույն ճամփան կտրելու խորհուրդը պետք չէ ուշացնել, այլ մինչև երեք օր պետք է կատարել. վասնզի այս կնամարդյա հանձնապաստան բանակին համար չէ այն զգուշությունները, ինչ որ առաջ իրեն հետ որոշեր էինք։ Ուրեմն քեզ տեսնեմ, բարի հաջողումն։

Եվ ահա Սարգիս ելավ իշխանին քովեն, փոքրիկ դուռը, որ պարսպեն գետը կը հաներ, հոն իջավ, ջուրերը շարժեցան և քիչ վերջը մութին մեջ կորովի ընթացքով կը հեռանար՝ կ՝երթար Անարզաբա ճամփան։

ԳԼՈՒԽ ԻԱ

«ՍԱՀՄԱՆՔ ՔԱՋԱՑ ՉԷՆՆ ԻՐԵԱՆՑ»

Անդրոնիկոս ա՛լ ապահով էր հաղթության համար. միթե ապստամբը չէ՞ր, որ խոնարհաբար հպատակություն խոստանալով խաղաղություն կը խնդրեր, ուրեմն մինչև որ շղթաները գործածելու ժամանակը հասներ՝ փախստյան ճամփաները պետք էր գոցել, խրամներ պեղել և պատնեշներ կանգնել քաղքին դռներուն առջև բավական համարեցավ, և տրվավ ինքզինքը զվարճության. երկու գիշեր իրարու վրա գիներբուք, երգք և երաժշտությունք բանակին զբաղմունքն էին։ Իրավ հունական բանակին մեջ կային անձինք, որ ինչպես Թորոսի խոնարհ պատգամավորության վրա կասկածանոք գլուխ շարժած էին, հիմա ալ այս անհոգ անառակության վրա գլուխնին կը շարժեին դարձյալ. բայց ո՞վ կրնար Կեսարու մը՝ կայսեր հորեղբորորդվո մը՝ ընդհանուր արևելից սպարապետի մը համարձակիլ զրուցել, թե՝ «մի՛ հավատար այդ խոնարհության, վասնզի առյուծը երբեմն ավելի լավ ծուղակը ձգելու համար իր որսը՝ կրնա դերը փոխել և աղվեսի մորթը վրան առնուլ», ո՛վ կրնար իրեն զրուցել, թե՝ «այդ հանդեսները ավելի հարմար էին հաղթությանն վերջը, քան թե առաջ». ուստի իմաստունք կը լռեին, հիմարք և մեծապանծք կը խոսեին։

Իսկ Թորոս, երբ գիշերն հասավ, հունական բանակին հակառակ կողման պարիսպը հրամայեց քանդել, և հազիվ թե գործը սկսավ դյուրանալ, սոսկալի փոթորիկ մը ահա փրթավ, որոտում, կայծակ, անձրև, կարկուտ իրար կը խառնվեին, ուժգին հովը ժայռեր կը կործաներ, վրաններ փետուրի պես կը հափշտակեր, հունական բանակը շփոթած անձրևեն

և տիրմեն շաղախյալ՝ շվարյալ մնացեր էր բոլոր գիշեր, թեպետ Անդրոնիկոս յուր զվարճությունքն ու գիներբուքը ամենեին չի դադրեցուց գիշերն ի բուն։ Արշալույսը երևցավ, և հայոց գնդերը աշխույժ և կորովի՝ պարսպին պատռվածեն կիսաշրջան մ'ընելով, գրոհիվ կը հարձակեին թշնամվույն վրա, որ անպատրաստ երբ թշնամին դիմացը ի բանտ կը կարծեր՝ քովը կը գտներ զայն սուրն ի կող մխելով։ Ալ պատերազմ չէր։ այլ փախուստ մեկ կողմեն, կոտորած մյուսեն. հոն Մլեհ յուր մոլեգին հեծելազնդին հետ դաշտին տարածության մեջ անխնա կոտորածը դեռ քիչ գտնելով՝ «զարկե՛ք, տղաք, մի՛ խնայեք» կը գոռար, և իր օրինակն ալ սոսկալի էր. իսկ Թորոս տեսնելով իր պատրաստածն ավելիովն ի գլուխ ելած, կը հորդորեր յուր զինվորն ի գթություն և հազիվ թե հույն և հայ իշխաններեն կրցավ մաս մը մահվանե ազատել։ Իսկ թշնամվույն այն մասը, որ փախստյան հառաջընթացն եղած էր և ազատությունն ապահով կը կարծեր, Ատանայի ճամփան բռնելով Ստեփանեի և Սարգսի խումբին հանդիպեցան, որք առանց փոթորկին ուշ դնելու շորս հազարի չափ մարդ իրենց կսպասեին։ Փախստականաց մեջն էր Լամբրոնի իշխանը իր գնդով, որ հուսահատ ջանք մ'ըրավ պատռելու հայոց խումբը և անցնելու իր ճամփան, բայց վրա հասավ սաստկությամբ Ստեփանե և անցնելու իր ճամփան, բայց վրա հասավ սաստկությամբ Ստեփանե և այնպիսի նիզակի հարված մը տվավ, որ թավալգլոր ձիեն կործանելով Օշին, վայրկենին զինաթափ և կալանավոր եղավ։ Այդ ահագին բանակին հազիվ թե կես մասը ազատեցան, և բուն ազատյալք անոնք էին, որ իրենց նավերը կրցան մտնել, մնացյալք ամենքը կամ ջարդվեցան, կամ գերի ընկան։ Իսկ բուն շարյաց սկզբնապատճառը և սա խեղճ ու խայտառակ պատերազմին հեղինակ և զորագլուխ կեսարն Անդրոնիկոս հանկարծ ի քունե և գինվո սթափյալ հազիվ թե ժամանակ գտած էր ինքզինքը իր ձիուն վրա նետելու և Անտիոքա ճամփան բռնելու, բարեբախտաբար իրեն համար, որով անվտանգ ազատեցավ. թեպետ Բաբիկեն ամեն բան թողած՝ զանիկա կը փնտրեր կոտորածին մեջ, խոստանալով ինքնիրեն կիսկատար հարված մը չի տալ անօրենին։

Իսկ Թորոս, որ այս անգամ և ոչ սուրը պատյանեն հանած էր, այլ արթուն՝ ամենայն պատրաստած, վասնզի վտանգ չի կար և ոչ ծանր պատերազմ, այլ ջարդ, կոտորած և ավար, այդ սպանդանոցին վրա կեցած կը նայեր, կը խորհրդածեր մարդկային անմտության վրա որ խաղալիք քանի մը անպիտան, հիմար և թեթև գլուխներու, այդչափ ճապաղյաց տեղի կուտար։

Այս խորհրդածությամբք ձգեց պատերազմին՝ մանավանդ թե կոտորածին դաշտը, մտավ թշնամվույն բանակը յուր անձնապահպանաց խմբովք, գիշերվան փոթորիկը և ավելի սաստիկ առավոտյան հայ արշավանաց փոթորիկը՝ ամեն բան խառնափնթոր և ողորմելի վիճակի մեջ կը ցուցներ այդ բանակը, կիսակործան և կանգուն վրաններ, վահաններ, նիզակներ, սուրեր գետին փռված, թամբյալ ձիեր ոտնկապ կը խխնջեին հեծյալներու սպասելով, որք չի կային. այս տեսարանին վրա ակնարկ մը ձգելով Թորոս, ակնարկ, ուր զոհություն և արհամարհանք հավասար էին, մտավ Անդրոնիկոսի վրանը, որ գրեթե պալատ մ'էր յուր ընդարձակությամբ և բաժանմունքներով, իսկ հանդերձանաց հարստության, զեխության և պերճանաց չափ չի կար. գորգեր, բեհեզյա անկողիններ, ծիրանի վերմակներ, ոսկի և արծաթյա զենքեր, կանանց զարդարանք, երաժշտությանց նվագարանք խառնիխուռն դրված էին, այնպես որ արդի մեծ թատրոնի մը մթերանոցի կը նմաներ, քան թե սպարապետի մը վրան։ Թորոս աս ճոխությունքը տեսնելով մեծ ուրախություն մ'ունեցավ ոչ թե անոր համար, որ իր գանձը պիտի երթային անոնք՝ ոչ, այլ անոր համար, որ հայ զինվորը զինվորական կանոնաց ու զորապետին հրամանաց հնազանդել սովրեր էր. հետադարձի փողը չի հնչած մեկը չէր համարձակեր ավարառության ձեռք զարնել, այլ թշնամին հալածելու միայն զբաղած էր։ Ուստի ինքն ալ ցուրտ նայվածք մը ձգելեն վերջ այս թուլամորթության կահուց վրա, հետաքնին աչոք բան մը կը փնտրեր, որ վերջապես գտավ, այսինքն՝ բանակին դիվանական գրությունը, որ վայրկենին մատանիովը կնքեց և յուր ատենադպրին հանձնեց։ Անկից վերջը հրաման տվավ շուտ մը մեռելները թաղելու գործողության, որ սեսզի օդը չապականի։ Նույն միջոցին էր, որ Ստեփանեի բանակն ալ գերիներով ծանրաբեռնյալ կը հասներ, կը միանար իր բանակին. իսկ Մլեհի մոլեկան հեծելագունդը անհետ եղած էր բոլորովին, և իրոք մեծ բարեբախտություն մ'էր հայ իշխանաց համար, որ Ստեփանեի ձեռք ինկած էին, վասնզի Մլեհեն գթություն հուսալ անօգուտ էր, նա գիշերվան մութուն առանց կալանավորի մը դարձավ գոհ ու այրունաթաթախ։

Նույն գիշեր զինվորը մաս մը հունաց բանակատեղը, մաս մը Մամեստիա անցուցին, թշնամվույն գինվով և կերակրով զվարճացյալ և հղփացյալ, բայց միշտ գիշերապահ զգուշության օրենքը խստիվ պահպանելով, վասնզի Թորոս կը տեսնվեր հանկարծ ամեն բան անձամբ քննելով։ Բայց իրեն զբաղմունք նույն գիշերը եղավ բոլոր Անդրոնիկոսի քովը գտնված թուղթերը հետախույզ ընել։ Հոն կը տեսներ շորս տարվան միջոցի մեջ քանի անգամ դրացիք, որ բարեկամություն ձևացնելով շնորհավորության դեսպաններ ղրկած էին, իրեն դեմ որոգայթ լարած, հունաց հետ գաղտնի դաշինք կը դնեին և կը հրավիրեին պատերազմի։ Հոն կը տեսնվեր մանավանդ Անտիոքա իշխանին Ռընալտի և տաճարականաց շահասիրությունք, որ երբեք վնաս չէին տեսած, այլ օգուտ, նաև

Հաշիշենց պետին մակ գիրը, որ հորդորյալ ի հունաց սպաննել զԹորոս, լի նախատանոք կը պատասխաներ այսպիսի առաջարկության մը՝ հիշեցնելով, թե այդ հայը երբեք անիրավություն մը ըրած չէր ընդդեմ մահմեդականաց։ Հոն կը տեսներ, թե իր եղբայրը՝ Մլեհ, նշանակված էր իբրև կարելի գործիք մը իր կենաց և աթոռույն դեմ. հոն կը գտներ շատ մը գրգռության թղթերու օրինակներ ուղղյալ կայսերական կառավարութենեն առ մամհեդական իշխանս Մաղսուտ սուլթան և Նուրեդտին ամիրան իր նորածին իշխանությունը կործանելու համար։ Թեպետ Թորոսի հանճարը ասոնք ամենքը կը գուշակեր, բայց ուրիշ էր վկաներ և ստուգություններ ի ձեռին ունենալ. ուստի արշալուսո մոտ էր, երբ պզտի քուն մը քաշեց և կանգնեցավ առույգ և զվարթ, որովհետև յուր կորովի կազմվածքը շատ դյուրությամբ կը տաներ ամեն տաժանմանց և փոքրիկ հանգստությամբ դյուրավ կ'սթափեր։

Նախ ատյան կազմեց յուր զորավարաց, հոն գերիներուն համար նոցա կարծիքը քննեց, Մլեհ մեկեն առաջարկեց զամենքն հուղարկել Հալեպ և վաճառել, վասնզի, կ'ըսեր՝ այդ անպիտան ժողովուրդը քրիստոնյա պետք չէ համարել։ Ամենքը Թորոսին կը նայեին, և մարդ կարծիք չէր տար։ Այն ատեն Թորոս մարդասիրության և քրիստոնեության օրենքները առաջ դրավ, բացատրեց, թե չափավորության օրենքներն ինչչա՛փ օգտակար էին, և եթե բախտը ինչչա՛փ անհաստատ էր. այսօրվան հաղթողը կրնար վաղը հաղթվիլ, և թե Հալեպ այդ քրիստոնեից ծախվելովը քանի՞ ուրացության մեղք պիտի ծանրանար իրենց վրա, ուստի կողոպտել և ճամփանին թողուլ որոշվեցավ։ Իսկ Մլեհ յուր անհոգ ձևով կ'ըսեր, թե իր խղճմտանքը թեթև էր, վասնզի ինք գերի մը նաև բռնած չէր բանակը, և թե որ Ստեփանի կը հավելույր ծիծաղելով՝ իրեն պես շարժած լիներ թշնամվույն հետ՝ այս խնդիրը հիմա տեղի չէր կրնար ունենալ։ Ուստի հրաման եղավ, որ հասարակ զինվորը կապտյալ և կողոպտյալ ազատ երթան, ուսկից որ եկած էին։ Խնդիրը կը մնար գլխավորաց համար, որ բերել տվավ Թորոս, հոն հայ և հույն իշխանաց կապանքը արձրկել հրամայեց, նստել տվավ և զվարթ կերպարանոք սկսավ իրենց հետ այսպես խոսիլ.

«Ասկից քանի մը օր առաջ գիտեք, թե մենք ձեզի խաղաղություն առաջարկեցինք խոնարհաբար, և դուք արհամարհանոք մերժեցիք, կ'երևվա թե սխալ իմացեր էիք մեր դիտավորությունը, և կարծեցիք, թե վախն էր, որ զմեզ խաղաղության կը հորդորեր, կը տեսնենք հիմա փորձով, թե մենք խաղաղության սիրով միայն շարժեցանք, վասնզի քանի տարի է, որ ձեզի կ'սպասեինք և կը պատրաստվեինք, իսկ դուք պատերազմը խաղալիք համարելով, այսպես խայտառակաբար հաղթվեցաք այսչափ մեծ

բանակավ։ Միայն կը ցավինք որ հոս ձեր սպարապետը՝ փոխարքան մեկտեղ չէ և հաջողեր է փախչիլ, հոդ չէ, թերևս օր մը նորեն կուգա, և կը տեսնվինք։ Իսկ դուք, որ մեծ իշխաններ եք և բերդերու, պալատներու և հարստության տյարք, և մենք, որ աղքատ և միամիտ լեռնականներ ենք, դուք քաղաքակրթության վերջին նրբության եք հասած, իսկ մենք ասիական բարբարոսներ ենք ձեր աչքին, դուք քրիստոնեական ուղղափառությունը ունիք, իսկ մենք, հերետիկոսության ենք ժառանգք, կ'ուզեք զձեզ ալ ձեր զորաց պես արձկել, որ երթաք ձեր տունները, միայն օրենք է, որ փրկանք մը մեզի վճարեք, և որովհետև ձեր արժեքը մեզ դժվար է գտնել և գնահատել, ձեզ յուրաքանչյուրոցդ կը թողումք զրուցել, թե ի՞նչ կ'արժեք՝ վճարել և երթալ ձեր ճամփան խաղաղությամբ»։

Հոռոմ իշխանքը, որ այսպիսի առաջարկություն երբեք չէին սպասեր, զարմանքով իրարու երես սկսան նայիլ շփոթված։ Լսված չէր մինչև այն օրը, թե երբեք կալանավոր ոք իր փրկանաց գինն որոշե. պզտիկ արժեք մը տալ անձանց՝ իրենց մեծամտության կը դպչեր, գինը բարձրանել՝ հունական ամբարտավանությունը գոհ կըներ, բայց պետք էր վճարել, ուստի դարձյալ փախուստ տալով առաջարկեցին, որ ինք գին կտրե։ Իսկ Թորոս կերպը փոխելով՝ լի արհամարհանոք՝

— Եթե բան մը արժեիք, զձեզ չէի թողուր, որ երթաք,— ըսավ և դառնալով յուրայնոց.— տարեք այս իշխանները, որ իրենց արժանյաց վրա մտածեն, մենք բավական զբաղմունք ունինք հիմա, և պետք չէ ժամանակ կորսնցնել։

Եվ երբ իշխանները դեռ վրանին դռնեն դուրս չէին ելած բոլորովին, լսելի ձայնով ավելցուց.

— Այս օրվնե տարին չի լցված, պետք է որ հոռոմ մը չի մնա Կիլիկիո մեջ։ Պատրաստենք, եղբայրք, բանակը Տարսոնի վրա։

Իրոք բանակը սկսավ շարժիլ, մեծ էր ուրախությունը զորականին, և քան զամենայն ոք մեծ էր ուրախությունը Մլեհին։

Իսկ մեր կալանավորքը տեսնելով, թե խնդիրը կը ծանրանար, վասնզի եթե բանակը Տարսոնի վրա երթար, Թորոս գտնել ավելի դժվարին պիտի լիներ և՝ գիտե հաջողությունն ալ ավելի հպարտացնելով վերջը պայմանի զիջուցանել զնա ավելի դժվար, մանավանդ որ կային այնպիսիք, որոնց իշխանության երկիրները Կիլիկիո մեջ լինելով թերևս իրենց ունեցածեն ալ պիտի զրկվեին, ուստի խնդրեցին իրավախոհ լինիլ և ծանրը գիներ որոշելնին իմացուցին։ Եվ շուտ մը իրենց ծառաներեն մարդիկ ղրկեցին Տարսոն, Լամբրոն, Կոռիկոս, Փայաս, Անտիոք և մինչև Կիպրոս, որ փրկանքը շուտով հասցնեն և ժամ առաջ ազատին։

Նույն միջոցին Ատանա քաղաքը Ստեփանի մեկ փոքր ցույցին վրա

անձնատուր կը լիներ և դռները կը բանար Թորոսի եղբորը։ Իսկ հայ հաղթության լուրը Կիլիկիայեն դուրս առջի տանողը նույն ինքն Անդրոնիկոս եղած էր, երբ յուր քանի մը մնացորդներով խայտառակաբար հազիվ կրցեր էր Ճոդոպրիլ Անտիոք։ Կալանավորաց մեջ, ինչպես գիտենք, գլխավորն էր Օշին, տերն Լամբրոնի, զոր ամենևին ուրիշ հայ իշխանաց հետ չէր ուզած որոշել Թորոս ի հունաց, և անոնց կարգը դնելով զանոնք՝ միշտ այնպես կը վարվեր, որ իբրև թե հոռոմ եղած լիներին ազգավ և կրոնիվք։ Օշին հիմա վախեն ծանր փրկանք մը հանձն առած էր, և կուգասեր հասնելուն ի Լամբրոնե, յուր անդրանիկին հետ, վանդզի քառասուն հազար ոսկվո տուգանքին կեսը միայն առժամայն վճարել կարող էր և մյուս կիսուն համար պատանդ պիտի թողուր տղան։ Այս պայմանաց համար ամենայն բանագնացությունք Բարկենի միջնորդությամբ կը լինեին, որուն հանձնված էր բոլոր կալանավորաց պահպանությունը։ Բանակը արդեն կը շարժեր, երբ փրկանաց մեծագույն մասը հասավ, հրամայեց Թորոս բերել բոլոր հույն իշխանները, բերել նույնպես անոնց ազատության գիները, և երբ ամեն դրամները համրվեցան և ճիշտ գտնվեցան՝

— Ազատ եք ուրեմն, գնացեք ձեր ճամփան։

Եվ դեռ անոնց ներկայության՝ հրաման տվավ բաժնել զորաց բոլոր այն ստակը, որ գանձ մ'էր, և երբ իշխանները զարմանք հայտնեցին այս հարցմամբ, թե՝

— Այդչափ ստակ ինչպե՞ս կարելի էր այդ սինլքոր զորականին բաժնել։

— Որպեսզի դարձյալ ձեզ և ձեր նմանիքը բռնեն ինձի բերեն,— եղավ Թորոսի պատասխանը։

Ալ սկսավ Թորոս հայրենական սահմաններեն դուրս երթել, Տարսոն խիստ պաշարմունքե մը վերջը անձնատուր եղավ. իր հաղթող բանակին աջ թևը մինչև Կոռիկոս կը տարածվեր, ձախը մինչև Ալեքսանդրիա ծոցը, որ անկից ետքը Հայոց ծոց սկսավ զրուցվիլ։ Իր զորավարները ամենքը վարձատրեց, Մլեհ եղբորը Կոռիկոսի բերդը իր սահմաններովը տվավ՝ հորդորելով, որ ի բաց առյալ զհույնս, լավ վարվի ամենուն հետ։ Իսկ Փայասի ծովեզերյա փոքրիկ բերդը Սարգսի հանձնեց՝ հորդորելով, որ երբեմն ծովասպատակությունն շարունակե հօգուտ իրեն և ի վնաս Թշնամյաց, միանգամայն Սարգսի արթնութենեն կը հուսար, որ իր խոռվահույզ եղբոր կերպով մը դեպ կը լինի դրկից գտանելով, և նորա անճոռնի ջարժմունքներն իրեն կ'իմացնե։

Բայց միշտ մտքեն չէր կրնար հանել այն գաղտնի նամակաց ընթերցմունքն, որ բոլոր յուր դրացյաց ոգին իրեն հայտնի կը պարզեր, ուստի պետք էր զանոնք իրարմե բաժնել։ Այն նամակները՝ հայտնի իրեն կ'իմացնեին, թե Անտիոքա իշխանը խոստացեր էր հունաց օգնել, և կը գուշակեր, թե Անդրոնիկոսի ամբարտավանությունն էր միայն պատճառ, որ այս օգնությունը տեղի չէր ունեցեր, և իրոք այնպես էր։ Ուստի Թորոս երբ այս խորհրդածությանց վրա էր, Տարսոն՝ ուր իր գործողությանց կեդրոն ըրած էր այն ժամանակին, ահա հանկարծ հին բարեկամ մը՝ Բարսեղ վարդապետ, առաջնորդ Կիպրոսի հայ վանուց՝ ներս կը մտներ Կոստանդնի հետ մեկտեղ։

— Ո՜հ,— ըսավ Թորոս խնդալով,— ահա մեր հին երկու սուրբ միանձունքը. ո՜ւր գտար, հայր սուրբ, քու հին միաբանդ, թե ոչ նա զքեզ գտավ, քանի տարի է, որ զմեզ մոռցար, մենք ալ չի կրցանք հիշել, ներե, գիտես, թե Եվփիմե միշտ զքեզ կը զրուցե։ Բայց տխուր կ'երևիս... խոսե՝ ի՞նչ ունիս։

— Մեծ իշխան, մենք գիտեինք, թե դուք զմեզ կը հիշեիք, վանդզի քանի անգամ իշխանուհին թե մեր վանուց և թե մեր կիպրաբնակ հայոց կարոտելոց համար օգնություն ղրկեց, իսկ ես քանի անգամ ուզեցի գալ, որպեսզի ձեր հզոր պաշտպանությունը խնդրեմ մեր խեղճ ժողովրդոց համար, բայց հունաց չարութենեն արգիլվեցա, տարի մ'էր, որ բանտն էի Նիգոսիա, վանդզի զմեզ իբրև հերետիկոս շարշարել, հալածել սովորություն ըրին Կիպրոսի հոռոմք և ինչ որ մինչև հիմա հարաբացվոց չի տեսանք, ասոնցմե կը տեսնենք, կրոնք, կյանք, ստացվածք, ամեն բան վտանգի մեջ է։ Ո՞ւմ դիմեի, շփոթած էի. ուխտ ըրի աստուծո, որ բանտեն ազատած միջոցիս Կիլիկիա ձեզի դիմեմ, և ոսկի խաչ մը, որ միայն մնացեր էր, կաշառք տալով բանտապանին, ազատեցա և վանք եկա։ Իմ խե՜ղճ վանքս, դռները այրած, միաբանքս ոմանք ցրված, լեռները փախած, ոմանք սպաննված, եկեղեցին պղծյալ, սուրբ սպասք հափշտակյալ գտա։ Թե որ արաբացի նավ մը զիս հոս չի հասներ, չեմ գիտեր ինչ մահվամբ ալ զիս պիտի սպաննեին այդ նզովյալ ազգը. ահա իմ վիճակս. եթե Կոստանդին իշխանը ինձի շնորհք չըներ այս հագուստները ճարելու, զիս մուրացկանի հագուստներով հիմա պիտի տեսնեիք։

— Ցավալի և անպատմելի բան մը թե կա՝ միայն մեռածներն են, հայր սուրբ, որոնց ճար չեմ կրնար ընել, իսկ մնացյալ ամենուն հնարքը դյուրին է, փառք աստուծո. դու հիմա քիչ մը հանգչե՛, հայր սուրբս, քիչ մը հանդարտե. ես բոլոր քու կորուստներուդ փոխարեն տասնապատիկը հատուցանել կուտամ։ Կոստանդի՛ն իշխան, քեզի կ'ընկնի առնուլ քու վանահայրդ, շինել տալ անոր ցուցակ մը բոլոր յուր կորուստներուն, և տանիլ զիրենք, ամենայն քաղաքավարությամբ ու քաղցրությամբ հոս՝ Տարսոնի հունաց արքեպիսկոպոսին, և ինձմե բարև ընելով հորդորել

զինքը, որ անոնց փոխարենը տա. վասնզի ինչպես օրենք է, որ սպասավորը սեղանեն ուտե, նույնպես արդար է, որ հարուստ սեղանը կողոպտյալ սեղանին բաժին հանե։ Մենք հունաց եկեղեցյաց ամենեին չի դպանք, բայց նոցա եկեղեցիները պետք է գոնե մեր եկեղեցյաց վնասը տուժեն, երբ իրենց կրոնակիցք զանոնք կը կողոպտեն։ Իսկ քու կիպրացիքդ, հոգ մ'ըներ, հայր սուրբ, իրենց պատիժը կը գտնեն։

Վանահայրը և Կոստանդին ելան իրենց պաշտոնը կատարելու։ Կըրնան երևակայել ընթերցողք, թե Կոստանդին և թե հայր սուրբը քանիցս բազմապատկեցին իրենց կորուստները և թե ինչչափ ճվացուցին խեղճ արքեպիսկոպոսն, որ իր վիճակին աղքատությունը, պատերազմներու պատճառավ իր եկամտից կորուստը, և թե ջրհեղեղն և Պողոս առաքելույն Տարսոնի քաղաքացի լինելն ի վեր ինչչափ վնաս կրած էր յուր եկեղեցին՝ զանոնք կը համբեր։ Բայց ոչ վեղարավոր և ոչ անվեղար գլուխը այս իրավաբանության ուշադրության տալու փափկությունն ու թափանցկությունը չունեին, մեկ կողմեն ապառաժի պես անզգա՝ իրենց պահանջմունքը կը նորոգեին և մյուսեն զլանալու ամեն ջանք կ'ընեին, և այս խաչի, սկիհի, ավետարանի, պատկերի, միանձանց ապրուստի և վանքի եկամտից առևտրին մեջ՝ Կոստանդին զինվոր մարդ, անհամբերությամբ երբեմն կ'ելներ, երբ արքեպիսկոպոսը և վանահայրը, թեպետ ոսոխ, կը միանային զինքը նստեցնելու, իմացնելով գոնե այս հրավերով, թե եկեղեցականը գիտե տեղի տալ միշտ, բայց ի վերջին կետին։ Այսպես նաև եղավ հիմա, հույնը, որ Կիպրոս կողոպտեր էր հայուն վանքը, Կիլիկիա կը տուժեր քառապատիկ. ոսկիները համբվեցան, արծաթներու կապոցները շինվեցան. հայ կրոնավորն ամենայն հարգանոք և խոհեմությամբ իր հույն պետեն ի դասակարգության աջն առնլուն և օրհնությունը խնդրելուն՝ մորուքն ի վար կը ծիծաղեր և, փոխարեն նորա բերանը, երբ անուշ օրհնություն կը բխեր, հազար դառն անեծք սրտին խորեն կը տեղացներ, դժբախտաբար Ավետարանի բարոյականին համար՝ անշահասիրության քարոզն, Քրիստոսի հոն չէր, որ չվանյա խարազանավ այս իր երկու սիրելի աշակերտները լավ մը դրոշմեր։

Կողոպուտն բեռնակրի շալակավ բարձյալ՝ մեր հայ սուրբը կը դառնար Թորոսի իր շնորհակալությունքն ընելու. և երբ իշխանական պալատին դռան մոտեցավ՝ ոչ սպասավորաց բազմություն, ոչ սպայից ելևմուտ, ոչ սուրհանդակաց երթևեկ՝ ոչինչ չէր երևար. այլ խաղաղ լռություն մը կը տիրեր, և դռան քով լռիկ երկու զինվորներ սուր ի ձեռին կայնած էին։

— Կերևա, թե իշխանը մեկնած պիտի լինի,— ըսավ Կոստանդին։

— Ո՞ւր,—պատասխանեց եկեղեցականը։

— Ո՞ գիտե, այնպիսի մարդ մ'է, որ դուլ, դադար չգիտեր, մենք

երբեմն իր հորեղբոր վրա կը զարմանայինք, բայց այս անցավ զանի, լռիկ, անխոս կը մտածե, երբ որոշե՝ ա՛լ դանդաղիլ, դադրիլ չգիտե, իր նպատակին կը վազե, տեսնենք, իմանանք, թե ո՞ւր է։

Մտան պալատը և տեսան Բարկեն, որ ձեռքերը ետին կապած կը շրջագայեր, և երբ այս մեր երկու բարեկամները և բեռնակիրը ետևնուն տեսավ, որ կուգային, աննշմարելի ծիծաղ մը երեսին եկավ, հիշելով այն Կիպրոսի ս. Մակարա թաքստյան տարտամ վիճակի օրերն, երբ նոր գերությենե ազատած, սիրտ ի դող, ելից իրաց կ'սպասեին՝ անփորձ երիտասարդ իշխան մը գլուխնին ունենալով, որ հույս կուտար իրավ իրեն՝ Բարկենի, բայց ո՞ կարծեր, թե այնչափ խոհեմություն այնչափ քաջության և նախատեսության հետ պիտի ընկերացներ և բոլոր իր պապերուն ըրածը քանի մը տարվան մեջ ավելիովը պիտի ըներ և գերազանցեր։

— Ո՛հ, աստված օգնական, հայր սուրբ, բարի ես եկեր։

— Ողջույն, Բարկեն հայրիկ, աստված պահապա՛ն,— պատասխանեց հայր սուրբը։

— Բայց իշխանը ո՞ւր է,— կը հարցներ Կոստանդին։

— Իշխանը Փայաս գնաց։

— Փայաս գնա՞ց։ Բայց քու իշխանիկդ հիրավի զարմանալի մարդ է, Բարկեն, հանկարծ կ'ելնե...

— Իմ իշխանիկի ըրածը թագավորները չեն կրնար ընել, ես կ'ըսեի երբեմն, թե հորեղբոր պես թե լինի՝ շատ է մեզի, բայց հիմա, հե՜, ո՛չ հորեղբայրը, ո՛չ հայրը, ո՛չ պապը... Լուսավորչա պես մարդ է պիտի ըսեմ, թե աստված չի բարկանա. քանի՜ տարի է, օր մը թեթև գործ մը չի տեսանք... Դու, ես, այս հայր սուրբը իր կարգովը, կաթողիկոսն իր սուրբ մեռոնով, աստված վկա թող լինի, եղբայրասպան կը լիներ, թե որ Մլեհի խոսքերը օր մը միայն լսեր... բայց իմ իշխանիկս ամեն բան կը լսեր, գիտեր, ձայն չէր հաներ, սուտ խուլ կը լիներ։ Օր մը, խոստովանանք թող մնա, քանի մը ամիս կա իշխանուհին ինձ ըսավ. «Բարկեն հայրիկ, կը զրուցեն, թե Մլեհ իշխանը իր եղբայրը չի սիրեր և անոր դեմ երբեմն կիրքով կը խոսի և սպառնալիք ալ կ'ընե, իրա՞վ է, պե՞տք է հավատալ»։ Հավատա՝, Կոստանդին, մեր եղբայրությունը վկա, պաղեցա մնացի։ Իշխանուհին, տեսնելով իմ շփոթությունս, մեկեն վրա բերավ... շա՜տ խելոք կին է. իրավ որ մեր լեռներուն մեջ նմանը չի կա։ «Ես չեմ հավատար ի՞նչ որ լսեմ, Բարկեն հայրիկ, մարդիկ չարալեզու են, խոսքերը ծուռ կը մեկնեն, վերադիր կ'ընեն. դու, որ ամենուն հոր պես ես, թե որ օգտակար գտնես՝ խրատե զինքը, որ խոհեմ լինի. իրավ եղբայր են, բայց կրնա մեջերնին պաղություն մտնել»։ Ես տմաշեցի այս խոսքերեն, [illegible]

ամոթը ինձի համար էր, Մլեհին քան զրուցել պարապ էր, բայց պարտք է, ըսի, զրուցեմ՝ խղճմտանքես ազատիմ, այս մտքին վրա էի, մեկ մ'ալ իշխանը ինձի օր մը հանկարծ, երբ միանակ էինք՝ «Բարկեն հայրիկ,— ըսավ,— քանի օր է դու միտքդ կը հոգնեցնես, գիտեմ, Մլեհին հետ խոսիլ կ'ուզես, կը պատրաստվիս շատ անգամ, կը տեսնեմ, երբ Մլեհ իմ քովս գա՝ ներս կը մտնես, դուրս կ'ելնես, միշտ հոս կ'ուզես գտնվիլ. հոգ մ'ըներ, անոր սիրտը գեշություն չի կա, նա, որ զրուցե, չի գործադրեր, փուչ տեղ մի հոգնիր, շատը գնաց, քիչը մնաց. Մլեհը խենթ, խելոք դուրս կուտա, նորա ամեն պակասությունը անգործությունն է. չափը լեցվեցավ, քանի մը օրեն Մլեհ գոհ և երջանիկ պիտի լինի. դարձյալ կ'ըսեմ՝ հոգ մ'ըներ. ոչ մեկուն բան մ'ըսեր»։ Իրոք մեկ մ'ալ լսեցինք, թե մեր վրա հոռոմները պատերազմի կուգան. Մլեհ փոխվեցավ, եղբորը պես ոչ մարդ կար, ոչ իշխան։ Հիմա գնա աս միջոցիս Մլեհ կը գտնես Կոռիկոսի դռներուն առջև՝ ծովեզրը նստած, օդին կը նետե և եղբորը գովասանությունը կը կարդա, ինչպես ասկից քանի մը ամիս առաջ Վահկա հովանոցին մեջ նստած օդին կը նետեր՝ նզովք կը կարդար։ Մլեհին ի՞նչ զարմանամ. Թորոսի կը զարմանամ, որ եղբորը ամեն ասածը գիտե, իմ մտքես անցածը գիտե, Հռոմի թագավորին ընելիքը գիտե..., աս մարգարե՞ է, ի՞նչ է, դու ըսե, հայր սուրբ, դու, որ շատ կարդացեր ես. բայց գիտցիր, թե մեր իշխանիկը քեզմե շատ կը կարդա։

— Եղբայր, հայր սուրբեն ի՞նչ կ'ուզես,— կանչեց Կոստանդին,— թե որ Մլեհ, որ Կոռիկոսի իշխան եղավ՝ օդին կը խմե և եղբորը գովասանք կը կարդա, օդին բերել տուր մեզ ալ, տե՛ս թե հայր սուրբը ի՞նչ օրհնություն պիտի կարդա մեր իշխանին. այս բեռը կը տեսնե՞ս, բոլոր արծաթ ու ոսկի է, բոլոր եկեղեցական սպաս ու դրամ է, նորա խրատով մեկին տեղ տասն առավ հոռոմ եպիսկոպոսեն. տեսնիր խեղճ մարդը, մինչև մորուքը քրտնեցավ։ Տե՛, օդի՞ն, օդի՞ն, օդին բերել տո՛ւր,— ըսավ Կոստանդին և յուր ահագին հասակով տարածեցավ գետին։

Եվ մեր երեք բարեկամները բոլորեցան սեղանի մը շուրջը, անցյալին, ներկային և ապագային վրա խոսելով՝ մինչև քունը իրենց աչաց վրա ծանրացավ։ Բայց երբ Կոստանդին և հայր սուրբը կը խորդային բոլոր գիշեր, Բարկեն, որու հանձնված էր Տարսոնի կառավարությունը, երեք-չորս պտույտ ըրավ նույն միջոցին՝ պահապանաց հսկողության ուշ դնելով։

ԳԼՈՒԽ ԻԲ

ԱՆՏԻՈՔԱ ԲՐԻՆՋԸ

Իսկ Թորոս այս միջոցիս կը սուրար, կ'երթար տասներկու հեծելոք միայն, ինչպես յուր սովորությունն էր, հասնելու իր բանակին ձախ թեվին, որ արդեն մինչև Փայաս տիրած էր, և հասած ի դռունս ասորվոց, և հոն իրեն կսպասեր։ Ոչ թե ինք անցնելու միտք ուներ այն դռունքը, ո՛չ, վասնզի միտքը չէր դրած Անտիոքա սահմանները կոխել, այլ միայն այնպես կարծեցնել տալ Ռընալտա. վասնզի յուր քաղաքագիտությունը շատ հեռի էր այն հանձնապաստանությենեն, որ բոլոր դրացիները իրեն դեմ կրնար հանել. յուր միտը ցույց մ'ընել և մոտեն ճանաչել էր մարդ մը, որու հանդգնությանն և շահասիրության համբավը իրեն ծանոթ էր, և որ Հունական կայսրությենեն կ'ուզեր խոտորցնել։

Դեռ քիչ մը հանգիստ չառած՝ պատգամավոր ղրկեց այս Անտիոքա բրնձին, տեսության փափագ իրեն հայտնելով, ապահով էր, որ հաղթող իշխանի մը այսպես առաջարկը սիրով պիտի ընդունվեր, ինչպես եղավ. երկու օրեն վերջը սուրհանդակը կը դառնար, և երկու իշխանք, ամենայն զգուշության պայմաններն պահելով, հարյուրական ձիավոր զինվոր հետերնին առած, կիրճերուն վերևը բլուր մը կը հասնեին, ուր վրան մը պատրաստված էր։

Հոն երկուքն ալ ձիերեն իջան՝ մտան պատրաստյալ վրանը մեյ-մեկ թարգման առած, թեպետ երկուքն ալ բավական հունարեն գիտեին իրարու միտք հասկնալու համար։

Սովորական քանի մը խոսքերե վերջը, ուր Ռընալտ Թորոսի շնորհավորություններ կ'ըներ իր հաղթությանց վրա, և թե ինչպե՛ս ախորժելի էր իրեն նման դրացի ունենալ, քան զՀունաց կայսրությունը, որուն ոչ միայն մեծությունքը, այլ խաբեբա դրությունը սկզբունքը նաև բարեկամության ապահովություն չէին տար. Թորոս կարճեց խոսքը, ըսելով թե՝ «երկուքս ալ կը տեսնեմ, թե գործի մարդ ենք և մեր նպատակին կը դիմենք, այսինքն՝ մեծնալ և ընդարձակիլ. ուրեմն բարեկամության և լավ դրացիության վրա ձայն չի բարձրացնենք, ոչ ես և ոչ դու այդ տեսակ խոսքերու չենք հավատար (և Ռընալտ սկսավ ծիծաղիլ), ուրեմն մեր օգտին խորհուրդ հարցնենք, նայինք, թե ի՞նչ պետք է ընել շահավոր լինելու համար։ Զիրա՞ր ջարդել, ինչ վաստակ կա մեզի, դու թե որ իմ լեռներս կոխես, ավարես, քանի մը բերդ հափշտակես՝ ի՞նչ զարմանալի կարողություն պիտի քաղես, ես քո հողերուդ վրա գամ, թե որ հաջողիմ, ի՞նչ

ավար կը տանիմ։ Անոր համար փնտրենք տեղ մը, ուր քիչ աշխատությամբ մեծ օգուտ կրնա քաղվիլ»։

Հոս Թորոս դադրեցավ խոսելե, Ռընալտի աչքերը սկսան փայլիլ բոլոր յուր մթերյալ շահասիրությենեն զրգռյալ և անհամբեր՝

— Այդ տեղը, այդ տեղը անվանե՛, կը զրուցեր։

— Այդ տեղը,— ըսավ Թորոս անհոգ ձևով մը,— այդ տեղը... դու ամեն միջոց ունիս այդ տեղն ելնելու՝ և ես չունիմ... բոլոր օգուտը քեզի պիտի լինի։

— Ընկերաբար ամեն բան կ'ընենք, կը կարգադրենք։

— Լա՛վ, թե որ այդպես հանձն առնուս, ահա՛ տեղը,— ըսավ Թորոս մատնանիշ ծովուն անհունությունն ցուցնելով։

— Ո՞ւր, ծովուն վրա, ի՞նչ...

— Կիպրոս. ահագին, հարուստ, անպատսպար, անդուռն կղզի մը, բաց ամենայն հարձակմանց։ Թե որ ես նավ ունենայի, ժամանակ ունենայի...

— Ես նավ կը գտնեմ, հոգ մ'ըներ։

— Ես շա՛տ-շա՛տ՝ խումբ մը զորք նիզակակից կրնամ տալ քեզ, թե որ կը հաճիս։

— Ամենայն հաճությամբ, մանավանդ որ ավարը գտնողն իրավունք ունի մասնակցելու։

— Երբ որ պատրաստ լինին նավերդ՝ իմ գունդս ալ պատրաստ է իր զորավարին հետ։

Երբ Թորոս տեսավ իր մարդուն հափշտակությունը այս դյուրին և, հարուստ ավարին վրա և իմացավ, թե հարվածը տեղը գտավ, վասնզի մարդը չէր կրնար հանդարտ տեղը նստիլ, ալ ոտք ելավ և պատշաճ հրաժարական ողջույնն տալու ժամանակ, մեկ կողմն առնելով զինքը.

— Բայց,— ըսավ,— պետք չէր մոռնալ, որ զինվորը նավ մտնելու ժամանակ նաև պիտի չկիտենա, թե ո՛ւր կ'երթա. և դու հյուր մ'ունիս, թերևս բարեկամ մը, որ քու տունդ է և ամեն ըրածներդ կրնա իմանալ. պետք է արթուն կենաս իրմե, որովհետև շատ խորամանկ և վտանգավոր մարդ է։

— Կ'իմանա՛մ, Անդրոնիկոսի համար կ'ըսես, թե որ կ'ուզես՝ կապած քեզի ղրկեմ վաղը, իբր նշան դաշնակցության։

— Ոչ, անոր պետք չունիմ, բավական է, թե հեռացնես զինքը. վտանգավոր հյուր մ'է, ոչ միայն դրացյաց, այլև ասպնջականին համար։

— Հոգ մ'ըներ, դյուրին գործ մ'է այդ ինձի համար, ութ օր չեղած իմ նավերս պատրաստ են արշավանքի համար։

Եվ ահա մեր իշխանքն բաժանվեցան։ Թորոս կերթար Տարսոն իր

երկիրը բարեկարգելու, իսկ Ռընալտ՝ իր զորքերը պատրաստելու, որ շատ դժվարին չէր այնպիսի մարդկանց համար, որ ուրիշ զբաղմունք մը չունեին պատերազմե զատ. և իրոք այս գործիս մեջ ամենայն զգուշությամբ վարվեցավ և գաղտնապահությամբ։ Մլեհ իր հազար հոգվո գնդովը մտավ նաև Հալեքսանդրիո մեր ս. Մակարի հայր սուրբին հետ, և հեռացան փռանգք իրենց նիզակակից խմբովը։

Ի՞նչ որ պատմությունը զրուցած է, ավելորդ է հոս հիշել, վասնզի ամեն ազգի հեղինակք, հռոմք, փռանգք և հայք՝ միաբան են պատմելու, թե Կիպրոս ոչ երբեք այնպիսի բարբարոսական հարված մը ընդունած էր և ոչ իսկ ի սարակինոսաց։

Այս մոլեգին գունդը, որ հազիվ թե տկար դիմադրություն մը գտավ խեղճ բնակչաց կողմե, հուր, սուր ի ձեռին կը վազեր կռվույն ամեն կողմը, ոչ տարիք, ոչ սեռ, ոչ կրոնք, ոչ պատիվ չէր խնայեր. ամեն տուն, ամեն պալատ, ամեն եկեղեցի ավար և կողոպուտ ընելեն վերջը, մեծ ու պզտիկ, աշխարհական ու եկեղեցական կը համրեր, կը դիզեր ծովեզրը, և այն ահագին բազմությունն, որովհետև կարելի չէր տանիլ մեկտեղ, պատվավոր եկեղեցականք և իշխանազունք միայն կ'առնուր կը տաներ Հանտիոք, որպեսզի ահագին փրկանաց գինը ամբողջ վճարվի։ Հոն Մլեհ իմացավ, թե ավազակության և անզգամության արհեստին մեջ իրմե հառաջադեմն ալ կար, Ռընալտ Անտիոքացին. հոն տեսավ, թե այն փռանգ զորաց մեջ, եկեղեցական, տաճարական ասպետք (զորս Փոերք Դամբլունա կ'անվանեն հայ պատմագիրք) շատ հարմար ընկերք էին իրեն թե քաջության և թե անզգամության մասին. և այն ատեն հակամիտեցավ, թե օր մը անոնց կարգակից ալիտի կարենար լինիլ։

Ի՞նչ մեծ տարբերություն կար Մլեհի և Ռընալտի գործողությանց և Թորոսի զբաղմանց մեջ այն քանի մը ամիս ժամանակին մեջ։ Թորոս կը նորոգեր, կը շիներ, իր տիրած երկրներուն մեջ ամեն ազգի, ամեն կարգի անձանց ապահովություն, կենաց և ստացվածոց կը հայթայթեր, ավարառուն և կաշառակուրծը խստիվ կը պատժեր, կողմնապահներով և բերդերով իր երկիրը կը ջանար ամրացնել ամեն հարձակման դեմ։ Մենք զրուցեցինք վերը, թե առչի օրեն ի՞նչ փույթ և ջանք ցուցուց զինվորության հառաջադիմության համար, և անոր շարունակությունն էր, որ երբ Ռուբինյանց տերությունը շատ տկարացեր էր նաև, ամեն հայ՝ զինվոր լինելուն համար դեռ երկրին կերպարանք մը կուտար։ «Հայերն ամենքը զինվոր էին, գրեթե նույնչափ վայրենի, որչափ իրենց լեռներն, ուր կը բնակեին,— կ'ըսե պատմիչ մը,— և գրեթե միշտ զենքը ձեռվին, և բոլոր պատմիչք զիրենք կը ցուցնեն արագ՝ դաշնակցությունք լուծելու ինչպես կազմելու՝ միշտ իրենց շահուն համար»։ Իսկ ճանապարհորդ մը, որ մեր

Թորոսի եղբորորդվույն ժամանակ Հայոց Թագավորության երկրներեն կ'անցներ, այսպես կըսե Կիլիկիո բնակչաց համար. «Երկիրը բնակյալ է ի Փռանգաց, ի Հունաց, յԱսորվոց, ի Թրքաց, ի Հայոց և հայլոց, բայց սակայն Հայերն են, որ կը տիրեն։ Այս Հայերը շատ կրոնասեր մարդիկ են և գերագույն քրիստոնյայք»։

Ան զբաղմունքներուն հետ էր Թորոս. դուլ և դադար չուներ, երկիրը կը պտտեր անձամբ քննելու ամեն բան։ Այսպես անգամ մ'ալ, երբ Ռապան կ'երթար տասներկու ձիավորով և ջոկատ մը հետևակոք, ավարառու Թրքաց խումբ մը զիրենք շրջապատեցին հանկարծ. իսկ նա անվեհեր՝ հաջ ու ձախ կոտորելով երեք հաղար հոգի՝ մնացածը կը հալածեր և ի չիք կը դարձներ։

Իսկ Հունական կայսրությունը, երբ իմացավ իր զորավարին խայտառակ պարտությունը, և Կիլիկիո ամբողջ կորուստը, և Անտիոքա իշխանին հայոց մասնակցությամբ Կիպրոսի շարաշար անցքը, որովհետև կայսրը զբաղած էր պատերազմի Եվրոպիո մասին մեջ՝ դեսպան կ'ուղարկեր, գանձ կը խոստանար Իկոնիո սուլթան Մաղսուտին, որ հայոց վրա դիմե և յուր վրեժը առնու։ Մաղսուտ ալ բարեպատեհ առիթ համարելով այս հրավերը, մեծ բանակավ մը հարձակեցավ ի Կիլիկիա, կարծեր անպատրաստ գտնել զԹորոս, և զարմացավ, երբ քուն կարծած թշնամին դիմաց պատրաստ գտավ ամուր դիրք մը բռնած և անխռով։

Մեծ բանակի մը առջև պզտի բանակ մը զարմացուց սուլթանը, ուստի դեսպան ղրկեց իմացնելու, թե ինք թշնամության ոգի չուներ ընդդեմ հայոց իշխանին, այլ կ'ուզեր, որ հայք հնազանդին և ի հունաց առած քաղաքներին ետ դարձնեն։ Իսկ Թորոս քաղաքավար և անուշ լեզվավ շահեց դեսպաններուն սիրտը, տարտամ պատասխաններ տվավ. «Մեծազոր Թագավորաց հնազանդիլ մեզ նախատինք չէ,—կ'ըսեր,— բայց հունաց քաղաք դարձնել անհնար է»։ Սուլթանը, մեծ օգուտ չի տեսնելով այս արշավանքին, ետ դարձավ, Թորոսի ավելի իրավունք տալով, քան կայսեր։

Բայց տարի մը չեղած դարձյալ հունաց գրգռությամբ ավելի մեծ պատրաստության ձեռք զարկավ մտնելու ի Կիլիկիա։ Բայց ինք բանակը չի շարժած, երբ Կիլիկիո դռները ձեռք կ'առներ, Թորոս իր լրտեսներեն իմացած, բոլոր իր բնակիչքը ապահոված, լեռանց, ամրությանց, բերդերու և բերդաքաղաքներու մեջ, և անոնց հսկողությունը Ստեփանի հանձնած, բանակին մեկ մասը անոր հավատալով, ինքը բանակին մեծ մասամբ իջավ լեռանց դժվար անցքերեն և ափափայներեն, Իկոնիո երկիրը սկսավ ավարել, քանդել և կործանել։ Սուլթանը յուր երկրին պաշտպանության դիմեց, և Թորոս յուր ավարավն ու գերյավ քաշվեցավ յուր լեռները։ Մաղսուտ այս վնասակար պատերազմին վերջ տալ կը մտածեր խաղաղությամբ, երբ հունաց կայսեր դեսպանները հասան հորդորներով մեծագույն ընծայիվք. կայսեր այս վերջին փաստը անհերքելի էր, ուստի Մաղսուտ իր բանակը ավելի ստվարացուցյալ մտավ ի Կիլիկիա ամենայն զորությամբ, բայց պարսպապատ քաղաքներ կը գտներ և ավերակ գյուղեր, դաշտեր ապականյալ էին բոլորովիմբ, ոչ հունձք կար և ոչ արմտիք, և ոչ իսկ խոտ. ամառվան արեը կը տոչորեր, մարդ և կենդանի՝ կարևորը չէին գտներ, ուր մնաց ավարն ու կողոպուտը։ Իսկ Իկոնիո և Սեբաստիո կողմերեն շարունակ սուրհանդակ սուրհանդակի վրա կուգար իմացնելու վնասն ու կոտորածը, որ կը հասցներ Թորոս իր երկրին. գյուղեր, ավաններ ավերակ կը դառնային, երկիրը զուրկ ի զինվորաց կը հեծեր այս նոր տեսակ պատերազմին առջև։ Իսկ սուլթանը առանց այս լուրերուն միտ դնելու, կը հառաջանար ավերակ երկրին մեջ, կը հասներ, կը ողողեր, կ'անցներ բոլոր դաշտը, կը պաշարեր զՄամեստիա և զԱնարզաբա։

Մամեստիա՝ հանձնած էր Թորոս երիտասարդի մը, որուն անունը Թոռնիկ էր, և որ լսելով իշխանին գալուստն ու համբավը՝ թողած էր իր Սասոն գավառը, եկեր էր նորա զինվորության մտնելու. Թորոս շուտ մը տեսավ և որոշեց նորա քաջությունն ու սրամտությունը, հարցուց ո՛վ լինելը և իմացավ, թե համբավավոր սասունցի Թոռնկա Թոռնիկ էր։ Ուստի այս կարևոր քաղքին պաշտպանությունը երթալեն առաջ իրեն հանձնեց։ «Նայե՛, քաջ տղա,— ըսավ,— ես ոչ միայն քեզի, այլ նաև պապուդ համբավույն կը հանձնեմ այս քաղաքս. բայց քաջ լինիլ բավական չէ, քաջության հետ խոհեմություն ալ ունենալու է. մեռնիլ հիմարաբար, անօգուտ տեղ՝ քաջություն չէ, ես քեզի քաղաք մը կը հանձնեմ, լավ միտքդ դիր, թե քու դիակդ չէ, որ կը փափագիմ տեսնել, այլ իմ քաղաքս ողջ-առողջ ինձի հանձնելդ կ'ուզեմ»։ Թոռնիկ, որ քիչ կը խոսեր, «Աստուծով, իշխան, քաղաքդ քեզ կը դարձնեմ» պատասխանեց։

Թորոս Անարզաբան կնկան մը հանձնեց, և կինը կը ճանչենք. Մարգրիտ՝ պարզ, խոհեմ և միշտ գեղեցիկ, երբ իմացավ, թե Թորոս կուգա, իջավ միջնաբերդեն ի քաղաք զինք դիմավորելու, իսկ Թորոս, որ քիչ ժամանակ ուներ, ոտքի վրա հարսին հարցմունքներ կ'ըներ. թե բավական բերդապահ ունե՞ր և թե քաղաքացվոց վրա վստա՞հ էր. երբ ամենու համար ճիշտ ու գոհացուցիչ պատասխան առավ, երբ իմացավ, ինչպես կ'երեակայեր, թե այդ խաստուն կինը կարծածեն ալ ավելի պատրաստ էր և մանավանդ թե թեր մտած կը տաներ կը ցուցներ ցորենի շտեմարանները, զենքերու մթերանոցները, զինվորներու և քաղաքացվոց խումբերը իրեն ակնարկության միայն կ'սպասեին։ Թորոս, հրաժարական համբույրը տալով

իրեն, «գիտե՞ս, իշխանուհի, ըսավ,— որ Ստեփանե ինչպե՞ս զբաղած է, բոլոր Սև լեռան բնակիչք ու ամբոխությունք իրեն հանձնյալ են, գիտե՞ս դարձյալ, որ ես բանակին հետ կ'երթամ, բայց թշնամին կուգա և պետք է գա, վասնզի յուր ճամփաները ազատ ձգված են, դու, պետք որ լինի, տարի մը պիտի պաշտպանես քաղաքդ, ես քո վրադ ապահով եմ, աստված հետդ լինի, նա քեզի օգնե»։— «Աստված որ զքեզ կը պահե, զմեզ ալ քեզի կը պահե»,— եղավ Մարգրիտի պատասխանը։

Այս երկու քաղաքներն միանգամայն պաշարեց սուլթանն, ոչ յուր բաբաններն, ոչ սանդուխներն և ոչ նետաձգությունները չազդեցին այս քաղաքաց վրա։ Երբ իրեն իմացուցին, թե Անարզաբա բերդակալը կին մ'էր, «թե որ ասոնց կանայք,— կ'ըսեր,— այսպես կը պատերազմին, չըսե՞ք, որ մարդիկն, որ մեր երկիրը արշաված են՝ ոչ ավերակ, այլ անապատ ուրեմն դարձուցին»։ Եվ կը ցավեր մարդը, որ հունաց կայսեր թելադրությամբ այս անխոհեմ պատերազմին ձեռք զարկեր էր, բայց ի՞նչ ըներ, գոնե պատվով պետք էր ելներ այդ բավդին մեջեն։ Արդեն ձիերու հիվանդություն ինկած էր բանակին մեջ, որոնք շարունակ կը սատկեին, զինվորը, որ բավական պաշար չուներ, չէր կրնար բանակին մարմինեն զատվիլ և հեռանալ, վասնզի անհերևույթ թշնամիներ ամեն ժայռի, ամեն ծառի ետևեն զինք կը վիրավորեին ու կ'սպաննեին։ Ուստի Մաղսուտ հուսահատած այս երկու քաղաքները առնելեն, գնաց պաշարեց զԹիլն Համտնո, որ ավելի անառիկ էր, քան զնախահիշյալքն, և իր մեկ փեսան՝ Յաղուպ Մելիք անվանյալ՝ երեք հազար զինվորաց գունդով մը ղրկեց Անտիոքա սահմանները արշավել և ավերել. այս ժանտ մարդը հանդգնությամբ, երբ Անարպաբային անդին լեռանց մեջ մխեցավ անկասկած՝ հանկարծ զինքը շրջապատյալ գտավ Ստեփանեի և տաճարական ասպետաց խումբերեն. ինք և բոլոր իր գունդը ի ծուղակի բռնված՝ մինչև վերջինը ջարդվեցան, հաղիվ թե մեկ քանի գուժաբեր ազատեցան։ Նույն միջոցին անսովոր փոթորիկներ, փայլակներ, կայծակ, կարկուտ և անձրևի հեղեղներ օրերով բանակը կը նեղեին Թիլն Համտնո առջև. և երբ այս կոտորածին լուրն ալ ելավ, ա՛լ սոսկումը պատեց բանակը, զինվորին գանգատը ապստամբություն կսպառնար. սուլթանը թողուց գնաց, և այն մեծ բանակը ոչ թե կանոնավոր, այլ խառնաշփոթ փախստյամբ ցանուցիր եղավ, թողլով իր կահն ու կարասին և բոլոր իր ունեցածը։

Իսկ Թորոս, որ մինչև Սեբաստիա մոտերը քշած էր իր բանակը, դիմադիր մեկը չի գտնելով համարձակ ոտնակոխ ըրած էր բոլոր երկիրը, կը դառնար մեծ ավարավ և կը տեսներ, թե իր բոլոր պատրաստած հատակագիծը լիովին և իր կարծածեն ավելի ի գլուխ ելավ. փառք կուտար աստուծո, վասնզի թշնամվույն ավարը ոչ միայն բավական եղավ յուր

ժողովրդյան վնասը հանելու, այլ նաև առավելապես վարձատրելու համար իր զինվորը։ Իսկ որ դիտելու արժանի է պատմության մեջ, այն է թե՝ իրարու վրա երկու մեծ թշնամյաց բանակներ կը հալեին, կ'անհետանային առջևեն, առանց մեծ արյունահեղության իր զորաց և առանց անդարմանելի կորստյան ժողովրդոց։

ԳԼՈՒԽ ԻԴ

ՄԱՀ ԵՎ ՍՈՒԴ

Ինչպես տեսանք, բոլոր այս պատերազմներուն միջոցին Մլեհի համար խոսք չի կար, մարդ մը, պատերազմ կը փնտրեր, կռիվ կ'երազեր, ի՞նչ էր եղեր։ Թեպետ երբեմն հրավեր գնացեր էր իրեն ամրացնել Կոռիկոս և բավական բերդապահ թողլով մնացած զորոք գալ մեծ բանակը. բայց նա հայտնի քեն ըրած կամ վատ քաղաքականության մը հետևելով տեղն շարժած չուներ։

Մլեհ Կիպրոսի արշավանքեն դառնալեն վերջը լատինաց հետ զարմանալի բարեկամությամբ մը կապվեցավ. բայց որ Թորոսի ծանր էր լսել՝ այդ անգույն արշավանաց գովությունն էր, զոր պարծանոք կը հիլսել՝ այդ անգույն արշավանաց գովությունն էր, զոր պարծանոք կը հիլսել՝ Մլեհ, և որու համար խստիվ պարտավորեցավ հանդիմանել զնա Թորոս, իմացնելով, թե թեպետ ինք թերևս առաջինը եղած էր այդ արշավանքը երկնելու ի վրեժ հունաց, բայց շատ զղջացեր էր եղածները լսելով և տեսնելով, թե երբեք չէր կրցեր երևակայել, թե երկու քրիստոնյա իշխանք այդ աստիճանի անգթություն գործեին խժաբար, անօգուտ ոճիրներով իրենց և Ռուբինյան անունը աղտեղելով։

Այս հանդիմանական խոսակցութենեն վերջը Մլեհ դադրեցուց եղբորը հետ տեսությունքը, և առաջինեն ավելի սկսավ գանգատներ և սպառնալիք, և երբ դինին կը զեղաներ և գլուխը կ'ելներ, այն ատեն համարձակ կը զրուցեր, թե՝ «հայրենի իշխանությունը պետք էր երեքի բաժնել, և թե Լևոնի երկու զավկները չէին ստեղծված գերի լինելու համար մեծին, և թե հին և զառամյալ աշխարհի սովորությունքը ներկա ժառանգին օրենք չէին կրնար լինիլ, որ մեծը բռնաբար իբրև հետին ստրուկ հանդիմաներ իր եղբարքը, որ ամենևին իրմե պակաս չէին ի քաջութենե»։ Այս կերպ դուրս տալեն վերջ, ալ կ'սկսեր Կիպրոսի արշավանաց անգթությանց վրա խոսիլ. «Թե հույնք արժանի էին ամեն պատուհասից, որովք պատժվեցան ի փառանգաց և ի հայոց, և թե նոքա, որ

խաղաղության ատեն հայու վանք մը մտեր ամեն շարագործություն և մինչև սպանություն ըրեր էին խեղճ միանձանց վրա, արժանի էր, որ իրենց եկեղեցականք ալ ականջք և քիթք տուժեին փոխարեն»։

Այս հորդաբանությունք թեպետ Թորոսի ականջը կը հասնեին, ինք բավական կը համարեր արթուն միշտ հսկել, և խոսքերու համար միշտ սուտ խուլ կը լիներ, վասնզի գիտեր զանազանել ճոռոմաբանությունն ի գործադրութենե։ Այս վիճակին մեջ էին երկուց եղբարց հարաբերությունքը, երբ հունական գրգռությամբ և ոսկվով Մաղսուտ սուլթանի հետ պատերազմը տեղի ունեցավ և երկու տարի ամբողջ մտատանջեց ու զբաղեցուց զԹորոս։ Բայց այս պատերազմին հաջող ելքը և Թորոսի փառքը, որ հայն ու օտարը կարմացուցին, Մլեհի մեծ հուսահատություն պատճառեց, և ամենքը զարմանքով տեսան, որ օրին մեկը հանկարծ ամեն բան թողլով, իշխանություն, կին և երկիր ձգեց, ելավ գնաց տաճարական կրոնավոր ասպետ եղավ։

Բայց Թորոսին պատերազմներե հանգիստ չի կար, պետք եղավ Հալեպու Նուրեդտին սուլթանին դեմ հարձակել, երբ իմացավ, թե նա իրեն դեմ կը պատրաստվի, ուստի փութաց անոր դեմ հարձակելու, վասնզի իմացեր էր, թե հույնք ալ իրեն դեմ կը պատրաստվին։ Ուստի առանց ժամանակ կորսնցնելու մտավ բոցի պես Հալապու սահմանները, քանդեց, կործանեց ամրությունները, և մեծ հաղթությամբ դարձավ իր երկիրը և, իմանալով, թե հունաց նավատորմը բանակ կը բերեր իրեն դեմ ի Կիպրոսե, իշավ ծովեզրը իր հաղթական զորքը, հոն Միքայել Գրանոս հունաց զորավարին հետ զարնվեցավ, խորտակեց նորա բանակը և հազիվ թե մնացորդովը մտավ նավերը և փախավ։

Հույնք հանդարտ չի կեցան։ Նոր բանակավ մը նոր զորավար մը՝ Անդրոնիկոս Եվփորպեն՝ Թորոսի վրա հասավ, և Տարսոնի մոտ հայոց զորաց հետ դարնվեցավ. Թորոսի նիզակակից էին այս պատերազմին մեջ փռանգաց գունդ մ'ալ. երեք հազար հունականք պատերազմի դաշտը ծածկեցին մեռելներով և իրենց զորավարն կրնալով հասնիլ իր զորաց հետ նավերով փախչելու՝ բռնվեցավ Թորոսե և Երուսաղեմե Լատին թագավորին միջնորդությամբ ազատեցավ և գնաց Կոստանդնուպոլիս իր պարտության լուրերն անձամբ տանելու։

Իսկ Ստեփանե այն միջոցին իր գովելի վարմունքին համար ի մեծ պատվո էր եղբորը աչքին, և Մարգրիտի առնացի պաշտպանությունը, Անարզաբա պաշարման ժամանակ իր անունը փառավոր ըրեր էր նաև հաշա այլազգյաց։ Գերագույն տարիներ էին անոնք, որ Եվփիմե և Մարգրիտ իբրև քույր սիրալիր այցելություններ կուտային իրարու, միշտ միաբան խնամելով թշվառությունը յուր ամեն տեսակին մեջ։ Ա՛վ որ իրենց դիմեր, ապահով էր պաշտպանություն գտնելու, և այս երկու տիկնայք իրենց գթած ձեռքով շատ ցավեր սփոփեցին, շատ խստություններ մեղմացուցին։ Իրենց տուներն շեն էին հաջողությանց պայծառ շուքին տակ. Եվփիմե իր գեղեցիկ Գոհարն ուներ, զարմանալի պատվաստ փափկության և արիության։ Մարգրիտ երկու կորյուններ ուներ՝ Ռուբեն և Լևոն, և պատերազմաց որոտմունքներու և զինուց շկահրումներու մեջ ծնած՝ անոնց մեջ պիտի մեծնային Ռուբինյանց աթոռը նստելու համար. վերջինը մանավանդ՝ ավելի բարձրացնելու համար ղայն։ Ինչպիսի՜ խնամքներով այդ իմաստուն մայրը մեծցուց այդ երկու տղաքը. այդ հրաշունչ բնավորությունքը չափավորելու համար, անոնց աշխույժը սանձահարելու համար՝ ինչչափ իր մայրենի սիրտը խստացավ, նա, որ վերջը ապագային մեջ Ռուբենի իբրև փրկանք իր անձը կուտար և պատանդ երթալ հանձն կ'առնուր օտար իշխանաց արքունիքը։

Եվփիմեի, Գոհարին քով ուրիշ տղա մը կար Հեթում անուն, ինչպես գիտենք պատանդ Թորոսի արքունյաց մեջ, որ Լամբրոնի իշխանին իբրև տան զավակ, հոն մկրտվեցավ, հոն սնավ, հոն դաստիարակեցավ, և քանի որ Եվփիմեի մայրենի ձեռքը զինքը խնամեց, տղան որբություն չիմացավ, վասնզի այս կնկան բնավորության մեջ կար գրավել հինքն մեծի և պզտիկի սիրտ, իր հանդիմանությունն նաև իր խստության մեջ այնպիսի քաղցրության երակ մ'ուներ, որ դիմացինին սիրտը կը շարժեր և ոչ երբեք կը վիրավորեր։ Զարմանալի բնություն մ'էր փառք, մեծություն, զարդարանք, ուրախություն կը սիրեր Եվփիմե, բայց ասոնք ամենքը միայն իր անձին համար չէր սիրեր, այլ ուրիշներուն հաղորդելու համար այնչափ գոհություն կ'ղգար, որ եսությունը իրեն համար չէր։ Երբ Թորոս իր իշխանությունը մեկ կողմեն մինչև Իսավրյա և Փռյուգյա և մյուսեն մինչև Եփրատ գրեթե կը տարածեր, ամեն տեղ իբրև հսկող վերատեսուչ, քան թե իշխան կ'արշավեր արագ և սրընթաց՝ շատ պարզ էր վարմունքը. ընդհակառակն Եվփիմե, երբ Վահկա բերդեն Տարսոն կ'իջներ, կամ հԱՀարզաբա այցելության կ'երթար, կը սիրեր գեղեցկությունն զարդարել՝ ակնառու և մարգարտահեռ իշխանական պսակն ի գլուխ ոսկեթել բեհեզներու և ծիրանիներու պերճանոք փայլիլ, և նույնպես զարդարուն տիկնանց և արծաթաղեն զորաց խումբերե շրջապատյալ իր ուղեգնացությունքն ընել. և ո՛ր քաղաք որ իջներ, ժողովուրդք կը խռնեին տեսնելու և ողջունելու յուր գեղեցիկ կերպարանքը, ուր զվարթություն կը փայլեր, և ուրախ կը լինեին, վասնզի իրենց ալ զվարթություն և հանդեսներ կը բերեր։

Թեր տարին կատարվեցավ, բախտը ամեն կողմե Թորոսի կը խնդար, ամեն բան հաջող էր իրեն. շրջակա իշխանք մեծ և փոքր կը հարգեին և

կ'ակնածեին այս իշխանութենեն, որ հազիվ թե ճանչցված՝ միշտ հաղթող և երջանիկ կ'ելներ ամեն վտանգե։ Երջանկությունը իր տան մեջ դրած էր իր բույնը. ո՛վ որ իր ծանր զբաղմանց վերջը տեսներ զինքը հոն իր կնոջ, իր զավկին, իր բարեկամաց և ի պարագայից շրջապատյալ, այդ լուրջ և առյուծասիրտ մարդը քաղցր և հանդարտ խոսելով և կատակելով, չափավոր միշտ իր բոլոր կրքերուն մեջ, երանի կուտար իրենե։

Բայց ամենքը գիտեն, և հին առակ է, թե բախտը հողդողդ է, թե երջանկությունը անցավոր է. այսօրվան ծիծաղին վաղը արցունք կը հաջորդե, այսօրվան ուրախությանը՝ վաղը տխրություն, այսօրվան փայլուն պերճանաց՝ վաղը սև սուգ։

Գարունն հասեր էր, բնությունը կը ծիծաղեր, ծաղիկները կը բանային, թռչունները կ'ավետեին, Եվփիմե, որ Տորոսի լեռները կը սիրեր, ջուրերուն ժայռերն ի վար կարկաչը և ճերմակ զով փրփուրը կ'ախորժեր, Վահկա երթալու միտք կը ցուցներ և պատրաստություն կը տեսներ։ Ուղևորության նախընթաց գիշերն էր, երբ քիչ մը տկար լինելն հայտնեց և իր սենյակները քաշվեցավ։ Հազիվ թե քիչ մը ժամանակ անցավ, և երբ Թորոս քովը գնաց, ձայնը և երեսին գույնը այնչափ փոխված գտավ, որ սաստիկ այլայլեցավ և Դիոնիսին իմաց տալ հրամայեց։ Իսկ ծեր բժիշկը, երբ եկավ և հիվանդը տեսավ, պաղեցավ, արձան կտրեցավ։ Այս տեսարանը ավելի շփոթեց զԹորոս, մեկ կողմը առավ քաշեց քովի սենյակը։

— Դիոնիս,— ըսավ,— ինչո՞ւ շփոթեցար, մե՞ծ է վտանգը։

— Վտա՞նգ,— պատասխանեց ծերը դառնությամբ ձեռքերը երկինք տարածելով,— երանի թե վտանգ լիներ... մա՛հ...— ծնկվները ճկեցան, և հազիվ թե ժամանակ ունեցավ Թորոս զինքը բռնելու և նստեցնելու, քանի մը շունչ առավ, մեծ հառաչանք մը հանեց և ոգին էր, որ տվավ։

Այս տեսարանեն ահաբեկ, ներս վազեց Թորոս, Եվփիմեի ձեռքը բռնեց. պաղ էր սառի պես։

— Շատ հիվանդ եմ, սիրելի իշխանս, վախնամ այս հիվանդությունը զիս պիտի սպաննե,— ըսավ խեղճ կինը,— ո՞ւր է Գոհարս... ես ձեռքս կ'ուզեի Հեթումին հետ ամուսնացնել...

— Հիմա կուգա,— կըսեր Թորոս և կը ջանար զինք քաջալերել. բայց նա հազիվ թե մեկ-երկու խոսք կրցավ զրուցել և թմրության մը մեջ ինկավ, որուն սոսկալի քրտինք մը հաջորդեց. հրաման ըրավ իշխանը, որ բժիշկ մը գտնեն, բայց երբ եկավ բժիշկը, դուրսը ծերու մը դիակ գտավ և ներսը երիտասարդ կին մը, որ վերջի շունչը կուտար։

Մենք չենք կրնար նկարագրել այդ մարդուն ցավը, որուն երեսը դրսվանց տխրություն մը միայն կար, միայն թե այդ տխրությունը մինչև վերջին օրը նույն կնիքն անխախտ պահեց նույն չափով։ Արևը միշտ

արև է, բայց շամանդաղի թեթև քող մը պատած էր նորա երկինքը, չուներ պայծառությունը, որ ամենուն կը ծիծաղի։ Մխիթարություն մը կար ազգին բախտին հետ իրեն համար, տղա մը՝ Գոհար մը, որ շատ անգամ, երբ հայրը տաժանելի ընթացքը կատարած յուր Վահկա պատըշգամը կորովի մարմնույն և բազմաշխատ գլխուն հանգիստ կուտար, այն ատեն կուգար ցատկելով ծնկվներուն վրա կը նստեր, իր գանգրահեր գլուխը կը դներ կուրծքին, իր փափուկ ձեռքերով նորա մորուքը կը փայփայեր, լուսալիր քաղցր աչքերը նորա խորունկ աչքերուն կը հառեր, իր գողտրիկ ձայնը՝ սրտին և տարիքին պարզությենեն բխած անոր ականջին անուշ խոսքեր կը մրմնջեր, ահա այն ատեն վայրկյան մը՝ վայրկյան մը զվարթության պայծառությունը կուգար, բայց ամպը հոն էր։ Մտածությունը միայն՝ թե ուրիշ սիրելի անձի մը հետ երբեմն կը բաժներ այդ երջանկությունը՝ ուրիշի մը, որ չի կար, ուրիշի մը, որ իր սրտին կեսն էր, ուրիշի մը, որու ոչ միայն զինքն և իր հաջողությունքը, այլ նաև իր ազգը մասամբ պարտավոր էր, տխուր ամպը այն զվարթությունը կը հալածեր, աչքերը ակամա կը դառնային դեպի Դրազարկ, ուր Եվփիմե իր եղբորը քով կը ննջեր, և այն լայն կուրծքեն մեծ շունչեր կ'ելնեին փոխանակ հառաչանաց, և Գոհար այն ալ կ'որոշեր և կը հարցներ.

— Ինչո՞ւ, հայրիկ, այսպես մեծ շունչեր կ'առնես։

Դժվար էր այդ հարցմունքին պատասխանել, այլ պետք էր խույս տալ, բայց ո՞ւր. ամեն օր, ամեն վայրկյան, երբ զբաղմունք զինք կը թողվին, այսպիսի տեսարաններ կը նորոգվեին, մինչև որ ժամանակը, որ հիշատակ չի մոռցներ այն մտքերուն, որ հիշողություն ունին, այլ կը տկարացնե, բթացուց այդ ցավերը, մանավանդ, որ Եվփիմյա մահը ուրիշ դժբախտության նախաշավիղն էր, ինչպես պիտի տեսնենք։

ԳԼՈՒԽ ԻԴ

ԿԻՐ ՄԱՆՈՒԵԼ ԿԱՅՍՐԸ

Թորոս լավ խելամուտ էր, թե խաղաղություն միայն և երկարատև խաղաղություն մը կրնար Ռուբինյանց աթոռը ամրացնել և Կիլիկիա ապաստանարան ընել հայ ազգության. ուստի, երբ ամեն բան կարգադրից, ջանաց նաև ուսմունքը տարածել իր երկրին մեջ. ուստի վանքերը շատցուց, վասնզի նոքա միայն էին այն ժամանակը՝ միջոց գիտության ծավալման. ո՛վ կուզեր ուսանիլ, վանք մը կը դիմեր, վասնզի ուսումնա-

բան և վանք այն ատեն միևնույն նշանակությունն ունեին, ոչ միայն հարևնալս, այլև հարևնուտ։

Թեպետ սիրտը դառնությամբ լեցուն կնոջը մահվան, Մլեհ եղբորը հիմար ձեռնարկությանց համար, բայց դարձյալ Թորոս անհողդողդ բնավորության տեր՝ բարեկարգության կ'աշխատեր, ամեն իր այցելությունքը կ'ըներ երկիրը բարվոք վիճակի մեջ պահելու համար։ Եվ երբ հոգնած՝ փախստյան տեղ մը փնտրեր, կ'երթար կը քաշվեր Տարսոն իր սև մաղձին քաղաքը, այն սենեկին մեջ, այն անկողնին քով ժամեր, օրեր կ'անցներ, անցյալին վրա տխուր խորհրդածելով։ Ահա ճիշտ նույն օրերուն մեկն էր, երբ հանկարծ լատին ուխտավոր մը իրեն ներկայացավ գույժ տալով, թե Մանուել կայսրը ընտիր զորաց խմբով մը իր վրա կուգար։

Թորոս թեպետ անվեհեր, քաջ մարդ էր և բոլոր իր պատմությունն ալ կը վկայե, բայց անխախտ սկզբունքներ ալ ուներ. պատերազմի բախտը վտանգի չի դնել՝ երբ կարելի էր առանց իր զորաց կորուստին թշնամին վտանգել, մաշել, ակարացնել և սովամահ ընել կը նախադասեր, և ասոր համար ալ տաքգլուխ երիտասարդ զորավարներ, որոնց առաջինն էին Մլեհ և Ստեփանե, գինքը կը բամբասեին. դարձյալ, երբ կարելի էր բանագնացությամբ և քիչ վնասով և իր հարկին խոնարհական ցույցերով խաղաղությունը ծախու առնուլ և վտանգը հեռացնել, ավելի կ'ընտրեր, քան թե իր ազգին և իր անձին բախտը կորստյան վիհը գահավիժելու վիճակի մեջ ձգել։

Իսկ այս անգամ առանց շփոթելու՝ այլայլեցավ, նախ՝ ինք, որ միշտ իր թշնամյաց ամեն շարժմունքը կ'իմանար, այս անգամ թշնամվույն ձեռք իյնալու վտանգին մեջ էր, պատճառը չէր կրնար մեկնել, վասնզի իր Կոստանդնուպոլսո լրտեսը, որ կայսեր լուրը իրեն կը հասցներ՝ դիպվածով մը արգիլված էր իմացնելեն։ Երկրորդ՝ կայսրը շատ զգուշությամբ վարվեցավ իր արշավանաց մեջ և ոչոքը գնդով մը իր վրա կուգար, և Թորոս այս չէր կրնար երևակայել։ Ուստի այն դրությունը գործածել մտածեց, որ Մաղսուտ սուլթանին դեմ ալ գործածեր էր քանի մը տարի առաջ հաջողությամբ։

Բայց դժբախտաբար չէր պատրաստեր ժողովուրդը, ժամանակ չի կար ամեն բան ավրշտելու և լեռները քաշվելու. բայց պետք էր շարժիլ, ուստի թողուց Տարսոն և ամեն տեղ հրամաններ ղրկեց, որ լեռները ամրանան. Մարգրիտ իր զավկներով հրաման ընդունեց քաշվիլ լեռանց ամրությունքը. Թոռնիկ միայն խնդրեց Թորոսեն մնալ և պաշտպանել զՄամեստիա։ Իսկ ինք զորոք կը հասներ, կը քաջալերեր ժողովուրդքը, կը հասկցներ, թե փոթորիկը կ'անցնի և երկար չի կրնար տևել։ Ամսվան մը ժամանակի մեջ մարդ և կենդանի Տորոսի լեռները կը ծածկեին, երբ հունաց բանակն ալ դաշտավայրը կը ծածկեր Տարսոն, Անարզաբա, քիչ ժամանակի մեջ թշնամվույն ձեռք անցան. իսկ Մամեստիա կայսրն ինք անձամբ պաշարեց, ձմեռ մը ու ամառ մը աշխատեցավ մինչև կրցավ առնել Թոռնկա ձեռքեն, որ դիմադրությունը երբ անկարելի գտավ, չվանով պարիսպներեն իջավ գիշերանց և գետին մեջեն երկար տեղ լողալով ազատեցավ թշնամյաց ձեռքեն և հասավ գտավ Թորոսի խումբերը Սև լեռներուն մեջ։ Երբ զԹոռնիկ տեսավ իշխանը՝ «հա՛հ,— ըսավ,— իրենց վերջի ընելիքն ալ ըրին հույնք և իրենց դաշնակիցքը. ա՛լ թե որ կուզեն, թող գան ցմեզ հոս գտնելու»։ Եվ իրոք կայսեր դաշնակիցքը կը շատնային. լատինք՝ Երուսաղեմի թագավորեն սկսյալ, որ նոր փեսա ալ եղած էր կայսեր, տաճարականաց մեծավորեն սկսյալ իրենց բոլոր պարոններով, բրինձներով և կամսերով կը լցվեին, կը խառնեին հունաց կայսեր բանակը, որ Մամեստիա արքունիք ըրած էր իրեն. հոն ահա նոր տեսարան մը վատության՝ սիրտ ունեցող ամեն մարդ քստմնեցուց. վասնզի ի տես ամենեցուն «Ներկայացավ Անտիոքա իշխանն Ռընալտ վատ և խղճալի կերպարանքը. վասնզի ոչ միայն հունաց առջև հանցավոր էր, այլև իր քաղաքացվոց և անոնց պատրիարքին, զոր անարգանոք շարաչաբեր էր, եկեղեցվո սպասները կողոպտելու համար, ուստի հիմա անճար և անհույս ճգնավորի զգեստ հագած, գլխիբաց և բոբիկ, վիզը չվան ձգած, ինքզինք մահապարտ վճռած բոլոր Մամեստիո մեջ պտըտելեն ետև, եկավ ընկավ կայսեր ոտքը, մեկ սուր մը մատուցանելով անոր, իբր թե թույլ կուտար, որ ըստ արժանվույն գլուխը կտրվի. գունդ մը ֆրոնավորաց ալ նույնպես գլխիբաց և բոբիկ ծունկ ընկած կայսեր գթության կապավինեին։ Բավական սեպեց նա այսքան խայտառակությունը և թողություն տվավ, պահանջելով, որ անտիոքացիք ընդունին հույն պատրիարք մ'ալ և երբ կայսրն ուզե, խավբեն գունդ մը օգնական զորաց»։

Իսկ կայսրը ժողով կըներ զորականաց և իշխանաց, որ զԹորոս նվաճեն և շուտով՝ վասնզի բանակն արդեն նեղն էր ի ֆերակրո, կենդանք՝ սովո և ի հիվանդությանց կը հատնեին, ուստի ժամ մը առաջ պետք էր, այս աներևույթ ապստամբը նվաճել։ Հոն, որոնք որ փորձը առած էին Տորոսի և անոր բնակչաց գժվարությանց, հասկցուցին կայսեր, թե շատ դժվար և վտանգավոր էր այդ լեռներուն մեջ պատերազմել արքունի թշնամվո մը հետ, որ իրենց կ'ապասեր, և թե ընդհակառակն շատ դյուրին էր ի հնազանդություն բերել զԹորոս, երբ բանավոր և պատվավոր դաշինքներ իրեն առաջարկեին, և Երուսաղեմի թագավորն (Պալտվին Գ.) հանձնառու եղավ բանագնացության մտնել հայոց իշխանին հետ։

Ուստի թագավորն ինք անձամբ ի խնդիր ելավ Թորոսի, և կայսեր

պայմանները կ'առաջարկեր, որոնց ամենեն ծանրը անձամբ ներկայանալն էր ի Մամեստիա ի հնազանդություն կայսեր, և անոր փոխարեն կայսրը զինք կ'ընդուներ իբրև իշխան կուսակալ Կիլիկիո, միմիայն Անարզաբա պահելով իրեն։ Հանձն առավ Թորոս և եկավ Մամեստիա իշխանաբար՝ ոչ իբրև Ռընալտ, և այնպես ներկայացավ կայսեր, որ ցուրտ ընդունելություն մ'ըրավ իրեն, անշուշտ հիշելով Կոստանդնուպոլսո կալանավորը։ Բայց կես ճամփան մնացող մարդ չէր Թորոս, հանկարծ իմացան օր մը բանակը, թե հայը թողեր գնացեր է, և երբ այս գործողությունը ոմանք չարագուշակ կը մեկնեին, տեսան, թե հայը ցորենոք, արջառոք և ոչխարոք լեցուց բանակը, և գրաստի ու ձիան նվաղության առատություն հաջորդեց։ Արդեն կայսրը իր իմաստուն և կորովի կերպին հավնած էր, իսկ այս վերջին գործողությամբ բոլորովին իրեն հարեցավ և անվանեց զնա Պանսեփաստոս և ոսկեկնիք հրովարտակավ իշխանության մեջ հաստատեց։

Անկից վերջը Մանուել կայսրը ելավ բանակավը ի Կիլիկիա և մտավ հԱնտիոք և անկից Հալեպու վրա արշավելու ելավ ընդդեմ Նուրետտինի, բոլոր այն կողմի քրիստոնեից հույս տալով զիրենք ազատելու ի մահմեդականաց։ Բայց դանդաղությունք, դեգերմունք, բանագնացությունք, թույլ պատերազմունք հայտնի կ'ընեին, թե Բյուզանդական կայսրությունը ուրիշ դիտավորություն չուներ, այլ եթե՝ «Բաժանել զամենքը տիրելու համար»։ Երբ բանակը Հալեպու մոտեցավ, սուրհանդակ մը հասավ կայսեր ի Կոստանդնուպոլսո, որ զինք արտորնոք հետս կը կոչեր, ուստի առանց միտ դնելու Երուսաղեմի թագավորին և քրիստոնյա իշխանաց աղաչանաց, որ երեք օր գոնե ուշացնել կը խնդրեին հետադարձը՝ խաղաղության դաշինք կնքեց սուլթանին հետ և ետ դառնալու հրաման տրվավ բանակին։ Ամենքը մեծ տխրությամբ պաշարվեցան, բայց անոնք միայն, որ Բյուզանդական կայսրության քաղաքագիտության տեղյակ չէին կամ անոր դավաճանությունքը հիշելու շատ խելք չունեին։ Ուստի, երբ կայսեր բանակը Կիլիկիա հասավ և Անարզաբա մոտեցավ, Թորոս, որ հիշողություն ուներ և գիտեր, թե մինչև ուր կրնա հասնիլ հունական հավատարմությունը, հանկարծ իր զորքերը առավ և Վահկա քաշվեցավ։ Կայսրն ալ իր ճամփան շարունակեց և գնաց, զորաց մեկ մասը ճամփաները ցանելով։

Ինչպես զրուցեր էր Թորոս իր ժողովրդյան և իր զորաց, փոթորիկն անցավ անհետացավ կայսեր հետ, թեպետ երկու տարվո ժամանակ ծանրացավ Կիլիկիո վրա. խաղաղություն եկավ ժողովրդյան, և դաշտավայրն բոլոր ծածկեցավ հասկերոք, որթն ծանրացավ ողկուզոք, ուրախության ձայներ սկսան դարձյալ լսվիլ, և հայոց իշխանը, որ խաղաղություն կը

սիրեր՝ վասնզի գիտեր ժողովրդյան օգտակարը, դաշինքները կը հարգեր, վասնզի անոնցմով միայն կարելի է տերությանց սահմանները ապահովել. շարունակ իր Ստեփանն եղբոր հետ վեճի առիթ կ'ունենար, և այս իրեն սրտին ցավ էր։

Այս քաջ, բայց անխոհեմ եղբայրը շարունակ միտքը դրած առանձին իրեն իշխանություն մը հաստատել, Քեսնո և Մարաշու կողմերը հարձակմունքներ կ'ըներ և միշտ գանգատներու առիթներ կուտար, իրեն պես թեթևամիտ եկեղեցականաց խորհրդոց լսելով ոչ միայն դաշանց, այլև երդմանց կը դրժեր։ Եվ այսպես առիթ եղավ անգամ մը պատերազմի ի մեջ Թորոսի և Նուրետտինի, և երբ Թորոս հաշտություն խոստացավ Նուրետտինի հետ Ստեփանեի կամաց դեմ, սկսավ եղբորը դեմ մեքենայել, որով իշխանը պարտավորեցավ բանտել զնա առ ժամանակ մի և վերջը արձակել և դարձյալ իբրև եղբոր հետը վարվիլ, համոզելով զինքը թե այդ ճամփով չէր, որ իշխանություն մը կը կազմվեր։ Եվ իր օրինակը ցույց կուտար, թե ինչպե՞ս իրեն դյուրին էր զհույները հալածել ի Կիլիկիա, բայց ինքն կ'ուզեր հարգել դաշինքները և առժամանակյա իշխանության հետք մը թողուլ Հունաց ի գոյություն, քանի որ առիթ չէին տար իրեն դժգոհության և դաշինքներն լուծելու։

Բայց անխոհեմ բնավորությունք ոչ բարեկամության և ոչ թշնամության մեջ չափ չունին և կշիռ։ Ստեփանե Հունաց հետ ընտանությունը զատցուց և մտերմաբար սկսավ կապվիլ Անդրոնիկոս Եվփորպենի հետ, որ կայսեր ազգական և տեղակալն էր ի Կիլիկիա, և որ ճաշի հրավիրելով զՍտեփանե, Համուս բերդը եռացյալ ջրո կաթսայի մը մեջ զինքն սպաննել տվավ։ Այս անգութ մահվան լուրը, երբ տարածվեցավ Կիլիկիա, բարկության և վրեժխնդրության կրակը բորբոքեցավ, և Թորոս, որ յուր զորոք Հունաց վրա կը քայլեր, հանկարծ իր քովը տեսավ քինավորյալ Մլեհն, որ խումբ մը կատաղի զորք մեջտեղ ելել էր եղբորը մահվան վրեժը լուծելու։ Հունաց կոտորածը սաստիկ եղավ, տասն հազար հոգի կոտորվեցան, կ'ըսեն պատմիչք, Անարզաբան և դեռ ինչ բերդ և ամրոց, որ մնացեր էին Կիլիկիա, ամենն ալ առնվեցան իրենցմե, և ջարդը դեռ պիտի շարունակեր, թե որ Երուսաղեմի թագավորը միջնորդ չլիներ դադարեցնելու համար այս անգութ կոտորածը։

Իսկ Ստեփանեի մարմինը տարին եղբայրքը և թաղեցին Հարքայաղնի վանքը, և անմխիթար տիկինն Մարգրիտ՝ գնաց քաշվեցավ ի Պապեռոն իր եղբոր բերդը իր զավակոք։

ԼԱՄԲՐՈՆԻ ՀԱՐՍԸ

Թորոս Եվփիմեի վերջին կամքը կատարելու մտադիր էր միշտ, Հեթում, որ իր աչքին առջև կը մեծնար հարմար փեսա մը կ'երևեր. հայ գիտնական վարդապետ մը և հույն ուսումնական մարդ մը կ'աշխատեին գլուխը հարստացնելու գիտությամբ, և զինավարժության համար Բաձրբերդի Կոստանդինն էր կարգյալ հիշխանեն զինք մարզելու։ Իսկ ինք Թորոս կը խոսեր երբեմն հետը, զանազան նյութերու համար հարցմունքներ կ'ըներ, և առանց իր սխալ կարծիքները ուղղելու՝ իմաստուն հարցմունքներով տգուն իրեն ուղղել կուտար նույն սխալները։ Բայց դժբախտաբար կը տեսներ, թե ընտանեկան հոգին, որ հունական էր, խոր արմատ ձգած էր դարձյալ նորա սրտին մեջ, դաստիարակություն և ուղղախոհության զորություն հաղիվ կրնային հակակշիռ մը կազմել այն կաթին հետ չամբյալ գաղափարաց հետ, որք Լամբրոնի իշխանք ազգային շրջանեն դուրս կը հանեին և հունական համակրությանց կոզմն կը ձգեին։

Մյուս կողմեն Գոհարը թեպետ փոքր, բայց ինչպես դիտված է, որ՝ աղջկունք կանխահաս են մտաց կարողություններով, ամենեին ետ չէր մնար Հեթումեն, և բնական բերմունքով հետաքրքիր բնավորությունը շարունակ հարցմունքներով գոհ ընել կ'ուզեր։ Եվ որ զարմանալին է, հորը պատասխանները զինք ավելի գոհ կ'ընեին, երբ իր վարժապետաց պատասխանները մութ էին իրեն համար։ Ուստի տղաք երկուքն ալ օրավուր մեծնալով թեպետ թարմ հասակնուն մեջ՝ հարմար սեպեց Թորոս իրենց հարսանիքը կատարել ի Մամեստիա, որ իր առաջին հաղթությանց և Եվփիմեի ուրախ-զվարթ հիշատակներով լեցուն էր. և որովհետև Օշին իր փրկանաց գինն չէր կրցած վճարել, այն ալ իր մեկ հատիկ զավկին օժիտն համարեց արքայաբար, և հոնկից հարսն ու փեսան ուղևորեցան ի Լամբրոն։

Լամբրոնի տղայքը, միշտ կայսեր հավատարմության դրոշակակիրք լինելով ավանդաբար հորդվոց հորդի, այս Ռուբենի փափուկ շառավիղը, հանկարծ բոլորովին օտար երկրի, օտար կլիմայի տակ փոխադրված բույս մը դարձավ, ամեն բան, ամեն գաղափար, ամեն խոսակցություն նոր էին իրեն համար. ի՛նչ որ հարգել սովրեր էր իր հայրենի տունը, հոս արհամարհյալ կը տեսներ, ինչ որ հոն սուրբ էր, հոս ծաղրելի էր։ Բայց որ յուր սրտին ամեն բանե առաջ ծանր կը թվեր, այն էր, որ պարզ հա-

մարձակությունը, որ հայրենի տան մեջ սովորական էր, հոս բոլորովին ընդհակառակն սանձահարյալ կը տեսներ. հոս անմեղ ծիծաղը նաև գաղտնի պետք էր լինիլ, վասնզի խոժոռ երեսներ կային, որ տխրությունը իրենց շուրջ օրենք ըրած էին։ Այս բերդիս մեջ նոր հարսին ամեն շարժումնք, ամեն խոսք քննության և հանդիմանության տրիթ մ'էր։ Փեսան պետք էր լինիլ իր միմիայն ապաստարանն ու սրտակիցը, բայց ան ալ ինքզինքն հոս ավելի ճնշյալ կը գտներ, քան թե Վահկա բերդը, ուր ավելի համաձակ և ընտանի էր Թորոսի, քան յուր հոր՝ Օշնի հետ։ Կը հանդիպեր նաև երբեմն, որ Լամբրոնի դղեկին մեջ ծանր և նախատական ակնարկություններ կը լինեին Թորոսի և Ռուբինյանց հիշատակին, որ հարսին սիրտը ծանր կը վիրավորեին. բայց նա թեպետ թարմ հասակի մեջ՝ իբրև անզգա չիմանալու կը զարներ։ Այսպես տխուր կ'անցնեին իրեն համար ամիսները, երբ մեծ պատրաստություն իրեն իմացուցին, թե ի Լամբրոն Թորոսի այցելությունը կ'սպասվի։ Հորը տեսությունը ձմեռվան տխուր օրերու ճառագայթ մը եղավ խեղճ աղջկան համար, թեպետ արարողություն կ'արգիլեին զավկին նույն համակրությունը ունենալ հորն հետ, ինչ որ առաջ. բայց Թորոս, որ Բյուզանդական կայսրության արարողությունքն ավրշտկեր էր բոլոր Կիլիկիա տակնուվրա ընելով, այդպիսի պատավական կապերու առջև չէր կրնար սանձահարիլ։ ուստի աղջիկը առավ քովը, խոսեցավ ամենուն առջև անտարբեր և երթալու ատեն առանձին սենեկի մը դռան մեջ կենալով՝ որպեսզի ամենքը զինքը տեսնեն, բայց ձայնը չի լսեն, «զավակս, ուրախ եղիր, զվարթ եղիր, հայրդ զքեզ չի մոռցեր, և չի կրնար մոռնալ» ըսավ և գնաց։ Որովհետև առջի նայվածքը ըսեր էր Թորոսի, իր աղջիկը երջանիկ չէր։

Թորոս Լամբրոնի իշխանաց հունամոլությենեն գոհ չէր, բայց իր մեծ սիրտն մարդկային տկարությանց բաժինն հանել և ներել գիտեր. գիտեր, թե անոնք ամեն բան ի կայսրեաց ստացյալ, բնական էր իրենց հավատարմությունն, բայց չէր կրնար ներել ամեն օր իր անձին և իր պետության դեմ նյութված որոգայթներուն, որ ազգին դեմ մատնություն կը համարեր. գիտեր, թե Մաղսուտ սուլթանին և կայսեր բանագնացությանց գործիք շատ անգամ եղած էին, թեպետ առանց երևալու. գիտեր, թե Ռընալտի իրեն դեմ գրգռության դարձյալ գործիք եղած էին, թեպետ Ռընալտի խոսքերուն հավատարմություն չուներ։ Իսկ կայսեր իր վրա հարձակման ժամանակ հայտնի իրենց գունդերով հոն էին լամբրոնացիք, թեպետ բոլոր այս գործողությանց ատեն իրենց Հեթումն պատանդ էր իր քով։ Իսկ հիմա նոր ի ձեռին ուներ առ Նուրեդտին գրված թղթեր՝ գրգռելու համար զանի իրեն դեմ, և այս՝ իր մեկ հատիկ աղջիկը իրենց

զավկին հետ դարսնացնելն վերջ։ Ուստի այս անգամ ալ արհամարհելու պատրաստ էր այս փոքրիկ և անարդ բանսարկությունները, բայց իր զավկին տխուր տեսությունը, այն զավկին, որ մորը սիրելի հիշատակին գրավականն էր, իր սիրտը դառնությամբ լցուց և երդվավ, որ այդ Լամբրոնի ամբարտավան դավաճանությունը խորտակե և չուշացնե։

Բայց իբրև շրջահայաց մարդ պետք էր նախ զավակը անոնց ճիրաններեն ազատել, վասնզի յուր կամոք և միամտությամբ անոնց պատանդը ազատեր և իրենը պատանդ տվեր էր, որ միայն իր Եվփիմեին վերջին նվիրական կամքը կատարելու, այլ նաև ընդհանուր եղած քաղաքականության կանոնով, որ խնամությամբ զինաթափ ընել կը կարծե թշնամին և բարեկամական կապով կը միացնե։ Ուստի իր պատերազմական մտքերը չի հայտնած աղջիկը ազատելու հնարք մը մտածեց։

Հորը այցելութենեն վերջը, Գոհար իբրև հանցավոր մը մնաց, և ամեն աչք թեպետ զգուշավոր, բայց երկդիմի ակնարկ մը իրեն կը ձգեին. Շահանդուխտ՝ իր կեսուրը, թեպետ լավ սիրտ ուներ, բայց կովելու չափ այն բնական դարձած ատելության դեմ, որ ունին կեսուրք իրենց հարսերուն, բարձր սիրտ չուներ, ուստի կամ նայվածքով մը, կամ բառով մը խեղճին սիրտը կը թունավորեր։ Իր Հեթումը, ինչպես ըսինք, որ միակ մխիթարություն պիտի լիներ, շատ հեռու էր այն սիրտը ունենալեն, որ հասակեն ավելի վեր գտնվելով, այսպիսի դիրքի մեջ պաշտպանության վահան կը լինի։

Երբ այսպես գիշեր մը ընթրիքեն վերջը, ուր խիստ ակնարկություններ կը լինեին իր հորը դեմ և հորեղբորը Ստեփանեի անունը տրվեցավ անարժան կերպով, Գոհար, երբ ինքզինքը մանավանդ թե արցունքները կը զսպեր, կեսուրը հարսին դառնալով և չափավորյալ խստությամբ՝

— Զավակս,— ըսավ,— դու դեռ տղա ես, այն օրեն, որ աղջիկ մը հարս կը լինի, ալ իր տունը և անոր պարագայքը ոչ միայն պետք է ուրանա. այս այլայլությունդ ալ մեծ ամոթ է։

Գոհար պասասխան չի տալով, թաշկինակը երեսին և աչքերուն վրա սեղմելով հազիվ իր սենյակները ինքզինքը ձգեց, և հոն քիչ մը հեկեկալեն վերջը իր պատուհաններուն վրա բացված փոքրիկ ծաղիկներու պարտեզը ելավ. նոր լուսնին աղոտ լուսավորությամբ շարժմունք մը և ստվեր մը տեսավ, և երբ սոսկումով ետ պիտի փախչեր՝

— Ո՞վ իշխանուհի,— ըսավ ստվերը,— հորդ՝ Թորոս իշխանին կողմեն կուգամ քեզի։

Հորը անունը լսելուն պես, խեղճ աղջկան սոսկումին հետ հույս մը երեսին ծագեցավ։

— Հո՞րս կողմեն։

— Այո՛, հորդ հրամանն է, որ վաղը կեսօրին ճիշտ, երբ կերակուրի իշնեն ամենքը, դու նույն միջոցին բերդին վերի գուռը ելնես, և նշան այս թուղթը տվավ,— զրուցեց և զարմանալի արագությամբ վանդակին եզերքը բռնելով այն պատին ահագին բարձրութենեն սկսավ վար իջնել, իբր թե սանդուխ մը դրված լիներ։ Գոհար ջփոթված այս գործողութենեն թուղթը ձեռքը ծռեցավ և կը նայեր պատանվույն, որ կ'իջներ անխռով, մինչև որ վար հասնելը տեսավ։ Այն ատեն սիրտը հանգստանալով թուղթը ձեռքը ներս մտավ և կանթեղին մոտենալով այս բառերը կարդաց. «Մտիկ ըրե և լռե.— Թորոս»։— Հորս ստորագրությունն է. ուրեմն «վաղը կեսօրին՝ ճիշտ կերակուրի ժամանակ՝ բերդին վերի գուռը» պետք է ելնել... ո՜հ, իմ սիրելի հայրիկս զիս չէր մոռցեր. իմացեր է, որ ես հոս մարտիրոս կը լինիմ... Եվ ինք ինձի ըսավ՝ «Հայրդ զքեզ չէր մոռցեր և չի կրնար մոռնալ...», բայց Հեթո՜ւմ... զիս կը սիրե, այո՛, կը սիրե, բայց իմ հորս պես հայր մը պետք էր ունենալ... իմ խեղճ մայրս թե որ ողջ լիներ հիմա և իմանար իմ հոս քաշածս... ինչ պիտի ըներ, իմ հորս պիտի զրուցեր և թերևս այդ պատանին, որ այս պատեն վար իջավ մողեսի պես, ամիս մը առաջ պիտի բերեր հորս հրամանը... բայց ի՜նչ պիտի ընեմ ես... անշուշտ մարդիկ պիտի գան և զիս պիտի ազատեն... բայց Հեթո՜ւմ... Հորս հրամանն է, պետք է լռեմ և մտիկ ընեմ... նա ամեն բան գիտե, ամեն բան կը տեսնե, ամեն բան կը մտածե. միթե Բարկեն հայրիկ ինձ այնպես չէր ըսեր միշտ... ո՜հ պատվական ծերունին... ես երբ հոս հարս կուգայի, ինչչա՜փ լացավ. ես անոր լալը մորս մեռած օրը տեսա անգամ մ'ալ, և երբ հարսնությանս քովը գնացի զարդարված և ուրախութենես կը թռչտեի... տեսա, որ աչքերը կը սրբեր, մորուքը ձեռքովը կը շոյեր, հոս կը դարձներ աչքերը, հոն կը դարձներ, շփոթած էր խեղճ ծերուկը։ Դու ուրախ չես, Բարկեն հայրիկ, ի՞նչ ունիս, ըսի, իմ հարս ըլլալս չէի՞ր ուզեր. Ո՜հ, ինչպե՞ս կրնայի չուզել Գոհարիկս,— ըսավ,— միայն զրուցե, աղաչե հորդ, Լամբրոն մ'երթար, մեր քովը կեցիր, իշխանուհիս։ Եվ այս խոսքերը ըսելով՝ ալ որոշ տեսա, որ արցունքը ջուրի պես աչքերեն կը վազեր. ես ալ կ'զգուշանայի, որ արցունքը իմ հագուստներուս վրա բիծ չի ձգե... Երանի՜ թե իմանայի այն արցունքներուն զորությունը, և հիմա սիրտս վերքերով չէր բծավորեր... Բարկեն միայն իմ վրաս լացավ... հայրս չի լացավ... բայց հայրս չէ՞ր գիտեր, թե ես խեղճ պիտի լինիմ ասոնց ձեռքը, նա, որ, ամեն բան գիտե... Այո՛, ամեն բան գիտե... Ո՞վ իրեն զրուցեց, թե ես թշվառ եմ... ես իրեն բան մը չի զրուցեցի, չէի կրնար ալ զրուցել, ամեն աչք վրաս կը նայեին... թուղթ մը չի գրեցի, ուրիշներու ձեռք կրնար անցնել... բայց ասոնք ինչո՞ւ մեզ չեն սիրեր... իմ խեղճ հորեղբայրս ի՞նչ ըրեր է ասոնց... ամենքը լացին

անոր մահվան վրա, բացի հարմես... բայց նա չի լար... աչքերը գոց կը նստի, երբ տխուր է... երբ որ հորս երթամ, ամեն բան պիտի ըսեմ... բայց Հեթում տխուր էր, անոնց կամակից չէր... այն ալ կը զրուցեմ, ալ հերիք եղավ... նայեցեք, կուգա՞... այսչափ ժամանակ եղավ, գիտեմ, որ տխուր եմ... ես սա թուղթը պատռեմ... ահա մարգու ձեռք ընկնելու վտանգն ալ չի կա...»

Երբ դուռը բացվեցավ, Հեթումին տխուր դեմքը տեսնվեցավ, որ իր հարսին քովն եկավ, որ նույնպես կախ երես քինավորյալ գլուխը վեր չէր վերցներ. իսկ Հեթում, տեսնելով նորա կերպարանքը, սկսավ գանգատիլ, թե բնական էր Լամբրոնի մեջ մեծ սեր մը պետք չէր հուսալ Ռուբինյանց վրա, թե երկու թշնամի ընտանիք պետք էր սպասել, որ կամաց-կամաց մոռնան բոլորովին իրենց առելությունը, ուստի մինչև այն ժամանակ պետք էր սպասել և կամավոր սուտ խուզ լինիլ ու չիմանալ...

— Լա՛վ,— ըսավ Գոհար գառնությամբ,— դո՞ւ ալ ուրեմն իրավունք կուտաս այն անգութ նախատանաց, միայն պետք է հիշես, թե երբ դու Վահկա էիր, իմ հայրս և իմ խեղճ մայրս քեզի հետ այդպես չի վարմեցան և մեկ ծանր բառ մը քու ծնողացդ և թե քուկիներուդ համար չէին լսած ոչ իրենցմե և ոչ ծառայից մեկուն բերնեն. ես զքեզ երկար ժամանակ եղբայրս գիտեի, և կը կարծեի, թե մեր տունը քեզի հետ ինչպես վարվեցան, հոս ալ ինձի նույն վարմունքը կսպասեր... ափսո՞ս, ափսո՞ս, հազա՞ր ափսոս։

Եվ այս խոսքերեն վերջը, ա՛լ արցունք չի կար, այլ անկյուն մը քաշվեցավ լի գառնությամբ և քուն ձևացավ։ Իսկ Հեթում, շփոթած այս հանգիմանության վրա, և ժամանակեն սպասելով (ինչպես իր սկզբունքն էր) փոթորիկն անցնիլը, մտավ հանկոզին և քիչ մը ատենեն հանգիստ քուն եղավ։ Այս քունը ա՛լ ավելի զայրացուց տղա կինը, որ ինքնիրեն կ՝ըսեր. «Ծթե դիս սրտանց սիրեր, անշուշտ դիս կ՝ամոքեր. ի՞նչ կենամ, որո՞ւ համար կենամ այս գզյակը, ուր միայն խոժոռ երես և տխուր խոսքեր կան... Բարկեն հայրիկ իրավունք ուներ...»։ Բայց երիտասարդ տարիքին մեջ տխրությունն ալ քուն կը բերե. քիչ-քիչ քունը՝ ճշմարիտ քունը իր աչքերն ալ գոցեց, և երբ արթնցավ, առավոտ էր։

Գոհար անհամբերություն մ՝ուներ նույն օրը, և ոչ ոք բան պատճառը չէր կրնար երևակայել. տրգեն Հեթում իր հարսին խոժոռ կերպարանքը չի տեսնելու համար որսի երթալ և հեռանալ միմիայն դարման համարեցավ վիճակին։ Ուստի նա ալ բանի մը հետ չի կրնալով զբաղիլ, կեսօրին սպասելով ծաղկացը կը պարտեր, և առանց իմանալու շատ մը ծաղիկներ կը փթթեր և հակամայա աչքը հորիզոնին վրա քան մը կը փնտրեր, իրոք ալ կեսօրը մոտ էր, երբ լեռան կողմը երկու երեք ձիավոր

տեսավ ճերմակ վերարկուներով փաթթված, որ դեպի բերդին ճամփան կ՝իջնեին. սիրտը սկսավ տրոփել, նույն միջոցին ճաշի համար ձայն տրվեցավ, թեպետ անսանձ փափագ կ՝զգար սանդուխներն ի վար վազելու՝ բայց ինքզինքը սանձեց և անհոգ ու տխուր ձևով մի աչ կողմը սեղանատան դռան առջև կեցավ, աչք մը նետեց, դեռ մեկը չէր իջեր, դարձավ դեպի ձախը, որ դղեկին վերի դուռն էր, և ուր նարնջի և նուռի ծառերը շուքերնին ձգած էին, ծեր դռնապան մը գավազան ի ձեռին նստած էր, երբ տիրուհին տեսավ, ոտք ելավ, իսկ նա առանց խոսելու դռանը մոտեցավ, գլուխը դուրս հանեց և տեսավ, որ իր նշմարած երեք հեծելոց ձիերուն գլուխները դռան առջև երևցան։

— Բարկեն հայրիկ, դո՞ւ ես,— ըսավ Գոհար։

— Ես եմ, իշխանուհիս,— պատասխանեց ծերը։

Եվ այս միջոցիս երկու կորովի բազուկներ զինք բարձրացուցին, Բարկենին ձիուն վզին վրա դրին, և Բարկեն թեպետ յոթանասունը անցած՝ աջ թևով աղջիկը գրկած և ձին մտրակելով կը սլանար դեպի Տարոն առանց գլուխը ետին դարձնելու, իսկ ծեր դռնապանը, որ այս տեսարանը տեսավ և ջանաց ձայն հանելու, այնպիսի բռնցի հարված մը ընդունեցավ կուրծքին, որ կոնակն ի վար գլորեցավ, և երիտասարդը, որ հական քթթել իջեր ձիեն՝ զԳոհար Բարկենի գիրկը և հարվածը խեղճ դռնապանին տվեր էր, քրքիջ ծիծաղով դարձյալ ցատկեց ձիուն վրա և սկսավ քշել ամեն արագությամբ հասնելու համար Բարկենի ձիուն, որուն փոշին միայն կ՝երևեր, և իրոք անկարելի էր այդ նժույգին հասնիլ, թե որ ծերը իր ընկերներուն հասնելու ժամանակ տալու համար չի թուլացներ իր ընթացքը։

— Հանգի՞ստ ես, զավակս,— հարցուց ծերը։

— Փա՛ռք աստուծո, հանգիստ եմ և շատ ուրախ եմ, Բարկեն հայրիկ,— կ՝ըսեր Գոհար ձախ ձեռքով, որ ազատ էր, Բարկենի մորուքին թելերը մեկդի ընելով, որ աչքերը կը մտնեին. բայց զրուցի՞ ինձի, ազատեցա՞նք Լամբրոնեն։

— Հոգ մի՛ քներ, այս ձիուս հասնող ձի չի կա Կիլիկիո մեջ, Թոռնիկ այս ձին գողնալու համար մինչև Սգերդ գնաց։

— Բայց կուգան, Բարկեն հայրիկ։

— Մեր տղաքն են, Տիրուհիս, դու հոգ մ՝ըներ, հիմա իշխանն ալ ո՛ւր որ է՝ կը հասնի։

Հազիվ թե քառորդ մը տեղ ձիավարեցին, ամպի պես փոշի մը երևցավ առջևնեն, և գունդ մը ձիավոր փոթորկի պես կուգար. Բարկենի ձին սկսավ խխնջել և դափը հատանել։

— Ահա իշխանն է,— ըսավ Բարկենը— Կրակ մեզի ավետաբեր գուստ։

— Կրակն ի՞նչ է,— ըսավ Գոհար։

— Կրակն այս մեր կարմիր ձին է, որ բոցի պես կ'երթա որ ամեն բան կ'իմանա, որ կը խոսի՝ կ'իմացնե, անխելք մարդիկներեն շատ խելոք է, քեզ բերելու համար այսօր ինձ տվավ հայրդ։

Եվ իրոք Թորոսն էր, որ անձամբ կուգար դիմավորելու աղջիկը, և երբ մոտեցան, իջավ ձիեն՝ առավ նստեցուց զնա պատրաստ ձիու մը վրա, կոնակը լոգիկ մը և գլխուն բեհեղյա քողը տվավ, և ծանր-ծանր հասան Տարսոն։

Թեպետ շատ պարզ և դյուրին եղավ Գոհարի Լամբրոնե ազատությունը, բայց դարձյալ բավական ցնցված էր խեղճ աղջիկը, որ մեկ երկու օր մը փոքրիկ ջղային անհանգստություն մ'ունեցավ, և որ շատ մտատանջեց զԹորոս, որ չէր կրնար մտքեն հեռացնել այդ քաղքին մեջ նորա մորը դժբախտ վախճանը. ուստի, երբ զավակը քիչ մը աղեկ գտավ ինքզինք, մեկեն խումբ մը պատապան զորոք հանձնեց Բարկենի տանիլ Վահկա։

Իսկ Լամբրոնի բերդեն հանված խնդրակները հազիվ թե երեկոյին կոր գլուխ կը դառնային իմացնելու, թե իրենց հարսը Տարսոն մտած էր իր հոր հետ և բազմությամբ ձիավորաց։

ԳԼՈՒԽ ԻԶ

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀՐՈՇՏԱԿԸ

Լամբրոն անարիկ անուն ուներ, ուստի Թորոս գիտեր, թե անոր տյարքը կրնային իրեն դեմ խիզախիլ. բայց այն ալ լավ գիտեր, թե դուրսե օգնություն մը չի կար իրենց տեղաց մը, քանի որ հունական զորությունը այն աստիճանի խոնարհեցավ իրեն առջև, որ Երուսաղեմի Թագավորին միջնորդության դիմեցին հույն կուսակալք դադարեցնելու հայ սուրին հարվածը իրենց ժողովրդոց վրայեն. ուստի, երբ ամեն կողմը տեսավ, թե Օշինի օգնություն չի կա ուստեք, իր բոլոր զորությամբ հարձակեցավ Լամբրոնի վրա։

Մեզ այս եղբայրասպան պատերազմին վրա խոսիլ ծանր է. պատերազմ, ուր հայ արյուն հայ ձեռքերե թափվեցավ, և ուր վերջապես Լամբրոնի տերը պարտավորեցավ իր պարիսպներուն ապավինիլ, և երբ բանագնացությանց ուզեց սկսիլ հաղթողին բարկությունն իջեցնելու, Թորոս ձիու վրա ընդունեց պատգամավորը, որ եկեր էր խաղաղություն խնդրելու, և շրջապատյալ այն իր զորավարաց և ասպետաց խումբեն, որ գրեթե քսան երկայն պատերազմաց տարիներու տակ ծերացեր էին, ծանր ուշադրություն մը տալեն վերջը պատգամավորին ըսավ խստությամբ։

— Քու տերդ ինձմե խաղաղություն կը խնդրե և չամչնար, իսկ ես, որ հիմա որոշած եմ, որ ուխտադրուժ, խարդախ մարդկանց հետ դաշնադրության չի մտնեմ, երբ գիտեմ, թե վաղը պարագան որ ներե, դաշինքին պիտի ստեն, երդմունքնին ոտնակոխ պիտի ընեն։ Ուստի գնա՛, զրուցե՛ քու տիրոջդ, եթե ազատության կը փափագի, դռները բանալե և Լամբրոն ինձի հանձնելե ուրիշ ճար չի կա, այն ատեն զինքը թող կուտամ՝ կ'ուզե երթա Կոստանդնուպոլիս, կ'ուզե Իկոնիա, կ'ուզե Հալեպ, այն ամեն մայրաքաղաքները, ուր գրեթե քսան տարի է ինձի թշնամի կը փնտրե, ամեն թշնամիներուս լրտեսություն կ'ընե, ամենքը ինձի դեմ կը գրգռե։ Քու տերդ Թորոսը կը տեսնե, շատ կը սխալի. ես իրեն առջի օրեն, երբ այս ճամփաներեն կ'անցնեի փախստական երիտասարդ, իմ շղթաներես հազիվ ազատած՝ ազգին շղթաները կուգայի խորտակել և առաջին խոշընդոտն զինք կը գտնեի. այն օրեն ես իրեն ազդ ըրի, զրուցեցի, թե փառք փնտրելու չէի եկած, այլ իմ ազգիս խեղճության ճարճարակ ընելու. ինք չի հասկցավ, վասնզի ինք ազգություն ի՞նչ է, հայություն ի՞նչ է՝ չգիտեր. պետք էր տեսնել և հասկնալ, թե Թորոս բան մը չէ, այլ իր ետին հայությունը՝ այս ամենքը, որ կը տեսնես, և այն ամենքը, որ Մասիսի ստորոտեն բոլոր աշխարհքիս վրա ցանելիր կը տարածվին, օտարին բռնությանց, հարստահարությանց տակ կը հեծեն, որոնց կրոնքը, անունը, կյանքը և ստացվածքը վտանգի մեջ են, այն ամենքը այսօր իմ կոնակս կեցած են, և պետք է զրուցեմ, թե հիմա, այս վայրկենիս այս հայությունը, որ քու տերդ չի ճանչեր, և որուն համար ես կյանքս, արյունս և ամեն ունեցածս կը զոհեմ, հիմ՝ այս խեղճ Թորոսին վրա կը կայանա։ Եվ քու տերդ չամչնա՞ր. ի՞նչ ամչնա՞լ, ի՞նչ է ամոթ... Աստուծմե չի՞ վախեր այս Տորոսի ապաստանարանը կործանելու, որ այնչափ հալածյալ՝ միմիայն ապավեն գտավ Ռուբեն իմ նախահայրս, և որ ես նույն աստուծույն կարողությամբ նորեն ի հիմանց և ավելի ընդարձակ կը կառուցանեմ։ Նա ինքն աստված վկա, որ ես անպարտ եմ հայու արյուն թափելեն, և քու տերդ լավ գիտե, որ այդ արյունը խնայելու համար իր զավակը ինձի զավակ ընել ուզեցի, որպեսզի թշնամությունը վերնա մեր մեջեն, բայց ինք չուզեց. ուրեմն թող պատիժը քաշե, ես չեմ կրնար իմ ազգիս անունը, պատիվը լամբրոնական վատության զոհել. նայե, տես այս թուղթերը, որ նոր ձեռքս կը հասնին, որ իր մատնության անժխտելի վկայք են, և որ Կոռիկոսի առջևեն ձերբակալ սուրհանդակի մը վրայեն ձեռք են ինկած. այս թուղթերը թե իր մատնության

վկայք են և թե ինձ ինչ որ արդեն գիտեի, թե ինք հունական օգնութենեն հույս պետք չէ ունենա երկայն ատեն, ուստի թող գիտնա, թե ահա վրանս կը զարնեմ այս Լամբրոնի դռներուն առաջը, և այն ատեն պիտի վերնա, երբ այդ մատնտու բերդին քարերը հիմն ի վեր տապալին։ Ահա իմ պատասխանս և վերջին պատասխանս։

Եվ ձին մտրակեց իր հրամանները տալու, որ սաստկացնեն պաշարմունքը, և իրոք վրանը հոն բերդին դիմացն էր. հոն կը տեսնվեին ամեն գործքը, հոնկից Կիլիկիո կառավարության ամեն հրամաններ կը մեկնեին, և անառիկ բերդը, որ առաջ սպառնալիքը արհամարհել ձևացուց, սկսավ իր բախտին վրա տարակուսիլ, վասնզի ամիսն անգամ մը կը տեսներ, որ պաշարող զորքերը կը փոխվեին՝ նորերը կուգային և հիները իրենց տուները կ'երթային։ Իսկ հարձակմամբ գլուխ ելնել, թշնամին վանել անկարելի էր, ուստի, երբ ամիսները անցան, տարին սկսավ մոտենալ, խեղճությունը բերդին մեջ սկսավ տիրել, բերդապահ զորականք սկսան գաղտնի գանգատիլ, Օշին ալ սկսավ մտածել, երկրորդ պատգամավորություն մը հուղարկեց, որուն գլուխը իր ազան Հեթումը դրավ։ Բայց այս առաջինեն դժբախտ եղավ, վասնզի հառաջապահ զորաց պատվեր կար ամեն պատգամավորություն ետ դարձնել և թշխանին առջև չի հանել։

Ուստի Օշին, երբ կը մտածեր տխուր այս վիճակին վրա և հանդուգն գործողությամբ մը վերջ տալ որոշած էր, Շահանդուխտ իրեն մոտենալով ըսավ.

— Հուսահատ, տխուր մտածելն օգուտ չունի, ինձի հանձնե, և ես ճարը կը տեսնեմ այս վիճակին։

— Ո՞վ քեզ կարգիլե,— ըսավ Օշին,— ըրե ինչ որ կրնաս, բայց միտքդ դիր թե երկրորդ անգամ մ'ալ այն անզգամին ձեռքը ողջ չեմ կրնար ընկնիլ։

— Ո՞վ քեզ անոր ձեռքը կը ձգե։

— Գնա՞, ըրե ինչ որ կրնաս։

Շահանդուխտ գնաց և իմաց տալ տվավ մատրանապետ վարդապետին, որ քաշված առաքինի ծեր մ'էր, թե իրեն հետ տեսնվիլ։

— Հայր սուրբ,— ըսավ Տիկինը,— պետք է որ դու զմեզ ազատես։

— Թե որ ձեռքես գա, պատրաստ եմ, Տիկին,— ըսավ խեղճ ծերը, շփոթած երեսը նայելով և վախելով, որ դիմացինին խելքին վտանգ մը հանդիպած չլինի։

— Այո՛, հայր սուրբ, դո՞ւ միայն այս վիճակին դարման մ'ընել կարող ես։

— Գիտես, իշխանուհիս, թե ես տկար ծերունի մ'եմ, եթե իմ աղոթքս լսելի լիներ աստուծո, այս նեղությունները մեր վրա չէին հասներ,— պատասխանեց ծերը և վախելով, թե Տիկինը հրաշքի մը կ'սպասե իրմե, ավելցուց.— Գիտես, Տիկին, թե հրաշքներն ալ հիմա քիչ կը պատահին, և ես մեղավոր անձ մ'եմ։

— Ո՜վ,— ըսավ Շահանդուխտ ժպտելով,— ես հրաշքի չեմ սպասեր, միայն կ'ուզեմ, որ հանձն առնուս երթալ Թորոսի խոսիլ. դու քահանա աստուծո ես, և երբ նա զքեզ չուզե ընդունիլ և թերևս մտիկ ալ ընել, խնդրես, որ մեկ մ'ալ հոս չի դառնաս, այլ Սև լեռը վանք մը քաշվիս, և ջանաս զինքն համոզել տկարությունդ պատճառ բռնելով։ Նա երբ քեզի թույլ տա ինչպես որ հավանական է, շուտ մը երթաս՝ Հռոմկլա մորեղբարցս սրբազաններուն իմացնես մեր վիճակը և խնդրես, որ մեկին մեկը գա հասնի՝ այս գազանին խոսք հասկցնե, դեռ երեք ամսվան պաշար ունինք, ժամանակ կա, թե որ շուտ շարժիս կրնաս զմեզ ազատել։

— Լա՛վ, բայց գիտե՞ս, Տիկին, ինչչա՞փ ճամփա է,— ըսավ ծեր վարդապետը մտածելով և հաշվելով։

— Գիտեմ,— ըսավ Տիկինը խստությամբ,— երկայն ճամփա է, բայց պետք է մտածես, թե, հայր սուրբ, քու աղոթքներովդ ինչչափ հոգի որ չես փրկած այսչափ տարիներու մեջ, հիմա պիտի փրկես այս ճամփորդությամբդ։

— Բայց ես հիրավի ծեր եմ, բայց հիվանդությունը մը չունիմ, ո՞ւտ ալ գրուցեմ։

— Հայր սուրբ, խնդրեմ, այսպիսի բարակ խղճմտանքի ժամանակ չէ, մեր բոլոր ազատությունը քեզի է մնացեր։

Վերջապես կրոնավորը հանձն առավ կամա-ակամա այս ծանր պաշտոնը կատարել, և խեղճ մարդը իրոք ճգնավոր լինելուն Օշինի երեսը կիրակին կիրակի և եկեղեցին միայն կը տեսներ, այն ալ, երբ բեմը կ'ելներ, այն ատեն միայն. հիմա երթալ դեսպանությամբ այնպիսի իշխանի մը հետ խոսիլ, որ իբրև արյունարբու դազան իրեն կը նկարագրեին, իր գործը չէր, բայց ճար չի կար, ուստի հանձն առավ և Շահանդուխտ զինքը չուզ մը կարդացնելե վերջ հրաման ըրավ հայր սուրբին ջորի մը տալ և գնները քանալ, որ երթա։

Թորոսի, երբ իմացուցին, թե ծեր վարդապետ մը եկեր կուզեր իրեն հետ խոսիլ, առանց գլուխը վեր վերցնելու՝ «Ի՞ղ երթա Օշնի քարոզե Քրիստոսի Ավետարանը,— ըսավ,— որ չի ճանչեր, ես հոս նույն Ավետարանին պաշտպանության համար կեցեր եմ»։

Այս պատասխանին վրա խեղճ ծերը բոլորովին տարակուսեցավ, բայց դարձյալ աղաչեց ծեր զորավարին, որ այս պատասխանը իրեն կը բերեր, զինք պարապ չի հանել։ Իսկ ծեր զորավարը, որ մեր քաշածանոթ

Բաբկենն էր, գթալով տարեկից կղերականին վրա, որ իր կորովն ալ չուներ, ակնարկ ըրավ և վրանին դուռը ցուցուց, որ մտնե, և ինք հեռացավ։

Վարդապետը, որ կարծեր, թե դահիճներե ջրջապատյալ մեկը պիտի տեսներ, զարմացավ, երբ տեսավ զԹորոս երեք-չորս հատ վեղարավորներե շրջապատյալ, որոնք չորս կողմը նստած գորգերու վրա շարունակ կը գրեին ինչ որ իշխանը տոն կուտար, և որ մտնող մը տեսնելով գլուխը վեր վերցուց և թեպետ նեղցավ, բայց նայելով թե ծեր կորագլուխ եկեղեցական մ'է, ոտք ելավ, և առանց խոսելու, ձեռքեն բռնեց, քովը նստեցուց և իր մեծ և խոր աչքերը վրան սևեռյալ՝ սպասեց, որ խոսի. այս ընդունելությունը խնդմը բոլորովին շփոթեց։

— Կը տեսնես, հայր սուրբ, թե ես ինչչափ զբաղյալ եմ, զրուցե, ի՞նչ պիտի զրուցես, միայն առաջուց կ'իմացնեմ, թե բերդը անպայման ինձի հանձնելե զատ, ուրիշ դաշինք չեմ ընդունիր։

— Եթե այդ այդպես անդառնալի վճռված է,— ըսավ ծերը,— գոնե ինձի հրաման տուր, մեծ իշխան, որ երթամ վանք մը քաջվիմ, վասընդի հիվանդ և տկար անձ մ'եմ։

— Բայց ներսը քեզմե զատ քահանա կա՞։

— Երկու քահանայք ալ կան։

— Լավ, ազատ ես,— ըսավ Թորոս և իր թուղթերը ձեռք առավ։

Պաշարմունքը կը շարունակեր, և Թորոս այս բանակի կյանքը՝ Համառությամբ կանցներ, կ'ելներ երբեմն յուր շրջանը կ'ըներ, և դարձյալ կը դառնար, միտքը որոշ դրած հիմնահատակ ընել Լամբրոնը։ Եվ երբ յուր դիտավորությունքը անխախտ՝ այս վիճակին մեջն էր, ահա իմացուցին իրեն, թե եպիսկոպոս մը կոթողիկոսին կողմեն օրհնության թուղթ բերելով հասեր էր բանակը։ Հրամայեց բերել և վրանին դռանը առջև ելավ դիմավորելու և առջի աչք ձգելուն կշռեց, թե սովորական մարդ մը չէր դիմացինը։ Պարզ և պարկեշտ թե հագուստին, թե ձևին մեջ, միջահասակ, գեղեցիկ և քաղցր աչքերով ալևոր մ'էր, և որ բերանը չի բացած թուղթ մը հանեց և տվավ իշխանին հարգությամբ։ Իսկ նա, հրավիրելով հյուրը նստելու, կարդաց թուղթը ամենայն ուշադրությամբ, և քովը դնելեն վերջը.

— Մեր պարտքն է, սրբազան, եկեղեցվույն և մեր կրոնական գլխույն հրամանաց հնազանդիլ, երբ խնդիրը կրոնական է։ Ինձմե ավելի մեկը կարելի է չի գտնվի հայ ազգին մեջ նույն հրամանները հարկելու համար, բայց ամեն բան սահման մը ունի. երբ խնդիրը եկեղեցվո իրավասութենեն դուրս է, և ազգին ալ վնասակար, ես չեմ կարծեր, թե հայոց ազգին վեհաշնորհ կրոնական գլուխը այնպիսի բան մը առաջարկե, որ

անիրավ լինի։ Իսկ որովհետև դուք հեռավոր ճամփե կը հասնիք և հոգնած եք, այս նյութին վրա հիմա խոսիլ անտեղի է, հանգչեցեք, վերջը ինձ այ մտիկ կ'ընեք, ձեր ազգականներն ալ մտիկ կ'ընեք, և թե որ արդարության հետք մը միայն անոնց քով գտնեք, ես ձեզի խոսք կուտամ ձեր երկու եղբարց սրբազանության փափագը լիովին կատարել։

— Այս կերպով ըսված խոսքի, ես ի՞նչ պատասխան կրնամ տալ, իշխանդ մեծ,— ըսավ քաղցրությամբ եպիսկոպոսը, որ նույն ինք Ներսեսն էր Շնորհալին, եղբայր Գրիգորիս կաթողիկոսի։— Ես ուրախ եմ, որ այնպիսի վեհապետ մը հետ գործ ունիմ, որ ազգին օգուտը նախադասել և կրոնքի պատվիրաններն հարգել, կանոն ընելն կը խոստովանի. ասկից ավելի ի՞նչ շնորհք կրնալի խնդրել աստուծմե։

— Հիմա, սրբազան հայր,— ըսավ իշխանը ոտք ելնելով,— ներեցեք, որ հրաման ընեմ ձեզի լավ վրան մը պատրաստեն։

— Թե որ հրաման և թույլտվություն ընեք երթալու Լամբրոն...

— Ձեզի համար արգելք չի կա, երբ որ ուզեք, կարող եք մտնել, ամեն դուռ ձեզի բաց է։

Ներսես ոտք ելավ հրաժարական ողջույն տալու և մտավ Լամբրոն։ Քիչ մը վերջը իր փոքրավորներեն մեկը, որ պահեր էր Թորոս, կերակրեղինաց հանդերձանք կը մտներ սովյալ բերդին մեջ, ուր քանի մը ամսե ի վեր հացի պաշարե զատ բան չէր մնացել։

Կրնանք երևակայել, թե լեզ'անի կին մը, եղբորդուստր բարձրաստիճան եկեղեցականին, շատ դժվարություն չի քաշեց զանի համոզելու և դառնությամբ լեցնելու ընդդեմ Թորոսի, մանավանդ, երբ ակն հանդիման կը ցուցներ իրեն տարվո մոտ պաշարման վիճակը, իրենց անդրանիկը տարին չի կատարված այրիության դատապարտյալ փախստական հարսեն, և ամեն պատգամավորի անգութ և անփոփոխ պատասխանը հիմնահատակ կործանելու ելեմբրոն։

Ներսեսի աղավնակերտ սիրտը չէր հասկնար այսպիսի խստություն և անգթություն, բայց Թորոսի վսեմ կերպարանաց և խոսքերուն ազդեցությունը իրեն կը զրուցեր, թե կար նաև ուրիշ պատճառ մը, որ անշուշտ հայտնի պիտի լիներ։

Ուստի երկրորդ օրը, երբ բանակը եկավ և սկսավ խոսք բանալ, Թորոս բացարձակ իրեն իմացուց, թե զինք իբրև գատավոր ընդունելու պատրաստ էր, միայն թե Օշին պետք էր, որ գար ներկա լիներ և պատասխաներ ամեն ամբաստանությանց։ Թեպետ Օշին այս պայմանը ընդունելու շատ դեմ կեցավ, բայց կնոջ ու բոլոր ընտանյաց հորդորանաց չի կրնալով դեմ կենալ, մանավանդ թե փրկության ուրիշ հույս մ'ալ չունենալով, պարտավորեցավ հանձն առնուլ։

Եվ ահա խաղաղության հրեշտակը հակամայս եղավ դատավորս Թորոս հոն մի առ մի կը ցուցներ բոլոր անցելույն մեջ, թե ինչչա՛փ ատելի և վնասակար գտած էր միշտ պատերազմը և թե անոր համար իր երկու եղբարց հետ քանի՛-քանի՛ անգամ ավրված էր, և թե ինչպե՞ս պարտավորված իր ազգին պատվույն և ազատության համար պատերազմելու ընդդեմ հունաց և այլազգաց և թե միշտ այս ամեն պատերազմներու մեջ թե որ Օշնի անձը իրեն դեմ գտնված չէր, իր դրդումնքը միշտ գտնված էին. թե որ իր եղբորը՝ Ստեփանեի անգութ սպանության գործակից չէր, կամակից լինելուն ապացույցները ի ձեռին ուներ։ Թե որ նորա մահվանեն վերջը Թորոս և բոլոր հայք՝ հույները խորտակեցին և անկարող ըրին, Օշին ավելի հույն, քան զբոլոր հույները, թուքի թուքի վրա կը գրեր հրավիրելով դարձյալ զկայսրն ի պատերազմն և իմացնելով, թե՝ «քանի որ Ռուբինյան ապստամբ զարմը մնար աշխարհիս վրա և բնաջինջ չլիներ, Կիլիկիա խաղաղություն պիտի չգտներ հավիտյանս»։ Եվ այս թունավոր խոսքերը այն միջոցին կը գրվեին, երբ ինք Թորոս իր մեկ հատիկ զավակը անոր տղուն հարսնության կուտար, շնորհելով փրկանաց գինը և պատանդը իրեն փեսայացնելով։ Եվ խոսքերը բավական չի համարելով կ՚առներ կը դներ մեջտեղ Օշնի ստորագրությամբ գրված գրերը, որ անուրանալի վկայք էին իր ըսածներուն։ Եվ երբ նա և Ներսես ինքն ապշած՝ ընդարմացած բերան չէին բանար, այն տեսն դառնալով առ դատավորն՝

— Հայր սրբազան,— ըսավ,— թե որ Մերուժան, թե որ Վեստ Սարդիս հոս աս մարդուն հետ նստած լինեին, կարծեմ թե իմ միմիայն պարտքս այս մարդը անոնցմե տարաբերել չէր, այլ հավասարապես պատժել պետք էր լինիլ. շատ եղավ այսչափ տարիներու համբերությունս, և ես հիմա իմ անձիս միայն պարտավոր չեմ այդ դրյակը հիմնահատակ կործանելու, այլ սուրբ պարտավորություն մ՚է ինձ իմ ազգիս համար աս մատնության, դավաճանության բույնը անհետ ընել, վասնզի հոն՝ դորա հանդիպակաց պարիսպներուն մեջ գրվեցան, պատրաստվեցան այդ գրությունքը, հոնկից ելան հայ զինյալ ձեռքեր իրենց եղբարց արյուններուն մեջ թաթխվելու համար. անոր համար տարի մը ժամանակ կը լինի, որ ես հոս այս վրանին տակ կ՚սպասեմ։ Ափսո՞ս ձեզի, սրբազան, որ այսպիսի փեսի մը վիճակեր եք, այնչափ և ավելի թերևս ափսո՞ս ինձի, որ այդպիսի հոր մը զավակը ինձի փեսայացուցեր եմ։

Այս խոսքերը թեպետ առանց կրքի և հանդարտ ձևով գրուցված՝ այնչափ արհամարհանաց ծանրություն բեռնավորեցին Օշնի վրա, որ գլուխը կործքին վրա խոնարհեցավ, արձանի պես մնաց, և Ներսես տրխուր հարցուց իրեն, թե՝ այն թուղթերը իրեն լինելը կընդունե՞ր։ Իսկ երբ նա այլևս միայն «այո՛» մը գրուցեց, այն ատեն հրավիրեց զինքը Համբրոն դառնալ, և մնաց Թորոսի և անոր զորականաց հետ։ Սկսավ իր շնորհալի լեզվավ ճառել համոզիչ խոսքերով, թե քրիստոնեական սպարապետությանց առաջիններեն մեկն է ներողամիտ լինիլ, և թե վրեժխնդրությունը ինչչափ որ քրիստոնեական սկզբանց դեմ էր, նույնչափ և ավելի մեծ և վեհ սրտերու չէր վայլեր։

— Լա՛վ, հայր սրբազան, դուք Քրիստոսի և հայոց մեծ հայրապետին անունով զիս կը հորդորեք սիրո և խաղաղության, ես ալ, որ առջինին կը հավատամ և երկրորդը կը հարգեմ, հանձն կառնում վերցնել պաշարմունքը և թողուլ Համբրոն քար գայթակղության Ռուբինյանց. միայն թե դուք ալ, որ Լուսավորչա ցեղեն կ՚իջնեք և նորա սուրբ աթոռին վրա նստած եք, զինվորի մը աստվածաբանական հորդորը չի մոռնաք, հայ եկեղեցվույն փոքր դրոշակը անկախ պահեցեք, ինչպես ես ազգային անկախության դրոշակը անկախ պահելու կը ջանամ։ Հռոմկլայի և Համբրոնի գաղափարաց մեջ նաև ազգակցություն մը ցավոք կը նշմարեմ, վասնզի ինձ այնպես կ՚երևա, թե սխալ ճամփու մը կը հետևիք, թե միացնել կ՚ուզեք ձեր եկեղեցին հոնականին հետ։

— Քրիստոսի եկեղեցին մի է,— ըսավ Ներսես,— և մեր պարտքն է ջանալ ի սեր և ի խաղաղություն բերել զամենքը։

— Ես աստվածաբանական խնդիրներու չեմ մտներ, բայց կշռեցեք նախ և այնպես գործեցեք. այս է իմ ըսելիքս։

Խաղաղության գաշինքները գրվեցան, Շնորհալին ինք եղավ երաշխավոր Օշնի, և Թորոս խոստացավ, որ Գոհար տաբվույն մեկ մասը Համբրան անցընե։ Լավ հարաբերություն հաստատվեցան ընտանյաց մեջ, որ մինչև Թորոսի մահը տևեցին։

ԳԼՈՒԽ ԻԷ

ԴԱՎԱՃԱՆՈՒԹՅՈՒՆ

Հոգևորական իշխանության շարժմունքը այն միջոցին Թորոսի ախորժելի չէր։ Գրիգորիս կաթողիկոսը բանագնացության վրա էր հունաց Կիր Մանուել կայսեր հետ, որ ժամանակին կրոնասիրական գաղափարաց և իր քաղաքագիտական օգտին հետևելով, կը փափաքեր միության հայ եկեղեցվույն հետ։ Իսկ Թորոս միության մեջ նախ սուզման վտանգ կը տեսներ, երկրորդ, հայ եկեղեցվույն մեջ՝ եթե ոչ բաժանմունք, գոնե տա-

բաձայնության վտանգ կը նշմարեր, անոր համար Հռոմկլա սկսած է լինելիք կրոնական բանագնացությունքը վնասակար դատելովն ալ, այնչափ սիրելի և պատկառելի գտավ իրեն հաշտատար դեսպան եկած անձը, որ համառոտ քանի մը խոսք միայն զրուցել բավական համարեց, ինչպես տեսանք, և այլ ամենևին այդ խնդրով զբաղիլ չուզեց։

Մանավանդ որ իր ծրագիրը ընդարձակ էր, և ջարունակ պատերազմները հազիվ թե ժամանակ ձգած էին իրեն յուր ժողովուրդը մեծցնել գաղթականությամբ, որ հիրավի կը հաջողեր, բայց ոչ ըստ յուր փափագանաց, ինք որ կը փափագեր Հայաստան մը ընել երկիրը, Հայաստան մը զորավոր և անթափանց բնության պարիսպներու և ծովու սահմանին մեջ պարփակյալ. ուստի կարծելով, թե ալ խաղաղություն գտած էր բավական երկիրը, ոչ արտաքին թշնամվո և ոչ ներքին բանսարկության վտանգին ենթակա էր, իր բոլոր գործունեությունք տված այս իր դիտավորության՝ կ'աշխատեր, կը շրջագայեր, նոր եկելոց կ'օգներ, կը տեղավորեր, լունեցողին կուտար և ստացվածքի ապահովության կը հսկեր, և իր հոգնած մարմնույն հանգիստ և զվարճություն՝ որսն էր, և քանի մը հազվագյուտ և իմաստուն անձանց տեսությունը։

Իր բոլոր զորավարքը և ասպետքը այն մարդիկն էին, որ իր Կիլիկիա ոտք կոխած օրեն թե ու թիկունք եղան, պատերազմեցան հսկաներու պատերազմը, հույնը, թուրքմենքը, սկյութացին և արաբացին վանեցին, և Թորոս անոնց մեկուն աշխատությունը անվարձ չի թողուց, կամ բերդի, կամ դղյակի մը տեր էին, կամ կառավարիչք քաղաքի կամ ավանի. վերջապես չի կար ոք, որ իր աշխատության վարձքը առած չլիներ. այն դրժգոհները, որ քննադատության մոլությունն ունենալով երբեմն շարունակ կը գանգատեին, ալ հիմա Թորոսին ըսածն ու ըրածը գերագույն կը գտնեին առանց անգամ խորհրդածության, բավական էր, թե նա հրամայած լիներ. և այս ոչ բռնաբար, այլ համոզմունք մը դարձած էր, թե ինչ որ նորա գլխեն կը ծներ, իմաստուն կշռողության հետևանքն էր։

Միայն մեկ մարդ մը կար անուղղելի, որ գոհ պիտի չլիներ մինչև իր մահվան օրը, և այս մարդը այնպիսի անձ մ'էր, որ իր քաջության և հանդուգն կորովույն և Ռուբինյան սերունդեն լինելուն համար ոչ ոք կրնար դիմագրավել, ահա այս մարդն էր, որու գլխեն անցած պատահարք, աղետք ժամանակավ օգուտ մը չէին ըրած իր խելքին. միշտ հանդուգն, միշտ անհանդարտ, միշտ անդուռն բերան, միշտ անխորհուրդ ի ձեռնարկություն։ Թորոս ձանձրացած էր իրեն դեմ եղած գանգատներեն, ժողովուրդը ձանձրացած՝ իրեն դեմ բողոքելե. մանավանդ որ ամենը գիտեին, թե վիշտ և վերք մ'էր այդ եղբայրը իշխանին սրտին։ Ուստի որք նորա շուրջն էին, կը ջանային անոր վրա եղած գանգատներուն մեկ մասը ծածկելու. շատ անգամ իշխանին չիմացուցած՝ Բարկեն, Սարգիս, Թոռնիկ և մինչև Կոստանդին՝ անզգամ և անգութ գործերը կը պահեին, վասնզի գիտեին, թե Թորոսի սիրտը պիտի վշտանար։ Գիտեին մանավանդ, որ Ստեփանեի մահվանեն վերջը Մլեհի գարձը ի Կիլիկիա և եղբորն հետ համակամ և միաբան շարժիլը և անոր եղբայրաբար վրիժառու ջարժմունքը անտարբեր չէին երևցած Թորոսի։

Ուրեմն այս վիճակին մեջ, երբ Բարկեն և Թոռնիկ (որ շատ սիրելի եղած էր Թորոսի իր հայրենական և անձնական քաջության և ուղղության համար) անցյալին վրա խոսելով ժամանակ կ'անցնեին Վահկա բերդը, Սարգիս ներս մտավ և նստավ, բայց իր զվարթ բնավորությունը իրրև թե կորուսած էր այն օրը, նա, որ միշտ ուրախ էր և միշտ զավեշտը կը սիրեր։

— Հե՜, տղա,— ըսավ Բարկեն,— այսօր սգավո՞ր ես, որ բերանդ չի բացվիր. մամուդ մեռնելուն տարեդա՞րձն է։

— Այն օրը չեմ գիտեր, խաչի մեռելոց օրն երեկ էր, բայց ես ոչ մեռելն կը սիրեմ և ոչ մեռնիլը։ Իմ սիրտս նեղություն կա այսօր, բայց դուք ալ ուրախ մարդիկ չեք, որսի երթալու փափագ մը ունիմ այս սրտիս նեղությունը վանելու համար, ո՞վ ընկեր կա, և ե՞րբ, ա՜յն տեսնենք։

— Դու ալ իշխանին պես հոգնությունդ որսի աշխատությամբ կ'առնուս. նա քսանչորս ժամ կ'աշխատի, կը վազի, կը գրե, գրել կուտա, ետքը որսի կը հեծնե, հոգնությունը հոգնությամբ կ'առնու. դու ալ այն խելքե՞ն ես։ Ես ծերացա, տղա, հիմա հազիվ թե կ'ուզեմ շարժիլ։

— Պատերազմի համար ինչպե՞ս ես, Բարկեն հայրիկ։

— Պատերազմն ուրիշ է, հոն մարդու երիտասարդությունը քիչ մը ետ կը դառնա. փողին ձայնին արյունը կը դառնա, սիրտը կ'եփի։

— Թե որ դու այդպես կըսես, Մլեհ իշխանը ինչ կըսե, որ երեք օր մարդու թապըլտկիլ իր սուրին կամ նիզակին հարվածին տակ չի տեսնե, գիշերն ի բուն չի քնանար,— ըսավ Թոռնիկ խնդալով։

— Մլեհ իշխանը...— ըսավ և կեցավ Սարգիս։

— Մի՛ կտրեր, լմնցուր խոսքդ,— զրուցեց Բարկեն։

— Չեմ լմնցներ, վասնզի, թե որ ես լմնցնեմ, դու առաջինը կը լինիս բարկանալու։

Լռություն մը տիրեց, Բարկենի խոր աչքերը քիչ մը պզտիկցան, և շուրջ չորս կողմը զննելեն վերջը՝

— Սարգի՛ս,— ըսավ,— դու այսօր ծանր մտածմունք ունիս, լեզվիդ տակն ալ գաղտնիք մ'ունիս, այս դռնեն ներս մտնելեդ ի վեր կը փնտրիս, որ հայտնես և չես ուզեր. ասված վկա, թե որ Թոռնիկ հոս չլիներ, ես մինակ որ լինեի, պիտի բանայիր, այդպես չէ՞, շիտակ խոսե՛։

— Եղբայր, թե որ այդպես է, ահա ես կերթամ,— ըսավ Թոռնիկ ելնելով։

— Ո՞ւր, կեցի՛,—ըսավ Բարկեն թևեն բռնելով և նստեցնելով,— որդյակ Սարգիս, ինչ որ ծանր բան ունիս ինձ զրուցելու, մի վախեր, Թոռնիկին ալ կրնաս ըսել. ես զինքն լավ ճանչցեր եմ։

— Ես անկից կասկած չունիմ, մեծ վստահություն ալ ունիմ. բայց պապերու առակ է՝ «Գաղտնիք երեք հոգիի մեջ գաղտնիք չեն, հայտնիք են»։ Թոռնիկ հոգիդ սիրես, մ՚առնվիր, նստե, ես, Բարկեն հայրիկ թե չլիներ, քեզ պիտի զրուցեի. շփոթեր մնացեր եմ, խնդիրը ծանր է. իշխանին սիրտս չի տանիր, որ համարձակիմ բանալ։

Բարկեն ուժով մը ձեռքեն քաշելով առավ Սարգիս, բազմոցին ծայրը նստեցուց և կամաց ձայնով ըսավ.

—Ի՞նչ է, զրուցե, որդյակ Սարգիս, մենք երեքս մեկ հոգի ենք, ես մարդիկ լավ կը ճանաչեմ, դե, զրուցե՛։

Այս դիրքին մեջ երեք գլուխ իրարու մոտեցան, Թոռնիկին լայն և պարզ ճակատը, անկեղծ և մաքուր նայվածքը, Սարգսին սուր և կասկածոտ աչքերը, Բարկենի երկայն և ճերմակ հոնքերը, որ աչքերը գրեթե կը ծածկեին, իրարու հակառակ դեմքերով զարմանալի միություն մը կը կազմեին այս երեք անձանց մեջ, Սարգիս սկսավ իր գաղտնիքը պատմել.

— Քու առջևդ էր, Բարկեն, երբ իշխանը ինձի հրամայեց, որ Հայաստ երթամ, անծանոթ քաղաքը մտնեմ, իբրև վաճառական քիչ մը ապրանք առնում, աչքե անցունեմ, իմանամ, թե ի՞նչ կընե Նուրետտին, ի՞նչ կը խոսի ժողովուրդը, ի՞նչ շարժմունք կա հոն, շաբաթ մը հազիվ կենամ ու դառնամ. կեցա, նայեցա, ապրանքներն ալ իշու մը վրա քարձած, ես ալ դուրսեն մեր տղոցմե մեկը միևակ հետս առած կը դառնայի։ Արեգի վանքը հասա, տղուն ըսի, որ կենդանին առնու բերդը տանի. ժամվան մը ճամփա կար դղյակն հասնելու, և արևն ալ իջնելու մոտ էր. մտա անտառը, որ գետակին մեջ լվացվիմ, ձայներ կային, կամաց-կամաց մոտեցա. հինգ-վեց Թուրքմեն նստած էին, ես Թուրքմեն կ՚ըսեմ, դուք ավազակ իմացեք, իրենց լեզվավ կը խոսեին. ի՞նչ եղավ զարմանքս, երբ մեր Մլեհ իշխանը ասոնց գլուխը տեսա. «Չէ,— կ՚ըսեր ցուլի պես մարդ մը,— հազար ոսկի ալ տաս, ես այդ մարդուն վրա չեմ քալեր. ո՛վ նորա վրա կը քալե, մահվան բերանը կը քալե, այս ավանակները կ՚ուզես համոզե, տասնևութը տարու էի, Ռապանի ճամփան՝ երբ հինգ-վեց հազար հոգի մենք անոր փոքրիկ խումբին վրա խնկանք, ողջ բռնել կը կարծեինք, այն պզտի խումբը կարծես մեծցավ, շատցավ, մեր արյունը ջուրի պես կը վազեր. այդ քու եղբայրդ վիշապ դարձավ, ամեն մեկ շրջանին հաչն ու ձախ սուրը կայծակի պես կիջներ, ինկնողը ալ չէր ելներ։ Ես ծառի մը կռնակ կծկտած պահված կը դողայի ու կը նայեի, մինչև որ կամաց մը ծառն ի վեր ելա, անկից կը տեսնեի, տերևի պես կը թափեին ամենքը անոր սուրին տակ. այն օրեն մինչև այսօր շատ պատերազմ տեսա, շատ տեղ գտնվեցա, ես այդ մարդուն պես մարդ չի տեսա. ո՛վ կ՚ուզե, քեզ հետ թող երթա, ես այդ գործին մեջ մատ չունիմ։ Եվ ահա տկավ Մլեհ բարձրաձայն խնդալ մարդուն վատության վրա և ծաղրել. «Ածիլեցեք այս մորուքները՝ կնիկ եղեք» ըսելն լսեցի ու տեսա, որ ոտք ելավ. անոնք ալ ոտք ելան. ես կամաց մը քաշվեցա մտա թփերուն նոին, զարձա և կը տեսնեի Մլեհ, որ կ՚անցներ գիվական ծիծաղ մը ձգելով այդ ավազակ Թուրքմեններուն վրա։ Իրավ, առուտուրն ավրվեցավ, բայց այդ մարդը եղբորը հորը կը փորե, գինովությանը դուրս կուտա, օր մ՚ալ կ՚ելնե այնպես բան մը կ՚ընե, որ մեր բոլորին ու ազգին գլուխը ձյուն կը բերե։ Ես այս տեսածս ու լսածս իշխանին պատմելու չեմ համարձակիր, չամանչեմ, անոր համար քեզ ըսելու եկա. դու մեր ծերն ու խելոքն ես, ի՞նչ ընեմ... մանավանդ թե ի՞նչ ընենք. ահա Թոռնիկին ալ երեսին գույնը դարձավ։

Եվ իրոք ազնվական երիտասարդին երեսը ճեպ-ճերմակ կարեցավ. ճակատը մարգարտի պես քրտնեցավ, և սրտին զարնվածքը քովինները կրնային լսել, թե ուշադիր լինին, և չի կրնալով դիմանալ՝ առանց բերանը բանալու ելավ և սկսավ սենեկին մեջ վեր-վար պտրտիլ։

Բարկեն անշարժ-անխոռով մտիկ ընելի վերջը, աչքերը գոցած իբրև թե քուն կը լիներ և ձայն չէր հաներ, հայտնի է, թե կը մտածեր։

Իսկ Սարգիս, երբ բավական սպասեց, ալ համբերությունն հատնելով՝

— Եղբարք,— ըսավ,— ես ձեզի բան խոսեցա, մեկերնիդ արձան եղաք անշարժության, մյուսնիդ նստիլը մոռցանք. դե, խոսեցե՛ք. այս անզգամը ո՞ գիտե ի՞նչ կը նյութե հիմա եղբորը դեմ։

— Հիմա նա նստած հովանոցը, իր ոտքին շիշը կը պարպե, ես որ գալուս հոնկից կ՚անցնեի, տեսա. մեզք, որ իշխանին եղբայրն է, ես ալ քեզի պես չեմ համարձակիր մարդու զրուցել այդ վատ դավը, ո՞ւր մնաց եղբորը,— ըսավ Թոռնիկ։

— Ուրեմն ի՞նչ ընելու է,— կ՚ըսեր Սարգիս, Բարկենի գառնալով։

— Ի՞նչ ընելու է...— ըսավ Բարկեն,— ի՞նչ պիտի ընեմ, կենամ, որ անկարծելի ժամանակ այդ անզգամ խենթը ազգին տումը փլցնե. հիմա իշխանը ուր որ է կուգա, առջի խոսքս իրեն այս պատմությունը լինի, դուք ալ մի հեռանաք, որ եղելությունը տեղն ի տեղ հայտնեք։

Սենեկին մեջ երկար լռություն որ տևեց, միայն ձիոց սմբակաց

ձայնեն ընդհատեցավ։ Իշխանն էր, որ կը դառնար։ Բարկեն, որ նորա երեսը գիտեր կարդալ մեկ աչք նետելուն, սանդուխին գլխեն երկու աստիճան, որ քովն էին՝ «ափսոս,— կ'ըսեր,— այս երեկո, որ իշխանը զվարթ է, պիտի դառնացնենք զինքը, տեսնք Կրակին պարանոցը կը շոյե, ձիասպասին հետ կը խոսի...» բայց Բարկեն կ'ուշացներ իր խոսքը. «Կերակուրը հանգիստ ուտե, իշխանիկս,— կ'ըսեր ինքնիրեն,— քիչ մը ժամանակ ալ անցնի»։ Երբ կերակուրեն ելան, և տեսավ, որ Թորոս իր սենյակները պիտ քաշվեր, ա՛լ Բարկեն ելավ դիմացը կանգնեցավ։ Երբ այն կեցվածքը տեսավ իշխանը, որ նույնպես իր ծերուկին ամեն շարժմանց նշանակությունը գիտեր. շուտ մը իմացավ, թե ծանր բան մը կա։

— Խոսե՛, Բարկեն հայրիկ։ շուտ ըրե, դու կարևոր բան մը ունիս ինձ իմացնելու, ի՞նչ է։

— Մլեհ իշխանն է դարձյալ, տե՛ր։

— Նոր հիմարություն մը։

— Հիմարությանց վատթարագույնը։

— Ի՞նչ,— ըսավ Թորոս ընքվինները իրարու կպցնելով։

— Քեզ կ'ուզե սպաննել։

— Ո՞վ է տեղեկացնը,— ըսավ քննող աչք մը նետելով Սարգսի և Թոռնիկի վրա, որք մեկ կողմ կայներ էին առաջնին նայելով իբրև հանցավոր։

— Սարգիս տղա, պատմե ամեն բան,— ըսավ Բարկեն։

Երբ Թորոս անշշունջ մտիկ ըրավ ամեն բան.

— Դիտեա, Բարկեն հայրիկ,— զրուցեց,— Ստեփանե կասկածով մը տասն ամիս բանտարկեցի, սրտիս վերք է այդ գործս, իրավ Մլեհ Ստեփանե չէ, բայց դարձյալ խելքին փչածը դուրս կուտա, ավելի կը խոսի, քան թե կ'ընե. ասոնք ամենքը պետք է մտածել, ետքը շարժիլ։

— Տեր իմ,— ըսավ Բարկեն բարկությամբ,— գոնե ինձ հրաման տուր։ որ պետք եղած զգուշություններն ընեմ։

— Լավ,— ըսավ Թորոս ծիծաղելով,— քեզի հրաման՝ առանց դուրսը ձայն տարածելու և առանց զիս անհանգիստ ընելու գիտցածդ ընել։

— Միայն Թոռնիկ քեզ անձնապահապետ լինի, գոնե զայն կ'ընդունի՞ս։

— Լա՛վ։

— Ես Սարգսի հետ մնացած զգուշությունները կը հոգանք։

— Լա՛վ, լա՛վ, լա՛վ, Բարկեն հայրիկ, գիտցածդ ըրե, բավական է, թե ինձի գանգատ չի հասնի։

— Հոգ մ'ըներ, իշխանիկս։

Եվ երբ Թորոս գնաց քաշվիցավ, մեր երեք բարեկամները իրարու երես կը նայեին։

— Ալ իշխանին կյանքը ուղղակի քեզի հանձնված է, Թոռնիկ։

— Առաջ աստված,— ըսավ քաջ երիտասարդը, որու պայծառ կերպարանքին վրա սրտին մաքրությունը կը փայլեր,— ես ոտքս հետքեն չեմ զատեր, ինք ուր է՝ տունս ալ թող հոն լինի։

— Ապրի՛ս, որդյակ։— Իսկ մենք, Սարգիս, ա՛ղ Մլեհ ուր երթա, ինչ ընե՝ մեզի բան գործ ընենք։

— Լա՛վ,— ըսավ Սարգիս,— և երեքն ալ գացին իրենց սենյակները պառկելու։

Ա՛լ Թոռնիկ անբաժանելին եղավ Թորոսի, իր հատկությունքը անոր քով ավելի կատարելագործեցան։ Բայց շատ անգամ կը տեսնվեին Թորոսի քով երկու դեռահաս երիտասարդք, Ռուբեն և Լևոն, որոնց սգավոր մայրը Պապեռոնե զիրենք կը բերեր իրենց հորեղբորը Վահկա բերդը. Թշվառ Ստեփանեի երկու զավկներուն կերպարանքը կը վկայեին արդեն, թե Ռուբինյան զարմին շառավիղք էին։ Հոր գութ և սեր թեպետ ուներ Թորոս երկուքին վրա հավասարապես, բայց Բարկեն, որ գուշակության ձիրքն ուներ, «սա պզտիկը հորեղբորը տեղ բռնելու հույս կուտա, Ռուբեն հորը զավակն է, Լևոն հորեղբորը ելած է» կ'ըսեր։ Եվ իրոք, տղան գիտող բնավորություն և մեծ համակրություն ուներ հորեղբորը, ամեն բերնեն ելած խոսքերուն ուշադրություն կուտար, երբ Ռուբեն զվարճությունը ամեն բանեն ավելի կը սիրեր։

Քանի մը ամիս անցած էր Սարգսի այն դիպվածեն վերջը, երբ Թորոս օր մը որսի պիտի ելներ Պեռամո ակունք ըսված տեղը, հանկարծ երկինք մթնեցավ, և սոսկալի փոթորիկ մը արգիլեց «վաղը մեր որսը», ըսավ Թոռնիկին, և երկրորդ առավոտուն հեծավ որսի, ինչպես իր սովորությունն էր՝ կանուխ, չորս-հինգ հոգի միայն կային հետը։ Իրեն ընկերացած էր նաև Լևոն եղբորորդին։ Հազիվ թե ձիերը ձգեցին, և իրենք սկսան ցրվիլ այծյամներու խումբ մը պաշարելու համար, ահա Թոռնիկ, որ Լևոնի քովն էր, նույն միջոցին կանգ առավ՝ «Ծտեսես եկո՛ւ» ըսավ և ճամփան փոխելով շիտակ դեպի այն կողմը սրացավ, ուր արշավեր էր Թորոս, վասնզի զինուց փայլ մը կարծեց նշմարել այն կողմը, և իրոք, երբ քիչ մը հառաջացավ, տեսավ, որ չորս-հինգ սպառազեն Թորոսը շրջապատեր էին. իսկ նա այս հանկարծակի հարձակումը տեսնելով՝ մեծ ծառի մը բունին կռնակը տված պաշտպանողական դիրքի մը մեջ անխրոտով կը գիտեր զինք պաշարողները, և դեռ Թոռնիկ չի հասած, իր ահագին Լևոնյան սուրը շողաց, և երկու թշնամի սուրեր օդի մեջ թռան։ Ճիշտ այն միջոցին Թոռնիկ հասնին ու սուրի հարվածով անգամներուն

մեկը գետինը ձգելն մեկ ըրավ. Լեռն այն միջոցին իր եռանդուն տարիքին ձայնին միշտ լսելով՝ առանց սպասելու՝ քիչ մը հեռուն կեցած բարձրահասակ մարդ մը տեսնելով որ սազավարտին դիմակովը ծածկված՝ սուրը ձեռքը ավելի հանգիստես կ'երևեր և հրամանատար, հարձակեցավ անոր վրա, որ ճանճ մը վռնտելու պես երիտասարդին սուրը կանգուններով հեռու նետեց և առանց քայլ մը առնելու, իր պատերազմոզներուն վրա կը նայեր անշարժ արձանի մը պես, որոնք Թորոսի և Թոռնիկի հարվածներուն տակ կը կործանեին իրարու վրա, և երբ տեսավ, թե շորս-հինգ հոգի արդեն ընկած էին և երկու-երեք ալ ծանր վտանգի մեջ, ետին դարձավ, ցատկեց ահագին խրամ մը և սկսավ ժայռատ ու մացառուտ լեռն ի վար ցատկել, բայց հոգիվ թե ումանսը քայլ վազած՝ երեք հոգի դիմացը արձանացան. Սարգիս իր երկու եղբայրներով՝ «մեկդի՜» ըսավ զրահավորը հառաջ, կամաց և անխռավ ձայնով մը։

— Մեկդի՜...— ըսավ Սարգիս,— ե՞ռ, գավառաններու ասքենն, ո՛վ որ լինին՝ սավաքություն չունիմ փախչելու, թո՛ղ զենքդ և անձնատուր եղի՛ր։

Այս խոսքերուն պատասխանը՝ սոսկալի սուրի երկու հարված ընդունեցավ իրարու վրա Սարգիս, ոչ միայն սուրը ձեռքեն թռավ, այլ նաև ձախ ուսին վրա վիրավորեցավ. իր երկու եղբարք նույն միջոցին վրեժխնդրության ոգվով հարձակվեցան զրահավորին վրա, բայց իրենց հարվածները ոչինչ էին այն մարդուն և իր զրահներուն դեմ, որ իբրև թե կը ծիծաղեր. երբ Սարգիս առանց սուրի մնացած և թեպետ վիրավոր՝ բայց իր զարմանալի արագությամբ և իբրև թե գետնեն սազալով մտավ նորա սրունքներուն մեջ և քաջը հերկիր կործանեց. կարվը, որ չմնցած կը կարծվեր նորա ինկնալով, վայրկենին նորոգվեցավ, վասնզի նա ժամանակ չի ալավ և ի քթթել ական, ոտքի վրա էր գարձյալ և պատրաստ իր երեք թշնամիները կործանելու, որոնք առատանալի մը, քան թե մարդու հետ գործ ունենալ սկսան կարծել և հա-հա երթալ։ Այս միջոցին Թորոս, Թոռնիկ և Լեռն վրա հասան, և երբ նա վեց սուր իր վրան տեսնելով, անխռով, ճիշտ նույն զիրքին մեջ, որտեղ մեջ քիչ առաջ Թորոս կը գտնվեր, կռնակը ապահովցուցած՝ չի կրնալով համբերել «հա՛, հարձակեցեք, տեսնեմ, թե որ քաջ եք» պոռաց մեծ ձայնով, և ամեն զենք շրջապատողք իրարու երես նայեցան, Թորոս սուրը գետինը հեցած, ծանր ձայնով՝

— Մլե՜հ,— կանչեց.— թող զենքդ, մեծ եղբայրդ և քշխանդ է, որ քեզ կը հրամայեմ։

Մեծ եղավ ամենուն զարմանքը. այս խոսքերը հազիվ թե լսվեցան՝

կարծես թե աներևույթ զորություն մը սանձահարեց զրահավորը, սուրը խոնարհեցավ և ձեռքեն ինկավ, և երկու ձեռքն ամփոփելով կուրծքին վրա՝ կեցավ։

— Առ սա սուրը,— ըսավ Թորոս Թոռնիկին...— Հեծե՛ք, տղաք, ետ դառնանք։

Լռություն տիրեց ամենուն վրա. շատ մը Սարգսի վերջը պատեցին եղբարքը, և երբ այն գործողությունն ալ լմնցավ, հեծավ Թորոս առջևեն, Մլեհ և ամենք ետևեն։ Ոչ ձայն, ոչ խոսք, ոչ քրթմնջյուն չէր լսվեր, այլ խիստ լռություն միայն ձիերու սմբակները կ'ընդհատեին, մինչև հասան վահկա։ Երբ ձիեն իջավ Թորոս, դարձավ եղբորը՝ «գնա՛, նստե՛ հովանոցդ, սպասե հրամանիս» ըսավ։ Մլեհ առանց պատասխանելու հնազանդեցավ և գնաց։

Հազիվ թե մտավ Թորոս իր դիվանը, սուրհանդակներ գնացին բոլոր շրջակա բերդերը, և նույն իրիկունը մեծ ժողովքի մը մեջ բոլոր իշխանաց և զորավարաց ներկայության՝ Մլեհ բերվեցավ, և իշխանը բոլոր նորա ըրած անգթությունները, հիմար և անիրելը վարմունքը, եղբորն անձին դեմ բոլոր սպառնալիքները և վերջի նույն դավաճանությունն համրելեն ետքը ավելցուց և հարցուց.

— Հիմա, Մլեհ, թե որ ես ասոնք ըրած լինեի, դու, որ շիտակ կը խոսիս, գրուցե, ի՞նչ կ'ընեիր։

— Ակոշտի չէի սպասեր, շատոնց գլեզ ապանված կը լինեի,— պատասխանեց նա խիստ ձայնով։

— Բայց ես չեմ ուզեր, որ Թուքինյանց մեջ ոք գրուցվի պատմության մեջ, թե եղբոր արյան ձեռք մխեց. ուստի գնա՛ այս երկրեն դուրս, հեռացի՛ր, շատ է, որ ես երկու եղբայր բուռն մահվամբ կորուսի հունական ձեռքերեն։ Ես կարծեցի, թե Ստեփանեի թշվառ մահը բավական էր զքեզ զգաստացնելու համար. կարծեցի, թե այս աքառվայն օրինափոր ժառանգ դու միայն մնալով զգաստացար ես, բայց անօգուտ, դու մահապարտ ես, ես քեզի կը ներեմ, բայց չեմ ներեր, որ իմ մահվենս վերջը այս աքառին վրա նստիս, վասնզի դու ոչ միայն նախատինք, այլ մահաբեր կրնաս լինիլ այս իշխանության և ազգիդ։

Այս խոսքերեն վերջը եղբայրատոր և իշխանատոր վարվելով դարձյալ՝ «շատ ոսկի, արծաթ և ձի, և ջոբիս» ավելի և հանեց զնա երկրենս Իսկ նա գնաց դարձյալ առ սուլթան Նուրեդտին։

ՅՈՒՆԱՑ ՎԵՐՋԻՆ ՀԻԳԸ

Այս տխուր գիպվածեն վերջը Թորոս զզվանք մը իմացավ եղբորմեն, ինչպես իմացեր էր իր փեսեն։ Մտքին մեջ շարունակ Դիոնիսին խոսքերը կը դառնային, որ երբեմն իշխանության ժառանգության վրա ըսած էր. եթե իրեն նման քանի մը հաջորդներու աթոռը ձգելու բարեբախտությունը ունենար, կրնար հուսալ, թե Ռուբինյանց հարստությունը տևողություն պիտի ունենար. ուստի նայելով շուրջը՝ Ստեփանեի մեծ որդին ալ՝ Ռուբեն նաև իր տղայամտությամբ հուսահատություն կը բերեր իրեն. Լևոն միայն՝ նորա պզտի եղբայր հույս մ'էր, բայց Մլեհ և Ռուբեն այգելք մ'էին։ Այս խորհրդածությամբ, տխուր՝ շատ անգամ կը մտածեր, և միտքը կը վազեր, այն հին Եվրոպա և Հռոմի հասարակությանց, ուր ազգի մը բախտը մարդու մը կարողութենեն չէր կախվեր, այլ ազգին բարոյական զորութենեն. բայց ո՞ւր էր այդ բարոյական զորությունը, ո՞ւր էր այդ բարոյական զորությունն ստեղծելու դաստիարակությունը։ Այս մըտածություններն ահա՝ իր Եվփիմեին սուգին հիշատակը առանց իր սրտեն վերցնելու՝ զինք հորդորեցին, ժառանգ մը տալու համար աթոռին, ամուսնություն մը ընելու Թովմաս անուն իշխանի մը աղջկան հետ, որ ըստ յուր փափագանց՝ մանչ զավակ մը իրեն տվավ և զոր ի հիշատակ ցեղապետին և իր սիրելի եղբոր՝ Ռուբեն անվանեց։

Բայց բախտը չէր ներեր, որ Թորոս հանգիստ առնուր պատերազմներե, կռիվ մը հազիվ կը վերջանար, նոր մը կը ծներ. երբ իր երկիրն՝ հյուսիս, հարավ և արևելքի կողմերեն կապահովեր, պետք էր արևմուտք իրեն դեմ թշնամի հարուցաներ։ Հիմա ալ նույնպես ահա հին օձը գլուխը կը վերցներ. իր բանտերեն, իր գերութենեն ճողոպրած, Անդրոնիկոս Կոմնին Մանուել կայսեր հետ հաշտված՝ մեծագանձ պարգևներով ճոխացյալ, իմացավ, թե իր վրա կուգա, ուստի իր պատրաստությունները տեսավ և արթուն կ'սպասեր արժանավոր ընդունելություն ընելու համար։ Եվ իրոք, երբ Մամեստիա նստած էր Թորոս իր բանակավ՝ լուր առավ, թե հունաց նավատորմը Ալեքսանդրիո ծոցը կը մտներ, և Անդրոնիկոս ցամաք կելներ. գիտնալով թշնամվույն հանդգնությունը՝ թույլ տվավ, որ նա իր բանակին վրա արշավե, և նույն միջոցին, ինք քանի մը ընտիր գունդեր հետն առած՝ Ամանոսի բարձանց վրայեն կը դիտեր հունական բանակին խլրտմունքը և ավարառվաց մեծ և պզտի խումբերու անգգուշությունքը՝ հանկարծահաս հարձակմամբ մեծ բանակեն բաժնելով ընաջինչ կը կոտորեր։

Իսկ Անդրոնիկոս թեպետ հավասար իր չարության՝ քաջություն ալ ուներ, և ինչպես անառակության, նույնպես պատերազմներու մեջ ալ կը ծերանար, գիտնալով նաև իր թշնամվույն արթուն քաջությունը, որու փորձն առած էր, բայց ատելության կատաղությենեն կուրցած՝ արհամարհել կը ձևացներ յուր թշնամին, և ամբարտավան պատգամավորներ կ'ուղարկեր առ Թորոս, ի հնազանդություն զնա կոչելով։ Իսկ Թորոս դեսպաններուն ամեն ըսածներուն լուրջ և հանդարտ մինչև ետքը մտիկ ընելեն վերջը, նույնպես ինքն Մանուել կայսեր ոսկի հրովարտակը առջևին նետեց արհամարհանոք. «Գնացե՛ք, ըսե՛ք ձեր զորավարին,— ըսավ,— թե ես զինքը ոչ օրինավոր սպարապետ, այլ ավազակապետ մը կը համարիմ, թե որ իր տերը, որ մեծազոր ինքնակալաց հաջորդ է և չգիտեր իր այս հրովարտակը հարգել, թե որ իր տեղեկալքը անգութ և անզգամ դավաճանությամբ ամեն դաշինք ոտնակոխ ըրին և զմեզ բռնադատեցին արդար վրեժխնդրությամբ Հույն իշխանության հետքն ու անունը այս երկրեն ջնջելու, հիմա նույն կայսրը չամշնար, չի կարմրիր առնուլ իմ վրաս ղրկել այդ ոչինչ մարդը, որու գոռոզ ամբարտավանության հավասար է պատերազմական տգիտությունը։ Հիրավի ուրեմն արդար է, որ կ'իմանամ, թե ձեր կայսրը աստվածաբանական գիտությանց ինքզինքը տալով, բոլորովին հիշողությունն ալ կորուսեր է, մոռցեր է, թե այդ իր ընտրած զորավարը նույն այդ մարդն է, որ ասկից տասնևհինգ տարի առաջ իմ վրաս գալով և այդպես դարձյալ մեծ-մեծ ջարդելով անարգարար կիսամերկ փախավ. թեպետ նույն ատենն ալ դարձյալ հռոմեական կեսար անունը կ'աղտոտեր և սպարապետ անունը ծիծաղելի կըներ. տե՛ղ, գնացե՛ք, դուք խեղճ մարդիկ, նայեցեք, որ իրմե առաջ փախչելու ճարը տեսնեք, վասնզի հիմա իմ զորքերս ձեր Անդրոնիկոսներուն, ձեր կեսարներուն, ձեր խեղճ զինվորներուն խնայություն ընել չեն գիտեր, այլ մինչև վերջինը սպաննել ուխտած են։ Գնացեք ձեր բանակը, այսպես պատմեցեք»։

Այս պատասխանը Անդրոնիկոսի կատաղությունը հիմարության վիճակի մը հասցուց, և իր բանակին նորահնար ձև մը տալ ուզելով, կենդանվո մը կերպարանք տվավ, կ'ըսե պատմությունը, գլխով, ոտքերով և ագիով, և այսպիսի դասավորությամբ մը հարձակեցավ Թորոսի բանակին վրա։ Իսկ Թորոս, որ այսպիսի պատկերահանութենե չէր հասկընար, այլ միշտ իր լեռներուն և անտառներուն դիրքեն օգուտ քաղելե կը հասկնար, նույնպես այս անգամ ամեն իր բանակն այնպես հարդարեց, որ թշնամվույն փախչելու ճամփա չի ձգե, ուստի ամեն կողմ թշնամին

պատեց դարանամուտ զորքով, և իր բանակին ճակատը հողապատնեշներով ամրացնելեն վերջը, ընտիր հեծելագնդով մը անցավ Թշնամվույն կոնակը, և երբ Անդրոնիկոս իր գլխովն ու ոտքով, թեներեն ու ոտիով կը պատերազմեր՝ իր գիմացի բանակին հետ ոչեն ու ձախեն և կոնակեն հարված հարվածի վրա հասցնելով, բանակը քայքայվեցավ և խորտակեցավ, և անխուսելի խայտառակությունը երկրորդ անգամ վերահաս նկատելով, երբ հուսահատ կը մտածեր, տեսավ զԹորոս զրաղված խորտակելու իր զորաց վերջին ճիգն իր աջ թևին վրա, գազանի մը պես իր բոլոր զորությամբ հարձակեցավ նորա վրա, որ հապիվ ժամանակ ունեցավ վահանը ընդդեմ դնելու անակնկալ հարվածին և ձիեն վար ընկավ։ Բայց Անդրոնիկոս, երբ ինկած թշնամին վայրկենին ոտքի վրա տեսավ և որ դարձյալ հական քթթել նարեն ձիուն վրա կը ցատկեր, իմացավ վտանգը և ձիուն գլուխը դարձուց և բանեց նույն փախուստյան Անտիոքա ճամփան, ոչ երբեմն իր կյանքը ազատեր էր։ Կյանք մը, որ ամեն շարությամբ լեցուն՝ շարաշար սկսած՝ թեպետ կայսերական գահույից վրա շարաշար ալ պիտի վերջանար։

Անդրոնիկոսի այս պարտության լուրը երբ Կոստանդնուպոլիս հասավ, Մանուել կայսրը այսչափ նախատինք բռվակաև չհամարելով, շուտ մը նոր բանակ մը կազմեց և Կոստանդին Կալաման դուքը սպարապետ կարգելով՝ Թորոսի վրա դրկեց, վերջին փորձ մ'ալ ընելով։ Պատերազմն Տարսոնի քովերն տեղի ունեցավ, և հոն հունական բանակին սպառազուն խորտակյալ և զորավարը գերի բռնվեցավ Թորոսեն, և Բյուզանդիոն կայսրությունը՝ իր բոլոր ամբարտավանությամբ՝ իր ապատամբ թշնամվույն ձեռքեն ծախու առնել զիջավ այս մեծ իշխանը՝ ծանր փրկանք վճարելով։

Ա՛լ անկից վերջը խաղաղությամբ տիրեց Թորոս բոլոր Կիլիկիո և մեծ մասին Խաչիրիո և Փոյուգիո. հասատատեց իր աթոռը ի Մամեստիա քրիստոնեյուն յուր իշխանության։ Անոնք, որ իր քառանհինգ տարվան պատերազմներուն փառքովն և սրինովներով էին զարդարված՝ իշխանությամբ և ասպետությամբ բարձրացուց, վասնզի իր սկզբունքն էր առաքինությունը վարձատրել և անզգամությունը պատուհասել։

Իր օրով հայը, որ ամենն տեղ հարստահարյալ, թշվառության էր զատապարտյալ, Թորոսի երկիրը հանգստություն և պաշտպանություն կը գտներ։

Զինվորը քաջ էր և անարկյուղ նորա օրով, և բոլոր շրջակայից ահավոր եղավ Ռուբինյան խաչը, որ հայ դրոշակին վրա կը ծածաներ։

Տարսոնի լեռներն ոչ միայն ուրախության ու նվագարանաց ձայնի-

բան արձագանք կուտային, այլ նոցա երկիրը իր մեռազական հարբուստությամբ աշխատող ժողովուրդը կը վարձատրեր։

Վանքերը Սև լեռան վրա ոչ միայն առատաձեռ փառաբանությունք հերկինս կը բարձրացնեին, այլ նաև ժողովրդյան զպրացներ էին։ Կիլիկիո քիղմնավոր դաշտերը մշակյալ՝ հանկերով և պտղատու ծառերով կը զարդարվեին, ամեն տեսակ ընտանի կենդանյաց հոտեր իր հարստության ազբյուրքն էին։

Քաջ պատերազմի մեջ, արդար և աշխարհաշեն խաղաղության մեջ՝ ոչ միայն մեծ իշխանի անուն ունեցավ, այլ առաքինի և ազնիվ մարդու համարմունք առացավ։ Իր բարեկամությունը փնտրեցին իր սահմանակից օտար իշխանք և թագավորք և հարգեցին, վասնզի տեսան, որ պաշտպան էր արդարության և ակարին։

Ո՛վ որ ազգային պատմությունն ունի ուշադրությամբ, հայ դյուցազանց առաջին կարգին մեջ կը նշմարեն այս մեծ հանճարը, որ ոչ միայն իր ժամանակին, այլ նաև իր բախտեն վեր էր։ Իր քաջության հավասար էր իր խոհեմությունը, վասնզի գիտեր գժվարին և ապերախտ պարագաներեն օգուտ քաղել, գիտեր ժամանակին տեղի տալ և սպասել, որ իշխանաց առաջին կատարելությունն է, թեպետ սամկական աչքեր չի շլացնեն։

Կրոնասեր առանց նախապաշարմունքի, այնպիսի ժամանակի մեջ և այնպիսի քաղաքի մը մեջ գտնուելով՝ ուր իշխանք և ինքնակալք անբացատրելի տասվածաբանական խնդիրներով կ'զբաղեին երկրին պիտույքը երեսի վրա թողած, նա գիտցավ իր միտքը և իրենները անարատ պահել այդ հիմարական հիվանդությունեն, ինչպես գիտցավ կրոնքի ճշմարտությունները հարգել և հարգել տալ իր ժողովրդյան։

ԳԼՈՒԽ ԺԴ

ԹՈՐՈՍԻ ՄԱՀԸ

Ցնդեցավ ահա, երբ խաղաղություն գտած երկրին բարեկարգությունն նկատելով՝ իր փոքրիկ Ռուբենին դարդանալը ախորժ աչոք կը տեսներ և նորա գատափարակությանն կերպը կը մտածեր. երկու նպատակ մի էին իր մտաց մեջ, ազգն ու զավակը, զորս չէր կրնար զատել։

Բայց նախախնամությունը ուրիշ կերպ որոշեր էր։ Բուռն հիվանդություն մը վրա հասավ, և այդ զորավոր կազմվածքը, որ այնչափ ապա-

տերազմաց, այնչափ մտատանջությանց, այնչափ կսկիծներու և այնչափ բարոյական նեղությանց անընկճելի դիմացեր էր, տեսավ, թե մահը կը մոտենար, նորա առջևն ալ դարձյալ անընկճելի կեցավ և հանդարտ սպասեց։ Իր հիվանդության լուրը բոլոր Կիլիկիո իշխանք ու բերդակալք, զորավարք, և ասպետք և հայ ժողովուրդք ահուդողի և տխրության մեջ ընկղմեց։ Մամեստիո ճամփաներն ու եկեղեցիներն ժողովուրդը կը խրոներ, հոն իրարու կը հարցնեին առողջության ձայն մը, հույս մը փընտրելու համար. հոս ծերք և կանայք փոքրիկ տղայքը ուրբ սեղաններու առջին ձգած՝ անոնց անմեղությունը կ'ուզեին միջնորդ առնուլ առ աստված։ Արքունի սրահներուն և գավիթներուն մեջ կը վխտային ամեն հասակի, ամեն կարգի զինվորականք, և այդ խրոխտ արևեն սևցած, ժանգոտած կերպարանքները, որ պատերազմական փողին ձայնին, նույնն է՝ մահվան ձայնին, քսանևհինգ տարիներ անխռով մնացեր էին, հիմա անձայն, անշշունջ իրարու կը մոտենային, առանց բարևելու կը նայեին, շրթունքնին կ'ամփոփեին և վերջը անսովոր արցունք մը ծածկելու համար առանձին տեղվանք կը փնտրեին։

Բոլոր հայ Կիլիկիո մեջ անխռով մարդ մը միայն ինք Թորոս թերևս մնացեր էր, որ մահվան անկողնին մեջ տարածված, իր վերջին կամքերը կը կատարեր. և ի՞նչ էին իր վերջին կամքերը։

Փոքրիկ տղա մը՝ Ռուբեն, վեց-յոթ տարու, շփոթած ամենուն արցունքներեն և տխրութենեն, կեցեր էր հորը մահճաց քով. տղուն պապ՝ Թոմաս իշխանը, տխուր, բայց հուսահատ տխրությամբ արձանի պես նորա քով կը կենար. անկողնին մյուս կողմը Գոհար, ծունկի վրա ծածուկ արցունքներե և անքուն գիշերներե աչքերուն փայլը կորուսած, մեյ մը հորը երեսը, մեյ մը երկինք կը նայեր հուսո նշույլ փնտրելով. քիչ մը անդին կեցած էին Ռուբեն և Լևոն՝ իր եղբորորդիքը լուռ և տխուր։ Իսկ իշխանաց և զորավարաց երևելիքը սենեկին չորս կողմը կազմած էին. շընչառության ձայն անգամ չէր լսվեր, լռությունն այնչափ սաստիկ էր։

Երբ ամենքը չորս կողմը շարված տեսավ Թորոս, աչքերը փայլ մը առին, հսկա իրանը անգամ մը շարժեցավ և հանդարտ ձայնով մը սկսավ խոսիլ.

«Ո՜վ դուք, սիրելիք իմ, բարեկամք և նիզակակիցք իմ, որ հոս զձեզ փափագեցա անգամ մ'ալ տեսնելու՝ հրաժարական ողջույնս տալու և վերջին հանձնարարությունքս ընելու համար... դուք, որ միշտ ձեր քաջությունը ցույց տվիք մինչև այսօր, պետք է որ այս հանդիսավոր վայրկենիս նաև քաջ և անխռով կենաք, տկարություն հեռի՜ մեզմե։ Մտիկ ըրեք ուրեմն այն մարդուն վերջի կամքերը, որուն երեսուն տարի բարեբախտություն շնորհեց աստված ձեր իշխանը լինելու։ Այո՜, աստվածային մեծ շնորհքն էր, և ես կը խոստովանիմ և միշտ կը հիշեմ այն օրը, որ տարագիր, անծանոթ, պանդուխտ և մոռացված այս ափունքը կ'ելնեի քանի մը ընկերներով և նաև չէի հավատար, թե իմ նախահարցս գործերեն ավելի մեծերը, անոնց իշխանութենեն ավելի ընդարձակը սահմաներ էր ինձի նախախնամության ձեռքը՝ իմ ազգիս զիս առաջնորդ և պատըսպարան ընելու համար, և այս գործիս մեջ ձեր քաջության ձեռնտվությունը ինձ տվավ... Հիմա որ ես կ'երթամ, առաջի աստուծո՝ ետքը ձեզի ավանդ կը հանձնեմ այս տկար տղան. թե որ տիրոջ կամքն է, այս ալ կը մեծնա, կը զորանա՝ հորը պես իր ազգին նեցուկ և առաջնորդ լինելու, մանավանդ թե ձեր կորովի բազուկները օգնական լինեն իրեն։ Ուրեմն սիրով եղեք, միաբան եղեք իրարու հետ, ազգին համար, ձեզի համար և այս անմեղ տղուն համար։ Մի մոռնաք, թե հայ խաչին դրոշակը այս լեռներուն վրա եղբայրության սիրով հաստատվեցավ, ատելություն, նախանձ, ամբարտավանություն առաջին օրը, որ զայն կործանեն, գերություն և թշվառություն կը հասնին հավասար ամեն մեր զավկներուն վրա, նաև ամենայն հայոց վրա, որ աշխարհիս հետին ծայրեն հոս կը դիմեն ազատության օդ շնչելու համար։ Մնաք բարյա՜վ, սիրելի նիզակակիցք իմ, աստված ձեզի օգնական լինի միշտ, ինչպես երբեմն որ մեկտեղ էինք»։

Շրջանը ավրվեցավ, հեկեկանաց ձայներ ոմանք ափերուն մեջ, ոմանք թաշկինակներու մեջ կը խղդեին, ամենեն քաջերը աչքերնին արցունքով լեցուն կուգային լռիկ՝ առնելու և համբուրելու այն աջը, որ այնչափ տարիներ առաջնորդեր էր իրենց պատերազմի և խաղաղության մեջ, և փառք ու մեծությամբ լցուցեր էր զիրենք։ Բայց Թորոս դեռ դռան կը նայեր և առանց հարցնելու մարդ կը փնտրեր։ Բարկեն չէր երևար, խեղճ ծերը թեպետ ութսունը անցած՝ իմանալուն պես ելեր էր Ամուտա բերդեն գալու համար, բայց դեռ չէր հասեր. Թոռնիկ հազիվ կրցավ երևալ և իր այլայլությունը ծածկելու համար փախուստ կուտար։

Ամենեն թշվառը ամենեն երջանիկն էր նույն միջոցին. Ռուբեն որդին, որ իր ապագա թշվառության չափն ալ չէր կրնար իմանալ, և չէր կրնար հասկնալ խեղճ որբ, թե այնպիսի հայր մը կորսնցնելով իշխանության ժառանգությունը սպառնալիք մ'էր իր անմեղ կենաց։

Ոչինչ պակաս թշվառ չէր նաև Գոհարին ապագան, որ չէր գիտեր թե ինչ ընդունելություն պատրաստած էին իր լամբրոնացիքը, որ հորը վախեն մինչև այն օրը լավ կը վարվեին իրեն հետ։ Բայց խեղճ կինը զինք մոռցեր էր այն միջոցին, միայն այնպիսի հորմե բաժնվիլը կը նկատեր։

Իսկ Թորոս այն վայրկենին, որ մահը դեմառդեմ տեսավ, հանդերձ-

յալ անմահութիւնն ալ տեսավ. հանձնեց նախախնամութեան իր ազգն ալ, իր երկու զավակներն ալ, իր հոգին ալ։

Կրոնական ամեն պարտավորութիւնները կատարեց, և երկրորդ օրը եկեղեցին իր տխուր երգերը կ'երգեր, իսկ ազգը կուլար այնպիսի իշխանի մը վրա, որ հայր եղեր էր ժողովրդյան, և նոքա ողբը տարիներ քաշեց, մինչև որ Լևոնը իր հոքեղբորը հաջորդելով՝ ազգին արցունքները սրբեց։

Թաղեցավ Թորոս համանուն հորեղբոր քով ի Դրազարկ, ուր Եվփիմեի աճյունը տարիներով հառաջ իրեն կ'սպասեր։

ՉԵՐՋ

ԵՐԿՈՒՆՔ Թ ԴԱՐՈՒ

Քեզ՝ որդյակ իմ սիրելի, ուրախություն իմ և մխիթարություն, որ երբեմն ի սուգ, ի լռություն և ի միայնություն մեր երկուսին կենաց տխրության, ճարդ ենդգ գրիչը ոգևորեցիր գրելու զԹորոս, ա՛ռ, ընդունեա ի նվեր, որ գիս հորդորեցիր՝ այս երկուսիս, ձա՛յն սրտի հայրենի հառաչանաց Սերենցիս։

1879, Հունիս 1. Տփղիս

Եւ նշան մեծ երևեցաւ յերկին, ինքն մի... էր յոի և ճչէր յերկենիչ և բազում վշտաց մեռն էր ի ծնանել... Եւ ծնաւ կենն արու, որ հանգիծեալ է Հովուել զհեթանոսս գաւազանաւ երկաթեաւ։

Յայտնութիւն

ԳԼՈՒԽ Ա.

ՍԱՍՈՒՆ

Հայոց 8. թվականին և Քրիստոսի թվական 851-ին սասունի ամեն պատել էր Տարոնը գավառը, դաշտը ձյունը ծածկել հերմկցուցել էր բոլորովին, իսկ Սասնո լեռը ձյան և սառույցի զանգված մ'էր ահարկու Մվ կ'ըսեր թե այդ բարձրության մեջ, այդ սառնամանաց մեջ կյանք և մարդկություն կը ջնջեին։

Վարը դաշտը՝ Մուշ քաղքին մեջ մահ և լռություն կը տիրեին, և Տորոսի այդ սարը լի էր կենաք և շարժմամբ։ Թաքի օդին մեջ շրջմոլիկ կը հոլովեր, մարդ ձյուներուն մեջ ի՛նկեր, կ'իջներ, կը սողար, կը սահեր և այնպիսի եղանակին այնպիսի շարժմունք ըներ այն լեռնաբնակ

ժողովուրդը միայն կրնար, ժողովուրդը՝ որ ցրտին սաստկության և ամառվան տաքության դեմ միևնույն բուրդն զգեստը միայն ուներ և այծի մորթե կոշկաձև օդ ոտից. դարի և մանավանդ թե կորյակ իրեն հացը կը մատակարարեին, վասնզի այդ բարձրությունն և ժայռերուն հողի սակավությունն այն միայն կուտար իրենց աշխատության և սաստիկ տառապանաց։ Իրենց բնակությունները հեռի էին ի միմյանց, և այդ պատճառավ շատ անգամ իրարու հազիվ թե կ'իմանային, և լեզու թեպետ հայ, բայց օտարացյալ կը համարվեր ի շրջակայից, և թարգմանի կարոտ իմանալի լինելու համար։ Եվ այդ սարերու բարձրության մեջ ժողովուրդը անբաժանելի ուներ յուր նիզակը, որ յուր զովությունն էր ընդդեմ գազանաց և ընդդեմ թշնամյաց և ի պաշտպանություն յուր իշխանաց, որ ի Մուշ կը նստեին և որոց ակնարկության անմռունչ կը հնազանդեր տիրասիրությամբ։

Բայց ի՞նչ էր պատճառը, որ այդ մրրկային ժամանակին բոլոր Խութ լեռը կը շարժեր։ Մութը արդեն սկսեր էր իջնել, և բոլոր սասունցիք կը դիմեին լեռան հյուսիսային կողմը, որ դեպի դաշտ կ'իջներ։ Այնտեղ եկեղեցվո մը առաջ կանգնած էին երիտասարդ տղայք և տխուր դաշտին կը նայեին. շատին աչքերը արտասուք կը փայլեր, և ցուրտին հետևանք միայն չէր այդ արտասուքը. դաշտեցիք էին այդ երիտասարդքը, շղթայից և գերությանց ազատյալ լեռը ապաստաններ էին, ոմանք զենք ունեին, իսկ ոմանք անզեն էին։

Նույն միջոցին տերտերը եկեղեցվո դռնեն կ'ելներ, ուրիշ քահանայի մը ընկերակցությամբ և մեծ ձայնով կ'ըսեր յուր լեռնցոց։

— Տղա՛յք, շո՛ւտ, հյուրանոցը կրակ վառեցեք, այդ եղբարց ուտելիք բերե՛ք. չե՞ք տեսներ, որ դոքա դաշտեցի են, այս մեր ցրտին չեն դիմանար. մենք էլ ձեր ետևեն կուգանք։

Իսկ մյուս քահանան լուռ, անխոս կանգնեցավ, դեպի դաշտն ակնարկ մը ձգեց, ուր բուքի ամպեն բան մը չէր տեսնվեր, վերջը դառնալով երիտասարդներուն, որ գլխիկոր և հուսահատ՝ աչքերուն ծայրով իրեն կը նայեին։

— Մե՜ծ է աստված, մեծ է Լուսավորչա բարեխոսությունը, ո՜վ տղայք,— ըսավ,— ինչ կը հուսահատիք, այսօրվան հաղթողը վաղվան գերին կրնա լինիլ, քաջ եղի՛ք, հանցանքը մեր իշխաններուն է, որ անհավատին խոսքին և երդման կը վստահանան, և հիմարաբար կ'երթան նոցա ճանկը կը մտնեն և ժողովուրդն էլ այդ անզգամներուն ավար կ'ընեն։ Բայց աստված մեծ է, մի՛ հուսահատիք։

Եվ կես մը քայլելով, կես մը վազելով ամենքը կը հետևեին լեռնցի տերտերին, որ առջևեն կ'երթար և կ'առաջնորդեր հյուրանոցը։

Այս շենք մ'էր մասամբ հողի մեջ թաղյալ և մասամբ հողեն դուրս, բավական ընդարձակությամբ, որ դուռ մը միայն ուներ և մեկ կողմը կրակարանը, ուր արդեն քանի մը ահագին կոճղ տաքության լույս սկսեր էին ծավալել իրենց մոտը, որ մեր կես սառած երիտասարդաց մխիթարություն էր։

«Հյուրասեր, օտարընկալ և պատվադիր» սասունցիք իրենց աղքատիկ գարվո և կորեկի հացը, տաք թանապուրը, չոր և աղի պանիրն ու լեռան մեղրը առատաբար դաշտեցի եղբարց առջև դրին, լցուցին և իրենք էլ մեկ-մեկ պատառ առնելով խեղճերուն քաջալեր կը լիներին, որ ուտեն զորանան. «Ո՞վ գիտե, եղբա՜ր,— կ'ըսեին,— կարելի է վաղիվ աշխատիլ պետք լինի, և դուք զորության պետք ունիք։ Կերա՛ք, եղբարք, համարեցեք, թե բուն ձեր տանն եք»։

— Այո,— կ'ըսեր երիտասարդ դաշտեցի մը դառն ծիծաղով,— բուն մեր տունն հիմա բաց երկնքին տակն է, իսկ մեր ընտանիքը, ո՜ գիտե Արաբիո ո՜ր կողմն կը գտնվին, եթե ո՜ղջ են։

— Եթե ո՜ղջ են,— կրկնեցին քանի մը երիտասարդք, և քանի մը ձեռք բռնցի աչք կը սրբեին և ոմանք հացին պատառը արտասվաց աղով կը թանային։

Էլ ժամ էր, վասնզի այդ վայրկենին ոչ մեկուն քով ախորժակ չի մնաց բերանը հացի պատառ դնելու, և հյուրընկալ քահանան կանգնեցավ «Ձկերոլա աստված օրհնեսցէ» ըսավ ու խաչակնքեց. և աչքը դեպի սրահին խորության դարձուց և մութին մեջ զննեց տեսավ բազմություն աշտեից, որ իրենց փայլեն կը նշմարվեին, և բազմությունն այնչափ սկսեր էր շատնալ, որ մարդկային շունչի ամպ կը ձևացներ։

— Գյուղապետ եղբարք, մոտ եկե՛ք,— ըսավ տերտերը,— ի՞նչ մթության մեջ կը ծածկվիք, երևալու օր է, Սուրբ Կարապետ, Տարոն, նախարարք, իշխանք, քահանայք և ժողովուրդք մեր Սասնո լեռն ի վեր կը նային. ահա մեծ վանքե եկած կոնդակը,— և ձեռը ձգեց՝ ցցուն ժողովրդյան կրկին կնիքներով մագաղաթ մը,— ես այս գիրը, եթե կարենամ էլ կարդալ, անօգուտ է, և դուք լեզուն չեք իմանար. բայց իմաստը ամենքս գիտենք, այսօրվան բան չէ, հին պատմություն է. հարյուր տարի և ավելի է, որ այդ նզովյալ արաբը մեր դաշտերը կ'իջնա, կողոպ. եթե ս. Կարապետին օրհնենք չլիներ, եթե Լուսավորչա զորություն չլիներ, այդ դաշտի երես մեկ քրիստոնյա չէր մնալ, հայուն անուն ոչնչացել էր Տարոնո մեջեն։ Բայց մե՜ծ է զորություն Քրիստոսի, այսօր արաբ կուգա. կը ջարդե, գերի կը տանի հայը, վաղը հայը կ'իջնե արաբին վրա, ամենքը կը ջարդե, կիրճերը կ'առնու, մեկ հատ չի փախցներ, բայց ի՞նչ օգուտ, երկու տարի չի տևեր, այդ նզով ազգը դարձյալ կուգա և ավելի զորությամբ և անհա-

մար. հայը պետք է համբերի մինչև որ գա՝ դանակը ոսկին կտրի՝ էլ համբերելու ճարը հատնի, այն ատեն սրբած դաղը ապրած կը գտնան, գեղն ու գաշտը կը գոռան. հայը հանկարծ կանգնեցավ, մեռելն էր հարություն առավ, անհավատը գաշտը ցիակով կը պարարտացնեն Հարյուր տարի ըսի, հարյուր հիսուն էլ կա, որ մենք այդ խաղը կը խաղանք, ոչ նոքա ձանձրացան զմեզ գերելե և ջարդելե, ոչ մենք զանոնք վտարելի ու անհետ ընելե Բայց աստուծո վամքը պետք է գտնարի, մինչև որ ս. Կարապետ յուր գործությունը ցցնե և մեզ կարողություն տա գոտորվին քնջելու այս անօրեն ժողովուրդը։ Գուք գիտեք, երբա՛ղք և տրգյակք, թե մեր Բագարատ իշխանը եկավ գնաց այդ անհավատ ազգին, որ գարեվամ ինքզինքը կը ցցնե, որ երդում կ'ըներ իր մարգարեին վրա, իր օրենքին վրա, որ նորա վնաս ամենևին չհասցնե, և գիտեք ի՞նչ եղավ. որովհետև մարգարեն առատ էր, օրենքն անօրենություն էր, ճշմարտությունին դրժեց. Բագարատը, գավիրները, ընտանիք, ամենքը շղթայեց, զրկեց Ներսեսատան, և ինք նստեր նորա Մշու պարարան, ուտած մարմինը կը տաքցնե, վասավորդա հավատքը օրը հինգ անգամ կը հայհոյե, և ա՛ղդ ս. Կարապետի աչից առաջ՝ քթին տակ. ասված այդպիսի գոռն չի մնացեր, գորա վրեժը կը լուծե։ Մինչև ե՞րբ ուրեմն քնենք, սառնցին ե՞րբ ցրտեն թմրած է, որ հիմա թմրի. եթե ապուռն ճաստագրի այդ ամենա ապը կը զորացնի՝ ցորան կը հայտն գորությունն պետք է գինի Գրիգորիսա Եղբա՛ր, խորհեցեք և ի՞նչ ընելիքնիդ որոշեցեք, վասնզի ս. Կարապետ վառոնդի մեջ է։

Քահանային այս երկար քարոզին վերջ մար մեռելոտն մը դարավ հյուսական պահին մեջ, ամեն մարդ յուր ընկերոջ հետ կը խոսեր եղածին և ընելիքին վրա, բայց ոչ ոք մեծ ձայն մը չէր ուզեր, միրն թե ամեն ոք կարծիք ուներ, բայց ոչ ոք քաջությունն գալն հանդարտակ խոսելու։

Վերջապես երիտասարդ մը եկավ ուժով ձայն մը ձգեց. «Թե ամենքդ կը խոսիք և ոչ մեկդ կը խոսիք. ո՞ւր Հովնան գյուղապետը, նա ինչո՞ւ չի խոսիր, մի՞թե նա կարծիք չունի, թե նա կարծիք չունի՝ ի՞նչ ենք կեցել. երթանք ամեն մարդ յուր տունը»։

— Տղա՛, գու լուռ կա՛ց,— քսավ ծեր մը աստանդով,— խոսողը քի՞զ ընկավ։

— Մկր Եղբայր, մի՛ սատկեր, տղան լավ խոսեցավ։

— Ո՞ւր է Հովնան, Հովնա՛ն, Հովնա՛ն,— գոչեցին քառասուն ձայն միաբան. և ահա սրահին մեկ կողմեն գորա նկավ միջահասակ մարդ մը, որ երեսին գույնով տարբերություն չուներ ոչ ոքեն. աչքը, քամին, տաքն ու ցուրտը միշեր էին այդ երեսին վրա. բայց աղքատ խոր աչքեր ուներ, որ ներկու փայլուն գլաք էին երկաթյա և ֆոսի կ'անցնեին, գորա նեղասանին

դիմացին, գորեն խորը իրեն թե կը տանեին նոքա գլուխ, քառասունի դեմք, ջղային, մատաղ կազմվածք, քառասունի չափ տարիք, ահա՛ մարդը, որ Հովնան կը կոչվեր։

Հովնան ոչ միայն սասունցվոց անբաժանելի աշտեն ձեռքն ուներ, այլ մեջքն երկայրի սուր մը գոտվույն մեջ կ'երևեր։

— Խոսե՛, Հովնան, դո՛ւ խոսե,— բաավ ժողովուրդը միաբերան, և երբ ամենքը լռեցին, այսպես խոսեցավ Հովնան.

— Մտիկ ըրեք ինձ, ով խոլթի ժողովուրդ, եթե դուք կ'ուզեք ս. Կարապետ փրկել այդ նզով արարածներն, եթե դուք կ'ուզեք Բագարատա վրեժ հանել, այս ս. Սարգսի շաբաթը մի՛ կորսնցնեք, անհոգ մի՛ նստիք. այս բոլորը՝ ո՞ւ գիտեն թերևս վերջինն է այս ձմռան, քանի որ այդ տարի դժոխքի սատանաները սատան, թմրած, ընդարմացած նստել են մեր խեղճ քաղաքացվոց տանները, քանի որ վասարանին չեն կրնար հետանալ անօրենները, ժամ է նոցա վրա հարձակիլ։ փառք աստուծո, մենք լավ անդամներ ունինք, որ ցրտեն ալ կը դիմանան, տարան ալ. խակ թե հարցնեք, թե ե՞րբ պետք է հարձակիլ քաղքին վրա՝ ես կ'ըսեմ, թե հիմա՝ այս բոլորին, այս ձմռանին. սակայն մինչև Մոզ կը հասանինք շատ ժամանակ մեջ և մենք քաղաք կը մտնենք, երբ սովալակներդ թմրած՝ ատամները քանին են ընկղմած. խակ երբ քաղաք մտանենք, ամեն մարդ խրդմբմբատանքին հարցնե, թե ի՞նչ պետք է ըներ Ահա՝ ես վերջացուցի։

Կռվություն մը տիրեց սա խոսքերուն վրա, և ոչ ոք ձայն չի հանեց, միայն բարի տեղերը այն ատեն պարարտ հանարեց բանը։

— Հովնան եղբայր, դուս տեղեկություն ունի՞ս այդ մարդկանց տվորության վրա, նոցա գրությանն վրա, ոչ այդպես հանարձակ կը խոսիս։

— Ինչպես չունիմ. ես երկու ժամ չի կաս, որ տեսա եմ մեր, այն օրեն, որ Բագարատ իշխանը անօրինաց գերի գնաց, ես հանգստություն չունիմ. ամեն կողմ շրջեցա, ամեն տեղ գրուցեցի, թե հնարք կա՞ր գնա ազատելու. քանի-երեսուն հոգի լավ հայ՝ լավ քրիստոնյա հետս առած ոգի որ շարունակ նոցա շավիղին հետևեցա. բայց տեսա ճար չկա, ամենքս անօգուտ պիտի երթանք, և մեր կորդեն տղայք փոսի գրեն պիտի երթանք. դարձա իմ ճանապարհս, եկա ս. Առաքյալ եկա գրեցուցու հանարեց, թե ի՞նչ կ'ընեն անօրենները, տեսա որ անհոգ և անվրեպ կը նստին, չի՞ որ Տարոն գնալու կ'ընեն, չի՞ որ կենդանի ոչ ոք չի կաս նեղեն իմ ձեռքեն ալ առաու հինգ հարյուր մարդ լիներ, մեկ շնչավոր այդ ավազակներեն չէր ազատեր։

— Տե՛ր, տղա՛ք, ինչ կենցեր ենք... եղբա՛ր ենք, եղբա՛ր ենք, ուր որ Հովնան մեզ կը տանի, երթա՛նք,— գոռաց մեկը։

— Երթա՞նք...— կըսեին հարյուր ձայն մեկտեղ, և ժխոր մը տիրեց այդ ամբոխին մեջ, որուն մեկ մասը ներս չի կարենալով մտնել՝ դռնեն դուրս մնացել էր։

ԳԼՈՒԽ Ը

ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Ձյունը յուր մոլեկան հեղեղ կը շարունակեր, քամին զանի կը տարուբերեր, և մարդոց շատ դյուրին չէր այդպիսի ժամանակին տնե դուրս ելնել. ուստի, երբ կեսգիշերն անցավ, և հազարի չափ նիզակավորք ժողովեցան Սարասեպ գյուղին դիմաց, որ դեպի Մուշ կը նայեր, էլ չի համբերեց Հովնան և առջևեն սկսավ սահիլ փայտյա ոտնամաններով, որ այդ լեռան բնակչաց հատուկ էր ի վաղ ժամանակաց հետե, որով չեն խրիր ձյունին մեջ[1]։ Ինք լավ գիտել էր, թե քամին իրենց ետևեն կը փչեր, ուստի այս էլ բավական դյուրություն մ'էր այդ սոսկալի ճամփորդության՝ մանավանդ, երբ գրեթե ապահովություն կար ի չիք դարձնելու բոլոր այդ իսմայելյան բանակը՝ ամեն դժվարություն իրեն համար ուրախություն էր, և բոլոր Սասուն գիտեր, թե այդ մարդը հոգնել, վհատել չէր գիտեր, վտանգ զինքն երբեք ահաբեկել չէր, ուստի ինք կը սահեր, և ետևեն ամենքը կը քալեին. և վերջը, ըստ հին սովորության, այս ձյունի վրայի ճամփորդության մեջ կռունկներու պես առջինները քիչ-քիչ ետ կը մնային, վերջինները առաջ կ'անցնեին։ Տխուր լուսին առանց երևալու աղոտ լույս մը կը ձգեր երբեմն սպիտակ ձյունին վրա և ամեն սև նյութն տեսանելի կ'ըներ՝ թեպետ բան մը չի կար, որ ճերմկած չլիներ։ Մեր խումբը լրիկ կը շարունակեր իր ճամփան, ժամերն կ'անցնեին, գիշերը կը կարճեր, արշալույսը հեռու չէր, երբ հանկարծ մեր խմբին պարագլուխը, որ երբեք չեր նահանջյալ, կանգ առավ, և ամեն մարդ, որ նորա ետին էր, ինքնիրեն կը հարցներ, թե ի՞նչ արգելք կրնա լինիլ։

Հովնան յուր ճամփուն վրա տեսավ անսովոր ձյունադեզ բարձրություն մը, առջի մտածությունը նիզակի հարված մը տալ եղավ, բայց շուտ մը խելաբերեց և նիզակին բունը երբ ձյունի դեզին մեջ մխեց, դիմադրություն մը զգաց, և մարդկանց աղաղակի ձայն, ձիոց փռնչել, զինուց ցառաչյուն և ձյան դեզին ցիրուցան փլչիլ հայտնի եղավ։ Ձյան տակեն չորս ձի և չորս մարդ դուրս եկան։

— Մարդի՞կ, դուք ո՞վ եք, բարեկա՞մ թե թշնամի,— հարցուց Հովնան ուժով ձայնով մը։

Եվ այս խոսքին բարձրաձայն ծիծաղով պատասխանեց մարդ մը, որ յուր ընկերներին բարձր էր հասակավ։

— Եթե բարեկամ չլինեինք, մի՞թե ձեր ճամփուն վրա՝ թեպետ եղանակը այսչափ զվարճալի և այս վարդենյաց պարտեզս այսչափ գեղեցիկ՝ կը հուսա՞ք, թե այս ձյունե տաղավարիս տակ բնակեինք, որ զձեզ գիմավորենք. հա՜, հա՜, հա՜, հա՜։

— Կատակի ժամանակ չէ,— ըսավ Հովնան,— ի՞նչ բան ունիք դուք հոս։

— Ես ալ ձեզ նույն իրավունքով կը հարցնեմ, թե դուք ի՞նչ բան ունիք հոս, մանավանդ ես իրավունք մը ավելի ունիմ ձեզմե համառ պահանջելու, որ մեր տունը փլուցիք և թերևս մեզ մահվանե էլ ազատեցիք. վասնզի ո՜ գիտե, թե այս ձյունը ո՞րչափ պիտի տևե... Բայց դուք, բարեկամք, բավական բազմություն եք, ո՞ւր այսպես կ'երթաք, այս ձյունիս, բուքիս, հարսնիքի, ուրախության ըսեմ, սխալ չէ, վասնզի քաջ սասնցիք իրենց սիրական զենքին չեն բաժնվիր ո՞ւրիցն առիթի մեջ։

— Այո՜, հարսնիքի կերթանք, Գուրգեն իշխան,— ըսավ Հովնան լավ մը զննելեն վերջ բարձրահասակ մարդուն դեմքը,— և ժամանակ չի կորցնելու և մեր զվարճության մասնակից լինելու համար հրամայեցեք մեկտեղ երթալ։

— Ո՞ւր է ձեր արշավանքը, եղբայր,— ըսավ իշխանը լրջաբար և կամաց ձայնով։

— Մուշ։

— Մո՞տ ենք։

— Քանի մը քայլ մնաց, և ես լուսեն կը վախեմ, որ Իսմայիլի զավկընները չիմանան։

— Ես հազիվ թե զքեզ կը տեսնեմ, որ առջևս կը քայլես, այդ անօրենները ինչպես զքեզ կրնան տեսնել։

Իսկ Հովնան է՛լ պատասխան չի տվավ, այլ սկսավ քայլերը երագել, վասնզի երևակայեց, թե Գուրգեն բռնված լինելով բուքի և այդ վիճակի մեջ ուրիշ ճար չի գտնելով ձիերը իրարու քով շարած՝ վրանին ծածկոցով ծածկելով տաղավար մը շինած էին ձյունին տակ, որ ձիոց և իրենց շնչով զիրենք անվնաս պահած էին մինչև նույն վայրկյան և ըստ բավականին ալ ուրախ։ Իսկ հիմա ազատելով այն բանտեն բնական էր, թե

[1] «Իսկ վասն ձեանն անկայուն զօրութեան որ այն ինչ յամպոյն ի վայր զեղեալ լինին, հնարաւորեալ իւրեանց փայտս իբրև զանուրս չուանօք պարունակեալ շուրջ զոտամբք՝ դիւրաւ ընթանան 'ի վերայ ձեան իբրև ընդ ցամաք երկիր»։
Թովմայ Արծրունի

հետևեին այն խումբին, որ կ'երթար հայ ազգին և կրոնին թշնամյաց դեմ։

Վերջապես Հովնանու աչքերը նշմարեցին Մշո բարձրաբերձ եկեղեցվո գմբեթը, որ քաղքին մեջ շինած էր Բագարատ իշխանը, ուստի կանգնեցավ, և երբ զորքը շուրջ բոլորեցան, երեք խումբի բաժնեց զանոնք. մեկ մասը, որուն ինք առաջնորդ կեցավ՝ քաղքին հարավային կողմեն պիտի մտներ, մեկը արևելյան կողմը պիտի շրջեր, իսկ մյուսը՝ դեպ արևմտյան հյուսիս։ Եվ այսպես երեք խումբերն ալ հարձակեցան, մտան քաղաք։ Երբ սասնցվոց աղաղակը գոռաց քաղքին մեջ, երբ արաբք հիմարացան անխուսափելի վտանգը հասած տեսնելով և իրենց թշվառության ձայնը ձգեցին, երբ գերիները, որ նոցա խիստ ծառայության դատապարտված էին ջուր և փայտ կրելու համար, ազատության և ուրախության ձայն բարձրացուցին, Յուսուֆ ոստիկանը, որդի Ապուսեթի, որ Բագրարատա պալատին մեջ երջանկաբար ցուրտեն լավ պատսպարյալ փետրահարդար անկողնուց և բարձից տաքուկ հանգստություն կը վայելեր, այս խառնաշփոթ ժխորեն ընդոստուցյալ՝ շվարեցավ, մնաց. կը հարցներ կ'ուզեր իմանալ, թե ի՛նչ էր պատճառը։ Երբ իրեն իմացուցին, թե «գազանաբարո և արյունարբու» լեռնցիք քաղաքը պաշարեր ներս են մտեր, շփոթութենեն թողուց պալատը, փախավ, վազեց մտավ Փրկչի եկեղեցին և մինչև գմբեթին մեջ ելավ և, տեսնելով, թե այդ բարձրությամբ էլ ապահովություն չի կար յուր անձին՝ կը սարսռեր, կը դողար, երբ սասնցի խումբը պաշարեց զեկեղեցին և, մտնելով ոմանք գմբեթին մեջ և մերձենալով՝ մեկը նիզակով կռնկեն զարկավ և թևին տակեն թոքերն հանելով սատակեց։

Իսկ Գուրգեն իշխան նույն միջոցին յուր ազգականները՝ Արծրունյաց պատանդները գտնելով, զանոնք բանտեն կը հաներ և ուրախության ու զվարճության օր մը այդ տխուր օրերուն մեջ կը կատարեին սասունցիք թշնամյաց դիակաց և ճապաղյաց մեջ և նոցա ավարը մեջերնին կը բաժնեին։ Ուրախություն կը տիրեր, և խեղճ խութեցին արաբեն դիզած ավարը մեկդի՝ Բագարատ իշխանին գինվով ոչ միայն տաքցել, այլև թեթևել էր։ Երգերու ձայներ ամեն տեղ կը լցնեին, մինչ փոքրիկ խումբ մը մարդկան Հովնանու ազդեցությամբ և վրակեցությամբ Փրկչի եկեղեցին կը մաքրեին բարբարոսաց գարշութենեն, դիակներեն և արյունեն։ Եվ երկրորդ առավոտուն եկեղեցվույն գմբեթը կը բարձրանային փոխանակ Յուսուֆի արաբացի մաղթանաց, խութեցվոց սաղմոսերգությունք ի փառս աստվածույն տվողին հաղթության։

1 «Եւ գիտեն զՍաղմոսն զհին թարգմանեալն վարդապետացն Հայոց «զոր հանապազ 'ի բերան ունին»։
Թ. Արծրունի

Նույն օրն արևը վճիտ երկնից վրա կը փայլեր, և ձյան անդրադարձություն աչքերը կը շլացներ սանասունայք՝ բոլոր Մուշ քաղաքը ի խուլթ կը կրեին. Հովնան ձեռքերը ծալած այս տեսարանին կը նայեր, և հանկարծ այդ արթուն մարդը անձայն իրեն մոտեցող մը իմանալով գլուխը ետին դարձուց։

— Հովնան եղբայր,— ըսավ Գուրգեն,— դու անգո՞րծ կը կենաս, երբ աշխարհք կ'աշխատի։

— Աստված զիս այդ աշխատութենեն պահե, իշխան,— պատասխանեց Հովնան,— այդ բոլորն, որ կը կրեն, հայու ապրանք է. բարբարոսները ի՞նչ կը բերեն, երբ Հայաստան կուգան.— իրենց սև երեսը, իրենց գարշ կրոնքին քարոզությունն ու խաբեությունը և իրենց սուրը։ Բոլոր այդ ավարը Վասպուրականի և Տարոնի հայուն ստացվածքն է. սանասունայք իրավունք ունին իրենց սեփականելու, որովհետև տեր չէ մնացել. բայց ես, եթե կարելի լիներ, այդ ամենը այս խեղճ ազատյալ գերյաց կը բաժնեի, որոնք ամեն բան կորուսած են և, ո՞ դիտե, ո՞ւր և որո՞նց ստացվածքը եղել են իրենց կյանքն ու զավկները։

Եվ այս խոսքերը զրուցելուն՝ գլուխը անդին կը դարձներ կորովի մարդը, ծածկելու համար երկու կաթիլ արտասուք, որ յուր աչաց մեջ փայլեցան, բայց հոն մնացին դամվեցան, վասնզի իշխանություն ուներ նայիր անձին մինչև յուր արտասվաց վրա։ Ուստի Գուրգեն այս միջոցիս սկսավ զննել այդ անսովոր մարդը, որ հայ ժողովրդականի տիպն էր. դիմքին վրա հաստատամտություն և կորով հայտնի կ'երևեին. և որ տեսնելով, թե դիտողության նպատակ է դիմացինին, յուր սուր աչքերը իշխանին վրա ձգեց շեշտակի և մեկ հայեցվածքով տեսավ երիտասարդություն, վստահություն մինչև հանդգնություն և անհոգություն յուր քաջության և զորության։ Պարզ երեսին վրա փոքրիկ կնճիռ մը նաև չէր երևեր, երկու լուսալիր, զվարթ և մեծ սև-սև աչքեր ուրախության փայլ կը սփռեին՝ ուր որ նայեին. ամեն անդամները համեմատ էին և վայելուչ. հագուստը թեպետ պարզ՝ ուներ իր պերճությունը, զենքերը և սպառազինությունը թեպետ երկաթյա, բայց ունեին իրենց զարդերն ոսկվո և արծաթի. ձին, որ ծառա մը բռնած կ'սպասեր քիչ մը հեռու, Հայաստանի նժույգ մ'էր անխառն և հարազատ, որ յուր տիրոջմեն աչքը չէր զատեր և փոքրիկ խնչյունեներով կ'իմացներ յուր ներկայությունը։ Իսկ իշխանը դառնալով՝ «հիմա, Յուլակ, հիմա» կ'ըսեր, և նա կը հանդարտեր։

— Երթալու միտք ունի՞ս, Գուրգեն իշխան,— հարցուց Հովնան յուր անտարբեր կերպով։

— Այո՛,— Հովնան եղբայր,— պատասխանեց Գուրգեն,— բայց մեր

ազգի խոսնակությունը այնչափ կարևոր է, որ չեմ կրնար առանց քանի մը հարցմունք ընելու քեզմե բաժնվիլ։— Հիմա դուք սասնեցիքդ այդ քաջության գործը կատարեցիք, բայց վաղը ի՞նչ պիտի ընեք, երբ ամբարապետը այդ Յուսուֆի տեղ Յաղուպը, Իսրահիմը, Աբդլան հուլարկե և ձեր խույթը 150 000 զորք պաշարեն։ Ես այդ մտածությունն ունիմ երկվընե ի վեր և կրվախեմ, որ այս ուրախությունը տրտմության դառնա, և այդ ավարը տարին չի լրացած Արաբիո ճամփան բռնե։

— Շատ կարելի է, որովհետև մեր հայը մարդ չէ։

— Է՜հ, ես ձանձրացեր եմ լսելեն, թե «հայը անմիաբան է», «հայը ազգատյաց է», «հայը օտարասեր է», «հայը անպիտան է», «հայը վախկոտ է» և այլ այսպիսի սերտյալ խոսքեր, իբրև թե նոքա, որ այս խոսքերը կը զրուցեին, հայ և հայու որդի չլինեին. իբրև թե ուրիշ ամեն ազգք՝ հույն, պարսիկ, ասորի, արաբ նաև միաբան և միահոգի լինեին. աշխարհիս երեսը ինչպես մարդիկ դեմքով տարբեր են, նույնպես շահերով, դիրքով, բնավորությամբ տարբեր են. հիմար նա՜ է, որ կ՝ուզե անկարելին կարելի ընել։ Ես գործադրելու բուն բանը քեզ կը հարցնեմ, որ ոչ միայն գործի մարդ ես, այլև կը տեսնեմ, թե շատ խելոք մարդ ես։ Հայը եթե մարդ լիներ, ի՞նչ պետք էր ընել. այն զրուցե՛։

— Հարցմունքը լավ է, պատասխանն ալ պատրաստ է. բայց քեզի պես պատվական և քաջ երիտասարդ իշխանի մը կրնա սիրտը վիրավորել և զայրացնել, անոր համար չեմ ուզեր զրուցել։

— Խնդրեմ, և հայության, և քրիստոնեության սիրույն համար պարտք կը ձգեմ զրուցել։

— Ուրեմն զրուցեմ։ Ո՞ր որ հայ կա՝ պետք է միաբանին և առանց նախարարաց իրենց գլխուն ճարը տեսնեն, ան ատեն թերևս հայ ազգը իր փրկությունն գտնե։

Այս անկարծելի խոսքին վրա զարմացած մնաց իշխանը, և կարմրություն մը ելավ երեսին, բայց դարձյալ առանց կիրք հայտնելու ըսավ.

— Քու այդ ատիճանի ատելությանը արժանանալու համար ի՞նչ հանցանք ըրած են նախարարյանք. ես գիտեմ, թե մենք և մեր նախահարքը շատ պակասություն ունեցեր են, հիմար և անպիտան մարդիկ նախարարական ցեղերու մեջ շատ գտնվեր են, բայց ինչ մեծ մարդիկ ալ նոցա քով կան, որ էն մեծ ազգաց պատմությանց փառք և պատիվ կրնային համարվիլ։ Եվ եթե զանոնք վտարել օգտակար և փրկավետ լիներ իմ ազգին, ասված ի՞նձ վկա, որ հավանություն կուտայի այդ արյունախանձ վճռին և հանձն կ՝առնեի. բայց շատ կը կասկածիմ. թե այդ իշխանազանց կոտորածեն վերջ բնաջինջ ընողքն նոցա տեղ կանգնին և նոցանե կավը չի գործեն... Քու փափագդ երբեմն կատարվեցավ Նախիջևան և այդ տաճկին, որ դու այսօր նիզակահար կորուսիր, ո՞ գիտե պարպրն էր թերևս Կաշմ կամ Աբդլա, որ հայոց նախարարքն ու քաջերը այրրեց. այն Գանդիսին, ա՜յն միայն կը պակսեր, որ տաճկաց խարույկին հայ ձեռքեր կրակը արծարծեին։ Բայց ես անխելքություն մ՝ըրի և չի համբերեցի, պետք էր քու պատճառներդ մտիկ ընեի, թե ինչո՞ւ համար իշխանաց և ազնվականաց այսչափ թշնամի եղած ես դու, որ շատ անգամ նոցա գործին և ծառայության մեջ գտնվեր ես, նոցա հացը կերեր ես և նոցա տանը բնակեր ես։ Եվ ես գիտեմ, թե Բագարատ զքեզ անչափ կը սիրեր։

— Նախ պետք է գիտնաս, իշխանդ, թե ես օրերով տունս ոտք դրած չունեի, որպեսզի, եթե կարելի էր, Բագարատ ազատեի. պետք է գիտնաս նաև, թե երբ ամենքը խորհուրդ կուտային իշխանին ոստիկանին կոչին երթալ և նորա բարկությունը չի գրգռել, ես միայն էի, որ խնդրեցի, աղաչեցի կրկին և կրկին անգամ չերթալ և զգուշանալ այդ ուխտադրուժ մարդկանեն, որ պարծանք և պատիվ և առաքինություն անձանց կը համարին ոչ միայն քրիստոնեից արյունը թափել, զնա գերության մատնել, նորա ստացվածքը հափշտակել, այլ նաև խաբեությամբ, ստերդումությամբ զնա դավաճանել. և մտիկ չի դրավ։ Ես խոսքերը ոչ իմ հավատարմությունս հաստատելու համար էր և ոչ իմ հեռատեսությունս քեզ իմացնելու, այլ անոր համար կ՝ըսեմ, թե ես թշնամության հոգի չունիմ ոչ իշխանաց, ոչ ազնվականաց և ոչ ազատաց դեմ, ես իմ լեռներուս մեջ, իմ գյուղիս մեջ հանգիստ և երջանիկ ապրած եմ միշտ և կ՝ապրեի, եթե Բագարատ զիս չի փնտրեր և իբրև թե բռնի զիս իրեն չի կապեր և բռնի ինձ չուսուցաներ, թե՝ հայ ժողովրդյան թշվառության միակ պատճառ այդ ազնվական դասն է։ Այո՜, երկայն դիտողությամբ տասներկու տարի է ականատես՝ այդ համոզման մեջ հաստատվեցա. վասնզի երբ ազգի մը գլուխ կ՝անցնին մարդ մը, դաս մը մարդիկ, և ամենեն պատիվ, փառք, հարգանք, հարկ կ՝ընդունեին, փոխարեն պարտականություն մը կա զանի ո՛չ միայն պաշտպանելու, այլև կառավարելու։ Այդ պարտքը մի՞թե կատարեր է նախարարությունը՝ իշխանաց, ազատաց, ազնվականաց խումբը... Ես պատմեմ քեզի, թե ինչպե՛ս կատարեր է և սրտիս ցավով պատմեմ, ո՜վ Գուրգեն։ Օր մը զհայոց թագավորը դավաճանությամբ պարսից թագավորը սպաննել տվեր է, նախարարները առանց դիմադրության դավաճանին հնազանդեր են։ Թագավորին մեկ տղան կոտորածեն ազատել, մեծցել, ետարին օգնությամբ եկել թշնամին վռնդել, երկիրը և ժողովուրդը պահել է՝ ազգին երկրորդ Լուսավորիչն է եղել. նախարարները, այդ մարդը, որ իրենցմե զզվելով, թողել աթոռը գնացել է՝ աղաչել, դարձուցել և թունավորել սպաննել են։

Լավ թագավորին այսպես են ըսել։ Նոքը օր մը անպիտան թագավոր մը ունեցել են, հիմար, անառակ տգա մը, գնացել օտարին, անհավատին, պարսկին մատնել են, թագավորն ու թագավորությունը վերջացուցել են։ Կը թողում հիշել Մերուժաններ, Վասակներ, Գդիհոններ, որ ժողովրդյան արյան հեղեղներու և գերության պատճառ եղած են։ Այլ կուգամ կը հասնիմ մեր այս օրերուն, թե ի՞նչ ըրած են այդ նախարարները և ինչպե՞ս կուռավարած են ժողովուրդը։ Հիմա սա միջոցին Վասպուրական անհավատից ընծաներ, պատարագներ, պատանդներ կուտա, Տարոնս երկիրը արյանց լիճ մ'է եղած. սուրին ազատողն գերության և շղթաներու է մատնված. սա այս միջոցիս Գրիգոր Սյունյաց Տեր և Բաբկեն Սիսական նահապետ տարի կա, որ իրարու հետ կը պատերազմին, իբրև թե օտարի հետ պատերազմի նյութ կը պակսեր։

Դու շառավիղ երկուց մեծ նախարարությանց՝ Արծրունյաց և Մամիկոնեից, դու պետք էիր լավ գիտել, թե ինչու՞ Թագարատ անհույս յուր դրացիներուն օգնութենեն գնաց թշնամյաց ծունկը ինկավ, վասնզի Աշոտ Արծրունյաց տեր վատահ չէր յուր նախարարց հավատարմության վրա, և թե վաղը նույն բախտը կ'սպասե բոլոր այդ իշխանաց, որ այս խեղճ Հայաստանի ո՛չ այաբքն են, այլ բռնավորք. վասնզի չեն կարող զնա պաշտպանել օտարեն, և ոչ իրենց կույր կիրքերեն, այլ անարդ և փոքրիկ փառասիրությամբ անձանց և ազգին խորխորատ կը փորեն։ Քաջք, անպարտելիք միմյանց դեմ. անխիղճ կը թափեն իրենց հայատակաց արյունը, կ'ավարեն հակառակորդին երկիրը, որ դարձյալ հայ է։ Բայց ի՞նչ է հայը դոցա աչքին, ոչինչ։ Այս բաներքը տեսնելուս համար է, իշխան քաջ, որ դառնացյալ այս ադեմից վրա այդպիսի ծանր խոսքեր ըսի. ո՛չ, հավատա՛, թե ոչ նախանձ մեծության, ոչ փափագ իշխանության երբեք վիս չեն փորձել. միայն կը ցավիմ այս իմ ազգիս վրա, որ հլու հնազանդ յուր մարմնավոր և հոգևոր իշխանաց ամեն օր կը կորչի մարմնով և հոգվով։

Լռություն մը տիրեց այս երկայն խոսակցության վրա, ժողովրդյան մարդը այս խոսքերը զրուցելին վերջ գետին սեռեալ կը նայեր, ազնվական երիտասարդը նույնպես աչքերը գետնեն չէր վերցներ։ Պահ մը այսպես կենալեն վերջ իշխանը իբր թե քանե զարթնած՝ միտքը ուրիշ բան մը եկավ. առանց պատասխան տալու՝ հրաժարական ազդունը տվավ, ձեռքը կուրծքին դրավ և ակնարկի հրաման ըրավ, ձին մեծ բեբվեցավ, հեծավ Յոլակին վրա և դեպ արևելք շրջեց նրա գլուխը. և յուր եռանեն կերթային երեք սպասավորներն և Արծրունյաց ազատյալ պատանդներն նույն ճամփան։

ՄՈԳԱԿԱՆ ՀԱՅԵՒ

Հավնան պահ մը այդ խմբակին եռանեն նայեցավ, կաթնած յուր նիզակին, և կրնար ինքն իրեն.

«Է՜հ, շատ կարելի է, որ Գուրգեն իմ այս խոսքերուն զայրացավ, ռանվեցավ, բայց միթե ամեն ինչ, որ ըսի, ճշմարտություն չէ՞։ Այո, կրնար ինք իրավամբ ինձ պատասխանել՝ եթե նախարարք և իշխանք անպիտան և հիմար էին, ժողովուրդը ավելի անպիտան և հիմար էր, որ նոցա քմաց և հաճույից անասնաբար կը հնազանդեր։ Այո, այդ է իրավացի պատասխան իմ ըսածներուս, բայց ի՞նչ ընել. զրգռե՞լ ժողովուրդը ընդդեմ յուր դարավոր տյարց և իշխանաց, և այնպիսի՞ ժամանակ, երբ արաբը մեկ կոզմեն, հույնը՝ մյուսեն, աս խեղճ երկիրը ոռնակոխ ընել և հայությունն անունը ջնջել սովորություն ըրած են. Մահմեդ կը հորդորե իր աշակերտները անգութ և անողորմ լինել քրիստոնեից դեմ, և այս հրեատնյա հույները չեն արգելեր ոչինչ հարստահարության ընդդեմ քրիստոնյա հայուս։ Այո, երկու ազգաց թագավորներն իրարու հետ կը պատերազմին և Հայաստան կը կործանեն։ Երեկ անցին Թեոփիլոս մը եկավ շարդեց, գերեց և քանդեց, այսօր Ապուճաֆար մը ասպին կը բռունի, որ նույնպես և ավելի կը կոտորե, կավարե և կ'անապատացնե։ Եվ այս չի բավեր, մեր նախարարքս փոխանակ ընդհանուր վիճակին զարման մը ընելու՝ հիմարաբար ողորմելի փառասիրությամբ իսմ անմիտ շահասիրությամբ իրարու հետ կը կռվին և զիրար կը դավանանեն։ Եվ այս թշվառության տեսարանին դու վկա եղիր, դո՛ւ հայ, դո՛ւ քրիստոնյա, դո՛ւ խեղճ Հավնան, և անտարբեր կա՞ց իրուն քարե արձան, որ քու եղբայրդ տանջանաց մեջ մնանի, քու զավակդ մոռնա իր Լուսավորիչը, իր հայությունը, կորչի երկուքին համար, քու երեսդ և աղջիկդ երթան օտար երկիր ազատին և հարճ լինի սպանողին և բռնավորին և շղթաներու մեջ հառաչանց և արտասվաց ձայներ խոցեն։ Այդ է տա՞ այս քանի հարյուր տարիներ են խեղճ հայուն բախտը. և նախարարին ընկեր ու բարձակից եկեղեցականը «այս բոլոր մեր քաշածը մեր մեղքն է» կ'ըսե։ «Մի՞թե այս Հայոց ազգին մեղքը միայն կը տեսնեն և չի քավեր ասվածը»։

Այսպես խոսելով և խորհրդածելով Հավնան, սկսավ երթալ գետի քաղաքը գլան տխուր սրտով, ոչ թշնամվույն կոտորածը, ոչ գերելոց ազատությունը, ոչ պատանդաց փրկությունը իր երեսին ուրախություն չի բերին. մանավանդ թե շարունակ Գուրգենի շարադուշակ մարդարեա-

թյունն կը հիշեր և կը դառնանար։ Եվ գլուխը երբեմն կը դարձներ ակամա կամոք դեպ այդ փոքրիկ խումբը, որ Վասպուրականի ճամփան բռնած էր։

Ամենքը զբաղյալ էին ավարին, և ուրիշ ոչինչ բանի ուշադրություն չէին ըներ. շատ ջանքով ժողվեց զանոնք և երբ իրենց միտքը ձգեց, թե իրենք պարտք մ'ալ ունեին Սուրբ Կարապետ ազատելու, նոքա վեր թռան, ոորոտմանց ձայներու պես ձայն մը բարձրացավ, և ամենքը ամեն բան թողած «Սո՛ւրբ Կարապետ երթանք, Սո՛ւրբ Կարապետ» ըսին և հազարավոր նիզակներ ճոճեցին և սկսան հետեիլ Հովնանու, որ առջևեն կ'երթար յուր հաստատ քայլերով, միայն յուր ձեռքը ճակտին կը տաներ ի բաց վարելու համար խորհուրդ մը, որ համառ՝ միշտ ետ կը դառնար և յուր մտքին կը տիրապետեր։ Երբեմն վեր երկինք կը նայեր. երկինք, որ գեղեցիկ էր և պայծառ, և արև մը ամառվան արևուն պես զայն կը լուսավորեր, բայց հազիվ թե տկար ջերմություն մը ուներ։ Իսկ սասունցի զինվորները այս դիտողությունը չէին ըներ. նոքա միտքը ս. Կարապետի փրկությունն էր, որ աբաբներե պաշարյալ էր. ուստի չի մրթընցած հասնիլ կը ջանային, միայն իրենք առաջնորդը Հովնան, երբ երկինք կը նայեր, հաստուծո այն կը խնդրեր, որ Գուրգենի մարգարեությունը չի կատարվի, և այդ խոսքերը շարունակ յուր մտքին մեջ կը դառնային. «Տե՛ր աստված, կ'ըսեր, մի՞թե ես թափվելիք հայ արյան պատճառ պիտի լինիմ, ես, որ իմ ազգիս ինկած վիճակին դարման միայն ընել մտածեցի և ջահ ամենևին մտքես չանցուցի»։ Թեպետ այս խորհրդածությունը զինք կը տանջեր, բայց քայլ մը պակաս չէր առնուր, և լեռնական խումբը յուր ետևեն կը սահեր, վասնզի ինչպես երևցավ, այդ մարդու վրա մեծ համարմունք ունեին յուր հայրենակիցք. և առանց ընտրության, առանց ժառանգական իրավանց, առանց հարստության մեծ ազդեցություն ուներ Սիմ լեռան վրա այդ եղական մարդը, վասնզի ամենքը գիտեին և կը խոստովանեին նորա անշահասիրությունը, որ իրենց պես և իրենցմե շատերեն ավելի աղքատ էր մնացել, թեպետ Բագարատ իշխանի սիրելի անձ մ'էր տարիներե ի վեր նորա ձեռնտվությունը բանիվ և գործով խեղճերու և անտերներու և նորա ահարկու խստությունը անիրավներու և հարստահարողներու դեմ հայտնի էր։ Այս հատկությանց վրա պետք է հիշել յուր կարդալու և գրելու կարողությունը, որ շատ քիչ մարդկանց տրված էր այն դժվար ժամանակին, և որ այդ լեռանց մեջ գերբնական բան մը կը համարվեր. շատ անգամ, երբ քահանան Փարատյան կ'ըսեր հիվանդին վրա, հիվանդին տերը կերթար Հովնանու ալ աղաչելու, որ գա ավետարան մը կարդա յուր հիվանդին վրա, և շատերը կը պատմեին, թե ի՞նչպես և քանի՞-քանի՞ անգամ Հովնան ընթերցմունքը չի

վերջացած բժշկության նշաններ կը տեսնվեին հիվանդաց վրա։ Եվ միշտ այսպիսի պարագաներու մեջ կը տեսնվեր, որ Հովնան կոգնորեր, աչվընները կը ձգտեին և այդ զորավոր մարդը մեծ հոգնություն մը կ'ինամար այդպիսի դիպվածներու մեջ ու խոնարհաբար կ'ըսեր, թե կրզամ Քրիստոսի խոսքին ուժը, թե՝ «Զորություն էլ յինէն»։ Վերջապես Հովնան եղբայր՝ սասունցուն համար տեսակ մը սուրբ էր, որ երբ կը հեռանար գործի մը համար իր լեռնեն, կարելի է թե շատերը նույն մտածությունը ունեին, ինչ որ երբեմն խսրայելացիք Մովսեսի համար, երբ Սինա լեռան ամպամած գլխուն վրա կաներևութանար։ Եթե մեկ քանի նախանձոտ և անպիտան մարդիկ ալ կային, ինչպես միշտ չեն պակսիր ամեն տեղ ու ամեն ժամանակ, չէին համարձակեր բերան բանալ և խոսք մը ըսել։

Արևը մոտ էր մտնելու, երբ հանկարծ խումբ մը արաբացի ձիավորք երևցան, որ մեր սասունցվոց կուգային իբրև թե դիմավորելու, առ ժամայն Հովնանի մեկ ակնարկությամբ սոքա փոքրիկ գունդերու բաժնվեցան և քառակուսիներ կազմելով՝ աշտեներու դուրս ցցված անտառ մը ձևանալով, որ կը քալեր, ջանացին պաշարել և արգիլել այս ձիավորաց հախուռն ընթացքը, թեպետ շատերը կործանեցին իրենց ձիերեն, և ձյան ճերմակությունը ի կարմիր ներկեցին նոցա արյունով, բայց մեկ մաս մը ձիավորաց հախուռն հարձակմամբ ճղքեց անցավ այս լեռնական հետևակազորը և սաստիկ արագությամբ կրցավ Հայաստանի սահմաններեն ինքզինքն ազատել և գույժ տանիլ, թե ի՞նչպես Սիմ լեռան ապստամբները, տաճկաց բանակը ջնջեցին և ամիրապետին փոխանորդը սպանեցին։

Է՛լ ս. Կարապետն ազատած էր բոլորովին, ուստի մեկ մասը բանակին ետ կը դառնար, երբ Հովնան մտախոհ՝ շարունակեց իր ընթացքը ու մտավ երկրպագել տաճարին դռան առջև։ Ազնիվ մարդուն բոլոր մրտածողությունը և պաղատանքը ուրիշ բան չէր, այլ միայն թե աստված Գուրգենի գուշակությունը հեռի ընե յուր խեղճ հայրենյաց վրայեն, վասնզի սիրտը կը դողար, թե ինք մարդու մը պատճառավ միգուցե ազգին թշվառության պատճառ լինի։

Վերջապես վանահայր և միաբանք գոհության աղոթքներ կատարեցին ի փառս փրկողին և տարին Հովնան յուր բոլոր ընկերաց հետ սեղանատուն ընթրելու, ուր բնականաբար խոսքերը բոլոր կը դառնային այն դիպվածոց վրա, որոնք հաջողեցան մեր լեռնականաց։ Հովնան միայն շատ քիչ կը խոսեր, յուր հոգնությունը պատճառ բռնելով, գնաց երկրնցան խոտի դեզի մը վրա. քանի մը ժամ քունե վերջ, ելավ կանգնեցավ այնպես առույգ՝ իբրև թե ոչինչ աշխատություն չէր ունեցել։

Կոշնակը նկեղեցին կը հրավիրեր միաբանները, Հովնան արդեն ամենեն առաջ եկեղեցվո դուռը կանգնած էր։ Նույն միջոցին և սկսած էր սաղմոսերգության, երբ հանկարծ զգաց, որ ձեռք մը յուր ուսին վրա հեցավ։ Երբ գլուխը դարձուց, տեսավ երկայնահասակ շոր ծեր մը, որուն ձյունի պես ճերմակ մաքուրը մինչև գոտին կիջներ, յայն մոխրագույն բուրդ վերարկու մը մինչև ոտքերը կիջներ, թխամորթ էր իր խորշոմյալ երեսին գույնը, յուր սև և մեծ աչքերը փայլ և հրապուրիչ քաղցրություն ունեին միանգամայն, առանց խոսք մը արտասանելու, ձեռքին բռնեց, առավ դուրս հանեց, և երբ լուսնին ապտա լուսավ երկու հոգի միայն գտնվեցան. «Ծ՛կ, Հովնան, իմ եղեսս,— ըսավ,— եթե կ՛ուզես, որ ապագային վարագույրը պատռի և ցույց տա քեզի հանդերձյալը՝ գալանի՛ք ասավածային, ե՛կ, մի՛ վախեր»։

— Ե՞րբ վախեր եմ ես, որ հիմա պիտի վախենամ,— ըսավ Հովնան,— զինվոր սասնցի մը երբեք չէ վախցեր։

— Բայց դու խառնուրդ ես զինվորի և քահանայի, դու խառնուրդ ես հավատ և թերահավատություն, դու խառնուրդ ես քաջության և եթե ոչ երկյուղի՝ գոնե կասկածանաց։

— Ես հաստատ եմ իմ հավատքիս վրա՝ ես զինվոր եմ...

— Ինձ զքեզ մի՛ ճանչցներ. դու ապա էիր, զքեզ տեսա, հեռացար դու աս լեռներեն, իմ աչքերս քեզի հետ էին և զքեզ կը տեսնեին և քու ամեն գազանիքդ կը նշմարեին. ուստի քալե՛ երթանք, չե՞ս ուզեր դու իմանալ ապագան, մի՞թե գոր համար չէր, որ դու կ՛ազատիր, մի՞թե երկյուղը, որ միգուցե Հայաստան երկրի թշվառության պատճառ եղար այդ հրոսակին կոտորածովը, մի՞թե այդ չէ, որ զքեզ կը տանջե։

Ծերուն ցուրտ երկաթյա ձեռքը կը սառեցներ Հովնանու ձեռքը, և իրենք կը քայլեին ձյունին վրա, որ կը մանչեր իրենց ոտքերուն տակ, և անխոս կը շարունակեին իրենց ընթացքը։ Կը բարձրանային, կ՛իջնեին և դարձյալ կ՛ելնեին, սառած առվակներ և գետակներ կ՛անցնեին. անցան նաև մեծ գետ մը, որու սառույցին ընդարձակությունը իմացուց խուզեցվույն թե Արածանին էր, որ կ՛անցնեին, և դեռ իրենք կ՛երթային լուսնին ադոտ լուսով մինչև բլուրներու, ժայռերու, կիրճերու, դահավեժներու և փապարներու մեջ գտնվող այս ուղեղնացության ծրագիրը կորսընցուց Հովնան, մինչև քարայրի մը մուտք ներկայացավ իրենց, և ծերը առանց յուր ընթացից արագությունը թեղլու, մտավ մութեն մեջ, ուր խավարը շոշափելի եղավ, և էլ ավելի ամուր սեղմելով յուր ընկերին ձեռքը, կը քաշեր, կը տաներ խորե ի խոր, վասնզի շարունակ կիջնեին Հովնան առանց երկյուղ զգալու կը խորհեցավեր ինքնիրեն. «Ջարա՛ ժամ է և ավելի, որ մենք այս ծերուն հետ կ՛արշավենք, և դեռ նա հոգնության

փոքրիկ նշան մը չի ցուցներ, յուր ձեռքը ոչ կը զգամ և ոչ կը տաքնա, սառ լինեք իմ ձեռացս տաքությամբ կը հալեր, իսկ ինք իմ ձեռքս կը սառցնե»։

— Հովնան, ծան և այնպես հետևեմ ինձ,— ըսավ ծերը,— մի՛ շտկվիր մինչև որ ես քեզ իմաց չի տամ։

Եվ այնպես մի փոքրիկ ժամանակ երթալեն վերջ, ծերուն հորդորով շտկվեցան, և Հովնան զգաց, որ ոտքի հետքերնին շունչ կ՛առնուր, թեպետ միշտ գետնափորներու մեջ էին և ոչ նշույլ կար, ոչ բնական և ոչ արհեստական լուսո։ Բայց վերջապես հասան այնպիսի տեղ մը, ուր հեռուն նշույլ մ՛սկսավ երևալ, և մոտն ընդարձակ, լուսավորված որահ մը, ուր ոսկեձույլ աշտարակներու վրա մեղրամոմեր և բազմաթիվ արծաթի կանթեղներ իրենց լույսը կը ցոլացնեին, և հրաշալի արձան մը կանգնած էր զոնեն պատվանդանի մը վրա. այն համբավավոր ասկիտածին և ոսկիամոր Անահտա արձանն էր նա՝ պարսպանի հին հայրենյաց, և յուր աջ կողմը Վահագնի և ձախը Աստղիկ արձաններ կանգուն էին, սա երեք արձաններուն պատվանդաններուն հեցյալ եռոտանի մը կար դարձյալ ոսկեձույլ. չէր կարելի իմանալ, թե այս տաճարը՝ վասնզի իրաք տաճար մ՛էր սա՝ յուր զմբեթովը, որու չորս կողմ դեռ ուրիշ փոքր գմբեթներ կային, գետնին տակն էր, թե գետնեն դուրս բարձրացած. վասնզի պատերը բոլոր արձաններով և քանդակներով էին զարդարված և վրայի գմբեթեն կախ էր ահագին ատոկյա նրաղարան մը, ո՛ զիտե ո՞ւտի և ո՞ր հեռավոր երկրն բերված այգտեղ՝ այդ անգնդախույզ աստվածությանց պաշտոնը և նսեմացյալ խավարը շքավորելու համար։

Այս տեսարանը հանկարծ այնչափ զարմացուց և շլացուց զՀովնան, որ և ոչ զգաց, թե ի՞նչպես և երբ հեռացավ իրմե յուր ծեր առաջնորդը, ուստի սկսավ նայիլ և զննել այդ հին հիշատակաց և արվեստներու հրաշալիքը, որոնց նմանությունը կը մտածեր, թե ո՞ւր տեսած էր ինք, ի Կոստանդնուպոլի՞ս, թե ի Բաղդատ։

Եվ երբ այս մտածության վրա էր, հանկարծ յուր ուշադրությունը շարժվեցավ, վասնզի երգերու ձայներ սկսան լսվիլ, և տաճարը լցվեցավ արարիս և հնդկաց անուշահոտ խնկերով, և եռոտանին իրեն թե խնկաման կամ բուրվառ մը լիներ, գուրս կը փչեր զմայեցուցիչ մուխ մը, որ զարմանալի ազդեցությամբ այդ մարդուն երկրին չիզերը կսիոզ սկսավ դարձնել։ Դառ կը փնտրեր Հովնան, և ահա չէր կարող նշմարել նաև այն դուռը, ուսկից ինք ներս մտեր էր. և իր սուր աչքերը չեփոխեցան, վասնզի մուտքը կարող չէր նշմարել, և իրաք կը տեսներ, թե քանաի մը մեջ էր, քաջց փառավոր քանաի մեջ։

Հավիվ թե այս խորհրդածությունը մտքեն անցավ, և ահա Վահագնի և Աստղկան պղնձե պատվանդաններուն անհայտ դռները բացվեցան, և երգեցիկ քրմաց ու քրմուհաց բազմություն մը զույգ-զույգ սկսան դուրս ելնել և արձաններուն առջև շարվիլ. իրենց հարուստ և ճոխ, ոսկեթել և նկարեն զգեստները, հաճոյական էին աչքս, և երբ Հովնան անոնց մանրամասն դիտողության զբաղած էր, ահա Անահտա պատվանդանին դրոնեն դուրս ելան մեծ քրմապետը և մեծ քրմուհին, և երգերը լռեցին։ Մեր լեռնցին քրմապետը մեկեն ճանչեց թեպետ զգեստներուն պերճութենեն փոխված՝ բայց նույն ծերն էր, որ զինքն հոն բերել էր. իսկ քրմուհին երիտասարդ և շատ գեղեցիկ կին մ'էր, որ երբ եռոտանվույն առջև կանգնեցավ, թալուկ եկավ երեսին։ Նույն վայրկենին, երբ երգերն լռեցին և եղեգյա սրինգներ սկսան փափուկ և տխուր երաժշտություն մը հնչեցնել, որ մարիկ ընողին հեշտալի եթե չէր գալ, վայրկենե մը վերջը շատ ազդու և սրտաճմլիկ բերկրություն մը կը բերեր անձին։ Քրմապետը այն ատեն ձեռքը տվավ և հրավիրեց քրմուհին՝ որ անցնի նստի ոսկի եռոտանվույն վրա, և ինք շրջապատյալ իր խումբեն՝ կանգնեցավ յուր աստվածության առաջ թևերը տարածելով և անձայն աղոթելով, հավիվ թե շրթունքը կը շարժեին։ Եվ ահա քանի մը բոպե չեղած ամեն աչք, որ եռոտանվույն պշուցյալ էին, կը տեսնեին փոքրիկ, ջղային ցնցմունքներ մեծ քրմուհվույն վրա, անոնց հաջորդեց վիճակ մը, որ իբրև թե մարմարե արձան հեղափոխեց այդ եռոտանվույն վրա նստողը, մինչև որ աչքերը ըսկըսան բացվիլ անսովոր և սեռեռ նայվածքով. ան ատեն քրմապետին բերին գիրք մը, որուն թերթերը արծաթյա բարակ տախտակներ էին, և նա բացավ էջ մը, ուր ոչինչ չի կար գրված, և ներկայեց քրմուհվույն. «Կարդա՛, ներշնչյալդ հաստվածոց», ըսավ հզոր ձայնով. երաժշտությունն դադրեց, և այնպիսի լռություն մը տիրեց, և ամեն շունչ այնպես կեցավ, որ մեկ բան մը միայն կը լսվեր՝ քրմուհվույն շնչառությունը. և ամեն աչք իրեն կը նայեր։ Իսկ նա քանի նայեր այդ էջին վրա, յուր երեսին գույնը, յուր ակնարկը, յուր շարժմունքը շարունակ կը փոփոխվեին, և ի վերջո մեռած աչքերը կենդանություն և հետաքրքրական փայլ մը առին. իբրև թե անհագ կը կարդային՝ և վերջը-վերջը այդ աչքերը լիճ մը դարձած արտասվաց հեղեղներ կ'իջեցնեին, կղպված ծնոտները կը բացվեին և հառաչանաց ձայներ, եղուկներ, ավաղներ իրարու կը հաջորդեին։ Այն ժամ քրմապետը «կարդա՛, ո՜ ներշնչյալդ հաստվածոց» կրկնեց, «բարձր ձայնիվ կարդա՛»։

Եվ քրմուհվույն հեկեկանաց ձայնը այսպես խոսեցավ. «Քի՜չ են, Հայաստան, քու շարչարանքդ, քի՜չ են քու տանջանքներդ, դեռ կանգուն են քու քաղաքներդ, դեռ հարսի և փեսայի ձայներ կը լսվին ի քեզ, դեռ տղայն օրրանին մեջ կը ճվա, դեռ հուրը վառարանին մեջ կը ճարճատե, դեռ մուխը երդյաց վրայեն կը բարձրանա։ Դեռ քու որդիքդ բարձրավիզ կը քայլեն, դեռ երկաթը իրենց ձեռքին և իրենց մեջքին վրա կը փայլի, դեռ սաղավարտը իրենց գլխին վրա կը ճաճանչե, դեռ քու աղջիկներդ ծիրանիներով կը զարդարվին, դեռ նոցա վրին վրա ոսկի մանյակ և թևերին ապարանջաններ կը նշուլին, բայց այդ ամենուն վերջն է՝ քու քաղաքներդ պիտի անմարդանան, քու շեներդ անշեն պիտի մնան, քու տաճարներդ կիսակործան, քու տուներդ անկենդան. ուրախության և հարսանյաց ձայներուդ ողբերու և լալերու ձայներ պիտի հաջորդեն, քու զենքերուդ շկահմանց, շղթաներու ձայներ, քու մանյակներուդ և ապարանջաններու հնչմանց՝ գերության խարազաններու ճարճատմունք. այո՛, քու կտրիճներդ գերի իրենց երկրի մեջ, գերի օտարության մեջ, քու աղջիկներդ աղախին իրենց հայրենի տան և դառն պանդխտության մեջ։ Երբ արևելք երեսդ դարձնես, թշնամի պիտի գրտնես, երբ արևմուտք դառնաս, թշնամի պիտի տեսնես. օգնություն պիտի խնդրես, նախատինք արհամարհանք պիտի գտնես, երկինք աչքերդ պիտի դարձնես, նա կայծակ և կարկուտ քեզի պիտի տեղա, քու զավկներդ նաև շատ անգամ եղբայրասպան՝ իրենց մոր սիրտը պիտի վիրավորեն»։

Ձեռքերը ծալած փայտ կտրեր մնացեր էր Հովնան, կը նայեր այդ կնկան երեսին գույնին, կը նայեր աչքերուն մարմրուկին և վերջը արցունքներուն, կը լսեր այդ անսովոր ձայնը, կը խորհրդածեր ինքնիրեն և կ'ըսեր. «Այդ կինը եթե գերասան էլ է, շատ լավ կը խաղա յուր դերը, ես հույն թատերականաց մեջ նաև այդպիսի մը չեմ տեսած. եթե ըսածները ճշմարիտ են. վա՜յ է մեզի, վա՜յ մեր հայ ազգին. ի՞նչ ապացույց կրնա տալ յուր գուշակությանց ճշգրտության այդ անսովոր մարգարեությունին»։ Այս միջոցին քրմուհին գլուխը կուրծքին վրա իբրև թե խոր քուն էր, սրինգներն իրենց տխուր երաժշտությունը դարձյալ կը շարունակեին, երբ հանկարծ ցնցվեցավ նա, և եռոտանին սարսեցավ, աչքերը բացվեցան լի տխուր սրտմտությամբ և ցուցամատը կարկառ դեպ Հովնան. «Ո՜վ դու՛,—զոչեց,—ապացույց կ'ուզես դու, սպասե՛, լսե ինչ որ Արտեմիս անցյալ մը իմ աչացս առաջ կը բերե ի հանդես։ Կը տեսնեմ սիրուն պատանյակ հաղիվ արբունքի հասյալ, եռանդուն, ա՛յ, հուր է զորա բնությունն՝ և սիրտը սիրույն բոցով է շրջապատյալ իբրև լուսինը բակով։ Բայց ի՞նչ հիմարություն, լեռնցի, խե՜ղճ խումբեցի, ուր աչքերդ կը բարձրացնես, ո՞ւր հույսերդ կ'ամբառնաս, թագադիր իշխանազանց օրիորդին դու կը համարձակիս այդ տոչորյալ սիրտդ մերկացնել»։

Հովնան այս վերջին խոսքերուն այնպես սաստիկ ցնցվեցավ իրեն թե իր մը զինք խածներ, և դեպի մուտքը նայեցավ, որ չէր երևար։

«Ո՞ւր կը նայիս, ո՞ւր կ'ուզես փախչիլ,— կը կրկներ քրմուհին,— ապացույց կ'ուզեիր. հիշե՞ զիշերները՝ լուսնին գարնան զեղեցիկ գիշերը, այն վարդենյաց պարտեզը, ուր փոքրիկ բանալի մը ձեռքդ զողզոջուն կը մտնեիր, այդ սիրո առաջին գիշերը, որու քաղցրության չի կա բան մը աշխարհիս վրա, որ կարենա բաղդատվիլ. երբ սիրած անձի բերանն կը լսես ոք սիրեմ բառը, և որ քեզ համար գառն և բազմաչարչար կենաց պատճառ պիտի լիներ. այո՛, այդ առաջին գիշերն էր, երբ դու ծառա, չինական, լեռնական, քեզ տարեկից ազնվազարմ օրիորդի մը առջև ծունր դրնել և նորա ձեռքերուն վրա համբույր և գգվանք գրոշմել կը համարձակեիր։ Բայց երջանկության գազտագողի կրկին տարիներն շտապով անցան, օրիորդը քոզածածուկ՝ հարևմուտ հանաց սահմանները զրկվեցավ ապաշխարելու և դու զանակոծ, բանտարկյալ, շղթայակապ գիշերվան մութուն գազանյաց մեջ հարևելու աշխարհիս կը զրկվեիր վանքի մը մեջ ապաշխարելու այդ եզեռնալի ժպրհության վրա, որ չի ճանչցիր, ընդարձակ սահմանը, որ կը բաժնե աղատը անազատեն, ազնվատոհմը անտոհմեն, նախարարը շինականեն, հարուստը աղքատեն։ Այո՛, այդ հանցանքին համար, որ առանց հանցանքի սիրել և պաշտել համարձակեցար օրիորդ մը, որու ո՛չ իշխանական թագը, այլ գեղեցկությունը տեսար, քու սրտին ազնվության թափանցեցիր, և մուգար զրեզ, ազարմելի սոզան, և ուզեցիր արժվո պես տրուն բարձրանալ։ Ահա տարիներով խորհրդածությունքդ, որ այդ բերդական վանացդ միայնության մեջ կ'անցնեիր մտքեդ և ուր ուրիշ բան չէիր երազեր, այլ ալանալ այդ պարիսպներու բարձրությենեն և իմանալ, թե ի՞նչ եղավ քու սրտիդ աստվածուհին։

Ամեն աչք պշուցյալ այս երկու անձանց կը նայեին. կինը՝ գերբնազանց էակ մ'էր, յուր ամեն մեկ բառը մեկ-մեկ սլաք էին, որ կը վիրավորեին խեղճ լեռնցին, յուր ամեն մեկ խոսքերը մեկ-մեկ լախտ էին փշրելու համար այդ կորովի մարդուն հին վերքերով լի սրտին բեկորներ, այդ թշվառ մարդը, որ կը կարծեր, թե է՛լ վերքերը գոցված էին սրտին մեջ, վասնզի սրտի վերքերեն վերջ մարմինը սպիացեր էր պատերազմներու մեջ, այդ մարդը, որ շատ ցավոց տարեր էր ստոիկյան համբերությամբ, առանց յուր մռնչման ձայնը լսեցնելու, հիմա հոգվույն խորերեն կը հառաչեր և պաղ քրտինք կը թափեր. մարմինը արձան էր եղած, և ոտքերը իբր թե բեռեյալ էին գետնին։ Այդ առաջին և հրաբորբոք սիրույն հիշատակը, որ ինք մաքած կը կարծեր, վասնզի զանազան և գառն արկածներ անցեր էին վրայեն. հիմա իբրև օտար շնչե մոխիրներ փչված՝ փայլուն կրակ մը կարծարծեր։ Կ'ուզեր գոչել և հարցնել և իմանալ, թե ի՞նչ էր կամ ի՞նչ վերջ պիտի ունենար յուր սրտին աստվածուհին, բայց իր ձայնը իրեն չէր հնազանդեր և բերանը չէր կարող բանալ, վասնզի պապանձեր էր։ Բայց քրմուհին, որ այդ խեղճ սրտին գաղտնիքը կը կարդար և կը տեսներ նորա վիճակը, ձայնեց դարձյալ.

«Դու կ'ուզես իմանալ, թե ի՞նչ կը խորհի և ինչ կը մտածե նա, որ բնությունը քեզի համար էր ստեղծել և մարդկային օրինաց անդգամությունը քեզմե բաժնեց. անհոգ եղի՞ր, կուգա տարին, կուգա օրը, և թերևս շատ հեռու էլ չէ, որ դարձյալ մոտեն զինք պիտի տեսնես, դարձյալ արցունքներովդ յուր ոտքերը պիտի թանաս... Բայց պետք է մինչև այն ժամը աշխատես, պետք է ցույց տաս, օրինակ լինիս հայ թշվառ աշխարհի, թե ժողովուրդը ոգորելի, արհամարհելի էակ մի չէ, թե յուր արյունը ունի այն ամեն առաքինություն, որով կը պարծին նորա, որ իրենց հարց անվան վրա կը գոռոզնան և շատ անգամ զուրկ են նոցա առաքինություններ... Գնա՛, ասպարեզն ընդարձակ է, գալիք պատուհասը սոսկալի է, զորացի՛ր, վասնզի հեռի չէ օրը, որ վիհանները պիտի շարժեին, նիզակները կոտրեին, սուրերը փշրին, գնա՛, ժողովրդյան զինվո՛ր, երկնային զորությունք քեզի օգնական թող լինին։»

Եվ ահա բուրմանց ամպ մը պատեց դարձյալ եռուանին, լույսերը ամենը մեկեն խավարեցան, և Հովնան բեկյալ, խորտակյալ և վերջի խոսքերեն ստկավ ինչ կենդանացյալ, թանձրամած խավարին մեջ կը խարխափեր, երբ օգնական ձեռք մը զգաց, թե յուր ձեռքեն բռնեց։

— Ե՛կ, Հովնան, հետևե ինձ,— բռավ ծանոթ ձայնը։

Եվ սկսան քայլել այդ մթության մեջ և մինչև այն կերպով ինչպես առաջ մտեր էին։ Ամեն քրմապետն էր, որ կ'առաջնորդեր. մինչև վերջապես հասան այն քարայրին բերանը՝ լուսնի լուսույն տեղ արևու լույսը ամեն բան կը լուսավորեր։

— Գնա՛, որդյա՛կ Հովնան, երկնային զորությունք քեզի օգնական լինին,— ըսավ ծերը և քարայրին մթության մեջ թաղվեցավ։ Իսկ Հովնան քիչ մը տեղ անգամ քայլելեն վերջ, աթոռեցավ և ճանչեց, թե Ինչ տիշատ ավերակներեն էր շրջապատյալ։ Ան տեսն իմացավ, թե հայկական հին կրոնքը 550 տարի վերջը, անհետ եղած երկրի վրայեն, դեռ գետնի տակ կ'ապրեր հանծանոթ։

ԳԼՈՒԽ Դ

ԱՐԾՐՈՒՆԻ ԻՇԽԱՆ ՄԶ

Թողունք Հովնան յուր խոր մտածությանց մեջ, Աշտիշատա ավերակաց վրա, Մեծին Սահակա գերեզմանին մոտ, որ խորհրդածե յուր բախտին և յուր հայրենյաց վրա և ջանա ուղղություն մը տալու իր բռնելու ընթացքին, դառնանք այդ Գուրգեն իշխանին, որ տեսանք և որ երևելի դյուցազն մ'է այդ ժամանակի պատմության մեջ և որ զարմանալի է՝ գրեթե անծանոթ մնացած։

Գուրգեն՝ Արծրունի էր հոր կողմանե, Մամիկոնյան մոր կողմանե. բախտը զինքն այդ երկու ազնվատոհմ ընտանյաց զավակ ընելով և ամեն անձնական բարեմասնությամբ զարդարելով՝ այնպիսի վիճակի մը մեջ դրած էր, որ չուզեց, մանավանդ թե չի կրցավ պատասխանել Հովնանու ծանր ամբաստանությանց ընդդեմ նախարարական սերնդին։ Եվ բավական հեռանալեն վերջ նաև Մշո քաղաքեն. միտքը միշտ ժողովրդական մարդուն ըսածներուն վրա կը շրջեր և իբրև թե նորա վերջին խոսքերուն արձագանքը դեռ յուր ականջին կը հնչեր։

«Այդ մարդը հասարակ մարդ մը չէ, և ինք իրավունք ունի գանգատելու մեզմե... բայց մի՞թե մենք չունինք իրավունք գանգատելու, ո՞վ է իշխանական ցեղի մարդ, որ սրո հարվածի մը, դավաճանության մը, որոգայթի մը, հափշտակության մը ենթակա եղած չլինի յուր համանման սերնդակից ազատեն։ Միթե իմ հայրս բռնի մահվամբ չի գրավեցա՞վ յուր տոհմակից Արծրունիներեն, և իմ ժառանգությունս ամբողջ նոցա ձեռքը չանցա՞վ։ Ո՞ւմ ուստի գանգտիմ։ Ահա ութը տարի է, որ կը թափառիմ թողած իմ հայրենի Վասպուրական երկիր. և ի՞նչ տեսա, ամեն տեղ մարդ նույն գազանը տեսա՝ վատ, հաշաղկոտ, շողոքորթ, անգութ, գոռոզ՝ հաջողությանց մեջ, անարգ՝ ձախորդության մեջ, վերջապես մարդ՝ ողորմելի կենդանի։ Այն օրը, որ դյուցազն մը տեսա՝ Մանվել Մամիկոնյան, որ փախստական կ'երթար Հունաց կայսեր ձեռքեն, որու կյանքն ազատեր էր, և նորա թշնամյաց գիրկը կ'իյնար, որպեսզի յուր կյանքն էլ ազատեր, զզվեցա մարդիկներեն, և առանց քոսոտ, բորոտ ու վիրալից լինելու Հոբա հետ՝ իրավունք ունի ամեն մարդ անիծելու օրը, հորում ծնավ։ Ահա Արծրունյաց և Մամգունյաց ճշմարիտ շառավիղ մը՝ ե՞ս Գուրգեն՝ որդի Ապուպելձի, ես ազատ, ազնվատոհմ, որ իմ հայրենի ժառանգական երկիրս կը մտնեմ իբրև անազատ, իբրև գերի, իբրև ճորտ, որ չունի գլուխ դնելու տեղ մը, և բոլոր իմ ստացվածքս, իմ հարստություն, իմ կալվածքս սա սուրը և սա ձին է.. Այլ մի՞թե նա, որ ինձ կ'սպասե... Ահա միմիայն բարիք, միմիայն գանձ, միմիայն կյանք, դո՜՝ իմս Հեղինե։ Ես, այո՛, երջանիկ եմ, քան զԱշոտ, և իմ Հեղինեն չեմ փոխեր Արծրունյաց իշխանին փառավոր գահին հետ։ Իմ Թորթումի փոքր բերդը յուր գեղեցիկ լճակով, յուր գետոց խոխոջներով, յուր պտղազարդ ծառաստաններով չեմ փոխեր Վասպուրական աշխարհի Վանա մեծատարած բերդին, ծովակին, կղզիներուն և լայնարձակ անտառներուն հետ։ Փոխանակ նախարարաց բազմագլխյան ապստամբությունքն հարվածելու, բազմապատիկ դավադրությանց դեմ հնարքներ հնարելու, տաճկաց անգութ սուրերու և բյուր խարեությանց դեմ միշտ արթուն գտնվելու, շատ ավելի կը նախադասեմ իմ խղճուկ Թորթումի գյուղապետներս, իմ թեթևամիտ հույներս, որոնցմե երբ հիմար չես և ուզես, այն ատեն միայն կը խաբվիս։ Այո, Հեղինեիս հետ ինձ համար ամեն տեղ երջանիկ կարելի է լինել։ Ի՞նչ ըսի իրեն, երբ թողի հայրենի երկիրը և գնացի։ «Կամ այն է, որ ես կը մեռնիմ, կամ այն է, որ քեզ՝ Ռշտունյաց օրիորդ, կը դառնամ փոքրիկ գավառ մը բերելու, ուր հեռի ի հոգոց և թախծության մեր զրկյալ գլուխներն կարենանք հանգչեցնել, հեռի և անտես այդ ազնվատոհմ ազգականաց, որ սպանություն, դավ, սուտ վկայություն, վերջապես ամեն անարդ միջոցներ չի խնայեցին հափշտակելու համար երկու որբոց հայրենի ժառանգությունը»։

«Ի՞նչ,— ըսավ ինձ Աշոտ մեծ իշխանը, երբ վերջին պյուռելությամբ իրմե խնդրեցի, որ իմ հայրենի ժառանգությունս ինձ դարձնե։— Ես լավ համոզված եմ, թե իմ պապս մեծ անիրավություն մ'ըրած է հայրդ սպաննելով և նորա երկիրները գրավելով, բայց եթե ամեն նախարար յուր կալվածոց անիրավ մասը հարազատ տիրոջը դարձներ, մեկ արտավարի հող և հյուղիկ մը չէր ունենար. երիտասարդ մարդ ես և ազնվական, քաջ և կորովի, ծառայե՛ ինձ հավատարմությամբ, ես զքեզ լավ կը վարձատրեմ. տուն, տեղ, այգի կունենաս և եթե զիս գոհ ընես, ամրոցի և գյուղերու տեր նաև կ'ընեմ քեզ, բայց հայրենի ժառանգության և անցյալ անիրավությանց եթե խոսքը կրկնես, գիտցի՛ր, որ չեմ կրնար ներել, զգուշացի՛ր...»։ Այդչափ փոքր առատաձեռնություն և այդչափ մեծ սպառնալիք իմ ախորժակաց հարմար չեկան։ Փոխանակ քեզ ծառայելու այդ գինով՝ կ'երթամ կայսեր կը ծառայեմ, ըսի մտքես, և անցա Արածանին և Եփրատ, ճիշտ նույն ատեն երկու բանակ իրարու դեմ կը գտնվեին, մտա հունաց բանակը, և զարմանալի՜ հարմարություն։ Հունաց մեծ Սպարապետը ոչ միայն հայ մ'էր, այլև Մամիկոնյան էր. Մանվել զորավար երևելի յուր քաջությամբ, որ զԹեոփիլոս կայսրը ազատեր էր մահվանե ու գերությենե։ Երբ զիս տեսավ տասնութ տարեկան անմո-

բուս տղա մը, և հարցուց և իմացավ իմ ազգս, պապս և քեռիս ճանչց, նայվածքով զիս անգամ մը չափեց, ըսավ. «Թեպետ դեռ պատանի ես, բայց Արծրունյաց և Մամիկոնյաց արյան ծնունդ լինիլ և քաջ չլինիլ անկարելի է, քայլե՛, որդյակ, բախտավոր էլ ես, փառաց ասպարեզը՝ պատերազմի դաշտը առջևիս է ահա. դու խալի կողմը կը գտնվիս, այդ նաև բարեբախտություն մի է»։

«Երթանք Ռշտունյաց Ոստանը, երթանք ժամ առաջ դառնալու շուտով մեր նոր հայրենիքը Թորթում, ուր ամեն բան պատրաստեցի գեղեցիկ և վայելուչ քաղցրացնելու համար իմ Հեղինեիս այդ օտարությունը. ո՜հ, եթե ինք նույն սիրով, նույն սրտով զիս սիրե, ինչպես ես զինքը, անշուշտ ինձ հետ երջանիկ պիտի լինի, հետո նաև Վասպուրական ծովուն եզերքեն»։

Այսպես ժամերով կերթային այս մեր հեծյալքը, և Գուրգենի լռությունը ամենուն լռություն կը հրամայեր. մանավանդ օդին ցրտությունը ամենուն հոգին և ջերմությունը ամփոփելով ընտանությանց համաձակությունը կը սեղմեր։ Բայց կար բան մը, որ կարելի չէր այդ վիճակը չընդհատել, և այդ բանը անոթությունն էր. ուստի, երբ Առաքելոց վանքն անցան, և Մորխա ճամփան սկսան, և արևը սկսավ իջնել, այն ատեն իբրև թե քունեն զարթած Գուրգեն դարձավ.

— Տղա՛ք,— ըսավ,— դուք անոթի չե՞ք և բան ամենևին չեք խոսիր։ Լավ ճամփա ատի՞նք թե ոչ, Վահրի՛ճ, դու այս տեղվանքը լավ կը ճանչես՝ ո՞ւր ես, ձայնդ էլ չելներ, ցուրտե լեզուդ սառեր է, բերնիդ կպեր է, որ չես խոսիր. հաց ալ պիտի չուտե՞ս։

— Տե՛ր իշխան,— ըսավ Վահրիճ մտատենալով,— այսպիսի ձյունով շատ ճամփա առած կը համարվինք. կարելի է այսպես շուտով հասնինք Նորաշեն և եթե վաղն էլ այսպիսի եղանակ ունենալու չափ բախտավոր լինինք, անկից շուտ կը հասնինք Դատվան և ալ ճամփան կը գյուրանա։

— Մի՞թե Նորաշեն մինչև Դատվան ճամփան այդչափ դժվար և երկայն է։

— Ոչ դժվար և ոչ երկայն է, իշխան, այլ սաստիկ վտանգավոր ձմեռ ժամանակ։ Եթե արևելյան փոքր քամի լինի, կոտրած է ամեն ուղևոր, վասնզի ծովուն վրայեն տկար քամի որ կը փչե, դիվական մրրիկ կը դառնա Գրգուռ և Նեբրովթ լեռներու մեջ։

— Ե՞րբ կը հուսաս, որ հասնինք Նորաշեն։

— Եթե քիչ մը ավելի ուժով քշենք ձիերը, արևը մտնելեն վերջ կը հասնինք։

— Քշե՛նք ուրեմն, երբ դու ոչ վաստակած ես և ոչ անոթի։

— Ինձ համար շատ դյուրին է, բայց սա իշխանազուն տղայք կարծեմ անոթի և վաստակած են, թեպետ ձայն հանելու կ՚ամաչեն։

— Տե՛ր, Վահրիճ, ի՞նչ կըսես, Արծրունի չե՞ն գոքա։

— Այո՛, Արծրունի են, տեր, բայց ամեն Արծրունի Գուրգեն չէ։

— Իշխանք,— ձայնեց Գուրգեն,— լավ չլինի՞ր, որ ձիանքը քշենք և ժամ առաջ հասնինք Նորաշեն. ձիուն վրա մեկ քիչ բան ծամելով՝ մեր ախորժը խաբելով, որպեսզի երեկոյան լավ ընթրենք և լավ հանգչինք։ Տե՛ր, Վահրիճ, իշխանաց մեյ մեկ պատառիկ տո՛ւր, թե՛ ուտենք, թե՛ երթանք։

— Իշխանաց ոչ հացի պատառիկը և մսի պատառիկը միայն, այլ ահա ոսկի մը գինի ալ կոնամ տալ, հիմար արաբները ամեն բան ավարեր՝ գինին մոռցեր էին, Տարոնո պատվական գինին է. ս. Կարապետ իրա՞վ է, թե այս գինին միայն կը խմեր արքայությունն չուղևորած, չգիտեմ, բայց գիտեմ, թե ես իմ տիկս ասկից լեցուցի։

— Տեսնիմ սա գինին։

— Շնորհք ըրե, տե՛ր,— ըսավ Վահրիճ և բավական մեծությամբ տիկ մը երկնցուց իշխանին, և նույն միջոցին լավաշներ կը հաներ պայուսակեն և միսի կտորին հետ կը բաժներ ամենուն. իսկ Գուրգեն քըմծիծաղավ.

— Քա ս. Կարապետի գինին լավ է, բայց պետք էր այդ տիկը ամբողջ լցնել, և դու անհոգ գտնվեր ես, Վահրիճ։

— Ո՛չ, տեր, ես ամբողջ լցուցի, բայց ցուրտին գինի՞ կը դիմանա, կեցած տեղը կը պակսի...

Այս հրաշքին վրա ծիծաղելով՝ սկսան քշել ձիանքը, և չի մթնցած հասան Նորաշեն, որ բավական մեծությամբ գյուղ մ՚էր ան ատեն, և գյուղացիք տեսնելով իշխանազուն մարդիկ մեծարեցին զանոնք ըստ իրենց կարի՝ հայկական հյուրասիրությունը չափեն ավելի ի գործ դնելով։ Ավելորդ է ըսել, թե մեր Վահրիճ տիկը սմքեցավ բոլորովին, ի մեծ ցավ իրեն և հուսահատություն ամենուն։

Մութ էր դեռ, երբ Գուրգեն ամենքը զարթեցուց և լուսնի լուսով հասան Դատվան, և առանց թույլ ու դադար տալու կ՚անցնեին կ՚ոլորվեին Վանա ծովուն շուրջը և այսօր իշխանը ոչ կը խոսեր, ոչ կ՚անոթենար. այլ Ցոլակին վիզը ծեծելով, «Ապրի՛ս Ցոլակ, դու հիմար մարդն լավ ես, դու կիմանաս իմ սիրտս» կ՚ըսեր, ով ձին, որ իրոք շատ խելոք նժույգ մ՚էր ավելի նետանգով կ՚արշավեր. իսկ մյուսները քիթ, բերան թթվեցուցած կը քշեին, կը մտրակեին իրենց անասունները, երբ Վահրիճ, ամենեն ետ մնացած, կը մամռար ինքնիրեն յուր տիկի մնացորդը բերանը մզելով։

— Աստված հաջողություն տա, տեր Գուրգեն, չգիտես, թե սատանան քո՞ւ փորդ է մտեր, թե Ցոլակին, բայց թե խեղճ Ցոլակին փորն լիներ, դու զանի շատոնց կը հանեիր, ըսել է՝ թե քու փորդ է, որ այսօր մարդն ու ձի կ՚սպաննես։ Վահրի՜ն, դու դարձյալ պետք է խոսիս այդ մարդու հետ, ամենքը իրմե կը խորշին։ Այսչափ օր է, երբեք այսպես դիվահարած չուներ, շնորհք ուղեգնացություն կընեինք, մինչև երեկ շատ լավ էր, միայն երեկ չէր խոսեր, կը մտածեր. այսօր ետին անգամ չի նայիր, չիմանար, թե ուրիշներն ի՞նչ եղան։ Տե՛, Վա՜հրիձ, հասնենք ետևեն։

Եվ ոտքով, ձեռքով յուր գրաստին խոսք հասկցնելով, ի՛նքն ալ, խեղճ կենդանին ալ շնչասպառ մոտեցավ իշխանին։ Բայց ո՛չ Ցոլակ, ո՛չ իշխանը խոսք հասկնալու վիճակի մեջ չէին. Ցոլակ յուր բոլոր իմաստությամբ դարձյալ ձի էր և ձիու բնություն ուներ և չէր կրնար ներել, որ ձի մը զինքն անցնի, երբ յուր տերը «ապրե՛ս, Ցոլակ» ըսած էր անգամ մը, ուստի ձիու ոտքի մը ձայն առնելուն արշավը մոռցած՝ սկսավ սրանալ, իսկ Գուրգեն, որ դիվահարյալ էր արդեն, ինչպես կը դատեր Վահրիձ, ամենևին ուշ չէր դներ, թե ի՞նչ կար առաջն և թե ի՞նչ կար ետին։

— Ահա, իշխան, մարդու ամենեն լավը,— կըսեր Վահրիձ հուսահատ և հոգնած.— ի՞նչ հոգն է եթե աշխարհք՝ մարդն ու ձին կը կոտրվի ետևեն, խելքին այնպես փչեր է, որ երթա, իր նժույգը թե ունի՝ կը թռչի, ո՛վ չի հասնիր, ճամփան կը մնա՝ թո՛ղ մնա... Լա՛վ, թո՛ղ երթա, ո՛ւր որ ուզե, ես ալ կ՚երթամ հոն, ուր իմ ձին մնա։

Եվ սկսավ հանդարտ քայլել, իսկ Գուրգեն անհետ եղավ առջևեն։

ԳԼՈՒԽ Ն

ՌՇՏՈՒՆՅԱՑ ՕՐԻՈՐԴԸ

Ոչ ցուրտը, ոչ ճամփուն երկայնությունը և օրվան կարճությունը և ոչ վերահաս գիշերվան մութը չէին արգիլեր Գուրգեն յուր ճամփան շարունակելե. միշտ ձախ թևին վրա երբեմն հեռվեն և քիչ անգամ մոտեն տեսնելով Աղթամարա ծովակը. և կոխված ձյունի արահետ ճամփեն անխոտոր երթալով հազիվ թե երբեմն կը կենար գյուղի մը, ավանի մը քով հարցնելու անուն մը, և ձիուն շունչ առնել տալու համար։ Ուստի այսպես անդադար ձիավորելով հասավ Ռշտունյաց Ոստանն, և կեսգիշերուն մոտ էր, երբ ձիեն ցատկեց միջնաբերդին դռանն առջև. Եվ սկըսավ երկաթե դուռը ծեծել անխնա, որ գերեզմանական լռութենեն գայտնի էր, թե բացվելու միտք չուներ։ Բայց Գուրգեն դյուրավ հուսահատող մարդկանցմե չէր. և ձմեռ օրով տասնչորս ժամ ճամփա կտրելով և Ցոլակը կիսամեռ ընելով, այդ բերդին առաջ ետ չէր կրնար դառնալ, երբ սիրտը կը տրոփեր Հեղինեի հիշատակով։ Եվ ո՛րքան բան ուներ նորա ըսելիք։ Ուստի այնպիսի դոփյուն, թնդյուն և շառաչյուն հանեց, և այնչափ դղրդեց բերդին դուռը, որ մոտակա բնակիչքը, սկսան իրենց դըռներեն գլուխնին դուրս երկնցնել՝ կարծելով թե բազմություն մը հասած էր, և կը զարմանային տեսնելով լուսնի ադոտ լուսով մարդ մը միայն և ձի մը։ Այս միջոցին էր, որ վերջապես դռան քովեն նաև ձայն մը ելավ, որ բերդապահին դիտանոցն էր, ուսկից ինք առանց տեսնվելու դուրսի մարդը կը տեսներ։

— Ա՛յ մարդ, ո՞վ ես, ի՞նչ կուզես, մի՞թե այս ժամուս հյուրընկալություն կը լինի։

— Գուրգեն Արծրունի եմ, բա՛ց, բերդապա՛հ,— կանչեց ձայնը դուրսեն։

— Տե՛, տղաք, լույս բերե՛ք, իշխանին եղբայրն է, շուտ բրե՛ք.— և ներսը շարժմունք սկսավ։

Իսկ Գուրգեն կ՚ըսեր. ո՞ւմ հոգն է, թե որ Գուրգենի համար ներսը կը կոտրտին, բա՛վ է, որ դռները բացվին։

Ուստի, երբ դուռը բացվեցավ, տեսան Գուրգեն բարձրահասակ երիտասարդ, որ անխոով և զվարթ ներս մտավ և Ցոլակն ալ յուր ետևեն, և ուրիշ ոչ ոք չի կար միատեղ, և որ անգամ մը ձեռքը կուրծքին դնելով բարև մը տալե վերջ՝ շտկվեցավ անվրդով դեպի սանդուխը, և ոտքը վրան չի դրած՝ «Տղաք,— դոչեց,— ձիուն լավ հոգ տարեք, կ՚ընդունիք ձեր վարձքը» և առանց ուրիշ բան խոսելու երբ երկու-երեք ոտք սանդուխ միատեղ առնելով մտավ զինուց սրահը և անցնելով ընդունելության դահլիճը, ուր ցրտություն մը կը տիրեր, դարձավ տղուն, որ լապտեր մը ետևեն կը բերեր։

— Տղա՛,— ըսավ,— մի՞թե ամենքը քներ են, Տիկինը, Օրիորդը քաշվե՞ր են իրենց սենյակները և ոչ ո՞ք չի կա։

— Ոչ ոք չի կա, իշխան,— պատասխանեց պատանին,— հիմա բերդապահն կուգա, ես նորեկ եմ, տեղյակ չեմ։

Այս միջոցին Գուրգեն ուրախ, զվարթ կը շրջադայեր յուրաքանչյուր առարկայի վրա աչքերը պտըտցնելով, երբ տղայն կանթեղները կը վառեր, բազմոցներու, գորգերու փոշին կը մաքրեր. և ուրիշ երիտասարդ մը նույն միջոցին վառարանին մեջ դիզված փայտերուն կրակ կուտար։ Եվ ահա բերդապահը եկավ, միջահասակ մարդ մը, յուր քառակուսի մոր-

վոք, և կանգնեցավ անշարժ, սպասելով, որ նախ իշխանը խոսի. իսկ Գուրգեն յուր արծվի աչքերը նորա վրա շտկելով.

— Խուրեն եղբայր,— ասավ,— զիս չե՞ս ճանչեր, հին բարեկամները այսչա՞փ շուտով կը մոռնան։

— Կը ներես, իշխան,— պատասխանեց Խուրեն կասկածոտ կերպով մը,— մենք մեծ իշխանի Աշոտ եղբայրը միայն կը ճանչենք Գուրգեն Արծրունի։

— Մոռցա՞ր ուրեմն դարձյալ Արծրունի, Ապուպելճի որդի Գուրգենը, որ այս ամրոցիս մեջ ութը տարի անցուց Ռշտունյաց Մուշեղին հանձնված։

— Ինչպե՞ս մոռցա, ինչպե՞ս չեմ հիշեր իշխանիկը,— գոչեց Խուրեն մոտենալով զարմանքով և երեսին վրա զվարթություն դալով, ո՜հ, ինչպե՞ս փոխվեր է, տե՞ր աստված, տղայն՝ ահագին հսկա մ'է եղեր, այս ի՞նչ կերպարանք է, սուրբ խաչն քեզ օգնական...

— Լա՜վ, լա՜վ, հերիք է, Խուրեն եղբայր, ահա ես այն տղայն եմ, հիմա զրուցե ինձ Ռշտունյաց Տիկինն ու Օրիորդը, որ քաշվեցան իրենց սենյակները, կարելի չէ՞ իրենց իմացնել, թե Գուրգեն եկավ։

— Իշխան, դու չես իմացեր, որ մեր Տիկինն, աստված լուսավորեսցի հոգին, վախճանվեցավ ահա տարի ու կես է։

— Ուրեմն Օրիորդը ո՞ւր է,— ասավ իշխանը՝ առաջ վազելով և աչքերեն փայլակներ ցատկելով։

— Օրիո՞րդը, չե՞ս իմացեր, անմխիթար, անտեր և անտերունչ մնալով, վերջապես կամա-ակամա Անձևացյաց Մովսես իշխանին հարսնացավ։

— Ի՞նչ կըսես, Խուրեն... Ի՞նչչափ ժամանակ է։

— Ուղղդ կըսեմ, իշխան, խեղճ Օրիորդը՝ «թողեք զիս իմ հորս տունը, ես ոչ իշխանության փափագ ունիմ, ոչ ամուսնության, ամեն բան ձեզ լինի, միայն զիս հանգիստ թողեք» կ'ըսեր, ոչ ոք չէր ուզեր մտիկ ընել. մեծն ու պզտիկ վրան ինկան, ամենքը՝ Աշոտ մեծ իշխանեն սկսյալ խորհրդական դարձան, այդ Անձևացյաց տերն էլ շարունակ անձանձիր խնդիրք խնդիրքի վրա կ'ուղարկեր։ Իսկ Արծրունիք բավական չէր, որ բոլոր բերդերն կը գրավեին մեկ կողմն, բավական չէր, որ ամեն տուրքերը կը սեփականեին, ամեն ջանք ի գործ կը գնեին, որ Օրիորդը հարսնանա այդ իշխանին հետ, մենք իմացանք, որ պատճառը այն էր, թե Մովսես խոսք տված էր երդմունքով և դաշնագրով, որ եթե Օրիորդը իրեն հետ ամուսնանար՝ ոչինչ պահանջմունք պիտի չըներ Ռշտունյաց մեծ ժառանգությենեն, այլ ամեն բան Արծրունյաց մեծ իշխանին պիտի թողներ։ Ահա բուն պատճառը այս անապատ հարգորանաց։ Օրիորդը ազատ

չէր գուրս ելնելու, կին և մարդ պահապաններ էին, ետևեն կ'ելնեին, որ հանկարծ չի փախչի, վերջապես խեղճ աղջիկը իր հոր տան մեջ պատվավոր բանտի մը մեջ էր։ Շատ անգամ լուռ և անմոռնչ ժամեր կ'անցներ սարավանդի հովանոցի մեջ ծովուն և ճամփուն վրա սևեռյալ աչքերը, և երբ խավարը տիրեր, փոքր հառաչանք մը միայն կը ձգեր և իր սենյակները կը քաշվեր։ Իբրև թե ատելի եղած էին իրեն ամեն մարդ, ամեն այցելություն կը մերժեր, վասնզի մինչև Ռշտունյաց եպիսկոպոսն ուրիշ բան չուներ իրեն քարոզելու՝ այլ թե լավ կը լիներ, եթե ամուսնանար Անձևացյաց իշխանի հետ։ Միմիայն մխիթարություն կար իրեն, որ երբեմն նվիրակ մը հանկարծ կ'երևեր, ս. Կարապետի վարդապետ մը, որ տարին մեկ կամ երկու անգամ կուգար՝ նամակ մը կը հանձներ, որ Օրիորդին կուտայինք. այդ օրհնության գիրն էր, որ իր երեսին զվարթություն կը բերեր։ Բայց վերջապես այս աշնան եռքերը՝ հանկարծ օր մը նույն վարդապետը երևցավ, յուր նամակը տվավ և գնաց. ահա այդ նամակը այս անգամ, որ առավ Օրիորդը, քանի մի օր ամենևին չերևցավ և դուրս չելավ յուր սենյակներեն։ Երբ չորս-հինգ օրեն վերջ զինք տեսանք, աչքերը խորն էին մտած, աննկարագրելի տխրություն մը նոցա մեջ կ'երևեր, և նոցա շուրջը կապույտ գիծ մ'էր պլորած։ Է՛լ սարավանդի հովանոցը չելավ, իր ծանր և ազնվական ժպիտը մեկ մ'էլ չի տեսնվեցավ, և յուր անուշությունը խստության և արհամարհանաց փոխվեցավ, Մենք՝ յուր հայրենական հավատարիմներն չէինք կրնար մոտենալ այդ Օրիորդին, որ գրկերնիս մեծցեր էր, քաղցրության աղբյուրն էր, ոչ ժպիտ մը և ոչ խոսք մը ուներ մեզ համար։ Եվ այդ վիճակի փոփոխության վրա ամիս մը հազիվ անցավ, տեսանք, օր մը փառավոր խումբ մը եկավ հասավ Ոստան, Վասպուրականի բոլոր իշխանք՝ Անձևացյաց նախարարը գլուխներն, և մենք ապուշ մնացինք, երբ ըսին, թե Օրիորդը հարս տանելու եկեր էին, մենք, որ ամենևին պատրաստություն չունեինք։ Զարմանքով տեսանք, որ Տիրուհին ելավ յուր սենյակներեն խստիվ քողարկյալ, բոլոր յուր հայրենի ծառաներն ժողվված՝ ամենքս կուլայինք, չի տեսանք յուր երեսը. միայն սպասուհիներն ափսեներով բերին իր ընծաներն, այսինքն բոլոր ստացվածքը ծրարներ ըրած և անուններս վրան նշանակված և իր ձեռք բաժնեց. մենք կը հեկեկայինք, իսկ նա անխռով և խիստ ձայնով՝ «մի՛ լաք, զիս ձեր աղոթքին մեջ հիշեցեք, աստված ձեզ երջանիկ ընե» ասավ՝ հեծավ և գնաց։ Ասոնք եղան յուր վերջին խոսքերը և այսպես ահա գոցվեցավ՝ վերջապես Ռշտունյաց նախարարության տունն...— Ու խեղճ մարդն սկսավ հեկեկալ, և է՛լ արցունքը զինք կը խեղդեր և կարողություն չուներ դիտելու և տեսնելով Գուրգենի երեսը, որ երբեմն կը ճերմկեր, երբեմն կը կարմրեր այս երկայն և սոսկալի պատմության ժա-

մանակ, և չէր իմանար, թե յուր ամեն մեկ խոսքերը մեկ-մեկ սլաք էին վիրավորելու թշվառ երիտասարդին սիրտը։

— Բայց ես հիմար մ'եմ, իշխան, որ փոխանակ քեզի կերակուր պատրաստել տալու՝ կեցեր այսպիսի տխուր պատմություն կը պատմեմ, որ, որ հոգնած՝ ճամփե կը հասնիս։

Եվ Խուրեն դուրս ելավ, և իրոք ատենն էր, վասնզի Գուրգեն, որ այդ պատմութենեն ջանթահար եղած էր, երբ դուռը գոցվեցավ և մինակ մնաց, ինքներեն պպշությունը թոթափել սկսավ և հարցնել, թե իրա՞վ էր ինչ որ լսեց. միթե երազ չէ՞ր այդ սոսկալի պատահարը, մի՞թե ներսի սենյակներն եթե մտներ, արդյոք Հեղինե գեռ հոն չէ՞ր, գինք չպիտի՞ գիմավորեր։

Ցավն անտանելի էր, բայց մեծ մխիթարություն մը կար իր սիրող սրտին համար՝ Հեղինե զինք կը սիրեր և բոլոր սրտանց կը սիրեր. բայց ի՞նչ օգուտ, Հեղինե հիմա ուրիշինն էր, վասնզի Հեղինե խաբված էր. և սոսկալի դավ մը կար այդ դառն պատմության մեջ։ Մեծ-մեծ հառաչանքներ կ'ելնեին իր լայն կուրծքեն, ձեռքը շարունակ ճակտին կը տաներ, վասնզի գլխուն երակները սաստիկ կը բախեին, յուր աչքերը չէին տեսներ Խուրեն և իր տղաքը, որ իրեն կերակուր կը բերեին և սեղան կը շտկեին։ Հանկարծ թողուց դահլիճը, վասնզի կը խղդվեր, բացավ քովնտի դուռը, որ սարավանդը կը հաներ, և ափով ձյունը ճակտին և գլխուն կը գարներ և այդպես քիչ մը իբրև թե հանդարտեցավ և զովացավ։ Երբ Խուրեն քովն եկավ հրավիրելու, թե կերակուրը պատրաստ էր, իշխանը խնդրեց, որ զինքը մինակ թողուն, և այնպիսի հրամայական ձայնիվ, որու պատասխան կարելի չէր։

Հոն՝ այդ սարավանդին տափին վրա Գուրգեն յուր հառաչանաց ձայները ծովու մռնչմանց ձայնին մեջ կը խղդեր, ձյունախառն քամին յուր սև և երկայն մազերուն հետ կը խաղար և որովհետև այն բավական ձեր, ուստի ինք շարունակ ձյուն կածեր գլխուն, հայուն առակին վրա կը ճշգրտեր և կը խորհրդածեր.

«Ա՜յս է եղեր ուրեմն իմ ութ տարվա արյանց և քրտանց նպատակը, ինձ, որ ամեն բան կը դյուրանար, վասնզի Հեղինեի երջանիկ օրերու հուսով կ'ապրեի և նոր կյանքը կարծեի, թե աս գիշեր պիտի սկսի ինձ համար. այո՛, կսկսի նոր կյանք՝ կյանք դառն հառաչանաց և տրխրության, դրախտ կերազեի, երբ սա դահլիճեն ներս մտա, և դժոխք յուր բոլոր տանջանքներով ու բոցերով զիս՝ իմ սիրտս կը շրջապատեն... Բայց իմ նամակներս ամենքը հասեր են Հեղինեին և վերջինը... ահա այդ մասին է բոլոր դավը... փոխեր են իմ նամակս, փոխեր են մեջի գրությունը, ո՞ գիտե ի՞նչ զրուցել տվեր են ինձ... ո՜հ Արծրունիք, անիծյալ

դուք, ձեր սերունդը, Մերուժաններուն ծնունդը... ի՞նչ անհագուրդ փափագ տիրելու և մեծնալու... Բայց մի՞թե ես Արծրունի չեմ, տոհմը, սերունդը ի՞նչ ընե... Բայց ես այսպես անգո՞րծ պետք է մնամ, ո՜հ, ո՜չ երբեք. պե՛տք է, այո՛, պետք է վրեժխնդրություն, և այդ վրեժխնդրությունը պետք է որ լինի սոսկալի, գազանային, արյունռուշտ, այնպես որ բոլոր Վասպուրական ի հիմանց սասանի, բերդերը կործանին, քաղաքները հրդեհին, գյուղերն ավերին, և ամեն անցնող ըսե. ահա՛ այդպես են Արծրունիք, միշտ առաջինը քանդելու և կործանելու համար և իրենց անզգամության համար. երբ մեկը դավաճանություն, խարդախություն, բանսարկություն կը գործածե, մյուսը հուր, սուր, թույն և մատնություն ի գործ դնելե չի խորշիր... բայց ի՞նչ կ'ըսեմ ես, ո՞վ ասված իմ, ա՜ռ իմ սրտես այդ ցավը, հանե՛ ինձմե այդ ատելության և վրեժխնդրության հոգին, ես որ մինչև այսօր անզգամութենե զզվեցա, հիմա երբ բախտը և մարդկանց անիրավությունը կը հափշտակե ինձմե ամեն երջանկություն, ամեն հույս բարօրության, պե՞տք է որ իմ խղճմտանքս աղտոտեմ, քա՜վ մի՛ լիցի. ավելի լավ է անիրավություն կրել, քան թե անիրավություն ընել... Տե՛, Գուրգեն, մի մոռնար ի՞նչ դու կըսեիր քու տղայությունեդ մինչև այսօր. ավելի լավ է, որ քու հայրդ դավաճանյալ մեռեր է Աշոտո հոր ձեռքեն, քան թե ինքը զնա դավաճաներ եղբայրասպան լինելով, ավելի լավ են, որ քու կալվածքդ ու ստացվածքդ հափշտակյալ են, քան թե հափշտակությամբ ժառանգություն թողներ... բայց... այդ որդվույն ըրածը, ո՜հ սոսկալի է, ավելի լավ էր զիս սպաներ, քան թե այդ հարվածը ինձի տար սիրտս սպաննելով՝ Հեղինեն ինձմե հափշտակելով... Ո՜հ, Հեղինեին արցունքը, Հեղինեին այդ շարշարանքը ինձ դառն է, քան թե իմ ցավերս... բայց Հեղինե ինձ հավատարիմ մնացեր է... ո՜ գիտե ինչ գրեր են իրեն, անշուշտ զրուցեր են, թե Գուրգեն մեռավ... խեղճ Հեղինե, թաղեր է զիս սրտին մեջ, տվեր է իր մարմինը Անձևացյաց իշխանին, և ազատեր է Արծրունյաց հափշտակիչ բռնութենեն. թողեր է նոցա յուր բոլոր ժառանգությունը և ինքն էլ գնացեր է թաղվել Անձևացյաց քարայրներուն մեջ»։

Այսպես և ասոր նման խորհրդածությամբք և մռնչելով ծովուն մրընչմանց դեմ ժամեր անցնելով քիչ-քիչ հանդարտեցավ Գուրգեն, բայց թունավոր նետը սրտին մեջն էր, վերքը՝ սրտին խորն էր։

Նույն միջոցին Խուրեն վարը՝ իր սենյակը նստեր էր շրջապատյալ յուր ընտանիքեն. ամենքն՝ կին, զավկներ և հարսներ յուր ակնարկության կը մնային. որովհետև ամենքը քուներնեն զարթած էին այս նոր Արծրունվույն գալստյամբ։ Եվ կինը, որ բնականաբար երբ զավկներու

և հարանելու տեր է, բավական իշխանությունն կատարած հայը ընտանյաց մեջ, կը հարցներ յուր կրկան.

— Խուրեն, այդ Գուրգեն իշխանն այդ Արծրունի Աշոտ իշխանին եղբայրն Գուրգեն չէ՞, այդ ո՞վ է, որ դինք Արծրունի կ՚անվանեն, գեղեցիկ փաստավոր, պատրիկ երիտասարդ է, բայց կ՚երևի թե բերդի դռան բանալ տալու համար դինք Արծրունի անվանեն։

— Ա՜խ, Մեծիս, այդ երիտասարդը Գուրգեն՝ Արծրունի է, հարազատ հիշատ մյուս Արծրունյաց պես, սա եղբոր թոռն է Աշոտ իշխանին, որուն պատերազմ տրա հայր Ապուսալեմը սպաննեց ժառանգությունը դրավելու համար. այս որդ, տասը տարու տղան Գուրգենը, մեր Ռշտունյաց իշխանն Աստամ՝ ատաղած լուսավորն հոգին, որ խելոք և հարգոր մարդ էր, սպանողին ձեռքեն խլեց և հմուտան քեռավ և յուր տունը կը մեծցներ գալիք պես։ Մեր Օրիորդը և սա միատեղ կը խաղային եղբոր, քրոջ պես, ես շատ անգամ դիրենք կ՚տեսնեի, կը տանեի դրուանքի երդեմն ձիով, երդեմն նավակով։ Մեր Տիկինը՝ իշխանին մահվանեն ետը, Արծրունյաց պահանջմանց դեմ կենցավ, որ այդ Գուրգենը կ՚ուզեին իրենց քով պահել։ Վասրգեի իշխանահին շատ խելոք կին էր, «այո՛, կ՚ուզեն,— կ՚ըսեր,— հարը արդ սպաննեցին, ուզան էլ տամ, որ թունավորեն, քանի որ պատահ մը հաց կա Ռշտունյաց տանը, այդ տղան իմ զավակիս պես կը պահեմ. իշխանը մահվան անկողնին մեջ դա ինձի հանձնեց, նորա կամքը ինձի համար անդառնալի է»։ Վեց-յոթ տարի սա տունը ապրեցավ, իրարու թե Օրիորդին եղբայր լիներ, և ես այնպես հարմար կը տեսնեի, թե պետք էր դիրենք ամուսնացնել, երբ հանկարծ եկավ և Հունաստան գնաց, և էլ յուր չափնը իրմե. ահա հանկարծ կուգա դարձյալ. բայց շատ սիրուն նեղ երիտասարդ է ըսեմ, թե ցորտեն հանկարծ վատագանին տաքը գլուխը զարկավ ըսեմ՝ չեմ գիտեր. սարավանդին վրա ելեր վեր, վար կը պտրտի և ինձ էլ հրամայեց, որ քիչ մը ժամանակ միայն թողում դինքը։

— Թե այսպես է՝ մեկ մը գնա տես, կտրելի է, որ հիմա քեզ ոգեն։

— Տղան՝ Գրիգորը հոն թողի, նա կ՚սպասե վերը, երբ ներս գա, ինձ իմաց կուտան։

Այսպես սոքա ժամ մը և ավելի Գուրգենի պատմատոմ ամենայնի վրա կը խոսեին, և դեռ Գրիգորը չէր երևար, տասի Խուրեն կնոջը հորդորմանց, երբ եկավ վեր և ասավ, որ Գուրգենն նստած անդանին տաքն կրնիրեր, և Գրիգոր էլ մենակտի նստած կը մասնակցիցեր, լի՝ բարկությամբ սպասավ տղան մոտենալ։

— Կա՜ց, Խուրեն եղբայր, ես հրամայեցի տղան, որ ինձ քնկերանա,— ըսավ Գուրգեն և, ինձեն քանի մը, նա էլ յուր մյուս քովը նստեցավ։

Գուրգենն ինքն էլ կը զարմանար, թե ի՞նչպես կերակուր կուտեր, ամենայնի հոգալ մանաքն մը վերը, բայց այդ զարմանքը այդ տասժամանի համակարգությունն ետքը, նյութական անունդի պես ուներ, և յուրաքանչյուր հացի պատառին կը մտածեր, թե երբ միանակ մնար քրոջը դիշերը և հնարավոր դիպվածներն՝ զավական էին յուր աստի վերքին հետ պրպտելու։ Բայց կերակուրը իր համեն ու դիպարտությունը կարուներ էր իրեն համար, ուստի շուտ մը կշտացավ և եկավ տեղանին և եղբ լվացվեցավ, հարցրեց, թե՝

— Արծրունիք կոտաքին եղբանն այս իրենց նոր կարգածի տյուսերքրան։

— Գրիգորդին երթալեն վերը գրեթե շատ ամիս կը դինի և դեռ ոչ ոք չեկավ. ինձ հանձնեցին բերդին քարտուղարությունը, ինձ տվին բոլոր բանալիքները, և ահա առաջին անգամն է, որ սա գահլիճին դուռը բացվեցավ, և սա վառարանը մխաց։

— Ուրեմն անկողնոտ սենյակնե՞րն էլ քեզ հանձնված են, Խուրեն եղբայր։

— Դու քուն ունիս, իշխան, և իրավունք էլ ունիս,— ըսավ Խուրեն և շուտ մը բանլիքներու տրցակ մը հանեց և ուղղեցավ դեպի հյուրի սենյակները։

— Խուրեն եղբայր,— ըսավ իշխանը,— դու գիտես, թե երբ ես տղա էի, այս Ռշտունյաց տան մեջ տարիներով բնակեցա և իմ սենյակս ունեի. մինի կարդի՞ չէ, նույն անունդանը սա դիշերն մնցընեմ։

— Մնչալա՝ որ կամենաս, իշխան, միայն այն քու սենյակը քու երթալեդ քիչ վերքը Գրիգորը իրեն սենյակ բրած էր, և մենք այն օրեն մինչև հիմա արտանվիս վիրավոր չի կրցանք մաքրել ու շտկել։

— Ի՜նչ վնաս, Խուրեն եղբայր, իմ տղայությանս հիշատակները նորա հիշատակաց հետ շաղվեցված են. երթանք ուրեմն անգամ մ՚ալ այդ եղչանիկ օրերը հիշենք։

Եվ Խուրեն շտկվեցավ հոն ճրագն ի ձեռին. և իրոք երբ ներս մտան՝ միայն խորանին ակնարդի մը ճաղը կրնար երևակայել, թե բոլոր կահ և կարասիքը տանց ապերանությամբ գնոջ մը քնքուշ ընտրությամբ զետեղված էին։ Գորգեր, բազմոցք, վարագույր, արկղ, զարդ ամենայն հարմար և հաճո էին աչաց։

— Ուրեմն, իշխան, քեզ հարմար երթամ անկողին մը բերեմ,— ըսավ Խուրեն։

— Ո՜չ, պետք չի կա,— ըսավ իշխանը վճռական և հրամայական ձայնիվ։

Խուրեն, սեն տասեն ակնարդի մը ճաղերով անգամ մը անկողնին փոքրիկ

ընկությանն վրա և ակնարկ մը Գուրգենի վիթխարի հասակին վրա՝ լրիվ բաղդատություն մ'ընելով մտքեն, գլուխը քովնտի մը շարժեց և երկու ճրագները վառելով և Գրիգորի ձեռքի ջուրի փոքրիկ կուժն ալ դնելով կարասլքի մը վրա՝

— Գիշեր բարի,— ըսավ և քաշվեցավ, միայն թողլով իշխանը յուր վիրալից սրտին ամենատխուր ուրախության մեջ, որ Հեղինեի սենյակը ան գիշեր պիտի անցըներ։

Մենք էլ կթողունք իշխանը այս սենեկին մեջ, կը թողունք հոն իր բոլոր հակասական դառն խորհրդածությանց և կրից հետ, ուր սեր, ատելություն, վրեժխնդրություն, ներողամտություն, արհամարհանք, անցելույն տղայության քաղցր հիշատակք իրար կը խառնվեին, կը կռվեին փոթորկացյալ ալյաց պես, և ուր վերջապես բնություն հաղթող ամենայն կրից իր իրավունքն ի գործ դրավ, և Գուրգեն խոր քունի մը մեջ ընկղմեցավ։

ԳԼՈՒԽ Զ.

ԳՅՈՒՂԱՑԻՆ

Բայց մենք թողինք մեր ուղևորները ճամփան, որոնք ամենքը պակաս բեռնավորյալ քան վահրիճ՝ առաջ անցան հետևելով Գուրգենի օրինակին. սա միայն մնաց վերջապահ կարավանին, և վերջապես վախելով, որ յուր ձին էլ մնա բոլորովին՝ ձիուն սանձը ձեռքն սկսավ կամաց-կամաց հետի քալել, և այսպես մութը կոխեց, երբ անցավ Թոսխա գետը և միշտ ծուլը ձախ թևին ունենալով հասավ Խարգիթ։ Քիչ մը մրսած, քիչ մը հոգնած, քիչ մը անոթի, քիչ մ'ալ ծարավ, վասնզի յուր ս. Կարապետի գինվո տիկը բոլորովին ցամքեր էր, «եթե իշխանը հոս չէ,— կ'ըսեր,— ավելի լավ, նա յուր հանգստությունն արդեն գտած է։ Արծրունի իշխանի մը ո՞վ չուզեր ծառայել, ո՞վ կրնա չի ծառայել մանավանդ այսպիսի իշխանի, որ մեղրի պես քաղցր է, երբ լավ վարվիս, աստուծո կրակն է, երբ գեշ վարվիս։ Հոգնած, դադրած՝ աս գիշեր Արծրունի եմ, իմ հանգստությունս կը գտնեմ աս գյուղը, փա՞ռք աստուծո, բարեկամ, խնամի չի պակսիր, երթանք մնգի տեղ ճարենք, թե որ իշխանը այստեղ չէ դադրեր»։

Ուստի, երբ գյուղին մեջ հասավ, և շուները շրջապատեցին զինքը՝ հաչելով և վրան ցատկելով, նա վայրկյան մը կեցավ մտածելով, թե ո՞ւր լավ ընդունելություն և վայելք կրնար գտնել, և այսպես հաշվելով ու կշռելով որոշեց, որ Գևորգ կնքահոր հյուր լինի, ուստի շտկվեցավ նորա տունը։

Բայց երբ դռան առաջ հասավ և դուռը զարնելու եղավ, դուռն ինքն իրեն հազիվ թե դպավ՝ բացվեցավ, ներս մտավ, տեսավ, որ մարդ չկար, զարմացավ մնաց. «Գեորգ կնքահայր գնացել է, լա՛վ, մեռեր է, լա՛վ, մի՞թե տղաքն էլ, կինն էլ, ամենն էլ մեռան»։ Ուստի որոշեց ավելի անդին, հին բարեկամ Կարապետին երթալ. այս անգամ դուռը պետք եղավ ծեծել և երկայն ծեծել, որ վերջապես մարդ մը եկավ բացավ, մրմրալով և գանգտելով քթին տակեն, բայց երբ հյուրը՝

— Բարի երեկո, եղբայր,— ըսավ շուտ մը։

— Աստուծո բարին գա վրադ, բարի եկար։— Պատասխանեց և դարձավ,— տղա՛ք, լույս բերեք, սենյակը կրակ վառեցեք,— հրամայեց։ Եվ երբ ճրագն եկավ, և երկու հին բարեկամք իրար ճանչցան ու պագտրվեցան,

— Եղբա՛յր, ինչո՞ւ ձայն չես հաներ,— կ'ըսեր Կարապետ։

— Ձայն չեմ հաներ իմանալու համար, թե այս քանի մը տարվան միջոցին հայ հյուրընկալությունը փոխվե՞ր է. բայց՝ փա՞ռք աստուծո, նույնը կը տեսնեմ. իրավ, տան տերը դուռը չի բացած կը մոմոա, բայց եկողին՝ բարի ես եկեր, հրամայե՛ր, կըսե։ Դարձյալ կը զրուցեմ, կեցցե՛ մեր Հայաստան և հայ, եղբա՛յր, Եփրատն ու Ճորոխ կ'անցնիս, փողը ձեռքդ գլուխ դնելու տեղ չես գտներ, այս օրհնած հողին վրա կեսգիշերուն քեզ կուգան դուռ կը բանան և ոչ միայն դուռ կը բանան, այլ գյուղեն կ'իջնեն քեզ ձյունին, բուքին մեջեն կ'ազատեն, կը հանեն։ Աստված հայուն բարի տա՞։

— Աստված ձայնիդ լսե, եղբայր, բայց քանի տարի է մեր մեղքերը միայն տեսավ, մեր գլխեն պատիժ պատուհասն անպակաս չըներ, դու քանի տարի է օտարության ես, չես գիտեր ի՞նչ քաշեցինք աս անօրեն անողորմ ազգին ձեռքեն, որ հույնն ու պարսիկ մոռացուց, ոտքին հասած տեղն ավերակ դարձուց։

— Ի՞նչպես չգիտեմ, մեկ քանի հատը՝ Մուշ՝ երեկ չէ առջի օր այս ձեռքս հավու պես մորթեցի։

— Աստված ձեռքերուդ մեջեն այսպիսի գործ պակաս չընե։ Տղա՛ք, բեռները վար առեք, ձին ախոռ քաշեցեք։

— Բայց դու, Կարապետ եղբայր, զրուցե՛, թե գյուղին մեջ իշխաններ հյուր եկա՞ն։

— Մենք իշխան չտեսանք, եղբայր։

— Կեսօրին մեկ փառահեղ, մեծ երիտասարդ մը անցավ,— ըսավ

Կարապետի ազայն,— քանի մը վայրկյան կեցավ եկեղեցվո առաջ. իբրև թե մտածեր իշնել և վերջը միտքը փոխեր, շտկվեցավ ձիուն վրա՝ քշեց և գնաց։ Ձին ճերմակ պիսակավոր էր, լա՜վ ձի էր։

— Նա է՝ Գուրգեն իշխանն է. հիմա նա... Մոխրարերդ իջած կը լինի։

— Ի՞նչ կրսես, եղբայր, կարելի՞ բան է։

— Գուրգեն անկարելին կարելի կ'ընեն։ Տեսնեի՞ք, թե ի՞նչ էր նա կայսեր քաղաքը, հունաց բանակներու մեջ, ամենքը կը սիրեին։ Մեր հայերը շատ պատիվ ունին զինվորաց մեջ. քսան տարի առաջ հունաց կայսրը հայ է եղեր և Արծրունի մը. մեծ զորապետը Մամիկոնյան էր. մենք Թորթում էինք, երբ նորա մահը իմացանք, ի՞նչ քաջ, ի՞նչ խելոք ծեր էր։

Այս միջոցին վառարանը սենյակը լուսավորեց, և մեր Վահրիճ եղբայր «փա՜ռք քեզ, աստված» ըսելով տարածվեցավ կրակին քով, տանտերն ալ դիմացը նստած կը հրամայեր տղոց, որ կերակուր բերեն, գինի հանեն, ձիուն ուտեստ տան։

— Բայց դու, եղբայր,— կ'ըսեր Վահրիճ,— ինձ զրուցե՛, թե ի՞նչպես է տեր Մահակ ավագերեց, մեռա՞վ, ո՞ղջ է, ի՞նչ կ'ընե, ո՞ւր են մեր բարեկամները. ձեզ մինակ և տխուր կը տեսնեմ. մեր կնքահայր Գեորգը, սանահայր Պետրոսը, ի՞նչ կընեն, լա՞վ են։

Այստեղ, Վահրիճ յուր բոլոր հնարիմացությունն ի գործ դրած էր հարցմունքին ձևին մեջ. չուզելով կնքահայր Գեորգի անունն առաջ դնել, որ նա նախադասելով կասկած չի տա, թե առաջ Գեորգի տուն գնացել էր։

— Ի՞նչ կը հարցնես, Վահրիճ,— պատասխանեց Կարապետ,— դու չե՞ս իմացեր, թե մենք այս քանի տարի է ի՞նչ կը քաշենք, աստված մեզ երեսն թողուց, այդ անիրավ տաճիկը կուգա այս տարի հոս կը զարնե, գալ տարի հոն կ'ավարե, կը սպաննե, կը գերե, կը քանգե։ Խեղճ Գեորգը բոլոր ունեցածը ծախեց, տուն-տեղ ամեն բան թողուց, Բաղդադ գնաց կինն ու քսան տարու տղան գերութենե ազատելու համար, թե որ ողջ, առողջ կարենա գտնել անօրինաց ձեռք։ Գեղին կեսը ավեր է. մենք էլ չենք գիտեր, թե գարնան ի՞նչ կը մնա մեզ լինիլ. զարմանք հոն է, որ դու հասեր ես այդպես մինակ. դուք, որ հոռոմոց երկրեն կուգաք, Տարոնո անցաք, ես կը զարմանամ ի՞նչպես անցաք. մենք կը լսենք, թե բոլոր այդ երկիրը աբաբացիք զարկեր կը բնակին, ժողովուրդը եթե չըսպաննեն, գերի կ'ընեն։ Արդեն քու խոսքդ քանի տարի է չի կար, երկու անգամ, որ ես Մոկս գնացի, քեզ հարցուցի, քանի տարիե պանդխտությամբ գնացել է ըսին։ Հիմա որ եկար՝ կերակուրդ կեր և մեզ պատմե քու

ճամփորդությունքդ, քու տեսածներդ, քու այդ Գուրգեն իշխանդ, թե նա այնպիսի՞ մարդ է, որ մեր ցավոց դարման լինի, թե ցավ մ'ալ ինք պիտի ավելնա մեր վրա։

Կերան, խմեցին մեր հյուր և տանտեր, և երբ հանգչեցան, մեր բարեկամ Վահրիճ սկսավ խառնափնթոր յուր պատմությունը պատմել. թե ինչպես մեկ երկու քուրդ սպաննելով յուր Մոկաց երկիրը և տեսնելով, թե վրեժխնդրությամբ զինք կը փնտրեն նոցա ազգականները, խոհեմություն համարեր էր քիչ մը ատեն քաշվիլ և դեպի Սպեր ուղևորիլ. թե ինչպես ճամփան հանդիպեր էր Գուրգեն և տեսներով երիտասարդ տղա մը ազնվական և անփորձ, որ ամենևին առանց յուր ոտքի տակ գտնված աշխարհքը ճանչելու՝ կերթար հեռու աշխարհք բախտ փնտրելու. և թե կարծելով, թե միամիտ տղու մը հետ գործ ունի, ինք՝ հասուն երիտասարդ և քիչ մը սրիկա, և թե այդ վիճակեն օգուտ քաղել ուզելով՝ նորա ծառայության մեջ մտեր էր. «Վասնզի,— կ'ըսեր Վահրիճ,— ես փախըստական մը՝ միտք ունեի երթալ ո՞ևիցե իշխանի մը ծառայության մեջ մտնել. իսկ այս տասնյոթը տարեկան տղուն ծառայության մտնելով՝ ինքնիրենս կ'ըսեի. ո՞վ որ զմեզ տեսնե, նախ իմ վրաս համարում կառնու, զիս սորա դաստիարակը կը կարծե. երկրորդ, երբ սա սկսի յուր գործը կարգին դնել և քիչ մը դրամի տեր լինիլ, բնականապես ես գանձապետ լինելով իրմե ավելի հարուստ պիտի լինեի. երրորդ, ես զորավոր և արդեն քանի մը պատերազմ տեսած, քանի մը քուրդ սպաննած, զենք գործածելու մեջ հաջողակ, այդ տղա իշխանն պիտի ահաբեկեի, երբ միանակ լինեինք և բնապես ավելի տեր ես պիտի լինեի, քան թե նա։ Ուստի Տարոնո սահմանագլուխը իրեն հանդիպելով՝ այս խորհրդածությամբք խնդրեցի զիս սպասավոր ընդունիլ. իսկ նա, որ միամիտ հարցմունքներով և պատասխաններով զիս զմարճացուցեր էր, երբ պարզ կերպով ընդունելով իմ խնդիրքս ավելցուց, թե սուտի և անիրավության թշնամի լինելով՝ պետք էր զգուշանալ այդ բաներեն, վասնզի չէր կրնար ներել և անպատիժ թողուլ, ծիծաղս հազիվ բռնեցի, վասնզի ես փորձ էի և երեսունը անցած. լա՜վ, շատ լավ ըսի և ընդունեցա։ Մեր դաշնադրության երկրորդ օրը Եփրատա մոտեցեր էինք, գյուղ մը գիշերը օթևանելով, երբ առավոտուն իշխանը ձի կը հեծներ, գյուղացի մարդ մը եկավ գանգատելու, թե ի՞նչպես ես անառակությամբ ուզեր էի բռնի գալել և համբուրել դեռահաս աղջիկ մը և նորա աղաղակներեն բռնադատյալ միայն թողլու էի պարտավորել և ծանր նախատինքներ ըրած էի տարեց կանանց, որ նորա պաշտպանության դիմեր էին. իշխանը, որ ես տղա կը համարեի, հանդարտությամբ ինձ հարցուց, թե իրա՞վ է այս ամբաստանությունը. իսկ ես քմծիծաղով մը՝ այո՜, ըսի. վասնզի ո՞վ կրնար վախել այդ

աղջկա նման պատանիեն, ան ատեն դարձավ գյուղացվույն ըսավ. «Հայրիկ, կը տեսնես, որ իմ ծառան սուտ չի զրուցեր, և ուրիշ անգամ այդպիսի բան ալ չըներ, ես քեզ կապահովեմ»։ Ես ալ հեծա և գնացինք։ Երբ Եփրատն անցանք, և երեկոյի ժամանակ էր, և գյուղը, ուր պիտի օթևանեինք, մոտ էր, հասանք աղբյուրի մը գլուխ, ուր մարդ չի կար, տեսնեմ իշխանը ձիեն վար թռավ, ինձ էլ լրջաբար վար իջնել հրամայեց, ձին ծառի մը կապեց, ինձ նույնը հրամայեց, ես ալ իմ ձին կապեցի։ Չէի հասկնար, թե ի՞նչ ըսել կ'ուզեր. բայց երբ տղայական հանդարտությամբ ըսավ, թե՝ «Դու խոստովանեցար աս առավոտ քու հանցանքդ, քու անիրավությունդ, և որովհետև ես խոսք տվի, որ ուրիշ անգամ այնպիսի շրություն պիտի չընես, պետք է զքեզ պատժեմ»։ Եվ հազիվ թե ծիծաղի ժամանակ ինձ թողլով՝ ձախ ձեռքը իմ ծոծրակս բռնեց այնպիսի զորությամբ, որ կարծեցի, թե երկաթ մը զիս հափշտակեց և գետին զարկավ, ու մեկ ծունկը մեջքիս վրա դրավ և աջ ձեռքի խարազանով ա՛նպիսի ծեծ մը ինձ զարնել սկսավ, որ ես շարժելու անկարող՝ պարտավորեցա աղաչել, պաղատիլ, որ թողու։ Իսկ նա անխնա կը զարներ, մինչև որ տղու պես «Մեյ մ'էլ չեմ ըներ» ըսի, վայրկենին թողուց և ինձ զրուցեց ամենայն հանդարտությամբ՝ իբրև թե մեր մեջ ամենևին բան մը չէր անցած, «պետք էր որ քիչ մի առաջ խոսք տայիր ուրիշ անգամ այդպիսի անիրավություն չընելու, ես քեզ այսչափ դյուրին չէի թողուր, բայց հիշեցի, որ իմ առաջին պատվերս չէիր մոռցել և սուտ չըսիր՝ չուրացար։ Տե՛ր, ե՛լ ուրեմն և զգուշացիր»։ Կ'ուզեի ելնել, բայց մեջքս, ուր ծունկը դրեր էր, կարկամել էր, ծոծրակս, ուր յուր երկթե ձեռները անցեր էին, չէի կրնար շարժել. իսկ խարազանի հարվածները ուր ընդուներ էր, այնպիսի վիճակի մեջ էր, որ ձին նստելն անկարելի էր. ուստի ամոթես վերջի ճիգն թափելով՝ խուրտուխաշ մարդ մը՝ ելա կանգնեցա. իսկ սարսափելի իշխանը, որ ես քառորդ մը առաջ իբրև տղա կը ծաղրեի, քակեց ձին, հեծավ վրան և գնաց գյուղ։ Հոն, աղբյուրի գլուխ կեցած, սկսա մտածել, թե այդպիսի վտանգավոր տղու մը ծառայության մեջ կենալեն ավելի լավ էր թողուլ երթալ։ Գյուղը չէի ուզեր մտնել, բայց վիճակիս դարման գտնելու համար պետք էր, ուստի քառորդվան մը ճամփան ժամու մը մեջ առնելով մտա գյուղ և առաջին տունը, որ հասա, հյուրընկալություն խնդրեցի. մեր հայ գյուղացիք լավ մարդիկ են, երբ իմ վիճակս տեսան և իմացան, թե ծեծ եմ կերած, պառավ մը բերին, որ դեղ շինե ինձ. ո՜հ, այդ պառավին դեղը իմ կերած ծեծես ավելի սարսափելի էր, վասնզի չի կրնալով դիմանալ, կովու պես կը պոռայի, երբ հանկարծ՝ «Վահրի՛ճ, չե՞ս ամչեր, որ տղու պես կը կանչվրտես» ըսավ ձայն մը գլխուս վերև, որ լավ ճանչեցի, իշխանին ձայնն էր, և իրոք ամաչեցի,

իսկ պառավը բժշկի անգթությամբ և անհոգությամբ՝ «որովհետև շուտ առողջանալ ուզեցիր,— կ'ըսեր,— մեծ դեղն ընել պետք էր, դու հանձն առիր. վաղն առավոտ հեծիր ձին՝ գնա՛, բան չի կա ամենևին, մի՛ վախեր»։ Երեսի վրա պառկած էի, վասնզի ուրիշ դիրք կարելի չէր, երբ ինձի քիչ մը բան ուտել հրավիրեցին. յուրաքանչյուր պատառ դժվար վար կերթար. ուստի պառավին դիմեցին, նա եկավ՝ ծոծրակս տեսավ, «հը՛, երեք հոգի են եղեր սա ծեծողները, մեկը գլուխն է բռներ, մեկը մեջքեն է կոխեր, մեկն ալ զարկեր է. հոգ չէ, աս ալ կ'անցնի» ըսավ, դեղ մ'ալ ծոծրակիս դրավ, և ես տքալով քուն մտա, առավոտուն արթընցա, որ աղեկ եմ։ Պառկած տեղս սկսա խորհրդածել և կ'ըսեի,— այո՛, իշխանը (որ էլ տղա չէր) այս սոսկալի ուժով շատ առաջ կ'երթա, և նա, երբ մեծնա, բնականապես մեծության մեկ մասն ալ իմ կը լինի, խելոք եղի՛ր, Վահրիճ, այդ մարդուն քովեն մի՛ զատվիր, սուտ մի՛ զրուցեր... բարեբախտաբար որ սուտ չէի զրուցեր, այդ տղան... այդ իշխանը զիս անտարակույս կսպաններ ծեծի տակ... բայց անիրավություն բառին մեջ աղջկան երես պագնելը կա՞... ես այսօր ճամփան պետք է երեսս պնդացնեմ և իրմե մեկնություն խնդրեմ և իմանամ, թե անիրավություններն քանի՞ են։ Ո՛վ կ'ըսեր, թե այդ աղջկան պես տղուն քով այդչափ ուժ կա... մեր Հայկն է այնքան ուժ ունեցել, մեկ մ'էլ Տրդատ թագավոր, սա էլ երբ քսան տարեկան լինի, լեռներ պիտի փրցնե։ Ես այս իշխանեն չեմ զատվիր, երբ ուրիշ անգամ սատանան զիս սխալեցնե, «մեկ մ'էլ չեմ ըներ, մեղա» կը գոչեմ ու կաղատվիմ։ Ուստի ելա պառկած տեղես, տեսա, որ կրնամ շարժիլ, փառք տվի աստուծո, պառավին ձեռքն համբուրեցի (այս համբույրին վրա ծեծի վտանգ չի կար), նա ալ «ապրիս» ըսավ, և ելանք ճամփա։ Այն օր, այսօր ութ տարի եղավ անցավ՝ ոչ ծեծ, ոչ ծանր խոսք մը չեմ լսած։ Բայց գիտնալու է բնությունը, դեմ տալու չի գար։ Վերջն սկսավ պատմել Մանվել Մամիկոնյանի բանակը մտնելն՝ և թե ի՞նչպես փոքրիկ գունդի մը զորապետ անվանյալ՝ շատ քաջություններ ընելով Թորթումի գավառը պարգև ընդունեցավ կայսրեն, և շատ դրամ Մանվելի միջնորդությամբ, որ անբաժանելի կ'ուզեր քովը պահել զինքն և աղջկան մեկը իրեն տալ, և որ Գուրգեն չընդունելով ամենքը զարմացան և կարծեին, թե Մանվել զինք պիտի արհամարհեր, բայց նա դարձյալ կը սիրեր, մինչև որ նա մեռավ, և իրենք գնացին Թորթում, ուր իշխանը գեղեցիկ ամրոց մը նորոգեց և գրեթե շինել տվավ լճին վրա և վայելուչ ամառանոց մը ջրվեժին քով, և բոլոր կահ-կարասիքը բերել տվավ թագավորական քաղաքեն։ Թեպետ չի խոսիր և չի զրուցեր, բայց կ'երևա, թե նշանած է օրիորդի մը հետ, և սիրածը շատ հեռու պետք չէ լինի, վասնզի այսօր

գիվահարի մը պես ձին կը քշեր, մինչև որ բոլորովին անհետացավ. ո՞ գիտե թերևս Ցոլակն էլ սպաննեց։

— Իշխանի, նախարարի, եպիսկոպոսի, վարդապետի գործն շատ դյուրին է, եղբայր, մենք ժողովուրդս մտածենք, որ իշխանին էլ, քահանային էլ, ավազակին էլ, հասնելու ենք, տալու ենք։ Դու այդ մարդուն ծառայելովդ ի՞նչ օգուտ ունեցար, այդ պատմե մեզի։

— Վրանիս աստված կա, ես այդ մարդեն երկրե երկինք գոհ եմ. ամեն տարի իմ ու տանս պետքը կը հոգար, մինչև իմ թուղթերս տարին անգամ մը ինք կը գրեր և կ'ուղարկեր, պատասխանները ձեռքս կը հասցներ, հիվանդ որ լինեի, կը նայեր, կը հոգար, միայն ինձի չէ՝ ամեն յուր ծառայողներուն հետ այսպես կը վարվեր։

— Այդ մարդը Արծրունի՞ է։

— Այո՛։

— Ինչո՞ւ Հայաստան կը թողու կ'երթա, մենք այդպիսի իշխանի մը պետք ունինք, այդպիսի քաջ մը և լավ մը երկիրը կը պահեր թշնամիներեն, ավազակներեն և քեզի պես սրիկա երիտասարդներն էլ կը խելոքցներ, մարդ կ'ըներ։

— Ուղորդ է, Կարապետ եղբայր, շատ ճշմարիտ ասացիր։ Հիմա ձեր իշխանն ո՞վ է։

— Աշոտն է։ Արծրունին. վատ մարդ չէ, բայց ի՞նչ կարող է անել. երկիրը չի կրնար պաշտպանել, երբ թշնամին քիչ է, սակավաթիվ է, այդ իշխանները կը վազեն վրան, կը ցրվեն, իսկ երբ շատ է, կը քաշվին իրենց բերդերն, իրենց ամրոցներն, վերեն կը նային, թե անօրենը ի՞նչ կընե, ինչպե՞ս կ'սպաննե, ինչպե՞ս գերի կը տանի, ինչպե՞ս կ'այրե, ինչպե՞ս կը հափշտակե։ Եվ երբ նա կ'երթա, կ'իջնեն իրենց ծակերեն, ժողովուրդը կը կսկծան և կը հորդորեն, որ նորեն ցանեն, նորեն հնձեն, նորեն շինեն։ Ահա մեր վիճակը։ Այդ անիծած արարը դեռ երեկ էր, որ եկավ քանդեց, ապականեց երկիրը. ի՞նչ ըրավ Աշոտ մեծ իշխանը, գնաց ամրացավ բերդերը, ընծաներ, պատանդներ ղրկեց արարին, ինքգինքը ազատեց, ճշմարիտ է, մեզ ալ ազատեց, բայց բանը բանեն անցնելեն վերջը։

— Մա՛րդ, մա՛րդ սասնցիք են, եղբա՛յր, նախարարներու, իշխաններու, Արծրունյաց, Բագրատունյաց ընդ չի կրցածը ըրին մարդիկը՝ գլուխ հանեցին։ Տարոն հիմա արաբ մը չի կա։

— Ի՞նչ կրսես, եղբայր, երկու շաբաթ չի կա, դեռ հոս էին Տարոնս եկած, սասնիկ զարկին, մենք իմացանք, պատրաստվեցանք, որ էշնահատակ չլինինք. եթե մեռնել է՝ գոնե մեռցնենք այնպես մեռնինք, ըսինք, մեկ մ'էլ իմացանք, որ անհետացեր են։ Այս անօրենները այս կողմ, այն կողմ կը զարնեն։ Լավ ծեծ մը պետք է ուտեն, որ մեյ մ'էլ չի գան։

— Եթե լավ ծեծ մը այս անօրենները խելոքցներ, որ է՛լ չի գան. սասնցիքներեն երեք օր առաջ կերածնին պիտի լինի, վանգի մեկ հատ չի մնացին. Ոստիկան, զորապետ, ձիավոր, հետևակ, ամենքն էլ մինչև վերջինը ջարդվեցան Մշո մեջ։

— Ի՞նչ, եղբայր, երա՞զ կը տեսնես։

— Ի՞նչ երազ, ս. Կարապետ վկա, որ հատ մը չմնացին։

— Դու ո՞տի՞ գիտես, ո՞վ քեզ պատմեց։

— Ես հոն էի, ես միասին էի, ես իմ աս ձեռոք քանի հատ հավու պես մորթեցի, ըսի քիչ մը առաջ. խո՞ւլ էիր, չիմացար։

Ան ատեն Վահրիճ սկսավ ծայրեծայր պատմությունն ընել։ Բոլոր ընտանիքը ժողված ուշադրությամբ մտիկ կ'ընեին. և երբ թշնամվույն կոտորածին հասան, երբ ոստիկանին մահվան պատմությունն լսեցին, է՛լ ուրախությունը իր վերջին սահմանները գտավ. Կարապետը յուր տղայքը վազցուց տերտերին, դրացվույն, ազգականին, խնամիին ու սանահայրին տունը՝ թեպետ ձյունը կուգար, բայց դարձյալ սենյակը բազմությամբ լցվեցավ, և երբ սասնցվոց քաջությունն երկրորդ անգամ և ավելի զարդարուն պատմեց Վահրիճ, ամենքն զմայլեցան, գինին ծածկած կարասներեն հայտնի եղավ՝ դուրս եկավ, երգող բնաստեղծը իր եռաթելյան պարզ նվագարանը ձեռք առած երգեց սասնցոց գովաբանությունը, ուրախությունը մինչև կեսգիշեր տևեց, և ամենքը «գիշեր բարի» և «լույս բարի» մաղթելով իրարու ելան գնացին իրենց տեղ, մեծամեծ շնորհակալություն ընելով Վահրիճին, որու պատմական աշխույժը մինչև փառավորեցավ բանաստեղծներու երգերուն մեջ։ Կային երիտասարդներ, որ երբ մեծերը տուներն մտան, ցրվեցան, իրենք փողոցին մեջ ձունին տակ կեցած՝ «Եղբա՛րք, մենք էլ սասնցվոց պես ինչո՞ւ չլինինք, վտանգի օրը երբ կը հասնի, հիմար հավուն պես գլուխնիս փոխանակ ծածկելու տեղ ինչո՞ւ չելնենք, թշնամվույն դեմ չի հարձակինք. մինչև ե՞րբ հայուն անունը վատությամբ ազատեղենք...», և այսպիսի խոսքեր ըսելով գնացին իրենց տները։

Իսկ նույն միջոցին Վահրիճ օրվան հոգնության և գինվույն զորության օգնությամբ մեռելի պես կը քներ և որ ավելին է սաստիկ կը խորդար Կարապետ եղբոր անվրդով սենեկին մեջ։ Եվ երբ առավոտ եղավ, հեծավ իր գրաստին վրա և կ'երթար գյուղ հարցնելու իր իշխանը մինչև որ մուտուն հասավ Ոշտունյաց Ոստանն։ Եվ ի՞նչ եղավ իր զարմանքն, երբ իմացավ, թե յուր իշխանը առանց հրաման մը ձգելու, առանց յուր խոսքը նաև ընելու, հեծեր Ցոլակին վրա՝ ելեր գնացեր էր։

Ան ատեն ձիու գլուխը դարձուց, «երթամ Մոկս, տեսնեմ, թե տունը կին և տղաք ի՞նչ կ'ընեն»։ Եվ իրոք, երբ Մոկաց սահմաններն մտավ, ամեն բան լավ և երջանիկ վիճակի մեջ էր. վասնզի հոն Սմբատ Բագրատունի Սպարապետին հովանավորության տակ հանգստություն և խաղաղություն կը տիրեր։

ԳԼՈՒԽ Է

ՀՌԻՓՍԻՄԵ ՏԻԿԻՆ

Բզնունյաց ծովուն արևելյան հյուսիսային ծայրը Առբերանի գագաթին գլխավոր քաղաքը Բերկրի, այն մեր հիշյալ ժամանակները գեղեցիկ քաղաք մ'էր իր զորավոր բերդով, որ բլրո վրա կը բարձրանար։

Այդ բերդը բնակություն էր Արծրունի իշխանաց, որ կը տիրեին Վասպուրականի ընդարձակ գավառին և օրավուր կ'ընդարձակեին իրենց տերությունը փոքրիկ նախարարություններ անհետացնել ջանալով։ Դիվանագիտություն բառը եթե չի կար, բայց իրը միշտ կար, և Արծրունի ժառանգ իշխանը իր խանձարուրներեն գիտեր, թե ի՞նչ պետք էր ընել ըստ պարագային հափշտակելու յուր դրացյաց ժառանգությունը և զորությունը օրավուր մեկ ձեռաց մեջ ամփոփելու համար։ Եվ քանի որ Հայաստան երկրի վրա թշվառություն կը զեղաներ, այդ տիրապետության ոգին Արծրունյաց մեջ կ'աճեր, կ'ուռճանար։ Եվ այս ժամանակներուս մեջ կը տեսնվի հայտնի պատմությունը ուսնել ուզողին, որ Հայաստան երեք մեծ նախարարությանց սկսեր էր բաժնվելու. Բագրատունյաց, Արծրունյաց և Սյունյաց։ Մամիկոնյանք անունով միայն կային։ Իսկ Վասպուրականի մեջ Ռշտունիք տեսանք ո՛ւր հասեր էին։ Ամատունիք, Ընտրունիք, Գնունիք, Քաջբերունիք, Հավնունիք, Վահևունիք, Անձևացիք հարկատու ճորտեր էին դարձել Արծրունյաց Աշոտ մեծ նախարարին, որ հանդուգն, փառասեր երիտասարդ մ'էր։ Ցուր մայրը՝ Հռիփսիմե մեծ տիկին հռչակավոր սրամտությամբ, խոհեմությամբ, ճարտարությամբ և բարեպաշտությամբ, քույր էր Բագրատունի մեծ իշխանացն Սմբատա և Բագարատա։ Եվ այն օրեն, որ եղբայրն ընտանյոք գերի գնացեր էր ի Բաղդատ, շատ տխուր էր և անհանգիստ, վասնզի ի բացառյալ, որ այնպիսի մեծ իշխան շղթաներու մեջ կը գտնվեր, կը վախեր նաև ուրացուիթենե, ուստի առանց իր զավակաց բան մը իմացնելու, իրեն հավատարիմ իշխան մը՝ Խոսրով Ակեացին, հնարագետ և իմաստուն

մարդ, ղրկած էր նամակով վիճակը իմանալու և ճար մ'ընելու նորա ազատության։ Ուստի մտատանջ, Բերկրվո ապարանից մեջ նստած, ամեն օր կ'սպասեր Խոսրովի գալուն և ահա երեք ամիս էր, որ նա չէր երևած։

Հռիփսիմե տիկինը, երբ վտանգն սպառնար, խելքը չէր շփոթեր. մանավանդ թե շատ անգամ, երբ այր մարդիկ իրենց գլխուն ղեկը կը կորուսեին, նա իրերը և պարագաները կշռել և համեմատել գիտեր, և ըստ այնմ շարժիլ խորհուրդ կուտար, և միշտ, երբ իր խորհուրդներուն հետևած էին յուր այրը՝ Տերն Արծրունյաց, և հիմա որդին Աշոտ՝ ամենեվին վնաս չէին կրած։ Ինք արենակցության կապ լինելով ի մեջ Բագրատունյաց և Արծրունյաց, զայն նիզակակցության դաշամբ նաև ամրացուցեր էր. իր փափագն էր նույն դաշնակցության մեջ մտցնել Սյունյաց երկու մեծ նախարարներն, և թերևս անօգուտ չլինեին յուր ջանքերը, եթե արաբաց արշավանքներով դառն կերպարանք չառնվին. ինք էր, որ երբ ամենքը հուսահատած էին և լեռնային բերդերը քաշվիլ կը մտածեին, անձամբ երթալով ընծայիվք և պատանդներով Յուսուֆ ոստիկանը, համոզեր էր խաղաղության յուր տղուն Աշոտի հետ։ Իսկ հիմա միշտ Բագրատա վրա էր միտքը. երբ իրեն լուր բերին, թե Խոսրով Ակեացի եկեր կ'սպասեր։ Շուտ հրաման ըրավ, որ մտնե. և ինչպես սովորություն է այսպիսի պարագայի մեջ, դեռ Խոսրով դահլիճին դռնեն միայն տեսնելով՝ Տիկնոջ երեսը պարզվեցավ.

— Բարի է գալուստդ, Խոսրով իշխան, Բագարատը տեսած ես, երեսեդ հայտնի է,— ըսավ։

— Այո, Տիկին, տեսա, տեսնվեցա հետը, և հուսալի է ամիրապետին խստությունը կակղնա քիչ ատենեն, վասնզի երկրին մեջ խռովության շատ սերմունք կան. ես արդեն հոն եղած ժամանակս դավադրություն մը հայտնվեցավ, շատ մարդիկ մահվան դատապարտվեցան։ Զանազան գավառներ կը խլրտին, և ապստամբության նշաններ կան. եթե մենք, քրիստոնյա հարկատու ժողովուրդք, հանդարտ և խելոք համբերենք, մահմեդականաց մեջ քաղաքական պատերազմը կ'սկսի։ Իսկ եթե խլրտինք, առիթ տանք, նոցա կրոնամոլությունը կը զայրացնենք, և կը միաբանին մեզի դեմ իրենց կատաղությունն ի գործ դնելու։

— Ես միշտ այն խորհուրդն եմ տվեր, որ այս անօրեն ազգին հետ խոհեմությամբ վարվինք, առանց գրգռելու, և ջանանք միանալու և միացնելու մեր մեծ իշխանները և մյուս կողմեն երկիրը լավ կառավարենք՝ զորացնենք. բայց ո՞ւմ կ'ըսես. մեր տղաքը խոսք չեն հասկնար. «Լա՜վ կ'ըսես, մայրիկ, դու շատ խելոք կը մտածես», կը զրուցեն,— դարձյալ

խելքերնին մտքերնին իրենց կրից, իրենց զվարճությանցն է. և իմ խորհուրդներես տասնին, քսանին մեկն ի գործ չի դրվիր։

— Ճշմարիտ է, Տիկին, բոլորը ըսածներդ, և Բագարատ իշխանը՝ յուր բոլոր մեծամտությամբ խոստովանեցավ, թե՝ «իմ գլխուս այս փորձանքը չէր գալ, եթե երկու հոգվո խորհուրդ մտիկ ընեի. աստված երկու խելք միայն ստեղծեր էր Հայաստանի մեջ, և ան խելքերու մեկը կնկան մը գլուխը լեցուցեր էր, մյուսը լեռնցի շինականի մը»։

— Ո՞վ է եղեր այդ լեռնցին,— հարցուց Տիկինը սուր աչքերը փայլեցնելով։

— Սասունցի Հովնան մը։

— Հովնանը՞։

— Դու Հովնան ուստի՞ կը ճանչես, Տիկին, ես ամենևին չէի լսեր այդ անծանոթ անունը։

— Ի՞նչպես չեմ ճանչեր։ Ահա մեր մեծամեծ իշխանաց հազար մեկ հիմարությանց առաջիններեն մեկն էլ, կ'արհամարհեն, ոչինչ կը համարին իրենցմե շատ վար գտնված ժողովրդյան մարդը. նորա խելքեն, քաջությենեն, կարողություններեն օգուտ քաղել ամենևին չգիտեն։ Հազար անգամ ըսեր եմ եղբարցս էլ, զավկներուս էլ, որ օրինակ պետք է առնուլ նույնիսկ արաբներեն, նույնիսկ հույներեն, որ ամեն մարդու՝ հապարակ զինվորին, նաև օտարականին մտավոր և մարմնավոր զորությունը չեն արհամարհեր, կը վարձատրեն, փառաց և մեծության կը հասցնեն. իսկ սոքա նախատինք կը համարին անձանց, ո՛չ իբրև հավասարի, այլ իբրև մարդու վրա նայիլ, ժողովրդյան մեջեն ելած մարդուն վրա, որ խելք և հաջողակություն ցույց կուտա, և զանի ոտնակոխ ընել, ոչինչ դարձնել իրենց պարտքը կը համարին։ Չեն տեսներ հիմարները, որ մեր Հայաստանյայց եկեղեցին եթե այսչափ հալածանաց կը դիմանա, այսչափ ներքին և արտաքին բռնությանց կը տանի, այն պատճառավ միայն անկործան կը մնա, որ անխտիր մտավոր կարողությանց իր դռները բացեր հետին ողորմելի գյուղացին, շինականը, անազատը կառնու յուր ծոցը, կը սնուցանե, կը մեծցնի և կաթողիկոսական գահույից վրա նաև կը բարձրացնե։

— Բայց այդ Հովնան կը ճանչեմ ըսիր, Տիկին, ուրեմն երևելի մարդ է։

— Եթե յուր զգեստներն նկատենք, եթե յուր ազգային անունը նկատենք, եթե յուր հարստությունն ու կալվածները նկատենք, ամենաոչինչ մարդ է. իսկ և եթե իբրև քաջ և խելոք մարդ նկատենք, մեր բոլոր իշխաններու՝ ոչ Վասպուրականի համար կ'բսեմ. այլ բոլոր Հայաստանի իշխաններու մեջ տասն հոգի չեմ գտներ նորա հետ բաղդատելու համար։

— Բայց ի՞նչպես կարելի է Արծրունյաց Տիկնոջը այսպես լավ ճանաչել հետին շինական մը. զիս այդ կը զարմացնե։

— Ես երբ զինք ճանչեցի, Արծրունյաց Տիկին չէի՝ այլ Բագրատունյաց Օրիորդ։ Հորեղբորս պալատն ի Տարոն այդ տղան կը տեսնեի. տարեկից իշխանազուններուն հետ կը խաղար, կ'իյներ, կ'ելներ հաջողակ, զորավոր, առաջին ամեն մարմնավոր կրթության և մարզերու մեջ։ Նույնպես մտավոր կարողության կողմանե կը զարմացներ նաև այն վարդապետը, որ վարժապետելու և ատենադպրության պաշտոն ուներ հորեղբորս քով։ Եվ այն աստիճանի յուր հաջողակությունը հայտնի էր ամենուն, որ դեռ 15—16 տարեկան, որևիցե դժվար պարագայի իրեն կը դիմեր ամեն մարդ։— Ատենադպիր վարդապետը հիվանդ էր՝ Հովնան կը կատարեր նորա պաշտոնը։ Գաղտնի խոսք մը կար մեկուն տանելիք՝ Հովնանու կը հանձնվեր նույն պաշտոնը։ Հորեղբորս տղաքը վտանգավոր, անել ճամփու մը մեջ մտած էին՝ Հովնան կրնար դիրենք հանել՝ ճողոպրել։ Մեկ մ'էլ հանկարծ օր մը խոր լռություն տիրեց Հովնանու անվան և անձին վրա, որ անհետացավ մեջտեղեն. բայց եթե Հովնան միայն անհետանար՝ զարմանք չէր, այլ միևնույն ժամանակ հորեղբորս աղջիկներեն սրամիտն ու ծնողաց սիրականը Վասկանուշ, Հունաց սահմանները կուղարկվեր կուսանաց վանքի մը մեջ յուր կյանքը մաշեցնելու։ Ամենուն զարմանք պատճառեց այս դիպվածը, բացի ինձմե. վասնզի ես գիտեի, թե Բագրատունի Օրիորդը և Հովնան իրար կը սիրեին, և մեկ քանի անգամ իրենց տեսության ներկա գտնվեցա ծաղկանոցին մեջ, ուր գիշերները ժամադիր էին իրար տեսնելու համար այդ երկու սիրահարները։ Հետևվանքը սարսափելի երևցավ ինձ, հորդորեցի Վասկանուշ մոռնալ այս սերը, հեռացնել իրմե այս երիտասարդը, որ թեպետ ամեհի առյուծ, բայց նորա քով ամենախոնարհ և քծուն շուն էր, իսկ Օրիորդը թեև իրավացի կը գտներ իմ խորհուրդս, բայց սրտին սիրածեն բաժնվիլ շատ դժվար էր. ուստի, երբ հանկարծ այս աքսորները լսեցի, չի զարմացա, այլ դառնացա, մանավանդ, այս դիպվածեն վերջ Հորեղբորս հրավերին հնազանդելու համար գնացի և տեսա, որ զավկին հետ ինքն էլ պատժվեր էր և երեք ամսու միջոցին մեջ՝ ժամանակեն առաջ ծերացեր էր։ Խե՜ղճ հայր, զիս զավկին պես կը սիրեր՝ յուր զավկին սիրույն համար, վասնզի դիտեր, թե նորա շատ սիրական էի և կերպարանոք էլ նման. հանձն կ'բառնուր հալիլ, մաշիլ, զավակն սպանել և ինքն էլ մեռնիլ, որպեսզի յուր հիմար ազնվատոհմական ամբարտավանությենեն բան մը զոհած չլինի։ Երթալես քանի մը օր վերջը գիս տարավ նույն ծաղկոցը ժամտեղ

Օրիորդին սիրո վայրկյաններուն. շրջան մ'ըրինք մեկտեղ. և այն խիստ մարդը հանկարծ թուլցավ, արտասուքը գետորեն աչքերեն իջեցնելով, «Թշվառ հայր եմ ես, Հռիփսիմե՛, ողբա՛ իմ վրաս» ըսավ։ Իսկ ես նույն վայրկենին, երբ առանց անմեղադիր ընելու իմ բարեկամուհիս, խընդրել համարձակեցա, որ բավական համարի եղած պատուհասը, թույլ մարդը գազան դարձավ, արտասուքը վայրկենին չորցավ և երկու շանթաձիգ աչքերով՝ «մի՛ խոսիր, մահը միայն զանոնք իրենց արգելանեն կրնա բաժնել, վճիռն անդառնալի է՛» գոչեց։ Ես մեր տունը դարձա սրրտաբեկ և դառնացյալ։ Հորեղբայրս օրավուր տկարացավ, բայց այնչափ տարի ապրեցավ, որ երբ մեռավ և Վասկանուշի հրավեր գնաց տուն դառնալ երբ կամենար, նա այնչափ միայն պատասխաներ էր, թե՝ «Շատ երջանիկ եմ կրոնավորության հավասար կյանքի մեջ, ուր ազնվատոհմություն չի կար և աստուծո արարածներն հավասար էին»։

Այստեղ դադրեցավ իշխանուհին։ Իսկ Խոսրով հետաքրքիր՝ չի կրցավ համբերել և հարցուց.

— Իսկ Հովնան ի՞նչպես մեջտեղ ելավ նորեն։

— Այդ երկաթե մարդը սպաննել միայն կարելի էր, բայց մշտընջենավեր բանտի դատապարտել հիմարություն էր։ Հորեղբայրս՝ նա էլ Շիրակա գավառը, որ իր սեփականությունն էր, վանքի մեջ բանտարկել հրամայած էր և ամենայն խստությամբ պահել. և իմանալու համար, թե յուր հրամանը ճշտությամբ կը պահվե՞ր, հանկարծ երկու տարի վերջը ճանապարհորդություն հանձն առնելով կ'երթար աչոք տեսնելու յուր կալանավորը, որ բավական նկուն չգտնելուն համար կը հրամայեր ավելի խիստ բանտի մը դատապարտել և, գտնելով այդ վանքին ընդարձակության մեջ գետնափոր սենյակ մը խոնավ և մահարեր, հոն նետել կուտար այդ անզգամը, որուն եղեռնն էր սիրել գեղեցիկ, սիրուն և սիրո արժանի աղջիկ մը, և որուն վիճակին բարձրության և հեռավորության միջոցը խեղճ լեռնցին չէր կրցեր չափել։ Բայց կ'երևի թե աստված կուզե երբեմն մեր հիմարության աստիճանը մեր երեսին հայտնել. այդ մթին և խոնավ սենյակը, որ խոր վիրապ կը նմաներ, անծանոթ գետնափոր ճամփու մը սկիզբն էր, ուսկից նույն գիշերը սողալով ելեր, գընացեր և ազատեր էր Հովնան։ Իսկ Բագրատունյաց իշխանը յուր վրեժխնդրության մեջ սխալյալ՝ լի ատելությամբ եկավ Տարոն և հոն քանի մը տարիեն մեռավ, յուր երկու երիտասարդ զավակաց մահն էլ տեսնելով։ Իսկ Հովնան ութ-տասը տարիե վերջ լսեցի, թե եկեր էր Սասուն. քաշված կյանք մը կը վարեր յուր լեռներուն և յուր հայրենի գյուղին մեջ, նույն գյուղացիներուն պես պարզ ապրելով. ետքը զինքը տեսա մեկ-երկու անգամ եղբորս՝ Բագարատ իշխանին տուն, ուր նորա հրավիրելով

կուգար, և կ'իմանայի, թե սասունցիք հայտնի իմացուցել էին, թե ո՛ե-վիցն բանի համար երբ պետք ունենար իրենց իշխանը՝ Հովնան աղբոր միջոցավ և ձեռոք կ'ուզեին, որ կարգադրի։ Եվ այս կը նշանակեր, թե ո՛վ ուզեր Սասունն իրեն ունենալ՝ պետք էր Հովնան միջնորդ ունենար։— Իսկ դու, Խոսրով, նամակ մը, գրություն մը չունեցա՞ր եղբորմես։

— Ո՛չ, Տիկին, անկարելի էր, վասնզի շատ խստությամբ կը պահեին իշխանը, ես երբ հոն հասա դեռ կրկին շղթայիվք կապված էր, բայց վերջը կապանքը թուլացուցին և բանտը փոխեցին, և հրաման եղավ, որ ընտանիքը երբեմն երթան զինք տեսնեն. կրոնափոխության հորդորանք և սպառնալիք դադրեցուցին. այս ժամանակ էր, որ ես էլ բանտապետին ձեռք կաշառք խթելով՝ կրցա զինք երթալ տեսնել. ուրախ էր և հույս ուներ բոլորովին ազատել, ինձ հանձնեց աղաչել Տիկնոջդ, որ ամենքի հանդարտության հորդորես, որպեսզի այս անզգամ և անհանդարտ ժողովրդոց մեջ ծագելիք խռովության արգելք լինի։

— Արդեն իմ փափագս էլ այդ է, և միշտ Աշոտի այս հորդորն եմ տվեր և նույն խրատը կը շարունակեմ։ Բայց, դու, Խոսրով իշխան, հոգնությունդ ա՞ռ, ետքը ժամանակ մի՛ կորսնցներ, գնա Մոկս, եղբորս՝ Սմբատ Սպարապետին, պատմե ի՞նչ տեսություն որ ունեցար Բագարատա հետ։

— Գլխուս վրա քու հրամանքդ, Տիկին,— ըսավ Խոսրով, ձեռքը պագավ, և հազիվ թե դահլիճին դռնեն դուրս ելավ, ընդարմացավ, փայտ կտրեցավ մնաց և ետ-ետ քաշվելով դարձյալ նեռս մտավ։

— Այդ ի՞նչ է, Խոսրով, ի՞նչ կը նշանակե քու ետ դառնալդ,— ըսավ Տիկինը բազմոցեն ելնելով։

— Նայե՛, Տիկին, տե՛ս,— պատասխանեց Խոսրով։

Եվ իրոք Տիկինն ալ ապուշ մնաց տեսնելով Աոծրունյաց պատանդները, որ զվարթերեք՝ մեկիկ-մեկիկ ներս կը մտնեին իրենց հարգանքը մատուցանելու մեծ Տիկնոջն Արծրունյաց։

— Այս ի՞նչ է, այս ի՞նչ հետադառձ է,— կ'ըսեր Տիկինը զայրացյալ,— այսպես դուք մեզ կը խաբեք. ձեր փախուստը չե՞ք իմանար, թե ոստիկանը խաբել չէ, այլ՝ զմեզ։

— Բայց չէ, Տիկին, ոստիկանը ձեզի օրեր՝ ինքն էլ և բոլոր իր զորքն էլ չի նան՝ կոտրվեցան ամենքն էր։

— Ի՞նչ կ'ըսեք. ո՞վք էին այդ հիմար գործողությունն ընողներն։

— Սասունցիք։

— Սասունցի՞ք։

— Այո, սասունցիք իրենց գլուխը Հովնան ունենալով եկան Մուշ կոխեցին, արաբները բոլորը ջարդեցին, Ցուսուֆ ոստիկանն սպաննեցին,

մեզ էլ ազատեցին և իրենք գնացին ս. Կարապետի վրա հարձակող խումբին դեմ։

— Հովնանեն գատ ուրիշ գյուխ չի կա՞ր այս սասնցվոց։

— Գուրգեն իշխանն էլ միատեղ էր, բայց նա չէր հրամայեր։

— Գուրգե՞ն, Արծրունի՞ն, ի՞մ տղաս, նա՞ այդպիսի հիմարություն ըրավ։

— Ո՛չ, Տիկին, մեր Գուրգեն իշխանը չէր. ուրիշ Գուրգեն մ'էր սա։ Մենք զինք չէինք տեսած, բայց սա էլ Արծրունի էր։

Եվ այս խոսքերն պատանիքը ամենը մեկտեղ կը զրուցեին, իսկ Տիկինը, որ գունատյալ և մինչև հիմա կանգնած կիրքով կը խոսեր, նրսուտավ իբրև հոգնած, իբրև թե ինքնիրեն՝ «Տե՛ր աստված, աս ի՞նչ խառնակություն է, աս ի՞նչ շփոթություն է», կ'ըսեր և երիտասարդաց մեկուն ակնարկ ընելով, «Գրիգոր իշխան, մոտ ե՛կ և դու միայն պատասխանե,— ըսավ։— Ո՞վ է այդ Գուրգեն Արծրունին. կրցա՞ք իմանալ»։

— Այո՛, Տիկին,— պատասխանեց պատանի իշխանը,— ես իր ծառային հարցրի, իմացա, թե նոր կը հասներ Հունաց երկրեն, թե ինք Արծրունի է հոր կողմե, Մամիկոնյան մոր կողմե. գեղեցիկ, պարթև, սև աչք, սև ընքվի, սև մորուք, քսանհինգ-երեսուն տարու երիտասարդ մ'է, թե Կոստանդնուպոլիս կայսրը աս տղան շատ կը սիրե եղեր իր քաջությանց համար և թե իրեն երկիր էլ տվեր է, և թե աղջիկ էլ ուզեր է տալ, բայց սա թողել ամեն բան հիմա հայրենիք կը դառնա։

— Սորա հոր անունը իմացա՞ր։

— Այո՛, Տիկին, Ապուպելճի մը տղա է եղեր։

— Աս գեղեցիկ պարագաներուն մեջ միայն այս կը պակսեր,— ըսավ Տիկինը ցավագին՝ խոսրովի դառնալով։— Այս Գուրգեն հետը զորք էլ ունե՞ր։

— Ո՛չ, Տիկին, երկու թիկնապահ երիտասարդ և ծառա մը։

— Սասունցիք իրեն կը հնազանդեի՞ն։

— Ո՛չ, Տիկին, սա և ոչ գործողության մեջ խառնվեցավ, և բացի Հովնանե մարդու հետ նաև չի խոսեցավ։ Մեկ օր մը միայն մեզ հետ ճանապարհորդեց, հապիվ թե մեկ երկու խոսք մեզի ըրավ։ Իսկ երկրորդ առավոտուն բարի՛ լույս մը միայն ըսավ և ձին քշեր գնաց. մենք կարծեցինք, թե զինք նորեն պիտի գտնեինք, իսկ նա անհետ եղեր էր, միայն գիշեր մը Ոստան հանգչեր էր։

— Լա՛վ, իմացա, գնացե՛ք, հանգչեցեք, տղա՛ք,— ըսավ Տիկինը։ Եվ երբ ամենքը գնացին,— տե՛ս, խոսրով, մարդս հիմա ի՞նչ ընե. մենք ինչ բանե որ կը վարեինք, ահա՛ այն կատարվեցավ, մեր վերջը հիմա ա՞ր պիտի երթա՝ աստված միայն գիտե։ Սա միջոցիս Ապուպելճի տղան էլ մեջտեղ ելնելն մի՞թե աստուծո պատիժն չէ՞։ Ես այնչափ աղաչեցի իշխանին, որ խնայե այդ մարդու կենաց, իրեն ազգակիցն ու արենակիցն էր. բայց կնոջ խոսք ի՞նչ նշանակություն ունի, կնոջ խելք ո՞ր բանը կը հասնի, մարդուն արյունը թափեց անխիղճ և, անիրավության անիրավության վրա ավելցնելով, իմ որդիս Աշոտ, հորը հաջորդելով, որը տղուն ժառանգությունը բոլորովին հափշտակեց։ Հիմա իմ միտքս շփոթեցավ. եթե այդ Գուրգեն երիտասարդ՝ պատերազմի մեջ մեծացած, որ միայն հանդիսատես եղեր է կոտորածին, մի՞թե արաբին գործիք պիտի չլինի՞ մեզ դեմ։ Արդար դավաճան մը, իրավարար մատնիչ մը մեզի կը պակսեր, փա՞ռք աստուծո, նա էլ գտնվեցավ։

— Ի՞նչ կըսես, Տիկին, վերջապես, այդ երիտասարդը Արծրունի արյուն ունի երակաց մեջ. այդպիսի անզգամություն չի կրնար ընել։

— Ի՞նչ հիմար խոսք զրուցեցիր, խոսրով, այդ խոսքը զիս ավելի կը վախցնե հին հիշատակներ միտքս բերելով։ Մեծին Ներսեսի ժամանակակից մատնիչ, ուրացող, դավաճան Մերուժանը մոռցա՞ր, որ Բագրատունի ասպետին շամփուրով պսակված սատկեցավ, Նույնպես ուրացող դավաճան Շավասպ Արծրունին մոռցա՞ր, որ Մեծին Վարդանա սուրով սատկեցավ, և գրեթե մեզ ժամանակակից երրորդ Մերուժանը, որ Մահմեդի կրոնքն ընդունեցավ և կորավ։ Ես Արծրունիներեն իրավունք ունիմ վախելու, այս Արծրունյաց տուն սովորաբար միջին կարգի մարդ չունի, խոսրով, կամ լավ մարդիկ կը բերե, կամ անօրինաց անօրեն կը բուսցնե։

Այս խոսքերը երբ զրուցեց Հռիփսիմե տիկին, ոտք ելավ. թեպետ հիսունն անցած՝ բայց դարձյալ յուր գեղեցիկ հասակավ և կենդանի, վսեմ նայվածքով ամեն աչքի ակնածություն և պատկառանք կը բերեր։ Խոսրով այս խոսքերուն պատասխան չի տվավ, և լռություն մը տիրեց, մինչև Տիկինը իբր քունե արթնցած՝

— Խոսրով, գնա՛, հանգի՛ր, եթե ես պետք ունենամ քեզ, կ'իմացնեմ,— ըսավ. և երբ Խոսրով գնաց, մտավ յուր սենյակին կից մատուռը աղոթելու։

Թերևս բոլոր յուր տան մեջ այս արթուն կինը միայն ուներ սրամտություն գուշակելու համար փոթորիկը, որ պիտի հասներ, և որովհետև մարդկանց վրա հույս չուներ, նամանավանդ և հիրավի կը կասկածեր ու կ'երկմտեր, ինկավ աստուծո առջև ողբալու իր երկրին կորուստը։

Այս միջոցին Աշոտ իշխանը և յուր եղբարք Գուրգեն և Գրիգոր որոսի, խաղերու, անառակությանց և վարձությանց միայն զբաղյալ էին,

և երբ պատահարն իմացան և պատանդներն տեսան, ոչ միայն իրենց մոր հոգերն ու կասկածները չունեցան, այլ ուրախությամբ իրենց խրախճանությունքն ավելցուցին։ Իսկ Գուրգենի գալուստը բոլորովին արհամարհեցին, տղա տեսեր էին զինք և իրենց միտքը չէր կրնար համոզվիլ, թե տղայն երիտասարդ և մարդ էր դարձել։

Ի՜նչ մեծ տարբերություն այս աշխարհի տեր նախարարաց և խեղճ Հովնանու մեջ. լեռնցի մարդը նույն միջոցին ժողված յուր եղբայրները՝ արաբացվոց ավարյալ զենքերուն կը կրթեր զիրենք և Մուշ գտնված պարարը չէր թողուր, որ խառնիխուռն անհետանա, այլ խույթի անառիկ տեղվանքը պահպանել կուտար, լեռան դյուրամատույց գյուղերը ամրացնել կ'աշխատեր, և այս գործողությանց մեջ ոչ իշխանական, ոչ հրամայական ձև չի կար իր քով, այլ ինք առաջինն էր իբրև մշակ գործելու և իր բարի օրինակը միայն կը պարտավորեր ուրիշներն աշխատելու։

ԳԼՈՒԽ Ը

ԿԱՆԳՈՒԱՐԻ ԱՄՈՒՐԸ

Այն միջոցին, որ Բերկրվո Արծրունյաց ապարանից մեջ Հռիփսիմե տիկին յուր ցաված սիրտը աստուծո առջև կը տարածեր, Աշոտ իշխան յուր զվարճությանց և յուր գիներբվաց մեջ կը հրճվեր, Հովնան, յուր լեռներուն ամրությունը բավական չի գտնելով կ'աշխատեր, Վահրիճ ուրախ, զվարթ յուր կնոջ և զավկներուն հետ կը պագտվեր, Վարագա լեռան ստորոտեն բաժնված հեծյալ մը յուր լայն մոխրագույն վերարկուին փաթթված, որ յուր սպառազինությունքն կը ծածկեր և ցուրտեն կը պահպաներ, ծանր և մտախոհ կ'երթար դեպի խոյ։ Թեպետ եկեղեցի, խորան, սեղան չի կար յուր առաջ, այլ երկինք ամպամած և գետին ձյունամած, բայց այդ մարդը երբեմն գլուխը երկինք կը վերցներ և յուր լայն կուրծքեն մեծ հառաչանք մը կը հաներ, ապահով, որ ոչ ոք չէր կրնար լսել յուր սրտին տխուր ձայնը։ Գուրգենն էր այդ մարդը, որուն ծանր էր Վասպուրականի օդը և որոշեր էր վայրկյան մը առաջ ձգել հեռանալ այն երկրեն, որ իրեն թշվառության աղբյուր մը եղած էր։ Թեպետ անբժշկելի էր իր սրտին վերքը, և իրեն համար չի կար բան մը բնության մեջ, որ զայն դարմաներ, բայց դարձյալ ինքնիրեն կ'ըսեր. «Անգամ մը եթե զինք տեսնեի, անգամ մը եթե սրտիս սա վերքը նորա

առջև դնեի և նորա սիրտն էլ անգամ մը տեսնեի և այնպես հեռանայի սա երկրեն, երթայի Թորթում՝ փոխանակ երջանկության, որ երազեցի՝ ցավագին կյանքս անցնելու, հեռու աշխարհքեն, որ զիս ծնավ, հեռու անձեն՝ առանց որո կյանքը տանջանք է մշտնջենական»։

Այդ եղանակին ուղեգնացությունը թեև զվարճալի չէր, բայց խանձյալ սրտի մը համար մարդկանցմե հեռավորությունն ու միայնությունը ա՜նչափ փափագելի էր, որ երբ ճանապարհին վրա գյուղ մը կը հասներ Գուրգեն, ժամ առաջ հեռանալ կը ջանար, որպեսզի խոսելու, պատասխանելու հարաբերություններեն ազատ մնա։ Երկու-երեք գիշեր աննշան գյուղերու մեջ անցնելե վերջը յուր ուղեգնացությունը, երբ Խոյի մոտեցավ և ճանապարհն երկուքի կը բաժնվեր, փոխանակ արևելք երթալու, դարձավ դեպի հյուսիս և մտավ Անձևացյաց ժայռոտ գավառը։

Հեղինե անգամ մը տեսնելու փափագը ո՜րչափ զորավոր էր սրտին մեջ, այնչափ էր իրմե փախչելու մտածությունն էլ, որպեսզի նորա կյանքին մեջ դժբախտ պարագա մը չավելցնե, յուր միտքը կը տատաներ, բայց դարձյալ սիրո զորությունը, որ կը ձգեր զինք դեպի հյուսիս՝ դեպի Կանգուար ամուրն, շատ ավելի բուռն էր։ Թեպետ մեծ և բարձր էր սիրտը, սակայն չէր կրնար անցնիլ և արհամարհել տեղեկություն Մուշեղի՝ Անձևացվոց իշխանին վրա, որ կարելի էր առնուլ առանց խույզ և խնդիր ընելու այդ երկրին մեջ, վասնզի յուր Հեղինեի կյանքը կապված էր նորա կենաց։

Այսպես կը մոտենար նա Հոգյաց վանքի շրջակայքը, որ շատ հեռի չէր Կանգուարե և ուսկից կը նշմարեր ամրոցին երկնաբերձ աշտարակները։ Այս ահավոր բերդը Անձևացյաց ժայռերուն մեջ նաև ամենեն անառիկ համարված էր, նախ որ՝ քարայրներե ի քարայր իբրև թե լաբիրինթոսի մը մեջ պետք էր պտտիլ հասնելու համար ահագին ժայռի մը ստորոտը, երկրորդ՝ ժայռին բարձրության վրա արհեստական պարիսպներուն և աշտարակներուն պատճառավ, ուր ոչ պատերազմական հարված և ոչինչ չէր հասներ հողի կտոր մը հանելու։ Եվ երրորդ՝ միմիայն ճանապարհ կար այդ ժայռին գլուխը դրան հասնելու համար, ճանապարհ, որ թշնամվույն դեմ բազմատեսակ արգելքներ ուներ։

Այդ կետին վրա կանգնած Գուրգեն սրտատրոփ կը նայեր ամրոցին. ո՜չ անոր բարձրության և ոչ շինության վրա ապշյալ, այլ միայն անոր համար, որ Հեղինե այդ ամրոցին մեջ կը բնակեր և իրեն շատ դժվարին էր հասնիլ նաև անգամ մը հետը առանձին տեսության համար։

Երբ այս մտածությանց մեջ շփոթած՝ չէր կրնար որոշել, թե ո՜ր կողմն երթար, ուղղակի ամրո՞ցը թե վանքը կամ թե գեղերուն մեկը, որ ժայռերուն մեջ կը ծածկվեին, հանկարծ մեկ երկու հոգի տեսավ, որ փախ-

շելով գեպ իրեն կը վազեին և երբ իրեն մոտեցան՝ «Փախի՛ր եղբայր, փախի՛ր»։ Մեկն անցավ, և մյուսն էլ կ'անցներ՝ Գուրգեն նորա թևն բռնեց և արձանի մը պես կեցուց։ «Ա՛յ եղբայր, թևս կոտրեցիր», կը գոչեր մարդը. իսկ Գուրգեն թուլցնելով, «Մա՛րդ, ինչո՞ւ կը փախչիս, պատճառն զրուցե՛», ըսավ։

— Պատճառն այն է, որ ավազակ քուրդերն դարանի էին և բազմությամբ մեզ զարկին, իշխանը վիրավորեցին, և այս ճամփով կուգան, քեզ էլ, մեզ էլ եթե չսպաննեն, գերի կը տանին։— Եվ դարձյալ կը ջանար փախչելու ձեռքեն։

Իսկ Գուրգեն դարձյալ ամուր սեղմելով թևը.

— Մա՛րդ,— կ'ըսեր,— սա իշխանին անունը տուր, թե կ'ուզես, որ քեզ թողում։

— Ա՛յ, թևս կոտրեցիր, Մուշեղ, Մուշեղ է անունը. Անձևացյաց իշխանն է... ահա՛ եկան անօրենները...

Վայրկենին Գուրգեն թողուց մարդը. «Տե՛. հիմա փախի՛ր, անպիտան մարդ» ըսավ և աչքով կշռեց ձիավորաց խումբը, որ կուգար՝ տասընութը-քսանի չափ նիզակավոր, սոցա կերպարանքեն և ըրած գործողություններեն հայտնի էր, թե մոտ գտնված Խոյա տաճիկ ամիրայի զորքերեն էին, որ դարանի մտած Կանգուար ամրոցին շուրջը՝ Մուշեղ իշխանը ձեռք անցնելով փրկանք առնուլ, ամրոցին տիրել իրենց նպատակ ունեին։ Իսկ Գուրգեն վերարկուն վար առավ, փոքրիկ վահանը ձախ ձեռք, աջով երկայն սրով զինյալ. «դե՛ քեզ տեսնեմ, Յոլակ» ըսավ, և երասանակը սեղմեց՝ ու թողուց. փոթորիկ մը եղան մարդ ու ձին և իրեն թե թռչելով հարձակում մ'ըրին խումբին դեմ, որ կուգար։ Ահագին սուրը կը շողար աջ ու ձախ, փայլականման լույս մ'էր, որ կը ցոլար, և այս ու այն կոզմ մեռյալ և վիրավոր կը թապլտկեին. հազիվ թե քանի մը վայրկյան՝ ոչ ոք ոտքի վրա շուրջը չի կար, այլ ո՛վ որ կրցեր էր՝ փախեր էր, և միայն մեկ մարդ մը կար ձիու մը վրա՝ ձեռքերը իրարու կապած և ոտքերը ձիուն փորին տակեն շղթայած. Մուշեղ Անձևացվոց իշխանն էր այդ մարդը, որ զարմանքով կը նայեր եղածին։ Առանց խոսք մը զրուցելու մոտեցավ Գուրգեն, իջավ ձիեն, և երկայրի դաշույն մը հանելով մեջքեն ձեռքին կապերը կտրատեց, իսկ ոտքին շղթաները զննեց տեսավ, որ կղպակով էին, պետք էր կամ բանալին գտնել, կամ դարբինի մը կոտրել տալ։ Այն միջոցին ամեն կողմեն վազող վազողի կը հասնեին, ոմանք զինյալ, ոմանք անզեն, և մեծ փութով և նեռանդյամբ իրենց ազատյալ իշխանին շուրջը կը խռնվին, մեկն իր գլխարկը կը գտներ կը բերեր, մյուսը յուր սուրը, ուրիշ մը յուր աջ ոտին վրայի վերքը կը պատեր։ Իսկ

Գուրգեն իբր թե լոկ հանդիսատես մեկ կողմ կեցեր էր, մինչև որ Մուշեղ յուր ապուշությունը թոթափելով, դարձավ՝

— Ո՛վ քաջ,— ըսավ,— խնդրեմ շնորհել ինձ քու անունդ, որ իմանամ, թե ո՞ւմ շնորհապարտ եմ այս ազատության, որպեսզի արժանավոր փոխարեն ընեմ։

— Սուրեն Շահզումեցի կ'անվանիմ,— ըսավ Գուրգեն։

— Շատ լավ, տյար Սուրեն, եթե կը հաճիս, իմ ամրոցս կը բնակիս, եթե ոչ՝ պարգևներ կ'ընդունիս այս մեծ ծառայության փոխարեն։ Երթա՛նք հիմա։

Իսկ Գուրգեն առանց պատասխանի անգամ արժանի համարելու այս խոսքերը՝ կը դիտեր Մուշեղի կերպարանքը. լավ, միամիտ մարդ մը կը նշմարեր չափավոր կարողությամբ թե մտքի և թե մարմնո կողմանե, ոչ սիրելի և ոչ ատելի իր ժողովրդյան, քառասնամյա գրեթե, բայց հոգնած ի զվարճությանց, ի զիներբվաց և ի մոլությանց. կատարյալ պատկեր ժամանակի իշխանաց։ Եվ այս դիտողությամբ, «մե՛ղք, մե՛ղք հազար անգամ մեզի՝ իմ Հեղինեին» կ'ըսեր մտքեն և լոկիկ կը հետևեր ամբոխին, որ հարգանոք մեծ շրջանակ միջոց մը կը թողուր յուր Ցոլակին չորս կողմը, և մոտ եկողները փսփսուքով կ'ըսեին իրարու. «Սա՛ է մարդը, որ քսան-երեսուն հոգին ցրվեց և իշխանն ազատեց»։ Իսկ նոքա, որ հեռվեն կուգային, ավելի բարձր ձայնով կը խոսեին իրենց մեջ, իշխանը թողլով փախչողները, քուրդաց խումբը հարյուրեն ավելի կը պատմեին։ Իսկ նա, որ զԳուրգեն փախչելու հորդորեր էր, յուր թևին կապույտը ցույց տալով.

— Տեսե՛ք,— կ'ըսեր,— սա մատներուն տեղը, եթե քիչ մ'էլ սեղմեր, ոսկորս կը փշրեր, ի՞նչ զարմանք, եթե այդչափ ուժ ունեցող մարդ այս կոտորածն ըրավ։

Իսկ կոտորածը՝ չորս մեռյալ, երեք վիրավոր էին, որ իրոք մեռելե տարբերություն չունեին, վասնզի ոչ ոք մեջերնեն ապրանաց չէր. ոչ միայն իրենց վերքի ծանրության համար, այլ նաև անխնամ մնալե զատ ձյունին վրա՝ պետք էր որ անցնող-դարձողին ոտնահարությունն էլ ընդունեին։ Ժամանակի՝ սովորություն, որ դեռ մինչև հիմա ոչ միայն Ասիո, այլև քաղաքականացյալ Եվրոպայի շատ տեղվանք թերևս կը տիրեր։

Վանքը ետ թողուցին և ուղղվեցան դեպ ամուրը, որու բոլոր ժողովուրդը պատահարը լսելով՝ գունդագունդ վար կ'իջներ դիմավորելու եկող խումբը, ուր քանի մը ձիավորներու մեջեն կերթար բարձր ի գլուխ Մուշեղ, քանի որ յուր իշխանական գլխարկը գտեր գլուխը դրեր էին յուր հավատարիմ հպատակները։ Իսկ Գուրգեն քիչ մը հեռվեն կը հետևեր

դարձյալ ժողովրդեն շրջապատյալ, որ միշտ զորության և հաջողության երկրպագուն է ամեն տեղ և ամեն ժամանակ։

Երբ Կանգուարի ժայռին գլուխն միջնաբերդին առջև հասան, որ իշխանական ընդարձակ ապարանը կը կազմեր, ժողովուրդը քիչ-քիչ սկըսավ նոր քաշվիլ և ցրվիլ։ Իսկ ազատաց խումբը յուր սմբակաց արձագանքներով կը մտներ պարսպաց ներքին դռնեն ներս, ուր իշխանը պարտավորյալ էր կոտրել տալու յուր ոտքի շղթան, որու բանալիքը չէին գտած, և հոնկից դիմեց յուր պալատը, որպեսզի սփոփի յուր վերքերեն ու ցավերեն։

Գուրգեն յուր Ցոլակին վիճակը նախ ապահովեց, վասնզի ավելի կը վախեր, թե իշխանական պալատի մը մեջ անհանգիստ լինի կենդանին, քան թե գյուղացվո տան մը։ Երբ յուր միմիայն շնչավոր ընկերին հանգըստությունը հոգաց, է՛լ ժամանակ չուներ ակնարկ մը ձգելու այդ սոսկալի ժայռերու, քարափներու վրա, որ Անձևացյաց գավառն կը կազմեն։ Յուր միտքն հոն էր, ուր Հեղինե էր, ուստի հառաչանքները խեղդելով՝ մտավ դահլիճը, որ դարերե ի վեր Անձևացի նախարարաց զինարան և հյուրընկալության դահլիճն էր, բայց որովհետև ժամանակը ձմեռ էր, ավելի տաք սենյակ մը իրեն ցույց տվին։ Հոն զենք-զրահ թողուց և տրխուր խորհրդածությանց մեջ թաղվեցավ, առանց տեսնելու, թե դռան առջև կախված վարագույրին ետին ամեն Անձևացյաց տան սպասավոր և աղախին կուգային այդ նորահրաշ դյուցազնը տեսնելու։

Այս միջոցիս Մուշեղ կը տքար՝ ոչ վերքին, այլ դարմանին առջև. թեպետ վերքը վտանգավոր չէր, բայց ուսին գլուխը շատ զգայուն տեղ մ'էր, և պառավ կինը (պետք է գիտնալ, թե սովորաբար բժշկությունը միայն դոցա վերապահյալ էր այն ժամանակ ի Հայաստան) առանց փաղաքշանաց իր ասեղը իշխանական մարմնույն կը մխեր և կը կարեր և վերքին երկու բերանը միացնելեն վերջ՝ հին գինվով, մեղրով ու զանազան խնկեղեններով շինած զանգված մը վրան կը տարածեր և սովորական առածը կը կրկներ. «Օգտակար է, թե աստված կամի»։

Մուշեղ թթու երեսով, հառաչանոք և գրեթե արցունքը աչքին այդ դարմանին տարավ, միշտ «Անիծած պառավ, շուտ ըրե» ըսելով։ Իսկ Անձևացյաց Տիկինը ամեն պետք եղածը բերել տալե վերջ՝ մարմարե արձանի մը պես կեցած էր։ Խեղճ իշխանը երբեմն աչքը իրեն կը վերցներ, իբրև թե ողորմության փշրանք մը հայցելով նորա նայվածքեն, իսկ նա, ամենևին անզգա, հայտնի էր հետազնին աչքի մը, թե յուր քով սիրտը մեռած էր։ Նշանավոր կերպարանք մը ուներ այդ կինը, և որ ամեն բաներեն ավելի դիմացինին կ'ազդեր, յուր աչքերն էին, որոնց խորությունը և արտևանանց երկարությունը և նոցա գույնը կը ծածկեին և սև կր կարծեցնեին, երբ բուն իրոք յուր ծովուն ծիրանի գույնն ունեին։ Գեղեցիկ ճակատը սև ագռավի մազեր կը պսակեին, երեսը դժգույն ճերմակություն մը կար, ուր ծիծաղ կ'ըսեիր թե ամենևին չէ ծագած. ամեն տեսնող այդ սակավախոս կինը կը հարգեր և կ'ակնածեր իրմե, բայց շատ քիչ մարդ կրնար սիրել, վասնզի անթափանցելի էր ամեն տեսակ բարեկարգության և ընտանության։ Հիմա էլ նույն անտարբերությամբ կեցած էր իշխանի առջև, ինչպես անտարբերությամբ լսած էր նորա դերի երթալը և հրամայած ամեն մարդ գինելու և ավազակաց ետևեն արշավելու, ինչպես անտարբերությամբ և անուշադիր մտիկ ըրած էր օտարականին քաջության պատմությունը և ամենևին հետաքրքրությունը չէր ցույց տված զնա տեսնելու։

Երբ իշխանը հանդարտեցավ և հոգի առավ,

— Տիկին,— ըսավ,— մենք հոս բարերար մ'ունինք, աննշան մարդ էլ լինի, ա՛ն աստիճանի է նորա ըրած ծառայությունը, որ կարելի չէ զինք մեզի սեղանակից չընել. ուստի փրկանաց իրավունք՝ եղբոր և հավասարի պես զինք պատվիլ ինձ կիյնա. և ներս հրավիրել։

— Քու գիտնալու բանդ է այդ, իշխան, դու ես տեր։

— Զարմա՜նք է, որ սա ամրոցիս մեջ ես և դու լինելով այս քանի ամիս է, և ուրիշ մեկ անձ մը չունենալով՝ օր մը, անգամ մը սխալեիր և կարծիք հայտնեիր... բայց երբ կին մը այդչափ անփույթ է, հայտնի է, որ եթե յուր սրտին մեջ գաղտնի խորհուրդ մը չունի, սոսկալի անտարբերություն ունի։ Արդեն ես լավ գիտեմ, թե ի՜նչչափ ակամա հանձն առիր այս ամուսնությունը և եթե բռնադատյալ պարագաներե...

— Ինչո՞ւ կեցար, շարունակե՛,— ըսավ Տիկինը նույն անդրդվելի ձևը անսասան պահելով։

— Ո՞ւմ համար շարունակեմ, ես այսչափ կին տեսած էի, այսպիսի անզգա արձան մը ուրախության և տրտմության չէի կրնար երևակայել։ Հանցանք ոչ իմս է և ոչ քու, այլ Արծրունյաց։

— Եթե իմ քովս հանցանք չես գտներ, ուրիշներունը իմանալու հետաքրքիր չեմ...

— Ո՞ւր կ'երթաս, հրավեր ղրկե սա մարդուն, որ գա, սեղան պատրաստել տո՛ւր, մարդկություն չէ՞ մնացեր աշխարհիս վրա։

Դարձյալ Տիկինը ելավ դուրս, կանչեց աղախինները, պետք եղած հրամանները տվավ։ Եվ ահա քանի մը վայրկյան վերջը Գուգեն կը մտներ իշխանին քով, որ յուր անկյունը բաղմյալ ըսավ.

— Արի՜, տյար Սուրեն, նստե և ներե, թե որ մինչև հիմա զքեզ թողինք, բայց մենք ալ զբաղած էինք մեր վերքերով. ո՞ւստի է քու գալուստդ, այսպիսի վտանգավոր ժամանակներով քու զորությունդ և քա-

ջութիւնդ ունենալու է, որ մարդ համարձակի առանց թիկնապահի, առանց ծառայի, առանց ընկերի ուղևորվիլ։

Այս խոսքերուն տարտամ պատասխաններ տվավ Գուրգեն և ամենայն ուշադրությամբ և գաղտնությամբ սենեկին ամենայն մութ խորշերը, վարագույրները և վանդակները կը դիտեր։ Սեղանը եկավ. իշխանը Տիկինը հարցուց, բայց նա անհանդիստ էր, Մուշեղ ինք ալ ախորժակ չուներ և կը զարմանար, որ Գուրգեն հազիվ թե քանի մը պատառ առնելով քաշվեցավ։ Իշխանն էլ յուր անկողնո սենյակները մտավ։ Եվ բոլոր Կանգուարի բնակիչները քուն եղան։ Հեղինե տիկինը, պառավին հրամանն ի գործ դնելով՝ բերավ տեսակ մը օշարակ, որ լավ քունի համար պատրաստեր էր, և նա էլ «անիծյա՛լ պառավը» կրկնելով գավաթը պարպեց և խոր քունի մեջ թաղվեցավ։

Ան ատեն կանչեց Հեղինե յուր միմիայն աղախինը, որ Ռշտունյաց երկրեն հետը բերեր էր, ոչ միայն հավատարմության, այլ նաև քիչ խոսելուն համար, և հրամայեց, որ իշխանին ամենափոքր շարժմունքին իրեն իմաց տա, ինք ուղղեցավ համարձակ Գուրգենի սենյակը։ Եվ ինչպես կերևակայեր, երբ դուռը բացավ, նա արթուն էր և նստած վառարանին բոցին կը նայեր խոր մտածությանց մեջ ընկղմած։

Իսկ երբ առջև կանգնեցավ Հեղինե, ահագին սարսուռ մը անցավ Գուրգենի մարմնույն վրայեն և ելավ կանգնեցավ. երբ ոտքն առաջ նետեց մոտենալու համար, նա ետ-ետ քաշվելով՝

— Մի՛ մոտենար ինձի,— ըսավ,— մարդ մը միայն իրավունք ունի ինձ մոտենալու, իսկ նոքա, որ իրենց խոսքին կը դրժեն, տարիներով որբերը և անտերները կը խաբեն, կը մատնեն, այդպիսիները արհամարհանց են արժանի։

Կանգ առավ իշխանը և յուր բոլոր եռանդը սառելով՝

— Թշվա՛ռ Հեղինե, քեզ խաբեր են, և դու շատ շուտ հուսահատեր ես, և մեզ երկուքնիս էլ այս հուսահատ վիճակին մեջ դրեր ես։

— Ինչ կըսես, դու, այդ գիրը քուկդ չէ՞։

Եվ այս ըսելով լի բարկությամբ նամակ մը երեսին նետեց։

Իշխանը քննիչ աչք մը ձգեց և շուտ մը կարդալով վերեն վար այդ համառոտ նամակը, որ քանի մը բառե կը կազմվեր, երկրորդ անգամ բարձր սկսավ կարդալ։

«Ազնվատոհմ Օրիորդ Ռշտունյաց».

«Կը փափագեի քու և իմ կամաց հարմար նամակ մը գրել, բայց նախախնամությունն Աստուծո ուրիշ կերպ սահմաներ է։ Այս վայրկենիս որ ձեռքդ կը հասնի այս իմ գիրս, ես արդեն կայսեր պալատան մեծամեծաց մեկուն աղջկան հետ ամուսնացյալ կը լինիմ։ Նույն բախտը քեզ էլ կը մաղթեմ։ Ռշտունյաց Օրիորդի փեսա չի պակսիր։ Իսկ ես այնպիսի պարագաներու մեջ գտնվեցա, որ այս ամուսնությունն ընդունելով կյանքս ազատեցի»։

«Գուրգեն Արծրունի Ապուպելճ»։

— Անիծյա՛լ այն խարդախ ձեռքը, որ այս նամակը գրեր է։ Այս գիրը իմս չէ՛, այս ստորագրությունը իմս չէ՛. այս կնիքը իմս չէ։ Մեջի իմաստը իմս չէ, վասնզի մինչև Ռշտունյաց Ոստանը ոչ ձյուն, ոչ ցուրտ, ոչ բուք, ոչ թշնամյաց բազմություն զիս շարգիլեցին իմ Հեղինեի հասնելու ճանապարհս ընդհատելու։ Ութ տարի քրտինք, արյուն թափեցի, ամեն տեսակ արշավանք հանձն առի, անկարելի կարծվածը կարելի ըրի, որ իմ և քու հայրենի ժառանգության փոխարեն մը ստեղծեմ. փոքր գեղեցիկ գավառ մը խնդրեցի, վասնզի լիճ մը ուներ, վասնզի գիտակ մը ուներ, որպեսզի իմ Հեղինես հայրենի երկրին նմանությամբ գոնե օտարության մեջ միխիթարվի. և երբ նպատակիս հասած կը կարծեի ինքզինքս և երջանիկ՝ Ոստանը գլխուս վրա եթե կործաներ՝ ոչինչ էր։

— Այդ նամակը քու գիրդ չէ՞։

— Իրավ ջանացեր է գիրը նմանեցնելու, կնիքը ջանացեր են նմանեցնել, բայց տե՛ս, բաղդատե՛ սա երկու կնիքները։

Եվ ծոցեն կնքյալ թուղթ մը հանելով ցույց կուտար Հեղինեին, որ բաղդատե։ Իսկ նա, երբ սուր աչք մը նետելով որոշ տեսավ խարդախությունը, փոխվեցավ բոլորովին. և այդ կորովի կինը ձեռքը աչքերուն դրրավ և լռիկ հորդահոս արտասուքներ սկսավ թափել։

— Զրուցե՛, Հեղինե՛, ո՞վ կը կարծես այդ դավաճանը՝ գոնե ես զանի պատժելով միխիթարվիմ։

— Ի՞նչ օգուտ դավաճանը պատժելեն, մի՞թե եղածը չեղած կրնա՞ լինիլ.— այս հուսահատ խոսքը զրուցելով խեղճ կինը նստավ բազմոցին վրա, վասնզի է՛լ ծունկները զինք չէին կրնար վերցնել։ Իսկ Գուրգեն նորա ոտքերուն քով նստած գետինը՝ կը մտածեր. երկայն լռություն մը տիրեց։

— Այդ արցունքը կը վկայեն, որ դու զիս կը սիրես, Հեղինե. ատված արդար է, վերջապես իր արդարությունն կը հասնի այդ անզգամները պատժելու համար. ես դարձյալ քեզ խոսք կուտամ հավատարիմ մընալու, չեմ էլ զղջար այսօր այս մարդը ազատելուս։ Բայց այդ նենգավորը, որ իմ գիրս, որուն մեջ իմ գալուստս քեզ կ՚իմացնեի, փոխեր խարդախեր է, այդ մարդուն ձեռքը կտրել իմ պարտքս լինի։

— Դու ազնիվ երջանիկ ես, որ ազատ ես և ամենեին պարտականություն մը չունիս միշտ անձի մը քով լինելու, որուն համար ոչ սեր և ոչ համակրություն ունիս։ Իսկ ես...

— Իրավունք ունիս, քու վիճակդ ավելի դառն է, ինձ համար մեծ ազատություն կա .բայց մի՞թե նույնն է վիճակը այսուհետև ինձ համար. երբ երբեմն ես թշնամյաց վրա կը հարձակեի, ամբողջ գունդեր իբրև փոթորկե պաշարյալ իմ սուրիս առջև կը սարսեին, կը շփոթեին և խառնափնթոր կը փախչեին. կայսրը և Մանվել Սպարապետը զվարթ աչքով ինձ կ'ակնարկեին, Մանվել «կեցցե՛ մեր արծիվը» կըսեր, իսկ ես հազիվ զիրենք կը տեսնեի, իմ միտքս քու քովդ էր, և ամեն բան ինձ դյուրին էր, վասնզի քեզ արժանանալու և քու երջանկությանդ համար էր այս իմ բազկացս զորությունը։ Հիմա ոչինչ չի կա ինձ համար. թե՛ նյութական կյանք, թե՛ բարոյական կյանք կորուսած են իրենց քաղցրությունը։

— Դեռ այսօր մի՞թե Մուշեղ ազատելդ մոռցա՞ր։

— Այդ ամեն հայու համար պարտականություն մ'էր անպիտան ավազակներու ձեռքե ազատել հայ իշխան մը, որ գերի կը տանեին ի նախատինս ազգիս։

— Ուրեմն, իմ ազնիվ Գուրգենս, իմ սիրելի Գուրգենս, ապրե՛, ազգիդ համար, ապրե՛ ժողովրդյանդ համար, որուն պատիվը, կյանքը, ըստացվածը՝ շատ ժամանակներե ի վեր արհամարհյալ՝ ոտնակոխ եղած է և կը լինի։ Ես լավ կը հիշեմ ամեն գանգատ, ամեն պարագա, ուր ժողովուրդը կուգար մորս՝ Ռշտունյաց Տիկնոջ տրտնջելու յուր կրած անիրավությանց համար. խե՜ղճ, սուրբ կին, ինքզինքը կը զրկեր, որպեսզի այդ դառնացյալ շինականները մխիթարե, վասնզի եղած անզգամությանց դեմ բան մը ընել կարող չէր, վասնզի ամեն հափշտակություն՝ նաև իրեն դեմ գործելու չէին ամաչեր՝ նոքա, որոնց պաշտոն էր արդարության հսկելու։ Ուստի դու հիմա սրտիս միմիայն սիրելին, գնա՛, քաջ եղիր, արդար եղիր, հասիր զրկելույն, հայր եղիր որբույն և մխիթարիչ այրվույն. աստված քեզ վարձատրե, և երբ ես լսեմ քու անվանդ օրհնությունը, երբ իմանամ, թե սրտիս Գուրգենն է, որ հայր և պաշտպան եղեր է ժողովրդոց, մխիթարություն պիտի իմանամ իմ ցաված և վիրավից սրտիս։

— Օրհնյա՛լ է քու սրտիդ փափագը, իմ հրեշտակս, տարին չի կատարած պիտի լսես իմ անունս, վասնզի աստված պահե, բայց ես շատ կը վախեմ, թե այս գարունը՝ սոսկալի գարուն մը պիտի լինի, և Հայաստան արյուններու ավազան մը։

— Աստված ինքը հասնի՜ այս թշվառ հայրենյաց։

Եվ Հեղինե կանգնեցավ ու պատրաստվեցավ երթալու

— Ուրեմն այս մեր առաջին և վերջին տեսությունն է ութ երկայն տարիներե վերջ,— ըսավ Գուրգեն։

— Այո, աստված որ այսպես ուզեց, նույն աստված քեզ օգնական լինի։

— Մնաս բարյավ, հրեշտակդ իմ,— զրուցեց Գուրգեն, և յուր թևերուն ու կուրծքին մեջ սեղմելով ծածկեց նրա սիրուն գլուխը համբույրներով։ Իսկ Հեղինե անշարժ, անսասան իբրև արձան՝

— Աստված քեզի օգնական, իմ սրտիս միմիայն սերը,— ըսավ և աներևույթ եղավ։

Երկրորդ առավոտուն, երբ Կանգուարի բնակիչքը մեծ և փոքր ելան այդ Շաղգումեցի Սուրենը փնտրեցին, տեսան և իմացան, որ չի կարողացան, թե այդչափ մեծ ծառայություն ընելով և փոխարեն մը չընդունած իշխանեն ի՛նչպես ելեր հեռացեր էր։

ԳԼՈՒԽ Թ

ՂԵՎՈ՜ՆԴ, ՂԵՎՈ՜ՆԴ

Կերթար Գուրգեն տխուր, բայց ոչ որպես առաջ, սրտին վրայեն սոսկալի բեռ մը թափեցեր էր, վասնզի Հեղինեի վերջին խոսքերը յուր վրա ազդեցություն ըրած էին։ Ուստի ծանր և դանդաղ կը ճանապարհորդեր, ո՛ւր որ խեղճ գյուղեր գտներ, այն տեղվանք կ'իջներ, սիրով շինական մարդկանց հետ կ'ընտանեներ, որոնք սկզբան կասկածանոք իրեն կը նայեին, բայց վերջը բարեկամ դառնալով իրենց քաշածները նորա առջև կը դնեին։ Այսպես օրերով, երբեմն միշտ շաբաթով կը դանդաղեր յուր ուղեղնացությունը, ո՛ւր որ իշխանական ամրոց մը տեսներ, շուտ կ'անցներ, ո՛ւր որ գյուղական պարզություն կար, նոցա գարի հացը, նոցա մածունն իբրև թե իրեն քաղցր էին։ Այսպես անցավ Արտազ գավառը, Ավարայրի ընդարձակ դաշտը, ուր յուր նախահոր Վարդանա հսկա հիշատակը կանգուն էր հայ սրտերու համար. կը տեսներ հեռվեն Մասիս լեռան գլուխը, ուր տեղացի ժողովրդոց համար միշտ կար և մնար Նոյա տապանը. ուստի այս խորհրդածությամբք կը մոտենար յուր դեմ եդյալ նպատակին՝ Բագրևանդա գավառը, ուր յուր քեռին Քուրդիկ իշխանը կը տիրեր։ Օդը արդեն սկըսած էր մեղմանալ, ձյունները սկսած էին հալիլ, առուներն ու վտակները մեկ-մեկ ահագին գետ դառնալ, երբ տեսավ մարդ մը, որ գլուխը կախած կերթար առջևեն նիզակն ի ձեռին, հաստատ և ամուր քայլերով. այդ քայլվածքը և այդ շարժմունքը իրեն կը հիշեցներ ուրիշ հատուկ անձ մը,

որ չէր կրնար մտաբերել, ուստի ձիուն ձայն մը հանեց և նա քանի մը ոտք առնելով, մարդուն քով գտնվեցավ։

— Դո՞ւ ես, Հովնան եղբայր,— ըսավ։ Իսկ նա առանց գլուխը վեր վերցնելու՝

— Այո, Գուրգեն իշխան, ես ինքս՝ Հովնանն եմ։

— Առանց գլուխդ վերցնելու զիս իմ ձայնե՞ս կը ճանչես։

— Ժամ մը կա, որ ես արդեն զքեզ տեսա, երբ բլուրին գլուխն էի, և դու դեռ դաշտն էիր։

— Ուսկի՞ց այսպես կուգաս։

— Տարոնե։

— Բայց այնչափ համառոտ պատասխաններ կուտաս, որ պետք է դադրեցնեմ խոսիլս։

— Ինչո՞ւ, իշխան, ե՞րբ ինձի հետ խոսեր ես և առանց պատասխանի ես մնացեր։

— Կուզեի հարցնել, թե ո՞ւր կ՚երթաս։

— Լա՛վ, քեզի այդ էլ նաև զրուցեմ, Հայոց կաթողիկոսը տեսնելու կ՚երթամ։

— Անշուշտ իրեն առաջարկություն մը ունիս։

— Ինչպես չունիմ. կ՚ուզես ա՛յն էլ իմանալ, լա՛վ, այն պիտի առաջարկեմ, որ կոնդակ մը հանե բոլոր Հայաստան, ամեն տեղ նվիրակներ, քարոզիչներ հուղարկե, որ սուրբ պատերազմի ժամանակը եկած հասած է, և նզովե այն ամեն մարդ, որ կարողություն ունի զենք վերցնելու և չի շարժիր, այն ամեն հայ, որ հաց կրնա տանիլ պատերազմողին և չի տանիր, նա, որ ձի և զենք ունի, չի գործածեր, կը պահե և ուրիշի չի տար։ Վերջապես պիտի հորդորեմ զինք, որ առանց դանդաղելու գա նստի ս. Կարապետ, յուր բոլոր եկեղեցական դասով, և թե իշխանները չի շարժին՝ ինք ձայն կարձակե, և ժողովուրդք կը շարժին։

— Այդ բանի՞ն համար կերթաս, ապրե՛ս Հովնան, շատ պատվական հայ ես, և բոլոր Հայաստանի մեջ թերևս քեզմե ավելի հայրենասեր մարդ չի կա այսօր։

— Դու, իշխան, ուրեմն համամիտ ես այս խորհրդիս։

— Բոլոր մտքով ու սրտով։

— Եվ կը հավատա՞ս, որ կաթողիկոսը ընդունի իմ առաջարկությունս։

— Մեր եկեղեցականաց թուլությունը և անհոգությունը ճանչելով կը կասկածիմ, բայց չեմ կարծեր, թե մերժե, կը խոստանա, հավանություն ցույց կուտա...

Այս միջոցիս Գուրգեն էլ իջեր էր ձիեն և երկու հոգի այսպես խոսելով կ՚երթային, և Ցոլակ յուր տիրոջ ետևեն հանդարտ կը քայլեր. երբ Հովնան բոլորովին յուր սովորության հակառակ հարցական ձև առնելով՝

— Իսկ ո՞ւր կերթաս, իշխան,— ըսավ։

— Բագրևանդ կ՚երթամ, քեռվույս՝ Քուրդիկ իշխանին։

— Այդ մարդը Մամիկոնյան է. բայց Վարդան չէ։

— Դու Ղևոնդ մը միայն գտիր, ես քեզի տասը Վարդան կը գտնեմ։

— Ճշմարի՞տ որ, եթե Ղևոնդը գտնեմ, Վարդան մեծը նաև չեմ փնտրեր։

Գուրգեն շուտ մը հիշեց այդ մարդուն խստությունը ընդդեմ նախարարյան խումբին և ամենևին պատասխան չի տալով շարունակեց ճամփան, մինչև որ մութը սկսավ, և գյուղը երևցավ։ Երբ հասան ճամփան, որ գյուղին հատուկ էր, տեսավ իշխանը, որ յուր ընկերը չէր զատվեր մեծ պողոտայեն, այլ կ՚ուզեր դեռ շարունակել.

— Հովնան եղբայր, մի՛ գուցե իշխանազուն մարդու հետ նույն տան, նույն գյուղի մեջ միատեղ չի գտնվելու համար ուզես ճամփադ շարունակել։

— Գյուղ մ՚էլ առջևնիս կա, և ժամ մը չի քշեր. ես, որ օր առաջ կուզեմ Սասուն դառնալ, չեմ կրնար դանդաղիլ. բայց որպեսզի իմացնեմ, թե Գուրգեն իշխանը սխալ կարծիք մը ունի իմ վրաս, իրեն ընկերակից կը լինիմ և կ՚իջնեմ գյուղս։

Եվ քանի մը վայրկյան ետքը այս մեր երկու բարեկամները նստած էին կրակին քովի անկյունը, և շատ դյուրությամբ իրարու կը համոզեին և շատ նյութերու վրա համամիտ էլ էին, վասնզի երկուքն էլ ապահով էին, թե գարնան Հայաստանի վրա փոթորիկ կար հասնելու, թե Հայաստան միահամուռ և միահոգի կրնար վանել ո՛ևիցե հարձակումն, թե այդ բանի համար հոգևորական իշխանությունն պետք էր շարժիլ և շարժել, և թե պետք չէր սպասել բարբարոս թշնամվույն, որ երկրին կեդրոնը հասնի, այլ խելոք շարժիլ, պետք էր սահմանագլուխը անցած-շանցած թշնամին դիմավորել, ինչպես քանի մը տարի առաջ Աղձնյաց պատերազմին մեջ ըրած էին հայք և խորտակեր էին տաճիկը, և թե ո՛վ որ թշնամվույն հետ բանագնացության մտներ, քանի որ նա Հայաստանի գավառի մը մեջ կը բանակեր, նա էլ թշնամի հայրենյաց պետք էր համարիլ, և ամեն մարդ իրավունք ունենալով ո՛ևիցե միջոցավ զանի հեռացնել։

Այսպես երկար խոսակցություն մը ունենալով այս երկու մարդիկը, համարմունք առին իրարու վրա և խոստացան ո՛ևիցե պարագայի մեջ հաջողության և ձախորդության իրարու տեղեկություն տալ և օգնել։ Եվ նույն գիշերը Բագրևանդա աննշան գյուղին մեջ անցընելով, երկ-

բորդ օրը միատեղ ճանապարհորդելե վերջը մինչև Բլուր, ուր իշխանը յուր քեռին պիտի գտներ, Հովնան կը շարունակեր յուր ճամփան՝ կ՚անցներ Սրասխ, կերթար Դվին և իմանալով, թե կաթողիկոսն Հովհհաննես ժողով ուներ քանի մը երեւելի նախարարաց հետ, կը փութար ժամ առաջ հասնելու քանի որ չէին ցրված։

Թեպետ շատ լուրջ մարդ էր Հովնան և երկայն տարիներու փորձն ու տառապանք զինք ամեն արկածից դեմ ամրացուցեր էին, բայց դարձյալ, երբ մտավ Դվին և մոտեցավ կաթողիկոսարանին և տեսավ բոլոր նախարարաց գունդագունդ ծառաները և թիկնապահ հեծելազորքը հրապարակին առջև, որոց առջին սասնեցի լեռնականն անարգ արարած մ՚էր, երբ դռնեն ներս մտնելու համար պետք էր խոսք չի հասկցող ամրագլուխ դռնապանին հետ վիճել և համոզելու համար շատ մը լեզու թափել, և երբ մեծ դահլիճին դռանն առջև հասնելով նույն արարողությունը ավելի հնարագիտությամբ պետք եղավ գործածել, ան ատեն ճշմարտապես հոգնություն իմացավ։

Բայց արդար լինելու համար պետք է ըսել, թե այդ դահլիճին մեջ գումարյալ ժողովը գոնե ըստ երևույթին շատ ծանրակշիռ էր, հոն ժողովյալ էին բացի կաթողիկոսեն՝ Սմբատ Բագրատունի Սպարապետ Հայոց և իր որդին Աշոտ իշխան և նույն Բագրատունյաց տոհմեն Աշոտ և Դավիթ որդիք Բագարատա, որ ի Բաղդատ կալանավոր էր, Վասպուրականի Արծրունյաց տունեն Աշոտ մեծ իշխանին տեղ յուր եղբայրը Գուրգեն եկած էր փոխանորդաբար։ Սյունյաց նախարարության տունեն Վասակ մեծ նախարարը ներկա էր յուր իշխանոք. հոն էին իշխանն Գարդմանաց Կորիճ, իշխանն Աղվանից Եսայի, իշխանն Ուտեացվոց Ստեփաննոս, իշխանն Արցախա Ատրներսեհ Տերն Խաչենո, և ուրիշ երևելի իշխանք և իշխանազունք և շատ արքեպիսկոպոսք, եպիսկոպոսք զանազան գավառաց Հայաստան երկրի։

Կաթողիկոսն Հովհաննես յուր աջ կողմը Սմբատ Սպարապետ և ձախը Վասակ Սյունին ունելով, սկսավ երկայն պատմություն մը, ուր գըլխավոր և տիրող իմաստն էր, թե՝ «Աստված զայրացյալ Հայաստանի բնակչաց չարագործությանց և մեղաց համար, յուր բարկությունն անպակաս էր ըրել հայ ազգին վրայեն, ուստի պետք էր ապաշխարել և մեղա գոչել և շուտով դեսպան ղրկել Բաղդատ՝ ամիրապետին, որ աստուծո բարկության գավազանն էր, և հանդարտեցնել զանի ընծայիվք ու պատարագք, որպեսզի սասնցվոց գործած հիմարության պատիժը չի տուժե բոլոր Հայաստան»։ Այս ատենաբանության վրա՝ յուրաքանչյուր ոք նույն խոսքերը միևնույն կերպով կը կրկներ և նույն դարմանը կը հեղեղեր, երբ երիտասարդ եկեղեցական մը մերձենալով կաթողիկոսին հայտնեց, թե սասնցի լեռնական մը կ՚ուզեր և թախանձանոք կը խնդրեր, որ ներս մտնե ամենակարևոր առաջարկություն մ՚ընելու համար։ Կաթողիկոսը, որ առանց Սպարապետին խորհրդյան և ինքնիրեն բան մ՚ընելու անկարող մարդ էր, նորա երեսը նայեցավ, և նա հրաման տվավ ներս մտցնելու մարդը։ Եվ Հովնան, երբ ներս մտավ նիզակն ի ձեռին և անկյան մը զանի կրթնցնելով աջ առավ և դահլիճին մեջտեղ կանգնեցավ յուր խութեցի պարզ հագուստներով և յուր պարկեշտ ու համեստ կերպով՝ նախ ամեն աչք զինք դիտեցին, և վերջը յուրաքանչյուր ոք սկսավ հծծել յուր ընկերին այդ կես վայրենիներուն վրա, որ գազանի պես լեռներու մեջ կը բնակեին և անսովոր կյանք կ՚անցնեին։

Վերջապես կաթողիկոսը ձայնը բարձրացնելով՝

— Դու ուզեր և խնդրեր ես այս ազնվակազմ ժողովին ներկայանալ և առաջարկություն մ՚ընել, մենք այնպես կը կարծեինք, թե դուք անպիտան սասնցիքդ երես պետք չեք ունենալ և համարձակիլ ազգին առաջ ելնելու, վասնզի ձեր հիմար գործողությունը շատ գեշ հետևանքներ պիտի ունենա ազգին համար. բայց դուք, կը տեսնեմ, թե այդ էլ իմանալ չի կարենալով ելեր եկեր եք մեզի խորհուրդ տալու, ուստի զրուցե՛ տեսնենք ինչ որ քու սասնի մտքիդ մեջ կրցեր ես ձևակերպել։

Իսկ լեռնցին ան ատեն յուր խոնարհ գլուխը երբ վեր առավ, յուր երկայն մազերը ցնցեց և յուր փայլակնացայտ աչքերը երբ ժողովականաց վրա պտրտցուց, արհամարհանաց զգացմունքը փոխվեցավ, խոր լռություն մը տիրեց ամենուն քով, լռություն նշան ուշադրության, որոշ և հստակ ձայնով այսպես խոսեցավ Հովնան.

— Հոգևոր տեր և մեծազոր իշխանք աշխարհաց Հայոց, կը ճանչեմ մեծ շնորհքը, որ կ՚ընեք ինձ պես ողորմելի լեռնցվո մի ունկնդիր լինելով։ Ես եկա իմ լեռներես մեր գործքերուն համար ոչ թողություն խնդրելու, այլ ազգը փրկելու համար վերահաս վտանգե առաջարկություն մ՚ընելու, բայց հիմա կը տեսնեմ, թե նախ պետք է Սասուն արդարացնեմ, վերջը առաջարկությունն ընեմ։— Ի՞նչ ըրին սասնցիք։— Այն, ինչ որ հինգ վեց տարի առաջ ըրին Բագարատ իշխան իշխանաց և Աշոտ Տեր Վասպուրականի։ Ապուսեթ ոստիկանական իշխանությունը հանձներ էր Մուսեի, և այս մարդը, ինչպես սովորություն է տաճկաց, հանկարծ օր մը ելավ Աղձնյաց որջերեն սաստիկ զորքով մտավ Տարոն։ Բագարատ Արծրունյաց օգնության դիմեց, և Աշոտ յուր եղբայրներով և բոլոր Վասպուրականի զորությամբ հասավ Բագարատա. ես ներկա էի պատերազմին, և Գուրգեն իշխան, ներկա հոս այս ժողովիս, նույն պատերազմին երիտասարդ զորավարաց մեկն էր, ուր զարկին կոտորեցին թշնամին, բանակը ավարեցին, փախստականքը բերդերու և անտառներու մեջ հա-

լածեցին և մինչև Շահասատան սկսան պաշարել։ Այս պատերազմեն քիչ մը ժամանակ վերջը նույնպես նույն Ապուսեթ Ալի անուն ամիրա մը կուղարկեր Վասպուրական շատ զորքով, որ արքունի տուրքերը հավաքե, նա էլ ըստ սովորության անօրեն ազգին, Աղբակ գավառը դրած բանակը՝ հոնկից ասպատակ կը սփռեր բոլոր Վասպուրական, կը գերեր, կ'առվերեր, կը հափշտակեր, կապուտ կողոպուտ կը գործեր ընչից և ստացվածոց, այդ ավազակները կը հափշտակեին այր և կին, նոցա ժառանգությունը և նոցա զորքը իրենց անգգամությունը մինչև Անձևացյաց տերության կողմն կը հասցնեին։ Արծրունյաց Տերը դեսպան ղրկեց, հարկերը, տուրքերը տալ խոստացավ, որպեսզի դադրի ավերումը և անզգամությունը, և երբ դեսպանը արհամարհեցավ, և անօրենության գործը կը շարունակվեր, հարձակեցավ բոլոր Վասպուրականի զորությամբ անօրինաց վրա, Ամիրան հազիվ թե քանի մը հոգվով կրցավ ազատիլ պատերազմեն, յուր զորաց բաղմությունը յուր եղբայրն էլ միատեղ սուրի բերան չարդվեցան և երկիրը իրենց դիակամբք ծածկեցին. դարձյալ նույն պատերազմին մեջ աջ թևի հրամանատար սա՝ այս Գուրգեն իշխանն էր՝ եղբայր մեծի իշխանին։— Ի՞նչ ըրին ուրեմն սասնցիք, հոգևոր տեր և մեծազոր իշխանք, երբ տեսան Բագարատ գավառանությամբք գերի և կապյալ ընտանյոք հուղարկյալ ի Բաղդատ, երբ տեսան բոլոր Տարոնն գավառը ավար և հափշտակություն անօրինաց, կոտորածի և գերության արբ, կանայք և տղայք մատնյալ, ս. Կարապետ պաշարյալ բարբարոսներե և բոլոր հույսը սասնցվոց մնացյալ։ իշան իրենց լեռներեն և նույնը ըրին, ինչ որ Բագարատ, Աշոտ և Գուրգեն իշխանները ըրած էին։ Հանցա՞նք էր հայ քրիստոնյա եղբայրը ի սրո, ի շղթայից ազատել, հանցա՞նք էր Քրիստոսի մգկիթ դարձած եկեղեցիներ Քրիստոսի դարձնել, հանցա՞նք էր ս. Կարապետի վրա հրով և սրով եկողները սուրի մատնել։ Եթե սասնցվոց ըրածը հանդիմանության արժանի է, ուրեմն արդար և իրավացի են այս անզգամ ժողովրդյան մեզ դեմ գործած ամեն չարությունքը։ Բայց ան ատեն հետևանքը մտածեցեք, տյարք մեծազորք, հետևանքը, որ հայ ազգին մեջ կբնա փճացնել մինչև վերջին սերմունքը, որ Թադեոսի, Բարդուղիմեոսի և Լուսավորչա արյունով ուռճացավ այս Հայաստան աշխարհիս վրա։

— Մեզ այդչափ երկայն քարոզության պետք չի կար,— ըսավ Սմբատ Սպարապետ հանդարտ խստությամբ,— դու առաջարկությունդ ըրե, մեր հոգևոր տերը քեզ այդ բանին համար հրաման տվավ խոսելու և նայե՛, որ ինչչափ կարելի է շուտ և համառոտ կատարես խնդիրքդ։

Առ խոսքերը և զրուցվածքին եղանակը կը հայտնեին, որ Հովնան փուճ տեղ կ'աշխատեր համոզել այնպիսի մարդիկ, որ իրենց մտքի դրածեն անդին բան մը չունեին ընկիր, բայց որովհետև սրբազան պարտականություն մը կար այդ հիմար մարդկանց ճշմարտություն մը զբրուցելու և զիրենք կորստենե ազատելու, սկսավ խոսիլ երկրորդ անգամ։

— Մենք լեռնցի պարզ մարդիկ ենք, տյարք, աշխարհիս կառավարութենեն չենք հասկնար, բայց ցավով սրտի կը տեսնենք, որ նոքա, որոնց ձեռքն է ամեն կառավարություն, շատ անգամ թշնամվույն խաբեության զոհ կ'երթան. իրենք մեծ մարդիկ են, իմաստուն են, իրավունք ունին իրենց անձը և իրենց ունեցած գանձերը պահպանելու, մենք այնպես կարծենք, թե լավ կ'ընեն, որ կը քաշվին իրենց ամրոցները վտանգի ժամանակ, թող ան ժողովրդյան և քահանայից հավատքի պատերազմը պատերազմիլ։ Ուստի այդ նպատակավ Սասնո ժողովուրդը կը խնդրե հոգևոր տյառնես, որ օրհնության կոնդակ մը հանե բոլոր Հայաստանի ժողովրդոց, զեն ի ձեռին հարձակելու ընդդեմ անօրինաց, որ կը պատրաստվին մտնել աշխարհքս բնաջինջ ընելու համար քրիստոնեություն և հայության անունը, կը հրավիրե, յուր սրբությունը գալ բընակելու ս. Կարապետի վանքը մինչև պատերազմի վերջը, նվիրակները հանելու ամեն տեղ, որ դրամ, ձի, զենք, պաշար ժողվեն բոլոր Հայոց երկրեն և հոն հասցնեն, ուր որ հայ զորքը կեցեր կը պատերազմին ընդդեմ անհավատից, կը խնդրե խոնարհաբար...

— Այս ի՞նչ խնդիրներ, այս ի՞նչ հրավերներ են, որ այդ հիմար լեռնցի մարդը եկեր այստեղ այսպիսի ժողովքի մը կը համարձակի առաջարկել, և մենք հազար անգամ ավելի հիմար կը լինինք, եթե այդպիսի առաջարկությանց համբերենք։ Մե՞նք երթանը նստենք ամրոցները, և մեր շինականքը զինվին պատերազմին, որպեսզի զենքերնին վաղը մեզի դեմ դարձնեն. և դուք այդպիսի խոսքեր լսելու համբերություն ունի՞ք։

Այս խոսքերը զրուցողը Գարդմանացվոց Կորիճ իշխանն էր և արդեն ոտքը ելնել և երթալ կ'ուզեր, երբ զինքը խնդրանոք և բռնի նստեցնել տվին։ Իսկ Սմբատ Սպարապետ դարձավ այն ատեն Հովնանու և ըսավ խստությամբ.

— Որովհետև մենք ներողամիտ գտնվեցանք, դու էլ դորա փոխարեն համարձակությունը հանդգնության տարիր, և այսպիսի մեծ նախարարներ այդ խոսքերովդ նախատեցիր. եթե իրոք այդպիսի խորհուրդներու կը համարձակին սասնեցիք, մեզ նախ պարտականություն կա զիրենք պատժելու։ Ուստի այդ քննությունքը մինչև որ կատարվին, պետք է դու այստեղ պահվիս, վասնզի կ'երևա, թե դու ես այդ կարծիքները ժողովրդյան մեջ ասարածող։— Պահեցե՛ք, այդ մարդը զգուշությամբ պահեցեք։

Եկան զինվորներ և առին դուրս հանեցին Հովնան և իջուցին կաթողիկոսարանին բանտը, և վերը հայոց իշխանք և նախարարք Հովնանու խոսքերը մեկնելով սոսկալի հետևանքներ կը հանեին իրենց իշխանության համար և ամեն խոսքերուն տակ դավաճանություն կը տեսնեին։

Իսկ թշնամվույն դեմ գործելու մասին ոչ ոք իր ընկերոջ հետ միաբան չէր, ոչ ոք չէր ուզեր յուր անձնական զինվորները յուր անձեն հեռացնել, ոչ ոք յուր սահմաններեն հեռանալ։ Ուստի ինչպես անօգուտ մրտած էին ժողովքի, անօգուտ դուրս ելան, հեծան իրենց ձիերը, առին իրենց թիկնապահները, գնացին, յուրաքանչյուր ոք յուր ընկերոջ դավաճանութենեն կասկածելով, և ցրվեցան իրենց գավառները։

Բայց այդ բազմության մեջ, որ դահլիճին մեկ կողմը կեցած խոսքի չէին խառնվեր՝ կային երիտասարդ իշխանազունք, որոնց պարտականություն էր լուռ միայն կալ և հարգել իրենց հարց, հորեղբարց կամ մեծ եղբարց ներկայությունը և լսել։ Սոցա մեջ ծանրագլուխ երիտասարդ մը կար նաև, որ ուշադրությամբ ամեն բան կը դիտեր և մտիկ կ'ըներ։ Երբ ամենքը ցրվեցան, մոտեցավ Սմբատ Սպարապետին։

— Հայր, —ըսավ,— մի՞թե բավական չեղավ այդ սասնցվույն պատիժը, եթե հրաման տաս արձակեմ զինքը, որ երթա յուր ճամփան։

— Այո՛, շատ և շատ եղավ, բայց ճշմարտություններն նաև ամեն տեղ պետք չէ խոսիլ։ Հորեղբորդ սիրական Հովնանն է դա։

— Կը ճանչեմ, հայր, երթամ, ուրեմն։

Շուտ մը վար իջավ Աշոտ և հրաման ըրավ պահպանաց իրեն բերել Հովնան. և առանձին սենյակի մը կը շրջագայեր, երբ սասնցին եկավ նույնպես անխոով ինչպես բանտ գնացած ժամանակ անխոով էր։

— Հովնա՛ն եղբայր,— ըսավ Աշոտ,— ինչ պետք կար այս իշխանաց ժողովքին մեջ քու բոլոր կարծիքներդ հայտնել. մի՞թե ավելի լավ չէ՞ր լռիկ-մնջիկ գործել՝ պատրաստել ժողովուրդը և վտանգի օրն ու ժամը հասնելուն գործի սկսիլ։

Հովնան պարզ էր, բայց պարազմիտ չէր, երիտասարդին, որ այսպես քաղցրությամբ կը խոսեր, նայեցավ աչքին խորը հետաքնին կերպով և ամենայն ցրտությամբ ու տխրությամբ ըսավ.

— Իշխան, դու շատ սրամիտ երիտասարդ մը կ'երևաս, ինձ հետ այդպիսի խորախորհուրդ հնարիմացությամբ խոսելու պետք չի կա. եթե կարենայի այդ քու ըսածդ ընել՝ ժողովուրդը պատրաստել և կարևոր ժամուն ոտք հանել թե՛ այդ յուր հիմար տերանց դեմ, թե՛ այդ օտարահավատ բռնավորաց դեմ, այս բոպեիս կ'ընեի, բայց այդ լեռը շարժելու հավատք և կարողություն վերի զառամյալ և ողորմելի ծերուն ձեռքն է։

ի՞նչ օգուտ նա էլ այդ յուր զորությունը չի ճանչեր և չի գիտեր ազգին օգտակար ընել։ Իսկ այդ հիմար իշխանները, որ ինձի դեմ կը գոռային կամ կը մռնչեին, հինգ տարի ժամանակ չեմ տար իրենց, մեկ հատ մը պիտի չի մնա, որ Բաղդատու ճամփան չափած չլինի, և չեմ գիտեր քանի՞ հատը յուր Քրիստոսը Մահմեդի հետ չի փոխեն։ Ղևո՞նդ Ղևո՞նդ, ո՞ւր ես, Հայաստան քեզ պես մեծ մարդ, մեծ քահանա, մեծ Քրիստոսի ծառա մեկ հատ մը միայն բերավ, ափսո՞ս, և հոն յուր ծննդական կարողությունը դադրեցավ։

— Հովնա՛ն եղբայր,— ըսավ երիտասարդ իշխանը,— ինչո՞ւ այդպես կը հուսահատիս, համբերել, սպասել, պարագաներեն օգուտ քաղել իմաստուն և հեռատես մարդուն առաքինությունն է։ Տե՛ս, ահա այդ մեր օտարահավատ թշնամին՝ թեպետ զորավոր, օրավուր կը հալի, թեպետ ահագին աշխարհաց ընդարձակության վրա կը տարածե իշխանությունը, բայց օրավուր կը տկարանա և յուր մեջեն բաժանվելով պիտի կործանի։

— Ո՛վ երիտասարդ, դու կը տեսնես թշնամվույն իյնալը, կը մոռնաս, չես տեսներ քու փչանալդ, քու ոչնչանալդ, դու՝ թե որ միջոց ունենայիր ինքզինքդ անվթար պահպանելու, ես էլ քեզի հետ նույնպես կը մխիթարվեի։— Թողունք այս ողբալից խոսակցությունը, ի գործ դիր ի՞նչ հրաման որ ունիս մեծավորներեդ։

— Ազատ ես երթալու ո՛ւր որ կամք ընես, ընելու ի՞նչ որ ուզես։

— Լավ, իմ ժամանակս դեռ չէ հասած ուրեմն։

Եվ ամենայն հանդարտությամբ աս խոսքերն ըսելով, աչքերը չորս կողմը պտտցուց իբրև թե բան մը կը փնտրեր։ Աշոտ յուր շարժմունքեն իմանալով փնտրածը՝ շուտ մը քակեց մեջքեն սուրը և ներկայացնելով Հովնանու՝

— Թեպետ սորա տերը մինչև այսօր այնպիսի քաջ մեկը չէ եղեր, որ պատիվ բերե, բայց իբրև բարեկամական հիշատակ խնդրեմ, որ հանձրն առնուս գործածել։

— Բագրատունի իշխանի մը սուրը միշտ պատիվ կը բերե։

Այս խոսքը զրուցեց սուրը կապելով, և երբ բերին տվին իրեն յուր նիզակն էլ, ձեռքը կուրծքին դրավ, մնաս բարևն ըսավ և ուղղվեցավ դեպի դուռը։

— Ահա երիտասարդ մ'էլ, որ կը խոստանա,— կըսեր ինքնիրեն Հովնան,— բայց ի՞նչ օգուտ, յուր սրտմտությունը կրնա՞ արգիլել, որ Հայաստան արյուններու մեջ չի թաթախվի, իբրև հնձան չի տրորվի։ Երթանք, Հովնան, մեր Սասնո լեռները, սպասենք ինչ որ վճռված է, «Բարկության, որ գալոց է», և հուսանք հաստված և ոչ ի մարդիկ։

Այսպես Հովնան ինքնիրեն յուր նիզակին վրա հեց կ'երթար՝ կը

շարունակեր յուր հետագարձն անխռով և անսասան՝ բայց տխուր, վասընզի չի կրցավ շարժել եկեղեցական խումբը, ուսկից ինք հենակետ մը շինել կը հուսար։

ԳԼՈՒԽ Ժ

ԻՇԽԱՆԱԶԱՆՑ ԺՈՂՈՎ ՄԸ

Հասավ դարձյալ Երասխա ափանց վրա, որ դարիվ-դարիվ կուգար յուր խրոխտ ընթացյուք, սիրտը այնչափ տխուր էր, որ առաջ, քան անցնիլը, նստավ ճանապարհեն հեռու նույն ափանց վրա. ի՞նչ կը մտածեր այդ մարդը, որ քսանչորս ժամը անցեր՝ բերանը բան չէր դրած ուտելու և ոչ ախորժ ուներ։

Այդ Երասխա դիմացի գետեզրը, Բագարանն շատ վար՝ փոքրիկ վանք մը կը տեսներ, ճիշտ նույն միջոցին, ուր Ախուրյան Երասխ կը թափեր և իր աչքը անկից չէր կարող բաժնել. այդ վանքը երկու երկայն տարիներ իրեն բանտ էր եղած, կը նայեր այդ աշտարակին, ուր կը հիշեր, թե անքուն գիշերներ անցուցեր էր, կը տեսներ այն փոքրիկ երկաթապատ լուսամուտը, ուսկից առանց երկաթի արգելքին դարձյալ մարդ չէր կրնար անցնիլ, ծակը ուսկից շնորհյալ էր տեսնել երկինք յուր պայծառության և յուր տխրության մեջ, երբ իր սրտին այն օրերն սկսյալ մինչև սույն այս վայրկյան օր մը ուրախության արև չէր ծագած, քսանքսանհինգ տարիներու ժամանակ։ Եվ որ ավելին է՝ կը հիշեր այն սրտի համար սոսկալի վայրկյանները, որ չարչարանաց երկար տարիներ էին, հորում հոգին կը տոչորեր և նորա տանջանքները բացատրելու համար չի կար բառ, վասնզի մարդկային լեզուն շատ աղքատ է հայտնելու այդ վիճակը, և նա միայն կ'զգա, որ սիրեր է անհույս, որ սիրեր է թշվառ և որ խնդրեր է հաստուծո հազար բյուր անգամ ապատել զինք ի սիրո և ի կենաց, որուն երկնային քաղցրությունը գտանացուցեր, լափլիզեր է բաժանման և անհուսության դժոխային հուրը։ Կը հիշեր այն տխուր գիշերներու անհանգիստ քունը, ուր հրեշտակային և պաշտելի կերպարանքը Վասկանուշին կ'երևար փայլակի մը պես, և խելք բանտյալն հազիվ աչքերը հագեցնել փափագեր՝ աներևույթ կը լիներ և ինք խոտե խշտվույն վրա ամբողջ ժամեր կը տապալտկեր։ Վերջապես հոգնած այդ հիշատակներեն, ձեռքը ակամա ճակտին դրավ մեկդի վանելու համար ամեն խորհրդածություն, թեպետ այնչափ տարիներե վերջը սրտի սպիացյալ վերքը ձայն կուտար, թե չէր բժշկված, և այս այն վայրկենեն, որ քրմուհին գուշակեր էր, թե դարձյալ պիտի տեսներ իր սրտին սիրելին։ Ծնցվեցավ ելավ, հաւեց զգեստներն ու զենքերը, կապեց գլխուն վրա և առանց ուշ դնելու Երասխա մոնչյուններուն և բարկացայտ հարձակմանց նետվեցավ մեջ և նորա ընթացքին հետ կը սրանար, կ'իջներ միշտ հանդեպ կողմը, մինչև որ ափունքը գտավ, և երբ վրայեն ջուրը ցնցեց, իր պարեգոտը դարձյալ հագավ և ուղղվեցավ դեպի նույն վանքը, որ իբրև թե մագնիսական զորությամբ առ ինքն կը ձգեր, վասնզի Վասկանուշի համար բանտին հիշատակը նաև քաղցր էր, և նույն միջոցին մտածություն չի կար մտքին մեջ, այլ միայն Վասկանուշ, վասնզի այս սիրո հսկա ուրվականին առջև ամեն բան՝ ազգ, Սասուն, արաբ, նախարար, կաթողիկոս, անհետացեր էր մտքեն, այս մտածությամբը երբ կ'անցներ առաջին գյուղին քովեն, երկու պատանիք իրեն մոտենալով և ակնածությամբ, իրար երես նայելև և աչքով խորհրդակցելե վերջ, մին ավելի համարձակ՝ հարցուց.

— Եղբա՛յր, խութեցի Հովնան դո՞ւ ես։

— Այո, որդյակ, ես եմ։

— Խնդրեմ մեզ հետ գալ, վասնզի տունը մարդ մը քեզ կ'սպասե։

— Լա՛վ, որդյակ,— պատասխանեց Հովնան քիչ մը մտածելեն վերջ և առանց հետաքրքրության նշան կերպարանքին վրա ցույց տալու, լռիկ սկսավ երթալ պատանվույն հետ, որու մյուս ընկերը միշտ պատկառանոք իրեն կը հետևեր։

Եվ երբ պատանին դռան մը առջև կեցավ, մտավ Հովնան և առաջին աչք նետելուն տեսավ Գուրգեն թիկնավետ, որ դեպ իրեն քայլելով.

— Ե՛կ,— ըսավ,— եղբայր, հազիվ թե իմացա քեզի եղած այն վատթար և հիմար ընդունելությունը, սիրտս տրոփեց և վախելով, որ առանց քեզ տեսնելու ձեռաց կը հանեմ, և դու կ'երթաս Տարոն, բոլոր սա գետեզրը գյուղացվոց ապսպրեցի, որպեսզի տեսնվինք, և եթե կարելի բան մի կա, գործ դնենք։

— Ի՞նչ մնաց ընելիք, եղբայր,— պատասխանեց Հովնան տխրությամբ և հանդարտությամբ.— հույս չի կա ոչ կաթողիկոսե, ոչ եպիսկոպոսե, ոչ իշխանե և ոչ նախարարե. իսկ ժողովուրդը՝ «ոչխար, որու հովիվ չի կա», որ վաղը պիտի մատնվի բարբարոսաց ձեռքը՝ սրո և գերության։ Եթե կաթողիկոսը միայն ուզեր շարժիլ, եթե իմ խորհրդույս ուզեր հետևիլ, գար ս. Կարապետ, հաներ ոտք եկեղեցական բանակը, ժողովրդոց բանակը հարյուր հազարներով կը կանգներ անմիջապես, և մենք հայքս ան ատեն ոչ վատ կը լինեինք, ոչ անմիաբան, ոչ նախանձոտ, այլ քարով միայն զինյալ՝ շուներու պես կը հալածեինք թշնամին, որուն

անարգ ոտից տակ կը հեծեն գերությամբ մեր զավակները, մեր կանայքը, մեր իշխանքը, մեր եկեղեցին, մեր հավատքը... Աստված մեղք չի համարի, Գուրգեն, բայց սրտիս դառնությենեն առջի անգամ չէ, որ խնդրեր եմ իրմե առնուլ, վերցնել աս կյանքը, որ չի տեսնեմ միմիայն քրիստոնյա ասիական իմ ազգիս վիճակը, որ օրավուր կը վատթարանա, ծաղը ու ծանակը կը լինի անհալատից և կարճամիտ քրիստոնեից։ Եվ այն կը ցավիմ, որ մենք կրնայինք անկարոտ և առանց ուրիշի օգնության այս երկու ինքնակալությանց նաև դիմադրել և մեր երկիրը պաշտպանել, եթե մեր այդ հիմար նախարարական և ազնվապետական կառավարության ձեռը չունենայինք, որ մեր ազգը հարյուր կտոր ընելով բյուր բռնավորաց գերի է ըրեր։

Աս խոսքերը զրուցելով Հովնան՝ իբրև թե հոգնություն իմացավ և նստավ։ Գուրգեն, տեսնելով այս երկաթի մարդուն գունատությունը, հարցուց.

— Հովնան, ե՞րբ ելար Դվինեն։

— Երեկ երեկո։

— Ոտքով եկար մինչև հոս և առանց դադրելու, այնպես չէ՞։

— Այո։

— Ի՞նչ կերար։

— Ոչինչ։

Կը մտածեր Գուրգեն, թե այդ մարդը քսանչորս ժամու մեջ երեք օրվան ճամփա էր քալած և անոթի և հացի խոսք չէր ըներ ամենևին, ուստի շուտ մը ուժեղ ձայնով կանչեց.

— Վահրի՛ճ։

— Հրամայե, տեր,— ըսավ մեր հին ծանոթ Վահրիճ։

— Զրուցե մեզի շուտ կերակուր բերեն։

Վահրիճ գնաց կերակուր ուզելու. Հովնան անշարժ նստեր, աչքերը գետնին սևեռյալ կը նայեր. իսկ Գուրգեն սենյակին մեջ վեր, վար կը շրջագայեր, եղած վիճակին վրա խորհրդածելով և այդ ժողովրդյան մարդուն, ինք նախարարական՝ ամոթալից ակնարկ մը նետելով, իբր թե իր Արծրունի և Մամիկոնյան լինելուն ամաչեր, մոռնալով, թե այդ նախարարական իշխանության առաջին զոհերուն մեկն ինքն էր։

Լռությամբ կերակուր կերան գրեթե առանց խոսելու։ Գուրգեն Հովնանու երեսը նայեցավ։

— Դու պետք է քնանաս քիչ մը, Հովնան, վասնզի քեզի հետ ետը գործ ունինք։

— Եթե գործը կարևոր է, հոգ չէ։

— Ո՛չ, պետք է հանգչիս, և կեսգիշերեն վերջ քեզ հետ կ՝երթանք։

— Լավ,— ըսավ Հովնան, և Գուրգեն տեսավ, որ քանի մը վայրկյան ետը իր անվանակից մարգարեին նման կը քներ, թեպետ մենք գիտենք, որ յուր սիրտը նաև նորա նավուն պես ալեկոծյալ էր։ Կեսգիշեր չի կար, երբ ելավ կանգնեցավ Հովնան. այդ զորավոր կազմվածքը պետք չուներ երկայն հանգստյան, արդեն բոլորովին կազդուրել էր. նույնպես ելավ Գուրգեն, և ահա քիչ մը վերջը մեր երկու բարեկամները ձիարշավ կ՝երթային Ախուրյանն ի վեր Բագարանու ճամփան, և մեր հին ծանոթ Վահրիճ կը չանար յուր գրաստով նոցա հետևիլ և հասնիլ ոչ միայն զանոնք չի կորսնցնելու, այլ նաև յուր հետաքրքրությունը գոհ ընելու համար. վասնզի պատվական մարդը, որ շատ քիչ միջոց երբեմն Գուրգենի դաստիարակ լինելու փառասիրություն ունեցեր էր, հիմա շատ քիչով էլ գոհ լինելու կամք ուներ իր հետաքրքրությունը լցնելու համար, մանավանդ, քանի որ տերը կորուսել և ոտք-ոտք, գյուղ-գյուղ հարցնելով կրցեր էր հետևիլ նորա շավղաց և գտնել զինք Բագրևանդ։ Բայց ի՞նչ փոփոխություն այդ մարդուն վրա, մեկ քանի շաբաթվան հեռավորությամբ Գուրգեն փոխվեր էր, տխրություն նկարած կերպարանաց վրա, քիչ և միավանկ կը խոսեր, ծիծաղ եթե ծագեր երեսին, այն էլ հեգնական էր գրեթե, Թորթումի անունը և հոն դառնալու խոսք չի կար ամենևին։ Հիմա էլ յուր սովորական ձին Հովնանու տալ պարտավորյալ՝ ինք անտանելի գրաստի մը վրա ցնցվելով ոսկորները խուրտ ու խաշ կը հետևեր, նզովելով Հովնան և բոլոր սասունցիք, Ցոլակ և բոլոր աշխարհիս ձիանք, կը նզովեր նաև բոլոր աշխարհիս տյարք և իշխանք և Գուրգեն նաև, բայց այնպես կամաց, մնջիկ ձայնով, որ ոչ ոք՝ և սատանան անգամ կարող չէր լսելու, վասնզի մեր Վահրիճ շատ խորագետ մարդ էր և վտանգավոր բառ բերանեն չէր հաներ, եթե մտքեն անցներ։

— Գրո՛ղ տանի այդ խուլեցին, իր լեռներուն վրա ձիու երես տեսած ունե՞ր, որ իմ ձին կը հեծնա, և ես այս անիծած կենդանվույն կը դատապարտվիմ, ուստի՞ այս մարդն ելավ մեր դիմաց, քանի որ դա տեսանք, մեր գործը հաջող չի գնաց, մա՛րդ, որ կյանքին մեջ երեսին ծիծաղ չէ եկել, մա՛րդ, որու բերանը ամենևին չի բացվիր և երբ հանկարծ բացվի, ամենևին չի գոցվիր, մինչև չի հարցնես, չի պատասխաներ... Այդ մարդը կախարդ է, վեցհաղարյայի կը ծառայե... ահա քանի որ իշխանը այդ մարդը տեսավ, ինք էլ տխուր է, խելքին եկավ։ Երեկ հանկարծ խաղաղ նստած էինք Բլուր, ի՞նչ եղավ, սատանան դրդեց՝ վազե՛ Երասխա ափունքը, ամեն գեղացվոց իմաց տո՛ւր. ո՞ւմ համար... «Խուլեցի Հովնան եղբայր հրավիրել ամենայն ակնածությամբ, որ շնորհք ընե՝ գա մեր տեսության», և Գուրգեն իշխան ընդառաջ կ՝ելնե, լեռնցի մարդուն ձեռքերը կը բռնե... հին բարեկամ եղած իրարու Հովնա՛ն, Գուրգե՛ն.

լբրև թե եղբոր զավկներ լինեին... Անիծա՜ծ կենդանի, աղիքներս վեր, վար դարձավ... իմ պատվակա՜ն ձին, տե՛ս ի՞նչպես լավ կ'երթա Ցոլակին հետ... բայց դոքա ի՞նչ կը խոսին, մենք ո՞ւր կ'երթանք, այս ճանապարհը դեռ ի՞նչչափ կը քշե, ասոնք ամենը խնդիր են, բայց ո՛ւմ հարցնես։ Իրավ որ, Վահրի՛ճ, դու մեծ հիմարություն ըրիր՝ թողիր տունտեղ ելար իշխանին ետևեն... բայց միթե գիտեի՞, թե զիս այսպես պիտի ընդունի. ոչ ընտանություն, ո՛չ՝ ի՞նչ ըրիր, ո՛չ՝ ընտանիքդ ինչպե՞ս են, ոչինչ հարցմունք չի կա, այլ միայն «բարի ես եկեր» մը և ետքը գնա՛ այդ կախարդը փնտրե, տո՛ւր ձիդ, որ վեցհազարյայի մարդը նըստի, և դու հեծի՛ր վայրենի կենդանվույն վրա, որ բոլոր աղիքներդ վեր, վար շրջե և զքեզ սպաննե։

Եվ հանկարծ այս ամեն խորհրդածություն ընդհատեցան, Բագարան և իր կաթողիկեին ստվերը երևցավ մութուն մեջ, և մեր երկու ձիավորք կեցան և իջան ձիերենեն. Վահրիճ իջավ նույնպես և կաղնիկաղ ամենաթթու կերպարանքով եկավ ձիերը առնելու։

— Դու այս աղբյուրին քով մեզ սպասե,— ըսավ Գուրգեն, առանց գլուխ անգամ դարձնելու Վահրիճի տխուր երեսին, որ արդեն տեսնել կարելի չէր մութուն պատճառավ, և շարունակելով Հովնանու հետ յուր ճամփան դեպի քաղաք։ Թեպետ դժգոհ, որ այս արշավանքեն բան մը չիմացավ, թեպետ զկծյալ, որ զինք քաղաք մտնելու արժանի չէր համարեր իշխանը, բայց մխիթարյալ, որ ազատեցավ ցնցմունքե և ոսկորներու ցավե, կապեց երկու ձին ծառի մը, Ցոլակին էլ ապսպրեց հրսկել և ինք վերարկուին փաթթվյալ երջանիկ քունի մը մեջ ընկղմեցավ։ Խեղճ Վահրիճ հազիվ թե քառորդ մը կրցավ քնանալ և ահա զգաց, թե տաք շունչ մը և երկու ահագին շրթունք յուր երեսը կը գգվեին, Ցոլակ իրեն իմաց կուտար. ցատկեց ելավ, և կը լսեր քանի մը հեծելոց, ոտից դոփյուն. կորովարար յուր երկու ոտքին վրա հաստատուն կանգնեցավ և կրցավ որոշել, որ իշխանական խումբ մ'էր, որ կ'անցներ. դարձյալ առաջին դիրքը առավ, իր քարե բարձին վրա սկսավ քնանալ, բայց հազիվ աչքերը կը գոցեր, Ցոլակ հավատարիմ պահապան զինք կ'արթնցներ։ Երկու-երեք անգամ նույն դիպվածը նորոգվեցավ, միշտ նույնանման փոքրիկ գունդեր էին, որ քաղաք կը մտնեին։

Թողունք Վահրիճ իր քունին, երթանք մեր երկու ընկերաց հետ, որ ուղղվեցան հետի դեպի Բագարան։

— Լավ կը խոսիս,— կ'ըսեր Հովնան,— կ'ուզես հույս ունենալ այդ երիտասարդին վրա. այնպիսի հուսահատ վիճակի մեջ է մեր խեղճ ազգը, որ ո՛ւմ ըսես օգնության ձեռք պիտի երկնցնե. ես տեսա զինք, շատ խելոք և ուշիմ կ'երևա, բայց ժամանակը միայն կրնա հայտնել, թե երևույթը պիտի իրագործի՞ թե ոչ։

— Տեսնենք ի՞նչ է իր առաջարկությունը, ինքն է, որ զմեզ կը խընդրե, ինքն է, որ ինձ մասնավոր իմացուցեր էր, զքեզ առնում և գամ Բագարան և թե շատ կարևոր խնդրո վրա կը փափագի խորհրդածել. ես, որ աշխարհքիս զզված կը խորհեի առնուլ գլուխս՝ անցնիլ Հունաց բաժինը, այս լուրիս վրա զարմացա՝ ուզեցի այս երիտասարդը տեսնել, որու վրա ամեն մարդ գովությամբ կը խոսի։

— Ամե՞ն մարդ, կը նշանակե՝ ո՛չ մեկ մարդ։ Եթե ես էլ ամենուն պես ո՞վ որ իմ երեսիս ծիծաղեր՝ նա գովեի, եթե ես էլ ամենուն պես որ անիրավության մը փոխարեն նշույլ մը տեսնելուն արդարության արև ծագեցավ գոչեի, անշուշտ այդ երիտասարդը պիտի գովեի, վասնզի զիս անիրավ բանտե մը ազատեց. բայց ինձ նման մեկ դիպված և ուրիշներուն եղած հազար դիպված բավակա՞ն են ըսել տալ, թե հայ ազգին փրկություն ծնավ, որովհետև Բագրատունի Սմբատ Սպարապետի որդի Աշոտ իշխան մը կա։ Տեսնե՛նք զինք հիմա փորձով, թե ի՞նչ է, և մինչև ո՞ւր կ'երթար յուր գործունեությունը ազգին ընդհանրության համար։

Այս միջոցիս ձիերու ոտից տրոփ լսվեցավ, և քանի մը հեծյալք անցան և ուղևորեցան դեպի վերին բերդը, որ Ախուրյանի բարձրավանդակը կը տաներ, հազիվ թե քանի մը վայրկյան անցավ ուրիշ փոքրիկ խումբ մը դարձյալ տեսնվեցավ, երբ մեր երկու բարեկամք արդեն բերդին դռան հասեր էին։ Հայտնի կ'երևեր լուրթենեն, որ կը տիրեր, թե գաղտնության կարգադրություն մը կար. հեծելոց ձիերը անմիջապես պատրաստ ձիասպասք կ'առնվին իրենց սահմանյալ ախոռները կը տաներին, լռիկ սպասավորներ հյուրերուն կառաջնորդեին դահլիճը, որ երկու-երկու, երեք-երեք, չորս-չորս խմբիկներու բաժնված հրավիրյալք կամաց ձայնով կը խոսեին. քանի մը կանթեղ աղոտ լույս կը ձգեին ժողովականաց վրա։

Հովնան հետազոտ աչք մը ձգելով տեսավ, որ բոլոր երիտասարդ իշխանազունք էին սոքա, իրեն տարեկից քառասունն անցած մարդ չէր գտներ և ոչ մեկ հատ. կը փնտրեր և չէր տեսներ զԱշոտ, և ինքնիրեն՝ «լա՛վ, տիրաբար թող վարվի, հո՛գ չէ, միայն թե գիտնա կառավարել» կ'ըսեր, և առանձին անկյուն մը քաշված կը ծածկվեր։

Իսկ Գուրգեն նույն միջոցին արդեն հայտնի ամենուն ոչ անվամբ, այլ յուր հսկա հասակավ, համարձակ կերպով կը մոտենար յուրաքանչյուր խումբի, յուր մեծ աչքերուն նայվածքը ձգելեն վերջ կ'անցներ ամենուն քովեն՝ սրահին մեջ կեցած զՀովնան կը փնտրեր, երբ դուռն երկու փեղկերը միանգամայն բացվեցան, և Աշոտ Բագրատունի երևցավ

յուր եղբոր Շապհո և քանի մը Բագրատունի իշխանաց հետ մեկտեղ։ Ամենքը ոտք ելան. իսկ նա քաղցր և ծանր քաղաքավարությամբ, ձեռքը սրտին վրա դնելով զամենքը ողջունեց, անցավ նստավ և ձեռքով զամենքը հրավիրեց նստելու։ Նույն միջոցին տեսնելով զԳուրգեն, որ չէր ճանչեր, այլ երևակայեց, ելավ տեղաց, «Գուրգե՞ն իշխան» ձայնեց յուր խոշոր ու փայլուն ձայնով. իսկ նա՝ «ավասիկ եմ, իշխան քաջ, միայն թե ընկերս կը փնտրեմ» պատասխանեց և, տեսնելով զՀովնան քաշված մեկ կողմ, մոտեցավ բռնեց ձեռքեն՝ բերավ և յուր և Աշոտո մեջ նստեցուց։

Գուրգենի այս ըրածը ամենուն և Աշոտո անգամ զարմանք պատճառեց. միայն ինք Գուրգեն էր, որ անխռով աչք պտըտցնելով կ'իմացներ, թե իր տված պատիվը այդ լեռնականին, այդ շինականին՝ արժանավոր հարկ մ'էր։

Երբ հետաքրքրությամբ ամենը խոր լռության մտան, այսպես խոսեցավ Աշոտ Բագրատունի.

«Ո՜վ ազնիվ և պատվական բարեկամք իմ և իշխանազունք, հայրենիք և կրոնք կարելի է այնպիսի ծանր և վտանգավոր վիճակի մեջ չեն գտնված, ինչպես այսօր. Վարդանանց ժամանակի վտանգը հիմկվանին հետ բաղդատելով շատ ոչինչ է. թեպետ ան ատեն Պարսից մեծազոր արքայից արքայն էր, բայց Հայաստան յուր մատնիչներեն զատ օտարազգի չուներ իր ծոցը, իսկ այսօր Բաղդատու արաբացվոց ամիրապետը յուր իշխանության հզոր թևերը կը տարածե ո՛չ Ասիո վրա միայն, այլև բոլոր Ափրիկո և մինչև Եվրոպա կը դողացնե, և օտար թշնամին մեր Հայաստան երկրին մեջտեղ իրեն բույներ կը շինե. Դվին, Նախջևան, Բաղեշ, Տփխիս և Գանձակ տաճկաբնակ քաղաքներ են դարձած, ոչ մեր հնազանդությունը, ոչ մեր հավատարմությունը, ոչ մեր վճարած հարկաց ծանրությունը, մեր կրոնից, մեր կենաց, մեր ստացվածոց, մեր ազգության ապահովություն չունին. այս տիրապետող տերության ձեռքեն, որ կը խոստանա՝ խաբելու համար, կ'երդնու՝ ստելու համար, ապահովության ձեռագիր կուտա կողոպտելու, գերելու, քանդելու, այրելու և հիմնահատակ ընելու համար. քաղաքներն ավերակ. գեղերն անշեն, դաշտերն անապատ, ժողովուրդ տարագիր և փախստական լեռներու, ժայռերու, ծործորներու դատապարտված,— այս է մեր Հայաստանի վիճակը։ Երբ այս վիճակին վրա հայրերը, մեր մեծերը, մեր իշխանները կը մտածեն և ճար ու հնար չեն գտներ, մեզ բնական է հուսահատիլ. բայց հուսահատությունը, լքումը վերջապես ոչ մարդու վայել է, ոչ քրիստոնեի. եթե մենք խելքով, խոհեմությամբ և քաջությամբ վարվինք, ես այնպես կը հավատամ, որ աստված մեզ կ'օգնե, և Քրիստոսի զորությունը մեծ

է՝ կրնա այս դառն վիճակեն մեզ ազատել։ Աստվածաշունչ գիրք և մեր Հայոց պատմություն և մեր օրերու պատմություն նաև մեզի հույս կուտան, որ մեր սույն թշնամյաց դեմ նույնիսկ մեր հայրերը քաջությամբ պատերազմեր են. Դավիթ Սահառունի, Աշոտ Մսակեր իմ պապս և դեռ շատ սոցա նմաններ ահագին հարվածներ տվեր են այս արաբացվոց, և դեռ երեկ մեր քաջ սասնցիք ոստիկան մը յուր բոլոր բանակով բնաջինջ ըրին։ Ուրեմն ինչ որ պետք է ընել, ի՞նչ որ կարելի է ընել, մտածենք, և եթե ընելիք բան մը կա, ջանանք ի գործ դնել։ Խնդրեմ, հոս ազատ համարձակ խոսինք, ես զձեզ ամենքդ կը ճանչեմ և գիտեմ և ամեն վստահություն ունիմ ձեր վրա և ամենուդ երաշխավոր եմ, որ մեր գաղտնիքը գաղտնիք կը մնա, և գործելու համար միայն կը հայտնվի»։

Երբ նա վերջացուց իր խոսքը, քրթմնջյուն մը ելավ բոլոր սրահին մեջ, ամեն ոք յուր ընկերին հետ կը խոսեր, բայց բարձրաձայն խոսող՝ կարծիք հայտնելու համարձակող ոչ ոք չէր երևեր։

Հովնան և Գուրգեն լուռ կը կենային և բերան չէին բանար։ Իսկ Աշոտ, տեսնելով վիճակը, դարձավ հանկարծ այս երկուքին՝ «Դուք,— ըսավ,— ամենեին բան՝ առաջարկություն չունի՞ք ընելու»։

— Իմ առաջարկությունս երկու օր առաջ լսեցիք այդ մեծ ժողովքին մեջ. ես կը հուսայի, որ, եկեղեցական իշխանություն գլուխ կանգնելով, ազգին կրնար հրաշքներ գործել. նա չուզեր շարժիլ. դուք էլ կարելի է իրավունք ունիք այս իշխանազուն երիտասարդության վրա հույս դնելու և փրկության նշույլ մը փնտրելու։ Ես այստեղ այս ժողովքիս մեջ անհարմար անձ մը գտնեմ ինքզինքս, ոչ իշխանազն եմ և ոչ երիտասարդ. լռությունը իմ բաժինս ուրեմն պետք է լինի։

— Հովնա՜ն եղբայր, երկու օր առաջ այն ժողովքին մեջ, ուր ատենաբանեցիք, կարծեմ թե նույնպես իշխանազն չէիք, և ժողովքը կաթողիկոսի ու մեծ նախարարաց ժողովք էր։

Առանց այս խոսքերուն հեգնական մասին ուշադրություն ընելու, միամիտ հանդարտությամբ պատասխանեց Հովնան.

— Կարելի է ես խաբվինցա և համարձակեցա խոսելու սոսկական ռամիկ մը, վասնզի ալեզարդ կաթողիկոս մը հոն նախագահ կը տեսնեի ժողովքին, և այդ կրոնական գլուխը կարծեցի, թե ինձի պես կը հասկնար լուսավորչա ժողովուրդը, ինչպես առաքյալը կը կարծե՝ որուն առջև «ոչ աղատ կա և ոչ ծառա, այլ ամենայն ոք մի ի Քրիստոս Հիսուս»։ Եվ ես այդ հավասարությունը ոչ իշխանության և ոչ մեծության առջև կը փափագեմ, այլ ահավոր վտանգին, ուր նը գտնվի այս խեղճ հայրենիք։

— Վտանգը դարձյալ նույնն է. եթե ոմանք ծերո թյամբ, ոմանք անձ-

նական շահերով, ոմանք քենով կը մոռնան հայրենյաց վիճակը, հավասարապես հանցավոր են։

Այս խոսքերուն վրա Գուրգեն թեպետ կամաց, բայց ի բնե որոտաձայն պատասխանեց.

— Իշխան քաջ, դուք, երբ այս ժողովքը հրավիրեցիք, անշուշտ այս վիճակին դարման մը ունեիք ձեր մտաց մեջ, անշուշտ առաջարկություն մը պատրաստած էիք, ինչո՞ւ ժամավաճառ լինինք, խոսեցե՛ք համարձակ։

Գուրգենի հեզիկ ձայնը, որ առյուծի լռիկ մռնչյունի կը նմաներ բոլոր դահլիճին ուշադրությունը դեպ այն կողմը դարձուց, ուր մեր այս խոսակցաց հետ քանի մը անձինք նաև ունկնդիր էին, շրջանակը մեծցավ, և այս խոսքերուն վրա Աշոտ խորագետ, ինչ որ կ'ուզեր, որ ուրիշները զրուցեցին, ինք պարտավորեցավ զրուցելու։

— Այսպիսի վիճակի մը մեջ, Գուրգեն իշխան,— ըսավ նա, իբրև թե միայն Գուրգեն կը տեսներ,— ազգի մը պարտավորություն ինքզինք զորացնելն է, և այս զորության համար միություն մը կազմել պետք է անքակտելի. մեր բոլոր թշվառությանց աղբյուրը զորավոր կապ մը չունենալնես կը ծնանի. արաբացին զորավոր է, վասնզի ամիրապետ մը ունի, որուն ամենքը կը հնազանդին, հույնը զորավոր է, որովհետև կայսր մը ունի, որուն ամենքը կի հնազանդին, և այն ամեն ազգք և ազինք, որ իշխանություն մը չունին ամուր և զորավոր, այս երկուքին գերին են և ծառա։ Ուրեմն խնդիրն հոն է իմ կարծիքովս, որ մենք էլ պետք է իշխանություն մը հաստատենք և այդ իշխանության պետք է հարվինք ամեն սրտով, պետք է հանձն առնունք հնազանդիլ այդ իշխանության հրամանաց։ Հարկ չէ իշխանությունը մեկ անձի միայն հանձնել, կրնա երկու-երեք անձի ալ հանձնվիլ, միայն թե այդ իշխանությունը գիտնա կառավարել, և ամենայն ոք գիտնա նույնպես հնազանդիլ և ուրիշները հնազանդեցնել։ Պետք է համոզվինք, որ Հայաստան ուտող, սպառող ցեղը անիշխանությունն է, միմիայն պատճառ յուր կործանման, ավերակաց և գերության։

Երբ ինք լռեց՝ քանի մը երիտասարդք մոտենալով ըսին.

— Աշոտ իշխան, մենք զքեզ արժանավոր կը տեսնենք այդ իշխանության, դու հանձն առ և գործե, և մենք պատրաստ ենք քեզ հնազանդելու և օգնելու։— Նույնը կրկնեցին մեծ մասը ժողովականաց. երբ Աշոտ լուռ կեցած կը մտածեր, և երբ ամենքը նույնը կը կրկնեին և կը բռնադատեին պատասխանել, նա վերջապես համեստ ծանրությամբ ըսկըսավ այդ իշխանության դժվարությունքը ցույց տալ, յուր երիտասարդությունն առջև դնել և խնդրեց, որ «մի՞թե կարելի չէ՞ր այսպիսի իշխանություն մը յուր հոր՝ Սպարապետին հանձնել, որուն քաջությունը, խոհեմությունը, փորձառությունը հայտնի էին բոլոր Հայաստանի»։

— Կեցցե՛ Սմբատ Սպարապետ,— ըսավ, գրեթե միաբերան բոլոր ժողովքը,— հիրավի նա է միայն արժանավոր, նա կրնա փրկության հանել Հայաստան։

Եվ երբ ձայները հանդարտեցան, Աշոտ խոստացավ հորը իմացնել այդ ժողովքին որոշմունքը և խնդրեց, որ երբ յուրաքանչյուրին իմաց արվի, սահմանյալ տեղին ամենքը գտնվին։

Արդեն արշալույսն հասած էր, ժողովքը սկսավ ցրվիլ, ամեն մարդ յուր տեղը կ'երթար։ Երբ դոնեն դուրս ելան, Գուրգեն Հովնանի երեսը նայելով. «Եղբա՛յր, դու ի՞նչ կ'ըսես այս եղածին, ես Սպարապետը ոչ տեսած եմ և ոչ կը ճանչեմ, կրնա՞ ազգը փրկել»։

— Ազգը փրկելու կարողություն մարդ մը միայն ուներ, իմ կարծիքովս, Հայոց կաթողիկոսը. բայց նա ո՞չ կամեցավ. դատաստանը աստված ինք տեսնե։

— Բայց Սմբատ կրնա՞ բան մ'ընել։

— Ո՞վ գիտե, տեսնենք, ես բանի մը հույս չունիմ, կ'երթամ մեր լեռները, ինչ որ կրնամ կը ջանամ ընելու. իմ պարտքս մահվանե չի վախել և չի փախչիլ է, այդ աստուծո շնորհքով կրնամ կատարել։ Մնաս բարով, Գուրգեն իշխան, եթե աստված ուզե, դարձյալ կը տեսնվինք։

Հովնան Երվանդակերտի ճամփան բռնեց, իսկ իշխանը կուղղվեր դեպի Բլուր և չէր կրնար չի դարձնել գլուխը երբեմն այդ լեռնցի մարդու ետևեն, որ առանց ետին նայելու կ'երթար անսասան, ուր որ պարտքը զինքը կը տաներ. վասնզի ինք միակ մարդն էր նույն օրը բոլոր Հայաստանի մեջ, որ գիտեր, թե ի՞նչ պիտի ըներ։

ԳԼՈՒԽ ԺԱ

ԽՈՒԹԵՑԻ ԶՈՐԱՎԱՐԸ ԵՎ ՀԱՅՈՑ ՍՊԱՐԱՊԵՏԸ

Ապրիլ ամիսն եկավ, բայց ո՞վ իմացավ գարունը այդ սոսկալի տարին, ո՞վ տեսավ գարնանաբեր թռչունը. գուժաբերք Բաղեշու կողմեն իրարու վրա կը հասնեին և լուր կը բերեին ի Սասուն, թե արաբացի ահագին բանակը ուղղակի կուգար նախ խութեցիք բնաջինջ ընելու, Ապուսեթի որդվույն վրեժն հանելու համար։ Եվ իրոք չափազանցություն չի կար այդ պատմության մեջ, վասնզի ամիրապետը բոլոր մահմեդա-

կան զորությունը ոտք հաներ էր հարվածելու, պատժելու և բնաջինջ ընելու համար Հայաստան։ Ասորիք, բաբելացիք, Թուրքաստան, Խուժաստան, մարք, իսլամացիք, եգիպտացիք և Տաճկաստանի խորերը մինչև Սակաստան իրենց զորաց ընտիրները ղրկել էին Հայոց երկիրը անապատացնելու համար։ Ամիրապետը բոլոր զորաց առջև յուր Բուղա Սպարապետին խստիվ հրաման էր տված «Սովով և սրով և գերությամբ ելնել Հայոց աշխարհին վրա՝ ազատքը և ազատորդիքը իրեն ղրկել, գերեցիկներն ուրացնել, ռամիկն ի չիք դարձնել և երկիրը ժառանգել». այսպիսի հրամաններով կուգային Հայաստան այդ խուժադուժ ժողովրդոց արյունախանձ ամբոխը։

Իսկ Սասուն ի՞նչ կըներ այն միջոցին։

Սասուն միաբան, անխռով մարդու մը վրա աչքերը հառյալ կ՚ըսպասեր, թե նա ինչ պիտի հրամայեր. և այդ մարդը գիտենք, թե Հովնանն էր, որ բոլոր կիրճերը ամրացնել տվեր էր, պահապաններ բաժներ լեռներուն անառիկ կողմերը, կանայք, տղաք և ծերերը ապահովել էր իրենց բոլոր աղքատին ստացվածով և պաշարով, և ինք քանի մը հազար հոգվո ընտիր խումբով Խութի ստորոտը բանակյալ՝ դարանամուտ կ՚սպասեր անստան, որ Թշնամին գա։ Եվ Թշնամին կուգար բազմությամբ երեք առաջ բաժնած յուր բանակը, իբրև թե Խութա լեռներն անհետացնելու և շնչավոր կենդանի մարդ չի թողլու համար հոն։

Երբ իմացավ Հովնան, թե Թշնամյաց մեջ առաջ մը մտավ Բռնաշեն դավառ, առավ իր ընտիրները, և զանխուլ ճամփաներե հասավ մութուն նոցա դիմաց. այդ խիտ առ խիտ լեռները ծածկված կաղնի ծառերով, այդ անդնդախոր ձորերը, որոնց ամեն մեկ խորշը յուր լեռնականք լավ կը ճանչեին, իրեն մեծ վստահություն էին։ Ուստի քիչ մը դադար և հաց ուտելու ժամանակ տալեն վերջ իր զունդին՝ բաժնեց զանոնք երեք խումբի, և երբ Թշնամին ամենեին անկասկած և ապահով քունի էր թաղված, երեք խումբը երեք զանազան կողմե ահագին աղաղակավ, սուրերը, վահանները շկահելով հարձակեցան Թշնամվույն վրա և սկսան կոտորել անխնա։

Հովնան յուր խութեցվոց նշան պատվիրած էր յուրաքանչյուր հարվածի Սուրբ Առաքյալ գոչել, ի հիշատակ Սրբույն Թադեոսի. մեկ ձայնի՝ հազար և բյուր ձայն արձագանք կուտային այդ լեռներուն մեջ ս. Առաքյալ բառերուն. Թշնամին, որ փախչիլ կ՚ուզեր, ճամփա չէր գտներ, այդ սոսկալի բավիղին մեջ և մութուն սուրի փայլիվն և նիզակի հարված կը գտներ. վիրավորյալներուն ձայնը, փախչողներուն աղաղակը, ս. Առաքյալներու գոռումն ու գոչումը անիմանալի վիճակ մը զգալ կուտային նաև Հովնանու։ Ուստի, երբ գործողությունը լմնցավ, օտար և խուժական ձայները դադրեցան և միայն հայ խութեցի լեռուն մնաց, փառք տվավ Հովնան աստուծո, և օրհնության սաղմոսներ սկսան երգել միաբերան բոլոր լեռնականք, և երբ արշալույսը ծագեցավ, և տեսան Թշնամվույն դիակներով ծածկված գետինը, երբ տեսան, թե գահավեժ ժայռերեն վար գլորածներուն թիվը ավելի շատ էր, քան սուրեն ինկածները, երբ բաղդատեցին իրենց եղբարց կորստյան ոչնչությունը և Թշնամվույն թոզած ավարին հարստությունը և ճանչցան, թե այս ամենքը իրենց զորավարին հնարիմացության արդյունքն էր, իրենց համարմունքը Հովնանի վրա բազմապատկեցավ, և չէին գիտեր, թե ինչպե՞ս հայտնեին իրենց երախտագիտությունը։ Մտածեցին իրենց մեջ գաղտնի, որ կողոպուտին մեջ գտնված արծաթն ու ոսկին բոլոր իրեն ընծայեն. վերարկուն մը Հովնանի առջև տարածած ամեն ոք գտած դրամ, մանյակ, ապարանքան կը բերեին մեջ կը ձգեին. իսկ նա երկար ժամանակ առանց ուշադրության կը նայեր եղածը, և երբ իմացավ իրենց դիտավորությունքը, հրավիրեց զամենքը և սկսավ այսպես խոսիլ.

«Ո՜ իմ սիրելի եղբարք, իմ սիրելի խութեցիքս, մի՞թե այս շնչին ոսկին և արծաթը ձեր սիրույն նշա՞ն է ինձ, մի՞թե ես առանց այս նվերին չե՞մ ճանչեր ձեզ։ Ձեր քաջությունը, ձեր ցույց տված հնազանդությունը այս պատերազմին մեջ ձեր գլուխ ընտրած եղբոր՝ ինձ ամեն վարձքե վեր է, գնացե՛ք, բաժնեցեք ամեն ավարը, միայն ի՛նչ որ պաշար գտնեք, բանակին մեջ պահեցեք զգուշությամբ, որ հանձնեք ամբարապետին։ Լավ համոզվեցէք, որ մեր առջև դեռ խիստ աշխատություն կա, վասնզի Թշնամվույն բանակը շատ մեծ է և բազմաթիվ. պետք չէ հուսահատիլ և վախել, այլ գիտնալ քաջ լինիլ և հարատևել։ Իսկ զիս թող տվեք, ես գոհ եմ իմ վիճակես, իմ ունեցածս շատ է ինձ համար, վասնզի ինձ պատառ մը հաց, իմ գրգլյակս և իմ զենքերս բավական են։ Գնացե՛ք, որդյակք իմ, գնացե՛ք, եղբարք իմ, ջանացեք, որ ձեր սակավապետությունեն չի բաժնվիք»։

Երբ իմացավ Բուղա յուր կորուստը, հաշիվ թե Հայաստան ոտք կոխած այդպիսի անակնկալի հարված մը, նա, որ կարծեր, թե առանց դիմադրության երկիրն պիտի ոչնչացներ, ապշեցավ, բայց խստիվ արգիլեց այդ նյութին վրա ամենեին խոսիլ, որպեսզի մի՛ գուցե հայք քաջալերեին և յուր տաճիկք լքանին, և ամեն յուր զորությամբ և ամեն ջանքերեն հարձակեցավ Սասնո վրա. ամեն հաղորդակցություն կտրեց պաշարելով բոլոր ճանապարհները։ Իսկ Հովնան յուր քաջ խումբով կը գտներ ճամփա, երբ չի կար, կը հնարեր, հանկարծուստ կը հասներ այդ բազմազգի և բազմալեզու ամբոխին ցանուցիր խումբերուն վրա, կտորած կը հասցներ նոցա և երբ կը տեսներ, թե օգնություն կը հասնի Թշնամ-

վուն, կը քաշվեր կ'ելներ յուր բարձանց վրա, հոն իբրև ամպ մը կը ժողվվեր, կը թանձրանար՝ դարձյալ հանկարծ որոտմունքով իջնելու փայլակ, կայծակ, կարկուտ լինելու այդ բարբարոս թշնամյաց խումբին վրա։ Երկու կողմեն էլ շնորհք գթություն չի կար այդ պատերազմին մեջ, գերին իբրև վրեժխնդրության գործիք կը պահեին փոփոխակի զոհելու համար։ Արաբը սասունցի մը կը բերեր տանջանոք կ'սպաններ յուր լեռնականաց առջև, շուտ մը սասունցին տասն անգամ վրեժ կը հատուցաներ, և տասն արաբացի գլուխ Բուղայի բանակին մեջ կը նետվեր փոխարեն։

Զորքը կը քրթմնջեին, վասնզի ի՞նչ օգուտ կար այդպիսի աղքատ լեռնականաց հետ պատերազմելեն, որ եթե բոլոր լեռան էլ տիրեին, ոչինչ շահ չունեին այդ ժայռերեն։ Պետք էր ուրեմն, որ Բուղա փոխեր զենքը, գործածեր այն, որ շատ անգամ հաջողեր էր արաբաց ընդդեմ հայոց, պատգամավոր մը կը հասներ առ Հովնան՝ քաջ զորավար խութեցվոց, որ գա ի հնազանդություն օրինավոր իշխանության մեծ թագավորին, իր հավատքին սրբության վրա երդմունքով կը հաստատեր, թե վընաս ամենևին պիտի չի տեսներ ոչ ինք և ոչ յուր լեռնականք, և թե իրենց կրոնական ազատության ոչ ոք պիտի վնասեր՝ միայն թե հանձն առնուին ապստամբության զենքը թողուլ։

Երբ պատգամավորը բերին և աչքերուն կապը վար առին, և նա տեսավ սովորական մարդ մը՝ հագված խութեցի ասվե կապան, ժայռի մը վրա նստած անշուք, նիզակը և վահանը ոտքին քով դրած՝ չէր կրնար հավատալ, թե Հովնան էր այդ մարդը, վասնզի յուր անունը Բաղդատ մինչև ամիրապետին ականջը հասած էր, և հիմա Բռնաշեհի կոտորածեն վերջ բոլոր տաճկաց բանակը գիտեր և կը ճանչեր Հովնանի անունը։ Իսկ խութեցի զորավարը և ոչ գլուխ վերուց պատգամավորին, երբ նա յուր բոլոր ճարտարախոսությունն ի գործ ածեց, այլ մինչև վերջը մտիկ ընելով, երբ վերջացուց խոսքը, գլուխը վեր առավ և երկու կրակե աչքեր պատգամավորին վրա բանալով, որ զնա քանի մը քայլ ընկրկեցին. «Գնա՛, զրուցե քու զորավարիդ, թե խութեցիք թեպետ միամիտ լեռնականք են բայց տաճկաց խաբեությանց և ստերդումնությանց հավատալու չափ հիմար չեն։ Թե Բագարատ և բոլոր հայ նախարարք և իշխանք մեր պարզամիտ խորհրդոց մտիկ ըրած լինեին և փոխանակ ձեր ստությանց լսելու զենքով պատերազմեին քաջությամբ, ոչ անարգ կապանաց, ոչ տանջանաց, ոչ ուրախության չէին մատնվեր, և Հայաստան երկիր այդ ձեր անգգամ խուժանին ոտնակոխ չէր լիներ, և այդ ողորմելի ավերակաց կերպարանքը չէր ունենար։ Դժբախտություն մ'է, որ մեր իշխանք հիմարաբար ձեր գիրկը դիմեն կուրորեն, երբ նոցա ուսը կը շոյեք կեղծավորաբար, բայց հոս այս լեռներուն մեջ պետք է լավ գիտենա Բուղա, որ ոչ իշխան կա, ոչ նախարար, ոչ ազնվական, ոչ ազատ, բայց և ոչ մի ծառա և մի գերի. ուստի խաբվելու մարդ ամենևին չի կա և մեռնելու պատրաստ ամեն ոք։ Մենք այն ատեն միայն զենքերը կը թողունք, երբ տեսնենք մեր երկիրն ազատ ձեր սիրելի ներկայությենեն. իսկ ձեր խոստումները Կաշմերու, Արդլաներու խոստմունք են, որոց չենք կրնար հավատ ընծայել։ Միայն մեկ սխալ ըրեր են մեր տղայք որ քու աչքերդ կապեր և այնպես բերեր են իմ քովս. ո՛չ այդպես, ես քեզի ցույց կտամ, թե ի՞նչպես կրնաք ելնել մեր լեռները և մեզի հասնիլ, որպեսզի դյուրանա Բուղայի քաջությունը և ամիրապետին վրեժխնդրությունը»։

Եվ այս խոսքերը զրուցելով ելավ և առավ պատգամավորը աչքերը բաց հանեց սրան ի վեր այնպիսի ահավոր բարձրություն մը, ուսկից կ'երևար պատսպարանը կանանց և տղայոց անելանելի բարձրության մեջ, կը տաներ՝ ցույց կուտար իրեն ժայռերու ահագին բեկորներ բարձրավանդակներու վրա դիզված, ուսկից տղու մը ձեռք կրնար դյուրությամբ վեր ելնող զորաց բազմություն ոչնչացնել, վերջապես կը ցցներ այն ամեն ամրությունքը, որ ամիսներով Սասնո ժողովուրդը պատրաստել էր յուր անառիկ լեռները անմատույց ընելու համար թշնամյաց, և երբ այս ամեն բան ցցուց Հովնան պատգամավորին, «հիմա գնա՛, մեզմե բարև զրուցե՛ տիրոջդ» ըսավ և ճամփեց։

Երբ պատգամավորը պատմեց Բուղայի, թե ի՞նչ ընդունելություն գտավ Հովնանե, դիմակը վար առավ և աղրաները կրճտելով կատաղությամբ հրամայեց անզգամությունն ավելցնել և խեղճ ու թշվառ բնակիչք, որ միամտաբար իրենց հնազանդության վրա վստահացյալ մնացեր էին սրո ճարակ, կամ գերության շղթաներու մատնվեցան, կամ ուրացությամբ իրենց կյանքը և ազատությունը գնեցին։

Ծանր էր Հովնանու առաքինի և հայրենասեր սրտին այս սոսկալի անգթությունքը տեսնել անկարեկիր և համբերել։ Փախստականներ ամեն օր կուգային մանրամասն տեղեկություններ կուտային, և նա կեցած ժայռերու գլուխը արծվի աչերով կը դիտեր թշնամվույն շարժմունքը և երբ տեսավ առավոտ մը, որ ահագին բանակը կը դղրդեր, կը թողուր Սասնո շրջակայքը, կը պարպեր Տարոնո դաշտը և կ'ուղղվեր Ապահունյաց գավառը. ձայն տվավ յուր քաջերուն, իջավ հարձակեցավ վերջապահ բանակին վրա՝ կը կոտրեր, կը ջարդեր ինչ որ ցանուցիր կը գտներ դաշտին երեսը, և երբ թշնամին յուր վրա դարձներ զորությունը, դարձյալ կ'ամրանար յուր լեռները։

Տեսնելով Բուղա, որ խաղալիք եղած էր այս վայրենի լեռնցվույն, ինչ որ ամրություն, բերդ և վանք կար այդ շրջանին մեջ ամրացուց ա-

մենքը և բազմաթիվ զորքերով լցուց, որպեսզի Հովնանու ոտքը կապե։ Եվ այսու թեպետ Հովնան յուր առջի ազատությունը կորուցս, այլ ոչ երբեք դադարեցավ և օր չէր անցներ, որ հանկարծ չլսեր, թե Հովնան, որ Տարոն կը կարծվեր, փոքր խումբով մը Բաղեշի քովերը տեսնված էր և արաբացի ասպատակներ ջարդած, և երբ Բաղեշի վրա զորք կը շարժեր զինք բռնելու, կը լսվեր, թե ինք Ռշտունյաց գավառը մտեր՝ թշնամյաց խումբեր բնաջինջ կ'ըներ և հայ գերիներ կ'ազատեր։ Զարմանալի էր յուր շարժմունքներուն արագությունը և յուր հանդգնությունը. քսան-երեսուն հոգվո փոքրիկ գնդով մը կը հարձակեր հարյուրավոր մարդկանց վրա, և այն աստիճանի հասած էր յուր անվան ահը, որ միայն երբ զրուցվեր, թե Հովնան կամ սասնցիք եկան, արաբը խոհեմություն կը համարեր հեռանալ։

Յուր բոլոր արշավանաց մեջ Հովնան կը հիշեր երբեմն այն Բագարանի ժողովը և կ'սպասեր, թե ի՞նչ պիտի ըներ Սմբատ Սպարապետ, թե ե՞րբ կենաց նշան պիտի երևեր հայ իշխանազանց շարժմունքով. ուստի թեպետ շատ քիչ վստահություն ունեցեր էր, այլ դարձյալ շատ հետաքրքիր էր իմանալու ամեն բան, և գերիներե, փախստականներե կը տեղեկանար, թե Աշոտ և Սմբատ ամենեին շարժմունք մը չէին ըներ, միայն թե հայրը Մոկաց գավառը կը նստեր անշարժ, իսկ որդին Արարատա և Վանանդա կողմերը կը շրջագայեր. ոմանք կ'ըսեին, թե զորք կը ժողովեր, ուրիշները կ'ըսեին, թե զամենքը խաղաղության և հնազանդության կը հորդորեր, այսպիսի հակասական լուրերե որոշ բան իմանալ անկարելի էր, ուստի, աստուծո հանձնելով ամեն ինչ, դարձավ տեսնելու յուր Սասնո լեռները և, կարգի-կանոնի մեջ գտնելով, հանգիստ սրտով առավ դարձյալ ընտիր և փոքրիկ խումբ մը իր լեռնցիներեն, ելավ ճամփա երթալու դարձյալ Վասպուրական, գտնելու Աշոտ Տերն Արծրունյաց, վասընդի կը լսեր, թե նա կը պատրաստվի յուր բոլոր զորությամբ մաքառելու ընդդեմ թշնամյաց, ուստի յուր սովորական արագությամբ հասավ Բզնունյաց երկիրը և քստմնելով տեսավ երկրին ավերմունքը, Նորաշեն մեծ ավանը բոլորովին քարուքանդ եղած, հայ մարդ չէր մնացեր և ավերակաց մեջ հետամնաց արաբացի գունդեր մողեսի պես ավերակներեն դուրս երբեմն կ'երևային, զանոնք ջարդել, անհետացնել դյուրին գործ մը եղավ սասնցի գունդին, բայց ո՞ւմ համար էր այդ աշխատանքը, շեն ավանը բնակիչ մը չէր մնացեր, կաթընկեր տղայոց անգամ չէր խնայել արաբացի սուրը, և Բուղայի երկրորդը՝ Ժիրակ զորավարը, հասեր Ռշտունյաց Ոստանը հայ գերյաց բազմություն չվան ի վիզ քշելով առջևեն՝ իրև անասնոց նախիր՝ և աճուրդով ծախելու կը հաներ։

Նորաշենի ավերակաց վրա նստեր էր Հովնան գիշերելու իր խմբովը,

երբ գիշերապահ տղայքը եկան իմացնելու իրեն, թե ձիավորաց մեծ գունդ մը կը դիմեր Նորաշեն՝ Հոզցի կողմեն։ Երբեն Հովնանու ավոգությանն էր գիշերելու տեղը միշտ ամրացնել խստիխստ պատեհներով, ուստի խիստ լուություն հրամայեց յուրայնոց և բոլոր կրակները մարել և պատրաստ հսկել և ինք ընկեր մը միայն առած՝ գնաց ավանին մուտքը դիտելու և իմանալու, թե ո՞յք էին, որ կուգային։ Հոն կիսակործան ավերակաց մեջ սմքած, երբ քանի մը խոսք լսեց, հայտնի եղավ իրեն, թե հայ էր այր ու ձին և թե մոկացի էին զորքն, որ կուգային։ Մութուն մեջ նաև դյուրին եղավ նշմարել Սմբատ Սպարապետ, որ շրջապատյալ ի թիկնապահաց կը հառաջանար։ Առանց դանդաղելու վազեց ելավ Հովնան կիսակործան պատին վրա, և մեծ ձայնով, որ ձիերուն սալասմբակ շառաչմանը հաղթանակեց, գոչեց հանկարծ, և ամեն արշավանք կարկամեցավ.

«Սմբատ Սպարապետ Հայոց, ո՞ւր այսպես կ'երթաս, սխալ է այդ քու ճամփան, թշնամյաց գիրկը զքեզ կը տանի, ինչպես տարավ Բագարատ քու եղբայրդ։ Ո՞վ նախարարք, ո՞վ ազատագունդք հայոց, մինչև ե՞րբ այսպես միամտության և վատության ձեր անձը, ձեր ազգը, ձեր երկիրը, ձեր հավատը պիտի զոհեք, մինչև ե՞րբ այդ իմաստություն կարծված հիմարության պիտի հետևիք։ Ափսո՞ս, հազար ափսոս, դուք անձամբ կ'երթաք զձեզ մատնելու անօրինաց ձեռքը. եթե միայն զձեզ մատնեի՞ք, գիտե՞ք ուր կը տանի զձեզ ձեր անձանց մատնությունը՝ կը տանի մինչև դավաճանության ձեր ազգին, կ'ընե զձեզ անարգ ստրուկ և գործակից Բուղայի, և ձեզի վարձք փոխարեն վաստակոց շղթաներ կ'սպասեն և բանտ, երբ մայրն Հայաստան բոլորովին ճնշյալ, վատթարացյալ և չքացյալ լայնատարած գերեզման մը պիտի կազմե և ողբա ոչ միայն յուր զավկներու դիականց և շղթաներու վրա, այլ նաև մանավանդ այն զավկներուն վրա, որ արբանյակ եղան յուր դահիճներուն և մատնիչ իրենց եղբարց»։

Այդ մեծ ձայնը գիշերվան լության մեջ՝ այդ ավերակաց վրայեն սասանեցուց Սմբատ։

— Ո՞վ ես դու, մա՛րդ,— ըսավ,— չարագուշակ մարգարե, որ ամեն բարի փափագները ի չար փոխարկյալ կը տեսնես, ամեն քայլափոխ վատ կը մեկնես, իբրև թե դու միայն քո ազգդ սիրեիր, և ամեն հայ մատնիչ լիներ և դավաճան յուր ազգին, միայն դու տեսար նորա թշվառությունը և ցավեցար, և Սմբատա սրտեն արյուն չի՞ հոսիր միթե այդ սոսկալի պատուհասին, որ մեր վրա հասյալ է։

— Եթե ճշմարտապես ազգդ կը սիրես, մ'երթար խլաթ, մ'երթա՛ր Բուղայի. հոն կա մահ բունյալ ոչ քու անձիդ, ոչ քու տոհմիդ միայն, այլ բոլոր հայ ազգին, դարձու այս քաջերը, զինե սոցա ձեռքը պատերազմի

ն ոչ շղթայից։ Վատութեան անունը խոհեմութեան հետ մի՛ խառներ, խոհեմութիւնը ուխտադրուժներե հեռի կենալն է։ Մինչև ե՞րբ և քանի՞ անգամ պիտի փորձեն հայք այդ թշնամին։

— Բայց ո՛վ և ի՛նչ մարդ որ լինիս, այսպես մութուն և խավարի մեջ կարելի չէ խոսիլ և վիճաբանել. օթևան մը մեզի գտնենք և հոն տեսնըվինք։

— Ո՞ւր է ասկից վերջ հայուն օթևան և բնակարան, Սմբատ Սպարապետ, ես լույս աչոք Նորաշեն ավանը փնտրեցի և ավերակներ գտա, մարդ փնտրեցի և երկոտանի գազաններ գտա. դու խավարի մեջ ի՞նչ կը հուսաս գտնել։

— Իջնենք, տղա՛ք,— ըսավ Սպարապետը. ամենը իջան ձիերենեն, և ինք ուղղվելով Հովնանու կողմը,— ե՞ս քեզի գամ, թե դու ինձ կուգաս,— հարցուց։

Իսկ Հովնան շուտ մը ցատկելով յուր բարձրավանդակեն ճամփուն վրա և մոտենալով՝

— Ես միշտ պատրաստ եմ գնալու և հնազանդելու նոցա, որ աստված ազգին գլուխը դրեր է, միայն թե սրբազան պարտիք կա իմ վզին, որ վիրենք վտանգե զգուշացնեմ, մանավանդ, երբ վտանգն ակներև և հայտնի է։

Իսկ Սմբատ, երբ մերձեցավ և նշմարեց ամառվան գեղեցիկ և աստղազարդ գիշերվան մը աղոտ լուսով Հովնանու աչքերուն փայլը, որուն արդեն ձայնը մտքին մեջ ծանոթ հիշատակ մը կարթնցներ, կանգ առավ և ձեռքեն բռնելով,

— Ո՞ւր կրնամ քեզ հետ երկար և առանձին խոսիլ, Հովնան,— ըսավ։

— Ո՛ւր և երբ կամենաս, ես միշտ պատրաստ եմ։

— Երթանք ուրեմն և տեղ մը ճարենք, դու անշուշտ տեղ մը գտար քեզի և քու մարդիկներուդ. հուսամ թե միայն չես։

— Բոլոր ավանը ավերակ է դարձեր, իշխան. ես իմ ընկերներովս ավերակներու մեջ զետեղեցա ինչպես որ կրցա, մենք մեր կորեկի հացով կը շատանանք, բայց դուք ինչպե՞ս կ'ընեք. միատեղ պաշար ունի՞ք, ձիոց համար գարի ունի՞ք։

— Մենք էլ զինվոր ենք, Հովնան,— ըսավ Սմբատ հառաչելով,— մեր ձիերն էլ կրնան երբեմն շատանալ խոտով. և շատ անգամ քսանչորս ժամ անոթի կռված ունինք. իրավ արժանի ենք նախատանաց, վասնզի շատ հանցանքներ ունինք, բայց վատութեան նախատինքը Բագրատունի զորավարի մը շփել, որու մազն ու մորուքը զենքերու տակ ճերմըկեր է, ծանր է, և դու պետք չէիր ընել։

— Ներե, իշխան մեծ,— պատասխանեց Հովնան և նույն միջոցին զգաց, որ ծեր Սպարապետին ձեռքը կրքեն կը դողար, ինչպես խոսելու ատեն ձայնը դողացեր էր.— ես մտքես անգամ չեմ կրնար անցնել այսպիսի նախատինք մը, և եթե իմ խոսքերուս մեջ այնպիսի նշմար մը կարքու անձիդ վրա, ինձ դառնա. քու կյանքդ պետք է Հայաստանի, նորա պահպանությունը միայն ինձ չափազանցության տարած կրնա լինիլ։

— Մոռնանք այդ դիպվածը, Հովնան, վասնզի ժամանակը կարճ է, և պետք է ես քեզի հետ խոսիմ։

Վերջապես հառաջ գնալով հասան եկեղեցվո մը առջև. «Գոնե հոս այս գիշեր սա աստուծո տան մեջ կրնանք պատսպարիլ», ըսավ իշխանը, նույն միջոցին թիկնապահները լապտեր մը բերին վառած և հազիվ թե քանի մը քայլ առին, արանց, կանանց տղայոց դիակներ տեսան, որ գետինը դիղված էին և թանձրացած արյունը ոտքերնին կը սահեցներ։ Սոսկալով ետ քաշվեցան, Սմբատ հառաչանքով հրամայեց թիկնապահաց ուրիշ տեղ մը ճարել և ինք Հովնանու միշտ ձեռքեն բռնած կը շրջագայեր, երբ թիկնապահք եկան իմացուցին, թե պատրաստ տեղ մը հարմարցուցին։ Այն ատեն քանի մը գորգ փռած սենյակ մը մտան, ուր Հայաստանի առաջին մեծ նախարարը և Սասունի լեռնականը դիմացե դիմաց նստած ժամերով խոսեցան, և այդ խոսակցության վերջի արգասիքն այդ եղավ, որ Հովնան կատարյալ համոզվեցավ, թե նախարարությունը՝ բազմագլխյան վիշապ, ի կորուստ պիտի տաներ Հայաստան, վասնզի այն նաև իմացավ Սպարապետեն, թե Աշոտ Արծրունի, որ պատերազմելու կը պատրաստվեր, կը վարանի, վասնզի յուր նախարարքն իրեն հետ միաբան չէին։

ԳԼՈՒԽ ԺԲ

ԱՇՈՏ ԱՐԾՐՈՒՆԻ ԵՎ ԴԱՎԱՃԱՆՔ

Առավոտուն երկու խումբերն իրարու հակառակ ճամփով կը բաժնըվեին. Սպարապետին ձիավորաց շքեղ խումբը կ'երթար Խլաթ թըշնամվույն երկրպագելու, իսկ Հովնանու լեռնականաց հետևակ և աղքատիկ խումբը կերթար Ռշտունյաց Ոստանը թշնամին փնտրելու և հարվածելու։ Եվ թշնամին գտնելու համար ոչինչ դժվարություն չի կար, միայն պետք էր ավերակաց և կոտորածոց հետևիլ. այսպես հասավ Ոստանի վաճառատեղին, որ դիակոք և գերյոք լեցուն էր, վասնզի անողորմ արաբացիք մարդկանց գեղեցիկները և կորովիները միայն գերության արժանի կը համարեին, իսկ տգեղները և տկարները սրո կը մատնեին։

Այս դառն վիճակին մեջ, երբ խեղճ ժողովրդյան մնացորդը գազանաց ձեռքը մատնյալ հուսահատ կ'սպասեր մահվան, հանկարծ հրեշտակաց փրկիչ խումբ երևցավ Հովնան յուր սասունցիներով։ Դահիճները փախչելու ծակ կը փնտրեին, գերիները ազատություն կը գտնեին, և Հովնան վայրկենին՝ ինկած թնշամյաց զենքերով կտրիճները կը զիներ և իր գունդը այսպես ստվարացյալ՝ չի համարձակելով դիմել Ժիրակա վրա թ Վանտոսպ, կը հարձակեր Ածանա ձորը, ուր իմաց տվին իրենն, թե արաբացի մեծ գունդ մը փախստականներու ետևեն էր դիմեր։ Հոն աչվընները վեր առավ Հովնան, և առաջին անգամ յուր սիրտը մեծ ուրախությամբ լցվնցավ տեսնելով, որ արաբացի խումբը կիրճի մը բերան կը կռվեր հայկական խումբի մը հետ, որ նիզակ, մանգաղ, պարսատիկ և աղեղն զենք ըրած՝ քաջությամբ կը դիմադրեր, և երբ սասունցիք իրենց սոսկալի աղաղակը ձգեցին և արաբացվոց ճամփան փակեցին, արյան գետեր սկսան վազել, և հաղիվ քանի մը հոգի կրցան փախչիլ երթալ Արտամետ իրենց զորավարին իմացնել պատահարը։

Այն ատեն Ժիրակ առած զորքերը ամենայն արագությամբ Հովնան փնտրելու ելավ։ Իսկ սա հաղիվ թե մտավ Ոստան՝ իմացուցին իրեն, թե արաբը հասավ։ Նահանջի ժամանակ չի կար, ուստի շուտ մը ամրոցը քաշվեցավ և հոգե պատնեշներով ամրացուց ինչ որ խաթարյալ էր պարիսպներեն. դռներն ամրացնել տվավ և հրամայեց, որ փնտրեն բերդին մեջ, եթե կար ոք, որ տեղեկություն ունենար ելից ու մտից։ Եվ ահա գտան և բերին բերդապահը, որ մեզի ծանոթ խուրենն էր, որ արաբացվոց կոտորածը լսելով եկեր իջեր էր Արտոս լեռան ծործորներեն և մտեր բերդը միայն թաղած և ծածկածները զննելու, և որ հիմա սոսկումով կ'իմանար բերդին պաշարումը և շատ գոհ էր, որ գոնե ընտանիքը լեռնեն չէր բերած։

Հովնան տեսնելով այս մարդը՝ սկսավ հարցնել և իմանալ, թե բերդը ինչ տկար տեղ ուներ պաշտպանելու, մի՞թե կարելի՞ էր ծովեն նավակ կամ լաստ գտնել և փախչիլ։ Խուրեն այս հարցմունքներուն ուշադրությամբ մտիկ դնելով և տեսնելով, թե այդ հասարակ մարդը շատ կը հարգեին յուր ընկերները, ըստ յուր սովորության ըսավ.

— Իշխան...

— Լռե՛, անպիտան շողոքորթ, ես էլ քեզի պես սոսկական մարդ եմ, եղբայր չե՞ս կրնար զիս անվանել. զրուցե միայն, թե այս քու բերդը գաղտնի ճամփա մը՝ փախչելու տեղ մը ունի՞։

— Ինչպե՞ս չունի, եղբայր, ստորերկրյա ճանապարհ մը կա, որ բերդին դուրս վարը կը հանե։

— Ո՞ւր վարը։

— Ահա՛, սա հին եկեղեցին կը տեսնե՞ս, ճիշտ դորա մեջեն է ելքը, խորանին տակը. Սուրբ Ստեփաննոսի եկեղեցին է դա։

— Այս մոտերս անկից մարդ անցած ունի՞։

— Ինչպե՞ս չունի, ես այս առավոտ անկից ներս եմ մտել։

— Շատ բարի՛, եղբայր, ապրի՛ս, աստված բանդ հաջողե.— ըսավ Հովնան և հրամայեց երկու ճարպիկ երիտասարդներու երթալ տեսնել ճամփան յուր բոլոր երկայնության մեջ, և երբ կարելի է, զգուշությամբ դուրս ելնել և բարբարոսաց դիրքն իմանալ։

Եվ ինքն այն միջոցին կը դիտեր, թե ինչպե՞ս թշնամին կը զեղաներ, կը տարածեր, որպեսզի ամեն կողմեն բերդը պաշարե, և յուր սուր աչքերը չէին բաժնվեր այդ ս. Ստեփաննոսի եկեղեցիեն, որու դռան առջև քանի մը արաբացի զինվոր միայն կերևային և որ վերջը թողին եկեղեցին և եկան խառնվելու ամբոխին հետ։ Վերջապես մեծ հաճությամբ տեսավ իր երկու խուրեցիքը, որ աշալուրջ գողի պես գլուխնին կը հանեին եկեղեցվույն դռնեն դուրս զգուշությամբ և ներս կը քաշվեին, վերջը՝ քանի մը վայրկյանեն կը տեսներ, որ նույն խուրեցիներեն մեկը եկեղեցվույն տանյաց վրա գառացյալ կը շրջեր սողալով և ամեն կողմ կը դիտեր ու կ'աներևութանար. «Ապրի՛ք տղաք, այսպես պետք է լինիլ միշտ» կ'ըսեր Հովնան ինքնիրեն և կ'սպասեր նոցա գալստյան, ու սասուկ կը ցավեր, թե ի՞նչպես այդպիսի փոքրիկ խմբով ելեր էր յուր լեռներեն։ «Ա՜հ, եթե հազար հոգի մը իմ գլուխս ունենայի փոխանակ այս հարյուր քաջերու, այդ երեսուն հազար ավազակաց խումբը կաքավներու պես կը ցրվեի հիմա։ Տեսնենք, ո՛ գիտե թերևս Աշոտ Արծրունին բան մը հաջողի ընելու. փորքիկ հաջողություն մը բավական է ինձ, և ես շաբաթե մը կուգամ երկու հազար հոգվով իրեն օգնելու»։

Այսպես կը խորհրդածեր, երբ տղաքը եկան և պատմեցին իրենց ստորերկրյա արշավանքը, և նա զիրենք վարձատրեց «շա՜տ բարի, ապրի՛ք, որդյակք» ըսելով. այս բառերը Հովնանու ժլատ բերանեն մեր լեռնեցիները այնչափ ուրախացուց, ինչչափ որ Բյուզանդիոնի կայսերաց պալատականք կ'ուրախանային, երբ ինքնակալ տերը բազմականգուն տիտղոսներ շնորհեր իրենց։

Ծամանակն սկսեր էր մթնել, երբ ինք առջևեն մտավ գետնուղին, և ամենքը ետևեն հասան եկեղեցին, զգոշությամբ ելան դուրս և առանց տեսնվելու սկսավ հետադարձը, ու բոլոր գիշեր քայլելով հասան Մոխրաբերդ, այդ բերդը թեպետ կիսավեր, բայց լավ պատսպարան մ'էր խուրեցի գունդին, որ տարածվեցան քնո հանգիստ առնուլ և կազդուրիլ։ Իսկ Հովնան ըստ յուր անխոնջ բնության և պարտուց, ամեն կողմ լավ

բենելին վերջ՝ իջավ ծովեզերյա կողմը բերդին, նստավ և կը դիտեր ծովը, որ շաբունակ բարձրանալով կ'ընդարձակեր յուր սահմանը, կ'ողողեր ցամաքը, կը կլաներ շեն և անշեն. յուր հայրենասեր աչաց Հայաստանի պատկերն էր այդ տեսարանն, որ թշնամին կ'ողողեր, և այդ Մոխրաբերդ, որուն պարիսպներուն բարձրության սկսեր էր հասնիլ օրավուր առատացյալ ծովը։

Այդ խորհրդածության մեջ հանկարծ երկու նավ տեսավ, որ տկար հողմով հանդարտ կ'անցնեին Աղթամար կղզվա քովեն դեպ արևմուտք դիմելով, վազեց գնաց առավ յուր Սասնցի գրոշակը, որ սպիտակ լաթի վրա կարմիր խաչ մ'էր, և սկսավ ծածանել օդին մեջ. ուրախությամբ տեսավ, որ նավերը դեպ ծովերը ուղղեցին իրենց ընթացքը, և երբ դեռ բավական հեռու էին, Հովնանու սուր աչքերը նշմարեցին՝ հայ քանի մը իշխանազունք և ընտանիք էին, որ կ'երթային և հավանական, թե կը փախչեին։ Երբ ավելի մոտեցան, տեսավ, որ միջահասակ մարդ մը ոտքի վրա կեցած, ղեկը ձեռին նավը կը կառավարեր, տասնի չափ կանայք և տղայք նավուն խորը նստած՝ տխուր, լռիկ արցունք կը թափեին. ութտասը ազատորդի երիտասարդք վտանգյալ վահանները ձախ և աջով սուրերու վրա հեցյալ իրեն կը նայեին, իրենց արյունվա և պատառոտի զգեստներուն վիճակը կը ցցներ, թե կռիվ նոր կ'ելնեին։ Երկրորդ նավը առաջնուն հար և նման կերպարանք ուներ։

— Փա՜ռք աղատողին, խոսրով իշխան,— ըսավ Հովնան ճանչելով Ակնացին, որ ղեկին վրա կանգնած էր. իսկ նա լի տխրությամբ աչքերը երկինք վեր առած.

— Փառք քեզ, տեր, փառք քեզ, հաղագս ամենայնի, տեր, փառք քեզ,— պատասխանեց և յուր լայն կուրծքեն մեծ հառաչանք մ'արձակեց։

Մեկ-երկու նավավար առագաստն իջուցին, մեկ-երկուքն էլ պարբսպին վրա ցատկեցին ելան, և նավը մերձեցավ. նույնպես մյուս նավն էլ անոր օրինակին հետևեցավ։

— Եղբայր,— ըսավ խոսրով,— ապահով տեղ ենք հուսամ այս խաչի դրոշակին տակ։

— Օրվան մը ապահովություն կրնամ տալ քեզ,— պատասխանեց Հովնան,— և այսպիսի ժամանակ՝ այս վայրկենիս չգիտեմ թե Արծրունյաց տերը կրնա՞ այսչափ խոստանալ։

— Շղթաներու մեջ ի՞նչ կարելի է, որ խոստանա։

— Շղթաներո՞ւ մեջ, այսքա՞ն շուտով...

— Ինքն էլ և յուր որդին՝ Գրիգոր, Վահան Արծրունի և նորա որդին՝ Գագիկ։ Սուշեղ և Հրանույշ տիկին և մեծ տիկին Հռիփսիմե և ուրիշ շատ ազատ տանե մարդիկ կապյալ և ուղտերու վրա բարձյալ Ատրպատականե Բաղդադու ճամփան հուղարկվեցան։

— Բայց դուք պատերազմով կերևա թե ազատած եք, ձեր վիճակը հայտնի ցույց կուտա։

— Մենք մեր ազատությունը աստուծո օգնության և մեր սուրերուն պարտիմք. իսկ նոքա իրենց շղթաները՝ մատնիչներու անարգ վատության։

— Որո՞նք էին մատնիչները։

— Ի՞նչ պետք հիշել անօրինաց անունները։

— Ոչ միայն պետք է հիշել, այլ նաև կրակով գրել, ժայռերու վրա փորագրել, մանր և փոքրիկ տղայոց ուսուցանել, որ նոցա անունը նը-զովեն և նոցա օրինակեն քստմնել սովրին, և մեծ, հասակավոր մարդիկ առաջին առթիվ զանոնք պատուհասեն. որո՞նք են այդ անօրենները։

— Մուշեղ՝ Վահևունյաց ցեղեն, Վահրամ՝ Տրունյաց ցեղեն, և մյուս Վահրամ Թիկնապահ իշխանին, միաբանելով իրենց հետ ազատաց գունդը, գաղտնի պատգամավոր ղրկեցին Բուղայի՝ կապել և մատնել յուր ձեռքը Աշոտ և յուր հավատարիմները, որ բոլոր բազմությամբ ապաստանյալ էին Նկանի բերդը։ Այս վիճակը տեսնելով իշխանը՝ գնաց և անձնատուր եղավ թշնամվույն. մենք էլ պարտավորյալ յուր օրինակին հետևվեցանք, բայց երբ տեսանք երկրորդ կարավան մը, ուր մեր կանայք և զավակունք գերի կվարեին ի Բաղդադ, և որովհետև զարմանալի հիմարությամբ թշնամիք մեր զենքերը չէին առած մեզմե, ձայն տվինք իրարու՝ զարկինք ցրվեցինք խումբը և կարավանն ազատեցինք. բայց ո՜ր փախչիլ կրնայինք, Ամիկա ամրոցին կողմը դեպի ծով զմեզ թշնամին կվարեր, երբ մենք պատնեշ եղած մեր ընտանյաց՝ կովելով կընկրկեինք մտքերնիս դրած ծովակուլ լինիլ քան թե գերության մատնվիլ. և իրոք ծովեզերք ետևնիս և թշնամվույն բազմությունն առաջնիս, «քա՜շ եղեք, նավ գտանք» ձայնը մեր զորությունը բազմապատկեց, հուսահատ վերջին հարձակմամբ թշնամին ետ մղեցինք, կանայք և որդիք մտան նավերը, և ես ու սա ութը տղաքը միատեղ ինքզինքնիս նավերը նետեցինք և բացվեցանք։ Բայց ի՜նչ սոսկալի փրկություն է այս. ահա սոքա կուլան փոքրիկ աղչկանս կորստյան վրա, նույնպես ամենքը կամ հայր ունեին, կամ եղբայր, կամ քույր, որոնց վրա պիտի ողբան հավիտյան և չենք գիտեր ո՞րն է ավելի ողբալի, հոգվո կորուստը թե մարմնո։

— Աստված ողորմած է և արդար, Մերուժաններ ու Վասակներ չեն ազատիր իր բարեկամութենեն, հիմա մենք տեսնենք թե ի՞նչ բանի պետք ունին այս տիկինները, և մենք ի՞նչ ծառայություն կրնանք ընել իրենց և ձեզի։

— Հիրավի ես էլ չգիտեմ թե ո՞վ ինչ բանի պետք ունի. միայն այն գիտեմ, որ երեք օր է հացը բերնես վար չերթար։

Գլուխը ետ դարձուց Հովնան և տեսավ, որ քանի մը խութեցի տղայք ելեր կնայեին, ուստի իրենց հրամայեց, և նոքա շուտ մը բերդին ամենեն լավ սենյակներուն մեկը խոտի դեզեր բերին և փռեցին, իրենց գարի հացեն և շոր պանիրեն նույնպես բերին, սափորով մ'էլ ջուր դրին, որ փախստականք հանգչին ու կազդուրին։

Երբ այս սասնական հյուրընկալությունը վայելեցին մեր աղնվատոհմք, Խոսրով Հովնանու հետ առանձնացավ և հարցուց թե ի՞նչ է միտքը, մինչև ե՞րբ այդ ավերակ բերդին մեջ կենալ էր, իսկ Հովնան հայտնեց թե իրեն այդ երկրին մեջ երկայն կենալ անկարելի էր, մանավանդ երբ բուն երկրին բնակիչք ոչ հույս, ոչ կարողություն և ոչ գլուխ ունեին դիմադրելու, և Ժիրակ Ոստանի բերդին առջև երկայն չէր կրնար կենալ և անտարակույս խութեցի գունդին ետևեն պիտի արշավեր, վրեժխնդիր լինելու այն չարյաց, որ հասուցեր էին յուր զորաց, ուստի իրեն պարտք էր դառնալ Սասուն և մտածել թե ի՞նչ պետք էր ընել։

— Ինչչա՞փ են քու զորքերդ,— հարցուց Խոսրով։

— Գրեթե հարյուր հոգի։

— Ուրեմն մեր նավերը զձեզ կրնան առնուլ և տանիլ ուր որ կ'ուզեք։

— Լա՛վ, ուրեմն այս գիշեր ճամփա կելնենք, և երբ քամին հաջող է՝ կը հասնինք Դատվան։ Եթե դուք հանձն կ'առնուք մեզի հյուր լինիլ Սասուն, մինչև որ այս պատուհասը անցնի, մենք շատ գոհ կը լինինք։

— Արդեն մենք տարադիր փախստական մարդիկ ենք, ապահովություն ո՛ւր որ գտնենք, հոն կը դիմենք։

Նավավարներն բերել տվին և հարցրին. նոքա ապահովեցին, թե կեսգիշերուն հանդարտ քամի մը որ կ'ելներ սովորաբար՝ զիրենք առավոտուն կանուխ Դատվան կրնար հանել։ Նույնպես նավավարներու ըսած խաղաղությամբ և հանգիստ Դատվան հասան Հովնան ու Խոսրով և նոցա ընկերքը. կանանց համար գրաստներ և արաբացի նժույգներ նաև կը ճարեին մեր սասնցիք և կ'ելնեին իրենց լեռները, որ արդեն փախստականներով լեցուն էր և որ շրջակայից միմիայն ապահովություն մնացեր էր։

Բայց Հովնանու սիրտը հանգիստ չէր, գիշեր-ցերեկ զինքը խորհուրդ մը կը տանջեր, ճանապարհաց կիրճերը նստած քանի մը հոգվով և շարունակ տեղափոխվելով հարված հարվածի վրա կը բերեր թշնամյաց և զարմանալի հետաքրքրությամբ կը տեղեկանար, թե ի՞նչ կընե թշնամյաց զորավարը, թե որո՞նք են, որ միշտ յուր քով կը գտնվին, թե ի՞նչ կ'ընե Սմբատ Սպարապետ, թե ի՞նչ կընե յուր որդին Աշոտ, ի՞նչ կ'ընեն և ո՞ւր են մատնիչ նախարարք և ազատք, որ Արծրունյաց Տերը մատնեցին. և այս ամեն նյութերուն վրա լավ, ճիշտ և մանրամասն տեղեկություններ կ'առնուր։ Ականատես վկաներե կ'իմանար, թե Սմբատ սաստիկ դառնացեր էր Աշոտ մատնության վրա և, հաճոյանալով Բուղայի, Վասպուրականի բոլոր գերիքն, բացի մեծամենաց, հաջողեր էր ազատել և յուրաքանչյուր իր տեղը դարձնել։ Եվ թե այս հայրենասիրական գործողությունն ամենայն ճշտությամբ կատարելու հսկեր էր։ Եվ թե նորա որդին՝ Աշոտ միշտ կը ջանար թշնամվույն ներկայությենեն հեռու կենալ։ Մյուս կողմեն կիմանար, թե Մուշեղ Վահևունի և մյուս երկու մատնիչ Վահրամներ Բուղայի բանակին մեջ իբրև բարեգործք և հավատարիմք բարձրավիզ կը պտըտեին։

Իր արշավանքները անհանգիստ ըրին վերջապես տաճկաց զորավարը. և խիստ ցահպանություն հրամայեց ընել Խութի լեռներուն վրա, բայց Հովնան նաև կը փոխեր յուր պատերազմի կերպը և շատ անգամ կը տեսնվեր արաբացի հագուստներով՝ նոցա դրոշակով կոտորած հայոցը-նելու համար նոցա վրա։

Բայց ի՞նչ էր Հովնանու ջանքը եղած ապականության հետ բաղդատյալ. գույժ կը հասներ դարձյալ, թե Գուրգեն Արծրունի՝ եղբայր Աշոտոն մեծ իշխանին, թեպետ մեծ հաղթություն կանգնելով ընդդեմ Բուղայի զորավարաց Որսերանք գավառին մեջ և հազար ութ հարյուր հոգի ջարդելով ի թշնամյաց, խաբվելով հիմաբաբար անձնատուր եղեր էր հուսահատելով և հավատալով նորա երդմանցը, որ եղբորը տեղը կը խոստանար զինքն իշխան կացուցանել Վասպուրականի։

Քաջություն, վատություն, մատնություն և հիմար վստահություն այնպիսի խառնաշփոթ ազդեցություն կ'ընեին խեղճ մարդուն գլխուն, որ հայ նախարարյանը արհամարհել իրեն սովորություն ըրած էր, բայց յուր անխոս բնությունը կ'օգներ իրեն և ժողովրդյան առջև չէր ուզեր հայտնել յուր մտածությունը. ուստի կը համբերեր։ Երբ իմացուցին իրեն, թե Բուղա վերցուց բանակը և ելավ ի Խլաթա երթալու ձմեռելու Դվին, ինքն էլ պատրաստություն տեսավ իրեն հետևելու և երթալու Խլաթ իր առաջադրությունը ի դլուխ հանելու։

Խլաթ այն ժամանակ Վասպուրականի գեղեցիկ մեկ քաղաքն էր. ծառախիտ պարտեզներե շրջապատյալ, յուր պտուղները միշտ անուշահամ, միշտ գեղեցիկ, հռչակավոր էր բոլոր Հայաստան. յուր դիրքը Վանա ծովուն վրա էր տարածյալ վերուստ ի վայր, յուր ամուր բերդը, աշտարակոք ամրացյալ, եկեղեցիներուն գմբեթները բարձրաբերձ, վանանոցներն հարուստ, դարձյալ նույն վայրկենին, երբ ամբողջ Հայաս-

տան ոտնակոխ կը լիներ, նա միայն նյութական կորուստ չունենալով, բացի մայր եկեղեցվոյն, որ մզկիթ էր դարձեր, շեն և փարթամ կերպարանք ուներ. աւանդիկը Տարոնո և Վասպուրականի ավարը հոն էր լցուցեր, և առևտուրը լավ վիճակի մեջ էր։ Ուստի, երբ բանակը վերցուց Բուղա Դվին երթալու, բնակիչքը շատ գոհ չեղան, ոչ միայն որ մեծ բռնավորին և զորաց հեռանալով առևտուրը պիտի պակսեր, այլ, մանավանդ, որ նորա հեռանալով անհամար փոքրիկ բռնավորք մեջտեղ պիտի ելնեին ինչպես միշտ սովորություն է, և այս՝ փորձով գիտեին խլաթեցիք. ուստի քանի որ զորաց թիվը կը պակսեր՝ վաճառական մարդն էլ յուր կրպակը կանուխ կը գոցեր և իր պարտեզներու մեջ ծածկված տունը կը հեռանար։

Ինչպես սովորություն եղած է միշտ արևելքի մեջ, թագավոր կամ զորավար երբ կ'ելնե ճանապարհ, նշան է երթալու ամենուն, այնպես և Բուղայի ելնելեն վերջ՝ դիվանապետը նաև յուր թղթերը կաշյա պարկերու մեջ կը զետեղեր և կը պատրաստվեր յուր տիրոջ ետևեն ելնելու երկրորդ օրը։ Ինք խլաթ քաղքին դուրս պարտեզներու մեջ ամառանոց մը կը բնակեր, բնակարան իշխանազուն Հայու, որ պատերազմի իրավունք իրեն վիճակեցուցեր էր, ուստի դիվանապետը, որուն Միրզա Հասան անուն կուտային, յուր բոլոր պատրաստությունքը տեսած առաջին քաղցր քունը կը քներ, իմացավ, որ մեկը զինքը կը դրդեր զգուշությամբ. կարծելով թե ծառան զինք կարթնցնե, սկսավ սաստել, որ հեռանա և թողու հանգիստ քնել։ Բայց տեսնելով, որ ազատում չի կա, աչքերը բացավ և զարմանքով նայեցավ, որ ծառային տեղ միջահասակ, լայնալանջ, մեծազլուխ մարդ մը գլխուն վերևը կեցեր էր, որուն սև և փայլուն մազերը ուսը կը հասնեին, և երկու աչք ուներ սլաքի նման, և որուն ժպիտը հեգնության կերպարանք ուներ, քան թե ծիծաղի. այս օտար մարդը երբ գլուխն վրա տեսավ Միրզա Հասան, սոսկալով ձեռքը երկընցուց գլխի դաշույնը, որ բարձին քովն էր, որպեսզի՝ ինքզինք պաշտպանե. իսկ մարդը առանց խոսելու ձեռքը նորա դաստակին վրա դրավ և այնպես սեղմեց, որ ոչ միայն ձեռքը կարկամեցավ, այլ ցավին չի դիմանալով սկսավ աղաղակել։ Իսկ անծանոթը. յուր լայն ձեռքը բերնին վրա դնելով, կամաց և հանդարտ ձայնով՝

— Ամոթ է, Միրզա Հասան, քեզի այդպես տղու նման կանչվոտել,— ըսավ.— դու գրագետ և ուսումնական մարդ ես, ի՞նչ կ'ըսեն քու ծառաներդ, երբ պատմես, թե ձեռքդ փոքր մը սղմելուն չի դիմանալուն այդպես ողորմելի ձայն կը հանես։

Իսկ Միրզա Հասան տեսնելով, թե մարդն անուշ կերպով կը խոսի և յուր ծառաներուն խուզը կ'ընե, որ դուրսն են, սկսավ ձայնը բարձրացնել.

— Անհավա՛տ շուն, որ ավազակ հայու մը կը նմանիս, չե՞ս վախեր, որ նաքը ի՞նչ կը լինի քու վիճակդ, դու չե՞ս մտածեր, թե ես ո՞վ եմ, թե իմ տերս Բուղա ի՞նչ մարդ է։

— Նախ՝ պետք է գիտնաս, որ նախատական բառ պետք չէ գործածես և թե քու ծառաներեդ նոքա միայն կենդանի են, որ խելոք վարվեցան և անձնատուր եղան. ուստի դու էլ պետք է խելոք լինիս, երկրորդ՝ պետք է գիտնաս, թե հայ ավազակ միշտ քիչ հանդիպած է աշխարհքիս վրա, քան թե իրեն դրացի աղգաց մեջ, երրորդ՝ թե ես կենացս մեջ երկյուղ ըսված բանը չեմ գիտեր, թե ի՞նչ է, և նույն քու Բուղայեդ նաև չեմ վախել։

— Բայց ի՞նչ կուզես դու ինձմե, զի՞ս էլ սպաննել կ'ուզես ծառաներուս պես։

— Ո՛չ երբեք, ես անզեն մարդ չեմ սպաններ։

— Ոսկի՞ կ'ուզես, ահա՛,— ըսավ և բարձին տակեն քսակ մը հանեց երկնցուց Միրզա Հասան ձեռքերը դողալով։

— Ոչ ոսկի և ոչ արծաթ, իմ ուզածս ուրիշ բան է։

— Ի՞նչ կ'ուզես, զրուցե՛, մարդ,— ըսավ դիվանապետը բոլոր անձամբ դողալով և աչքերը խփելով, որ դիմացինին սլաքային աչքերը չի տեսնե, վասնզի նորա հայվածքը, ծանր ու հանդարտ խոսվածքը սոսկալի ազդեցություն մը կ'ընեին յուր վրա։

— Բոլոր դիվանի թուղթերը քու քովդ են, այնպես չէ՞։

— Այո, անոնք կ'ուզե՞ս, ահա սա պարկերուն մեջ են։

— Ո՛չ, ամենքը չեմ ուզեր, մեկ թուղթ մը միայն կ'ուզեմ։

— Ո՞ր թուղթը, զրուցե՛ տամ։

— Դու կը հիշես, թե երբ Աշոտ Արծրունյաց Տեր Նկանի բերդին մեջ պաշարած էր, քանի մը հայ իշխանք գաղտնի նամակ գրած էին Բուղայի։

— Այո, գիտեմ, կը հիշեմ։

— Այդ թուղթը պետք է ինձ գտնես և տաս, ահա բոլոր իմ պահանջմունքս։

— Այդչա՛փ միայն, և այս ոչինչ թղթին համար ղիս սարսափեցուցիր։

Այս խոսքերն ըսելեն վերջ ելավ տեղեն և պարկերուն մեկը բացավ դողդոջուն ձեռոք և հայերեն թուղթ մը գտնելով՝

— Ահա թուղթը,— ըսավ։

— Ճշմարիտ ա՞յս է,— հարցուց մարդը կանթեղին մոտենալով աչք մը պտտցնելեն և ծոցը դնելեն վերջ,— լա՛վ է, Միրզա Հասան, հիմա

պետք է ինձի ջիտակը խոստովանիս, թե ի՞նչ է Ջաբր ամիրապետին հրամանը առ Բուղա Հայաստանի համար։

— Արդեն կը տեսնես, թե ինչ է. կամ պետք է Հայաստան յուր անհավատությունը թողու և ուղիղ հավատքն ընդունի, կամ պետք է բոլորովին կորչի, և յուր հիշատակը աշխարհքես վերնա։

— Ուրեմն մնաս բարև, կը տեսնես, թե ես խելոք և խոսք հասկցող մարդոց վնաս չունիմ,— ըսավ և առանց ետին դարձնելու գլուխը՝ հանդարտ քայլերով ելավ դուրս։— Երթա՞նք, տղաք,— զրուցեց և անհետ եղավ։

Միրզա Հասան դուրս ելավ և իրոք տեսավ յուր քսանի չափ ծառաներ մեկ քանի հատը փողոտյալ, մյուսները չվաններով կապկած. ծառաներուն և ինքնիրեն կը հարցներ, թե ո՞վ էր այդ սոսկալի մարդը կամ երևույթը։

Մենք գիտենք, թե խութեցի Հովնանն էր նա։

ԳԼՈՒԽ ԺԴ

ՎՐԵ՞Ժ

Ձմեռը հասավ, և ձյունն ու սառը պատեցին Հայաստան. Բուղայի կոտորածը դադարեցավ, միայն թե յուր անվան սոսկումն ամեն սրտի կը տիրեր, և ինք ցրված ժամանակ յուր արյունախանձ զորավարքը, խստությամբ պատվիրել էր ամենուն, որ զարնան սկիզբը անդանդաղ պետք էին հասնիլ Դվին։ Սոցա մեջ էին մեզ ծանոթ երեք մատնիչ հայ նախարարք, որ խլաթ քաղքեն մեկ-երկու օրվան ճամփա հուղարկավոր երթալեն վերջ՝ հրաժարական ողջույնը տվին բարբարոս իշխանին և բաժանվեցան դառնալու իրենց տուները։

Մուշեղ Վահևունի, երբ յուր երկու մատնության ընկերները՝ երկու Վահրամք բաժնվեցան իրմե, գնաց բնակելու Նազուկ լճին վրա յուր Հերեթի ամրոցը, ուր հանգիստ նստած կ՚սպասեր զարնան մեծամեծ վարքերու Բուղայե, որ խոստացեր էր գրել Ամիրապետին նոցա ամենամեծ ծառայությունքը և արժանավոր փոխարենը։ Նազուկ փոքրիկ և գեղեցիկ լիճը զարդն էր Կորի գավառին, և ձմեռ ժամանակ ամբողջ սառելով գեղեցիկ հայլի մը կը կազմեր, բայց լճին շրջակա բազմամարդ գեղերը մեծավ մասամբ անապատացյալ էին, և Մուշեղ չորս կողմ լուր կը ղրկեր, որ բնակիչք չի վախեն, դառնան իրենց բնակարանները, ապահովություն և պաշտպանություն իրենց խոստանալով։ Իսկ գյուղացիք, որ արդեն յուր անիրավություններեն ձանձրացեր էին, շատ դժվարությամբ և ակամա կը դառնային իրենց բնակարանները, և մեծ մասը գյուղերուն ամայապատ մնացել էր։

Ձմեռվան մեջ Տարոնո կողմեն երիտասարդ խումբեր կուգային իրենց պաշարներով, այդ լքյալ գյուղերուն մեջ բնակություն կը հաստատեին, նույնպես տարոնեցիք ոմանք հինգ-վեց հոգի Կորա վանքը եկած հյուրընկալություն խնդրելով ուխտավորաց սենյակները կը բնակեին, և վանահայրը թեպետ սկիզբները հյուրընկալության երկայնությենեն ձանձրացած՝ կ՚ուզեր զիրենք ճամփա դնել, բայց նոցա գլխավորին համեստ և առաքինի վարմունքը, յուր ջերմեռանդությունը, որ միշտ երկար սաղմոսերգությանց ներկա էր եկեղեցին, յուր աշխատասիրությունը, որ պարապ ժամ անցնել չէր ցիտեր, այլ միշտ ծառայություն մը, գործ մը կը գտներ և կը կատարեր՝ վանահոր կարծիքը փոխեցին. մանավանդ, որ այդ ձմեռվան միջոցին այս տարոնեցի տղաչք կ՚երթային որսի և իրենց հաջող նետաձգությենեն ոչ թռչուն, ոչ կենդանի չէր ազատեր դյուրությամբ, կրոնավորաց սեղանատունը ուտիք օրեր պասավական և համով կերակուրներով կը զարդարվեր։ Վերջապես ութ-տասը օրվան մեջ այս օտարականները այնպես ընտանի եղան, որ վանքին փայտակիր, փայտահատ, ջրկիր, ավելածու, դռնապան այս մարդիկն էին. և օրավուր հարկավոր անձինք դարձեր էին վանքին մեջ։ Պետք է գիտնալ նաև, որ Կորա վանքը բլրո մը վրա շինված, մինչև այսօր դեռ ունի իր բարձրաբերձ պարիսպները, և եթե եկեղեցվույն գմբեթը չլիներ վրան բարձրացյալ, ավելի բերդ մը կը կարծվեր, քան թե վանք։ Ս. Դանիելի ծերունվույն էր նվիրյալ և յուր մարմինը եկեղեցվույն մեջ է թաղյալ մինչև այսօր։ Տարոնեցվոց կիրակի օրեր եկեղեցին բազմաթիվ երևիլը չէր զարմացներ մեր վանականքը, վասնզի աշխարհք գիտեր, թե Տարոն շատ շարշարվեր էր այդ մեկ-երկու տարվան միջոցին մեջ։

Մուշեղ իշխանին գլխավոր ձմեռվան զվարճության որսն էր. հաճախ որսական բարակներ և ութ-տասը թիկնապահներ հետ առած կ՚երթար շրջակայքը որսալու։ Ուստի նույնպես, երբ օր մը որսի դառնալով Կորա վանուց առջևեն կ՚անցներ, հանկարծ քանի մը հետևակ տարոնեցի դիմացն ելան, և մեկը լայնալիճ աղեղեն այնպիսի նետի հարված մը տվավ ձիուն փորին, որ կենդանին ցավեն հիմարյալ ու կատաղյալ զարկավ Մուշեղ ի գետին և ինք գնաց ինկավ քանի մը մղոն հեռու և հոգին փչեց։ Իսկ Մուշեղի թիկնապահները, երբ իրենց տերը տեսան ինկած և օգնելու դիմեցին, այնպիսի նետաձգություն մը իրենց դեմ սկսավ, և թշնամի խումբը այնպես շատցավ և իրենց դեմ հարձակեցավ,

որ թողին փախան, և քանի մը հոգի նույն միջոցին Մուշեղի ժամանակ չի տալով գետնեն ելնելու, ոտքերը ձեռքերը կապելով ուին վանքը տարին, ուր իրենցմե շատեր արդեն տանտեր դարձեր էին։

Մուշեղ նախ ջանաց այս տարոնցվոց խոսք հասկցնել իմացնելով, թե ինք Բուղայի բարեկամն էր և թե մեծ թագավորին շատ ծառայություններ ըրած, և թե իրենց հանդգնությունը մեծ պատիժներու արժանի էր, և թե զինքը եթե թող տային, անհիշաչար կը լիներ և կը ներեր, նաև վարձ էլ կուտար։ Բայց այդ կոշտ գյուղացիքը խոսք մը չէին պատասխաներ, մինչև որ այդ ընդարձակ վանքին սենյակներուն մեկը զինք տարին։ Հոն իրեն կապերը քակեցին և թողին, որ նստի. քիչ մը բան բերին, որ ուտե, և քիչ մը գինի, որ զորանա։ Այս միջոցիս վանահայրն իմանալով եղածը կուզեր ներս մտնել իշխանին քով, իսկ երբ տարոնեցի պահապանք զինքն արգելեցին, սկսավ գանգատիլ և ձայնը բարձրացնել, մինչև որ այս աղաղակը լսելով դուրս եկավ նոցա գլխավորը։

— Աս ի՞նչ է, եղբա՛յր,— կ՚ըսեր վանահայրը,— «Տուն իմ տուն աղոթից կոչեսցի, և դուք արարիք զդա այրս ավազակաց» Քրիստոսի խոսքը իմ վանքիս վրա՞ պիտի ճշգրտեք։ Աս ի՞նչ ապերախտություն է. ա՞յս է իմ հյուրընկալությանս փոխարեն ձեր ըրածը, որ գավառին առաջին՝ մեծ և պատվավոր իշխանը կը հափշտակեք և հոս իմ վանքս ձեր ավազակության ապաստարան կ՚ընեք, և ինձ՝ վանահորս կ՚արգիլեք մտնելու այն սենյակը, ուր իշխանը կը պահեք. ո՞վ է ուրեմն տեր վանուցս, դո՞ւք թե ես։

— Հայր Սուրբ, սիրտդ հանգիստ բռնե՛, մի՛ վրդովիր, մեր տարոնեցիքը անիրավ գործ չեն ըներ, և եթե քեզ այսօր արգիլեր են ներս մտնել կալանավոր իշխանին քով, վաղը մյուս օր ապահով եղիր, որ պիտի հրավիրեն քեզ իրեն քով, և մենք տարոնցիքս ոչ ապերախտ ենք, ոչ երախտամոռաց, մանավանդ թե շնորհակալ ենք ձեր հյուրընկալության, միայն մենք դատաստան ունինք իշխանին հետ, և դու, Հայր Սուրբ, առաջին դատավորը պիտի լինիս, սիրտդ հանգիստ բռնե։

— Ուրեմն ինչո՞ւ կարգիլեք զիս ներս մտնելու։

— Եթե այդչափ կը փափագիս, լա՛վ, մտի՛ր,— ըսավ գլխավորը և աչք ըրավ պահապանաց, ու թողին, որ մտնե։

Իսկ Մուշեղ Վահեունի հագիվ թե տեսավ վանահայրը, սկսավ գանգատիլ այս իրեն եղած անիրավության վրա. և այդ վանքին ապերախտությունը սկսավ երեսին դարնել, թե ինք ինչչափ չարիք կրնար հասցնել և չէր հասուցած և թե ինք այն մարդն էր միշտ, որուն շատ դյուրին էր հիմնահատակ ընել այդպիսի վանք մը, որ բույն կը դառնար դավաճանության ընդդեմ յուր անձին։

Այս խոսքերուն ամենայն քաղաքավարությամբ և խոնարհությամբ կը պատասխաներ վանահայրը, իմացնելով, թե եղածը բոլորովին դիպվածական էր, և թե ինք խեղճ տարոնեցվոց հյուրընկալություն ընելով չէր կարծեր երբեք, որ նոքա կրնային այդպիսի անզգամություն մը կատարել։ Այս միջոցին հանկարծ իշխանը խելարբեց տեսնելով, որ մատանին չի կար մատը, և վեր ցատկելով՝

— Ահա,— ըսավ,— այդ անպիտան ավազակաց շարագործության մեկ նշանն էլ, մատնիս նաև գողցեր առեր են մատես։

Իսկ տարոնեցվոց գլխավորը, որ աս խոսակցության ներկա մեկ կողմ նստած էր, գլուխը վեր վերցնելով և մուտենալով Վահեունի իշխանին, ծանր, հանդարտ և կամաց ձայնով, բայց այնպիսի ձայնով, որ առյուծի մռնչման կը նմաներ, ըսավ.

— Հոգ մի՛ ըներ, Մուշեղ, այդ մատանին կը գտնենք և քեզ կը դարձնենք մենք։

— Բավական չէ, որ ինձ պես ազնվատոհմ իշխանի դեմ ամեն բրոնություն գործածեք, պետք է նաև ,որ զիս նախատեք իմ անունս միայն ինձի տալով իբրև գռեհիկ մարդու։

— Մենք շինական մարդիկ ենք և քաղաքացվոց պես չենք գիտեր արժանավոր հարգանքը տալ ձեզ նման մեծ մարդկանց,— պատասխանեց տարոնեցին հեգնական ծիծաղով։

— Շատ չանցնիր ես կը սովրեցնեմ ձեզի պես մարդկանց, թե ի՞նչպես պետք է վարվիլ իշխանի մը հետ։

— Կրնա՞նք իմանալ, թե ի՞նչ տեսակ բան է մեզի սովրեցնելիքդ։

Իսկ վանահայրը նույն միջոցին հիշելով սենյակին դռան առաջ եղած խոսակցությունը, դարձավ և ըսավ տարոնեցվույն, որուն անունը մինչև այն օր չէր հարցուցեր և չէր գիտեր և գիտնալու էլ փափագ չուներ.

— Բայց, Տարոնացի՛, դու քիչ առաջ կ՚ըսեիր, թե մենք դատաստան ունինք իշխանին հետ, դատաստանդ ի՞նչ է։

— Մինչև որ վկաները չի ժողվվին, դատաստանը չի կրնար սկսել, և այդ նյութին վրա հիմա խոսիլ ավելորդ է, մանավանդ թե ժամանակ էլ չի կա, և հիմա պետք է երթանք։

— Ո՞ւր,— հարցուց Մուշեղ հրամայական ձևով և կիրքով։

— Դատարանը, ուր դատ պիտի վարենք քեզի դեմ, և ուր եթե արդարանաս, կը թողունք, որ երթաս։

— Եվ եթե չարդարանամ։

— Դատաստանը ինչ որ վճռե, ի գործ դնել պարտավոր ենք։

— Ձեզի պես ավազակներու, գռեհիկներու, սինլքորներու հետ դատաստանի մտնելն էր պակա՞ս։ Ես, որ զքեզ չեմ ճանչեր, ես, որ զձեզ

չեմ տեսեր, ես, որ ոտքիս տակ երբեք չեմ նայեր, որ կարենայի ձեր նը-
մանները նշմարել, և դուք կը Գամարձակի՞ք ինձի հետ գատաստանի խոսք
ընել։

— Երկայն և նախատական խոսքերու պետք չի կա։ Տղա՛ք, մուքը
կոխեց, դե՛, ջորին պատրաստեցեք։ Հայր Սուրբին ջորին էլ պատրաստե-
ցեք, դուք էլ պատրաստ եղե՛ք, որ երթանք։

— Իմ ջորիս ո՞ւր կը տանիք,— ըսավ Հայր Սուրբը։

— Քու ջորին քեզ համար պիտի պատրաստեն, Հայր Սուրբ։

— Բայց հիմա աս ցուրտին, աս սառին, գիշերով ես քայլ մը չեմ
փոխեր։ Դուք խելքերնիդ թռուցեր եք։

— Կարելի է, որ քու կամքիդ քեզ թողուն, տեղեդ չես շարժիր, բայց
որովհետև քահանա աստուծո ես, արդարությունը կը սիրես, և պետք է
սիրել, պետք է մեզի հետ գաս, և եթե չուզես սիրել, մենք քեզի սիրեցնել
կուտանք։

— Բռնությա՞մբ զիս պիտի տանիք,— ըսավ խոժոռելով և շփոթե-
լով վանահայրը։

— Մի՞թե։ Իշխանն էլ պիտի գա. մի՞թե բռնություն կը գործածենք
մարդու, որ մեր բարեկամական խորհրդոց կը հետևի։

Առ միջոցին տղաքն եկան և իմացուցին, թե ամեն բան պատրաստ է։

— Երթանք, իշխան,— ըսավ Տարոնացին։

— Ես իմ կամոքս քայլ մը չեմ առնուր,— պատասխանեց Մուշեղ։

— Դու լավ մարդ ես. ոչ մեկ՝ այլ շատ քայլեր էլ կ'առնուս։ Միայն
պետք է, որ քեզի օգնեմ, վասնզի իշխան մարդ ես, և պետք է թեերդ
մտնել։

Եվ այս ըսելով Տարոնեցին (որ Հովնան ինքն էր, ինչպես ընթեր-
ցողը կրցավ երևակայել) թևեն բռնեց, և իբրև թե մեքենայե մը ցնցվելով
Մուշեղ ցատկեց երկու ոտից վրա։

— Ա՜յ անօրեն գռեհիկ, թևս կոտրեցիր, թո՛ղ,— կ'աղաղակեր և կը
ցնցվեր։

Իսկ նա երեսին վրա առանց փոքրիկ շարժմունք հայտնելու և ամե-
նայն հանդարտությամբ՝

— Քալե՛, իշխան, քալե՛,— ըսելով սենեկին դուռը բերավ, և հոն
երկու հոգի յուր ընկերներեն զինքը պատրաստ ջորիի վրա պարկի մը
պես նետեցին, առանց յուր աղաղակներուն ականջ դնելու։

Եվ նույն միջոցին ուրիշ երկու հոգի էլ երկու ոտքերը ամուր՝ կեն-
դանվույն ոտքին տակեն իրար կը կապեին։

Մուշեղ աչքերը ան ատեն չորս կողմը դարձուց և տեսավ, որ բակը
լեցուն է զինյալ մարդերով, հուսահատություն զինքը պաշարեց, և ի-

մացավ, որ դիմադրությունն անկարելի էր. ուստի այն սկսավ մտքեն
չափել, թե այդ ավազակաց ի՞նչ փրկանք տալով կրնար ազատիլ։

Իսկ Հայր Սուրբը, ավելի խոհեմ՝ վերարկուն խնդրեց և հեծավ
յուր ջորվույն վրա ու տեսնելով, թե ավազակները (նա էլ մտքեն ուրիշ
անուն չէր կրնար տալ յուր հյուրերուն) ամենքը հետևակ էին, առջի ա-
զատ քայլափոխին փախչիլ և վանք դառնալ և դռներն ամուր փակել և
հյուրընկալության, ողորմության անուն չի տալ կյանքին մեջ որոշեց
մտքեն։

Ուստի, երբ քիչ մը տեղ գնացին և դեռ վանքին պարիսպները ան-
հայտ չէին եղել, և Հայր Սուրբը լեռնականաց շրջանակեն ինքզինքը դուրս
գտավ, ջորվույն գլուխը դարձուց, մտրակեց երկու ոտից ամենայն զո-
րությամբ և դառնալով լեռնականաց՝ «մնաք բարով, աստված ձեզի բա-
րի հաջողություն տա» գոչեց և սկսավ կրակի պես երթալ։ Իսկ Հովնան՝
«տղա՛ք, ձեզ տեսնեմ, Հայր Սուրբը ճամփան շփոթեց, դարձուցե՛ք» ա-
ղաղակեց և քսան հոգի սրացան ետևեն և վանքին պարիսպներուն չի հա-
սած շրջապատեցին ջորին, և կենդանվույն գլխեն բռնելով հասուցին
խմբին, որ ամենևին յուր ընթացքեն չէր կասել և կը շարունակեր ճամ-
փան։

Մեր խումբը երեք ժամու չափ սասունցվո ընթացքով քայլելով, հա-
սավ շամբի մը առջև և մտավ եղեգներու անտառին մեջ սառած ջուրին
վրա ապահով քայլելով, և ահա այդ անտառին մեջ կար քաղաք մը յուր
օձապտույտ ճամփաներով, ուր մեր սասնցիք մտան իբրև իրենց տուն,
և վերջապես կանգնեցան բերդանման, ընդարձակ, կիսավեր շենքի մը ա-
ռաջ, որ հավանական թե հռչակավոր Մամիկոնյանց Մուշեղի և Գայլ
Վահանա բնակություն եղած էր։ Անվանի Օձն քաղաքն էր այդ։

Մուշեղի կապերը քակեցին, և որովհետև չէր կրնար քայլել կապերեն
ու ցուրտեն ոտքերը բռնված լինելուն, գրկեցին զինքը և բերին գեղե-
ցիկ ճարճատող կրակեն հեռու նստեցուցին։ Ամոթապարտ Հայր Սուրբն
էլ քաղաքավարաբար իջուցին ջորիեն և առաջնորդեցին նույն սենյակը,
որ փառավոր էր տաքությամբ և խոտե նստարաններով։ Բերին առա-
տությամբ իրենց լեռներուն գարվո հացը, իրենց քարի պես պանիրը,
իրենց պատվական մեղրը և Մեղրագետի ցուրտ ջուրը։ Եվ Հովնան դառ-
նալով յուր երկու հյուրերուն՝ «լեռնցվո հյուրասիրությունը՝ թեպետ Մա-
միկոնյան քաջ իշխանաց պալատին մեջ՝ այսչափ կրնա լինիլ. մի՛ նա-
յիք մեր աղքատիկ կերակուրներուն, այլ հաշվեցեք, որ ո՛չ մեր հավելվա-
ծեն, այլ բոլոր ունեցածեն ձեզ կը մեծարենք» կըսեր։

Իսկ Հայր Սուրբը տխուր, բայց տեսնելով, թե զորավոր մագիլներու
մեջ էր և ազատում չի կար, ակամա պարտավորեցավ զինքը զվարթ

ցույց տալու։ Թշվառական իշխանը միայն խոժոռադեմ, տխուր կը մտածեր. այս հանելուկը, որ յուր գլխուն վրա կը պտրտեր, չէր կարող կատարյալ մեկնել, միայն երբ ոտքերուն կապած տեղվանքը կը շոշափեր և ուռեցները կ՝զգար, միտքը կուգար, թե Աշոտ Արծրունին, որ ինք մատներ էր, նույնպես ոտքերը ձեռքերը շղթաներով տեսել էր, որ ընտանյոք այնպես կապած ուղտերու վրա բարձած տարին Բաղդադ։ Այն միջոցին խղճմտանքը զինքը կը դրդեր, բայց վայրկենին մեկգի կը վարեր այդ մտածությունը։

Ակամա կը նայեր այս սենյակին առաստաղներուն, որ ահագին գերաններ իրարու հեցյալ լուսամուտ էին կազմել, կը նայեր այդ եղեգներով բորբոքյալ ճարճատող վառարանին և բոցվույն, որ զանազան ձև ու գույն կ՝առնուր, որ երկայն ժամանակ ամենուն աչքը և ուշադրությունը կը գրավեր, ուշադրություն անհաստատ և անկույն, վասնզի կայուն միայն յուր մտքին մեջ յուր վիճակին դառն փոփոխությունն էր. կ՝երևակայեր, թե նույն գիշերը յուր կինն ու զավակները ի՞նչ մտատանջության մեջ էին, և հանկարծ միտքը կուգար Արծրունյաց մեծ տիկինը Հռիփսիմե՝ այդ ծանրագլուխ և վսեմ կինը իբրև թե հիմարացյալ՝ մազերը փետտելով, առանց վերարկուի, առանց քողի, յուր երկու զավակներուն ետևեն յուր կամոք դիմելով աքսոր և ի բանտ։

Բայց ձեռքը ճակտին և աչքերուն տանելով՝ մեկդի վարեց այս մտածությունն էլ, շուրջը աչքը պտրտցնելով տեսավ Հովնանու երկու սայրասուր աչքերն, որ իրեն կը նայեին, և կշռելով, թե այդ մարդեն կախված էր իրեն բախտը, վասնզի ավազակները իր բերնին կը նայեին՝

— Մա՜րդ, ո՞վ ես դու,— ըսավ ոչ իշխանաբար, այլ հուսահատաբար։

— Դու որ գիտես, ինչո՞ւ կը հարցնես, դու չէի՞ր, որ քիչ առաջ ասավազակ, գռեհիկ, սինլ՚որ կանվանեիր զիս։ Ահա ես այդ երեքն էլ եմ՝ եթե հաճիս։

— Այո՜, ես այդ խոսքերես բառ մը ետ չեմ առնուր, միայն այդ կը հարցնեմ քեզ, թե դու կին, զավակ ունեցե՞ր ես. եթե ունեցեր ես, միտքդ բե՜ր, թե այս գիշեր իմ կինս, իմ զավակներս, իմ տունս ի՞նչ վիճակի մեջ են. ի՞նչ ողբոց և արտասվաց տուն ըրիր դու, դո՜ւ իմ տունս, անօրե՜ն անաստված։

Եվ այս խոսքերը զրուցելով աչքերեն հեղեղի պես այրող արտասուք կը վազեին։ Վարդապետը և բոլոր խուրեցիք մեկ մը Հովնանու, մեկ մը այս մարդուն կը նայեին, և երիտասարդ լեռնցիք, որոնց սիրտը իրենց ժայռերուն խստությունը չուներ, գլուխնին մեկդի կը դարձնեին, իբրև թե Մուշեղին տան տեսարանը տեսած լինեին։ Իսկ Հովնան առ խոսքերեն

իբրև թե ցնցված երկու ծունկի վրա գալով, ընքվիները ցցված, աչվընները սոսկալի փայլ մը առած՝

— Մուշե՜ղ, Մուշե՜ղ,— գոռաց,— ես քու տանդ վիճակը ոչ այսօր, ոչ երեկ, ամիս մը առաջ, այլ վեց ամիս առաջ երևակայեցի և ողբացի։ Բայց դեռ ինչե՜ր տեսա, ի՞նչ անմեղ կանայք, ի՞նչ անմեղ տղայք տեսա, որ ոչ իրենց կորուստը միայն կ՝ողբային, այլ գազանաբարո աքաքացվոց սուրերու և շղթաներու տակ կը հեծեին. իմ ոտքերս թափված անմեղ արյանց վրա լպիրծ սահեցան. քաղաքներ, ավաններ, գյուղեր, որ չեն և ուրախ տեսեր էի, ագռավներու, բուերու և գիշակեր գազանաց բնակարան տեսա։ Հարցո՜ւ քու խղճմտանքիդ, մի՞թե քու այդ ձեռքդ մաքուր է այդ արյուններեն, քու միտքդ մասնակից և պատճառ եղած չէ՞ կանանց և որդվոց դառն արտասվաց։ Բայց կուզես իմանալ թե ո՞վ եմ. իմացի՜ր. ես և իմ ընկերներս սասունցիք եմք. խուրեցի Հովնան կ՝ըսեն ինձ։

— Սակայն ինձմե ի՞նչ կ՝ուզես դու, մա՜րդ, ես ի՞նչ ըրած եմ քեզ, ես ի՞նչ ըրած եմ քու խուրեցվոցդ, ի՞նչ է, որ դատաստան ունիմ, կ՝ըսես. եթե դատաստան ունիս, ո՞ւր են դատավորներդ, ո՞ւր են վկաներդ, ո՞ւր դատախազքդ։

— Մինչև որ քու ընկերներդ չի հասնին, մինչև որ դատախազներդ չի հասնին՝ կարելի չէ, որ դատաստանը սկսինք։ Բայց նոքա էլ չեն ուշանա, հիմա սուրհանդակներ կը հանենք մենք զամենքն ըստ կարի ժողվելու, և այսպես արդարությունը պետք է տեղը երթա։ Արդարությունը գըթուրթինե առաջ...

Այս միջոցիս երիտասարդ աբեղա մը ներս մտավ ձեռքը երկու թուղթ մաքուր գրված և Հովնանու տվավ. իսկ նա զգուշությամբ կարդալեն վերջ՝ «շատ բարի» ըսավ և ծոցեն ոսկի մատանի մը հանեց, թուղթերը նույնպես նամակի ձևով ծալեց և վրաները նույն կնիքով կնքեց։ Երբ այդ գործողությունները լմնցուց, ելավ և մոտենալով Մուշեղա, որ ամեն բան կասկածոտ աչոք կը դիտեր՝

— Ահա՜ քու մատանիդ, որ կարծեիր, թե ավազակներն հափշտակեր են, նոքա լավ տղաք էին և ինձի բերին, որ քեզ դարձնեմ, միայն որպեսզի արդարությունը տեղը գտնե, պետք էր այս մատանին այս երկու թղթերը կնքեր։

— Իմ անունովս երկու թուղթ կնքել կը համարձակի՞ս և չե՞ս ամաչեր և ինձ հետ արդարության վրա կը խոսիս։ Ի՞նչ են այդ նամակները։

— Այդ նամակները քու երկու բարեկամացդ են գրված, որ գան քեզի օգնեն այս միայնությանդ մեջ, և թերևս քու արդարանալդ դյուրաց-

նեն. և ես գաղտնիք մը չեմ համարիր և չեմ ուզեր ծածկել քենե. ահա կարդամ հասցեները. «Հասցե գիրս աստուծով ի քաղաքն Արճեշ առ Վահրամ քաջ իշխան հազգեն Տրունյաց ամենայն հաջողությամբ»։ Ահա մյուսն էլ. «Հասցե գիրս աստուծով ի քաղաքն Արճեշ առ քաջ իշխանն Վահրամ հազգեն Գնունյաց թիկնապահ Արծրունյաց նահապետին ամենայն հաջողությամբ»։

Այս երկու անուններն ու հասցեները լսելով Մուշեղ՝ յուր կարմրած երեսները թալկացան, կանաչցան, և ցուրտ քրտինք մը ճակատն եկավ. բայց իմանալու փափագը, թե ի՞նչ կար այն նամակներուն մեջ զորանալով.

— Բա՛ց սա նամակները, իմանամ ի՞նչ է գրված,— ըսավ։

— Նամակները կնքված են, չեն բացվիր,— պատասխանեց Հովնան ծանրությամբ,— բայց օրինակները կան, գնա՛, հայր,— ըսավ աբեղային,— բեր օրինակները, որ իշխանը գոհ ընենք։

Խոր լռություն մը տիրեց սենեկին մեջ, և ամեն աչք այս երկու մարդկանց կը նայեին. Մուշեղի, որ դալկահար նստած դժվարությամբ շունչ կուտար կ'առնուր, և Հովնանու, որ խիստ և անաչառ արդարության արձանի պես կանգուն իրեն կը նայեր։

Հազիվ թե քանի մը րոպե անցավ և ահա աբեղայն եկավ թղթին օրինակավ և Հովնանու հրավիրելովն սկսավ կարդալ բարձրաձայն.

«Ես Մուշեղ Վահևունի, իշխան Կոբ գավառի, կ'իմացնեմ քեզ քաջաղն իշխանիդ Վահրամա Տրունվո, որ կարևոր գործի համար հասյալ կամ Արճեշու վերևը Մեծոփա վանք. մեզ համար այնպիսի խնդիր կա, որ կամ կյանքերնիս կորսնցնենք և կամ ամենամեծ իշխանությանց հասնինք. աճապարե՛, ե՛կ, վասնզի քեզ և Վահրամ Գնունվո կ'սպասեմ, որ միատեղ և համաձայն շարժինք։ Քաղաք և շեն տեղ մեր տեսությունը խոսքի և կասկածի առիթ կրնա լինել, այսպիսի առանձին տեղ հարմարագույն դատեցի. ուստի մ'ուշանար, վասնզի դանդաղելու ժամանակ չէ։ Ողջ լեր»։

— Կը տեսնես, իշխան,— ըսավ,— որ քու կնիքդ՝ համախոհ և համակամ բարեկամներդ քովդ ժողվելու համար գործածեցի. ես չեմ ուզել, որ այսպիսի բարեկենդանի օրեր տխուր և միայնակ անցնես։

Բայց այս խոսքերը չիմացավ անգամ Մուշեղ, վասնզի խոր մտածության մեջ էր թաղվել։ Ուստի զինք այն սենեկին մեջ թողլով, Հովնան ուրիշ սենյակ մը մտավ, ուր առանձին մարդ մը միայն նստած էր և մեզ քաջածանոթ Խոսրով Ակեացի։

— Եղբա՛յր, այս ի՞նչպես տեղ բերել տվիր զիս գիշերով,— ըսավ

ծիծաղելով.— ուսկի՞ց գտար այս գաղանաց բույնը և կիսակործան քաղաքը այս եղեգնուտին մեջ։

— Չե՞ս դիտեր, եղբայր, հիշատակարանաց երևելի Օձն քաղաքն է այս։ Բայց հիմա թողունք անցյալը, նայինք ներկային, իմացա՞ր, թե ո՛վ հյուր ունիմ այստեղ։

— Ո՛չ, հիմա եկա Սասնո. ամիսն անցավ, որ զքեզ չեմ տեսեր. և անգործությենե սկսել էի ձանձրանալ։

— Մուշեղ Վահևունին կալանավոր ներսն է։

— Այդ չարագո՞ծը, այդ արյունարբու գաղանը, որ բոլոր Վասպուրական արյան և սուգի համակեց։

— Նա ինքն. բայց երկու ուրիշ ընկեր էլ ունի։

— Երկու Վահրամները։

— Այո՛. նոքա էլ պետք է ձեռք բերենք։

— Ինչպե՞ս, ո՞ւր են։

— Արճեշ են երկուքն էլ։ Բայց այդ հոգ մի՛ ըներ, միայն դու պետք է մեզի ընկերանաս, և այդ բանին համար քեզ ուզեցի։

— Ես պատրաստ եմ, ուր որ գնաս, քեզ հետ գնալու։

— Բայց պետք է քիչ մը զգեստներդ նայինք։

Եվ այս ըսելով Հովնան՝ բացավ դարան մը, որ պատին թանձրության մեջ շինված էր, և դուրս քաշեց կաշի մաքուր պարկ մը, ուր մեկ քանի իշխան զարդարելու չափ մաքուր զգեստներ կային։

— Ահա, անխիղճ կրնաս գործածել ասոնք, Բռնաշենի ավարեն են. զատե՛, ջոկե, հարմար եկածն ընտրե և հագիր։

Երբ այս գործողությունն էլ կատարվեցավ։

— Դու այս գիշեր հանգիստ քուն եղիր, միայն վաղն առավոտ կանուխ կ'ելնենք ճամփա, հոգ մ'ընե՛ր, քեզ համար պատվական և զարդարուն ձի էլ ունիմ,— ըսավ Հովնան։

— Ձիու պետք չի կա, եղբայր. ամեն տեսակի կրնամ հարմարիլ։

— Բայց դու պետք է մեր իշխանը լինիս և Մուշեղ Վահևունի անվանիս, մենք էլ պետք է մեր խութեցի զգեստները թողունք և իշխանի թիկնապահի կերպարանք առնունք։ Ես երթամ տղոց զգեստները կարգի դնեմ, պատրաստեմ, բարեկենդանի շաբաթ է, տղաքը մեղք են, պետք չէ, որ այդչափ հոգնին և ծոմ պահեն։ Պետք է նաև ընտրեմ որոնք մեզի հետ պիտի գան, որոնք այստեղ կալանավորը պիտի պահպանեն։

— Բայց ավելի լավ և ապահով չէ՞ Սասուն ղրկել այդ անզգամը։

— Այո, որ ժողովուրդը վայրկենին պատառ-պատառ ընե։ Գիշեր բարի, Խոսրով իշխան։

ԴԱՏԱՍՏԱՆ

Այդ ձմեռ ժամանակին դժվար էր ճամփան ո՛ւիցե մարդու համար, բայց մեր սասնցվոց համար ի՞նչ էր ձյուն, սառ, ցուրտ, մանավանդ, որ Հովնան յուր խիստ սովորության դեմ բարեկենդանի ճանապարհորդություն մ'ընել կուտար. միս, հավ, ձուկ անպակաս էին ճաշին կամ ընթրյաց, և որպեսզի խնդճ հայ գյուղացին չի նեղի ու գաղտնիքը լավ պահվի ըստ կարելվույն կը ջանար ավերակաց մեջ գիշերել։ Ամեն տեղ Մուշեղ Վահևունին էր, որ կը ճանապարհորդեր հարյուրի չափ թիկնապահով։ Երբ գունդը Քաջբերունյաց սահմանը հասավ, երկու երագոտն սուրհանդակ որոշեց Հովնան, որ երթան իշնեն Արճեշ և տան նամակները տերերուն՝ նախ զիրենք լավ կարդացնելով, թե ինչ պիտի պատասխանեն, երբ իրենց հարցաքննություն լինի։

Ուստի ամենայն զգուշությամբ առանց կասկած տալու՝ Վահևունյաց իշխանը հասավ Մեծոփա հռչակավոր վանքը։ Հովնան առաջ անցնելով մտավ ներս հյուրընկալություն խնդրելու իշխանին կողմեն և տեղեկացավ, որ ոչ ոք չէր ճանչեր անձամբ Մուշեղ Վահևունի, դարձավ քանի մը կրոնավորներով ի դիմաց վանահոր հրավիրելու իշխանը. և խոսքով արդեն և ի բնե իշխանազուն՝ լավ կը կատարեր յուր պաշտոնը։ Իսկ Հովնան, քանի մը բառակիր գրաստներ առած և քսանի չափ յուր կորովիներեն, կ'անցներ այն լեռները, որ Քաջբերունյաց գավառը Արճեշի դաշտեն կը բաժնեն և այդ լեռանց հարավային ստորոտը Հարություն գյուղ կը թողեր կեսը յուր մարդկանց և մյուսով կիջներ Արճեշ, կը բեռնավորեր յուր գրաստները պաշարով, պարենով, ու, գտնելով յուր երկու սուրհանդակները, որ իրենց պաշտոնը կատարած էին՝ նամակները տված և խոստում առած, թե նույն երեկոյին պիտի ճամփա ելնեին իշխանները երթալու համար Մեծոփ։

Հովնանու փափագն այն էր, որ փախստյան ճամփա չի թողու այս երկու Վահրամներու, ուստի շուտ մը դարձավ Հարություն գյուղ և կ'ըսպասեր. երբ տեսավ, թե նոքա ութ-տասը թիկնապահով մեծ գյուղն անցան, ինք յուր գրաստներով և մարդիկներով հեռվեն իրենց հետևեցավ, և լեռներու կիրճերը իր տղոցմեն քանի մը հոգի թողուց, որ Վահրամյանց գնդեն մարդ չի կարենա ետ դառնալ Արճեշ։ Եվ ինք լեռներու կարճ և անգնալի նամփաներե առաջ անցնելով՝ դարձավ հասավ և հասավ Մեծոփ եկավորաց ընդունելությունը պատրաստելու։

Խոսրով և Հովնան միախորհուրդ որոշած էին, թե ի՞նչպես պիտի ընդունին իշխանները. հայ արյուն չի թափել իրենց գլխավոր պայմանն էր. ուստի կասկած չի տալու համար՝ Խոսրով գրեթե անզեն և երկու ծառայիվք զիրենք դիմավորեց վանքի դռան առաջ փոխանակ Մուշեղա, որ տկարության պատճառավ քանի մը ժամ կրնար ուշանալ։ Խոսրովու կերպարանքը մեր երկու իշխանաց թեպետ կասկածելի, որովհետև գիտեին, թե ինչպես Հռիփսիմե մեծ տիկնոջ հավատարիմն էր, բայց տեսնելով զինքն անզեն երկու իրեն պես անզեն ծառայիվք, մտան ներս և իրենց պատրաստված վանքի ամենեն փառավոր սենյակը նստան։ Ցուրտ եղանակին՝ ուղևորության հոգնության փոխարեն լավ տաքուկ սենյակը, իրենց համեղ ճաշիկը, ուր զանազան ընտիր ըմպելիք առատորեն շարված էին և ախորժ կը բերեին, Խոսրովու օրինակը՝ իրեն ուրախ զվարթությունը, յուր կեղծավորությենեն հեռու լայն ճակատը, յուր բարձրաձայն ծիծաղը, և Մուշեղի միջնորդությամբ Բուղայե ընդունած ներողության կեղծ հրովարտակը, որ արաբացի լեզվավ գրված ծոցեն զգուշությամբ և երկյուղածությամբ կը հաներ և զոր ոչ ոք կարդալ կարող չէր, բոլորովին ապահովեցին մեր երկու Վահրամները, և ամեն երկբայություն մեկդի թողած սկսան ուտել և խմել ամենայն վստահությամբ սպասելով Վահևունվույն։

Երբ զինին ամեն կասկած փարատեց, գլուխները տաքցան, և աչքերը զվարթության փայլ առին, Վահևունին մոռցվեցավ և Ակեացին հին բարեկամ դարձավ։ Վահրամ զինակիր ըսավ Խոսրովու.

— Վերջապես դու էլ մեզի հետ հուսահատեցար և այս վիճակն ընդունեցար. խելոք մարդը յուր գործն առաջ կարգի դնելու է, ես քեզի համար շատ կը կասկածեի, թե Արծրունյաց հոգվով մարմնով անձնատուր ես, բայց կը տեսնեմ, թե այդչափ հիմար չես եղեր։

— Ես ճշմարիտն ըսեմ, որ այդ երիտասարդներուն երբեք հարյալ չէի. վասնզի կը տեսնեի, թե հիմար և մոլի իրենց զվարճությանց ու մոլությանց միայն կը հետևեին և խորհուրդ մտիկ ընել ամենեին չուզեին։ Իրենց մայրը մեծ Տիկինը ես կը հարգեի իբրև առաքինի և խելոք կին, բայց իր զավկները երբեք նորա խրատներուն ուշ չէին դներ, ուստի հուսահատած էի իրենցմե և կործանմունքը հայտնի կը տեսնեի։

— Դու տեղեկություն ունի՞ս մեզի գրված նամակին նյութին վրա,— հարցուց Վահրամ Տրունի։

— Գիտեմ, որ Բուղայե իրեն հրովարտակ մը եկավ, և Մուշեղ շատ ուրախացավ, բայց միջի պարունակությունը ինք չի զրուցեց. ես էլ (դառնալով զինակիրին), գիտես, բնությամբ հետաքրքիր չեմ, չի հարցուցի, այն բանը, որ հայտնի պիտի լինի, օր մը ժամանակին կ'իմանամ, ըսի ու

անցա։ Հիմա գործի ատեն չէ, զվարճության նայինք,— ըսավ և բաժակները լցուց։

Էլ կարողություն չէր մնացել մեր իշխանաց ոչ խմելու և ոչ շարժելու. իրենց թիկնապահները նույն վիճակին մեջ էին արդեն դուրսը, երբ ներսը կը գտնվեին իրենց տյարքը. հանկարծ ներս խուժեցին Հովնանու առաջնորդությամբ սասունցի խումբը, որ եկեղեցվույն մեջ ծածկված էին մինչև այն բոպե, և առանց շարժման ժամանակ թողլու՝ վայրկենին մեր երկու Վահրամները կապեցին. առանց դիմադրության նույնն ըրին նաև իրենց թիկնապահաց։ Երբ Հովնանու փափագը ուղածին պես կատարվեցավ, տեսնելով, որ կեսգիշեր դեռ չի կա, հրաման ըրավ ժողովվելու, և մոտենալով Խոսրովու, որ ընկողմանյալ էր՝ բայց արթուն, ըսավ։

— Խոսրով իշխան, կարծեմ ժամանակ է դնալու։

— Այո, երբ մեկը իմ վիճակիս մեջ չի գտնվի և ձի հեծնելու կարողություն ունենա։

— Բայց դու լավ վարվեցար, Խոսրով, և գործը իմ ուղածես լավ կատարեցիր։ Երթանք ուրեմն։

— Երթանք, եղբայր,— ըսավ Խոսրով և թեթևելով ելավ տեղաց Հովնանի օգնությամբ,— կը տեսնեմ, որ դեռ կարողություն կա՝ դուրսի ցուրտ օդը զիս կը կազդուրե։

Ձին պատրաստ էր, և հեծավ Խոսրով, իսկ մեր երկու Վահրամները կես քուն, կես արթուն նետեցին գրաստներուն վրա, լավ կապկպեցին ոչ միայն չը փախչելու համար, այլ մանավանդ որպեսզի չընկնին։ Սոցա այս վիճակը տեսնելով Խոսրով՝

— Եղբա՛յր, այդ մարդկանց չափ ես էլ խմեցի. տես, թե ի՞նչ վիճակի մեջ են հասել։

— Այս կը նշանակե, որ,— պատասխանեց Հովնան,— դու քանի մը տեսակ գինի միայն խմեցիր, սոքա ափիոն էլ խմեցին. և լավ է իրենց համար և մեզի համար, որ Վահանվույն պես գլխացավ չեն տար հիմար գանգատներով և անուշ-անուշ կը քնեն այսօր էլ, վաղն էլ։

— Մի՛ գուցե հավիտենական քունն էլ քնեն։

— Աստված չընե, պետք է դատաստանով դատվին, դատապարտվին բարի օրինակի համար։

Հազիվ թե ձիուն վրա հեծավ Խոսրով և ասպանդակներուն վրա կը կշռվեր, քանի մը տղաք, որ ճամփաներուն պահպանության համար դրված էր Հովնան, վազելով եկան, թե ձիավորաց խումբ մը կը հասներ Կերմանից կողմեն և ուղղակի վանք կուգար։

— Կերմանից կողմեն վտանգ չի կա, բայց դարձյալ դռները գոցեցեք և մեծ պարան մը իջուցեք պարիսպն ի վար սա դռան հակառակ

կողմեն, ես եթե ձայն տամ, դռները բացեք, եթե ոչ՝ ես պարանն ի վեր կ'ելնեմ, և կը մտածենք։

Այս խոսքերն արտորնոք ըսավ և ինք դռնեն դուրս ելավ, և դռները գոցեցին։

Եվ իրոք տեսավ, որ տասն-տասներկու ձիավոր համակ սպառազեն կուգային դեպի Մեծոփ. ձյունի ճերմկության մեջ գիշերով նաև կ'երևար իրենց սաղավարտներուն, վահաններուն, նիզակներուն փայլը, և թե առջևեն հսկա մը իրենց կ'առաջնորդեր։

Իսկ Հովնան նույն միջոցին վանքին դռան մոտ ժայռերու խոռոչներուն մեջ ծածկված կ'ուզեր ստուգել, թե ի՞նչ մարդիկ էին, որ կուգային։ Եվ այս ստուգությունը շուտ հայտնի եղավ. վասնզի առջևեն գնացողը մեծ և ուժով ձայնով գոռաց.

— Վահրի՛ճ, շուտ իջիր, ձայն տուր, որ դուռը բանան, դե՛, սառնացանք՝ շո՛ւտ ըրե։

— Աստված քեզ բարին տա, Գուրգեն իշխան, դո՞ւ ես,— ըսավ Հովնան ժայռերուն մեջեն դուրս ցատկելով։

— Հովնանու ձայնն է. կեցցե՛ս Հովնան.— և Գուրգեն իջավ ձիեն։— Այս ի՞նչ սքանչելի ժայռեր են, որ քեզի պես հրաշք կը ծնանին, այս ցուրտին, այս սառին ի՞նչ կ'ընես հոս, եղբայր, գիշերով։

— Քեզ կ'սպասեմ, բայց ժամանակ չի կորսընցնենք, Վահրիճ տասը տարի էլ դուռը զարնե, չեն բանար։ Դու մեկդի, Վահրիճ։ Տղա՛ք, բացե՛ք, ես եմ։— Եվ դուռը վայրկենին բացվեցավ։

— Աս ի՞նչ կը նշանակե, եղբայր,— կ'ըսեր Գուրգեն, տեսնելով հարյուրի չափ մարդիկ,— Սասուն հոս պարպվեր է կարծեմ։

— Հիմա դու այն ինձ զրուցե, թե ո՞ր կողմ կ'երթաս։

— Հունաց կողմ կ'երթամ։

— Ո՞ր կողմեն։

— Մուշի վրայեն։

— Շատ բարի, միատեղ կ'երթանք ուրեմն։ Ելնենք ճամփա։

— Հիմա՞, աստված պահե. մենք տասը ժամ է, որ ձիու վրա ենք։ Դու որ դռներ բանալ գիտես մեզ քիչ մը ուտելիք, քիչ մը կրակ և հանգըստյան խշտի պետք է ճարես։

— Իմացա,— ըսավ Հովնան և դառնալով,— տղա՛ք, այս գիշերս հանգչինք և վաղը ճամփա կ'ելնենք. կալանավորները վար առնք և ներս բերեք։

Շուտ մը սենյակը մաքրեցին, կրակը փայլեցուցին, և Գուրգեն ու Խոսրով իրար բարևեցին։ Հովնան դուրս ելավ ոչ միայն կերակուր հոգալու յուր նոր հյուրերուն, այլ նաև կալանավորներուն վիճակը տեսնելու,

որպեսզի հանկարծակի հրաշք մը իրենց փախուստի դուռ չի բանա։ Վերջապես, ամեն բան ապահովելեն և կարգի դնելեն ետքը երկու իշխանաց քով եկավ նստավ։

— Եղբա՛յր, դու կալանավորներու խոսք ըրիր, խոսրով իշխանի երբ հարցնեմ, կը ծիծաղի և կ'ըսե, թե Հովնանու վերաբերյալ խնդիր մ'է, նա միայն կրնա պատասխանը տալ։ Կ'երևի, թե քանի մը արաբ ավազակներ բոներ կապեր են, այդ անպիտանները կապել մեզք է, առջի հանդիպած ծառեն պետք է կախել։

— Եթե այդպիսի սովորական ավազակներ լինեին, այնպես կ'ընեի և ժամանակ չէի կորսնցներ, ինչպես շատերուն ըրի. բայց սոքա հայ իշխաններ են, և ես ուրախ եմ, որ դատավոր մը ավելի ձեռք բերի։

— Հայտնի խոսե, Հովնան, դու միտդ լավ գիտես բացատրել։

— Վահրամ Տրունի և Վահրամ Գնունի՝ Արծրունյաց Աշոտո մատնիչներն են իմ կալանավորներս, և ես ուրախ եմ, որ անկողմնասեր և արդարակորով մարդ մ'էլ ավելացավ զանոնք դատելու համար։

— Այդպես շուները դատելն ի՞նչ է։ Վանքին պարսպեն կախել տուր երթա։

— Նախ հանցավոր լինիին պետք է քննվի և վճռվի, վերջը կախելու տեղը գիտեմ ես։ Հիմա թողունք այս խնդիրը։ Զրուցե, թե Հունաց երկիր կ'անցնիս ինչ ընելու համար։

— Ազգին այս վիճակին մեջ տեսնելով ես, թե հայությունը կ'ոչընչանա, երկիրը կը քանդվի, սպասեցի, որ Աշոտ Բագրատունի շարժմունք մը ընե, և ես էլ ձեռքս եկածը ընելու աշխատիմ, բայց իմանալով, թե նա և յուր հայրը Բուղայի հետ եթե գործակից և արբանյակ էլ չեն, տեսակ մը հանելուկ են ինձ համար անբացատրելի, որոշեցի, որ հունաց երթամ և տեսնեմ, թե կարելի՞ է օգնություն մը, հույս մը ճարել այս խեղճ ազգին համար. ահա իմ նպատակս. իսկ եթե այն էլ չի հաջողի, այն ժամանակ կը մտածեմ, թե ի՞նչ պետք է ընեմ։ Դու որ խելոք մարդ ես, զրուցե՛, գիտե՞ս բան մը, որ դարման լինի այս վիճակին։

— Եթե գիտնայի՝ կը հավատա՞ս, թե լեռներ, ձորեր, գավառներ կ'անցնեի երեք դավաճան պատժելու համար։

— Լա՛վ, ուրեմն ուտենք և քնենք, վաղն առավոտ ճամփա ելնելու համար։

Եվ այնպես էլ ըրին։ Վանահայրը, որ հանդարտ ծերուկ մ'էր, ամենայն սիրով՝ երթաք բարով, աստված հետերնիդ լինի, ըսավ։ Ինչպես անարգել գնացին՝ իրենց նպատակին հասան, նույնպես անարգել դարձան և մտան մեզ ծանոթ քաղաքը։ Բացի երկու կալանավորներե, որ շփոթած իրենց գլուխն եկածին վրա, չէին գիտեր, թե ի՞նչ էր և ո՞ւր պի-

տի հանգեր այս վիճակը, ոչ ոք դժգոհ չէր։ Վահրիճ անգամ, որ Հովնան տեսնելուն մեծ կասկածի մեջ էր իր ձիուն համար, երբ տեսավ, որ նա գլուխն առած՝ հետևակ առջևեն կ'երթար միշտ, շատ գոհ էր, և Հովնանու հետ հաշտ բոլոր սրտանց։

Մուշեղ և երկու Վահրամները միևնույն սենեկին մեջ բանտարկվեցան և երկրորդ օրը Սասնո լեռը ապաստանյալ ութ-տասը իշխանազուն մարդիկ, նույնչափ մ'էլ երևելի գյուղապետք, շրջակա վանաց առաջնորդք և մեզ ծանոթ Գուրգեն և խոսրով ամենքն ասյան կազմեցին ու նստան։

Հոն բերվեցան Մուշեղ Վահևունի, Վահրամ Տրունի և Վահրամ Գրնունի թիկնապահ մեկ կողմեն, և Հովնան խութեցի իբրև դատախազ ամբաստանեց այս երեքն էլ, թե ի՞նչպես սոքա Նկանի բերդին պաշարման ժամանակ գաղտնի պատգամավոր և նամակ ղրկեցին Բուղայի՝ խոստանալով մատնել զԱշոտ Արծրունի և բերդը նորա ձեռքը հանձնել և թե ի՞նչպես նույն նամակին մեջ մատնությունը հետին ծայր վատության հասցնելով իմաց կուտային, թե Գուրգեն՝ Աշոտո եղբայրը ո՞ւր կը գտնվեր և ի՞նչչափ զորք, զորություն և ինչ բերդեր ուներ։ Կ'ավելցներ նաև Հովնան յուր ամբաստանության մեջ և երկայն ու տեղն ի տեղ կը պատմեր, թե ի՞նչպես պաշարման ատեն Աշոտո հրամանները կը խարդախեին և չէին կատարեր, և թե երբ Աշոտ իմանալով իրենց կեղծավորությունն ու նենգությունը և ուզելով հեռացնել զիրենք ամրոցեն, հրամայեց երթալ թշնամի զորավարին հետ խոսիլ և կամքն իմանալ, նոքա հայտնելով իրենց դավաճանությունը և կեղծավորության դիմակը վար առնելով, «դու պետք է երթաս և խոսիս իրեն հետ, որպեսզի ամբաստանության կասկածը վերանա վրայեդ» պատասխանեցին. և երբ Աշոտ ամենայն քաղցրությամբ յուր բարիքները, պարգևները, սերը կը հիշեցներ, յուր առատաձեռնությունքը հուշ կը բերեր, յուր գանձին աղքատության մինչև պատճառ եղած էին, երբ այսպիսի տարաձայնության հետևանք ցույց կուտար, թե յուր բոլոր ընտանյաց և երկրին սրբ և գերության պատճառ պիտի լինեին, դոքա՝ այդ երեքը, իրենց քանի մը միաբանելովքը՝ ամենայն խստասրտությամբ կը պատասխանեին. «Ձենք կարող թագավորական ահագին զորության դեմ դնել. մեր բերդերը ամրացյալ չեն բավականին ինչպես կարծեինք, բավական պաշար չունինք և ոչ պետք եղածին չափ պահապան. և այս պատճառներուն համար պետք է, որ դու երթաս անձամբ Բուղայի, որ ապստամբության կարծիքը վրայեդ վերնա, և խեղճ ժողովուրդը, որ գաղթականությամբ եկել հոս ամրացել է, յուր տեղ կարենա դառնալ և երկրիս ապապատակությունը դադրի. վասնզի աշխարհքս ահա կործանեցավ։ Եվ եթե քու կամոքդ երթաս, թերևս շատերու և քու անձիդ օգտակար լինիս, վասնզի կարելի է, որ

գուցե ակամա երթալովդ քեզի էլ, ուրիշներու էլ վնաս հասցնես»։ Դոցա այս սպառնալիքներեն ու դավաճանութենեն պարտավորյալ Աշոտ, մահը աչքն առնելով գնաց վիրագին, սոցա մատնությամբ և առաջնորդությամբ դարձյալ Գուրգեն նորա եղբայրն անձնատուր եղավ։ Բոլոր Հայաստան գիտե, թե ի՛նչ հետևանք ունեցավ Վասպուրական աշխարհի համար այս երկու եղբարց գերությունը, ի՛նչչափ անմեղներ սրո և գերության մատնեցան, ի՛նչչափ ողորմելիներ ուրացությամբ և հոգվո կորստյամբ իրենց կյանքն ազատեցին, և աս ամենքը, որովհետև այս երեք իշխանազունք դինվորական օրինաց մատնիչ եղան վատությամբ, տիրադավ եղան, իրենց տերը մատնեցին, իրենց բարերարներու երախտյաց ապերախտությամբ պատասխանեցին։

Մշո փախստականներեն ծեր դատավոր մը, որ ամենուն հայտնի էր իր արդարակորով բնությամբ և ուղղությամբ՝ հարցուց աս մեր երեք ամբաստանելոց, թե ի՛նչ պատասխան ունեին։ Իսկ նոքա երեքը միաբերան ուրացան իրենց Բուղայի մատնության նամակ գրելն. իսկ մյուս խոսակցությունները Աշոտի հետ՝ հայտնի շարակամության նշան համարեցան և էր պնդելին, թե Նկանի բերդը իրոք կարողություն չուներ դիմանալու։ Եվ քաջալերյալ, որովհետև օտար ու պատկառելի կերպարաններ կը տեսնեին դատավորաց մեջ, սկսան ամբաստանել զՀովնան իբրև խարդախ և դավաճան, որ իրենց կենաց դեմ թշնամությամբ գրգռված՝ ո՛ դիտե ուստի, զիրենք կապանաց և բանտի մատներ էր ամենայն դիվական նենգությամբ, և իրենց ձեռաց և ոտից կապերու տեղվանքը ցույց կուտային. իրենք իշխանազուն և նախարարական մարդիկ, այսպիսի նախատանաց մատնյալ։

Իսկ Հովնան՝ «Այո,— կ'ըսեր,— երբ արաբին կրոնական և քաղաքական բռնությունն իմ ազգիս վրա կը ծանրանան, մարդկային և աստվածային օրենք այսպիսի մատնիչներու ձեռք խաղալիք կը դառնան, տիրասիրության տեղ տիրանենգության մեր հոգևոր գլուխներեն նաև ուսելի կը վերադասի, քրիստոսատյաց, արյունարբու և ուխտադրուժ մահմեդականին ու օտարին լուծը Քրիստոսի և ազգային պարտավորությանց լուծեն ավելի ընտրելի կը քարոզվի այսպիսի ժամանակ, ուր հայոց հոգևոր տերն ու կաթողիկոսն անգամ սասնցվոց քաջագործությունքը՝ Յուսուֆ ոսոիկանին, որ զԲագարատա դավեց հոգվով և մարմնով, որ Մուշ և բոլոր Տարոն ի հուր և ի սուր մատնեց, որ ս. Կարապետ նույն վիճակին պիտի բերեր, Յուսուֆին արժանավոր մահը և պատիժը հիմարությունն կը վճռեր, այսպիսի ժամանակ դավաճաններու դեմ՝ դավաճանություն, նենգավորներու դեմ՝ նենգություն ամեն հայու իրավունքն էր, և ես, այո՛, ամեն ջանք ի գործ դրի զիրենք ձեռք բերելու համար։

կրնայի զիրենք կախել առաջին փայտեն՝ ես որ համոզված էի իրենց եղեռանց ստուգության վրա, բայց չուզեցի, վասնզի կը փափագիմ, որ իմ ազգս մարդկային կյանքը խաղալիք չի համարի, որովհետև գրված է. Մի՛ սպանաներ, այլ դատե և դատապարտե։ Այս իշխանները կուրանան, թե գրած չեն Բուղայի, բայց ի՛նչ պիտի ընեն եթե ցցնեմ իրենց և այս ժողովքին նույն մատնության նամակը իրենց կնիքներով, որով մատնեցին Աշոտ և Գուրգեն և Վասպուրական արյամբ ողողեցին։ Ահա՛ նամակը»։

Եվ այս ըսելով տարավ թուղթ մը տվավ ծեր դատավորին ձեռքը, որ սկսավ բարձր և դողդոջուն ձայնով կարդալ նամակը, որուն օրինակը այսպես էր.

«Հայոց աշխարհիս վերակացությունը Քեզ հանձնված լինելով ինքնակալ թագավորեն, ամենքը իշխանք և տյարք, կողմնակալք և կուսակալք, քաղաքապետք և մարզպետք բոլոր Հայաստան երկրիս Քեզ պարտական են հնազանդության։ Իրավունք ունիս ապստամբները և դիմադրողները գանիվ, բանտիվ և զանազան տանջանոք պատժելու, որպեսզի անհետ ընես աշխարհքես շփոթ և խռովություն, ինչպես պարտք է գործել թագավորաց և թագավորազանց, որ աստուծո կամքը կը կատարեն իբրև հավատարիմ ու տիրասեր ծառայք։ Ուստի մենք Վասպուրական աշխարհի իշխանք, նախարարք ազատաց, Մուշեղ Վահունյաց ցեղեն, Վահրամ Տրունյաց ազգին և Վահրամ թիկնապահ իշխանին, և ուրիշ ազատաց գունդք և զորականք, որ մեր ձեռքն է երկրիս հոգաբարձությունը, գրեցինք քեզի, Բուղա, գլուխ տաճկաց զորավարաց և բարձակից մեծ թագավորին, միայն թե մեզ և մեր տոհմին և մեր երկրին բնակչաց ազատ մնալ և խաղաղությամբ յուրաքանչյուրս յուր տան մեջ բնակիլ. մենք կուտանք քու ձեռքդ Աշոտ առանց քեզ փոքրիկ աշխատություն տալու. միայն թե զմեզ ապստամբ չի կարծես ինքնակալ թագավորեն ու քու ճոխութենեդ։ Բայց պետք է գիտել քեզ նաև, որ իշխանիս եղբայրը Գուրգեն և Արծրունյաց տոհմեն շատ ուրիշներ և շատ բազմություն ազատաց, ազատորդյաց և քաջ զորականաց Վասպուրական տերության՝ Ատրրպատականի սահմանը գնացին և հոն ժողվված են աշխարհիս քաջերն ու կորովիքը, որ սուրե չեն վերադառնար, որ եթե աս պաշարմունքը երկարի՝ գիշերով կրնան գալ քու վրադ և մեծ կոտորած ու վնաս արքունի զորաց վրա հասցնին, վասնզի նա քաջ մարդ է և պատերազմող, և իրեն հետ միաբանած զորքը կը մեռնին իրենց տան, աշխարհքին, ազգին և տոհմին վրա։ Ունին ձեռվնին ամուր բերդեր, ինչպես են Ջլմար և Սբրինգ և Ճախուկ, և եթե բոլոր իրենց զորությունը միացնեն, կրնան քեզի մեծ աշխատություն հասցնել և քու բոլոր խորհուրդներդ արգիլել, և մինչև

ամոթով ու կորանոք զքեզ ետ դարձնել։ Ինչպես քեզմե առաջ եկած «արքունի հազարապետին ըրին, վասնզի չի կրցավ սոցա դեմ կենալ, վասընզի այս հայոց զորաց տասն հատին հարյուր մարդ դեմ չէ կարող դընել»։

— Ահա,— ըսավ ծերունի դատավորը,— այս երեք իշխանաց կընիքները. «Մուշեղ Վահևունի, Վահրամ Տրունի և Վահրամ Թիկնապահ»։ Տեսնք ու դատեցնք։

— Առեք սոցա մատանիները՝ բաղդատեցնք սա կնիքներուն հետ և տեսնք, թե կա՞ խարդախություն,— զրուցեց Հովնան։

Երբ մատանիներն առնվեցան՝ կնիքները բաղդատվեցան և քննող աչքեր ճշգրիտ, հար և նման գտան, ցույց տվին նաև ամբաստանելոց, որ ավելի մեռյալ էին քան կենդանի, և խոսք չի կար բերաններին։ Ան ատեն Հովնան կրկնեց.

— Սոքա ամբաստանյալ են և ես դատախազ, մենք այստեղ գործ չունինք, ձեզ կը մնա դատել, հարք և վանահայրք Հայաստանյայց եկեղեցվո, իշխանք, դատավորք և գյուղապետք Հայաստան աշխարհի, եթե արժան կը դատիք և արդար համարիք այս երեք մարդիկը, մենք սասնցիքս, թեպետ արյուն, քրտինք թափեցինք զիրենք և այս վկայութուղթը ձեռք բերելու, դարձյալ զիրենք կը թողունք արձակ երթալ ի խաղաղություն, իսկ եթե ուրիշ կերպով վճռեք, դարձյալ մեզի պարտք կը համարինք ձեր վճիռը ամենայն ճշտությամբ մինչև վերջին կետը ի գործ դնել։

Եվ ակնարկ ըրավ, դուրս ելան երեք իշխանք և ինք յուր սասնցիներով միատեղ։

Տարոնո առաջնորդ և նախագահ ժողովքին նստյալ արքեպիսկոպոսը, որ մինչև այն բոպե բերան չէր բացեր.

— Ո՜հ, սարսափելի մարդ է այդ Հովնան,— ըսավ։

Իսկ ծեր դատավորը առանց այս բացագանչության ուշ դնելու, հարմատեց դատաստանական եղելությունքը, և մեկիկ-մեկիկ հարցուց, թե «այս երեք անձինքը՝ Մուշեղ Վահևունի, Վահրամ Տրունի և Վահրամ Գրնունի Թիկնապահը՝ աստուծո առաջ և արդար խղճով հանցավոր և մատնիչ կը համարեի՞ն իրենց իշխանին և դավաճան հայրենի երկրին ու պատճառ կոտորածի և ավերման Վասպուրական աշխարհին». և ամենքը երդումով աջերնին Ավետարանին վրա դրած, ձախը սրտերնուն վրա խոստովանեցան, թե «Հանցավոր և մատնիչ էին՝ հավասար ուրացելոցն Մերուժանա Արծրունվո և Վասակա Սյունվո և Հուդայի Իսկարիովտացվո»։ Ան ատեն ծերը դարձյալ հարցուց. «Ի՞նչ պատժո արժանի կը համարիք

այս հանցավորները»։ Դարձյալ նույն ձևով պատասխանեցին միաբան՝ «մահու»։ Բերել տվին ատենադպիրը՝ երիտասարդ առեղա մը և ծերը տուն կուտար, և նա կը գրեր վճիռը, երբ վճռվեցավ ամեն բան և ստորագրություն, ու մեծավ մասամբ ստորագրությանց տեղ խաչանիշք դրվեցան, հրաման եղավ, որ ամբաստանյալք և բոլոր ժողովուրդը ներս մտնեն։ Եվ ծեր դատավորը կարդաց վճիռը.

«Մենք, ներքո ստորագրյալքս, համի Տյառն ոթ հարյուր հիսուներկու և Հայոց թվականին երեք հարյուր մի, և Մեհենի ամսո երեք, ժողովյալ ի Տարոն ի քաղաքն Օձն քննեցինք առաջի աստուծո Մուշեղ Վահևունի, Վահրամ Տրունի և Վահրամ Գնունի Թիկնապահ, և ակներև՝ անսխալ ապացույցներով հայտնի եղավ մեզ, թե սոքա երեքը միաբան որոյալ և կնքյալ նամակավ առ Բուղա մատնեցին իրենց իշխանը Աշոտ Արծրունի ի կապանս և ի գերություն, և Վասպուրական երկրին ի հուր և ի սուր. վասն այնորիկ մենք զիրենք արժանի դատեցինք մահու և այս վճիռն ու նորա գործադրությունը հանձնեցինք Հովնանու խութեցվո, ընտրյալ զորավար Սասնո գավառին, որ ո՛ւր տեղ ե ո՛ր կողմ արժան և հարմար դատի՝ այս մեր պատժո վճռին ի գործ դնե հօրինակ և ի զգուշություն չարագործաց և միամտաց»։

Երբ ամենքը սկսան ցրվիլ, Գուրգեն, որ խոր մտածության մեջ էր, մեկ կողմ առավ ծեր դատավորը առանձին և ծոցեն փոքրիկ նամակ մը հանելով, «Հայրիկ,— ըսավ,—սա նամակին գիրը և այդ դավաճան մահապարտաց առ Բուղա ղրկված գիրը թեպետ փոխված՝ իրարու չե՞ն նմանիր. խնդրեմ, մեկ մը քննե, վասնզի դո փորձ մարդ ես»։ Ծերը երկու թղթերը քովեքով դնելով՝ երկար զննութենե մը վերջ. «Որդյակ, հարյուրին իննսունինն հավանություն կա, թե սա երկու նամակին գրողն միևնույն մարդն լինի, թեպետ ջանացեր է, որ գիրը ծամածռե»։— Շնորհ ունիմ քեզ, հայրիկ,— ըսավ Գուրգեն և դուրս ելավ. Վահրիճի աչք ըրավ, որ գա, և առանձին սենյակ մը քաշվելով.

— Վահրիճ, դու պետք է որ ճարպիկությամբ սա մահապարտներեն իմանաս, թե որո՞ն գրել տվին այս Բուղայի նամակը։ Քե՞զ տեսնեմ։

— Շատ բարի, իմ պարտքս լինի այդ, միայն թե Հովնանու պետք է իմացնես, որ հրաման տա ինձ ազատ թողնել մտնելու նոցա քով, վասընզի այդ սասունցիք՝ բացի այդ մարդեն. ուրիշ ոչ ոք չեն ճանչեր։

— Լա՛վ,— ըսավ Գուրգեն։

ԱՐՏԱՆՈՒՇԻ ՎԱՆՔԸ

Այս մեր պատմության ժամանակները, Հայաստանի արևմտյան ծայրը, Հունաց բաժնին Ճորոխ գետի ափանց վրա, ուր Արտանուշի վըտակը անոր կը խառնվի, կուսանաց վանք մի կար Բագրատունի իշխանաց շինություն։ Վանք՝ այսինքն բերդ յուր բարձր պարիսպներով, յուր աշտարակներով, բուրգերով, բլրո մը վրա շինված, որ երկու ջրերու միացած տեղը թերակղզի եղած արդեն զորավոր դիրք ուներ։ Պարանոցը, որ ցամաքի հաղորդակցության կապն էր, բերդի երկաթապատ դուռն էր դրված, որուն շրջապատը շինություն կային, ուր բազմություն զինյալ սպասավորաց և զորականաց վանքին ծառայության և պաշտպանության պաշտոնն ունեին։ Վանքը հարուստ էր, վասնզի Բագրատունի իշխանք շրջակա երկրին եկամուտը իրեն սահմաներ էին, և մեծ մայրապետը գրեթե բացարձակ իշխանություն մը կը վարեր նաև Սմբատավանի և նորա գյուղորեից վրա, որ քանի մը մղոն միայն հեռավորություն ուներ վանքեն։ Մեծ մայրապետը գրեթե միշտ Բագրատունյաց ցեղեն օրիորդ մը կամ այրի տիկին մը կը լիներ, որ կամ իր ազատ կամոք, կամ ակամա պարագաներեն բռնադատյալ, հոն հանգիստ՝ և թեպետ առանձնացյալ կյանքի դատապարտված՝ բայց միշտ մեծ հարգանք և ակնածություն կը վայելեր թե՛ հայ, թե՛ վրացի և թե՛ հույն մերձակա իշխանաց և ժողովրդոց։

Վանքի կեդրոնը շինված էր եկեղեցին՝ բավական ընդարձակ, փառավոր և սյունազարդ, ուր ժամերգություն և սաղմոսերգություն սահմանյալ ժամերու միշտ կը կատարվին ըստ ավուր պատշաճի։ Սեղանատունը նորաշեն՝ քանդակներով զարդարյալ իշխանական պալատի հարկ կը կարծվեր, քան թե մենաստանի տխուր կերանոց, նույնպես գեղեցիկ էին ժողովարանք կուսանաց և դահլիճք, պարկեշտ, բայց վայելուչ նոցա մենարանք, պարկեշտ մանավանդ նոցա կենցաղավարությունը և առաքինության համբավը։

Քսան տարի էր, որ Վասկանուշ Բագրատունի օրիորդը մայրապետ եղած էր կուսանաց. իր իմաստուն կառավարությամբ խաղաղություն և երջանկություն կը տիրեին ոչ միայն վանքին մեջ, այլ բոլոր փոքր շրջակայքը, ուր յուր ձեռքը կը հասներ։ Ինչպես վանքին մեջ հարստահարություն չի կար, նույնպես հարկատու գյուղորեից մեջ արդարություն կը տիրեր, վասնզի ամենքը կույս իշխանուհվույն աղերսագիր կրնային

հասցնել։ Վա՜յ էր այն անձին, որ խեղճի մը բողոքը խղդեր և իր աղերսը արգիլեր։

Հարուստ հայրենի ժառանգությամբ և միշտ չափավոր և խնայող յուր ծախուց մեջ, գեղեցկացուցեր էր վանքը շինությամբ, բարեկեց ըրեր էր նոցա կյանքը, որ յուր իշխանության տակն էին, և ոչ ոք կար կուսանաց մեջ, որ ակամա կրոնավորության լուծը տաներ. և կ՚արձակեր կուսանքը իրենց հայրենական տները կամ սխալմանց կը ներեր, որ անները կը համարեին շատ կրոնավորք, մեղադրողաց նա կը պատասխաներ, թե Քրիստոսի «լուծը քաղցր և բեռն փոքրագի» պիտի լինի և թե հրամայած է «կարողին միայն տանել»։

Վասկանուշ յուր պարզ և սև հագուստներուն մեջ յուր սպիտակ քողին տակ վայելուչ կերպարանքով և հասակով՝ թեպետ քառասունհինգն գտած՝ երեսունհինգ կ՚երևեր։ Յուր գեղեցիկ աչքերուն վսեմ նայվածքը պատկառանք կ՚ազդեին և մեծ ու փոքր ակնածությամբ իրեն կը մերձենային։ Թեպետ միշտ զբաղած՝ ոչ երբեք յուր կրոնական պարտքերեն կը պակսեր, այլ կոչնակին ձայնին հնազանդ՝ միշտ եկեղեցին կը գտնվեր ներկա սաղմոսերգությանց, և միշտ սեղանատունը հասարակաց սեղանը կը ճաշեր հավասար ամենուն։ Իր ծանր և ազնիվ վարմունքը և առաքինի օրինակը պաշտելի էակ մը ըրած էին զինք յուր կուսանաց։

Այն ամենվան մեջ, որ Հայաստանի կես մասը արաբական բարբարոսության ոտնակոխ եղած կ՚ողբար և մյուս մասը ամառվան համար կը սարսեր, Վասկանուշ Տարոնո և Վասպուրականի փախստականներն կ՚իմանար իր հայրենի երկրին վիճակը և ավերածը. և երբ այն մտածությամբ յուր պատուհաններեն Արտանուշի և Ճորոխի փրփրալից խառնուրդը կը դիտեր, ոտքի ձայն լսեց և դարձնելով գլուխը տեսավ, որ վերակացու կույս մը մեծ կնիքով նամակ մը խոնարհաբար իրեն ներկայացուց։ Կնիքը զննեց, նամակը բացավ և աչք մը ձգելով գրության վրա՝ կամարաձև հոնքերը շարժեց.

— Հոգևոր Տերը մեզ շնորհք կ՚ընե՝ Սյունյաց երկրեն կույս մը մեզ կ՚ուղարկե։ Տեսա՞ր զնա, քույր իմ,— հարցուց. և այս պարզ խոսքերուն յուրաքանչյուրն հեգնություն մ՚էր ,և որ կնոջ միայն տրված է ձևակերպել և հայտնել։

— Ոչ, մեծ իշխանուհի, եթե հրաման ընես բանալ դռները, դեսպակը ներս կ՚առնունք։

— Շուտով ներս առեք։ Ո՜ գիտե խեղճը այս եղանակիս կես սառած է թերևս, տաք սենյակ մը տարեք, բայց առանձին, կերակուր հանեցեք և ինձ լուր բերեք։ Այսպիսի եղանակի մեջ Սյունյաց երկրեն մինչև հոս

ինչպե՞ս ղրկեր են, ի՞նչ խղճմտանք է կամ ի՞նչ պարագա է, չեմ հասկընար։

Այս վերջին խոսքերը այնպիսի ձայնով մը զրուցեց, որ ինք միայն լսեց։ Եվ երբ դուրս ելավ կույսը. «Զիս գոնե գարնան քաղցր եղանակին մեջ աքսորեցին և այս բանտը ղրկեցին։ Բայց ո՞վ է այս աղջիկը. «բարձրը և ազատ ազգն» կ'անվանե զսա կաթողիկոսը և «խստիվ պահպանել» կը հրամայե։ Ի՞նչ է արդյոք հանցանքը, ո՞ գիտե ինչ ոճիրներ գործեր է տասնյոթ տարեկան աղջիկ, միգուցե սա էլ նույնպես ոճրագործ մը լինի, ինչպես ես էի. ես էլ բարձր և ազատ ազգե էի. միգուցե սա ևս Սևանա գեղեցիկ կապույտ ծովակին եզերքը սիրո բաժակին յուր շրթունքը հպեցուց և իմացվեցավ։ Տեսնենք»։

Եվ այս մտածությամբ Ճորոխի ալյաց վրա աչքերը հառյալ կը նայեր։

Ի՞նչ է գետի մը ընթացքը, ծովու մը՝ ափունքին տված հարվածները, որոց յուրաքանչյուր ալիք միևնույն շարժմունքն ու խաղն ընելով մեր աչքը և մեր միտքը կը գրավեին առանց մեր մտքին տիրապետող խորհուրդը խախտելու։ Վասկանուշ այդ Ճորոխին հախտ ոն ջրերուն մեջ կը տեսներ յուր Տարոնո հայրենի պալատին ոսկեձեղուն և նկարեն սենյակները, կը տեսներ զինք յուր ոսկեթել բեհեզներուն մեջ, կը տեսներ Հովնան Սասնո առյուծակորյունը յուր քսան տարիներուն մեջ՝ նորա լայն ճակատը և մեծ գլուխը սև մազերով պսակյալ, որ ուսերուն վրա կ'իջնեին, նորա կայծակնափայլ աչքերը, որ յուր ակնարկին առաջ կը խոնարհեին և կը քաղցրանային, կը տեսներ լուսնի հանդարտ լուսով յուր վարդենյաց պարտեզը ինք նստած և առյուծը ոտքերուն քով ի գուռս, կը տեսներ հանկարծ յուր գլխուն վրա կանգնած յուր հոր Վասակա բարկաճայթ աչքերը... և ահա ոսկեձեղուն պալատ, բեհեզներ, Հովնան, վարդենիք, լուսին և ամեն բան Ճորոխի ալիք կը հափշտակեին, կը տանեին, և կը մնար ինք յուր տխուր սենեկին մեջ միայնակ, որուն լռությունը կ'ընդհատեր կրակարանին հրույն ճարճատմունքը։

Գիշերն հասեր էր, երբ բերին աղջիկը մայրապետ իշխանուհվույն առջև, և ամենքը քաշվեցան. ակնարկ մը ձգեց սա աղջկան վրա. այն քնքուշ կազմվածքներեն էր, որոնց թափանցիկ մորթը շուշանի սպիտակությունն ունի, որոնց մազերուն գույնը արծաթի փայլն ունի, և որոնց էությունը կարելի չէ իրենց տեղեն հեռացնել, վասնզի երբեք չունին զորություն կյանք քաղելու օտար հողե և արմատե։

Հազիվ թե անունը, ո՞վ լինիլն հարցուց, արտասվաց հեղեղ մը և սանձյալ հեկեկանաց ձայն մը եղավ բոլոր պատասխան։ Վասկանուշ

ելավ, իբր գթած մայր առավ ձեռքեն, նստեցուց քովը և սպասեց մինչև որ հանդարտեց հեկեկանքը։

— Հիմա, որդյակ իմ,— ըսավ,— զրուցե ինձ ամեն բան և միայն ճշմարիտը, ո՞վ գիտե՝ կարելի է, որ ես ճար մը, հնարք մը գտնեմ քու թշվառությանդ, զրուցե՛ ո՞վ ես դու, ո՞ւմ աղջիկն ես, ինչո՞ւ քեզ այստեղ կ'ուղարկեն. եթե կուզես, որ քու վրադ գութ ունենան, զրուցե, հայտնե ամեն ինչ ճշմարտությամբ։

— Զարուհի է իմ անունս, ես դուստր եմ Գրիգոր Սուփան Սյունյաց իշխանին, որ այս ամառ սպանվեցավ Բաբկեն Սիսականեն։

— Գիտեմ այդ թշվառ դիպվածը, որդյակ, զրուցե՛ հիմա, թե ինչո՞ւ զքեզ այստեղ ուղարկեցին։

— Հայրս երկու տարի առաջ զիս Բաբկենի որդվույն Աշոտի հետ նշանած էր, հիմա եղբայրս Վասակ զիս ուզեց ամուսնացնել Գարդմանաց Կտրիճ իշխանին, և որովհետև ես հանձն չառի հնազանդիլ, զիս այստեղ բանտել հուղարկեց...

— Մի լար, որդյակ, այստեղ բանտ չէ, և ես քիչ ժամանակեն կը դարձնեմ քեզ քու տունդ, ապահով կաց։ Բայց մայրդ ի՞նչ կ'ըսեր այս պարագային մեջ։

— Մա՞յրս, ո՞հ, մայրս եթե կենդանի լինե՞ր...

— Մի՛ լար, Զարուհի, հանդարտե,— ըսավ Վասկանուշ, բայց յուր աչքերն էլ լցվեցան այդ պարզ և միամիտ աղջկան կատարյալ որբությունն իմանալով և քանի մը շրջան ընելեն վերջ դարձավ հարցուց.

— Բայց դու Աշոտի հետ ամուսնանալ կ'ուզեի՞ր, և ա՞յդ բանին համար քեզ Կտրիճին պիտի տային։

— Աշոտ իմ նշանածս էր, և ես զինք կը սիրեի, բայց երբ իմ հայրս նորա հոր ձեռքեն մեռավ, յուր տղուն հետ ինձ ամուսնանալ անկարելի է ըսին, և ես հավանեցա. սակայն Կտրիճը չար մարդ է, ես այդ մարդեն կը սոսկամ. թողուին զիս, և ես տունը կը նստեի. թո՛ղ մեզ մոտ վանք կար՝ հոն դնեին, հանձն կ'առնվի, զիս այսպես հեռու տարագիր ըրին, այդչափ մեծ իշխաններ, վարդապետներ, եպիսկոպոսներ ինձի՝ տկար աղջկան մը դեմ միաբանեցան. այս ցուրտին, ձյունին...

— Շատ բարի, զավակս, դու հանգիստ բռնե սիրտդ, գարնան իմ պարտքս լինի քեզ Սյունյաց երկիրը դարձնել։ Հիմա դու գնա՛, քեզ համար պատրաստյալ սենյակը։ Հանգի՛ր։ Ես կը մտածեմ և ինչ պետք է ընել, կը հոգամ։ Գնա դու հիմա, գարունը, քեզի ըսի, պետք է սպասես։

Այս հուսատու խոսքերն լսելով՝ Սյունյաց աղջկան արտասվաթոր այտից վրա ծիծաղ ծագեցավ, և երկյուղը, կասկածը պարզ վստահության փոխարկյալ՝ Վասկանուշին ձեռքերը համբույրներով ծածկելով.

— Գարնան քանի՞ օր կա, սիրուն Տիկին,— ըսավ։

— Զմեռվան դեռ կեսն ենք, աղջիկս, երբ գարունը գա, դու էլ կը տեսնես, ես էլ։

— Շատ բարի, ես կ'երթամ պառկելու, շատ հոգնած եմ։

Եվ երբ դուրս ելավ աղջիկը, մայրապետ տիկինն սկսավ մտածել, և առած տեղեկություններեն այնպես դատեց, որ Աշոտի հանդուգն ձեռնարկությունք կամ սպառնալիք պատճառ տված էին այս տարաժամ աքսորանաց։ Ցուր դատմունքն այնչափ ուղիղ էր, որ հազիվ երկու-երեք օր անցավ այս դիպվածիս վրա, և ահա առավոտ մը կանուխ լուր տվին, թե Սմբատավանի պետը եկեր էր կարևոր լուր մը հաղորդելու։ Երբ հրամայեց իրեն բերել, տարիքն առած համեստ մարդ մը ներկայացավ, որ ամենայն հարգանոք ողջունելեն վերջ սպասեց, որ հրամայե խոսիլ։

— Բարի եկիր, Թադոս հայրիկ,— ըսավ Վասկանուշ,— կարևոր լուր ունիս եղեր հաղորդելու, ի՛նչ է, ըսե տեսնեմ։

— Պատրաստ եմ ծառադ քո հրամանին հնազանդիլ, մայր իշխանուհի...

— Կ'իմանամ։ Կույսեր, մեզ միայն թողեք վայրկյան մը։ Խոսե՛ ուրեմն։

— Այս կեսգիշերվան մոտ, քսանի չափ ձիավոր ավանը մտան և օթևան ուզեցին, ես իրենց գլխավորը քսան-քսանհինգ տարու երիտասարդ մը՝ իմ տունս ընդունեցա յուր քանի մը ընկերով, մյուսներն էլ զանազան տեղվանք օթևանեցան։ Երիտասարդը, իբրև թե հնարագիտությամբ հարցմունքներ ընել սկսավ, թե դեսպակով եկած օրիորդ մը ո՞ր իշեր էր, թե վանքը ի՞նչ դիրքով, ի՞նչ զորությամբ տեղ էր, և թե ինք Կոստանդնուպոլիս երթալու միտք ուներ, Սպարապետին կողմեն իբրև պատգամավոր և թե միայն քիչ մը տկար լինելուն քանի մը օր հանգիստ կ'ուզեր ընել Սմբատավան, և թե ինք շիրակեցի էր՝ նույնպես յուր հեծյալները։ Այս խոսքերը ես միամտաբար մտիկ ըրի, բայց իր հընչմունքը, իր լեզուն, մանավանդ յուր ընկերաց լեզուն հայտնի կ'ընեին, թե ինք սյունեցի է, և իր անհանդարտ կերպեն իմացա, թե այդ աղջկան համար է եկած, և կարելի է հիմար ձեռնարկություն մ'ընելու համարձակի, ուստի պարտք համարեցա քեզ իմաց տալ, մայր իշխանուհի։

— Տկարության նշան կա՞ յուր վրա։

— Ամենևին, բայց շատ տխուր է, երկայն կը մտածե և հանկարծ հարցմունքներ կընե։

— Քովի մարդիկը ինչպե՞ս կը վարվին իրեն հետ։

— Իբրև իրենց իշխանին հետ։

— Անունը իմացա՞ր։

— Ներսեհ է անունը։

— Ի՞նչ կարծես, թե կը մտածե այդ երիտասարդը։

— Իմ կարծիքս այն է, թե հարձակում կ'ուզե ընել վանքին վրա և այդ աղջիկը հափշտակել։

— Բայց աղջկան այստեղ մտնելը ո՞վ կրնա իրեն իմացուցած լինի... Անշուշտ սյունեցիքը, որ ետ կը դառնային. աղջիկը հանձնելե վերջ հանդիպած են իրարու և տեղեկություն տված։

— Շատ կարելի է։

— Հոդ չէ, դու հիմա կ'երթաս տուն, և որովհետև հյուր իշխանն անհանգիստ է, դեռ տունեն դուրս ելած չլինիր. կուսանաց վանքի մայր իշխանուհվույն կողմեն կողջունես և կ'իմացնես, թե կը փափագիմ յուր հետ տեսություն ընել։

Ծերը զարմանալով մնաց այս խոսքերը լսելով, վասնզի առաջին անգամն էր, որ իշխանուհին, անծանոթ հյուրի մի այսպիսի հրավեր կ'ուղարկեր, մանավանդ, որ ինք այս լուրը տալուն այնպես կը կարծեր, թե հրաման պիտի տրվեր պահապանները կրկնապատկելու, դռներն ամրացնելու, բայց որովհետև հնազանդել էր յուր պարտքը՝ ձեռքը կուրծքին դրավ խոնարհությամբ և պատրաստվեցավ դուրս ելնելու։

— Բայց, Թադոս հայրիկ, պետք է նաև իրեն իմացնել, թե այդ տեսությունը կարելի է, երբ ինք առանձին, միայնակ քեզի հետ ընկերացյալ ուզե հանձն առնուլ։

— Շատ բարի, իշխանուհի։

Եվ ծերը դուրս ելավ առանց գայթակղության և գնաց ուղղակի յուր պատգամավորությունը կատարելու. ճիշտ ժամանակին հասավ, վասնզի հյուրը արդեն պատրաստվեր էր հեծնելու և դուրս ելնելու։ Երբ իմացավ լուրը, շուտ մը հանձնառու եղավ հոժարությամբ, և երկուքը միատեղ եկան վանք. մեծ երկաթապատ դռնեն երբ ներս մտան, դուռը փակեցավ, և անմիջապես իշխանը միայն հրավիրեցին դռան քով սենյակ մը, ուր իշխանուհին կեցած իրեն կ'սպասեր։

Բարկեն Սիսականի որդին Աշոտ, որ լի համարձակությամբ՝ մանավանդ թե հանդգնությամբ ներս մտավ սենյակեն, երբ այդ սևեր հագված ծանր և վսեմ կնոջ կերպարանքը տեսավ, որու գեղեցիկ, տխուր, հանդարտ և քննիչ աչքերը իր վրա կ'իյնային և իբրև թե յուր միտքը, դիտավորությունը, յուր կեղծ պաշտոնն և անունը արդեն գուշակած էին, շըփոթեցավ, հազիվ թե ձեռքը կուրծքին դրավ, և լեզուն անշարժ մնաց, և դռան քով կանգ առավ։ Իսկ Վասկանուշ միշտ անխոով.

— Բարի է, իշխան, գալուստդ այս մեր կողմերը, լսեցի քու երթը թագավորական քաղաքը, փափագեցա տեսնելու, վասնզի ես էլ բարե-

կամներ ունիմ և թերևս օգտակար կարենամ լինիլ, վասնզի Սպարապետը ինձ էլ օտար չէ, մանավանդ թե շատ մոտիկ ազգական է։ Ինչպե՞ս է, ի՞նչ վիճակի մեջ է, զարմանք, որ այս կողմերն անցնելով ինձ նամակ մը չէ տվեր։

Այս խոսքերը թեպետ իբրև շատ պարզությամբ զրուցված, այնպիսի ձև մը ունեին և այնպիսի եղանակ յուրաքանչյուր բառի վրա ծանրծանր շեշտվելով, որ Աշոտ բոլորովին շփոթեցավ և թոթովելով այսչափ միայն կրցավ պատասխանել.

— Կը ներեք, իշխանուհի, ես նաև չէի գիտեր, թե ի՞նչ ճամփա պիտի բռնեմ իմ ճամփորդությանս նպատակին հասնելու համար, և ինձ այնպես հրաման կա, որ առանց դանդաղելու ուղևորիմ։

— Լա՛վ, բայց մյուս հարցմունքներուս չես պատասխաներ, իշխան, Սպարապետին վիճակը հարցուցի։

Լռություն մը տիրեց դարձյալ, իբրև թե աշակերտ մը վարժապետին առջև անպատասխանի մնացած չէր գիտեր, թե ի՞նչ զրուցեր և չէր համարձակեր գլուխը նաև վեր վերցնել. բայց վերջապես յուր բոլոր զորությունը ժողվելով և ինչպես երկչոտներու սովորությունն է՝ անհամարձակությունը հանդգնության տանելով՝ գլուխը վեր առավ։

— Կը ներես, իշխանուհի, ես ոչ դեսպան եմ, ոչ թագավորական քաղաք կ'երթամ և ոչ Սպարապետեն եմ հուղարկված, և ոչ էլ Ներսեհ է իմ անունս։

— Զարմանք չէ,— ըսավ իշխանուհին անխռով միշտ՝ աչքերը իշխանին վրա ունենալով,— այսպիսի ժամանակ ուղևորաց սովորությունն է իրենց անձանց կարևորություն տալ, ապահովություն ունենալու համար ի վտանգաց, միայն զարմանալին հոն է, որ դու իշխանազուն եբիտասարդ, ձեզ, կերպարանքդ նաև կը վկայեն, այսպիսի քողերու տակ ջանաս ծածկել անձդ և անունդ։ Կարծեմ թե կը վայլե և պետք է, որ քու պատվույդ համար ազգով և անունով ներկայանաս։

— Ինչ բանի համար ծածկեմ անունս, ես Բաբկեն Սիսականի որդին Աշոտն եմ։

— Շատ բարի, ահա ինչպես կը վայելե Սյունյաց ազնվական ազգին որդվոց խոսիլ և համարձակ իրենց ճակատը բանալ ինչպես արժանի է քաջազանց։

Դարձյալ երկայն լռություն հաջորդեց, և իշխանուհին յուր բազմոցը նստելով, ձեռքով հրավիրեց իշխանը նստելու։ Աշոտ կուզեր ելնել, բայց ճամփան անել էր, և Վասկանուշ ցավելով աս անխոհեմ երիտասարդին վրա, հարկ իմացավ ձեռք կարկառել և զինքն այդ երկդիմի վիճակեն ազատել։

— Դու, իշխան, կարելի է այս կողմերս եկար իմանալու համար ազնվատոհմ օրիորդի մը վիճակը, որ ձեր կողմերեն մեզի ղրկվեր էր բարձրագույն հրամանավ։ Եթե այդ կ'ուզեիր իմանալ, կրնամ տեղեկություն տալ քեզ, թե Օրիորդը լավ է, հանգիստ և գոհ։

— Այդ կարելի չէ,— գոչեց Աշոտ հուզյալ և փրփրյալ,— ես լավ տեղեկություն ունիմ, որ իր դահիճները թշվառ աղջիկը այս ձմեռվան ցուրտերուն ու սառերուն լեռնելեռ ձգեցին, ձգձգեցին այս բանտը բերելով հասցնելու համար. և ես նա ազատելու կուգամ հոս։

— Այդ ամեն խոսքերը,— պատասխանեց իշխանուհին ծանր և մեղմ ձայնով,— կրնայիր հայտնել կամաց և հանդարտ կերպիվ. ի՞նչ պետք է, որ դուրսը ստորին վիճակի մարդիկ իմանան, թե ի՞նչ նյութի վրա կը դառնա մեր այս խոսակցությունը։ Բայց խնդրեմ, այդ օրիորդը ազատելու համար ի՞նչ միջոցներ միտքդ դրեր ես։

— Ամեն կարելի և անկարելի միջոցներ ձեռք պիտի առնում որպեսզի այդ գերութենեն զինքն ազատեմ,— ըսավ երիտասարդը կամաց, բայց դողացող ձայնիվ։

— Աշոտ իշխան, քու այդ խոսքերդ երիտասարդության անխոհեմություն և կիրք ունին, ես այնպես կը հուսայի, որ մեր խոսակցությունը քեզի էլ օգտակար լինի և այն անձին էլ, որուն պաշտպանության ելեր ես, օգտակար վախճան մը ունենար։ Բայց կը տեսնեմ, թե երբ մեկը «կարելի և անկարելի միջոցներ» ի գործ դնելու սպառնալիք կ'ընե, լավ ելք մը չի խոստանար ո՛ևիցե գործողության։

— Եթե ես էլ քեզի պես այդ սև հագուստներու տակ սառե սիրտ մը ունենայի, եթե ես էլ այդ հանդարտ և անխռով նայվածքը ունենայի, որ գիմացինը կը կարկամեցնե, կը սառեցնե և կը ծաղրե, իրոք երջանիկ իմ անձս կը համարեի։ Մի՞թե ես գոհ եմ այս թշվառ վիճակես, երկու տարի է, որ մոռացել եմ քուն և հանգստություն. իմ հորս և աներոջս մեջ գըրգռություն տեսած օրեսս երևակայեցի լինելիք ամեն դժբախտություն. ես, որ երկուքին առջև էլ խոսելու նաև համարձակություն չունեի, ամեն կողմ գիմեցի, կաթողիկոսը գնացի գտա անապատներու մեջ քաշված խընդրելու, որ հանձն առնու միջնորդել և թափվելիք արյունն արգիլել։ Նա զրպարտություններն դառնացած՝ «ես կաթողիկոս չեմ» պատասխանեց և ամեն խնդիրք մերժեց։ Եպիսկոպոսաց ժողովք կար, նոցա դիմեցի, տարտամ պատասխաններ առի. Բագրատունի և Արծրունի տյարց դիմեցի, վերջինները զվարճությանց և անառակությանց մեջ թաթախյալ ժամանակ չունեին ինձ ուշ դնելու, իսկ մյուսները թեպետ չէին հայտներ իրենց միտքը, բայց լավ կը համարեին Սյունյաց ներքին պատերազմը, որպեսզի նոցա տկարությենեն օգուտ քաղեն։ Պատերազմը սկսավ, ես

դասալիք զորական վատաբար հիվանդ ձևացա, որ այդ դժբախտ գործողության մեջ ձեռք չունենամ. և երբ այդ սոսկալի վերջն ունեցավ պատերազմը, իմացա, որ իմ նշանածս գազանի մը հետ պիտի ամուսնացնեն եղբայրները, և երբ նա դիմադրեց, կուսանաց վանքի որոշումն տվեր էին, դիմեցի Սյունյաց մետրապոլիտին, դիմեցի դարձյալ կաթողիկոսին, զիս գնացուցին։ Նոքա էլ հանդարտ, ծանր, կամաց խոսեցան հետս, զիս խոհեմության և համբերության և աստվածային կամաց հրնազանդության հորդորեցին, երիտասարդության եռանդ է, ըսին, սատանայի գրգիռ սրտիս մեջ նշմարեցին, աղոթք ընել և բժշկություն ինձ խոստացան իբրև թե իմ Զարուհվո համար զգացած սերս դիվահարություն էր, և այն միջոցին հանկարծ իմացա նույն կաթողիկոսին շրջակայից, թե իր հրամանով օրիորդը հեռավոր վանք մը հունաց սահմանագլուխը հուղարկեր էին։ Եվ հիմա դու, իշխանուհի, յուր բանտապետը, ինձ կ'ըսես, թե նա լավ է, հանգիստ և գոհ է, այո՛, այս բարձրաբերձ պարիսպներուն, այս երկաթապատ դռներուն, այս զինյալ պահապանաց և սպասավորաց մեջ անշուշտ կամավ ցույց տալու համար զիս բերել տրվիր. նա էլ՝ ինչպես դիակը գերեզմանին մեջ, լավ է, հանգիստ է և գոհ է. և այդ խեղճ աղջկան, որ կենդանի մեռել կ'ընեն, քեզ պես գեղեցիկ և քարասիրտ կափարիչ մը պակաս էր։

— Քու այս խոսքերդ թեպետ ուշ, բայց դարձյալ ժամանակին են, հոգ չէ, թե ես բանտապետ կամ գերեզմանի կափարիչ լինիմ, խնդիրը հոն է, թե դու ի՞նչ պիտի ընես, ի՞նչ է քու միտքդ։

— Իմ մի՛տքս, աղատել Զարուհին կամ մեռնիլ։

— Ամեն կը մեռնիմ ըսողները չեն մեռած, Աշոտ իշխան, ես շատեր կը ճանչեմ, որ կարծեր են, թե մահը վերահաս է և դեռ երկար տարիներ կ'ապրին, նոցա սիրտը նաև որ մեռած կը կարծվի, հանկարծ երբեմն մոնչյուններ կուտա, ես իմ պաշտոնիս պատճառով շատերուն խոստովանանքը լսած եմ, և աշխարհքս յուր թշվառությամբք կը ճանչեմ, և իմ քարի պես սիրտս կարծածեդ ավելի ձեզի պես թշվառներու համար գութ և կարեկցություն ունի, և թերևս... օգնություն մը նաև իմ կանացի տկար ձեռքս ընեմ ձեզ, եթե միայն խելոք վարվելու խոստմունք մը ընես և համբերել գիտնաս։

— Միշտ նույն երգը կը լսեմ, խելոք վարվիլ և համբերություն գիտնալ,— ըսավ Աշոտ հեգնությամբ և աղրաները կրճտելով և ոտք ելավ։ Իսկ իշխանուհին երկու սուր և հրամայական աչք վրան դարձնելով և սաստելով՝

— Նստե՛, անմիտ երիտասարդ,— ըսավ խստիվ ձայնով,— ձեր տարիքին միշտ հատուկ է կրքով շարժիլ և ի կորուստ դիմել. եթե ես քեզմե ամենափոքր երկյուղ ունենայի և վնասել ուզեի, ակնարկություն մը բավական էր ինձ քեզ կապել տալ և մինչև Պոլիս ղրկել. բայց իմ միտքս քեզ և այդ թշվառ աղջիկն էլ ազատել է։ Խոսք տո՛ւր ինձի համբերել մինչև գարուն, դառնալ քու երկիրդ, և ժամանակ տալ, որ բանակցիմ կաթողիկոսին հետ, և գարնան ե՛կ, և Զարուհին քուկդ է։

Աշոտ որ նախ այդ կնոջ հրամայող ձայնին տղու մը պես հնազանդեցավ և նստավ, երբ վերջի հուսադիր խոսքերն լսեց, տխուր երեսին դեղցավ և նստավ, երբ վերջի հուսադիր խոսքերն լսեց, տխուր երեսին փայլակի զվարթություն մը ծագեցավ, բայց շատ կարճ տևեց այդ զվարթությունը, վասնզի նշանված օրեն անհաջողություն անհաջողության վրա հասել էր, հիմա ինչ որ մեկը չէր կրցել, կին մը պիտի կրնա՞ ընել։

Իսկ Վասկանուշ, որ նորա երեսին ամեն շարժմունքը կը տեսներ, գուշակելով մտածությունը՝ ավելցուց.

— Այո՛, շատ զորավոր ձեռաց անկարելին՝ տկարներու կարելի կ'ընե աստված, միայն դու ինձ խոսք տուր հնազանդելու։

— Շատ բարի, ես խոսք էլ կուտամ, կ'երդնում նաև ինչ սրբություն որ կա երկրիս և երկնքին վրա, քու ամեն հրամաններուդ հնազանդելու, բայց դու էլ ինձ խոսք կուտա՞ս, որ Զարուհին ձեռացդ պիտի չի հանես, և իրեն վտանգ մը պիտի չի հանդիպի։

— Թշվա՞ռ երիտասարդ, դու իմ վրաս կը կասկածիս, վասնզի չ'ես ճանչեր զիս. քանի որ այս պարիսպները իրենց հիմանց վրա հաստատեցեր են, քանի որ ես կենդանի եմ, մեկը չի կրնար այդ աղջիկը իմ բանակաց մեջեն հափշտակել. և թե աստված իմ փափաքս կատարեց, աս ձեռոքս ես նորա սեղանին առջև քու քովդ կը բերեմ նշանածդ։

Այս խոսքերը աղնվական վսեմությամբ և վստահությամբ զրուցվեցան՝ այնպես ազդեցին երիտասարդ իշխանին վրա և այնպես ուրախությամբ լցուցին յուր սիրտը, որ ցնծության արցունքով ծունկի վրա եկած՝

— Դու գթած մայր մ'ես, դու թագուհի լինելու արժանի կին ես, դու պաշտելի էակ մ'ես, տո՛ւր, որ ձեռքդ անգամ մը պագնեմ։

— Միայն թե այս մեր խոսակցությունը խոստովանության գաղտնիք մնա։

— Հրամայե՛ ինչ որ կ'ուզես, հրամայե՛ կրակի և ջուրի մեջեն անցնիմ, միայն թե խոստմունքդ մի՛ մոռնար։

Եվ երկու ձեռաց մեջ իբրև թե գրկած այդ քնքուշ ձեռքը համբույրներով ծածկեց և արցունքով լվաց. երբ իշխանուհին ձեռքը քաշեց ու՝

— Բավական է, շափավորե ուրախությունդ,— ըսավ և ոտք ելավ։

Իշխանն էլ նույնպես ելավ, և դեպի դուռը գնալով՝ ետ դարձավ.

— Մայր իշխանուհի, կարելի է՞, որ ինձ շնորհ մ'էլ ընես։

— Եթե Զարուհին պիտի խնդրես տեսնել, անկարելի է. աստուծո սեղանին առջև միայն այդ կարելի է և գարնան։— Եվ քիչ մը մտածելեն վերջ,— Աշոտ իշխան, դուրսի սենյակը հանգչե, ես կաթողիկոսին նամակ մը գրել տամ, և որովհետև ձեր կողմերը կը գտնվի, իրեն կը հասցնես։

— Շատ բարի, մայր իշխանուհի։

— Աստված բարի ճանապարհ տա։

Եվ իշխանուհին գաղտնի դուռ մը բացավ և անհայտ եղավ։ Հազիվ կես ժամ վերջ պառավ կույս մը բերավ կնքյալ նամակ մը իշխանին տվավ։

ԳԼՈՒԽ ԺԶ

ԱՐԱՄԱՆՅԱԿԻ ԲԵՐԴԸ

Ինչպես լռիկ եկած էին մեր երկու ընկերները, նույնպես լռիկ կը դառնային, բայց ծերը իր ջորվույն վրա կորացյալ կը դիտեր շարունակ, որ երիտասարդ իշխանին ճակատը պարզյալ էր, այն դառնությունը և անհանդարտ հոգը, որ քիչ առաջ յուր երեսին վրա նկարյալ էր, անհետ եղած էր բոլորովին։ Երբեմն ձեռոք յուր նժույգին պարանոցը կը շոյեր, երբեմն զվարթ դեմքով գլուխը շուրջ դարձնելով բնության ծիծաղն իրեն թե կը փնտրեր, և հանկարծ գլուխը ետին դարձնելով՝

— Հայրի՛կ, այս ձեր մայր իշխանուհին սովորական կին չէ, ես նորա նման ոչ ոք չեմ տեսեր կյանքիս մեջ,— ըսավ։

— Այո, իշխան, բոլոր շրջակայքը՝ ամենքը ազգայինք և օտարք յուր իմաստության և առաքինության գովությունը կ'ընեն և կը հարգեն։ Իսկ մենք յուր ժողովուրդը և մեր ամենեն հետինը՝ աստուծմե ետքը, մեղա՜, մեղա՜, Աստվածամոր պես զինքն կը պաշտեինք պիտի ըսեի։

Ծերուն այս վկայությունն էլ խոր մտածության մեջ թաղեց իշխանը և հազիվ թե Սմբատավան հասան, առանց ձիեն իջնելու հրամայեց յուր փոքրիկ գունդին, որ հեծնեն, և ավանապետին քսակ մը տալով խնդրեց քաղցրությամբ, որ գո՛ ընե յուր մարդիկը և փոխանակ Արտահանի ճամփան բռնելու, Կարուց ճամփան բռնեց, որովհետև այնպես իմացեր էր, թե կաթողիկոսը Բագարան երթալու միտք ուներ Բուղայի երկյուղեն, և անկից Հունաց սահման անցնիլ Կարնո քաղաք, ինք կը հուսար, թե Բագարան յուր նամակը կրնար իրեն հասցնել։

Ուստի երբ Բագրատունյաց քառաքը մտավ և միջնաբերդը գնաց

յուր անվանակից Աշոտ Բագրատունին տեսնելու, նա շատ այլայլված գտավ, վասնզի երկու լուր մեկտեղ առած էր, նախ Հովհաննես կաթողիկոսին մահը, իսկ երկրորդ Բուղայե հասած հրաման մը, որ ստիպավ՝ հայրը՝ Սմբատ Սպարապետը կ'ուզեր, որ Մոկաց երկիրն էր։ Ուստի այս լուրերը հաղորդելու համար հորը սուրհանդակ մը ղրկելեն վերջ, Բագրատունին սկսավ գանգտիլ ժամանակին դժվարության վրա, մանավանդ, որ սասնեցիք բոլոր յուր և հորը այնչափ խնամքը՝ հարդարյալ պատրաստությունքը հիմնահատակ ըրեր էին։ Եվ երբ իրենք կը հուսային այդ ճիվաղին՝ Բուղայի սիրտը կակղացնել ամեն օր նոր-նոր և անհավատալի հանգգնությամբ ամեն խորհուրդ վեր ի վայր կը շրջեին։

— Չի լսեցի՞ր այդ սասնեցվոց նոր քաջագործությունը։

— Ո՛չ. նո՞ր բան կա։

— Խումբ մը այս լեռնականներեն իրենց սարերուն գագաթներեն կ'իջնեն, կուգան մինչև Դվին, և հոն համարյա Բուղայի աչաց առջև երեք հայ նախարար, որք Նկան բերդին և Աշոտ Այծրունվո անձնատուր լինելուն պատճառ եղան Մուշեղ Վահևունի, Վահրամ Տրունի և Վահրամ թիկնապահ, մահապարտաց սահմանյալ կախաղանը կը հանեն և բոլոր Դվին՝ հայ ու տաճիկ զարմանքով կը տեսնեն այս երեք իշխանաց դիակները կուրծքերնեն իրենց մատնության հանցանքը և օրինավորապես դատավորաց տվյալ դատակնիքը, որուն հնազանդելով Հովնան խութեցվոց զորավարը կը գործադրե նույն վճիռը։ Կրնաս երևակայել հայ ժողովրդյան լռիկ և անձայն ուրախությունը, բայց նույնպես երևակայե այդ անիծյալ Բուղայի կատաղությունը և միանգամայն սարսափը, որուն առջի հրամանը եղեր է երեք-չորս մեծամեծ զորաց գունդեր ղրկել այս սասնցվոց վրա, ուր որ հանդիպին ողջ կամ մեռած իրեն բերել։ Այս առաջավոտ մասնավոր սուրհանդակ մը այս լուրը ինձի կը բերե, քիչ մը վերջը բռնավորին սուրհանդակը ինձ հրաման կը բերե, որ զհայրս՝ սպարապետը կ'ուզե այս անօրենը։ Ահա բոլոր վիճակը, ուր հիմա կը գտնվինք։ Աստված ինք հասնի, այս գարնան դուռները տեսնենք մեզ ի՞նչ գառնության ազբյուր պիտի բանան։

Աշոտ Սյունի, կաթողիկոսին մահը լսելով հարկ համարեցավ երթալ Սյունիք, ուստի իր հրաժարական ողջույնը տալով Բագրատունվույն, ելավ ճամփա և սառած Ախուրյանին վրայեն անցավ դիմացի դաշտավայրը, հազիվ մեկ քանի ժամվան ճամփա առավ սյունեցի հեծելագունդը, և ահա թարձանց վրայեն տեսնվեցավ Արագածի ստորոտը երկու խումբ, որ դիմացեդիմաց կանգնած զիրար կը դիտեին, փոքրիկ խումբը, որ ամուր դիրք մը առած էր բլրո մը վրա հայտնի հայոց գունդ մ'էր, իսկ մյուսը արաբացի էր յուր ճերմակ փաթթոցներով։ Աշոտ առանց դադարելու

«երթանք, տղաք, մեր եղբարց օգնենք» գոչեց, և ձիերը մտրակեցին դեպի բլուրը։ Աշոտ առջևին սուրը խաչաձև կը փայլեցներ, և ահա բոլոր խումբը շարժեցավ ընդունելու փոքրիկ օգնությունը։ Ինչպես դատեր էր հեռվանց, ճիշտ նույնպես սակավաթիվ էր խումբը, հարյուր հիսունի չափ հետևակ սասունցիք էին, և երեսունի չափ հեծյալք դրեթե ամենքը ազնվատոհմք, քաջ և կորովի մարդիկ. երեք հոգի առանձին կեցած այս նորեկ ընկերաց կը նայեին դիտող աչք, և այս երեք անձինք մեզ քաջածանոթ Հովնան, Գուրգեն և Խոսրով էին։ Երբ Աշոտ մոտեցավ այս խմբանին սիրալիր ընդունելություն զտավ, և Գուրգեն հայտնեց, թե իրենք հարձակելու որոշմունքն բրած էին արդեն, բայց քիչ մը պիտի սպասեին, որ նոր եկող եղբարց ձիանքը հոգնություն առնեն։ Սիրով ընդունեցավ Աշոտ այս պատիվը և կես ժամու չափ ժամանակ ուրախ-զվարթ խոսակցելեն վերջ այս երկու հարյուր հոգին՝ հետևակները մեջտեղին, ձիավորները երկու կողմեն բլուրն ի վար հարձակեցան սաստկությամբ։ Թշնամիք, որ հազար հոգիե ավելի էին, ուրախության ձայներով դիմավորեցին զիրենք, հաղթությունն ապահով համարելով, բայց երբ իրենց բոլոր հարձակումները անօգուտ տեսան այդ փոքրիկ հետևակախումբին դեմ, որուն նիզակներու անտառը կը քայլեր և ամեն բան կը խորտակեր յուր առաջ, երբ աջ թևին վրա Գուրգեն հսկա հասակավ յուր ահագին սուրը կը շարժեր տրդատաբար և ամեն ընդդիմակաց կը կործաներ և կը տապալեր, ձախ կողմը սյունեցիք առյուծի պես կը պատերազմեին և Աշոտ՝ «տղաք, սյունեցիք, ձեզ տեսնեմ, ամոթով չելնենք մեր եղբարց քով» ըսելով թշնամյաց վրա կոտորած կոտորածի կը հասցներ։ Եվ վերջապես գոհությամբ տեսան հայք, որ արաբացի գունդը տկարացած սկսավ քաշվիլ և նահանջել. ան ատեն իրենք էլ դադրեցան հալածելեն և տեսնելով, թե երկու միայն անկյալ ունեին և քանի մը թեթև վիրավոր, ու թշնամին երեք հարյուրի չափ մարդ կորուսած էր, փառք տվին աստուծո և քաշվեցան դեպ Ախուրյան։ Աշոտ կուզեր յուր ճամփան շարունակել, բայց Գուրգեն և Հովնան զինք համոզեցին, որ իրենց ընկերանա և չի բաժնվի, ոչ միայն, որ առջևը վտանգը մեծ էր, այլ նաև, որ իրենք որոշած էին վրեժխնդիր գունդ մը կազմվիլ հայ ազգի և հավատքի նախատինքը քավել, թշնամի և մատնիչ պատուհասել, և թե արժան էր, որ Աշոտ պես քաջ երիտասարդ մը Սյունյաց նահանգը Տարոնո և Վասպուրականի հետ իրենց մեջ ներկայացներ։ Իսկ սյունեցի իշխանը ինքնիրեն հաշիվ մ'ըրավ, որ մինչև գարնան ոչինչ գործ չուներ, սիրով հանձն առավ այդ ընկերությունը և բռնեցին Կարսի ճամփան. անցան Ախուրյան, որ սառած յուր բոլոր երկայնության մեջ ահագին կամուրջ մ'էր ճանապարհորդաց և գիշերով հասան Արքինայի ավանը։

Ուրախ-զվարթ գիշեր մը անցուցին, թշնամվույն ավարեն բաժին հանեցին արգինացվոց, ամեն կողմ պահապաններ դնելով լավ մը հանգստացան, և դեռ արշալույս չեղած լուր հասավ, թե թշնամի մեծ խումբ դեպի Կարս կը դիմեր, իրենց ճամփայն արգիլելու համար։ Որոշեցին, որ Արտահանու ճամփով հունաց սահմանագլխեն շարունակեն ճամփանին, իսկ եթե թշնամի հասնի և համարձակի պատերազմիլ՝ ջախջախեն և անցնեն առաջ։ Այսպես բոլոր երկու օր ճանապարհորդելով առանց արգելքի հասան Արտահան. հոն անկարծելի արգելք մը դարձյալ զիրենք կասեցուց։

Գուրգեն իբրև հառաջապահ յուր փոքրիկ գնդով կ'երթար ժամու մը ճանապարհ հեռավորությամբ, հարյուր ձիավոր զորաց հունական խումբ մը հանկարծ հանդուգն հարձակմամբ շրջապատելով զինք հրամայեց անձնատուր լինիլ։ Գուրգենի պես մարդու այսպիսի առաջարկությունը անտանելի էր, բայց խոհեմություն նաև իրեն պարտք համարելով և չուզելով տաճկաց թշնամության վրա ավելացնել հունաց թշնամությունը՝ ջանաց համոզել քաղցր խոսքերով հույն գնդին զորավարը, թե՝ «Անհավատից ձեռքեն հալածյալ կայսեր սահմաններուն մեջ՝ նորա պաշտպանության կը դիմեին, և երբեք թշնամության գործ ընել չէին կրնար մտքեանցնել և ոչ հունական իշխանության ծանրանալ և թե ինք ևս հունական իշխան և հպատակ է կայսեր և թե գավառի մը ամբողջ տերն էր նույն կայսեր շնորհիվ»։ Բայց երբ տեսավ, թե հույնք յուր քաջությունը երկյուղի նշան համարելով սկսան բռնանալ և իր մարդիկը զինաթափ ընել ջանալ, և նոցա գլխավորը համարձակեցավ զեն ի ձեռին իր վրա հարձակելով սուրն ուզելու, ան ատեն՝

— Սո՞ւր կ'ուզեք, առեք ձեզի սուր, հապա՜, տղաք, ձեզ տեսնեմ, սո՞ւր սոցա վրա,— գոչեց Գուրգեն։

Եվ նախ գլխավորն ինք զոհ զնաց յուր ահագին սրույն, և քանի մը վայրկյանի մեջ այդ հունական խումբը ցիրուցան դաշտին վրան քսանե ավելի մեռել կը թողուր, և մնացորդը վայրավատին կը փախչեին։

Իսկ երբ Հովնան և մեծ խումբը հասան տեսան եղածը, և Գուրգեն, որ քանի մի կալանավոր կը հարցաքներ, հայտնի եղավ այս գործողության բուն պատճառն։ Գրիգոր, Բագրատունյաց ցեղեն մեկը, Իշխանիկ մականվանյալ, Արամանյակ և Աշխարհաբերդ ամրոցներու կը տիրեր ժառանգությամբ ճիշտ հունաց սահմանագլխուն վրա։ Եվ այսպիսի անորոշ դիրքի մեջ ոչ կայսեր հարկ կուտար և ոչ ամիրապետին։ Հունաց Կարնո զորավարն այսպիսի անկարգության վերջ տալ ուզելով եկեր պաշարեր էր Արամանյակ բերդը։ Իր զորքերեն հարյուրի չափ պահապանաց խումբ մը հանդիպելով Գուրգենի և ջարդուբուրդ փախստական,

պիտի տաներին լուրը բանակը և պիտի գրգռեին Գուրգենյանց ու Հովնանյանց դեմ նոցա բոլոր զորությունը։ Եվ այսպես մեր փոքրիկ գունդը, որ հայկական արդարության և վրեժխնդրության պաշտոն էր ստանձնել, ձախ թևին վրա արաբացիքն ուներ և աջ թևին վրա հույներն։ Խորհուրդի նստան մեր չորս զորավարները, որոց թիվը զորաց թվույն հետ բազդատյալ շատ էր և չափազանց, բայց չորսն էլ իրենց օրինակով կը վարեին զորքը, որք անմոռուչ և սիրով կ'երթային, ո՛ւր որ սոքա զիրենք տաներին։

Գուրգեն համառոտ մը եղածը և առած տեղեկությունքը պատմելեն վերջ.

— Հիմա, իմ կարծիքս էլ ըրուցեմ, և դուք էլ ձեր որոշմունքը հայտնեցեք, վասնզի ժամանակ չունինք կորսնցնելու, ետ դառնալ ինձ անկարելի կը թվի, ուստի պետք է առաջ անցնիլ և, եթե հարկի լինի, մեր ճամփան արգիլողներուն վրայեն կոխելով անցնիլ։ Ես այս հույները կը ճանչեմ, ինչպես դու էլ Հովնան, ոչ երբեք ամուր զինվոր են, ինչպես խոսելու, նույնպես փախչելու մեջ վարպետ են, իսկ հաջողության մեջ հիմար և ամբարտավան, իրենք մեր վրա չի հարձակած մենք հարձակինք նոցա վրա Արամանյակի և մեր մեջ զիրենք պաշարենք, հաղթությունն ապահով է։

— Բայց ի՞նչչափ է այս հունաց զնդին թիվը,— հարցուց Խոսրով Ակեացի,— գոնե այդ իմանայինք։

— Կալանավորներե առած տեղեկությանց նայելով՝ շատ չեն, երեք հազարե մինչև հինգ հազար առ առավելն, հունաց մեծաբանության էլ եթե բաժինն հաննենք երեք հազար նաև չկարծեմ թե լինին, վասնզի այս ազգը միշտ մեծ և բարձրեն կը խոսի։

— Իշխանիկի զորքն ի՞նչչափ կը կարծես,— հարցուց դարձյալ Խոսրով։

— Հարյուր, շատ, շատ երկու հարյուր հոգի, բայց ընտիր տղամարդիկ են, ես զիրենք կը ճանչեմ։

— Ի՞նչ կեցեր ենք ուրեմն,— գոչեց Աշոտ,— երթա՞նք, ժամանակ չի կորսնցնենք։

— Բայց Հովնան, դու բան չես խոսիր,— ըսավ Գուրգեն։

— Տղոց քիչ մը կերակուր հրամայենք և հարձակինք,— ըսավ Հովնան և ելավ երթալու զորաց քով։

— Միամի՞տ և մի՞աբա՞ն, այսպես միշտ պետք է լինիլ,— ըրուցեց Գուրգեն։

— Արամանյակի բերդին մեջ լավ ընթրիք մը կ'ընենք այս գիշեր,— ըսավ Աշոտ ուրախությամբ և ձեռքերը շփելով։

— Ապրի՞ս տղա,— պատասխանեց Գուրգեն աջ և ահագին բազուկը տարածելով և ձգելով յուր լայն կուրծքին վրա զԱշոտ,— մեր փոքրիկ բանակին ուրախություն ղրկեց քեզ աստված, նայե՛ Հովնանու անգամ փոքր ժպիտ բերիր դու երեսին, և այս մեծ շնորհք է։ Քե՛զ պես պետք էին լինիլ հայ իշխանազունք։ Միշտ դու ուրախ ես այսպես և միշտ քաջ, այնպես չէ՞։

— Սյունիք միշտ քաջ են։ Իսկ իմ ուրախությունս երկայն ամիսներե ի վեր կորել էր և փախել. աստված երկար կյանք և երջանկություն տա՛ այն կնոջ, այն հրեշտակին, որ իմ սրտիս նորեն զվարթություն և հույս բերավ։ Խմե՛նք նորա կենաց։ Եվ այս ըսելով թիկնապահին ձեռքեն առավ արծաթե մեծ բաժակը և պարպեց։

Այս խոսքին վրա փոքր լռություն հաջորդեց, Հովնան և Գուրգեն երիտասարդին երեսը՝ և ետքը առաջնին նայեցան, վասնզի երկուքն էլ իրենց սրտին մեջ թշվառ սիրո վերքն զգացին, Խոսրով միայն անշփոթ և պատառը բերանը՝ բաժակը ձեռքն առավ։

— Այդ կնոջ կենա՞ցն,— ըսավ,— որովհետև հրեշտակ զինքն անվանեցիր։

— Աստվա՞ծ վկա, որ հրեշտակ է նա, ես այդպիսի կին չէի տեսել կենացս մեջ, ես զինքը ժամ մը միայն տեսա, բայց բոլոր շրջակայք՝ մեծն ու պզտիկ զինք կ'օրհնեն ու կը գովաբանեն. մայր թշվառներու և ուրախություն կը բերե տխուր երիտասարդ սրտերու։

— Հրեշտակին կենաց,— ըսավ Հովնան և ըստ յուր սովորության գավաթ մը ջուր խմեց։

— Ջո՞ւր կը խմես,— հարցուց Աշոտ զարմացյալ։

— Քանի մը տարի կա, որ ես ջուր կը խմեմ։ Բայց երթանք, ահա տղաքը պատրաստ են,— ըսավ և ելավ։

Հազիվ թե մեր փոքրիկ խումբը կես ժամու չափ քալեցին, և ահա երևցավ բազմաթիվ՝ հազարի չափ հունական գունդը, որ կուգար. և ահա Գուրգենի մեծ ձայնը, որ առջևեն գոչեց լսեցնելով ամենուն.

— Փա՞ռք տանք աստուծո, հայու տղա՛ք, թշնամին քիչ-քիչ մեր վրա կ'ուղարկե։

Իսկ Հովնան, դառնալով իր խութեցվոց, կ'ըսեր.

— Նետերը նախ, նիզակներն հետո, և վերջը, վերջը սուրերը, ձեղ

տեսնեմ, քաջ սասնայք, պարապ նետ մը պետք չէ ելնե ձեր աղեղներեն և ոչ հարված մը անօգուտ։

Իրոք, երբ թշնամին մոտեցավ. սաստիկ նետաձգություն հարյուր հիսուն վիրավոր հիմարեցուց, և գոհ մը փոքրիկ հայ խումբին՝ ժամանակ չի տվավ նոցա ոգի առնելու և գործին սկիզբն ու վերջը կուտորած և փաչուստ եղավ. ավելորդ է պատմել, թե ի՛նչ ըրին Գուրգեն, Հովնան, Խոսրով և Աշոտ. իրենց քրտինքը թշնամվույն արյունին հետ խառնվեցավ և ձյունապատ երկիրը շորս հարյուրի չափ դիակամբ ծածկվեցավ ու կարմիր ներկվեցավ։ Եվ երբ կռիվը, որ կես ժամ տևեց, վերջացավ, և հայք իրենց կորուստը քննելու ելան, տեսան, որ քանի մը վիրավոր միայն ունին, և մեռած ոք չի կար. փառք տվին աստուծո՝ տվողին հաղթության, և շարունակեցին իրենց ընթացքը, որպեսզի ժամանակ չի տան թշնամվույն սթափվելու։

Եվ իրոք հունաց փախստական զորքերը իրենց բանակը գնացին պարտության լուրը տանելու, ահով և վախով լցուցին ամենուն սիրտը, ոչ միայն հայ խումբին զորությունն անպարտելի էր, այլ նաև ամեն մեկուն հատակն ահագին, ոչ միայն իրենց երեսին գույնը ճերմակ չէր, այլ նաև սև էր սատանայի երեսի պես, և որ մեծն էր ոչ թե հարյուր, երկու հարյուր էր իրենց թիվը, այլ ահագին բազմություն էին։ Այս չափազանց լուրը զորավարին և բոլոր զորաց երբ հաղորդեցին փախստականք, վրհատությունը տիրեց, և հրաման եղավ շուտ մը բանակը վերցնելու և Կարնո ճամփան բռնելու. և այնպիսի արագությամբ շարժեցան հույնք, որ հազիվ թե կառուորը տանելով՝ շատ ավար թողին Արամանյակի առջև, հայք քանի մը հետամնաց կալանավորեցին, և Գուրգեն հրամայեց արձակել։

Բերդականք չի կարենալով մեկնել թշնամվույն փախուստը և նոր եկող փոքրիկ խումբը, էր զարմանային և երբ մարդ հանել ու եղածն իմանալ կը մտածեին, Գուրգեն յուր թիկնապահներեն մեկը ղրկեց բերդը իմացնելու Իշխանիկին բոլոր պատահարը, որ մեծ ուրախությամբ իջավ եկավ և հրավիրեց ներս յուր քաջ ազգակիցքն ու ազատարարքը։ Գիշերն սկսել էր վրա հասնիլ, երբ ձիոց և մարդկանց ոտքերու դոփյունը հնչեց բերդին կամարներուն տակ, և Աշոտ ուրախ-զվարթ կը գոչեր.

— Ես ձեզի չըսի՞, որ այս գիշեր Արամանյակի իշխանին հյուրն ենք մենք։ Ահա իմ գուշակությունս կատարեցավ։

— Ո՞վ է այս երիտասարդ իշխանը,— հարցուց Իշխանիկ Գուրգենին։

— Մեր փոքր բանակին մեծ ուրախությունն է,— պատասխանեց Գուրգեն։

— Եթե արդյունքը կը ցցնե իրի մը մեծությունը, ես ձեր բանակին չափ մեծ բանակ չեմ տեսեր մինչև այսօր, ձեր ուրախությունն էլ ըստ այնմ կը չափեմ։

— Սա Բաբկեն Սիսականի որդի Աշոտն է։ Քաջ, զվարթ, սիրուն երիտասարդ մ'է, յուր կերպարանքին գեղեցկության վրա չեմ խոսիր, միայն լավ նայե՛ երեսին և աչքերուն, գործդ միշտ հաջող կերթա։

— Ըսե՞ս, որ դուք ոչ միայն ուրախություն գտեր եք այս տղուն հետ, այլև բարեբախտություն։

— Հայաստանի այս վիճակին մեջ, բարեբախտություն բառը հայու մը չի հարմարիր։ Բայց այսօր հաջողության օր է, հանգչինք և ուրախ լինինք. վաղվան մնան հոգ ու մտածմունք։

Տանտերը ջուր բերել տվավ, լվացվեցան, մաքրվեցան հյուրերը, բերդին դահլիճները լուսավորվեցան, վառարանին մեջ հուրը կը փայլեր ու կը ճարճատեր, գուսանք և երաժշտական ձայներ կը հնչեին, սեղանն ամեն տեսակ խորտիկներով՝ ընտիր գինիներով և ազնիվ պտուղներով ճոխ էր ու զարդարուն։

Իշխանիկն ամեն տեղ էր. վար կիջներ նույն միջոցին յուր մատակարարին նաև չի վստահանալով, աչքով կ'ուզեր տեսնել, թե զորականաց առատապես ինչպես հրամայած էր ամեն կերակուր և ըմպելիք և հանգստյան խշտիք պատրաստվա՞ծ էին, պակասն ավելիով կը լեցներ և կրկին-կրկին կը պատվիրեր, որ այս քաջ և ազատարար ազգայնոց բան մը չի խնայվի։

Երբ սեղանի նստան, և տանտերը հրամայեցեք ըսելով ձեռքը երկընցուց կերակուրի, Գուրգեն թևեն բռնելով և արգիլելով ձեռք մխելու՝

— Վահրիճ,— գոչեց,— ո՞ւր է Հովնան եղբայր։

— Վարն է, Սասնցվոց հետ հաց կ'ուտե։

— Եթե նա հոս չէ, ես հաց կրնա՞մ ուտել այսօր։

— Ո՞վ է նա, երթամ զինք բերելու,— ըսավ Իշխանիկ և ելավ։ Գուրգեն նույնպես ելավ ետևեն և երբ տեսավ, որ Հովնան կը դժկամակեր գալու, վասնզի հոն վարը ավելի հանգիստ էր։

— Իմ սիրույս համար, Հովնան, սա այս գիշերվան հանգստությունդ ավրե՛,— ըսելով Գուրգեն Հովնանի թևեն առավ։

— Քու սիրույդ կարելի չէ դեմ դնել, ինչպես քու բազկիդ զորության, ո՞վ Գուրգեն,— պատասխանեց Հովնան.— և տարին չի կատարած կը հուսամ, թե բոլոր Հայաստան զքեզ պիտի ճանչե։

— Ուրախ եմ գուշակությանդ վրա, երթանք զվարճանանք. ձմեռվան մեջ նաև երկինք զվարթ օրեր ունի, մեր սրտերն ինչու՞ չունենան, Հովնան։

Եվ այսպես սեղանին քով նստան բոլորվեցան ամենքը, կերան, խըմեցին, զվարճացան։ Հովնան նաև զվարթ կ'երևեր, իր տխուր երեսին վրա ժպիտ մը կար. իսկ երբ երաժիշտք կը հնչեցնեին իրենց նվագարանները, և երգիչը հին երգ մը կերգեր, որու վերջի տողերը կը կրկնվեին.

Անցյալ ավուրց քաղցր հիշատակք մեզ դարձե՛ք.
Քնած վարդեր, գարուն եկավ, ծաղկեցե՛ք,
Սեր և հրճվանք անգամ մի ևս արթընցե՛ք,

աչքերը խփեց, վասնզի կը հիշեր որտի արտասվոք քսանյոթ տարի առաջ հրեշտակային գեղեցիկ և հստակ ձայն մը վարդենյաց պարտեզի մը մեջ այդ երգը մրմնջեր էր։ Մի՞թե անցյալ ավուրք կրնային դառնալ, գարունը մեռած վարդին համար կրնա՞ր կյանք տալ, սեր և հրճվանք մի՞թե գերեզմանեն կրնային հարություն առնել։ Այս էին յուր խորհրդածությունքը, երբ աչքերը գոց՝ քուն ձևացավ, և մարդ մը միայն կար, որ յուր ամեն շարժմունքը կը դիտեր, կը տեսներ, վասնզի նա միայն գիտեր յուր գաղտնիքը. այդ մարդը Խոսրով Ակեացին էր, որ զնա ճանչցած վայրկենեն համարմունքն օրավուր կ'ավելնար, տեսնելով նորա անշահասիրությունը, հայրենյաց և արդարության անձնվիրությունը և փառաց, և տնձնդյուրության արհամարհանքը։

Խնջույքը կ'երկարեին, Հովնան ակնարկ ըրավ Գուրգենի, որ զինք թողու, և գնաց իր սասնեցվոց քով իր խշտին ընկողմանելու։ Իսկ Խոսրով՝ Սյունի իշխանին կը զվարճաբաներ, կ'ընտանենար, որպեսզի իմանար գաղտնիքը այն հրեշտակին, որուն կենաց այնչափ եռանդով, փափագով գինի խմած էին նույն օրը իրենց աղքատիկ և ձյունեղեն սեղանին վրա։

ԳԼՈՒԽ ԺԷ

ՔՍԱՆՅՈԹ ՏԱՐԻ՝

— Բայց այդ Հովնան ո՞վ է, այդ սասնցվոց զորավարը. տեսա զինք պատերազմի մեջ քաջ, բայց երբ ընկերության մեջ է, դա զամենքը կը սառեցնե, եթե խոսի, ակամա կը խոսի, ծիծաղը նաև կարծես թե հեգնություն մ'է. գինի բերանը չի դներ. նվագարան, երգ օրորի ձայն են իրեն համար։ Բայց պետք է խոստովանիլ, որ մեծ տարբերություն կա իր և իր լեռնականաց մեջ, խոսքը, կերպը, մտածությանց խելոքությունը, ջարժմանց զգուշավորությունը, վերջապես իր ամեն վարմունքն հայտնի կ'ընեն, թե բարձր մարդ է, և ես կ'ընդունիմ այս մարդը գործքի, պատերազմի գլուխ լավ՝ բայց խնջույից զվարճության մեջ քան մը չարժեր. լա՛վ ըրավ, որ գնաց։

Այսպես կը խոսեր Աշոտ կամաց ձայնով Խոսրովու հետ, և նա պատասխանեց.

— Դու այդ մարդը լավ կը դատես, այդ մարդը զվարճության մարդ չէ, միայն գործի մարդ է. բայց տե՛ս, եթե նա ուզեր, մեր նախարարաց կարգը կ'անցներ և շատերեն էլ կը գերազանցեր, վասնզի յուր լեռնցիք այնպես կը հնազանդին և զինք կը սիրեն, որ եթե մեռնիլ հրամայե՝ կը մեռնին։ Տե՛ս, Սասուն ո՞ւր, մենք ո՞ւր, Դվին ո՞ւր, բայց երեք շարագործ կախելու համար ամեն վտանգ հանձն կ'առնուն այդ Սասնի տըղայք և իրեն հետ կ'երթան այդ անծանոթ երկիրներ, ձյունին, ցուրտին, սառին, որպեսզի Հովնանու կամքը կատարվի։

— Բայց ի՞նչ հասկանամ Դվինի դուռը այդ մարդիկը կախելեն, առջի ծառը մի՞թե հարմար չէ մատնիչ մը, չարագործ մը կախելու համար։

— Մեծ տարբերություն կա Բուղայի աչաց առջև տանիլ կախել դավաճան հայը, որ նորա անզգամությանց գործիք եղավ՝ անապատի մը մեջ կախելեն։ Դավաճաններու իմաց տալ է, թե կա այդ մեռյալ կարծված Հայաստանի մեջ դատաստան մը, որ կը հսկե, կը դատե, կը վճռե և կը գործադրե։

— Ինչո՞ւ ուրեմն Աշոտ Բագրատունի այդ բանին համար գանգըտեցավ։

— Աշոտ և յուր հայրն սպարապետը հանելուկ մ'են, ի՞նչ կուզեն, ի՞նչ կը մտածեն, աստված միայն գիտե. մեր ճամփուն և նոցա ճամփուն մեջ ահագին հեռավորություն կա։ Բայց այսպես դարձյալ, Հովնան միշտ կ'ըսե, թե եղածեն՝ երևույթեն մարդ դատապարտել պետք չէ, այլ հանցանքի ապացույցը ձեռք ունենալու և այնպես պատժելու է։ Եվ այդ բանին համար Բուղայի դիվանեն՝ այդ երեք հանցավորներուն կնքյալ թուղթը ձեռք անցնելով դատապարտել տվավ Աշոտ Արծրունվույն մատնիչները։ Բայց դու ինձ այն զրուցե, թե այսպես երիտասարդ՝ Սյունյաց երկիրը թողել ու՞ր ելեր ես, ի՞նչ է, որ զքեզ այսպես կը շրջագայե։ Ո՞վ է այն կինը, որ այսօր մեզ այնչափ գովեցիր։

— Այդ կինը կուսանաց վանքի մայրապետ մ'է։

— Վասկանուշ է յուր անունը։

— Դու ուսկի՞ց գիտես։

— Բագրատունյաց ցեղեն է։

— Դու կը ճանչե՞ս զինք ուրեմն։

— Այո, շատերեն լավ կը ճանչեմ։

— Իրավունք չունե՞ի զինք այնչափ գովելու։

— Բայց դու ի՞նչ տեսար։

— Ի՞նչ տեսա. կին մը տեսա, որ իր իշխանության տակ գտնվող ամենքը իր իմաստությունը, իր առաքինությունը, իր արդարությունը կը գովեին. բոլոր Արտանուշի գավառը և շրջակայքը իբրև Թագուհի զինք կը հարգեն։ Կա բան մ'էլ, որ հիմա չեմ կրնար զրուցել։

Խոսրով այս միայն կուզեր իմանալ, ուստի լռեց, և իր ուշադրությունը դարձուց Գուրգենի և Իշխանիկի ուշադրության։

— Ի՞նչ անամոթ մարդիկ են այդ հույները,— կ'ըսեր Գուրգեն,— որովհետև ես տարի մը չերևեցա, կայսեր հրովարտակավ իմ արյանց և քրտնաց տրիտուր պարգևյալ Թորթում կ'ելնեն կը հափշտակե՞ն. բայց աստված ինձ տված է այս բազուկը, որ գիտե ջախջախել, և այս սուրը, որ գիտե հոշոտել, այս հիմարները այսչա՞փ շուտով մոռցան Գուրգեն։ Վաղը ես Թորթում եմ։

— Ե՛րբ և ո՛ւր կուզես քեզի հետ եմ,— կըսեր Իշխանիկը,— միայն իմ ղրկած ձիավորքս հունաց բանակին ետևեն դեռ չի դարձան։

— Այդ կը նշանակե, որ վատ հույները մինչև Կարին կը փախչին, հազարավորք՝ երկու հարյուր մարդու առջևեն։ Ա՜խ, հայոց ազգ, այս ինչ անեծք է քու վրադ, որ այսպիսի անարգ ու վատթար պետության ստրուկ և գերի ես դարձեր... Վաղն ուրեմն կը կարգադրենք, թե ի՞նչ պիտի ընենք,— ըսավ Գուրգեն և ելավ, և ամենքը ընացին ննջելու։

Գուրգենի գուշակությունը ճիշտ էր, հույները Կարինի ճամփան առյալ կ'երթային. այս լուրը հազիվ թե իմացավ Բագրատունի Իշխանիկը և գնաց հաղորդելու Գուրգենի, ահա հետևակ գրաբեր մը կը հասներ Արտանուշ գավառեն նամակավ, որ արտորոնք օգնություն կը խնդրեր արաբացի ավազակաց դեմ, որ հանկարծ մտեր երկիրը իրենց սովորական բարբարոսությամբ ամեն չարիք կը հասցնեին գյուղացվոց և Սմբատավան պաշարել էին։

Նույն միջոցին երբ նամակը կը կարդար Իշխանիկը, Հովնան, Խոսրով և Աշոտ Գուրգենի սենյակը կը մտնեին. հունաց փախուստը ամենն էլ գիտեին։

Եվ ահա Իշխանիկը նամակը բարձրաձայն իրենց կարդաց և ավելցուց.

— Ահա վիճակը, պատվական բարեկամներ, ես չեմ կրնար անօգնական թողուլ դրացի գավառ մը, որուն բոլոր բնակիչքը հայ են և ինձի կը դիմեն, ոչ միայն իբրև հայու, այլև Բագրատունվո, վասնզի, ինչպես

ձեզ հայտնի է, այս գավառը անհիշատակ ժամանակներե ի վեր Բագրատունյաց առաջին սեփականությունն է։

— Ո՞վ է տեր երկրին, ո՞վ գրեր է այդ, ո՞վ է ստորագրեր այդ նամակին,— հարցուց Գուրգեն։

— Ստորագրողը «Վասկանուշ Բագրատունի, մայրապետ Աստվածամայր վանուց Արտանուշի»։ Այս կինը հորեղբոր զավակն է Սպարապետին, հռչակավոր իմաստությամբ և առաքինությամբ, Տայոց և թե Բարձր Հայոց նահանգներու մեջ։

— Ի՞նչ կեցեր կը դանդաղինք, երթա՞նք,— ըսավ Աշոտ և ոտք ելավ։

— Կեցցե՛ս, Աշոտ,— կ'ըսեր Գուրգեն ծիծաղելով,— այս կինն էլ դի՛ր քու մյուս կնոջ քով, որու կենաց մեզ երեկ գինի խմցուցիր։

— Նույն կինն է՞, պետք չէ ժամանակ կորսնցնել,— կ'ըսեր։

Այս բոլոր խոսակցությանց մեջ Խոսրով, որ բերան չի բացավ, ըզՀովնան կը զններ, որ Վասկանուշ անունին փոքրիկ աննշմարելի ցնցում մը միայն ունեցավ. իսկ անկից վերջ անխոով էր քարե արձանի պես։

— Երթա՞նք ուրեմն,— կ'ըսեր Գուրգեն ծիծաղելով բարձրաձայն.— ի՞նչ կ'ըսես, Հովնան, մե՞ղք է այս տղան, տեսե՛ք, զենքերն արդեն առավ և սաղավարտը կը դնե։

— Երթա՞նք,— ըսավ Հովնան և դուրս ելավ։

Ժամ մը չեղած չորս հարյուրի չափ հետևակ և ձիավոր Արամանյակ բերդեն կ'ելնեին երկու օրվան պաշար առած և Արտանուշի վրա կ'արշավեին արագությամբ։ Գիշեր մը հանգիստ առած երկրորդ օրը կորովի գունդը կը հասներ Սմբատավանի առջև ճիշտ այն ժամանակին, որ արաբացիք հողապարսպին հետ կռվելով ներս խուժելու մոտ էին, Գուրգեն չէր այս անգամ խումբին դյուցազնը. Աշոտ մոլեգին կոտորածի մը ըսկիզբը տվավ, և Գուրգեն աչքը միշտ նորա վրա երկու-երեք անգամ զինքն ազատեց վտանգներե։ Արաբացիք երկու սուրի մեջ մնացած սաստիկ ջարդվեցան, և հազիվ քանի մը հոգի փախստական կրցան Կարս դառնալ։ Ավանին շուրջը իրենց մեռյալներով ծածկվեցավ, և քանի մը օր Ճորոխ դիակներ Սև ծով կը տաներ։ Նույն դիշերը ավանին բնակիչքը այս օգնական զորքն իբրև եղբայր հյուրընկալեցին, որք իրենց թողին թշնամվույն ավարը, որպեսզի վնաս կրյալ գյուղացվոց բաժնվի։ Այս առաջարկությունը, որ Հովնան ըրած էր, իբրև պատգամ ընդունելի եղավ զինվորներեն, և այն խեղճերը, որոնց գյուղերն արաբացի կրակեն կը մխար և ամեն բանե զրկված էին և իրենց անձինքը միայն ազատած, հուսահատ ապագայն կը մտածեին, հիմա առաջինեն ավելի զիրենք հարուստ գտնելով՝ ուրախության հանդես կը տոնեին։

Երբ առավոտուն Իշխանիկ զորավարաց կը հայտներ, թե վայել էր իրենց այցելություն ընել վանքը իշխանուհվույն, Աշոտ անձայն կը մըտածեր, իսկ Հովնան՝

— Ձեզ երթալ կարծեմ պետք է, բայց ինձ համար կարևորություն չեմ տեսներ. մանավանդ թե ժամ առաջ պետք է, որ ես Սասուն դառնամ,— ըսավ վճռողական ձայնիվ։

Հազիվ թե ինք այս խոսքերը զրուցեց, մեզ ծանոթ Թադոս հայրիկ ներս մտավ և ողջունելով զամենքը՝

— Տյա՛րք, Վասկանուշ իշխանուհին ձեզ յուր շնորհակալության այցելությունը կուգա ընելու,— ըսավ և հաղիվ թե խոսքը լմնցուց, ահա իշխանուհին ինքն ներս մտավ, շրջապատյալ չորս-հինգ պառավ կույսերե, ողջունեց զամենքը և նստավ։

Ճար չի կար, Հովնանու փախստյան տեղի չի մնաց. յուր սրտին տրրոփյունն՝ խոսրով որ քովը կեցեր էր, կը լսեր որոշ և հայտնի, և այդ զորավոր մարմինը բաբախման հետ կը շարժեր։

Տեսարան մ'էլ Աշոտի վիճակն էր, որ Գուրգենի կոնակը պատսպարան գտեր էր ինքզինքը ծածկելու իշխանուհվույն աչքերեն։

Իսկ սա՝ համառոտ և քաղցր շնորհակալություններ ըրավ ամենուն յուրյանց քաջության և աղնվասրտության համար և խնդրեց, որ նույն շնորհակալությանց թարգման լինին այն պատվական զորաց, որ այնչափ գութ և եղբայրասիրություն ցույց տվեր էին յուր ժողովրդյան և խոսքը վերջացուց ըսելով, թե՝ «Հայ ազգին այսպիսի թշվառ վիճակին մեջ մեծ մխիթարություն էր տեսնել այնպիսի դյուցազուններ՝ որոնց զինվորական քաջության հավասար էր պատերազմեն վերջ առաքինությունն և անշահասիրությունը»։

Այս խոսքերը զրուցելեն ետքը իշխանուհին ոտք ելավ, արդեն բացի իրմե ոչ ոք չէր նստած. «Կը հուսամ, զորավար Տյարք, որ այս երեկո մեր վանքի շնորհակալությունն ուզեք պատվել ընթրել հանձն առնելով»,— ըսավ։ Եվ քանի մը քայլ առաջ անցնելով, Աշոտի առջև կեցավ.

— Քաջ պատսպարան մը գտեր ես ինքզինքդ ծածկելու համար, Աշոտ իշխան, բայց դարձյալ քու քաջությունդ հայտնի ըրած է քեզ ամենուն, քու երեկվան համբավդ ինձ հասավ և ուրախացուց, և ես գոհ եմ, ու խոստմունքիդ դրժող զքեզ չեմ կրնար համարիլ։

Աշոտ քանի մը խոսք թոթվեց շփոթված, և իշխանուհին անցավ Հովնանու առջև կանգնեցավ. իր լուսալիր հայեցվածքը վսեմ և քաղցր այդ մարդուն կրակե աչքերուն վրա ուղղեցան, որ կարծես թե թալկացեր էին նույն միջոցին. հազիվ թե այդ անխոնջ ծունկերը զինք կը վերցնեին։

— Հովնան զորավար, զիս չե՞ս ճանչեր։

— Ես ո՞վ եմ, որ զքեզ ճանչեմ, իշխանուհի,— պատասխանեց Հովնան խեղդուկ ձայնով։

— Ես Վասակ Բագրատունվո դուստր Վասկանուշն եմ... հիշեցիր զիս, այնպես չէ՞։

— Այո, իշխանուհի,— ըսավ Հովնան նույն ձայնով։

— Այս երեկո ուրեմն կը տեսնվինք, այնպես չէ՞։

— Հրամանը քուկդ է, իշխանուհի։

— Շատ բարի,— ըսավ Վասկանուշ և դառնալով իշխանաց հրաժարական ողջույն մը տվավ և ելավ։ Ամենքը հուղարկավոր գնացին ետեն, մինչև որ հեծավ ջորին և վանքին ճամփան բռնեց։ Իսկ Հովնան անհետացավ։

Ան ատեն Գուրգեն Աշոտի ըսավ.

— Իրավո՛ւնք ունիս դու, տղա, այդ կինը սովորական կին չէ. իրա՛վ թագուհու կը նմանի. յուր ամեն շարժմունքին, ձայնին, խոսքերուն մեջ վսեմություն մը կա, որ ակնածություն կը հրամայե։

— Դո՛ւ որ այնչափ կը ծիծաղեիր իմ վրա՞ս։

— Ճշմարիտ է, որ չի համարձակեցա անգամ յուր առաջ նստելու— եվ դառնալով Խոսրովու,— բայց տեսա՞ր Հովնանու վիճակը. այդ առյուծը ապուշ ոչխար էր դարձել, աչքերը մինչև իրենց փայլը կորուսել էին, ես հիվանդ կարծեցի։

— Այո, կ'երևա թե փոքրիկ տկարություն մը ուներ։

— Քանի՞ տարեկան կարծես այս կինը, Խոսրով։

— Կարծեմ թե հիմա քառասուն և հինգ պետք է լինի։

— Շատ պակաս կը ցցնե. վանքի՝ կյանք, աղոթել, ուտել, խմել, հանգիստ ընել, զավակ չունենալ զինք երիտասարդ են պահել։

— Այսպես շուտ դատաստան ընել, անխոհեմություն է, Գուրգեն, ո՞ գիտե մարդկանց կյանքը, անցյալը ի՞նչ գաղտնիքներ ունի։ Բագրատունի օրիորդ մը, սիրուն, հանճարեղ, գեղեցիկ ի՞նչ դիպված տեսնենք զինք բերեր ձգեր է Եփրատի ափանց վրայեն այս Ճորոխի ափանց վրա։ «Մարդկային սրտի խորը ծովու ադունդներուն կը նմանի» ըսեր են.— մենք կը խոսինք, կը ծիծաղինք, կը կատակբանենք, կ'ուտենք, կը խմենք, կ'երգենք. ամբոխը, որ մեր սրտին վերքերը չի ճանչեր, չի տեսներ և կարողություն չունի մեր ճակտին վրա կարդալու, մեզ երանի կուտա։ Ինչո՞ւ հեռուն երթանք. Գուրգեն, քեզ տեսնողը աստվածին շնորհիվք, զվարթ, գեղեցիկ, կորովի, հսկա, արքայազարմ, խելոք երիտասարդ, ի՞նչ կը զրուցե, ի՞նչպես կը դատե. մի՞թե չի զրուցեր. «Ահա աշխարհիս ամենեն երջանիկ մարդը»։ Բայց ես առանց Սողոմոն իմաստուն լինելու կը տեսնեմ, թե կա որդ մը, որ քու սիրտդ կը կրծե. կը տեսնեմ, որ

կա՝ այդ պարզ ճակտիդ վրա հոգ մը, ամպ մը, որ պայծառ արևուդ ըստվեր կը ձգե. և ի՞նչպես զրուցեմ, թե Գուրգեն երջանիկ է, բարեբախտ է։ Այսպես իմացիր նաև այդ սևերով ծածկյալ կնոջ համար, որ բեհեղներու և ծիրանիներու կյանքի համար էր ստեղծյալ։

— Իրավունք ունիս, Խոսրով, դու ինձմե խելոք ես։

— Քա՜վ լիցի, բայց քեզմե ավելի փորձառու եմ, վասնզի քու կըրկին տարիքդ ունիմ, և տեսածես օգուտ քաղել ջանացեր եմ միշտ։

Բարեբախտաբար Գուրգենի համար, որ Խոսրովու գուշակություններեն զոհ չեղավ, թեպետ մեծ համարմունք առավ նորա սրատեսության վրա, Իշխանիկը եկավ, որ իբրև ավելի ընտանի՝ իշխանուհվույն ընկերացեր էր քիչ մը տեղ։

— Ուրեմն կամա-ակամա այսօր և այս գիշեր էլ մենք դեռ հոս պետք է անցնենք, երբ Հովնան զորավար նաև մնալու խոսք տվավ իշխանուհվույն։ Վաղը կ'ուղևորինք Արամանյակ և անկից Թորթում ի միասին։

— Շատ բարի,— ըսավ Գուրգեն,— բայց իմ դղյակս գրավողը ի՞նչ տեսակ մարդ է։

— Անպիտան հույն իշխան մը։ Ես հունաց Սպարապետին քանի անգամ գնացի իմացնելու, թե եղածը մեծ անիրավություն էր, թե Գուրգեն կայսեր բանակին մեջ ծանոթ անձ մ'էր... բայց նա իմ խոսքերս ընդհատելով, քու խնդրանաց համար, կը հրամայեմ, որ հիմա ոչ ոք դղյակը չի գրավե, և տարի մ'էլ ժամանակ կուտամ. բայց այդ պայմանաժամն որ անցավ և Գուրգեն չերևցավ, ամենևին մ'աշխատեր, վասնզի ո՜ գիտե նա ի՞նչ վիճակներու, ի՞նչ վտանգներու մեջ կը գտնվի յուր հանդուգն բնավորությամբ՝ եթե ողջ է։ Եվ որովհետև տարին չի լրացյալ հույնք ինձ թշնամացան, նույն միջոցին, երբ իմ վրաս հարձակեցան Արամանյակ հափշտակելու, լսեցի, թե Թորթումի դղյակն էլ գրավեր են։ Ի՞նչ ընես, որդյակ, անտերունչ ազգ ենք, ամեն մարդ իրավունք կը կարծե մեզ համար անիրավություն և հափշտակություն։ Մենք էլ ազգովին շփոթած և հուսահատ՝ հացի մեկ պատառը շունին բերանը կը նետենք մյուսն ազատելու համար. ես քանի որ աչքս բացեր եմ, այս եմ տեսեր. վա՜յ նոցա, որ մեր ետևեն պիտի գան։

— Ո՜չ Իշխանիկ, այդպես պետք չէ լինի, ավելի լա՜վ է անժառանգ աշխարհես երթալ, քան թե այդպիսի վիճակ մը մեր զավկներուն թողուլ։

Նույն երեկոյին վանքի նախապարսպի սենյակներուն մեջ լավ ընթրիք մ'ըրին իշխանուհվույն կ'ուշնականք, որ վայրկյան մը երևցավ և իբրև իրեն փոխանորդ թողլով վանքին քահանան՝ քաշվեցավ։ Ընթրիքը

երբ վերջացավ և ամենքը կը պատսպարվեին Սմբատավան դառնալու, դարձյալ երևցավ իշխանուհին և ամենուն բարի ճանապարհ մաղթելե վերջը՝ դարձավ Հովնանու ըսավ.

— Քեզ և քու սասունցվոցդ դեռ բարի ճանապարհ չեմ կաթող մաղթել և կը փափագիմ, որ քանի մը օր ավելի ինձ հյուր լինիք, վասնզի ինչպես կրնաք երևակայել, կարելի է, որ այդ անզգամ արաբացիք դառնան վրեժ խնդրելու իրենց պարտության. և որովհետև ես էլ Տարոնո գավառեն ձեզ հետ մերձավոր հայրենակից եմ, կը հուսամ, թե իմ խնդիրքս չեք մերժեր։

Իսկ Հովնան, որ բոլորովին կազդուրյալ մարդ մ'էր, և առջի շփոթութենեն ազատ՝ անխորով, բայց ամենայն խոնարհությամբ պատասխանեց.

— Քու փափագը և խնդիրը մեզ՝ սասնցվոց համար սուրբ հրաման է, իշխանուհի, և զմեզ երջանիկ կը սեպենք, եթե քեզ և քուդիններուդ համար կենաց վտանգավ անգամ կարենանք ծառայել։ Այս ոչ իմ միայն, այլ բոլոր մեր սասնցվոց ամենուն փափագն է։

Այս խոսքերն այնպիսի միամտությամբ զրուցվեցան, որ մեկուն կասկածի տեղիք չէին կրնար տալ, և Խոսրով նաև ամենևին չէր կասկածեր, եթե Հռիփսիմե տիկնոջ պատմության տեղյակ չլիներ։

Առավոտուն իշխանաց հեծելագունդը կը բաժնվեր սասնցվոց, և Գուրգեն խոսք առնելով Հովնանե, որ պիտի գար զինք Թորթում տեսնելու, յուր մյուս ընկերներով կ'երթար իր նպատակին։

Այս վիճակին մեջն էր ահա խեղճ Հովնանու անձը, երբ ամեն ընկերները գնացին, և ինք միայնակ մնաց իր սասնցիներուն հետ, մանավանդ թե՝ յուր քսանյոթ տարվան տենչանաց հետ. իրա՜վ, տեսավ, և ոչ միայն տեսավ, այլև խոսեցավ իրեն, այլ ոչ տեսնելը տեսնել էր, ոչ խոսելը խոսիլ, այնպիսի սիրո մի համար, որո մեջ ոչ հանցանաց, այլ ստգտանաց նաև նշմարանք չէր մտեր, որուն մարդկային և երկրավոր ամեն բիծերն ու ժանգը (եթե այդպես լեզու մը կրնա գործածվիլ սիրո համար) թշվառության կրակը և հառաչանաց բոցը մաքրեր և զտեր էր, և ուր նյութական ամեն բան հատեր աննյութականն էր միայն մնացել։ Ի՞նչ բաներ ուներ Հովնան զրուցելու այդ կնոջ, ի՞նչչափ բաներ ուներ իմանալու իրմե. քսանյոթ երկայն անհատնում տարիներու և նոցա ավելի երկայն գիշերներու պատմությունն յուր աչաց առաջ կը հոլովեին։ Կը հիշեր այն դառնացյալ, անջատյալ սիրույն գիշերները, երբ մարդկային ամեն ձայներ կը լռեին, ամեն աղմուկներ կը դադրեին, երկու տարվան բանտարկությենե վերջ նաև այն օրերը, որ ինք միայնակ, օտար, պանդուխտ և կամավոր տարագիր՝ յուր գերեզմանական սենյակին դուռը կը գոցեր,

յուր կրակե գլուխը երկու ձեռքերուն մեջ առած, թևերը ծունկերուն հենցուցած՝ երկու անուն միայն շրթունքները կը մրմնջեին. «Աստված և Վասկանուշ...»։ Եվ հիմա ականջին կը խոսեր այն ձայնը՝ այն մարգարեական ձայնը, որ գետնափոր տաճարին մեջ իրեն զրուցեր էր. «Կուգա տարին, կուգա օրը, և թերևս հեռու էլ չէ, որ դարձյալ զինք պիտի տեսնես, դարձյալ արցունքներովդ յուր ոտքերը պիտի թրջես...» Ո՞ւր է այն ժամն, ո՞ւր էր այն վայրկյանն. և ի՞նչ պիտի ըներ Հովնան անկից վերջ կյանք ըսված բանը, որ չարչարանք եղեր էր իրեն համար և բով տանջանաց այնչափ տարիներ։

Այս մտածությունք զինքը կը տարուբերեին, և վայրկյանները ժամեր կ'երևեին, երբ Թադոս հայրիկ ներս մտավ և իր հանդարտ կերպով՝

— Հովնան զորավար, մայր իշխանուհին քեզ կ'ուզե տեսնել,— ըսավ։

Արքայության ավետաբեր հրեշտակն էր այդ ծերը։ Թռավ Հովնան, հասավ վանք, մտուցին զինք այն սենյակը, ուր Աշոտ Սյունի և Վասկանուշ տեսություն մը ունեցեր էին, և ուր ինք Հովնան ուրիշներուն հետ տեսած էր Վասկանուշ. բայց հիմա... ոչ ոք չի կար սենեկին մեջ, դուռը գոցվեցավ վրայեն։ Յուր սիրտը այնպես կը տրոփեր, որ պայթելու մոտ էր, և ձեռքը հոն կը դներ՝ իբրև թե այդ խեղճ գործարանին սանձ մը դնել կը ջանար. երբ գաղտնի դուռ մը բացվեցավ, և Վասկանուշ ելեցավ թալկահար՝ ծանր և հանդարտ երկու քայլ առնելով՝ «Հովնա՜ն» ըսավ և ձեռքը երկնցուց. լեռնականը սրացավ՝ ծունկի վրա եկավ, և այդ գեղեցիկ փոքրիկ ձեռքը յուր երկու ափերուն մեջ գրկելով, շրթանց և աչաց վրա դնելով, արտասվաց հեղեղներով կը լվանար և կը հեկեկեր ու նույն դիրքին մեջ մնաց բավական ժամանակ, մինչև որ հեկեկանաց ձայնը դադրեցավ, և իշխանուհին «բա՛վ է, Հովնան» ըսավ։ Իսկ Հովնան գլուխը վեր առնելով՝ «Ո՜հ, իմ Տիրուհիս, ո՞ւր էր, թե հիմա հոս մահս հասներ»։

•

ԳԼՈՒԽ ԺԸ

ՎԵՐՋԻՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Այս խոսքեն վերջը՝ այդ դիրքին մեջ ո՞ գիտե քանի վայրկյան մընացին այս տարիներով բաժնված սիրահարքը, երբ Հովնան հանկարծ զգաց, որ Վասկանուշի ծնկվրները կը թեթևեին, և իյնալու վտանգը տեսնելով հափշտակեց զինքը և տղու մը պես բերավ բազմոցին վրա դրավ. բայց սոսկումը զինք առավ, երբ նշմարեց մահվան գույնը երեսը պատած, շրթունքները ճերմկած՝ աչքերու բիբերը փայլը կորուսած բոլորովին վեր հոնքերու կը դիմեին. «Ո՜վ աստված իմ,— կ'ըսեր,— այսպես ուրեմն իմ խնդիրքս լսեցիր զիս պատուհասելու համար՝ մահը ես ինձ համար ուզեցի»։ Այդ պատերազմի և արյուններու մարդը նվազման գաղափարը չուներ, կյանք և մահ միայն կը ճանչեր և տեսեր էր, այդ երկուքին մեջի վիճակը չէր գիտեր. ուստի սոսկումը զինք պատեց, իր սիրտը, որ կը տրոփեր, ձայն տվավ իրեն և ձեռքը դրավ նորա սիրելի սիրտին վրա՝ և այնպես կարծեց, թե դա էլ կը տրոփե, հույս առավ, թեպետ իր ձեռաց երակներուն տրոփյունն էր այն. պատուհան բացավ, որ օդ մտնե, դողդոջուն ձեռքը այդ կուսական սուրբ և պաշտելի մարմնույն կապերը թուլցուց և բաժակ մը ջուր գտնելով ուզեց խմցնել յուր տիրուհվույն. ցուրտ ջուրը վար չերթալով, որովհետև շրթունք և ծնոտ կղպված էին, թափեցավ այդ ձյունափայլ մարմնույն վրա, և փոքրիկ ցնցում մը հայտնի ըրավ Հովնանու, թե կյանք կար. նորա սառած ոտքերը, ձեռքերը կը շփեր յուր հրացայտ դողդոջուն ձեռքերով, փչեց յուր հրաշունչ ոգով երեսին և նվիրական կուրծքին, ուր ձեռք երկնցնել երբեք մտքեն չէր անցել և չէր համարձակել. ահա ծնոտները թուլցան, շնչառությունն սկսավ, և բիբերը իրենց բնական դիրքն առին։ «Աստված իմ, աստված իմ,— կ'ըսեր Հովնան,— այս ի՞նչ շնորհք է»։ Եվ ահա հառաչանաց ձայներ մեծ-մեծ շունչեր լսվեցան, և Վասկանուշ շարժեցավ շակվեցավ «Ո՞ւր եմ ես»,— ըսավ։ «Ա՜հ, Տիրուհիս, հոս...»։ «Հովնան, դո՞ւ ես, մ'ե՜րթար, էլ մի՛ հեռանար, ո՜հ, շատ և երկայն էր այս միայնությունը...»,— ըսավ և դարձյալ նույն առջի վիճակը եկավ։ Իսկ սա կրկնեց յուր շփմունքը յուր շունչը, և վերջապես գոհությամբ տեսավ, որ ելավ յուր տիրուհին ու նստավ, երեսին գույնն սկսավ գալ. և կատարյալ դատելով վիճակը զգեստներուն դիրքը շտկեց, ծածկվեցավ վերարկուն և հրամայեց ձեռքով Հովնանու պատուհանը գոցել և ջուր տալ։ Փոթորիկն անցավ. իշխանուհին նստած էր բազմոցին վրա, և Հովնան ծունկ չոքած կը կենար բավական հեռավորությամբ իբրև հանցավոր՝ դողալով, որ միգուցե նույն վիճակը վերադառնա։

«Մոտ ե՛կ, Հովնան»,— ըսավ վերջապես Վասկանուշ, իր տկար և դողդոջուն ձայնին մեջ մինչև վսեմություն կը տիրեր. իսկ լեռնցին, որուն աչքերը շլացեր էին այս արևեն և որուն այնչափ տարիներ աշխարհք խավար էր, հաղիվ թե կը համարձակեր իրեն նայիլ՝ ոտքերուն քով եկավ չոքեցավ։

— Զրուցե՛, Հովնան, այսչափ տարիներ որ անցան, քանի որ իրարմե բաժնվեցանք ի՞նչ ըրիր, խոսք մը չունի՞ս ինձ։

— Ի՞նչ զրուցեմ, Տիրուհիս, քսանյոթ տարի է, և շա՛տ ապրեցա. երկայն քշեց այս կյանքը, ի՞նչչափ կարճ էին օրերը՝ անգին օրերը՝ և երկար՝ տարիները։ Ես կը խոստովանիմ, թե մեղավոր եմ, թե մեծ հանցանք գործեցի, ես թշվառ ողորմելի արարած, քեզ՝ աննման հրեշտակիդ աչքս բարձրացուցի և հանդգնեցա քու ոտիցդ իմ աչքերս քսել։ Բայց մի՞թե կարելի էր զքեզ տեսնել, զքեզ ճանչել և զքեզ չսիրել։ Իմ խեղճ սիրտս կ'ըսեր ինձ. «Աստված տեսնել չէ շնորհյալ մարդու, բայց զնա սիրել համենայն անձե՝ համենայն սրտե և համենայն մտաց աստվածային պատվիրան է. եթե դու այդ գերբնական էակին վրա աստվածային շնորհք կը տեսնես, կրնա՞ս՝ մի՛ սիրեր, բայց որովհետև չես կրնար, սիրե՛ և անհույս սիրե՛»։ Ես գոհ էի իմ վիճակես, երբ անխոս զքեզ կը պաշտեի, գոհ էի, երբ Բագրատունյաց պալատեն կը հեռանայի քու ձայնդ միայն լսելով, քու մեկ հրամանդ կատարելով, քու մեկ «Հովնա՛ն» ձայն արձակելովդ, քու երեսդ մեկ մը տեսնելով, նաև քղանցքիդ ստվերը միայն նշմարելով։ Կ'երթայի իմ լեռներուս գլուխը և առանձնության մեջ ժամերով, օրերով այդ հիշատակներեն կը հափրանայի և հրեշտակային արբեցությամբ հերկինս կ'ամբառնայի, և ինձ այնպես կը թվեր, թե մարդկանց ամենեն երջանիկը ես եմ։ Բայց իմ այս հանդգնությունս, իմ չափես վեր բարձրանալս անհաճո թվեցան աստուծո, և զիս պատժեց. ես արժանի էի յուր պատուհասին, բայց իմ պատճառովս երբ կը մտածեի, թե դու աննման հրեշտակ՝ դու նաև կը քաշեիր. դու թագուհի լինելու՝ ծիրանիներու և բեհեզներու համար ստեղծված, սուգի և բանտի էիր դատապարտյալ և իմ մեղացս համար, այս էր ահա, որ ես իմ անձիս չէի կրնար ներել, և քու աչացդ երևիլ ու թողություն նաև խնդրել չէի համարձակել։

— Գիտեի՞ր, Հովնան, իմ հոս լինիլս։

— Առջի տասը տարին չէի գիտեր. երկու տարի գողի պես կը պըտտեի բոլոր Հայաստան, առանց համարձակելու անունդ բերնես հանել, բախտեն սպասելով, որ իմանամ, թե ո՞ւր ես։ Վերջը հուսահատ թողի գնացի Հունաստան և զինվոր եղա և տեսա, որ օտար հող զիս չուզեր ընդունիլ. դարձա եկա Տարոն, և մեր լեռնցիք զիս պարտավորեցին, և ես անօգուտ կյանք մը օգտակար ընելու համար կ'երթայի Բագարատ իշխանին Սասնո գործերը կարգի դնելու։ Հոն դիպվածով իմացա, թե Արտանուշի վանքն է իշխանուհիդ։

— Եվ անգամ մը գալ մտքեդ չանցա՞վ։

— Պետք է խոստովանիմ ճշմարիտը. ամեն տարի կուգայի Ճորոխի դիմացի ափը թուփերու մեջ օրերով կ'սպասեի ինչպես կը վայելեր ինձ պես հանցավորի մը, և երբ զքեզ կը տեսնեի, որ կը ճեմեիր առանձին,

ես այսպես ծունկի վրա կը խնդրեի հաստուծո, որ Տիրուհիս երջանիկ ընես։ Կը փափագեի, որ ձայնդ լսեմ, բայց անիրավ Ճորոխ այնչափ շառաչանք ուներ, որ կարելի չէր լսել։ Բայց դարձյալ այն տեսությամբ ծարավս կ'անցնեի և գոհ ու երջանիկ կը դառնայի Սասուն։ Այս ամառ միայն չի կրցի գալ։

— Ե՛լ, Հովնան, նստե քովս և մտիկ ըրե, թե ի՞նչ պիտի ըսեմ։

— Ներե՛, Տիրուհիս, ես այս դիրքիս մեջ աշխարհիս ամենեն երջանիկ մարդն եմ և հավիտենականության մեջ եթե քու ոտիցդ առջև այսպես կենայի, արքայություն կը դառնար այն ինձ համար։

— Բայց ես կը հրամայեմ, Հովնան, և դու չե՞ս հնազանդիր,— ըսավ վասկանուշ քաղցրությամբ և ձեռքեն բռնելով նստեցուց քովը...— Ես չեմ ուզեր, որ իմ վրաս զգացած սերդ հանցանք համարիս. ես չեմ ուզեր, որ իմ աշխարհիս հիմար օրենքները աստուծո բնության հրամայած օրենքներեն վեր դնես։ Ես քեզ սիրեցի և դարձյալ կը սիրեմ և միշտ պիտի սիրեմ։ Ես գոհ եմ քեզմե, դու ինչ որ կ'ընեիր, և մանավանդ ինչ որ այս վերջի ատեններս ըրիր, ամենն էլ գիտեն. միայն քու թուփերու մեջ գաղտնի զիս դիտելդ չէի գիտեր։ Քեզմով ես երջանիկ կրնայի լինիլ աշխարհիս վրա՝ իմ այս միայնության կյանքով, աստված այս վերջինը միայն կամեցավ, որովհետև մարդիկ նորա օրենքները ծամածռել հանդգներ են. ծնողք հիմար սովորության և գոռոզության իրենց զավակները և իրենց ծնելական գութը զոհել օրենք ըրեր են. և ազնվատոհմությունը, երբ բարձրեն արհամարհոտ աչք կը ձգե ռամկին վրա և կը կարծե, թե այդ անարգ արարածն իրեն համար է ստեղծյալ, ահա այսպես կը պատրժվի և գերության շղթաներու դառն ճաշակը կառնե։ Ո՜ր նախարարական ցեղն է, որ չունենա մեկը Բալդադ, և ի՞նչ ըրին, որ արժանի չլինեն այդ անարգանաց և երկրին կործանման։ Այս վանքին, զոր դու բանտ կանվանես, դռները բացվեցան ինձ համար, և ինձ դյուրին էր դառնալ ծիրանիներու և բեհեզներու պլլվիլ, և ես չուզեցի։ Անոր համար չուզեցի, վասնզի գիտեի, թե Հովնան զիս կը սիրեր, և ես զինք կը սիրեի. անոր համար չուզեցի, որ զիս այս տեղեն հանելով՝ պիտի խնդրեին այնպիսի մարդու մը մատնել, որ ոչ սիրտ ուներ, ոչ զգացմունք և որ մոլությանց մեջ թաթախյալ էր։ Վասնզի շատ հազվագյուտ են այդ նախարարաց մեջ ազնիվ զգացմունք և առաքինություն։ Բուղա դռներնին կը ծեծեր. իսկ նոքա իրենց գիներբվաց և մեղկ՝ անառակ երաժշտության ձայներեն խլացած չէին լսեր, թե ո՞վ կուգար։ Նույնը ահա կը տեսնեմ, որ արևելյան և հյուսիսային Հայաստանի կսպառնա, և ամեն ոք ապշությամբ թմբրյալ կը քնե։ Այո, Հովնան, այս աշխարհքիս մեջ իջնել չուզեցի, ավելի լավ համարեցա հոս այս վանքիս մեջ իմ կենացս մնացորդն անցնել խա-

ղաղությամբ ատուծո հետ, ջանալով օգտակար լինել Քրիստոսի ժողովրդյան, ինչչափ որ տրված էր իմ տկար կանացի ձեռքերուս կարողություն, քան թե երթալ անիրավությանց և կեղեքմանց մասնակցիլ։ Լավ համարեցա քեզի պես առանց հուսո սիրել, սերը նյութականության չիջեցնել երբեք յուր բարձրութենեն, և այսպես այս կարճ կյանքն անցնել, անդին միշտ միասին ապրելու համար հավիտենական կենաց մեջ։

Այս խոսքերը զրուցելուն՝ Վասկանուշի քնքուշ ձյունափայլ ձեռքը Հովնանու առյուծաթաթ ձեռքին վրա էր, իր աչքերը երկինքն էին, սերը յուր բնական գեղեցկության ավելի փայլ մը տվեր էր. իսկ Հովնան գըլխիկոր հազիվ թե կը համարձակեր աչքերը վերցնել նայիլ այն հրեշտակին, որ զինքն առջի օրեն հափշտակած էր, այն անձին, որուն հետ բաղդատելու բան մը աշխարհքիս վրա չէր տեսած և նորա աչաց մեկ ակնարկին առջև իբրև տղա մը կը սարսռեր։

Շարժվեցավ Վասկանուշ՝ ելավ Հովնանու նայեցավ և հասկցավ, որ այդ շարժմունքը հրաժարական կը կարծեր. ըսավ ծիծաղելով.

— Ո՜չ, Հովնան, դեռ երթալու ժամանակ չէ, այսօր քեզի հետ միատեղ պիտի ճաշեմ. աշխարհքես և անոր հաճույից հրաժարյալ՝ այս զըվարճությունն անգամ մը կուզեմ ունենալ. Եգիպտոսի մենակյաց անապատականք նաև երկու արմավ և հացի մը պատառիկ միասին կ'ուտեին և այդ ճաշը սեր կանվանեին։

Այս ըսելով ձեռքեն բռնեց և դեպ անհայտ դուռը տարավ, և Հովնան փոքրիկ սենյակ մը տեսավ՝ անպաճույճ սեղան մը և երկու աթոռ դիմացե դիմաց դրված։ Իշխանուհին նստավ, Հովնան ևս նստավ իբրև փուշի վրա և հնազանդելու համար նորա ակնարկին. իսկ Վասկանուշ բաժակը լցուց և Հովնանու դառնալով՝ «մեր հավիտենական կենաց հարսանյաց» ըսավ և պուտ մը խմելով տվավ նորա, որ առավ քամեց բաժակը մինչև վերջի կաթիլը. Վասկանուշ, որ իրեն կը նայեր, հարցուց։

— Ի՞նչչափ ժամանակ է, Հովնան, որ բերանդ գինի դրած չունիր։

— Քսանյոթ տարի, Տիրուհիս։

— Խե՜ղճ Հովնան, ամեն բանե ինքզինքդ զրկեր էիր։

— Ի՞նչ էր իմ զրկանքս, երբ զքեզ միտքս բերեի, դու՝ Բագրատունյաց Օրիորդ, ոսկեձեղուն պալատներուն մեջ ծնած, ինձի համար դատապարտված, ես խեղճ լեռնցի՝ ամեն տեսակ խիստ կյանքի ընտանի էի ի ծննդենե, ինձ համար հավասար էր արդեն ջուրն ու գինին, մանավանդ որ միտքս դրեր էի անդին՝ արքայության մեջ խմել երկնային գինին. բայց աստված արքայության երկնային գինվույն ճաշակն այսօր ինձ տվավ. երկրպագու եմ յուր շնորհաց և յուր հրեշտակին։ Բայց դու ուստի՞ իմացար, Տիրուհիս, թե ես գինի չեմ խմեր։

— Արդեն գիտեի, բայց անցյալ երեկո, երբ իշխանաց հետ եկած էիր ընթրելու, տեսա զքեզ այս դռնեն և քու ամեն շարժմունքդ։

Գինին թեպետ բաժակ մը, բայց Վասկանուշի շրթունքներն հպյալ և նորա ձեռքեն՝ համարձակություն և զվարթություն տվին Հովնանու. տխրությունը հաբածեցավ յուր ճակատեն, աչքերն իրենց բնական փայլն առին, բայց փոխանակ սովորական հրույն՝ քաղցր լույս կը ցոլար. կնոջ մը դյութիչ զորության ազդեցությունն էր, որ այդ հզոր պղնձե էակը մոմի պես կակղցնելով, առյուծե ի գառն կը փոխարկեր։ Հիմա ծիծաղը հեգնություն չէր յուր երեսին վրա, այլ սրտին կերպարանքն էր, որուն դառնությունը արտասվաց հեղեղը լվացել ու մաքրել էր։

Այդ ճաշը երկայն տևեց, և երկու անձինք իրենց այնչափ տարվան քաշածները, զգացածները, ըրածները պատմեցին իրարու, երբեմն հեշտ արտասուք, երբեմն ծիծաղ փոփոխակի կը փայլեին իրենց երեսին վրա, մինչև որ Վասկանուշ իր լուրջ կերպարանքն առավ և ելավ սեղանեն, էլ ժամ էր բաժանման. երբ մտան դարձյալ առջի ընդարձակ սենյակը, հարցուց.

— Գո՞հ ես, Հովնան, իմ հյուրընկալութենես։

— Մինչև երկինք, Տիրուհիս։

— Կը փափագիմ, որ այս օրվան ուրախությունը պահես մինչև որ վերջապես տեսնենք հոս Էամ հոն,— ըսավ իշխանուհին և մատը երկիր ու երկինք ցցուց։

— Գիտես, թե մեկ խոսքդ, մեկ ակնարկդ ինձ համար ի՞նչ են, Տիրուհիս։

— Աստված հետդ լինի, սիրելի Հովնանս։

Եվ ձեռքը երկնցուց. Հովնան ծունկի վրա համբույրներով ծածկեց այն սիրելի ձեռքը, և իշխանուհին ծռեցավ՝ յուր ձեռաց մեջ առավ այդ առյուծի գլուխը և ճակատին վրա համբույր մը դրավ և հոն թողլով Հովնան գնաց փոքրիկ սենյակին դուռը և այս վերջին խոսքերն ըսավ.

— Վաղն առավոտ արևագալին՝ պարսպին վրա զիս տես վերջին անգամ։— Եվ դուռը գոցեց, անհետացավ։

Ելավ Հովնան, սրբեց ուրախության արցունքները, առավ զենքերը և երբ դուրս ելավ սենյակեն, կը վախեր, որ յուր ուրախությունն ուրիշները չի կարդան յուր դեմքին վրա։ Այսպես գնաց նա թեթևյալ ոտիվքները չի կարդան յուր դեմքին վրա։ Այսպես գնաց նա թեթևյալ ոտիվքներով Սմբատավանի մոտ, և ամենքը կրնային տեսնել յուր ճակատը պարզյալ կնճիռներեն։

Ավելորդ է զրուցել, թե երբ Վասկանուշ երկրորդ առավոտուն ելավ վանքին պարսպին վրա, նշմարեց Ճորոխի հանդիպակաց կողմը մարդ մը ծունկի վրա, որ կ'սպասեր և որ զինքը տեսնելուն թևերը դեպ իրեն

տարածեց։ Երկու պտույտ մ'ըրավ իշխանուհին, գլխով այդ վարի մարդն ողջունեց և քաշվեցավ։

Նույն երեկո Մայր իշխանուհվույն խնդրակներն եկան և իմացուցին, թե արաբացվոց ոչ հետք և ոչ նշմարանք մնացեր էին Կարսի շրջակայք. ուստի երկրորդ առավոտուն շնորհակալություն կը հայտներ Հովնանու և յուր սասնայց Թադոս ավանապետ իշխանուհվույն կողմանե, և խումբը կ'ելներ ճամփա Արտանուշի փոքրիկ գավառին երախտագետ ժողովրդյան երկայն տեղ ընկերակցությամբ, որ զիրենք կ'օրհնեին, իրենց ըրած բարությանց փոխարեն հազար և բյուր մաղթելով հաստուծու։

Իսկ Հովնանյանք ուրախ և անարգել շարունակելով իրենց ճանապարհը հասան Թորթում, ուր սիրալիր ընդունելություն Գուրգենի կ'ըսպասեր իրենց։

ԳԼՈՒԽ ԺԹ

ԹՈՐԹՈՒՄ

Թեպետ ձյունը ամեն տեղ նստած էր և հազիվ սկսած էր հալիլ Բարձր Հայոց աշխարհին մեջ, բայց Թորթումի գավառը գարնան հոտերը սկսած էին. երբ Գուրգեն իշավ լեռներեն յուր գունդով, ինչպես սովորությունն էր միշտ առջևեն, բլրոց և դաշտաց կանաչը, ծառերուն ձյունափայլ ծաղիկը իր սիրտը շուրախացուցին։ Հեղինեի դառն հիշատակը, որու հետ ինք միտք դրած էր դառնալ և բնակիլ հոն, ամեն գեղեցկություն ոչինչ կ'ըներ աչքին։

Բայց Գուրգենի քով կիրք կար այդ հույն իշխանաց անիրավության դեմ, որ օգուտ քաղելով իր հեռավորութենեն, տիրացեր էին յուր բերդին և կարասյաց՝ իրենց կայսեր հրամանը նաև արհամարհելով. ուստի լի բարկությամբ կը քշեր ձուլակ, մինչև որ Բագրատունի Իշխանիկը մոտենալով իրեն ձայնեց.

— Գուրգե՛ն իշխան, Գուրգե՛ն իշխան, տե՛, ձիանքը պիտի սպանես, տղա՛. քիչ մը ծանր գնա։

— Իրավունք ունիս, Իշխանիկ,— ըսավ Գուրգեն,— բայց շատ բան չի մնաց, և ես կ'ուզեմ նախ միայն մտնել ներս բերդը։

— Բայց եթե միայն մտնես, շատ վտանգավոր գործողություն մը կ'ընես, վասնզի հույն իշխանը երկու ծառայով առանձին չի բնակիր հոն։

— Քանի՞ հոգի կրնա ունենալ այդ ավազակը։

— Ո՞վ գիտե, գոնե երսուն-քառսուն զինյալ մարդիկ պետք է ունենա։

— Մի՞թե ես միանակ բավական չե՞մ այդ կնամարդիկը պարսպեն վար թափելու։

— Բայց որդյակ, ինչո՞ւ վտանգավոր գործ ընել, երբ կարելի է խոհեմությամբ և դյուրությամբ գործին հաջող ելք տալ. ա՛ռ քեզ հետ ութ-տասն հոգի ընտրանոք։

— Այդ լավ չէ. ութ-տասը հոգի շատ են քառասուն հոգվո դեմ, ես և չորս հոգի շատ-շատ։ Այդ հույները ես քեզմե լավ կը ճանչեմ, Իշխանիկ, խորամանկ են սատանայի չափ, տասը զինյալ հայ հեռվեն բավական են, որ դռները գոցել տան և բերդին բոլոր պատերազմական պատրաստությունները երևան հանեն. ես անգամ մը ոտք ներս դնեմ, հունարենի բոլոր գիտությամբս իրենց վստահություն տամ, ինձի դժվար չէ այն ատեն բերդին տիրանալ։ Քեզ կը ճանչեն, դու մի՛ գար. Ատոմ, Խոսրով և Վահրիճ բավական են ինձի հետ ընկերանալու։ Դուք կես ժամ վերջը երևցեք։

Իշխանիկ թեպետ չի համոզվեցավ, բայց Գուրգենի դեմ տալ կարելի չէր, ուստի լռեց. չորս հոգի այդ խորթուպտույտ ճամփաներե անցան առաջ և մյուսներն ետ մնացին։ Եվ ահա երևցավ Թորթումի բերդը յուր ահավոր կերպարանքը. քարեղեն բլուր մը կործանյալ մոտակա բարձրերձ լեռներեն զատված ամենեն ինք միայնակ սեպաձև սահած իջած էր հովտին մեջ, գետը և վտակ մը զինք կը շրջապատեին, և այդ ժայռին չորս կողմը ամուր պարիսպ մը կար։ Միջնաբերդը դարձյալ յուր ամրակառույց պարիսպներն ուներ։ Գուրգեն յուր ընկերաց հետ դեպի մեծ դուռն ուղղեցավ, և պահապանք տեսնելով չորս հոգի միայն, դռները չի փակեցին. մանավանդ, երբ Գուրգեն զվարթ երեսով և հունական հնչմամբ իրենց բարև տալով՝ հարցուց, թե Թեոփիլոս իշխանը հո՞ն էր և ի՞նչպես էր, և թե լավ տեղավորյա՞լ էր, և թե գո՞հ էր յուր նոր բնակութենեն։ Այսպիսի քաղցր հարցմունքներով հասավ միջնաբերդը և ծիծաղելով ապսպրեց պահապանաց, որ լավ խնամք տանին իր և իր ընկերաց ձիաններուն, եթե Կարնո զորավարին հետ չեն ուզեր թշնամանալ, վասնզի ինք անոր կողմեն կուգա։

Երբ ներքնաբերդին դահլիճին մեջ տեղավորվեցան մեր երեք բարեկամները, և Գուրգեն որոշեց իրեն պատուհանի մը քով տեղ մը, ուսկից կրնար տեսնել հայկական գունդին երևալը, և Վահրիճ դռան քով կանգնեցավ, ինչպես իրեն պատվիրել էր Գուրգեն, հույն իշխանը երևցավ յուր բոլոր թատերական ծանրությամբ և քաղաքավարությամբ ութ-տասը ծառաներով. Բյուզանդական կոտրտուքներով ու ձևերով պատասխանեց Գուրգեն և Կոստանդնուպոլսո վրա խոսակցություններ բացավ, որպեսզի

ժամանակն անցնի, և աչքը շարունակ ճամփուն վրա էր։ Հույն իշխանը տեսնելով Գուրգենի ուշադրությունը՝

— Կարծեմ այս տեսարանը քեզի շատ գեղեցիկ երևցավ, վասնզի միշտ այն կողմը կը նայիս,— ըսավ։

— Այո՛,— պատասխանեց Գուրգեն, տեսնելով հայ գունդին ծայրը և հանկարծ ձևը, կերպը և ձայնը փոխելով,— այս տեսարանը, այս բերդը, այս կարասիքը, ամենն էլ իմս են և կը զարմանամ, թե որո՞ւ թույլտրվությամբ դու եկեր, տիրացեր և նստեր ես։

— Սորա տերը հայ մ'է, որ արաբաց դեմ պատերազմելով մեռած է, և ես բարձրագույն հրամանավ տիրացեր եմ։

— Այդ սորա տեր հայը ես եմ, և դու եթե կարդալ գիտես՝ ահա նորա հրովարտակը։

— Այդ հրովարտակը շատ հին է,— ըսավ հույն իշխանը, արհամարհոտ աչք մը ձգելով հրովարտակին վրա.— դու եթե ո՛չ հրովարտակ, այլ փոքրիկ թուղթ մը բերեիր Կարնո կուսակալեն, ավելի ազդեցություն կարելի է ունենար։

— Եթե դու չես հնազանդիր կայսեր, ես գիտեմ հնազանդեցնել իրեն ապստամբները։

— Իմ տանս մեջ ինձի սպառնալիք ընելու նաև կը համարձակի՞ս. և չե՞ս իմանար, անմի՞տ հայ, թե իմ ձեռաց մեջն ես և թե ակնարկ մը միայն բավական է քեզ և քու ընկերներդ կապել ու պարիսպներուն բարձրությունեն վար նետել։

— Դու ոչ զիս կը ճանչես և ոչ իմ ընկերներս և տղու մը պես կը խոսիս. վախեմ, որ ետքը շատ պիտի զղջաս։

Հազիվ թե այս խոսքերը վրուցեց Գուրգեն՝ ահա երկու-երեք սպասավոր ներս վազեցին լուր տալով, թե երկու հարյուրի չափ ձիավոր կը հարձակեին բերդին վրա և մեծ աղաղակներով կ'ուզեին իրենց ընկերները, որ ներսն էին։

Իսկ հույն իշխանը ոտք ելավ և աչքերը բանալով հարցուց, թե դրոները լավ գոցեր ամրացուցե՞ր էին. և երբ գոհացուցիչ պատասխան առավ, այն ատեն հեգնական և գոռոզ ծիծաղով մը դարձավ Գուրգենին՝

— Դուք դավաճանությամբ եկեր մեր վրա՝ առանց իմանալու ծուղակն ինկեր եք, թե որ ձեր կյանքը կ'ուզեք ազատել՝ ձգեցեք այդ զենքերը և անձնատուր եղեք,— ըսավ։

Իսկ Գուրգեն ոտք ելնելով հանդարտությամբ և ահագին սուրը մերկացնելով՝

— Անձնատուր լինելու եթե մարդ կա այստեղ, մենք չենք, այլ դուք

եք, փուլ կենդանիք, գոչեց և ձախ ձեռոք հույն իշխանին թևեն հափշտակելով՝ տղու մը պես գետին զարկավ և ոտքը վրան դնելով՝ թո՞ղ գա՛վ որ համարձակի զքեզ ազատելու այս վիճակեն։

Խոսրով և Աշոտ մերկ սուրերը ձեռքնին ոտքի վրա էին, նույնպես հույն պահապանք սուրերը մերկացեր անշարժ մնացեր էին ապշյալ, և չէին գիտեր, թե ի՛նչ ընեն։ Իսկ Թեոփիլոս այդ սոսկալի ոտքին տակ ճնշյալ՝

— Ազատեցե՛ք զիս, ազատեցե՛ք,— կը գոչեր խեղդուկ և ողորմուկ ձայնով։

— Թե որ ոտք մը առաջ առնուք,— կ'ըսեր Գուրգեն պահապանաց, յուր պատերազմական ձայնը հանելով,— ձեր տերը որդի մը պես կը ճզմեմ սա ոտքիս տակ և յուր դիակը դարձյալ ձեզի պես անպիտաններու չեմ տար, եթե տասնապատիկ նաև ավելի լինին։

Սրահը ընդարձակ էր բավական. մեկ կողմը տասը-տասներկու հույնք ճանգնած էին սուսերամերկ, և մյուս կողմը Գուրգեն իր երկու բարեկամանգնած էին սուսերամերկ, Թեոփիլոս երեսի վրա պառներով ու Վահրիճ նույնպես սուսերամերկ, մեռած հսկային ոտքին տակ, որ կոնակին վրա կոխել էր, հազիվ թե շունչ կ'առնուր, և երեսները կապտեր էին, ու քունքերուն և վզին երակները ուռած խղդվելու մոտ էր։

— Մեռա՛, մեռա՛, ազատեցե՛ք զիս,— կ'ըսեր։

— Եթե ազատիլ կուզես, հրամայի՛ քու մարդոցդ զենքերը ձգեն և դուրս ելնեն։

— Պահապա՛նք, դուրս ելեք։

— Խարդա՛խ հույն, զենքերը ձգել մի՛ մոռնար։

Այս միջոցին պահապաններեն մեկը սիրտ ըրավ և սուրը ձեռքը հանած հարձակեցավ Գուրգենի վրա, իսկ սա, որուն աչքը շարժմունք մը չէր կորուսած, դեռ մարդը իրեն չի հասած՝ այնպիսի ոտքի հարված մը տվավ փորին, որ խեղճը յուր սուրը ձեռքը վեր թռավ մարդաչափ բարձրությամբ և պտույտ մը ընելով օդին մեջ՝ դիակի մը պես ինկավ մնաց։ Իսկ Թեոփիլոս իր խղդուկ ձայնով՝

— Ձգեցե՛ք զենքերը, դուրս ելե՛ք, մեռա՛, ո՛հ...

Սուրերը թողին պահապանք և դուրս ելան, դռան քով լցվեցան։

— Վահրիճ, սուրերը ժողվե, սա հիմար դիակն էլ դուրս քաշել տուր ընկերներուն,— ըսավ Գուրգեն և ոտքը վերուց Թեոփիլոսի վրայեն, որ՝

— Մեռա՛, մեռա,— կ'ըսեր մարած ձայնով։

— Մի՛ մեռնիր, դու մեզի դեռ հարկավոր ես, վասնզի թե որ կ'ուզես ապրիլ, պետք է հրամայես, որ բերդին դռները բանան, և ամեն բան առանց կաթիլ մը արյուն թափելու վերջանա։

— Այդ անկարելի բան է, կը մեռնիմ, սպաննեցե՛ք զիս, ես այդպիսի հրաման չեմ տալ.— Գուրգենի ոտքը դարձյալ ծանրացավ հույնին վրա, որ ձայն չի հանեց և տոկաց քիչ մը ատեն. բայց երբ ոսկորներն սկսան ճարճատիլ,

— Ո՜հ, ո՜հ, անգութ գազան, սպաննեցիր զիս...

— Քու ձեռքդ է ազատություն, քու ձեռքդ է մահ,— կ'ըսեր Գուրգեն և կը ծանրացներ իր ոտքը։

— Բացե՛ք, բացեք դռները, թո՛ղ գան մտնեն շուները,— կը գոչեր խեղդուկ ձայնը։

Վազեցին ան ատեն պահապանք, և քանի մը վայրկյան հազիվ անցավ՝ ահա Իշխանիկը երկու հարյուրի չափ ձիավորներով կը փութար ներս, և երբ տեսավ Թեոփիլոս գետին տարածյալ Գուրգենի ոտից առջև, արյունախառն փրփուր բերանը՝ մարած ինկած և որ հազիվ թե կը շընչեր. սուրերու տրցակ անկյուն մը, որ Վահրիճ կը պահպաներ, Ատոմ և Խոսրով, որ սուրեր ձեռվընին ծիծաղելով կը խոսեին։

— Այս ի՞նչ տեսարան է, բոլոր այս ի՞նչ կը նշանակե,— կ'ըսեր նա։

— Այս այն կը նշանակե,— պատասխանեց Գուրգեն,— որ մենք հեռվանց կարծեցինք, թե իմ բերդիս տեր կանգնող ավազակները մարդ են՝ մոտ եկանք՝ լավ դիտեցինք և տեսանք, որ մարդու կերպարանքով կապիկներ են, որ և ոչ իրենց կայսեր հրովարտակը գիտեն հարգել. ուստի այսպիսի կենդանիներու հարկ համարեցինք վրանին ձեռք չի վերցնել, այլ ոտքի տակ ճզմել։ Բայց որովհետև սա մեզ սպառնացավ ոտք-ձեռք կապած ժայռերն ի վար գլորել, մեզ կը պատկանի հիմա որոշել, թե նույնը այս անպիտանին պե՞տք է ընել թե ոչ. ժամանակ ունինք՝ կը մտածենք։ Հիմա տղա՛ք, ինչ որ հույն կա, ամենն էլ կապեցեք։ Դու էլ, Վահրիճ, այս Թեոփիլոսի քով սպասե, որ հոգին չի փչե, ջուր տու՛ր, խնամե՛, ծածկե՛, վերջապես ինչ կ'ընես ըրե՛, ջանա՛, որ չի սատկի և կենդանանա, մինչև որ ժամանակը հասնի և որոշվի, թե ի՞նչ կա սորա բաժնեն մեզի և ի՞նչ սատանային։

Սուրը պատյանը դրավ Գուրգեն, և սկսան իշխանները պտտիլ իրեն հետ բոլոր սենյակները։ Ամեն բան նույն վիճակին մեջն էր, ինչպես թողեր էր Գուրգեն, բացի փոքրիկ սենյակե մը, ուր հույնը զետեղվեր էր առժամանակյա կերպիվ, մինչև որ ընտանիքն հասնեին։

— Թվի թե այս բերդին բախտին մեջ չի կա, որ ընտանիք ոտք կարենան դնել,— կ'ըսեր Գուրգեն դառն հեգնությամբ։

Իսկ Վահրիճ այն միջոցին զբաղված էր յուր կալանավորին հետ, և յուր անճոռնի հունարենով և սատանայական ծաղրածությամբ ջուր կուտար, կուրծքը կը շփեր յուր փափուկ ձեռքերով և մխիթարելով խեղճ հույնը կըսեր.

— Ես փորձով գիտեմ, ո՜վ մեծ իշխան, այդ մարդուն ուժը, ո՜չ թե քեզ պես թեթև կապիկ մը, այլ արջ մը նաև լինի դիմացինը՝ խնձորի պես գետին կը զարնե, դեռ տղա էր, երբ զիս կակուղ բամբակ դարձուց, հիմա որ ահագին մարդ եղավ, կ'իմանամ քու վիճակդ, քեզի պես հույն իշխանի՝ ազնվական իշխանի ոչ ձեռք, այլ ոտք վերցնելը շատ անվայել բան է, բայց ի՞նչ ընես, բացի համբերությենե ճար չի կա։ Վա՜խ, իմ հույն իշխանս, իմ քրիստոնյա իշխանս. իմ պառավս գոնե հոս լիներ, հիմա քեզի ան իր պատվական դեղը կ'ըներ, ցավեն կ'առողջանայիր, կը կանգնեիր դիվահարի պես։ Հոդ չէ, եթե մեռնիս, քեզ կը բռնենք ոտքերեդ, ձեռքերեդ, առոք փառոք շիտակ Թորթումի գետը կը նետենք, անկից դու կ'իջնես Ձորոխ, անկից Սև ծով, հոն բարեկամ շա՜տ, քանի մը օր առաջ ճերմակ ու սև արաբացիք ղրկեցինք, անոնց հետ կ'երթաս մինչև Կոստանդնուպոլիս, կայսեր կը պատմես, թե Գուրգեն Ապուպելճ Արծրունի...

Երբ հոս հասավ յուր ողբերգական ճառը, բարձրաձայն քրքիջ մը կորընկեն յուր զավեշտաբանությունը դադրեցուց և զարմանքով տեսավ, որ Գուրգեն, Իշխանիկ, Խոսրով, Աշոտ առանց ոտից ձայն հանելու մտեր շարվեր՝ յուր մխիթարիչ խոսքերը մտիկ կ'ընեին, և վերջապես չի կըրնալով ծիծաղ սանձել քրքիջ բարձրացեր էր, երբ խեղճ Թեոփիլոս կը տքար և հազիվ թե շունչ կ'սկսեր առնուլ։

— Տե՛, — ըսավ Գուրգեն,— ես քեզի հանձնեցի, որ սա խեղճ մարդը խնամես, դու ի՞նչ կ'երգես սորա գլխուն։

— Ի՞նչ որ բժշկություն գիտեի, ամենն էլ գործադրեցի, տե՛ր, հիմա էլ կը մխիթարնի, վասնզի լսեր եմ թե մխիթարությունը հիվանդի մեծ դեղն է։ Միայն քու ոտքդ թեթև չէ, ես գիտեմ, խեղճ մարդուն սիրտն ու փորը լրար խառնած պիտի լինի, վասնզի բերնեն շատ արյուն եկավ, տեսե՛ք սա ճերմակ թաշկինակը բոլոր ներկվեցավ, կարծեմ թե բարի նշան չէ, և շատ ցավալի բան կը համարիմ, եթե վաղն առավոտ յուր դիակը Թորթումի գետը...

— Լավ, իմացանք, բավական է. դու գնա նայե, մեզի կերակուր պատրաստել տուր, այդ իշխանին ծառաներեն ամենեն շնորհքովը բեր քովը դիր, որ իրեն խնամք տանի։ Բայց լավ նայե՛, սա անպիտան հույները մեզի խաղ մը չի խաղան, մեր կերակուրին մեջ բան չի խառնեն, մեզ չի թունավորեն։

— Շատ շնորհակալ եմ, Տեր, այդ բաներեն ավելի լավ կը հասկընամ, քան թե հիվանդ խնամելեն,— ըսավ Վահրիճ և գնաց։

— Այդ անպիտանը ամենևին գութ ըսված բանը չունի,— կ'ըսեր Գուրգեն։

— Տարբերությունը հոն է,— կը պատասխաներ Խոսրով կատակով,— որ Գուրգենի գութը այն ատեն կը հասնի, երբ մարդ վերջին շունչը կուտա։

— Աստված գիտե, որ մարդու կաթիլ մը արյուն չեմ սիրեր թափել, բայց այնպիսի անիծյալ արհեստ է զինվորությունը, և այնպիսի դառնության ժամանակի մեջ կ'ապրինք, որ կատարյալ գթություն ունենալ անկարելի է։ Սա դռան առջև կեցած այդ տասը-տասներկու պահապաններն ջախջախել մեր երեքին համար ի՞նչ էր, փչեինք՝ կը սատկին, բայց հանցանքը իրենց սա խելառ իշխանին էր։ Այս ի՞նչ ժամանակ է, եղբարք, երբ մտածեմ քստմնել կուգա վրաս. ավազակություն, հափշտակություն, ուխտադրժություն, ապերախտություն, մատնություն, դավաճանություն ներսեն դուրսեն ճարակեր պատեր են Հայաստան. աստված ինք ողորմի, հասնի յուր խեղճ ժողովրդյան։

— Դժբախտությունը հոն է, որ մեկ հուսո նշույլ մը տեղաց մը չերևար,— ըսավ Խոսրով։

— Խե՜ղճ Հովնան, բոլոր հույսը կաթողիկոսին վրա դրեր էր, անցյալ ամեռ էր գնաց խնդրելու, որ գլուխ կենա ժողովրդյան՝ ամենը զինե...

— Ես հոն էի, երբ եկավ ատյանին մեջ այս խնդիրը առաջարկեց և բանտ ղրկեցին, որպեսզի Գարդմանաց Կորիմը զոհ ընեն,— ըսավ Աշոտ։

— Ամենքն էլ անպիտա՜ն, կաթողիկոսն էլ, իշխաններն էլ, նախարարներն էլ... Ահա ահագին Հայաստանին մեջ աստված մեկ Հովնան մը ստեղծեր է, և այն էլ Սասունի լեռան գլուխը դրեր է...

— Ճշմարիտ է,— ըսավ Խոսրով։

— Դու անկից ի՞նչ պակաս ունիս,— հարցուց Իշխանիկ Գուրգենին,— նա քու զորությունդ էլ չունի։

— Ես իմ սրտիս ձայնին ուշ կը դնեմ, նա յուր մտքին կը հնազանդի։ Այդ սակավախոս էակը մեզ ամենքս էլ լավ կը ճանչե, մենք... ես իմ վրաս պիտի խոսիմ, ի՞նչ ուրիշները կը խառնեմ։ Ես, ինչ մեղքս պահեմ, երբ իմացա՝ տեսա, որ Վասպուրական և Արծրունիք վտանգի մեջ են և ժամանակ կար և կրնայի երթալ իրենց օգնել, արյունս կ'եռար երակներուս մեջ, ծարավի էի պատերազմի, սիրտս եփ կուգար, երբ կը լսեի այդ անօրեն արաբներու հասուցած չարիքը խեղճ ժողովրդից. չի շարժեցա Բագրևանդա և չի գնացի, երեկոյին կ'ուխտեի երթալ, առավոտուն քանի որ միտքս կուգար և կը հիշեի անցյալ ինձ եղած անիրավությունքը, կը սառեի և չէի կրնար շարժիլ։ Բայց Հովնան լավ համոզված՝ թե նախարարք հայոց մոլի, անպիտան, փառասեր մարդիկ են, և յուր

լեռն ապահով՝ ոչ ուրուք օգնության կարոտ է, դարձյալ յուր փոքրիկ զինվով օգնության կ'երթար Արծրունյաց, և ես կը հավատամ, թե նա ժամանակին հասներ Վասպուրական, այդ վիճակը չէր ունենար, և Աշոտ չէր մատնվեր, վասնզի Հովնան անտարակույս՝ Աշոտ քան եղած ժամանակին՝ կ'իմանար դավաճանությունը, և մատնությունը վրա չի հասած կայծակը կ'իջեցներ անզգամաց գլխուն։ Ահա տարբերությունը, Իշխանիկ, իմ և Հովնանու մեջ. ես քեզի պես, Խոսրովի պես, Աշոտի պես մեր զբաղմությունը, մեր հանգստությունը, մեր քենը, մեր նախաբարական անունը կը նայիմ, իսկ Հովնան բոլոր ազգին վիճակը կը մտածե, ազգին թշվառության ճար, դարման կ'երևակայե, և այդ բանին համար հետի միայնակ տեսա զինք օր մը, որ կ'երթար ազգին հոգևոր գլուխն՝ կաթողիկոսին...

— Տեսնենք հիմա ո՞վ պիտի դնեն կաթողիկոս,— ըսավ Աշոտ։

— Ի՞նչ, կաթողիկոսը վախճանե՞ր է։

— Այո, վախճաներ է։

— Շատ լավ բան ըրեր է,— ըսավ Գուրգեն,— ո՜ գիտե, թերևս իրմե լավը տեղը դնեն դիպվածով։

— Բայց դու խոսքդ շարունակե,— ըսավ Խոսրով։

— Ի՞նչ շարունակեմ, ամենուն գիտցած բանն է։ Ըսել կ'ուզեի, թե այդ լեռնցին բոլոր քաղաքացիներե, ազնվականներե, իշխաններե, նախարարներե, կաթողիկոսներե վեր և բարձր է։

— Շատ ստույգ է, ես էլ այդպես եմ ճանչեր զինքը,— ըսավ Խոսրով։

— Ես զինքը հրավիրեցի, բայց ե՜կ տես, որ Հովնանու պես խքստակյաց մարդու ի՞նչ պատիվ կա աշխարհիս վրա, որ հաճոյական կարնա լինիլ. ոչ համադամք, ոչ անուշահոտ գինիք, ոչ նվագարանք, ոչ որսք, ոչ գեղեցիկ շենք, ոչինչ ազդեցություն չունին այդ աննման մարդուն վրա. անփոփոխ միևնույնն է ամեն զվարճության առջև։

— Գուրգեն, կը սխալիս,— ըսավ Խոսրով,— երբ երեք դավաճանները կախաղանին վրա բարձրացան, կրնա՞ս զբուցել, թե զվարճություն չզգաց այդ մարդը, որ այնչափ աշխատեր էր զանոնք հոն բարձրացնելու համար։

— Երբ այդ անզգամները հոն այդ կախաղանին տակ իրենց պատիժը պիտի ընդունեին, երբ մենք անտարբեր էինք և գրեթե ականատես, ես տեսա այդ մարդը տարուբերյալ անխոս կը մտածեր. ինքն էր, որ կողքաց վանահայրը քաշկռտելով և բռնի բերեր էր մեզի հետ, օրով առաջ խրատեց, թե յուր պարտավորությունն էր այս մահապարտներու հոգևոր պիտույքը հոգալ, և վերջի վայրկենին իրենց պարզաբար ըսավ,

թե ի՞նչ հանձնարարություն որ ունեին, կրնային հայր սուրբին զրուցել։ Եվ երբ Մուշեղ հանելով յուր մատանին և քսակը հանձնեց, իր կինը և զավկները հիշեց, ես տեսա, որ հեռացավ ծածկելու արտասուքը։ Անոր համար ըսի, թե այդ մարդը մտքին միայն կը հնազանդի. բայց պետք է գիտնանք, թե սիրտ էլ ունի։ Նույն միջոցին ես մոտեցա իրեն և ըսի. «Հովնան, եթե այսչափ կը ցավիս այդ մարդոց վրա՝ քու ձեռքդ է թողուլ, որ երթան»։ Ի՞նչ պատասխան տվավ ինձ, գիտե՞ք։ «Դու տղա ես, Գուրգեն, իմ ձեռքս բան մը չի կա, ես դատաստանի վճիռն ի գործ կը դնեմ, ես կը ցավիմ այդ մարդոց վրա, որ արժանի եղեր են մահու, բայց շատ ավելի կը ցավիմ իրենց այրիներուն և որբերուն վրա. բայց եթե արդարության չի հսկեն նոքա, որոց վերուստ ամենափոքր կարողություն տրված է, հանցավոր կը մնան առաջի աստուծոյ»։ Զարմացա յուր այս խորհրդածությանց վրա և իրավունք տվի։

Բայց այս բոլոր խոսակցությունները դադրեցան, երբ Վահրիճ եկավ զիրենք կերակուրի հրավիրելու։

Ան գիշերը հանգչեցան, երկրորդ օրը ելան այդ փոքրիկ և գեղեցիկ գավառը շրջագայելու, տեսնելու մանր առուներն ու վտակները, որ երբեմն սիրուն բլրակներե կ՚իջնեն, երբեմն ահավոր լեռանց պատառվածներե և կ՚երթան Թորթումի դետը թափելու. տեղ-տեղ թուփեր և մայրյաց անտառներ, տեղ-տեղ խոտավետ ձորակներ, որ շարունակ կը փոխվին։ Հետո ահագին ապառաժներ ոմանք կամար-կամար ձևացյալ, ոմանք անճոռնի սեպացյալ մեկ կողմեն, և մյուսեն ծառերու, պարտեզներու և մարգագետիններու կանաչություն սոսկում և զվարճություն աչաց կը պատճառեին։ Վերջապես կը հասնեին՝ կը տեսնեին գետը, որ գեղեցիկ լիճ մը կը ձևանար, և այդ լիճը որ դարձյալ ի գետ կը փոխարկեր և կը դիմեր՝ կը թափեր քարափանց վրայեն ահագին բարձրությենե սոսկալի շառաչմամբ փրփուր և ցնցուղ, և փոշի դառնալով։ Ճիշտ այդ գեղեցիկ և միանգամայն ահավոր տեսարանին մոտ գեղեցիկ ամառանոց մը կար միահարկ, որ Աստղկան տաճար կը նմաներ, և որու դռան առջև կանգնած էր Վահրիճ քանի մը սպասավորներով։

Այն օրերեն մինչև այսօր հազար և ավելի տարիներ անցան. գետը, լիճը, ջրվեժը, փրփուրը, ցնցուղը ամենն էլ անփոփոխ մնացած են և այսօր. ուղևորը հեռու աշխարհներե կ՚երթա, կը տեսնե, կը հիանա. բայց այդ տաճարանման ամառանոցը ո՞ւր է, հետքը անգամ չէ մնացեր. ո՞ւր են գավառին հայ բնակիչք, իրենց եկեղեցյաց ավերակներ մնացեր են՝ իրենք անհետ բոլորովին. «Ազգ գա և ազգ երթա, և աշխարհ հավիտյան կա»։

Մեծ էր ուրախությունը շրջակա գյուղերու բնակչաց, երբ Գուրգենը

տեսան հասած, և բազմություն ժողովրդյան գյուղապետներ և քահանաներ առջևեն բարով եկարի կուգային, և նա կը ջանար զվարթ երես ցցնել այս պատվական գյուղացվոց, երբ իր սիրտը դառնությամբ լի էր, վասնզի ինք կը հիշեր օրերը, որ ինչպիսի փափագով ամառանոցը շիներ էր։ Եվ հիմա նորա սեմոց վրա իրեն սպասող Վահրիճի կերպարանքը կը տեսներ։

Ամեն բան կը ծիծաղեր բլուրին վրա, ծառերը ծաղկած էին, մանուշակ իր քաղցր հոտը կ՚արձակեր, կանաչը գարնան ավետաբեր կը ծածկեր շրջակայքը, բայց Գուրգեն առանց յուր միտքը հայտնելու, սրտին հառաչանոք կ՚երդնուր, թե անգամ մ՚էլ չպիտի դառնար՝ ոչ այդ շենքը և ոչ այդ բնության գեղեցկությունը տեսնելու։

ԳԼՈՒԽ Ի

ԵՐՋԱՆԻԿ ՄԱՐԴ

Գարուն եկավ, բնություն բոլոր զվարթացավ, բայց դարձյալ Հայաստան կուլար։ Թշնամին, որ որջացյալ էր Հայոց մայրաքաղաքը Դվին, կը պատրաստվեր ելնել դեպ հյուսիս և արևելք, որպեսզի երկիր մը՝ թիզ մը հող չի մնա անթաց արցունքե և արյունե։ Իզուր երկրագործը կը պատրաստեր իր աշխատանքը, իզուր վաճառականը կը կապեր իր կարավանը, դարձյալ ամեն սիրտ ահ ու դողի մեջ էր, ոչ ոք վաղուին վրա տահություն ուներ, ինչպես ամառվան օր մը պայծառ արև և երկինք՝ տերև չի շարժիլ, բնությունը բոլոր լռության մեջ կ՚սպասե, կը գուշակե փոթորիկը, որ կը հասնի որոտալով, փայլակ, կայծակ, հողմ, հեղեղ թափելով ամեն կողմե, նույնպես ամեն ոք կ՚սպասեր փոթորկին։

Թեպետ ամբողջ երկիրը կզգար այս ամենը, բայց քան զամեն ոք՝ ավելի կ՚զգար մարդ մը, որ ամեն բան կը տեսներ, ամեն բան կ՚իմանար, երկրին ո՞ր կողմը ի՞նչ անցք որ անցներ կը տեղեկանար, որ կ՚ըզգար նաև թե սոսկալի պատասխանատվություն մը յուր վրա կը ծանրանար։ Այս մարդը Սմբատ սպարապետն էր, քաջ, խելոք պատերազմի մեջ վտանգը տեսնելու համար, ագահ իր եղբարց և ազգին արյան վախցող անիրավությենե, վասնզի կը վախնար հաստուծո և սոսկումով կը տեսներ, թե մտեր էր այնպիսի ճամփու մեջ, որուն ելքը զինք գահավեժներե հանդունդս կը տաներ։ Ինք, ստեղծված պատերազմելու օտարին և Բուղայի դեմ, կը տեսներ զինք դատապարտված նորա անգութ

ձեռքին մեջ անիրավության և մատնության գործիք մը լինելու։ Կը լսեր, կ'իմանար, թե Բաղդադ հայոց իշխանաց մեծ մասը Բագարատա յուր եղբոր օրինակին հետևելով կ'ուրանային հայրենի հավատքը ազատելու համար բանտե, տանջանքե և մահվանե։ Կ'իմանար, թե պակսած զորաց տեղ Բուղայի նոր օգնություն կը հասներ Հասորեստանե։ Որդվույն նամակը, որ կաթողիկոսին մահը և Բուղայի զինքն ուզելը կ'իմացներ, դառնությամբ լցուցեր էր սիրտը։ Մահվան երկյուղը հազար անգամ ավելի սիրելի էր իրեն, քան թե այդ բռնավորին երեսը տեսնել, բայց այն առջի օրվան հուսով թե թերևս հայրենյաց ցավերը մեղմացնե, թըշվառ ժողովրդյան օգտակար կարենա լինիլ, կը հնազանդեր։ Բայց ի՞նչ տխուր աչոք կը տեսներ այդ Վասպուրականի երկիրը, որ իրեն հանձնըվեր էր, Աշոտի գերությենեն վերջ, ուր ինք բոլոր ձմեռ անդուլ աշխատեր էր հայ ժողովրդյան լուծը քաղցրացնել, առանց տիրող ազգին բռնությունքը և հափշտակությունքը սանձելու։ Անպիտան, անարգ և հասարակ ծառայությենե իշխանության հասած ամիրաներ կը տեսներ, որ տեր եղած բռնացել էին Արծրունյաց, Ռշտունյաց, Քաջբերունյաց, Բզնունյաց անառիկ բերդերուն, և ավազակաբար կիջնեին հարստահարելու յուր ազգին ժողովուրդը, որ կը տքար, որ կը մռնչեր, որ կ'ուզեր շղթաները կոտրտել և այս անարգ բռնավորաց գլուխը ջախջախել, եթե ամիրապետին երկյուղը չլիներ։

Ուստի համբերության հորդորելով ժողովուրդը, ելավ ճամփա երթալու Երազգավորս, ուր հրաման ղրկեր էր որդվույն Աշոտո ժողովել հայոց եպիսկոպոսներն ու իշխանները կաթողիկոսի ընտրության համար։ Ժամանակ չէր դանդաղելու. ամեն իշխան և եպիսկոպոս գլուխն ազատելու կը ջանար. ուստի միաբան ընտրեցին Զաքարիա անուն աշխարհական անձ մը, որուն առաքինությունը և անձնուրացությունը հայտնի էր ամենուն. վասնզի Հայաստան ձանձրացեր էր այդ անտարբեր, թուլամորթ հայրապետներեն, որ իրենց հանգստությունը միայն կը ճանչեին և կը փնտրեին։ Եվ այս Զաքարիա ձեռնադրեցին միևնույն օրվան մեջ ի սարկավագություն, ի քահանայություն, հեպիսկոպոսություն և ի կաթողիկոսություն։ Առաքինի անձի մը ընտրության համբավը տարածվեցավ ամեն երկիր, և ժողովուրդը հույս համարեց նաև այս ընտրությունը։

Բայց ի՞նչ կրնար ընել կաթողիկոս մը, ինչչափ որ բարի կամք էլ ունենար։ Յուր նախորդին օրով դեռ ժամանակ կար, բայց հիմա, երբ թշնամին Հայաստանի կեդրոնը կը բնակեր հարյուր հիսուն հազար զորքով և դեռ օգնության կ'սպասեր, անօգուտ կրնար համարվիլ ամեն ջանք, ուստի, երբ հայրապետը այս խոսքը բացավ Սպարապետին, նա հայտնի խոստովանեցավ, թե ամեն բան և ջանք ուշ էր, միմիայն ճամփա խոհեմությամբ թշնամվույն հետ վարվիլն էր և նորա շարությունն քաղցրացնել։ Եվ այսպես զինքն հայրապետին աղոթից հանձնելով՝ Դվին գնաց Բուղայի հրամանին հնազանդելով։

Դվին քաղաքը այն ժամանակ Հայաստանի մայրաքաղաք՝ գրեթե 200,000 և ավելի բնակիչ ուներ, երևելի յուր ոստիկանաց պալատով, կաթողիկոսարանով և մայր եկեղեցիով. թեպետ կաթողիկոսը հոն բնակելու չէր համարձակեր արաբացի իշխանին երկյուղեն։ Նույն միջոցին քաղաքը բավական չէր այդ զինվորները պարփակելու, ուստի մեկ մեծ մասը շուրջը վրաններով կը բնակեին։ Հայոց սպարապետը ուղղակի ոստիկանին պալատն իջավ։

Բուղա, որ թուրք էր ազգավ, յուր սերնդին գծագրությունն ուներ. խոշոր գլուխ, մանր և խոր աչքեր, ցցված այտեր, ցանցառ և կարմիր մորուք։ Երբ տեսավ զՍմբատ, իր դաժան երեսին վրա ծիծաղ մը եկավ, բայց մեկը չէր կրնար զրուցել, թե հեգնությա՞ն էր ծիծաղը, թե հաճությյան. իր մանր աչքերը փայլ մը առին, այդ փայլը հովազի արյունածարավ աչքերուն փայլն էր։ Ոտք ելնելու պես շարժմունք մ'ըրավ, բայց չելավ. վասնզի անհավատի մը ոտք ելնել հակամայս և ծանր դիպվածներու մեջ ներելի էր մյուսուլմանին, թեպետ, երբ դեռ Արծրունյաց իշխանը չէր մատնյալ, այն ատեն միշտ քաղաքավարության ամեն պարտքեր կը կատարեր, վասնզի դեռ Հայաստան զորություն ուներ։ Իսկ հիմա երկրին կեանքն իրենն էր, և ինք մյուսը նվաճելու համար բավական զորավոր։

Երբ ամենքը քաշվեցան, և այս երկու անձինք միայն մնացին, Բուղա հայտնեց յուր գոհությունը նորա հավատարմության համար, և թե ինք միշտ գովությամբ գրեր էր ամիրապետին, բայց թե պետք էր, որ իրեն օգնե մինչև վերջը երկրին կատարյալ նվաճման համար. և դիվական խաբեությամբ կը հայտներ, թե նախ Տփխիսի վրա էր հարձակելու, որուն իշխանը մահմեդական էր. և կը տեղեկանար, թե ի՞նչ էր նորա զորությունը, և ի՞նչ դիմադրություն կարող էր ընել իրեն դեմ։ Նույնպես կը հարցներ կ'իմանար, թե ի՞նչ էին կովկասյան ազգաց՝ Ծանարաց և Ավրհազաց զորությունքը։ Բայց այս օտարներու վրա հարցմունքները վերջանալե ետքը, իր գազանային զննող աչքերը ուղղելով դիմացինին աչքերուն մեջ, հայ իշխանաց բերելով կարգը, սկսավ հարցնել Ատրներսեհ Արցախի իշխանի, Վասակա և Բաբկենի Սյունյաց իշխանաց, Գարդմանաց Կտրիճի և Աղվանից Եսայի իշխանին վրա։ Իսկ Սմբատ թեպետ մեծ հուզմունք մը իմացավ, բայց առանց հայտնելու հանդարտությամբ կը պատասխաներ հարցմունքներուն. խղճմտանքը զինք կը տագնապեր, վասնզի ի՞նչ էր ըրածը, եթե ոչ մատնություն. այնպես կը թվեր իրեն, թե

դահլիճին դռան քով կեցած Մերուժան, Վասակ և սոցա նմանները մատնանիշ զինք կը ցցնեին հեգնական ծիծաղով. բայց դարձյալ զգուշութամբ իր անվայել պաշտոնը կատարելով, ելավ, երբ գոհ ըրավ բռնավորը, և հրաժարական ողջույնը տվավ երթալու իր բնակարանը հանդչելու։

Կորովի ծերը այնչափ հոգնած և բեկյալ ելավ բռնավորին քովեն, որչափ երկայն ճամփորդությամբ Մոկաց երկրեն մինչև Դվին չէր վաստակել։ Ցուրտ քրտինք մը կուգար վրան, երբ կը մտածեր, թե ինք բարեմտությամբ ազգին դավաճանության առաջին գործիքն եղած էր. այս մտատանջությամբ երբ իր իշևանին առջևն հասավ շրջապատյալ իր թիկնապահաց և դեռ ձիեն չիջած, յուր զորաց մեջ խառնյալ տեսավ կերպարանք մը, որ զինքն արձանացուց։ Այն վայրկենին հոն իր առջև՝ այն մտածությանց մեջ Հովնան տեսնել իր դատապարտության վճիռն որոտաձայն լսել էր. այն գիշերը միտքն եկավ հորում նա իրեն խորհուրդ կուտար չերթալ առ Բուղա։ Բայց մարդկային միտքն արագ է. մի՞թե կարելի է կըսեր, որ Հովնան ինքն լինի, ինչպես կրնա համարձակիլ Դվին մտնել։ Բայց ահա նա էր, սլաքային աչքերովն իրեն կը նայեր անշարժ, անխռով և անթարթափ։ Արդյոք լսա՞ծ էր յուր Բուղայի հետ խոսակցությունը։— Ինչչա՜փ զորավոր է խղճմտանքի ձայնը, ինչչա՜փ սուր յուր խայթը։

Սակայն, առանց ձայնի ձեռքը կուրծքին տանելով բարև մը տվավ և ակնարկ ըրավ, որ իրեն հետ գա. և երբ սենյակ մը մտան, առանձին եղան՝

— Հիմա որ միայն մնացինք, զրուցե Հովնան, ի՞նչ բանի համար այս կողմերս և մանավանդ թե այս քաղաքս կը գտնվիս։ Միգուցե,— ավելցուց Սմբատ բռնի ժպիտով,— որ դարձյալ դավաճաններ, մատնիչներ ունենաս պատժելու և ինձմե սկսիս։

— Քա՜վ լիցի։ Ես զքեզ, Հայոց Սպարապետ, լավ կը ճանչեմ, դու կրնաս մոլորիլ և Հայաստան ընդ քեզ մոլորեցնել և ի կորուստ տանիլ. բայց դավաճանել չես կարող, վասնզի քու Քրիստոսդ ուրանալ՝ քու ազգդ ուրանակոխ առնել չես կրնար։

— Ի՞նչեն գիտես, որ այդպես կը խոսիս։

— Ամեն մարդ յուր անցյալեն կը դատեմ, և զքեզ ու քու անցյալդ լավ կը ճանչեմ։ Ես տեսա քու ժողովուրդդ թե՛ Մոկաց երկիրը, թե՛ Շիրակա գավառը, որ ամենեն երջանիկն էին։ Տեսա վերջն զքեզ, որ Աշոտո գերութենե ետքը ամեն ջանք ըրիր Վասպուրականի ժողովրդյան անտանելի վիճակը տանելի ընելու համար։

— Նույնպես լավ ճանչե՞ր էիր այդ Մուշեղ Վահևունին և իր ընկերները։

— Ինչպե՞ս կրնաս տարակուսիլ. մի՞թե ես՝ Հովնան, շարագործ, մարդասպան, դահի՞ճ էի, որ առանց ձեռքս նոցա դավաճանության ապացույցն ունենալու զիրենք կախաղան հանեի։

— Ի՞նչ էր այդ մարդկանց հանցանքը։

— Վատ մատնությամբ իրենց տիրոջ՝ դավաճանեցին իրենց ազգը և անբավ անմեղ արյանց և երկրին կործանման պատճառ եղան։

— Իրավունք ունիս, Հովնան...— ըսավ ծեր Սպարապետը և գլուխը կուրծքին վրա խոնարհեցավ, աչքերը գոցեց և երկար լռութենե մը վերջ, լի բարկությամբ գլուխը վեր առնելով,— այո՛, դու միայն իրավունք ունիս և ես, և ամենքս։ Դվնա ժողովքին մեջ անպիտան և անարգ դավաճաններ եղանք, և ազգն զմեզ ամենքս իրավունք ունի կախելու, որովհետև կործանմունքն կործանմունք տարինք զինքը... Ո՜, աստված իմ, աստված, ինչ է աս վիճակը։ Եթե մենք քու խորհրդոցդ հետևեինք, կարելի է շատ լավ վիճակի մը մեջ չէինք գտնվեր, բայց ոչ երբեք այսպիսի գազանի մը՝ այսպիսի անարգ բռնավորի մը կամքին խաղալիք կը լինեինք։ Այո, դու միակ մեկ մարդ մը գտնվեցար, որ աչք ունեցար տեսնելու. ինչու՞ աստված զքեզ այդ լեռներուն գլուխը դրավ և զիս նախարարական գահին վրա, ես որ արժանի չէի, և դու որ արժանի էիր։

— Եթե կ՚ընդունիս, թե սխալ ճամփու մեջ ես, ի՞նչ կ՚արգիլե զքեզ, սթափե՛, ե՛լ, ետ դարձի՛ր. ես՝ խեղճ սինլքոր սասնցի՝ խոռք կուտամ քեզ քսան հազար երկաթի մարդ իջեցնեմ իմ լեռներես, քսան հազար հուսահատ մարդ էլ այդ ոտնկոխ հնձան Վասպուրական կրնա տալ մեզի, քու Մոկաց և Շիրակա գավառները քսան հազար մարդ կրնան հարուցանել. եթե քառասուն հազար էլ մյուս նախարարությունները տան, հարյուր հազար զորքով մենք այդ Բուղայի երկու հարյուր հազար այլասեռ և այլալեզու ավազակները բնաջինջ կ՚ընենք, մենք, որ «ի վերա կանանց և որդվոց» պիտի կռվինք մեր նախահոր բացատրությամբ։ Հիմա մանավանդ որ առաքինի կաթողիկոս մը ևս ունինք, որ հանձն կ՚առնու իր կյանքը տալ ազգին համար, և որ ես անձամբ կը ճանչեմ։

— Ուսկի՞ց կը ճանչես զինքն...

— Երբ հորեղբորդ բանտեն փախստական անոք, անօգնական կը պըտրտեի, այդ Զաքարիան յուր տունը ամիսի մը չափ զիս պահեց, տեսա և ճանչեցի ան ատեն, որ առաքինի և պատվական մարդ էր, և ուրախացա, որ հայոց եպիսկոպոսունք և իշխանք եկած պատուհասեն զարհուրյալք՝ արժանավոր ընտրություն մը ընելու համար գնացին փնտրեցին և եկեղեցական աստիճաններե դուրս արժանավորը գտան Թադեոսի

և Գրիգորի աթոռին վրա նստեցնելու համար։ Բայց մեր խոսքեն հեռացանք, Հայոց սպարապետ, կրնա՞ս երկրորդ Վարդան մը լինիլ Հայաստանի համար, Վարդան ավելի խելոք, ավելի հանդարտ, վասնզի ես չեմ ուզեր անօգուտ մարտիրոսներու թիվը ավելցնել։ Ինձ ավելի սիրելի է այդ անարդ, մոլի և անպիտան նախարարաց գլուխը կործանել իրենց գահույքը՝ այդ դարավոր բազմագլխյան վիշապը, որ նախարարություն կ՚անվանեն, ջնջել, անհետ ընել, որ Հայաստան գլուխ մը միայն ունենա և ժողովուրդ մը և լինի մի հոտ և մի հովիվ։ Մի՞թե մեր ամեն թշվառությանց պատճառ անիշխանությունը չէ՞, որու առանց խելահաս լինելու անմիաբանություն անուն տվեր են և պիտի տան դարուց ի դարս։ Հիմա ինձ այն զրուցե, թե դու կուգա՞ս քու ազգիդ փրկիչ և գլուխ լինիլ։ Եթե հանձն կ՚առնուս՝ երկու գեղեցիկ ճամփա կա առաջդ. եթե մեռնիս՝ երկնի թագավորություն, եթե ապրիս՝ երկրիս թագավորություն։ Երկուքն էլ խոտելի չեն։

— Անցյալ տարի պետք էր քու խորհրդոցդ հետևիլ, այս տարի շատ ուշ է։

— Շատ կը վախեմ, որ գալ տարի նաև երբ ես այս աշխարհքը՝ թողած լինիմ, դու ըսես իմ ետևես՝ «Ափսո՞ս, պետք էր այն մարդուն խոսքին հետևիլ»։

— Դու որ այդ խոսքը կ՚ըսես՝ ի՞նչ վիճակ կը տեսնես Հայաստանի համար։

— Հայտնի է վիճակը. դու, որ Հայոց սպարապետն ես, Բագրատունյաց գահագլուխ՝ չե՞ս տեսներ, թե ամառ մը բավական եղավ մահմեդականին Հայաստանու կեսը ոտնակոխ ջախջախել. չե՞ս տեսներ այս ամառ մյուս կեսն էլ նույն վիճակը պիտի գտնե, եթե շարժմունք և դիմադրություն չլինի։ Անկից վերջ թող սպասե հայը ստրուկ՝ անզեն և շղթայակապ, որ յուր բարբարոս տերը՝ իբրև ողորմություն թողու իրեն հացին այն պատառիկը, որ թշվառ գերության կյանքը շարունակե, թողու իրեն կին և որդիք, երբ շղթա և թշվառություն նոքա կը տգեղցնեն, թողու իրեն հող՝ մորթ և ոսկորը միայն ծածկելու համար։

— Բայց դու չես գիտեր մեր վիճակը, Հովնան, դու չես գիտեր, թե այս նախարարները, եթե ես վաղը ոտք ելնեմ, ամենքը կը միաբանին Բուղայի հետ զիս ջախջախելու համար։

— Ինչպես, դու ուրեմն կը միաբանիս Բուղայի հետ ջախջախելու համար զիրե՞նք,— ըսավ Հովնան յուր աչքերուն սոսկալի փայլով և ոտք ելավ դեպի դուռը։

— Կա՛ց, ո՞ր կ՚երթաս. այսպես շուտով կը դատապարտես մարդը։ դու որ քիչ առաջ դորա հակառակը կը պնդեիր։

— Կը ներես, իշխան, ես ոչ իշխանազուն եմ և ոչ ազնվատոհմ. ես քիչ առաջ ըսի, թե ի՛նչ եմ։

— Կ՚իմանամ ինչ ըսել կ՚ուզես. դու այդ արհամարհությամբ ընդդիմ նախարարական ցեղին՝ վեր կը համարիս քու շինական ծագումդ։

— Կրնա՞ս տարակուսիլ այդ բանին վրա, երբ դու կը խոստովանիս, թե այդ նախարարք, երբ դու ոտք ելնես ազգդ կանգնեցնելու, ամենքը Բուղայի հետ կը միաբանին զանի կործանելու։— Թո՛ղ ուրեմն, որ իմ ազգիս հետ լինիմ, վասնզի նա էլ ինձ պես շինական, սինլքոր՝ սոսկական լեռնական է։

— Բայց կա՛ց։

— Ի՞նչ կենամ, երբ իմ առաջարկությունս ընդունելու չափ քաջություն չունիս։

— Դու ի՞նչչափ ժամանակ է այս մտածությունը հղացար, գոնե այն զրուցե։

— Համարյա թե ամիս մը։

— Ինչպե՞ս կ՚ուզես, որ ես վայրկենի մը մեջ՝ առանց մտածելու՝ այդպիսի ծանր որոշողություն մը հանձն առնում։

— Ահա այդ բանին համար իմ հոս ուշանալս անօգուտ կը տեսնեմ, վասնզի դու իմ այս խորհրդյանս վրա պետք էր շատոնց մտածած լինեիր։ դու էիր, որ քիչ առաջ իրավունք կուտայիր իմ անցյալ տարվան առաջարկությանս, դարձյալ կարելի է վայրկյան մը նաև ունինք, մի՛ դանդաղիր, կարելի է ժամ մը չանցած ամեն բան անօգուտ լինի, կարելի է, որ հիմա նաև շատ ուշ մնացեր ենք, Հայոց սպարապետ...

Այս խոսքերն ըսած ժամանակ Հովնան մեծ ուշադրությամբ ձիերու ոտնաձայնին ականջ դրավ, գողի մը պես նայելով պատուհանին մոտեցավ, իր սուր աչքերուն արտաքո կարգի արթնություն մը եկավ և դառնալով Սմբատա՝

— Ինձի համար պետք է լինի այդ արաբ ձիավորաց խումբը,— ըսավ անխռով։

— Ի՞նչ կ՚ըսես, ինչե՞ն գիտես։

— Ես տեսա քանի մը կասկածելի մարդիկ, որ դիտող աչքով ինձ կը նայեին, երբ ես քեզ կ՚սպասեի. անշուշտ Բուղայի խմաց տված են։

— Բայց իմ տունս ո՞վ կրնա համարձակիլ...

— Մոկաց երկիրը քու տունդ չես, իշխան, Բուղայի ափին մեջն ես։

— Ի՞նչ պիտի ընես ուրեմն,— ըսավ Սմբատ այլայլված և երեսները կարմրելով։

— Ես իմ փախստյանս ճամփան ունիմ. ափսո՞ս, որ դու իմ ուզած մարդս չես։ Ես ուզեցի Սմբատներու առաջինն ընել քեզ, ավելի մեծ, քան

զԲյուրատյանն, ավելի մեծ, քան զՎարդան Մամիկոնյան, բայց դու չուզեցիր. վա՜յ Հայաստանի։

Եվ այս խոսքերը զրուցելով՝ հափշտակեց յուր կաշյա վահանը և նիզակը, ցատկեց դուրս, բացավ դուռ մը, որ տանիքը կը հաներ, և ամենայն արագությամբ տանիքե տանիք անցնելով՝ անհետացավ։

Իսկ Սմբատ, որ տկար մարդկանց սրտի ազնվությունն ուներ, մեծ զայրույթ իմացեր էր արդեն իրեն եղած նախատինքեն, ուստի երբ արաբ խմբին զորավարը ներկայացավ և խնդրեց խույզ ընել, վասնզի կասկածելի թշնամի մը պահվըտած էր յուր տան մեջ, հուզվեցավ և հեգնությամբ հրամայեց, որ նային, փնտրեն. և երբ նոքա գնացին, սկսավ մտածել յուր թշվառ վիճակին վրա, որ խաղալիք եղած է արյունարբու գազանին, և իրոք միմիայն փրկության ճանապարհը այդ լեռնականին ցույց տվածն էր. բայց ի՜նչ օգուտ, որ այդ մարդն նաև արհամարհանաց նայվածքին և ծանր խոսքերու տակ զինք ճնշեր և այնպես մեկներ էր— «Ի՜նչ երանելի մարդ է դա, ի՜նչ բարեբախտ մարդ. խղճմտանքը մաքուր՝ երկյուղ չի կա իրեն համար ոչ մարդիկներեն և ոչ աստուծո դատաստանեն։ Աստված այդ մարդը հատուկ ինձի ղրկած էր, որ այս կեղակարծ և անարգ դիրքեն զիս ազատե։ Եվ ես թշվառ և հիմար՝ հանձն չառի. ի՜նչ գեղեցիկ մտածություն, ի՜նչ փառավոր առաջարկություն ազատել և ազատել Հայաստան կամ մեռնիլ հավասար Վարդանա և յուր քաջ նմանյաց. իսկ ես Վասակի և Մերուժանի նմանիլ կը ջանամ, և այսօր սկիզբն ըրի մատնելով այն մարդիկը, որոնց հետ անցյալ տարի խորխուրդի նստած էի, թե ի՞նչ պետք էր ընել հավատքի և ազգի թշնամվույն հետ... Բայց մի՞թե հնար չի կա՜, մի՞թե կարելի չէ՞ դեռ ետ դառնալ, գտնել Հովնան և ըսել. «Հրամայե՛, և ես քեզ կուրորեն կը հնազանդիմ ու կը հետևիմ...»։ Ահա ուրիշ տկարամտություն մ'էլ, որ նստեր կը մտածեմ իմ վրաս, երբ այդ մարդը միայնակ Դվին կը մտնե, կ'արհամարհե երկու հարյուր հազար հոգվո սոսկալի զորավարը՝ գրեթե բարձակից մեծ ամիրապետին, և հանդուգն, աներկյուղ, նույնչափ, որչափ արթուն և խոհեմ, իմ վրաս ամենափոքր հույս մը նաև չի դներ, այլ յուր փախստյան տեղին կը պատրաստե ու կապահովե, և այսպիսի մարդու ես հուսահատ և կույր, և ողորմելի սպարապետ կը դանդաղիմ հետևելու»։

Այսպես կը խոսեր Սմբատ և կը հառաչեր, երբ հանկարծ խառնաձայն աղաղակ մը լսվեցավ. ցատկեց դեպի պատուհանը, տեսավ բազմաթիվ խումբ մը արաբ զորականաց, որ մարդ մը վերամբարձ կը տանեին, մարդ մը գլխաբաց՝ զինաթափ, և հարյուր ձեռք այդ մարդը կը քաշկըռտեին ու հազար ուրախության ձայն երկինք կը բարձրանային. իսկ մարդը արյունլվա էր բոլորովին, և մոտ եղողները կրնային տեսնել, որ

անխռով, աներկյուղ և արհամարհոտ աչքեր կը պտըտցներ ամբոխին վրա. այդ մարդը Հովնանն էր։

Նույն միջոցին կը հասներ Բուղայի թիկնապահաց խումբ մը, կը ցրվեր այդ զորականաց խառնաղանճը, և կալնավորը հափշտակելով կատաղյաց ձեռքեն կառներ կը տաներ դեպ ոստիկանին պալատը։

Իսկ Սմբատ ետ քաշվեցավ, և ձեռքը հուսահատությամբ ճակտին զարնելով կ'ըսեր. «Ափսո՜ս այդ քաջ մարդուն. և երբ կը մտածեմ, թե սորա կորստյան պատճառ ես ինքս եմ, և լոկ անունով Հայոց սպարապետ՝ չեմ կրնար բան մ'ընել իրեն ազատության համար, հիրավի կը գտնեմ, որ այդ մարդը ինձմե երջանիկ է»։

ԳԼՈՒԽ ԻԱ

ԵՐԿՈՒ ՇԻՐԻՄՔ

Մենք տեսանք Հովնան, որ տանիքե ի տանիս ցատկելով, ելնելով և իջնելով անհետացեր էր, բայց վերջապես հասնելով անկյան գլուխ և հոն յուր նիզակին վրա հեցյալ պտույտ մ'ընելով իջավ փողոց և տեսավ խումբ մը հեծելազոր, որ կուգար. հակառակ կողմը դառնալով սկսավ խուսափել, բայց հազիվ թե քանի մը քայլ առավ, և ահա դիմացեն նաև խումբ մը արաբացի խառնաղանճ զինք դիմավորեց. երկու սուրի մեջ մնալով Հովնան՝ է՛լ չի դարձավ, յուր ընթացքը շարունակեց։ Արաբացի խումբը նախ ուշադրություն չըրավ իրեն, բայց վերջը մեկը հանկարծ սոսկմամբ ետ քաշվելով աղաղակեց, թե՝ «ահա՜ թշնամյաց գլուխը». սա Շիրակա դաշտին մեջ տեսեր էր զՀովնան մոտեն և նորա երկաթի զորության փորձն առած էր. ուստի հարյուրավոր սուսերք վայրկենին մերկացան և շրջապատեցին «թշնամյաց գլուխը», որ նույնպես սուրը ձեռքը հարձակեցավ ճամփա բանալու իրեն, յուր կաշյա վահանավ քառասուն հարված ի դերև հանելով և աջ ու ձախ կոտորելով կը հառաջեր անվեհեր։ Եվ ահա սուրը խորտակեցավ, արաբացի խմբին գլխավորը, որ մինչև այն ատեն խոհեմությամբ դիտեր էր, առաջ անցավ, և մուրճի հարված մը տվավ գլխուն, որ սաղավարտը ջախջախեց և գետին գլորեց զՀովնան. փախստականները դարձան՝ վատերուն քաջության վայրկյանն էր այդ ինկած թշնամին սպաննել. բայց Իսրահիմ զորագլուխը յուր ահագին մուրճը ձեռքը կսպառնար փշրել այն մարդուն գլուխը, որ մոտենար վնասելու թշնամվույն, վասնզի իմացավ, թե մրցանակը ողջ առողջ

զնա Բուղայի հասցնելու վրա էր։ Ուստի սաստիկ մաքառելով հագիվ կըրցավ ողջ պահել, մինչև ձիավորաց օգնություն հասավ։ Հարվածին թմրութենեն սթափել էր Հովնան, երբ թշնամի ուսոց վրա հասավ ոստիկանին պալատը, և երբ հանեցին զինք Բուղայի առջև, և նա յուր խոր և մանր աչքերն ուղղեց նորա վրա, որուն «թշնամյաց գլխավոր» անունն կուտային՝

— Ո՞վ ես դու, ի՞նչ է անունդ,— հարցուց։

— Հովնան է իմ անունս,— պատասխանեց նա անխռով։

— Դու՞ ես Հովնան խութեցին։

— Այո, ես ինքս եմ։

— Եվ ի՞նչպես կը համարձակիս դու, անարգ, վատ և անհավա՞տ շուն, այս քաղաքը մտնել. չե՞ս գիտեր, թե ես՝ Բուղա հոս կը նստիմ, ես ամենակարող փոխանորդ Մարգաբեի հաջորդին։

Իսկ Հովնան, այս նախատական և պարծանաց խոսքերուն՝ գլուխն և հոնքերը վեր առնելով արհամարհանաց աչք մը նետել բավական համարեցավ։

— Ի՞նչ, ինձի պատասխան չե՞ս տար, դու չե՞ս գիտեր ուրեմն, թե ո՞ւր կը հասնի իմ կարողությունս։— Այս խոսքերը զրուցելով՝ վագրը աղրայները կը կրճտեր ու թունավոր աչքեր կը փայլեցներ դիմացնին. բայց դարձյալ պարտավորեցավ Հովնանու անխռով և սայրասուր հայեցվածքին առջև խոնարհիլ և այլուր շրջել աչքերը և լռել։ Ան ատեն Հովնան սկսավ հանդարտ ձայնով խոսիլ.

— Նախ, դու եթե քու Մարգարեիդ խոսքը հարգեիր, զիս ոչ երբեք անհավատ պիտի անվաներիր. վասնզի պետք էիր գիտնալ, թե ես միայն աստված մը կը պաշտեմ՝ արարիչ երկնի և երկրի. իսկ իմ համարձակությանս հայտնի նշանն է, թե վատությունը շատ հեռու բան է ինձմե, և դու եթե հիշողություն և միտք ունենայիր, պետք էիր հիշել, թե այդ խութեցի Հովնանն է, որ քու նախորդ Ապուսեթի որդի Յուսուֆ յուր զորքերով բնաջինջ ըրավ ի Մուշ. նույն Հովնանն էր, որ Բռնաշեն քու հիսուն հազար հոգվո մեկ բանակդ զարկավ ջարդեց և փախուց, նույն Հովնանն է, որ քու զորավարդ Ժիրակ փոքր գնդով հարվածեց և ծաղրեց, նույն Հովնանն է, որ տույն այս Գվնա դռան մոտ՝ քու աչացդ առջև յուր ազգին գավառաններն ու մատնիշները կախաղան հանեց և երկու հարյուր հոգվով քու հազարավոր խումբերդ Շիրակ, Արտահան և Արտանուշ զարկավ և կորակոր հալածեց։ Եվ հիմա, որ աստված այդ Հովնան քու ձեռքդ մատնեց, կրնաս գնա տանջել և սպաննել, այդ քու և քեզ նման գազանաց գործն է և բնությունն. բայց նախատել՝ սրտիդ անարգությունը և մաքիդ տկարությունը հայտնել է։

— Դեռ այդ վիճակիդ մեջ զիս նախատել կը համարձակիս և չես իմանար, թե ես ի՞նչ կրնամ ընել։ Ես քեզ պես անօրենի մը կրնամ ներել, բայց միմիայն պայման ունի իմ ներողությունս. ուրացիր քու հավատդ, ընդունե՛ ճշմարիտ կրոնքը, ընդունե՛ փառք, պատիվ և մեծություն, ճանչե աստուծո կարողությունը հոն, ուր կա զորություն, տե՛ս, թե ուսկից ուր կը տարածի մեր Մարգարեին իշխանությունը, և ամեն դիմադրություն անապատի խռիվ է դորա առաջ։ Ը՞ն, մտիկ ըրե՛ իմ խոսքերս, զղջա՛, և ես կը ներեմ քեզ ու կը շնորհեմ ոչ միայն կյանք, այլ մեծություն։ Մտածե, որ դու քու այս վիճակիդ մեջ եղեռնավոր մը իմ աչաց առջև կը կենաս ներկված արաբաց արյամբ, և քու ապստամբ սուրդ դեռ նոր տասներկու հոգիե ավելի զոհ կտրած է իմ զորքերես. ապստամբին պատիժը մահ է, և ես քեզի կը շնորհեմ քու կյանքդ։

Հեղնական ծիծաղով մը միայն պատասխանեց Հովնան այս խոսքերուն, և երբ Բուղա այս ծիծաղին վրա շփոթած յուր փոքրիկ աչքերը կը ջանար մեծ-մեծ բանալու, Հովնան դարձավ այն մարդուն, որ Բուղայի մոտ նստած եղեգը ձեռքը շարունակ կը գրեր նված խոսակցությանց համառոտությունը.

— Միրզա՛ Հասան, դու զրուցե՝ միթե ես քու կյանքդ չե՞մ շնորհած,— ըսավ շեշտակի ձայնով։

Իսկ նա շվարած, աչքերը բացած երեսը կը նայեր և, հանկարծ մտարերելով, նետեց եղեգը, ցատկեց տեղաց և ետ-ետ քաշվելով աղաղակեց.

— Այո՛, այո՛, ավազակ, երբ գիշերը խլաթ իմ տունս կոխեցիր, իմ ծառաներս կապեցիր, սպաննեցի՛ր, իմ թնս կոտրեցիր, ինչպե՞ս կարելի է չհիշել. կրկնապատիկ՝ հազարապատիկ մահապարտ ես դու։

— Այո, ես, որ քեզ գտա Հայոց երկրին մեջ, որ ստերդումն, խաբեբա տիրոջ մը կը ծառայեիր, և այդ տերդ, որ մատնությունն և դավաճանությունը կը գրգռեր ու կը քաջալերեր, և որ երկու հարյուր հազար ավազակներով իմ հայրենի երկիրս կը մտներ, կը սպաններ և կը քանդեր, նա ավազակ չէ՞ր, և ես ավազակ էի։ Եթե ավազակ ես էի՝ առանց քու կրոնքիդ ուրացությունը պահանջելու թուղթ մը միայն առի քեզմե, քու քսակդ քեզի դարձուցի ես, որ կրնայի զքեզ, քու ծառաներդ, քու այդ հիմարական թղթերդ և ինակյալ տունդ ի միասին կրակի տալ և մոխիր դարձնել. ո՞վ զիս կ՝արգիլեր, եթե բռնությունն օրենք էր։ Եվ դու, Բուղա, դու կը համարձակի՞ս ավազակ զիս անվանել, որ եկեր եմ պաշտպանելու համար իմ հարյուր երկիրը, իմ ազգիս և իմ կրոնիս սրբությունը, որոնց համար ոչ մեկ՝ այլ հազար մահ, հազար անգամ մեռնիլ շատոնց աչքս առած եմ, և դու կը հավատա՞ս, թե կրնամ ես փոխել, ուրանալ զայն, որ երբեք չի

ներեր սուտերդումն լինիլ և դավաճանել։ Աղե՛կ, հրամայե, թո՛ղ գան քու դահիճներդ, այս մարմինը քուկդ է, բայց հոն միայն կը հասնի, և կը դադրի քու իշխանությունդ, չի կա տանջանք մը, որ զիս զարհուրեցնե։

Եվ իր աչքերը այնպես բոցավառ էին և շանթաձիգ, որ Բուղա վագրն անգամ ակամա սարսուռ մը զգաց և հրամայեց հանել իր երեսեն այդ մարդը՝ բանտ տանիլ և կրկին շղթաներով ամրացնել. մահ սպառնալով ամենուն, եթե հանկարծ փախչեր ազատեր։ Նույն միջոցին բերել կուտար այն Իպրահիմը, որ զՀովնան բռնել էր, իրեն անձնապահապետ կ՝անվաներ ու պարգևներ կը հրամայեր։

Ի՞նչ էին Հովնանու համար այդ շղթաներու ծանրությունն ու խավարուչին բանտը, ինք, որ ամեն տանջանք կ՝արհամարհեր, և այդ ավազակներե եկած ամեն նախատինք պատիվ կը սեպեր։ Բոլոր յուր բանտարգելության օրերը, որ քսանի չափ տևեցին, ամեն արաբացվոց գըլխավորները ժիրակե սկսյալ կուգային տեսնելու այդ մարդը, որուն քաջության համբավը և երկյուղը իրենց մեջ տարածվեր էր։ «Սասնո լեռանց գայլը» կուգային տեսնելու, ինչպես զինք կ՝անվանեին և տեսնելեն վերջ այդ երկայն մազերով մեծ գլուխը, այդ հրավառ աչերը, ուր ահեղ զորություն կը փայլատակեր «Սասնո լեռանց առյուծը» տեսանք, կ՝ըսեին։

Բայց Բուղա պետք էր երթալ և չէր կրնար ուշացնել յուր գազանային արշավանքը, ուստի վերջին փորձ մ՝էլ ուզեց փորձել և յուր կրոնքին պաշտոնեից գիտուն մեկը զրկեց, որ թերևս կարենա համոզել զՀովնան, որ թողու յուր հայրենի կրոնքը և ընդունի մահմեդականությունը։ Սակայն այդ մարդը շուտով ելավ և հայտնեց յուր տիրոջ, թե համոզել անկարելի էր, և թե կրոնին օգուտը կը պահանջեր ժամ առաջ վերցնել չարն ի միջոց։

Երկրորդ օրը մեծ զորաց բազմութենե և դահիճներե շրջապատյալ հանեցին բանտեն Հովնան անխռով և անսասան, և սպանման տեղը բերին։ Շղթաներե ծանրացյալ թևերը վեր վերցուց, աղոթեց և տվավ վիզը մահվան. սուրը փայլակեց, գլուխը գլորեցավ, ժողովուրդը ցրվեցավ, և հազիվ թե քիչ մը ժամանակ անցավ, Սմբատ Սպարապետ կը մտներ բռնավորին քով, և նա կը շնորհեր իրեն առնուլ նահատակին մարմինը։

Քիչ վերջը, առավոտ մը կանուխ՝ կառք մը կ՝ելներ Դվին քաղքեն խումբ մը ձիավորաց պահպանությամբ. այդ խումբին գլուխն էր երիտասարդ Մուշեղ՝ սպարապետին երկրորդ որդին, և որուն առջևեն սևեր հագած՝ սև քողով ծածկյալ բարձրահասակ կին մը կը ձիավարեր երկու իրեն պես հագնված կանանց հետ։ Լռություն և սուգ կը տիրեին այս կարավանին մեջ, մինչև որ հասան Բագարան, հոն ավանը չի մտած՝ քիչ մը հոգնություն առին, և երբ ավանին մոտեցան՝ տեսնվեցավ բազմություն մը եկեղեցական դասու, որ խնկոք և մոմոք մարտիրոսաց շարա-

կաններ երգելով բերին կառքը, որ Հովնանու մարմինը կը կրեր՝ մինչև եկեղեցվո դուռը։

Օրերով այս կարավանը շարունակեց իր ընթացքը՝ մինչև Արտանուշի գավառը հասավ. Սմբատավանի մայր եկեղեցին մարմինը դրվեցավ հարգանոք ինչպես կը վայելեր մարտիրոսի մը և ազատարարի, և ժողովուրդը կը հիշեր այդ սասնցվոց զորավարը, որ վտանգի օր հասել էր յուր օգնության և այնչափ ազնվական մարդասիրություն ցույց էր տվել։

Տարի մը վերջ Մայր իշխանուհին վանքին դիմացը՝ Ճորոխի հանդիպակաց ափին վրա փոքրիկ վկայարան մը շինել տվավ և հոն փոխադրեց երանելվույն մարմինը, սեղանին առջևը մարմարե պարզ կափարիչ մը դրվեցավ, որուն վրան այս խոսքերը կային փորագրյալ։

ԱՍՏ ԴՆԻ ՅՈՎՆԱՆ ԽՈՒԹԵՑԻ
ՆԱՀԱՏԱԿԵԱԼ 'Ի ՎԵՐԱՅ ՀԱՒԱՏՈՅ
ՔՐԻՍՏՈՍԻ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԲԱԶՄԱԶԱՐՁԱՐ
ԱԶԳԻՍ ՀԱՅՈՑ.

Քանի մը տարի վերջ Ճորոխի ափանց վրա պտըտող անցավորը նույն վկայարանին մեջ ուրիշ գերեզման մը կը տեսներ հար և նման առաջինի՝ անկից վար զետեղյալ և որուն այս էր արձանագրությունը.

ԱՍՏ ԴՆԻ ՅՈՏՍ ԵՐԱՆԵԼԻ ՆԱՀԱՏԱԿԻՍ
ԱՂԱԽԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ ՎԱՍԿԱՆՈՒՇ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ.

Եթե մարդկանց սրտին գաղտնիքը շատ անգամ մարմին և ոսկր կը ծածկեն, ուր կը մնա ցուրտ քարին տակ ծածկված գաղտնիքը, որ հավիտենականության օվկիանոսին մեջ կերթա կը խորասուզի։

Երախտագիտութենե շարժյալ ամեն տարի գարնան դեղեցիկ օր մը Արտանուշի ժողովուրդը կուգային այդ վկայարանին շուրջը, քանի մը ծաղիկներ կը բերեին կը ձգեին այդ գերեզմաններուն վրա, ծերերը կը պատմեին, թե ի՛նչ մարդ էր Հովնան, թե ի՛նչպես քաջ խմբի մը ընկերակցությամբ եկեր անթիվ արաբացի ավազակները ջնջեր էր և թշնամվույն ավարը ժողովրդյան շնորհեր էր. և պարծանոք կը ցցնեին սուր մը, նիզակ մը, վահան մը արաբացի ավարեն։ Կանայք կը պատմեին, թե ի՛նչպես աննման գեղեցիկ կին մ՝էր Վասկանուշ, թե ի՛նչչափ մեծ էր իր ողորմությունը ժողովրդյան համար, և թե ի՛նչչափ երջանիկ էին նորա օրով ամենքը։

Բայց ո՞վ գիտեր և ո՞վ էր համբեր այն անթիվ արցունքներն ու հառաչանքները այդ երկու անձանց, որ տարիներով բաժնված՝ վերջապես գերեզմանին քով իրարու մոտ կը հանգչեին...

ԳԼՈՒԽ ԻԲ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ԵՂԲԱՐՑ ՄԵՐՈՑ ԳԵՐԵԼՈՑ»

Գերություն կ'ըսենք այսօր և կ'անցնինք բառին վրա թեթևությամբ, բայց մեր այս իրողությունը անցած ժամանակներուն՝ մեր հարք լավ զգացեր էին բառին նշանակությունը իրենց սրտին ցավերով, թե ի՛նչ էր գերություն։ Երբ սարկավագը «Ազատութիւն եղբարց մերոց գերելոց» կ'երգեր սեղանին վրա, հազար հեկեկանաց ձայնք և ձեռք կը բարձրանային երկինք՝ խնդրելով «գերելոց ազատություն»։ Ոմանք հարք, ոմանք զավակունք, ոմանք ամուսինք, վերջապես շատերն սիրելի կորուստ մը կը փնտրեին, որ շատ քիչ անգամ կը գտնար։

Գերության բարեբախտությունն էր նաև, երբ մեկը գթասիրտ տիրոջ մը վիճակեր, և դառն ծառայության ու տանջանաց չէր ենթարկյալ. վասնզի բավական չէր ծնողաց, զավակաց բարեբախտ վիճակի մը կորուստը, այլ նաև շղթաներու, ծեծի, նախատինքի, ուրացության հրավիրանաց և բռնադատության պետք էր տոկալ։

Բնության օրենք, բնության կարծեցյալ և ընդունյալ օրենք այս խառնակության խիստ ժամանակներուն վեր ի վայր էին եղած բոլորովին, մանավանդ խեղճ հայուն համար։ Քրիստոնեությունն ուրացյալ զավակը արհամարհ աչք կը նայեր իր ծնողաց վրա, եթե գերությունն իրեն մեծություն և վայելք բերած էր։ Երիտասարդ կրոնափոխ այրը մահմեդականի ամուսնացյալ պատուհաս մ'էր իր առջի ընտանյաց վրա։ Գերեզմանյալ գեղեցիկ աղջիկ մը երբեմն մեծության կը հասներ կին դառնալով երևելի մարդու մը և տիկին կը լիներ, երբեմն հետին և ամենաթշվառ ստրախին կը դառնար անգութ տիկնոջ մը՝ որու ծագումը և բախտը բարձր էր երկնեն և որուն նախանձը սոսկալի ու մահաբեր։

Այս տեսակ գերության վիճակը դար նաև բուն Հայաստանի ոչ շրջակայքը միայն՝ այլ և կեդրոնը, ուր արտաքսին արմատ կը ձգեր, և ուր գրեթե ամբողջ զավառ մը եթե ոչ ժողովրդյամբ, գոնե յուր ամրոցներով մահմեդականին հափշտակություն և ստացվածք եղած էր։

Ապահունյաց գավառը այս բանիս օրինակ մը կրնար լինիլ, և այս

մեր պատմության ժամանակին գրեթե բոլոր բերդ և ամրոց մահմեդականաց կը վերաբերեին, որք իրրև բացարձակ տյարք, բռնանալով շրջակա գյուղորեից վրա, երկիրը կ'անապատացնեին։ Եվ այս վիճակը ավելի զգալի էր, երբ Բուղայի ձեռքը կը ծանրանար հայոց վրա։

Այս ժամանակներն էր, և Գուրգեն արիաբար կը կռվեր հունաց հետ, քառասուն հոգվով հազար մարդոց դեմ կ'ելներ, ընտիրները կ'սպաններ, կը կողոպտեր, կը մերկացներ, մնացածը կը փախցներ. այսպես ոչ անգամ մի, այլ շատ անգամներ. մինչև հունաց զորավարք մեկ կողմեն Միքայել կայսեր կը գրեին՝ իմացնելով այս արտաքո կարգի մարդուն զորությունը, և մյուս կողմեն տաճկաց օգնություն կը խնդրեին և նոցա օգնությամբ դարձյալ կը հարձակեին իր վրա։ Իսկ սա կրկնապատկելով յուր քաջությունը այս անպիտան դաշնակցաց կոտորած կոտորածի վրա հասցնելով զամենքը ահարեկ կըներ։ Մինչև կայսեր հրավերը կ'իմացներ հունաց զորավարը խաղաղության խոսքերով, թե ի՛նչպես կայսրը կը փափագեր ղինք թագավորական քաղաքը մեծամեծ պարգևներ և գահ, և պատիվ իրեն խոստանալով։ Իսկ Գուրգեն, որ հունաց բարեկամությունն ավելի կը կասկածեր, քան թե նոցա զորությունեն կը վախեր, հանձն չառավ երթալ, այլ խաղաղության կապ մը հաստատելով Իշխանիկին և հունաց զորավարին մեջ, որոշեց երթալ առ Սմբատ սպարապետ։

Գուրգեն իր պատերազմական կրգմանց մեջ չէր իմացեր Հովնանու նահատակությունը, և կը կարծեր, թե նա Տարոն և Վասպուրական կը գտնվի, իսկ հիմա այս որոշմունքեն վերջ, դժվար կուգար խոսրովեն բաժնվիլ, որ բոլոր յուր քաջությանց մասնակից եղած էր, յուր տարիքեն վեր, և որու վրա Գուրգեն միշտ կը հսկեր։ Եվ վերջի երեկոյան, երբ երկրորդ օրը պիտի թողուր Հունաց սահմանը՝ մտնելու համար Մեծ Հայոց երկիրը, հանկարծ դարձավ Գուրգեն և ըսավ յուր բարեկամին.

— Եթե բան մը կա, որ դիս կը զարմացնե, այն է, որ դու հիսունը անցած այդպես հանդգնությամբ պատերազմեցար ինձ հետ նիզակակցությամբ, որ սուրե չեմ վախեր, վասնզի ինքզինքս խնայելու պետք չեմ զգար. բան մը չունիմ այս աշխարհքիս վրա կորսնցնելու, և բան մը չունիմ ստանալու. իսկ դու, որ կին և զավակներ ունիս և Ակեռ գավառը՝ ուր օր մը հույս ունիս մտնելու. ինչո՞ւ մահ կը փնտրեիր շատ անգամ պատերազմի մեջ հանդգնությամբ։

— Դու, Գուրգեն, որ երիտասարդ ես, երիտասարդի պես կը խոսիս։ Մի՞թե մարդուս սրտին ցավերը մեկ տեսակ են. դու՞ ինչպես կ'երևակայեմ քաջ երիտասարդ մը՝ սրտիդ մեջ կը հեղձնես սիրո ծանր վերք մը և հառաչանքներ և վեր չես հայտներ ոչ ոքի։ Ես էլ նույնպես ծանր վերք մը ունիմ հայրենի սրտիս խորը. իմ Արիգայիս կորուստը. չեմ խոսիր,

չեմ գանգատիր կարկաչ պառավներու պես, բայց մտնել տուն, տեսնել նորա մոր արցունքները, չի կրնալ խեղճ կինը մխիթարել, որ ինձի պես մահը անհավատից գերութենեն վեր կը համարի. այս էլ անտանելի ցավ է, Գուրգեն։ Հազար Ակեռ դավառ կուտայի և այս ծերացյալ գլուխս զոհ, եթե Արիգաս կարենայի դարձյալ անգամ մը գգվել և մորը գլուխը նորեն դարձնել։ Բայց ո՞ւր գիտե ո՞ւր է, ո՞ գիտե ի՞նչ վիճակի մեջ է, ո՞ գիտե ո՞ղջ է թե մեռած. ո՜հ իմ վերջին զավակս։ Անստուգությո՞ւն սոսկալի բան է, Գուրգեն։ Ներե՛ իմ արցունքներուս, սոքա իմ առանձնության և իմ անկողնիս միխիթարությունն էին և գաղտնիքը, դու ուզեցիր՝ ես չէի ուզեր հայտնել։

— Խե՜ղճ հայր,— ըսավ Գուրգեն լցված աչքերը անդին դարձնելով,— վասնզի ճշմարիտ քաջ մարդիկ զգայուն սիրտ ունին և գիտեն ցավ զգալ։

Ինձի կրկնակի հիմա դժվար պիտի լինի քեզմե բաժնվիլ, մի՞թե...

— Ի՞նչ, միտքդ դրած էիր, թե ես տուն պիտի դառնայի. ոչ երբեք. եթե դու Հունաց սահմանները մնայիր, ես միտքս դրած էի պանդխտության ցուպը ձեռքս ուղևորիլ, փնտրել զավակս և այս սոսկալի անստուգութենեն ազատիլ։

— Լա՜վ, ի՞նչ ճամփա պիտի բռնեիր ազատելու համար աղջիկդ։

— Ապահունյաց երկիրը քննելե վերջ՝ միտքս Դվին երթալ էր, վասընզի հոն եղավ գերեվաճառությունը. և պետք եղած տեղեկությունքն առնելով մինչև Բաղդադ երթալ։

— Վաղը ուրեմն Ապահունյաց ճամփան կը բռնենք, հոն խույզ և խնդիր ընելե վերջ կ'ուղևորինք Դվին, և այնտեղ կ'որոշենք, թե ի՛նչ պետք է ընել։

— Աստված քեզ օրհնե, Գուրգեն, և երջանիկ հայր ընե զքեզ։

— Աստված մեր բարի ձեռնարկությունն հաջողե, այն ինձի մեծ վարձք է։

Ցատկեց ծերը, փաթթվեցավ երիտասարդին վզին և երեսները պագավ։

Երկրորդ օրը տասը ձիավոր սպառազենք ճամփա կ'ելնեին դեպ Ապահունյաց երկիրը։ Քաջ և արթուն մարդիկ էին այս մեր երկու իշխանաց հավատարիմքը, ուստի իրենց պետք եղած տեղեկություններ տրվեցան, թե ի՛նչ կերպ հետազոտություն պիտի ընեին և ի՛նչ պիտի հարցնեին յուրաքանչյուր գյուղ և բերդ, ուր հասնեին. և այսպես օրը հազիվ թե երեք-չորս ժամ ճամփա կ'ընեին. ծանր կ'երթային, որպեսզի իրենց փնտրածը կարենան գտնել։ Միշտ կը ջանային այն բերդերն ավելի իջևանել, որոց տյարքը տաճիկ էին, և Վահրիճ, որ բերդապահ ծառայից

բարեկամություն և ընտանություն կը ցցներ, գրեթե միշտ անօգուտ և ունայն լուրեր կը բերեր իշխանաց, որ երբեմն ծիծաղ նաև կը պատճառեին։

Արևելյան հյուրընկալությունը թեպետ հռչակավոր եղած է ամեն երկիր, բայց միշտ տաճիկը հաճությամբ չընդունիր քրիստոնյա հյուր, ինչպես քրիստոնյան գտաճիկը։ Խոսրով և Գուրգեն որպեսզի հեռվեն գալ կարծվին, մութուն երեք ժամ մնացած սովորություն ունեին ճամփա ելնելու. նույնպես երեկո մ'էլ տեղեկություն առած մոտավոր տաճիկ բերդի մը, որ Ծաղկյա լեռան ստորոտը կը գտնվեր, մութը իյնալեն գրեթե ժամ մը վերջ հոն հասան, և դուռը ի՛նչչափ որ զարկին, անկարելի եղավ բանալ տալ. ան ատեն Գուրգեն տղոց մեկուն հրամայեց, որ իր ուսերուն վրա ելնե, և ուրիշ մը ավելի թեթև նույնպես նորա վրա մինչև պարսպին վրա մեկը կրցավ ելնել, և պարանավ ամենքը, ներս իջան առանց դռան պետք ունենալու։ Ոչ դիմադրություն, ոչ ձայն կար բերդականաց կողմեն. կարելի չէր իմանալ, թե մարդ կա՞ր թե ոչ, բայց բլրույն ստորոտը լույս տեսնված էր, ուստի Գուրգեն կըսեր կամաց ձայնով. «Դուք հիմա դռները կը բանաք եթե ոչ կամավ, այլ ակամա»։ Եվ իրոք էլ այնպես եղավ. երբ քանի մը անգամ Վահրիճ խնդրեց, որ բանան և պատասխան չընդունեցավ, ան ատեն «մեկդի, տղա՜ք» գոռաց Գուրգենի ահագին և բարկաձայթ ձայնը, և տեսան մութ տեղը, որ ահագին քար մը առած կուգար վազելով, և երբ այդ քարը դռան բախեց ուժգնությամբ, դուռը խախտեցավ, տունը թնդաց, և ներսեն մարդկանց և կանանց աղաղակներ լսվեցան։ Իսկ Գուրգեն առանց ուշ դնելու հեռացավ դարձյալ և երկրորդ հարձակումն և հարված մ'էլ տվավ. դռան երկու փեղկերը միատեղ գետինն ինկան։ Ան ատեն ձեռքերը շփեց, վահանը ձեռքն առած մտավ ներս և ուղղվեցավ սենյակները հանդարտությամբ և հրամայեց թիկնապահաց, որ ձայն տան բնակչաց լույս բերել, և շնորհքով հյուրընկալել, եթե չեն ուզեր, որ տուներնին հիմն ի վեր տապալի։

Եվ ահա քանի մը վայրկյան վերջը խռված, կնճռոտած ալևոր տաճիկ մը ձեռքը ճրագ ներկայացավ և «բարի երեկո» մաղթեց մեր հյուրերուն. յուր կերպին մեջ դժկամություն և երկյուղ հայտնի կերևեին։ Իսկ Գուրգեն առանց նորա վիճակին ուշադրություն ընելու, հարցուց ծերուն ահագին ձայնով.

— Ե՜ր դու, քեզ կ'ըսեմ, ինձ մտիկ ըրե, այս տան մեջ քեզմի զատ մարդ չի՞ կա։

— Կա, իշխան։

— Ինչո՞ւ քեզ կ'ուղարկեն ուրեմն, որ ծեր մարդ ես, հանգստյան

պետք ունիս, և ուրիշ երիտասարդ մարդիկ երեսնին կը ծածկեն։ Ի՞նչ է քու տիրոջդ անունը։

— Ալի Էրմենի։

— Շատ բարի, Ալին լավ է, Էրմենին էլ լավ է, երբ այս երկու անունները իրարմե հեռու լինին. ինձմե բարև ըրե և ըսե իրեն, որ հյուրընկալության օրենքը զինք կը պարտավորե, որ գա մեզի ընկերություն ընե և ոչ թե փախուստ տա։

— Բայց երբ հարցնե, թե ո՞վ է բարև ընողը, ի՞նչ անուն տամ։

— Զրուցե, թե՝ բարեկամաց բարեկամ, թշնամյաց թշնամի, բուն, անխառն ճշմարիտ Էրմենի մի է։

Մեր բարեկամները թողունք քիչ մը այս երկու-երեք սենյակներուն մեջ, որ արանց և հյուրոց բնակարան կը կազմեն, և ծերուն հետ մտնենք կանանոցը, ուր նույն վայրկենին ամենը՝ այր և կին պատսպարյալ էին։ Հինգ-վեց սպառազեն մարդիկ կանանոցին դռան առաջ կանգնյալ էին. արձան կարելի էր կարծել զիրենք, եթե չի դողային։ Զորս-հինգ հատ մը խափշիկ եթովպացի գերիք իրենց ապուշ դեմքով բոլորովին շփոթած կը տարտամեին։ Իսկ ներքին սենյակներուն մեջ ահարեկ և հուսահատ տասնհինգի չափ ամեն հասակի և ամեն տեսակի կանայք շարված կեցեր էին՝ փառավոր ոսկեթել բնեղներով հագված կնոջ մը առաջ, որ միայն բազմոցին վրա ծնկվընները ծալված նստած էր, և որուն գլուխը կանաչ լաչակ մի կապված կար։ Ի նշան Մարգարեին ցեղեն իջնելուն։ Կինը թխամորթ, չոր, երկայնահասակ, սև աչքեր և հաստ հոնքեր ուներ, որ իր նայվածքին ավելի խստություն մը կուտային. մեջքի ականակապ գոտիեն կախված էր ոսկեպատյան դաշույն մը, և քովի բարձին վրա արջառաջիլ մը կար ահարկություն աղախնայց և ստրկաց, վասնզի այդ դաժան, արհամարհոտ և ամբարտավան աչքերը կը ցցնեին, թե ամենափոքր սխալմունք և հանցանք քավություն չէին գտներ առանց այդ խարազանին հարվածներեն անցնելու։

Ընդարձակ սենյակին մեջ, որ այնչափ կանայք և աղջկունք կանգնած էին, շնչառության ձայն անգամ չի կար, թեպետ երեք-չորս հատը տասը-տասներկու տարու աղջիկներ էին. և միայն հանրմին շարժմունքին իր քեհեղյա և մետաքսյա հագուստներուն ձայնը կը լսվեր։ Բարկություն և երկյուղ յուր բնական տգեղ դեմքը ավելի տգեղ կը ցցնեին. և անհամբերությունն արդեն վերջի սահմանը գտած էր, երբ Հասան պապա ներս մտավ և դռան առջև կեցավ։

— Մե՛տ ակ, Հասան,— գոչեց Տիկինը,— ո՞վ են, ի՞նչ մարդիկ են այդ ավազակները։

— Տիկին, հայ են, երկուքը իշխանավոր են, տասնի չափ ալ զինվորք։

— Ի՞նչ խոսեցան, ի՞նչ ըսին. իմ ըսածներուս ի՞նչ պատասխան տվին։

— Տիկին, ձեր ըսածները զրուցելու ժամանակ չի տված՝ այդ գըլխավորներուն մեկը երկայն ահագին մարդ մը, սոսկալի ձայնով ինձ հրամայեց, որ մեկ մ'էլ աչքին չերևամ, և տերը ուզեց։

— Չի զրուցեցի՞ր, թե այս բերդին տերը տիկին մ'է։

— Ոչ, Տիկին,— ըսավ ծերը, ահով մեկ-երկու ոտք ետ քաշվելով, վասնզի կնոջ աչքերը կատաղի փայլ մը առին և ձեռքը արջառաջիլին երկընցավ։

— Անպիտա՜ն ծառա, այսպե՞ս իմ հրամաններս կը կատարիս. չըսի՞ր այդ անհավատներուն, թե Տիկինը Մարգարեին ցեղեն կիշնե և ամիրապետին մոտ ազգականն է։

— Այդ խոսքերը զրուցելու ժամանակ չի մնաց, Տիկին, ո՞վ և ինչչափ քաջասիրտ մարդ լինի այդ հսկային առաջ կը շփոթի ըսելիքը. ես ծեր, տկար մարդ եմ, Տիկին, փառք աստուծո, այսչափ ինձմե լավ ծառաներ ունիս...

— Լռե՛, անպիտան ծեր, խորհուրդ տալդ միայն կը պակսեր. կորի՛ր, աչքիս մ'երևի՛ր, կերած հացդ լեղի դառնա՛։— Եվ ծերը ուրախությամբ դուրս ելավ դյուրագին ազատելուն համար։

Տիկինը երեք անգամ ծափ զարկավ, և անմիջապես քսանհինգ-երեսուն տարու երիտասարդ մը քովի սենյակի մը դուռ բացավ և դահլիճը մտավ. Տիկնոջ մոտեցավ համարձակ ձևով, բայց առանց աչք դարձնելու այդ աղախնայց բազմության վրա, որ ձեռնամած, գլուխնին ծուռ՝ արձանի պես շարված կեցեր էին։

— Գնա՛, Ալի, նայե՛, թե ի՞նչ կուզեն այդ ավազակները.— ըսավ Տիկինը կատաղի աչքեր փայլեցնելով երիտասարդին վրա։

Իսկ երիտասարդը, իբրև թե չիմանալով այդ նայվածքին սպառնալից նշանակությունը, ելավ կանանոցեն դուրս և մտավ հյուրանոցը, ուր Գուրգեն և Խոսրով նստած էին։ Քաղցրությամբ բարև մը տալեն վերջ նստավ։

— Այս բերդին տերը դո՞ւ ես,— հարցուց Խոսրով ծանրությամբ, առանց Գուրգենի ժամանակ տալու, որ խոսի։

— Այո, եթե աստված ուզե,— պատասխանեց Ալի։

— Ա՞յս է ընդունելությունը, որ սովոր ես ընել աստուծո հյուրերուն, որ կուզան քու դուռդ կը զարնեն գիշերով, պատառ մը հաց և անկողին մը խնդրելու. քու կերպարանքդ այդպես չի վկայեր։

— Արտաքո կարգի ընտանեկան դիպվածներ սխալմունք մը մեզի ընել տվին, ո՜ գիտե թերևս ձեր կողմեն էլ չափազանց սպառազինություն երկյուղ պատճառեց պահապանաց, ես էլ քիչ մը տկար և քուն էի. անխոհեմություն մը եղած համարինք, դուք հյուր և մենք հյուրընկալ, խաղաղությամբ կուղղենք սխալմունքը։ Արդեն ապսպրված է ձեր ընթրիքը, քիչ մը խնդրեմ համբերել։

Երիտասարդին այս քաղցր եղանակը և խոսքերը Գուրգենի բարկությունը իջուցին և իր հոնից բնական պարզությունը բերին, երբ Վահրիճ դան քով երևցավ և ակնարկ ըրավ յուր տիրոջ։ Եվ Գուրգեն թողլով երկու խոսակիցքը, դուրս ելավ յուր սպասավորին հետ, որ երբ առանձին մնացին՝

— Այս անգամ լավ լուր ունիմ,— ըսավ ուրախությամբ։

— Զրուցե՛, շուտ ըրե, մյուս լավ լուրերուդ պես չլինի։

— Խոսրով իշխանին աղջիկը հոս է։

— Ի՜նչպես,— ըսավ Գուրգեն աչքերը բանալով։

— Աստված վկա՜՝ հոս է։

— Ինչպե՞ս գիտես...

— Ինչպես ինձ հրամայեցիր, տան չորս կողմը կը շրջագայեի, որպեսզի մարդ մը չի փախցնեմ, և չերթա դուրսեն օգնություն փնտրելու։ Վերջապես հոգնա, երկաթապատ նեղ պատուհանի մը առջև նստա և կը դիտեի, երբ փոքրիկ նվաղ ձայն մը ինձ «հա՜յ ես, հա՜յ ես»,— ըսավ պատուհանեն։ «Փառք աստուծո, հայ եմ»,— պատասխանեցի. «Խնդրեմ, կամաց խոսե, չիմանան, ի սեր աստուծո, ազատե զիս այս տեղաց, հանըմը զիս պիտի սպաննե, ես էլ հայ եմ քեզի պես. իմ անունս Արիգա է, Խոսրով Ակեացիին աղջիկն եմ»,— ըսավ լալագին և այնպիսի կամաց ձայնով, որ հազիվ կը լսվեր։

— Տե՛, քալե, ցցուր ինձի սա պատուհանը։ Մարդ կրնա՞ անցնիլ պատուհանեն։

— Քեզի պես մարդ չի կրնար անցնիլ, բայց փոքր մարդը կրնա անցնիլ։

— Շատ բա՞րձր է պատուհանը։

— Մարդաչափ բարձրություն ունի, ահա՛։

Գուրգենի ուսերուն չափ էր բարձրությունը պատուհանին. առանց ուրիշ հարցմունք ընելու մեր հսկան երկաթները փորձեց, ծունկը պատին կրթնցուց, և երբ ուժ մը տվավ ու ցնցեց, ձեռքը մնացին երկաթները և պատուհանին շրջանակը կազմող քարերը թափեցան։

— Ե՛կ, աղջիկտ, ահա ազատ ես,— ըսավ Գուրգեն ձայնն ըստ կարելվույն քաղցրացնելով և գլուխը ներս երկնցնելով. իսկ աղջիկը, որ այդ ցնցմունքեն դեպի դուռը փախեր էր, պատուհանին մոտեցավ և ձեռքը երկնցուց ազատարարին, որ զինքն հափշտակեց և տղու մը պես գըրկելով.— իրա՞վ, քու անունդ Արիգա՞ է, դու Խոսրովի աղջի՞կն ես,— հարցուց։

— Այո,— ըսավ աղջիկը և չէր գիտեր, թե վախնա՞ կամ չի վախնա այդ մարդեն։

— Կուզե՞ս հայրդ տեսնել. վաղը առտու ես քեզ իրեն կը տանիմ։

— Այս երեկո մի՞թե կարելի չէ։

— Տեսնենք, կը ջանամ, աղջիկս։

Եվ այսպես գրկած՝ տարավ փոքրիկ սենյակ մը աղջիկը նստեցուց, Վահրիճը իրեն պահապան դնելով և լություն հրամայելով։ Ինք մտավ Խոսրովու քով, երբ Ալի մնաս բարով ըսելով կը հեռանար.

— Խոսրով, կարծեմ թե աղջիկդ աս բերդին մեջն է։

— Ի՜նչպես,— ըսավ ծերը աչքերուն կենդանության փայլ մը գալով.— ի՜նչեն գիտես...

— Որոշ չեմ գիտեր, բայց պատուհաններեն գերի աղջիկներ մեր թիկնապահաց հետ խոսեր են, ազատություն խնդրեր են։

Իսկ Խոսրով լավ մը Գուրգենի երեսը նայելով, և գոհության ու զվարթության ամենամեծ նշաններ տեսնելով՝

— Իմ աղջիկս ազատեր ես դու, Գուրգեն, օրհնյալ լինիս,— ըսավ, ցատկեց և նորա վիզը փաթթվելով,— զրուցե՛, ու՞ր է Արիգաս։

— Մ՚այլայլիր, Խոսրով, աղջիկ մը ազատած կա, բայց նա է թե ոչ, կրնանք իմանալ։

— Երթանք, երթանք,— ըսավ Խոսրով, և երբ քովի սենյակը մտան, Արիգա նստած էր մարած աչքերով, նիհար և գունաթափ, պատառոտի զգեստներով, հազիվ թե զինք ճանչեց հայրը, իսկ նա զայն տեսնելուն վազեց սեղացը, և երկուքը իրարու գիրկ ինկած՝ երկար ուրախության հեկեկանք մը անվերջանալի պիտի լիներ, եթե Գուրգեն երկուքն էլ իրարմե չի զատեր, որպեսզի ուրախությունը տրտմության չի դառնա։ Ուստի ջանաց Խոսրովու միտքը բերել, թե իրենց դիրքին մեջ շատ հարկավոր բաներ կար տեղեկանալու Արիգայեն, ուստի սկսավ հարցաքննություն մը և իմացավ, թե ինչչափ զինյալ մարդիկ կային ներսը. իսկ երբ տանտիկնոջ նկարագրին հասավ և այդ վտանգավոր կնոջ պատմությունը լսեց, որ ահուդողն էր ծառաներու, գերյաց, աղախնայց և իր ամուսնույն, երբ իմացավ, թե սաստիկ նախանձոտ, ոչինչ կասկածի մը համար ծեծ, բանտ, տանջանք և թույն կը գործածեր այդ կինը, եթե ամուսինը փոքրիկ նշան մը քաղցրության ցցներ աղջկանց մեկուն՝ կամ ջուր մը

ուզեր, և թե պարտիզին մեկ կողմը «գերեզման ազախնայց» կ'անվանեին սոսկմամբ գերիները։

— Ես այստեղ բերանս հաց չեմ կրնար դնել,— ըսավ Գուրգեն,— և մեկուն պատառ մը հաց ուտել թող չեմ տալ։ Երթանք։

— Բայց ի՞նչ կշտապես,— ըսավ Խոսրով,— մենք մեր աղջիկը ազատեցինք, բայց հոն պետք է ուրիշ հայ աղջիկներ ալ դտնվին, որ կարելի չէ այդ կատաղի կնոջ ձեռք ձգել, ազատենք նոքա էլ։ Զրուցե, Արիգա, դեռ ուրիշ հայ աղջիկ կա՞ ներսը։

— Չորս հատ փոքր աղջիկներ կան, մեկը իմ տարիքովս հազիվ կը լինի։

— Մեծերուն մեջ հայ չի կա՞ ամենևին։

— Երկու հոտ կային, բայց հանըմը այնչափ չարչարեց, որ հուսահատեցան, խաչին վրա կոխեցին և Քրիստոս ուրացան։

— Դու ի՞նչ բանի համար բանտն էիր,— հարցուց Խոսրով։

— Ես էլ չգիտեմ, ամիս մը կա, որ հանըմը ամուսնուն հետ վեճ մը ունեցավ, գլխս անոր առջև սաստիկ ծեծեց, և անկից ի վեր բանտն եմ. դեռ վերքերս նոր առողջացան։

— Շա՜տ բարի. դուք հայը ու աղջիկ իրարու հետ տեսնվեցեք, ես պետք եղածը հոգամ։— Երբ եկավ, տեսավ, որ կանանոցին դռները բացվեցան և սեղան մը կերակուրներով զարդարված դուրս կը հանեին երկու սև ստրուկք, երկու ուրիշ ստրուկք էլ պարկերով ձիաններուն գարի կը բերեին։ Գարին առնուլ հրամայեց, իսկ կերակուրները ետ դարձնել. նույնպես լուր ղրկեց, որ տանտերը շուտով դուրս գա, վասնզի հարկավոր բան ուներ դրուցելու։

Երբ Ալի եկավ, Գուրգեն զինք մեկ կողմն առավ և ըսավ.

— Այստեղ չորս փոքրիկ հայ աղջկունք կան, և երկու էլ չափահաս, որ նոր ուրացեր են իրենց կրոնքը, այդ վեց աղջիկները հիմա մեզի պետք է հանձնվին։

— Բայց անկարելին կուզեք, ի՞նչպես կրնամ ձեր այդ պահանջմունքը Տիկնոջ հաղորդել, այդ աղջիկներն իրեն արծաթագին ազախիններն են, ինք կենաց և մահու իրավունք ունի նոցա վրա, եթե ես այս խոսքերը իրեն զրուցեմ, շատ վատ հետևանք կ'ունենա նույնիսկ աղջկանց համար։

— Այսինքն այդ Տիկինը աղջիկները խղդել կուտա և մեր ձեռքը չի հանձներ. այնպես չէ՞։

Այս խոսքերուն Ալի պատասխան չի տվավ և գետինը կը նայեր։

— Զրսե՞ս,— զրուցեց Գուրգեն,— դու էլ որ իբրև Տեր մեզ ներկայացար՝ նորա առաջին ստրուկն ես։

— Այո,— պատասխանեց Ալի կարմրելով,— ես չեմ ուրանար իմ վիճակս, սա աշխարհքիս վրա աչքս բացի՝ նա ճանչցա ինձի տիրուհի, մայր, դաստիարակ և ամեն ինչ. չեմ կրնար ապերախտ լինիլ։

— Կ'իմանամ, շան առաքինություն ունիս,— ըսավ Գուրգեն խբստությամբ,— ուրեմն ես պետք է խոսեմ իրեն հետ։

— Անկարելի է. ինք մարդու չերևար, կրոնասեր կին է, Մարգարեին ցեղեն իջած է։

— Ես իր կրոնքին արգելք չեմ, բայց երբ իմ ազգիս զավկները կը տանջե և կրոնափոխ կընե, Մարգարեին ցեղեն լինելն չարգիլեր, որ ես բերդը քարուքանդ ընեմ և մեջիններն ամենքը սրե անցնեմ։ Եթե զորավորին ներելի է ամեն անիրավություն, ես հիմա սա վայրկենիս ձեռմե զորավոր եմ։ Զրուցե՛ իրեն թե կամա և թե ակամա ես հիմա ներս պիտի մտնեմ և իրեն պիտի խոսիմ։

— Խնդրեմ, իշխան, ե՛կ դու մի՞ խոսիր, այդ մյուս ծերը իրեն խոսի։

— Լա՛վ, կ'իմանամ քու միտքդ, այնպես թող լինի, բայց եթե հանկարծ վտանգ մը իրեն հանդիպի՝ գիտե՞ս ի՞նչ կ'ընեմ...

— Կ'երևակայեմ. ուստի երթամ ես ներս և հիմա կուգամ։

Խեղճ երիտասարդը մտավ ներս և նույն դիրքին մեջ, նույն բազմոցին վրա գտավ յուր Տիկինը՝ և նույն կրքով դառնացյալ. դարձյալ ազախիններուն մեկ մասը առջևը կեցած ձեռածալ, մյուս մասը գնացեր էին զանազան ծառայությունք կատարել։ Երբ տեսավ իր ամուսինը, առջի հարցմունքն եղավ՝

— Ի՞նչ բանի համար այդ ավազակները ետ դարձուցեր են իրենց ղրկված կերակուրները։

— Պատճառը չեմ գիտեր, Տիկին. միայն այս չափը գիտեմ, թե մենք այդ ավազակներուն ձեռքն ենք, և ի՞նչ չարիք որ ուզեն, կ'ընան մեր գլուխը բերել։

— Ի՞նչ զարմանք, երբ այստեղ վեց-յոթը հոգի զինյալ մարդ ունինք, և սա անարգ ազախիններուն շափ արժեք չունին և ավելի անպիտան են։ Բերդ մը տասը հոգվո դեմ չի կրցաք պաշտպանել, դռները կոտրեցին ներս մտան, շան պես գողացիք և դիմադրություն մը չի կրցաք ընել. ես եմ հանցավորը, որ ձեզի պես թշվառականներու հաց կը կերցնեմ։

— Տիկին, հիմա հանդիմանության ժամանակ չէ, վասնզի այդ մարդիկը, եթե քիչ մը ուշանանք, ներս կը խուժեն և քու հանգստությունդ կ'ավրեն. հիմա իրենք կը խնդրեն, որ իրենց մեջեն խելոք մեկը ուղարկեն, վասնզի առաջարկություն մը ունինք հանմին կ'ըսեն։

— Ինձի՞ մարդ պիտի ուղարկեն այդ անհավատները, աստվա՞ծ չքնե, որ ես ընդունիմ այդպիսի առաջարկություն, այս բազմոցիս վրա

մեռնիլ ավելի հանձն կ'առնում, քան թե այդ շուներուն երեսը տեսնել։

— Բայց ի՞նչ օգուտ այսչափ խստութենե, մենք կարելի է որ լավ չի պաշտպանեցինք բերդը, բայց անգամ մը տեսնելու է, թե ի՞նչ մարդ է իրենց հսկա գլուխը, քսան-քառասուն մարդ կ'արժե։

— Երկար խոսք չեմ ուզեր, գնա՛ իմացիր, թե ինչ է առաջարկությունին։

— Երթամ... բայց...

— Գիտե՞ս ուրեմն և չես կրնար համարձակիլ զրուցելու, անհավատի որդի։— Եվ թևեն քաշելով,— շո՛ւտ, զրուցե՛ տեսնեմ,— ըսավ։

— Չորս փոքրիկ աղջիկները, որք հայու զավակ են՝ կ'ուզեն, որ իրենց հանձնվի, և երկու էլ մեծերը, որ դու մուսուլման ըրիր այս մոտերս...

— Ի՞նչ, աղջիկ տա՞մ իրենց, վեցն էլ հիմա ձեռքս կը մորթեմ, գլխին թող առնուն նստին,— ըսավ կինը կատաղությամբ և ոտք ելնելով։

— Բայց գիտես, Տիկին, թե այդպիսի գործի մը հետևանք ի՞նչ կը լինի։

— Ի՞նչ որ կուզե թող լինի... բայց դու մատնիչ, դու իրենց ըսիր, թե այսպիսի աղախիններ ունիմ ես,— ըսավ՝ կատաղությամբ հարձակելով երիտասարդին վրա, որ հարգանոք և հանդարտությամբ քայլ-քայլ ետ կը քաշվեր։

— Աստվա՞ծ վկա, որ ես էլ չեմ գիտեր, թե ուսկից են իմացեր։

Այս միջոցիս ներս մտավ պառավ աղախին մը և դռան մեջ կեցած՝

— Տիկին, աստված քեզ պահե, այդ հայու աղջիկը, որ ամիտե մը ի վեր բանտն էր, չի կա, պատուհանին երկաթները կոտրտեր փախեր է։

— Ի՞նչ կըսես. ողորմելի տկար աղջիկ մը երկաթները կոտրտե՞, անկարելի բան է. Ալի, շո՛ւտ պատասխան տուր, այդ աղջիկը ո՞վ փախցուց, եթե ոչ՝ հիմա...

Եվ դաշույնը մերկացած՝ երիտասարդին վրա հարձակեցավ, որ թևեն բռնելով միշտ հանդարտությամբ՝

— Տիկին, նախանձը զքեզ կը կուրցնե,— կ'ըսեր,— դու գիտես, թե առանց քու հրամանիդ սա սենյակեն դուրս ելած չունիմ. ես ի՞նչպես, ե՞րբ կրնայի այդ աղջիկը փախցնել։

Իսկ սա՝

— Թո՛ղ տուր ձեռքս,— կը գոչեր կատաղությամբ և աչքերն արյունով լցված՝ ամեն ուժը կը թափեր, ձեռքը կ'ուզեր ազատել։

Այս միջոցիս հանկարծ կանանոցին դուռը կռնկի վրա պառկեցավ շառաչմամբ, և Գուրգենի որոտալից ձայնը լսվեցավ, որ «մահ դիմադրողին» կը պոռար. զինյալ պահապանները ծակեծակ փախան, և սա երկու քայլ փոխելով՝ լուսավոր սենյակը մտավ, ուր կատաղի կինը աչքերը դարձած՝ ոչ բան կը տեսներ և ոչ խոսք կը լսեր։

Աղախինները այս ահագին սպառազեն մարդը, որ մերկ սուրը ձեռքը երբ տեսան, վայերու ձայներ և ճիչեր ձգելով փախչող փախչողի եղան. իսկ Գուրգեն երբ տեսավ կատաղի կինը, որուն ձեռքը դաշույնը կը փայլեր և «թո՛ղ տուր» կը գոչեր, և երիտասարդը, որ ամուր ձեռքը թող չէր տալ, բոլոր բարկությունը կորսնցուց և մեծաձայն ծիծաղով քրքիջ արձակեց այս կատակերգակ տեսարանին վրա։

Այդ ահագին ծիծաղը և ձեռքին ուժաթափությունը պարտավորեցին կինը, որ դաշույնը ձեռքեն նետեց, և երբ դարձավ սպառազեն հսկայն տեսավ, որուն ետևը չորս-հինգ նույնպես սպառազեն թիկնապահք կանգնած էին, շուտ մը քողը գլուխը քաշեց և իր բազմոցին վրա սմքեցավ։

Իսկ Գուրգեն միշտ ծիծաղելով ծռեցավ, առավ գետնեն դաշույնը և լավ մը զննելեն վերջ՝

— Ի՞նչ գեղեցիկ խաղալիք, պետք չէ Տիկինը այսպիսի զարդե մը զրկել,— ըսավ և բերավ կնոջը քով դրավ. իսկ նա բարկությամբ առավ քովի բարձին տակ ծածկեց։

— Բարկություն լավ բան չէ,— շարունակեց հանդարտ ծիծաղով և առանց ակնածության Տիկնոջ բազմոցին վրա՝ նորա քով նստելով։— Կը ներես,— կ'ըսեր,— եթե երրորդ դուռն է, որ այս գիշեր բռնի անցնելու կը պարտավորվիմ. հանցանքը իմս չէ, վասնզի միշտ այնպես տվրած եմ, որ դուռները բանան. եթե քու սովորությունդ է, որ դուռը չի բանաս, պետք է ամուր շինել տաս և ոչ փտած ծխնյաց վրա հաստատես դռներն, որ առջի հարվածին կը բացվին։

Իսկ կինը քաշված բազմոցին մեկ անկյունը, ոչ ձայն կը հաներ և ոչ պատասխան կուտար։

— Բայց վերջապես,— ըսավ Գուրգեն,— դու, որ լեզու կը պահես, առատ ես ինձ հետ խոսելու կամ չի խոսելու, այլ ոչ իմ պահանջմունքս չի կատարելու. ո՞ւր են այդ չորս փոքրիկ աղջիկները,— և դառնալով աղջկանց,— ո՞վ որ հայ է, թող սա կողմն անցնի,— ըսավ։

Փոխանակ վեց հոգվո՝ ինը աղջիկ զատվեցան և մեկ կողմը շարվեցան։ Գուրգեն կը զարմանար, վասնզի վեց հոգի միայն գիտեր հայ, իսկ հիմա երեք հոգի ավելի կը տեսներ։ Դարձավ այն ատեն կնոջը.

— Կ'երևա, որ եթե ես ազատություն խոստանամ այս խեղճերուն, ոչ ոք քու քովդ պիտի մնա գավաթ մը ջուր տալու քեզի.— և, տեսնելով բարձին վրա սոսկալի արջառաջիլ խարազանը և ձեռքն առնելով ու շար-

ժելով,— ի՞նչ գեղեցիկ գործիք կրթության և հավատքի քարոզության. դու չատ կը գործածեիր այս, Տիկին, այնպես չէ՞...

Իսկ կինը արձան էր լռության. ոչ կը խոսեր, ոչ ձայն կը հաներ։

— Տղա՛ք,— ըսավ Գուրգեն,— նայեցեք, ի՞նչ որ գտնեք՝ ձի, էշ, ջորի Տիկնոջ ախոռներուն մեջ, պատրաստեցեք, որ այս խեղճ աղջիկները իրենց տեղերը դարձնենք. շո՛ւտ ըրեք, շարժեցեք, անոթի չարդվեցանք։ Շնորհակալ ենք, Տիկինը մեզի հաց, կերակուր ղրկած էր, բայց ո՞ գիտե, թե իր օրհնած աղը մեջը խառնած չէր։

Այս միջոցիս Վահրիճ նեռս մտավ.

— Տեր, դուրսը նժույգ մը կա, որուն նմանը ես կայսեր ախոռներուն մեջ չեմ տեսեր, Յոլակին լավ ընկեր մը կը լինի։

— Այդ նժույգը Տիկինը ընծա կընե Արիգային,— պատասխանեց Գուրգեն անխռով։

— Իմ նժույգս, որ գի՞ն չունի։ Անհավա՞տ, անօրե՞ն ավազակներ, մինչև ե՞րբ համբերելու է ձեզի...— գոչելով կինը արագությամբ հափշտակեց դաշույնը քարձին տակեն և Գուրգենի վրա շողացուց, որ միշտ արթուն՝ բռնեց ձեռքը և մատներուն մեջ քիչ մը ստրորելով պարտավորեց թողլու դաշույնը, բայց միանգամայն զարմացավ նաև այդ կնկան կորովին վրա, որ աղաղակներ չի ձգեց ուրիշ մարդկանց պես, այլ մյուս ձեռքով յուր երեսը ծածկել կը ջանար քողով։

— Ո՞ւմ համար կը ծածկես այդ գեղեցիկ լաչակիդ պես կանալ երեսդ,— ըսավ Գուրգեն և, զննելով դաշույնը արհամարհոտ աչք՝ «այդ խաղալիքը օրվան մեջ քանի՞ անգամ կը գործածես» հարցուց հեգնությամբ։ Եվ երկու կտոր ընելով գետինը նետեց։

Նույն միջոցին եկան թիկնապահները և իմացուցին, թե ամեն բան պատրաստված էր։

— Տարեք աղջիկները հեծուցեք, Արիգային համար նժույգը, որ ուրիշ նշանակություն չունի, փոխանակ յուր այնչափ չարչարանաց և բանտերու այս դաշչելի կնոջ ձեռքեն.— ըսավ և ելավ։

Կարավանը ուրախ-զվարթ ուղևորեցավ ի Տարոն գավառ և երբ Սատան հասավ, սիրալիր ընդունելություն գտավ ամենեն։ Բայց կարելի չէր ուրախություն ցցնել Հովնանու օուգին առջև, որ բոլոր լեռը համակեր էր։ Սատան յուր գյուղացվոր կ'ողբար, և ամեն տուն հայր մը և եղբայր մը կորուսեր էր։

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Պատմությունը երկայն կը նկարագրե Բուղայի դյուրին քաջությունքը, որ խաբեություն, դավաճանություն և ստերդումնություն ավելի լավ կը գործածեր, քան թե զենք, ինչպես տեսանք Վասպուրականի նահանգը, ուր Արծրունի Աշոտ և եղբոր Գուրգենի իշխանությունը կործանեց՝ առանց բարեկարգելու. նույնպես է՝ ըներ, ուր որ հասներ, գիտեր ավրել՝ բայց ոչինչ շինել։

Գարնան յուր առաջին հարձակումը Հայաստանի հյուսիսային կողմը և Տփխիսի վրա եղավ։ Այս քաղաքը, որ այն ժամանակ Գուր գետին ձախ ափանց վրա շինված էր և բոլորովին փայտաշեն, Իսաք անունով մահմեդականի մը սեփականություն էր, որ շուզեց հնազանդիլ Բուղայի և յուր քաղաքն ամբողջ մոխիր դարձնելե վերջ ինք էլ սպանվեցավ նորա հրամանավ։

Անկե հարձակեցավ հյուսիս՝ Ծանարաց վրա, որ կովկասյան քաջ ժողովուրդ մ'էին և երկայն պատերազմներով ոչինչ չի կարողացավ ընել ու խայտառակաբար ետ դարձավ և իր վրեժը թափեց Սյունյաց երկրին վրա. մեղ ծանոթ Աշոտ ամրացավ յուր բեռանց մեջ, յուր մեծ եղբայրը Վասակ քաջությամբ պատերազմելով գնաց Գարդմանաց Կտրիճ իշխանին ապավինեցավ, և նա կապած մատնեց զնա Բուղայի ձեռք, որ ի վարձ յուր մատնության զինքն ևս բռնեց խաբեբա խոստմունքներով և շղթայի զարկավ։

Արշավեց Բուղա Աղվանից երկիրը, բայց Հոն Ծսայի Ապումուսե քաջությամբ պատերազմեցավ իրեն դեմ, խորտակեց նորա զորությունը, ոչ խաբեբա խոստմանցն հավատաց և ոչ զենքերեն վախցավ, այլ աստուծո ապավինյալ գեմ դրավ անօրինին և քաջալերություն եղավ Քրիստոսի հավատացելոց։— Վասպուրական լսելով Բուղայի պարտությունը՝ սիրտ առավ և ժողովուրդը զենքի դիմելով, քանի մը իշխաններ գլուխն առած՝ սկսավ իր բռնավորաց դեմ պատերազմիլ և նոցա լուծը խորտակել. չորս հազարի չափ խումբ մը Ապուզափր Արծրունին և նորա քեռորդին Սահակ Ապումբգեմ քաջ մարդը գլուխ իրենց դրած սկսան կռվիլ և կոտորեցին և ափար տուին Ճուաշ և Թոռնաման։

Այս ապստամբությունը ճնշելու համար զանազան ամիրայք տաճկաց խումբ-խումբ կը դիմեին Վասպուրական հրամանավ Բուղայի. հայը երբեմն կը հաղթեին և երբեմն կը հաղթվեին, թշնամիք հոս կը զորանա-

յին, հոն կը տկարանային։ Վիճակն անիշխանություն էր։ Եվ պետք էր հնարք գտնել երկիրը կործանմանե ազատելու համար։

Սմբատ Սպարապետ ան ատեն ներկայացուց Գուրգեն Բուղայի, պատմեց, թե ինչպես սա հունաց դեմ քաջություններ ըրեր էր, թե ինչպես կայսրը զինք Կոստանդնուպոլիս հրավիրեր, և նա նախամեծար համարեր էր իրեն դիմել։ Ուստի Բուղայի հրամանավ Գուրգեն արաբաց բանակը նստավ առ ժամանակ մի սպասելով աստուծո օգնականության։

Բայց քաջ Ապումքդեմի մահվանեն ետք Վասպուրականի վիճակը երբ վատթարացավ, և Վասակ մը Արծրունյաց ցեղեն երբ գնաց Ռշտունյաց Ոստանը նստավ իբրև տեր աշխարհին՝ առանց կարենալու սանձել տաճկաց բռնությունքը և փոքրիկ բռնավոր մ'էլ ինք դարձավ. Գուրգեն ոչ ևս կրցավ համբերել և հարկ համարեց Սմբատա հետ առանձին տեսություն մ'ընել այս նյութիս համար։

— Վասպուրականի երկիրը, Հայոց սպարապետ,— ըսավ,— քեզ հանձնված է ի Բուղայե, և հիմա քանի որ դու պարտավորված ես այդ մարդուն քովեն անբաժան մնալու, կ'իմանամ, թե անիշխանության մեջ կը թավալի, և շատ մը փոքրիկ և տեսակ-տեսակ բռնավորաց տակ կը հեծե. պետք չէ՞ արդյոք այդ վիճակին դարման տանիլ։

— Ես այդ մասին նաև շատ կը մտածեմ, քու քաջությանդ վրա կասկած չունիմ և կը փափագիմ նաև,— պատասխանեց Սմբատ՝ աչքերը շուրջ դարձնելով, որ միգուցե իր ըսածը ոք լսե,— կը փափագիմ նաև այս վիճակին դարման գտնել։ Կարելի է շատերը զիս բամբասեցին իբրև մատնիչ հայրենյաց, զիս երկրորդ Վասակ մը, Մերուժան մը համարեցին. եղավ վայրկյան մը, որ ես նաև իմ վրաս կասկածեցա, բայց խըղճմըտանքս հիմա հանդարտ է, Գուրգեն։ Վասնզի վայրկյան մը եղավ, որ ես Բուղայի վստահությունն ունենալու համար՝ իբրև առաջնորդ իրեն ծառայեցի, բայց ոչ երբեք իր չգիտցածը և հայտնի ճշմարտությունեն ավելի բան մը իրեն իմացուցի։ Ինք Ծանարաց դեմ պատերազմելու կամք չուներ, ես առանց երևելու զինք այդ պատերազմին մղեցի, ուր յուր զորաց քառորդ մասեն ավելին ոչնչացավ։ Եվ Աղվանից Եսայի Ապումուսեին գաղտնի քաջալերություն և դրամական օգնություն հասցընող դարձյալ ես եղա։ Եվ այդ պատերազմը նույնչափ վնասակար եղավ իրեն, որչափ կորստական եղած էր Ծանարաց պատերազմը։ Մի՛ կարծեր, թե այս խոսքերը հայտնելով ինքզինքս գովելու դիտավորություն ունիմ, այլ խեղճ հայրենյաց վիճակին մեջ՝ գոնե արժանավոր անձանց առաջ ինքզինքս արդարացնել կ'ուզեմ. վասնզի սրտիս վրա ծանր է այդ մարդուն հանդիմանությունը, որ մեր ժամանակի հայոց մեջ առաջին կը համարիմ ես իր անշահատիրության՝ իր քաջության և հեռատեսության

համար, և որ մարտիրոսական մահվամբ այդ կյանքը պսակեց։ Հիմա՝ այսօր եթե ինք ողջ լիներ, երբ Բուղայի զորքը կիսվակես ջարդվեցան, ես իր խորհրդոց կը հետևեի և դիմակը վար առնելով ապստամբության դրոշը կը վերցնեի. բայց այդ աննման Հովնանը չի կա. երկնքեն մեր վրա կը ծիծաղի։ Սակայն պետք է ջանալ ի գործ դնել ինչ որ ինք կը մտածեր. եթե դու հիմա կարենաս Վասպուրականը նվաճել՝ քսան-երեսուն հազարի խումբ մը կազմել, եթե կարենաս տասը հազար մը գոնե սասնցի իջեցնել իրենց լեռներեն, ապահո՛վ եղիր, թե նույնչափ մ'էլ ես կը հոգամ իմ Մոկաց և Շիրակա երկրեն. և կաթողիկոսն ու եկեղեցական դասն ոտք հանելով կսկսինք սրբազան պատերազմը և Հովնանու փափագը կը կատարենք։ Քե՛զ տեսնեմ, գնա՛, աստված հետդ լինի՛, սուրդ հատու լինի՛։

— Ուրիշ հանձնարարություն չունի՞ս ինձ ընելու, Հայոց սպարապետ։

— Ոչ, եթե պարագաները պահանջեն և ինձի պետք ունենաս, գրե որդվույս՝ Աշոտին և ապահով եղիր, թե ինչ որ կարելի է, կը ջանամ ի գործ դնել։

— Շա՛տ բարի, ողջ լեր։

— Աստված հետդ լինի։

Եվ այսպես բաժնվեցան իրարմե այս երկու մարդիկը, և Գուրգեն յուր տասը թիկնապահներով մտավ Վասպուրական, այն գործին ձեռնարկելու, որ երկրին ընիկ ժառանգավոր իշխանք չէին կրցեր կատարել։ Բայց ճամփա ելնելու ժամանակ և զանազան պարագայից մեջ հիշեց և պիտի հիշեր այդ Հովնանու անունը, որուն հետ քանի՛ պատերազմներու մեջ գտնվել էր, և որու քաջությունը ի՛նչչափ մեծ էր, ավելի մեծ էր հեռատեսությունն, զգուշավորությունը և կառավարության ոգին։

Այնպիսի էր ժամանակը, այնպիսի էր երկրին վիճակը, որ քանի մը օրվան մեջ այդ հսկային շուրջը, որ Գուրգեն Արծրունի Ապուպեչ կ'անվանվեր՝ գունդագունդ ժողվվեցան պատերազմողք, և ինք մտնելով Աղբագ գավառը՝ երկու երևելի բերդ, Ջղմար և Սրինգ գրավեց առժամայն։ Եվ առանց դանդաղելու հարձակեցավ Ռշտունյաց Ոստանը, ուր կը նստեր Վասակ Արծրունի Կովակերն անվանյալ և որ ինքզինքը զորավար Վասպուրականի կը հռչակեր. կալանավորելով զնա՝ ազատություն տվավ իրեն և իմացուց, թե զորավարության պետք էր արժանանալ՝ ո՛չ շվայտություն, զվարճություն և հանգստություն փնտրելով, այլ աշխատությամբ և գործունեությամբ։ Եվ խոսքը օրինակով հաստատելով՝ սկսավ ընտիր խումբով շրջիլ բոլոր երկիրը, «ուր որ բնակություն հաստատեր էին տաճիկք Բուղայի հրամանավ, սոսկալի հարվածներ վրանին կը

հասցներ, ոտով և աղեղամբ կը սատակեր զիրենք և անհետ ըրավ՝ բոլոր Տաճկաց ժողովուրդը, որ բնակած էին Վասպուրական տերության մեջ։

Կը զարմանային Վասպուրականի ժողովուրդը այդ Արծրունի Գուրգենի վրա, որ չէր նմաներ ամենևին այն մյուս Արծրունյաց յուր մերձավոր ազգականաց, այդ պատերազմի հաղթող առյուծը ոչ ամբարտավանություն ուներ, ոչ անձնապաստանություն և ոչ պահանջմունք ի ժողովրդոց։ Շատ անդամ կը տեսնեին զինք նստած հասարակ շինականին հետ ընտանեբար կը տեսակցեր, խրատներ կուտար, կը հորդորեր քաջ լինել, վարժվիր զինաշարության, ընկերին օգնել ընդդեմ օտարին, պաշար պահել նեղության օրերու համար։

Հասավ վերջապես Հայոց Զորո գլուխը Որդոք գյուղը, չորս հարյուր քաջերով, և միտքը դրած էր Բերկրի հաստատված ութմանիկ ըսվածները բնաջինջ ընել, և Արծրունյաց քաղաքը մաքրել այդ բարբարոսներու մնացորդներեն։ Բայց կսպասեր գունդերուն, որ պիտի հասնեին, ուստի կ՚ելներ շատ անգամ միայնակ՝ թողած Ցոլակին գլուխը՝ ծանր-ծանր կը շրջեր գետին եզերքը, որ այդ լայնատարած ձորը երկուքի կը բաժնե, և որ հռչակավոր էր և միշտ պետք է լինի հայուն համար, վասնզի հոն եղած է կռիվը, ուր հայոց նախահայրը առաջին պատերազմը պատերազմեցավ ազատության համար և զարկավ սպաննեց զԲել։

Կեղներ՝ այդ մյուս լեռներեն շրջապատյալ բարձր սարին վրա, ուր ժողովուրդը մինչև այսօր բերդի մը մնացորդ ավերակ կը նշմարե և զոր Հայկա բերդ կանվանե. կը դիտեր այդ Տիտանյանց արժանի ահեղ տաշած քարանց շարքերը, և նստած ժայռի մը վրա կը մտածեր. ինք մեծասիրտ և կորովի հսկա՝ այդ դյուցազն և վեհ հիշատակներու առջև ինքզինքը փոքրիկ և նվուն կը դտներ։

Երբ այս մտածությանց մեջ թաղված՝ առավոտ մը միտքը անցյալին վրա կը շրջադայեր, աչքը դարձուց դեպի Բերկրվո կողմը և տեսավ սև ամպ մը, որ կը քայլեր, կը մտներ Աբրահամու անապատը։ Շուտ մը ցատկեց Ցոլակին վրա. «Երթա՞նք իմ քաջ նժույգս,— ըսավ,— մենք պիտի երթայինք թշնամին գտնելու, նա կուգա մեր առաջ, որպեսզի մեր հոգնությունը պակաս լինի։ Եվ Ցոլակ, որ կ՚իմանար՝ փոթորկի պես սրացավ և ամպի փոշի հանեց։ Երբ Գուրգեն մտավ Որդոք արդեն յուր չորս հարյուրը իրեն կ՚սպասեին։ «Ապրի՞ք տղաք, որ այսպես կազմ և պատրաստ եք, քշենք երթանք, դուք ուսկի՞ց իմացաք թշնամվույն գալը»,— հարցուց Գուրգեն։

— Նա որ ճանապարհի պահապանն ես,— ըսավ երիտասարդ ձիավոր մը,— տեսա իրենց գալը և իմաց տվի։

— Ի՞նչպես կարծես, թե կան թշնամիք։

— Միայն Բուղայե դրկված արքունի զորք երկու հազար են եղեր, և զորավարին անունը Բուտել է. կան իրենց հետ ութմանիկք՝ և Վասպուրականի ազատներեն նաև միաբաներ են նոցա հետ և մեր վրա կուգան եղեր։

— Այս տեղեկությունքը դու ուստի՞ առիր, ա՞յ տղա։

— Հառաջընթաց ձիավոր մը տեսա, որ հանդուգն՝ կուգար. սեպաձև ժայռի մը ստորոտ ծածկվեցա. երբ նա անցավ, հարձակեցա վրան և առաջի նիզակի հարվածին, որ ձիուն գավակեն տվի, մարդ և ձի գետին գլորեցան. մարդ ամա՞ն գոչեց. «Քեզ չեմ սպաններ, միայն ձիտակ կրուցե և առջևես քալե» ըսի. պատմելը պատմեց, բայց ինչչափ որ աշխատեցա և նիզակովս մտրակեցի, անպիտանը չի կրցավ հոս ճանիլ, կես ճամփան գետին ինկավ և սկսավ արյուն թքել. «Է՛լ կարող չեմ, կ՚ուզես սպաննե» ըսավ. ես որ խոռոչ տվի, չուզեցի խոստմունքս ավրել, թողի կիսակենդան ավազին վրա և եկա։

— Ապրի՞ս լա՞վ ես ըրեր։

Երբ կես ժամու ճամփա հառաջացան Գուրգենի զորքը, և լավ ու զորավոր դիրք մը գտավ իրենց զորավարը՝ բլրակի մը վրա, ուր աջ կողմեն գետը կը պտրտեր, և ձախը լեռներու գոտիքը, ուր դիրքը կը նեղվեր, հոն ճակատեցուց յուր գունդը. վահանավոր զորքով պարփակեց հետևակ աղեղնավորաց խումբը. և երբ թշնամիք հասան, երկայն ժամեր պատերազմեցան հայք և մեծամեծ հարվածներ հասուցին նոցա վրա։ Իսկ մինչ նոքա քիչ մը կազդուրյալ՝ դարձյալ հարձակեցան հայոց վրա, Գուրգեն չի կարենալով այլևս համբերել, մտրակեց յուր քաջ երիվարը, զարկավ պատռեց թշնամյաց ձախ թևը, և սկսան փախչիլ իր առջևեն, կը հալածեր զիրենք և կը սատակեր զիրենք այնչափ զորությամբ, որ ավելի էին անանք, որ մեռան Գուրգենի սուրեն քան թե անոնք, որ մնացին։ Իսկ աջ թևը տաճկաց հարձակեցավ հայոց ձախ թևին վրա և շարժեցին զայն, և դարձան, որ պաշարեն Գուրգեն, բայց չի կրցան դիմանալ նորա զորության և խորտակեցան նորա առաջ։ Եվ է՛լ չի համարձակեցան գալեկ և մտնել Վասպուրական աշխարհը տաճկաց զորքը, վասնզի սաստիկ երկյուղ խնվավ իրենց սիրտը։

Բայց Գուրգենի որտին մեծ վերքը պատերազմեն ուաջ և պատերազմեն վերջ նուն երիտասարդ պահապանին խոսքերն էին. «Վասպուրականի ազատներեն նաև միաբաներ են նոցա հետ»։ Ի՞նչ պիտի զրուցեր Հովնան հիմա, այդ մարդիկը ազգի և հավատքի թշնամիներու հետ տեսներ, որ եկեր են իրենց ազգին դեմ պատերազմելու, կ՚ըսեր ինքնիրեն, եթե նա, որ երեք մատնիչ կախելու համար այնչափ տաժանմունք

հանձն կ'առնուր, պետք է որ ես էլ խիստ օրինակ մ'ընեմ, որ այդ վատ սովորությունը վերնա հայ ազատաց մեջեն։

Երբ այս խորհրդածությամբ երկու հարյուր ընտիրներով կը հալածեր թշնամին, որ մոտ էր Սև ջուր գետին, հանկարծ փախստական խումբը կանգ առավ և քիչ մը վերջ ետ դարձավ, վասնզի հայտնի մահը տեսավ առաջը. թշնամի մը, ուսկից գթություն հուսալ անկարելի էր. հազարի չափ հայ գյուղացիք մանգաղներով ու կացիններով զինյալ՝ փախստական տաճիկը կը ջարդեին անխնա։ Ուստի զենքերը ձգեցին և եկան Գուրգենի, որ անզեն մարդիկը ջարդել չէր կրնար, թեպետ այդ խաբեբա և ստերդումն արաբ ազգին բնությունը լավ կը ճանչեր, և ըրած դավաճանությունքը կը հիշեր, բայց դարձյալ հրամայեց զորաց, որ վնաս չի հասցնեն անձնատուր անզեններու։ Բուղայի զորավարը Բուտել սոցա մեջ էր. հրամայեց Գուրգեն այդ մարդուն սուրը իրեն դարձնել, նույնպես ազատություն խոստացավ այն տաճիկ գլխավորաց, որ եկեր էին յուր վրա պատերազմելու. բայց երբ հայոց ազատաց առջին կանգնեցավ և մեջ Վասակ Կովակերն տեսավ, յուր ահագին ձայնը բարձրացուց և գոռաց.

— Դուք, անօրեն անզգամներ, դուք ձեր ազգին դեմ՝ ձեր եղբարց դեմ ձեռք կը վերցնեք և ինձմե գթություն կ'սպասե՞ք. ճշմարիտ է, որ ես զինաթափ մարդիկ չեմ կրնար սպաննել, իմ սուրս զինվորի է և ոչ դահճի, ուստի ձեզ ձեր եղբարց դատաստանին պիտի հանձնեմ։ Ահա ժողովուրդը՝ գեղացին կուգա, ձեզ իրենց կուտամ, ի՛նչպես կ'ուզեն, թո՛ղ ընեն, կ'ուզեն ձեզ սպաննեն, կ'ուզեն ձեր կյանքը շնորհեն... Իսկ դու, Վասա՛կ, նախատինք Արծրունյաց, Մերուժաններու վիժյալ, որ և ոչ մատնիչ և դավաճան լինելու չափ ուղեղ ունիս, քեզ կը շնորհեմ քու այդ անպիտան կյանքդ, վասնզի ապուշ ես և ցնորյալ։ Գնա՛ Կայենի թափառական կյանքը վարե, խաղալիք և նշավակ եղիր ամենուն. վասնզի զորավար Վասպուրականի ինքզինքդ անվանելեն վերջ այդ միայն կը պակսեր, որ Վասպուրականի արյունարբու թշնամյաց հետ միաբան՝ գայիր քու ազգիդ դեմ անպիտան զենքերդ շարժելիր։

Նույն միջոցին կը հասնեին հայ գյուղացիք իրենց խառնիխուռն զինվորությամբ և զինուք. թեպետ վրեժ և կատաղություն իրենց աչաց մեջ կը փայլեր, բայց երբ տեսան Գուրգեն, որ արդեն ամեն բերան Վասպուրականի փրկիչ կանվաներ, մոռցան իրենց դառնությունը և միաբերան սկսան աղաղակել. «Կեցցե՞ Գուրգեն, կեցցե՞ մեր ազատարարը»։ Իսկ Վասպուրականի ազատաց խումբին դավաճանք այն միջոցին Գուրգենի մոտեցած իրեն գթության կապավիններին, որ չի մատնե զիրենք ժողովրդյան կատաղության։ Գուրգենի սիրտը փափուկ էր նույնչափ, ինչչափ խիստ էր բազուկը։ Ուստի ներեց և հրամայեց անվնաս արձակել։ Եվ դառնալով Բուղայի զորավարին՝ ըսավ.

— Գնա՛ զրուցե քու տիրոջդ, որ ես ավազակներե և երկոտանի գազաններե կը մաքրեմ երկիրը, օրինավոր տերանց հնազանդիլ գիտեմ, բայց բռնավորաց և ավազակապետաց՝ ո՛չ երբեք. ինք թող ընտրե, և լինի ինձ հետ որն որ ուզե։

Երբ թշնամի և դավաճան ամենքն անհետացան, ինքնիրեն կ'ըսեր Գուրգեն.

— Ես այն մարդը չեմ՝ ինչ որ պետք էր լինիլ. հիմա Հովնան եթե լիներ, այդ անպիտանները չէր արձակեր, վասնզի վաղը դոքա դարձյալ ազգին թշնամյաց հետ կրնան միանալ և վնասել։ Ոչ ոքե լուր չի կա. Սմբատ ձայն չի հաներ, իմ զրկած նվիրակս դեռ չի դարձավ, Խոսրով չերևար, այդ խոհեմ և պատվական մարդը ինձի շատ հարկավոր էր, վասնզի յուր խորհրդոց պետքը կ'զդամ։

ԳԼՈՒԽ ԻԴ

ԱՆԶԳԱՄ ԿԻՆ

Գուրգենի անունը տարածվեցավ բոլոր շրջակայքը, և թշնամի ու բարեկամ չէին կրնար առանց ակնածության նայիլ այդ մարդուն վրա. և որ մեծ դժբախտություն էր, նա ավելի նեղություն կը կրեր «ընտանի հարազատ ազգականներե, որ ուխտազանց լինիլ, ստերդում լինիլ, խոստումանց դրժել չէին ամաչեր», վասնզի գիտեին, թե այդ դյուցազն և վսեմ բնությունը ներելով միայն վրեժ կը խնդրեր։ Թեպետ Ռշտունյաց Ոստանը հանգչիլ սիրելի էր իրեն սրտին անցյալ հիշատակներով, բայց երբեք չի թուլացավ, զորքը կը շատցներ, կը մարզեր՝ միշտ ուշադիր Բուղայի ամեն շարժմանց, և Վասպուրականի ժողովուրդը զինք փրկիչ և հայր կ'անվաներ։ Իսկ բռնավորն արդեն հոգնած՝ երբ իմացավ, թե մարդ մը կա իր առաջը, որ ամբողջ բանակ մը կ'արժեր, ավելի լավ համարեց քաղցրությամբ և խաղաղությամբ գործը լմնցնել, իշխանական սուր և գոտի և պատերազմական խրոխտալիր ձի և Վասպուրականի գլխապետության հրովարտակ կ'ուղարկեր, ի մեծ ուրախություն հայ ժողովրդոց։ Եվ ինքն Բուղա ժողվելով բոլոր հայոց մեծ նախարարքը և նույն ինքն Սմբատ սպարապետ կ'առնուր կը տաներ ի Բաղդադ նորա որդվույն Աշոտո հանձնելով Հայաստան. իսկ ամիրապետն անխտիր զամենքն ի

մահմեդականություն ընդունեցեք, միայն Սմբատ և տիկին Հռիփսիմե ամեն սպառնալիք արհամարհելով խոստովանաբար քանտի մեջ իրենց կյանքը կնքեցին։

Իսկ Աշոտ Բագրատունի խոհեմությամբ և իմաստությամբ երկիրը սկսավ կառավարել և շինել. մինչև ամեն մտածող մարդ կրնար զարմանալ և մինչև այսօր կարող է զարմանալ, երբ լավ խորհրդածե, թե այդ ոտնակոխ Հայաստանի ժողովրդոց մեջ ի՞նչ աստիճանի կենսական զորություն կար, որ այնչափ թշվառությանց, այնչափ տառապանաց փոթորիկներե վերջ երկիրը կը խլրտեր և կ՚սկսեր շեննալ։

Բայց Վասպուրականի ժողովուրդք խաղաղություն վայելելու բախտը չունեցան. հազիվ թե Գուրգեն երկիրը հանդարտեցուց, և ահա Գրիգոր Արծրունի, որ Բուղայի երկյուղեն Աբխազաց երկիրը փախած էր, վրացի զորոք կը հասներ Վասպուրական հալածելու համար զԳուրգեն և տիրանալու աշխարհին։ Բայց յուր զորքն խմացան և լսեցին, թե ի՞նչպիսի մարդ էր Գուրգեն, չուղեցին պատերազմիլ և դարձան իրենց երկիրը։ Եվ Գրիգոր այս տեսնելով՝ ուղեց բանագնացության մտնել Գուրգենի հետ, որ առանց դժվարության հանձն առավ երկիրը բաժնել իրենց մեջ։

Նույն ժամանակները Արծրունի Աշոտ իշխանի որդի Վահան կուգար Բաղդադա և զորք ժողվելով կը հարձակեր Ռշտունյաց Ոստանին վրա, ուր կը նստեր Գուրգեն, և հաղթված կորակոր կ՚երթար պատմելու Բաղդադ՝ ի՞նչ որ գլուխ եկավ։

Իսկ Գուրգեն յուր ուշադրությունը միայն տված օտարաց, զարմանալի առաքինությամբ և անհիշաչարությամբ յուր ազգայնոց հանցանաց, հարված հարվածի վրա կը հասցներ Իսմայելի որդվոց, ինչպես կը պատմեն ժամանակին պատմիչք, և Հուդա Մակաբե ու փրկիչ զնա կ՚անվանեն։

Թեպետ Գուրգեն շատ ավելի վեր էր ամեն գովութենե՝ յուր անբավ քաջությանց հետ այնվկան սիրտ մը պահելով, որ այդ ժամանակին մեջ անօրինակ էր, երբ ամենքը եղբայր եղբոր դավաճան լինելնին անխիղճ և անամոթ։

Աշոտ Արծրունի յուր որդվույն Գրիգոր Դերենիկի հետ Գուրգեն եղբայրը կուղարկեր ամիրապետին հրամանավ տիրելու Վասպուրականի և ի բաց վարելու զԳուրգեն Ապուսպեհ, որ իմանալով թագավորական հրովարտակը, քաշվեցավ Սրինդ և Զլմար գերդերը՝ թողով ամեն իշխանությունն. և երբ տեսավ, թե այդ բնտրերը նաև շատ կը տեսնեին իրեն Արծրունիք, թողուց անոնք էլ, որ ազգային արյուն չի թափի և ելավ փոքրիկ գնդով երթալու հունաց թագին։ Իսկ Գուրգեն Արծրունի, առանց ամաչելու պատգամավոր կ՚ուղարկեր յուր անվանակցին առաջարկելով,

որ չերթա՝ խոստանալով եղբորմեն ապստամբիլ և բաժնել իրեն հետ երկիրը։ Իսկ սա, երբ պատգամավորն այս լուրը բերավ, հեգնությամբ դառն ծիծաղով այսպես պատասխանեց. «Գնա՛ զրուցե քու տիրոջդ, որ ես իմ ազգիս արյունը չի թափելու համար ամեն բան կը թողում կ՚երթամ օտարություն և կը զարմանամ, թե նա, որ եղբորը և եղբորորդվույն դավաճան լինելու չամաչեր, ի՞նչպես կը համարձակի ինձ բարեկամական դաշինք առաջարկել»։

Այս խոսքերը զրուցելեն վերջ, լի դառնությամբ հեծավ ձին և քանի մը ձիավոր միայն հետն առած ուղևորեցավ և հասավ Կարին, ուր իր համբավը իրմե առաջ հասել էր, և ուր Միքայել հունաց Կայսրը զինք կը հրավիրեր գալ Կոստանդնուպոլիս. բայց հայրենյաց հողը, և սիրտ մը, որ ինք միշտ կը հավատար, թե իրեն էր, այդ հրավերն ընդունիլ կ՚արգիլեին, և խորհրդածելով կը դանդաղեր։

Այս վիճակին մեջ ծանր հիվանդությամբ հիվանդացավ Կարին, և բժիշկները, երբ առողջություն գտավ և դեռ տկար էր, հրամայեցին օդափոխություն Կարնո շրջակայքը Մանանաղյաց գավառի երկիրը։ Փոքրիկ ամառանոց մը բլրակի վրա հունաց սահմանագլուխը Կարնո զորավարին ընտրությամբ և խորհրդով յուր բնակության տեղին էր. մտակի մը եզրը և քանի մը դարավոր կաղնիք իրենց ստվերներով յուր հանգստյան տեղն էին։ Այդ հզոր բնությունը հազիվ սկսեր էր կազդուրել, երբ հանկարծ առտու մը խումբ մը տաճիկ հեծելազոր շրջապատեցին զինք, կապեցին, հեծուցին ձիու մը վրա և տարին առ Աշոտ Բագրատունի։ Հունական մատն և արաբական ձեռք պատրաստել էին այս դավաճանությունը։

Աշոտ արդեն շատ վտանգավոր դիրքի մեջ էր այն օրերը. ազատել զԳուրգեն վախցավ ամիրապետեն, վասնզի իր անձին դեմ նաև շատ ամբաստանություն կային և հայրը Սպարապետը Բաղդադ կալանավոր բարբարոսաց ժանիքներու մեջ կը հեծեր. ուստի լավ համարեց Տփխիսի քաղաքապետին հուղարկել Գուրգեն, որ ամենեն մարդասեր կը համարվեր շրջակա ամիրայից մեջ։ Բայց սա նաև երբ շատ ջանաց սպառնալյոք և ողոքանոք մահմեդականության բերել զնա և օգուտ չի տեսավ, կրկին կապանոք և միզը շղթաներ անցնելով հուղարկեց Ատրպատական Պարսից և հոն դարձյալ ամեն հնարք ի գործ դրին սատանայի արբանյակները ուրացնելու դյուցազնը, որ ինչպես պատերազմի դաշտին վրա աներկյուղ էր մահվանե, նույնպես անդրդվելի էր իր հայրենի և սուրբ հավատքին վրա։ Ամեն հնարք կը գործածեին։ Ուրացյաց մեջ՝ Սողոմոն Բագրատունի, անարգ արարած, գործիք եղել էր բռնավորաց և որ վերջապես հուսահատյալ ետ կեցավ իր վատ հորդորներեն։

Բայց այդպես Գուրգենի վիճակը ավելի վատթարացավ, վասնզի Քրիստոսի թշնամիքը զինք կը տանջեին սովով և ծարավով, և Որմյա լճին քով Գմբեթ ըսված բերդի մը խորագույն բանտին մեջ զինք կը պահեին՝ զրկված ամեն լուսու։

Երբ այս վիճակին մեջ անհույս ի մարդկանե մնացել էր Գուրգեն, երևցավ իրեն «գեղեցկատեսիլ մարդ մը լուսո պես փայլուն հագված և ըսավ,— զգույշ եղի՛ր, քաջությամբ կովիր, Քրիստոսի զինվոր եղիր. ճշմարտությենե մոլորելոց նման մի՛ մոլորիր, որ հետևեցան Իսմայելի ազգին օրինաց, հայոց մյուս գերելոց պես»։ Եվ այս խոսքերն երբ ըսավ, Գուրգեն նշմարեց այդ լուսազգայց մարդը Հովնան ինքն էր՝ Հովնան հրեշտականման. հազիվ թևերը տարածեց և «Հովնա՜ն, Հովնա՜ն» գոչեց, ահա տեսիլն անհետ եղավ։ Բայց յուր շուրջ մնաց նորա զորությունը, և բանտյալը նոր կորով մը ստացավ, միշտ հույսը աստուծո վրա դնելով։

Բայց մի՛թե կյանք կը խնդրեր Գուրգեն, որ Վասպուրականի տեր եղած ժամանակ մը, յուր անձին, յուր օգտին համար վայրկյան մը չէր մտածել, հիմնավոր գործ մը չէր ըրել, փոքրիկ վրեժխնդրություն մը ի գործ չէր դրել, այլ միշտ բարոյականը յուր քաջության հավասարեցնել էր ջանացել։ Աշխարհքիս վատութենեն ձանձրացյալ՝ շուրջը ստություն, խաբեություն, մատնություն շարունակ տեսնելով, սիրով խոր խոցյալ սիրտ մը միշտ կրելով, Հեղինեին պատկերը՝ ուրիշ զոհ մը յուր աչքին առջև միշտ ունելով, աստուծմե կը խնդրեր, որ առնու իրմե այդ կյանքը, վասնզի ծանր էր իրեն, և հիմա բանտի տխուր միայնության և անգործության մեջ ավելի կ'զգար այդ սիրույն վերքը, քան թե պատերազմաց շառաչմանց և զբաղմանց մեջ։

Այս դառն վիճակեն հալած, հիվանդութենե և անոթութենե փոխված էր ոյուցազն քաջին կերպարանքը. և գրեթե մոռցված, Գուրգեն մոռցված երբ կը տքներ, բանտապանը ներս մտավ օր մը «երթանք,— ըսավ,— քեզ Տիկին մը կ'ուզե տեսնել»։

— Ի՞նչ Տիկին է այդ, որ կ'ուզե զիս տեսնել։

— Հրաման ունի ամիրապետեն զքեզ տեսնելու. քալե՛ երթանք։

Ծանրաբեռնյալ շղթայուք հետևեցավ Գուրգեն և մտավ մաքուր սենյակ մը, ուր լայն վերարկուավ և քողով ծածկված կին մը բազմոցի վրա նստած էր. երկու սև ներքինիք աջն ու ձախ պատկառանոք կանգնած էին։ Այդ կինը, այդ խափշիկները լավ ազդեցություն մը չբերին Գուրգենի վրա, և վտանգ մը զգաց, թեպետ աներևույթ էր ամեն բանե, վասնզի մահվենե երկյուղ չուներ։ Ուստի անտարբեր աչք նայեցավ կնոջ վրա, վերջը պատուհանեն նայեցավ Որմյա գեղեցիկ լճին, նայեցավ երկինք, նայեցավ արևուն, որու ճառագայթներեն զրկված էր ամիսներով։

Երբ բանտապանը դուրս ելավ, շարժեցավ քողերու տակ ծածկված արձանը.

— Անհավա՜տ շուն, կը ճանչես զիս,— ըսավ կերկեր և խիստ ձայն մը։ Քողը մեկդի ըրավ և Ասպահունյաց արաբ կինը յուր դեղնած և տգեղ կերպարանոք երևցավ հայանի Գուրգենի աչքին։

— Հարկ չի կար,— պատասխանեց սա անխռով,— այդ ոսկեգույն երեսիդ գեղեցկությունը ինձի ցցնելու, այդ անշնորհք նախատական խոսքերը, այդ անճոռնի ձայնը, որ ոչ կնոջ է և ոչ մարդու, հայտնի ըրին ինձ, թե ամենեն անզգամ անձին, ում կենացս մեջ հանդիպեր եմ, առջևը կը կենամ։ Ծածկե՛ երեսդ, որ կրոնիդ անհնաղանդ չի գտնվիս, և ես իմ խավար բանտես ավելի տգեղ բան մը չի տեսնեմ։

Այս ծանր խոսքերը լսելով՝ կատաղության սարսուռ մը եկավ կնոջ վրա և աղբյուրները կրճտելով կես մը ոտքի վրա գալով նստած տեղաց, գոչեց կատաղությամբ.

— Անօրե՜ն, դեռ այդ վիճակիդ մեջ զիս նախատել կը համարձակի՜ս. բայց գիտցիր, որ այդ ողորմելի մարմնույդ տերը ես եմ, իմ ձեռքես պիտի չի կարենաս ազատիլ. քանի՜ տարի էր, որ վրեժը սրտիս մեջ անմեռ կենդանի էր, վերջապես ահա իմ ձեռքս մատնեց զքեզ աստված։ Քեզմե երեսս ծածկելու պետք չունիմ, դու արդեն մեռած ես, և մի՛ կարծեր, թե սովորական մահվամբ պիտի մեռնիս, այլ կտտամահ զքեզ պիտի սպանեմ, մաղմաղ կրակներու վրա զքեզ պիտի խորովեմ. անօրե՜ն ավազակ, իմ տունս կոխե՞լ, իմ աղախիններս, իմ նժույգս հափշտակե՞լ, իմ Ալիս ինձմե կորզե՞լ, երբեք գթության մի՛ հուսար... ահա ամիրապետին հրամանագիրը, որ իմ խնդրանացս վերջապես լսեց և ինձ զքեզ պարգևեց. միմիայն ճամփա կա քեզի մահվընե ազատելու և իմ ներողությանս հանդիպելու, անա՛րդ շուն. քու սուտ հավատքդ կ'ուրանաս և շղթայակապ ստրուկ՝ իմ դուռս կը ծառայես...

— Ի՞նչ բարեբախտություն, քեզի պես ջատուկի մը շղթայակապ ստրուկ դառնալու համար ապրիլ. ես, որ ամեն անցավոր մեծություն և փառք արհամարհեցի իմ հավատքիս համար։ Տե՜հ, եթե աստված այնպես որոշեր է, որ այս մարմինը այդպիսի գարշելի ձեռքերե մեռնի, յուր կամքը օրհնյալ եղիցի։

— Խոսե՛, հաչե՛, անհավատ շուն, այդ լեզուդ հրացյալ ասեղներով պիտի ծակոտեմ, ճանչցնեմ քեզ, թե ի՞նչ կին եմ ես...

— Փո՜ւճ աշխատանք, ես քեզ լավ կը ճանչեմ և ուրախ եմ, որ այդ խեղճ աղջիկները քու գազանային ձեռքեդ ազատեցի...

— Իմ Ալիս ի՞նչ ըրիր, անզգամ, խոստովանե՛ շուտ։

— Քու Ալի՞դ. այն գիշերվընե ի վեր զինքը տեսած չեմ։

— Կ'ուրանա՞ս, լա՛վ... տանջանքները քեզի խոստովանել կուտան։ Բայց ես փուճ տեղ քեզի պես անարգ գերվո մը հետ խոսիլ խոնարհեցա. վաղը կ'երթանք իմ ամրոցս, հոն ես քեզի փոխել կուտամ այդ ամբարտավան արհամարհոտ ձեզ էլ, լեզուդ էլ, կրոնքդ էլ. շատ սորուկներ ես մոմի պես կակղցուցեր եմ, դու էլ կը կակղնաս և կ'իմանաս, թե ի՞նչ կը նշանակե ինձ պես կին մը։

— Լա՛վ, շատ ինձ զզվանք պատճառեցիր, բավական է այսչափ,— ըսավ Գուրգեն ամենայն արհամարհանոք, և բարձրացնելով ձայնը,— բանտապա՛ն, բանտ երթանք,— գոռաց։

Երբ բանտապանը ներս մտավ, Գուրգեն դեպի դուռը շտկվեցավ առանց խոսելու։ Իսկ կինը դառնալով բանտապանին՝ իշխանարար՝

— Եթե գլուխդ ողջ պահել կ'ուզես, լավ պետք է հսկես այս գերվույն վրա, վաղն առավոտ ինձ պիտի հանձնվի դա,— ըսավ։

— Ո՞ւմ հրամանավ կը խոսիս այդպես, Տիկին։

— Եթե այս ամիրապետին հրամանագիրը դու չես ճանչեր, քու տերդ և քու քաղաքապետդ լավ կը ճանչեն։— Եվ հրովարտակ մը տարածեց բանտապանին առջև։

— Ես իմ իշխանացս հրամանին միշտ հնազանդեր եմ, Տիկին,— ըսավ մարդը, շփոթելով այդ կատաղի կնոջ կերպարանքեն, և գնաց Գուրգենի ետևեն, որ անտարբեր և անխռով դեպ իր բանտը կ'երթար սաղմոսելով։

Իսկ կինը, որ այն մեղ ծանոթ գիպվածեն վերջ Ապահունյաց երկիրը թողեր փախեր խոյի մոտ ղղյակ մը կը բնակեր, կ'երթար հրամանները տալու յուր պահապանաց, որ առավոտուն կանուխ ճամփա ելնեն տանելու համար Գուրգեն, և յուր մտքին մեջ դիվական տանջանքներ կը պատրաստեր։

ԳԼՈՒԽ ԺԵ

ԱՋՆԻՎ ԿԻՆ

Նույն օրը դեռ արևը չեկած մութն ու լուսնոն, Ծրմյա լճին արևմտյան եզերքին վրա՝ Դիտավեր գյուղի մը քով երկու մշակի զգեստներով մարդիկ անշարժ կեցեր ծովուն կը նայեին. այդ մարդկանց մեկը գրեթե վաթսնամյա ալեոր մ'էր, որու փեղպեն և ձեռն կ'ելներար, թե կողովը բոլորովին չէր կորուստեր, և յուր լայն ճակատն վրա հայտնի ծանր մտանջություն մը գինք կը տագնապեր։ Իսկ մյուսը քառասունն անցած կորովի սովորական մարդ մը կ'երևար և պատկառանոք կ'սպասեր ծերուն առջև, որ անթարթափ դիմացի եզերք կարծես թե կը չափեր մտքով։ Վերջապես ծերը դարձավ յուր ընկերոջ և կամաց ձայնով ըսավ.

— Դու հիմա ապահո՞վ ես, Վահրիճ, որ նավավարք մոթին հետ այստեղ պիտի գունվին։

— Այո՛, Տեր։

— Ամենքն էլ Վասպուրականի հավատարիմ նավավարք ե՞ն։

— Այո՛, Տեր։

— Նավը լա՞վ է և սրընթաց, ինչպես ես քեզ հրամայել էի։

— Այս ծովուն վրա անկից լավը չի գտնվիր։

— Ի՞նչչափ ժամանակի մեջ ասկից դիմացի ափը կրնա հասնիլ՝ լավ թիավարելով։

— Երեք ժամ, առագաստի օգնությամբ՝ ավելի շուտով։

Վարդկյան մը լուռ կենալեն վերջ ծերը հարցուց.

— Մեր գինվորները ո՞ր են։

— Մեկ մասը տա բլուրին ետին թուփերուն մեջ կ'սպասեն. մյուսները այս ամերտակ գյուղին մեջ զետեղվեցան։ Խումբ մ'էլ ձկնորսի զգեստներով ուրիշ նավակով մը ձկնորսություն կ'ընեն։

— Իմ ձիս ո՞ւր ղրկեցիր։

— Զիապանը և ձին, մյուս երեք ձիերուն հետ մոտակա հայոց գյուղ մը կա՝ հոն ապահովցուցի։

— Սանդուխները, չվանները, երկաթե գործիքները և դարբինը ո՞ւր են։

— Այս ժայռին ետին խորշ մը կա, հոն են ամենքը։

Լռեց ծերը, որ խոսրով Ակեացին ինքն էր, և սկսավ ծանր-ծանր քալել ծովեղրը, երբ հանկարծ ձիերու տրոփի ձայն լսվեցավ և հինգ արաբացի ձիավոր տեսնվեցան, որ սրընթաց կուգային։ Կանգնեցավ Խոսրով և եկողները կը դիտեր. իր սուր աչքերը, որ առաջ դժգոհության նշան տվին, հանդարտեցան, և յուր ճակատին կնճիռը պարզեցան, քանի որ սկսավ զանոնք ճանչել։ Երկու տարիքն առած մարդ՝ երկու երիտասարդ և մեկ պատանի էին եկողները։

Խոսրով առանց խոսելու մոտեցավ պատանվույն, որ երկու ծերերուն մեջեն կը ձիավարեր, և ձեռքը երբ կ'երկնցներ, որ օգնի իջնելու համար ձիեն, նա արագությամբ վար թռավ ծիծաղելով։

— Ինչուշտ, իշխան, ինձի չէիր սպասեր դու,— ըսավ։

— Դու ճանչեցիր զիս և իմացար, թե ոչ իմ տարիքիս և ոչ իմ քնա-

վորությանս մեջ կա այսպիսի անխոհեմությանց սպասել,— պատասխանեց ծերը քաղցր մեղադրանոք։

Եվ պատանվույն թևեն բռնած՝ շտկվեցավ դեպ ավերակ գյուղը՝ ակնարկելով Վահրիճի, որ միատեղ գա.

— Մեզի շուտ առանձին տեղ մը գտիր,— ըսավ։

— Պատրաստ է ձեր տեղը։— Եվ Վահրիճ զիրենք մաքուրկեկ, գորգերով շտկված, գետնափոր և բավական մութ նկուղ մը մտուց։

Երբ պատանին նստավ, դարձավ խոսրով ըսավ Վահրիճի.

— Հիմա դու գնա, այս իշխանին ընկերները տար հայոց մոտակա գյուղը, որ հանգչին։

Եվ երբ Վահրիճ հեռացավ, և մինակ մնացին ծեր իշխանն ու պատանին՝

— Այսչափ անխոհեմություն քեզմե չէի սպասեր, իշխանուհի,— շարունակեց խոսրով հայրական գթով։

— Այսչափ տարի խոհեմության մեկ անխոհեմություն պետք էր, իշխան. եթե կնոջ պատիվ պահել էր, պահեցի, եթե հիվանդ նայել էր, նայեցա, եթե տկարամիտ մարդ մը գործածել էր, գործածեցի, եթե ծանր պարագաներու մեջ խորհուրդ տալ էր, տվի. բայց Գուրգենի պես դյուցազնի մը անողորմ բանտի հալելուն տանիլ անկարելի էր ինձ. ուստի պետք էր զանի ազատելու համար զոհել կյանք, պատիվ... և ամեն բան. այո՛, ես հանձն առած եմ ամեն բան։

— Հանդարտե, դուստր իմ, հանդարտե։ Միայն ինձ այն զրուցե, թե մեզի հետ պիտի գա՞ս բերդին հարձակման։

— Մինչև վերջին կետը հոն պիտի գտնվիմ, և երբ տեսնեմ Գուրգեն ազատ շղթաներե և բանտե, ան ատեն ես իմ շղթաներու կերթամ՝ նա էլ իր բախտին։

— Մուշեղ ի՞նչ կ'ընե։

— Ի՞նչ պիտի ընե խեղճը. արդեն տղա էր երբ ամենքը զինք հասուն մարդ կը կարծեին, հիմա այս հիվանդությունն էլ որ վրա հասավ, բոլորովին տղա եղավ. բժիշկը, որ Կարնո բերել տվի, և որ քու երթալեդ վերջ հասավ, Դվինի բժշկին կարծիքը հաստատեց, թե ուղեղի հիվանդություն էր յուր հիվանդությունը և հնար չի կար բժշկության։

— Իմացա՞վ քու հոս գալդ։

— Եթե իմանա՞ր, երբ ըսի, թե Գուրգեն, որ զինք ազատեր էր գերութենե, հիմա բանտն էր, թե մեզի էլ կը վայելեր նորա ազատության աշխատիլ, թե ես որոշեր էի ամեն բան՝ ոսկի, արծաթ, մարգրիտ, կալված տալ զնա ազատելու համար, նա՝ ամեն խոսքիս «այո, լավ՝ իրավունք ունիս» ըսավ. բայց եթե այս ամենուն հակառակն ըսեի, դարձյալ

«այո, լավ՝ իրավունք ունիս» պիտի լսեի։ Ուստի պետք եղածը առի, Մուշեղի մնաս բարով ըսի, խուրենն ու վանահայրը հետս, այսպես ծրպտյալ ելա ճամփա և եկա. վասնզի սիրտս անհանգիստ էր։ Հիմա դու, հայրիկ իշխան, ինձ այն զրուցե, թե ինչ կարգավորությունք, որ մենք մտածեր էինք, ամենքը նույն կերպով պատրաստ են, թե պետք եղավ փոփոխություններ ընել։

— Ոչինչ փոփոխություն չի կա. քու ինձ տված ծրագրիդ համեմատ ամեն բան կարգադրված էր։ Ութ օր հոս անցուցի և գնացի Ակե. մշակի հագուստով ներսեն զինյալ տասը հավատարիմ քաջ զինվոր բերի այս առավոտ։ Վահրիճ Գուրգենի թիկնապահներեն բերել էր ընտրանոք և տասներկու էլ Վասպուրականի քաջ թիավար, երկաթի ձողեր, լախտեր, սանդուխներ, պարաններ, բրիչներ. ամեն ինչ պատրաստ է։

— Դարբի՞նը։

— Նա էլ պատրաստ է։ Այդ ողորմելի կիսավեր ամրոցին համար մեր պատրաստությունք շատ և չափազանց են։ Գիշերվան հասնելուն կ'սպասենք միայն։

— Բայց ես գիշերվընե առաջ ուրիշ բանի էլ կ'սպասեմ... Կնոջ մը կ'սպասեմ։

— Ի՞նչ տեսակ կնոջ։

— Բանտապանին կնոջ։

— Դեռ նոր բա՞ն կա։

— Ինձ համար հին է, քեզ համար նոր։ Մտիկ ըրե՛։ Արծաթասիրությունը մարդկանց առաջին մոլություն տեսա ես. տեսա քահանա, աշխարհական, եպիսկոպոս և նախարար, աղնվական և ռամիկ, այդ անարգ մետաղին գերին են, ուստի գործը ապահովելու համար իմացա, որ Գումբեթի բանտապանին, որուն անունը Օմար է, երիտասարդ կինը խոյ կը բնակի. բերել տվի Կանգուար, հետը խոսեցա՝ տեսա, որ արծաթ, ոսկի և գոհարեղեն շատ կը սիրե. շարք մը հարյուր արաբացի ոսկվո և մանավանդ ադամանդյա մանյակ մը զինք դիվահար դարձուցին. աչքերը սկսան փայլիլ և մարմինը բոլոր ուրախության սարսուռ առավ, երբ հայտնեցի, թե երկուքն էլ իրեն պիտի լինեին, եթե Գուրգեն կարենար ազատել, և իմ մարդիկներուս հանձնել արևը մտած ժամանակ։ Հիմա կինը գնացած է այրը դյուցելու. շատ կարելի է, որ մեր մյուս պատրաստությանց պետք չունենանք։

Խոսրով ափ ի բերան մնաց, երբ այս բանը լսեց և այսչափ միայն զրուցեց.

— Իրա՛վ, դու միայն արժանի կին էիր Գուրգենի։

Լռություն մը հաջորդեց այս խոսքերուն, երկուքն էլ դիմացնին կը նայեին։ Վերջապես Հեղինե գլուխը վեր առավ և հարցուց.

— Մեծ լուրն իմացա՞ր։

— Ոչինչ, նո՞ր կա։

— Ամիրապետին մահը։

— Ի՞նչ, Ապու Ջաֆր մեռե՞լ է։

— Այո, որդին հայրը սպաննել և տեղը թագավորել է։

— Իմ սիրուն աղջիկս, այս ի՞նչ լավ լուր ունիս, ո՞ւր իմացար։

— Ես Խոյեն կուգամ. հոն այս լուրը տարածվեցավ. քաղաքը վերջին հուզման մեջ էր. Օմարի կինը երեկ առտու ճամփա հանեցի, երեկոյին էլ ես ճամփա ելա։

— Դու հոգնած պետք է լինիս, ուրեմն քիչ մը հանգիր, ես երթամ նայիմ, թե ամեն բան կարգի՞ն է... Միայն, իշխանուհի, այն ըրուցե, թե բանտապանին կինն իմացա՞վ ամիրապետին մահը։

— Ինչպե՞ս կարելի էր չիմանալ. տաճկաց շփոթությունը մեծ էր. ամենքը զենքի կը դիմեին հայոց վախեն։ Ամիրան քարոզ կուտար կարդալ փողոցները, որ ո՛ւմից անկարգություն խստիվ պատժել պիտի տար։ Ճշմարիտն ըսելով ես այս մեծ դիպվածին անտարբեր էի. վասնզի իմ նպատակս ինձ համար ամենամեծ էր։

Խոսրով ելավ դուրս, յուր հավատարիմներեն պարկեշտ մարդ մը պահապան դրավ, որ ոչ ոք անհանգիստ չընե պատանի իշխանը, և ինք խորհրդածելով կ'երթար մեծ օգուտ նշմարելով Ապու Ջաֆրի մահվամբ Հայաստանի, ինչպես նաև Գուրգենի ազատության համար։ Մանավանդ, երբ կը մտածեր, թե որդին զհայրն սպաննելով թագավորել էր, երբ ընտանեկան կապերը այնչափ խզյալ էին, երբ սերը որդվոց և ծնողաց մեջեն անհետացած՝ ապականությունը ուրեմն վարը և վերը հավասար էր և անկումը մեծ, և Հայաստան պետք էր ազատել, բայց Հայաստան ազատելու համար պետք էր ունենալ իմաստուն գլուխ մը, կրոնքի բարոյականին ուսուցիչ եկեղեցական անշահասեր և առաքինի մարմին մը, վասնզի ժողովուրդը դյուրավ կրնար առնուլ բանի և գործո ուղղությամբ գրոշմը, եթե գտնվեր լավ և արժանավոր ձեռք և օրինակ։

Այս խորհրդածությամբ կ'երթար Խոսրով շինականի զգեստներու տակ տեսնելու եթե ամեն ինչ լավ կարգադրյալ էր. և գոհ սրտով դարձավ ու գտավ Հեղինե քնո հանգիստն առած և կազդուրյալ։

ԳԼՈՒԽ ԻԶ

ՏՈՒՐԵՎԱՌ

Նույն սենյակին մեջ, ուր տեսանք մենք առավոտուն Գուրգեն, արաբացի կատաղի կնոջ սպառնալյաց մատնյալ, երեկոյին նույն բազմոցին վրա Օմար բանտապետին հետ նստած՝ դարձյալ արաբացի կին մը կը խոսեր ընտանեբար։ Գեղեցիկ և երիտասարդ էր սա, իր նշաձև աչքերը հրապուրիչ քաղցրություն ունեին և այնպիսի նայվածքի նրբություն, որ կարելի չէր խարդախություն չի համարել այդ քովնտի և գաղտնի ակնարկին մեջ սուր դիտողությունը, որով կը ջանար իմանալ, թե յուր խոսքերն ի՛նչ ազդեցություն կ'ընեին իր էրկան վրա, վասնզի այդ կինը Օմարի կինն էր։

— Բայց կի՛ն, դու ինձ ի՞նչ կ'առաջարկես. հիսուն ոսկին ես էլ գիտեմ, թե լավ բան է, բայց ամիրապետին հետ դյուրի՞ն բան է խաղալ. այդ Տիկինը սովորական կին մը չէ, կ'երևա, թե մեծ ազդեցություն ունի նաև Բաղդադ։

— Ի՞նչ, ամիրապետե՞ն կը վախես, ամենևին հոգ մ'ըներ, գլուխդ ողջ մնա, ամիրապետը՝ քեզի օրեր, վախճաներ է։

— Սուտերով զիս խաբե՞լ կ'ուզես, հիմար կին...

— Ինչպե՞ս սուտ. երեկ առավոտ բոլոր Խոյի մեջ տարածվեցավ հաճբավը. եթե ինձ չես հավատար, հարցուր ջորեպանին և մեր սպասավորին, որ զիս բերին. եթե այդ դիպվածը չլիներ, մի՞թե ես թեթև կերպով հանձն կ'առնուի զքեզ այսպիսի անխոհեմության հորդորելու։ Այսպիսի վիճակե օգուտ քաղելու է, իմ սիրուն էրիկս, երկու-երեք տարվան մեջ այդչափ գումար երբեք դու չես կրնար ավելցներ այսպիսի բանտապանությամբ։ Օկ դու իմ խոսքս մտիկ ըրե, մի՞թե ես քու թշնամիդ եմ, որ վտանգավոր բան քեզ առաջարկեմ։

— Դու իմ թշնամիս չես, բայց երևելի առակ է. «Կնոջ խելքը կարճ է, և մաղը երկայն». դու էլ կին ես, զարմանք չէ, որ ինձի վտանգավոր խորհուրդ կուտաս։ Քու խելքդ չի հասնիր։

Այս խոսքերն Օմար ամենայն ծանրությամբ և լրջությամբ կը ըրուցեր յուր տյրական սեբին գերազանցության վրա մեծ հավատքով, երբ գիտեր, որ հազար անգամ այդ իմաստուն մարդը կապկի պես խաղցուցեր էր, հաղիվ թե քմծիծաղը կը զսպեր։ Դարձավ ըսավ իրեն.

— Հիմա դու ինչե՞ կը վախես, ինձ այն ըսե. ահա ամիրապետ չի կա իմացար, որդին, որ իրեն հաջորդեր է հայրը սպաննելով, հորը կամ-

քը շարունակելու ամենևին միտք չունի. շատ կարելի է, որ վաղը հրամանը հասնի, որ հայոց իշխանները բանտե և շղթայե ազատվին, այն ժամանակ քու շահդ ի՞նչ պիտի լինի։

— Բայց եթե ամիրապետ չի կա, Դավրեժի ամիրան, Խոյի ամիրան՝ մի՞թե ամենքն էլ անհետացա՞ն աշխարհքես. գիտես այդ սոսկալի Տիկինը ինձ ի՞նչ սպառնացավ։

— Կնոջ խոսքի թե որ դու մտիկ կ'ընես, իմ խոսքիս մտիկ ըրե, որ մեգի շահավոր է։

— Բայց շատ վտանգավոր է, և գլուխս կրնա մեջ խաղալ։

— Քիչ մը մտածե՛, իմ սիրելի էրիկս, համարյա թե այս գիշեր այդ մարդուն բարեկամները գային՝ բանտին պատը քակեին՝ և զինքն ազատեին, դու վաղն առավոտ ի՞նչ պիտի ըսեիր այդ կնոջ, որ զքեզ այնպես սարսափեցուցեր է յուր մազերուն բոլոր երկայնությամբ։

— Իմ ճակատագիրս է, կ'ըսեի և բախտին կը հնազանդեի։

— Ի՞նչ, կարծե՞ս թե զքեզ այդ բանին համար կախաղան պիտի հանեին։

— Ո՛չ գիտե, կարելի է հանեին, և ես չեմ ուզեր կախաղանի վրա մեռնիլ։

Կինը այս մարդուն տրամաբանության տեսնելով, թե չի կրնար հաղթել, սկսավ լալ, ձեռքերը կուրծքին զարնել, ողբալ յուր բախտին վրա. իսկ մարդը անշարժ և տխուր կը մտածեր։ Վերջապես կինը, իբրև գյուտ մ'ըրած հանկարծ արցունքները սրբեց; որ արդեն իր սիրելի ամուսնույն սիրտն ի գութ շարժելու համար կը քամեր հարմար միջոցներու, և ըսավ՝

— Բայց համարինք, թե մեկը քեզ բռնություն ընե, զքեզ կապե, բանտիքներդ գրպանեդ առնու և հիսուն ոսկին էլ դարձյալ տա, և այս հայ իշխանն ազատե, դու այս բանին ի՞նչ ունիս հակառակելու։

— Այդ ըսածդ...— ըսավ մարդը ծանր-ծանր մտածելով,— կարելի բան է, վասնզի ես այն ատեն բռնի պարտավորյալ կ'երևամ Դավրեժի ամիրային առջև. այո, այդ անկարելի չէ, բայց այն ժամանակ պետք է, որ հայ իշխանին մարդիկը ութ-տասն հոգի գոնե լինին, որ մեր պահապանաց թվին հավասարի։

— Այդ բանին համար էլ հոգ մ'ըներ, արդեն ժամանակը հեռու չէ և մութը պատեց, նոքա տասներկու թիավար նավակով մը կուգան. ես հիմա պահապանաց մեկ-երկուքը կը հեռացնեմ մոտակա արվարձանն ուղարկելով, քեզ էլ լավ մը կապել կուտամ, հիսուն ոսկին դու կ'առնուս, ես է՛լ...

Այստեղ կինը՝ յուր դիվական գեղեցիկ աչքերը փայլեցնելով և քովնտի էրկանը նայելով զվարթ ծիծաղով դադրեցավ խոսելեն։

— Ի՞նչ,— ըսավ մարդը,— քե՞զ էլ բան կա, զրուցե։

— Այո, ինձ էլ գեղեցիկ ադամանդյա մանյակ մը կա։ է՛լ մի՛ խոսիր դու, տեղացդ մի՛ շարժիր, ես ամեն բան կը կարգադրեմ։— Եվ դեպի դուռը երկնցավ։

Իսկ մարդը՝

— Կի՛ն, մտիկ ըրե... անիծյա՛լ կին... կորավ գնաց, իմ գլուխս բան մը պիտի բերե, գոնե կ'ուզեի ապսպրել, որ զիս սաստիկ չի կապեն այդ անհավատները... բայց այդ հիսուն ոսկին, անշահ գումար մը չէ. տեսնենք, աստուծով հաջող ելք ունենայի՞նք։

Այս միջոցիս կինը սատանայի արագությամբ վազեց, պահապաններուն երկուքը հեռացուց պատճառանոք, իջավ ծովեզրը ճիշտ նույն վայրկենին, երբ մեկին տեղ երկու նավակ կը մերձենային և շփոթեցավ տեսնելով, թե կին չկար, բայց երբ տեսավ, թե միայն անմորուս պատանի մը ցատկեց ցամաք և փայլուն ձայնով «կա՛ց, ես եմ, մի՛ վախեր» ըսավ, սիրտ առավ. Հեղինե ինքն էր, որ կնոջ մոտենալով հարցուց.

— Ի՞նչպես, մարդդ համոզվեցա՞վ։

— Շատ դժվարություն կը ցցնե։

— Եթե դու զինք չես կարող համոզել, նայե ի՞նչչափ զինյալ մարդկանց բազմություն կա այստեղ, բանտյալը կ'ազատի, և դու քու շահդ կը կորսնցնես։

— Դու այդ հոգ մի՛ ըներ, դու իմ քովս կաց, ես ի՞նչ որ ըսեմ, այն հրամայե, ա՛ռ հետդ տասը-քսան մարդ միայն, այդ նաև շատ է։

Ան ատեն ծովեզրին մոտենալով Հեղինե՝

— Իշխան, խնդրեմ մոտ եկ. և քանի մը խոսք ըսելով՝ ահա զինյալ մարդիկ դուրս թափեցան նավերեն։

Կինը և իշխանուհին առջևեն կ'երթային խոսելով, և երբ հասան բանտին նախասենյակը, ուր բանտապանը միայն նստած էր և քանի մը պահապան դռան առաջ շվարած մնացեր կը նայեին, Հեղինե դարձյալ քանի մը խոսք ըսավ խոսրովու, և նա մտնելով բանտապանին սենյակը և մերձենալով մարդուն հրամայական ձայնով՝

— Տո՛ւր բանտին բանալիքները, զրուցեց, եթե չես ուզեր մեռնիլ։

— Ինչպե՞ս կարելի է, որ ես հանձն առնում այդպիսի հրամանի մը հնազանդիլ. միթե՞ ես դավաճան եմ։

— Ես է՛լ ժամանակ չունիմ կորսնցնելու, տղաք, կապեցե՛ք այդ մարդը և գտեք բանտին բանալիքը։

Ան ատեն արաբ կինը յուր բոլոր հնարագիտությունն ի գործ դրավ, սկսավ լալ, ողբալ, աղաչել, որ իր էրկանը չի վնասեն. և երբ մարդը

կը կապեին, ինք նորա գրպանեն կը հաներ բանալիքը, կուտար Խոսրովու՝ կ'աղաչեր, որ նոքա կենաց խնայեն, կը խոստանար, որ բանտյալը ողջ-առողջ իրենց հանձնե և լապտեր ձեռքը ու պահապանաց ամենեն պարզամիտը առջևը ձգած կը մտներ բազմությամբ բանտին խորերը, ուր կը գտնվեր Գուրգեն տխուր՝ քունի մեջ թաղված։ Եվ հոն դուռը բանալով՝

— Ահա՛ առեք ձեր մարդը, միայն ի սեր աստուծո իմ էրկանս և մեր մարգկանց մի՛ վնասեք,— կ'ըսեր։

Խոսրով ան ատեն լապտերն առած խավարչտին բանտին մեջ մտավ։

— Գուրգե՛ն որդյակ, որդյակ Գուրգեն, ո՞ւր ես,— կանչեց։

Շղթաներու ղղրդյուն մը պատասխանեց այս ձայնին, վասնզի Գուրգեն քունե զարթած շարժեցավ և նստավ։

— Գուրգեն, Խոսրովին ձայնը չե՞ս ճանչեր։

— Դո՞ւ էլ հոս կուգաս։

— Վե՛ր կաց, երթանք, քեզ ազատելու եկանք, մի՛ շփոթիր։

Հազիվ թե սթափեցավ Գուրգեն, երբ Խոսրով երիտասարդին երեսները համբույրներով կը ծածկեր, և իր արտասուքը ճերմակ մորուքին վրա կը թափթփեին. առյուծը իր շղթաները կը ցնցեր, ելավ կանգնեցավ. Խոսրով ձեռքեն բռնած բերավ բանտասանին սենյակը, ուր խեղճ մաթրը ոտքը ձեռքը ամուր կապած կը տքար, և կը խնդրեր, որ կապերը թուլցնեն։ Հեղինե միշտ լուրջ, որ մեկ կողմ կեցեր, Գուրգենի նիհար և թալկացյալ երեսը կը նայեր ու մարած աչքերը կը դիտեր և յուր արտասուքը կը սրբեր, այդ մարդուն աղաչանաց ձայնին չի համբերեց, և քայլ մը առնելով երբ պիտի հրամայեր, որ մարդը քակեն, արաբ կինը ժամանակ չի տալով խոսելու, թևեն բռնեց և մեկդի առավ.

— Ահա քու եղբայրդ ազատեցավ, հիմա իմ էրիկս դու մոռցիր, և խոտամունքդ կատարե՛։

— Իրավունք ունիս, Խուրեն, բեր այն ծրարը, որ քեզի հանձնեցի։

Մտան առանձին փոքրիկ սենյակ մը, հոն իշխանուհին տվավ կնոջ ադամանդյա մանյակը և հարյուր ոսկիի շարքը։ Երբ դարբինը Գուրգենի շղթաներու վերջին օղակը կը խորտակեր, կինը ոսկիներն արագությամբ կը համբեր և մանյակին փայլը իր աչքը կը շլացներ. երբ հիսուն ըսավ, յուր սուր աղրայներով կտրեց ոսկվո թելը, կեսը մանյակին հետ մեկ գրպանը դրավ, մյուս կեսը՝ մյուս գրպանը։ Եվ ուրախությամբ կ'ըսեր ինքնիրեն՝ բայց լսելի ձայնիվ. «Այս ինձի, այս էլ թո՛ղ մարդուն լինի, անպիտանը, զոհ եմ, որ լավ կապեցին, թո՛ղ քիչ մը չարչարվի։ Ի՞նչչափ աշխատեցա, որ համոզեմ և խոսք հասկնալ չէր ուզեր, թո՛ղ ցավի, որ իմանա»։

Իսկ Հեղինե արդեն մյուս սենյակն էր և չէր լսած այս առանձնախոսությունը. հազիվ թե կրնար զսպել իր հառաչանքը և արտասուքը, երբ կը նկատեր Գուրգենի այդ խեղճ վիճակը ցնցոտիներու մեջ, և որ Հեղինեի ներկայությունը նաև չէր կարող երևակայել։

Ուստի երբ ազատ գտավ ինքզինքը շղթաներե, դարձավ հարցուց Խոսրովի.

— Ես չեմ իմանար, թե երա՞զ է այս ամեն բան, թե ոչ։

— Հիմա ամեն բան քեզ կը բացատրեմ, սիրելի Գուրգեն, մտնենք նավ և հոն կը խոսինք։

— Բայց Խոսրով, ես անոթի եմ, դու չես գիտեր, թե այս անհավատները զիս ի՞նչչափ անոթի և ծարավ ապրելու վարժեցնել ջանացին։

— Հիմա, հիմա,— ըսավ Խոսրով,— տղա՛ք, երթանք մտնենք նավերը։

Եվ հազիվ հինգ վայրկյան եղավ, Գուրգեն նստած էր Խոսրովու և Հեղինեի մեջտեղ՝ ղեկին քով, որ Խոսրով կը կառավարեր, ձուկի և հավու խորոված առջևը, և Հեղինե, որ գինի կը մատուցաներ յուր ձեռքը։

Լուսինը լուսավորել էր այդ գեղեցիկ կապուտան ծովակը, գիշերվան լռությունը թիակներու կանոնավորյալ հարվածը միայն կ'ընդհատեր, երբ Գուրգեն զորացյալ և ինքզինք գտնելով հարցուց, Հեղինեին նայելով՝

— Այս լուռ պատանին ո՞վ է, Խոսրով, ես սա տեսած պետք է լինիմ, այս կերպարանքն ինձ բոլորովին անծանոթ չէ։

— Սա իմ քեռորդիս է,— պատասխանեց Խոսրով,— ես լուզեցի, որ մեր արշավանաց ընկերանա, բայց անկարելի եղավ զինքը համոզել։ Ետքը քեզի կը պատմեմ, դու հիմա հանգիստդ նայե, մեյ մը ցամաք ելնենք, այն ժամանակ ամեն բան կ'իմանաս։

— Հանգիստ գտնելու համար պետք է ապահով տեղ մը հասնինք, լվացվիմ, սա աղետի զգեստներես ազատիմ։

— Այդ ամենը հոգացված է,— ըսավ Հեղինե։

— Ա՜յ տղա, ես զքեզ տեսել եմ, քու ձայնդ նաև ինձ անծանոթ չէ,— զրուցեց Գուրգեն։

— Ինչպես մարդկանց կերպարանքը, նույնպես իրենց ձայնը շատ կարելի է, որ իրար նմանին,— ըսավ Խոսրով։

— Ճշմարիտ է,— պատասխանեց Գուրգեն, և լռություն դարձյալ տիրեց։

Նավակը իր ընթացքը գրեթե առանց ընդհատման կը շարունակեր, և կես-գիշեր չեղած մեր բարեկամները ցամաք ելան։

Կիսավեր գյուղին փոքրիկ սենյակը լուսավորվեցավ. պատանին՝

Խոսրովու քեռորդին, մկրատ մը ձեռքը Գուրգենի մազերը խուզեց, մորուքը փոքրեցուց թեթև ձևոք և դռան բովեն Խորենի ձեռքեն առնելով մաքուր ծրար մը.

— Ահա իշխան,— ըսավ,— ամեն բան պատրաստ է, սա քովի վրատակին ջուրը քաղցր է, օճառ, սրբիչ և ամեն զգեստ կը գտնես այս ծրարին մեջ։ Քեռիս քեզ կ'օգնե։

— Աս քու քեռորդիդ անգին տղա է, Խոսրով։ Ապրի՞ս, որդյակ, աստված քեզ երջանիկ ընե։— Եվ Գուրգեն ելավ, բայց հանկարծ դառնալով Խոսրովու.— Սակայն աս տղան, որ դիս առաջին անգամ կը տեսնե, չէր կրնար երևակայել, թե իմ հասակիս ամեն զգեստ չի հարմարիր։

— Հոգ մ'ըներ, Գուրգեն, նա քու վրադ լավ տեղեկություն առած է, այդ էլ մտածած պետք է լինի։

Երբ լվացվեցավ Գուրգեն, զգեստավորվեցավ և դարձան սենյակը, շնորհակալ եղավ պատանվուն և Խոսրովու ըսավ.

— Հիմա գրուցե, թե ինչպես եղավ, որ մեկ-երկու տարի երբ հաջողություն ունեցա և քեզ սուրհանդակ ուղարկեցի Վասպուրականի և Տարոնո գավառներեն ի Սասուն, ոչ ոք տեղեկություն չուներ քեզի համար, դու ո՞ւր էիր, պատմե՛։

— Երբ ես կը պատրաստվեի գալ զքեզ գտնելու Ռշտունյաց Ոստանը, սուրհանդակ մը ինձ եկավ Հռիփսիմե տիկնոջե, որ կը թախանձեր տեսնել զիս Բաղդադ. դու երջանիկ էիր և հաջողության մեջ, իսկ նա՝ դժբախտության և բանտի, ուստի ինքնիրենս ըսի. եթե Գուրգեն իմ տեղս լիներ, Բաղդադ կ'երթար, ուստի հոն գնացի, կարծելի, թե դյուրին և շուտ կ'աղատիմ, և առջի բերան գործին ընթացքը այնպես ցույց կուտար, թե պիտի կարենամ օգտակար լինիլ Արծրունի իշխանաց, բայց Ապու Ջաֆր կատաղի գաղան մ'էր, որ վայրկյանե ի վայրկյան կը փոխվեր. իր պաշտոնակալք ամենքը շփոթած էին, հագիվ թե գործ մը կարգադրել կարծեին՝ տերը դիրենք կը մերժեր, և նորեր կը հաջորդեին, ուստի բոլոր մեր հույսը դրինք Սմբատ Սպարապետի գալստյան վրա, որ Բուղայի միջնորդությամբ կարենա օգուտ մ'ընել կապյալ նախարարաց։ Այդ գալուստը կ'երկարեր։ Վերջապես երբ եկան, Սմբատ ո՞ւմ համար պիտի միջնորդեր. բոնավորը առաջին վայրկենին գնա շղթայի և բանտի մատնեց, որովհետև ուրացություն չէր ընդուներ. ուստի Տիկինն էլ հուսահատած՝ տեսնելով, թե ուրացյալ որդին Գուրգեն և թոռը Դերենիկ հրաման ունեցան դառնալու ի հայրենիս, գիս հորդորեց երթալ և նոցա խորհրդատու լինիլ. ես էլ կ'ուզեի դառնալ, բայց Բագարատա շարությունը, որ անօրինաց աչքը մտնելու համար ամեն վատություն հանձն առած է, դիս դանդաղ խարեությամբ տարի մը նաև արգիլեց Բաղդադ,

այնտեղ կ'իմանայի, թե ի՞նչ տեսակ ամբաստանություն կը հասնեին քեզ համար արքունի դուռը. ուստի գաղտնի փախստյամբ հազիվ ելա Բաղդադե, և երբ Վասպուրական եկա, տեսա, որ դու քեն ըրած բախտին և ամենուն Հունաց երկիրը գնացել ես. եթե քիչ առաջ հասնեի, ես զքեզ չէի թողել, ուստի գնացի Սասուն ընտանիքս առած. ծանր ուղեգնացությամբ անցա բոլոր Տարոն և Վասպուրական, ամեն տեղ քու օրհնենքդ և գովությունդ կը լսեի, ամեն տեղ քու քաջությունդ կը պատմեին, և քու հեռանալդ կ'ողբային։ Գիշեր մը Ռշտունյաց Ոստան կեցանք, խեղճ բերդապահ ծերը, որ անմխիթար էր, քու տղայությանդ պատմությունն ըրավ մեզի, քու առաջին դարձդ ի Հունաց հիշատակեց և քու վերջի փառքդ մեզի նկարագրեց. ինք քիչ պատմեց, և ես շատ իմացա։ Ի՞նչ որ մութ կար քու կենացդ մեջ, ինձ համար հայտնի եղավ։

— Ի՞նչ մութ կար, որ դու չէիր իմացել,— ըսավ Գուրգեն դառնությամբ և հառաչանք խլեցուցեալ։

— Ի՞նչ որ մնացել էր։ Ուստի երբ առավոտուն մեր կարավանը ուղևորելու պատրաստվեցավ, նայեցա, որ այդ ծերը... Խուրեն՝ յուր բոլոր ընտանյոք մեզ կ'ընկերանար. զարմացա, իսկ նա ինձ հայտնեց, թե Արծրունյաց անկարգ ծառայությենեն ձանձրացել՝ կ'ուզեր երթալ յուր հին Տիկնոջ՝ Ռշտունյաց Օրիորդին, Անձևացյաց գավառ՝ խնդրել, որ զինք ընդունի։ Ցուր պատճառավ մենք նաև Կանգուարի բերդը լավ հյուրընկալվեցանք և Անձևացյաց իշխանուհին, որ Մուշեղ իշխանին հիվանդության պատճառավ երկիրը կը կառավարեր, ամիսներով զմեզ պահեց, մինչև որ Ակեռ մեջ պետք եղած նորոգություններն եղան. հոն նաև քու կալանավորությանդ լուրը մեզ հասավ, և սկսանք մտածել ու պատրաստվիլ քեզ աղատելու։ Բայց շփոթած մնացել էինք, վասնզի ամեն ատեն անօրենները քու բանտդ կը փոխեին. խեղճ Վահրիճ, որ գիս եկավ գտավ Ակե՝ ութ օր կը մնար, արևմուտքե հյուսիս՝ հյուսիսե արևելք քու բանտերուդ վրա տեղեկություն կը բերեր. մինչև լուր բերավ, որ Դավրեժե Գմբեթի բերդը փոխադրվել ես։

Գուրգեն այս պատմությունը լուռ մտիկ ընելեն վերջ՝

— Հիմա ո՞ւր է Վահրիճ,— հարցուց։

— Այստեղ դուրսը պետք է լինի։

— Ինչո՞ւ չերևար անպիտանը,— ըսավ Գուրգեն քմծիծաղով և յուր մեծ ձայնով գոչեց.— Վահրի՛ճ։

— Հրամայե՛, Տեր,— ըսավ հավատարիմ ծառան և եկավ ձեռքը պագավ։

— Ինչո՞ւ չես երևար, Վահրիճ, դու որ այնչափ հոգ տարեր ես իմ վրաս, գերությանս ժամանակ։

— Մի՞թե քեզի ծառայողը կրնար ուրիշի ծառայել, որ անհոգ լինի։

— Լա՛վ, լա՛վ, գնա՛ հանգչե։

Եվ դառնալով Խոսրովու՝

— Հիմա մենք ի՞նչ պիտի ընենք, այն ինձ իմացուցեք։

— Մենք հիմա մեկ երկու ժամ հանգչելե վերջ, կ'ելնենք ճամփա, երեկոյան Խոյի գյուղերեն մեկուն մեջ կօթևանինք. և երկրորդ օրը կը հասնինք Կանգուար։

— Լա՛վ։

Նույն միջոցին պատանին, որ Վահրիճ մտած ատեն դուրս ելած էր, բերավ սենեկին մեկ անկյունը՝ ահագին սուր մը, Վահան մը և նիզակ մը դրավ։

— Այս քու քեռորդիդ զարմանալի տղա է, Խոսրով, ամեն բան կը մտածե,— ըսավ Գուրգեն ժպտելով։

— Այո՝ ամեն բան։

— Հիմա ո՞ւր գնաց։

— Ինք առանձին սենյակ մ'ունի, այնտեղ գիշերը կ'անցնե, վաղն առավոտ կուգա, կը տեսնվինք։

— Ատված զինք պահե։

Եվ Գուրգեն էլ չի խոսեցավ ու տարածվեցավ քուն եզավ։ Իսկ Խոսրով յուր վերջին պտույտն ևս ըրավ, պահապաններն որոշեց և եկավ Գուրգենի սենյակը քնելու։

ԳԼՈՒԽ ԻԷ

ԹԱՓԱՌԱՍԱՆ ԲԱՐԵԲԱՐ

Երկու օր վերջ մեր այս բարեկամաց խումբը կը հասներ Կանգուարի բերդը, ուր Հոգյաց վանքի Թեոդորոս վանահայրը՝ Խոսրով և Գուրգեն հոգնություն կ'առնեին, երբ Հեղինե տիկին եկավ իրենց բարի գալուստ մաղթելու։ Նույն այն սենյակն էր, ուր երբեմն Գուրգեն տեսություն ունեցեր էր յուր սրտին սիրելվույն հետ։

Գուրգեն մինչև այն վայրկյանը, որ վանահայրը գնաց, անտարբեր տեսնվեցավ Հեղինեի հետ, իսկ երբ միայն Խոսրով և նա մնացին.

— Հեղինե, քեզ շնորհակալություն չեմ կրնար ընել, ես գիտեմ և իմ սրտես կը շափեմ քու արարքդ, որ կարող եմ քեզ համար կրակի մեջ

նետել ինքզինքս։ Բայց քու բոլոր կարգադրությանդ մեջ այնչափ ուշիմություն, այնչափ նախատեսություն կը գտնեմ, որ զիս շատ կը զարմացնե և քու կորուստդ ինձ ավելի զգալի կրնար ընել, եթե տեղի մնար ավելվույն։ Ընդունե՛ ո՛չ իմ շնորհակալությունքս, այլ շնորհավորությունքս քու այդ նախատես իմաստությանդ համար, որ գիտեի, բայց այդ աստիճանի բարձր չէի կարծեր, չէի կարծեր, որ իմ Հեղինես Վասկանուշի հոգեսար լինի։ Խե՜ղճ Հովնան, խե՜ղճ Գուրգեն...

Այս խոսքերուն քանի մը րոպե խոր լռություն հաջորդեց. մտածության վայրկյան էր այդ։ Հեղինե ընդհատեց լռությունը և հարցուց Խոսրովու.

— Ո՞վ է Վասկանուշ։

— Բագրատունյաց Օրիորդ մը,— պատասխանեց նա,— ճաշեն վերջ պատմեմ քեզի Վասկանուշի և Հովնանու պատմությունը, վասնզի կարելի չէ այդ երկու անձը իրարմե զատել, որ իրենց կենաց մեջ թեպետ միշտ բաժնված՝ միասիրտ և միահոգի ապրեցան, և հիմա աստուծո սեղանին առջև իրենց մարմինները քովեքով կը հանգչին։

Դարձյալ լռություն հաջորդեց մինչև Հեղինե եկավ իր թե տնական, թե իշխանական գործերը տեսնելու, որ իր հեռավորությամբ կրնային անտես մնացյալ լինիլ։

Այն ատեն Գուրգեն հարցուց.

— Վասկանուշ ե՞րբ մեռավ, Խոսրով, ես ամենևին չիմացա։

— Հազիվ թե տարի մը կամ երկու՝ Հովնանու նահատակությենեն վերջ ապրել էր։

— Զարմանալի՜ ճակատագիր,— ըսավ և հառաչեց Գուրգեն, հետո իր Հովնանու տեսիլքը պատմեց։

Երկու օր հյուր եղան մեր իշխանները Կանգուարի բերդը. երրորդ օրը Գուրգենի խորհրդով Խոսրով հայտնեց Հեղինեի, թե ինք հրավիրած էր յուր տկար բարեկամը Ակեռ գավառն ևս օգափոխություն ընելու, և այսպես անգամ մ'էլ հրաժարեցան այս երկու սիրեցյալք՝ տխուր և լուռ սրտի արտասվոք։

Իսկ Խոսրով զարմանքով կը դիտեր սիրտ այս ուրիշ կերպարանքն։ Կը բաղդատեր Հեղինե Վասկանուշի հետ, որ ուրախ, զվարթ էր խոսեր, կը ծիծաղեր, և այդ ուրախության դիմակին տակ ցավագին սիրտ մը անթափանցելի կը ծածկեր։ Իսկ հիմա զՀեղինե կը տեսներ ավելի երիտասարդ, նույնպես սրամիտ, հեռատես, կառավարության ոգի ունեցող. բայց սա արձան էր մարմարյա՝ հազիվ թե ժպիտ մը յուր շրթանց վրա կը նշմարվեր, յուր պարզ ճակատը ոչ կնճիռ ուներ և ոչ զվարթություն, յուր խոր և սուր աչքերը ծանր ակնարկ մ'ունեին անխռով ուրախության,

տրտմության և երկյուղի համար։ Գիտեր Խոսրով, որ եթե Մուշեղ հիվանդ չլիներ, և այդ կնոջ ձեռք չլիներ երկրին կառավարության ղեկը, Կանգուար և Անձևացյաց գավառը թշնամյաց ավար և հափշտակության պիտի դառնային։ Բայց մեկ կողմեն նախատեսություն՝ ժողովրդոց պիտույքը հոգալ ժամանակին, մյուս կողմեն խստություն, որ ներել չէր գիտեր մատնության և դավաճանության, այլ դատաստանական վճիռներ անդառնալի գործադրել կուտար, փրկարար զենքեր եղել էին այդ կնոջ ձեռք։ Բուղայի ամիրայից և զորավարաց հափշտակութենեն պահելու համար երկիր և ժողովուրդը՝ գավառին գլխավոր բերդերը՝ Նորաբերդ և Կանգուար ոչ միայն լավ ամրացյալ էին, այլ նաև երկու-երեք տարվան պաշար ու զենք ունեին. վտանգի ժամանակ ժողովրդյան ոչ միայն իրավունք տված էր ամրանալու, այլ ամեն տեղ պահապաններ ու սուրհանդակներ իմաց կուտային անպատսպար գյուղերու և ավանաց, որ վտանգը չի հասած փախչին ազատին։ Կանգուար և Նորաբերդ քանի՞-քանի անգամ պաշարվեցան ի թշնամյաց, թշնամին սովեցավ և գնաց, իսկ Անձևացյաց ժողովուրդը պաշար ուներ մարդկանց համար, դարման ուներ կենդանյաց՝ ի շնորհս իշխանուհվույն, որ նախագահությամբ խիստ, բայց արդար ձեռքով կը կառավարեր։ Իր ընտրած զորավարներն քաջ էին և արթուն, իր դրած դատավորներն ուղիղ էին և անաչառ։ Խոսրով ինք փորձել էր միջնորդել քանի մը հանցավորներու շնորհք խնդրելով, և այդ անողոքելի երիտասարդ կնոջ պատասխանին առջև լռել էր։ «Այսպիսի վիճակի մեջ,— ըսել էր Հեղինե,— ես ուխտ ըրած եմ դատաստանական վճռաց մեկ գիրը, մեկ կետը չավրել. երբ թշնամին զմեզ կը պաշարե, կ'ողողե և կը ջնջե, գթություն մատնիչներու, դավաճաններու և իրենց պարտքը չի կատարողներու համար, մատնություն և դավաճանություն է ազգին դեմ, կրոնքին դեմ։ Ներե՛ իշխան, զքեզ հորս պես կը հարգեմ և կը սիրեմ, բայց այդ խորհրդոցդ չեմ կրնար հնազանդիլ։ Ուխտ ըրած եմ աստուծո, ուխտազանց չեմ կարող լինիլ»։

Երբ իր այս խորհրդածությունքը հայտնեց Գուրգենի, նա դառն ծիծաղով պատասխանեց.

— Ի՞նչ բարեբախտ են եղեր Վասակ Կովակեր և իրեն նման անպիտան դավաճաններ. և ես էլ ի՞նչ դժբախտ եմ եղեր, որ Հեղինե իմ կինս չէ. անտարակույս Հովնանու խիստ արդարության օրինակը ինձ կանոն պիտի ընել տար, և ես անզգամները կախաղան հանելու պիտի պարտավորեի։

Ամիս մը ժամանակ հալիվ կրցավ Խոսրով արգելուլ Գուրգեն Ակեռ գավառը, որ կատարյալ առողջանա և հինքն գա։ Ամեն ջանք անօգուտ եղավ, վասնզի նա լսելով, թե ի՞նչ անիշխանություն կը տիրեր Բաղդադ, չի կրցավ համբերել և գնաց Վասպուրական, մտավ յուր հայրենի գավառը Մարդաստան քանի մը հավատարիմներով։

Ժողովուրդը երբ իմացավ Գուրգենի դարձը, խուռն բազմությամբ զինք դիմավորեց ուրախության և գոհության ցույցերով, վասնզի Գրիգոր Դերենիկ՝ Աշոտո երիտասարդ անդրանիկը, որ հորը փոխանակ կը վարեր Վասպուրական երկիրը, մինչդեռ նա Բաղդադ էր, շատերու ատելի էր անձնահաճ գոռոզության համար։ Գուրգենի գալուստը բոլոր փոքրիկ բռնավորները զարհուրեցուց, որ կը տիրեին բերդերու և քաղաքաց. շուտ մը ժողովվեցան Դերենիկի շուրջը և եկան Գուրգենի վրա, որ յուր սակավաթիվ զորոք հարձակեցավ, ցրվեց զամենքը և դարձուց կորակոր ի փախուստ, թեպետ աջ արմունկեն վիրավորվեցավ. հայտնի էր, թե ժամանակի կարոտ էր բժշկության։

Դերենիկ և յուրայինք իմանալով այս վիճակը՝ դարձյալ հարձակեցան բազմությամբ Գուրգենի վրա, որ վիրավոր, ոչ կատարյալ կաղդուրյալ հիվանդութենեն և բանտի նեղության ու տառապանաց՝ բռնվեցավ յուր թշնամիներե, որ տարին զինք և բանտեցին շղթայակապ Հապամակերտ քաղքին՝ յուր հայրենի պալատին մեջ։

Հոն երբ գիշեր մը նստած էր տխուր և վիրավոր, հանկարծ բանտին դուռը բացվեցավ, և Դերենիկին ծառաներեն մեկը մտավ ներս, քակեց Գուրգենի շղթաները և զենքերն առջևը դնելով՝ «Դու միայն կրնաս իմ վրեժս այս հիմար և գոռոզ երիտասարդեն խնդրել, քայլե, եկ ինձ հետ և մեկ հարվածով տեր եղիր ո՛չ Մարդաստանի միայն, այլ բոլոր Վասպուրականի»,— ըսավ։ Մերկ սուրն ի ձեռին, մտավ Գուրգեն Դերենիկի սենյակը, և մեծ ու տխուր ձայնով՝

— Որդյա՛կ իմ, Դերենիկ, ողջույն քեզ, ողջույն քեզ,— գոչեց։

Երբ Դերենիկ աչքերը բացավ այդ ահարկու հսկայն տեսավ սուսերամերկ, որ բանակներու սարսափն էր՝

— Հայր իմ, խնայե՛ ինձ,— միայն կրցավ զրուցել, և լեզուն կապվեցավ։

Իսկ Գուրգեն, որու վեհ սիրտը ոչ հին հայրենական և ոչ նոր անարգանաց վրեժխնդրություն կրնար տածել, առանց պատասխան տալու՝ թողուց և ելավ քաղքեն. Երագանի գյուղին մոտ վանք մը գնաց ապաստանեցավ կրոնավորի մը մոտ, որուն բարերարն եղած էր երբեմն։ Իսկ սա զարմանալի ապերախտությամբ Գուրգենն ապահովցնելով նեղ սենյակի մը մեջ, մատնեց Դերենիկին, որ դարձյալ բանտ դնել տվավ առանց ամենևին վնաս հասցնելու։

Բայց այս միջոցիս, երբ Խոսրով մեկ կողմեն՝ Գուրգենի այս դրժբախտությունը լսելով կուգար Վասպուրական, մյուս կողմանե Զաքարիա

Ղայոց կաթողիկոս՝ հետն առած Աշոտ Բագրատունի, որ իշխանաց իշխան պատվանունն ուներ, կուգային Վասպուրականի քաջին ազատությունը խնդրելու։ Դերենիկ այս պատկառելի անձանց չի կրնալով դիմագրել՝ ազատություն տվավ Գուրգենի և դարձուց իրեն Մարդաստան՝ յուր հայրենի ժառանգությունը։

Սակայն Գուրգեն, որ գտեր էր առջի առողջությունն և առջի զորությունը, զզված էր աշխարհիս բանսարկու մատնություններեն. նույնիսկ Բագրատունի Աշոտո խորիմաց քաղաքագիտությունն ու փառասիրությունը՝ յուր բարձր սրտին գառնություն կը պատճառեին. Հեղինեի անհույս սերն ու հիշատակը ամեն մեծութենե և իշխանութենե զինք պաղեցուցել էր. Մարդաստան կարգի դնելեն վերջ, իրեն զբաղմանք ընտրեց Տարոնո անտերունչ գավառը մաքրել թշնամիներե և խեղճ ժողովուրդ անդորրացնել։

Այս «շրջաբերական հեղափոխման» կենաց մեջ «արիական քաջասրտությամբ սիրեցյալ ընդ բնավ աշխարհաց» ժամանակակից հեղինակին խոսքերը կը վկայեն, թե ի՛նչ էր ժողովրդոց համակրությունն իրեն համար։

Նույն միջոցներուն, Աշոտ իշխանաց իշխան՝ Հայոց, Վրաց և Աղվանից իշխանները նվաճելու նպատակ դրած, մտավ հանկարծ Վասպուրական, և Դերենիկ չի կրնալով դիմանալ բռնվեցավ և կալանավորվեցավ։ Գուրգեն Տարոն էր, երբ այս անիրավությունն իմացավ։ Առանց վայրկյան մը կորսնցնելու, չորս հարյուր ընտիր սպառազեն զորոք դիշոտ փնտրելու եկավ և իմանալով, թե Ռշտունյաց Ոստանն բանակեր էր, առանց նորա զորաց թիվը հարցնելու՝ եկավ Ռշտունյաց Նորագեղ և գրեց իշխանաց իշխանին թոգուլ Դերենիկ, «ապա թե ոչ տեսցց զքեզ ի գեն՝ հասցազեն և ի ճակատամարտ». ու կը մտածեր գիշերային պատերազմավ հասնիլ Աշոտո վրա։

Բայց սա խորագետ և իմաստուն էր. այնպիսի մարդու հետ վտանգավոր խաղ խաղալ չէր ախորժեր. քաղցրությամբ պատասխանեց Գուրգենի և ապահովեց, թե վնաս հասցնելու միտք չուներ Դերենիկին։ Այն ատեն պատասխան գրելով Գուրգեն Աշոտո առավել քաղցրությամբ և մեծ հարգանքով՝ առաջարկեց յուր աղջիկը տալ Դերենիկին ի կնություն և ի տիկնություն Վասպուրականի։ Հանձն առավ Աշոտ և տարավ Դերենիկը Բագարան, ու մեծ հանդես հարսանյաց կատարելով խաղաղություն հաստատվեցավ բոլոր Հայաստանի մեջ։

ՀԻՆ ԴԱՎԱՃԱՆ ՄԸ

Իսկ ինք Գուրգեն իբրև յուր վրա ստանձնյալ օտարին հարստահարությանց պատուհասը, Վասպուրական, Տարոն, Ապահունիք և Անձևացիք և մինչև Հարզն ի սահմանս Հունաց կը շրջեր, սարսափ բռնավորաց և մխիթարություն ժողովրդաց։

Երբ այս հեռավոր շրջագայությանց դարձած Մարդաստան՝ յուր հայրենի գավառը կը հանգչեր, հանկարծ Խոսրովու գալուստն իրեն իմացուցին։

Մեծ ուրախություն էր Գուրգենի հին և աղնիվ բարեկամին այցելությունը, և յուր ուրախությունը կրկնապատկեցավ, երբ Խոսրովու զբվարթ երեսը տեսավ։ Ընթրեցին, խոսեցան դանազան նյութերու վրա, ուր մանավանդ Բագրատունվույն Աշոտո խորագետ քաղաքականությունը քննության առթի տվավ իրենց։ Եվ երբ ամենքը քաշվեցան, և միայն այս երկու բարեկամք մնացին, Խոսրով հանկարծ իբրև քունե արթնցած՝

— Բուն իմ գալստյան գլխավոր նպատակը քեզի հայտնելու չի մոռցա, այլ դանդաղեցա, Գուրգեն,— ըսավ Խոսրով և հանեց հնքյալ թուղթ մը տվավ։

Գուրգեն նամակը ձեռքն առավ և երեսին գույնը դարձավ.

— Հեղինեի գիրն է,— ըսավ, և փոխանակ բանալու Խոսրովու երեսը կը նայեր։

— Բա՛ց, կարդա՛, ո՞ւմ կսպասես։

«Հեղինե, Անձևացյաց Տիկին առ Գուրգեն Արծրունի, իշխան Մարդաստանի»։ Այս տողերը կարդալուն՝ կորովի մարդուն ձեռքերը կը դողային, առաջին անգամն էր, որ տասնմեկ տարի վերջ Հեղինե իրեն կը գրեր, և այնպիսի մարդու ձեռքը կ'ուղարկեր իր նամակը։

— Ո՜հ, Գուրգեն,— ըսավ Խոսրով անհամբերությամբ և անշմարելի ծիծաղով,— մի՞թե դեռ տգա ես, բաց կարդա՛, վերջ տուր տա նամակիդ...

«Մուշեղ վախճանեցավ, եթե օրը և տկար տղու մը հանձն կառնուա հայր լինիլ և տիրել Անձևացյաց, մի՛ դանդաղիր. արդեն ազդեցությունք և բանսարկուք մեր շուրջ պատած են, քու սիրադ տես, թե ի՛նչ խորհուրդ կուտա քեզ։ Կգա՞ և քստ ամեմ շարժե։ Հեղինե»։

— Ո՜հ,— ըսավ Գուրգեն տեղաց ցատկելով,— և այսպիսի նամակ

մը կը դանդաղեիր ինձ տալու, և Հեղինե իմ որոշմունքես միթե կը կասկածի։ Երթա՛նք, Խոսրով։

— Դուրգեն, կերևա, որ դու մոռցար, թե քու բարեկամդ ծերացեր է արդեն, ես նոր ճամփե կուգամ, մեկ գիշեր մը մի՞թե կարելի չէ համբերել։

— Իրավունք ունիս, բայց ես տասնինը տարի է կը համբերեմ։ Ամենքը զիս պատերազմի և արյանց ծարավի կը կարծեին, վասնզի ես ամիս մը, շաբաթ մը հանգիստ տեղ մը չէի կրնար նստել. ամենքը կարծեին, թե պատերազմը իմ զվարճությունս է, բայց դու, Խոսրով, զիս և իմ սիրտս կը ճանչնիր՝ թե այդ սրտին կրակն էր, որ զիս հանգիստ չէր թողուր, ինչո՞ւ այդ նրբամիտ նամակն իրեն գրել տվիր. ինչո՞ւ Հեղինե չի զրուցեր հայտնի թե ամուսնանանք։

— Դու սխալ կը դատես զիս նույնչափ, ինչչափ զՀեղինեն։ Ես իրեն խորհուրդ ամենևին չի տվի, քեզ հայտնի է, որ տասը մարդու գլուխը խելք դնելու կարողություն ունի այդ կինը. ինձ խնդրեր գրեր էր, որ իրեն հասնիմ։ Ես երբ Կանգուար մտա, Մուշեղ նոր վախճանել էր. յուր հուղարկավորության հանդեսը ամենայն վայելչությամբ կատարելեն վերջ ինձ հայտնեց պարզությամբ իր սիրտը, ինձ պատմեց ձեր սերը, որ ես գիտեի, բայց որ դուք երկուքդ էլ ինձ չէիք խոստովաներ և լավ կ'ընեիք, վասնզի ձեր պարտքը լռելն էր և իմս գուշակել։ Ինձ հարցուց, թե ինք՝ մայր և կին ի՞նչ պետք էր ընել։ Ինձ պատմեց, թե ի՞նչպես Դերենիկ Արծրունի՝ Հոգյաց վանահոր ձեռք կտակ մը ստորագրել տվեր էր Մուշեղի՝ նորա տկարամտութենեն և զառամութենեն օգուտ քաղելով. պատմեց այդ անհագ Արծրունյաց՝ Ռշտունյաց տիրանալը, որ քու ազնիվ սիրտդ կը փափագի մոռնալ, բայց այդ կինը, որ երկրին կորուստը կ'արհամարհեր, Դուրգեն կորուսելուն չէր կրնար ներել, վասնզի հիշատակին միայն շրթունքը կը դողային և աչքերը հուր կը փայլատակեին։ «Չորս տարի է,— ըսավ,— որ ես, գիտես թե այս երկիրը կառավարեցի Մուշեղի անվամբ. ապստամբ, խռովարար, բանսարկու խստությամբ սանձահարեցի, և ոչ ոք չի համարձակիր խլրտելու, բայց հիմա կը տեսնեմ, թե Դերենիկ մը մեջտեղ կ'ելնե՝ Տեր Արծրունյաց՝ և շնորհիվ Դուրգենի փեսա իշխանաց իշխանին, և կ'զգամ, թե ամեն հնարք, խարեություն, կաշառք և զինու բռնություն ի գործ պիտի դնե այս տկար և թշվառ ժառանգը զրկելու համար։ Ի՞նչ խորհուրդ կուտաս ինձ դու, որ սիրտ և գլուխ ունիս»։ Ես իրեն ըսի, թե ժամավաճառ պետք չէ լինի, այլ շուտ մը նամակ գրե քեզ և իմացնե. թե ես ապահով էի և տարակույս չունեի, որ Դուրգենի ազնիվ սրտին մեջ սերն անշեջ է Հեղինեի համար, և թե Դուրգեն ու Հեղինե միացյալ ամուսնության կապելով՝ աշխարհիս բոլոր Աշոտներուն և Դերենիկներուն կրնային դիմադրել։

— Շատ լավ և իմ սրտես խոսել ես, Խոսրով։ Դու հանգչե ուրեմն և վաղն առավոտ կանուխ ճամփա կ'ելնենք։ Այո, եթե Հեղինե իմս է, ես կրնամ արհամարհել աշխարհիս բոլոր զորությունքը, դու չես կարող ճրևակայել իմ՝ Ռշտունյաց Ոստանն անցուցած մեկ գիշերս, երբ ութ տարի թափառելե վերջ իմացա, թե Հեղինե ուրիշինն եղել է։ Եթե Արտոս լեռը գլուխս փլեր՝ ավելի գոհ կը լինեի։ Ի՞նչ կուգա մարդկային տկար ձեռքերեն։ Ես էլ տկար մարդ էի, աստուծմե խնդրեցի, որ սիրո կուրացյալ չընեմ այնպիսի անարժան գործ մը, որ իմ կյանքիս մեջ խղճմտանքիս վրա ծանրանա. կրնայի Մուշեղ շղթայակապ թող տալ քրդաց ձեռք, կրնայի այդ գոռոզ Դերենիկը երկու մատով խղդել, կրնայի... բայց ի՞նչ հիմար խոսքեր կ'ընեմ... աստված իմ չարչարանացս վերջ տվավ, և ես ուրախ եմ, որ իմ ամենեն ավելի սիրած բարեկամս ներկա է այս վայրկենիս, որ սրտիս վրայեն այսչափ տարվան բեռը կը վերնա։ Դու քուն եղիր, ես երթամ պատրաստեմ ամեն բան և պետք եղած հրամանները տամ։

Նույն գիշեր Դուրգեն Մարդաստանի համար յուր բոլոր կարգադրությունքն ըրավ, բերդերու ամրության ամեն հրամաններ տվավ, բերդակալներ որոշեց, և հաղարի չափ ընտիրներով երկրորդ օրը Խոսրովի հետ կելներ ուղևորելու Անձևացյաց գավառը։

Բայց երբ իշխանը զբաղմանց և իր անհամբերությանց մեջ Վահրիճ կը ձայներ, սպասավորը, որ կարևոր անձ մը դարձեր էր նորա յուր բոլոր կատարելությամբք և բոլոր պակասությամբ, նույն միջոցին Հադամակերտի մոտ նստած էր անխնամ պարտեզի մը մեջ՝ փառավոր լուսնի գիշերով՝ սեղանի մը առջև, ուր պատվական կաքավներու և լորամարգներու խորոված և Վասպուրականի գերագույն գինին ու Խլաթի տանձը նաև պակաս չէին։

Յուր դիմաց նստած էր երկար և խառն մորվոք մարդ մը, ում քով սև վերարկուն և վեղար կը հայտնեին, թե վանքի վարդապետն էր. վասընզի այդ պարտեզը մենաստանինն էր, որուն խեղճուկ եկեղեցին, փըլփըլած սենյակները կը վկայեին, թե թշվառ վիճակի մեջ կը գտնվեր շինությունը։

Իսկ Վահրիճ, որ հայտնի կ'երևար, թե զվարթության գեղեցիկ աստիճաններուն վրա էր՝

— Է՜հ, հայր սուրբ,— կ'ըսեր,— քու վանքիդ ողորմելի կերպարանքը և գինվույդ ու պտուղներուդ պատվականությունը իրարմե շատ

հեռու են, ես իմ որսերուս այսչափ լավ ընկերներ տալ չէի կարծեր, երբ զքեզ դռան քով նստած տեսա։

Հայր Սուրբը, որուն աչքերուն փայլը կը ցցներ, թե պակաս չէր Վահրիճն յուր զվարթության մեջ և գինվույն կուժը պարպելու համար մեկտեղ կը ճգներ, ախորժեցավ յուր գինվույն գովասանքեն, պատասխանեց.

— Որսորդ եղբայր, ես քեզի պես հյուր կը սիրեմ, որ յուր ընտիր կերակուրը մեկտեղ կը բերե. քու կաքավներդ ու լորամարգիդ այս գինին սեղան հրավիրեցին, եթե ոչ քացխած գինի շա՜տ։

— Իշխանաց արժանի գինի է, ես այսպիսի գինի անգամ մ'էլ հանդիպած եմ Տարոնո մեջ, համը գեռ բերանս է. Բագրատունյաց Մշո կարասներեն տիկս լցուցի, ո՜ գիտե քանի տարվա գինի էր։

— Աս գինին էլ նորա խնամին է, որսորդ եղբայր, Արծրունյաց ապրանք է, Դերենիկ իշխանը ինձ ուղարկեց... անցյալ տարի... ոչ... առաջին տարի... միտքս չէ հիմա։

— Դու մեծ մարդկանց հետ գործ ունիս, հայր սուրբ, քու վանքդ պետք էր նորեն շինեին այդ մեծ իշխանները։

— Այն էլ կարելի է, խելոք մարդը պարագաներն օգուտ քաղել գիտնալու է։ Ս. Կարապետ գնացել ես, որսորդ եղբայր, այնպե՞ս չէ, ի՞նչ աբեղաներ կան այնտեղ, որ խոտաճարակ կ'ապրին. ես այդ կյանքը կը ճանչեմ, ես էլ այնպես կը մնայի, թե որ արթուն չլինեի... ի՞նչ որ է, այսչափ միայն հաջողեցավ, եթե քիչ մը ժամանակ տեսեր, ես եպիսկոպոս եղած էի։

— Քու եպիսկոպոսությանց հաջողելո՞ւն,— ըսավ Վահրիճ և բաժակը պարպեց։

— Քու միշտ հաջո՞ղ որսորդությանդ,— պատասխանեց հայր սուրբը ետ չի կենալով.— բայց քանի անգամ է, որ եպիսկոպոսություն կը մոտենա, հա՜ բռնեցի, կ'ըսեմ, դարձյալ ձեռացս կը փախչի։

— Այսչափ դժո՞ր բան է եպիսկոպոսանալը։

— Ի՞նչ, դյուրին բան գիտցա՞ր, բայց դարձյալ քանի անգամ դյուրացավ. ես որ մեկ քանի ամիս այս Դերենիկի հոր Աշոտ իշխանին ատենադպիրն էի. նա գերի գնաց... մնաց, միայն այս ավերակ վանքը ձեռք բերի վերջը, այս Դերենիկն ինձ խոսք տվավ, որ զիս Մարդաստան գավառիս եպիսկոպոս ձեռնադրել տա. գավառը նորա ձեռաց գնաց, եպիսկոպոսությունն էլ իմ ձեռացս թռավ։

— Այս բաժակը կը քամեմ մինչև վերջին կաթիլը եպիսկոպոսության գառնալուդ վրա։— Եվ Վահրիճ լցուց ու քամեց։ Հայր սուրբը շուտ

մը նորա օրինակին հետևեցավ առիթն ամենևին չի կորսնցնելով։ Վահրիճ հետաքրքրություն ունեցավ այս առաջ միաբանի վանահոր ամեն գաղտնիքն իմանալու, վասնզի տեսավ, որ շարունակ այդ Արծրունյաց հետ գործ ունեցել էր, վասնզի ինքզինքը Գուրգենե չէր կարող բաժնել, և իր տիրոջ հետ բարեկամ կամ թշնամի կը դառնար անդադար, և հիմա Հաղամակերտի դռան առաջ Երագանի գյուղին քով գտնելով Դերենիկի բարեկամ մը՝ իր կես գինեհարյալ վիճակին մեջ, օգուտ քաղել մտածեց, ուստի մեկ մը գինին գովելով, մեկ մը հայր սուրբին եպիսկոպոսությունը առաջ քշելով՝ կուժին տակը հասավ սեղանակցին հետ և տեսավ, որ մտերմության դուռ բացվեցավ։

— Քեզի պես արթուն վարդապետ մը դժբախտություն է, որ այսպիսի անապատի մը վանահայր մնա. բայց իշխանները երախտամոռաց էակներ են, դու հորը ծառայեր ես, որդվույն ծառայեր ես. կուժ մը գինվով ինչպե՞ս կարելի է զքեզ վարձատրել և դադրիլ. իրավ ես չեմ գիտեր ինչ տեսակ ծառայություն ըրած ես սոցա, բայց վերջապես իշխան մը այսպիսի ծանր և դժվար ժամանակի մեջ քեզի պես արթուն մարդու պետք էր, որ աս պատվական ըմպելիքեն ուրիշ վարձատրություն մ'ըներ։

— Իմ ըրած ծառայությունս Դերենիկին սովորական բան չէր... հիմա թող մնա...

Իսկ Վահրիճ թեպետ լավ գիտեր, թե կուժը իր վերջին կաթողությունը թափել էր, բայց կամավ ուժով մը վեր առավ ամանը, որ յուր պարապության համար վարդապետին գլխեն ավելի բարձրացավ. հայր սուրբը հյուրընկալության պարտավորությունն կատարյալ ընելով ձայնեց ծառային և հրամայեց ուրիշ լեցուն ման մը բերել։ Արդեն վարդապետին լեզուն ծանրացեր էր, և իշխանաց ապերախտության հիշատակն էլ գլխուն վրա նույնպես ծանրանալով՝ աչքերն սկսեր էին պրզտիկնալ. Վահրիճ մխիթարություն մատուակելով բաժակ բաժակի վրա դարձյալ լցուց. վասնզի աս հավատարիմ ծառան Գուրգենի համամիտ չէր ամեն նյութի մեջ, և նորա անոխակալ ներողամտության երբեք կամակից չէր. բայց բերան բանալ՝ խորհուրդ տալ չէր համարձակեր, և հազիվ երբեմն խոսրովու զվարթ վայրկյաններուն՝ միավանկ բառերով յուր իշխանին՝ Դերենիկի ըրած բարերարությունքը «չափազանց բարեսրտություն» անվանել համարձակած էր։ Ուստի հիմա գտնելով Մարդաստանի մեջ վարդապետ մը, որ յուր տիրոջ թշնամյաց բարեկամն էր, միտքը դրավ, թե դա Դերենիկի լրտեսն է, և ամեն ջանք սկսավ ի գործ դնել այդ մարդուն լեզուն արձակել։

— Հայր Սուրբ, կը տեսնեմ, թե դու էլ ինձ պես անբախտ մարդ ես, խելոք մարդու չես հանդիպեր, ես էլ իշխանի մը ծառայեցի տարի-

նեբով, ապերախտը երբ մեծության և փառքի հասավ, զիս վռնդեց. ես էլ հիմա, որ ապրուստ ունիմ, փա՛ռք աստուծո և մարդու կարոտ չեմ, շնորհիվ խելոք վարմունքիս՝ որսորդությամբ ժամանակս կ'անցնեմ։

— Ո՞վ էր քու ծառայած իշխանդ։

— Նա էլ Արծրունի մի էր. այս ցեղը ապերախտության համար ծնած է։

— Ի՞նչ Արծրունի էր, հոգիդ սիրես։

— Գուրգեն Ապուպելճ, շատ քաջ, բայց կատարյալ հիմարին մեկը։

— Հը՛... Գուրգե՛ն... լավ կը ճանչեմ։

— Ուստի՞ կը ճանչես։

— Այնպես լավ կը ճանչեմ և այնպես ափիս մեջ ունեցեր եմ վայրկյան մը, ինչպես սա բաժակը։

— Մի՞թե կարելի է այդ հսկան, որ Բուղա ափին մեջ չի կրցավ սղմեցնել, քու ափիդ մեջ սղմեր. հիրավի զարմանք բաներ կը պատմես, Հայր Սուրբ։

— Կ'ուզես հավատա՛, կ'ուզես մի՛ հավատար. եթե հիմա նա տիրացավ Մարդաստանի, Դերենիկի հիմարության պտուղն է, Մարտիրոս վարդապետ հանցանք չունի. ես այդտեղ մը չի սղմող հսկան սա փոքրիկ ծակին մեջ սղմեցուցի՝ նորա ձեռքը տվի... ի՞մն էր հանցանքը եթե կաթողիկոս, իշխանաց իշխան հազար կտոր եղան, սապես ըսին, նապես ըսին, ձեռքեն առին, ելան գնացին։

Վարդապետը երբ այս խոսքերն կը ղրուցեր, լեզուն բերնին մեջ կը պլորեր, լուսին յուր աչաց բավմապատկյալ էր, և Վահրիճ յուր գինվույն գրեթե բոլորովին սթափած նույն միջոցին՝ այդ Մարտիրոս անվան մրոքին ամբողջ զորությունը գտեր էր։ Ուստի զվարթ դեմքով՝ ջանալով իր վիճակը ծածկել, ըսավ.

— Իմ պատվական Հայր Սուրբ, դու շատ խելոք և հնարագետ մարդ ես, դու լավ գիր նաև գիտես, վասնզի Աշոտ Արծրունվո պես մեծ իշխանի առենադպիր եղեր ես. այդ անպիտանն էլ քեզ մոռցեր է։

— Իրեն ա՛յնպիսի ծառայություն ըրի, որ սատանան չի կրնար ընել, մեկ թուղթ մը գրեցի, թուղթ մը գրեցի, որ գավառ մը իրեն օժիտ բերավ... ի՞նչ աչքերդ կը բանաս... մե՛ղք աշխատանացս... այնչափ լավություն, հը՛, բոլոր սա փլփլած վանքին համար, տարի մ'էր, որ թափառական կը շրջեի այդ քու Գուրգենի երկյուղեն... վերջը, իմացա, որ դա մոռացկոտ մարդ է, ոչ բարեկամը գիտե, ոչ թշնամին... էլ չեմ կարող... գլուխս կը շը... կը դառնա, ես այստեղ լավ մը քնեմ...

Եվ իրոք մարդը երկնցավ. Վահրիճ էլ դիմացը վերարկուն քաշեց՝

կես քուն, կես արթուն կը քներ, նորա խորդալուն ձայնը երբ հանկարծ դադրեր, աչքերը կը բանար, որ մարդը չի փախցնե։ Երբ արշալույսը սկսավ, ժողվտեցավ և շիտակ քաղաքը շունչն առավ։

ԳԼՈՒԽ ԻԹ

ԳԵՂԵՑԻԿ ՕՐ

Կանգուարի բերդին դռները բացվեցան ընդունելու համար ամենայն պատվով և փառոք Գուրգեն Ապուպելճ, և Հեղինե տիկին երկրորդ օրը բերդին եկեղեցվույն մեջ պսակվեցավ Գուրգենի հետ ի մեծ ուրախություն Անձևացյաց ժողովրդյան, որ հզոր պաշտպան մը կը գտներ այսպիսի աննման քաջ իշխանի մը հովանավորությամբ։ Բայց եթե մեկ կողմե ամուսնացյալք երջանիկ և ժողովուրդը գոհ էին, մյուսեն շատ մը բանսարկուներ վերջին հուսահատության մեջ էին։ Մուշեղ իշխանի կտակը պատրաստող Թեոդորոս վարդապետ՝ առաջնորդ Հոգյաց վանից, որ Դերենիկի խորհրդով և նորա հոգուտ ծածուկ Հեղինեի որբ տղան ջանացել էր զրկելու, հիմա անճար և շփոթ մնացել էր, յուր բոլոր հույսերը տեսնելով ոչնչացյալ։

Իսկ Դերենիկ մեծամեծ պատրաստությունք կ'ըներ պատերազմի և նույն միջոցին նույն Թեոդորոս վանահայրը դեսպան կ'ուղարկեր Գուրգենի՝ սպառնալյոք, որ Անձևացյաց կեսը Նորաբերդի հետ ըստ կտակին զորության իրեն հանձնե։

Չենք ուզեր երկայն պատերազմներու վրա խոսիլ, ուր Գուրգեն վերջապես հաղթությամբ պսակվեցավ, և ամբողջ Անձևացյաց գավառին տիրացավ. հանդարտեցուց երկիրը, ապահովեց ի թշնամյաց, եկեղեցիներ շինեց և խաղաղության տոն կատարեց նավակատյաց։

Բայց այս խաղաղությունը նաև երկայն չի տևեց, վասնզի Դերենիկի հայրը Աշոտ իշխան գերությենե ազատելով, եկավ Բաղդադի և հրամայական պատգամ ղրկելով Գուրգենի կը պահանջեր Անձևացյաց գավառին մասը Դերենիկին համար։ Իսկ Գուրգեն հանդարտ պատասխան կուղարկեր և կ'ըսեր. «Հայրենի ժառանգությենե զիս զրկեցիք, եղբայրական բաժինը հափշտակեցիք, հիմա ինչ որ ինձ աստված ժառանգեցուց, այն էլ կ'ուզեք առնուլ բռնությամբ։ Մի՞թե դու միայն պիտի բնակիս երկրիս վրա։ Տեսնե Տեր և դատե յուր արդարությամբ ինչպես ես կը հուսամ»։

Եվ իմանալով, թե հայրը մեկ կողմանե՝ և մյուս կողմանե Դերենիկ Անձևացյաց գավառին վրա կը հարձակեին, յուր եղբորորդին Գրիգոր՝ քաջ երիտասարդը զրկեց Աշոտի դեմ երկու հարյուր հոգվո ընտիր սպառազեն գնդով. իսկ սա՝ տեղեկանալով Գրիգորի զորաց սակավությունը, արհամարհեց և անզգույշ կը նստեր անհոգ, երբ գիշերով հանկարծ Անձևացի խումբը հարձակեցավ յուր վրա, զարկավ՝ ցիրուցան ըրավ զորքը և ավար առավ բոլոր բանակը մինչ ինք Աշոտ միաձի փախստական կ'իջներ Ռշտունյաց Ոստանը։

Իսկ Դերենիկ իմանալով հորը պարտությունը և թե Գուրգեն յուր վրա կուգար հարձակմամբ՝ խոհեմաբար ետ քաշվեցավ և դարձավ Վասպուրական։

Կրկին և կրկին Արծրունիք նոր զորք ժողվելով և Բագրատունյաց օգնությամբ զորացյալ՝ չի կարենալով բան մը գլուխ հանել, խաղաղության դաշինք դրին. Աշոտ և Գուրգեն առանձին իրարու հետ տեսնվեցան, զիրար ողջունեցին և բարեկամության սեր հաստատելով բաժնվեցան իրարմե։

Գուրգենի ամուսնության տարին լրացել էր, Հեղինե կայտառ՝ նորածին, նորակնունք երեխա մը գիրկը՝ մխիթարված էր յուր Մուշեղե ունեցած խեղճ և տկար տղուն մահվան վրա. Խոսրով Ակեացի, որ նոցա կնքահայրն էր և նույն օրն այդ պաշտոնը կատարելու համար եկեր էր ի Կանգուար, երեքին վրա կը նայեր զվարճությամբ. իսկ Գուրգեն ոտքի վրա կանգնած, ուրախ, բոլոր նեղությունները և բախտին հարվածները գրեթե մոռցել էր ներկա երջանկությամբ. մեկ մը կնոջը և մեկ մը զավկին ակնարկ ձգելով աչքերը երկինք կը վերցներ, շնորհակալ կը լիներ աստուծո տվողին ամեն բարությանց, երբ հանկարծ գլուխը դարձնելով տեսավ Վահրիճ, որ լռիկ ներս մտած դռան առջև կեցել էր։

— Ի՞նչ է, Վահրիճ, դու բան մը ունիս զրուցելու,— հարցուց Գուրգեն։

— Այո, Տեր։

— Զրուցե՛, ի՞նչ խնդիրք ունիս։

— Ոչինչ, Տեր, քու ողջությունդ. միայն կ'ուզեմ հիշեցնել, որ Օձ քաղաքին մեջ երբեմն շատ տարիներ առաջ ինձ հանձնեցիր իմանալ, թե ո՞վ էր այդ երեք դավաճան իշխանաց մատնության թուղթը գրողը առ Բուղա, ես այն ատեն իմացա, թե Մարտիրոս անուն վարդապետ մ'էր և դու ինձ ապսպրեցիր չի մոռնալ այդ անունը և երբեմն հիշեցնել և ջանալ գտնել. ես գտա այդ մարդը և տարի կա, որ այստեղ մարը բանտը կրսպատե։ Ես ժամանակ չունեցա զինք հիշելու, վասնզի քու հրամանավդ Նորաբերդ էի, և ոչ դու էլ ժամանակ ունեիր՝ նորա գործով զբաղելու։

Խոսքեն այս առավոտ ինձ հիշեցուց և ըսավ, թե իշխանուհին եթե իմանա, որ այդ մարդը տեղին ամբողջ առանց դատաստանի ջղթայակապ մնացել է, բանտը մեր գլխուն կը կործանե։

Իսկ Գուրգեն խոժոռ նայեցավ Վահրիճի այս հայտնության վրա և քովնտի ակնարկ մը ձգեց Հեղինեի, որ ուշադրությամբ անխոով և խիստ կը նայեր սպասավորին, որ տեսնելով, թե ախորժ չեղավ յուր հայտնությունը, վրա բերավ ուրիշ պարագա մը նաև։

— Ես այնպես իմացա այդ վարդապետին խոստովանությենեն, որ դա ասկից երկու-երեք տարի առաջ Երազանի գյուղին քով կիսափուլ վանքի մեջ երբ դու իրեն ապավիներ ես՝ Դերենիկին բանտեն ազատելով, զքեզ նկուղի մը մեջ փակեր և Դերենիկին մատներ էր։ Ես այս պարագան չգիտեի, իրմե իմացա։

— Անպիտա՛ն,— ըսավ Գուրգեն բարձրաձայն քրքիջ արձակելով,— այդ ի՞նչ հիմար է եղեր, որ քեզի պես առաքինի մարդ փնտրել ընտրել է խոստովանահայր։ Գնա՛, արձակե այդ մարդը, արդեն տարի մը բանտ քաշել ապաշխարել է։

Վահրիճ քայլ մը ետ առավ դուրս ելնելու, երբ Հեղինե՝ ձեռոք նշան ըրավ կանգնելու, և դարձավ լուրջ հանդարտությամբ ըսավ Գուրգենի.

— Եթե անմեղ կամ հիմար մեկն է այդ մարդը և անիրավ տեղ մեր բանտերուն մեջ տարիով կեցեր է, պետք է իրեն շնորհք մ'ընել և այնպես արձակել։ Իսկ եթե դավաճան և մատնիչ է և կարող պատուհաս լինիլ ուրիշներու, ի՞նչ խղճմտանքով զինք կ'արձակես։

— Ոչ, անմեղ անձ ըսել կարելի չէ այդ անզգամին համար, բայց այնչափ տարի անցել է իր գործոց վրա...

— Մի՞թե տարիներ և ժամանակ բավակա՞ն են քավել չարագործությունքը,— ըսավ Հեղինե,— և դառնալով Խոսրովու՝ դու ի՞նչ կըսես, հայրիկ...

Այս խոսքին Գուրգեն երկու-երեք քայլ առավ, դռան մոտեցավ և Վահրիճի թևեն ուժով բռնելով, բերավ սենյակին մեջտեղ կեցուց երեսը Հեղինեի դարձնելով.

— Չիս թող, իշխանուհվուն հետ խոսե և նորա պատասխանե։

— Բայց, տեր,— կ'ըսեր Վահրիճ քիթը բերանը թթված և թևը շփելով,— ես զքեզ չեմ կարող բռնել, դու զիս պետք է թողուս։

Փակ Գուրգեն նույն միջոցին հեռացավ դեպի պատշգամը և հորիզոնը կը նկատեր առանց բառ մը կորսնցնելու Վահրիճի խոսքերեն, որ մինչև թևը շփելով մեկիկ-մեկիկ կը պատմեր իր որսորդության, Մարտիրոս վարդապետի հետ սեղանակցության, գինովության, խոստովանության պատմությունը. Գուրգեն քթին տակեն երբեմն ծիծաղելով՝ «ան-

պիտա՞ն ծառա, տարիներն զքեզ ամենևին չեն փոխեր, միշտ նույնն ես և նույն մնացել ես» կ'ըսեր կամաց ձայնով. Հեղինե առանց փոքր ժպիտ մը ցույց տալու, ուշադրությամբ մինչև վերջը մտիկ ընելեն նաքը, ըսավ Վահրիճի խիստ ձայնով.

— Բայց ի՞նչ կը նշանակեն այդ խոսքերը, որ դա զրուցեր է. «Թուղթ մը գրեցի, որ գավառ մը իրեն օժիտ բերավ»։

— Չգիտեմ, իշխանուհի, որովհետև երբ այդ խոսքերն ըսավ Հայր Սուրբը...

— Ի՞նչ Հայր Սուրբը,— ընդհատեց Հեղինե խստությամբ,— այդ էր պակաս, որ այսպիսի անզգամներ «Հայր Սուրբ» անվանեինք։

— Կը ներես իշխանուհի, բերնի վարժություն է այն գիշերվընե մնացած։

Գուրգեն կը ծիծաղեր բարձրաձայն. Խոսրով, որ ուշադիր էր միայն և ամենևին նշան մը չէր տված մինչև այն վայրկյան, փոքրիկ մը ժպտեցավ, իսկ Հեղինե բարկացայտ աչքերով՝ կամաց և դողդոջուն ձայնով ըսավ սպասավորին.

— Գնա՛, այդ մարդն առանց շղթայի, առանց պահապանի ներսի մեծ սենյակը տար և սպասե մինչև որ մենք գանք։

Եվ երբ Վահրիճ գնաց, ելավ ձայնեց նաժիշտներուն, տղան դայեկին հանձնեց. և, Գուրգենի թևեն բռնելով ու Խոսրովու քով բերելով, լուրջ և մեղադրական ձևով ըսավ.

— Գուրգեն, ես հիմա անոր կը զարմանամ, թե այնչափ տարիներ զիս ի՞նչպես չի մոռցար. մի՞թե կարելի է այդ անզգամ շարագործը մոռնալ՝ յուր ըրածը չհիշել, և թողուլ, որ երթա յուր անարգ շահասիրությամբ, անխիղճ և անպատկառ շարունակե յուր անզգամությունը, անմեղ արտասվաց և ո՞ գիտե արյանց պատճառ լինի. այս իշխանություն չէ՛, այս տերություն չէ՛, իշխանաց պարտքը ես այսպես չեմ հասկնար։ Շատ ուրախ եմ, որ Խոսրով իշխանն էլ այստեղ է և դատավոր կրնա լինիլ մեր մեջ։

— Բայց ո՞վ քեզի ըսավ, սիրելի Հեղինե, թե իրավունք չունիս. ես տարի մի է այնչափ զբաղած եմ պատերազմներով, որ ամեն կառավարություն քեզի հանձնեցի և հիմա էլ, քու գործիդ խառնվելու ոչ կամք ունիմ և ոչ փափագ. կ'ուզես կախել տուր այդ մարդը, կ'ուզես ձեռքը կտրել տուր, ես կ'ընդունիմ, թե արժանի է ամեն տեսակ պատժոց, միայն պատերազմե դուրս՝ ցուրտ արյունով չեմ կարող մեկը հարվածել և պատժել. առյուծը, վագրը գառագիղի մեջ սպաննել չեմ կրնար, պետք է արձակեմ և այնպես վրան հարձկիմ։

— Այո՛, առյուծին, վագրին այնպես պետք է ընես, բայց գետնաքարշ սողունին, որ կրունկդ կ'ուզե խածնել և թունավորել, պետք է գլուխը ճզմել ու ջախջախել... Է՜հ հայրիկ, չես խոսիր... եթե այդպես է, ես էլ բերանս չեմ բանար։

— Ոչ, դուստր իմ, ոչ, դու իրավունք ունիս,— ըսավ Խոսրով ձեռքեն բռնելով և քովը նստեցնելով,— բայց Գուրգենի բնավորությունն այնպես է, տասն անգամ նույն թշնամին բռնած և թողած է, միշտ վերջը զղջալով։ Հիմա այդ մարդը պետք է շղթայակապ կաթողիկոսին հուղարկել. Հոգևոր տերը արդար, առաքինի, իմաստուն մարդ է, երբ իմանա անարժան քահանային ըրած անզգամությունը, փակել կուտա զինք վանք մը, ուսկից անկարելի կը լինի ելնել մինչև կենաց վերջի օրը և առատ ժամանակ կ'ունենա ապաշխարելու յուր չարությանց վրա։ Երթանք ուրեմն ներսի սենյակը հարցաքննենք մարդը։

Մարտիրոս վարդապետ ամեն բան խոստովանեցավ, պատմեց թե ինչպես ինք Գուրգենի առ Հեղինե գրված նամակը խարդախել էր, ինչպես ինք Աշոտի դիվանագետ մատնության գործիք և խորհրդակից եղել էր երեք դավաճանաց հետ և թե ինչպես ետքը Գուրգեն մատներ էր եպիսկոպոսանալու հույսով։

Երկրորդ առավոտ Վահրիճ քանի մը հոգվով յուր այս շնչավոր ավարը բարձյալ ձիու մը վրա փոքրիկ զորաց գունդի մը ընկերությամբ կը տաներ կաթողիկոսին, որ Սևանա անապատը հրամայեց զնա ուղղել դատապարտելով ապաշխարության յուր անզգամության համար։ Ներունի Խոսրովի խոսքը կատարվեցավ, ինչպես զրուցել էր Հեղինեի։

ԳԼՈՒԽ Լ

ԵՐԿՈՒՆՔ

Գուրգենի կյանքը մանրանկար պատկեր կրնա համարվիլ Հայաստանի այն ժամանակաց տաժանելի վիճակին, հալածանք, մատնություն, դավ, բանտ, շղթաներ, պատերազմ, վերք, հիվանդություն, հաղթություն, պարտություն, սիրելյաց բաժանումն և վերջապես հանգստություն, երջանկություն սրտին սիրելվույն հետ միավորությամբ։

Ուրախ տարիներ անցուցին այս ամուսինք, ունեցան զավկներ, ծնելական գթով և արդարությամբ կառավարեցին թե իրենց տունը, թե երկիրը. երջանկություն՝ եթե բոլորովին չէր կրնար մոռցնել այն դժնդակ օրերը, ուր մարմին և հոգի տառապանաց և հուսահատության մեջ կը

տատանեին, կը ծփային, այլ իբրև հին հիշատակք միգամած ամպեր մը ծածկյալ հեռավոր առարկայք եղան գրեթե աննշմարելիք։

Մայրն Հայաստան՝ այդ բազմաշարշար մարտիրոսը, որ երկայն տասը տարիներու մեջ անլուր թշվառությամբք տքնեցավ, ոտնակոխ բազմատեսակ բարբարոսաց, ավար անգութ հրոսակաց, ստրուկ մերձավորաց և օտարաց, հարվածյալ ի թշնամյաց և յուր հարազատ որդեկաց, վերջապես անգամ մ'էլ կրցավ սրբել թաց արտասուքը, ցնցեց՝ նետեց արյունաշաղախ մոխրամած ցնցոտիները, թողուց այդ ցավոց անկողինը, և յուր դառն երկանց հաջորդեցին երջանիկ ու զվարթագին ավուրք. զգեցավ վայրկյան մ'էլ յուր ծիրանիները և պսակեցավ թագադիր Բագրատունյաց շառավիղ Աշոտի անձին վրա։ Սև օրերու պայծառ արև հաջորդեց, և տեսավ Մայրն Հայաստան յուր որդվոց գերեդարձը, որք անարգ ուրացության նախատինքը մերկացան եղան լուսազգեստք. Քրիստոսի անունը դարձյալ սկսավ փառավորիլ, եկեղեցվո լքյալ ու կործանյալ գմբեթները իրենց ավերակներուն մեջեն կանգնեցան՝ հարություն առին. քաղաքներ նորոգվեցան, գյուղեր շենցան, «հերկեցին հերկս, և ոչ ի վերայ փշոց, և ապա ձայն իրախճանաց ցնծացելոց 'ի յարկս նոցա լինէր և ձայն հարսին և փեսայի. ծնան որդիս և արարին պտուղ, և բնակեցան իւրաքանչիւրոք 'ի ժառանգութեան իւրեանց և այց արար Տէր նոցա՝ և հաջողեաց 'ի բարութիւնս»։

ԹԵՈԴՈՐՈՍ ՌՇՏՈՒՆԻ

ԱԶՆԻՎ ԲԱՐԵԿԱՄԻՆ
ԴՈԿՏՈՐ ՌՈՄԱՆ ՊԱՎԼՈՎԻՉ
ՆԱԴԻՐՅԱՆՑԻ

ՆՎԻՐԵ ԶԱՅՍ ԵՐԿ

ՇԵՐԵՆՑ

ԳԼՈՒԽ Ա.

Փոքրիկ խումբ մը տասը-տասներկու ձիավորաց, շտապավ Բագրևանդա արևելյան կողմը՝ Կոգովիտի հյուսիսը կը դիմեր, ժամանակը երեկոյանալու մոտ էր, և հայտնի կ'երևար, թե այդ խումբը բավական հեռվեն կուգար, երբ դիտող աչք մը նկատեր լռությունը, որ հոգնածության հետևանք էր, արևեն այրած կերպարանքները և փոշին, որ ամենուն զգեստները կը ծածկեր, և ձիերուն քրտինքը, որ կը թորեր։

Պատանի մը շքեղ հագված, գեղեցիկ նժույգի մը վրա նստած կը ձիավարեր. յուր կերպարանաց փափկության ու գեղեցկության հետ տխրություն և հոգ նկարված էին երեսին վրա։ Չէր խոսեր, չէր նայեր շուրջը, այլ միայն ճամփան կը շարունակեր։ Յուր ետևեն շրջապատող խումբը թե՛ իր սպառազինութենեն, թե՛ խրոխտ և զինվորական կերպեն կը հայտներ, թե թիկնապահք էին այդ պատանվույն, որ իշխանավուն մի էր։

Աշնան շամանդաղը և մուխը միատեղ իջան երկրիս վրա, երբ մեր խումբին գլխավորը, որ հիսունամյա, մեծագլուխ, ցլապարանոց մարդ մի էր և որ երիտասարդին աջ կողմեն կը ձիավարեր, դարձավ պատանվույն և հաստ, բայց կամաց ձայնով ըսավ.

— Ահա Վարդանաբերդ, լույսերը կ'երևան, իշխան, քառորդ մը միայն ճանապարհ ունինք։ Կ'երևի, թե շատ հոգնեցար։

— Հոգնությունը հոգ չէ՛, Զավեն,— պատասխանեց երիտասարդը,— մայրս վախեմ մտատանջության մեջ է հիմա։

Դարձյալ լռություն հաջորդեց, միայն ձիերու սմբակներու ձայնը կը լսվեր. ձիավոր մը փոթորկելով գնաց աներևութացավ, և խումբը փոքրիկ լիճի մը քովեն պտույտ ընելով և ժայռն ի վեր բարձրանալով մեծ դռան մը առջև կանգնեցավ. ձիերը սկսան խխնջել և գետինը ծեծել. դռները ճռնչեցին բացվեցան, Վարդանաբերդի գավիթը ջահերով լուսա-

վորվեցավ վայրկենին, պատանին հազիվ թե իջավ ձիեն՝ երիտասարդ սեազդեստ կին մը տեսնվեցավ, որ դահլիճին սանդուխին գլուխը կեցած իրեն կը նայեր։ Ի՞նչ կար նորա անբացատրելի նայվածքին մեջ։ Այսչափ միայն կարելի է զրուցել, որ զղայուն մոր մը բոլոր սերը, հույսը այդ նայվածքին մեջ էր, թեպետ ամսվան մը հեռավորություն միայն բաժներ էր այս մայրը զավկեն։

Մայր, որդի իրար դիմեցին, համբույր, գրկախառնություն, «որդյակ», «մայր», «սիրելի», «սիրեցյալ», քանի մը կաթիլ արտասուք զվարթ երեսներու վրա, և ահա այդ քնքուշ երիտասարդ մայրը իր զավկին ձեռքեն առած՝ իբրև թե հափշտակելով, մտավ ներս, անցավ դահլիճը, տարավ իր սենյակը, նստավ և նստեցուց քովը, հարցմունքներ իրարու կը հաջորդեին, հազիվ թե կիսակատար պատասխաններու տեղիք կար. հոն ամեն բանի վրա կը խոսվեր. ճանապարհին վրա՝ թե վտանգ կա՞ր, թե Ռշտունյաց Տիկինն ինչպե՞ս էր, թե Ոստանին հավնե՞ր էր որդին, թե Վանա ծովը և Վարդանաբերդի լիճը ի՞նչ տարբերություն ունեին իրարմե. վերջապես հայտնի էր, թե մայր մը կար գորովասիրտ և որդի մը, որ յուր մայրը կը պաշտեր։ Բայց հանկարծ այս մայրը իբրև խոր քունե արթնացավ, թողուց զավկին ձեռքը.

— Սակայն դու, որդյակ Գրիգոր, որ այս ժամուս կը հասնիս, անշուշտ անոթի ես. ձայն չես հաներ, և ես՝ վա՛յ ինձ, որ քեզմով միայն համրացյալ, բոլորովին մոռցա հարցնել... Աղջկո՞ւնք,— կըսեր նաժիշտներուն,— շուտ կերակուր հրամայեցեք...

— Իրավ, սիրելի մայրիկ, ութը, թերևս ավելի, ժամ կա, որ ոչ հաց և ոչ ջուր մտած է բերանս, բայց որ քեզ տեսա, մոռցա անոթություն և հոգնածություն։

— Ո՜հ,— կ'ըսեր մայրը դարձյալ տեսնելով տղուն փոշին և քրտինքը,— շուտ ջուր բերեք, զգեստ բերեք...

Եվ երբ կոնքը աղախին մը ի գուշս բռնած՝ ուրիշ մը ջուր կը լցներ, ինք Տիկին մայրը ձյունի պես թևերը սոթտած փոքրիկ բոթիկ ձեռքերով իր զավակին գլուխը կը լվանար. ծայրերը ոսկեթել բանված ղենջակով մը սրբեց մազերը, որդվույն սիրուն գլուխը յուր ձեռքերուն մեջ՝ համբույր մը դրավ ճակտին, և նա մայրենի ձեռքը համբուրեց գգվանոք և շնորհակալ սրտիվ։

Երիտասարդը կ'ընթրեր և մոր հարցմունքներուն կը պատասխաներ միանգամայն։

— Ռշտունյաց Ոստանը չի բաղդատվիր մեր պզտիկ գղյակին և լճին հետ, բայց եթե հոն մեծություն, ընդարձակություն կը տիրե, հոս վայելչություն մը կա, որ կը գրավե, հոն եթե Սեթա տիկին ընդարձակ

գավառի մը իշխանուհի կը հրամայե, կը սաստե, կը պատժե, կը փոխե, միշտ զբաղված, հազիվ թե կանոնավոր ժամանակ ունենալով ճաշելու և ընթրելու, հոս, Բյուրեղ տիկին լռիկ-մնջիկ նույն գործքերն ավելի սահմանափակ գավառի մը մեջ կը կատարե և մայրաբար։

— Դու, որդյակ, լավ ըսիր, թե հոն ընդարձակ գավառ մը կա կառավարելու, և ես կը խոստովանիմ, թե Սեթայի ըրածը կարող չե՛մ ընել։ Երբ մենք պզտի և տարեկից էինք, նա արդեն իր հասակավ, իր համարձակությամբ, գործունեությամբ, եռանդուն բնավորությամբ մեծին և փոքրին վրա տեսակ մը իշխանություն կը վարեր յուր հայրենի տան մեջ. առանց Սեթայի խորհուրդ հարցնելու բան մը չէ՛ր կատարվեր տան մեջ, իսկ ես, որ իր փոքր քույրը կը կարծվեի, կը զարմանայի այդ Ամատունյաց Օրիորդին վրա, որ շատ անգամ առնացի ծպտյալ եղբայրներուն հետ որսի կ'երթար, ժայռերու, ափափայներու վրա կը ձիավարեր հանդուգն, քան զամեն երիտասարդը, և որ զարմանալին է՝ այսպիսի որսի արշավանքի մեջ մը Թեոդորոս իրեն հանդիպելով և առանց սեռը իմանալու՝ այդ պատանվույն հետ սիրով կապվեր էր. ուստի օր մը հանկարծ Ամատունյաց դղյակն երթալով և յուր եղբարց հետ տեսութենե վերջ՝ Սիսակը հարցնելու ելեր էր։ Եղբարքը շփոթած էին պատասխանի համար, երբ Սիսակ դարձյալ երևցեր էր Ռշտունյաց իշխանազունին ծանր և լուրջ, և ամեն նյութի վրա ցույց տված էր իր սրամտությունը։ Թեոդորոս, որ 15—16 տարու տղու մը հետ տեսություն ընել կը կարծեր, հափշտակված էր դեռաբույս հանճարեն, բայց վերջն իմանալով, թե Ամատունյաց Օրիորդն է այդ Սիսակը և լավ գիտնալով յուր հոր՝ Վահրամ Ռշտունվույն, խստությունը հայրենական ավանդությանց պահպանության մասին, գաղտնի խնդրեր էր Սեթայե, որ այդ համարձակությունքը չափավորե, և քիչ վերջը ծնողաց հավանությամբ ամուսնությունը կատարվեցավ։ Ուստի մի՛ զարմանար և մի՛ բաղդատեր մեր հակառակ բնավորությունները, ինչպես քու հայրդ, աստված լուսավորե հոգին, խաղաղասեր, հանդարտ, անկարելի էր բաղդատել Թեոդորոսի բուռն և խիստ բնավորության հետ։

— Բայց դարձյալ ուսկի՞ց է, որ Ռշտունյաց ընդարձակ գավառը եթե գոհ է յուր Տիկնոջ կառավարությենեն, մեր Կոգովտի գավառը ավելի գոհ ու երջանիկ է յուր տիրուհվույն կառավարությենեն։

— Այս նաև շատ դյուրին է բացատրել. Սեթա պարտավոր է իր Թեոդորոսի պատերազմասեր բնավորության և պաշտոնին պիտույքը հոգալ, զորք և դրամ հայցնել, ո՞ գիտե, երբեմն արտաքո կարգի հարկեր ձգել երկրին վրա, երբ մե՛նք՝ մանավանդ հորդ մահվանեն վերջ՝

կը տեսնես, թե ի՛նչ խնայողությամբ կ'ապրինք... ես կը ճանչնամ Սեթայի բնավորությունը՝ շատ առատաձեռն է...

— Ո՛չ, մայր իմ, այդ մասին կը սխալիս, Ռշտունյաց Ռստաներ շատ ավելի խնայողություն կա, քան թե հոս. Տիկինը ծեր հազարապետ մը ունի վերակացու յուր տան՝ Հուսիկ անուն. մարդ, որ եթե ագահություն բառը չլիներ աշխարհքիս վրա, կարող էր ստեղծել. ամեն ոք կը գանգտի նորա դեմ, Տիկենն ինք առաջին, բայց ի՛նչ օգուտ, նա իր ընթացքը կը շարունակե անխռով։

— Սեթա ինչպե՞ս կը համբերե այդ մարդուն, իշխանը ուրեմն...

— Ո՛չ, Սեթա ինքն այդ մարդը պաշտոնի կարգեր է, և թեպետ ամեն օր հետը կը վիճե, բայց միշտ կը պահե և կը զրուցե նաև, թե իր ամենահարկավոր մարդը Հուսիկն է։

— Կերևա, թե Սեթա ինքզինքը կը դաստիարակե,— ըսավ Թյուրեղ ծիծաղելով։— Բայց դու ինչպե՞ս ժամանակդ կ'անցնեիր, Վարդ ինչպե՞ս տեսար, ես փոքր տղա զինք ճանչցած եմ։

— Շատ լավ կորովի պատանի մի է, յուր մեծ զվարճությունը որսն է, երբեմն իրեն կ'ընկերանայի։

— Ըսել կ'ուզես, թե ակամա։

— Բնական է, մայրիկ, ես միտքս չե՛մ դրած, թե մարդս միայն լեռները չափելու համար է ստեղծյալ, մարդ ունի նաև աննյութական մաս մը՝ նյութականին հետ այն ալ պետք է հաղեցնել։

— Հիմա որ ընթրեցիր, ժամ է երթաս հանգչիս։

— Բայց, մայրիկ, քույրերս երկուքն էլ քնա՞ծ են, լա՞վ են, առո՞ղջ են։

— Երկուքն էլ լավ և հանգիստ են։

— Քեռիս՝ Կամսարականն ո՞ւր է։

— Քու Վասպուրական երթալեդ երկու-երեք օր վերջը թողուց գնաց Շիրակ, նա, գիտես, առանց քեզի չի կրնար ապրիլ։ Կ'երևի, թե Բագրևանդ իրեն համար անապատ է, երբ դու չի կաս։ Հավանական է, թե վաղը կամ մյուս օր կուգա։

— Ես էլ զինքը շատ կը սիրեմ; բայց կը փափագեի, որ զիս քիչ մը հանգիստ թողուր յուր զինամարդությամբք և քարոզությամբք, որ միշտ կ'ասիին՝ «Մամիկոնյանց և Կամսարականաց սերունդի մը այսպես կը վայելե լինիլ կամ այդպես չի վայելեր»։

— Շատ բարի, որդյակ իմ,— ըսավ մայրը ժպտելով,— կարծեմ թե երեք օր մը ազատ կրնաս լինիլ մարեզբորդ ձեռքեն, դժբախտություն մը եթե կա, հոն է, որ մարդ զքեզ ազատ պիտի չի թողու, երբ ամավան մը հեռավորությամբ այնչափ կարոտցեր է։

— Այդ դժբախտությունը դու լավ գիտես, սիրելի մայր, թե իմ երջանկությունս է։

Այս ըսելով Գրիգոր մորը ձեռքը համբույրներով կը ծածկեր, և երկուքն էլ կը պատրաստվեին ելնելու, երբ ամրոցին մեծ դռան զարկը երեք անգամ բախեց։ Գրեթե կեսգիշեր էր, մայր ու տղա իրարու երես նայեցան, և իրենց նայվածքը հարցական մի էր, թե ո՞վ կրնար լինիլ այն ժամանակ եկողը։

Նույն հարցմունքը կրկնվեցավ նաև նույն միջոցին վարը պահապանաց և զորակոչաց սենյակներուն մեջ։ Զավեն անձնապահապետը, որ կոշիկները հանած՝ նստած տեղը մրոտվելով իր մարսողությունը կը կատարեր, ցատկեց շտկվեցավ և յուր երկու խոր և փայլուն աչքերը դեպի դուռն սկսան նայիլ։ Դուրսի մեծ դռան պահապաններուն ամենքը ուշ կը դնեին՝ եկողին կամ եկողներուն հետ կը խոսեին։ Զավեն արագությամբ սուրը գլխուն վրայեն հափշտակելով դուրս ելավ և դուռը դիմեց։

— Բացե՛ք, բացե՛ք, իշխանն է, Հայոց զորավարը, Թեոդորոս Ռշտունին,— կ'ըսեր դուրսեն ձայն մը։

— Այս ժամանակ ամրոցին դուռը չի բացվիր,— կը պատասխաներ դռնապանը,— ո՛վ կ'ուզե թող լինի։ Վաղն առավոտ լույս աչքով բարի եկաք, հազար բարով։

— Տե՛, դուք հայ չե՞ք, քրիստոնյա չե՞ք, Հայոց զորավարը գիշերով դուրս կը ձգեք։

Այս վիճաբանության վրա էին, երբ Զավեն՝ դռնապանին քովն եկավ և կամաց ձայնով քանի մը խոսք զրուցեց և մթության մեջ անհետ եղավ։ Նույն միջոցին դուրսն էլ լռություն հաջորդեց։

Զավեն շրջան մը ըրավ բերդին քարամայրին մեկ կողմը, գազտնի փոքրիկ դռան մը գնաց և ամենայն զգուշությամբ բացավ. հոն պահապան մը դնելով ինք անշշունջ ելավ դուրս և իջավ վար նայելու համար, թե ի՛նչ մարդիկ էին եկողները, տեսավ քանի մը ձիավորք, որ կեցեր կը զանգտեին, թե Հայոց զորավարը անձամբ հասնելով դռները փակ պիտի գտներ, և թե այդ անծանոթը պատճառ եղած էր զիրենք ի Վարդանաբերդ բերելու։ Այս խոսքերը լսելով Զավեն առանց դանդաղելու դարձավ մտավ յուր փոքրիկ դռնեն ներս և ամուր ազիսելեն վերջ գնաց դռնապանին և հրամայեց դռները բանալ անհապաղ։

— Բարո՞վ, բարով, եղբա՛ր, ձեր գալուստը,— ըսավ Զավեն,— մի՛ զարմանաք, եթե զգուշությամբ կը շարժինք այսպիսի ժամանակ, դուք էլ մեր տեղն եթե լինիք, կարծեմ, թե այսպես պիտի շարժեիք։

— Ճշմարիտ է, եղբայր, ըսածդ, բայց մենք Հայոց զորավարին

անունը ձեզ տվինք, որ ճամփան շեղեց գիշերս հոս օթագայելու համար, և այդ՝ հրավիրանոք Կամսարական Սուրեն իշխանի մը, որ մեզի հետ ընկերացավ,— պատասխանեց զորականաց մեկը, որ ավելի նշանավորն էր իր ընկերաց մեջ, արևեն սևցած երեսովը, փայլուն աչքերովը, վզին ահագին հաստությամբը։

Ջավեն շուտ մը ներս մարդ ղրկեց իմացնելու համար Թեոդորոսի գալուստը Սուրենի հետ։ Արդեն Տիկինը և Գրիգոր պատուհաններեն մտիկ ընելով և լսելով այս խոսակցությունը, հրամայեցին սպասավորաց լուսավորել դահլիճը, երբ ձիոց խխնջյուններու և սմբակներու ձայնը, զինուց շառաչյունը և ջահերուն աղոտ լուսին փայլը անսովոր և հանկարծական կենդանություն տվին Վարդանաբերդի գավթին կեսգիշերուն լռության մեջ։

Պալատին ներքին դուռը բացվեցավ, սպասավորք ջահեր ձեռվնին և Գրիգոր առջևեն իջան հյուրերը դիմավորելու, և ահա ինքն Հայոց զորավարը և քովեն Սուրեն Կամսարական սանդուխներեն վեր կ'ելնեին։

— Որդյակ Գրիգոր, բարի է գալուստդ,— ըսավ Սուրեն և պատանին համբուրեց,— քեզ այս երեկո տեսնելու հույս չունեի։ Ահա այս գիշեր ձեզ երևելի հյուր մը բերի, տեսնենք ի՞նչ ընդունելություն պիտի ընես։

— Ուշտունյաց Տերը մեր փոքրկությունը կը պատվե, ինքն է տանտերը, ինքն, որ հույս և ապավեն է բոլոր հայ ազգին։

— Հույս և ապավեն աստված ինքն է միայն, որդյակ իշխանազուն,— ըսավ Թեոդորոս իր խոր և մեծ հայեցվածքը պատանվույն վրա դարձնելով։

Այսպես մտան մինչև մեծ դահլիճը այս երեք անձինք հետևյալ քանի մը սպասավորաց և թիկնապահաց, ուր վառարանը արդեն փայտերու բոցով կը ճարճատեր և կանթեղներու լույսը կը զորացներ։ Այդ աշնան ժամանակին գիշերները բավականին զգալի և ցուրտ են Հայաստանի այդ կողմերը, և Թեոդորոս ախորժ աչք նայեցավ այդ բոցույն և մոտեցավ վայրկյան մը վառարանին։

Իսկ երբ Հայոց զորավարը թողուց վառարանը և դարձավ՝ Սուրեն ու Գրիգոր անհետացած էին. յուր թիկնապահաց ակնարկ մը ձգեց, և ահա մեկը հառաջացավ՝ սաղավարտն առավ գլխեն, և յուր նշանավոր գլուխը երևցավ։ Թեոդորոս՝ Ուշտունյաց Տերը միջահասակ և հազիվ թե հիսուն տարու մարդ մը կ'երևար այն ատեն. յուր լայն ճակատը, յուր հոնքերու զորեղ կամարը, յուր ծանր և անխռով նայվածքը, յուր արծվի քիթը, յուր լայն կուրծքը, յուր բոլոր կերպարանաց հզոր համեմատությունը, ավելցնենք ասոնց վրա յուր հակիրճ և վճռական խոսակցությունը՝ առաջին ակնարկին հայտնի կ'ընեին նշանավոր մարդը, որ հրամայելու համար ստեղծված էր։

Նոքա, որ կճանչեին զինքը, գիտեին յուր արդարության ոգին, գիտեին յուր քաջասրտությունը, գիտեին յուր անդրդվելի հաստատամտությունը, յուր հայրենի կրոնից հավատարմությունը, և որ հազվագյուտն էր՝ մեծ ու պզտի նախարարաց մեջ գիտեին ժողովրդյան վրա, անազատ և շինական ժողովրդյան վրա յուր ունեցած գութը, որ միայն ճշմարիտ հայրենասիրություն կրնա համարվիլ։ Շատ անգամ, երբ բարձակից նախարարաց հետ կը խոսեր, կը հիշեցներ, թե իրենց պարտավորությունը ժողովրդաց հայր և պաշտպան լինիլն էր և ոչ հարստահարել, թե աստված համար պիտի պահանջեր այն անիրավությանց, որ հավասար օտարին՝ կը գործադրեին զանազան գավառներու մեջ։ Եվ իշխանք, որ զաստված շատ հեռու կը գտնեին իրենց անզգամությանց սանձ դնելու համար, Թեոդորոսի երկյուղեն արդարությամբ կը կառավարեին իրենց վիճակը։ Ճշմարիտ հայրենասիրություն, որ ոչ զազգը շողոքորթելու և ոչ նախատելու մեջն է՝ կ'զգար յուր արդար սիրտը և ուղիղ խորհրդածությունը. ինք կը տեսներ և լավ կը հասկնար, թե հայ ազգին թշվառության պատճառն զորավոր ազգային կառավարություն մը չլինելեն և նախարարաց անկոպար իշխանութենեն առաջ կուգար, որով երկրին մեջ կատարյալ անիշխանություն և փոքրիկ բռնավորներ կը տիրեին, ստրուկք և խաղալիք օտարին։ Եթե ինք, որ հանճարի մարդ էր, կը ջանար համոզել նախարարաց երևելիքը միանալ, դաշնակցություն մը կազմել՝ օտարին բռնութենեն ազատելու հայրենիքը և արդարությունը թագավորեցնելու համար, կային այնպիսի թուլամորթ կամ չարակամ կամ կարճատես մարդիկ, որ փախուստ կուտային այդ միաբանության կապեն, երկրին տարածությունը, լեռներու անջրպետքը ցցնելով, որոնց Թեոդորոս կը հարցներ իրավամբ, թե «ինչպե՞ս ուրեմն այդ ընդարձակ տարածության մեջ՝ այդ լեռներու բարձրութենեն հայ կրոնք և հայ լեզու կրցեր էր ճամփա գտնել և միացնել այդ ժողովուրդները հայ ազգությունը կազմելու համար»։ Այդ մարդը որ աչքերը տնկած Սասանյանց հզոր գահույից անկումը գուշակած էր, վասնզի ապականությունը և փտությունը տեսած էր, թե ի՞նչ աստիճանի հասած էին հոն Տիզբոնի մայրաքաղաքին մեջ, այդ մարդը, որ նույնպես Կոստանդնուպոլիս նույն տեսարանը նկատած էր Բյուզանդական խարդախ և թունալից կառավարության մեջ, և հիմա կը տեսներ Արաբիո անապատներեն վայրենի և բարբարոս կրոնամոլ ամբոխ մը, որ հազիվ թե լսելի եղած աշխարհքիս՝ իբրև հրաբուխի բորբոքյալ գետ մը կը դիմեր, կը հասներ, կը տոչորեր հաջորդաբար Դամասկոս, Եփես, Երուսաղեմ, Հալեպ, Անտիոք, Մեմ-

փիս, Աղեքսանդրիա, Տիգրոն, որ ոչինչ չէր խնայեր, ոչ հասակ, ոչ սեռ, ոչ ալիք, ոչ սրբություն և ոչ կրոն, և որ սոսկալին է, կը տեսներ այդ հրեղեն գեսը հասած դիզված Հայաստանի սահմանագլուխը սպառնալից. դառնացյալ կը մտածեր և իր բոլոր միտքն ու ջանքը հոն էր, որ այս պատուհասը հեռացնե յուր հայրենեաց վրայեն։ Եվ այս վիճակին դարման տանելու համար Հունաց Սպարապետը գնացեր տեսեր էր Կաթին և համոզեր էր զինքը ամենայն քաղցրությամբ՝ զորավոր փաստերով և ազգային ահագին վտանգներն առաջ դնելով, թե պետք էր շարժիլ և շարժիլ ամեն զորություն։ Եվ ինք անգործ չի մնալով կը շրջեր գավառեգավառ՝ կը հորդորեր զամենքը և կը զորացներ հայկական գունդը։

Այս պատճառավ անցեր էր նաև Շիրակա, որ այն ժամանակներ Կամսարականաց կը պատկաներ, և ուր Սուրեն իրեն ընկերացյալ զորաց մեծ մասը վարդանակերտ թողլով՝ փոքր խումբով Վարդանաբերդ եկած էր Կամսարական իշխանին թախանձանոք, որպեսզի ավելի հանգիստ ընե։

Հաղիվ թե տաղավարտը թողեր էր Թեոդորոս՝ կապոց մը գիշերային զգեստներ բերին ապասավորք, և Հայոց զորավարը բոլորովին սպառազինությունը թողած առավ սամուրը վրան և երբ կ'ուզեր տարածվիլ բազմոցին վրա հանգչելու համար, ներս մտավ Սուրեն քրոջը հետ միասին։ Մամիկոնյան Տիկինը կուգար համառոտ և ազնիվ խոսքերով բարի գալուստ մաղթելու Հայոց զորավարին։ Թեոդորոս քաղաքավար և քաղցր շնորհակալություն հայտնեց իրեն եղած հյուրընկալության, մանավանդ որ ինք միշտ կը գիշեր, թե ինչ սերտ բարեկամություն կը կապեր Մամիկոնյան Տիկինը յուր գնոջ հետ։

— Ես շատ ուրախ եմ, Տեր,— պատասխանեց Տիկինը,— որ Գրիգոր այս վայրկյանիս դառնալով Ռշտունյաց Ոստանեն, ինձ բարի լուրեր տվավ ձեր Տիկնոջն զավակաց վրա։

— Ամ՞ր կուգաս Ոստանեն, որդյակ Գրիգոր, և ամենը ո՞ղջ, առո՞ղջ էին։

— Այո, Տեր,— պատասխանեց Գրիգոր։

— Երկիրն ի՞նչ վիճակի մեջ տեսար, որդյակ։

— Օրջանիկ այնքան, որքան ոչ մի տեղ Հայաստանի մեջ։

— Ինչպես Կոգովիտի գավառը։ Երկու-երեք անգամ այս տարվան մեջ անցա այս տեղաց. և միշտ, ինչպես սովորություն է, գեղերը գիշերեցի. ամեն տեղ տեսա երջանկություն. և Մամիկոնյանց Տիկնոջ գովություն և օրհնություն լսեցի այդ բարի և պատվական շինականաց բերանեն։ Քիչ-քիչ ինձ համոզմունք կը դառնա, թե մենք երջանիկ ընելու

համար ժողովուրդը կանանց պետք է հանձնենք երկրին կառավարությունը և միայն պատերազմով զբաղինք, միայն եթե այն ևս կարենանինք հաջողությամբ ի գլուխ հանել։

Եվ այս վերջի խոսքերն այնպիսի տխուր եղանակով մը զրուցվեցան, որ Սուրեն անգամ սկսավ մտածել, թե ինչ պատասխան պետք էր տալ։ Բարեբախտաբար երկու սպասավորք փայլուն պղնձե սեղան մը բերին արծաթյա սկավառակներով բեռնավորյալ, որ զանազան համադամք կը պարունակեին։

Տիկինը քաշվեցավ գնաց յուր սենյակները, Սուրեն միայն սեղանակից եղավ իշխանին, որ սակավապետ և չափավոր ընթրիքը շուտով վերջացուց և, բարի գիշեր մաղթելով Սուրենի և Գրիգորի իրեն պատրաստված անկողինը մտավ զբաղած երկրին պաշտպանության խորհրդով՝ մինչև որ քունը հասավ մտքին և մարմնուն հանգիստ տալու համար։ Նույն վիճակին մեջ էր նաև Գրիգոր, բայց յուր միտքը երկրի պաշտպանությամբ չէր զբաղեր, այլ Ռշտունյաց Օրիորդին քաղցր պատկերը զինք կը հուզեր։

ԳԼՈՒԽ Բ

Սուրեն Կամսարական քառասնամյա անձ մ'էր, թիկնավետ, հաջողակ կենքերու մեջ, կորովի ձեռոք և մտոք ինք. Կամսարական զարմին ամենեն փոքր եղբայր լինելով և անզավակ, և յուր կինը կորսնցնելով, որ շատ կը սիրեր, գրեթե թողած էր հայրենի տունը Շիրակ և յուր քրոջ՝ Բյուրեղի վրա մեծ սեր ունենալով նրա հետ կը բնակվեր Կոգովիտ։ Բայց քանի որ Գրիգոր կը մեծնար, յուր՝ Գրիգորի վրա սերն էլ օրավուր կը մեծնար։ Գրիգոր հանգարտ և խելոք էր բնավորությամբ, յուր հորը՝ Դավիթ Մամիկոնեի պես, որ տկար և հիվանդոտ լինելով չուներ հայ նախարարաց այդ ընդհանուր եղած զվարճությանց, որսի, պատերազմի, մականախաղի, պերճության և անառակության սերը, այլ, ընդհակառակն, յուր մտավոր կարողությունքը մշակելով՝ ուսմանց և գիտությանց սեր ուներ։ Նա նույնը յուր զավկին հաղորդեր էր։ Վարդանաբերդ հայերեն և հունարեն գրոց հարուստ մատենադարան մը ուներ, և Մամիկոնյան իշխանին միմիայն ուրախություն էր և մխիթարություն տեսնել յուր Գրիգորը վարժ և հաջողամիտ՝ ժամանակին գիտությանց մեջ տարբքեն հառաջադեմ։ Յուր պալատը միշտ լեցուն էր գիտնական վարդապետներով՝ և աշխարհահռչակ ճամփորդներով։ Ի Գրիգոր ուշիուշով մտիկ կ'ըներ ամեն խոսակցություն, որ նոր էին իրեն համար և միտքը կը

զորացնեին։ Թեպետ ծնողքը գոհ էին իրենց զավկին մտավոր զարգացմանեն, բայց նույնը կարելի չէր զրուցել Սուրենի համար, որ երբ Դավիթ հոն չէր, կը մտներ Գրիգորի սենյակը և, հափշտակելով գրքերն առջևեն, «Մամիկոնյան պատանվո մը համար շատ է և բավական ինչ որ գիտես, քիչ մ'էլ ուրիշ մարզերու նայինք» ըսելով՝ սուսերամարտության, նիզակախաղության և ձիամարզության կրկնություններու կ'զբաղեցներ, առանց ուշ դնելու յուր քրոջ դիտողությանց. շատ անգամ որսի տանելով հետը լեռներ, սարեր, ձորեր հետի կը քալցներ, և երեկոյին, երբ Գրիգոր հոգնած, դադրած, տուն կը դառնար գրեթե անկարող շարժվելու, ինք Սուրեն առաջինն էր նրա ծնողաց ըսելու, թե «Ահա այսպես Վարդաններ և Վահաններ կը զարգանան և կը հասնին, և ոչ գրքերու առաջ ժամեր անցնելով»։ Իսկ Դավիթ, որ կը տեսներ, թե տղան օրավուր կը զորանար այդ մարմնամարզութենեն՝ ժպտելով կ'ըսեր. Սուրեն և ես առանձին կատարյալ մարդ չենք, ես կարող միտք միայն եմ, նա կարող մարմին միայն է. աստված տա, որ Գրիգոր երկուքն էլ ունենա։

Սուրեն զորավոր կազմվածքի տեր և անխոով միտք, վասնզի ներկան՝ օրը և ժամը միայն կը մտածեր սովորաբար, որ ոչ Թեոդորոսի պես ազգին չափազանց սիրահարն էր, և ոչ Գրիգորի պես՝ Ռշտունյաց Օրիորդին, անկողին և քուն մտավ միանգամայն, և երբ արշալույսին հետ արթնացավ, դիմեց դահլիճը, տեսավ, որ Թեոդորոս արդեն չի կար։ Սպասավոր մը թուղթ մը տվավ իրեն, որ չի լուսցած՝ սուրհանդակ մը բերած էր Թեոդորոսի, և որովհետև հրաման էր ո՛ր ժամանակ լիներ ամեն լուր իրեն հաղորդել բոպեին, թիկնապահքը մտեր էին սենյակը և տվեր էին թուղթը. Թեոդորոս շուտ մը սպառազինյալ հեծեր էր երթալու և Սուրենի սպասավորաց մեկուն տալով իր ընդունած թուղթը, մեկներ էր։ Սուրեն կարդաց այդ համառոտ նամակը.— Ատոմ Շահունի առ Թեոդորոս Ռշտունի. «Գիտություն լիցի, Հայոց զորավար, որ հունաց բանակը կը մտնե մեկ կողմե, իսկ արաբը երկու գունդ բաժնված, մեկը Երասխ անցեր է ի Նախջվան, մյուս Արտազ մտեր է»։

Վայրկյան մը մտածեց Սուրեն և գնաց զգեստները հագավ. երբ Գրիգորի սենյակը ուղղվեցավ, տեսավ քույրը, որ զինքը դիմավորեց և, քաղցր ժպտով երկու ձեռները տարածելով, թող չի տալով, որ առաջ անցնի՝

— Ո՛չ,— ըսավ,— Գրիգորը թող որ հանգչի։

— Բայց դու չես գիտեր, որ Թեոդորոս գնացեր է արդեն։

— Ինչպե՞ս չեմ գիտեր, ես տեսա նորա երթալը. բայց իմ զավակս Հայոց զորավար չէ, պետք է որ հանգչի՝ քուն լինի և այս տարիքին մեջ զորանա։

— Ահա՛ կանանց ամենեն լա՛վը,— գոչեց Սուրեն.— եթե ձեզի թողվի այդ տղան ճգնավոր, վարդապետ, շատ-շատ թուլամորթ կաթողիկոս մը պիտի ընեիք... Գիտե՞ս ի՞նչ ժամանակի մեջ ենք, գիտե՞ս, թե վաղը ի՞նչ կրնա հասնիլ գլուխնիս, ո՛չ, դու միայն այն կը մտածես, թե Գրիգոր աչքեդ չի հեռանա, անհանգիստ չլինի, յուր ամեն կամքը կատարվի։ Բայց ես կը մտածեմ, որ Գրիգոր իր խելքով, իր գիտությամբ ոչ միայն Վարդանաբերդ նստի, Կոգովիտ և Բագրևանդ կառավարե մորը պես և մորը պես գոհ ընե այդչափով զամենքը, նաև՝ Թեոդորոս Ռշտունին, այլ ես կ'ուզեմ, որ լինի ավելի քան այս Ռշտունյաց Տերը թե հոգվով և թե մարմնով. ես կ'ուզեմ...

— Գիտեմ քու ամեն զրուցելիքներդ, շատ իրավունք ունիս, բայց դու այնչափ բարձր կը խոսիս, որ Գրիգոր կրնա զարթնուլ, ե՛կ, իմ սիրելի եղբայրս, և ինչ որ պիտի խոսիս իմ սենյակս խոսե։

Այս ըսելով այդ գեղեցիկ կինը առավ քաղցր բռնությամբ եղբորը ձեռքը և տարավ սենյակը նստեցուց. դիմացը կանգնելով և ձեռքերը կուրծքին վրա ծալլելով։

— Հիմա հոս զրուցե՛, ինչ որ կ'ուզես, բոլոր ուշս քեզի է,— ըսավ ժպիտը միշտ շրթունքներուն վրա։

— Ժպտելու ժամանակ չէ, քույրիկ,— պատասխանեց Սուրեն ձեռքի թուղթը ցցնելով և կարդալով նամակին վերջի խոսքերը։

— Եթե հունաց բանակը Բագրևանդ կը մտնե, կը նշանակե, թե մեր պաշտպանության կը դիմե. եթե Թեոդորոս կը շտապե և կանուխ կը վազե կ'երթա, կը նշանակե, թե Նախջվանա կողմը մեր պաշտպանության կը դիմե. և այս բանիս համար պետք է որ ժպտի՞ն էլ արգիլվի։

— Ահա՛ կանանց ամենեն լավը,— կրկնեց Սուրեն։— Այդ խոսքերով կարծեցիր, թե ինձ պատասխա՞ն տվիր։ Այսպիսի վիճակի մեջ բավակա՞ն է ըսել, թե Թեոդորոս գնաց արաբաց դեմ, և մենք պետք է ոտքերնիս, ձեռքերնիս տարածենք անհոգ, անպիտան, դանդաղ նստինք։ Այդ մարդը՝ այդ Թեոդորոս, երբ «այդ թուղթը Սուրենի տվեք» կըսե, այն կիմանա, որ Սուրեն պետք է շարժի, առնու Մամիկոնյանց զավակը և դիմե հոն, ուր արաբը կարշավե, թումբ լինելու համար այդ սոսկալի թշնամվույն դեմ, որուն առաջ ոչ բավական ամրություն կա և ոչ նվիրական բան մը աշխարհքիս վրա։

— Բայց այդ Մամիկոնյանց շառավիղը դեռ տասնյոթ տարու պատանի մի է, հոգնած՝ նոր ճամփե եկեր է, կեսգիշերն անցած հազիվ անկողին մտեր է, յուր տարիքին մեջ օրենք չէ, որ այդ կատաղի գազանաց դեմ հոգին և մարմինը վտանգի դնե և յուր հոր տան ծուխը մարե։

— Շատ կ'ուզեի, որ այս խոսքերը Թեոդորոսի անգամ մը զրուցեիր...

— Ի՞նչ գաղտնիք կամ ամոթ կա այս խոսքերուս մեջ, որ չի կարենայի զրուցել. կարծեմ Վարդ երեկ իրիկուն հորը հետ մենակեղ չէր և չեմ կարծեր, թե վարը զորականաց հետ ընթրեց, և հայրը բռնի մորը գրկեն առավ որդին արաբաց դեմ պատերազմելու կամ թումբ շինելու համար։

Այս խոսքերուն երբ Սուրեն սրտնեղությամբ բերանը բացավ պատասխանելու, Բյուրեղ առանց ժամանակ տալու՝ «Ահա՜ կանանց ամենեն լավը»,— գոչեց ծիծաղելով և նույն բոպեին փոքրիկ ոտնաձայն մը լսելով սենյակին մեջ ետին դարձավ և գեղեցիկ վեց տարեկան աղջիկ մը Սուրենի գիրկը դրավ. իսկ Սուրեն այդ սիրուն տղեկը գրկին մեջ սղմելով և համբույրներով ծածկելով՝

— Սիրո՜ւն, աննման Արփենի,— կ'ըսեր,— ահա՜ կանանց ամենեն լավը դու ես, երբ մեծնաս, սա մայրիկեդ ավելի խելոք պիտի լինիս, ջանաս, որ քու զավկներդ թուլամորթ, հույլ դանդաղ չլինին...

— Ո՜չ, ո՜չ, այսպիսի զրպարտություն զավկիս համար չեմ ընդունիր,— և դռան մեջ տեսնելով որդին,— լավ ժամանակին կը հասնիս, Գրիգոր, քեռվույդ պատասխան տուր և հասկցու իրեն, թե ոչ թուլամորթ, ոչ հույլ և ոչ դանդաղ ես։

— Իմ փափագս ալ այն է, որ ինձ իմացնե Գրիգոր, թե ինք ըսածներուս բոլորովին հակառակ ժիր, գործունյա, եռանդուն է և գիտե ժամանակին առնուլ յուր զենքերը, ազգի, կրոնքի և հայրենի իրավանց վրա պատերազմիլ։

— Եթե դոքա վտանգի մեջ են՝ ո՞ր մարդ կրնա առանց վատության դրշմը ճակտին կրելու փախուստ տալ այդ պարտավորություններեն,— ըսավ Գրիգոր ծանրությամբ և, առաջ անցնելով, առավ յուր գիրկը Արփենին, որ յուր փափկաթույր թևերը եղբոր վզին փաթաթելով, ուրախության համբույրներով և տարիքին հարմար խոսքերով կը պատասխաներ այս գրկախառնության։

Իսկ Բյուրեղ անգամ մը այդ տեսարանին լռելյայն աչք ձգելեն վերջ՝ լռելյայն դուրս ելավ, որպեսզի ոչ եղբայրը և ոչ զավկները տեսնեն յուր արտասուքը։

Կաթիլ մը արտասուք շատ անգամ այնչափ գաղտնիք կը պարունակե, որ հանձնապաստան և հիմար մարդ մը ոչ կ'զգա և ոչ կ'ըրնա իմանալ, իսկ խոհուն մարդուն համար մտածության նյութ մ'է։ Այդ կինը՝ երիտասարդ, գեղեցիկ, քաղցր, զգայուն, որ իր եղբոր հետ ոտն առ ոտն կը կռվեր և կ'ուզեր հեռացնել ամեն վտանգ որդվույն գլխեն, ոչ միայն պաշտպան, հույս, ժառանգ անձին, զավկներուն և երկրին կը տեսներ

այդ տղուն վրա, այլ նաև յուր հոր կենդանի հիշատակն էր իր աչքին, անցյալ երջանիկ օրերու, որ չեն դառնար, երբ անգամ մը սրանան հեռանան, և մարդս իր երևակայության մեջ անոնք կ'ուզե բերել, դաքձնել, մեռածը կենդանացնել. այդ արտասուքը այդ փափագներուն վկաներն էին։ Իսկ Սուրեն, որ սուր աչք ուներ, բայց մեկ մասը միայն կը տեսներ այդ արտասվաց, կրկնեց ինքնիրեն ինչ որ սովոր էր զրուցել յուր քրոջ համար. ահա՜ կանանց ամենեն լավը։

Նույն միջոցին Գրիգորի մյուս քույրն էլ Նազենիկ եկավ, եղբորը հետ գրկվեցավ. գրեթե հասած աղջիկ մը՝ գեղեցիկ, գողտր, դեզձան մազերով, նվաղյալ աչքերով՝ քաղցր տխրություն մը երեսին վրա տարածյալ։ Հաճելի էր տեսնել պատանին, որ դեռ երիտասարդության չէր հասած և հոր մը ժպիտով կը նայեր յուր քերց վրա և կը գուրգուրար։

Ընտանիքն ամենքը միաբան իջան նախաճաշն ընելու, Սուրեն լուռ էր, վասնզի չէր ուզեր յուր քույրը տխրեցնել. Գրիգոր երբեմն կը խոսեր, բայց Արփենին միշտ նյութ կը գտներ խոսելու և հարցնելու։ Սեղանատունեն վար կերևար գեղեցիկ փոքրիկ լիճը արծաթի սկավառակի մը պես, մակույկ մը լճակը կապված իբր թե կը հրավիրեր պտույտ ընելու ծառազարդ և ծաղկազարդ ափանց վրա. բայց ոչ ոք այդ մտածությունը չուներ. Սուրեն առաջինն ելավ սեղանեն՝ նույնպես ամենքը, և Արփենի ամենեն վերջ, միայն նա էր, որ չէր զգար, թե սպառնալից փոթորիկ կար օդին մեջ։

Խեղճ մայր, գիտեր, որ զավակն իրմե պիտի բաժանվեր, և այս անգամ ինք չէր, որ կ'ուղարկեր, այլ ստիպող հարկը՝ մահահոտ պատերազմի շտինդն էր, որ իր գրկեն կը կորզեր իր միմիայն հույսը։ Ուսաի կորագլուխ անձայն զոհի պես տեսավ նորա սպառազինելը, այլևս արտասուք չի կար աչքերը, վասնզի սիրտն էր, որ կուլար, և երբ սանդուխին դուռն որդվույն ձեռքերն և երեսները համբուրեց և ինք աչքերը գոց երկայն գրկախառնություն մ'ըրավ, մեկը չէր կրնար որոշել ազո՞թք էր, թե գրկախառնություն։

Քանի չափ հեծյալ սպառազենք Գրիգորի կ'սպասեին, երբ նա էլ հեծավ և առանց գլուխը դարձնելու ելավ բերդին դռնեն դուրս Սուրենի ետևեն։

— Ջավե՜ն, Ջավե՜ն,— կանչեց ներդաշնակ ձայն մը վերեն։

Մեղ ծանոթ անձնապահապետը դարձյալ մտավ և, տեսնելով թե Տիկինը չի խոսիր, իջավ ձիեն, ելավ սանդուխներեն վեր։

— Ջավե՜ն, քեզի նեղություն տվի, բայց մոր մը տկար սրտին ներե. ավելորդ է քեզի հանձնել, բայց խնդրեմ հսկե զավկիս վրա,— ըսավ Տիկինը։

— Ո՜հ, իշխանուհի, առանց իշխանիկին հավտա՛, թե Զավեն աչացդ չերևար։

— Աստված հետերնիդ լինի...— կրցավ միայն զրուցել խեղճ կինը և գլուխը դարձուց դեպի դուռը. էլ չէր կարող։ Շտկվեցավ դեպի եկեղեցին և հոն յուր վիրալից մայրենի սիրտը տարածեց ստեղծողին՝ միմիայն մխիթարիչ ցավերու։

Ծեր զինվորը մոր մը այս կերպարանքին չի կրցավ դիմանալ. գլուխը շարժելով, աչքերը սրբելով հեծավ և մտրակեց և փոշվո ամպի մեջ անհետացավ և հասավ խումբին, որ լռությամբ իր ընթացքը կը շարունակեր, մինչև հասավ Վարդանակերտ։

Սուրեն, որ մինչև այն ժամանակ բերանը չէր բացած, ցցուց հեռվանց Գրիգորի ծեր զորավար մը, որ ավանին հողապատնեշներուն դուռը կեցած զիրենք կը դիտեր. «Տե՛ս,— ըսավ,— սա ծերը Թեոդորոսի տեղապահ և մեծ բարեկամն է. սա է Ատոմ Շահունի, երկյուղ երբեք չէ գիտցել թե ի՞նչ է, մահն արհամարհել իրեն բնություն է դարձել, հիմա որ վաթսունն անց է, պատերազմի մեջ երիտասարդե լավ կը կռվի, կարող է խարդախության մը, սուտի մը համար իր զավակն սպաննել. կարծեմ թե յուր ծիծաղը ոչ ոք տեսած չէ, երբ մոտենանք և զինքը դաժան տեսնես, մի՛ զարմանար, բացի Թեոդորոսե ոչ ոք համարմունքի արժանի չի սեպեր, և շնորհք է եթե չարհամարհեր»։

Եվ իրոք, երբ մոտեցան, ծեր զորավարը հազիվ թե ընքվիների թեթև շարժմունքով բարև մը առավ, յուր արձանի դիրքը ամենևին չի փոխեց։ Իսկ Սուրեն, որպեսզի կարենա զինք խոսեցնել, նույն Ատոմի առ Թեոդորոս գրած թղթիկը ցույց տալով, հարցուց, թե ո՞ւր էր Հայոց զորավարը։

— Այս նամակն ո՞վ քեզ տվավ, Կամսարական,— ըսավ դաժան ծերը։

— Այս առավոտ ինձ տվին իշխանին կողմեն։

— Դուք քնած էիք, երբ նա հոս էր,— զրուցեց ծերը խստությամբ, և իբրև թե ինքնիրեն խոսելով,— այս է ահա մեր իշխանաց և իշխանազանց սովորությունը, ամենեն լավերը քուն կը լինին, երբ գործելու ժամանակ է, իսկ վատերը մեծ շնորհք կ'ընեն, եթե մատնիչ չլինին և թշնամվույն չառաջնորդեն։

— Կարելի՞ է, Ատոմ իշխան, մեզ իմացնես, թե որո՞նք են թշնամվույն առաջնորդողք։

Այս խոսքին ծերը պատասխան նաև չի տալով՝

— Հայոց զորավարը, որ այս թուղթը քեզի թողեր է, ըսել կ'ուզե, որ երթաս զինքը հունաց բանակը գտնես, տե՛, գնա՛, մի՛ դանդաղիր. տե՛ս, ինձ էլ պատվիրեց զորքը պատրաստի ունենալ,— ըսավ և ձեռքով ցցուց զորքը, որ պատրաստ զենքի վրա կանգնած կ'սպասեին։

Եվ այս խոսքերը զրուցելով՝ կռնակը դարձուց բոլորովին։

Իսկ Սուրեն առանց խոսելու հեծավ ձին և սկսավ շարունակել յուր ճամփան, երևակայելով, թե տեղեկություն հարցնել հունաց բանակին համար այդ քաղցր ծերուն ավելորդ և չափազանց հետաքրքրություն պիտի թվեր և մեծ հանդիմանության առիթ, իր ծիծաղը սանձելով կ'շտապեր առաջ անցնելու։ Իսկ Գրիգոր, երբ հազիվ քիչ մը հեռացան, քրքիջ բարձրացնելով հետևեցավ քեռվույն մինչև մոտեցան Վաղարշակերտի, և հունաց բանակը երևցավ։

ԳԼՈՒԽ Գ

Մեր Կամսարականն և քեռորդին մտան հունաց բանակը, որ Վաղարշակերտի շուրջը տարածվեր էր։ Հռոմեական անունը թեպետ կը պահեին Բյուզանդիո կայսերք, և արտաքին փայլը դեռ կ'երևար, բայց ամեն բան և զինվորության ամեն կարգ, կանոն թուլցած, ավրված էր, հռոմեական արծիվն էր, որ լեգեոններուն գլուխը թևերը կը տարածեր, բայց թշնամվույն առաջին դիմադրության և հարվածին կը սլանար ի փախուստ, և այդ լեգեոնները միշտ մեծ քաջություն ցույց կուտային ներքին խռովություններ հանելու, քան թե թշնամվույն դեմ պատերազմելու։

Եթե զինվորին քով վատություն և անկարգություն սովորական էին դարձած, զորավարները նաև շատ անգամ շնորհուկով անվանյալ և ոչ արժանավորությամբ՝ գոռոզ հանձնապաստան և անարգ պալատական՝ հրամայել միայն գիտեին խաղաղության ժամանակ, քան թե առաջնորդել պատերազմի մեջ։ Այսպիսի անձ մի էր Պրոկոպիոս, որ այս հռոմեական անվանյալ բանակին Սպարապետն էր, և որ Թեոդորոսի թախանձանոք և հորդորանոք հազիվ կրցեր էր շարժիլ և հասնիլ Կարնո ի Բագրևանդ ամենայն դանդաղությամբ։

Ուստի Սուրեն և Գրիգոր երբ մտան բանակը, ուղղվեցան Սպարապետին վրանը, որու դռան առաջ շարված կանգնած էին հայ զորավարին թիկնապահները։ Երբ Սուրեն ուզեց անցնիլ, հույն արարողապետը իմացուց, թե արգելք կար ներս մտնելու, թեպետ ձայները բարձր և զայրագին կը լսվեին։

Թեոդորոս փորձ պատերազմող՝ առաջին ակնարկին տեսավ, որ այդ բանակը թեև բազմաթիվ, բայց օգուտ չուներ երկրին յուր անշարժության մեջ, երբ թշնամի մը կար յուր առջև հանդուգն և կատաղի, որ

մինչև այն օր հաջողեր էր յուր ամեն արշավանաց մեջ, և այդ հաջողության համար հանձնապատան այնչափ, որ կը համարձակեր թշնամի մեծ բանակի մը առջև երկուքի բաժնել յուր զորությունը։ Ուստի հրդորեց զՊրոկոպ արագ հարձակմամբ հասնիլ Արտազ, խորտակել արաբաց մեծ գունդը և մյուսին, որ անցել էր Երասխը, նահանջի ճամփան արգիլել և բնաջինջ ընել։ Այս պարզ առաջարկության հունաց զորավարը գոռոզությամբ պատասխանեց.

— Ես կայսերական բանակին մեծ Սպարապետ՝ ունիցե մարդու և մանավանդ հայ իշխանի մը խրատուն կարոտություն չունիմ, քու պարտքդ ինձ հնազանդիլ է և ոչ խորհուրդ տալ։ Իսկ քու երկրիդ կորուստը, ավերը, գերությունը իմ ամենևին հոգս չէ։

— Կիմանամ, թե այդ խոսքերուն մեջ կան այնպիսի ծանր բառեր, որոնց հիմա պատասխանել հարկ չեմ համարիր։ Բայց որովհետև ես պաշտոն ունիմ կայսրեն այս երկիրը կառավարելու և սորա փրկության հսկելու և կը տեսնեմ վտանգը, որ թե երկրին կ'սպառնա և թե այս բանակին, կը խնդրեմ իմ խորհուրդներս, եթե արհամարհելի թվին, գոնե այնպիսի թշնամի մը չարհամարհես, որ քիչ ժամանակի մեջ և մեր աչաց առջև ոչ միայն Ասորիք, Եգիպտոս հափշտակեց ի կայսրե, այլ դեռ երեկ, մեկ ահագին հարվածով, պարսից ինքնակալությունը հիմնիվեր տապալեց։

— Ձիս կայսրը հոս չուղարկեց քեզմե ուսնելու համար ոչ թշնամվույն արարքը և ոչ իմ պարտավորությունքս, պետք է գիտնաս, թե շատ համբեքեցի մինչև հիմա այդ քու շաղակրատությանդ, ուստի լռե՛ և դուրս ել առջևես։

— Կայսեր հրամանները և իր սպարապետները գիտեմ հարգել,— ըսավ Թեոդորոս ոտք ելնելով և սանձելով սրտմտությունը,— բայց գիտեմ և տեսեր եմ նաև այնպիսիներ, որ տան մեջ գիտեն հրամայել իրենց չափեն վեր և որոտալ, և պատերազմի ասպարեզին մեջ՝ թշնամվույն առաջ վատանալ և փախչիլ։ Կը փափագիմ, Հունաց զորավար, որ այս վերջի բախտին չի փափագիս։

Եվ երբ այս խոսքերն ըսելով դուրս կ'ելներ վրանեն, Պրոկոպիոս կատաղությամբ ետևեն կը նետեր սպարապետական գավազանը, հայհոյանք և նախատինք ժայթքելով հայ իշխանին, որ առանց գլուխը նաև գարձնելու, հայկական խումբին, որ իրեն կսպասեր, «Երթանք, տղա՛ք, Իսմայելի որդվոց դեմ»,— ըսավ, և ամենքը հեծնելով շտապավ հասան Վարդանակերտ։ Բոլոր ճամփուն երկայնության մեջ ոչ ոք համարձակեցավ և ոչ Սուրեն խոսք մը խոսիլ Թեոդորոսի հետ։

Թեպետ գիշերը վրա հասած՝ բայց անխոնջ զորավարը քաշեց յուր

փոքրիկ բանակը Սարյակ ըսված բլուրներուն վրա և հոն՝ այն կիրճերուն բերանը դարանամուտ կ'սպասեր թշնամվույն, աշնան գիշերներ ցուրտ էին այդ սարերուն բարձրության վրա, բայց ո՞վ կը համարձակեր գանգտիլ, երբ ինք՝ Թեոդորոս առանց կրակի գիշերը կ'անցներ, որպեսզի յուր ներկայությունն իմաց չի տա թշնամվույն։ Հոն երեք օր, երեք գիշեր կեցած կսպասեր ոչ միայն թշնամվույն գալուն, այլ նաև կ'սպասեր Հունաց Սպարապետին փրկարար մեկ շարժման, որ եթե հառաջանար և դիրքը փոխեր, թերևս թշնամին կարենար հարվածել։ Բայց թշնամին երևցավ, և հույնք իրենց անշարժության մեջ մնացին։

Թեպետ այս նոր թշնամվույն անունը մեծ իրեն կրոնամոլ կատաղության առջև մինչև այնօր ամեն դիմադրություն խորտակվեր էր, բայց Ուշտունյաց իշխանն անսասան կուզեր չափը առնուլ նորա զորության։ Ուստի երբ թշնամին գրոհ տվավ կիրճին մեջ անկասկած, արդեն բաժնված հայ խումբը կիրճին երկու բարձանց վրային սոսկալի նետաձգությամբ զինք շփոթեց, և վերջը այդ ժայռերուն կոնկեն դուրս թափելով սպառազեն խումբերը և արաբաց շփոթության սթափելու ժամանակ չի տալով աջ ու ձախ կը կոտորեին անխնա. և առնելով ինկածներուն կողոպուտը՝ կ'անցնեին Վարդանակերտի մոտեն Երասխա հունը օգնելու համար այն եղբարց, որ արաբաց ուրիշ մեկ գնդին կատաղության զոհ կ'երթային։

Կ'շտապեր Թեոդորոս և թույլ ու դադար չէր տար զորաց, որպեսզի հասնի թշնամվույն, բայց նա սատանայական արագությամբ յուր դառնության գործը կատարեր էր և ամեն տեղ Նախիջևանե մինչև ի Գողթն գավառ, գյուղ, ավան և անպատսպար քաղաք ավերակ էր եղեր, դեզադեզ մարդկանց դիակներ և արյանց ճապաղիք այդ բարբարոս ավազակաց հետքերն էին, հուր, սուր, մահ իրենց նշանակներն էին, որ թողեր էին ետևնեն։ Լեռներու, բերդերու ապաստանյալ մարդիկ կ'ինչնային գունդագունդ ողբ ի բերան փնտրելու համար իրենց սիրելիները, որ կամ սրո ճարակ եղած էին, կամ, որ ավելի սոսկալին էր, անողորմ ազգին գերության գնացած։ Տուն, ամառանոց, եկեղեցի՝ ամեն բան կը մխար, ամեն բան արյուն կը հոտեր։ Ծեր պատերազմողք, որ կարծեին, թե նոր չի կա իրենց համար պատերազմի հետևանք թշվառության մեջ, երբ կը տեսնեին եղած անգթության ու պղծության հետքերն, երբ կը դիտեին հոշոտյալ անդամներ, կրակի մեջ նետված կանանց և կաթնկեր տղայոց դիակներ, անօգուտ կատաղությանց վրա սոսկմամբ կը նայեին և գլուխնին շարժելով երեսնին անդին կը դարձնեին։ Ատոմ Շահունի, որ պարսից հետ և դեմ պատերազմած էր տարիներով, որ քուշանաց և կովկասային ամեն ժողովրդոց հետ կռված էր, Սմբատ

բազմահաղթի ամեն պատերազմներուն մեջ գտնվելով, և շատ բան կրնար պատմել՝ եթե ուզեր խոսիլ, նա ևս, երբ եղածները կը տեսներ, որ գազանության չափն անցյալ էին, երեսը թթվեցնելով «էհ» մը արձակեց։

Իսկ Թեոդորոս, որ ամեն ջանք կ'ըներ օգնելու խեղճ ժողովրդոց, հանկարծ Սուրեն Կամսարական փնտրելով, մեկ կողմ առավ.

— Սուրեն իշխան, դու շուտ մը ա՜ռ Դավթի որդին և գնա,— ըսավ,— վասնզի ո՜ գիտե եթե այդ անպիտան հույները հաղթվին, որ շատ հավանական է, այս ամեն չարիք և անզգամություն Կոգովիտ և Բագրևանդ կրնան գործվիլ այդ անողորմ ազգին ձեռքեն։ Գնա՜ շուտով, քույրդ միայն մի թողուր։ Ես էլ կուգայի, բայց պետք է այս գազանաց ջանամ հասնիլ. թերևս գերիները կարենամ թափել իրենց մագիլներեն։

Ուստի Սուրեն ու Գրիգոր իրեն խումբով բաժնվեցան զորավարեն երթալու Կոգովիտ, որ իրոք այն վիճակին մեջն էր, հորում երևակայեց Թեոդորոս։

Արաբք Թեոդորոսի հարվածեն վերջ զորացյալ ուրիշ գնդաց օգնությամբ, ավելի զգուշությամբ և խոհեմությամբ առաջ քայլեցին, և իրենց հառաջապահներեն իմանալով հունաց անհոգ դիրքը, չսպասեցին, որ թշնամին իրենց վրա հարձակի, այլ ամենայն կրոնամոլ կատաղությամբ հարձակեցան Պրոկոպիոսի բանակին վրա, որ արդեն իմացած նոցա պարտությունը հայոց ընդեն և բանակին փոքրկությունը, ինչպես հեռվեն նույնպես մոտեն արհամարհեր էր զիրենք։ Պատերազմը երկար չի քշեց, և վաթսուն հազար հոգվո բանակ մը տասն հազար արաբացի զորաց առաջ քանի մը ժամ դիմադրութենե վերջ չարաչար խորտակյալ կը փախչեր, իր բոլոր բանակը թողլով կապուտ կողոպուտ հաղթողին, որ ամեն բանի տիրանալե ետք, ասպատակ սփռած ամեն տեղ կ'ավարեր, կը քանդեր ըստ յուր սովորության, ո՜ւր որ ոտքը հասներ։

Մեծ խումբ մը այս բարբարոսաց անտեր անտերունչ գտնելով երկիրը, որ հունաց այս մեծ կոտորածեն զարհուրեր էր, սփռեցան Կոգովիտ, և ինչ որ դյուրամատույց գտան՝ ավարելե և գերելե վերջ հարձակեցան Վարդանակերտի ավանին վրա, որ կատաղի դիմադրություն ըրավ այս անօրինաց, որ հուսահատելով թողին պաշարմունքը։ Նույն միջոցին փոքրիկ գունդ մը, որ Վարդանաբերդի գեղեցիկ շենքը տեսած հեռվեն և չորս կողմը պտույտներ ըրած էին, մեծ հարստություն և գանձ հուսալով, եկան խումբին զորավարին, որ Ալի անունով Շեյխ մի էր, իրեն ուռաջարկեցին, թե երկրին տիրոջ ամրոցը հեռու չէր, և լավ ավար մը անշուշտ պատրաստ կար, եթե հաջողեին մտնել։ Շեյխ Ալի, առած իր գունդը, եկավ զննեց բերդը և եռ տեսավ պարիսպներուն բարձրություն և ամրությունը՝ երկաթապատ դռները, ցավագին գլուխ մը շարժեց նշան հուսահատության։ Բայց սատանայական աչքերով երիտասարդ մը նույն ատեն իրեն մոտենալով՝

— Հուսահատելու բան չկա, Տեր,— ըսավ.— եթե աս գիշեր աշխատինք ամենս և անդադար, կրնանք այդ բերդն առնուլ։

— Ի՞նչպես,— հարցուց Շեյխը։

— Եթե բարձրեն առնուլ անկարելի է, կ'աշխատինք գետնի տակեն, կը փորենք այս պարիսպներուն հիմքը, և աստված կը հաջողե։

— Լավ է այս խորհուրդը,— ըսավ Շեյխը, որ վաթսունամյա մարդ մ'էր, և որու վրա մեծ համարմունք ունեին յուր զորականք, վասնզի Մարգարեին առաջին սպաներուն մեկն էր։

Ուստի բահի, բրչի պատրաստություն տեսնվեցավ, և երբ գիշերն եկավ, սկսան խրամը փորել և խորն իջնել այդ ճիվաղները. շարունակ կը փոխվեին և մրջյուններու պես կ'աշխատեին. երբ մեկ մասը հող կը կրեր, մյուսը փորված հողե կամարը ցիցերով կ'ապահովեր, այսպես առաջ կ'երթային և պարսպին կը մոտենային։ Իսկ բերդին պահապանները միամիտ կեցած և փորձ մարդ ներսը չի գտնվելով, վասնզի Տիկինը բոլոր պատերազմի հմուտ անձինքը ղրկած էր որդվույն հետ, պարիսպներուն բարձրության վստահացած հանգիստ նստած կ'սպասեին։ Մահաբեր գործը կը հառաջանար, և դիվական հաջողությամբ ոչ ժայռ, ոչ արգելք մը կը հանդիպեր այդ ճիվաղներուն, որք առավոտյան դեմ պարիսպը անցած էին և սկսեր էին բարձրանալ. և որպեսզի պաշարելուց ուշադրությունը գրավեին, զորաց խումբն սկսավ հարձակումներ ձևացնել, սանդուխներ բերել պարիսպներուն մոտեցնել, նետաձգություն ընել դեպի պարիսպները, անել ժայռերե վեր ելնել և կախվիլ։ Պահապանք թեպետ թվով քիչվոր, բայց պաշտպանության համար զիրենք բավական տեսնելով ավելի զվարճություն, քան թե երկյուղ կ'զգային այս տեսարանեն. ուստի պարսպաց աշտարակներուն մեջ երբ միամիտ կանգնած էին, հանկարծ ձայն մը լսվեցավ, թե թշնամին բերդին մեջն է։ Սարսափն ամենքը պաշարեց, երբ տեսան բերդին գավթին մեջ արաբացի ճիվաղներու սուսերամերկ խումբ մը, որ քանի կերթար կավելնար. պահապանք վար թափվեցան պարիսպներեն, և կատաղի կռիվ սկսավ այդ հորին բերանը, ուսկից սողալով դուրս կը ժայթքեին այդ գազանները. մեկ ինկնողին տեղ երկուք կը բուսնեին վայրկյանե վայրկյան, պահապանաց հուսահատ կռիվը հայտնի բավական չէր աղատելու ներքին պալատը, որ մեծ ամրություն չուներ, ուստի կանանց և տղայոց վայնասունը, ճիչն ու աղաղակը, այդ զինուց շառաչմանց, մեռնողներու ողորմ հառաչանաց, կատաղի պատերազմողաց հիշոցներուն և

հայհոյությանց հետ տեսնողի և լսողի ականջով կը պատճառեր։ Վերջապես հարձակողք հաջողեցան մեծ բերդին դուռը քանալ, և էջ ուրիշ հույս չի մնաց դիմադրելու, քոլոր ազարացի խումբը կը դեմեր ներս կատաղաբար։ Ո՜վ պիտի պաշտպաներ այդ գազաններուն դեմ խեղճ կանայք և մանկտիք, քանի մը զինյալ սրատավորք դռները և պատուհանները ամրացուցյալ կան-կարապոր՝ վերջին և անհույս ճիգ մը թափեցին դիմադրության, քանի մը հուսահատ կանայք աչվնին դարձած՝ հիմարացյալ հուսահատութենե և երկյուղե վերի բարձր պատուհաններեն ինչ որ ձեռվնին կը հանդիպեր, կը նետեին այն պատերազմողաց վրա, որ սապաքներով և մուրճերով կը ջանային դուռ և պատուհան կոտրելու և ահագին ձողերով երկաթի վանդակներ կը ճաթճատեցնեին։

Էին մը միայն, որ այս վիճակը կը տեսներ և որուն երեսին վրա նկարված էր ապայություն և հուսահատություն, Բյուրեղ տիկին, առանց ինքզինք կորսնցնելու, իր կենաց պահպանութենեն ավելի ուրիշ մտածություն մը մտքին մեջ հանկարծ գարուի, մտավ իր աղջկանց սենյակը, տեսավ Նազենիկը, որ դողալով ծունկի վրա կաղոթեր յուր քրոջ անկողնին քով, որ հանգիստ և անխռով կը քնանար։ Այդ կինը, որուն աչքերը ոչ արտասուքով այլ արյունով լցված էին, առանց խոսելու գրկեց մեկը և մյուսին ձեռքեն բռնելով՝ կայծակի արագությամբ փաղկելով իջավ սանդուխներին վար, իջավ պարտեզին գահերեն վար, մինչև լճին եզերքը։ Հոն դրավ փոքրիկ մակույկին մեջ տղան։ մատաղ յուր շվոթված աղջիկը և ինքն որ մտավ, «փա՜ռք քեզ աստված իմ» ագռավակեց և թիակ մը ձեռքին առած բացվեցավ ցամաքեն։ ոտաթության ծիծաղ մը եկավ երեսին, և երկու ձեռքով աղջկանը փաթաթվելով. «Ահա ազատեցանք, Նազենիկս, մեր պատիվը անարատ կրնանք հոս այս լճիս մեջ թաղել»,— ըսավ։ Իսկ այդ քնքուշ և մթամիտ աղջիկը. «Հոս չեն կրնա՞ր հասնիլ ուրեմն այդ անզգամները, մայրիկ»,— կը հարցներ։ Իսկ փոքրը՝ զարմացած, շվոթված յուր տոր և սև աչքերեն քանը թոթափելով. «Ո՞ւր կ'երթանք մայրիկ, դու գիտե՞ս թիավարել»,— կ'ըսեր։ «Այո, զավակս, ասաօր պիտի թիավարեմ»,— ըսավ և թիակներն անոյշ և սիրալի ամենայն զորությամբ հեռանալ՝ ուղղվիլ դեպի այդ լճակին մթամիջի փոքրիկ կղզին։ միշտ աչքերը դեպի ամբոցն ունելով։ Խեղճ կինը այդ լճակը փոքրիկ կը գտներ և այդ հուսահատության մեջ դեռ նվազ հույս մը կը պահեր, եթե մեկը այդ գազաններեն գինքը չի տեսներ։ բայց այն հույսն էլ ոչնչացավ, երբ հաղիվ թե կղզվույն և բերդին մեջտեղի միջոցն հասավ, տեսավ, որ մեկ, երկու, երեք և դեռ քանի մը հատ ճիվաղներ իրենց մեջ կը խռսեին։ թեպետ լեզունեն չէր հասկնար, բայց կ'իմանար իրենց շարժմունքեն, թե յուր վրա կը խռսեին, և իրեն հասնելու հնարք կը փնտրեին։ Հուսահատությունը արտաքո կարգի զորություն մը տված էր իրեն, զարմանալի հաջողությամբ կը թիավարեր և նույն միջոցին կը տեսներ, որ քանի մը հատ այդ ճիվաղներեն կը թողուին իրենց զգեստները՝ կը նետվեին ջուրը յուր ետևեն։ ոմանք շուտ մը ետ կը դառնային, բայց ահագին խավշիկ մը ձովի պես կը լողար և, երբ ինք կղզվույն ափունքը գտավ, այդ գազանը կես ճամփան առած էր արդեն, ուստի անշփոթ վոքրիկ տղան ձեռքեն բռնեց գիրկն առավ։ «Դու այստեղ այս լճակը նստե, սիրուն Արիվնիս, իմ աննման զավակս, իմ գեղեցիկ հրեշտակս, ասաված քեզի պահապան լինի, մեր թշվառությունը քեզ ողորմություն դարձնե և երջանիկ ընե»,— ըսավ, համբույրներով ծածկելով նորա երեսները և այս առաջին անգամ այս պարագային մեջ արցունքով թրջեց. և դնելով կղզին ծածկոց ձարխոտին վրան՝ եղեգներու վարագույրի մը ետին,— «Դու այստեղ պահվե, զքեզ մեկը չտեսնե, մինչև որ մենք դանք»,— ըսավ. տղան շփոթած մարը խոսքը մտիկ ըրավ և ձարխոտին մեջ ծածկվեցավ։ Ան ատեն ինք ձեռքերը երկինք տարածեց, կարճ աղոթք մ'ըրավ մտքեն, վերջը գոտին քակեց Նազենիկին գոտվույն անցած և իրեն կապեց և մակույկին մեջ պզտիկ խարսխին շվանը նույնպես յուր մեջքին կապեց և անթարթափ աչք սկսավ նայիլ այդ սև խավշիկին, որ քանի կ'երթար կը մոտենար, երբ յուր ընկերներն ամենքը հուսահատ ետ դարձեր էին։ Երբ տեսավ, որ քանի մը նավակի միայն միջոց մնաց յուր և նորա մեջ, ողորմուկ ձայնով «Տե՜ր, մի՜ համարիր զայս ինձ ի մեղս» ըսավ և գրկելով զգվելով յուր Նազենիկը, ետեվեցավ լճին մեջ։ Թշվա՜ռ կին, չի տեսավ նետ մը, որ նույն միջոցին սլացավ և զարկավ խավշիկը, չի լսեց ձայն մը, որ գոչեց. «Ա՜յ Տիկին, մի...» ...լճին խաղաղ ջուրերը ճղճվեցան լոպն մը կղզվույն քով՝ և վայրկյան մը ետքը կատարյալ միապաղաղ ծածկեցին այդ համբաստության գոհը և դեղեցկության հրեշտակը։ Քիչ անդին սոսկալի հիշոցք մը լսվեցավ, ջուրը կարմիր ներկվեցավ և ճղփյուն մը լսվեցավ, որ իրեցուց լճին հատակը խավշիկին մարմինը։

Լճին եզերքը թափառող անօրինաց աչքերը տեսան այդ կնոջ և իր աղջկան ջուրը նետվիլը, իրենց սեփոհ ընկերոջ անունը գոչեցին քանի մը անգամներ. և երբ տեսան ձայն, պատասխան չի կար, հուսահատ, ժամանակ չի կորսնցնելու և բերդին ավարեն չի պակսելու համար թողին ծովեզրը և ներս մտան։

Ան ատեն լճին եղեգնուտին կողմեն ջուրը շարժեցավ, հիմա ուրիշ մեկն էր կը լողար, բայց այնպես, որ հազիվ քիթը դուրս էր ջրեն, թևերը չէին շարժեր, այլ ոտքերուն մատները միայն, և այս գողի պես լողացող մարդը եկավ մոտեցավ կղզվույն անշշունջ, առանց երևալու՝ միշտ եղեգ-

ներու սեզերն իրեն վարագույր պահելով ելավ ցամաք և գետնի վրա սողալով գրեթե և ոչ քայլելով, իբրև թե բան մը կը փնտրեր, և վերջապես գտավ իր փնտրածը։ Արփենի նստած՝ երկու թևերով ծունկերը գրկած՝ խոտերուն մեջ կես մը կորսված կը մտածեր. անշուշտ ինքնիրեն «Մայրիկը ուշացավ» կ'ըսեր, երբ կամաց, հաստ և իրեն շատ ծանոթ ձայն մը «Արփենի, Արփենի, սիրուն Արփենի, հոս ի՞նչ կընես» ըսավ։

— Ձավեն հայրիկ, դո՞ւ ես, մայրիկին կ'սպասեմ,— զրուցեց աղջիկը տեղաց ցատկելով։

— Մայրիկը գիս զրկեց քեզ տանելու համար, եկ երթանք։

— Բայց դու լիճն ընկեր ես, Ձավեն հայրիկ, վրադ գլուխդ բոլոր թրջեր է։

— Հոգ չէ երբ ես ջուրն ընկնիմ, աղջիկս։

— Բայց մայրիկը կըսե, որ ջուրն ընկնիք, կը խեղդվիք։

— Այդ ինձ համար չէ, սիրուն Արփենի, աստված քեզ պահե, որդյակ։

— Ինչո՞ւ երեսդ անդին կը դարձնես, Ձավեն հայրիկ։

— Արևն աչքիս կը զարնե անոր համար։ Բայց հիմա խոսելու ատեն չէ, եկ ինձ, որդյակ։

— Ի՞նչ կընես, Ձավեն հայրիկ, գիս կը թրջես, բոլոր ջուր եղա։

— Հոգ չէ, Արփենի, դու ձայն մի՛ հաներ, ամենևին մի՛ խոսիր, մինչև որ ցամաք ելնենք։

Խեղճ տղան կուրծքին վրա պառկեցուցած նույնպես լողալով կերթար Ձավեն, մինչև ցամաքը գտան. այն ատեն եղեգներու մեջ ելավ կանգնեցավ, հագավ իր սպառազինությունը, և երբ աչքը դարձուց Վարդանաբերդի, տեսավ մութ մը կը բարձրանար. աչվները կրակ դարձած սոսկալի հիշոցք մը տվավ ատամները կրճտելով, այնպես որ Արփենի սոսկմամբ «Ի՞նչ եղար, Ձավեն հայրիկ» ըսելով՝ սկսավ փախչիլ. «Կա՛ց որդյակ, կա՛ց Արփենի, միտքս չեկավ, թե հրեշտակներու քով ամեն պարագայի մեջ իրենց լեզվին չափ պետք է դնեն», զրուցեց և ուժով մը սուլեց. վայրկյան մը չանցած՝ իր նժույգը եկավ վազելով և եղեգները կոտրտելով։ Իսկ երբ Արփենին գիրկն առավ Ձավեն, խելոք ձին մեջքը խոնարհեցուց, որ դյուրությամբ հեծնա զինվորը, և Կաղզվանա ճամփան բռնեցին։

ԳԼՈՒԽ Դ

Մի ոգի տխրության խորին և աներեր
Բնակյալ ճայս տեղիս կը տանի քո քայլեր.
Առձագանք անցելույն՝ ոչինչ այլ չի լսվիր,
Հիշատակ քեզ գրավե, ներկան չի նշմարվիր։—
Ձերթ զանգակ հեռանիգ խառնակոչ կը հնչեն
Մայր ծառոց գագաթունք հողմավար կ'արտասվեն,
Ձիք մի ձայն բընության իբր մեռյալ նա բրվի
Եվ ի մեջ դամբանաց՝ ե՞ս լոկ կամ կենդանի։

ՇԼԵԳԵԼ

Ձավեն հայրիկի գիրկը ձիու վրա ճանապարհորդել Արփենի շատ կը սիրեր, ուստի նախ հաճելի եղավ իրեն այս երթը, բայց երկու ծանր խնդիրներ կային իրեն համար, որ պետք էր լուծվեին, ուստի ըսավ.

— Մայրիկը, Նազենիկը ո՞ւր գնացին, գիտե՞ս։

— Գիտեմ, որդյակ,— պատասխանեց ծեր զինվորը, թեպետ ձայնը այնչափ արտասվալից էր, որ՝

— Հայրիկ, դուն կուլա՞ս,— ըսավ պղտիկը և գլուխը վեր առավ Ձավենի երեսը տեսնելու համար՝ բայց միայն մորուքը տեսավ։

— Չէ, որդյակ, ի՛նչ կա լալու, հարբուխ եղած եմ քիչ մը, այն է։

— Թրջեցար, անկից է. մայրիկը կ'ըսեր, թե երբ մեկը թրջի, հարբուխ կը լինի. ես էլ հարբուխ պիտի ունենամ։ Այնպե՞ս չէ, հայրիկ, զգեստներս բոլոր թաց են։

Ները՝ այս հարցաքննութենեն, ուր մայրիկին բոլոր խոսքերը մեկ-մեկ վկայություն էին, այնպես հուզված էր, որ կը շփոթեր պատասխան տալ և կ'սպասեր, որ Արփենի խոսքը փոխեր. և իրոք ժամանակը եկած էր՝ Արփենի երկրորդ խնդիրն առաջարկեց.

— Հայրիկ, նախաճաշիկ ե՞րբ պիտի ընենք, ես անոթի եմ։

— Հիմա՝ քանի մը վայրկյանեն,— ըսավ ծեր զինվորը և շուրջը կը նայեր, մտածելով, թե ո՞ւր էր, վասնզի միտքը բոլոր այդ սոսկալի եղեռնին էր, որ աչքին առաջ դարձած էր, և հիշելով, թե գոնե քառորդ մը ժամանակ պետք էր գյուղը հասնելու, ձիուն ձայն տվավ, որ շտապե, և սկսան թռչիլ։ Եվ Արփենի ուրախության ձայներ կը ձգեր։ Ահա գյուղ մը երևցավ. բայց ձայն-ձուն չի կար, շուն մը նաև չի կար, որ հաչեր. «Տեր աստված,— կ'ըսեր ծեր զինվորն ինքնիրեն,— միթե արաբին ոտքը հո՞ս էլ հասեր է. բայց ոչ, խոտ էլ կա, կանաչ էլ կա»։ Վերջապես իջավ ձիեն, պտույտ ըրավ, ձայնեց, գոչեց, պատասխան տվող չեղավ. երբ մտքեն կ'անցներ դուռ խորտակել և քանի մը ոտք էլ առավ,

ահա պառավ կին մը նստած արևուն մեջ դռան առաջ իր ձեռքը կը մաներ և այնպես խոր զբաղած էր յուր մտածությանց մեջ, որ ոչ ոսքի ձայն, ոչ զենքի շառաչ զինք չէին արթնցներ։

— Բարի՛ լույս, մայրիկ,— ըսավ իր բնական ձայնով. պատասխան չի կար, և որովհետև Զավեն յուր տեսակին մեջ դիտողական փիլիսոփայութենե զուրկ չէր, և գիտեր, թե ընդհանրապես մարդիկ, մանավանդ կանայք կը սիրեն իրենց տպավիքը պզտիկցնել, ուստի ձայնեց.

— Բարի՛ լույս դա վրադ, քուրիկ։

Դարձյալ պատասխան չի կար. առաջ անցավ զինվորը և երբ ստվերը պառավին վրա ինկավ, նա անիծով գլուխը վեր առավ և չափելով դիմացինը անգամ մը՝

— Ի՞նչ կուզես, ասպատակեն ի՞նչ լուր կա,— ըսավ։

— Առ ապուն հաճար քիչ մը ուտելիք կ'ուզեմ, քուրիկ։

— Մո՞տ են, թե կորան գնացին։

Զավեն իմացավ, թե խուլ էր կինը, ուստի ականջին ճոտեցնելով շրթունքը, «Քիչ մը ուտելիք, ուտելիք սա տղուն հաճար» գոչեց և այնպիսի ձայնով, որ պատերազմի ժամանակ միայն կը գործածեր։

— Իմացա, իմացա, ականջս ծանր է, բայց խուլ չեմ... ի՞նչ սիրուն տղեկ ունիս...— ըսավ պառավը Արփենին նայելով և գնաց։

Արփենի իջավ Զավենի գրկեն, ակռավ պտըտիլ, երբ Զավեն կանգնած կը մտածեր. մենք գիտենք, թե ինչ կը մտածեր, բայց Արփենի, որ նեղա-զուրա ելավ մտավ՝

— Զավեն հայրիկ, այդ կինը չեկավ, մոռցա՞վ ուտելիք բերել,— հարցուց,— ես շատ անոթի եմ։— Իսկ Զավեն երբ չի լսեց, տղան եկավ և սրունքներեն քաշելով՝ «Զավեն հայրի՛կ, Զավեն հայրի՛կ» կանչեց, երբ տեսավ, թե չմանար, սկսավ շրթունքը թուլացնել և պիտի սկսեր լալ, երբ Զավեն քունե արթնցածի պես գրկեց տղեկը.

— Ի՞նչ է, սիրուն Արփենիս, ի՞նչ է, իմ հրեշտակս, մի՛ լար։

— Վախեցա, որ դու էլ այդ պառավին պես պիտի չի լսես։

— Մի՛ վախեր, ես կը լսեմ. երթանք, պառավը տեսնենք, թե ի՞նչ կընե, ի՞նչ կը բերե քեզի։

Երբ ներս պիտի մտնեին, տեսան փոքրիկ մաքուր սեղանի մը վրա սեր, մածուն, պանիր, խաղող, քավաշ դրած, պառավը կոպիտ Քարեբախատքար ազգաց ազնվապետական զգացմունք չեն բերեր իրենց հետ անդիի աշխարհքեն. Արփենի, որ արծաթյա սկավառակներու մեջ սովրած էր ուտել, առանց ուշադրության այդ հողե ամաններուն՝ ախորժակով կ'ուտեր. և Զավեն թեպետ դառնացյալ հոգվով՝ մեծ մխիթարություն կ'զգար այդ ամենեղ հրեշտակին նայելով, որ յուր աչաց առջև նստած՝

չէր տեսեր որբությունը։ Բայց պառավը թեև դրդելով՝ զինք կը հրավիրեր ուտելու. ծեր զինվորը թեպետ կեսգիշերվնե ի վեր շարունակ կը ճանապարհորդեր, բայց ախորժակ չուներ ուտելու. պետք էր Արփենի զենք կրկին-կրկին հրավիրեր, որ ուտե, ուստի քանի մը պատառ առավ և բաժակ մը գինի խմեց։

Շփոթած էր ծեր զինվորը. տղան երբ կշտացավ, մայրիկը կը հարցներ. իսկ պառավը ասպատակեն լուր կը հարցներ. ուստի կարճ կապելու համար հրաժարական բարև մը տվավ պառավին, հեծավ ձին և քանի մը ժամվան մեջ հասավ Կաղզվան։ Արփենի չիմացավ այս ճանապարհորդությունը, վասնզի մեծ մասը քնացավ, և երբ հասան, աչքերը բացավ տեսավ դանայք և աղջիկներ, որ զինք գրկե գիրկ կը հափշտակեին, մեկը իր խաժուկ աչքերը կը գովեր, մյուսը թուշերը կը պագներ, վերջապես փոքր տարեկից տղայք նաև իրեն հետ սկսան խաղալ. ուստի աղջիկը լավ զբաղած էր այս կես գյուղացվո, կես քաղաքացվո տան մեջ, որ Զավենի տունն էր։

Իսկ Զավենի կինը, որ լավ կը ճանչեր յուր էրկան բնավորությունը և շատ խելոք կին էր, առաջ բան չի հարցուց, իսկ երբ առանձին մնացին, սկսավ հարցնել, թե ի՞նչ էր այդ դառնությունը, թե ստույգ էր արաբաց Կոգովիտ ասպատակելը, թե վտանգ կա՞ր իրոք Մամիկոնյան Տիկնոջ համար։ Այն ատեն Զավեն պատմեց համառոտիվ, թե ինչպես ինք Սուրենի և Գրիգորի հետ հրաժարելով Թեոդորոսե, քանի որ Վարդանաբերդի կը մոտենային, անհանգիստ լինելով ամրոցին վիճակին վրա և տեսնելով, որ Գրիգոր և շատերը հոգնած էին, որոշեց ժամ առաջ եթթալ և հայանելով առջի իրիկվնե՝ կեսգիշերուն ճամփա ելած հասեր էր Վարդանաբերդի մոտ, և հեռվանց տեսնելով խուռն բազմություն և զենուց փայլ՝ վտանգ մը երևակայելով լմի ճամփան բռներ սկսեր էր մոտենալ, և տեսնելով հեռվանց կին մը և աղջիկ մը մահուդիին մեջ, որ դեպի կղզին կը գիմեին, և իմանալով, թե Բյուրեղ տիկին ինքն էր, երբ հնարք կը մտածեր զինքն ազատելու և արդեն նեռահար ըրած էր խափշիկը, որ կը հարածեր, տեսեր էր մաթ և զարկին ջուր նետվելն և անհետանալը, ուստի այս տղեկը միայն ապատեղով կուզար մատն ի սիրտ։

Եղեռն զինվորը կը պատմեր և կուլար. բարի կիներ մտիկ ընելով ջուրի պես արցունք կը թափեր, երկուքն էր միասին երբ հիշեին Տիկնոջ ազնիվ սիրտը, լուսը առաքինի վարմունքը, հեզ հոգին։ Ծարա ընծաներն էին, որ զարդարեր էին իրենց տունը, Զավեն կը հիշեր այն օրերը, որ նա Մամիկոնյանց տան հարս եկած էր և սիրելի եղած էր իր քաղցրությամբ մեծին և փոքրին։

— Իսկ դու հիմա ի՞նչ պիտի քնես,— ըսավ կինը։

— Ես այս գիշեր կ'երթամ. այդ ճիվաղները կենալու միտք չունին, վասնզի ամրոցին բոցը տեսա. իշխանիկը կ'երթամ ու կ'աշխատիմ գրտնել և իմացնել մոր և քրոջ մահը, իմացնել իբր մխիթարություն Արփենիին ազատիլը, թեպետ կորուստները մեծ են, բայց ի՞նչ ընենք։ Խե՜ղճ երիտասարդ, ինչպե՞ս մայրը կը պաշտեր... երբ կ'երթայինք վերջին անգամ... «Գրիգորս քեզ կը հանձնեմ, Զավեն հայրիկ...»։

Եվ հեկեկանքը խեղդեցին կորովի ծերունու ձայնը։

Իսկ դուրսը պարտեզը մեծ ուրախություն կար. մեծ և պլտի տղայք և աղջկունք Արփենիի տունը կը կատարեին. պարտեզին ծայրը Երասխի ափանց նայող բարձրավանդակին վրա, գեղջկական կանաչագեղ հովանոցի մը տակ սեղանը կը պատրաստեին, տանտիկինն զբաղյալ էր կերակրո պատրաստությամբ, իսկ Զավեն հոգնած և տխուր խոր քունե արթնացավ զորացյալ, երբ արդեն կեսգիշերը մոտ էր։ Ընթրյաց ժամանակ Արփենի հայտնեց, թե ամրոցեն լավ էր այս տունը, ուստի կ'ուզեր հոն բերե Զավեն հայրիկ՝ մայրիկը։ Երբ ընթրիքը վերջացավ և սլզտիկները քնացան, Զավեն հեծավ և ելավ դառնալու Վարդանաբերդ։

Կեսգիշերվան մոտ էր, աշնան աղոտ լուսին մը տկար լուսով կը լուսավորեր Կոգովտի լիճը. բերդին հրդեհին մնացորդ բոցը երկրորդ լույս մը ձգած էր ջուրին վրա, ուստի մեծ զգուշությամբ սկսավ մոտենալ, և ամենևին ձայն չի լսելով՝ երկայն ժամանակ ուշ դնելե վերջ իջավ ձիեն, թողուց, որ արածի, և ինք զգուշությամբ պտույտ ընելով հասավ բերդին դռան առջև. տեսավ դռներն ինկած, տեսավ Մամիկոնյանց պալատը կիսակործան և հրո ճարակ, տեսավ դիականց կիսախանձ կույտը ընդարձակ և ծառազարդ գավթին մեջ թողյալ, իմացավ, թե այդ գեղեցիկ բերդը կատարյալ գերեզման էր դարձել, ուստի ելավ պարիսպներեն դուրս, սկսավ լճին հարավային կողմը երթալ տեսնելու, թե ի՞նչ կա, հազիվ թե քանի մը քայլ առավ դիակ մ'ալ հոդ պատահեցավ՝ անցավ առաջ ուրիշ մը, ուրիշ մ'էլ՝ և տասը-տասներկուք մը համրեց, լուսնի լույսը շատ աղոտ էր, որ կարենար ճանչել, ուստի քիչ մ' առաջ որ գնաց, տքալու ձայն լսեց, վազեց դեպ այն կողմը։ «Ա՜հ, քիչ մը ջուր, ի սեր աստուծո, քիչ մը ջուր», կըսեր հողին վրա պառկած մեկը։ Դարձավ մտավ բերդը, վազեց դռնապանաց աշտարակին տակի սենյակը, ուր փոքրիկ աղբյուր մը կար, հոն հողե հասարակ ամաններ կը գտնըվին, առավ լցուց և քիչ մը տվավ, որ խմե. մարդը երբ ոգի առավ, այն ատեն՝

— Որդյակ, դու ո՞վ ես,— հարցուց։

— Թադոսի որդի Տրդատն եմ,— ըսավ վիրավորը։

— Դու իշխաններուն հե՞տն էիր, երբ եկանք։

— Մենք կեսօրին այստեղ հասանք։ Երբ բերդին մուխն ու բոցը տեսանք, ետ դառնալ և փախչել սկսանք, բայց երկու հարյուրե ավելի ձիավորաց խումբ մը, որ շրջակայքն ավարելու գնացեր և կը դառնար, մեր ճամփան արգիլեց, ուստի զատյալ թշնամիներեն հուսահատաբար կռվեցանք. ես վիրավոր ընկա, չգիտեմ մյուսներն ի՞նչ եղան։

— Տե՜ր աստված, տե՜ր աստված, այս ի՞նչ պատուհաս է մեր վրա,— կ'ըսեր ծեր զինվորը։

Ելավ այց ընելու. բոլոր ինկելոց կը շոշափեր, ձեռքը սրտներուն վրա կը դներ, թե կենդանի ոք թերևս կարենա գտնել, բայց ամենքը ալ մեռած էին, դարձավ վիրավորին քով, պատեց վերքը ինչչափ կրցավ, հեծուց իր ձիուն վրա և շտկվեցավ մոտակա վանք մը, որ լեռանց ափափայից վրա շինված դժվարավ գտանելի տեղ լինելուն կը հուսար, թե բարբարոսաց ոտքերը չեն հասած, և իրոք այնպես գտավ, ինչպես կը հուսար։ Կրոնավորք սիրով իջան անապատեն թաղելու համար իրենց քրիստոնյա եղբարց մարմինները։ Իսկ Զավեն, որ Գրիգորի մարմինը կը փնտրեր, չը գտնելով ոչ նորա և ոչ Սուրենի մարմինը, փառք կուտար աստուծո և կ'ըսեր. «Օր մը անշուշտ հանկարծ կուգա, և ես ձեռքս իրեն կը հանձնեմ քուրիկը»։

Անկից իջավ ծովեզերը, լիճը խաղաղ կը ծիծաղեր՝ անտարբեր մարդկային ողորմելի հուզմանց վրա, ելավ լողալով մակույկին քով նստավ, նույն տեղ, ուր Արփենին առաջի օրը նստած կսպասեր յուր մայրիկին, ջուրը յուր վճիտ կերպարանքն առավ. ան ատեն նայեցավ և տեսավ ջուրին տակ մայր ու աղջիկ քովե-քով, մտավ և առանց դժվարության հանեց զիրենք ցամաք. ըսավ ինքնիրեն. «Աստ այս կղզին անխոս վկա այս սքանչելի մոր և հրեշտակային զավկին պարկեշտության թող իրենց գերեզման լինի. ապագային մեջ ավազակաց և արյունարբու ճիվաղաց թերևս միմիայն ապահովություն աստ գտնվի. մինչև որ իշխանիկը երևվան ելնե»։ Մտավ մակույկը, գնաց բերավ ամեն պետք եղածը, փորեց գերեզմանը սոսվո ծառի մը տակ, և երբ ամեն հանգստյան կարգ կատարվեցավ, ինք մեռելաթաղ, ինք սպասավոր, ինք հայր և եղբայր և ամենայն լինելով, հորդառատ արտասվոք ողողեց գերեզմանը, ինք նաև զարմանալով, թե ծեր զինվոր՝ յուր այդ աչքերը, որ հուր գիտեին թոթոփել, ուստի՝ այդչափ արտասուք կը բխեին, որ բոլոր կյանքին մեջ այնչափ ունեցած չէին։

Իսկ երբ արտասուքը սրբեց, ժողովեց աստուծո պաշտոնյայքը և հանեց բերդին առջև, տվավ կրակը՝ բորբոքեց մակույկը, որպեսզի ոչ ոք կարենա մերձենալ կղզվույն, ան ատեն. «Ամենայն ինչ կատարյալ է»,— ըսավ, և գլուխը կուրծքին դռած՝ անցյալին մեջ թաղված այդ բեր-

զին հանդեսները, կոչունքները, ուրախությունքը, սուգերը և տրտմությունքը նաև՝ ամենքը աչքին առջև տեսնելով հաջորդաբար, ուր երկայն տարիներ անցուցեր էր, և քանչորս ժամ բավական եղած էր անհայտ, անհիշատակ ընելու, դարձյալ Կաղզվանի ճամփան բռնեց մոռնալով նաև իր նժույգը, որ ծանր իր ետևեն կը քալեր լռիկ և տխուր՝ իբր թե չի համարձակելով յուր տիրոջ խորհրդածությունքը շփոթել։

Բայց վերջապես Զավեն իբր քունե արթնացավ, վասնզի ծունկերը չէին ուզեր իրեն հնազանդիլ, սաստիկ հոգնություն մը զինք առեր էր, հեծավ իրեն ձիուն վրա, նոր զգացմունք մը՝ գլուխը սկսավ պտույտ գալ, այնպես, որ եթե չգուշանար, պիտի ինկներ ձիեն, այս նոր երևույթներեն արթնացած միտքն եկավ, թե ամենեին բերանը բան չէր դրած, և արևը մայր մտնելու մոտ էր, ուստի շտապեց և հասավ այն գյուղը, ուր առջի օրը խուլ պառավը զինք հյուրընկալեր էր։

Դարձյալ առանձին էր պառավը՝ նստած իր դռան առջև. դարձյալ գյուղն անապատ էր։ Թեպետ ինք հացի պատառ մը միայն ուզեց, բայց բարի պառավը հացն ու պանիրը և կուժով գինին մեկտեղ դրավ առջևը։ Եվ երբ տեսավ, թե ախորժակով կուտեր.

— Ես մարած աչքերդ իմացա,— ըսավ,— որ դու շատ անոթի ես. մեր գյուղացիքը ամենքը լեռները փախան, ավազակներեն կը վախեն։

— Դու չե՞ս վախեր, որ այսպես մենակ կը նստիս,— հարցուց Զավեն քիչ մը ձայնով, քիչ մը նշանացի։

— Իմ վախելու տեղս մնացե՞ր է, որ վախեմ։ Ասպատակը երիտասարդ կ'ուզե, ինձի պես պառավներուն վնաս չի հասցներ։

— Դու այնպես կարծես, բայց հիմկու նորելուկ ավազակները քեղպեռները սուրե անցուցեր են։

— Է՜հ, ի՜նչ ընեմ,— ըսավ պառավը արհամարհանոք ուսերը ցընցելով,— եթե սպաննեն՝ թո՛ղ սպաննեն, հազար տարի ապրելու չեմ, արդեն հարյուրին մոտ եմ։ Թոռներ, տղաքներ, հարսներ ունիմ։ Դուք գնացեք՝ փախեք լեռը, ըսի, ես տանս մեջ եթե պիտի մեռնիմ, խաղաղ կը մեռնիմ։

Այս փիլիսոփայության պատասխան չուներ Զավեն, ուստի լռեց, և երբ հացը կերավ լմնցուց և գինվո կուժին վերջի կաթիլը նաև քամեց, պառավը՝

— Որդի՛, մի՛ ծալլվիր, դու բան չես կերեր այսօր, երեկ այդ տղեկը լավ կերավ. կա՛ց հիմա...— ըսավ և վազեց գնաց՝ ժամանակ չի թողնելով Զավենի, որ արգիլե, և քանի մը վայրկենեն եկավ դարձյալ ուտելիք ու գինի բերելով։ Եվ երբ Զավեն սկսավ ուտել՝ պառավն էլ սկսավ հին պատմություններ ընել, որ Զավենի հիշատակներեն շատ

բարձր էին։— Որդի,— կ'ըսեր,— դու այն օրերը գիտե՞ս, երբ Սուրեն պարսիկը ամեն Հայաստան կը կոխկոտեր, հետո երբ Վարդան Մամիկոնյան զայդ Սուրեն սպաննեց, հետո երբ պարսից թագավորը եկավ, հետո երբ մենք ամենքս լեռները փախանք...

— Ես այդ հետոներուն հետինն անգամ չգիտեմ։

— Գիտե՞ս, հա՛...— կ'ըսեր պառավը նորա բերնին շարժմունքը տեսնելով։

— Ո՛չ, ո՛չ, ամենևին չգիտեմ։

— Բայց գիտե՞ս, որ Հոռոմի մեծ թագավորն որ եկավ՝ կաթողիկոսը լուսավորիչն ուրացավ (Զավեն իմացավ, որ Հերակլի և Եզրի համար կ'ըսեր՝ գլխով նշանացի ըրավ, թե՝ այո՛), հա՛, աստված ողորմի հորդ հոգուն, ան տարի հոռոմը մեկ կողմեն, պարսիկը մյուսեն այս մեր լեռն ու ձորը կոխեցին, տուն, տեղ չի մնաց, ամեն բան քանդվեցավ. մենք երկու ամառ մեկ ձմեռ սարերուն գլուխն անցուցինք, ի՜նչ օրեր էին... հիմա ի՜նչ պիտի լինի։ Այսօր էլ այդ հոռոմներն էին, որ եկան, սոթոած հավ դարձեր էին, վրա, գլուխ չի կար՝ անոթի ծարավ...

— Այսո՞ր,— հարցուց Զավեն։

— Հա՛, մեկ-մեկ քիչ հաց տվի՝ ճամփեցի, ետքը մեկ մեծերնին եկավ՝ երեսուն-քառասուն հոգվով, ուռած, փքված, հագված կապված մարդ էր, քթեն ինկնողն հազար կտոր կը լիներ. կ'երևի, որ մեր գյուղին չի հավնեցավ՝ ելավ գնաց Կաղզվանի ճամփան. երթա՜ ի բարին։

Զավեն որ արդեն փորը կշտացել էր, քունն աչքերուն վրա սկսեր էր ծանրանալ, երբ լսեց թե հույնք, որ անշուշտ արաբաց մագիլներեն փախստականք էին, որ լեռները փրկություն գտած հիմա զանազան ճամփաներով կ'երթային Կարին, և եթե զիրենք բազմաթիվ գտնեին, ամեն անզգամության ձեռնհաս էին։ Թուլություն մեկդի թողուց և շուտ մը պառավին մնաս բարովն ըսավ, հեծավ ձին ու Կաղզվան շտկվեցավ արագությամբ։ Գիշերվան երրորդ ժամուն հասավ ավանը, որ բոլոր տակնուվրա էր, եկեղեցվույն դռան առջև քանի մը հոգի ժողովված կը խոսեին, թե ինչ կարելի էր ընել հունաց պահանջմանց դեմ, երբ Զավեն մութուն ձիուն գլուխը քաշեց, շուտ մը զինք ճանչելով իրեն մոտեցան, և դեռ ինք բերան չի բացած՝ սկսան գանգատիլ և վիճակը հայտնել.

— Հարյուր հիսուն, երկու հարյուրի չափ փախստական հույն զինվորներ ավանը մտան, զորավար մ'էլ կար հետերնին. ցրվեցան ամեն տուն. մենք իրենց խղճության ողորմեցանք, անհավատին դեմ կովե կուգան, ըսինք, թաշապաշտ են, ըսինք, պարտք եղած հյուրընկալությունն ըրինք, բայց դարձ չի կրցանք ընել, սկսան զգեստ հափշտակել, զենք պահանջել, գինվո կարասներ պարպել և կանանց վրա աչք ձգել... Մեծեր-

նին իջավ քու տունն, Զավեն եղբայր, շատ կարելի է, որ նա էլ իր ավազակներեն պակաս չի մնա։

— Քալենք մեզի երթանք, այնտեղ կը տեսնենք և կը մտածենք։

Եվ Զավեն ձիեն իջած այդ դրկիցներու հետ միատեղ շտկվեցավ տուն։ Դեռ տան դռանը չի հասած՝ կը լսվեին հունական անառակ երգելու ձայներ, որ Զավեն բավական կը հասկնար, և որ երգողները կուրի տակ ընկողմանյալ հույն զինվորներ էին. առանց սոցա վրա ուշադրություն դարձնելու Զավեն ներս մտավ։ Նախ զինք դիմավորողներն եղան յուր երեք որդիքը, որոնց ամենեն մեծը քսանհինգ տարու երիտասարդ մ'էր կորովի և ծանրագլուխ. և հոր ու որդվո մեջ այս խոսակցությունն տեղի ունեցավ կամաց ձայնով.

— Ի՞նչ տեսակ մարդ է, Ներսես, այս հունաց մեծավորը։

— Ի՞նչ գիտնամ, հայր, իբր քառասուն տարու՝ քաղցրալեզու, քաղաքավար մարդ մը կ'երևա. ոչխար մը մորթել տվավ այն ձևով, որ իբրև թե փողը պիտի վճարե, մեծ կը խոսի՝ ինքզինքը այնպես կը ցցնե, իբր թե կայսեր շատ ծանոթ մեկն է։ Հարցուց, թե այս տունն ո՞ւմն է, հարցուց թե Արփենին ո՞ւմ աղջիկն է, Վարդանաբերդի, Մամիկոնյանց իշխանուհվույն, Գրիգոր իշխանին վրա տեղեկությունք փնտրեց։ Հրամայեց, որ իր զինվորներուն պետք եղածը տրվի, վճարմունքը խոստացավ կայսերական գանձեն շուտով հասցնել։

— Պրոկոպիո՞ս է այդ մարդուն անունը,— հարցուց դաժանությամբ Զավեն։

— Ոչ, հայր, Թումա է իր անունը։

— Մայրդ, աղջիկները ո՞ւր են։

— Ամենքը ներսն են, չերևցան օտարներուն։

— Հիմա քովը ո՞վ կա։

— Տերտերը միայն մնաց, ուրիշ ամենքը գնացին։

— Մտնենք ներս, բարեկամք, և տեսնվինք այս հունական բանակին կոտրտուքներուն հետ,— ըսավ Զավեն իր դրացիներուն։

ԳԼՈՒԽ Ե

Թումա ընկողմանյալ էր վառարանին քով, և ուշադրություն անգամ չըրավ մտնողաց, որ հարգանք ողջունեցին. իր երկու զինվորները հոտին կանգնած էին դռան քով։ Կաղզվանի ավագերեցը նստած էր վարը փոքրկացած հույն զորավարին ներկայության։ Զավեն այս վիճակը տեսնելով՝ քահանան հրավիրեց վառարանին քով անցնիլ նստիլ. և նկատելով նորա դանդաղությունը՝ օգնեց նաև թևեն բռնելով և վեր վարելով և ինքն անցավ քովը նստավ։ Բյուզանդացի հույնը յուր դիրքին մեջ այս ամեն շարժմունք տեսավ, և լավ իմացավ, թե իր արհամարհանց փոխարեն պատասխանող մը անցավ յուր առաջ, բայց չիմանալեն եկավ։

Իսկ Զավեն, որ բավական հունարեն կը խոսեր, սկսավ հանդարտ կերպով ժողովրդյան գանգատները, յուր զինվորներեն եղած անիրավ պահանջները առաջ դնել, հույս հայտնելով, թե «իրեն պես բարձր զորավար մը այնպիսի անկարգությանց ներողամիտ չէր կրնար լինիլ»։ Զավենի այս վերջին խոսքերը, ուր երգիծանքը շատ սուր և կծու էին, հույնին բարկությունը այն աստիճանի գրգռեցին, որ շտկվելով և նստելով՝ և խիստ ակնարկ ձգելով Զավենի հարցուց.

— Դու, որ զինվորի կը նմանիս կերպարանքովդ, ո՞ւմ քով ծառայած ես մինչև հիմա։

— Իմ ըսած խոսքերես կ'երևա թե չի կրցա հասկցնել. ես աղաչանք մը ըրի, որ հրաման ընեք զինվորներուն անիրավ պահանջներ չընելու. իսկ դուք ինձ կը հարցնեք, թե ո՞ւմ քով զինվորած եմ. այդ հարցմունքը ինձ զարմանք կուտա, ուստի ես էլ համարձակություն կառնում ձեզ հարցնելու, թե ի՞նչ կը նշանակե այդ հարցմունքը։

— Դու հասարակ շինական՝ կը համարձակիս ինձ՝ հոռոմ իշխանի հարցմո՞ւնք ընել։

— Ի՞նչ հանցանք կա այդտեղ, մարդ չգիտցածը միշտ իրավունք ունի հարցնել։ Դուք ինձ կը հարցնեք, թե ո՞ւմ քով ծառայեր եմ, նույնպես ես էլ հասարակ շինական համարձակություն առի ձեզ հարցնել, թե ի՞նչ մտոք այդ հարցմունքը կ'ընեք. չար միտք եթե ունենալի, կրնալի հարցնել, թե դո՞ւք էիք արաբաց դեմ այդ մեծ հաղթությունը կարգադրողը թե Պրոկոպիոս։

— Դեռ նախատե՞լ զիս կը համարձակիս, անա՛րգ շինական,— ըսավ Թումա և ելավ սուրն առնելու։

— Հանդարտ տեղդ նստե, հոռոմ իշխան,— ըսավ Զավեն ծանր և արհամարհոտ ձայնով և ամենափոքր շարժմունք նաև չընելով.— ես երբ հոռոմ իշխան կ'ըսեմ, պետք է իմանաս, թե իմ մտքիս մեջ այդ քու անարգ շինականներեդ ավելի անարգ բան մը կիմանամ, քու այդ սուրեդ վախցող մարդ չի կա այստեղ, ես գրավի կուգամ, որ այդ խեղճ սուրը պատյանեն անգամ ելած չէ տարիներե ի վեր և ժանգոտած է։ Իսկ եթե այս խեղճ շինականի սուրը պատյանեն ելնե հանկարծ, Լուսավորի՞չ վկա, որ առանց քանի մը հոգի հանելու տեղը չի դառնար։

Այն անշարժությունն, այն հանդարտ ձայնը, այն արհամարհոտ կերպը, որ Զավենի վրա նկատեց հույն զորավարը, բավական եղան,

որ կերպը փոխե և ինքզինքը սանձե. ուստի կիրքը թողուց և արհամարհանաց ձև մը առնելով նստավ։

— Հա՛, այդպես խելոք նստինք և մարդու պես տեսնվինք, դուք մեր հյուրն եք, մեր հայրենական սովորությունն է հյուրը պատվել, բայց հյուրը եթե ավազակություն ընե, դեռ այն ժամանակներուն չհասանք բոլորովին, որ անպատիվ թողունք, ուստի հիմա քեզ կիմացնեմ բարեկամաբար, որ եթե այս վայրկենես փոքրիկ բռնություն մը լինի ավանիս մեջ, բոլոր հույները ջարդել կուտամ, և որպեսզի մեղք ինձ չի համարվի, ահա քու առջևդ կը հրամայեմ.— Տեր Հայր,— ըսավ ավագերեցին, որ յուր քով նստած էր,— գնա շուտով եկեղեցին, ամեն տեղ իմաց տուր, որ զենքերնին պատրաստ կենան, և առաջին անիրավության եկեղեցիներն իմաց տան և եկեղեցվո մը կոչնակները զարնված վայրկենեն ամեն ոք իրավունք ունենա գտած հույնը սպաննելու։ Տե՛, իմացա՛ր, գնա՛։

Քահանան թևատարած ոտք ելավ երթալու, երբ Թումա, որ նստեր մտիկ կ'ըներ, ձայնը և կերպը փոխելով մեկեն քաղցրությամբ ըսավ քահանային.

— Դու, որ Քրիստոսի և ավետարանի աշակերտ ես, կրնա՞ս այսպիսի անգութ պատվեր մը քարոզել։

— Ավազակներու պաշտպանություն ո՞ւր քարոզեց Քրիստոս, հոռոմ իշխան,— պատասխանեց Զավեն։— Ես, թագավորյալ քաղաքը՝ Կարին, Տրապզոն կախաղաններ տեսա և ավազակներ կախված, ձեր հոռոմի Քրիստոսը ավազակներու ներողություն չի քարոզեր, և մեր հայոց Քրիստոսը կուզե՞ք, որ քարոզե։ Հրաման տուր քու մարդոցդ, որ անիրավություն չընեն, հափշտակություն չընեն, կանանց պատվուն չի դպչին, այդ անառակ երգերը դադրեցնեն. և երբ դու հրաման տաս, մեկը չի հնազանդի, և դու պատժես, այն ժամանակ կիմանամ, թե քու մարդիկդ զինվոր են և ոչ ավազակ. իսկ եթե դու լուռ կենաս, գանգատանաց ականջդ խփես, գողին գողակից կը լինիս և ինձ իրավունք կուտաս, որ քեզ և քոյոցդ ինչ չարիք կրնամ հասցնեմ, և ինձ սրբազան պարտք կը դառնա անիրավությունը, որ քեզմե սկսավ, քեզմով վերջացնեմ. բայց դու եթե գիտնայիր քու գլխուդ հասած վտանգը, ինձ պետք էր շնորհակալ լիներիր, որ ժամանակին եկա հասա. արդեն բոլոր ավանին բնակիչք պատրաստված էին զձեզ ամենքդ սուրե անցնել, և կոտորածը հիմա այս վայրկենիս թերևս սկսած էր, բարեբախտաբար ես եկա և արգելեցի։

Այս վերջի խոսքերը բոլորովին կերպարանափոխ ըրին հույն զորավարը։ Շուտ մի ելավ հրամայեց յուր զինվորներուն, որ երթան բոլոր ավանը իմացնեն յուր կողմեն, որ ամենափոքր անկարգություն

ընողը սուրե անցնել պիտի տար, և թե թուլությունն էր բնակչաց բռնությունը բռնությամբ վանել և անզգամին անզգամությամբ փոխարինել։ Եվ դառնալով Զավենի, որ նորա խոսքերեն բառ մը, շարժմունք մը չի կորցնելով անշարժ նստած էր.

— Իրոք շատ գնորհակալ եմ,— ըսավ,— որ դու խոհեմությամբ վարվեցար այս նյութիս մեջ և արյունահեղության պատճառն արգիլեցիր. ես չէի կրնար հավատալ, թե մեր զինվորները այն աստիճանի անիրավություն ընեն, որ բնակչաց այսչափ զայրույթ պատճառեն. և շիտակն ըսելով ձեզմե առաջ ոչ ոք գանգատ մը չէր ըրած։ Ուստի շատ գոհ եմ ձեզմե։— Այս խոսքերը՝ բյուզանդական կերպարանքին վրա դիմակ ծածկելով ըսելե վերջ՝ ձեռքը Զավենի երկնցուց, որ այս շարժմունքը գուշակելով՝ իբր թե այդ վատ ձեռքը չտեսնելով՝ դարձավ իր դրացյաց և ըսավ.

— Գնացեք դուք էլ, եղբարք, հանդարտեցուցեք երիտասարդները, որ չելլեն տարիքի կրակով բան մը հանեն. լսեցիք ահա իշխանին խոսքերը և պատվերները, դուք էլ ամեն փողոցի գլուխ զինյալ պահապաններ դրեք, որ արգիլեն անկարգություն՝ ուակից որ գա. երթա՛ք բարով։

Մարդիկը գոհ սրտով ողջունեցին և ելան գնացին։ Նույնպես Զավեն այն ատեն ելավ և ձեռքը կուրծքին վրա դնելով, ողջունեց հույն իշխանը և քաշվեցավ յուր ներքին սենյակը՝ ուր ընտանիքը ժողովված կը նստեին. երախայք արդեն քնացած էին։ Հոն իր երեք տղոց ապսպրեց, որ կարգավ գիշերը պահպանություն ընեն և դիտեն հունաց ամեն շարժմունքը. ինք հեծավ յուր ձին ավանին ամեն կողմը պտույտ մ'ընելեն՝ թաղապետները տեսնելեն և զգույշ կենալու խորհուրդ տալե վերջ՝ դարձավ տուն հանգչելու համար այն երկար ավուր քաշած մտավոր ու մարմնավոր աշխատանքին։

Առավոտյան կոչնակին ձայնին ելավ Զավեն երթալու եկեղեցի։ Հունաց համար, որ ավազակությունը թողած հյուր էին հիմա, նախաճաշ պատրաստեցին կանայք։ Մատղաշ տղայք անկասկած իրենց խաղալուն զբաղած էին։ Արփենի, որ քսանչորս ժամվան միջոցին մեջ ամենուն հետ բարեկամ եղած էր, երբ Զավենն տեսավ եկեղեցիե դարձած, դիմեց իրեն հարցնելու, թե՝ «Մայրիկը բերի՞ր», իսկ Զավեն, որ որոշած էր Շիրակ տանելու տղայն Կամսարականաց ամրոցը, «Ես քեզ մայրիկին պիտի տանիմ, սիրուն Արփենիս» ըսավ, և նա այն գաղափարով մխիթարված՝ ներս, դուրս, պարտեզը, փողոցը կը շրջագայեր. երբեմն մտնելով սենյակը, ուր հույն իշխանը և Զավեն նստած էին։ Ամեն բան հայտնի կ'ըներ հոռոմին, որ այդ տղայն բացի դիմաց գեղեցկությենեն, թե իր զարդերուն և բեհեղյա զգեստներուն, թե իր մորթի ճերմկության, թե

ոտքերուն, ձեռքերուն մանրութեան, թե իր համարձակութեան համար տարբերութիւն մը ուներ ուրիշ տեսած տղոցմէն։ Ազնվականութեան կնիքը ճակտին վրա դրոշմված էր, և որ իրեն ավելի հաճելի էր, հունարեն նաև կը խոսեր, վասնզի նախարարական տուներ ինչպես երբեմն պարսկերեն, նույնպես հունարեն խոսելու սովորութիւն մտած էր ժամանակներե ի վեր և շատ պալատներու մեջ հույն ուսուցիչներ և դայակներ կը գտնվեին։ Ջանազան խոսակցութիւններե իմացավ նաև, թե որբ աղջիկ մ'է, ուստի անզգամ խորհուրդ մը հղացավ մտքին մեջ, և երբ բոլոր ավանը զբաղած՝ ամեն ոք կես ավաղակ, կես զինվոր հունաց վրա ուշադրութիւն կը դարձներ, հույն իշխանը Արփենիի հետ կ'զբոսնուր, կը խոսեր, կատակներ կըներ և հանկարծ երբ մեկ միջոց մը մենակ էր իր երկու սպասավորաց հետ, տղան պառկեցուցին. բերանը թաշկինակ մը խցկեց՝ լավ մը փաթաթեց, որ չի կարենա շարժիլ և պարկի մը մեջ դնելով՝ իրեն ուրիշ կարասյաց պես յուր ծառայից մեկուն շալակը տվավ և ինք ձի հեծնելով արտորնոք, բյուզանդական ծիծաղով Ջավենն ու կաղզվանցիք ողջունեց և Բասյան գավառի ճամփան ինկավ։ Երբ ավանեն դուրս ելավ, հինգ-վեց ձիավոր յուր սպասավորներեն հետը, քանի մը վայրկյան սաստիկ արշավանքով հեռացավ յուր փախըստական գունդեն. ան ատեն հանեցին խեղճ տղեկը յուր սոսկալի պարկեն, տեսան, որ մոտ էր խեղդվելու, հանեցին բերնի խցիկը, և թեպետ մարած և ինքզինքեն ելած՝ բայց իշխանը առավ նժույգին վրա, կը քշեր կատաղությամբ, երբ գյուղ կը հասներ, յուր լայն վերարկուին տակ ծածկած խեղճ որբը կ'անցներ արագությամբ, որպեսզի այս սոսկալի գողության հետք մը չի ձգե։ Վերջապես ամայի տեղ մը ջուրի մը քով իջավ ձիեն, տղուն քիչ մը ջուր տվավ խմելու, արյունոտ բերանը լվաց. գույն չէր մնացել սիրուն տղեկին երեսը, աչքերը մարած էին բոլորովին, գլուխը չէր կրնար բռնել. հարցուց, թե բան ուտել կ'ուզե՞ր. երբ պատասխան չառավ, հեծավ ձիուն վրա, տվավ տղեկը թիկնապահաց մեկուն, որ բարեբախտաբար ավելի բնական գթած սիրտ ունենալով ինչչափ կարելի էր ջանաց քիչ շարչրկել, մինչև հասան Կարին։ Հոն ամիս մը հիվանդ պառկելե վերջ, հազիվ թե առողջացավ, և գարնան արևն իր աչաց կենդանություն բերավ։

Բայց այս միջոցիս ի՞նչ ըրավ Ջավեն. երբ տեսավ թե Արփենին չի կա. բոլոր Կաղզվան վեր-վար ըրավ, ամեն ծակ, ամեն խոռոչ խույզ և խնդիր եղավ, և երբ ամեն հույս կտրվեցավ, խեղճ զինվորը ձեռքը ծնոտին դրած հուսահատության արցունք կը թափեր, կը հարցներ Երասխա ալիքներուն, կը հարցներ երկնքի թռչուններուն, ամենքն անտարբեր՝ պատասխան չէին տար։ Վերջապես հուսահատ՝ կ'երթար եկեղեցի ժամերով կ'աղոթեր և տխուր տուն կը դառնար։ Շաբաթն անգամ մը, կը հեծներ ձին, կ'երթար լճին քով կը նստեր, անթարթափ կը նայեր կըղզին և կը դառնար, իսկ երբ լիճը կատարյալ սառեցավ, յուր Տիկնոջ գերեզմանին վրա արտասուք կը թափեր և կը դառնար։ Օր մը, որ մեծ պահոց երկրորդ կիրակին էր, ելավ դուրս, մտածություն մը զինք բոլորովին գրավեր էր. հազիվ ճաշն ըրավ, ձին ուզեց և գնաց այն ճգնավորաց մենարանը, որոց դիմեր էր յուր վիրավորը դարմանելու և մեռելները թաղելու համար։ Առավ նոցա վանահայրը, հեծուց յուր ձիուն վրա և իջեցուց լճին քով. սառած ջուրին վրայեն քայլելով բերավ Բյուրեղի գերեզմանին վրա, հանգստյան կարգ մը կատարել տալեն վերջ խնդրեց, որ Ավետարանը գերեզմանին սառած հողին վրա դնե և բանա, Վանահայրը միամտաբար բացավ, Ջավեն մատը դրավ՝ «Կարդա՛, Հայր Սուրբ, սա խոսքը»,— զրուցեց. «Խնդրեսջիք և տացի ձեզ, հայցեցեք և գտջիք, բախեցեք և բացցի ձեզ. զի ամենայն որ խնդրե՝ առնու և որ հայցե՝ գտանե և որ բախե՝ բացցի նմա։ (Ղուկաս գլ. ժա. 9)»,— կարդաց քահանան։ Ջավեն ձեռքերը երկինք տարածեց՝ «Փա՜ռք քեզ, աստված իմ»,— աղաղակեց։ Այն րոպեին կարծես ծերը երիտասարդացավ, իր աչաց կորովն եկավ, և երբ տուն դարձավ, ամենքը փոփոխությունը տեսան և զարմացան. առջի Ջավեն եղբայրն էր յուր դրկիցներուն և բարեկամաց համար։ Ջատիկը կատարեց ուրախ, զվարթ յուր ընտանյաց և աղգականաց հետ, և չորեքշաբթի առավոտուն հասարակ մշակի զգեստներ հագած, մախաղ մը, վերարկու մը, երկսայրի կարճ սուր մը գոտին մեջ ծածկած, տրեխներ ոտքը և գավաղան ի ձեռին, ժողովեց կինը և զավկները, խրատեց զամենքը, ապսպրեց մորերնուն միշտ հնազանդ լինիլ, իրենց մեծ եղբայրը հարգել և մեծարել, զնա էլ հորդորեց ամենուն հետ քաղցրությամբ և սիրով վարվիլ, օրհնեց զամենքը, համբուրեց մեկիկ-մեկիկ և ելավ երթալ յուր կորուստը փնտրելու։

Մենք թողունք Ջավեն Կարնո ճամփուն վրա, և երթանք փնտրել Գրիգոր ու Սուրեն, որոց դիակունք չի գտնելով նա՝ հույս ըրած էր, թե օր մը, երբ իշխանիկը դառնար, Արփենին գոնե իրեն պիտի ներկայացներ, միայնակ և սիրասուն նշխար Մամիկոնյան հայրենի ճոխության և հրեշտականման մոր և քրոջ։

Վիրավորը մեզ պատմեց, թե ինչպե՞ս Սուրենի և Գրիգորի ձիավոր խումբը Վարդանաբերդի հրդեհը տեսնելով դիմեր էին հոն նահանջի ճանապարհ միշտ իրենց հուսալով, և թե ինչպես թշնամվույն բազմաթիվ հեծելոց խումբը վրա հասնելով՝ շրջապատյալ համենուստ սկսած էին պատերազմիլ. Սուրեն քանի մը հոգի կորսնցնելեն վերջ իր խումբեն, տեսնելով անխուսափելի վտանգը, փոքրիկ բլուրի մը վրա քաշվեցավ

իրենց ձիերով. այդ բլուրը Վարդանաբերդի գերեզմանատունն էր, քիչ հեռավորությամբ։

Այդ գերեզմանոցին մեջ, մահարձանները պատնեշ առած, հուսահատ կռվով իրենց կյանքը թանկ ծախել որոշեցին հայ փոքրիկ խումբը։ Սուրենի հզոր ձայնը՝ «Տղա՛ք, մեռնի՛նք, բայց մեռցնենք և այնպես մեռնինք քաջությամբ», կորոտար ամենուն ականջին. այդ քառասունհինգ հոգին շրջապատյալ հազարներե, այնպիսի դիմադրություն ըրին և այնպիսի կատաղությամբ կռվեցան երկու ժամ, իրենց աղեղներեն ելած նետերը, իրենց պարսատիկներեն ելած քարերը այնպես կը հարվածեին հեռվեն, և հարձակումներու դեմ իրենց վաղակավորներն ու մուքճերը այնպիսի հարվածներ ավին թշնամվույն մոտեն, որ Շեյխ Ալի այդ քաջության վրա հիացած՝ դադրեցուց հարձակմունքը և պատգամավոր մը հուղարկեց հայտնելով, թե՝ «ինք պատրաստ էր իրենց կյանքը շնորհել, եթե անձնատուր լինին»։ Եվ կես ժամ միջոց կուտար մտածելու։ Սուրեն դաշնադրության մտնելու հանձնառու եղավ. բայց արաբը պայման մը միայն ուներ. «կյանք միայն շնորհել»։ երբ Սուրեն դիշանիլ հանձն առավ, իրեն դեմ անկարծելի դժվարություն մը ելավ։ Գրիգոր, որ առյուծի պես և յուր հասակեն վեր պատերազմեր էր, «մեռնի՛նք» բառեն զատ բերնեն ուրիշ խոսք չէր հաներ, այդ հայրենի պալատան բոցն ու ծուխը զինք համոզած էին, թե իր մայրը և քույրերը մեռած էին, ուստի «մեռնի՛նք, մեռնի՛նք» կը կրկներ։ Սուրենի բոլոր աղդեցությունը անօգուտ պիտի լիներ, եթե ամեն պատերազմողք վերջապես հանձն չառնվին գերությունը կենաց հետ փոխանակել։ Ուստի պատանին երբ մինակ մնաց, և ամենքը զենքերը թողին, ինք այն բոլորին ինկավ գերեզմանի մը վրա, և արտասվաց հեղեղ մը սկսավ իջեցնել. բոլոր Սուրենի հորդորներուն և ապագային համար տված հույսերուն պատասխան անգամ չի տվավ։ Մամիկոնյանց սերունդը է՛լ անդգա եղավ շղթաներու, ինչպես անդգա էր յուր քեռվույն ձայնին, որ քաղցրությամբ՝ «Որդյակ Գրիգոր, այս օրերս էլ կանցնին, դժբախտությունը ինչչափ որ սոսկալի լինի, մշտնջենավոր չի կրնար լինիլ»,— կ՚ըսեր։

Բայց պետք էր կամա-ակամա անողոք բախտին հնազանդիլ, մանավանդ, որ կը տեսներ Սուրեն, այդ մարդը, որուն վրա երբեք կյանքին մեջ շողոքորթություն, փոքրկությունն, վատություն չէր նշմարած, լռությամբ և անմռունչ կը տաներ նախատանաց, հայհոյությանց և հարվածոց։ Այդ աննկուն Կամսարականը, որ անտարբեր էր իր անձին համար համենայնի, միայն այն խնդրեր էր Շեյխեն, որ զինք այդ պատանվույն չի բաժնե, և սրաբը խոստացավ և խոստմունքին վրա կեցավ։ Թոյլը այդ դաժանելի ուղևորության մեջ, ծանրաբեռնյալ շղթայուք, շատ անգամ հետի, դատապարտյալ եղանակաց խստության։ անոթության և ծարավի, ինքզինք զրկելով հացին պատառեն, ջուրին կաթիլեն, ձնողական խնամքով հաղիվ կրցավ ողջ հասցնել զԳրիգոր Կոգովտի գավառներեն Դամասկոսի շրջակայքը, ուր էր Շեյխ Ալիի բնակության վայրը։

Հոն՝ այդ գերության շղթաներուն մեջ թողլով այս մեր երկու նախարարազունքը, դառնանք Հայաստան, որուն մասամբ ոտնակոխ և եղերական վիճակը հայանի եղավ բավական մեր մինչև հիմա տված նկարագրեն։ Տեսանք, թե ինչպես երջանիկ տուներ բարձր և խոնարհ, փոկան, կործանեցան և հիմնահատակ եղան դժոխային արշավանքի մը սաստկության առաջ։ Տեսանք նաև, թե այն Հունական կայսրությունը, որ երկրին տեր ինքզինք կը համարեր, ինչպես պաշտպանեց երկիրը. տեսնենք հիմա, թե նոքա, որոնց պարտքն էր իրենց անձանց և ազգին վրա հսկել, ի՞նչպես իրենց պարտավորությունը կատարեցին։

ԳԼՈՒԽ Զ

Հայաստան բաժնված երկու մեծ ինքնակալությանց՝ Բյուզանդական կայսրության և պարսից Սասանյան պետության մեջ, հարկատու երկուքին, ոտնակոխ երկուքեն՝ աննկարագրելի ալեկոծության մեջ կը ծփար շարունակ։ Այս երկու մեծ տերությունք միևնույն հիվանդությամբ վարակյալ՝ արտաքուստ զորության փայլ մը ունեին, բայց ներքուստ ալերկուքն էլ հավասար փտած և որգնոտած կործանման վիճակի մեջ էին։

Կոստանդնուպոլիս՝ ոսկեղեն գահույից վրա նստող հռոմայեցվոց ինքնակալ կայսրը, որուն բազկատարած պաղատանոք կը դիմեին մեր նախահարք, երբ Հազկերտ արքայից արքան քրիստոնեությունը բնաջինջ վերցնել կ՚սպառնար Հայաստանեն, այդ «Երանելին Թեոդոս կայսրը, որ խաղաղասեր էր ի Քրիստոս» և անարգ հարկատու հոն Ատտիղատա, այն Ատտիղատա, որ Մեծին Վարդանա բազկին զորության առջև ընկրկեր էր ի Դարբանդ, Հազկերտի աչաց առջև, նույն Ատտիղատա, որ հռոմեական ինքնակալությունը կը դողացներ արևելք և արևմուտք, և որ այդ երանելի Թեոդոս չհաջողելով թունավորել, ուր գթությունը կը գտներ և ամեն արժանավոր նախատինքներ կը կլաներ։ Եվ այդ կայսրության օրերը բարեբախտ ու երջանիկ էին արդի վիճակին հետ բաղդատելով. վասնզի հիմա երկու հարյուր տարի ժամանակ անցնելով ապականությունը յուր հետին աստիճանները գտեր էր. կրոնամոլություն և անբարոյականություն, գողություն և անարդություն, մեղկություն և

անգթություն, շռայլություն և ագահություն, հանդգնություն և վատություն, անխղճություն և խղճահարություն, միշտ մոլությունք, միշտ ծայրեր զարմանալի հակակշիռք կազմելով, բուն ճշմարիտ առաքինություն ոչ ուրեք, ոչ բանի մը մեջ կ'երևար։

Թեոդոս Մեծեն վերջ այդ կայսերական գահույից վրա իզուր բարձր մարդ կը փնտրե ոք և դժվար թե առանց աններելի պակասությանց մեկը կարենա գտնել։ Ամենեն հռչակավորն Հուստինիանոս՝ օրենսդիր, մեծագործ, հաղթող շնորհիվք երկու քաջ զորավարաց, ամենախոնարհ ծառա է յուր կնոջ Թեոդորայի, որուն ամեն քմահաճույքից և անիրավությանց գործիք կը դառնա ամեն բոպե։ Դյուցազնական քաջությունը նաև կերպարանափոխ եղած կը զարմացնե զմարդ, երբ կը տեսնե Բելիսար սարսափ թշնամյաց բանակներու, նեցուկ պետության՝ հաղթությամբ դարձած դափնիներով, յուր տան և կնոջ խայտառակությունքը պատժել խորհելու վայրկենին, կայսրուհվույն մեկ նամակեն սոսկացյալ՝ յուր մեղավոր կնոջ առջև տարածյալ՝ ոտքերը կը պագնե, մշտնջենավոր և հավատարիմ ծառա զինք կը դավանի. և «կնոջը և կայսեր ամենախոնարհ ծառան ասպարիզին վրա վեհ դյուցազուն կը դառնա», թագավորության կը տիրե, և նվիրյալ արքայական պսակը կը մերժե, և հաղթանակի հանդիսին կը տեսնվի հետևակ իր գերի բռնած թագավորներուն առջևեն՝ երկրպագելով Թեոդորայի և Հուստինիանոսի գահույից։

Վերջը քանի որ մեր պատմության ժամանակին կը մոտենանք, կը տեսնենք, որ կայսերական գահույից վրա բարձրացյալ մարդիկ ավելի կը պզտիկնան, և մեծ կարծվածները խառնուրդ մը ունին առաքինության և մոլության. ի բաց թողյալ Մորիկ հռոմայեցի կամ Հայկազն (որու ծագումն նշանակություն պետք չէ ունենա հայու համար), որ ավելի ազնիվ սիրտ ցցուց մեռնելու վայրկենին, քան թե գահույից վրա. կը տեսնենք և Հերակլ՝ դյուցազն թագավորության սկիզբը և վատթար վերջերը։ Այն մարդը իր մեծամեծ հաղթությամբ պարսից դեմ, այն տկարության հասցուց բերավ այդ երկու թագավորությունքը, որ արաբաց հարվածներուն չկրցան դիմանալ և ընկճեցան կամ տապալեցան։

Ի՞նչ հարկ խոսելու Հույն կայսրության ժողովրդոց վրա, որոնց մայրաքաղաքի ապականությունը սովորությանց և բարուց, զեխությանց և թշվառությանց, վատությանց և անզգամությանց անցան զանցան Հռոմա քաղաքացվոց վերջին օրերը, մանավանդ, որ սոքա ավելցուցին ամեն մոլությանց վրա կրոնամոլություն մը, ուր կայսրեն սկսյալ հետին ձկնորսը ինքզինք աստվածաբան կը կարծեր, կրկեսները կրոնական վիճաբանությամբ կ'սկսեին և արյունահեղ կռիվներով կը վերջանային, և անիմանալի հավատո խորհուրդները թեթևամիտ և կիսուսումն մարդկանց խորհրդածությանց նյութ էին։ Այդ մեծատարած կայսրության մայրաքաղաքին մեջ Սուրբ աստված երգելու խնդիր մը ավելի կարևորություն ուներ, քան թե բոլոր Ափրիկեի կորուստը. թշնամին՝ հոն, պարսից, ավար, պուլկար, արաբ, աշխարհքի ծայրերեն կը հասներ, հուր, սուր, կոտորած և ավերմունք կը բերեր շուրջանակի, Կոստանդնուպոլսո պարիսպները կը ծեծեր և ներսը քաղաքացին կրոնական վիճաբանությունք նախամեծար կը համարեր և երկրորդական առ դուրս հասյալ վտանգը։ Եթե հաղթվեր անհոգության և վատության չէր հանցանքը, այլ աստվածային բարկության պատուհասն էր. եթե հաղթեր, Աստվածամոր շնորհքն էր։ Այս կրոնական զբաղմունք ամեն օր նոր հերետիկոսությունք կը ծնանեին և նոր վեճեր։

Նույն ոգին ուրիշ ձևով կը վարեր Պարսից պետությունը. հաղթող արքայից արքան արևուն և կրակին կուտար հաղթության փառքը. հպատակ այլակրոն ժողովուրդք խիստ հալածանաց կ'ենթարկվեին ժամանակ-ժամանակ. և ի բաց առյալ քանի մը մեծ մարդիկ, վատթար և բռնավոր կառավարություն մը կը տիրեր ամենուրեք. արդարության գաղափարը սահմանափակ էր նաև այդ Մեծ Խոսրովի մտքին մեջ, որ Նուշիրվան կանվանվեր և որ Սասանյանց փառքն եղած էր յուր քաջությամբք և հաղթությամբք, երկարամյա թագավորությամբ, և ինքզինք արդար կը սիրեր անվանել և որ մահվան անկողնին մեջ իր ժառանգին բարի խրատներ կուտար. «Արդարադատ եղիր, սանձահարե անիրավները, մխիթարե թշվառները, սիրե երիտասարդները, պաշտպանե գիտությունը, հետևե ծերոց խորհուրդներուն, մի՛ թողուր կառավարությունը երիտասարդաց և քու ժողովրդոցդ երջանկությունը քու նպատակդ լինի։ Ընդարձակ թագավորություն մը կը թողում քեզ, եթե իմ խրատներս լսես, կը պահես զայն, եթե արհամարհես, կը կորսնցնես»։ Այս խոսքերը զրուցելեն վերջ, յոթանասուն տարի նաև չի քշեց, յուր հաջորդներեն և ոչ մեկը իր բնական մահվամբ չի մեռավ, և այդ թագավորությունը, որ Միջերկրականե մինչև Հնդկաստան, Չինաց սահմաններեն մինչև Արաբիա ամենքը կը սարսեցներ քանի մը տարի առաջ, հանկարծ անհետացավ կատաղի աղանդավորաց հրոսակներու առջև, որոնք ոչ անուն և ոչ կրոնք ունեին նույնպես քանի մը տարի առաջ։

Այսչափ երկայն չէինք խոսեր այս երկու մեծ ինքնակալությանց վրա, եթե Արշակունյաց թագավորության ժամանակեն սկսյալ Հայաստան սոցա երկուքին հպատակ, հարկատու և պատերազմի դաշտ եղած չլիներ անընդհատ։

Հայոց ազգը երեքի կը բաժնվեր իրոք՝ որոնց երկուքը ամեն բան էին, իսկ երրորդը նշանակություն չուներ։ **Եկեղեցական մարմինը**, որուն

գլուխը կաթողիկոսն էր, և զոր նախարարներն և եպիսկոպոսները կ'ընտրեին. ուներ յուր արտոնությունները, վասնզի ինքն էր օրենքները շինող։ Իրեն հետ կուգար Նախարարական մարմինը և Ազատաց խումբը, որ երկրին տերերն էին։ Հրամայել, իշխել, պատերազմել էր իրենց գործը։ Նախնի սովորությունները և արտոնությունքը կը պահպանվին դարձյալ իրենց համար, քաջությունը ժառանգական էր այդ ընտանյաց մեջ, իրենց կարգը և գահույքը հարգված էին նաև հունաց ինքնակալներե և Սասանյանց թագավորներե, հարկ կ'առնեին եկեղեցականաց պես և չէին վճարեր, մարմնավոր պատիժ՝ գանահարություն չի կար իրենց համար. ինչպես վանքեր, նույնպես իրենց ոստանները, ամրոցները, բերդերը, դղյակները ամուր դիրքերու վրա և պարսպապատ շինված բավական ապահովյալ էին թշնամյաց և ասպատակաց հարձակմունքներեն։ Կրոնասեր սովորաբար՝ իրենց պալատներեն ավելի վանքերու և եկեղեցիներու շինությանց և կալվածոց կուտային իրենց գանձերը։ Պարսկական և հունական սովորությունք, զեխությունք և անառակությունք բնականաբար դյուրավ մուտ կը գտնեին իրենց մեջ։ Ինչպես բնական է ազնվատոհմությանց ամեն տեղ արհամարհ աչոք նայիլ հասարակ ժողովրդյան վրա և հարստահարել, նույնը սովորաբար կ'ընեին հայոց նախարարք և ազատք։ Վասնզի այդ երրորդ մասը՝ ժողովուրդը, որուն մեկ իրավունքը չհիշվիր մեկ տեղ մը, չի կար հաստատություն մը, որուն վրա ինք հենվեր, չի կար կազմակերպյալ օրենք մը, որ զինք պաշտպաներ. եթե լիներ ևս՝ ե՞րբ օրենքը առանց զորության կրցեր է մեկուն պաշտպանություն լինիլ. օրենքներն ուժ ունենալու համար միշտ կազմակերպյալ մարմնո մը պետք ունեին, և օրենքներն արդար գործադրությամբ միայն կրնան ժողովրդոց սիրելի լինել և իրենց սրտին մեջ տպավորվիլ՝ սովորություն դառնալ։ Հայաստանի օրենսդիրքը բացի հոգևոր գրյանքե ուրիշ օրինաց տեղեկություն չունեին. Հուստինիանոսի օրենքները գրեթե վեց հարյուր տարի վերջ հայերեն թարգմանություն ունեցան. ի՞նչ ուրեմն կը կառավարեր այս ժողովուրդը— սովորությունք և խղճմտանք։ Վաղարշակա օրենքները յուր արքունյաց պերճության և նախարարաց գահույից համար կարգադրությունք էին, և քրիստոնեական կրոնքին հետ հրեությունը այնչափ ազնվացեր էր, որ Բագրատունիք, Ամատունիք, Գնթունիք հրեական ցեղերե իջած կը համարվեին, որ շատ կարելի է թե սխալ մը լիներ. Արծրունիք, Մամիկոնյանք, Կամսարականք օտարազգիք էին։ Եվ այս նախարարները հայ ազգին տյարքն էին, իրենք ազատ, և ժողովուրդն անազատ. նույն հանցանքին համար կանոնագիրքն կը հրամայեր, որ քահանան և ազատը 100 դրամ տուժե, իսկ անազատը 50 տուժե՝ շատ մը ծեծ ուտե, վասնզի ազատին մարմնական պատիժ արգիլված էր, ուստի՞ց,— հավանական թե ի սովորությանց։

Կային ժամանակներ, ուր նախարարության ձեռքը այն աստիճան կը ծանրանար ժողովրդյան վրա ոսկվո և արծաթի հարկապահանջներ դնելով, որ հեղինակ մը նմանեցնե այդ խեղճ շինականը, այսինքն ժողովուրդը՝ «Մարդու, որ կ'ընկնի ի ծով և հնարք չի գտներ ելնելու» և «Հիվանդի, որ ցավեն տագնապյալ խոսելու նաև կարողություն չունի»։

Ո՛վ որ լավ դիտե և ուսնի և գիտնա խորհրդածել պատմությունը, կը տեսնե, թե աշխարհագրական դիրքն էր պատճառ, ինչպես ոմանք կարծեցին նոր ժամանակներս, որ հայ ազգը կը տկարացներ թշնամյաց դեմ՝ կը բաժներ և անմիաբան կ'ըներ, այլ այդ նախարարական իշխանությունը, որ մեծ և պզտի բռնավորությանց բաժնելով երկիրը, կեդրոնական իշխանությունը կը տկարացներ, և այդ բռնավորները գործիք կ'ըներ օտարին բանսարկությանց և միջամտությանց. ինչպես հին ժամանակներե ի վեր սխալ կարծիք մը կը տիրե, թե հայք անմիաբան են, իբրև թե անմիաբանությունը բնածին պակասություն մը լիներ հայուն քով։ Եթե հայք միաբանեցան 300 թվականին, կրցան ընդունիլ միաբանությամբ քրիստոնեությունը, եթե իրենց օրինակին և ազդեցության հետևեցան Վիրք և Աղվանք գրեթե նույն ժամանակին, եթե հայ լեզուն կրոնից պես կրցեր էր անցնիլ այդ սահմաններեն և Կուր գետի եզերքներեն մինչև Կորդվաց լեռները տարածվիլ, ինչո՞ւ չտեսնենք, թե միմիայն պատճառ՝ քաղաքագիտության պակասությունն էր Արշակունի թագավորաց քով, որ Հայաստան անիշխանության կը մատներ։ Եթե Տրդատ նախարարաց դեմ նույն հանճարն ու զորությունը ի գործ դներ, ինչ որ դրավ պարսիկը, և կռապաշտությունը վարելու համար Հայաստանե, Արշակունյաց աթոռը յուր մեռած վայրկենեն չէր սասաներ ի հիմանց և նոսրով յուր որդին չէր կարոտեր հունաց ամբարտավան օգնականության յուր հորն աթոռը բարձրանալու համար։ Ի՞նչ կարոտություն ուներ Աղկունյաց դավաճան նահապետը և նախարարությունը ջնջելե վերջ՝ տեղը նույն արտոնությամբ Մամիկոնյանք հաստատելու։ Բայց նախարարությունը երբ հանդարտ էր, թագավորներու համար ծուլության դյուրություն կուտար երկրի կառավարության մասին, միայն թե թագավորները զորավոր լինեին։ Մենք կը հասկանանք, թե այդպիսի՛ դարուց խորարմատ նախարարությունը հիմնահատակ ընել դյուրին չէր. բայց նույնպես դյուրին չէր հազարավոր տարիներով արմատացյալ կռապաշտությունը ջնջել, և այդ կրցավ ընել Տրդատա կորովի բազուկը։ Ինք պետք էր ընել և այդ, և ոչ յուր անպիտան հաջորդներեն Արշակա թողուլ, որ մոլությանց և հիմարությանց անճոռնի խառնուրդ մ'էր և

քան զամենքը վատթարագույն, և, որ բնական էր, թե չի հաջողեր այդ-պիսի մեծ ձեռնարկության։ Եվ հետևանքն այն եղավ, որ այս երկու թշնամյաց՝ թագավորության և նախարարության պատերազմին մեջ, առաջինն անհետացավ և երկրորդը խաղալիք լինելով օտարին՝ պարսկին և հոռոմին, երբեք չի մտածեց անկախության փորձ մը փորձել թեպետ շատ հարմար վայրկյաններ ներկայացան։ Այլ իր քաջությունը կը վատներ օտարին ծառայության մեջ, Սասանյանց բանակներուն հետ կերթար մինչև Թրքաստան հոնաց և հեփթաղաց հետ կը պատերազմեր, բյուզանդական բանակներուն հետ կ'երթար մինչև Ափրիկե և Իտալիա և Դանուբի ափանց վրա վանդալաց և գոթաց և բուլկարաց և սարմատացվոց հետ պատերազմելու համար։

Բայց անկարելի է ուրանալ, որ նախարարությունը դյուցազնական վայրկյաններ ունեցավ. Հազկերտի պես մեծ և հաղթող թագավորի մը դեմ խիզախեց Վարդանա հետ և քաջությամբ պատերազմեցավ, Վահանա հետ Վաղարշ խոնարհեցուց և Կավատա կրոնամոլությունը հալածեց. Վարդան երկրորդի հետ Նուշիրվան խոսրովու լուծը թոթափել հանդգնեցավ։ Բայց բոլոր այս պատերազմաց մեջ նախարարությունը մնծավ մասամբ միարան էր, վասնզի կրոնքի պաշտպանության էր կռիվը, իրեն ցրվյալ զորությունը միացնելու մեծ շարժառիթ մը պետք էր՝ կրոնքը, վասնզի նախարարության բնությունը անիշխանություն, անմիաբանություն էր։

Իսկ անմիաբանության մասին՝ հայերը նույնչափ անմիաբան եղած են, ինչչափ ամեն ազգինք, որ զորավոր կառավարություն չեն ունեցեր երբեք։ Իրենք ոչ երբեք ունեցեր են հունաց պես քսանեհինգ տարի քշող քաղաքական պատերազմ մը Պեղոպոնեսյան պատերազմի պես, թեպետ նախարարությանց անմիաբանությունը հար և նման էր այդ Հունաստանի փոքր, փոքր հասարակապետությանց, միայն այն տարբերությամբ, որ հոն ժողովուրդն ազատ և ամեն բան էր, և ուսմունքը բանական մարդը բարձրացուցեր էր, իսկ Հայաստան՝ ժողովուրդը ոչինչ էր, և իր բռնավորներն ամեն ինչ։ Հունաստան ծովե շրջապատյալ բնական ամրությամբ դարձյալ մեծ տերության մը կարգ անցնելու համար պետք եղավ, որ Մակեդոնացվոց լուծին տակ անցնի և Աղեքսանդրի հետ արշավե։ Առանց զորավոր կազմակերպյալ իշխանության և խիստ օրինաց անկարելի է միաբանություն, վասնզի փոքրիկ շահեր մեծ շահերու դեմ կ'ապըստամբին, և մեծ շահեր զորության պետք ունին պզտի շահեր և անոնց բանսարկությունքը ճնշելու համար։ Խիստ կառավարության ամենեն անպիտանը նախադասելի է անիշխանության։ Հայ նախարարությունն անիշխանություն էր արմատացյալ։ Եվ որովհետև չի կրցավ կանոնավորյալ ազնվապետություն մը նաև կազմել, ինք ինկավ գահավեժ և ազգն էլ իր հետ տարավ։ Այդ ազնվապետությունը, եթե կարենար կազմել նախարարությունը, ազգին նաև երջանկության ճամփա թերևս բանար. բայց ո՞նիցե բան կազմելու համար՝ արդարության և կանոնի մը հնազանդել հանձն առնելու է, այս կամքը հազիվ քանի մը նախարարաց քով կերևի պատմության մեջ, վասնզի անիշխանությունը կը ներե միայն սանձարձակ գեղծմունք՝ ուսկից կամոք և մասամբ իսկ զրկվիլը շատ մեծ առաքինություն է։

Հայք ընդհանրապես միաբան եղած են միայն այն վայրկենին, երբ իրենց կրոնքին բռնաբարություն հասներ ուրէ իշխանութենե և զորութենե. ամեն բանի անտարբեր հայը միշտ պատրաստ կը տեսնենք բռնությունը բռնությամբ վանելու, և եթե անկարելի լինի, ամեն հալածանաց տանելու անխախտ կենալով հայրենի դավանությանց վրա։ Ամենուն հայտնի է, և վերն էլ հիշեցինք, թե ինչպես հայ քրիստոնեությունը անընկճելի մնաց Սասանյանց կռապաշտության դեմ. նույնը կը տեսնենք նաև Բյուզանդիո կայսերաց բռնությանց և ամեն տեսակ պատճառաբանությանց դեմ. կրոնասիրություն էր այս ընդհանուր նկատմամբ, բայց անիշխանությունը անմիաբանություն կարծողաց կը ղրուցենք, թե ավելի հետևանք էր նա եկեղեցական իշխանության կանոնավորյալ կազմության, որ հզոր մարմին էր ձևացյալ վերուստ ի վայր և զորավոր կապով շղթայալ։ Տգետ կամ գիտուն այդ եկեղեցական կազմությունը բյուզանդական բոլոր աստվածաբանական ուսմանց՝ նրբությանց և իմաստականությանց հետ կրցավ մաքառիլ ու մրցիլ։ Մերժեց նորա իրավացի և անիրավ՝ ուղղափառ կամ չարափառ պահանջմունքները և մնաց անթափանցելի ամեն վիճաբանությանց և ամեն հալածանաց դեմ և անխախտ պահեց ինչ որ անգամ մը Լուսավորչե առած էր։

Կաթողիկոս մը կը հնազանդեր կամ կը խոնարհեր Հերակլ կամ Կոստանդին կայսերաց, բայց եկեղեցական մարմինը և ժողովուրդը անշարժ կը մնար հայրենի կրոնական դավանությանց իմանալով կամ չիմանալով։ Եվ այդ կաթողիկոսը կամ յուր հաջորդը վերջը-վերջը պետք էր ընդհանուրին հետևեր, եթե չուզեր բաժանակից սատանայի համարվիլ։

Եթե թագավորություն կամ նախարարություն կարենային զորավոր կառավարության մը ձև առնուլ եկեղեցական իշխանության պես, այն ժամանակ անիշխանության վտանգեն ազատ կը լիներ Հայաստան և կրնար ակնածելի լինիլ իր զորավոր դրացյաց։ Բայց դժբախտաբար երբեք նախարարությունը այդ չէր խորհած, և որ շատ կարևոր ու գործադրելի էր այս միջոց ժամանակիս մեջ, որուն պատմությունը կը գրենք։

Եվ Թեոդորոս Ռշտունի կը մտածեր, այդ մարդը որ «մորմոքյալ

ընդ կորուստ աշխարհին», Հունաց հիմար Սպարապետին ամբարտավան անհոգությունը չէր կրցեր շարժել և իր հորդորներով ոչ օգուտ, այլ նախատինք քաղեր էր։ Հիմա որ ականատես էր՝ ինչ որ արդեն գուշակեր էր, ավերմունք հրայրյացք, կոծ ու լաց կը տեսներ և կը լսեր, և ինչ դարման որ կարելի էր, կըներ և այնպես կը շարունակեր իր ճամփան անցնելով Գողթան, Նախջևան, Կոգովիտ, ուր դառն հայեցվածք մը ձգեց Վարդանաբերդի վրա. կ'երթար Տայոց գավառը թիկնապահաց փոքրիկ խումբով մը և կ'իջներ ի Թավուսկերտ ավան, ուր հին ապարանքն էին Տայոց Բագրատունի իշխանաց, և ուր կը բնակեր միայնակ նույն ժամանակներ Համասպրուհի տիկին, մայր Վարազտիրոցի, կին Սմբատ Մարզպանին Հայոց և Վրկանաց, որուն քաջությանց համբավը հռչակյալ էր բոլոր արևելք և որ այնչափ սիրելի եղած էր Պարսից թագավորին յուր հավատարմությամբ և որուն հիշատակը կը պատվեր Թեոդորոս Ռշտունի յուր հայր և վարժիչ պատերազմական արհեստից անվանելով։ Մանավանդ որ սերտ բարեկամությամբ կապված էր Վարազտիրոց Ասպետի՝ նորա որդվույն հետ, որ նույն ժամանակները Արշիպեղագոսի մեկ կղզին աքսորյալ էր ընտանյոք Հերակլ կայսրեն։

ԳԼՈՒԽ Է

Ժամանակն արդեն ձմեռային՝ ցուրտը սաստիկ էր այն տարի Հայաստանի բարձր գավառներուն մեջ։ Եվ այդ Թավուսկերտի պալատին մեջ, ուր պառավ Տիկին մը քաշված կը բնակեր, որ շատ փառք, մեծություն, պատիվ տեսած էր յուր էրկանը կենդանության և որդվույն առաջի տարիները, և որ՝ այն օրերը կը հիշեր, երբ արքայից արքային ընծաներն ու նվիրակները իրարու կը հաջորդեին, հաղթությանց ավետաբեր սուրհանդակները շարունակ յուր դուռը կը բախեին և Պարսկաստան ու Հայաստան Բազմահաղթ անունը Բագրատունյաց իշխանին կուտային. իսկ հիմա ինք Տիկինը մոռցված, բարձիթողի եղած, այդ հայոց կանանց առաջինը երբեմն պատվո և հարստության մեջ, կը նստեր տխուր ձմեռվան պես և կը համբեր օրերը, որ լուր չէր առած յուր սիրական և անդրանիկ որդվույն։

Թեպետ մահ և աքսոր տխրություն բերեր էին այդ պալատը, և Տիկինը սգավոր, բայց ողասավոբաց, աղախնյաց և թիկնապահաց թիվն ու հանդերձանքը գրեթե չէր նվազյալ։ Երկրին կառավարությունը թեպետ Սարգիս՝ բնիկ Տայեցի իշխանի մը ձեռքն էր, բայց ոչ երբեք առանց Բագրատունի Տիկնոջ խորհուրդին բան մը կը կատարվեր, վասնզի այս Սարգիս այն քաջերեն էր, որ Սմբատ Մարզպանի բախտին և դրոշակին հետևելով՝ փառաց և մեծությանց տեր եղած էին։

Երբ այսպես Տիկինը տխուր և միայնակ նստած էր, իմացուցին իրեն, թե Սարգիս իշխանը կը խնդրեր զինք տեսնել, և թե հետը երիտասարդ մ'էլ կար։ Եվ Սարգիս մտնելով խորին հարգանոք ողջունելեն վերջ Տիկինը՝ ներկայացուց Ներսես սպան, որ նոր կը դառնար Հունաստանե և որ նամակ ուներ Վարազտիրոց Ասպետե առ Տիկին և առ Թեոդորոս Ռշտունի։

Բագրատունի Տիկինը առավ յուր որդվույն նամակը և շտապով կարդալեն վերջ երկրորդեց և երրորդեց իր ընթերցմունքը, վասնզի շատ համառոտ էր, և դառնալով զորականին՝

— Կը տեսնես, որդյակ,— ըսավ,— իմ զավկիս նամակը շատ համառոտ է. քեզմե պետք է տեղեկություն առնեմ, ինչպես ինք կը գրե. ինչպե՞ս տեսար զինք, լա՞վ է, առո՞ղջ է, ինչպիսի՞ կղզի է այս աքսորանաց կղզին. մի՞թե ազատելու հույս չի կա...

— Առողջությունը լավ վիճակի մեջ է, վասնզի այդ կղզին շատ գեղեցիկ է՝ օդն առողջ, նարնջի և լիմոնի ծառերով զարդարված, թեպետ խիստ պահպանությամբ կը հսկեն, որ չի փախչի. ընտանիքն էլ բոլորը լավ են։ Իսկ ազատելու հույս չկինիլ կարելի չէ, ինչպես հայտնի է, կայսրը իրեն խոստացել է երդմամբ ազատություն, բայց պալատին մեջ կան թշնամիք, որ կը ջանան հետաձգել այդ խոստմունքը, ինչպես ես կրցա իմանալ։

— Կրնա՞նք իմանալ ինչպիսի՞ անձինք են, որ քեզ այդ տեղեկությունքը տվին։

— Այո, իշխանուհի, Թեոդոս զորավար Երիզացի, որ ձեր որդվույն Ասպետին շատ բարեկամ կերևի, նա ինձ հրամայեց գաղտնի երթալ և տեսնել և լուր բերել իշխանին համար։ Կայսրը առջի մարդը չէ, բոլորովին փոխված՝ քանի որ տարիքը կ'առնու, կը թուլանա, Մարտինե կայսրուհին է, որ կը կառավարե երկիրը, և դժբախտաբար այդ կինը չէ, որ գիտե լավ կառավարել, այլ խելքը, միտքը թագաժառանգին տեղ յուր որդին անցնելու լինելով, յուր ձեռնասուններն առաջ կը քշե, և այսպես ամեն կարգ, կանոն տակնուվրա եղած է։

Նույն միջոցին սպասավոր մը ներս մտավ իմացնելու, թե Թեոդորոս Ռշտունին հասավ. և երբ եկավ զորավարը՝ մեծ հարգանոք ողջունեց Տիկինը և ներկա անձինքը, ահա հանեց Ներսես երկու նամակները Ասպետին և Երիզացի Թեոդորոսի կողմանե։ Մեծ ուշադրությամբ կարդաց իշխանը, և կարելի չէր իմանալ իր երեսեն նոցա պարունակությունը, մինչև Տիկինը չի կարենալով համբերել, հարցուց.

— Այդ նամակներեն կրնա՞ս մեզի տեղեկություն տալ, իշխան, թե որդիս՝ Ասպետը, ի՞նձ պիտի դառնա։

— Ո՞ւր էր թե այդ ձեր փափագը, իշխանուհի, որ իմ նաև մեծ փափագս է, կատարվեր, վասնզի Ասպետին Հայաստան դառնալը, աս միջոցին մեզի կյանք կրնա տալ. դուք հոս Հայաստանի մեկ ծայրը չեք գիտեր, թե ի՛նչ սոսկալի արշավանք կրեց և ի՛նչ վիճակի մեջ է աշխարհքիս արևելյան կողմը...

Եվ սկսավ պատմել Նախջևանի, Գողթան, Կոգովտի գավառաց անցքերը։ Եվ ասոնք ամենքը հիշելեն վերջ, դառնալով Ներսեսի՝

— Ահա ասոնք ամենքը քու հունացդ քաջություններուն արդյունքն են,— ըսավ։

— Խնդրեմ, իշխան, զիս հունաց ստացվածք մ'ըներ, վասնզի ես իրենց ծառայության մեջ մտած լինելով, իմ հայությունս երբեք ուրացյալ չեմ, հոգով, սրտով հայ մնացած եմ և պիտի մնամ։ Ուրիշ բան է, եթե իրենց երկրին մեջ գտնվելով՝ իրենց լեզվին և գիտությանց տեղեկություն առեր եմ և այդ բանին համար կարծեմ թե գեշ բան մը ըրած չեմ։

— Եթե այդ գիտությունքը քու ազգիդ օգտին ծառայեցնելու միտք ունիս, աստված քեզ օրհնե. մենք իրենց ուսմանց թշնամի չենք, բայց շատ ու շատ փորձ տվին մեզ իրենց վատության պատերազմի մեջ և իրենց քաջության ժամանակ շատ վատ բան ըրին, երբ կրոնական խառնակությամբք Հայաստանի ամեն տուն խռովեցին։

Եվ այս խոսքերը զրուցելուն Թեոդորոսի աչքերը սոսկալի փայլ մը առին և դառնալով Բագրատունի իշխանուհվույն՝

— Այդ Քրիստափորը, որ ամեն հայոց նախարարք միաբանեցան, վար առին կաթողիկոսական աթոռեն, իբրև անդուն բերան, իբրև զբրպարտիչ, իբրև չարալեզու, սուրբ մ'էր. իսկ մենք հիրավի արժանի պատիժը կրեցինք և կը կրենք այսօր կաթողիկոս մը ունենալով, որ երկյուղին և տգիտության կը զոհե մինչև իր Լուսավորիչը։ Ասպետը, Տիկին, այս մարդն աթոռը դրավ, ինք աքսոր գնաց, և ես մինակ մնացի ամեն Հայաստանի մեջ, ուր եթե քանի մը սիրտ ու գութ ունեցող մարդիկ գտնվեին, այս խեղճ հայրենիքը կարելի էր կենդանացնել։ Թշվառություն ամեն կողմեն կը տեղա, արաբացիք՝ աստվածային նոր պատուհաս, փոթորկի պես զարկին անցան գնացին. հույնք վատ և ամբարտավան իբրև ջախջախ եղեգ խորտակեցան. հյուսիսականաց կատաղությունն սանձելու համար հազիվ կը բավեն Վիրք, Աղվանք և Սյունիք, Արծրունիք և Անձևացիք շփոթած հազիվ կը խոստանան երբեմն արևելյան կողմը պաշտպանել, Մամիկոնյանք Մուշեղ և Համազասպ տարտամ

պատասխաններ կ'ուղարկեն իմ հրավիրանացս, իսկ Մոկացվոց նախարարն Արդուկ հայտնի համարձակ անամոթությամբ առաջնորդ եղեր է արաբաց։ Դուրսեն թշնամիք, ավարառություններ, հուր, սուր, կործանումներ, ներսեն անհոգություն, թուլություն, հարստահարություն և մատնություն... ո՞ւմ դիմես և ուստի՞ հուսաս օգնություն։ Աստվա՜ծ, կրսեմ ես ինքնիրենս. բայց Քրիստոսի փոխանորդը՝ Հայոց կաթողիկոսը կը տեսնեմ, թե կայսրեն կը վախե, յուր ժողովուրդեն կը վախե. աթոռը թողած՝ Կարնո պարիսպներեն չհամարձակիր ելնելու. իմ հրավերներուս յուր ծերությունը՝ հիվանդությունը ցույց տալով կը պատասխանե։ Ահա վիճակը, իսկ դարմանը ո՞ւրտեղ... չեմ տեսներ։

Այս խոսքերուն տխուր և երկար լռություն հաջորդեց. Թեոդորոս կը մտածեր, դառնություն երեսին վրա էր նկարված։ Սարգիս իշխանը ձեր ղինվոր՝ իբր հանցավոր դիմացը կը նայեր։ Ներսես նոր հայրենիք դարձած՝ լսածներուն վրա կը խորհրդածեր, երբ Համամայրուհի տիկինը գլուխը վեր առնելով՝

— Իշխան,— ըսավ,— մի՞թե Պարսից պետությունը բոլորովին ինկավ, մի՞թե նա բան մը չէ կարող ընել այս վիճակին։

— Ի՞նչ կ'ըսեք, Տիկին, այն ժամանակները, երբ մենք դեռ պատանի էինք, և դուք երիտասարդ, արքայից արքա մը, կը հիշեք, որ Տիզբոն կը նստեր, որուն հրամանները աշխարհք կը սարսեցնեին, և Սմբատ Բագրատունի մարզպան մը կար, որ շատ թագավորներե բարձր էր, այդ բաներն երազի պես անցան։ Արքայից արքային խոսրովու թոռը ո՞ր դիտե Հայաստան կը թափառի, թե՞ մեռած կորած է աշխարհքիս մեկ անծանոթ կողմը, մեկը չգիտեր. այդ փառավոր մայրաքաղաքը՝ Տիզբոն, ուրուն դուք ականատես՝ ոսկեղեն պալատներ կը հիշեք, այդ մերկ, ողորմելի արաբաց ավար եղավ, և հրույն ճարակ կործանեցավ, և անապատ դարձավ. այդ անհամար բանակները և ահագին Սասանյանց զորությունը ոչինչ դարձան՝ հալածեցան և ցրվեցան։

— Մի՞թե այս արաբացիք անհաղթելի էակներ են, և կարելի չէ դոցա դիմադրել, պետք է թողուլ, որ Հայաստան սոցա ոտից տակ ընկնի և ոչնչանա։

— Ես թե այդ կարծիքեն լիների, հիմա այսպես չէի դառնանար, բայց փորձեցի՝ տեսա իրենց զորությունը, եթե այս ոտնակոխ և ընկճյալ Հայաստան հիմա գլուխը վերցնե՝ կանգնի միաբան և միասիրտ, իմ արև՞ը վկա, որ օտարի հետք անգամ չի մնար այս երկրիս մեջ։

— Բայց այդ արաբացիք, զորավար,— ըսավ Ներսես ակնածությամբ,— հունաց մեծ և ահագին բանակները խորտակեցին ոչ միայն հոս Կոգովիտ, ինչպես կը լսեմ, այլ Ասորիք, Եգիպտոս և Պարսից սե-

բության այդ անակնկալի հարվածը տվին։ Հայաստան ինչպե՞ս այդ ասպատակաց հարվածներուն դիմանալ. ես դու պատերազմողներ տեսա, որ սոսկմամբ կը խոսեին նոցա կատաղի քաջության վրա։

— Ես իրենց քաջությունը չեմ ուրանար, բայց չեմ կրնար նաև մոռնալ, որ դեռ երեկ երկու հազարով նոցա կրկնապատիկ զորությունը խորտակեցի աստուծով։ Եթե այդ Պրոկոպիոս իմ ուզած մարդս լիներ, այդ Կոգովիտ մտնողներեն մեկ հատ՝ այո, մեկ հատ մը միայն չէր ապրեր։ Բայց երբ վատություն և ամբարտավանություն կը միանան զորավարի մը սրտին մեջ, հիմարություն է հաղթության սպասել։ Ի՞նչ կրնե, մանավանդ թե ի՞նչ ըրավ Հերակլ, ո՞ւմ կ'սպասեր նստած յուր թագավորյալ քաղաքին մեջ, մի՞թե առաջի օրեն պետք չէ՞ր, որ արթնար թմրութենեն. ո՛չ, այն քաջը չէ, որ մենք տեսանք երբեմն այս Հայաստանի մեջ, երբ կը հարձակեր պարսից վրա, և նոցա բանակներն կը խորտակեր։ Ո՛չ, այլ նստած անիմանալի կրոնական վեճերու մեջ կը մտնե, ինչպես երբեմն մեզի նաև օրինակը տվավ Կարին։ Զարմանք չէ, որ ինք կայսր և զինվոր, երբ պատերազմե կը փախչի, հաղթությունն էլ իրմե կը փախչի։ Փոխանակ կենաց փայտը մեկ ձեռքը և սուրը մյուսին առնելով պատերազմելու անհավատից դեմ, սուրբ խաչը առեր Կոստանդնուպոլիս փախեր է, և ս. քաղաքը Երուսաղեմ մահմեդականաց ձեռք է մատնվեր։

Այս խոսքերը երբ կըսեր Թեոդորոս, դարձյալ աչքերը կրակի պես կը փայլեին, և Երուսաղեմի ընկնիլը լսելով՝ ամենը սոսկմամբ իրարու կը նայեին, և ներսես ավելի շփոթած՝

— Բայց մի՞թե այդ լուրն ստույգ է,— հարցուց,— վասնզի ես երբ Կոստանդնուպոլիս թողի, Եվրոպա և Ասիա սաստիկ զորաժողով կը լիներ, և կայսրը անձամբ գնացեր էր Ասորիք։

— Կայսրը գնացեր էր Անտիոք, աստվածաբանություն ընելու է զբաղեր, իր զորքերը պատերազմեր են և հաղթվեր, և արաբացիք Երուսաղեմի տիրեր և բոլոր Ասորիք արյան ծով են դարձուցեր։ Ահա ինչ որ Կեսարիայի մասնավոր սուրհանդակավ նամակ մը կ'իմացնե։ Քու ինձ Թեոդորոս Երիզացիե բերածդ չորս ամսվան նամակ է։

— Այո, մենք ծովուն վրա հակառակ քամիներով շատ ուշացանք մինչև Տրապիզոն։

Բագրատունի պառավ Տիկինը այս վերջի խոսքերուն խոր լռություն մը կը պահեր անշարժ արձանի պես։ Եվ երբ ամենքն էլ լռեցին, վառարանին ճարճատյունը միայն կը լսվեր և ձյունախառն փոթորկին ձայնը։ Սարգիս իշխանը, որ մինչև վերջ բերանը չէր բացեր, ոտք ելավ հրաժարական տալու. Ներսես նորա օրինակին հետևեցավ։

— Սարգիս իշխան,— ըսավ Տիկինը,— եթե այս երեկո ընթրիքը մեզ հետ միատեղ ընեք ձեր սպային հետ, մեզ շատ գոհ կ'ընեք։

Սարգիս ընդունեցավ խոնարհաբար Տիկնոջ հրավերքը, և Տիկինն ու Թեոդորոս մինակ մնացին։ Համասպրուհի ոտք ելավ և, թեպետ յոթանասունն անցյալ և գեղեցկությունը խամրյալ, բայց վսեմություն միշտ կար յուր կերպարանաց և քայլվածքին վրա։ Գնաց դեպի դուռը, նիգը դրավ և, փոքրիկ բանալի մը հանելով, առաղձյալ պատին մեկ կողմը խրեց, և անհայտ դուռ մը բացվեցավ։

— Որդյակ Թեոդորոս,— ըսավ,— դու դիտես, թե ես ոչ միայն իբրև զավակ զքեզ կը սիրեմ, այլ նաև քու վրադ մեծ համարմունք ունիմ. այս դուռը դաղտնիք մ'է, որ միայն Վարազտիրոց իմ անդրանիկս գիտե. և հիմա ահա քեզի նաև կը հայտնեմ. և ոչ միայն գիտնալուդ համար բացի առջևդ, այլ անոր համար, որ Բագրատունյաց գանձատունը Թեոդորոս Ռշտունվո առաջ բաց է, երբ ազգին պիտույքը պահանջե և ինչչա՞փ ուզե լիաձեռն առնու և գործածե։ Ուստի արի եկ, որ տեսնես։— Երբ Թեոդորոս մոտեցավ, տեսավ փոքրիկ սենյակ մը լեցուն դրամոց քսակներ իրարու վրա դիզված. իսկ պառավը նույն սենեկին մեջ դաղտնի դուռ մ'էլ բացավ, որ ընդարձակ սենյակ մը կը հաներ և որ հիրավի արքայական գանձատուն համարիլ կարելի էր։ Հազարներով լիտր ոսկի ձուլձուլ դրված էր գետինը. աղնիվ փայտերե գզրոցներ, որ անտարակույս գոհարեղեն կը պարունակեին, ոսկի և արծաթ դահույքներ, մարգարտահեր վարսակալներ, զարմանալի և անգին ոսկեզարդ զենքեր դարերե ի վեր դիզյալ և հավաքյալ աչք և միտք կը շլացնեին։ Թեպետ Բագրատունյաց խնայությունը հռչակյալ էր ի Հայաստան, բայց Թեոդորոս չէր կարծեր և չէր կրնար հավատալ, եթե աչքը չի տեսներ այնչափ հարստություն։ Իսկ պառավը՝

— Առանց դրամի բան առաջ չերթար, որդյակ Թեոդորոս,— ըսավ,— դու այսօր ազգին միմիայն հույսն ես, առանց շողոքորթության կրնամ զրուցել, թե Ասպետը՝ որդիս նաև. եթե հոս լիներ, իրմե ավելի քու վրադ վստահություն ունիմ, ինչպես գիտեմ, թե նույնպես Հայաստան քու վրադ միայն կրնա այսօր հույս դնել աստուծմե վերջը. եթե ազգը պիտի կորչի, թո՛ղ Բագրատունիք և իրենց գանձերն ալ կորչին։ Դարձյալ կըկրկնեմ, ինչ որ պետք ունենաս ազգին համար, այս գանձատունը քեզի բաց է, ավելորդ է քեզի հանձնել, թե որդին դարձնելու համար աքսորե պետք եղած ծախքը չես խնայեր։ Ա՛ռ, ուզե ինչչա՞փ որ հարկ կը համարիս։

Թեոդորոս քիչ մը մտածելեն վերջ ծանրությամբ այս պատասխանը տվավ.

— Իշխանուհի, ես միշտ հարգեր եմ զձեզ, ինչպես գիտեք, Բագրատունյաց Տերը՝ ձեր այրը, մեր հայրը և մեր վորավարն էր։ Պատերազմի արհեստին մեջ ոչ միայն ես, այլ գրեթե հայոց ամեն նախարարք յուր ձեռասունն եղած են. յուր գերազանցությունն ոչ ոք կրնար ժխտել, հիմա եթե ինք ողջ լիներ, Հայաստան կը հանգչեր աներկբա։ Վասնզի իր ձայնին անհնազանդ լինիլ մեկը չէր հանդգներ։ Դուք, Բագրատունյաց Տիկին, իմացեք ձեր այս առաջարկությամբ, ինչպես միշտ հայտնի ըրած եք, թե նորա ոգին ի ձեզ կենդանի է. երբ ազգը պետք ունենա, կը դիմեմ ձեզ, ապահով եղեք. հիմիկուհիմա կրնաք Սարգսի հրամայել, որ հազար հոգվո ընտիր խումբ մը կազմե և պետք եղած ժամանակը ինք անձամբ առաջնորդելով, հոն բերե, ուր ես հրամայեմ։ Գարնան հավանական, թե պետք ունենանք ընտիր խումբի մը. ո՞ գիտե, բախտը ի՞նչ կը պահե մեզի։

— Բայց,— ըսավ Տիկինը,— դու որ այդ ավերակաց և թշվառներուն այց ըրիր Գողթն, Նախչևան և Կոգովիտ, ես զքեզ կը ճանչեմ, անշուշտ այդ խեղճերուն տվիր ինչ ունեիր, և հիմա ստկի պետք ունիս. Ռշտունյաց երկիրը հեռու է. ուստի կարևոր պիտույից համար հարկավոր նվածը առնունք և այնպես դոները գոցենք։

Եվ ինչպես ըսավ, այնպես էլ ըրավ։ Թեոդորոս կանչելով իր գանձապետը՝ հանձնեց քանի մը քսակ ոսկվո։ Եվ երբ միայն մնացին, այն ատեն սկսավ իշխանը Տիկնոջ հայտնել իր մտքերը Հայաստանի և Ասպետին փրկության համար, վասնզի նորա ներկայությունը անհրաժեշտ կը համարեր այն մեծ գործին։

ԳԼՈՒԽ Ը

Կան աշխարհքիս մեջ մեծասիրտ մարդիկ, որ Դիոգինեսի կամ անապատականներու և կամ տեսակ մը փիլիսոփաներու պես կարհամարհեն հարստություն և շատ անգամ խստությամբ կը դատեն հարուստները և նոցա հարստության միջոցները, բայց փորձը հայտնի կը ցցնե, որ շատ քիչեր կը գտնվին, որ իրենց սրտին ճշմարիտ համոզմունքը կը խոստովանին, վասնզի արդար կամ անիրավ շահն նաև ձեռք բերելու և պահելու համար բնական հարմարություն և պարագայից օգնության պետք է։ Շատ անգամ դիտողության արժանի է, որ չքավորութենե հարստության ելած մարդիկ ոչ միայն իրենց կենցաղավարությունը կը փոխեն, այլև իրենց լեզուն. արհամարհ ոսկին կ'անցնի իր արժանավայել աթոռը,

ուր մարդկությունը զինք ամուր և անշարժ զետեղեր է. վասնզի առանց անոր ոչինչ մեծ գործ կարելի չէ առաջ տանիլ։

Սպարտա, այն օրը, որ Հունաստանի տեր լինիլ մտքին մեջ հաստատեց, յուր երկաթի դրամը թողուց և ոսկին ձեռք առավ։

Թեոդորոս բարձր և ազնիվ սրտով այն մարդոցմե էր, որ ոսկին չէր պաշտեր, բայց անոր կարևորությունը մեծ գործ մը առաջ տանելու համար լավ կը ճանաչեն, ուստի Բագրատունի Տիկնոջ գանձին օգնությունը իր սրտին հույս բերավ, և երբ սեղան նստան, ամենքը նշմարեցին, որ յուր ճակտին կնճիռները բավական պարզված էին, և այդ մարդը ավելի քաղցր ու զվարթ կը խոսեր։

Ներսես Տայոց գավառի Իշխան գյուղեն էր. գրեթե քառասնամյա, վայելուչ, սիրուն կերպարանոք էր. ազատ և չքավոր ծնողաց զավակ, զինվորության հետևելով, սրամիտ և ուսումնասեր ի փոքր հասակեն, մայրենի լեզվին հետ հունարեն նաև սովրելով, Հայաստանի զանազան գավառները շրջելեն վերջ, թողած էր հայրենի տունն ու երկիրը, գնացեր էր Հունաստան, Անտիոք, Աղեքսանդրիա և Կոստանդնուպոլիս, զինվորական աստիճաններու մեջ բավական հառաջադիմություն ունեցեր էր, ոչ զինվորական քաջությանց համար, այլ աստվածաբանական վիճաբանությանց մեջ բավական հմտություն ցցնելուն։ Վասնզի ո՞վ էր մարդ այն ատեն, որ գիտուն կամ տգետ այն անսահման և անիմանալի դիտության անտեղյակ լիներ. արքայական գահույից բարձրության վրա նստյալ կայսրը ոսկի գավազան ի ձեռին աստվածային բնության քննության կը պարապեր լրջաբար, լրջաբար նույնպես խոհակերը ջնջոց և դրգալ ձեռին, նույն նյութերուն վրա կը խորհրդածեր, մին յուր տերության կառավարությունը կը մոռնար, մյուսը՝ յուր կերակուրին վիճակը։

Ռշտունյաց տերը, որ հունաց սովորությանց լավ տեղյակ էր, անընդհատ հարաբերություն ունենալով այս ազգին հետ, որ գրեթե Պարսից տերության անիշխանության և տկարանալեն վերջ Հայաստանի տեր ինքզինք կը համարեր, ամեն տեսակ տեղեկություն կը հարցներ, կը փնտրեր այդ հունական սպային, որ յուր հարցմանց խելոք և գոհացուցիչ կը պատասխաներ, և որ մեծն է տխուր համեստությամբ զարմացուց զԹեոդորոս, մինչև որ յուր սովորական զգույշ ծանրութենեն ելնելով, հարցուց.

— Այս ամեն իմ հարցմանց կը տեսնեմ, որ շատ հմտությամբ կը պատասխանես, բայց խնդիր մը միայն կը մնա պարզել, ընդհանուր քու վրա տխրություն մը կը տեսնեմ, միթե կարելի չէ՞ իմանալ, թե ինչի հետևանք է այդ։

— Ժամանակիս գառնության վիճակը, իշխան, ամեն անհատի վրա յուր ազդեցությունն ըրած է կերպով մը. ես էլ բնական թե իմ բաժինս պետք էր ունենայի և ունեցա այս ունայնության աշխարհիս վրա և կը գտնեմ, որ շատ ապրեցա, զարմանք չէ, որ ուրախ չեմ։

— Քառասունը հազիվ անցած այս լեզուն գործածելու և այս սրտի տխրության համակելու համար պետք է, որ մարդու մը շատ հույսերն դերև ելած լինին. ես քու գաղտնյաց հետաքրքիր լինելու փափագ չունիմ, բայց խորհուրդ կուտամ, որ ո՛ևիցե գժբախտության և բախտին հակառակության առջև մարդ, եթե մարդ է, կորով ունենա և չընկճի մինչև յուր շունչի վերջի վայրկյանը։ Դու դեռ երիտասարդ՝ պատերազմի դաշտի վրա զենքերու մեջ փորձ առած, ինչպե՞ս կը համարձակիս այս ծեր զորավարին առջև (ցցնելով զՍարգիս Տայեցի), որ Սմբատա նիզակակից՝ Հեփթաղա ահագին մարտից մասնակցեր է, երբ հարյուր հոգվով ի բյուրավորաց պաշարյալ ոչ օրով, ոչ շաբաթով, այլ ամիսներով հուսահատության պատերազմը պատերազմեր է, այսպես խոսիլ։ Փոխե՛ այդ լեզուդ, ո՞վ քաջ, ե՛կ ինձ հետ, տե՛ս որչափ գործ և ինչչափ ընդարձակ տպարեզ կա առջևիս. կամ այն է, որ կանգնեցնենք այս խեղճ Հայաստան, այս ինկած հայրենիք, կամ իրեն հետ կիջնենք գահավեժ... Բայց ոչ. մենք շատ կարելի է, որ իջնենք, բայց նա դեռ կ'ապրի և պետք է ապրի, վասնզի աստված չի կրնար մեր նախարարաց, իշխանաց, ազատաց հանցանքը տուժել տալ անմեղ ժողովրդյան, որ մեր լուծը կը տանի, որ զմեզ կը սնուցանե, որ մեր պերճության, մեր քմահաճույից, մեր անառակության կը ծառայե, և զոր մենք մեր գոռոզ ամբարտավանության մեջ՝ անազատ և ջինական կ'անվանենք արհամարհանոք և իր համբերող ուսոց վրա բևռ բեռան ավելցնել չենք դադարիր անխղճաբար։ Այո՛, կուգա անշուշտ օր մը, օրը ապագա դարուց ստվերներու մեջ ծածկյալ, այն օրը, ուր մեր նախարարական անունները անհետ, աներևույթ լինին Հայաստան աշխարհքի վրայեն և ազատն ու անազատ ի մի ձուլյալ բռնության մուրճերու հարվածներեն՝ միաբան և միասիրտ թոթափեն շղթաները և եղբայր զիրար անվանեն։

— Եթե այդ խոսքերը Հիշտունյաց Տերը՝ Հայոց Մարզպանն և զորավար չի զրուցեր, և ինձի պես սովորական ազատ մը համարձակեր՝ իբրև խոովարար ժողովրդյան ամեն իշխան պատժել իրավունք կը համարեր։

— Ի՞նչ զարմանք, որ ամեն իշխան անիրավությունը օրենք համարի, երբ Լուսավորչա աթոռին հաստատության պահապանն նորա հիմունքը կը փորե։ Բայց ո՞ւմ է հանցանքը. դարձյալ և միշտ կրսեմ. անաչառ մարդը՝ Քրիստափոր, անարգեցինք, նորա լեզուն «սուր սուսեր» է

ըսինք, չարախոսներ, զրպարտիչներ, սուտ վկաներ բերինք և աստուծո մարդուն կենաց սրբությունը աղտեղել ջանացինք. իսկ նա ինչպես կը վայելեր ճշմարիտ քահանայապետի աստուծո, այս միայն ըսավ. «Իբրև հաջորդ Ներսեսի Մեծի այս աթոռին բարձրությունը չեմ խոնարհեցներ անարդանոք. այլ անոր պատիվը և միությունը պահելու համար իմ կամքս կը հեռանամ. Քրիստոս հրամայեց զփոշի ոտից թոթափել, ես ահա այս փակեղը կը թողում։ Աստված, որ կը սիրե յուր հոտը, արժանավոր հովիվ տա իրեն»։ Եվ աստված, որ չէր կրնար սիրել ապերախտ ժողովուրդ մը, Նորը տվավ իրեն կաթողիկոս, որ յուր հոտը հերկուս պատառեց։ Բայց թողունք այս խոսքերը. հանգչինք, և վաղն առավոտ երթանք մեր ճամփան, տեսնենք աստված ի՞նչ կը ցցնե։

Ի՞նչ էր Թեոդորոսի միտքը։ Հայաստանի վերակազմություն մը ինք կ'երկներ։ Տեսնելով Պարսից անկումը, Հունաց ինքնակալության տկարությունն ու թուլությունը, կը մտածեր միաբանության ուխտ մը հաստատել հայ նախարարությանց գլխավորներուն մեջ, միացնելով վրաց և աղվանից իշխանները, որով շատ լավ կարելի էր դիմադրել ամեն օտարաց։ Արաբաց այդ սոսկալի նորածին զորությունը, փոխանակ զինք վհատեցնելու, իր մեծ հոգվույն կորովն ավելցուց, եթե այդ վայրենի ժողովուրդք, որոց անունը, խոսքը չի կար քանի մը տարի առաջ, հիմա իրենց հոչակավ, իրենց զորությամբ, իրենց աշխարհավարությամբ կ'սպառնային, ոչինչե ինչ դառնալով, ուրեմն կարելի էր նոցա օրինակավ խրախուսվիլ, գոնե երկրին պաշտպանություն մը կազմակերպելու համար։

Կը հիշեր ինք յուր սուր հիշողության մեջ երիտասարդության այն օրը, որ ցնցոտիներու փաթաթյալ կիսամերկ մուրացկան ոլորմելի արաբ մը, արքայից արքային խոսրովու կը ներկայանար Տիզբոնի ոսկեղեն արքունյաց և հաղթական փառաց մեջ, թուղթ մը ի ձեռին Մուհամմեդի առաքելուն աստուծո գրյալ առ Խոսրով՝ թաղավոր Պարսից, որ հազիվ ակնարկի մը արժանի համարելով՝ պատռած նետած էր զայն արհամարհանոք։ Եվ ո՞ կըսեր, թե այդ ինքնակալին, որու դուռը ինը հարյուր վաթսուն փիղք, քսան հազար ուղտք, վեց հազար նժույգ կանգնած կսպասեին արքունյաց հաճույից և փառաց ծառայելու համար, որու վեց հազար թիկնապահք, տասներկու հազար ստրուկք և երեսուն հազար ազատորդիք՝ պարծանք Ասիական աշխարհաց պահպանության կը հսկեին, որու դարբասին գրակոնտիկոն կապույտ գմբեթը հազարավոր արծաթյա սյուներ կամբառնային, ուսկից բյուր ոսկի գնդակներ կախված երկնից աստեղազարդ կամարը երկրիս վրա կը կերպարանեին և ուրիշ անբավ ճոխությունք՝ պերճանք ոսկեթել կիտված բեհեղներ՝ մետաքսեղեններու,

ականց, գոհարեղինաց, խնկեղինաց, ո՛վ կրնար հաշիվն ընել և ո՛վ կը գուշակեր, որ այդ ինքնակալին, որո նախնյաց դարավոր համբավ մեծությունը և այդ հռչակավոր մայրաքաղաքը հաղիվ թե քսան տարի անցած՝ իբրև փոշի մը ի հողմո ոչինչ և ի չիք պիտի դառնար, նույն այդ Մուհամեդի հետևողաց և հաջորդաց արշավանաց առջև։

«Եթե աշխարհքիս բախտը այդչափ անկայուն է, որ մեկ կողմե այդչափ մեծություն և այդչափ զորություն այսպես շուտով քանդվին, և մյուս կողմեն այսչափ նվազություն և այսչափ տկարություն այսպես շուտով կը կանգնին, ի՞նչ ուրեմն կ'արդիլե կենդանացնել այս ժողովուրդը, որ ոտնակոխ կը հեծե առաջին ասպատակին՝ առաջին հարձակողին դիմաց. վեց-յոթ գլխավորաց միակամություն և միաբանություն՝ բավական են երկաթյա կորով մը իրեն տալու և կանգնեցնելու»։

Այս խորհրդածությամբք ահա երկրորդ օրը կը թողուր Թավուսկերտ, կելներ ճամփա դեպ հյուսիս, Ռշտունի զորավարը յուր հետն առած Ներսես, սուրհանդակ արձկելով առջևեն՝ վրաց իշխանաց փափագ հայտնելով իրենց հետ տեսնվելու։ Գուգարաց գավառը Շամշուլդե ժամադիր կը լիներ, և երբ նոքա իր հրավերին պատասխանելով եկան ժողովվեցան, հայտնեց իր խորհուրդը, թե ընդհանուր հասարակաց օգտին համար եկեր էր ինք, և միաբանություն մը միայն երեք ազգությանց, որ միևնույն աղբյուրե էին սերյալ, կրնար զամենքը փրկել արաբական պատուհասեն. հայտնի ցույց կուտար, թե ի՞նչ վիճակի էր հասյալ Բյուզանդական կայսրությունը և որու վրա հույս դնելը ինչչափ անօգուտ էր, և զներսես նոր հասած ի Հունաստանե վկա կ'ըներ յուր բանից. և այնպես յուր խոսքերեն համոզվեցան վրաց իշխանք, որ երդմամբ ուխտ և դաշինք դրին փոփոխակի օգնության հասնիլ, հարձակումը ուստից գայր, և ժամադրյալ տեղին գտնվիլ յուրաքանչյուրն իրեն զորքով և կարողությամբ։

Այսպես Վրաց այդ դաշանց միաբանելեն վերջ, առանց ձմեռվան ցուրտին ուշ դնելու կ'անցներ Թեոդորոս Սյունյաց երկիրը և հոն դարձյալ Սյունյաց և Աղվանից նախարարքը ժողվելով, նույն միաբանության դաշինքը կը հաստատեր, գրով և երդմամբ ամենքը կ'ապահովեր, և Էուգար Վասպուրական յուր համազգի և համակամ Արծրունյաց նահապետին ցույց կուտար մինչև այնօր ինչչափ կրցեր էր հաջողիլ, և այնպես կը դառնար իր Ռշտունյաց Ոստանը հանդչելու պատերազմի և տաժանելի ուղեգնացությանց հոգնությենեն։

Ցուր հանգիստը նաև անխոնջ գործունեություն մի էր, բերդերը կամրացներ, Աղթամարա կղզույն ջրային պարիսպը բավական չի համարելով աշտարակաց ամրությամբ անառիկ կ'ըներ, գյուղացվոց ապահովության համար ի բնե ամուր տեղվանք հողապատնեշներով կը զորացներ և համբարանոցներ կը շիներ. և ամեն տեղ անձամբ կը շրջեր աչոք տեսնելու համար, թե իր հրամանները լավ կը կատարվեի՞ն։ Ոստանի մեջ զենքեր, զրահներ կը շինվեին, Բզնունյաց ծովուն վրա նավերու թիվը կ'ավելնար, և Ռշտունյաց երկրին երիտասարդք ամենքը զինավարժության կ'զբաղեին ազատք և անազատք։

Ռշտունյաց Տիկինն Սեթա, իշխանին առաջին օգնականն էր այս աշխատությանց մեջ, շատ անգամ կը տեսնվեր, որ էրկանն սկսածը ինք վերակացություն կ'ըներ ի գլուխ հանելու համար։ Վասնզի Թեոդորոս մեծ մասը ժամանակին երկրեն դուրս անցնելու պարտավորյալ՝ միշտ կնոջը կը հանձներ երկրին կառավարությունը։ Իսկ զինվորական կառավարության գործերը կը կատարեր Ատոմ Շահունի՝ ծեր զորավարը, որուն բնավորության խստությանը՝ մանավանդ թե դաժանության փորձն առինք նախընթաց գլխո մը մեջ։ Բայց առանց պատճառի չէր բոլորովին այս դաժանությունը, բախտին զանազան և բազմադիմի հարվածներ զինք դառնացուցեր էին, ուստի ոչ մեկ տեղ յուր ժպիտը չէր տեսնվեր, եթե ոչ Ռշտունյաց Ոստանը, և այն շնորհքը միմիայն անձի մը համար պահված էր, և այն՝ տասներկու-տասներեք տարեկան Ռշտունյաց Օրիորդն էր։

Թեոդորոս ինքը նաև, որու վրա միայն Ատոմ համարմունք և հարգանք կը ցցներ, կարճ և համառոտ պատասխան կ'ընդուներ։ Իր սպասավորքը շատ անգամ վարժած էին իմանալ նորա կամքը ակնարկությենե մը և պետք է նաև արդար լինելու համար ըսել, թե ամենակարևորն միայն կը պահանջեր և եթե ծառայքը դանդաղեին, ինք անձամբ յուր պետքը կը լցներ։ Յոթանասունն անցած, տոկուն և անխոնջ պատերազմի մեջ, խիստ էր զորաց պարտավորությանց մասին, որոց կատարման ինք օրինակ կուտար անձամբ։ Բայց ինչպես խիստ էր պատժելու, նույնպես ճիշտ էր վարձատրելու։ Ուստի զինվորը, որ իրմե սաստիկ կը վախեր՝ նույնչափ էլ կը սիրեր։ Քսան տարիե ավելի էր, որ թողած յուր հայրենի գավառը՝ Շահունիք, Բզնունյաց ծովուն եզերքը անառիկ դիրքի մը վրա դղյակ մը շինած կը բնակեր, երբ պատերազմի ձայն չի կար և երկրին մեջ խաղաղություն կը տիրեր։ Ժամերով նստած ծովեզերը տխուր ալյաց կը նայեր, և ոչ ոք չէր համարձակեր զինքն այն վիճակեն արթնցնելու, հազիվ երբեմն կելներ պտույտ մ'ընելու շրջակա գյուղեր, ոչ մեծի, ոչ պզտիկի հետ ամենևին մերձավորություն չընելով։ Կիրակիե կիրակի ու տոնի օրեր կ'երթար մոտակա Աստվածածնա փոքրիկ և անշուք վանքը միշտ առաջին լինելով մտնողներուն և վերջին ելնողներուն։ Քանի մը ծեր սպասավորք միայն կային, որ յուր ծառայությունն կ'ընեին, իսկ

հիսունի չափ թիկնապահաց խումբը յուր տունեն հեռու ունեին իրենց բնակարանները պարիսպներուն քով, որպեսզի ձայն իրեն չհասներ։ Ցուր կահ-կարասիքը պարզ էին և սովորական, բայց մաքուր, եթե շքեղություն մը կար՝ յուր զենքերուն և զրահներուն վրա կարելի էր նշմարել, և յուր քանի մը նժույգներուն, որոց երբեմն այցելելու պատիվ կ'ըներ։ Եթե այս միայնությունեն հանկարծ ելներ, որ երբեմն երկու-երեք ամիս կը տևեր, Ռշտունյաց Ոստանը երթալու համար էր, և յուր պատրաստութենեն կ'իմանային սպասավորք, թե երկրորդ օր ուղեղնացություն կար, ու երբ կը տեսնեին ծեր զորավարը յուր ճանապարհի պարկերը կարգադրած, կ'իմանային, թե առանձնութենե փորը կշտացեր է։

Բայց այս անգամ հպիվ թե Թեոդորոս Ոստան հասավ, մասնավոր նամակավ սուրհանդակ հանեց Ատոմա, որ գա զինք տեսնե, և ահա երկրորդ օրն Ատոմ ճամփա ելավ գալու հրավերին. երբ Թեոդորոս իրեն իմացուց, թե զինվորական կրթություն կը փափագեր բոլոր երիտասարդաց համար գավառին մեջ, և իրեն կը հանձներ այս պաշտոնը, ծեր զորավարը «լավ» բառը միայն պատասխանեց և գնաց քաշվեցավ իր սենյակը։ Իսկ ուրիշ իշխաններ և սպաներ երբ կը հարցնեին Թեոդորոսի, թե՝ «Այդ պատասխանով գոհ կրնա՞ր լինիլ, որ ըստ յուր փափագանաց պիտի կատարեր Ատոմ այդ գործը». Թեոդորոս պատասխանեց, թե՝ «երբ Ատոմ լավ կըսեր, էլ ոչ ոք իրավունք չուներ իրմե հաշիվ պահանջելու, վասնզի յուր սովորությունն էր միշտ լավը գործել»։

Եվ իրոք, քանի մը ժամ ետքը եկավ Ատոմ և թուղթ մը տվավ Թեոդորոսի, և ինք նստավ անմռունչ, այն թուղթը կը բացատրեր ճշտիվ, թե ինք ինչպես և ինչ եղանակավ պիտի կարգադրեր այդ զինամարզությունը, այնպես որ ոչ ժողովրդյան մեծ շարժմունքներու և դժվարությանց առիթ լինի և ոչ իրենց առտնին գործոց վնասակար. և միևնույն ժամանակ օգտակար իրենց զինվորական կրթության։ Թեոդորոս շատ շնորհակալությամբ երբ «կեցցե՛ս, Ատոմ հայրիկ» ըսավ, ծերուն շոր երեսին կնճիռները քիչ մը պարզվեցան, որ նշան էր յուր գոհունակության։ «Վաղը ուրեմն գործի կսկսինք»,— ըսավ և ելավ քանի մը պտույտ ընելեն վերջ սենեկին մեջ հաջ ու ձախ՝ հարցուց իշխանին.

— Թենին չիմացա՞վ իմ գալս, զորավար։

— Կը ներես, հայրիկ,— ըսավ Թեոդորոս,— հիմա...— և դառնալով թիկնապահաց...— Տղաք,— զրուցեց,— իմաց տվեք Թենիին, թե Ատոմ հայրիկ եկավ և զինք կ'ուզե։

ԳԼՈՒԽ Թ

Մրնի՝ կ'անցնի և կը ճասնի՝ ամենայն
Ճակատագիրն յուր անորոշն ի սանման.
Առ օվկեան՝ տրխուր ալիք,
Քամվույն՝ տերև փախուստիկ,
Լույսն՝ իրիկվան և մարդ՝ մանվան։
Սակայն ո՞ւմ փույթ, ո՞ սիրելիս,
Մեր օրերուն չափն անծանոթ.
Միայն ճանդարտ թող ի ճալիս
Եվ ճարտեետ անուշանոտ
Ըզմեզ վարե սուր ժամանակ։

ԼԱՄԱՐԹԻՆ

Ամենքը զարմանքով կը նայեին այդ շոր, բարձրահասակ ծերուն վրա, որ շարունակ կը շրջեր և միշտ դռան կը նայեր սպասելով աղջկա մը, նա, որ աշխարհքիս բոլոր մարդկանց համար անտարբեր էր. ամեն ցավ, ամեն թշվառություն, ամեն սեր, ամեն զգացմունք իբր թե ոչինչ էին իրեն համար։ Իսկ երբ Ռշտունյաց գեղահասակ Օրիորդը ներս մտավ և տեսավ հինգ վեց պատկառելի իշխանազուն մարդիկ, որոց ամենեն երիտասարդը քառասունն անցած էր, և ամեն աչք իրեն կը նայեին, ինք, որ միայն հայրը և Ատոմը կարծեր թե պիտի գտներ՝ փափուկ կարմրություն մը եկավ երեսին և յուր գեղեցկության ավելի փայլ մը տվավ. բայց առանց շփոթելու գնաց դեպի ծերունին և ձեռքը պագավ, իսկ նա երկու երկայն թևերով գրկելով Օրիորդը՝ «Թենի՜, Թենի՜, ինչպես ես, որդյակ Թենի» կըսեր և կրկին կը համբուրեր։ Հիրավի, զարմանալի հակառակներ կը կազմեին այդ երկու կերպարանքը. այդ մագաղաթյա դեղնած կնճռած երեսները, այդ ձյունի պես ճերմակ մազերն ու մորուքը, այդ ցցվյալ ոսկորներով կաշիե մը պատյալ մարմինը մեկ կողմեն, և մյուս կողմեն գողտրիկ վարդափթիթ երեսներ, լուսալիր նշաձև աչքեր, սև-սև հոնքեր և մազեր, ձյունափայլ պարանոց մը և վայելուչ հասակ։

Մերը քանի մը անգամ նույն հարցմունքը կրկնեց, իսկ Օրիորդը կամաց ձայնով շնորհակալություն և լավություն իմացուց, և երբ կերպեն հասկցավ, թե կ'ուզե քաշվիլ, ձեռքն առավ՝ «Եկ, Թենի, քեզ հետ քիչ մը աս պարտեզն երթանք և խոսինք, ձմեռվան արևը առողջարար է»,— ըսավ, ու դուրս ելան։ Այս մարդատյաց ծեր զինվորը և Օրիորդը հաղիվ դուրս ելան՝ բազմականք ամենքը գաղտնի ծիծաղը հայտնի ըրին, և Թեոդորոս ինք ժպտելով՝

— Այս տեսարանը, տյարք, ձեզ ծիծաղ կը պատճառե, այնպես չէ՞,— ըսավ.— այո, ես էլ ձեզ հետ կը ծիծաղեի, եթե սոսկալի խրատ

մը չի ծածկեր ամեն ծնողաց։ Պատմեմ, և ուշ դրնք. հազիվ քսան տարու էի, երբ Վահրամ հայրս դիս վերջին խմբով մը արքայից արքայի դուռը կ'ուղարկեր նամակով մեծ Մարզպանին դիս հանձնելով. Ասպետը նամակը կարդաց և ծիծաղելով դարձավ քովը նստած գրեթե քառասնամյա սպառազենի մը՝ «Ատոմ զորավար,— ըսավ,— ահա առ քեզի աշակերտ մ'էլ Վարազտիրոցիս հետ միատեղ, Ռշտունյաց Տերն ինձի կուտա յուր զավակը մարզելու. մի՛ խոժոռիր, էլ ուրիշ չի կա, այս երկուքը բավական են»։ Ավելորդ է զրուցել, թե այս մարդը ի՛նչ զինվորական խստությամբ զմեզ դաստիարակեց երկու տարի, մեր սպասավորները նախ մեզմե հեռացնելով, ամառ-ձմեռ արշալույսի հետ զմեզ ոտք հանելով, կերակուրներու փափկութենե զմեզ զրկելով, այդ ամենքը երկայն են։ Բայց այն միայն պետք է զրուցեմ, թե այդ մարդը կը խոսեր, կը ծիծաղեր, կատակ նաև կ'ըներ, մանավանդ պատերազմի վտանգալի վայրկյաններու։ Երկու տարվընե վերջ մեզ երկուքս տարավ մեծ Մարզպանին՝ «Ահա, զորավար, ինձ երկու տղա տվիր, ես քեզ երկու մարդ կը դարձնեմ, իրենց երաշխավորը ես եմ,— ըսավ,— կրնաս վստահանալ»։ Եվ հայրենիք դարձավ. երկու տարի տունը կերթար կը կենար, տարի մը կուգար դուռը և բանակը կ'անցներ. յուր քաջությունն հայտնի էր ամենուն և արքայից արքային, և ինչչափ որ զինք մեծցնել ուզեցին, հանձն չառավ, վասնզի Մարզպանեն չէր ուզեր զատվիլ։ Վերջապես, անգամ մ'էլ որ գնաց, և ես եկա Ռշտունիք հորս հրամանավ, զինք բոլորովին կորուսի տարիներով, երբ Մարզպանին մարմինը բերին Տիզբոնե, տեսա Ատոմ թաղման հանդիսին, բայց փոխված և այնպես տխուր, որ հետը կարելի չէր խոսել. ես ինչչափ մոտեցա, անկարելի եղավ յուր միավանկները բազմավանկի դարձնել. վերջը իր մեկ ծեր սպասավորեն իմացա, թե ի՛նչ էր այս տխրության պատճառը։ Ատոմ ամուսնացյալ՝ զավակներու տեր եղած էր, մեծ աղջիկը որոշել էր ամուսնացնել, բայց աղջիկն այդ ամուսնության հակառակ էր և բնականաբար չհամարձակելով հորը խոսիլ՝ մորը հայտնած էր։ Բայց ո՞վ կարող էր Ատոմի պես մարդու մը դեմ գալ, և ինք կրնա՞ր երևակայել, թե կինը մարդ է, աղջիկը կրնա՞ կամք ունենալ։ Ինք մինչև այն օրը միտքը դրած էր, թե ընտանիք՝ կին և զավկներ զորականաց գունդ մ'էին, որ զորավարին ձայնին պետք էր անդարձ հնազանդեին։ Ուստի սպառնագին հրամանը երկրորդեց, տունը հուսահատ արտասվաց մեջ թողուց, և ինք միմիայն յուր որսի զվարճությանց պարապվեցավ։ Երբ դարձավ և իրեն իմացուցին, թե նշանած աղջիկը հիվանդ է, խաբեության հնարք մը կարծելով յուր սպառնալից ձայնը լսեցուց հիվանդին. բայց երբ մոտեցավ, տեսավ զավակը կրակներու մեջ կը տոչորի, կը զառանցե, երեսները

վիրալից և ծաղկած, սոսկումը զինք պաշարեց, և որ դժբախտության մեծն էր՝ հինգ զավկներն միևնույն հիվանդությամբ անկողին ընկան, և ոչ մեկն ազատեցավ. վերջապես կինը նաև զավկներուն ցավին չդիմացավ, քանի մը ամսեն վախճանեցավ՝ որդեկաց մահվան պատճառ այդ անողոք հայրն համարելով։ Թե երկթե նաև լիներ ոք, և Ատոմ ինքն, հարվածը սոսկալի էր. ուստի ամեն օր կ'երթար կը նստեր իրեններուն գերեզմանին վրա անխոս՝ խնդրելով, որ մահը գա զինք տանի, բայց մահը չէր գար, չէր հասներ։ Այս վիճակիս մեջ էր ահա Ատոմ, երբ Սմբատա մահվան լուրը տարածվեցավ, և այդ մարդը իր զորավարին վերջին պատիվն ընելու համար եկեր էր։ Յուր այս անտանելի ցավը տեսնելով Վարազտիրոց և ես՝ յուր հին աշակերտները, ամեն ջանք ըրինք հուսահատ վիճակեն հանելու, այսչափ միայն խոստացավ, որ քանի մը օր Ոստան ինձ հյուր լինի։ Ահա այս դահլիճը նստած էինք, քանի մը բարեկամք, և ինք Ատոմ ամենեին ուշ չէր տար մեր խոսակցությանց, երբ այս Թենի մեկ ու կես տարու նոր ոտք ելած, հանկարծ ներս մտավ թռչտելով, և երբ ամենք «Թենի՜, Թենի՜» ըսին՝ տղեկին ձայն տալով, Ատոմ իբր քունե արթնցավ, և Թենի ամենեն փախելով՝ վազելով գնաց Ատոմի ծունկերուն մեջ ինկավ։ Յուր թշվառ աղջկան անունը Թենի էր. այն օրեն սկսավ Ատոմի և Թենիի բարեկամությունը և այդ անմխիթար մարդը, որ երբեք չի ծիծաղիր, որ մեկուն հետ չի խոսիր, նորա համար խոսք էլ ունի, ծիծաղ էլ։ Թենիի պատճառով թողեց Շահունիք, եկավ Բզնունիք բնակելու, և այն օրեն վերջ, երբ հայրենիքը պետք ունի, զինվորական ծառայություն նաև հանձն կ'առնու, ինչպես այս վերջին կռվին մեջ, այս տարիքով արաբաց դեմ երիտասարդի պես կռվեցավ և ամենքը զարմացուց։

Այս երկայն պատմության ժամանակ, ծեր զորավարին և Օրիորդին գլուխները կ'երևային պարտեզին մեջ, երբ նոքա միատեղ կը շրջագայեին, և Ատոմ կը խոսեր զվարթ իբրև թե ուրիշ մարդ փոխված լիներ։

Ուստի այս փոփոխությունը լավ իմանալու համար պետք է տեսնենք, թե ի՛նչ կը խոսեին այս մեր երկու կենաց՝ կերպարանաց և մարդկության ծայրերը գտնվող բարեկամք. և որ զարմանալին է, Թենի շարունակ կը խոսեր և արտասուքը կը սրբեր, և Ատոմ զվարթ ինքզինք ցցնելու կ'աշխատեր և ծիծաղ կերպարանք առնել կը ջանար։

— Շաբաթ մը կեցավ այստեղ, հայրիկ,— կ'ըսեր Թենի,— և ի՛նչ քաղցր երիտասարդ էր, առջի տեսած օրես չեմ գիտեր ինչ հաճույք զգացի, իբրև թե ինձ համար օտար ոք չէր, եղբայր մը կրնամ զրուցել, բայց եղբայր նաև չէր. ես Վարդ շատ կը սիրեմ, բայց այս Գրիգոր ուրիշ բան էր. կուզեի, որ ամեն վայրկյան զինք տեսնեմ, իրեն հետ խոսեմ, յուր

ձայնը լսեմ, գիշերը երազիս մեջ կը տեսնեի, արթուն՝ իր կերպարանքն իմ աչացս առջևեն չէր երթար, երբ ինք ներկա չէր. և այս զարմանային է՝ մարդու զրուցել նաև չէի համարձակեր, և մինչև այսօր մորս և եղբորս չեմ կրցեր հայտնել. քեզ կ'սպասեի, հայրիկ, որ կարենամ սիրտս բանալ, և դու քանի ամիս եղավ, որ ուշացար։

— Բայց դու, Թենի, այդ երիտասարդին հետ խոսեցա՞ր առանձին. ինք քեզի նույն զգացմունքներն հայտնե՞ց։

— Ոչ, առջի օրերը մենք անտարբեր կը խոսեինք, բազմության մեջ. մայրս զբաղած էր, Վարդ ամեն օր որսի երթալ յուր զվարճությունն էր. ես մինակ էի, Գրիգոր մինակ էր տան մեջ, գրքերու սենյակը կ'անցներ մեծ մասը. ես էլ հոն կ'երթայի երբեմն. կը զարմանայի, որ հունարեն, պարսկերեն գրքեր ամենն էլ կը խաուներ՝ կը կարդար, վերջը օր մը ըսավ, թե՝ «Ձեր գրքատունը շատ խառնակ վիճակի մեջ է, Օրիորդ, ես որ գործ չունիմ, եթե ուզեք կարգի կը դնեմ». ես էլ շնորհակալ եղա և աղախիններուն հետ իրեն օգնեցի. իր կատակները, իր խոսակցությունը այնպես պարզ էին և այնպես անուշ և այնպես ծանր ու համեստ, որ ամենքը կ'ակնածեին իրմե, իբրև թե շատ տարիքով ոք լիներ։ Կ'ելնեինք պարտեզ իրեն հետ կը շրջագայեինք. զարմանալին հոն է, որ երբ միայն մնայինք, կը կապվեինք, խոսք չէինք գտներ զրուցելու. կարծես ինքը կը կարկամեր, ես կը պապանձեի։ Իր երթալու խոսք երբ կը լիներ, սիրտս կը ճզմվեր, և հազիվ թե արտասուքս կը սանձեի. կը վազեի, կ'երթայի իմ սենյակս, առանձին կուլայի և կը թեթևնայի, բայց օրը մոտեցավ, և առջի գիշերը, որ...

Հոս աղջիկը չի կրցավ այլևս շարունակել, և արտասուքը ձայնը խեղդեցին, իսկ ծերը շփոթած և տխուր՝ ձեռքեն բռնեց և հովանոց մը տանելով՝

— Որդյակ Թենի, շատ լավ է, որ կուլաս, կ'ըսեն, թե արտասուքը սիրտ կը զովացնե, լա՛ց, իմ սիրուն աղջիկս, լա՛ց, եթե ես կարենայի, ես էլ կուլայի, բայց աստված ինձ այդ շնորհքը չէ տվեր։ Բայց զրուցե ի՞նչ եղավ առջի գիշերը։

— Այն երթալու օրվան առջի գիշերը շատ գեղեցիկ լուսին մը կար, ծովը հանդարտ հայելի պես կը փայլեր, քունը աչքես փախավ, իջա վարի պարտեզը մուշտակ մը վրաս առած, նստա և տխուր կը մտածեի, երբ ավազին վրա ոտքի ձայն մը լսեցի պարտեզին մյուս ծայրը, տեսա, որ Գրիգոր ինքն էր. գլուխը կախ կը շրջագայեր, երբեմն կը կանգներ երկինք կը նայեր, երբեմն ծովուն. կուզեի փախչիլ երթալ իմ սենյակս, բայց ծնկվներս կարկամեր էին, սիրտս կը բաբախեր և այնպես բռնված անշարժ մնացի, մինչև տեսա, որ տխուր՝ յուր մտածությանց մեջ թաղ-

ված, գլուխը ծռած, առանց իմանալու դեպ ինձ սկսավ գալ. իր այդ տխրությունը, այդ ցավագին վիճակը ինձ զորություն մը տվին, և երբ մոտեցավ, զիս տեսավ նստած անշարժ, հազիվ թե՝ «Կը ներեք, Օրիորդ, ձեզ անհանգիստ կ'ընեմ» ըսելով ետ քաշվելու եղավ. ես զինք քաջալերեցի և հրավիրեցի քովս նստարանին վրա նստիլ. իբրև թե վախելով քովս նստավ. շփոթած էր բոլորովին, չէր համարձակեր բերան բանալու, կարծես կը դողար, և սրտին բաբախմունքը կը լսեի. զարմանալի՜ բան, ես հանդարտած էի այն վայրկենին և սկսա հետը խոսիլ. նա միավանկ բառերով կը պատասխաներ, իր մորը վրա խոսեցա, գիտեի ինչպե՞ս կը սիրեր, և թե անշուշտ ինչպես իրեն երթալու անհամբեր էր. «Ո՜հ, պատասխանեց, ես իմ մայրս շատ կը սիրեմ, բայց ինք նաև զիս շատ կը սիրե»։ Ես այն ատեն ըսի. «Միթե կարելի՞ է սիրել առանց սիրվելու»։— «Ո՜ գիտե,— ըսավ,— կարելի է, կան այնպիսի թշվառ անձինք, որ կը սիրեն և չեն գիտեր, թե կը սիրվի՞ն փոխադարձ»։— «Այդ անկարելի է,— ըսի ես քաջությամբ»։— «Ինչպե՞ս անկարելի, ես կը խոստովանիմ, որ ոչ թե կը սիրեմ, այլ կը պաշտեմ անձ մը, որ եթե զիս սիրեր, կյանքս կուտայի»։— «Անկարելի, որ ձեզի պես երիտասարդ մը երբ սիրե՝ չի սիրվի,— պատասխանեցի ես»։ Եվ ի՛նչ երկայն ընեմ, նա, ես՝ երկուքս էլ խոստովանեցանք, թե իրար կը սիրենք...

Եվ հեկեկանքը դարձյալ խոսքը դադրեցուցին։ Իսկ ծեր զինվորը ջրթունքն ամփոփած՝ մեկ ձեռքով Թենիի ձեռքը բռնած, մյուսը ծնոտին դրած, ուշ կուտար այս խոսակցության զարմանքով, այս սիրո լեղուն, այս զգացմունքը իրեն համար նոր էին, առաջին անգամն էր, որ կենաց մեջ այսպիսի պատմություն մեկն իրեն կըներ. միտքը բոլորովին յուր հարազատ աղջկան Թենիին գնացեր էր, որ գրեթե այս Թենիին տարիքն ուներ, և որ սիրո զոհ լինիլն երևակայեր էր, և զոհարար ինքն էր. ուստի երբ պատմության հեկեկանքը փոխանակեց՝

— Թենի, որդյակ Թենի,— ըսավ,— վերջը ի՞նչ եղավ, ինձմե բան մը մի՛ պահեր, դու պետք է գիտնաս, որ ես միայն քեզի համար կ'ապրիմ այս անիծյալ աշխարհքիս մեջ, քեզմով և քեզի համար միայն աստված իմ մեղացս պիտի ներե և այնպես կը հավատամ, որ այն օրը հոգիս պիտի առնու, երբ զքեզ երջանիկ ինձ ցույց տա՝ նշան իմ մեղացս թողության. ուստի մի՛ լար, զրուցե ինձ համարձակ, եթե հանցանք մը նաև կա, ինձմե մի՛ քաշվիր, շարունակե՛։

— Ի՞նչ հանցանք, հայրիկ, մենք այն գիշերը խոսք տվինք իրարու, որ ուրիշին չլինինք մահ նաև եթե հասնի. մեր ապագա երջանկության վրա խոսեցանք, ինք խոսք տվավ, որ երթա մորը իմացնե մեր սերը և զիս հարսնության ուզե։

— Այսչա՞փ, այսչա՞փ,— ըսավ ծերը։

— Այո, միայն երկրորդ առավոտուն հրաժարական ողջույնը տվավ մորս և ինձ ու ելավ գնաց։

Օրիորդը դարձյալ աչքերը կը սրբեր։ Իսկ ծերը սրտնեղությամբ՝

— Բայց, Թենի, ի՞նչ կա այդտեղ տխրելու,— կ'ըսեր,— այդ Գրիգորը տեսա ես կարծեմ, Դավիթ Մամիկոնեին որդին, ինձ ըսին, այդպես չէ՞։

— Այո՛, հայրիկ։

— Լավ, ես այդ տղան տեսա՝ դեռ անմորուս պատանի, լավ կը կռվի, Կամսարականին հետ էր։ Այդտեղ անկարելի բան չիկա, Բագրեվանդա մեկ մասը և Եղասխաձոր իրենցն է։ Վարդանաբերդ կը բնակին ընտանյոք, գեղեցիկ ամրոց մ'է։

— Բայց, հայրիկ, Վարդանաբերդ այրեր են արաբները, և Գրիգոր մեռեր է։

— Աղջիկ, դու ինչ կըսես, Գրիգոր մեզ հետ էր պատերազմին մեջ, ողջ առողջ մեզմե զատվեցավ, անկից վերջ էլ պատերազմ չի կար։ Դու փուճ տեղ կուլաս, իմ Թենիս. ես կ'իմանամ ամեն բան արագությամբ, հիմա մարդ կը հանեմ Կոգովիտ. դու հանգիստ եղիր...

— Բայց, հայրիկ, եթե Գրիգոր մեռած է, ես կուսանաց վանք մը կը մտնեմ...

— Հիմար խոսք մ'ըներ, իմ սիրուն Թենիս, Գրիգոր մեռած չի կըրնար լինիլ, եթե այնպես նաև լինի, Գրիգորները շատ կան աշխարհքիս վրա, իսկ Թենի՝ մեկ հատ միայն մնաց. նա էլ պետք է ապրի և երջանիկ լինի...

— Չէ, հայրիկ, եթե նա չի կա, ինձ երջանկություն չի կա, աշխարհս մութ է ինձ համար...

— Թենի՛, Թենի՛, այդպես մի՛ լար, այդպիսի խոսք մ'ըներ, տե՛ս, իմ սիրտս էլ կայլայլի, դու դեռ երեխա ես։ Ես կ'իմանամ, քեզի տեղեկություն պ'առնում այդ Գրիգորի համար... Դու սիրտդ հանգիստ բռնե։ Հա՛, այսպես։

Եվ ծեր զինվորն այս խոսքերը զրուցելուն՝ կը ջանար յուր կերկեր ձայնին փափկություն մը տալ և իր սառ, չոր, ոսկրուտ, երկայն մատներով նորա գողտրիկ երեսները կը շոյեր։ Բայց տեսավ նաև խեղճ աղջիկը, որ այլայլած այս երկար նկարագիրն ըրած էր՝ շատ մը արտասուք թափելով, և ցուրտը չէր զգացած՝ հիմա կը դողար, կը սարսռեր, վասնզի դեռ ձմեռ էր, և գարունը բավական հեռի և արևի ջերմությունը տկար. ուստի հորդորեց, որ երթա տաքանա։ Ուշտունյաց Օրիորդը աչքերը սրբելով և կերպարանքին անտարբեր ձև մը տալով ելավ հովանոցին և

արագությամբ փոքրիկ դռնե մը և նեղ սանդուխներե անցնելով, գնաց վերին կանանոցին սենյակները՝ ծածկելու համար ամեն աչքե յուր տխրությունը, որ միայն Ատոմ հայրիկին կրցավ հայտնել։

Իսկ ծերը յուր անթափանց երեսով, որ իրեն բնական էր և իր տխուր կերպարանքով, որ աշխարհածանոթ էր, մտավ և նստավ, ուր Խաչյան Առավեղյան, Թեոդորոս Վահունի, Շապուհ Ամատունի, Խորեն Խորխորունի, Գազրիկ Քաջբերունի, Վարազ Ներսեհ Եղվանդունի և ուրիշ քանի մը զորավարք Մարզպանին հետ կը խոսակցեին։ Եվ բնականաբար իրենց ամեն վիճաբանությունք Հայաստանի վրա կը դառնային։ Խոսակցությունը կ'երկարեր, ամենքն իրենց կարծիքը կը հայտնեին, և ինչպես միշտ ընկերությանց մեջ կան մարդիկ, որ ամենուն հաճոյանալու հնարք ունին և ոչ երբեք որոշ կարծիք, ինչպես էր Խորխորունյաց իշխանը, որ հանկարծ խոսքն ընդհատելով դարձավ Ատոմի՝

— Զորավար,— ըսավ,— դուք ամենեին կարծիք չեք հայտներ, ամենուն փափագելի էր ձեր կարծիքն իմանալ, մանավանդ, որ այնչափ տարիներու փորձառություն ունիք։

— Իմ կարծիքս,— պատասխանեց ծերը առանց գլուխը շարժելու, առանց Խորխորունվույն երեսը նայելու, այս մարդն է, որ Մարզպան և զորավար է Հայոց։— Եվ հանկարծ աչքերը վերցնելով և նայելով ամենուն, նշմարելով ոմանց դեմքին վրա հեգնական կերպ մը՝ ձայնը բարձրացուց.

— Ո՛չ այսպես, հայոց իշխանք, ո՛չ, մենք նաև ունեցեր էինք Մարզպան և զորավար, Սմբատ Բագրատունին, նա էլ զմեզ խորհուրդի կը ժողվեր, բայց մենք քիչ կը խոսեինք և շատ կը գործեինք։ Եվ այն միայն կը գործեինք, որ մեզի կը հրամայեր, և ամեն բան կարգի կանոնի մեջ կը հաջողեր, և այն մարդը, որ ամենքը բազմահաղթ կանվանեին, և արքայից արքան յուր դահույից սյուն կը համարեր և հիրավի, վասնզի Սմբատա մահվանեն քիչ վերջը դահույքն էլ ինկավ, թագն էլ, այն մարդը կ'ըսեր մեզ, թե՝ մեր բոլոր հաջողությունք և հաղթությունք ձեր միակամ զինվորական կարգապահության և ձեր զորավարին հնազանդության արդյունքն են։ Իմ այս մազերս պատերազմի ասպարիզին վրա են ճերմկած, և մեկ օր չեմ ըսած և ոչ մտքես անցուցած, թե սոքա, որ իմ զավակս կրնային լինիլ, ինչո՞ւ ինձ հրամայեն, այլ իբրև սուրբ պարտիք ինձ տրված հրամանները կատարեր եմ կենացս վտանգավ։ Մտիկ ըրե՛ք իմ փորձառությանս, տղա՛ք... իշխանք, մի՛ ծիծաղեք իմ սպիտակ ալյաց և մորուաց վրա, և իմ բազմամյա վշտաց վրա. այլ մանավանդ հետևեցեք իմ օրինակիս, որ մինչև այս տարիքիս մեջ ավելի հնազանդել փափագեցա, քան թե հրամայել։

Միծաղողք ափ ի բերան մնացին, և Մարզպանն ինքն տեղաց ելնելով, եկավ ծերուն ձեռքը բռնի պագնելով, իր «վարպետը», իր «դաստիարակը» զինքն անվանելով ծերուն սիրտը շինեց։ Եվ Թեոդորոս Վահեունի, որ համեստ և առաքինի մարդ էր՝

— Ես շատ ուրախ եմ,— կ'ըսեր,— որ սխալմունք մը այսչափ երկար ատենաբանության առիթ եղավ, վասնզի ո՛ գիտե քանի տարիներ են անցել, և Ատոմ այսչափ երկայն և այսչափ լավ չէր խոսեր։

Իսկ այս խոսքերը և ոչ լսեց ծեր զորավարը, շտկվեցավ դռան և իր թիկնապահներեն մեկն առնելով և առանձին տեղ մը տանելով՝ իրեն հրաման ըրավ Բագրևանդ երթալ, աչոք տեսնել Վարդանաբերդ, տեղեկություն առնուլ Դավիթ Մամիկոնեի ընտանյաց վրա և շուտով դառնալ։ Եվ այս ամենքը հայտնի է, թե Թենիի համար էր։

ԳԼՈՒԽ Ժ

Մենք Ռշտունյաց Ոստանի մեկ դահլիճը տեսանք, ուր Թեոդորոս հայ իշխանաց ոմանց հետ երկրին պաշտպանության կետերը զորացնել, պատսպարել կը մտածեր, այնպես որ այս լեռնային երկրին, ինչպես էր Հայաստան, զանազան կիրճերն և անցքերը բռնելով, նաև զորավոր թշնամվո մը քիչ զորքով երկայն դիմադրություն ընել դյուրին կը լիներ և այնպիսի նեղ տեղվանք պատերազմիլ բազմաթիվ զորաց դեմ հաղթություն կրնար պարգևել։

Թեոդորոսի մարզպանության հասնիլը հազիվ մեկ-երկու տարի էր, բայց Հայոց զորավարի անունը և պատիվը տասը-տասնհինգ տարի էր, որ կը կրեր. այնպես որ Վարազտիրոց Բագրատունվո և Դավիթ Սահառունվո մարզպանությանց ժամանակ ոչ միայն սոսկ իբր զորավար, այլ յուր անձին գերազանցության և մտաց ու զինուց կարողությամբ մեծ ազդեցություն ուներ երկրին մեջ, և այն աստիճան, որ մարզպաններուն անունը երբ հազիվ թե կը հիշվեր, Թեոդորոսի անունն էր, որ կը գործեր։ Ամառները շատ անգամ Այրարատա և Բարձր Հայոց կողմերը Թեոդոսուպոլիս և Դվին գտնվելով, ձմեռները գործերուն դադարման ժամանակ Ոստանը կուգար հանգչելու, թեպետ այդ անդադար և գործունյա բնավորությունը հանգչել չէր գիտեր։ Կը հիշեն ընթերցողք, թե մեր այս պատմության սկիզբ լսեցինք, որ Ռշտունյաց Սեթա տիկին առնացի բնավորությամբ ինչպե՛ս կառավարության ոգի ուներ և գիտեր երկիրը հանձանձել իշխանին բացակայության, որ սովորական բան էր։ Ռշտունյաց Ոստան կատարյալ արքունական պալատի կերպարանք ուներ. ավանին և ծովուն մոտ բարձրացյալ սարավանդին վրա պարսպապատ և ամրակառույց, որին վերջին ամրությունն Աղթամարա կղզին էր։ Սովահայաց դահլիճը, ուր ձմեռները Թեոդորոս նստած գրեթե բոլոր Հայաստան կը կառավարեր, ամառները Սեթայի՝ Ռշտունյաց և Վասպուրականի մեծ մասին կառավարության ատյանն էր, ուր շարունակ սուրհանդակներ կը հասնեին՝ հեծելոց սպառազեն խումբեր կուգային և կ'անցնեին նորա պատուհաններուն առջևեն, ամեն աստիճանի հյուրեր՝ իշխանազունք և բարձրաստիճան եկեղեցականք կերթևեկեին, և այդ կինը, որ ձմեռներն իբր թե կը քաշվեր և իշխանին կը թողուր երկրին կառավարությունը, դարձյալ ինքն էր ամեն բան տեսնողը, վասնզի Թեոդորոս այդ տեսակ գործերը և աղերսագիրները Տիկնոջ կ'ուղարկեր։ Ուստի Ռշտունյաց ընդարձակ գավառին բնակիչք գիտեին ում պետք էր դիմել, և իշխանուհին կանանոցին առաջին հարկը դիվանատուն մը դարձուցեր էր, որու մեկ քանի սենյակը Ատոմ Շահունիի սահմանյալ և ուր նա միշտ գավառին զինվորական գործերուն հանձանձիչն էր, ինչպես ըսինք։

Հայտնի էր թե իշխանուհին խելացի և սրամիտ կին էր, ուներ թե դատաստանական, թե մատակարարության գործերու համար փորձառու մարդիկ, որոց խորհրդով և գործակցությամբ կը վարվեր և ամենքը գոհ կ'ըներ, բայց, որ ամենեն կարևորն էր, յուր գանձապետն էր՝ տան վերակացու Հուսիկ Արտամետցի, որ բացառություն կրնար համարվիլ յուր պաշտոնակցաց մեջ։

Այս Հուսիկ յուր ազահության համար ոչ ոք բարեկամ չուներ Ոստանին և բոլոր Ռշտունյաց մեջ, և յուր առաջին հակառակորդ իշխանուհին ինքն էր, վասնզի ամեն օր հետը վիճելու և գանգտելու նյութ ուներ։ Իսկ Հուսիկ ինքն համբերության, քաղցրության, հեգնության և հավատարմության զարմանալի խառնուրդ մ'էր. և բարկությամբ խոսողին ինքն համբերությամբ կը պատասխաներ՝ անվրդով յուր առաջադրության մեջ։ Այնպես որ իրեն հետ գործ ունեցողը կը հուսահատեր և հնարք չէր գտներ զինքն որսալու։ Ուստի շարունակ գանգատ և բողոք անպակաս էին իր անձին դեմ։ Մանավանդ զինվորական դասը միշտ դժգոհ իրմե կը գանգտեին, երբեմն կը նախատեին և երբեմն կ'սպառնային։ Միայն մեկ մարդ կար,— և այն Թեոդորոս ինքն չէր,— որուն կամքը շուտ և անդանդաղ կը կատարեր Հուսիկ, և ինչ գումար դրամ որ խնդրեր, վայրկենին կուղարկեր կամ կը վճարեր, այդ մարդը Ատոմ Շահունին էր։ Վասնզի ծեր զորավարը օր մը հայտնի ըսեր էր Ռշտունյաց իշխանին և իշխանուհվուն, թե՝ «Լավ գիտենա այդ Հուսիկ, որ ես կատականաց գրտեմ համբերել, բայց օր մը չի կարծած վայրկենին կախել կուտամ զինք առանց երկար արարողությանց»։ Երբ իմացուցին գանձապետին

այս սպառնալիքը, քիչ մը մտածեց, ետքը քթին տակեն կամաց մը ժրպտեց, հետո գնաց ծեր զորավարին հետ խոսեցավ և համաձայնեցավ։ Երբ իրեն կ'առարկեին, թե Ատոմին հրամանները շուտ կը կատարեր և անդանդաղ կը պատասխաներ. «Ռշտունյաց գավառին մեջ այդ ծերուն պես անշահասեր մարդ մը ինձ ցցուցեք, ես պատրաստ եմ Հայոց զորավարին բոլոր գանձն իրեն հանձնելու»։ Եվ վերջը ծիծաղելով կ'ըսեր՝ «Ոսկին ի՞նչ պիտի ընե այդ ծերը, ինք արդեն ոսկի է, ինձ եթե չեք հավատար, երեսը նայեցեք», Ատոմի դեղնած երեսին ակնարկելով։

Իսկ երբ Թեոդորոս գանգատներե ձանձրացած Հուսիկն իր պաշտոնեն հանել կը մտածեր, Սեթա միշտ կը հակառակեր, վասնզի լավ խելահաս եղած էր, թե այդ ծեր Հուսիկ ամենահավատարիմ մարդ էր և գերագույն մատակարար։ Յուր ագահությունը իր անձին հարստության համար չէր, այլ ոսկին կը սիրեր իր բնության համար, գանձը բանալ, յուր տետրակներուն հաշիվը քննել, տեսնել և միշտ եկամուտը ծախքեն ավելի գտնել, հոն էր յուր բոլոր զվարճությունն ու գոռոզությունը. և այն ատեն ինքնիրեն կամաց և անլսելի ձայնով կըսեր. «Թող տեսնեն Ռշտունիք, թե ի՞նչ մարդ է Արտամետցին Հուսիկ և ի՞նչ կ'ընե, երբ գանձատան մը գլուխ կը կենա»։

Եվ այս բացագանչության վրա զմայլած էր դարձյալ, երբ Ատոմ Շահունի յուր դաժան կերպարանքով սև մուխի մը պես ներս մտավ, աչքերը սովորականեն ավելի խոր թաղված և երեսին սովորական դեղնության վրա կնճիռներն ավելի սաստկացած յուր դեմքին ավելի խրատություն մը տված էին։ Հուսիկ, որ բնականաբար չէր գիտեր ոչ Թենիի խոսակցությունը և ոչ երիտասարդ իշխանաց վարի դահլճին մեջ երգիծական ծիծաղին հետևանքը ծեր զորավարին վրա, այսպես բարկացած գինքը տեսնելով զարհուրեցավ. բայց առանց հայտնի ընելու և ամենայն քաղցրությամբ և ակամա ժպիտով՝

— Ի՞նչ հրաման ունիք, զորավար,— ըսելով ոտք ելավ։

— Դու բոլոր Ռշտունյաց գավառի ագահամարն ունիս, Հուսիկ, այնպես չէ՞,— գոչեց որոտաձայն ծեր զորավարը։

— Այո՛, իշխան։

— Լա՛վ, այս գիշեր ցուցակը շինել տուր և վաղն առավոտ կանուխ ինձ պետք է տաս։

— Բայց, զորավար...

— Բա՞յց... ի՞նչ ըսել է բայց... բայց-մայց չի կա. այդ բոլոր քու արկղերդ, քու դարաններդ գլուխդ կ'անցնեմ։

— Լա՛վ, շատ բարի, շատ բարի,— ըսավ Հուսիկ հեզ ու քաղցր ձայնիվ և յուր սովորական ժպիտով։

— Ի՞նչ,— ըսավ ծերը կատաղությամբ,— գիս կը ծաղրե՞ս, իմ վրա ծիծաղիլ կը համարձակի՞ս...

— Ի՞նչ կ'ըսես, իշխան,— պատասխանեց Հուսիկ աչքերը բանալով, ետ-ետ քաշվելով և հեռանալով իրմե՝ տեսնելով ծերը, որ ոտք առնելով իրեն կը մոտենար,— ո՞ւմ մտքեն կրնա անցնիլ ձեզի պես ազգանվեր, բազմարդյուն զորավարը ծաղրել. եթե այդպիսի լիրբ մը գտնվեր Հայաստանի մեջ, Վասպուրական նմանը գտնել կարելի չէ, ժողովուրդը այդ մարդը շապրեցներ. իշխանեն սկսյալ մի՞թե ամեն մարդ ձեզ չի ճանչեր... Ձեր կամքը կը կատարվի, ապահով եղեք։

Ծերը ձեռքը երախակալեն վեր առավ և ելավ գնաց առանց բան մը զրուցելու։ Իսկ Հուսիկ ետևեն նայելով, երբ դուռը գոցվեցավ՝ «Այս կատաղի ծերը ո՞ր դժոխք դուրս թափեց,— կ'ըսեր ինքնիրեն, տետրակներն առաջ քաշելով բարկությամբ,— ե՞րբ եկավ, որ մարդ նաև չիմացավ։ Այս մարդն աստուծո պատուհաս է իմ գլխուս, ամենուն խոսք հասկցնել կարելի է՝ մեկուն երեսին կը ծիծաղիս, մյուսը կ'անուշես, ուրիշի մը՝ իրավունք ունիս կ'ըսես և գիտցածդ կ'ընես. բայց սա գազան մ'է, խոսք չի հասկնար, քաղցր խոսիս՝ կը կատղի, դառն խոսիս՝ սուր կը քաշե, կամքը չի կատարես՝ կը կախեմ կ'ըսե, վերջապես պատուհա՛ս, պատուհա՛ս։ Չէ՞ որ զինվոր են, մարդկային արյունով շաղախյալ, շաղվյալ մարդիկ. ի՞նչ տարբերություն ունին ավազակներե։ Օրինավոր ավազակնե՛ր, ոչ մարդու հարգ գիտեն, ոչ արծաթի։ Սոցա ամենեն լավը, ամենեն խելոքը իշխանն է, որ կարդալ-գրել գիտե, հաշվել նաև գիտե, և այդ մարդը գիս իմ պաշտոնես հանել կրցեր է մտածել առանց խորհրդածելու, թե ուրիշ Հուսիկ մը գտնել կարելի չէ բոլոր Վասպուրականի մեջ. վերջապես զինվո՞ր, և որովհետև քանի մը քսակ ոսկվո ձեռք ձգեր է, ո՛ գիտե ուստից, անշուշտ ավազակությամբ, միտքը դրեր է, թե Հուսիկի պետք չի կա... Իբրև թե ոսկվո աղբյուր գտեր է։ Բարեբախտաբար իշխանուհին՝ թեպետ շատ պակասավոր, բայց էրկնեն խելոք, իմացեր է, թե Ռշտունյաց տունը առանց Հուսիկի չի դառնար, գինքն արգիլել է, ինչպես և խոստովանեցավ... Երբեմն կը մտածեմ, վասնզի ինձ էլ կիրք կուգա, որ սոցա հպարտությունը պատժելու համար թողում հրաժարիմ։ Այո՛, հրաժարիմ, երթամ քաշվիմ Արտամետ, նըստիմ տունս, հանգիստս նայիմ, բայց երբ միտքս կուգա, թե այսչափ տարի խնայությամբ ժողվված հազարավոր ոսկվո քսակներս պիտի թողում, որ գան ուրիշները հիմարաբար, շռայլաբար, ցանուցիր ընեն, գողնան, գողցնեն, չեմ կրնար համոզվիլ։ Ոչ իշխանը, ոչ իշխանուհին չեն հասկնար, խելքերնին չի հասնիր։ Ավետարանը զրուցեր է. «Մի՛ արկանեք զմարգարիտս ձեր առաջի խոզաց». մե՞ծ խրատ կա այդ խոս-

քին մեջ. ես լավ կը հասկնամ, պետք չէ, որ այսչափ տարի աշխատելես վերջ թողում այս ոսկիները, որ դարձյալ մարգրիտ կը նշանակեն և ավելի լավ արժեք ունին. ժամանակին կը դիմանան, դեղնելե վախ չունին, չեն ժանգոտիր, հրդեհե չեն վախեր։— Բարեբախտաբար չեն գիտեր նաև, թե ի՞նչ ունին այս Ռշտունիք, և ես չեմ հայտներ...»։

Այս խորհրդածությանց վրա էր Հուսիկ, երբ սպասավոր մը եկավ, թե իշխանուհին զինք կուզեր տեսնել։ Արկղ, երկաթի դուռ, փայտի դուռ՝ ամենն էլ զգուշությամբ գոցելեն վերջ, ուղղվեցավ իշխանուհվույն սենյակը։

Սովորական կին չէր Ռշտունյաց Տիկինը, հազիվ քառասնամյա՝ շատ ավելի պակաս կը ցցներ. յուր կերպարանաց գեղեցկությունը այնպիսի փայլ չուներ, որ աչք շլացներ, այլ այն վարպետներու նկարներուն կատարելությունն ուներ, որ քանի նայի ոք, աչքը կը գրավե, կը հափշտակե, վայելուչ հասակը, դիմաց համեմատությունը, հոնից և աչաց հրամայող ակնարկը՝ խառնուրդ խստության և քաղցրության, որք ձգող և տիրապետող զորություն մ'ունեին, ժպիտը, որ հաճույք կամ արհամարհանք կը հայտներ, յուր նազելի շարժմունքն ու քայլվածքը, յուր մանր ձեռքերն ու ոտքերը, և վերջապես բոլոր այս մարմնո կատարելությունք յուր սրամտության, յուր նուրբ ճաշակին հետ միացյալ կանանց ակումբի մեջ նաև ամեն մարդու նկատողության և ակնածության զինք առարկա կ'ընեին։ Ո՞ւր մնաց, որ Ռշտունյաց Տիկին մ'էր, և ամենը գիտեին, թե առանց իշխելու էրկանը վրա՝ մեծ ազդեցություն ուներ յուր մտավոր կարողությանց համար և նորա կատարյալ վստահությունը։ Մարգարտային վարսակալ պսակը ճակտին բեհեզյա քողին վրա, փունջ մը մազերու խոպոպիք իջած այտից երկու կողմեն, սամույրենին մետաքսյա պարեգոտին վրայեն ձգյալ, ոսկեթել մուճակներ ոտքերուն, Ռշտունյաց Տիկինը թագուհվո կը նմաներ յուր բազմոցին վրա։ Վստահ յուր արժանյաց և Թեոդորոսի սիրույն՝ գեղեցիկ սպասուհիներե էր շրջապատյալ. յուր բնական առատաձեռնությամբ միշտ ամենուն սիրելին էր, և գիտեր այնպիսի ձև տալ խնայության, որ ատելին՝ խեղճ Հուսիկին վրա կիյներ, թեպետ սա էլ ամեն խոժոռ նայվածքե չէր վիրավորվիր։

Այսպես հոգնած տարածյալ էր իշխանուհին յուր ծիրանի բազմոցին վրա, երբ Հուսիկ ներս մտավ, ողջունեց խոնարհաբար և հարցուց, թե ի՞նչ հրաման ուներ. Սեթա՝ իշխանաղն հյուրերուն համար սեղանի պատրաստությանց վրա կրկին և կրկին պատվերներ տալեն վերջ, որպեսզի խնայողությամբ չի վարվի յուր տան վերակացուն, և երբ Հուսիկ թթու երեսով դուրս ելնելու կը պատրաստվեր, ըսավ իշխանուհին՝

— Մոռցա նաև զրուցել քեզի, թե իշխանը հրաման ունի, որ Ատոմ զորավարն ինչքա՜ն դրամ ուզե, պետք է տալ, գիտես յուր բնավորությունը, պետք է ջանալ քաղցրությամբ գոհ ընել զինքն ամեն կերպով։

Հուսիկի երեսը խավարեցավ վայրկյան մը, քիչ մը մտածելեն վերջ, դարձյալ ժպիտ ի շրթունս՝

— Ո՞վ կարող է Ատոմի դիմադրել,— պատասխանեց,— տերը դուք եք, եթե կ'ուզեք գանձին բանալիքները նաև իր առաջը դնեմ։

— Անշուշտ, Հուսիկ, դու իրեն հետ վեճ մը ունեցեր ես, կերպդ, ձևդ այնպես կը ցցնե,— ըսավ Տիկինը ծիծաղելով և նուրբ հայվածք մը ձգելով։

— Վե՜ճ... ես մարդու հետ չունիմ, իշխանուհի, ուր մնաց Ատոմի հետ. բայց ճշմարիտը խոսելով ինձ շատ հաճելի է յուր սիրուն կերպարանքը, անուշ նայվածքը, քաղցր ձայնը չի լսել և չի տեսնել տարիներով և բոլոր կյանքիս մեջ, և եթե կարելի է հանդերձյալ կենաց մեջ նաև իրեն չի հանդիպիլ, որ շատ հավանական է։

— Թվի թե իրեն չի հանդիպելու համար արքայությենե նաև պիտի հրաժարիս։

— Մանավանդ թե արքայություն երթալու համար ամեն ջանք պետք է ընեն անոնք, որ Ատոմ Շահունիի հանդիպիլ չեն ուզեր անդին, վասնզի հոն հայտնի է, թե յուր տեղը արքայություն չի կրնար լինիլ։

— Ինչպե՞ս, խե՜ղճ Ատոմ, այդչափ գեշ համարմո՞ւնք ունիս դու յուր վրա։

— Գեշ համարմո՞ւնք ունենալ, ո՜չ երբեք. բայց ես այնպես կը հավատամ, թե արքայություն ըսված տեղը պատերազմի դաշտ չէ, ուր մարդիկ ջարդեն, կոտրեն, հայհոյեն, հրդեհեն, այլ այնպիսի տեղ մը, ուր մարդիկ հանդարտ, սիրով, խաղաղությամբ...

— Անշուշտ նաև խնայությամբ ապրելու համար պիտի երթան,— ըսավ իշխանուհին ծիծաղելով, և ամենքն սկսան խնդալ։ Իսկ Հուսիկ անխոով ժպտելով՝

— Այո՛, իշխանուհի, խնայություն ամեն տեղ պետք է, իսկ արքայության մեջ անհրաժեշտ է,— պատասխանեց,— վասնզի հոն ոչ ուտել, ոչ խմել, ոչ շինել, ոչ հագնիլ և ոչ պատերազմիլ կա։

— Եթե ամենքը քու խորհրդոցդ հետևին, աշխարհք արքայություն կը դառնա այսօր և վաղն՝ անապատ։

— Ես չեմ ըսեր, թե մարդիկ չուտեն, չզգենան, չընակին, այլ ավելորդ ծախքեր չընեն, որով շատ անգամ նեղության կը դատապարտվին. տեսե՛ք, ահա Կամսարականք, որ օրավուր կ'ոչնչանան, Շիրակա մեկ մասը դեռ երեկ ծախեր են Բագրատունյաց Տիկնոջ, անշուշտ քանի մը

տարիե մնացածն էլ կը ծախեն, և Բագրատունիք, որ ագահ անուն ունին, հայոց առաջինք կը լինին. ո՛չ քաջութիւնամբ, վասնզի Ատոմ Շահունիե ո՛վ քաջ կա. փա՜ռք ստեղծողին, ձեռքը միշտ սուրին վրա է, մարմինը՝ անսպի, ողջ տեղ չի կա դրամի չափ, այլ խելքով և խնայութիւնամբ։

Այս միջոցիս Թեոդորոս, որ ներս մտեր էր և Կամսարական, Շիրակ, Բագրատունեաց անունները լսելով կանգ առեր էր, առանց տեսնվելու Հուսիկե, առաջ անցավ՝

— Դու ուսկի՞ց գիտես,— ըսավ,— որ Շիրակա մեկ մասը գներ է Բագրատունեաց Տիկինը, ես որ այն կողմերն էի դեռ երեք ամիս կա հազիվ՝ չիմացա։ Երկու գիշեր Շիրակավան Կամսարականաց հյուր էի, նշան մը չի տեսա։

— Եթե Հուսիկ միասին լիներ,— զրուցեց իշխանուհին ծիծաղելով,— շատ նշաններ կը տեսնեիր...— Եվ հանկարծ լուրջ և տխուր կերպարանք առնելով,— բայց Կամսարական ըսելով շանցնինք, Բյուրեղի համար ձայներ կան թե Վարդանաբերդի քանդվելուն չէ կրցեր ազատիլ, ոմանք կ'ըսեն, թե գերի տարեր են ընտանյոք, ոմանք կ'ըսեն, թե ջարդվեր են։ Դու, իշխան, տեղեկութիւն չունի՞ս։

— Ինչպե՞ս չունիմ,— պատասխանեց Թեոդորոս դառնութիւնամբ։— Երանի՜ թե հյուր չլինեի գիշեր մը Վարդանաբերդ և անգամ մը ևս տեսած չլինեի այդ հրեշտակային կինը։

— Ուրեմն ճշմարի՞տ է յուր մահը,— ըսավ Սեթա դողալով և ոտք ելնելով։

— Յուր և աղջկան մարմինը լճին մեջեն հաներ են։

— Ո՜հ, խեղճ Բյուրեղ, թշվա՜ռ մայր,— զրուցեց Սեթա և հեկեկանոք սկսավ լալ երկու ձեռաց մեջ երեսները ծածկելով։

— Ես գիտեի, թե ինչչափ ցավ պիտի պատճառե քեզ այս լուրը, և անոր համար մինչև հիմա լռեցի։

— Բայց այդ ճիվաղնե՞րը, այդ գազաննե՞րը...

— Այդ գազաններուն ձեռք չի ընկնելու համար յուր նորահաս աղջկան հետ ինքզինք նետեր է լիճը և խեղդվեր։

— Որդին, Գրիգոր, որ մեզի հյուր էր, նա ի՞նչ եղեր է։

— Գրիգոր և քեռին մեզ հետ էին. յուր տարիքեն վեր քաջութիւնամբ կը պատերազմեր. երբ մենք Գողթն էինք, հորդորեցի, որ երթան, որպեսզի Բյուրեղ մտատանջութենե ազատի, գնացին, և թեպետ հարցնել տվի, լուր չի կրցա առնուլ։

Սեթա կուլար կամաց ձայնով, Թեոդորոս խոժոռ՝ վեր-վար կը պտըտեր, Հուսիկ կը խորհրդածեր, սպասավորք և սպասուհիք իրենց տյարդ օրինակին հետևելով տխուր կերպարանք առեր էին։

Բայց Սեթա քանի մը վայրկենեն վերջ, աչքերը սրբելով, դարձավ իշխանին՝

— Գոնե,— ըսավ,— արժանավայել թաղում մը լիներ այդ առաքինի և հրեշտականման կնոջ։

— Թաղման հանդեսն կատարողը Հայոց օրինավոր կաթողիկոսն է, Քրիստափոր ինքն,— ըսավ Թեոդորոս,— ես իրմե խնդրեցի, որ վայելուչ շիրիմ մը նաև կանգնե յուր վրա, և նա խոստացավ։ Եվ պետք եղած ծախքը նաև տվի։

Երկրորդ և երրորդ օրը ինչպես միշտ Թեոդորոս իր ծանր զբաղմանց հետ էր. Սեթա թեպետ բարեկամուհին կը հիշեր, բայց գավառին և մեծ տան մը հոգերը զինք գրաված էին. միայն խեղճ Թենի տխուր էր ամիսներով և գրեթե ոտքի վրա հիվանդ՝ կը նիհարնար ի մեծ մտատանջութիւն յուր ծնողաց։ Իսկ Ատոմ առանց մարդու հետ խոսելու, յուր զինվորական մարզերեն քանի մը օրն անգամ մը կը դառնար, մխիթարական խոսքեր կ'ըներ աղջկան, անիծելով բոլոր Մամիկոնեից հիշատակը, նոքա, որ անհետ կը լինեին, և նոքա, որ իբրև ժառանգ Կոգովիտի գավառը կը գրավեին։ Վասնզի Մուշեղ և Համազասպ հորեղբորորդիք Գրիգորի, իբրև ժառանգորդք, առանց երկար խույզ և խնդիր ընելու և քիչ մը գոհութիւնամբ նաև Գրիգորի մահվան լուրը տարածելով գրավեցին Կոգովիտ։

ԳԼՈՒԽ ԺԱ

Անցան երկու տարի և ավելի ժամանակ այս դեպքերուն վրա, ոտնակոխ եղած Հայաստանի այդ հարուստ գավառաց ժողովուրդը սկսավ քիչ մը հոգի առնուլ, շինականը յուր տունը դարձյալ շինեց գետնի խորը, զոր ոմանք որջ անվանեցին, առանց մտածելու, առանց հաշվելու, թե անտեր, ավազակաց և անիշխանութեան մատնյալ Հայաստանի մեջ, ուր հենք, ասպատակք և գաղթականք անպատսպար երկիր մը կը դիմեին համենուստ Քսենոփոնի օրերեն ի վեր, ուրիշ տեսակ տուն շինել անօգուտ էր։

Թեոդորոս կաշխատեր՝ կը դիմեր ամեն կողմ, ժողովուրդը կը քաջալերեր և կը պաշտպաներ, մեծամեծները միութեան և դաշնակցութեան կը հորդորեր՝ առանց երբեք հաջողելու յուր մտածութիւնը ընդունել տալու համար։ Հայանի դիմադրութիւն ոչ ոք չէր ցույց տալ, բայց զանխուլ դիմադրութիւն կար, որ անտարբերութիւն նաև չէր։ Նախարարաց շատերը օտարեն ավելի Թեոդորոսե կը վախեին. այդ մարդուն գործու-

նեութիւնը, պատերազմի մէջ քաջութիւնը, խորհրդոց մէջ առաջնութիւնը, օտարաց առաջ յուր համբաւը, անիրաւութեանց դէմ խստութիւնը միմիայն պատճառ էին յուր առաջադրութեանց ընդունելի չլինելուն։ Հեռավորք՝ Վիրք, Աղվանք և Սյունիք կը միաբանեին. մերձավորք՝ Անձևացիք, Արծրունիք, Մամիկոնյանք, Մակացիք խեթիվ կը նայեին։ Թեոդորոս շատ սրամիտ էր, որ չի հասկնար, ուստի ամեն ջանք ի գործ կը դներ Վարազատիրաց Առպետք բերել տալու համար աքսորեն։ Յուր բարեկամաց հետ ան անպակաս կը թղթակցեր և հազիվ թե գործը կարգի կը գներ՝ կամ խռովութիւն մը պաշտատին մէջ, կամ որոտացյալ զորավոր պաշտօնեի մը փոփոխութիւնը յուր ջանքերն ի դերև կը հանեին։ Եվ իրոք, եթե Բագրատունեաց նախարարը դար, շատերու մտքին մէջ կշիռ մը կը կազմվեր զորութեան և Թեոդորոսն երկյուղ կրողները ուրիշ հենակետ մը ունենալով, միաբանութեան դոշինքեն հեռու չէին կենար։

Այս միջոցիս Գրիգոր և Սուքեն Դամասկոսի մոտերը իրենց գերութեան շրջանները կը կրեին, նախատանաց՝ գժնդակ ծառայութեանց կը տանեին և աչաց առջև կը տեսնեին գունագունդ ուրացողաց թիվը, որ սարկութեան տառապանաց չդիմանալով՝ ազատութիւն կը գտնեին ուրիշ տեսակ մը գերութեան մատնվելով, ուրանալով կրոնից հետ հայրենիք՝ վերջապես ամեն հին կապերը խզելով, արտաքսի ենց կամ մարդու մը հետ կապվելով։

Զավեն նույն ժամանակներուն Կարինե մինչև Տրապզոն ծանր ճանապարհորդութեամբ ամեն քաղաք կենալով և հետազոտելով, յուր Արփենին կը փնտրեր և այնպես կը հառներ Կոստանդնուպոլիս. մշակութիւն, ծառայութիւն, շինքերու մեջ բանվորութիւն, ամեն բան ընելով կ'ապրեր, խելքը, միտքը յուր կարոտին վրա միշտ լինելով. խեղճ մարդը շատ անգամ բեռն ուսին՝ փոքրիկ տղա մը տեսնելուն պես կը վազեր կը ոլանար, որ տեսնե արդյ, թե միգուցե Արփենին լինի։ Իշխանավոր, զինվորական կամ քաղաքական կը գիտեր, որ տեսնե միգուցե Թամա լինի. վասնզի Կարին առած տեղեկութիւնքը զինք համոզած չին, թե Թամա էր յուր ավազակը, բայց անօգուտ. հայկական հարատեւութեամբ միտքը գրած, թե օր մը չէ օր մը անպուշտ յուր կորուսյալ որդին կը գտնե՝ թաղ-թաղ յուր աշխատութեան տեղերը կը փոխեր այդ ծավացյալ մայրաքաղաքին մէջ։

Այսպես, Կաղզվանի գյուղացի զինվորը Թյուզանդիոն փազոցները կը պտտեր, մշակի հագուստներու տակ ծածկած ազնիվ սիրտ մը և անիրավ գոգութեան մը դեմ յուր մտքին մեջ պատերազմ հրատարակեր էր մեծ իշխանի մը հակառակ, և որ թվի, թե իրեն կը փախչեր, վասնզի տեղ մը զինք չէր գտներ։ Ջորս երկայն տարիներ անցան։ Ոչ զԹամա և

ոչ զԱրփենի տեսավ. տխրութիւնը զինք պատեց, ջրավ, զգրութիւնը տկարացավ, և ինքնիրեն, «Ո՜հ, աստված իմ,— կ'ըսեր,— մի՞թե կարելի է, որ քու Ավետարանդ զիս խաբե, քու սեղանիդ առջևեն ինձ ձայն եկավ, թե՝ «Այս իմ որդին, որ կորուսյալ էր, գտնվեցավ, և ուրբ մեջը մը իր գերեզմանին մեջեն կրկնեց քու խոսքը. «Խնդրեցեք և տրվի ձեզ», և այս չորս տարին կը կատարվի, որ պանդուխտ թափառական կը պտտիմ, որը մը՝ հրեշտակ մը կը փնտրեմ և չեմ գտներ. ո՜հ աստված իմ, հիշե քու արդարութիւնդ և ողորմե՛ ինձ, ողորմե՛ որբացյալ հրեշտակին»։ Այսպես կ'ազոթեր առավոտ մը խեղճ Զավեն, և այդ երկոթյա մարդը իր ողորմելի բնակարանին մեջ՝ իր խշտիին վրա ինկած արցունք կը թափեր։ Հետո աչքերը սրբելով ելավ փողոց, տեսավ ժողովուրդն ազմկյալ, ամեն կերպարանաց վրա երկյուղ և հույս կը տիրեին, ամենքն իրարու լուր կուտային, թե կայսրը մեռած է և կը գիմեին Սուրբ Սոֆիա եկեղեցվո և արքունյաց կողմը։ Հերակլես մոտեն տեսած և յուր հաղթական դրոշակին տակ պատերազմած մարդ էր Զավեն, իր մտքին մեջ դյուցազնին հիշատակը միայն կենդանի էր, նորա վերջին տարիներուն մեղկությունը, որ վատության գրեթե կը հավասարեր, չէր կրնար զգալ և հավատալ. զարմանալով կը նայեր ժողովրդյան՝ նորա մահվան համար տեսնված անտարբերության վրա, որ յուր հաշորդին համար ավելի եռանդուն էր։ Ոմանք մեծ սրգվույն Կոստանդինի կողմնակիցք էին, ոմանք նորա հակառակ կայսրուհվույն և փոքր սրդվույն Երակլոսի կողմը կը բռնեին։ Ուստի ինք, որ որոշած էր ճանապարհորդել դառնալ հայրենիք, թողած յուր շալակը յուր բնակարանին մեջ, սկսավ հետևիլ այդ խառնիճաղանջ ժողովրդյան, որու ալեկոծ քնթացքին մեջեն որոտման ձայներ կ'ելնեին, «Կեցցե՛ Կոստանդին» կամ «Կեցցե՛ Երակլյակ» աղաղակելով։ Զավեն աչքը շուրջ պտըտցնելով և տեսնելով այդ խուժանին փրփրած վիճակը, որ քանի կ'երթար կը շատնար կատաղի և զինյալ խումբերով, ձեռքը զատին կը տաներ երկայրի պատրաստ վիճակի մը մեջ դնելով, և այնպես ժողովրդյան հետ մտավ Սայր եկեղեցին, ուր գիշերվնե բերված էր կայսեր ոսկեզեն դագաղը և մեջտեղ դրված բարձր արծաթյա պատվանդաններու վրա։ Վերջին անգամ մը տեսնելու համար այդ քաջին կերպարանքը, որուն դրոշակին տակ Նիկվեի գաշտերուն մեջ պատերազմած էր, յուր կորովի բազուկներուն ուժ տվավ և ճեղքելով ժողովուրդը անցավ հասավ մինչև թիկնապահաց խումբին կանգակը, որ շրջանակ մը կը կազմեին դագաղին չորս կողմը. հոն ակամակալ պակ ի գլուխ ծիրանիներու մեջ տեսավ կապկի գիտը այն քաջին, զոր ինք պատերազմի գաշտին վրա տայուած մը տեսեր էր. զզվանք եկավ իրեն, կուզեր ետ քաշվիլ, երբ խումբ-խումբ պատ-

տականաց փառավոր ամբոխը սկսան շարվիլ կարգավ դագաղին շուրջը։ և ահա կայսրուհին Մարտինե և հարազատ որդին Երակլյակ և թագաժառանգը Կոստանդին եկան իրենց պատրաստյալ գահույից վրա բարձրացան։ Անմիջապես եկեղեցական երգեր լսվեցան, և պատրիարքը կրոնական շքեղ խումբով հանգստյան կարգն սկսավ կատարել։ Զավեն, լուրջ մարդ, այս հանդեսին պերճանաց վրա աչք մը պտըտցնելե վերջ՝ սկսավ դիտել այդ ամեն կերպարանքները. կը տեսներ Մարտինե, որ յուր խորթ որդվույն վրա այնպիսի աչքեր կը դարձներ, որ երկու թունավոր սլաք կարելի էր համարել. կը տեսներ Կոստանդին ժամանակեն առաջ ծերացյալ, աչվներուն լույսը մարած, մարմնույն կորովը կորած. իսկ Երակլյակ թեթև երիտասարդ հորը դիակը չի տեսնելով՝ կանանց խումբին կը հառեր. պալատականք, սինկղիտոսք և բոլոր մեծամեծք իրենց նայվածքներեն, իրենց կերպարանքեն հայտնի կ'ընեին, թե աստվածային երգերուն ուշադրութենե ավելի ուրիշ կարևոր մտածություն ունեին իրենց գլխուն մեջ։ Այս դիտողությանց ժամանակ հանկարծ Զավենի աչքին հանդիպեցավ Թումայի կերպարանքը, որ թագաժառանգին մոտ կանգնած էր յուր հետևորդաց մեջ։ Կարծես նոր կյանք, նոր հույս, նոր զորություն առավ Զավեն. աչքերն այդ հրաշալի գմբեթին դարձնելով և միտքը գմբեթեն վեր թռչելով. «Փառք քեզ, աստված, փառք քեզ»,— ըսավ. և իբրև թե Արփենին թևերուն մեջ՝ յուր նժույգին վրա Հայաստանի ճամփան կ'երևակայեր, թե կը սլանար։ Սիրտն ուրախությամբ կը տրոփեր և աչքերը Թումայի վրա տնկած՝ նորա ամեն ակնթարթը, ամեն շարժմունքը կը դիտեր, որ աչքե չի կորսնցնե։

Բայց սրտի առաջին հուզմունքն անցնելեն վերջ՝ մտածեց, թե երբ հանդեսը վերջանար և Թումա այդ արքունական ամբոխին հետ անհետ լիներ, ինք ուսկի՞ց զայն պիտի գտներ։ Ուստի պետք էր նույն միջոցին տեղեկություն առնուլ այդ մարդուն վրա, և այդ բանին համար աչքն սկսավ շուրջը պտըտցնել. տեսավ քիչ մը հեռուն թեթևսոլիկ, շատախոս մարդ մը, որ շարունակ պալատականաց կը նայեր և քովիններուն հետ կը խոսեր. ամեն ջանք ընելով, հրելով, հրմշտկելով մոտեցավ։ Առաջ նորա ամեն խոսքերուն մեծ ուշադրություն տվող ձևացավ և վերջը քանի մը անձանց վրա սկսավ տեղեկություն հարցնել, մինչև կարգը Թումայի բերավ հասուց։ Իսկ այդ շաղակրատը Թումայի ազգաբանութենեն սկսելով կը պատմեր, թե Թրակացի էր նա, թե Պրոկոպիոսի հետ դառնալով Հայաստանի պատերազմեն կորակոր, ինչպես սովորություն էր այն ատեն դառնալ հունաց ամեն բանակներու ամեն տեղ, թագաժառանգին հետ գնացեր էր հԱսորիք և նույնպես դարձեր էր կորակոր և թե դեռ քանի մը շաբաթ առաջ միայն եկեր էր Կոստանդնուպոլիս և սիրելի եղած

էր արքայորդվույն յուր ծառայական բնավորությամբ և թե այդպիսի անպիտաններուն շուքն անկարելի էր, որ երկար տևեր, վասնզի կայսրուհին շատ մեծահանճար կին էր և իր Երակլյակը պիտի թագավորեցներ։ Իսկ Զավեն, որ համբերությամբ մտիկ որած էր ամեն բան, հարցուց, ուր էր այդ Թումայի տունը, և իմացավ, թե Պրոպոնտիդի վրա ծովեզրյա պալատ մը՝ յուր քրոջ հետ կը բնակեր, որ Փիլակրիոս անուն թագաժառանգին կինն էր։ Եվ թե այդ յուր քրոջը շնորհիվք, որ Կոստանդինի սիրուհին էր, այդ Թումա զորավար լինիլ հաջողեր էր։

Այս պատասխանը լսելով ծերը՝ տղու պես ուրախութենեն պիտի ցատկեր, եթե չամաչեր և այդ սեղմված վիճակին մեջ շարժելու տեղ ունենար։ Ուստի հանդեսը երբ վերջացավ, մեծ եռանդով ինչչափ որ կրցավ, ջանաց շուտով դուրս ելնել եկեղեցիեն և, ամբոխին խուժանեն հազիվ թե ազատած, մտավ յուր բնակարանը, առավ յուր թեթև կարասիքը և թողլով այն կեդրոնական թաղը, հաստատվեցավ նույն ծովեզրին մոտ՝ իջևանի մը սենյակ, ուր էր Փիլակրիոսի պալատը։

Թեպետ կը տեսներ ութ տասը պալատանման տուներ, բայց ապահով էր, թե պիտի գտներ Արփենին, ուստի նստած ծովեզրը տախտակե նավամատույցին վրա գեղեցիկ ծովուն հանդարտ ծուփը կը նայեր. այդ թաղը հանդարտ թաղ մ'էր, մանավանդ այն օրը, վասնզի խառնիճաղանջ և հասարակ ժողովրդյան բնակարանք քիչ կային, և ճամփաները մարդ չէր երևեր. ամբոխը բոլոր թաղին կեդրոնը՝ վերն էր։ Այդ մեծ պալատներու քանի մը մաքուր հագված ծառայք իրարու հետ կը խոսեին, կը վիճեին, վասնզի նոքա ալ իրենց տյարց պես Կոստանդինի կամ Երակլյակի կողմնակիցք էին, և ամեն աստիճանի մարդ քաղաքագիտություն ուներ յուր ծոցը հավասար աստվածարանության։

Զավեն ուշադրությամբ մտիկ կ'ըներ երկու սպասավորաց մեջ խոսակցություն մը, որ երկու մեծ դռան մեջ կեցած կը վիճեին բավական բարձր ձայնիվ.

— Ու՞ր է քու Կոստանդինի առավելությունը, կըսեր մեկը մյուսին, կնոջ մը տիրապետութենեն, որ դու վնասակար կը համարիս։ Այսպիսի ժամանակ. ի՞նչ թե Հերակլի օրով և այդ քու Կոստանդնի աչաց առջև Երուսաղեմ և Անտիոք չի կորուսի՞նք. և այսօր Եգիպտոսի կորուստը կատարյալ եղեր է, վասնզի Աղեքսանդրիա նաև արաբաց ձեռքն է անցեր, և այդ քու Կոստանդինը իբրև զորավար կայսրության բանակաց ոչինչ չի կարենալով ընել անօգնական թողեր, փախեր եկեր է, և դուք նորա կուսակիցք կը ծածկեք ժողովրդեն։ Բայց այդպիսի գույժ կարելի՞ է ծածկել, վաղը ինչպե՞ս պիտի սնուցանեք այս ծովու նման քաղքին բնակիչը, որ յուր հացը Եգիպտոսեն կընդուներ։

— Եթե Կոստանդին, որ պատերազմաց մեջ այնչափ քաջություն ցույց տված էր, չի կրցավ այդ կատաղի արարաց դեմ դնել և հաղթվեցավ ու ետ քաշվիլ պարտավորվեցավ, տկար կնոջ մը՝ այդ ձեր ողորմելի Մարտինեի ձեռքին տակ ի՞նչ կը հուսաք, որ լինի այս ինքնակալությունը, վասնզի Ծրակլյակը մարդ չէ, Թեթևսոլիկ երիտասարդ մ'է խեզճ, գործիք իր մոր ձեռքին մեջ։

— Տե՜, հիմար, կանանց վրա մի՛ համաձակիր լեզուդ արհամարհանոք երկնցնելու։ Առանց կնոջ մը աչաց քու վրադ խոնարհելուն ի՞նչ էիր դու և ու՞ր պետք է գտնվիր հիմա. ի՞նչ շուտ մոռցար քու երեկվան հարդանոցդ, ախոռապետի ծառա, և հիմա չես ուզեր հիշել, թե սա բոպեիս վերեն Տիկնոջ հրամանն՝ ամենափոքր ակնարկությունք զքեզ կը սարսեցնե և յուր մտերմական հաճույից դողալավ կը ծառայես. ինչպե՞ս կը մոռնաս, որ այդ Տիկնոջդ գեղեցկության շնորհիվն է, որ Փիլակրիոս իր էրիկը և Թումա իր եղբայրը եղած են ինչ որ են։

Զավեն Թումայի անունը լսելուն աչքերը բացավ. տունը ոբ կը տեսներ, հոն էր անշուշտ յուր Արփենին. ուստի բոլորովին ուշադրություն դարձուց բառ մը չի կորսնցնելու համար. կը ջանար յուր սրտին բաբախմունքը նաև դադրեցնել, եթե կարելի լիներ։ Բայց խոսակցությունը հանկարծ դադրեցավ, վասնզի սրաբշավ ձիու մը սմբակներու ձայն լսվեցավ, և արքունական սպասավոր մը գահավիժելով ձիեն իջավ, «ավետի՞ս, կեցցե՞ Կոստանդին կայսր» ազազակելով։

Զավեն, որ դռան մոտեցեր էր, կը տեսներ գավթին ներսը սպասավորք և սպասուհիք ուրախության ձայներով «ավետի՞ս, ավետիս» գոչելով տունը կը հնչեցնեին, սանդուխներե վեր կը վազեին։ Պատուհաններ կը բացվեին ավետաբերը տեսնելու, և ահա երևցավ երիտասարդ կին մ'էլ յուր բոլոր գեղեցկությամբ Ափրոդիտի նման, որու երեսին վրա ուրախություն կը նշուլեր և լեցուն քսակ մը ձեռքը ավետաբերին կարկառեր։

Նույն միջոցին մյուս քովի պալատան, ուր Մարտինե կայսրուհվույն կողմնակիցները կը բնակեին, դռները կը գոցվեին և վարագույրները կը ծածկվեին, իսկ Զավեն յուր տեսածով գոհ չի կրնալով լինել, կը դառնար ծովեզրը, կը նստեր նավամատույցին վրա և կը մտածեր, թե իր սիրուն Արփենին արդյոք հոն ներսը՝ այդ պալատին մե՞ջն էր, այդ այնչափ գեղեցիկ և այդչափ անբարոյական կնոջ ճանկերուն մեջ ի՞նչ չար օրինակներու ենթարկված էր։

Այս մտածությամբք և մտատանջությամբք երկայն ժամանակ մնացած՝ ծովուն ալիքներուն կը նայեր, երբ հանկարծ թիակներու ձայն մը լսեց և ճերմակ ներկված ոսկենիշ և ոսկեզօծ թնատաբաց արծիվ մը ծայրը մեծ նավակ մը տեսավ, որ ծովուն ափունքը կը քերեր. յոթը ջուխտ կորովի երիտասարդք կը թիավարեին. նավուն խորը կ'երևեր գեղեցիկ կին մը բեհեզներու և ծիրանիներու մեջ փաթաթյալ, ոսկեթել բաճատոնց վրա ընկողմանյալ։ Շուրջը՝ վեց հատ տասը-տասներկու տարեկան շքեղազարդ աղջկունք շարված էին, իսկ կոնակը բարձրավանդակին վրա մաքուր հագված սպասավոր մը սիրամարգի փետուրներե հովանաց մը կը բռներ Տիկնոջ գլխուն վրա՝ որու ծարիր աչքերը ուրախության մեջ կը լողային։ Այս նոր Կղեոպատրան յուր քիչ առաջ տեսած Տիկինն էր, որ արքունիք կ'երթար, ուստի յուր սուր աչքերը տնկեց Զավեն և քիչ մնաց, որ նավուն մեջ նետեր ինքզինքը. վասնզի անմիջապես դիմացը՝ մոտը ճանչցավ Արփենիի աննման աչքերը. «ո՜հ» ըրավ և ինքզինք սանձեց. ինչչափ մեծցեր էր չորս տարվան մեջ։ Ուզեց ոտք ելնել և ոտքերը կապվեցան. նավակը սրացավ անցավ ճերմակ փրփուր մը և ձեղք մը թողլով ծովուն երեսին վրա, որ քանի մը վայրկենեն անհետացավ։ Մերը ծունկի վրա եկավ. «Փա՜ռք քեզ, աստված իմ, փառք քեզ, դու, որ այսօր այսչափն ինձ շնորհեցիր, անշուշտ իմ հրեշտակիս պատուությունը նաև կը շնորհես, դու չես ներեր, որ Մամիկոնյանց տնապատ ծաղիկը այդ աղտեղի ձեռաց մեջ խամրի, և խեղճ Զավենի կը շնորհես տանիլ Արփենին յուր սուրբ մոր գերեզմանին քով չոքեցնելու և եղբոր ձեռքը հանձնելուն։

Այսչափ հուզմունքներ ունենալեն վերջ ազնվասիրտ զինվորը ելավ կանգնեցավ և մաքին մեջ հազար տեսակ հնարքներ կ'ստեղծեր հափշտակելու համար յուր կորուստը, երբ մութն սկսավ իջնել, և ինք քաշվեցավ յուր խոնջուկ բնակարանը, այն մեծ գոհությունն ունենալով, որ յուր Արփենին իրմե հեռու չէր։

Ո՜վ անդուեղջ անսահման.
Ըզքնքուշ մանկություն քան մատնել պղծության
Զէ՞ր լավ ես ի վերա անպաշտպան այդ մանչին
Գերանդյավ կտրատել գեղանի զայդ մարմին՝
Զյուսափայլ վիզն առնուլ ոլորել ոսկորներ:
Զէ՞ր լավ ես երկաթյա ձեռնոցով կիր ավեր
Լուսատիպ երեսաց գերբ դիմակ գետեղել.
Քան հայլի ջինջ վտակ արտաքուստ ցուցանել՝
Արտասփյուռ գծաղկունս՝ սրբարշավ զաստեղունս,
Ի ծոցին ամբարյալ դրժոխաց ժան ըզքույնս:

Ալ. ՏԸ ՄՅՈՒՍԵ

Զավեն, երբ ելավ երկրորդ առավոտուն յուր աղքատիկ բնակարանեն և աչքը դարձուց պալատին, ուր էր յուր Արփենին, ապշեցավ մնաց. թեպետ առավոտ էր և շատ կանուխ՝ տեսավ փառավոր պատգարակներ, կառքեր ու ձիեր լցուցեր էին նավամատույցի հրապարակը մինչև այդ տան դռները, որոց երկու փեղկերը բաց էին։ Եթե առջի օրվան սպասավորաց խոսակցությունը չլիներ, ծեր զինվորը պիտի կարծեր այդ պալատը արքունիքն էր, բայց հայտնի էր իրեն, թե Կոստանդնի սիրուհին լինելով այդ կինը ամենքը՝ մեծ և պզտի կը դիմեին նորա պաշտպանությունն մուրալու։ Իսկ որ Զավենի շատ տհաճելի երևցավ, այն էր, որ զինվորաց խումբ մը պահպանություն կ'ըներ։

Բայց տխուր կամ ուրախ՝ պետք էր հասներ նպատակին, ուստի մտավ յուր բնակարանը, հագավ յուր մաքուր զգեստները և խառնվեցավ կառապանաց, ձիապանաց, պատգարակ կրողաց խումբին մեջ, մտիկ ընելու համար նոցա խոսակցությունը։ Նույն միջոցին ծեր զորավար մը բազմաթիվ սպասավորաց խումբով կը հասներ և կը մտներ ներս. երբ ձիասպասը ձին դուրս հանեց և լսեց, որ ծառայքը հայերեն կը խոսեին՝ կենդանություն առավ։ Չորս տարվան ժամանակի մեջ երբեմն հայոց հանդիպած էր, բայց շատ քիչ անգամ նոցա հայերեն խոսիլն լսած, ուստի գաղտնի զվարթությամբ ուշ կը դներ։ Սոքա սպասավորք էին Թեոդորոս Երիզացի հայ զորավարին, որ Հերակլի հավատարմարար ծառայեր էր և որ անդրանիկին՝ օրինավոր ժառանգի իրավունքը չէր փափագեր ոտնակոխ լինիլ։ Ուստի Մերակույտի ժողովքին մեջ ամեն ջանք ըրած էր զԿոստանդին աթոռ բարձրացնելու համար։ Եվ Փիլակրիոսի, որ մեծ հազարապետ անվանյալ էր արքունյաց և տերության առաջին պաշտոնյա, այցելություն կուտար։

Զավեն այն ատեն վիճակը հայտնի և պայծառ տեսավ. թշնամին, որ իր Արփենին գողցեր հափշտակեր էր, շատ զորավոր էր և նորա հետ պատերազմիլ յուր կարողությենեն վեր. բայց թողուլ երթալ, երբ աստված իրեն հաջողություն ցույց էր տվեր տեսնելու յուր սիրելի կորուստը, այս նաև անկարելի էր, ուրեմն կ'ըսեր. «Պետք է համբերել և սպասել. այսպիսի անզգամաց հաջողությունը անշուշտ երկար չի տևեր, և պետք է նաև աղջիկը տեսնել անգամ մը՝ հետը խոսիլ, գուցե հանկարծ չուզե երթալ, և ես այն ատեն ի՞նչ ընեմ։ Եթե այնպիսի պարագա մը հանդիպի, ակամա յուր կամաց պետք է այդ խեղճ աղջիկը այդ ապականության պալատեն ազատեմ. եթե մեր Տիկինը՝ նորա մայրը, ողջ լիներ և ինձ ըսեր. «Զավեն, գնա՛, զավակս գտի՛ր և ինձ բեր», ի՞նչ պիտի ընեի, տղու պես պիտի խորհրդածեի, ոչ, այլ եթե հարկ լիներ սուր ի ձեռին զինք պիտի կորզեի... Այդ սուրբ Տիկնոջ մահվան՝ իր այս զավկին ողջության աստված զիս վկա և գործիք ըրավ, որ յուր առաքինության ժառանգ և հաջորդ լինի Արփենին։ Եթե տեսա և հետը խոսեցա, և ուզեց ինձ հետ գալ սիրով, լա՛վ, ապա թե ոչ բռնությամբ նաև պետք է զինք հանեմ այդ խորխորատեն»։

Այս խորհրդածությամբք, սկսավ ամեն օր այն տեղվանքը շրջիլ. թեթև ծառայություններ ընել, Փիլակրիոսի սպասավորաց ձրի օգնել, այնպես որ ամիս մը չեղած՝ Զավեն անունը ծանոթ եղավ պալատի ծառայից, բեռ մը, ծանր բան մը վերցնելու օգնության եթե պետք լիներ, դուրսեն մեկը փնտրել, զԶավեն կ'ուզեին, և Զավեն կը կատարեր ուրախությամբ ամեն գործ, եթե բան մը չի տային, ձայն չէր հաներ, եթե քիչ տային, առանց վրան նայելու գրպանը կը դներ, ոչ գանգատ և ոչ դժգոհություն ամենևին չէր ցցներ։ Ուստի գոհ էին իրմե ամենքը, որոց առաջին շահ շարթումն էր։ Յուր այս անշահասիրությունը դիտելով՝ տնտեսը, որ իր պաշտոնին պարտավորությամբ պալատին առաջին գողը կրնար համարվիլ, հրավիրեց զԶավեն յուր բնակարանը թողուլ և ծովեզրին մոտ՝ պարտեզին ծայրը գիշերային պահպանության համար փոքրիկ խրճիթը բնակիլ։ Այս գերադույն առաջարկություն մ'էր կորովի ծերուն համար, որ շուտ մը յուր թեթև կարասիքը բերավ և այն խրճիթին մեջ զետեղեցավ։

Հիմա յուր Արփենին կրնար տեսնել և միջոց նաև ունենալ հետը խոսելու առանձին, եթե դիպվածը ներկայանար և որ չուշացավ։ Նոյեմբեր ամսու գեղեցիկ առավոտ մը կանուխ տեսավ, որ պարտեզի դուռը բացվեցավ, և Մամիկոնյան Օրիորդը ելավ դուրս և առանց պարտեզին ուշադրություն ընելու շտկվեցավ դեպի ծովեզրը։ Զավեն յուր փոքրիկ լուսամուտեն կը դիտեր ոչ միայն նորա կերպարանքը, այլ ամենափոքր

շաքժմունքը. աչքերն այդ արտաքո կարգի ամուլությանը և գեղեցկությունը պահած էին անփոփոխ, երկայն թաքթիկները այնպիսի բնական քողի նման ձգած էին այդ աչաց վրա, որ անպատմելի քաղցրություն էր կուտային յուր նայվածքին. արևը ակար ճառագայթներ կ'արձակեր երիտասարդուհու կողմեն եվրոպական ծովեզերքին վրա, ծովը հանդարտ լիճ մ'էր, և Արփենի նստած այդ գեղեցիկ տեսարանին կը նայեր. Զավենն տեսավ, որ աղջկան աչքերը լցվեցան և այդ առանձնության մեջ՝ իբրև մեծ մարդ խորհրդածելով արցունք կը թափեր. Այդ արցունքը ծերուն սիրտը ոչ տխրություն, այլ ուրախություն լցուց. ասաք եղավ սիրտը թեռնդ յուր բնակարանեն և սկսավ մոտենալ ծովեզերքին.

Արփենի աչքը սրբեց և դարձուց դեպի ծերը. իսկ տա ավելի մոտենալով, քաղցրությամբ և հայերեն՝

— Զիս կը ճանչե՞ս, Արփենի,— հարցուց.

Երկայն լռություն մը հաջորդեց այս հարցմունքին, աղջիկն անշարժ ծերուն երեսը կը նայեր. կարծես թե այդ պշումին մեջ հիշատակությունը կուգար ոչ միայն դիմացինին կերպարանաց, այլև լեզվին, որ չորս երկայն տարիներ ոչ խոսած էր, ոչ լսած. Եվ ահա տխուր ծերեսար մը եկավ այդ երեսին, և ծանր, հատիկ-հատիկ՝

— Զավեն հայրիկ, դո՞ւ ես,— ըսավ Արփենի քաղցրիկ ձայնը.

Այս չորս բառերուն մեջ՝ զրուցված եղանակին ու ձևին և այդ անշարժության մեջ այնպիսի անբացատրելի բան մը կար, որ ծերուն սիրտը տրորեց. և աչքերն արտասուքով լցվեցան. այդ բոլորը կը զրուցեին իրեն, որ այդ աղջիկը կ'իմանար, թե որքա՛ էր, թե պանդուխտ էր, թե թշնամյաց ձեռք գերի էր, թե անպաշտպան էր, փրկությանը հույս չուներ, և այս ամենքը դեռ տասնմեկերորդ տարիքին մեջ. Ուստի ձերը մոտեցավ.

— Սիրուն Արփենի, ինչպե՞ս մեծցեր ես, ինչպե՞ս գեղեցիկ ես.

Դարձյալ պատասխան չիկար. նույն նայվածքն էր. իբրև թե տրան բան մը կը փնտրեր, փնտրածը լեզուն էր. բառերը խառնակ կուգային իր հիշողության մեջ, և վերջապես դարձավ ըսավ. «Զավենն հայրիկ» և մնացածը հունարեն.

— Ինչչա՞փ ժամանակ է, որ ես այստեղ եմ, և դու ո՞ւր ես. ես մեկը չունիմ, առենքը հայր, մայր, եղբայր, քույր ունին, ես ոչ ոք, բայց կը հիշեմ՝ թե ունեի. մայրիկս միտքս է, յուր անկողնին քով կը պառկեի. նա գիս կը սիրեր, կը պաղներ, մենք պզտի ծով մը ունեինք. ես այս ամենքը կը հիշեմ, երբ առանձին եմ. Մենք բարբարոս ենք, պետք չէ այդ հիշատակությունները ընենք, այնպես կ'ըսեն ինձ ամենքը, բայց միշտ այդ բաներն իմ միտքս կուգան. և ես կը սիրեմ այն տղայությանս

ժամանակները, այն լեռները, այն ծաղիկները, հոն ոչ ոք ինձ չէր բարկանար, ամենքը քաղցր էին ինձ հետ, ամենքը զիս կը սիրեին.

— Քեզ հոս չե՞ն սիրեր, Արփենի.

— Չէ՛, ես հոս Արփենի էլ չեմ. Ջորի եմ. Մեկ նոր մարդ մը եկավ հիմա, մեր տիրուհվույն եղբայրն է. նա զիս կը սիրե. բայց ես այդ մարդեն կը վախեմ, կը քաշվիմ, նա զիս իր փոքրիկ բարբարոսը կ'անվանե, ձորը զիս գիրկը կ'առնու, կը համբուրե ինձ, սոսկում կուգա, կը փախչիմ. Իսկ ուրիշները զիս չեն սիրեր, այդ մարդն էլ չեմ ուզեր, որ սիրե.

— Բայց մենք քեզ կը սիրենք, Արփենի, չե՞ս ուզեր մեզի դառնալ, այն լեռները երթալ, այն ծաղիկները երթալ, որ դու ըսիր, թե կը սիրես.

— Փարեղի՞ է դառնալ՝ հոն երթալ. ամեն բան կործանած է հոն, ըսին, բարբարոսք ամեն բան ոչնչացուցեր են, այրեր են. մարդիկը բոլոր տարաներ են.

— Բարբարոսք ամեն բան կ'ուզեն ոչնչացնել, բայց մենք աստուծով կը շինենք, և բոլորովին չենք ոչնչանար, ինչպես զիս կը տեսնես, որ տասվան պահեր, որ զքեզ գամ ազատեմ և տանիմ նորեն քու մայրիկիդ տուներ. Զիս չե՞ս հիշեր, Արփենի.

— Ես զքեզ կը հիշեմ, որ զիս ձիուդ վրա կ'առնուիր, բայց ես հիմա էլ չեմ ուզեր ձիու վրա նստիլ, ետքը հիվանդ կը լինիմ.

— Ինչո՞ւ Արփենի, այդ անզգամը զքեզ վախցուցեր է. Հիմա ինձ այն զրուցդ չե՞ս ուզեր քու եղբորդ, ազգականներուդ, քու տունդ երթալ, որ զքեզ կը սիրեն, և հոն տիրուհի լինիր.

— Ինչպե՞ս չեմ ուզեր,— ըսավ աղջիկը աչքերը գանազով,— բայց փարեղի՞ է երթալ, ինձ այն զրուցե.

— Ես արիտի երթամ, կուգա՞ս հետս.

— Կուգամ, բայց կը թողո՞ւն.

— Մենք ծածուկ կը փախչինք կ'երթանք.

— Քեզի հետ ամեն տեղ կ'երթամ, Զավենն հայրիկ, բայց դու այդքան տասն ինչո՞ւ զիս մոռցար.

— Ինչ՞ աղջիկ, քանի տարի է, որ զքեզ կը փնտրեմ և դու նոր գուս.

— Երթանք տղերքն,— ըսավ տղան և ատք երավ.

— Հիմա զքեզ պատրաստ չենք, դու մեր այս խոսքերը պետք չէ, որ մարդու հայտնես. դու զիս ճանչերդ, իմ տեսնես մարդու պետք չէ իմացնես, ես գաղտուկ ամեն բան կը պատրաստեմ, կարգի կը դնեմ, և օր մը հանկարծ կ'երթանք քեզ հետ մայրիկիդ.

— Մայրիկն ուրեմն ո՞ղջ է,— ըսավ Արփենի և աչքերուն արտաքին կարգի կենդանություն մը եկավ։

— Սուրբերը ողջ են միշտ, իմ սիրուն Արփենի։

Արփենի այս խոսքին զորությունը չիմացավ, և ծերուն ձեռքը բռնելով.

— Շուտ տես պատրաստություններդ, Զավեն հայրիկ,— ըսավ։

— Դու համբերե. երբեմն եկ հոս այսպիսի ժամանակ, երբ ամենքը քնած են. կը տեսնվինք և կը խոսինք։ Միայն մի՛ մոռնար, որ մարդ պետք չէ իմանա։

— Դու երեխա՞ ես։

— Լա՛վ,— ըսավ ծերը ծիծաղելով այս հարցմունքին,— գնա՛, որդյակ, ոչ ոք կասկած չառնու։

Եվ աղջիկը «մնաս բարով» զրուցեց ու մտավ տուն։ Իսկ Զավեն կը նայեր ետևեն և կը մտածեր ու կըսեր ինքնիրեն. «Ի՞նչ վիճակ է այս աղջկան վիճակը, ինչո՞ւ այդ փոփոխությունը յուր վրա, ես կարծեի, թե զիս տեսնելուն ու ճանչելուն ինձ պիտի դիմե՝ գիրկս պիտի ընկնի... «Զավեն հայրիկ» ըսավ. բայց այն հին ոգին, հին եռանդը թվի թե կասկածը, գերությունը, բռնությունը սպաններ են։ Այնպես թվի, որ եթե ազատության հասնելու փափագը չէ մեռած, հույս և հավատք գրեթե մեռեր են յուր փոքրիկ սրտին մեջ... Այո՛, այդ ճիվաղները փրկության հույսը սպաններ են սրտին մեջ։ Հայաստան քանդեր խլեր են իր սրտեն։ Տեր աստված, ի՞նչ խոսք էր այդ՝ «Մենք բարբարոս ենք», և ի՛նչ տխուր և հուսահատ եղանակ այդ խոսքը զրուցելուն, և այդ Մամիկոնյանի մը՝ Վարդաններու և Վահաններու թոռներուն բերանը... Ո՜հ, եթե Կամսարական Սուրեն իշխանը հոս լիներ, տեսներ յուր աշխույժ քեռորդվույն այս ջլատ ձևը և տխուր բարբառը... Բայց ի՜նչ խառնուրդ տղայության և արբունության յուր կերպին և խոսից մեջ... Եվ այս ամենքը հետևանք չորս դառն ստրկության տարիներու...

«Օրինակ մը ահա իմ սիրտս կը հուզե, իսկ անո՜նք, որ հազարներով գնացին այդ Արաբաց երկիրը, ուր ոչ խաչ կա, ոչ Ավետարան և ոչ Քրիստոս։ Եթե Գրիգոր կենդանի է, նա էլ այս գերության վիճակեն անցած կը լինի, ինչէ՞ր քաշած է այդ արաբաց ձեռք... Բայց նա անշուշտ ազատություն գտած է հիմա. հորեղբայրքն անշուշտ փրկանքը տված են... եթե մեռած լիներ, դիակը ես կը գտնեի, անտարակույս գերի գնացել է, նույնպես Կամսարականը. և այդ վանահայրը, որ այնպես լուրջ մարդ էր, ինձ խոստացավ Մամիկոնեից ամենուն իմացնելու, որ մարդ ղրկեն Արաբաց երկիրը... Աստված, որ Արփենին պիտի ազատե՝ Գրիգոր էլ կազատե. հիմա ես երթամ պատրաստություն տեսնեմ զնա փախցնելու։ Մանչ տղու մը զգեստներ, նավ մը մեզ Տրապզոն կը հանե կամ Ճորոխի ափանց մոտ տեղ մը, էլ Հայաստան ոտք դրած կը համարիմ։ Ելլենք անգամ մը և ժամ առաջ այս անիծյալ քաղքեն... ո՜հ անզգամ Թումա, fու փոfրիկ բարբարոսդ, Մամիկոնյանց և Կամսարականաց սերո՜ւնդը... և այդ մարդիկն են, որ աշխարհք կը կառավարեն. անմեղությունը՝ դեռաբույս գեղեցկությունը իրենց գարշելի կրից խաղալիք ընել կը փափագին... բայց դու, աստված իմ, չես ներեր այս պղծությանց։ դու ինձ հայտնեցիր Արփենին, դու զնա պիտի փրկես»։

Բայց թողունք Զավեն երթալ ի գործ դնել յուր խորհուրդը, մտնենք վայրկյան մը Արփենիի հետ պալատին ներքին կյանքը տեսնելու։

Թողունք նաև հայ աղջիկը, որ երթա յուր սենյակը, ուր տարեկից աղջիկներ ամենքը դեռ քնած տեսնելով սիրտը կը հանգստանա՝ ապահով լինելով, թե ոչ ոք չէ իմացեր յուր տեսությունը հայ գիշերապահին հետ։

Երթանք վայրկյան մը այդ Անկելինա տիկնոջ սենյակը, ուր փափուկ գորգեր, ոսկեզարդ մահճակալներ, փետրալից անկողինք և բաստեռունք, զանազան ձևերով աթոռներ, ծիրանի վարագույրներ, արծաթի հայելիք, մետաքսյա և բեհեզյա հանդերձանք միայն կերևեին։ Ի՛նչ որ բյուզանդական հեշտությունը հնարած էր պերճանք և զեխություն և անառակություն, ամենքը հոն կարելի էր տեսնել. մինչև պատերը այնպիսի նկարներով էին զարդարյալ, որ կրնային սուրբ ճգնավորները անգամ գայթակղեցնել և սատանային աշակերտ ընել։ Անկելինա նոր ելած անկողնեն բեհեզներու և ազնիվ մուշտակներու ծածկված փափուկ բազմոցի մը վրա ընկողմանյալ էր, երբ եղբայրը՝ Թումա ներս մտավ։

— Ես կուզեի քեզ տեսնել, եղբայր,— ըսավ Տիկինը,— շատ հարկավոր խոսք ունեի քեզ ըսելու։

— Ի՞նչ է արդյոք այդ հարկավորը՝ շատ հետաքրքիր եմ իմանալու։

— Հարկավորն այն է, որ դու այդ հայ աղջիկը բոլորովին ինձ պիտի թողուս։

— Մի՛թե քեզ թողած չեմ, դու իր տիրուհին չե՞ս։

— Ոչ, իմ խոսքս չես ուզեր իմանալ. այդ աղջիկը գիտեմ ի՛նչ նպատակով հափշտակեր ես, բայց այդ նպատակդ պետք է մոռնաս։

— Հիմա որ աղջիկը հասավ, դու էլ ինձմե՞ կ'ուզես հափշտակել,— ըսավ ծիծաղելով Թումա,— այդ անկարելի բան է, այդ պզտի բարբարոսը այնպիսի աչքեր ունի, որոց նմանը բոլոր Կոստանդնուպոլիս կարելի չէ գտնել։

— Ահա այս բանին համար, որ այնպիսի աչքեր ունի, դու պետք է իրմե հրաժարիս բոլորովին։

— Այս ի՞նչ կը նշանակէ, այս ի՞նչ բռնութիւն է, Անկելինա. դու իմ պզտիկ քույրս, որ այնչափ խնամքով, այնչափ հոգերով, այնչափ զոհողութիւնամբ այս վիճակը հասուցի, այս հրամայական ձևերը ինձի՞ հետ նաև կը գործածես. էրկանդ հետ մինչև հիմա վարվեցար ինչպես ուզեցիր, խեղճ մարդը բավական չէ, որ գերի ես ըրեր, հիմա զիս էլ կ'ուզես հար և նման գերի ընել և ոտքերուդ առակ ճզմել։ Բայց մտածե, լավ մը չափե, որ իմ անունս Փիլակրիոս չէ...

— Գիտեմ, թե քու անունդ Թումա է, գիտեմ նաև, թե ո՛ւր կհասնի քու սրտիդ ազնվությունը, բայց իմ անունս էլ Անկելինա է,— ըսավ Տիկինը հեգնության ծիծաղով։ Եվ հանկարծ կերպարանքը փոխելով՝ շտկվելով և սրաքի պես աչքերը փայլեցնելով,— ի՞նչ և ո՞ւմ կը պարծիս, թե խնամք, հոգ և զոհողություն ունեցեր ես իմ վրաս, և այս վիճակի ես հասուցիր. քու շահուդ համար՝ քեզի պատվական շինելու համար իմ գեղեցկությունս, իմ մարմինս, զիս՝ որը քույր մը՝ առիր սնուցիր, ինչպես այդ որբ թշվառ աղջիկը քու ապագա անարգ պագշոտությանդդ հարմար պատրաստեցիր։ Երանի թե քեզ նման եղբայր չունենայի, և գեղացի աղջիկ մը պարզ ու համեստ մնայի։

— Ո՞վ կ'արգիլե քեզ դարձյալ պարկեշտ ու համեստ լինիլ, քաշվիլ գյուղի մը մեջ, սոխ-սխտորով ապրիլ, անառակ պերճությունդ ուրանալ, հաստ կապերտի մը վրա ընկողմանիլ, փոխանակ արքայական գգվանաց՝ կոպիտ էրկան մը բռնցի հարվածներուն տանիլ, փոխանակ բրնավոր տիրուհի լինելու՝ խոնարհ աղախին...

— Դե՛, դե, երկայն ճառերու պետք չի կա։ Որովհետև ուզեցիր և ջանացիր զիս բռնավոր տիրուհի մը ընել՝ դու պետք է հնազանդիս իմ կամացս և իմ հաճույիցս։

— Ա՞յս աստիճանի կ'իջեցնես զիս, Անկելինա։

— Այո, այս աստիճանի։

— Բայց վերջը կը զղջաս։

— Հիմա՞ր, անմիտ մարդ։ Ջե՞ս իմանար, չե՞ս տեսներ, որ ես քեզմե զորավոր եմ. մոռցա՞ր, թե ինչ որ ես և եղեր ես իմ շնորհիվքս է, և ինձի՞ կսպառնաս։ Դո՛ւ վատ և անպիտան՝ զորավար լինելու մա՞րդ էիր առանց իմ կամացս. դուն պատճառ Հայաստանի բանակին պարտության և առաջին փախստական, ինչպե՞ս պիտի արդարանայիր Պրոկոտիոսի ամբաստանությենեն, և զինվորական դատաստանեն, եթե իմ ազդեցությունս չի հասներ. դու գող ավազակ, որ բանակներ անոթի, անզեն թողեր էիր, և իմ շնորհիվ քեզմե հաշիվ պահանջողներուն բերանը կարկեցավ։ Եվ հիմա ելեր ի՞նձ կ'սպառնաս։

— Բայց դու կը մոռնա՞ս, Անկելինա, որ մենք միմյանք ենք այս սենյակս մեջ, և ես սուր մը ունիմ...

— Սո՛ւր ունիս դու և ի՞նձ կը պարծենաս. հիմար, բյուր անգա՜մ հիմար։ Այդ սուրովդ գնա ուրիշներուն պարծի՛ր։ Նայե՛, դու աս գավաթին եթե ձեռք դպցնես, քովեն անցնիս՝ ես հեռվեն կ'անցնիմ. դու կըրնաս թունավորիլ՝ քու այդ քաջությունդ գիտեմ և փորձը տեսեր եմ. բայց սո՛ւր քաշել, քա՜վ լիցի, քեզի պես քաջ զորավարի գործ չէ։

— Բայց շա՜տ եղավ, Անկելինա։

— Մանավանդ թե շատ քիչ եղավ. և եթե ուզես, գետ շատ բան կընամ գտնել խոսելու։

— Բայց դու, սիրական քուրիկս, զրուցեն անգամ մը, թե ի՞նչ կըրնաս ընել ինձ, որ կը պարծիս, թե զորավոր ես։

— Հա՛, այդպես անուշ խոսե, թատերական ձևերդ մոռցի՛ր, երբ ինձ հետ ես։ Աղվես, ապուծ մի՛ ձևանար, կատու, օձու պես մի՛ մոքնչեր. քու հին արհեստդ ձեռք ա՛ռ, սողուն, գետինը գալարիր, որպեսզի թունավորես։

— Ես չեմ ուրանար, թե անզգամ մ'եմ, բայց դուն էլ, Անկելինա, ինձ արժանի քույր ես։

— Այո, այս նաև ճշմարիտ է, միայն հոն է մեր երկուսին տարբերությունը, որ դու ի բնե անպիտան ու վատ ծներ ես, իսկ ես ինչ որ անզգամություն ունիմ, քու շարությանդ հետևանքն է, և վտանգի առջև գոնե անխռով քաջություն ունիմ։

— Ո՜վ իմ սիրելի քույրս, ինչչափ ազնիվ հատկություն ունիս, ինչչա՜փ առաքինության և մոլության խառնուրդ ես...

— Լռե՛, թո՛ղ ձեռքս, մի՛ դպիր ինձի, հեռո՛ւ։

— Կը վախես ինձմե՞ քու մեկ հատիկ եղբորմեդ։

— Թումա, լավ համոզվե, որ քեզմե չեմ վախեր, և ինչո՞ւ, գիտե՞ս։

— Ինչո՞ւ։

— Սառության, խարեության սատանա, չգիտե՞ս. ես քու մտքիդ մեջինը գիտեմ, և դու չգիտե՞ս։ Լավ, զրուցեմ, որ գոհ լինիս։ Ես քեզ պետք եմ, առանց ինձ դու ոչինչ ես, այդ բանին համար սեպենք, թե վաղը դու հաջողիս զիս թունավորել, և ես մեռնիմ, ո՞վ քեզ պիտի պաշտպանե. ահա միմիայն պատճառը, որ ես իրավունք ունիմ քեզմե չի վախենալու։ Դեռ երեկ կայսրը կ'ըսեր ծիծաղելով. «Ողբերդ պես վատթար զինվոր և անամոթ գող հատ մ'էլ չի կա բոլոր կայսրության մեջ։ Քու սիրույդ համար միայն կարելի է համբերել, եթե ոչ տասն անգամ կախաղանի դատապարտված էր մինչ հիմա»։

— Իրավ, այդպե՞ս ըսավ կայսրը։

— Անամո՜թ, դու կը ծիծաղիս այս լսելով, և ես ամաչեցի։ Տե՛ղ, Էլուխս ցավ մտավ, շատ խոսեցա հետդ և կիրք էլ ելա, որ չէր արժեր։ Ահա քեզի կը պատվիրեմ կրկին և կրկին. ոչ մարդու առջև, ոչ առանձին այդ հայ աղջկան մազին, զգեստին պիտի չի հպիս. վա՛յ քեզ, եթե լսեմ և իմանամ։ Աղջկանը կ'իմացնեմ, որ մինչև քու նայվածքդ ինձ իմացնե, զիս մի՛ պարտավորեր խստության։ Իմացա՞ր, կրնաս երթալ։

— Լա՛վ, ես հանձն կառնում այդ զոհողությունն ընել և այդ գոռոզ հրամանացդ զիջանիլ, բայց գոնե զրուցե՛ ինձ, ի՞նչ է միտքդ։

— Է՜հ, շատ երկայն եղավ այս խոսակցությունը, և դու գիտես թե քանի մը տարիներ կան ոչ Փիլակրիոսի, ոչ քեզի խորհուրդ հարցնելու պետք չեմ զգացեր, և ոչ իմ մտածությունքս հայտնելու։

— Հանցանքն իմս էր, որ քեզի պես գազանի մը հանձնեցի աղջիկը, իբրև թե մարդ կը պակսեր,— ըսավ Թումա՝ ելավ և սկսավ երթալ։

— Զրուցե՝ ինչ որ կ'ուզես, բայց մի՛ մոռնար իմ պատվերս, զի վերջը կը զղջաս...

Իսկ երբ եղբայրն անհետ եղավ, իր գոռոզ գլուխը շարժելով՝ կ'ըսեր ինքնիրեն. «Հիմարնե՜ր, չեն իմանար, թե երբ իմ ապագան կ'ապահովեմ, իրենցն ապահոված կը լինիմ»։

ԶԼՈՒԽ ԾԳ

Դու, որդյակ իմ Հերմես, դու իմ նույս գեղանի,
Դու պտուղ իմ երկանց՝ ճարատև վաստակաց,
Նպատակ սիրելի տասնամյա իմ ճրսկմանց,
Որ այնչափ ծանր՝ անուշ խրնամք ինձ արժեցիր,
Մրտերիմ բերկրանաց և դարման իմ վրշտաց,
Հեռավոր ծովերու՝ ճեռավոր ճողերու,
Անուշիկ իմ ընկեր անստույգ քայլերու,
Ո՜վ որդյակ իմ, այսօր ի՜նչ է քո ճակտի գիր։

ԱՆՏՐԵ ՇԵՆԻԵ

Թումա յուր քրոջ այս բռնության կամա-ակամա հնազանդիլ պարտավորյալ էր, ինչչափ որ հոգին ապստամբեր։ Այն խոսքը՝ «Ես քեզմե զորավոր եմ», լավ կը հասկնար, վասնզի գիտեր, թե իր ազնիվ քրոջ մեկ խոսքը բավական էր զինք պաշտոնով կամ անպաշտոն Ափրիկեի կամ Սիկիլիո մեկ կողմը աքսորել տալու, ինչպես քանի մը անգամ սպառնացեր էր. ուստի լռեց և համբերեց և հետաքրքիր՝ կ'սպասեր իմանալ նպատակը։

Անկելինա մեկ գիշեր փոքրիկ երեկույթ մը տվավ յուր պարտեզը։ Կայսրորդին Կոստանդ միայն հրավիրված էր այս ընտանեկան հանդիսին. Արփենի յուր տարեկից և ընկերակից աղջիկներով, նուրբ բեհեզներ հագած զանազան և նորահնար կաքավներ կը պարեին, որոնց համար մասնավոր վարպետով վարժված էին առաջուց։ Պագշոտ և զերծ կաքավին՝ մեղկ և լկտի երաժշտություն մը կառաջնորդեր։ Թագաժառանգ իշխանը, դեռահաս պատանի, տանտիկնոջ քով նստած հազիվ թե նորա փաղաքուշ խոսքերուն կը լսեր, յուր բոլոր ուշադրությունը, պարը, երաժշտությունը և սիրո լպիրշ երգերը գրաված էին, և յուր երեսին գույնը վայրկենե վայրկյան կը փոխեին։ Աչաց ակնարկն այդ մանր և թեթև կայթող ոտից հետ հիռ կուգար, այդ փափուկ մարմնոց ամեն բեկբեկ տատանմունքը յուր գլխուն համակիր շարժմունքներ կը պատճառեին, որ Անկելինայի դիվական աչքերուն գոհության ժպիտ կը բերեին։ Ինք ուրախությամբ կը դիտեր, թե արքայազն պատանին արդեն սրարբյալ՝ հիմարյալ իր պագշոտությամբ և փոքրիկ հառաչանքներ կը խեղդեր. ուզելով զինք համարձակեցնել, ակնարկեց և անուշ ըմպելիք ու քաղցրահամ մրգերու սեղան մը բերվեցավ։ Յուր դյութիչ ձեռք Տիկինն ինքը արքայազնին կը մատուցաներ, որ վերջապես չի կրնալով համբերել, և գինվով զոբացյալ՝

— Տիկին, ձեր հյուրընկալությունն անգին է, ես այսպիսի զվարճության դեռ չէի հանդիպած, բայց ո՞վ է այդ նորահրաշ աչքերով աղջիկը, որուն նմանը չեմ տեսեր, և որ այնչափ լավ կը պարե։

— Դա որբ, անտերունչ օտար աղջիկ մ'է, արքայորդի։

— Բայց ուստի՞ ձեր ձեռքն է ընկեր այդ հրաշալի ծաղիկը։

— Քանի մը տարի առաջ ինձ ընծա ըրին, երբ փոքր էր։ Կը ջանամ դաստիարակել, բայց չեք կրնար երևակայել, թե ի՜նչ դժվարություն կը քաշեմ այդ բնությունը ճնշելու։ Կ'երևա, թե իր լեռներուն ազատության վարժած և վայրենի ազնվականաց սերունդ, ամեն բանի արհամարհոտ և անտարբեր կ'ակնարկե։

— Եթե դուք նաև չի կարենաք, ո՞վ կրնա զինք ընտելացնել,— ըսավ պատանին, տիկնոջ ձեռքը շողոքորթությամբ բռնելով։

Իսկ Տիկինը յուր լուրջ հրամայական կերպն առնելով՝ երբ կաքավը վայրկյան մը դադրեցավ՝

— Զոյի՜,— ձայնեց. և երբ Արփենի մոտեցավ յուր սև և գանգուր մազերն ուսն ի վայր ընկած, ճերմակ թուշերուն վրա փափուկ կարմրություն մը եկած, և աննման աչքերը Տիկնոջ ու պատանվույն հառեց, ուր հայտնի կերևեր, թե երկյուղը միայն զբարկությունը կը սանձեր, Անկելինա հրամայեց զինի մատուցանել արքայորդվույն, Արփենի տվավ

գինին և քաշվեցավ, բայց այնպիսի կարմրություն մը ավելցավ յուր երեսներուն վրա, և այնպիսի՛ կրակ մը փայլեցավ աչքերուն մեջ, որ կինը ինք նաև զարմացավ, և պատանին էլ զգալով գարձավ՝

— Հիքսավի, Տիկին, անընկճելի բնություն և սքանչելի գեղեցկություն կ'երևա, թե միացեր են այդ ձեր փոքրիկ լեռնցիին մեջ։

— Մեկ-երկու տարիե ես խոսք կուտամ, որ այդ վայրենի էակը գառան պես ընտելացյալ ձեզ կ'ընծայեմ։

— Մի՞թե այդչափ երկայն ժամանակի կարոտ եք դուք, Տիկին,— ըսավ երիտասարդը լեզուն քիչ-քիչ ծանրանալով և մարմրած աչքերը գոցելով... Երաժշտությանը քաղցր օրորի հնչյուններ կ'արձակեր, երբ պատանին փետրալից բարձերուն մեջ խոր քունի ընկղմեցավ տակավ առ տակավ։

Ան ատեն եղաժիշտք և կաքավ դաղրեցան, լույսերն սկսան խավարիլ և չորս մաքուր սպասավորք ամենայն զգուշությամբ յուր բազմոցով իրեն համար պատրաստված անկողինը տարին զարքայորդին։

Երբ Թումա, Փիլակրիոս և Վաղենտիոս, որ սորա զինակիցն էր, գեղեցիկ երիտասարդ մը՝ մինակ մնացին, Անկելինա ոտք ելավ և գոհ ու գառոզ ակնարկ մը ձգելով ըսավ Թումայի.

— Հիմա՞ր, կիմանա՞ս հիմա, թե ինչչա՞փ սրամիտ և հեռատես եմ։ Եվ երեքին հավասարապես՝

— Դուք միայն ոսկի դիզել և ձեր անարգ կիրքերը հագեցնել գիտեք, իսկ ես վաղն էլ կը մտածեմ և կը հոգամ։

Փիլակրիոս ամենևին ձայն չի հանեց, իսկ Թումա իր քուրքն մեկդի առնելով և իր սովորական ծիծաղով հծծելով, ըսավ.

— Մի՞թե կայսրը մահվան դատապարտված է, որ Թագաժառանգը այսչափ նախահոգությամբ կը մեծարես։

— Ո՞վ է անմահ, հիմա՞ր։

— Մեր անարգ կիրքերը, որ կամբաստանես, իրավունք ունիս, իսկ Վաղենտիոսի համար քու զգացածդ ի՞նչ աստիճանի ազնիվ է, իմ առաքինի և սիրուն քուրիկս...

Հարցուց Թումա ծիծաղելով, բայց շուտ մը ետ քաշվեցավ, վասնզի նկատեց, որ յուր առաքինի քուրիկը իրեն լավ ապտակ մը կը պատրաստեր։

Այդ փառասեր և իշխանության փափագող կինը, որ Հուստինիանոսի Թեոդորա կայսրուհին միայն կը հիշեր և նորա վիճակը կ'երևակայեր ու այդ ապագան պատրաստելու համար կ'աշխատեր, տեսնենք, թե ինչչափ հաջողեցավ...

Պարահանդեսին վրա մեկ-երկու շաբաթ անցավ, Ջավենն ամեն օր

ի՞երթար հարմար նավ մը նայելու, և առավոտները կ'սպասեր իր Արփենին տեսնել։ Ուրախությամբ կը նկատեր աղջկան վրա զգալի փոփոխություն մը, երրորդ և չորրորդ տեսության յուր հայերենը բոլորովին գտած էր և իր վրա վստահությունը բոլորովին դարձած։ Սիրտը նաև հանդարտ էր, այն կողմանե, որ Արփենի իրեն իմացուցեր էր, թե ինչպես Տիկինը իրեն հրամայած էր, որ իր եղբորը գգվանքեն հեռու կենա և մերժե։

Նավը պատրաստ էր և միայն հարավային քամիի մը կսպասեր Ջավենն, որ կ'ուշանար։ Ուստի առավոտ մը, երբ ս. Սոփիայի հրապարակի կողմը գնացեր էր պտույտ մ'ընելու, տեսավ, որ ժողովրդյան մեջ հուզմունք կար, և խումբ-խումբ բաժանված ամբոխը, կը խոսեին գրգռված. տեսավ Անկելինա տիկնոջ սպասավորին հետ վիճող դրացի մարդը նրստարանի մը վրա ելած կը ճառեր, բորբոքած, սկսավ ուշադրությամբ մտիկ ընել։

«Այո՛, կ'ըսեր, արքայական գահույից վրա դուք կարծեք թե Կոստանդին անունով կայսր մը ունիք, ոչ, շատ կը սխալիք, կին մ'է, որ կը կառավարե և ամեն կամքը կատարել կուտա։ Այդ կնոջ գրգռութենեն է, որ որդին՝ հորը Հերակլեսի գերեզմանը բանալ տալու հանդգնեցավ ականակուռ պսակը հորը գլխեն հափշտակելու համար։ Այդ կնոջ անհագ գրգռությամբ է նաև, որ Մարտինե կայսրուհվույն և նորա որդվույն՝ օրինավոր ժառանգին համար պատրիարքին պահեստի հանձնված դրամը պահանջվեցավ, և արքունի գանձը գրավվեցավ։ Դեռ ձմեռվան սկիզբն ենք, թանկությունը կը տիրե, այս ձմեռ սովե պիտի ջարդվինք, եթե այդ կնոջ թագավորությունը տևե...»։

— Ո՞վ է այդ կինը, անո՛ւնը, անունը զրուցե մեզի,— կ'աղաղակեին հազար ձայն միաբերան։

— Փիլակրիոսի կինն է, Անկելինան, որ էրկանը և եղբոր Թումայի հետ բաժներ են թագավորությունը, ցորենի շտեմարանները գրավեր և արգիլեր են, որ պաշար չի մտնե քաղաք. երևակայեցեք, ժողովո՛ւրդք, եթե այս վիճակը տևե, աղքատն ի՞նչ կը դառնա...

Ջավենն այս խոսքերուն համբերությամբ ուշադրություն ըրավ, և, տեսնելով շուրջ ժողովրդյան գրգռությունը և մռնչյունը... ճղքեց ամբոխը և վազելով ծովեզր իջավ, նավակ մը վարձեց, մտավ մեջ և Փիլակրիոսի պալատը գնաց՝ նավակին սպասել տալով։ Ապահովություն և հանդարտություն կը տիրեին ներսը, մտավ գավիթը, եկավ ցամաքային դուռը, տեսավ պահապան զինվորները զինաթափ և անհոգ նստած կամ իրենց գործերով զբաղած, վասնզի տանուտերք դեռ պառկած կամ նոր ելած էին. մեծավ ուշադրությամբ ականջ կը դներ և փողոցի երկայնքին

կը նայեր դարվեր. ամպի պես մթություն մը տեսավ գագաթը, որ կ'իջներ, կը մոտեր. առանց դռնապանին բան ըսելու մտավ ներս հանդարտությամբ, ելավ սանդուխներեն վեր, տնտեսին սենյակը ուղղվեցավ. նեղ սրահ մը կար, ուստի փողոցը կ'երևույր. հոն, պատուհաններուն առջև կեցած, նայեցավ, որ ամպը մարդկային ամբոխ դարձեր էր և կը հառաջանար։ Սպասեց, մինչև որ աղաղակները բարձրացան և լսելի եղան, այն ատեն մտավ տնտեսին քով միամիտ ձև մը առնելով՝ «Դուրսը փողոցը կարծես խառնակություն մը կա»,— ըսավ, իսկ նա՝ «Պահապան զինվորները մի՞թե վարը չեն»,— հարցուց անհոգ կերպով։ Ձայներն ավելի բարձրացան, պալատին դռները շառաչմամբ փակվեցան, և դրսեն սպառնալիքներ սկսան լսվիլ։ Տան բոլոր բնակիչքը մեծ և փոքր սենյակներեն դուրս թափեցան, Տիկինը կիսամերկ, մազերը ձգած՝ տեղեկություն կը հարցներ. իշխանը և Թումա «ի՞նչ է, ի՞նչ եղանք» կ'ըսեին։ Իսկ վարեն պահապանք դռները կ'ամրացնեին, ծառաները շփոթած չէին գիտեր, թե ի՞նչ ընեն, աղախինք լալով «Տեր ողորմյա» կ'ըսեին, տնտեսը Ջավենի հետ կը խոսեր՝ շուտ մը արկղը բանալով յուր գրպանները լցուց ղռամով և Ջավենի նաև երկու քսակ «առ դու էլ ասոնք» ըսելով ձեռքը խթեց։ Իսկ սա իբրև թե այս բանիս համար կեցեր էր, հանդարտությամբ ծոցը դնելով քսակները՝ դուրս ելավ այդ շփոթյալ անձանց մեջեն և հանկարծ տեսավ Արփենին, որ ապշեր, մնացեր էր. «Քայլե, աղջիկս, եկ իմ ետևես պարտեզ»,— ըսավ և սկսավ սանդուխներեն իջնել արտորնոք։ Արփենի նույնպես վազելով հասավ իրեն, ան ատեն մտուց իր հյուղիկը, տվավ նորա համար պատրաստված մանչու զգեստները, փակեղն անցուց գլուխը մազերը մեջն ամփոփելով, և իջան նավակը, որ իրենց կ'սպասեր։ Ասիական քաղաքը տանիլ հրամայեց Ջավենն նավավարին, և նավն ուղղվեցավ դեպի պալատը, վասնզի հոսանքը կընար զիրենք դուրս նետել. ուստի դողալով Արփենիին համար, որ հանկարծ չի ճանաչվի, յուր մեծ վերարկուն քաշեց լավ մը յուր գլուխը և տղան էլ ծածկեց կիսով, և ժամ էր, վասնզի ահա իրենց ետևեն երկու մեծ-մեծ նավեր կուգային, որոց առաջինը յոթը ջուխտ կը թիավարեր և երկրորդը հինգ ջուխտ։ Առաջինին մեջ Փիլակրիոս, Տիկինը և Թումա նստած էին, իսկ երկրորդին մեջ աղախնայք խառնիխուռն իրարու վրա լցված։ Այս նավերը նետի պես կ'երթային, մանավանդ առաջինը, և երկյուղը զիրենք այնպես շվարեր էր, որ Ջավենի աղքատիկ նավին նայելու անգամ ժամանակ չունեին։

Ծովը հանդարտ էր, երկինքը մառախլապատ, ուստի նավավարը թողուց եվրոպական ափունքը. ձկնորսի նավերը միայն կ'երևեին ծովուն

վրա և Խրիսուպոլսո իջնող նավեր. ուստի Արփենին գլուխը Ջավենի վերարկուեն դուրս հանեց.

— Ջավեն հայրիկ,— ըսավ կամաց ձայնով,— ազատեցանք։

— Փառք աստուծո, որդյակ,— պատասխանեց ծերը, և կը հիշեր այն օրն, որ չորս տարի առաջ դարձյալ այս աղջիկն առած կուրծքին վրա՝ լողալով փոքրիկ լճակե ազատեր էր։ Եվ երկրորդ անգամն էր, որ աստված այս հրեշտակին ազատությունը իրեն կը շնորհեր։

— Հիմա զիս կը փնտրե՞ն,— հարցուց աղջիկը։

— Դեռ քեզ փնտրելու ժամանակ չունին, որդյակ։

Եվ իրոք այնպես էր, վասնզի այդ կատաղի ամբոխը, որ դռները սկսեր էր կոտրտել և ներս խուժել, հազիվ թե ժամանակ թողեր էր այդ պալատին տյարց ծովին կողմեն փախչելու։ Եվ զԱնկելինա, զՓիլակրիոս և զԹումա չի գտնելով՝ յուր կատաղությունը թափեր էր ամեն բանի վրա, որ առջևը կը տեսներ։ Այդ բոլոր բյուզանդական պերճանքը՝ հարստությունը, կարասիքը խորտակեցան, ավար, կողոպուտ եղան խաժամուժին, և թե որ զորականաց խումբք չի հասնեին, տունը հիմն ի վեր կը տապալեր։

Իսկ Ջավեն Խրիսուպոլիս երբ ելավ, սկսավ մտածել, թե ի՞նչ պետք էր յուր սիրուն տղեկին. ուստի առանց աչքեն բաժնելու գնաց փոքրիկ անկողին մը և ուրիշ ինչ որ պետք էր առավ և այդպես գնաց մտավ նավը, որ Սև ծովու ափունքը քերելով պիտի երթար մինչև Տրապզոն։ Ժամանակը ձմեռ էր. իր անձին համար չէր մտածեր զինվորը, բայց աչքը կը դարձներ շարունակ այդ սիրելի աղջկան՝ որուն համար տունը, տեղը, յուր զավկները ամեն բան թողեր թափառական ու պանդուխտ պտըտեր էր այնչափ ժամանակ, և հիմա գտնելով և այնպիսի հզոր ձեռքե հափշտակելովն ինքզինք լիովին վարձատրյալ կը համարեր. միայն այն կը խնդրեր աստուծմե, որ ինչպես դյուրացուց իրեն այն օրը, դյուրացնե և խեղճ որբին համար այդ ճանապարհորդությունն ի հայրենիս։

Յուր աղոթքն աստված ընդունեց. Պոնտոսի ծովը իր սև կերպարանքը չի ցցուց սիրուն աղջկան. ձմեռվան հունվար ամիսը աշնան ցուրտ օրերուն պես անցան և Ճորոխի եզերքն ի վեր ճանապարհորդելով հասավ Տայոց գավառը, և հոն առաջին անգամ հայտնեց Արփենիի սեռը Բագրատունյաց Տիկնոջ, և զգեստները փոխելով և խումբ թիկնապահաց հետն առնելով՝ այնպես Մամիկոնյանց Օրիորդը տարավ Շիրակ Կամսարականաց դղյակը Երազգավորս, յուր մորեղբոր Սուրենի եղբոր՝ Ներսեհ իշխանին հանձնեց։

Հայաստանի վիճակին վրա դեռ չի խոսած՝ նույն միջոցին Կոստանդնուպոլիս ինչ վիճակ որ ունեցավ, այն պատմենք համառոտիվ։

Կոստանդին հազիվ թե հոքն աթոռը բարձրացյալ՝ յուր ազգությունն ոգին հայտնի ըրավ, ինչպես տեսանք, հոր գերեզմանը կոզոպտելով և մորուին համար պահեստի դրամը բռնի հափշտակելով։ Իսկ Մարտինե կայսրուհին, որ համբերության ասաքինությունն չուներ, շուտ մը փոխարեն ավելիով հատուց՝ թունավորեց զկայսրը և որդին Երակլյակ աթոռը նստեցնելով, Կոստանդնի երկու որդիքը կրոնավորաց վանք փակել տվավ և նոցա կողմնակիցքը հեռացուց պաշտոններեն։

Կոստանդնի թագավորությունը երեք ու կես ամիս տևեց, իսկ Մարտինեի որդվույն թագավորությունը ութն ամիս տևելեն ետք՝ Ներակույտին վճռով և զինվորական հայտնի ապստամբությամբ մը, որու գլուխ Վաղենտինոս էր, վերջ առավ։ Մարտինեի լեզուն և Երակլյակի քիթը կտրելեն վերջ՝ տերության հյուսիսային սահմանագլուխը աքսորելեն, և Կոստանդնի անգրանիկը Կոստանդ կայսրը եղավ և հոր անվամբ զինք Կոստանդին կոչեցին։ Վաղենտինոս տերության խնամածու և մեծ հաղթապետ անվանեցավ, և Անկելինա դարձյալ կը թագավորեր։

ԳԼՈՒԽ ԺԴ

Լցաւ քաղաքդ զուժկանաք, քաղաքդ պտռեցեալ. վիրավորք քոյ՝ ոչ վիրաւոր սուսերի, և ոչ դիակունք քոյ՝ դիակունք պատերազմաց։ Ամենայն իշխանք քոյ փախստեայք, և կալանաւորք քոյ կապեալք սաստկութեամբ և ճգորք քոյ առ նեռարակ կապեցան, քան 'ի թաց փախուստակոնք։ Վասն այսորիկ ասացի, թոյլ տուք ինձ լացից դառնապես, մի քանապատէք զիս 'ի վերայ բեկման դստեր ազգի իմոյ։

ՆՍԱՅԻ

Այս գրքիս սկիզբը կը հիշեն ընթերցողք, թե ինչպե՛ս Պրոկոպիոս Հունաց Սպարապետը յուր անհոգությամբ կորուսեր էր պատերազմը ի Կոգովիա և զոր ժամանակին պատմիչք անվանեցին Մարդաքենից պատերազմ, և թե ի՛նչ ավերակք, կոտորածք և գերությունք հետևանք եղան այդ պատերազմին։ Պատմեցինք նաև Թեոդորոս Թշտունի ինչպե՛ս կը ջանար այդ վիճակը դարմանել և նուազնաման արարքներ ապրելավանաց առաջն առնուլ։

Երեք տարի անցան այն դժբախտ օրերուն վրա, հազիվ թե երկիրը քիչ մը ոգի առավ և սկսավ շնչել. աշնան վերջի օրերն հասան. Հայոց զորավարը Հերակլի մահվան յուրն առնելով կը հուսար նորատապակ գոյանք օրով Վարազտիրոցի աքսորեն դարձը, մանավանդ, որ մասնավոր նամակով իրեն կ'իմացնեին, թե կայսրը մահվան անկողնին մեջ յուր հաշտարին կատակավ հանձներ էր վերջ տալ Ասպետին աքսորանաց։ Ուստի հանդարտ սրտով դարձավ Թշտունյաց երկիրը ձմեռելու։ Երկրին ապահովության համար Արտազու և Նախչևանու դավառները հանձնեց Ներսեհ Կամսարականի, որ բավական զորքով և Անձևացյաց օգնությամբ կրնար ամեն թշնամիներն պատսպարել, իսկ Տարոնո կողմեն Մամիկոնեից վրա վստահանալով, այնպես կը հուսար, թե վտանգ չի կա։

Երբ հազիվ Ասան մտած՝ կը հուսար հանգչիլ յուր ընտանյաց ծոցը, զուժկանք կը հասներ Վահան Կամսարականի կողմեն, որ եղբորը տեղակալն էր, թե արաբաց բանակ մը Անձևացյաց Սահուռ իշխանին մատնությամբ և օգնությամբ մտավ Արտազ։ Թեոդորոս առանց դանդաղելու առավ զորքը և հազիվ Քաջբերունյաց երկիրն հասած՝ զուժկան մ'էլ կը հասներ Տարոնո կողմեն, թե ուրիշ արաբաց բանակ մը ևս անարգել անցյալ կը դիմեր Դվին առաջնորդությամբ Մոկաց նախարար Վարդիկի։

Շվարեցավ Թեոդորոս, ո՞ր կողմ պետք էր դիմել. թշնամի՞ն պետք էր մտածել, թե ընտանին, որուն վրա կարելի չէր վստահիլ։ Բայց անխոով կերպարանք առնելով՝ շարունակեց յուր ճանապարհը և մտավ Արտազու դաշտը՝ օգնելու Վահանա։ Սակայն մատնությունը ամեն բան խանգարեր էր։ Սահուռ Անձևացյաց նախարարը ոչ միայն առաջնորդեր էր թշնամյաց, այլև պատերազմի ժամանակ հայոց, իր եղբարցը վրա դարձնելով զենքը, սկսեր էր ահագին կոտորած հասցնել, թեպետ իր արժանավոր պատիժը գտեր էր Տիրան քաջ իշխանի մը սուրին բերանն ինկնելով, որ թշնամյաց բազմությունեն պաշարյալ զոհ եղեր էր վերջապես քաջության։ Վահան քանի մը քաջերով թշնամյաց բազմությունը ճեղքելով հազիվ ազատած կոտորածեն՝ Թեոդորոսի բանակը եկավ։ Այս փախստականք զորություն չէին, վասնզի ահարեկյալ՝ հոգյուղ կ'ազդեին զորաց իրենց թշվառ պատերազմին պատմությամբ. բայց Թեոդորոս շարունակեց յուր ճամփան՝ հետամուտ լինելով թշնամվույն, որուն հասնիլ անհարելի եղավ, վասնզի, ինչպես ժամանակակից պատմիչ մը կըսե, «Ծոպթն արագությամբ իբրև օձք թունաւորք արձակեալք յառաջէին թշնամիք և զկեր իւրեանց թողին զզօրս Հայոց»։ Եվ այսպես կը հարձակեին Դվին քաղաքին վրա Կոգովտն անցնելով։ Երեք իշխանք միայն, որ մնացեր էին ցրվյալ զորքը ժողվելու, Թեոդորոս Վահունի, Խաչյան Աստվեցյան և Շապուհ Ամատունի, որ գտնվեցին Մեծամորի կամուրջը և գնացին լուր տալու քաղքին։

Անդեն և պատերազմի անվախտ ժողովուրդն ամեն կողմեն ապատ-

տանեցավ բերդը, և Թշնամին Մոկաց իշխանին առաջնորդությամբ անցավ Երասխը և եկավ բանակեցավ Խոսրովու անտառին եզերքը։ Հինգերորդ օրը արաբացիք մեծ կրակ վառեցին պարսպին տակ և մուխով ու նետաձգությամբ հեռացուցին պահապանները և սանդուխներով ելան տիրեցին պարսպին, բացին դռները և ներս խուժեցին։ Տասներկու հազար մարդ ջարդեցին, երեսունհինգ հազար տղայք ու կանայք գերի վարեցին և քաղաքն ավարեցին ու կողոպտեցին։ Եվ նույն Կոգովտի ճանապարհը բռնեցին ետ դառնալու համար։

Թեոդորոս Նախշևան իմացավ Թշնամվույն արարքը և բազմությունը։ Թեև զորքը բաղդատմամբ շատ քիչ էին, չի կարենալով համբերել՝ անցավ սպասեց իրենց ճամփան Կոգովիտ՝ հարձակեցավ իրենց վրա և արյունահեղ պատերազմ մը վերջ շատ զորք կորսնցնելով պարտավորեցավ ետ քաշվելու, և ավազակաց ազգն ազատ համարձակ գնաց Ասորեստան ողբ, արյուն և ավերակ թողլով ետին։

Հայաստանի այս պատուհասին վրա ավելորդ է երկար գրել. ժամանակակից պատմիչի մը այս խոսքերը բավական կը համարինք. «Եկեղեցիք քանդեալ և քայքայեալ, քահանայք խողխողեալ, տիկնայք փափկասունք, որոց ոչ էր առեալ զփորձ նեղութեան գանալից— թքոք թըշնամանեալ և քարշեալք ի հրապարակս՝ զկականումն ողբոյ բարձրացուցանէին վասն յեղակարծումն օրհասին։ Այլ և աշխարհախումբ բազմութենէն ըմբռնեալք ուստերօք և դստերօք ի նոյն վտանգս, յաճախէին զհառաչանս և զհեծութիւնս, զի ոչ գիտէին զո՞ր առաւել ողբասցեն, զխողխողեա՞լս եթէ զկենդանւոյն ազատեալս զուստերս և զդստերս օտարացեալս ի Քրիստոս...»։

Իսկ Թեոդորոս Կոգովտի բարձանց վրայեն դառնացյալ կը նայեր ոչ միայն եղած ավերակաց վրա, այլև այն ապագա դարերուն վրա, որ դեռ ավերակներ պիտի բերեին և անապատը պիտի ընդարձակեին, վասընզի հայտնի երկու դավաճանք այս դժբախտությանց պատճառ կ'երևվեին, և գաղտնի ուրիշներ սուվերներու մեջ կային, որ չէին երևեր։ Ո՞ւր էին Մուշեղ և Հմայակ Մամիկոնյանք, ինչո՞ւ չէին շարժյալ, երբ Թշնամին իրենց երկիրը կը մտներ։ Իսկ նոքա, որ եռանդուն խոստմունքներ ըրած էին՝ իշխանք Սպերացվոց, Բագրատունյաց, Մանանաղյաց, Դարանաղյաց և Եկեղյաց գավառին, իշխանք Վանանդա և Դիմաքսենից, ոչ ուրեք չէին երևեր. նույն Արարատա կողման ազատախումբը՝ Առանյանք, Վարաժնունիք, Գնթունիք և Սպանդունիք հազիվ թե ակամա և առ երևույթս կը շարժեին։ Վրացիք, Աղվանք և Սյունիք միայն հավատարիմ իրենց միաբանության գունդագունդ կը հասնեին, բայց հարվածն արդեն եղած էր։ Արաբական հրաբուխի դժոխային գետը երկրին մեկ ծայրեն մինչև մայրաքաղաքը իր ապականիչ կրակով տոչորել էր։

Կոգովտի լեռանց պափարներուն մեջ ծեր բարեկամ մը կար միայն մենացյալ, որ հայոց էն բարձր աթոռին վրայեն կամովին իջած զրպարտությանց և քսությանց պատճառավ կողբար առանձնության մեջ յուր ազգին վրա, և նա միայն կը հասկնար Թեոդորոսի հառաչանաց մորմոքը։

Քրիստափոր կաթողիկոսն էր սա, որ ոչ ներկային և ոչ ապագային առջև արդարանալ չէր խնդրած, այլ մաքուր՝ յուր աստծույն և խղճին առջև կ'սպասեր ժամուն ելնելու աղետալից կյանքեն, որ իրեն կաթողիկոսական պսակը փուշերով էր կազմել։ Այս բարեկամին գնաց Թեոդորոս, ո՛չ մխիթարություն գտնելու, այլ իմանալով Եղբ կաթողիկոսին մահը, խորհուրդ հարցնելու, թե ո՞վ կարելի էր ընտրել, և արժանավորը։ Քրիստափոր խորհուրդ տվավ Հայոց եպիսկոպոս Ներսեսն ընտրել, որ աշխարհիս ամեն փորձերեն անցեր էր. զինվոր, գիտուն, տեղյակ աստվածաբանական ուսմանց, գործունյա և առաքինի վարուք կրնար լավ օգնական լինիլ իրեն, աշխարհաշինությամբ և խորհրդով։

Ներսես արդեն մեզ ծանոթ սպան է, որովհետև զինք տեսանք երբեմն Բագրատունյաց Թավուսկերտի պալատը։ Ջանազան և իրեն միայն հայտնի պատճառներով քահանայական կյանք ընտրելով քաշվեր էր աշխարհքե։ Բագրատունյաց Տիկինը բռնի զինք Տայոց եպիսկոպոս ձեռնադրել տվեր էր, և հիմա Թեոդորոսի հրավիրելով՝ ժողվվեցան նախարարք և եպիսկոպոսունք Դվին, և ավերակաց և դիականց վրա զՆերսես ընտրեցին կաթողիկոս։

Ազգաց վիճակին մեջ կան այնպիսի վայրկյաններ, որ պարտավորություն ճանչցող մարդկանց խելոքները կ'ընկրկին՝ փառքե և պատվե կը հրաժարին։ Ներսես աշխարհք տեսած՝ փորձ և սրամիտ մարդ էր։ Կը տեսներ Հայաստանի մայրաքաղաքը կույտ ավերակաց, դերեզման անթաղ և նեխյալ դիականց, բնակարան գիշակեր թռչնոց, ցանուցիր ի բնակչաց, նախարարք և իշխանք հարստահարող, կասկածոտ, տգետ, նախանձոտ, քաջք միմյանց դեմ, վատք օտարին դեմ, ոստանիկք և ազատք խումբք ավազակաց և փոքրիկ բռնավորաց, իսկ ռամկկք և շինականք անասնացյալ և խելագարյալ ի բռնությանց և ի զրկանաց։

Այս տեսարանը զինք վհատեցուց և հրաժարեցավ, բայց նախարարաց՝ մանավանդ Թեոդորոսի հորդորը մեկ կողմեն, յուր ընկերակից եպիսկոպոսաց մեծագույն մասին անարժությունն ու տգիտությունը մյուսեն զինք ստիպեցին, և հանձն առավ, և սկսավ գործի։ Թաղել տվավ դիականքը և գարշահոտությունը վերուց, այրած եկեղեցիները և կա-

Թողիկոսարանք և հյուրանոցը նորոգեց, պաստիսպներն ամրացուց, պարտեզներ և այգիներ անկեց և Գառնո գետե ջուր բերավ ոռոգելու համար։ Դվին շունչ առավ կենդանացավ քանի մը տարվան համար, ավերակաց վրա պալատներ, տուներ և շուկաներ բարձրացան, բայց գերիները չի դարձան, և ամեն տուն իր կորուստները կոգբաբ։ Աստուծո պատուհասն է, կ'ըսեին բեմերու վրայեն քարոզիչք և վարդապետք, ժողովուրդը ապաշխարության և ողորմության կը հորդորեին, և ժողովուրդը ամեն ցոհողություն հանձն կ'առնուր, երբ զոհը ինքն էր, յուր զավակը, յուր կինը, յուր ծնողը, յուր եղբայրը և յուր քորքը, իր սաացվածով, պատվովը, որ զարմանք է թե զգալու կարողություն դեռ ուներ։

Այո՛, այդ ազգին քով, զոր կրոնքը և գերդաստանի սերը պահած են կորստեն, մինչև այսօր ընտանեկան պատիվը միշտ կենդանի մնացած է, և հայ կինը շրջակա ազգաց հետ բաղդատմամբ ավելի խնայող եղած է յուր համեստության։ Բռնաբարություն և հափշտակություն հոտարեն ի բաց առյալ՝ բարոյականի զեղծումնքը ավելի բացառություն եղած են հայուն քով։

Ուստի Դվին սկսավ բարձրանալ իր ավերակաց վրա, իշխանք և մեծատունք շինեցին և նորոգեցին իրենց ապարանքը կաթողիկոսին օրինակին հետևելով. թեպետ այն կնոջ կտավն էր ամեն շինություն Հայաստանի մեջ, որ ցորեկը շիներ՝ գիշերը կը քակեր. հայը այս տարի կը շիներ՝ օտարը ցալ տարի կը քանդեր։

Իսկ Թեոդորոսի նույն միջոցին զորավարության հրաման կը հասներ և Կոստանդնուպոլսո, բայց ի՞նչ էր հրաման մը որ զորություն չուներ, երբ թագավորյալ քաղքին մեջ անդամ անիշխանություն կը տիրեր։ Թեպետ Ռշտունյաց Տերը անվհատելի մարդ՝ կ'աշխատեր, կը հանձանձեր երկիրը խնամոք և ժողովուրդը զինք իրեն միմիայն ապավեն կը ճանչեր։ Բոլոր այդ ձմեռն անցուց Այրարատա գավառը, ամեն տեղ բերդերն ամրացնել կուտար, բնակիչք կը հորդորեր քաջության և անձանց պահպանության և այնպես զարնան կը դառնար Ռշտունյաց գավառը մխիթարություն գտնելու յուր ընտանյաց մեջ։ Եվ իր դարձը ոչ միայն ուրախություն էր յուր տան՝ այլ բոլոր Վասպուրականի. քանի՞-քանի՞ անգամ Աղթամարա կղզին ապաստան եղած էր զանազան գավառաց, մինչ ինք Թեոդորոս պարթևական պատերազմ կը վարեր թշնամվույն դեմ, որ չէին գիտեր, թե ո՞ր ժամանակ ավելի վտանգավոր էր, երբ առջևնին ներկա կը տեսնեին զինք կամ երբ անհետ փախստական էր իրենցմե։

Հիմա որ հազիվ կը հանգչեր և սիրտն ուրախության մեջ էր, իմանալով, թե Բագրատունյաց Ասպետին հրաման եղած էր դառնալ հաքսորանաց ի Կոստանդնուպոլիս, հանկարծ գուժկան հասավ, թե արաբացիք հարձակեցան Այրարատ, և Նախջևան ու Երևան կը պաշարեին։ Առանց վայրկյան մը կորսնցնելու՝ պատրաստ գտնված վեց հարյուր սպառազեն հեծելոց խումբը առավ և հետևակազորը Ատոմ Շահունվո հանձնեց շուտով հասնիլ ետևեն։ Ոչ գիշեր կար այս արշավանաց մեջ և ոչ ցերեկ, հազիվ թե ձիուց կարևոր հանգիստ կը թողուր, ուստի լուր առավ, թե թշնամին չի կարենալով ոչ Նախջևանու և ոչ Երևանու և ոչ բերդերու վնասել, եկեր պաշարեր էր Արծափու բերդը, ուր Մասյաց Ոտն գավառին բնակչաց բազմությունն ամրացեր էին ընտանյոք և ընչիվք։

Արծափու բերդը յուր համանուն գետին առաջ շինած՝ լավ ամրացյալ էր. արաբացիք տեսան, որ անելանելի ժայռերուն վրայեն քառասունի չափ զորականք պաշարելոց օգնության հասան և մտան Դարոնից բերնեն։ Նույն գիշերվան խավարն օգնական առած իրենց, նույն ճամփով սկսան վերելակել. և զանզգույշ պահապանքը քունի մեջ գտնելով կոտորեցին և տիրեցին պարսպին այն կողմին։ Կիրակի առավոտ մ'էր, երբ իրենց գազանային աղաղակը հնչեց ներսեն և դուրսեն, հիմարյալ պահապանաց շատերը սուրե ազատելու համար գահավեժ կը մեռնեին, ոմանք փախստյամբ կազատեին, իսկ կանանց և տղայոց բազմության լացն ու գոռում-գչումը անբավ էր և ողբոց արժանի։ Երբ թշնամիք բոլորովին տիրացան ամրոցին, պատերազմող մարդիկը կապեցին, իշուցին բերդեն գերիներու և անասնոց անհամար բազմությունը, և ավին ինքզինքին շվայտության՝ ուտելու և խմելու։ Եվ ահա հասավ Թեոդորոս իր գնդով և դժխային հանդեսը հազիվ սկսած՝ արյանց հեղեղին մեջ խեղդվեցավ։ Թեպետ թշնամվույն բազմությունը մեծ էր, քայց Հայոց զորավարը ժամանակ չի տվավ սթափելու. երեք հազար քնտիր սպառազենք ինկան դիակնացյալ, փախստեից մեկ մասը Ատոմի սուրին բերանը գացին, և հազիվ քանի մը հոգի կրցան ազատիլ և հասնիլ Ասորեստան։ Այս պատերազմին մեջ մեռան իրենց երկու զորավարքը՝ Օսման և Ոգմա։

Գերիներու բազմությունն ազատեցավ, և թշնամվույն ավարեն հարյուր արաբացի նժույգ հուղարկեց Թեոդորոս Կոստանդին կայսեր՝ ի Կոստանդնուպոլիս։

Թեպետ նույն միջոցին ուրիշ խումբ մը այս ավազակաց Տայոց, Վրաց և Աղվանից կողմը շատ վնաս կը հասցներ՝ ավար և գերի տանելով և ավերակաց կուտեր ձգելով, քայց Թեոդորոսի Արծափա պատերազմին հաղթությունն այնչափ մեծ էր, և այնչափ քաջալերիչ, թե թշնամվույն կոտորածին, թե ազատաց գերվույն բազմության և այնչափ քիչ զորքով՝ այնչափ բազմության դեմ, որ վնասուն բավական փոխարինեց և մխիթարություն համարեցավ։

ԳԼՈՒԽ ԺԵ

Չորս տարի էր, որ Հայաստան թշվառության մեջ կը հեծեր։ Մեռյալները կը թաղվեին, զիրենք ծածկող հողը թեև մոռացության թանձր վարագույր չէր սիրելյաց սրտին համար, բայց երբ գերելոց հետ բաղդատվեին նոքա, ամեն հայ մարդ՝ «Ծրանի մեռելոց, որ ի տէր ննջեցին» կ'ըսեր։ Այն ատենվան ամենայն դասակարգի մարդկանց մեջ այսօրվան զորավոր գլուխները չէին ստեղծված, որ գորտերու սաղմի սերունդ համարեին մարդկությունը. և հայ ազգը, որ գերդաստանի սերը, նահապետական կյանքը միշտ պահած էր, յուր զավակներուն վրա կ'ողբար, որ շղթայակապ արաբական ճիվաղին առջևեն կենդանյաց նախիրներու հետ և պես կը թողվին հայրենի երկիրը երթալու ծառայության, ուրացության և պղծության մատնվելով։

Առաջին գերիներեն էին Գրիգոր և Սուրեն, զորս մենք թողինք Դամասկոսի մոտ Շեյխ Ալիի պալատին մեջ։ Ամառանոց մ'էր այդ գեղեցիկ պալատը՝ բնակարան երբեմն բյուզանդացի հույն հարուստ իշխանավորի, որ իր տկարությենեն տաք կլիմային դիմել պարտավորյալ՝ ամենայն վայելչությամբ զարդարած էր զայն։ Ընդարձակ պարիսպ մը պըտղատու ծառերու պարտեզ մը կը շրջապատեր, որու մեջտեղ քառակուսի բնակարան էր հաստատյալ հովանոցներով, և որ ներքին ծաղկոց մը ուներ և շատրվան։ Այդ ներքին պարտեզին չորս կողմն էին սենյակները՝ իրենց դռներով և պատուհաններով։ Եվ այդ քառանկյուն պարտեզին ներքին կողմն կանանոցին դուռն էր։ Միահարկ էր տունն և Լիբանանու մայրյոթ շինյալ. բայց կիսամերկ և բոկոտն արաբացին, որ նոր ելած էր իր ավազներուն մեջեն, դեռ չէր սովոր շինել, այլ քանդել միայն, ուստի շենքն անխնամ, առանց նորոգության սկսեր էր ապականիլ։

Տան դռան մուտքին մեջ քանի մը շղթայավորյալ քրիստոնյա գերիք իրենց բնակությունն ունեին, առաջ շատ էին, տասը-տասներկուք կը լինեին, բայց մահը, կրոնափոխությամբ ազատությունը, չորս տարվան մեջ իրենց թիվը երեքի իջուցեր էր. Գրիգոր, Սուրեն և Գազրիկ անվամբ հայ շինական մի կային։ Առաջին երկու տարին Սուրեն ժամեժամ կ'ըսպասեր ազատության, միշտ հուսալով, թե Մամիկոնյանք և Կամսարականք իրենց փրկանաց գինը վճարելով՝ զիրենք կ'ազատեն այդ անտանելի գերությենեն, և այս բանիս համար քանի մը նամակներ հուղարկած էր Մուշեղ Մամիկոնյանի և Հրահատ Կամսարականի՝ յուր եղբոր, բայց անօգուտ ելնելով յուր ակնկալությունը, միտքը փոխեց՝ առերեսս ուրացություն հանձն առնուլ որոշելով, սկսավ հորդորել զԳրիգոր, որ վայրկենի մը համար հանձն առնուն այդ անօրինությունը։ Այնպիսի դիմադրություն մը գտավ և այնպիսի խիստ պատասխան ընդունեց, որ տարի մը նաև համբերեց և նույն խնամքով կը հոգար իր սիրական քեռորդին, միշտ սպասելով դարձյալ, որ պատասխան կ'ընդունի հայրենի երկրեն։ Չէր գիտեր խեղճ մարդը, որ Կամսարականք խաբված էին Մուշեղեն, որ Գրիգորի և Սուրենի գերությունը լսելով՝ նոցա մահվան լուրը ամեն տեղ ջանացեր էր տարածել, իբրև թե սուրհանդակներ հանած, լրտեսներ ղրկած և Ասորեստան և Ասորիք իմացեր էր ստույգը։ Եվ այսպես հավատացուցեր էր նաև Կամսարականաց, որ դրամի պետք ունենալով՝ Սուրենի ժառանգությունը ծախեր էին Բագրատունյաց, ինչպես վերը իմացանք Հուսիկեն։ Սուրեն տոկուն և խելոք մարդ էր, ուստի տեսնելով վիճակը, իմանալով օրավուր արաբաց հաջողությունքը և համբերելով գերության տարիները, որ չորս կը լինեին, սկսավ հուսահատիլ։ Ուստի հարկավոր սեպեց Գրիգորի հետ խոսակցություն մը նաև ունենալ, և որովհետև կը տեսներ Գազրիկ թեև շինական մարդ՝ Գրիգորի խելքեն էր՝ և հաստատ յուր կրոնից մինչև ի մահ։ Ուստի առանձին Գրիգորի այսպես խոսեցավ.

— Որդյակ Գրիգոր, ահա գրեթե չորս տարի է, որ մենք շղթաներու մեջ կ'ապրինք, և այս վիճակին մեջ անցնել թեպետ մեծ առաքինություն է, բայց պետք է խոստովանիմ, որ մեր ազատությամբ, երբ կրնանք օգտակար լինիլ մեր հայրենի երկրին, ավելի մեծ առաքինություն ըրած կը լինիմք։

Գրիգոր այս խոսքերուն ամենևին պատասխան չի տվավ, գիտենալով, թե խոսքին նշանակությունը և վերջաբանը ո՞ւր պիտի հանգեր։ Իսկ Սուրեն առանց շփոթելու նորա լռությենեն՝ դարձյալ հանդարտությամբ շարունակեց.

— Դու լավ գիտես, վասնզի արդեն այս բարբարոսաց լեզուն կը հասկնաս կատարյալ և կը խոսիս, որ ինչչա՜փ ավար և գերի բերեր են Հայաստանե այս օրերս, որ Դվին առեր այրեր են, որ մինչև հիմա քրիստոնեությունը ի՜նչ ահագին վնաս տեսած է այս գազաններեն՝ նստած բնակած տեղերնիս նաև կը վկայե, որ քրիստոնեի բնակարան է եղեր քանի մը տարի առաջ. ուրեմն ո՞րը լավ է, այս գերության մեջ, համառությամբ մեռնի՞լ, թե ազատիլ երթալ հայրենի երկիրը, կռվիլ նորա պաշտպանության համար և փառքով ու պատվով մարտիրոսանալով, նմանիլ մեր նախնյաց՝ Վարդանա, Վահանա, Արշավիր և իրենց ընկերաց... Պատասխան չե՞ս տար։

— Ի՞նչ պատասխան կ'ուզես, որ տամ. եթե այդ քաջերուն կենաց մեջ մեծ հանցանք մը, մեծ արատ մը կա, ուրացությունն է. և ես այդ հանձն չեմ կրնար առնուլ. մահն ինձ հազար անգամ սիրելի է։

— Այդպես ըսեր էր ժամանակավ քու նախահայրդ՝ Վարդան, բայց վերջն ավելի խոհեմությամբ մտածելով՝ ազգին ու կրոնքին օգուտը վերադասեց, յուր համառությունը թողեց և այսօր յուր անունը բոլոր Հայաստան կ'օրհնե և կը փառավորե, վասնզի յուր ուրացությունը ավելի օգտակար եղավ քրիստոնեության զեն ի ձեռին մեռնելով Քրիստոսի համար, քան թե Հազկերտի դիմադրելով, մեռներ գերության մեջ Սասպատան։

— Ես ո՞վ եմ ինքզինքս Վարդաններու և Վահաններու հետ բաղդատելու համար, նոցա համբավը, օրինակը կրնային օգտակար լինիլ ազգին և եղան. իսկ ես երեկվան պատանի՝ անծանոթ ամենուն...

— Ոչ այդպես, որդյակ, մենք այս թշվառ վիճակին մեջ փորձառու եղանք՝ իմացանք թե ի՛նչ է գերությունը, երբ հայրենիք երթանք ոչ միայն պետք է պատերազմինք, այլև օրինակավ և խոսքով քարոզենք զինվիլ և զինել, ցույց տանք, թե ռամիկ և շինական ամենը պետք է զինվին, և հետևինք արաբաց օրինակին։

— Հիմա ո՞ գիտե, թե ի՛նչ ունինք աշխարհքիս վրա, ո՞ գիտե ավերումնք և հափշտակություն բան մը թողած են մեզ ժառանգություն։

— Այդպես երիտասարդ կը հուսահատի՞ս շուտով. գերությունը քո արտիդ կորովն սպաննե՞ց։ Տղա՛, դու կարծես թե ես աստից ելած օրս ձեռնունայն կ'երթամ հայրենիք, դու խոսք տուր երկչոտությունը թողով և ինձ հետևիլ և այնպես կը մտնենք Հայաստան, որ հայոց նախարարքը ամենքն ակնածությամբ նային մեր վրա։

— Չեմ գիտեր գաղտնիքդ և հետաքրքիր նաև չեմ իմանալու, միայն կը խնդրեմ քեզմե, սիրելի մորեղբայրս, որ զիս հանդարտ թողուս իմ խղճմտանքիս հետ...

— Դարձյալ այդ խղճահար համառության մեջ պիտի փչացնե՞ս իմ և քու կյանքդ ի վնաս հայրենյաց։ Եվ աստից վերջ թո՛ղ զրուցեն, թե ասմունքը, ընթերցմունքը մարդս կը կատարելագործեն...

— Ի՞նչ կ'ուզես զրուցե, իսկ Քրիստոսի «Որ ուրացցի զիս առաջի մարդկան՝ ուրացայց՝ և ես զնա առաջի Հոր իմոյ» խոսքը չեմ կրնար մոռնալ, որ կարծես կրակե գիրերով աչքիս առջև կը փայլեն միշտ։

— Այդ խոսքերը գիտնալու չափ ես էլ կարդալ գիտեմ, բայց ահա ապրտեր է ձեզ պես տղայոց կարճամտությունը, որ կարդացածնիդ չի հասկնար և բաղդատելու կարողություն չունիք։

— Ի՞նչ կըսես, մորեղբայր իմ, այս խոսքերն որոշ և հայտնի են, մեկնության կարոտություն չունին։

— Ինչպե՞ս չունին. Քրիստոս այդ խոսքը զրուցեց և հազիվ քիչ մը ժամանակ անցավ, ահա Պետրոս իր աշակերտը ուրացավ, և ոչ միայն ուրացավ անպիտանը, այլև նզովեց, ինչպես գրված է Ավետարանին մեջ...

— Բայց դու ձեռքդ գիրք չես առնուր, ուսկի՞ց գիտես այս բաները։

— Հիմա՛ր, ես քեզի և քու նմաններուդ պես գլուխս հազար անպետք խառնաշփոթ բաներով չեմ լեցներ... պետք եղածը միայն երբ կը լսեմ, կը պահեմ և կը բաղդատեմ. բայց դու լավ մտիկ ըրե իմ խոսքս և պատասխան տուր։— Ես ըսի, թե այդ Պետրոսը, որ վատ զինվոր էլ էր, նաև՝ ահագին սրով ականջ մը միայն կրցեր էր կտրել և Քրիստոսի աշակերտաց՝ Հուդայեն վերջ ամենեն անպիտանն էր, վասնզի նա միայն ուրացավ, Քրիստոս զինք չուրացավ և դարձյալ յուր աշակերտաց մեջ զինք ընդունեցավ, և մենք Պողոսի հավասար զինք սուրբ և գլխավոր առաքյալ կը դավանինք...

— Բայց Պողոս ուրիշ, Պետրոս՝ ուրիշ...

— Ի՞նչ ուրիշ, մենք կը տանենք այդ երկուքը մյուս սուրբ առաքելոց հետ, և որ զաքմանալին է, «գլխավոր առաքյալ» այս երկուքը կը համարինք, սրոց մեկը կ'ուրանա և մյուսը քրիստոնեությը կը հալածե։ Քրիստոս, որ աստված է, մեծատիրտ է, մարդկանց առերես ուրացությունի գիտե նեքել. այդ խոսքը զրուցեր է՝ մեր աչքը վախցնելու համար ամեն վայրկյան ուրացությունը խաղալիք չընենք, բայց եթե ինք մեր վիճակին մեջ գտնվեր...

— Տե՛, մորեղբայր իմ, հայհոյություն է ըրածդ։

— Տղա՛, դու լռե՛, մտի՛կ ըրե իմ խոսքս վերջացնեմ։ Այսպես ըսեմ, եթե այդ առաքյալները մեր վիճակին մեջ գտնվեին, չորս տարի հայհոյություն, թուք ու մուր, ծեծ ու փետ, շղթա էրող արևուն և անձրևին տակ քար, հող, աղբ կրել պարտավորեին, աքա՛ռ վկա, որ տասներկուքն էլ Քրիստոս կ'ուրանային... Կա՛ց, խոսքս մ'ընդհատեր... Եվ ի՞նչ մարդ էին այդ առաքյալները. Պարթևաց ցեղեն իջած Կամսարականնե՞ր էին, թե Մամիկոնյանց Մուշեղներու, Վարդաններու, Վահաններու զավկնե՞ր, այլ ողորմելի ձկնորսներ, որ իրենց արհեստը նաև լավ չէին գիտեր, որ պզտիկ լճի մը տակար ալեկոծությունեն կը դողային, բարեբախտաբար իրենց համար, որ Քրիստոս ցավեցավ, փոքրավոր առավ զիրենք, վրանին հոգվույն սրբո շնորհք բերավ և առաքյալ եղան։

— Բայց Լուսավորչի համբերության այնչափ տարի չարչարանաց և այնչափ տարի վիրապին մեջ...

— Տղա՛, Լուսավորիչ մեկ հատիկ է սուրբերու մեջ, Լուսավորիչ այդ անպիտան ձկնորսներուն հե՞տ կը բաղդատես. նա մարդու զավակ՝ Պարթևաց ցեղեն էր։ Եվ աստված, որ զինք պահեց և կրցավ գիմանալ այդ չարչարանաց, իր վրա մեծ խնամք ուներ, Վիրապին մեջ հրեշտակ-

ներ կուգային զինք զվարճացնեին։ Մենք ո՞ւր, նա ո՞ւր։ Մեզի ասուված խելք տվեր է, կ'երթանք հիմա Շեյխին, կ'երթանք, կ'ըսենք, թե մենք իրենց մարգարեն կ'ընդունինք, սա շղթաներեն կ'ազատինք, այն ժամանակ դիտեմ, թե ի՛նչ պետք է ընել. նշան դի՛ր իմ խոսքիս, ուր օրեն Հայաստանի ճամփան կը բռնենք և առաջ ասուված՝ ամեն վտանգ անցնելով կը հասնինք հայրենիք... Ի՞նչ կը մտածես, ահա ժամն է, խոսե հիմա և պատասխան տուր... Եթե կ'ուզես մինչև վաղն առավոտ մտածե, բայց դարձյալ քեզի կըսեմ, Գրիգոր որդյակ, տասը տարի էլ մտածես, եթե խելքի կշիռ չունիս, եթե բան մը ուրիշ բանի մը հետ բաղդատելու, խելոքը խելառեն, լավը վատեն, օգտակարը վնասակարեն որոշելու կարողություն չունիս, փուճ է ամեն բան, այստեղ կը փտինք։

— Բայց դու ազատ ես, մորեղբայր իմ, դու քու ազատությունդ ինձ համար...

— Դարձյալ այդ հիմար խոսքն ինձ պիտի կրկնե՞ս։ Ես՝ դու, չի կա, միտքդ դիր, թե Սուրեն՝ զքեզ չի կրնար թողուլ, քեզմե չի զատվիր, մահ և կյանք մեկտեղ պիտի լինի։ Ամեն բան պատրաստ է, միայն քու մեկ բառիդ կ'սպասե և շաբաթ մը վերջ ազատ ենք։

Այս միջոցիս շղթաներու ձայն լսվեցավ, և Գազրիկ ամենայն հարգանոք մտնելով ըսավ, թե՝ «Ձեզ կուզե վերակացուն, իշխանք», իսկ Սուրեն ծիծաղելով՝

— Մարդ,— կ'ըսեր,— դեռ չի կրցա քեզ հասկցնել, թե մենք իշխան չենք, քեզ նման շղթայակապ գերիներ ենք, քեզի պես հող, ջուր կը կրենք, քեզի հետ հացին պատառիկը կ'ուտենք և քեզի պես ավազն է մեր անկողինը։

Իսկ Գազրիկ վիզը ծռելով՝

— Ի՞նչ ընենք, իշխան, այս անցավոր աշխարհքին մեջ այսպես որոշեր է ասուված,— պատասխանեց։

Ելան երկուքն էլ գնացին, և հիրավի, ծանր էր տեսնել Մամիկոնյանց և Կամսարականաց զավկներ, որ կ'աշխատեին բեռնակրի պես հատ կտավե շապիկ մը միայն հագած, շղթա մը ոտքերնին, որուն ծայրը մեջքերնուն գոտվո տեղ կապված չվանին էր անցուցած. քրտինքն ճակատներեն կը վազեր և գլխնուն վերև կեցած բոկոտն արաբացի մը խարազան ի ձեռին տիրաբար կը հրամայեր նախատանոք և հայհոյությամբ։ Գրիգորի յուր քաշածեն ավելի ծանր էր տեսնել զՍուրեն, որ լուռ և առանց տքալու այդ վիճակին կը տաներ, մանավանդ այն օրեն ի վեր, որ ջանք ըրած էր զինք համոզելու առերեսս ուրացության. ուստի հիմա դարձյալ տեսնելով նորա անփոփոխ կերպը, դառնացյալ ըսավ.

— Որովհետև այս վիճակը վերջ չունի, և մենք չենք էլ մեռնիր, որ ազատինք, ընենք ինչպես կ'ուզես...

— Որոշ, հաստա՞տ ես իմ խորհրդոցս հետևելու, որդյակ Գրիգոր, գիտե՞ս, որ ամեն բանի կրնամ համբերել, բայց քենե խաբեություն մահ է ինձի։

— Կ'ընեմ ինչպես կ'ուզես։

— Շատ բարի, վերջը քեզի հետ կը խոսիմ և կը տեսնես, թե այդ կրոնափոխությունն ինչչափ առ ժամանակյա և թեթև պիտի անցնի մեզի համար, և այս մեր բռնավորներն ինչպես պիտի զղջան, երբ Սուրենի վրեժխնդրությունը յուր սոսկալի հրով ու սրով տեսնեն առջևնին։

Բայց Սուրեն վախելով, որ միգուցե հետո զղջա Գրիգոր և դիտավորութենեն խախտի, երբ աշխատությունը լրացավ, ըսավ վերակացուին, թե կուզեն Շեյխը տեսնել. իսկ նա իմաց տալ խոստացավ, և հազիվ թե քանի մը վայրկյան անցավ, Շեյխին ներկայությանն էին մեր երկու իշխանք։

Երբ Շեյխն իմացավ նոցա որոշմունքը, փառք տվավ յուր աստծուն և հրամայեց, որ երկուքին էլ շղթաներն հանեն ոտքերնեն, և հրամայեց նույնպես յուր իմամին, որ իրենց պետք եղած կրոնական տեղեկությունքը տա, և շաբաթե մը թլպատվելով կատարյալ հավատացյալ դառնան։

Երբ դուրս ելան իր ներկայութենեն, Սուրեն դառնալով Գրիգորի և դառն հեգնությամբ՝

— Այդ բարբարոսը կարծե, թե շաբաթ մը մենք իր քովը պիտի մնանք,— ըսավ,— շաբաթը չեղած Հայաստանու ճամփան կ'առնունք։

— Բայց այդ ինչպե՞ս կարելի է,— կ'ըսեր Գրիգոր դառնությամբ։

— Դու կարծես թե մենք հետևակ և շղթայակապ պիտի դառնանք նույն վիճակին մեջ ինչպես զմեզ բերին այս անհավատները, իրենց նժույգներուն վրա հեծած իշխանի պես պիտի մտնենք հայրենիք։

— Ձեմ հասկնար միտքդ, ասուված լսե ձայնդ։

— Հիմա կը հասկցնեմ ես քեզի։

Երբ հասան իրենց դռնամեջի սենյակը, որ առանց պատուհանի փոքրիկ ծակ մը ուներ, ուստի նվազ լույս մը հազիվ կրնար թափանցել ցորեկ ժամանակ, իսկ հիմա, որ երեկոյին մութը սկսեր էր տիրել, մարդու աչք բան չէր տեսներ. Սուրեն գնաց փոքրիկ ճրագի կտոր մը առավ, որ պատի ճեղքի մը մեջ պահած էր, և տանելով դիմացի նույն դիրքով սենյակը՝ պատին քով գետնին ավազը մեկդի ըրավ և մեծկակ քար մը ցույց տվավ։

— Այս քարը տեսա՞ր, Գրիգոր,— ըսավ,— այս քարը երբ վերցնենք

տակը ճամփա մը կը գտնենք, և այդ ճամփան մինչև կանանոց կը տանի և այն սենյակը, որ Շեյխի զինարան ու գանձարանն է միանգամայն։

— Դարձյալ չեմ հասկնար, մեր երկուքնուս ի՞նչ օգուտ այն ճամփեն։

— Մեր երկուքնուս այն օգուտը կա, որ անիծյալ շղթաներե ազատելնես վերջ՝ կը մտնենք ներս մեզ պետք եղած մաքուր արաբացի զգեստ, զենք և մեր չորս տարվան ծառայության գինը կ'առնունք՝ մեր վրեժը կը լուծենք և կ'երթանք մեր ճամփան։

— Բավական է որ մենք ազատինք ողջ, առողջ, ես իրենց կը շնորհեմ գինն էլ, վրեժն էլ։

— Ես այդչափ մոռացկոտ չեմ։ Բավական է այսքանը, երթանք մեր հացն ուտենք ու պառկինք։

Այս ըսելով ավազը վրա բերավ, ծածկեց յուր թանկագին քարը ամենայն զգուշությամբ, և գարձան իրենց սենյակը։

ԳԼՈՒԽ ԺԶ

Անհանգիստ գիշեր մ'էր այդ գիշերը Գրիգորի համար, ոչ գետնախշտի լինելուն, այլ յուր խղճմտանքին ձայնը չէր թող տար քուն լինիր։ Ելավ անշշունչ գնաց շատրվանին քով նստավ, Դամասկոսի վճիտ և աստղազարդ երկնից աչքերը բարձրացուցած կը մտածեր յուր բախտին վրա. կը հիշեր հայրենի պալատը՝ մանավանդ յուր սքանչելի մայրը, որ չէր գիտեր ազատե՞ր էր կամ կատաղի բոցերու ճարա՞կ եղեր էր։ Կը հիշեր և Ռշտունյաց Ոստանը և հոնտեղի իր ութնօրյա սիրալիր կենակցությունը Օրիորդին հետ և վերջին գիշերը, ուր հայտներ էին միմյանց իրենց սրտին սերը։ Կ'ուզեր աստուծո բարձրացնել յուր աչքերը՝ ի վեր քան զայդ երկնից գեղեցիկ կամարը, բայց խղճմտանքը իբր վարագույր՝ համարձակություն չէր տար յուր մաղթանաց այդ դատավորին դիմելու, որու աչքերն ամեն հանցանք, ամեն ոճիր կը տեսնեն։

Կը մտածեր, թե այս ուրացությամբ, որ աղոթել չէր համարձակեր աստուծո, որ ամեն գաղտնիք գիտեր, ինչպե՞ս պիտի երեար մարդկանց, ի՞նչ պիտի զրուցեր իր առաքինի մորը, եթե ողջ էր, իսկ եթե մեռած էր, ի՞նչ աչքով կը նայեր երկնքեն յուր ուրացյալ զավկին վրա. նույն Ռշտունյաց Օրիորդն ինչպե՞ս պիտի ընդուներ ուրացողը, և փոխանակ սիրո, ի՞նչ արհամարհանք, ի՞նչ զզվանք պիտի զգար յուր վրա։ «Ո՜հ, իմ սիրելի շղթաներս,— կ'ըսեր խեղճ երիտասարդը,— դուք հազար անգամ սիրելի էիք ինձ, վանքի ոտիցս վրա կ'զգայի բեռ, և սրտիս վրա ծանրություն չի կար. հիմա շունչ քաշել նաև ծանր է ինձի։ Մայրս, եթե ողջ է, իբր անառակ որդի ընդունի զիս, բայց Թենի, ո՜հ, Թենի ի՞նչ նայվածք պիտի ձգե վրաս, արդեն այս երկար գերությամբս թերևս զիս մոռացած գրեթե, հիմա ուրացությամբ նաև աղտեղյալ ի՞նչ տեսակ անարգ ու զզվելի էակ պիտի երևամ իրեն։ Ես որ երբեմն կ'երազեի, քունիս մեջ կը տեսնեի յուր գեղեցիկ աչքերը, յուր կարապի պարանոցը. այլևս չի կա ինձ համար այդ մխիթարությունը։ «Ուրացո՜ղը, ուրացո՜ղը» պիտի ըսեն ետևես, և մեր ծառաներն անգամ։ Հապա Զավեն ի՞նչ պիտի զրուցե. խե՜ղճ մարդը, որ այնչափ զիս կը սիրեր, որուն վրա մայրս այնչափ վստահություն ուներ, և ամեն անգամ աչքեն հեռանալուս զիս իրեն ավելի կը հանձներ, քան թե յուր եղբոր Սուրենին, և որ զիս ազատելու համար կրակի մեջ իր՝ անձը կը նետեր... ցավոց առաբկա՝ զզվելի էակ ամեն աչաց պիտի երևամ, և այսպիսի՜ կյանք վարելու համար պիտի ապրեմ աշխարհքիս վրա»։

Այս խորհրդածությանց մեջն էր Գրիգոր, երբ դիմացի կանանոցի դուռը կամաց և զգուշությամբ ճռնչեց և նեղ մը բացվեցավ։ Հայ երիտասարդը մտածեց շուտով ետ քաշվիլ, վասնզի գիշերով կանանոցի դռան մը բացվիլը, և նույն միջոցին երիտասարդի մը հոն ներկա գտնվիլը նաև հանցանք կրնար համարվիլ. բայց շարժմունքը ուշադրություն արթնցնել էր, և ավելի խոհեմություն սեպելով՝ անտեսանելի մնալու համար անշարժ կենալը վերադասեց. կիսաբաց դռնեն տեսավ, որ ելավ ճերմակներ հագած փոքրիկ աղջիկ մը հազիվ տասնմեկ-տասներկու տարեկան. մեկեն ճանչեց Շեյխին աղջիկը՝ Էսմա։ Կը հուսար, որ զինք առանց տեսնելու կ'անցնի, բայց նա սուր աչքերով ամեն կողմ գննելով և ուշ դնելով առաջ կուգար, երբ շատրվանին մոտեցավ, կանգ առավ, լավ մը դիտեց և այդ մթության սովոր վայրենի աչերը նշմարեցին, թե ով էր արձանը, որ ծառի մը կոթնած նստեր էր. շտկվեցավ դեպի նա. Գրիգոր խոհեմություն սեպեց քուն ձևանալ, իսկ նա եկավ վայրկյան մը յուր աչքերն ուղղյալ Գրիգորի, ծռեցավ և սկսավ այնպես մոտեն աչքերուն նայիլ, որ յուր շունչը երիտասարդին չափազանց մոտենալով պարտավորեցավ գլուխը քաշել և աչքերը բոլորովին բանալ։

— Դուն արթուն ես և քո՞ւն կը ձևանայիր,— ըսավ աղջիկը կամաց ձայնով։

— Լվացվելու եկեր էի, վայրկյան մը նստա, քունս տարեր է, երթամ տեղս պառկիմ,— պատասխանեց Գրիգոր և ուզեց ելնել։

— Մի՛, նստե՛, խոսինք, ես քեզի համար եկա,— և այս ըսելով ձեռքն ուսին վրա դրավ։

— Ինչպե՞ս, ինձի՞ համար, գնա տեղդ, դու տիրուհի մ'ես, իսկ ես խեղճ գերի մը. քեզի չի վայլեր կանանոցեն դուրս ելնել այս ժամանակ։

— Բայց դու էլ գերի չես, ազատ ես, հայրս այնպես ըսավ մորս, ուրիշ բան մ'էլ ըսավ...

— Ես հետաքրքիր չեմ իմանալու. թո՛ղ, տիրուհի, երթամ.— և կը շտկվեր ելնելու։

Իսկ աղջիկը փոխանակ ետ քաշվելու երիտասարդին լուրջ խոսքերեն, ցատկեց և ծունկերուն վրա նստավ, աջը վզին վրա ձգելով։ Այս լրբության վրա զայրույթ մեկ կողմեն, երկյուղ մյուսեն, վերջին այլայլության հասուցին զԳրիգոր, ձայն հանել, խիստ խոսիլ կը վախեր, վասնզի եթե մեկը վրա հասներ և այն դիրքին մեջ զինք տեսներ՝ իր վիճակը շատ վտանգավոր կը լիներ, ուստի քաղցրությամբ խոսիլն ընտրելով.

— Դու այսպիսի մեծ Շեյխի մը աղջիկ ես, քեզ կը վայելե՞ այսպես վարվիլ քու ծառաներուդ հետ. խնդրեմ ելիր գնա տեղդ, որ ես էլ երթամ,— ըսավ և ձայնը կը դողար կիրքեն։

Իսկ աղջիկը, որ արդեն յուր տարիքեն մեծ էր, ոչ մարմնով, այլ ժամանակեն առաջ արթնությամբ, որ տաք կլիմայի զավկներուն բնական է, և ուր բարոյական դաստիարակության գաղափար անգամ չի կա, ծիծաղելով պատասխանեց.

— Ի՞նչ բանե կը վախես, ինչո՞ւ սիրտդ կը բաբախե, հոգ մի ըներ, հայրս քեզ ինձ հետ ամուսնացնելու դիտավորություն ունի. այնպես կ'ըսեր մորս, մեր օրենքն է, որ երբ անհավատ մը ճշմարիտ կրոնը կ'ընդունի, պետք է հավատացյալի հետ ամուսնանա. դու լավ գեղեցիկ երիտասարդ ես, ես քեզի կը հավնիմ։

— Բայց, տիրուհի, խնդրեմ, զիս թող, որ երթամ, հիմա այսպիսի բաներու վրա խոսելու ժամանակ չէ, կեսգիշերը մոտ է...

— Այդ վնաս չունի. ես քուն չունիմ։

Գրիգորի ճակտեն քրտինքը ջուրի պես կը վազեր, և այդ աղջիկը իր ծնկվներուն վրա, ձեռքը ուսին վրա այնպիսի սոսկում իրեն կ'ազդեր, իբր թե վագրի մը ձագ գիրկը նստեր և ճիրանները ծոծրակին մեջ մխած լիներ, և որ մեծն էր՝ բռնությամբ մեկդի նետել կը վախեր, ուստի հանկարծ ուշադրություն մը ձևացնելով՝

— Էսմա, ոտքի ձայն է, մարդ կուգա,— ըսավ այլայլած, և աղջիկը կապկի մը պես ցատկեց ելավ ուշ դնելու, և Գրիգոր առանց բոպե մը կորսնցնելու արագությամբ սկսավ հեռանալ, և կը լսեր աղջկան մռընչելը, որ ետևեն՝

— Անհավատի որդի, զիս կը խաբե՞ս, հե՜,— կ'ըսեր։— Բայց փոխարեն կը հատուցանեմ քեզ, կը տեսնես...

Իսկ Գրիգոր գոհ այս փոքրիկ ճիվաղին ձեռքեն անվտանգ ազատելուն, առանց ետին նայելու գնաց երկնցավ յուր խոտի բարդին վրա. և բաղդատություն կ'ըներ մտքին մեջ այդ Շեյխին սատանայական աղջկան և Ռշտունյաց չքնաղագեղ Օրիորդի հետ, մինչև քունն աչքերուն իջավ և հանդարտեցուց հուզյալ սիրտը։

Երեք օր անցավ այս դիպվածին վրա, Գազրիկ տխրությամբ կը տեսներ, որ հայ իշխանաց շղթաները հանված էին, չէր համարձակեր խոսելու պարզ և բարի շինականը, կ'իմանար, կը լսեր ամեն բան, ուրացյալ և մահմեդական ծառաներե, որ կը պատմեին իրեն պանծանոք և կը հորդորեին, որ ինքն ևս թողու յուր սուտ կրոնքը և ընդունի ճըշմարիտը։ Իսկ նա այն հրավերներուն լռությամբ միայն կը պատասխաներ և Գրիգորի ծանր տխրությունը յուր տգիտության մխիթարությունը կը համարեր։ «Անշուշտ, կ'ըսեր ինքնիրեն, խեղճ իշխանազունը այս վիճակին չի դիմանալուն հանձն կ'առնու ուրացությունը, այս անիծած կյանքին ինձ պես շինական մը հազիվ կրնա դիմանալ. իսկ սա՝ փափկասուն տղա, հալեցավ, ոսկոր ու կաշի մնաց, սա, որ վարդապետի պես ամեն ճշմարտություն կը ճանչեր, այդ տխրությամբ կը վկայե, որ ճըշմարիտ զուտ կրոնքը մեր հայրենականն է. ի՜նչ ողորմուկ աչոք կը նայի այդ կրոնուսույց մոլլային, որ կուգա առասպելներ խոսելու. բայց այդ կամսարական իշխանը... բան մը կը մտածե. ի՞նչ է իր մտածությունը. երեսեն բան մը իմանալ կարելի չէ. երբեմն հանկարծ, կեցած տեղը կը ժպտի, այնպես ժպիտ մը, որ կարծես թե բոց կելնե աչքերեն։ Տեսնենք վերջը, թե ողջ մնացինք»։

Նույն գիշերը Սուրենի անթափանց կերպարանքը այլայլություն մ'ուներ, կը մտներ, կ'ելներ, կը նստեր և չէր կրնար նստել, կը շրջագայեր, դուրս կ'երթար մեծ պարտեզը պատերուն տակ, ախոռներուն այցելություն կ'ըներ, ուր ձիեր և ուրիշ կենդանիք և երկու անասնապահք միայն կային, և մեկ կողմ փլփլված ախոռ մը կար, ուր ինք բոլոր տարին, ինչ խռիվ որ բերած էր քամին, ժողված էր, հոն կ'երթար և կուգար. Գրիգոր պառկած տեղեն կը դիտեր այդ յուր ել և մուտքը և իր քունն թեպետ փախած, բայց չուզելով յուր տխուր սիրտը հայտնել, քուն ձևացավ։ Գիշերն արդեն հառաջացեր էր, ամենքը քնած էին, և Սուրեն մոտենալով և զԳրիգոր զննելեն հետո վառեց յուր ճրագը և ամեն ղգուշությամբ ելավ դուրս. շտկվեցավ դիմացի սենյակը, որ նույն դիրքն ուներ դռան քով, և որուն խորը Սուրեն այն մեծ քարն ցցուցեր էր իրեն։ Կը լսեր Գրիգոր կամաց ձայնով խոսակցություն մը, կ'երևակայեր, թե

Գազրիկի հետ կը խոսեր. բայց դարձյալ չի շարժվեցավ տեղաց, և ամեն ձայն անհետացավ։ Վերջապես երբ ժամեն ավելի անցավ, հետաքրքրությունը զորացավ, ելավ կամաց մը և տեսավ, թե ոչ ոք չի կար. երկուքն էլ անհետ եղած էին։

Ոտքի վրա այդ բաց դռան առջև, զոր չէին կոցեր անապատի զավկրները, տեսավ, որ կանանոցի դուռը բացվեցավ, և Էսմա դուրս ելավ նույն զգուշությամբ. սկսավ շատրվանին չորս կողմը պտտիլ, իսկ Գրիգորի սիրտն սկսավ քաբախել. երբ կը մտածեր, թե այդ հանդուգն աղջիկը կրնա մինչև յուր սենյակը գալ և հանկարծ Սուրենի գաղտնիքը, որ ինք նաև կատարյալ չէր գիտեր, այլ կ'երևակայեր՝ հայտնի լինի. և շփոթած երբ կը խորհեր, թե ինչ ընե, ահա տեսավ, որ աղջիկը շտկվեցավ դեպ ուղիղ իր կողմը. պետք էր հեռացնել զինք այդ տեղեն, վասնզի թեպետ մթությունն արգելք մ'էր, բայց գիտեր արաբացի աչք խավարին մեջ լավ կը տեսնեն։ Եվ իրոք տեսավ զինք Էսմա ու մոտեցավ։

— Անհավատի որդի՛, անցյալ գիշեր զիս խաբեցիր, ոտքի ձայն է ըսիր և փախար, միտքդ դրիր, թե իմ ձեռքես ազատեցա՞ր,— կ'ըսեր խստությամբ նորահաս աղջիկը Գրիգորի ձեռքեն բռնելով։

— Բայց դու, տիրուհի,— կը պատասխաներ Գրիգոր ամենայն քաղցրությամբ,— գիտե՞ս, թե ի՞նչ մեծ անխոհեմություն կ'ընես այսպես գիշերով գալովդ, գիտե՞ս, որ հայրդ եթե հանկարծ իմանա, բոլոր յուր բարկությունն իմ վրաս կը թափե, և դու անշուշտ չես ուզեր իմ պատժվիլս։

— Այո, չեմ ուզեր, բայց երբ դու զիս չես խաբեր. իսկ եթե խաբես՝ գրկեդ նետելու համար սուտ կը զրուցես, այնպիսի զրպարտություններ կ'ընեմ և այնպես պատժել կուտամ, որ կը զղջաս։

Գրիգորի ծանր էր այս ողորմելի աղջկան գոռոզությունը, բայց ստրուկի վիճակը կը պարտավորեր այդ բաներուն տանիլ, և ինք չորս տարվան միջոցին սովորած էր այնպիսի նախատանաց համբերել. դեռ քանի մը օր առաջ, այդ փոքրիկ կատաղին Գազրիկի աչքերուն ափ մը ավազ նետելով, զվարճացեր էր խեղճ մարդուն մարմրուքով. դեռ ավելի փոքր՝ մեկ-երկու տարի առաջ խարազան մը յուր տկար ձեռաց մեջ զվարճություն էր իրեն աջ ու ձախ գերիներուն զարնել. և այդ քաջությունք ավելի կը գրգռեին շողոքորթ և բարբարոս սպասավորք. հիմա, որ հասած աղջիկ էր, բարեբախտաբար այնչափ շատ ընտանիություն չուներ մարդկանց բնակարանին հետ, բայց շարության ոգին նույն էր միշտ։

Իսկ այս միջոցիս Գրիգորի սիրտը կը դողար, որ երբ Սուրեն իրմե գաղտուկ գործի զբաղած էր, հանկարծ այդ անզգամին հայտնի կրնար

լինիլ, ուստի կը ջանար քաղցրությամբ զինք յուր տեղը գրկել, մանավանդ, որ շատ կարելի էր կանանոցին մեջ աղախին մը արթննալով և դուռը բաց տեսնելով՝ աղաղակ բարձրացներ ու բոլոր պալատը ոտք հաներ. այս վիճակին մեջ էր, երբ փոքրիկ լույս մը տեսավ այն սենյակը, ուր գետնափոր ճամփուն մուտքը կար. վախենալով, որ աղջիկը նաև տեսնե, յուր պառկելու սենյակն սկսավ քաշվիլ. իսկ ան առանց Գրիգորի ձեռքը թողլու հետը ներս մտավ։ Գրիգոր շփոթած էր բոլորովին, իսկ աղջիկն անխոով՝

— Ո՞ւր է քո ընկերդ,— հարցուց։

— Չգիտեմ... անշուշտ քնած է, և ամոթ է մեր երկուքին համար հոս միատեղ գտնվիլ։

— Իրա՜վ, որ դուք անհավատքդ շատ երկչոտ ժողովուրդ եք, ամեն բանե կը վախեք, երբ մենք հավատացյալքս քաջասիրտ ենք. դու հորմես կը վախես, ինձմե կը վախես, ծառաներեն կը վախես, հիմա էլ ելեր քու ընկերեդ կը վախես։ Նստե՛ այս խոտին վրա։

Բայց Գրիգոր նույն միջոցին աչք և ականջ էր. դիմացի սենյակը տեսավ, որ լույսն անհետ էր եղեր, և շշունջ կը լսեր դուրսը, ուստի վախը մեկդի թողուց և քիչ մը հանգստացավ։

— Չե՞ս լսեր, նստե՛ կ'ըսեմ քեզ,— կրկնեց աղջիկը հրամայելով և թեեն քաշելով, որ նստի։

— Դու խոսք չես հասկնար,— ըսավ ձայնը քիչ մը բարձրացնելով և եղանակը փոխելով,— ես քեզ այնչափ քաղցրությամբ աղաչեցի, որ երթաս տեղդ հանգչիս, և դու մտիկ չըրիր, ամոթ է, ըսի, չի հասկցար, տե՛, թո՛ղ ձեռքս։ Գնա՛ տեղդ։

— Ի՞նչ, ինձի դո՞ւ պիտի հրամայես, անհավատի որդի՛, գիտես, որ հիմա որ ձայնս ձգեմ, բոլոր տունը ոտք կը հանեմ, և երբ ամենքը հոս ժողվեմ և ըսեմ՝ դու զիս հորդորեցիր, որ գիշերով գամ, քու վիճակդ ի՞նչ կը լինի... Նստե՛ կ'ըսեմ... թե ոչ հիմա ձայնս կը բարձրացնեմ...

Արդեն ձայնը բարձրացուցեր էր բավական, և Գրիգոր շփոթած այս փոքրիկ ճիվաղեն սպառնալեցաց առջև՝ կը մտածեր զլխուն տրեղիի կուռքի հարված մը տալ, որ գետինն անցներ, բայց մյուս կողմն երբ խոհեմությամբ հանդարտեցնելը ավելի լավ կը համարեր մտքին մեջ, հանկարծ տեսավ ձեռք մը, որ փայլակի պես անցավ, աղջկանը վիզեն բռնեց և հափշտակեց՝ խխալու ձայն մը լսվեցավ, և Սուրենի ձեռքերուն մեջ աղջկան կոկորդը սրոցված խեղդված՝ անշունչ դիակ մը գետինն ինկավ, և Սուրենի մռմռոցը լսվեցավ.

— Օձի՞ ծնունդ, գնա՛ քու հորդ սատանային գիրկը։

— Ի՞նչ ըրիր, մեռա՞վ աղջիկը,— ըսավ Գրիգոր և ծռեցավ տեսնելու խեղճին վիճակը։

Իսկ Սուրեն՝

— Երկայն խոսակցության և ողբալու ժամանակ չէ, քալե՛, ե՛կ ինձ հետ,— զրուցեց հրամայական ձայնիվ։

Եվ երբ դիմացի սենյակը մտան, ծածկված ճրագի աղոտ լուսով մաքուր պարեգոտ մը, վերարկու մը և փաթթոց մը ցցուց.

— Ասոնք հագվե՛ և աս զենքերն էլ, որն որ քեզի հարմար գա՛ ա՛ռ,— ըսավ։— Շո՛ւտ ըրե, ժամանակ չի կա կորսնցնելու։

Եվ ինք նույն միջոցին՝ Գազրիկը տեսավ, որ ահագին խուիվներու դեզի մը տակ կորսված կուգար։

— Ապրիս, Գազրիկ, դեռ կա՞,— հարցուց։

— Ոչ, այս վերջի բեռն է։

— Լավ, դի՛ր այդ ալ ծառայից սենեկին դռան առաջ։

Բռնկցուց եղուտ փայտ մը, սկսավ տալ կրակը բոլոր դռներու դիմաց դիզված խուիվներուն. կեսգիշերվան կանոնավոր քամին սկսած էր արդեն, վայրկենին լուսավորվեցավ տունը։ Գազրիկի թևեն բռնած ցցուց նույնպես զենքեր և հագուստներ և ինք նաև շուտ մը տվավ օրինակը. հագվեցավ, գլուխը փաթթեց ճերմակը, առավ կապարճը, աղեղը, նիզակը, պողովատիկը մեջքեն կախեց, և երբ երեքն էլ պատրաստ էին, առավ ջխտյա մախաղը ձեռքը և ելավ դուրս. դռան առջև Գազրիկի հետ վառեց մնացած բոլոր խուիվը։ Բոցը կը բարձրանար։ Սուրեն հեգնական և սոսկալի ծիծաղով մը նկատեց՝

— Հիմա հանգիստ եմ,— ըսավ Գրիգորի,— նայի՛ ինչպե՞ս գեղեցիկ է, ինչպե՞ս կը նմանի սա վարդանաբերդի հրդեհին։

— Ո՞հ, ես այսպիսի անգութ տեսարաններ չեմ սիրեր...

— Ես էլ նույնպես. վասնզի այս հրդեհի և մեջի զոհերը քիչ են մերիններուն քով։

Գրիգոր այն ատեն երբ քեռվույն երեսը նայեցավ, նորա աչքերն այնպիսի կատաղությամբ կը փայլեին, որ գլուխը անդին դարձուց. իսկ Սուրեն «հրթանք» ըսավ և դեպի ախոռը շտկվեցավ. պատրաստ և թամբյալ արաբացի նժույգ մը հանեց, Շեյխին ամենեն սիրելի նժույգն էր. «Դե՛, Գրիգոր, հեծիր»,— ըսավ. նույնպես Գազրիկին, նույնպես իրեն. երեք ամենեն ընտիր ձիանքն էին։ Չի մ'էլ ետևնեն, որ միայն իրենց ձիոց համար գարի և իրենց համար քիչ մը պաքսիմատ բնակավորյալ էր, կուգար։

Իսկ հրդեհը կը բորբոքեր, կը մեծնար և ամեն կողմե կը ճարճատեր։ Եվ ահա մարդկանց աղաղակներ կը բարձրանային, իսկ Սուրեն՝

— Լա՛վ է, լավ, դեռ մերայնոց ողբոց և հեծությանց շատ ոչինչ պատասխան են սոքա,— ըսավ և հեծավ. ծանր ընթացք մը տալով ձիերուն, Գրիգորի և Գազրիկի հետ սկսավ խոսիլ։— Նայեցեք ի՛նչ կ'ըսեմ. ուշադիր եղեք, վասնզի մեր ամենեն դժվար բանը այս պատրաստությամբ այս ձիերուն վրա գտնվիլն էր. և ես երկու տարի է, որ մտածեր և կարգադրեր էի աս փախուստը։ Նայեցեք երկինք, սա աստղը (հյուսիսային աստղը ցցուց) ձեզի առաջնորդ պիտի բռնեք միշտ և դեպի նորա աջ կողմը պիտի շեղիք քիչ մը, մինչև որ Եփրատը գտնեք. այդ գետը հասնելեն վերջ՝ նա ձեզի կ'առաջնորդե։

— Ի՞նչ կը նշանակեն այս խոսքերը,— ըսավ Գրիգոր,— մի՞թե մենք իրարմե պիտի բաժանվինք։

— Ինչչափ կարելի է կը ջանանք չի բաժնվելու, բայց եթե հանկարծ դիպվածները զմեզ բռնադատեն, և ես ձեզի ըսեմ «Ազատեցեք ձեր անձերը», իմ խոսքիս պետք է հնազանդիք և ձեր փրկության նայիք։ Ուստի հիմա պետք է նաև ձեզի ստակ տամ, որ այսպիսի դիպվածի մեջ առաջին զենք կը համարվի։ Եվ բացավ բանալիքով մը մախաղին մեկ աչքը և երկուքին էլ մեկ բուռ ոսկի տվավ, որ իրենց գրպանին մեջ դրին։ Եվ երբ այս գործողությունն էլ լրացավ, վերջին անգամ մը գլուխը դարձուց հրդեհին նայեցավ, և սկսավ ի՛նք առջևեն, մյուսներն ետևեն՝ քշել դեպի Բալմիրայի անապատի կողմը։

ԳԼՈՒԽ ԺԷ

Բարեբախտաբար ժամանակը ձմեռ էր, այդ սոսկալի արաբական կլիմայի տաքը չի կար, և արևը երբ ելավ, մեր երեք ճանապարհորդք սիրով ողջունեցին նորա ելքը, թեպետ ավելի սիրելի էր իրենց մութը, որ փախստական մարդկանց համար նախադասելի է։

Հինգ-վեց ժամ արշավելեն վերջ փոքր հեղեղատի մը առջև հասան, ուր քիչ մը ձիերուն դադար և ուտելիք տվին. իրենք էլ իրենց չոր պաքսիմատը կրծեցին՝ ջուր խմեցին և սկսան ճամփան շարունակել, բայց միշտ աչքերնին առջևնին էր և ոչ ետևնին, վասնզի ետևեն դեռ վախելու ժամանակ չէր. մինչև իրենց փախուստը իմացվեր Դամասկոս, մինչև խնդրակներ հասնեին, իրենք կրնային բավական ճամփա առնուլ, իրենց երկյուղը արաբացի ասպատակ խումբերե էր, որ հանկարծ դիմավորելով իրենց բնական ավազակությամբ կրնային զիրենք վտանգի մատնել. ուստի Սուրեն կը քշեր, բայց միշտ խնայելով, որպեսզի եթե պետք լինի, չափազանց չհոգնելով կարենան նաև փախուստի և կռվի դիմանալ։

Ուստի այս նախահոգությամբ կ'երթային Ասորվոց անապատին մեջեն, մինչև որ արևը սկսավ խոնարհիլ։ Սուրեն, որ այն չորս տարվան գերության մեջ թե ընկերակից գերիներու հետ և թե արաբաց խոսակցութենեն լավ տեղեկություն առած մարդու պես կը շարունակեր իր առաջնորդությունը Գրիգորի հասկցնելով, թե ինչո՞ւ այդ երկայն անապատի ճամփան բռնած էր և ոչ ծովեզերը, որ ավելի կարճ էր, բայց հիմա արաբացիք տիրած լինելով մինչև Անտիոք՝ շատ ավելի վտանգավոր էր, կ'իմացներ նաև իրեն, թե ո՛ւէ դիպվածով մինակ որ մնար, ի՞նչ ճամփաներ ավելի ապահով էին Հայաստան գտնելու համար, և որո՞նց պետք էր հետևիլ։ Վերջապես արևը մտավ այն առաջին օրը, և իրենք դեռ Բալմիր չի հասած իջան դարձյալ հեղեղատի մը քով՝ քիչ մը բան կերան և ձիերուն քով նստան։ Սուրեն հորդորեց զիրենք քնանալու և ինք թեպետ գիշերն ի բուն աշխատել էր, բայց այդ ավազակաց բույնին մեջ քնել անկարելի կը համարեր։ Ուստի քանի մը ժամ հանդիստ տալեն վերջ յուր ընկերաց, մանավանդ՝ Գրիգորի, ոտք հանեց զիրենք, և դարձյալ ինկան ճամփա։

Սուրեն՝ «Սփրա՜տ, Եփրա՜տ» կ'ըսեր մտքեն, և իրեն այնպես կը թվեր, որ անգամ մը այդ գետին եզերքը՝ հայրենիք պիտի գտներ, թեև լավ գիտեր, որ ի՜նչ մեծ հեռավորություն կա այդ գետին կերպարանաց վրա Հայաստանի յուր ընթացից և Ասորվոց մեջ։ Քունն աչաց վրա ծանրացավ, ուստի ձիուն պարանոցին վրա քուն եղավ մեկ երկու ժամ։ Գրիգոր կը խորհրդածեր, թե ինչպե՞ս կ'սրելի էր, որ Սուրեն՝ յուր քեռին, մանավանդ թե յուր հայրը, իրմե գրեթե ծածուկ յուր պատրաստությունը տեսած էր և Գազրիկին հայտնած, վասնզի իրեն ելքը ցույց կուտար, թե միասեղ գործած էին։ Իսկ Գազրիկ տեսնելով այն միջոցին Սուրենի քունը՝ դարձավ ըսավ Գրիգորի.

— Հիրավի, իշխան, քու քեռին զարմանալի մարդ է, այս մեր փախուստը և ամեն պետքերը ինչպե՞ս մտածեց ու պատրաստեց։

— Ինչչա՞փ ժամանակ է, որ դու այս իր խորհուրդը և պատրաստությունը գիտեիր։

— Տարի մը կա և ավելի, որ կեսօրեն վերջ սաստիկ տաք ատեն, երբ ամեն մարդ թուլցած շարժելու կարողություն չուներ, դիպվածով մտա այդ կիսավեր սենյակը և տեսա իշխանը երկայն փայտի մը օգնությամբ այդ մեծ քարը շարժել կը ջանար, և քրտինքը ճակատն ի վար կը վազեր։ Երբ զիս տեսավ, «Գազրիկ, դու գաղտնիք պահող և ուժով մարդ ես, եկ ինձ օգնե»,— ըսավ. իսկ ես, մեղա՜, մեղա՜, որ այդպիսի քարեր շատ վերուցեր եմ, մեծ զրուցել չլինի, մեր գյուղի շրջակայքը և Բագրևանդա մեջ կրնամ ըսել, թե քիչ մարդ կար, որ ինձ չափ ծանր

բան կարենար վերցնել, «կաց, իշխան», ըսի, փոքրեցի և տեսա, որ քարը կը շարժի. ուժ տվի և սահեցուցի. «Ապրիս, Գազրիկ»,— ըսավ և վար նայեցինք, որ մարդաչափ փոս մը միայն կար առաջնիս. ինձ սպասել հրամայեց և պահպանություն ընել. ինք մտավ ներս. տեսա, որ ժամի չափ անցավ, և իշխանը չէր երևեր, վախը զիս առավ, թե վտանգի հանդիպեցավ, ուստի ես էլ իջա, որ նայիմ, և տեսա, թե երկու ճամփա կար, մեկը դեպի ներս տան մեջ կը տաներ, իսկ մյուսը՝ դեպի դուրս։ Իշխանն անշուշտ դեպի դուրս գնաց կարծելով՝ այն ճամփան գնացի խարխափելով, և վերջապես երբ երկուքի տեսա բաժնված այդ ստորերկրյա ճամփան, ետ դարձա, և հակառակ ուղղությունը բռնեցի, վերջապես լուսո տկար գիծ մը երևեց, և իշխանը տեսա, որ պատի մը կրթնած կեցեր դեպի լույսը ներս կը նայեր։ Երբ զինք ողջ գտա, փառք տվի աստուծո, վասնզի իմ վախս այն էր, որ օձի, կարճի, գահավեժի վտանգ մը հանկարծ իրեն հանդիպած չլինի. ուստի ետ դարձա նույնպես զգուշությամբ, որ ոտքի շղթայիս ձայնը չի լսվի։ Իշխանն էլ եռևես հասավ, և ելանք դուրս. դարձյալ քարը տեղավորեցի, և ոչ հարցուցի ի՞նչ էր այդ տեղը, իսկ ինք քանի մը անգամ մտավ հոն, մինչև վերջին անցյալ գիշեր և ոչ հարցմունք մ'ըրի։

— Բայց անցյալ գիշեր դու էլ այդտեղ իջար, Գազրիկ։

— Անցյալ գիշեր իջանք իրեն հետ՝ ինք ճրագն առջևեն կերթար. և ես բրիչը ձեռքս ետևեն. մինչև հասանք այդ մուկի ծակին բերանը, զգուշությամբ անձայն, պատը ձեռքով, քան թե բրիչով քակեցինք և նույն բերանն էլ մեծցուցինք, որ ավելի դյուրին էր, քան թե քովի ամուր փայտե դուռը բանալ, որ այդ ստորերկրյայն կը հաներ։ Իշխանը գլուխը ներս երկնցուց՝ երկայն ուշ դրավ, սենյակը մարդ չի կար, ուստի երբ ծակն այնչափ եղավ, որ ինք կրցավ անցնիլ, ցատկեց ելավ վեր և ճրագն առած սկսավ ինձ անցնել նախ զենքերը մեկիկ-մեկիկ, հետո բանալիքներու խուրձ մը, հետո զգեստները. վերջը կոտրեց բացավ փոքրիկ երկու գզրոցներ, պարպեց մեջիններեը, այդ կաշյա երկբերան մախաղին մեջ, որ պատեն կախված էր, և երբ այն էլ անցուց ինձ նույն զգուշությամբ, բայց բեռնավորյալ այդ ամեն բաներով, մտանք ճամփուն մեջ. հոն այդ բանալիքներով իմ շղթայես զիս ազատեց, և ելանք դուրս։ Նախ գնացինք ախոռները, ուր երկու ձիապան կը խորդային, զանոնք գամեցինք գետին և անկից վերջ ընտրեցինք, թամբեցինք ու խոիվներ և խոտի խուրձեր բերինք լցրինք ամեն գլխավոր դռներու առջև։ Բան մը չի մոռցավ նա՝ մեր և ձիերու ճամփու պաշարն էլ մտածեր էր։ Զարմանալի մարդ է։

— Ինձի ինչո՞ւ չիմացուցիր այս ձեր նախապատրաստությունը։

— Իշխանը կ'ըսեր, թե նա շատ բարեսիրտ է, արյուն թափելու թշնամի է, ավելի լավ է, որ ամեն գործ կատարվի, և հետո իմանա ինք։

— Դու ի՞նչ կարծես, Գազրիկ, աստված մեզմե հաշիվ չի՞ պահանջեր այդ արյուններուն համար, այդ հրդեհին մեջ ողջ-ողջ...

— Իշխա՜ն, բայց այդ մարդիկը մեր երկիրն հրով ու սրով քանդեցին, չորս տարվան մեջ ամեն օր սպաննեցին մեր տղաքը, երբ չէին ուրանար և կը մեռնեին՝ շան սատակ կը համարեին։ Մենք էլ այդ բաները աստուծո կը հիշեցնենք, և ամեն բան կը վերջանա։

Գրիգոր տեսավ, որ Գազրիկ Սուրենի վարդապետության աշակերտներեն էր, վերջացուց խոսքը։ Եվ դեռ երբ կը շարունակեին ճամփան, նայեցավ, որ սուրին քովեն ահագին մուրճ մը կախված էր Գազրիկի գոտիեն, հարցուց, թե այդ զենքը շատ օգտակա՞ր կը սեպեր։

— Ո՜հ, իշխանիկս,— կ'ըսեր Գազրիկ,— այդ՝ սուրե լավ է ինձ համար, ես տեսա Շեյխին սենյակը այդ, և աչքս մնաց. երբ Սուրեն իշխանը ուշադրություն չէր դարձներ, խնդրեցի առնուլ. մենք շինականքս ավելի լավ գիտենք գործածել զայս, քան թե սուրը։

Բայց արևը ելավ հորիզոնին վրա, և քիչ մը առաջ անցան՝ ահա քաղաք մը երևցավ հեռվեն։ Գրիգոր քաշեց ձիուն գլուխը, և կենդանիները կանգ առին. Սուրեն վայրկենին արթնացավ, և աչքերը շփելով՝ «Ի՞նչ կա, ի՞նչ եղաք» հարցուց։

Եվ տեսնելով կանգուն ահագին տուներ, պարիսպներու բեկորներ, իմացավ, թե Բալմիրայի ավերակներուն առջև հասած էին, և Եփրատ հեռու չէր։

— Երթանք, տղաք,— ըսավ,— հայրենի հողը թեպետ հեռու, բայց ջուրը մեզի հասավ, երթանք նորա եզերքը հոգնություն առնունք։

Գրիգոր սքանչացավ մնաց այդ մեծ քաղքին ավերակաց վրա, անապատին մեջ այդպիսի փառավոր քաղաք մը յուր հետաքրքրությունը կը շարժեր, և ակամա՝ ձիուն գլուխը դեպի արեգական տաճարը կը շրջեր։ Կը կենար կարդալու համար հունական արձանագրությունները։ Իսկ Սուրեն իմանալով քեռորդվույն ձգտմունքը՝

— Որդյակ Գրիգոր, ուրիշ օր մը այդ փափագը կը լեցնենք, հիմա ժամ առաջ այս անիծած երկրեն դուրս նետենք մեր անձինքը,— ըսավ։

Անցան քաղքին արևելյան դռնեն և շարունակելով ճամփան՝ Եփրատ յուր բոլոր վսեմությամբ երևցավ իրենց, իջան եզերքը, ջուր խմեցին, իրենց պաքսիմատը կերան, ձիերուն դադար և ուտելիք տվին, իրենք նաև հանգչեցան։

— Հապա՛, տղաք, կարծեմ ժամ է հեծնելու, երկու ճամփա կա առաջիս, կամ այս կողմեն գետն ի վեր, կամ անցնիլ գետը և դիմացեն երթալ, դուք ո՞րը կ'ընտրեք։

— Դո՛ւ որոշե,— պատասխանեց Գրիգոր,— մենք պատրաստ ենք քեզ հետևելու։ Բայց ահա դիմացի կողմը ձիավորներ կ'երևան. վեց հոգի են։

— Ուրեմն այդ մարդիկը,— ըսավ Սուրեն դիտելով,— մեզ կուզեն զրուցել, թե՝ եթե կամիք խաղաղ ու հանգիստ ձեր ճամփան շարունակել, գնացեք այդ կողմեն, մեզ մի՛ մոտիք, վասնզի ավազակներու որդի ավազակ կը ծնինք և ավազակ կ'ապրինք և ավազակի պես կը մեռնինք։

Սկսավ Սուրեն գետին աջ կողմեն երթալ դարձյալ։ Թեպետ Շեյխին գանձատունեն առած էր զենքերը՝ բայց չէր զննած նոցա լավությունն. հիմա միտքն եկավ, քաշեց պողովատը և սքանչանալով երկաթին վրա ու շողացնելով, գոհ սրտիվ դրավ պատյանը և դառնալով իր ընկերաց ըսավ.

— Այդ մեր Շեյխը լավ ավարի վրա ինկեր է, իր անապատները չէին կրնար բուսցնել ոչ այսպիսի զենք և ոչ այդպես ոսկիներ։ Նայեցեք ձեզ տված ոսկիներս՝ բոլոր Սասանյանց են, և այս զենքերն էլ բոլոր Պարսից արքայական դրոշմը կը կրեն։

Այս խոսքերը զրուցելուն գլուխը կը դարձներ երբեմն դիմացեն եկող հեծելոց, որ գետին կը մոտենային հանդուգն արշավանոք։ Իրենց այս ընթացքը, որ Սուրենի կ'իմացներ և իրենց նպատակը, փոխել չի տվավ յուր հանդարտ քալվածքը, և քթին տակեն կ'ըսեր. «Եթե այսքան քիչվոր եք՝ մեզմե ձեզի օգուտ չի կա»։ Աչքը դիմացը կը հետազոտեր, ավազի բլուր մը հանդիպելով ձին քշեց վեր ելավ. առջի նայվածքին՝ հոնքերը խավարեցան բոպե մը, սև ամպ մը պատեց երեսը. բայց փայլակի պես անցավ, և ժպիտ մը հաջորդեց, սակայն այդ ժպիտը նաև ահարկու էր։

— Տղաք,— ըսավ,— տասն-տասներկու հոգի մեր առջև կելնեն, մեր ձիերը Արաբիո հազարներու ընտիրքն են, մեր զենքերն ամենալավն են, դու, Գրիգոր, Մամիկոնյանց քաջ թոռն ես, դու էլ, Գազրիկ, որ անգեն՝ արջ մը խղդելու ուժ ունիս, քաջ եղի՛ր, միայն ամուր կեցիր ձիուդ վրա, նիզակի հարվածներե լավ պաշտպանե ինքզինքդ վահանովդ, իսկ մուրճդ՝ գործածե՛ ինչպես գիտես։ Տե՛, մտրակեցե՛ք ձիերը և ինձ հետևեցե՛ք։

Այս խոսքերուն վրա ամպի փոշի մը պատեց երեք հեծյալքը, և ձին, որ պաշար բարձած էր, կը հետևեր անբաժան Գազրիկի ձիուն, որուն ընկերն էր։ Երբ արաբք տեսան սոցա ընթացքը, որ իրենցմե կը խուսեին և կը խոտորեին հաջե ձախ, իրենք էլ խոտորեցան արգիլելու համար։ Երկու-երեքը միասին նիզակով Սուրենի վրա հարձակվիլ կը պատ-

բաստվեին, որ միշտ առջևեն կը ձիավարեր, և երկու նիզակի հարվածը նոցա առաջինը գլորցուց առանց շարժելու ժամանակ թողլու Գրիգոր նորա օրինակին հետևելով նիզակի հարված մը տվավ յուր վրա հարձակող ավազակին և այնպիսի սաստկությամբ, որ նիզակը խորտակեցավ, երբ մարդը գետինն ինկավ։ Իսկ Գագրիկ, որ յուր նիզակը բեռ մը կը համարեր, «Ա՛ռ իշխանիկ» ըսավ և Գրիգորի տվավ։ Ինք մուրճը այն առած՝ վահանով պատրաստյալ սկսավ շարունակել իր ընթացքը, վասընզի ապտբացի խումբը երկու զոհ տալեն վերջ՝ դադրեցավ և կը նայեր այս երեք անձանց մոլեգին գնացքին, որու հանիլ կարելի չէր և վտանգավոր էր։ Բայց չի թողուց բոլորովին մեր հայոց հետքը։ Սուրեն սրատես և արամիտ, երբ տեսավ, որ արաբը հեռվանց իրենց կը հետևեր, վայրկյան մը ուշացուց ընթացքը և ըսավ ընկերաց.

— Տղա՛ք, մեր առաջը հավանական թե թշնամյաց ուրիշ խումբ մը կա, վասնզի այս անզգամներն անօգուտ մեր ետևեն չէին գար։ Մի՛ թուլանաք, քաջ եղիք։ Աստուծով՝ լավ սկսանք, լավ կը վերջացնենք։

Շատ չանցավ, ավելի բազմաթիվ խումբ մը երևցավ, Սուրեն նույն առաջին գործողությունն ըրավ, խոտորեցավ արահետեն և սկսավ բացվիլ, քանի որ հեռու էին թշնամիք. նույնպես այս արաբք սկսան ճապաղիլ, որպեսզի սոցա ճամփան արգիլեն, և այս անգամ տեսավ Սուրեն, որ ավելի դժվար էր գործը, վասնզի հսկա արաբ մը ահագին նիզակ ձեռին յուր վրա կը դիմեր, առանց շփոթելու ուղղեց նժույգը նորա դեմ, և երբ նա նիզակն իրեն կը շեշտեր, մտրակ մը տվավ ձիուն, հարվածը վահանին վրայեն սահեցուց և նիզակը ավագին մեջ մղելով սուրը հրսկային վրա փայլեցուց։ Սա վահանավ ուզեց արգիլել հարվածը, բայց այնպես էր Սուրենի արագությունը, որ գլխուն կեսը կտրեց, և հսկան գետին գլորեցավ։ Գրիգոր նույն միջոցին կը կռվեր կատաղի մարդու մը հետ, որ երկու տեղեն վիրավորված՝ արյունլվա նիզակի տակ հարված մը միայն կրցավ տալ Գրիգորի ձիուն, և այդ անմտան կենդանին այնպես գայրացուց, որ կատաղի ընթացք մը առավ, և Գրիգոր այդ պատերազմեն դուրս գտավ ինքզինքը՝ Եփրատի ափանց վրա։ Սուրեն տեսնելով նորա անհետանալը, տեսնելով և Գագրիկ երկու թշնամյաց մեջ առաջեն ու ետեն զինք շամփրել կը ջանային իրենց նիզակներով և կորովի ջիգականը, որ առջևինին դեմ յուր վահանը բռնած դիպող ատրի կը նայեր մուրճը իջեցնելու, հարձակեցավ և ետևեն սպառնացող վտանգեն ազատեց նիզակի հարվածով մը, ճիշտ նույն րոպեին, երբ Գագրիկ նաև դիմացինին գլուխը չախչախելով ձիեն վար կը գլորեր։

Բայց մեր գորովի զինվորները վտանգեն չէին ազատած. երկու քաջաբի նիզակավորք կը մտենային. իսկ Սուրեն պատրաստվելով նոցա

դեմ հարձակելու, ըսավ Գագրիկի՝ «Ու զիս թո՞ղ, գնա՛ սա ուղղությամբ հասիր Գրիգորի, նա Եփրատի ափունքը գտած պետք է լինի։ Ես ինքն ձեզ հասա քանի մը վայրկյանեն, լա՛վ, եթե ոչ, անցեք գետը, Հայաստան կը տեսնվինք, քաջ եղի՛ք, մի՛ հուսահատիք, հայոց աստվածը մեծ է»։

Գագրիկ ճամփան ազատ գտնելով մտրակեց ձին և անհետ եղավ, բայց մեզ քանի ըսպեեն լսեց, որ ապշահատույր մեկը կուգար ետևեն, յուր արյունաներկ մուրճը ձեռքը՝ շրջեց ձիուն գլուխը նկող թշնամվոյն դեմ, բայց յուր ձիուն ընկեր պաշարակիր ձին էր, որ կուգար խենջելով և գոփը հատանելով։ Ուստի շարունակեց ընթացքը և տեսավ Եփրատա ափանց քով Գրիգոր, որ իջած կը լվար ձիուն վերքը։

Իսկ նորա, որ Սուրենի վրա կուգային, տեսնելով նորա իրենց դեմ հարձակելու պատրաստությունը, պաշտպանողական դիրք մը առին և իրենց մյուս ընկերաց կը նայեին, որ կուգային բաղմությամբ վեց յոթ հոգի միասին իր ճամփան կտրելով, որ չի կարենա Եփրատա կողմն երթալ. իսկ սա տեսնելով նաև, որ առաջին խումբը եկեր մյուսներուն կը խառնվի, և Գրիգոր ու Գագրիկ ազատած են, աստուծո հանձնեց զանոնք ու մտրակեց երկու ոտքով, ապահով, որ ոչ ոք իրեն կրնա հասնիլ, և նժույգն ավազավ թռանիլ Ամանոսի լեռանց ուղղությամբ։

ԳԼՈՒԽ ԺԸ

Գրիգոր այն ճիշտ ճամփան կը կենար Եփրատա ափանց քով, երբ Գագրիկ, որ Սուրենի խիստ հրամանն առած էր, ըսավ՝

— Բայց մտածելու ատեն չէ, պետք է անցնինք, վասնզի իշխանը կրկին, կրկին ապսպրեց անցնիլ և ճամփա ելնել։ Եթե մենք քիչ մը ուշանանք, այդ անօրենները մեր ետևեն կը հասնին, ի՞նչ օգուտ կը լինի, մանավանդ, որ մենք նորա հաջողակությունը չունինք, եթե նա չիներ, մենք երկուքս էլ մեռած էինք։

— Բայց ինք հիմա ի՞նչ վիճակի մեջ է, թշնամիներն պաշարյալ,— կ'ըսեր Գրիգոր տխրությամբ։

— Դու ի՞նչ կարծես, այդ մարդը ինքզինքը միշտ ի՛ազատեն, քաջ, իշխանիկս, անցնինք Եփրատ և հետո կը խոսինք։

— Աստված ինք հոգա զմեզ և զնա։

Եվ Գրիգոր այս խոսքը զրուցելեն վերջ՝ հանվեցավ, կապեց զգեստները ձիուն վրա և մեկ ձեռքը երասանակ սկսավ լողալ։ Գագրիկ նույն օրինակին հետևեցավ, մինչև հասան Եփրատա ձախ կողմը։

— Հիմա,— կըսեր Գագրիկ,— քիչ մը բան ուտենք, իշխանիկս,

մինչև այն ատեն եթե իշխանը հասավ՝ բարի, եթե չի հասավ՝ կը շարունակենք մեր ճամփան, և ինչպես ինքն ըսավ, Հայաստան կը տեսնվինք։

— Բայց, Գազրիկ, դու կարծես, թե Եփրատ որ անցանք, Հայաստա՞ն մտանք։

— Ո՛չ, գիտեմ թե Հայաստան շատ հեռու է, բայց այն նաև գիտեմ, թե այս արաբաց երկրեն մեկ մը որ դուրս ելնենք և քրիստոնեից երկրի հողը կոխենք, է՛լ փրկված ենք։

— Ո՞ր քաղաք հասնիս՝ կարծես թե փրկված ենք։

— Ես իմ չի տեսած քաղաքաց անունները չգիտեմ, երանի՜ թե այդ անիծյալ Դամասկոսի անունն էլ չգիտնայի։ Երբ քաղաք մը կը հասնինք, ուր խաչի նշան՝ եկեղեցվո սրածայր գմբեթի վրա կանգուն տեսնեմ, մարդիկ, որ քրիստոնեի պես հայեվար կը խոսին, աստծու բարևը կուտան առավոտ և իրիկուն, այն ատեն կ'իմանամ, թե փրկություն գտած ենք։ Բայց խոսքով ժամանակ չանցնենք, իշխանիկս, քիչ մը հաց ուտենք և ճամփա ելնենք։

Այս ըսելով բարի շինականը գնաց պաքսիմատի պարկը բերավ, և տեսնելով Գրիգոր, որ տխուր կը մտածեր ու չէր շարժեր ուտելու՝

— Գիտեմ,— ըսավ,— ինչ կը մտածես, իշխանիկս, բայց հոգ մ'ըներ, նա այն մարդն է, որ ո՛ւր երթա, հաց կը գտնե։ «Հացը քարեն կը հանե», որ կ'ըսե առակը՝ Սուրեն իշխանն է. ես նորա Հայաստան ողջառողջ հասնելուն ամենևին չեմ տարակուսիր. մենք մեր գլխուն ճարը տեսնենք...

Նայելով, որ Գրիգոր դարձյալ չուտեր, ինքն էլ գնաց ձիերուն գարին տվավ և գնաց մեկ կողմ տխուր նստավ։

— Գազրի՛կ եղբայր, ես ախորժակ չունեմ, երբ որ ուզեմ՝ քեզ կը զրուցեմ։

— Լա՛վ,— ըսավ Գազրիկ և տրտմությամբ առավ պարկը տեղը դրավ։

— Բայց դու չե՞ս ուտեր։

— Երբ դու ախորժակ չունիս, ես էլ չունիմ։

— Բե՛ր, ուրեմն, եղբայր,— զրուցեց Գրիգոր հուսահատած և սկըսավ պաքսիմատ մը կրծել։

— Ահա հիմա իմ ախորժակս էլ եկավ,— զրուցեց պարզ մարդը, և ինքն ևս սկսավ ուտել։

Երբ ձիերը գարին կտրեցին, և իրենք էլ կշտացան, Եփրատա ջուրն էլ խմեցին, հեծան և սկսան իրենց ճանապարհը շարունակել գետն ի վեր։

Դյուրին էր մտածել, թե Եփրատն ի վեր շարունակելու էր ընթացքը հասնելու համար Հայաստան։ Բայց երկիրն ավերակ էր գրեթե, և Եփ-

րատա եզերքը գտնվող քաղաքները արաբական արշավանքներե անմարդի։ Իսկ մեր երկու ճանապարհորդք, որ երկրին վիճակին տեղեկություն չունեին, չգիտեին, թե շե՞նը իրենց ավելի վտանգավոր էր թե անշենը, բայց զարմանալի բարեբախտությամբ գիշեր և ցերեկ ճանապարհելով, քիչ հանգիստ առնելով անվտանգ հասան մինչև Պիրդա, ուր առաջին անգամ քրիստոնեի երես տեսավ մեր Գազրիկ եղբայրը։ Երբ երկրորդ գիշերը մտան Եդեսիա, ուր ոչ միայն քրիստոնյա կար, այլև հայ քրիստոնյաք, երկրորդ առավոտուն խեղճ մարդը գնաց մտավ յուր հայրենական եկեղեցին և չորս երկայն տարիներե վերջ կը լսեր դարձյալ սաղմոսները, շարականները, որ յուր տղայությենեն ի վեր լսած էր, հայտնի է, թե անգրագետ մարդ, քիչ բան կը հասկնար, բայց ի՞նչ քաղցր էին նոքա յուր ականջին. ինչչա՞փ անցելույն հիշատակներ կային ծնողաց, ամուսնո և զավակաց այդ աղոթքներուն մեջ։ Կրկին և կրկին երկրպագություն կը կրկներ, հազար անգամներ երեսը կը խաչակնքեր։

Հեռուն՝ դռան մոտ կանգնած էր Գրիգոր՝ Վարդանա թոռը. խեղճ երիտասարդ, իբր թե ամոթով էր խաչելության պատկերին առաջ, յուր վայրկենական ուրացությունը խիղճը կը խայթեր, հայրենյաց դռան առջև հասած՝ իր պալատին հրդեհը ոչինչ կը համարեր, բայց մայրը, քույրերը, բայց ընտանիքը, այդ Զավենը, որուն այնչափ խնամքը վայելեր էր. ամենքը աչաց առաջեն կ'անցնեին, և ասոնցմե ո՞վ կենդանի պիտի կարենար տեսնել. ո՜ւմ համար պիտի զրուցեին, թե մեռավ, ո՜ւմ համար՝ թե գերի գնաց բարբարոսաց։ Իր հիշատակաց համար Աբգարու քաղաքն էր այդ, այդ քաղքին մեջ Խորենացին մատենադարաններ խառնած էր, այդ եկեղեցվույն մեջ հայ պատմագրաց հայրը պատարագ մատուցեր էր։ Եվ քանմեկ տարու երիտասարդը, որ արտաքո կարգի սրամտություն ուներ և յուր ժամանակին համար մեծ հմտություն, այդ բաները կը հիշեր, կ'աղոթեր և երանի կուտար այդ տգետ, բարի կրոնասեր յուր ընկեր շինականին, որ մեծ հույս ուներ յուր ընտանիքն ու փափուկ զավկները տեսնելու։ Իսկ ինք չէր գիտեր, որ Ռշտունյաց Ոստանը զինք հիշող մը մնացեր էր...

Դեռ Եդեսիա չի մտած՝ Գրիգոր պատվիրած էր Գազրիկի մարդու չի հայտնել յուր ով լինիլն. նա էլ հավատարմաբար այս պատվերը պահելով՝ անծանոթ օտարականք իրենց զգեստներու հայկական ձև տալով ելան Եդեսիայե և քանի մը ճանապարհորդաց հետ հանգիստ և անվտանգ երթալով հասան Ամիդ. առանց դադարելու Հայաստանի այդ սահմանագլխոց վրա կանգնեին Ծոփաց և Աղձնյաց գավառներեն ու կը մըտնեին Տարոն՝ ժառանգություն Մամիկոնյան մեծ իշխանաց Մուշեղա և Համազասպա։ Գրիգոր, որուն սրտին մեջ կասկած մտած էր Սուրենի

խարդախությունները, հարեղբորը և հոգեղբոր որդիները վրա, դարձյալ թատերի պատվիրեց Գազրիկի ամենեին մարդու չի հայտնել յուր ո՞վ լինելն, և ուշադիր մտան Մշո քաղաքը։

Մուշ Տարոնի գլխավոր քաղաքն էր, բլրի մը վրա շինված, բավական ընդարձակ, ամենանախաս Գրիգորի հորեղբոր Մամիկոնյան Մուշեղին, որոց արքատոմ ամրացյալ պարապետը և աշտարակը կը քարձրանար և կը տեսնվեր յուր պարապետներով՝ բոլոր Մշո դաշտին վրա ձգելով յուր հանդիսությունը։ Իսկ Հմայակ Մամիկոնյան, որ ավելի հնագույն էր Գրիգորի, կը բնակվեր Արծանիկ անվանի ամրոցի բերդը։

Մեր երկու ճամփորդք եկեղեցվո մը քով իջևանեցան, բայց ինչչա՞փ որ պարզ էին իրենց զգեստները, ամենուն ուշադրությունը վրանին դարձնելու գործոց բան մը կար և այն բանը՝ իրենց արաբացի անունները նշանակելն ու զենքերն էին։ Ուստի շատ ժամանակ չանցավ, երիտասարդ առաջնորդն հրավիրեց Եկամ ասորվոյն Մամիկոնյան իշխանին Գրիգորի ներկա երթալ հյուրընկալու։ Գրիգոր արդեն կը փափագեր այդպիսի մի տեսակցության, գլխին վստահ լինելով, թե հորեղբայրը զինք չէր կարող ճանչել, վասնզի տասը տարին ի վեր տեսած չուներ ուստի միայն քանի մը հրահանգներ տվավ Գազրիկի, որ միգուցե անհամաձայն գտնվին իրենց խոսակցության մեջ։

Ժամանակը ձմեռ էր, գաղթի փայտի փայլուն կրակ մը կը նարնջատեր փառարանին մեջ։ Մամիկոնյան նախարարը յուր գահույքը վրա նստած, սուսերները մեջ խոցված, հիանալի ձարգ մ'էր։ Գրիգոր զինք հարցով կրցավ ճանչել, այնչափ փոխված էր և ժամանակին տարվ ալեվորդ, աչքերը խոռոչացյալ, բայց յուր կապույտ աչքերը դեռ շատ հուր ունեին և շատ խորամանկություն։ Երբ Գրիգոր ներս մտավ, բան հայկական սովորության գնաց ձեռքը պագավ, Մուշեղ քովը տեղ ցցուց և հրամայեց նստիլ։ յարմարությունն էր։ խոր աչքերը ուղղելով երիտասարդին՝ բավ մը գնահատելն վերջ՝

— Բարի եկար,— ըսավ,— լսեցի, թե Եգեսիոյ կողմերեն կուգաք, այդ կողմերը պետք է շատ վտանգավոր լինին այս ժամանակներս։

— Այո՛, Տեր,— պատասխանեց Գրիգոր անխոտվ պարզությամբ,— բայց մենք, գոհությամբ աստուծոյ, անվնաս եկանք։

— Ո՞ւր տեղացի ես դուն, որդյակ։

— Շիրակա կողմերեն։

— Ի՞նչ գործով գնացիր Եդեսիա։

— Ազգականի մը ժառանգություն կար, այն առնելու համար։

— Գոնե հաջողեցա՞ր, նպատակիդ հասա՞ր։

— Քիչ-շատ հաջող գնաց գործերնիս, Կամսարականի իշխանը տրա-

քացի ներսեցի՝ ուզեր երթք հատ, առեցք ատիրք յուր հաշվին, և այնպես կը գտանանք։

— Մենք Կամսարականաց հետ բարեկամ ենք, խնամություն նաև ունեցել ենք, այդ կենդանիները մեզ նաև ծախեք՝ զինք դրամ կը նեք կարծեմ։ Բայց այդ խոսքը թող մնա հիմա։ Արաբաց վրա ի՞նչ կը զրուցվի Եդեսիա։

— Մեծ երկյուղ կա այդ բարբարոսաց հարձակումներեն։ Վասնզի, ինչպես կը պատմեն, քորոր ասորվոց տիրեր են արդեն և Կիլիկիա կը հարձակին։

— Մեզ էլ շատ վնաս տվին անօրենները, եղբորս տան մուխը մարեցին, անմեռ ըրին աշխարհքս։

— Բայց մենք լսեցինք, Տեր, երբ Եդեսիա էինք, թե ձեր եղբորորդին յուր քեռվոյն Կամսարական Սուրեն իշխանի հետ ազատեր են գերությունեն և հասեր են Մարդինիա։

Այս խոսքերն ամենայն միամտությամբ զրուցելով Գրիգոր, հորեղբոր կերպարանքը դիտեց, որ լսելուն՝ հոնքերը կնճռեց, բայց դարձյալ անտարբեր կերպն առնելով դրպեին վրա բերավ.

— Ցյանի՞ թե ստույգ լիներ այդ լուրը, բայց գազանաց ձեռքեն ազատվել դյուրի՞ն բան է։ Ես քանի՛ խնդրակներ ղրկեցի Արաբիա, ամենն կ'անօգտ, պարապ գարձան։ Գավառը՝ Կոգովիտ ավերակ եղավ, օգնեցի բնակչաց, փախստականները դարձուցի, ջանացի, որ երկիրը շինեմ, եղբորորդիս, որ գա, շենք շնորհք գտնե, ըսի, անցյալ տարի դարձյալ նոր անօրենները, Դվինը ավերեցին, այս ամառ եկան մտան Այրարատ, ես հիվանդ էի, չի կրցա ելնել, աստված երկա՞ր կյանք տա, Ուրշտունյաց Տերը Արծափա քով լավ հարված մը տվավ անօրենաց, Համազասպին հրաման ղրկեցի, որ երկրին հոգ տանի, բայց ավերակի ավերակի վրա ավելցավ։ Աստված ինքն ողորմի, ի՞նչ զրուցեմ։

— Գուք, Տեր Մամիկոնեից, իբրև հայ և նախարար ձեր պարտքը կատարեր եք, և շատ կարելի է, որ ձեր այդ խնդրակաց շնորհիվ ազատած լինին այդ Մամիկոնյանն ու Կամսարականը։

Այս խոսքերուն, ծեր աղվեսը շեշտակի և խուզարկու նայվածք մը ձգելով երիտասարդին վրա և տեսնելով նորա պարզամիտ ձևը, յուր կասկածները դարձյալ փարատեցան և բեկյալ ու ցաված օրտիվ պատասխանեց.

— Իմ խնդրակներս երկու տարի և ավելի է, որ գնացին և դարձան հուսահատ. երկուքն էլ վախճանված են խոստովանող մահվամբ, իրենց հոգիները մեզ բարեխոս ընդունի աստված։

Եվ այս զրուցելուն՝ երեսը կը խաչակնքեր, Գրիգոր պարտական լի-

նելով նորա խաբեության հետևելու՝ ինքն էլ խաչակնքեց, և որոշեց այլևս յուր կողմեն չի կրկնել այդ ազատության դիպվածը, վասնզի հայտնի տեսավ, որ անհագ ծերը այդ ժառանգության տիրանալու մեծ փափագ ուներ և իր նպատակին հասնելու համար ամեն բանի ձեռնարկել կարող էր. ուստի ոտք ելավ հրաժարականը տալու համար, իսկ Մուշեղ՝

— Նի՜ստ, որդի, ի՞նչ կշտապես,— ըսավ,— սա նժույգներուն խոսքը դեռ չի կրցանք լմնցնել, քեզի էլ մեղք է, ես գիտեմ, որ հիմա այդ Կամսարականք Արշակունյաց տյարք՝ մեծ գին չեն կարող վճարել, վասընզի իրենց մեռած եղբոր Սուրենի ժառանգությունը Բագրատունյաց Տիկնոջ ծախեցին, ուստի դու լավ կընես, եթե մեզի տաս այդ կենդանիները և արժեքն ընդունիս մեր գանձեն։

— Ձեր կամքը հրաման է, իշխան, բայց ես և իմ ընտանիքս Բագարան կը բնակինք և եթե ձեռնունայն դառնանք՝ Կամսարական իշխանին կամքը առանց կատարելու, ձեր իմաստությունը կ'երևակայե, թե ի՞նչ դժվար վիճակի մեջ կրնանք գտնվիլ։

— Այո, այդ ճշմարիտ է, բայց Կամսարականք շատ բարեսիրտ են և ներողամիտ, միայն այդ Սուրենը շատ խիստ և չարահոգի էր, ես իրեն պես կամակոր, ոխապահ տղա չեմ տեսել հայոց իշխանաց մեջ, աստված լուսավորե հոգին։ Բայց Ներսես լավ մարդ է, անհիշաչար է, դու կրնաս աներկյուղ ձիերն ինձ տալ, որդի՜։

— Շատ սիրով, միայն մենք պզտի մարդիկ ենք, կը վախենք, իշխան, հրաման տվեք ձեր ատենադպրին երկու տող գրել՝ իմացնելով Կամսարական իշխանին, թե ձեր բարձր հրամանին հնազանդելու համար ձիերը թողինք. և մեր նվաստությունը ուրախ և հանգիստ սրտով կերթանք։

— Հիմա շուտով ճամփա՞ պիտի ելնեք։

— Ոչ, դեռ քանի մը օր հոս ենք։ Դեռ ուխտ ունինք Սուրբ Կարապետ...

— Լա՜վ, դեռ ժամանակ կա այս նյութիս վրա խոսելու։ Վաղն առավոտ այս ատեններս եկ՝ տեսնվինք։

— Հրաման է իշխանիս,— ըսավ Գրիգոր և խոնարհաբար ողջունելով երբ դուրս պիտի ելներ, սպասավոր մը ներս մտավ ձեռքը թուղթ մը և ըսավ.

— Տեր, պատգամավոր սուրհանդակ մը Կամսարականաց Ներսեհ իշխանի կողմեն հասավ, այս թուղթը կը բերե Ձեր տերության։

Մուշեղ առավ թուղթը կնճռոտ և զբաղած երեսով, ձեռքով նշանացի իմացուց Գրիգորի, որ կրնա երթալ, և նա ելավ դուրս, բայց բնա-

կանաբար շատ հետաքրքիր էր յուր քեռվույն պատգամավորը տեսնելու և յուր մոր ընտանյաց վրա տեղեկություն առնելու, վասնզի մորմեն հուսահատած՝ խոսքն անգամ կը վախեր ընելու. մանավանդ որ հորեղբայրը կը տեսներ հայտնի, թե յուր մահվան ինչչա՜փ ավելի կ'ուզեր հավատալ, քան կենդանության։ Սակայն դանդաղիլ այս ապարանից մեջ խելք չէր, ուստի ելավ դուրս և հարցուց զԳազրիկ. իսկ սա զինք տեսնելուն՝ խորհրդավոր կերպարանք առած մոտեցավ և կամաց ձայնով «Երթա՜նք, իշխանիկս, քեզ բաներ ունիմ պատմելու» ըսավ։ Եվ երբ պալատեն քաղաք կիջնեին, սկսավ Գազրիկ յուր պատմությունը.

— Նախ պետք է զրուցեմ, թե քու հորեղբայրդ, եթե ծառայից հարցնես, շատ... ընդունելի մարդ չէ։ Որովհետև նոքա այնպես կը պատմեն, թե շատ սուտ և խարդախ է։ «Անպիտա՜ն, կ'ըսեր մեկը մյուսին, գնացիր Բռնաշեն չորս ամիս տունդ պառկեցար, ետքը մեջտեղ ելար, թե Արաբաց երկիրը գնացի իշխանին եղբոր որդին փնտրելու համար, մեռեր ու թաղվեր է ըսիր երդումով, և ահա ամեն տեղ ձայն կը տարածվի, որ Գրիգոր և քեռին Սուրեն՝ երկուքն էլ ողջ և կենդանի ազատեր Հայաստան կուգան։ Այդ մարդիկն այնչափ տարի քու խաբեությամբդ չարչարվեր են, և քու սուտ երդմանց համար Կամսարական իշխանին խնդրակնե՛բը ետ դարձան ու նոցա փրկանաց գիները ետ տարին»։

— Լա՜վ, այս ի՞նչ կը նշանակե, Գազրիկ, այն միայն, որ հորեղբայրս խարդախ ծառա մը ունի եղեր, որ զինք խաբեր է։

— Բայց դու պատմությունն ամբողջ մտիկ ըրե՝ վերջը դատե։ Այդ ծառան առաջ համբերեց, կատակի տեղ առավ այդ խոսքը, հետո երբ մեկ քանին վրա ինկան և սկսան զինք նախատել՝ «Ես իմ գլխես այս բանը չի հնարեցի, եղբարք, մեծ իշխանին հրամանավ և խրատով շարժեցա» ըսավ։ Այն ժամուն ես կարծեցի, թե ամենքը պիտի լռեն, բայց ահա մեկն ելավ, «Իշխանը այդպիսի բաներ հնարելու շատ վարպետ է, ըսավ, այս ամառ, երբ իրեն լուր տվին Ամդա, թե արաբը կուգա, ձայն չի հանեց, չիմանալ կեղծեց. երբ Տարոն մտնելու եղած՝ հազիվ թե գեղերու ձայն տվավ, որ ամրանան, շատ մարդ ոտքի տակ գնաց, ինքն էլ սուտ հիվանդ եղավ, երբ Ռշտունին օգնության զորք ուզեց»։ Ամենքն այսպիսի պատմություններ ըրին։ Հայտնի կը խոսին և կը զրուցեն, թե ինք Կոգովիտ գրավելու համար եղբորորդվույն՝ քու մահը կը փափագի։ Հիմա իմացա՞ր, խելքը ժամ առաջ փախչիլն է։ Այսպիսի բան ես հորեղբորդ համար չէի համարձակեր զրուցել, բայց յուր ամեն ծառայը երեքը, չորսը համարձակ միաբան կ'ըսեն։

— Բայց ես, Գազրիկ, ուրիշ բան մը կը մտածեմ, Կամսարական Ներսեհ իշխանի կողմանե պատգամավոր մը եկեր է Մուշեղի. ինձ շատ

փափագելի է այդ մարդը տեսնել. բայց հարեղբորս կերպեն հայանի եղավ, թե ինք չուզեր իմ տեսությունս նորա հետ, որովհետև մեր նժույգներն առնուլ կ'ուզե, և ես ըսի, թե Ներսեհին են նոքա։

— Ես երթամ այդ մարդը տեսնելու։

— Երթալ գյուրին է, բայց ի՞նչ պատճառանք պետք է կարկտես, հնարես նորս մտնելու համար։

— Այդ չգիտեմ... ի՞նչ զրուցեմ... կ'ըսեմ, թե ես, որ շիրակացի եմ, լսեցի, թե մեր գավառացի մարդ եկեր է և ինձ ազգական, նա կուզամ տեսնելու։

— Երթանք հիմա իջևան և այդ մասին մտածենք։

ԳԼՈՒԽ ԺԹ

Իսկ նույն միջոցին Մուշեղ՝ Մամիկոնյանց մեծ իշխանը, Գրիգորի երթալեն վերջ Ներսեհի նամակը ձեռքը՝ քիչ մը մտածեց և հոնքերը պարզելով աչքերը վերուց սպասավորին, որ կ'սպասեր՝

— Այդ պատգամավորը հոս բեր, բայց զգուշացիր, որ այդ երիտասարդին հետ չի տեսնվի, և ոչ միայն չի տեսնվին, այլև իրար ամենևին չի տեսնեն։

Այս հրամանն առնելով սպասավորն ելավ դուրս, և երբ Գրիգոր հեռացավ, առավ պատգամավորն ու բերավ իշխանին քով. սա տեղարծ՝ մտնող մարդուն վրա ակնարկ մը նետելով, վայրկենին ճանչեց յուր եղբոր՝ Դավթի հավատարիմ մեր քաջածանոթ Զավենն էր, որ յուր զինվորական կերպարանքն ու սպառազինությունն առած ավելի երիտասարդ կ'երևեր, քան թե մշակի հագուստներով ի Պոլիս։

— Բարի է գալուստդ, Զավեն եղբայր,— ըսավ Մուշեղ,— ուրախալի լուր մը կուտա մեզ քու բերած նամակդ, եղբորս աղջկան Պոլսե դարձն ավետելով. ինչչափ որ դժվար հավատալի էլ լինի, դարձյալ մեծ ուրախություն կիմանանք այսպիսի լուր մը առնելով և շնորհակալ ենք Կամսարական իշխանին, որ մեզ զայն կ'իմացնե։ Միայն նամակը այնպիսի խոսք մ'էլ ունի, որ ես չի կրցա հասկնալ, ի՞նչ կնշանակե. «Եթե Գրիգոր օր մը երևան չելնե, Ձեր եղբոր Դավթի ժառանգը հայանի լինելով, Արփենին, Մամիկոնյանց և Կամսարականաց սերունդը բոլորովին շիջյալ չի համարվիր։ Այս միայն ուրախության ապիթ է Ձեզ համար, ինչպես եղավ մեզ համար»։

— Մեծ իշխան, ես գրագետ մարդ չեմ,— պատասխանեց Զավեն,— որ ձեզ պես կարենամ իշխանական գրության մեկնություն տալ, բայց ինձ այնպես կ'երևա, թե այդ խոսքերը կը նշանակեն. ասուլած մի՛

արտացե, եթե Գրիգոր իշխանը մեռած նաև լինի, յուր քույրն Արփենին օրինավոր ժառանգ է հայրենի իշխանության և կալվածոց։

Եվ այս խոսքերն ըսելուն՝ տեսնելով Զավեն Մուշեղի երեսին խավարիլը, շատ մը ավելցուց.

— Գարձյալ կը կրկնեմ, իմ խելքս չի հասնիր, և տեղեկություն չունիմ ամենևին օրինաց. ձեր հրամանեն բռնադատյալ ըսի ինչ որ ինձ թվեցավ։

— Այո,— ըսավ Մուշեղ հեգնական ժպիտով,— եթե այդպես կ'իմանան կամսարականք, բոլոր նախարարական օրենք և սովորություն վեր ի վայր կը լինին, և Բաբելոնական խառնակություն կը տիրե Հայաստան։

— Բաբելոն գնացած չեմ, Տեր իշխան,— զրուցեց ամենայն պարզամտությամբ։

— Այո, Բաբելոն գնացած չես, բայց ամոր շրջակայքը գտնըված ես։

— Լսած եմ, Տեր, Տիզբոն եղած ժամանակս, և դուք նաև հոն էիք, արքայից արքային դուռը, թե Բաբելոն շատ հեռու չէր։

Մուշեղ, որ մարդը կը ճանչեր և չէր ուզեր վիճաբանության մեջ մտնել շինական զինվորի մը հետ, չիմանալու զարկավ այդ տրախոս պատասխանը և խիստ ձայնով հարցուց.

— Այդ նամակը ե՞րբ գրեց իշխանը, ո՞վ կար յուր քովը, նամակի գրության տեղը Դվին դրված է։

— Այո՛, Տեր, Ռշտունյաց իշխանին հետ և յուր պալատն էին կաթողիկոսն և ուրիշ նախարարք, երբ Կամսարական իշխանն զիս փնտրել տվեր էր և ինձ հանձնեց ձեր տերության տանիլ այս նամակը և պատասխանը բերել։

Մուշեղի երեսը բոլորովին մթնեցավ, և դսպյալ կիրքով ըսավ.

— Դու միա՞յն եկար, թե ուրիշ մարդ էլ ընկեր ունիս։

— Կը տեսնեք, Տեր, թե ես ինչչա՞փ ծերացեր եմ. Կամսարական իշխանը ինձ հետ երկու թիկնապահ էլ դրավ։

— Ո՞ւր են այդ մարդիկը։

— Վարը քաղաքը թողի և ես միայն ելա։

— Բայց պետք է գիտենալ, որ ես առանձին այդ նամակին պատասխան չեմ կրնար տալ. պետք է Համազասպ Մամիկոնյանի նաև հաղորդեմ և ըստ այնմ պատասխանեմ։

— Ինք մեզ ըսավ, թե այդ նամակին պատասխանը Մամիկոնյանց նահապետին կը վերաբերի, և այդպես՝ նամակով պատասխանել խոստացավ Կամսարական իշխանին, վասնզի ես հոս չեկած ճամփու վրա նեսն հանդիպեցա և նամակ մ'էլ իրեն տանեի՝ տվի։

— Այս ի՞նչ կը նշանակէ,— ըսաւ դառնութեամբ իշխանը,— կաթողիկոս, զորավար, նախարար միաբաներ են թվի թե իմ անձիս դեմ, բարեկամական նամակի մը ձևով փափագ կա հին նահապետական դրության օրենք և սովորություն վեր-վար ընելու, և այն միջոցին, որ ինձ նամակ մը կ'ուղարկեն, Համազասպ նաև հուղարկել ի՞նչ ըսել է. կ'երևա, թե Մամիկոնյանց տան մեջ տարաձայնություն ձգելու կամք ունեն։

— Տեր իշխան, ես այդպիսի իմ մտացս կարողութենե վեր խնդիրներու մեջ չեմ կարող մտնել, ինձ ինչ հրամայեցին ըսել՝ ըսի, ինչ հրամայեցին ընել՝ ըրի։ Հիմա դուք ես ինչ պատասխան որ հրամայեք տանիմ՝ կը տանիմ։

— Տե՛, դու ի՞նչ բանի կը խառնվիս, մա՛րդ, քեզ հետ խոսողն ո՛վ է, ես ինքնիրենս կը խորհրդածեմ։

— Շատ բարի. շատ իրավացի է ձեր հանդիմանությունը, ներեցեք իմ միամտությանս։

— Այդ աղջիկը քանի՞ տարու կա հիմա, և ի՞նչ նոր հրաշքով մեջտեղ ելեր է։

Զավեն լուռ կեցավ և գետին կը նայեր։

— Քեզ կ'ըսեմ, մա՛րդ, ինձ պատասխան չե՞ս տար։

— Եը ներեք, իշխան, ես կարծեի, թե դուք ինքնիրեննիդ կը խորհրդածեք, և ուշադրություն չըրի ձեր հարցմունքին։

— Լա՜վ մարդ ընտրեր են Կամսարականք ինձ հուղարկելու։

Դարձյալ Զավեն լուռ կեցավ. իսկ Մուշեղ ոտք ելնելով և խիստ դեմքով՝ ըսավ.

— Դու գնա՛, հանգչե դուրսը, և երբ հոգնությունդ առնուս, կարելի է ավելի շնորհքով խոսիս իշխանաց հետ։

Եվ այս զրուցելով՝ ինքը սկսավ վեր-վար շրջագայիլ սենեկին մեջ։ Այս Կամսարականաց նամակը բոլոր յուր խորհուրդներն հիմն ի վեր կը տապալեր, վասնզի Բագրևանդա գավառին մեկ մասը, որ Գրիգորի մահվամբ ապահով իրեն սեփականյալ կը կարծեր, հիմա կը տեսներ, որ փոքրիկ աղջկան մը մեջտեղ ելնելով՝ կ'ուզեին իրմե հափշտակել։ Եթե Կամսարականք միայն լինեին խնդրույն մեջ, պատրաստ էր յուր պատասխանը, բայց ժողով մը նախարարաց ի Դվին, ի գլուխ կաթողիկոսն և մանավանդ Թեոդորոս Ռշտունի, որ խոսելե ավելի գործել գիտեր, վտանգավոր դրացի, որուն մեկ ձեռքը Բզնունյաց գավառն էր և մյուսը՝ Բաղեշ, այնպես որ արևելքի և հարավո կողմեն իբրև թե գրկած էր յուր Տարոնո երկիրը, իրեն սրտին միշտ երկյուղ և կասկած ազդած էին, իսկ

հիմա կը տեսներ նույն Թեոդորոս Արծափաց պատերազմի հաղթությամբ պսակյալ՝ Կամսարական Ներսեհ գործիք առած յուր ձեռքը՝ փոքրիկ աղջկան մը կեղակարծ իրավունքը կը պահանջեր իրմե։ «Եվ ինչ խոլական և անտեղի իրավունք, որ հիմն չունի, կ'ըսեր ինքնիրեն, ո՞վ օրենք գրած է, որ աղջկունք կարենան նախարարական կալված ժառանգել, ո՞ւր կ'երթա այսպես նախարարության նահապետական իրավունքը։ Բայց Համազասպ տկարամիտ մեկն է, կ'ելնե հիմարաբար հավանության թուղթ մը կը գրե, փոխանակ բողոքելու, և Թեոդորոս կը հասնի յուր դիվական նպատակին Մամիկոնյանք տկարացնելով և բաժնելով։ Պետք է շուտով տեսնեմ այդ տղան, այո, այդ մորվեղ տղան, որ չի մեծնար, և եթե ձեռքեն չբռնեմ, կ'երթա, կը գլորի գահավեժե ի գահավեժ. բարեբախտաբար, որ չի նմանիր այդ հանձնապաստան երիտասարդ իշխանազանց, որ վստահ յուրյանց գիտություն, ուսմունք ըսած բաներուն, կը խոսին, կը վիճեն, այս տրամաբանություն է, այդ փիլիսոփայություն է, այն աստվածաբանություն է ըսելով, վարդապետի հատուկ ձանձրալի երկարաբանությամբ։ Այլ խրատի կը լսե և կը հարգե յուր նահապետին հրամանները»։

Այս մտածությամբք Մուշեղ բոլորովին մոռցեր էր այդ շիրակացի երիտասարդը և արաբացի նժույգները։ Նույն վայրկենին նամակավ սուրհանդակը կը հաներ ի Խնուն առ Համազասպ, որ գա շտապավ, առանց պատասխանելու Կամսականին։ Եվ ինք, երբ քիչ մը հանգըստացավ և սկսավ ցուրտ արյունով խորհրդածել, զղջաց, որ Զավենի հետ խոսելուն կիրք հայտներ էր, վասնզի ի բնե խորամանկ և քինախնդիր մարդ լինելով, շատ քիչ կը հանդիպեր իրեն բարկանալ և հայտնել իր սիրտը, ուստի Զավենն հարցուց, և երբ իմացուցին, թե գնացեր իջեր էր քաղաք, խնդրակ հանեց ետևեն, որ գա։

Իսկ Զավեն, որ Մուշեղի զոշաքաղության և նախատանաց առջև զայրույթը հազիվ կրցեր էր զսպել և մեծ ուրախությամբ յուր ներկայությենեն հեռացեր, դուրս ելնելուն՝ չորս-չորս ոտք իջավ սանդուխները, ձիուն վրա նետվեցավ և հասավ քաղաք։ Իշևանին առաջ, ուր թողեր էր յուր երկու թիկնապահները, երբ ձիեն կ'իջներ, տեսավ որ նոքա զվարթ և ուրախ կը խոսին մարդու մը հետ, զոր կը հրավիրեին երթալ իրենց հետ ընթրելու, և մեկն ուրախությամբ արբած՝

— Սուրբ խա՜չ վկա, որ քեզ հոստից հունա չեմ թող տար, կ'ըսեր, դու մարտիրոս, դու խոստովանող ես, Գաղրիկ, դու առաջինն ես, որ կը տեսնեմ այդ անիծյալ ավազակաց ձեռքեն աստծով ազատյալ, երթանք ընթրենք, մեր Զավեն եղբայր իշխանին հետ անշուշտ կ'ընթրե այս գիշեր, երթանք, Մշո գինվով զվարթանանք։

— Տղա՛ք, զիս թողեք, իմ իշխանիկս ինձ կ'սպասէ, ես՝ փառք ալի աստուծոյ, զավակաց, ընտանեաց ողջ-առողջ ըլլալուն լուրը ձեզմէ իմանալով. բայց այն պատվական տղուն ինչպե՞ս համարձակիմ, ի՞նչ բերնով ըսեմ, թե քու մայրդ, քույրդ մեռեր են, մեկ փոքրիկ տղեկ մը միայն ազատեր է։

Զյունը, որ հեզիկ և խոշոր կուգար նույն միջոցին՝ վարագույր մը եղած ծածկած էր Զավեն և յուր ձին այս մարդկանց աչքեն, օտարականին խոսքերը Զավենի բոլոր ուշը գարթուցին և, առանց երկար խորհրդածության, սիրտը տրոփելով, ձեռքը նորա ուսին վրա դնելով և բռնելով՝ իբրև թե չի փախչի, յուր հայրական ձայնով ըսավ.

— Որդյա՛կ, զրուցե՛, ո՞վ է քու իշխանիկն, պատվական տղան, որուն չես համարձակիր ըսելու, թե մայրը, քույրը մեռեր են և փոքրիկ տղեկ մը միայն մնացեր է։ Զրուցե՛, ո՞վ է։

Իսկ Գազրիկ շփոթած՝ դարձավ և ճանչելով Զավեն ձեռքը պագավ. իսկ սա առանց միտ դնելու այն հարգանաց, որ ամեն հայ երիտասարդ սովոր է մատուցանել ծերության՝

— Զրուցե՛, որդյակ, զրուցե՛ այդ իշխանիդ անունը,— կրկնեց հրամայաբար։

— Գրիգոր Մամիկոնյան։

— Ո՞ւր է, ո՞ւր, այն զրուցե՛։

— Վերը՝ հյուրանոցի սենյակը։

— Տե՛, քալե՛, ցույց տուր։

Ծերը կը վազեր սանդուխներեն վեր՝ այնպես որ երիտասարդներն հազիվ կը հասնեին իրեն, իսկ երբ դռան մոտեցավ, և Գազրիկ «հոս» ըսավ, ծերուն ուրախ երեսը մթագնեց, վայրկյան մը Գազրիկի թևեն բռնեց, արգիլեց դուռը բանալու. կը մտածեր, այո՛, այն կը մտածեր, ինչ որ քիչ մը առաջ Գազրիկ զրուցեր էր. «Մայր մը, քույր մը մեռեր են»։

Բայց ինչ որ արգիլեց ուրիշին, չի կրցավ արգիլել յուր սրտին. բացավ դուռը և մտավ։ Քառակուսի սենյակ մ'էր լուսամուտը երդիկեն. դռան անմիջապես դիմացը վառարան մը յուր գեղեցիկ բացով խուցին աղքատիկ վիճակը կը լուսավորեր և կը զվարթացներ. վառարանին երկու կողմը տախտակամած, վրան քանի մը կապերա, ձիոց թամբք և տապճակք, կաշյա մախաղք և զենք, ահա սենյակը, ուր նստած էր Գրիգոր և տխուր կը մտածեր։ Երբ դուռը բացվեցավ և ինք տեսավ Զավենի կերպարանքը, որ չորս տարվան միջոցին քիչ մը ավելի ճերմկեր էր միայն, վայրկենին ճանչեց. «Զավեն հայրիկ» ըսավ և ցատկեց ուրախությամբ վիզը փաթթվեցավ, իսկ Զավեն՝ «Ո՜հ, իմ իշխանիկս, աստված քեզ պահե» կ'ըսեր, և աչքերեն արտասուք կը հոսեր։ Երբ առաջին վայրկենին հուզմունքն անցան.

— Զրուցե՛, Զավեն հայրիկ, ի՞նչ եղան իմ մայրս, քույրերս... Ձե՞ս խոսիր, ո՜հ, ամենքն էլ, ամենքն էլ մեռան, ո՜վ աստված իմ,— ըսավ Գրիգոր և նստավ տախտակին վրա ու ձեռքը ճակտին տարավ։

— Ոչ ամենքն էլ, իշխանիկս, աստված Արփենին քեզ պահեց, ինչպես զքեզ իրեն։

Հեկեկանաց խղդուկ ձայն մը ու «մայր իմ, մայր իմ... ո՜վ սիրելի մայրս... ո՜վ հրեշտակս» բառերը միայն կը լսվեին երբեմն, և չորս հոգվո շնչառությունը կարծես դադրած էր և լուռ այս որդիական ողբոց առջև. կրակը կը ճարճատեր, ոչինչ ուրիշ շշունջ չէր լսվեր սենեկին մեջ։ Հեկեկանքը կընդմիջեին երբեմն, տխուր լռություն կը տիրեր, որու դառն հեկեկանք և հեծություն կը հաջորդեին դարձյալ։ Գրեթե ժամ մը այս վիճակը տևեց, և Զավենի օրինակին հետևելով ամենքը լռությամբ հարգեցին նորա ողբը, մինչև ելավ Գրիգոր ջուր ուզեց, խմեց, լվացվեցավ։ Դառնալով Զավենի՝

— Զավեն հայրիկ,— ըսավ,— չորս տարի է կ'երևակայեի, կը գուշակեի, թե այս սրտիս ամենադառն գույժը պիտի լսեմ, բայց այնչափ տկար է մարդկային սիրտը, որ շատ անգամ ինքզինքիս հույս կուտայի և զիս կը խաբեի... ո՞ւր է հիմա Արփենին, լա՞վ է, առո՞ղջ է...

— Փա՜ռք աստուծոյ, առողջ է և կայտառ, և ինչպե՞ս գեղեցիկ, և ինչպե՞ս խելացի, և ինչպե՞ս...

— Ո՞ւր է հիմա։

— Մաղասբերդ, մորաքրոջ՝ Մամեր տիկնոջ քով է, և քեզ կ'սպասե։

— Ի՞նձ կ'սպասե... հույս ունեի՞ք դուք իմ դարձիս, զիս ո՞ղջ գիտեիք։

— Ուրիշներն երբ զքեզ մեռած կը համարեին, ես կը հավատայի միշտ, թե քու ողջ դարձդ ալիտի տեսնեմ, բայց կը հուսայի քեզ հետ տեսնել Սուրեն իշխանը, միատեղ չէի՞ք։

— Միատեղ էինք, բայց ճամփան ղատվեցանք ակամա... երկայն պատմություն։

— Այո, պետք է երկայն խոսինք, իշխանիկս. թշվառ է սգալից պատմությանց հուսանք աստված վերջ տա, և ուրախ պատմությունք հաջորդեն, վասնզի այս քանի տարիներ են...

Այս միջոցին սենյակին դուռը բացվեցավ, և վանապետը ներս նայելով գուրսը կեցողներուն՝ «Ահա հոս են փնտրված մարդիկդ» ըսավ և գնաց։

Երկու թիկնապահք Մամիկոնյան իշխանին ներս մտան, և ողջունելով զՉավեն, «իշխանը քեզ կուզե, Չավեն եղբայր» ըսին։

— Շատ բարի, ժամանակն արդեն ուշ է, վաղն առավոտ կանուխ կուգամ։

— Մեզ այս իրիկվան համար պատվիրեց։

— Իմ հարգանաց ողջույններս խնդրեմ իրեն մատուցանել. այս երեկո ծերությանս նեղություն շնորհե, վաղվնե վերջ, եթե հաճի, բոլորովին իրեն հյուր կը լինիմ։

Մարդիկը քիչ մը մտածեցին, ողջունեցին և գնացին դժգոհ։

— Հորեղբորդ հետ տեսնվեցա՞ր, իշխան,— հարցուց ծեր զինվորը։

— Այո, Չավեն հայրիկ, միայն առանց զիս հայտնելու։

— Այդ կ'իմանամ,— ըսավ ծերը ժպտելով,— ի՞նչ մտածեցիր։

— Այն որոշեցի, որ ժամ առաջ հեռանամ Տարոնս։

— Ապրի՜ս, իշխանիկս, ես միշտ կըսեի, թե դու շատ խելոք ես։ Ուրեմն հիմա կ'ընթրենք, կը հեծնենք ճամփա կ'ելնենք։

— Ա՞յս գիշեր,— հարցուց Գրիգոր զարմանքով։

— Այո, իշխանիկս, պապենական առակը «Աղվեսի շուքին տակ չի պառկիլ» կը պատվիրե։— Տղա՛ք, դուք ելեք, մեզ ընթրիք պատրաստեցեք, շուտով ձիերուն գարին կախեցեք։

Տղաքը ելան, և երկուքը միայն մնացին։

— Բայց ինչո՞ւ այդչափ շտապենք, հայրիկ։

— Քու հորեղբայրդ է, բայց շատ օձ է, իշխանիկս։ Ես զինք լավ կը ճանչեմ։ Քիչ մը ձյունի նեղություն կը քաշենք երկու ժամի չափ, բայց ավելի ապահով և հանգիստ կ'երթանք՝ Առաքելոց վանքը այս գիշեր կ'անցնենք, և վաղն առավոտ ի՛նչ ճամփա բռնելնիս կը մտածենք։

— Շատ բարի։

Շուտ մը ելան. խորոված ը պատրաստ էր, Տարոնս գինին գերագույն և առատ։ Կերան կշտացան. երբ ձիերը կը թամբեին, Գրիգոր հրամայեց.

— Գազրիկ, երրորդ արաբացի նժույգը Չավեն եղբոր համար թամբել տուր, և բեռ եթե կա՝ նոր ձիուն վրա դնել։

Հանդարտ ձյունաբեր օդ մ'էր, Չավեն, որ Հայաստան ամբողջ յուր տան պես կը ճանչեր, առջևեն կը ձգեր ձին, մինչ որ Առաքելոց վանք հասան։ Վանահայրը, որ ծերուն հին բարեկամն էր, մեծ սիրով զիրենք ընդունեց, և այն գիշեր Գրիգոր Չավենի հետ ձմեռվան երկայն գիշերն անցուց պատմելով յուր պատմությունը և լսելով յուր ընտանյաց դրժբախտությունը. հազիվ թե առավոտյան դեմ անկողին մտան մեր այս բարեկամք։

ԳԼՈՒԽ Ի

Մուշեղի սիրտը թեև նեղացած էր Չավենի յուր հրավերը չընդունելուն վրա, բայց ձայն չի հանեց, ինք կ'սպասեր, որ գա առավոտուն, կ'սպասեր նաև այդ շիրակացի երիտասարդին, որու նժույգները հիշեց. բայց նա ևս չերևցավ, ձյունը երբեմն կուգար, երբեմն կը դադրեր։ Համազասպ արդյոք կուգա՞ր, կը հարցներ ինքնիրեն, և ահա յուր պատուհաններեն դաշտին հյուսիսային կողմի ճամփուն ճերմակ ձյունին վրա տեսավ սևություն մը, որ երբեմն փայլ կ'առնուր. զինյալ մարդիկ կուգային, ուրեմն Համազասպ էր։ Իսկ Չավեն՝ կեսօր էր և չէր երևար. մարդ ղրկեց իշևան, որ իմանան. վանահայրը պատասխանեց, թե՝ յուր հյուրերը առանց ձյունին նայելու, որ բավական առատությամբ կուգար, գիշերով թողեր, Սուրբ Կարապետ գնացեր են։

Կասկածոտ մարդ, ինչպես ամեն խորամանկ, չէր սիրեր Չավեն առջի տեսած օրեն, յուր եղբոր Դավթի ժամանակեն, և խեթիվ կը նայեր միշտ իրեն. ուստի հիմա, գիշերով անհետանալն այդ շիրակացվույն հետ տեսակ-տեսակ կասկածներ տվին. խումբ մը թիկնապահաց հրամայեց, որ երթան ս. Կարապետ և դարձնեն բերեն զամենքը քաղցրությամբ կամ բռնությամբ։

Նույն միջոցին Համազասպ իշխանը երևցավ. ծանրագլուխ երիտասարդ մ'էր սա, ազնիվ, հանդարտ և քաղցր կերպ ուներ, յուր ժամանակին ոչ միայն ուսումնասեր, այլև ուսումնականը կը սեպվեր։ Հայրենի հնավանդ սովորությանց հնազանդ և պատկառ, թեպետ ակամա՝ շատ անգամ Մուշեղի անտեղի և անիրավ հրամանաց նաև կը հնազանդեր։ Թեպետ յուր այս հպատակությունը ոմանք շահասիրության կուտային, վասնզի Մուշեղ ժառանգ չուներ և համառ մարդ էր յուր կարծյաց վրա։

Սիրով ընդունեց զինք Մամիկոնյանց նախարարը, և բնականաբար առաջին հարցմունքն այն եղավ, թե ի՞նչ կը պարունակեր Կամսարականաց կողմեն եկած նամակը. երբ իմացավ, թե գրեթե նույն իմաստն ուներ՝

— Ի՞նչ պատասխան տվիր,— հարցուց։

— Դեռ պատասխան չի տվի, վասնզի ուզեցի հարցնել՝ խնդիրն ավելի ձեզ պատկանելով, որ գլուխ եք Մամիկոնյանց տան։

Այս պատասխանը զվարթությամբ լցուց զՄուշեղ, յուր իրավունքներն կը հարգեր Համազասպ։

— Բայց ի՞նչ կարծիք ունիս այս առաջարկության վրա, ի՞նչ պատասխան կարծես, որ պետք է տանք։ Երկրի մը կառավարություն կանանց հանձնել կարելի՞ է,— հարցուց Մուշեղ։

— Խնդիրը եթե այդպես առնենք, կանանց իրավունք կուտանք, վասնզի մենք առաջ և մեր օրով կը տեսնենք նախարարաց այրի կանայք, որ տարիներով բացառիկ իշխանություն կը վարեն մինչև իրենց զավակաց մեծնալը։ Սյունյաց երկիրը հարյուր տարվան միջոցի մեջ երեսուն տարի կանանց ձեռոք կառավարվեր է Սահաթա և Բյուրեղ տիկնանց օրով, և բնակիչք ավելի գոհ եղեր են շատ անգամ նոցա կառավարությամբ։ Բայց խնդիրը հոն է, թե կանայք իրավունք ունի՞ն նախարարական իշխանություն ժառանգելու, հայրենի ժառանգություններն արտ մը, ագարակ մը, տուն, պալատ կրնան ունենալ, բայց գալլվածական իշխանության օրինակ չի կա Հայաստանի մեջ։

— Ահա պատասխանը, որ ես կ'ուզեմ ընել այդ մարդկանց, որ առանց ամաչելու այդպիսի առաջարկություն կ'ընեն մեզ։

— Միայն պետք է խորհրդածեք, Տեր, որ այդ առաջարկությունը կաթողիկոս, մարզպան և նախարարաց ժողովս մը համաձայնությամբ կը լինի։

— Այդ է, որ զիս կը զայրացնե։ Վասնզի կը տեսնեմ, որ կաթողիկոս և նախարար մարդու մը քմահաճույից կը ծառայեն ստրկաբար։ Եվ այդ մարդը՝ այդ Թեոդորոս, դուք չեք ճանչեր, և ես կը ճանչեմ ու կը զուշակեմ։ Տղա էինք Տիզբոն արքայից արքայի դուռը, երբ սա էլ եկավ, անհանդարտ, կովասեր, բռնավոր, կամակոր, ամենուն կուզեր իշխել, այն տարիքին ցույց կուտար, թե ինչ էին յուր բոլոր դիտավորությունքը, որ այսօր համարձակ կ'ուզե ի գործ դնել, տկարներուն պաշտպան հանդիսանալ և նոցա օգնությամբ հզորներուն գլուխը ջախջախել։ Իրեն հոգ չեն հայրենի օրենք, հնավանդ սովորություն և կանոնք, ամեն բան կ'արհամարհե, առաթուր կը կոխե յուր նպատակին հասնելու համար։ Ի՞նչ էր Ռշտունյաց գավառը, երբ ժառանգեց հոր իշխանությունը. փոքրիկ վիճակ մը. ի՞նչ դարձավ այսօր. ահագին նահանգ մը։ Վասպուրականի մեջ Արծրունյաց արծիվը սմքեր, թռիչքը սանձվեր է։ Ռշտունյաց բաղեն թևերը կը տարածե և կը խոյանա։ Բզնունյանց երկրին տեր եղավ։ Բաղեշ յուր ամրությունն է. Աղթամարա ծովուն բացարձակ տեր եղավ։ Խորխոռունիք յուր ամենախոնարհ ծառայքն են դարձեր։ Մոկացիք և մենք միայն ազատ ենք մնացեր յուր ազդեցությենեն։ Հեռավորներու՝ Վրաց և Աղվանից, Սյունյաց դաշնակից, մերձավորներու բռնաբարիչ Հայաստան այնպիսի փառասեր, հանդուգն մարդ մի չի տեսավ Վասակ Սյունիեն ի վեր։ Թագավորել միմիայն երազն է այդ մարդուն։ Կինն էլ իրեն հարմար, տուն նստել չգիտե, քաղքե քաղաք կը շրջագայի, աղջկությենեն որսորդության սովոր կին, քաղաքներ, վիճակներ որսալու կաշխատի, չա՞ր օրինակ ամեն իշխանազն կանանց, որ վազը պիտի եղեն

իշխանությունը բաժնելու իրենց երկանց հետ, և ամեն տուն ապստամբության և խռովության բույն պիտի դառնա։ Այդ ինոջ բանսարկությամբ, խառնակչությամբ Բզնունյաց գավառին տեր դարձան Ռշտունիք. երկուքեք իշխանք խաղաղությամբ կը տիրեին երկրին, այդ կինը առանց երևալու, առանց տեսնվելու մին մյուսի հետ ձգեց։ Ճիշտ այն ժամանակին, երբ ես զբաղած էի Հաշտենից գավառի գործերու հետ, իշխանը հյուսիսակողմանց դեմ էր գնացեր։ Ինք կին՝ առանց ամաչելու եկավ Դատվան նստավ արքայորեն ճոխությամբ, ատյան կապեց, ամբաստանություն հնարեց, իշխան մարդիկ դատել, դատապարտել տվավ, ինք առերեսս ներկա չի գտնվելով՝ իբրև թե բանի մը չի խառնվեցավ և միայն վճիռն ի գործ դրավ. մեկը Բաղեշու բերդը փակեց իբրև մահապարտ դատապարտյալ, մյուսը, որու հանցանքը մեզի բողոք ըրած լինելն էր, անբնակ կղզի մը դնել տվավ ընտանյոք և երկիրներն գրավեց. միայն Գարեգին Բզնունի, որ ոչխարի պես ապուշ մեկն էր, թողուց երկրին մեջ և, դարձյալ ապահով չի համարելով Ռշտունյաց իշխանությանք՝ խրովիլակ բերավ հաստատեց ծովուն եզերքը այդ դաժան ծերը՝ Ատոմ Շահունին։ Իսկ ինք միշտ զբաղած է. ահա երրորդ կաթողիկոսն է, որ կը դնե, միշտ նախարաբաց ժողով կը հնարե Դվին, և ժողովին մեջ ինք կը խոսի, ինք կը գործե. համարինք, թե զինվոր է, զինվորության վրա վիճի և վճռե, իշխան է, կառավարությենե կը հասկնա, իրավունք ունենա հրամայելու, բայց ի՞նչ ընենք, որ վարդապետ, եպիսկոպոս, կաթողիկոս կը լռեցնե, գլխնուս աստվածաբան կը դառնա։ Գիտեմ, իր փափագը միշտ ան եղած է, որ հաստատ ժողով մը կազմե նախարարաց ի Դվին, և այդ ժողովքին զորությամբ իշխե բոլոր Հայաստանի, բայց Մուշեղ դեռ կենդանի է։

Համազասպ լուռ մտիկ կ'ըներ այս խոսակցությունը, թեպետ լավ գիտեր թշնամիք, որ իրար կ'ատեն, երբեք արդար չեն կրնար լինիլ իրենց դատողությանց մեջ։ Ուստի նստավ, Մուշեղի բերնեն երկայն պատասխան գրեց Կամսարական իշխանի նամակին, մերժելով կանանց ամեն ժառանգական իրավունք գավառաց վրա, հազիվ թե ընդունելով Դավթի յուր եղբորորդվույն իրավունքը հայրենի բնակարանին վրա, որ էր Վարդանաբերդ։ Այս նամակը Համազասպա ձեռոք գրյալ՝ Մուշեղի կնքով վավերացյալ, երբ կ'սպասեին Զավենի ս. Կարապետե վերադարձին, որ հանձնեն և երթա, ահա թուղթ մը բերին Մուշեղի սպասավորք, որ շինական մը տվեր և գնացեր էր։ Իշխանը չի բացած՝ տվավ Համազասպա, որ կարդա, և նա սկսավ կարդալ.

«Մեծազոր իշխանիդ Մուշեղի, Մամիկոնեից Տյառն խնդալ. ուրախալիք լուր կը հաղորդեմ. ձեր եղբորորդվույն Գրիգորի հաջողությամբ

գարձն ի գերութենե. իմ պաշտոնս վերջ կ'առնու բնականաբար ինչպես ձեր պատասխանն առ Կամսարական իշխան՝ նորա գալստյամբ։ Ձեր բարձր տերության խոնարհ ծառա՝ Զավեն Կաղզվանեցի»։

— Ոչ թվական և ոչ տեղի, քաղաքի կամ շենի, միայն կնիք «Հիսուս Քրիստոսի ծառա Զավեն»,— ըսավ Համազասպ գլուխը վեր առնելով։

— Խաբեություն կա այս բանիս մեջ,— զրուցեց Մուշեղ,— երբ տեսան, թե ես պիտի չընդունեմ աղչկան մը երևակայալ իրավունք, այս գավը պատրաստեցին։

— Բայց...— կ'ըսեր Համազասպ գիրը լավ մը զննելով,— ես կը հիշեմ Գրիգորի գիրն, այս նորա գրին բոլորովին կը նմանի։

— Շուտով գնացեք,— կը հրամայեր Մուշեղ սպասավորաց,— ո՛վ որ այդ շինականը գտնե, ինձմե պարգև կ'ստանա։

Ծառայք դուրս թափեցան և ժամ մը չանցած՝ ահա տրեխավոր խեղճուկ գյուղացի մը կանգնեցուցին Մուշեղի առաջ։

— Դո՞ւ էիր, որ այս թուղթը բերիր,— հարցուց Մուշեղ խստությամբ։

— Այո, տեր։

— Ո՞վ տվավ քեզ այդ թուղթը։

— Ալևոր հեծյալ զինվոր մը։

— Ո՞ւր տվավ քեզ այդ թուղթը։

— Արքունի ճանապարհին վրա։ Ես Նորաշենե եկած՝ Առաքելոց վանքին մոտ տեսա զիրենք. հինգ ձիավոր էին. ծերը ինձ տվավ թուղթը, որ բերեմ ձեզ, երիտասարդ մը, որ շատ լավ ձի ուներ, ինձ ոսկի մը տվավ։

— Տեսնեմ ոսկին։

— Ահա,— ըսավ գյուղացին և շուտ մը շորերու փաթույթե հանեց տվավ իշխանին։

— Սասանյաց ոսկի մը,— ըսավ Մուշեղ նայելեն վերջ և նետելով դարձուց շինականին։— Ո՞ր կողմ գնացին։

— Դեպի Բաղեշ կ'երթային։

— Ինչպե՞ս մարդ էր երիտասարդը։

— Քսան-քսաներկու տարու, քիչ մորվոք, քաղցր և գեղեցիկ աչքերով տղամարդ էր։

— Լա՛վ, իմացա.— և իշխանը ձեռոք ըրավ, որ երթա։

Երբ գյուղացին դուրս ելավ ոսկին զետեղելով գրպանին մեջ, Մուշեղ երկար մտածության թաղվեցավ, միտքը կը բերեր արաբացի ձիերու տեր երիտասարդը, նորա քաղցր ու գեղեցիկ աչքերը, տարիքը, դեռաբույս մորուքը, և Համազասպա ըսելը, թե նամակին գիրը Գրիգորի գրին

կը նմաներ։ Այն նաև կը խորհրդածեր, թե Սուրբ Կարապետ երթալու խոսք ըրած էին այդ մարդիկը և փոխանակ հյուսիս երթալու հարավ կ'երթային։ Ինչպե՞ս նույն գիշերը յուր հուղարկած խումբը դառնալով լուր բերին, թե այնպիսի մարդիկ չէին եկած վանք։

Բայց ինչո՞ւ Բաղեշ կերթային։ Զավեն այնպես որոշեց, որպեսզի եթե Մուշեղ կասկածի իրենց փախստյան վրա և խնդրակ հանե, իրենք հակառակ ճամփով Ռշտունյաց իշխանության երկիրն արդեն հասած լինին. ինչպես և եղավ։ Նույն գիշերը մտան Բաղեշ հանգիստ և զվարթ՝ ինչչափ որ դառն հիշատակներ կը ներեին Գրիգորի զվարթ լինիլ։ Զավենի խորհուրդը այն էր, որ մինչև Ռշտունյաց Ոստանը հասնեին, չի հայտնե մարդու Գրիգորի էությունը. այս նաև Գրիգորի փափագն էր, որ մայրը կորսնցնելեն վերջը՝ յուր բոլոր սիրտը Թենիի վրա դարձուցեր էր և չի համարձակելով ումեք հայտնել յուր սերը՝ անձամբ կ'ուզեր երթալ տեղեկանալ։ Ուստի այն գիշեր Բաղեշ անցնելեն վերջ՝ երկրորդ առավոտուն ելան ճամփա՝ ուղղվելով դեպի Ոստան։ Քանի՛ կը մոտենար Գրիգոր յուր նպատակին, երկյուղը սրտին կը տիրեր, նախանձը, որ միգո՛ւցե Թենի իրմե հուսահատ՝ ուրիշի մը յուր սիրտը տված լինի, զինքը կ'ուտեր։

Հինգ օր ուղեգնացութենե վերջ մտան Ոստան։ Թեոդորոս հոն չէր. ձմեռային դահլիճը զիրենք տարին սպասավորք և ահա մեր հին բարեկամը՝ Հուսիկ եկավ ողջունելու հյուրերը և տեղեկանալու իրենց որպիսության վրա։ Գրիգորի մթագույն հագուստները, յուր դեռաբույս մորուքը բավական էին, որ Հուսիկ չհիշե երիտասարդը. ուստի երբ իմացավ, թե Գրիգոր Մամիկոնյան գերութենե ազատյալ եկեր է, գնաց Ռշտունյաց Տիկնոջ իմացնելու։

Բոլոր պալատը շուտ մը տարածվեցավ այդ գալստյան համբավը, Սեթա շատ ազնիվ և քաղցր ընդունելություն ըրավ Գրիգորի, երբ մորը խոսքը բացվեցավ և Գրիգոր արտասուքը կը ջանար սանձելու, ինք նաև փղձկելով, «Որդյակ Գրիգոր,— ըսավ,— արտասուքե մ'ամաչեր, ամեն քարե, ապառաժե սիրտ ունեցող անզգաները մի՛ կարծեր, թե քաջասիրտ կը լինին. ահա՛ մեր Հուսիկը, աշխարհք ջարդուկոտոր որ լինի, կաթիլ մը արցունք չունի, բայց մերկ սուր մը տեսնելուն ձեռքն ու ոտքը կը դողա»։

Տիկինը խոսքը փոխելու և միանգամայն տեղեկանալու համար սկըսավ հարցնել նորա գերության կյանքին համար, երբ Թենի ներս մտավ՝ յուր տասնյոթ տարիներու գեղեցկությամբ։ Գրիգորի աչքերը շլացան. Թենի աճել էր, և յուր գեղեցկությունը նույնպես հետն էր աճել. այլայլությունը, փափուկ, թեթև կարմրություն կը բերեր իր երեսին, և իր լու-

սալիր աչքերը ուրախության և միանգամայն սպասող ու հուսահատ տխրության կնիքը կը կրեին։ Մութի արագությամբ բաղդատություն ըրավ խեղճ երիտասարդը յուր արաբական աբևեն, խորշակեն, սառնաշունչ քամիներեն այրած երեսին, յուր դժնդակ գերութենե, ճանապարհորդությանց, սրտադողներե, վտանգներե հալած-մաշած մարմնուն և յուր անձը շատ ստորին գտնելով՝ ամպ մը աչքերը պատեց։ Բայց երբ Ռշտունյաց Օրիորդը եկավ ձեռքեն բռնեց, և բավական միջոց ժամանակի հետը խոսելով՝ զայն սդմեց, քաջալերվեցավ և Տիկնոջ հարցմունքին պատասխանելով՝ նկարագիրն ըրավ չորս տարվան կենաց, որ կարելի էր զրուցել տանջանաց։ Տեսավ Թենի, որ գաղանի աչքերը կը սրբեր, և երբ գերութենե ազատյալ արաբացի խումբերու հետ իրենք երեք՝ տառանի-քսանի դեմ նկարագիրն էլ ըրավ, կը տեսներ Թենիի կերպարանքին այլայլությունը և երբ Եփրատե անցնիլ ու կատարյալ ազատություն գտնելը պատմեց՝ տեսավ նորա ուրախությունը, սիրտ առավ, և հատ համոզմունք մը եկավ սրտին, թե Օրիորդը զինքը կը սիրեր դեռ։

Բայց մյուս կողմեն Սեթա նաև սրատես աչքեր ուներ։ Այդ առաջին անգամ նշմարեց եթե ոչ սեր յուր աղջկան և երիտասարդին մեջ, գոնե համակրություն։ Եվ այս համակրության ինք հակառակ չէր, վասնզի Գրիգորի արժեքը թեթև կերպով չէր շատեր, այլ կը նայեր վայելուչ և համեմատ հասակին հետ դիմաց գեղեցկության, որու վրա օդոց խստությունը թույլ հարվածով անցեր և առնացի կորով բերելով՝ կռնացի մեղկության ստվեր չէր թողեր։ Նույնպես դիտեց և կշռեց նորա մտավոր կարողությունը. որովհետև բոլոր այդ պատմության մեջ Սուքենի արժանավոր գովությունները տալով՝ երիտասարդը երբեք յուր անձին դատաստանքի փայլ չի տվավ։ Իսկ ուրացության մասը Գրիգորը լռությամբ անցավ, վասնզի այդ, որ յուր սրտին վրա կը ծանրանար, հակիվ թե առանձին քահանայի մը խոստովանելու քաջությունը կ'զգար, իսկ բազմության մեջ աշխարհաքարող լինիլ կարողությունեն վեր էր։

Թեպետ Գրիգոր Թենիի սիրույն վրա սկսավ հուսալ, թեպետ Սեթայի համակրությունը կը տեսներ, որ իր վրա մոր խնամք կը ցցներ, բայց գժբախտության բովուց մեջ փորձյալ՝ հազիվ թե հասակին գարունքը ոտք դրած հայր, մայր, քույր, ազատություն, ստացվածք, իշխանություն, վերջապես ամեն բան իրարու վրա կորուսած՝ և որ ավելին է յուր ամենամերձ համասերունդ ազգականները տեսնելով, որ յուր մահվանը կը փափագեին և յուր կենդանությանը զիրենք թշնամի նկատելով պարտավորյալ էր փախստյամբ իրենցմե հեռանալ, շրջահայաց կը մտածեր, թե միգո՞ւցե խաբվի՝ աղջկան և մոր կարեկցությունն ու գութը սիրո փոխանակ առնելով. ուստի հուսո և երկյուղի մեջ տատանյալ սիրտը կը

ծփար, և դիպող ժամուն կ'սպասեր Թենին առանձին տեսնելու։ Բայց ամավան եղանակին մեջ չէինք։ Ոչ պարտեզ կար, ոչ ծաղկոց, ոչ ծովու հանդարտ գեղեցկություն, ոչ լուսնի քաղցր նշույլ, բոլոր հույսը գրքատան վրա էր, ուր թերևս կարելի լիներ առանձին տեսություն մը ունենալ։

Երեկոյին ընթրեցին. Զավեն այս եղերգին բոլոր պատմությունը, որուն ինք ականատես էր և որ իրեն կը վերաբերեր, պատմեց պարզությամբ, և ամենքը արտասուքով լսեցին. Հուսիկ նաև հետաքրքրությամբ ուշ կը դներ ամեն պարագայից. և երբ կեսգիշեր եղավ, և Գրիգոր իրենց ի Տարոնո խոհեմությամբ հեռանալը պատմեց ու լռություն հաջորդեց՝ Ռշտունյաց Տիկինը կանգնեցավ, և ամենքը ոտք ելան. «ժամանակն ուշ է, որդյակ Գրիգոր,— ըսավ մոտենալով,— մենք մոռցանք քու ճամփորդության հոգնությունդ. հանգիր այս գիշեր, վաղը և ձմեռվան մնացորդն ունինք տեսնվելու համար։ Իշխանը քանի մը օրեն կուգա, կ'իմանա քեզ դեմ եղած անիրավությունքը, յուր արդար հոգին չի կրնար հանդուրժել զրկանաց. անտարակույս յուր բոլոր կարողությամբ իրավունքդ պիտի պաշտպանե, և քու բոլոր քաշած նեղությունքդ ժամանակը պիտի մոռցընե։ Ես շատ ուրախ եմ, որ հորեղբորդ անիրավությունը Ռշտունյաց հովանվուն դիմելու քեզ բերավ, դու՝ իմ սիրելի և սուրբ բարեկամուհվույս զավակն ես, մի՛ զարմանար, եթե մոր մը սիրտ զգամ քեզ համար, և կը փափագիմ, որ այս վիշտերուդ երջանիկ օրեր փոխանակեն»։

Այս քաղցր խոսքերուն Գրիգոր իշխանուհվույն ձեռքը միայն պագնելով պատասխանեց։ Երբ նա Օրիորդին հետ յուր սենյակները քաշվեցավ, Հուսիկ տարավ զԳրիգոր և Զավեն իրենց համար պատրաստյալ սենյակները, ուր չորս տարվնե վերջ Գրիգոր կը գտներ փեսրալից անկողին, գիշերային զգեստներ և իշխանական կենաց ամեն դյուրություն, որ Վարդանաբերդի վերջին երեկոյեն ի վեր բոլորովին մոռցեր էր։ Բայց Գրիգոր չի մոռցավ զԳապրիկ՝ յուր գերության և ճամփու ընկերը, Հուսիկի հետ գնաց զինք տեսավ, որ թիկնապահաց հետ հանգիստ կը խոսեր, և նորա մասնավոր խնամոց հանձնեց պատվական մարդը, ու գնաց մտավ յուր խուցը։

ԳԼՈՒԽ ԻԱ

Առավոտուն երբ արթնցավ Գրիգոր, ձմեռվան արևու ճառագայթները սենեկին պատուհանները կը լուսավորեին. Աղթամարա ծովակը կը փալփլեր, բնությունը կենդանություն էր առեր։ Շուտ մը ելավ և երբ

հագվելու եղավ՝ զարմանքով տեսավ, որ յուր տխուր զգեստներն անհետացեր և տեղը իշխանազնի մը վայել զգեստներ դրված էին։

Հայտնի էր, թե Սեթա չէր կամեցեր, որ իր հյուրը ստորին վիճակի մարդկանց զգեստներով երևա, ուստի հագվեցավ և բնական գաղտնի գոհությամբ նաև, վասնզի սիրահար երիտասարդ ինչչա՛փ փիլիսոփա որ լիներ, Թենիի վայելուչ երևել կը փափագեր։

Բայց երբ դահլիճը մտավ, զարմանքով մնաց, իշխանուհվույն քով նստած էր Ատոմ Շահունի և նոցա քով՝ Թենի։ Գրիգոր, որ ամենևին տեղեկություն չուներ ծեր զորավարին և Ռշտունյաց Օրիորդին մտերմության և չէր կրնար ըմբռնել այդպիսի ընտանություն՝ վասնզի դաժան ծերուն երկայն, չոր և դեղնած մատներուն մեջ կորած կը տեսներ աղջկան փափուկ ձեռքը և ինչչա՛փ պիտի զարմանար, եթե մեկն ականջեն գար ըսեր, թե՝ «Այդ ահարկու ծերը միայն գիտեր իրենց սիրույն գաղտնիքը»։ Բայց առանց հայտնի ընելու յուր զարմանքը՝ ողջունեց հարգանոք ամենքը, և Սեթա, որ զբաղած էր նույն միջոցին նամակ մը կարդալու, գլուխը վեր առնելով՝

— Զորավար,— ըսավ,— կը ճանչե՞ս Մամիկոնյան Գրիգոր իշխանը, Դավթի որդին։

Ատոմ, բոպե մը զննելեն վերջ, յուր քաղցր ձայնով՝

— Տղա՛,— ըսավ,— դու Սարյակի պատերազմին չէի՞ր Կամսարական Սուրենի հետ։

— Այո՛, զորավար։

— Ես քեզ կը հիշեմ, դու լավ կռվեցար տարիքիդ համեմատ։

Այս գովությունն ընելե վերջ վայրկյան մը կեցավ ծերը և, Թենիին դառնալով, ավելցուց.

— Լա՛վ տղա է։

Գրիգոր հազիվ կրցավ այս վճռին վրա յուր ծիծաղը սանձել՝ վասընզի այն յուր առաջին արշավանաց օրերը ծերը տեսեր և ճանչեր էր, և այսչափ խոսք նորա բերնեն կ'իմանար, թե մեծ գովություն էր։ Լսեր էր նաև, թե ծիծաղի և շատախոսության մեծ թշնամի էր նա։ Ուստի լուռ կեցավ. իսկ ծերը անշարժ կենալեն վերջ՝

— Սուրենե լուր ունի՞ս,— հարցուց։

— Մեկտեղ էինք Դամասկոս, ճամփան մեր փախստյան ժամանակ արաբաց խումբ մը զմեզ բաժնեց. մենք Սփրատե անցանք, նա Կոմակենի ճամփան բռնեց, անկից վերջը լուր չունիմ։

— Քաջ մարդ է նա,— ըսավ ծերը դարձյալ Թենիի դառնալով։

Իսկ Սեթա, որ յուր նամակին ընթերցմունքը վերջացուց, դարձավ երիտասարդին.

— Ահա իշխանեն նամակ բերավ զորավարը. կը գրե, թե ամիսի մը չափ ժամանակ դեռ պիտի ուշանա, վասնզի Պոլիս մեծ խռովություններ են այս քանի մը ամսվան մեջ, Կոստանդին կայսրը թունավորված Մարտինե մորեեն մեռեր է, և տեղը յուր փոքր եղբայրն է թագավորեր։ Հիմա ժողովուրդը և զորքը ապստամբեր են, օրինավոր ժառանգը՝ դեռ սպատանի մը, նստուցեր են աթոռը։ Իշխանը կը հուսա և կը գրե, թե Բագրատունյաց Ասպետին աղատությունն այս անգամ ապահով է, վասնզի աքսորանաց դարձին հրովարտակը ելեր է. և թե իրեն բարեկամ հայազգի մը զորավար կարգված է Կարնո հունաց բանակին. ուստի ինք Թեոդոսուպոլիս պիտի երթա նախ իրեն հետ տեսնվելու և հետո պիտի դառնա հոս։

— Եթե իշխանն ուշանա՝ ես ի՞նչ պետք է ընեմ, իշխանուհի,— հարցուց Գրիգոր։

— Այդ բանին համար ամենևին հոգ մ'ըներ. ես քեզի համար զբաղմունք կը գտնեմ։ Ահա ուրիշ նամակ մ'էլ կա, որ Արծրունյաց Սահակ իշխանը կը գրե և գունդ մը զորք ինձմե կը խնդրե Մարդաստանի յուր զորաց օգնության պարսիկ ասպատակաց դեմ։ Վարդ եթե այստեղ լիներ, նա կ'ուղարկեի, որովհետև հորը հետ է, դու էլ, որ իմ զավակս ես, քեզ կ'ուղարկեմ, եթե հանձն կ'առնուս։

— Ամենայն սիրով, հիմա, եթե կը հրամայեք։

— Այսօր անկարելի է, վաղն առավոտ ամեն բան պատրաստ կը լինի, և ճամփա կ'ելնեք։

Գրիգորի հաճույքը մեծ էր, օգտակար լինելու ուրախությունը կ'երևվեր երեսին վրա։ Իսկ ծեր զորավարը, որ անխոս կը նշմարեր այդ երևվույթը, մեծ ախորժով իմացավ, և կամաց մը գլուխը կը շարժեր, որ յուր սովորությանց մեջ «բարի նշան է» ըսել էր։ Թենի յուր կերպին մեջ ոչինչ նշան հավանության կամ ոչ հավանության չէր հայտներ։

— Հիմա այս նամակիս մեջ կան քանի մը մութ և անհայտ բաներ, որ Ատոմ զորավարեն կ'իմանաս՝ կըսե գրիրը. ուրեմն այդ նեղությունը հանձն առնելով ինձ պիտի բացատրես, իշխան։

Ատոմ Թենիի ձեռքը թողուց. սա ոտք ելավ և հարցուց ծերուն ժրպտելով.

— Մենք երթա՞նք ուրեմն, հայրիկ։

— Հը՛,— ըսավ ծերը աննշմարելի կնճիռով մը, որ ծիծաղ կը նշանակեր և միայն Թենիի պահած էր։

Գրիգոր այն ատեն ինքն էլ դուրս ելավ, և Թենի ըսավ.

— Գրիգոր իշխան, մի՞ոք է այն ժամանակը, որ մեր գրքատունը շտկեցիր, կարգի դրիր։

— Այո՛, Օրիորդ, և այն ժամանակեն վերջը, ինչպես ամեն սիրելի բանե զրկվեցա, գրքի տեսութենե նաև զրկված մնացի։

— Ինձմե զատ այդ խեղճ զրքերուն այցելություն ընող չի մնաց այն ատենեն ի վեր։

— Միատեղ այցելություն մ'ընե՞նք,— հարցուց Գրիգոր։

— Ես էլ այն կ'ուզեի, մանավանդ, որ դու վաղը պիտի թողուս զմեզ, և այնչափ ուրախությամբ։

— Այդ ուրախությունը՝ մինչև այսօր անօգուտ կյանք մը Ռշտունյաց տան ծառայությամբ օգտակար ընելու փափագն է։

Եվ երբ մտան գրոց սենյակը, երկու երիտասարդ սրտերը կը բաբախեին, և Գրիգոր նորա սիրելի ձեռքը հափշտակելով երկայն համբույր մը երբ դրոշմեց, Թենի հարցուց ժպտելով և ինքզինքը սանձելով.

— Ուրեմն զիս չե՞ս մոռցեր, Գրիգոր։

— Կարելի՞ էր զքեզ մոռնալ։ Ի՞նչ մնացել էր ինձ աշխարհքիս վրա, եթե քու հիշատակդ չլիներ, այն մեր վերջի գիշերը երջանկության, որու վրա այնպիսի սոսկալի խավարմունք մը պիտի տիրեր... Իմ գերության շղթաներուն միմիայն կասկածելի, մանավանդ թե հաստատ հույսը այն էր, որ Թենի թերևս զիս չէր մոռցեր և կը սիրեր, այդ միայն կենաց կապ մնացեր էր աշխարհքիս վրա։

— Խե՜ղճ Գրիգոր, և կը կասկածեի՞ր իմ սիրուս վրա։

— Ներե, Թենի։ Այնչափ հարվածք և այնչափ ոստիկ իրարու հաջորդեցին, որ կարծեցի, թե իմ թշվառությանս փուշե պսակը այն միայն մնացեր էր, սրտատրոփ ահուդողով կը նայեի Ռստանի աշտարակներուն։ Մինչև որ զքեզ չի տեսա երեկ և լուսալիր աչքերդ հույս չի տվին և ձեռքդ ինձ չի խոսեցավ... ո՜հ, զլուցեմ անգամ մ'էլ թե կը սիրեմ։

— Այո՛, կը սիրեմ և միայն զքեզ կը սիրեմ։

Այս խոսքերուն երկար գրկախառնություն մը հաջորդեց, մինչև որ Թենի ցնցվելով ելավ Գրիգորի բազկաց մեջեն, և նստելով բազմոցի մը վրա՝ աթոռ մը ցցուց Գրիգորի, որ սիրով հափշտակյալ կ'ուզեր քովը մոտենալ, և այնպիսի հրամայական ձեռով ցուցամատով կրկնեց հրամանը և՝

— Մի՛... այդ աթոռին վրա,— ըսավ։

Որ Գրիգոր կաշկանդյալ ակամա նստավ, ուր հրամայեց սիրուհին և բեկյալ՝

— Անգո՛ւթ, մի՞թե այս վայրկյանը նորեն կը դառնա՞,— ըսավ։

— Աստված, որ այս վայրկյանը բերավ, ավելի երջանիկներն էլ կը բերե, ես քու մահվանդ վրա ինչչա՛փ արտասուք թափեր եմ և կ'ուզեի

կուսանալ, բայց հույսը զքեզ տեսնելու, ծնողաց դիմադրությունը և Ատոմ հայրիկի հորդորները...

— Ո՞վ է Ատոմ հայրիկ, ծեր զորավարը մի՞թե։

— Այո՛, նա ամեն բան գիտե, նա միայն իմ մտերիմս է։

— Ի՞նչ կ'ըսես, մի՞թե կարելի է այդ դաժան ծերը...

— Այդ դաժան ծերը ինձ համար ամենաքաղցր հայր մ'է, նա զիս կը մխիթարեր քու կորստյանդ վրա, վասնզի նա միայն գիտեր, թե ես կը սիրեմ զքեզ։ Հիմա քաջ եղիր պատերազմի մեջ, բայց մի՛ մոռնար ինքզինքդ պահպանել Թենիդ համար։

— Ո՜հ, ի՜նչ երջանկություն, դու զիս այսչա՛փ կը սիրես, Թենի։

— Ինչչա՛փ որ կրնամ սիրել։ Բայց դու այդ քու քեռվույդ՝ սքանչելի մարդուն՝ Սուրենի մեր սիրուն գաղտնիքը չէի՞ր հայտնած։

— Ինչպե՞ս, ի՞նչ երեսով հայտնեի շղթայակապ և անհույս գրեթե, եթե իմ երազներս զրուցեի, ապահով էի, որ զիս պիտի ծաղրեր։

Այս խոսակցության մեջ Գրիգորի աթոռն այնչափ մոտեցեր էր բազմոցին, որ յուր ծունկերը Թենիի ծնկվներուն սկսեր էին դպիլ։

— Հիմա էլ, սա գրադարանին մեջեն,— ըսավ Օրիորդը հատոր մը ցցնելով,— այդ գիրքն ինձի տուր։

Գրիգոր գնաց գիրքն առավ, և երբ դարձավ, տեսավ, որ աթոռն իր առջի տեղը դրված էր, Թենիի նայեցավ, որ ժպտելով՝

— Ապահով եղիր, զրուցեց, որ Ատոմ հայրիկ ո՛ւր որ է կուգա, հիմա զմեզ կը գտնե. ուստի տեղդ հանգիստ նստե։ Իսկ այդ գիրքն ա՛ռ, մի՛ բանար, մի՛ խախտեր մատենակապը, մի՛ կարդար, դիր քու պայուսակիդ մեջ, մինչև որ վաղը ճամփա ելնես։ Խոսք տո՛ւր։

— Մեր սիրուն վրա խոսք կուտամ. և եթե կ'ուզես, հիմա կուտամ Զավենի, որ պահե և ան ատեն միայն ինձ տա...

Այս միջոցին դուռը ճռնչեց, և Ատոմ ներս մտավ։

— Խոսքերնիդ վերջացա՞վ, հայրիկ,— հարցուց Թենի։

— Այո, հիմա դու գո՞հ ես, Թենի։

— Շատ գոհ եմ, հայրիկ, և քու մխիթարությանդ համար էլ շատ շնորհակալ. դու զիս քաջալերեցիր և քեզմե զատ մտերիմ ոք չունեի։ Քեզնե ի զատ էլ մարդ չի կա, որ մեր սիրուն գաղտնիքը գիտնա։

Ատոմ ժպտեցավ ըստ յուր սովորության և վերջը, Գրիգորի մոտենալով, ձեռքը սուրին դրավ և ըսավ.

— Դավթի որդի, այդ գիրքը թո՛ղ. պատերազմի կ'երթաս, քաջ եղիր, խելոք եղիր։ Հիմա այնտեղ կը գտնես Արծրունյաց Սահակը, քու զորավարդ է՝ հնազանդե որպես աստուծո. բայց նույնպես քեզնե վար զինվորե նույն հնազանդությունը պահանջե։ Խիստ, բայց արդար եղի՛ր։

Քաղցր, անուշ լեզու մարդոցմե վախցիր, հեռու պահե քեզնե։ Այդպիսյաց մեծ մասը, եթե ոչ ամենքը, կեղծ և անարգ շողոքորթներ են։ Քաջերը վարձատրե. վատերը պատժե առանց գթության, զինվորը պետք է թշնամիեն ավելի յուր զորավարեն վախե, բարի օրինակ քաջության, վտանգն արհամարհե, զինվորը երբ կը տեսնե, թե զորապետը չի վախեր մահվնե, ինքն էլ կ'արհամարհե մահը. հաղթության և հաջողության բոլոր գաղտնիքը հոն է։ Միշտ միտքդ լինի, և գիտցիր, որ ես այսօր քեզ համար երաշխավոր եղեր եմ իշխանուհվույն և ըստ այնմ շարժե։ Թող, ուրեմն, այդ գիրքը։

Գրիգոր Թենիի նայեցավ, և սա՝

— Հայրիկ, այդ գիրքը պատմական գիրք մ'է, Մամիկոնյանց պատերազմն ու քաջությունը կը պատմե. ես տվի Գրիգորին։

— Լա՛վ, եթե դու տվիր, Թենի։— Ուրեմն պահե, քու նախնյացդ պես եղիր. հիմա դու իջիր, իմացիր, թե ինչչա՛փ մարդ քեզի հետ պատերազմի պիտի երթա, ո՛ւր Արծրունյաց գունդին հետ պիտի միանաս, քանի՛ օրվան պաշարի պետք ունիս, զորքը լավ զենք, վերարկու, ոտքի ման ունի՞ն. քանի որ այստեղ ես, ամեն բան լավ կարգի դիր, վերջը կը զղջաս։ Գիտցիր, որ այս Ռշտունյաց տան մեկ հատիկ՝ միմիայն անքավելի մեղքը դու չես ճանչեր, Հուսիկ անուն ժլատ մի է. ի՛նչ բանի որ պետք ունիս կամ կրնաս ունենալ, պետք է ո՛չ ուզես, այլ բոնի առնուս և աչացդ առջև և այնպես ճամփա ելնես. եթե չես ուզեր, դու էլ, զինվորդ էլ անոթի կը մեռնիք. գնա՛, մանրամասն ամեն բան իմացի՛ր. ձի, գրաստ, պաշար, պարեն, ինչ որ պետք կա, ա՛ռ. այդ անպիտան ավազակին խոստմանց մի՛ հավատար։

— Շատ շնորհակալ եմ, զորավար, տված խրատներուդ, երթամ, ուրեմն, նախ իշխանուհին տեսնեմ։

Երբ Գրիգոր դուրս ելավ, ծեր զորավարին խրատներուն ճշտությամբ հետևեցավ. չորս հարյուր հոգվո խումբ մը իրեն կը հանձներ Ռշտունյաց Տիկինը, նոցա ամեն պետքը գիր առած՝ գնաց Հուսիկի հետ խոսեցավ քաղցրությամբ՝ շոյելով անուշ, սպառնալիքներ ըսելով և նորա հոգիեն ու սրտեն հաջողեցավ յուր ամեն ուզածը փրցնել։

Երկրորդ առավոտուն Թենի Ոստանին պատշգամբեն կը տեսներ երիտասարդ զորավարը, որ նավերու վրա բարձած յուր փոքրիկ խումբը և նոցա պիտույքը կը նավարկեր Աղթամարա ծովուն արևելյան, հյուսիսային կողմը, և երբ հեռացավ առավ Զավենի ձեռքեն Փարպեցիի հատորը, և գրքին վերջի պարապ էջերը գտավ մանր, փոքրիկ, գեղեցիկ գրերով հիշատակարան մը այն ամեն հուսահատական և տխուր զգացմանց, որ ունեցեր էր Թենի այն չորս երկայն տարիներու բաժանման,

ուր երբեմն իր սիրելույն մահը կողբար, երբեմն հուսո նշույլ մը կ'զգար, երբեմն միանձնուհի լինելու փափագներ կը հայտներ, երբեմն զինք հարսնության ուզող երիտասարդաց վրա դատողություններ կըներ։ Վերջապես այդ գրության մեջ կը տեսներ Գրիգոր աղջկան հաստատամտությունը յուր սիրույն վրա, և այդ չորս տարվան միջոցին յուր մտավոր կատարելությանց զարմանալի զարգացումը մարդիկ և երկիրը դատելու վրա։

Ո՞վ կրնա պատմել Զավենի ուրախությունը, որ կը տեսներ Գրիգոր հրամանատար փոքր խմբի մը, որ հառաջաբան և սկիզբն կը համարեր յուր իշխանիկին. արդեն ինք, առանց Գրիգորի և Թենիի սիրույն գաղտնյաց տեղյակ լինելու, յուր մտքին մեջեն հավանություն տվեր էր նոցա ամուսնության, և իրեն համար այդ ժամանակի խնդիր էր. ուստի մինը կարդալով և մյուսը երազելով, և երկուքն էլ մեկ-մեկ քիչ քուն լինելով՝ հասան Բերկրվո մոտ ցամաքը և անկից ուղևորեցան Մարդաստան, ուր գտան Արծրունյաց նախարարը, որ առաջ Գրիգորի երիտասարդության խորհրդածեց մտքեն, երբ նորատեգ մորվոք երիտասարդ մը տեսավ. բայց երբ փոքրիկ խազմեր տեղի ունեցան, և տեսավ տղուն շրջահայաց հանդգնությունը, գուշակության ոգին, որ թշնամյաց ամեն շարժմունք կը նախատեսեր և կը հարվածեր, ուղղության և արդարության ոգին, որ մեծին ու պզտիկին վստահություն կը բերեր, յուր գունդերն էլ իրեն հանձնեց ու գնաց Վանտոսպ։ Եվ լի գովությամբք շնորհակալության նամակ մը գրեց Ռշտունյաց Տիկնոջ՝ յուր ընտրությունը շնորհավորելով։ Իսկ Գրիգոր, Արծրունյաց նախարարին հեռանալեն օգուտ քաղելով, հարձակեցավ մինչև Կապուտան ծով, սարսափ ձգեց բոլոր մեծ ու պզտի բռնավորաց վրա, որ Պարսից տերության իշնալեն անիշխանության հետևանք և ծնունդք էին, և գարնան հետ ետ դարձավ Ռշտունիք հաղթանակավ և մեծ ուրախությամբ, բայց ուրախությունը տրտմության փոխվեցավ։

ԳԼՈՒԽ ԻԹ

Թեոդորոս Ռշտունի յուր անվանակից Թեոդորոս Երիզացվո հունաց արևելյան բանակի սպարապետին գալստյան կ'սպասեր և մեծ հույս ուներ, որ Վարազտիրոց Բագրատունի նաև, որուն հաքսորանաց դարձի հրովարտակն ելած էր, միատեղ դառնար Հայաստան ընտանյոք, և այն ժամանակ յուր ամեն խորհուրդներն ի գլուխ հանել կը դյուրանար առանց շփոթության և արյունահեղության։ Այն ձմեռվան սկիզբն, յուր Վարդ

որդին Սյունյաց Օրիորդին հետ նշանեց և խումբ մը զորքով Սյունյաց և Աղվանից օգնության ղրկելով ի Դաբանդ՝ մնացյալ զորքը Ատոմ Շահունիի հետ արձկեց ի Ռշտունիս։ Աղգին մեջ եկեղեցականաց և աշխարհականաց անկարգությունք հաճախյալ լինելով՝ ժողով կարգեցին Ներսես կաթողիկոսի հետ ի Դվին, ուր բազմություն եպիսկոպոսաց և իշխանաց գումարյալ՝ կանոններ սահմանեցին բարեկարգելու համար եկեղեցին, սանձահարելու անիշխանութենե առաջ եկած անկարգությունքը, ուր Թեոդորոս կը ջանար ժողովականաց ոգին իմանալ և պատրաստել, թե ո՞ր աստիճանի կրնային իր դիտավորությանց հարմարիլ։

Փոքրիկ գունդ մը հետն առած Այրարատ, Գուգարք, Տայք շրջան ըրավ, անտից եկավ Բարձր Հայոց նահանգը, մտավ Կարին։ Հոն հասավ և իմացավ, թե Մարտինե և Երակլյակ աթոռեն իյնելով, Կոստանդ յուր հոր սեղ թագավորեր էր. և զԹեոդորոս Երիզացի պահելով, Թումա անունով զորավար մը նորա տեղ անվաներ էր, և թե Բագրատունի Ասպետը շատ պատվով ընդունվեր էր կայսրեն ի մայրաքաղաքն։ Եվ անմիջապես սուրհանդակ մը դարձյալ կիմացներ նամակով Թումայի կայսերական բանակի ընդհանուր սպարապետի կողմեն, թե հասնելով Տրապզոն և արդեն հրամայած լինելով բոլոր Փոքր Ասիո զորաց Եկեղյա գավառը ժողովիլ, շատ քաղցր խոսքերով և մեծ գովությամբք Թեոդորոսի քաջությունքը բարձրացնելով փափագ կը հայտներ իրեն հետ խորհրդակցիլ և պատերազմը ըստ այնմ կարգադրել։ Նույնպես նամակը հիշատակության արժանի կը համարեր Պրոկոպիոսի հիմար հանձնապաստանությունը, որ քանի մը տարի առաջ արհամարհելով հայ զորավարին իմաստուն խորհուրդները, այնպիսի պարտության դիպելով հռոմեական պատիվն ու դրոշակները, նախատեր էր և երկրին ավերակաց ու կործանման պատճառ էր եղել, կիմացներ նաև, թե նոր կայսրը զԹեոդորոս Երիզացի չուզելով հեռացնել անձեն՝ նորա խորհրդով զԹումա ընտրեր էր այս պաշտոնին և հույս ուներ, թե սիրով և միաբանությամբ գործելով միասին մեծ փառաց պիտի հասնին թե՛ ինք և թե՛ հայոց զորավարը։

Այս նամակն առնելով Ռշտունին, շուտ մը ելավ Կարինեն և առանց ժամանակ կորսնցնելու հասավ Երիզա, ուր հունաց քանի մը հազար զորք ժողվված գտավ, և հունաց զորավարաց քաղաքավար հարգանոք ընդունելությունը զինք բոլորովին ապահովեցին։ Մինչև որ Թումա մեկերկու օրեն հասավ պոնտացի զորքերով և ամենայն բյուզանդական կեղծավորությամբ շնորհակալությունք հայտնեց նորա գալստյան, և թե ինք ինչպես որոշած էր առանց նորա խորհրդյան շարժմունք մը անգամ չընելու։

Հայոց զորավարը, եթե ի ձեռին չունենար այդ վերոհիշյալ նամակները, մանավանդ Երիզացիեն, ամենևին չէր վստահեր հունաց, բայց նա հավատարմության արժանի մարդ էր. ուստի հանհոգս և զբաղյալ էր արաբաց արշավանքին վրա խորհրդակցելով հույն զորավարաց հետ, երբ հանկարծ քանի մը հարյուր սպառազեն շրջապատելով յուր վրանը՝ հայ իշխանը զինաթափ ըրին և, առանց ամաչելու, ոտքերը, ձեռքերը շղթայեցին, և այն ատեն միայն երևցավ Թումա՝ երգիծանք և ծանականք երեսաց և շրթանց վրա նկարյալ։

Թեոդորոսի սրտին մեջ երկյուղ ըսված բանը մոտք գտած չէր, վասնզի մահն արհամարհել յուր սովորությունն էր ի տղա տիոց, բայց երբ միտքը կուգային ընտանիք, որ իրեն կ'սպասեին, ազգն անտերունչ, որու վրա մտածողք շա՛տ քիչ էին, հունական դավաճանությունը յուր բոլոր անարգությամբ, արաբաց մոլեռանդն անգթությունը յուր բոլոր կատաղությամբ, հայ նախարարաց հիմար շահասիրությունը, որ հասարակաց օգտին իրենց շահը ընկերացնելու մեջ չէին հասկնար իրենց անձանց և իշխանության ապահովությունն և փրկությունը, իրեն այնպիսի դառն խորհրդածություն կը պատճառեին, որ և ոչ Թումայի անարգ կերպարանաց ակնարկություն ձգել և իր կերպը նշմարել միտքն ինկավ, այլ նույնպես անտարբեր նայեցավ, ինչպես զբաղյալ մտոք ոք կը նայի անտաշ քարի և հասարակ կոճղի վրա։

Թումա այս նայվածքը արհամարհանաց վերջին աստիճան համարեց և ուզեց ավելի սաստիկ պատասխանել.

— Քու մի՞տքդ է, հա՛յ,— ըսավ,— այն օրը, որ Պրոկոպիոսի՝ հույն սպարապետի մը դեմ համարձակեցար բերան բանալ և իր արդար բարկությունն այն ատեն գրգռեցիր, որ մինչև յուր գավազանը դասալիք փախստականիդ ետևեն նետել պարտավորվեցավ։ Ես այնտեղ ներկա էի։

Թեոդորոս ոտից գլուխ ակնարկ մը նետեց միայն անարգ մարդուն վրա, ճիշտ նույն ակնարկը, որ կը նետե դավյալ սեգ առյուծը երկաթյա վանդակին մեջեն, երբ շուրջը կը պատեն ապուշ ամբոխ մը ամեն աստիճանի մարդկանց, որ յուր Ափրիկեի ոչ անապատները կը ճանչեն և ոչ սաղարթախիտ անտառները գիտեն, ուր յուր որոտալից ձայնը մարդ և գազան սարսռալից ծակասույզ կ'ընեն։

Այդ նայվածքը միայն Թեոդորոսի պատասխանն եղավ։

Նույն ժամույն հրամայեց Թումա ճամփա հանել հայ զորավարն ի Կոստանդնուպոլիս, ոչ թույլ ընել և ոչ դադար գիշեր ու ցերեկ, մինչև որ հանի մայրաքաղաք։ Նույն էր և Թեոդորոսի փափագը, որպեսզի ժամ առաջ վերջը գա այդ անտանելի վիճակին։ Սակայն ծանր էր իրեն համար երկու խոսք չի կարենալ ձգել իր տունը, միայն այն կը մտածեր

նույն միջոցին։ Իսկ Թումայի շտապը այն էր, որ լսեր էր, թե սույն այս Թեոդորոսի ցեղեն Դավիթ Սահառունի, այսպես դառնացյալ Մժեժ Գնունիե, յուր կապերը կոտրեր, ազատեր և սոսկալի հարված բերելով հունական զորքը խորտակեր և զՄժեժ յուր վրիժառու ձեռոք սպաններ էր։ Ուստի այս վտանգը հեռացնելու համար գլխեն՝ կ'շտապեցներ յուր կալանավորին երթը, շրջապատելով բազմաթիվ հեծելոք և խիստ սպառնալիք նոցա գլխավորին վրա դնելով. և պատվեր նաև ավելցնելով, որ փախստյան ամենափոքր առթի սպաննեն հայ իշխանը։ Այսպիսի հրամաններով՝ խումբը երբ հասավ Առյուծ գավառի Արորակ ավանը, հանգչելու պետք անհրաժեշտ լինելով՝ սենեկի մը մեջ բանտեցին զԹեոդորոս, որ քիչ մը բան ուտելով հազիվ քուն եղավ, դուռը բացվեցավ և երիտասարդ մը մտավ, որ ճրագ, թուղթ, գրիչ ի ձեռին՝ հարգանոք մոտեցավ, և քովը դնելով սեղանին վրա, մաքուր հայերենով ըսավ.

— Իշխան քաջ, եթե կ'ուզես վստահանալ հայ տղու մը, որ քու անունդ և քաջությանդ համբավը միայն լսելով զքեզ կը հարգե և կը սիրե, և Ռշտունիք հրաման մը կամ տեղեկություն մը տալ կը փափագիս, ես կենացս վտանգավ հանձն կ'առնում երթալ և տանիլ։ Եթե երդումը արժեք ունենար ժամանակիս մեջ...

— Մի՛,— ըսավ Թեոդորոս՝ քննիչ աչք մը ձգելով երիտասարդին վրա,— բավական է այսչափը,— և գրիչն առնելով քանի մը տող միայն գրեց և տվավ տղուն։ Նամակին մեջ այս միայն գրած էր. «Ռշտունյաց Տիկին Սեթա. ես հույն զորավարեն դավաճանյալ կ'երթամ Կոստանդնուպոլիս, բացի Ատոմ Շահունիե մարդու հավատարմություն մ'ըներ. կառավարե երկիրը ինչպես գիտես, վարժե զՎարդ կառավարության, ամրացու երկիրը և, եթե հարկ դատես, քաշվե Աղթամար, տեսնենք աստված ի՛նչ կ'ընե։ Թեոդորոս»։

— Պատվեր մը ունի՞ս, իշխան,— հարցուց երիտասարդը թուղթը գրպանը դնելով։

— Պատմե՛ վիճակս ինչպես որ կը տեսնես։

— Հուսամ հաստված, որ Կոստանդնուպոլիս հասնելեդ քիչ վերջ այս թուղթին պատասխանը կը բերեմ։

— Կարելի է,— ըսավ Թեոդորոս սառն ձևով։

Երիտասարդը այլևս չի խոսեցավ. ժողվեց իր բերածը, հարգանոք ողջունեց զԹեոդորոս, դուռը նույնպես գոցվեցավ և գնաց. և քանի մը ժամ վերջը, երբ Թեոդորոս կալանավոր կ'ելներ ճամփա իջնելու Կեռասուն, նա էլ հակառակ ճամփով Հայաստան Ռշտունյաց երկիրը կ'ուղղեր յուր ընթացքը։ Պետք չէ զարմանա ոք այս երիտասարդին վրա, վասնզի ինչպես եղած են և միշտ պիտի լինին անձնամոլության, ստության,

անզգամության հակամետ ոգիներ, նույնպես են և միշտ պիտի լինին ճշմարտին, բարվույն, գեղեցկին սիրահար ոգիներ, որ կրոնքի, հայրենյաց և ազնվական գաղափարաց մարտիրոսներն կը տեսնենք ամեն դարու մեջ։ Թեոդորոս՝ փորձառու մարդկային սրտին, ցուրտ դիմոք ընդունեց երիտասարդը, վասնզի կրնար դավաճան մը լինիլ, Թումայի պես սև հոգի մը ունենար, և նորա գործիք լիներ. բայց կրնար, և որ ավելի հավանական կ'երևեր իրեն նորա կերպարանքի պարզությունեն, ազնիվ ոգի մը տեր լինիլ, ուստի այդ տողերը գրեց և իրեն հանձնեց, որոց հայտնությունեն ոչ մեկ վտանգ չէր կրնար հառաջ գալ և որ գիտեր, թե Սեթա ի գործ պիտի դներ առանց այդ նամակին։

Ցոկանավ մը Կեռասուն իրեն կսպասեր, և որ գարնան առավոտ մը կանուխ հասավ կայսերական քաղաքը, մտավ ոսկեղջյուրե ներս և խարիսխ ձգեց. նավամատույցի առաջ քանի մը զինվորք միայն մնացին, իրենց գլխավորը և մեծ մասը թողին գնացին քաղաք։ Թեոդորոս այն ատեն հարմար ժամանակ գտնելով, երիտասարդ մը, որուն շահասիրությունը և ագահությունը առակի և կատակի նյութ եղած էր յուր զինվորակցաց, քովը կանչեց և իրեն ըսավ.

— Դու եթե ուզես, հիմա այս վայրկենիս կրնաս հարյուր ոսկի ստանալ առանց մեծ աշխատության։

— Մի՞թե,— հարցուց երիտասարդը զարմացած։

— Այո՛, և շատ դյուրավ։

— Խնդրեմ, իշխան, ինչպե՞ս։

— Այս նավակներեն մեկը կը կանչես, կը մտնես և կ'երթաս սա դիմացի ծովեզրը փոքրիկ եկեղեցվույն քովի պալատը, կ'ըսես, որ Թեոդորոս Ռշտունվույն կողմեն կուգամ՝ Ստրատելատին հետ պետք է տեսնվիմ, վայրկենին քեզ իրեն առաջը կը տանին, կը ցցնես այս նավը, կ'ըսես, թե Ռշտունին հոն է շղթայակապ և կը խնդրե, որ ինձ հարյուր ոսկի տաս։

— Եվ այդպես հարյուր ոսկին ինձ կուտա՞ն,— հարցուց երիտասարդը աչքերը մեծ-մեծ բանալով։

— Եթե դեռ ուշանաս՝ Ստրատելատ կ'ելնե կ'երթա, և ետքը իմ գալս երբ ուրիշեն իմանա, դու հարյուր ոսկին կը կորցնես։ Իսկ եթե հիմա երթաս, հարյուր ոսկին եթե ինք չի տա, ես քեզ երկու հարյուր ոսկի կուտամ։

Վայրկյան մը մտածեց տղան, բայց շատ չուշացավ, ցատկեց նավակ մը, և երբ ելավ ծովեզրյա պալատը, իրոք Ռշտունվույն անունը տալուն շատ չանցավ՝ հանեցին զինք ծեր զորավարին առջև, որ նույն ինք Թեոդորոս Երիզացին էր։ Կը պատրաստվեր նույն վայրկենին ար-

քունիք երթալու, երբ «Շղթայակապ այդ նավուն մեջն է» ըսավ տղան, ծեր Ստրատելատը ցատկեց տեղեն, եկավ պատուհանին քով և շկարենալով հավտալ, դարձյալ կը հարցներ, թե իրոք այդ նավուն մե՞ջն է շղթայակապ։ Իսկ երբ երիտասարդ զինվորը կրկնեց նույն պատասխանը, ձայն տվավ ծառաներուն և հրամայեց շուտով յուր նավակը պատրաստել ու ինք սկսավ փչնել սանդուխներեն։

— Բայց զքեզ չուզեց այդ հայ իշխանը, Ստրատելատ,— ըսավ տղան,— այլ միայն ինձ հարյուր ոսկի տալ խնդրեց։

— Դու այստեղ նստե, ետքը կ'առնուս քու ոսկիներդ, դու ուստի՞ ընկերացար Թեոդորոսի։

— Ես Երիզա բանկին մեջն էի, երբ Թումա զորավարը հայը կապել տվավ և մեր գունդին հրամայեց, որ մինչև հոս բերենք զինքը և հանձնենք Վաղենտինոսի։

— Ա՜յս կերպով կ'իմանա Թումա իր պաշտոնը. անմի՞տ...

— Իսկ հայը ինձ ըսավ, թե գնա հարյուր ոսկի ուզե իմ անունովս։

— Դու այստեղ նստե, ես հիմա կուգամ և հաշիվդ կը տեսնեմ։

Այս ըսելով՝ վեց թիակով նավակը մտավ և քանի մը վայրկյանեն ելավ ցոկանավին վրա, ուր Ռշտունին նստած այս նոր Բաբելոնին այս երկրորդ անգամ կը նայեր, երբ ահա յուր բարեկամ և անվանակիցը վազելով գիրկը դիմեց, և հրամայեց, որ նավուն դարբինը գա շղթաները հանե, որ նախատինք էին ոչ հայոց իշխանին, այլ նորա բարեկամաց։

Երբ պալատը դարձան մեր երկու Թեոդորոսք, Ռշտունվույն առաջի գործը եղավ երկու հարյուր բյուզանդական ոսկին վճարել տալ արծաթասեր զինվորին, և հետո այս խոսակցությունը տեղի ունեցավ երկու բարեկամաց մեջ. Երիզացին կ'ըսեր Ռշտունվույն.

— Շատ կը ցավիմ, որ իմ պատճառավս դու վստահացեր ես այդ անզգամ Թումայի. բայց լավ ժամանակի կը հասնիս քաղաքս, վասնզի քեզ պես քաջի մը պետք ունինք այս վայրկենիս։

— Ի՞նչ կը նշանակե այս խոսքը։

— Այն կը նշանակե, որ կայսրը տասնվեց տարու պատանի մի է։ Առաջին օրերը, երբ գահը նստավ, Փիլակրիոսի ազդեցությունն էր, որ կը կառավարեր, բայց քիչ-քիչ Վաղենտիոս, որ զինվորականաց գլուխն էր, զորաց թիվը շատցուց, այնպիսի բռնավորական ձև մը առավ, որ կայսրեր դեմառդեմ հրամայական կերպեր սկսավ գործածել, և այս օրերը շատ կասկած կա, որ հայանի ապստամբության դրոշ բարձրացնելով՝ ինքզինք կայսր հրատարակել նաև հանդգնի։

— Ինչչա՞փ զորք ունի այդ մարդը այդպիսի մեծ գործի ձեռնարկելու համար։

— Երբ Մարտինե և իր որդին գահակուրկ եղան և գործելու գլուխը այս Վաղենտիոսն էր՝ 3000 սպառազինաց խումբ մը կար ի ձեռին։

— Երեք հազար հոգվով դուք կայսր մը կը դնեք և կ'իջեցնեք։ Դեռ ղեցի՞կ ելևէջ։

— Բայց այդ երեք հազար հոգվո քամակին կան ծերակույտը...

— Անարգ պալատականաց խումբ, որ միշտ հաջողության երկրպագու է։

— Այո՛, բայց կա նաև ժողովուրդը, որ...

— Զզվելի՜ խաժամուժ, դի՞ր մարդկության։

— Այո՛, բայց որ շատ անգամ, արդար պատուհաս մ'է նոցա գլխուն, որ կառավարել չգիտեն։ Բայց մենք ժամանակ չունինք երկար խորհրդածությանց, զորավար, վասնզի ո՜ դիտե, թե այսօր ի՞նչ կրնա պատահիլ։ Ժողովուրդը ժողվված է ս. Սոփիա եկեղեցին, և գիշեր-ցորեկ աճագին բազմություն մը կրկեսը և հրապարակները կը լեցնեն և սաստիկ գրգռված են Վաղենտիոսի դեմ, վասնզի գիտեն, թե նորա ազդեցություն է, որ կը կառավարե, տիմար և հասարակ շինական՝ ի շնորհս յուր անձնական գեղեցկության, այդ քու Թումայի քրոջը հաճոյանալով, որ տղա կայսեր վրա ազդեցություն ուներ ինչպես նորա հորը վրա, հիմա կ'ուզե գահակից լինիլ կայսրության։ Եգիպտոսի և բոլոր Ափրիկեի կորուստը սովալլուկ ըրավ մայրաքաղաքը, և այս հիմար մարդը հարկ հարկի վրա կ'ավելցնե և յուր զորաց թիվը կը շատցնե։ Ես, որ Մարտինեի և իր որդվույն դեմ էի, հիմա այս կոշտ զինվորին դեմ պարտավորեցա դանվելու։

— Բագրատունին ո՞ւր է։ Գրեր էիր, թե հաքսորանաց դարձի հրավարտակն առի և կսպասեմ։

— Դարձավ եկավ, բայց դարձյալ Վաղենտիոսի ազդեցությամբ՝ հոս մոտ Իշխանաց կղզիներն երթալ ընտանյոք քանի մը օրվան համար հրաման եղավ։ Եվ այս ինձ հարված մի է, վասնզի Վաղենտին հայոցմե կը կասկածի. քու Արծափա հաղթությանդ լուրը և արաբացի նժույգներու ընծան երբ հասան Պոլիս, ոմանց հույս, բայց զինվորականաց շատին տհաճություն պատճառեց, վասնզի քանի որ այս կատաղի ժողովուրդը փրցավ ելավ յուր ավազներուն մեջեն և աշխարհքիս երևցավ, դեռ պարտություն կրած չէր, ուստի այդ երկու արաբացի զորավարաց Օթմանի և Ովգայի գլուխները, որ հուղարկած էիր, և որ ես դնել տվի կրկեսին մեջ ի տես ժողովրդյան, ծեր Պրոկոպիոս կատղեցուցին, և զինվորականք իրենց ազդեցությունը գործածեցին, և Վաղենտին հիմա ի հայոց կասկածելով, ամեն բանի մեջ նոցա ազդեցությունը կ'ուզե ջընջել՝ ինձմե սկսելով, որ այստեղի հայոց գլխավորը կը համարվիմ։ Այս

բանիս համար պատանի կայսեր թելադրեցին իմ տեղս Թումա անվանել արևելից զորավար. առերեսս այնպես ցույց տալով, թե կայսրը զիս անձեն չէր ուզեր բաժնել։

— Հիմա իմացա վիճակը։ Դու ի՞նչ պիտի ընես, ինչպե՞ս պիտի գործես։

— Իմ առաջս երկու ճանապարհ կա, եղբայր. առաջին՝ Վաղենտինի հետ, ինչպես մինչև հիմա վարվեցա, բարեկամ ձևանալով, կայսեր աչքը բանալ և վտանգը ցցնել, երկրորդը՝ համարձակ իրեն և յուր կուսակցության դեմ թշնամության դրոշակ պարզել, ծերակույտին և ժողովրդյան գլուխ անցնիլ կանգնիլ։

— Բայց այդ վերջինին համար զինվորական գոնե փոքրիկ զորություն մը ունենալու է։

— Ես էլ այդ փոքրիկ զորությունը պատրաստելու վրա եմ։ Հիմա, այս իմ պալատիս մեջ, բոլոր սպասավորք հայ փորձ զինվորներ են, երեք հարյուր մը կ'ելնեն։ Այստեղ մոտ կը բնակի և ինձ հետ լավ կապված է բարեկամությամբ Գեորգ Մագիստրոս, որու պալատը կան երկու հարյուրի չափ նույնպես հայ սպասավորք. նույնչափ մ'էլ կան Մանվել Արշակունվո՝ այդ առաքինի ծերուն ծառայության մեջ՝ քաջ տղամարդիկ, որ մահվանե երկյուղ չեն ճանչեր։

— Այդ ամենը բավական ապահովություն կրնային համարվիլ, եթե անմիջապես քու այս պալատիդ դիմաց չի տեսնեի զինվորական նավարանը։

— Այդ կողմեն վտանգ չի կա, հույն ծովապետը Վաղենտինի ոխերիմ թշնամին է, և ես եմ նորա պաշտպանը կայսեր մոտ։

— Ուրեմն ինչի՞ կ'սպասես, եղբայր։ Գործե՛։ Քու նկարագրութենեդ ինձ այնպես կը թվի, որ շարժվելու ժամանակն հասած է։

Այս խոսքիս վրա սկսավ մտածել Երիզացին, որ շատ խոհեմ մարդ էր և ավելի քաղաքագետ, քան զինվորական։

— Բայց ես վայրկյանե վայրկյան կ'սպասեմ, որ այս մեր հույն եղբայրք շարժմունքի սկիզբն տան, որպեսզի շարժմունքը հայկական կերպարանք չառնու, և իրենք թևերնին կախած մեղ միայն չի թողուն։ Եվ ապահով եմ, որ սովը մեկ կողմեն, հարկաց ծանրությունը մյուսեն խռովության փոթորիկ մը պիտի հանեն։ Եվ ժամեժամ այդ բանին կ'սպասեմ։

Հազիվ թե այս խոսքերը զրուցեց, և ահա երիտասարդ մը ներս մտավ շնչասպառ...

— Խռովությունն սկսավ ս. Սոփիա, ժողովուրդը կատաղած զԱնտոնիոս այրեց,— ըսավ։

— Դու քիչ մը շունչ առ, որ պատմես,— պատասխանեց Երիզացին առանց յուր հանդարտությունը կորսնցնելու, և դառնալով Ռշտունվույն՝— կը տեսնե՞ս, եղբայր, թե գործելու համար ի՛նչ վայրկենի կ'սպասեի։

Երիտասարդը, որուն երեսը կարմրած, քրտինքը ճակտեն և մազերեն կը կաթեին և մեծ-մեծ շունչեր կ'առներ, և կուրծքը կ'ելներ կ'իջներ հևալով, երբ քիչ մը հանդարտեցավ, սկսավ պատմել.

— Երկու օր է, որ ես ձեր հրամանավ ծպտյալ ժողովրդյան հետ էի, որ մայր եկեղեցին լցված պատրիարքը կը խնդրեր աղաղակելով. իսկ նա, որ երեսը կը ծածկեր, վերջապես այս առավոտ իջավ և նստավ հայրապետական աթոռը, ժողովրդյան խելոքներն սկսան գանգտիլ Վաղենտինի դեմ, նորա զինվորաց անկարգությանց դեմ, հարկաց ծանրության, հացի թանկության դեմ և կը պահանջեին, որ երթա ինք անձամբ խոսի Վաղենտինի հետ։ Նա երկու մետրապոլիտ և ժողովրդյան առաջնորդներեն ոմանք պատգամավոր ուղարկեց զորավարին։ Ժողովուրդը պատասխանի կ'սպասեր և ահա Անտոնիոս տեղակալը հազար սպառազեն մարդիկներով խուժեց եկեղեցին և ժողովրդյան գլխավորներն հրամայեց գանակոծել։ Հայրապետը այն ատեն կանգնած խստությամբ հանդիմանեց Անտոնիոս և ըսավ. «Աստուծո տաճարին մեջ՝ աստուծո ժողովրդյան հետ բարբարոսք և անօրենք միայն այդպես կը վարվին, զորավար. և դու կը համարձակիս և աստուծմե չե՞ս վախեր»։ Իսկ Անտոնիոս հարձակեցավ ելավ բեմին վրա և պատկառելի ծերուն՝ «Ձա՛ր ծեր, դո՞ւ ես, որ կը հանդգնիս այս անարգ խաժամուժը գրգռել յուր տյարց դեմ և զիս հանդիմանել» ըսավ, և ապտակ մը զարկավ աստուծո մարդուն. աղաղակաց որոտմանց ձայն մը բարձրացավ ամբոխեն, և անդեն ժողովուրդը կատաղի գազան դարձավ, դաշույններ հայտնեցան և փայլեցան, աթոռ, աշտանակ, ջահ, քշոց, հայրապետական զավազանք զենք եղան, տաճարը խառնակության և պատերազմի դաշտ դարձավ, արյունը սկսավ վազել, ժողովրդյան ինկածներուն տեղ նոր մարդիկ հաջորդեցին, մինչև Անտոնիոսի հաղարքն անհետացան, և ինք-ողջ-ողջ հանեցին դուրս տաճարեն և կապած փայտակույտի մը վրա բարձրացնելով այրեցին. Լատաղի տղայք և կանայք պար կը բռնեին խարույկին շուրջը, երբ ես թողի, եկա լուր տալու։

ԳԼՈՒԽ ԻԳ

Երբ այս պատմությունը լսեցին, և երիտասարդը դուրս ելավ, Ռշտունին պատուհանեն դուրս կը նայեր քամահաբար և կարծես թե խոր խորհրդածության մեջ էր։ Իսկ Երիզացին քովը մոտենալով և իբր թե

քունեն արթնցնելու համար առաջ ուսը կամաց մը ծեծելով և ժպտելով՝

— Ծղբայր, այդ քու մտածումունքդ իմ քովս շատ հին են,— ըսավ,— բայց միտքդ դիր, թե Կոստանդնուպոլսո մեջ կ'ապրինք, այս կայսրությունն այսպես եկեր, այսպես պիտի երթա. հիմար, վատ զորական մը ոչ միայն զորապետ կը դառնա կնոջ մը շնորհիվ, այլ կայսերական թագը գլուխը ևս դնելու կը ձգտի։ Ես արքունիք կ'երթամ հիմա, գու ճաշդ ըրե և պատրաստ եղիր, ահա տա սենեկին մեջ ի՞նչ ղենք և սպառազինություն կուզես՝ կրնաս գտնել. ես քեզի իմաց կուտամ, և ըստ այնմ կը շարժիս։ Ուրեմն մնաս բարով։

Ժամ մը հաղիվ անցած Թեոդորոս Ռշտունի նամակ մը կառնուր յուր բարեկամեն, որ զինք կը հորդորեր անցնիլ պատրաստական գնդին գլուխը և յուր անձնապահպանին առաջնորդությամբ գալ կրկեսը առանց վայրկյան մը կորսնցնելու։ Երբ Թեոդորոս սպառազինյալ իջավ պալատին ընդարձակ գավիթը, որ ցամաքային դռան առաջն էր, տեսավ փառավոր ձի մը և երեք հարյուր սպառազեն հեծելոց խումբ մը, որ իրեն կ'սպասեին. հաղիվ թե փողոցին մեջ քիչ մը հառաջացավ՝ երկու խումբ պատրաստական զորաց միացան յուր խմբին հետ և այդ հաղարաց զունդին առջև ամբոխը կը բացվեր, կը խոսեր, մինչև անարգել կրկեսին մոտեցան, բայց ահա հոն ահավոր տեսարան մը ներկայացավ Թեոդորոսի առաջ, Վաղենտիանոսի սպառազեն հինգ-վեց հազար հոգվո խումբը հրապարակը գրեթե բոլորովին գրավեր, ժողովուրդը ս. Սոփիա եկեղեցին վտարեր և գավթին մեջ կատաղի կոտորած մը կը շարունակեր։ Երիզացվույն անձնապահպանին դարձավ նա՝

— Տղա՛, ո՞վ է մեր թշնամին,— հարցուց։

— Այդ սպառազեն Վաղենտինի զորքերը,— պատասխանեց երիտասարդը։

— Քալեցե՛ք ետևես, տղաք,— գոչեց Թեոդորոսի ահագին ձայնը։

Եվ մերկ սուրը ձեռին հարձակեցավ յուր գնդով այդ սպառազինաց կողքին վրա կրկեսին մեջտեղ և աջ ու ձախ կոտորով երկու բաժնեց թշնամի խումբը, որու մեկ մասը, ազատ ճամփա ունելով, սկսավ փախչել։ իսկ մյուսը փակված Թեոդորոսի և եկեղեցվո մեջ՝ ջախջախեցավ բոլորովին և գրեթե անհետացավ։ Այս դյուրին հաղթության վրա Թեոդորոս ինք զարմացած կը մտածեր, երբ արքունի դռան կողմեն երևցավ փոքրիկ խումբ մը կայսերական թիկնապահաց, որոց գլուխը կանգնած հասավ Երիզացին և հրավիրեց Ռշտունին և յուր զորքը կայսերական պալատը՝ ներկայանալու երիտասարդ կայսեր։

Դեռ պատանի մ'էր կայսրը, շփոթություն և երկյուղ երեսին վրա նկարված էին, հաղիվ գահը բարձրացած՝ կը տեսներ, թե այն մարդը՝

Վաղենտին, որ յուր թագավորության առաջին գործիքն եղած էր, առաջին դավաճանն էր, ուստի բնական կասկածոտ աչոք կը նայեր շուրջանակի, բայց բյուզանդական քաղաքավարությամբ և կեղծավորությամբ գիտեր ինքզինք քողարկել։ Երբ Երիզացին իմացուց իրեն, թե «Ամեն վտանգ հեռացավ, և Վաղենտին փախստական էր ի շնորհս Թեոդորոսի քաջության, որ նույն Վաղենտինի հրամանավ կապյալ եկել էր Հայաստանեն», կայսրը՝ «Վաղենտիոսի գլուխը թող բերվի, հիմա՛, հիմա՛» կ'ըսեր։ Բայց նույն միջոցին, երբ լրտեսներ եկան իմացուցին, թե ժողովուրդն արդեն սպաններ էր Վաղենտին և եկեղեցվո հրապարակին վրա կայրեր նորա մարմինը, ուրախացավ։ Հարմար ժամանակ համարեց այն ատեն Երիզացին՝ Բագրատունի Ասպետին համար խնդրել, և հրաման եղավ նորա աքսորանաց վերջ տալ։ Նավակներ կը թռչեին Իշխանաց կղզիքը բերելու համար Վարազտիրոց։

Մինչդուն օրվան մեջ Ռշտունին ազատեցավ շղթաներե, Վաղենտիոսի զորությունը խորտակեց, և Բյուզանդիո արքունյաց մեջ տեսավ յուր տղայության ընկերն ու բարեկամը և «արտասուք կը թափեին Ասպետ ու Ռշտունյաց տերն իրարու պարանոցի վրա, վասնզի սենդակից էին Խոսրովու Պարսից արքային Պուռի»։ Իսկ կայսրը Վաղենտինի տեղ զորավար կանվաներ զԹեոդորոս Երիզացին, Թեոդորոս Ռշտունվույն հրաման կուտար հայրենիք դառնալու և սուրհանդակ կը հաներ Թումայի Կոնստանդնուպոլիս գալու։ Իսկ Վարազտիրոցի ազատություն կուտար Կոստանդնուպոլիս բնակելու ընտանյոք, որ դարձյալ աքսոր կը նշանակեր, վասնզի տարիներեփ վեր հայրենի երկրին էր ծարավի։

Այն գիշերը Երիզացվույն պալատը ուրախության տոն կը կատարեին այս երեք հին բարեկամք, որ տարիներով իրարմե հեռու բնակելով, մնծության և աքսորանաց, հաղթության և պարտության, արքայական շնորհից և նախատանաց և վերջապես բախտին զանազան արկածից մատնյալ, միշտ ակնածելի եղած էին նաև թշնամյաց և արքայից։ Ուստի երբ առանձին մնացին, Հայաստանի վիճակին վերա եկավ խոսքը, և Բագրատունին, տխուր ու դառնացյալ, ըսավ՝

— Ի՞նչ կրնա ընել մարդ, երբ իմ վիճակիս մեջ զտնվի. այս մայրաքաղաքը յուր փոքր պերճությամբ, յուր բոլոր գեղեցկությամբ իմ Տայոց մեկ գյուղեն ավելի արժեք չունի աչացս. գու, Սարատելատ, հատիկ կրնաս ազատակամ լինել հայրենյաց և մեզի, ինչպես և եղար մինչև այսօրս. իսկ ես՝ հոն հայրենի հողին վրա միայն կրնամ ծառայություն մ'ընել ազգիս։

— Եվ մեծ ծառայություն,— ըսավ Ռշտունին,— ինչպես ձեզի հաս-

կրցուցի, վասնզի քու ներկայությամբդ կրնանք միաբանել այդ նախարարները, որոց աչքին ես վտանգի և կասկածանաց նյութ եղած եմ։

— Ես այսօր միջոց մը գրեթե համոզեր էի,— ըսավ Երիզացին,— երիտասարդ կայսրը քեզ հրաման տալ դառնալու հայրենիք, բայց դրժբախտաբար այդ Փիլակրիոս վրա հասավ և ամեն խորհուրդ վեր-վայր շրջեց։ Ե՞րբ պիտի համոզվին հույնք, թե հայոց հետ արդարությամբ վարվիլն է միմիայն ճանապարհ կցորդելու զիրենք։

— Ի՞նչ կրնա սպասվիլ այդ մարդիկներեն, որ իրենց օգուտը նաև չեն ճանչեր, և որ կարծեն, թե զհայերը նեղելով կրոնքի մասին, նոցա դավանությունը բռնաբարելով, անպաշտպան թողլով երկիրն և ավար ավազակաց, հարկաց ծանրություն բեռնավորելով և ժողովուրդն աղքատցնելով՝ Հայաստանի կատարյալ տեր կը դառնան,— զրուցեց Ռշտունին։

— Բայց այդ երիտասարդ կայսրը,— պատասխանեց Երիզացին,— ես կը հուսամ, թե օրավուր ճշմարտության կը համոզեմ, և քանի որ ապականությունը սրտին խորը չէ թափանցեր, կարելի է զինքն ազնվության և արդարության հետևցնել։

— Ո՜ղջ լեր, իմ պատվական բարեկամս, աստված հավատքդ ավելցընե, դու կը հուսա՞ս, թե այս կրոնամոլության և հիմարության քաղաքի մեջ ու գահույից վրա կարելի՞ է ազնվության և արդարության սերմ հասցնել։ Թո՜ղ այդ տղայական երազներդ, և ջանանք միատեղ մեր հայրենի երկրին փրկության։

— Զրուցե՛ համարձակ, քեզ խոսք կուտամ ի՞նչ կրնամ ընելու։

— Իմ միմիայն փափագս ինձ հետ Ասպետը Հայաստան տանիլն է, մնացածը աստված կը հաջողե եթե ուզե։

— Այդ... քանի մը օրվան մեջ կարելի չէ. պետք է որ կայսրը մոռնա Փիլակրիոսի հորդորները։ Դու, եթե կ'ուզես, սպասե, մինչև հարմար առիթը հասնի...

— Ո՞վ կրնա երաշխավորել, թե հարմար առիթ չհասած՝ անհարմար առիթներ չեն հասնիր այս անիծյալ քաղքիս մեջ, նույնպիսի առիթներ, որ Վարազտիրոցի հետ զիս նաև առնուն օվկիանոսի կղզի մը չի նետեն, քաղաք մը, ուր մատնություն, զրպարտություն, շոգմոգություն սովորական բաներ են։ Ի բաց թողունք, որ քու այդ երիտասարդ կայսրը այնպիսի նայվածք մը ունի և այնպիսի կերպարանք, որ ինձ ամենևին վստահություն չի տար։ Երբ այդ կայսրդ «Վաղենտինի գլուխը, հիմա, հիմա» կ'ըսեր, ես վատության չափ անգթություն կը նշմարեի։ Դու եթե կ'ուզես հայրենյաց և բարեկամաց ծառայել, հնարք գտիր Վարազտիրոց ազատելու։

— Կ'ուզես ըսել փախցնելու, բայց այդ նաև դյուրին չէ, վասնզի այս վայրկենիս, հիմա շատ խստություն կա մայրաքաղաքիս մտնողելնողներուն համար, և Վարազտիրոցի պես ահագին և նշանավոր մարդ փախցնելն դյուրին բան չէ, բայց վերջապես հնարքը կը գտնվի։ Իսկ դու իրավունք ունիս չի վստահանալու քաղքիս և, եթե կ'ուզես ինձ լսել, մի՛ կենար և ժամ առաջ դարձիր հայրենիք, քանի որ հրաման ունիս։

— Ուրեմն որոշենք.— Ռշտունյաց Տերը թո՛ղ երթա, և դու կը խոստանաս հնարքով զիս հեռացնել։

— Այդ իմ պարտքս է,— պատասխանեց Երիզացին։

Եվ ութ-տասն օր վերջը Թեոդորոս Ռշտունի կը մտներ նավ՝ երթալու Տրապզոն։ Անհաջող քամիներ, որ զինք կ'արգելվին, կ'օգնեին յուր թշնամվույն Թումայի, որ թեպետ հաջողությամբ կը հասներ կայսերական քաղաքը, բայց անհաջող ընդունելություն կը գտներ Վաղենտինոսի կողմնակից համարվելով, և յուր քույրը Անկելինա նաև կորուսեր էր յուր ազդեցությունը, վասնզի դեռահասակ կայսրը կասկածոտ՝ հազիվ թե Փիլակրիոսի խորհրդոց ուշ կը դներ։ Փիլակրիոս ևս յուր կողմեն Երիզացվույն ազդեցությունեն ազատելու համար Թումայի տեղ զնա Հայաստանի հունական զորաց սպարապետ անվանել տվավ։ Այնպես որ Վարազտիրոց մնաց մայրաքաղաքն՝ յուր գլխավոր պաշտպանը կորսնցընելով։

Ան ատեն Վարազտիրոց փոխեց կյանքին ձևը, մեծ և փառավոր պալատ մը վարձեց ու զարդարեց, տվավ զինք ուրախության և գիներբուաց, Բագրատունյաց սեփական խնայությունն անհետ եղավ, հանդեսք և խնջույք ցրարու կը հաջորդեին, բոլոր բյուզանդացի պալատականք խուռն կը դիմեին նորա հրավիրանաց, Փիլակրիոս ինք նաև սկըսավ ընտանենալ Ասպետին հետ։ Երկու-երեք ամսվան միջոցին, Վարազտիրոց շվայտությանց մեջ կայսերական քաղքին զվարճալի կյանքը վեր կը քաշոզեր յուր լեռներուն փապարներեն։ Եվ այս կյանքը շարունակելով՝ աղերսագիր տվավ կայսեր, որ չորս հոգի յուր հավատարիմներեն ուղարկե Տայոց գավառը յուր ստացվածքը և գանձերը բերել տալու համար։ Եվ այս չորս անձանց համար հրովարտակ առնելով, ինքն ծպտյալ թիկնապահաց հետ նավ մտավ և հաջողակ հողմով եկավ Ճորոխի ափանց վրա, և թռչունի արագությամբ հասավ Տայոց գավառը։ Տայեցիք մեծ ուրախությամբ ընդունեցին զինք. ավելորդ է պատմել Բագրատունյաց պառավ իշխանուհվույն երջանկությունը յուր սիրելի զավկին տեսության։ Բայց ուրախության ժամանակ չէր. մեկ կողմեն բերդերը կ'ամրանային, ժողովուրդք գյուղերը կը թողեին, անառիկ տեղեր կը բարձրանային, զինվորներ դրոշակներու տակ կը ժողվվեին, և բոլոր Տայոց

դավառը քանի մը օրվան մեջ այնպես պատրաստություն տեսավ, որ իբր թե հունաց բոլոր բանակները հոն պիտի թափեին։ Եվ մյուս կողմեն Ասպետը գաղտնի սուրհանդակ կը հաներ Դվին իմացնելու համար Թշնամությունը, որ դեռ նոր հասեր էր հոն, յուր գալուստը, և սա որ պատրաստություն կը տեսներ Թշնամիք դառնալու, շտապավ նամակ կ'ուղարկեր Սեբեայի՝ հայտնելով յուր գալուստը և զորաց պետք ունենալը։

Նույն միջոցին կայսերական հրաման կը հաներ առ Թեոդորոս Երիզացի սպարապետ հույն զորաց, որ ճամփաները բռնե և ամրությունքը փնտրե գտնելու համար Ասպետը և դարձնելու Կ. Պոլիս։ Եթե Թեոդորոս կամք նաև ունենար, անկարելի էր այդ հրամանը կատարել, վասնզի Վարազտիրոց յուր բոլոր զգուշությունները ըրած էր։ Ուստի բանագնացության մտավ, կայսեր գրեց, Ներսես կաթողիկոսը դեսպան ղրկեց առ Ասպետն, որ ապստամբության չդիմե և հնազանդի կայսեր, և խոստացավ բերել տալ կինն ու զավկները մայրաքաղաքեն, միայն թե հնազանդության թուղթ զրե կայսեր։ Բազրատունին շուտ մը նամակավ հայտնեց կայսեր, թե «Այնչափ տարի անիրավ աքսորանաց տանելով ապստամբության միտք չէր ունեցեր, այլ միայն երկյուղը դարձյալ նույն աքսորանաց մատնվելու, և հայրենի երկրին սերը զինք բռնադատեր էին փախչելու»։ Այս թուղթին փոխարեն կյուրապաղատության պատիվ, պսակ, արծաթեղեն գահույք և կինն ու զավկները կայսրեն ընդունեցավ։

Թեոդորոս Թշտունի գոհ այս եղածներեն, յուր այնչափ ժամանակի խորհուրդները կը տեսներ վերջապես գլուխ ելնելու մոտ. ուստի միաբանությամբ Ասպետին ու կաթողիկոսին հրավիրանաց նամակներ գրվեցան առ ամենայնի նախարարս հայոց, որ դան ժողովին Դվին խորհիլ առգին կանոն մը դնելու։ Այսպիսի հարմար ժամանակ քիչ կը հանդիպեր, հայոց նախարարաց մեծ մասը արդեն համոզված էին, թե բանը պետք էր ընել, ուստի հոժար էին միաբանելու. իսկ Ներսես կաթողիկոս ոչ միայն քաղաքագետ մարդ էր, այլև ուսմունք սովրած, Հունաց կայսրության մեծ մասը պտրտած, ամեն բանի տեղյակ, արդեն դաշնագրին գլխավոր կետերը Թեոդորոսի հետ գրի առած էին, և Ասպետ, որ Թեոդորոսի ուղղության վրա կատարյալ վստահություն ուներ, առանց երկմտության ընդունեց իրենց պայմանները։ Հակասություն երկու նախարարության կողմանե միայն կարելի էր. Մամիկոնյանց և Մոկաց։

Դաշնագրին պայմանները պարզ էին, նպատակը անիշխանության տարտամ վիճակեն հանել էր Հայաստան և կենդրոնական կառավարություն մը հաստատել, որ թե օտարեն հարձակմանց և թե ներքին հարստահարությանց կարենար ընդդիմանալ և ժողովուրդը անտանելի հարկաց ծանրությենե և երկիրն ավերմունքե կարենար պաշտպանել։

Արդեն կայսեր կողմանե կյուրապաղատ և զորավար անվանված անձինք որոշված էին, ուրեմն դատաստանական բարձր ատյան մը եթե հաստատվեր, մեծ նախաբարաց նվիրակներե կազմյալ, որոն վճիռներուն ամեն ոք պարտավորվեր հնազանդիլ, եթե ժողովք մը նաև կազմվեր որոշելու համար հարկաց արդար բաշխումը, և կանոնավորյալ զինվորություն մը ըստ մարդաթվո, Հայաստան ապահովյալ կը համարվեր։

Եվ մինչդեռ այս մեծ գործը կատարելու վրա էր, ահա հանկարծ Վարազտիրոց քանի մը օրվան մեջ կարճ հիվանդությամբ մեռավ Դվին, և միաբանությունն վտանգվեցավ։ Վասնզի թեպետ կայսրը, նորա որդին՝ Սմբատ հոր տեղ կյուրապաղատ անվանեց, բայց հոր ազդեցությունն անկնալն շատ հեռու էր։

ԳԼՈՒԽ ԻԹ

ԺՄԵՆ կրոնքներու առաջինն է յուր կրոնքը պահել, և երջանկության ամենեն մեծն է զայն լավագույնը կարծել։

ՊՅՈՒՖՈՆ

Բայց այդ հարվածն նաև չի հուսահատեցուց զԹեոդորոս. գնաց Կաբին յուր բարեկամ և անվանակցին հետ տեսնվելու, և գնա քաղաք չի մտած հանաց սպայակույտին վրա գոռով փոփոխություն մը նշմարեց։ Առանց կարևորություն տալու, Ստրատելատին բնակարանը ուղղվեցավ և տեսավ սպասավորաց և թիկնապահաց երեսները գունատյալ և պատրաստություն ճանապարհի։ Եվ երբ բարեկամին սենյակը մտավ, տեսավ, որ նա զբաղված էր շատ մը թղթեր այրելու։

— Ժամանակին հասար, բարեկամ,— ըսավ Երիզացին,— վասնզի ես առանց զքեզ տեսնելու նաև պարտավորված էի երթալ։ Դու լավ կշռեր էիր այդ երիտասարդ կայսրը. գազան մը գահին վրա հանեցինք։

— Պաշտոնեդ կը զրկե՞ քեզ այդ ազան։

— Եթե վտանգն այնչափ է, գոհ պետք է լինիմ։ Երևակայե, որ երեք օր է չորս սուրհանդակ ստացեր եմ մայրաքաղաքեն, և ահա հինգերորդը որ այս առավոտ կը հասնի, ինձ սաստիկ հրաման կը բերե վայրկենին զորավարության պաշտոնս հանձնել Մավրիանոսի և դառնալ Պոլիս։ Եթե կին և զավակներ, և ամեն բան այդ գազանին ձեռքին մեջ լինեին, զիտեի ի՞նչ ընելիքս։

— Բայց ի՞նչ է յուր արարքը, այն պատմե՛, եղբայր։

— Աստվածաբանության կատաղությունն ունի այս երիտասարդը, կերևա, թե այս կայսերական աթոռին վրա ժառանգական է այդ հիվանդությունը։ Յուր պապը Հերակլիոս վերջին ժամանակները երբ պատերազմին դաշտը թողած դարձավ Պոլիս, ես ի պաշտոնե բռնադատյալ, յուր քով մտա իմացնելու համար, թե Եգիպտոս և Աղեքսանդրիա նաև մահմեդականաց ձեռքն են ինկեր։ Ծեր կայսրը յուր վարդապետներե շրջապատյալ նստած էր. իմ տխուր կերպարանքս տեսնելով հարցուց, թե ի՛նչ նոր լուր ունեի. ես երբ զգուշության ձևերով և երկյուղով իմացուցի աշխարհին կորուստը, նա վայրկյան մը մտածության ինկավ. և վերջը ինձ հարցուց. «Թեոդորո՛ս, դու ինչպե՞ս կը հավատաս, Քրիստոս, որ երկու բնություն ունի, մի՞ կամք ունի, թե՞ երկու»։ Ես շփոթած այս անակնկալելի հարցմունքին վրա, պատասխանեցի, թե «այսպիսի խընդիրներ կարողութենես վեր են, ինչ որ եկեղեցին որոշե, այն կ'ընդունիմ»։ Բայց մտքես ցավեցա, որ այդ մարդը, որ մենք դյուցազն մը տեսեր էինք պատերազմի դաշտին վրա, այդ զառամության էր հասեր։ Երևակայե՛, եղբայր, որ թոռը հիմա այդ աստվածաբանական խնդրույն վրա հավատո դավանություն մը կը հրատարակե, և Մաքսիմոս պատրիարքը, վասնզի դեմ գրեր և քարոզեր է այդ դավանության ու հերետիկոսական անվաներ է, աստուծո քահանային լեզուն և աչը կտրել տըվեր էր։

— Այսչա՞փ միայն։

— Ո՛չ, դեռ կա, մեկ հատիկ եղբայրը՝ Թեոդոս, սարկավագ ձեռնադրել տվեր է, նորա ձեռքեն հաղորդվեր է և դարձյալ գոհ չլինելով՝ սպաննել տվեր է։

— Ուրի՞շ։

— Բանտերը լցնել տվեր է այն մարդիկներով, որոց վրա հավատո կամ յուր անձին դեմ կասկած ունեցեր է։

— Դեռ ուրի՞շ։

— Եղբա՛յր, քեզի էլ բռնավոր հավնեցնել հիրավի շատ դժվար է։ Այսչափը բավական չէ՞։

— Ո՛չ, այդպես, շատ կը սխալիս, ես բռնավորի կը հավնիմ, բայց ոչ այդպիսի հիմար բռնավորներու, որ ոչ նպատակ ունին և ոչ գիտեն, որ ի՞նչ կ'ուզեն և ո՞ւր կ'երթան։ Ես իմ ուզած բռնավորս եթե գտնեի...

— Բռնավորի լավը չի կա, Ռշտունի, ես կը զարմանամ, թե ինչ դիպվածով իմ գլուխս ուսերուս վրա մնացեր է յոթանասուն և հինգ տարի. ութ հատ կայսր տեսեր եմ, որոց առաջին երկուքը՝ ամենեն լավերը, չեմ կրնար դատել, իսկ Մորիկե սկսած մինչև այս Կոստանդ ամենն էլ

արյունկլակ բռնավոր։ Ի՞նչ օգուտ ունեցեր են աշխարհքի և իրենց անձանց ու ընտանյաց։ Իսկ թե հայ ազգը ի՞նչ է քաշեր սոցա օրով և թե ի՞նչ քաջ նախարարք և իշխանք զոհ գնացեր են այսչափ միջոցի մեջ, եթե մեկիկ-մեկիկ համրեմ...

— Մի՛ համրեր, անօգուտ է, ես լավ գիտեմ։ Թե որ կարենայի զքեզ մեր Ոստանը տանիլ, կրնայի ցցնել այս վերջի հարյուր տարվան միջոցին հայոց բյուրավորաց կոտորածներու ցուցակը ի հունաց և ի պարսից, հորս և պապուս ժամանակեն գրված ճշտությամբ։ Բայց ո՞ւմ է հանցանքը, մեռնողի՞ն, թե՞ մեռցնողին։

— Երկուքին հավասար։ Ես հոս՝ Կարին այս պաշտոնիս մեջ ավելի բան իմացա մեր երկրին վերաբերությամբ, քան թե ինչ որ իմացեր էի այնչափ տարի Բյուզանդիո արքունյաց մեջ։ Այս Կարնո դիվանատան մեջ գտա թղթակցությանց շարք մը պարսից և հունաց մեջ, Մորիկ կայսեր և Խոսրովու ժամանակի. տե՛ս, թե ինչպե՞ս իրարու հետ կը խոսին։

Եվ այս ըսելով Երիզացին հանեց թուղթի մը օրինակ և տվավ Ռշտունվույն, որ լռությամբ կարդալեն վերջ այդ թուղթը, ուր հույնը կը գրեր պարսկին՝ հայոց համար. «Խոտոր և անհնազանդ ազգ մի են, մեր մեջ կացած պղտորություն կը ձգեն։ Բայց եկ, ես ինձ հնազանդյալքը կը ժողվիմ և Թրակիո կողմն կ'անցնիմ հոնաց և նմանյաց հետ պատերազմելու համար. դու քուկիններուդ հրամայե ժողվել և Արևելք տանիլ։ Վասնզի եթե մեռնին, թշնամիք կը մեռնին, և եթե սպաննեն, զթշնամիս կ'սպաննեն, և մենք խաղաղությամբ կապրինք։ Զի եթե դոքա իրենց երկրին մեջ մնան, մենք հանգստություն չպիտի գտնենք»։ Բարձր ձայնով կարդաց երկրորդ անգամ և հեգնական ծիծաղով ըսավ.

— Ողորմելի՛ քաղաքագիտություն, որ յուր ներքին վիճակը չի տեսներ և ուրիշին թշվառութենեն օգուտ քաղել կը կարծե. աշխարհք մը կ'ոչնչացնե և յուր անձին զորություն չի գտներ և ավելի կը տկարացնե։ Խոսրով այդ նամակի իմաստը հայտնած էր Սմբատա։ Բայց դժբախտաբար Հայաստանի համար և Խոսրովու յուր անձին համար, Սմբատ շուտ մեռավ, եթե ոչ ի՛նչ գեղեցիկ ու մեծ խորհուրդներ ուներ այդ մեծ մարդը, որ քուշանաց զորությունը ջախջախելեն վերջ, Հայաստանի վերականգնության խոստմունքն առած էր արքայից արքայեն։ Եվ այն, ինչ որ ես տկար ձեռոք կը փափագիմ գործել, նա հզոր ձեռոք ապահով ի գլուխ կը հաներ. բայց մահը ամեն խորհուրդ առավ տարավ...

— Հիմա էլ յուր որդվույն՝ Ասպետին մահը ամեն հույսեր փչացուցա։

— Ի՞նչ ընենք, քանի որ շունչ ունինք, պետք է աշխատինք։ Բայց դու որոշած էիր երթալ։

— Ուրիշ ի՞նչ կարելի է ընել...

Մտախոհ լռություն հաջորդեց այս խոսակցության, երբ մասնավոր սուրհանդակ մը Երիզացվույն բերավ նամակ մը, որ կ'իմացներ նորնոր դավանություն, նոր բանտարկություն և նոր արյանց հեղմունք, այնպես որ ժամանակին պատմաբանք կը պարտավորին կոտորածներն հիշելով ըսել, թե՝ «Ոչ մնաց ի թագավորության այր խորհրդական, զի միահամուռ սպառեցան բնակիչք աշխարհին և իշխանքն»։ Նամակը կ'իմացներ նաև հայ իշխանաց մեջ Գրիգոր Մագիստրոսի և Մանվելի և Մարդունիի մահը, որ անոր էր Բագրատունի Ասպետին եղբոր, և կը հորդորեր զԹեոդորոս ժամ առաջ հասնիլ, որպեսզի կասկածոտ կայսեր միտքը չի կատղեցնե յուր ընտանյաց վրա։ Ներ Ստրատելատը յուր ընթերցմունքը լմնցնելն վերջ՝ ամեն բան իմացուց Ռշտունվույն և յուր վերջին հրաժարականը տվավ իմացնելով, որ այլևս հույս չուներ ուրիշ տեսության. հայոց զորավարը Դվինի ճամփան բռնեց, երբ Երիզացին կ'երթար դեպի Պոնտոս մտնելու նավ՝ դառնալու Պոլիս, ուր հիվանդ հազիվ հասնելով, բնական մահն եկավ ու Կոստանդինի ձեռքեն զինքն ազատեց։

Թեոդորոս Ռշտունի այս անակնունելի դիպվածոց վրա դառնացյալ, այլ ոչ երբեք սրտաբեկ, երբ հասավ Դվին, միտքը դրած էր երկրին կարևոր գործերն կարգի դնել և դառնալ Ռշտունիք, վասնզի Տիկինը սուրհանդակ սուրհանդակի վրա կ'ուղարկեր և անհամբեր էր դարձին, «զի ընտանեկան պարագաներ կային, որ յուր «գալուստը կը պահանջեին և որ նամակավ դժվար էր իմացնել»։

Բայց հազիվ երկրին մատակարարության գործերը կարգի դրավ Ներսես կաթողիկոսի, Սմբատ Կյուրապաղատի և քանի մը ուրիշ իշխանաց հետ, ահա հրովարտակ կը բերեր Հունաց կայսրեն Դավիթ անուն մարդ մը աստվածաբանական ուսմանց տեղյակ՝ բագարանցի, որ կը հրամայեր վերցնել ամեն խտիր և միաբանիլ Հունաց հետ ի դավանություն։ Ուստի կաթողիկոս և նախարարք պարտավորեցան հրավեր հուղարկել ամեն կողմ, և իշխանք և եպիսկոպոսք զանազան գավառաց ժողովեցան ի մայրաքաղաքն Դվին և ամիսներով կը վիճեին, կը խոսեին հրովարտակին պատասխանը պատրաստելու համար։

Կային հայ նախարարաց մեջ այնպիսի անձինք նաև, ինչպես էր Համազասպ Մամիկոնյան, տեղյակ աստվածաբանական խնդրոց, որ եպիսկոպոսաց հետ կը խառնվեին վիճաբանությանց և գործը կ'երկարեր։ Իսկ Թեոդորոս, որ ամենևին չէր խոսեր, այլ տխուր, ուշադրությամբ մտիկ կ'ըներ, երբ իր կարծիքը հարցուցին օր մը, այսպես խոսեցավ.

«ԵՒստից գրեթե տասնհինգ կամ տասնվեց տարի առաջ, Կարնո քաղաք, Հերակլ կայսեր հրամանավ ժողովք մը եղավ. Եզր կաթողիկոսի հետ ես դարձյալ այս նյութերու վրա տեսա, որ խորհրդածություն, վիճաբանություն տեղի ունեցան. վիճեցին, խոսեցան, ճառեցին. և հետևանքը այն եղավ, որ կաթողիկոս, եպիսկոպոս և վարդապետ կայսեր հետ հաղորդվեցան, նորա դավանությունը դավանեցան, ընծաներ, պարգևներ առին, և երբ ժողովքեն դուրս ելան, հայ ազգը՝ ժողովքը տարբեր, ժողովուրդը տարբեր լինելն հայտնի ըրավ, և այդ որոշմունքներուն մեկը չընդունեց, և Եզր յուր զավկներուն խորթ հայր մը եղավ և այնպես ատելի մեռավ։ Ես՝ ա՛յն Շավարշ Ռշտունվույն թոռն եմ, որ երբ բոլոր հայ ազգը մկրտվեցավ Եփրատա մեջ ի ս. Լուսավորչե, Ասորեստան էր իր գնդով, և ձմեռը դառնալով եկավ Վաղարշապատ, Տրդատա հրամանավ հանձն առավ քրիստոնեությունը. Լուսավորիչ և թագավորը Տարոն էին, ուստի ասորի եպիսկոպոս մը, կը պատմեն հիշատակարանք, զինք պիտի մկրտեր։ Երբ, մեկ ոտքը դնելով ավազանին մեջ, հարցուց. «Իմ հարցս՝ Ռշտունյաց նախարարաց հոգիք ո՞ւր են հիմա. նույն արքայությունն ե՞ն, ուր դու ինձ քարոզեցիր, թե՞ ուրիշ տեղ մը»։ Եպիսկոպոսն անհանճար՝ շուտ մը սատասխանեց, թե «Դժոխքին մեջտեղն են»։ Շավարշ ետ քաշվելով՝ «Եթե այդպես է, ես իմ նախահարցս քով կ'ուզեմ երթալ, քու արքայությունդ քեզ լինի, ասորի» ըսավ և քաշվեցավ։ Վերջը Լուսավորիչ ջանաց համոզել այդ Ռշտունյաց տերը, թե աստուծո դատաստանի գաղտնիք են, ինք ողորմած է հեթանոսաց, որ Քրիստոսի Ավետարանին տեղեկություն չունին, մարդս չի կրնար դատապարտության վճիռներ տալ, և թե եպիսկոպոսը մեծ հանդգնություն ըրած էր այդպիսի վճռողական պատասխան տալով։ Հիշատակարանք չեն զրուցեր, բայց ես կ'երևակայեմ, թե առանց Տրդատա օգնության Լուսավորիչ ինքն լինելով՝ համոզած չէ կատարելապես այդ Ռշտունյաց Տերը ավազանին մոտենալու երկրորդ անգամ։ Ես՝ Թեոդորոս Ռշտունի, այդ Շավարշա թոռն եմ, և ճիշտ այդ հետին շինականին պես կը մտածեմ, որ առանց աստվածաբանական ուսմունք ունենալու կը զրուցեր. այդ Եզր կաթողիկոսը Թադեոսե, Բարդուղիմեոսե, Լուսավորչե լա՞վ գիտե հայությունը, քրիստոնեությունը. մեղա՜ աստուծո, մենք Լուսավորչա դավանությունը թողո՞ւնք, որովհետև այդ Եզր Կողբաց աղեհանք կը սեփականացնե, աստված հեռի՜ ընե, ինքն աղն ուտե և մեզ աղու տա։ Բացի հայն, մտաբերեցեք, որ այդ պահանջմանց վերջը չի կա, այդ հունաց ազգն ամեն օր նոր բան կ'ստեղծե ի հավատս, այդ Կոստանդին կայսրը իր եկեղեցվույն հետ միաբան չէ, պատրիարքներ, եպիսկոպոսներ կը շարչարե, կաբասրե հավատո խնդիրներու համար։ Կայսրը մեղնե հավատարմություն ուզե, պատրաստ ենք իրեն ծառայելու, բայց մեր հավատքին, մեր խղճմտանքին չի հպի՝ լավ կ'ընե»։

Հրովարտակին երկար պատասխան մը գրվեցավ, ուր Հայոց կաթողիկոս, նախարարք և եպիսկոպոսունք կը հայտնեին, թե Նիկիո դավանութենեն ավելի բան մը ընդունիլ իրենց անկարելի էր։ Այն ատեն հույնք և իրենց սակավաթիվ համախոհք սկսան ավելցնել հակառակությունը և Հայաստանու արևմտյան գավառաց մեջ հայտնի հալածանք և բռնություն ի գործ դնել ընդդեմ հայոց։ Սմբատ Կյուրապաղատ թույլ մարդ էր, Ներսես կաթողիկոս հունական դաստիարակությամբ ավելի հակամետ սկսավ երևիլ, հունաց նախարարք անհոգ միաբանության կապն էլ խղեցին, և Թեոդորոս այնչափ հոգերե ու տառապանքե վերջ՝ կը տեսներ, թե յուր բոլոր աշխատությունք ոչինչ դարձած՝ ամեն բան իր խորհրդոց դեմ իբրև թե դավադիր կը լիներ։

ԳԼՈՒԽ ԻԵ

Թեոդորոս տաղտկացյալ՝ կ'ուզեր դառնալ Ռշտունիք, երբ իրեն իմացուցին, թե կաթողիկոսը թողեր աթոռը փախեր էր Տայոց գավառը Սմբատ Կյուրապաղատին հետ։ Այս երկու նախաթոռ անձինք Հայաստանի ծանր վիճակին մեջ ոչ միայն կը թողեին իրենց աթոռը, այլև համբավ մը կը ձգեին, որ Թեոդորոսի երկյուղեն էր իրենց փախուստը, իբր թե դավաճանություն մը կար իրենց անձանց դեմ։ Վասնզի կաթողիկոսը նույն դիշեր, որ կը հեռանար, կնքյալ թուղթ մը կուտար յուր հավատարիմ վարդապետի մը, ուր դառն գանգատներ կ'ըներ ընդդեմ զորավարին։ Մյուս կողմեն կիմանար Թեոդորոս, թե հունաց բանակն, որ ի Կարին էր, կը տարածվեր Բագրևանդ և, քիչ-քիչ առաջ անցնելով, կը մոտենար մայրաքաղաքին։ Ուստի չկարենալով հեռանալ հԱյրարատա, տեղապահ մը սահմանեց կաթողիկոսին և գրեց Սեթայի օգնական զորաց գունդ իրեն հասցնել։

Իսկ Ռշտունյաց Տիկինը շուտ մը երկու հազար հետևակ և երեք հարյուր հեծյալ ու Վարդ որդին հուղարկեց Հայոց զորավարին։ Թեպետ Վարդ շատ դժկամակ էր Ռշտունյաց Ոստանեն հեռանալու և ակամա հնազանդեցավ մորը։ Ի՞նչ էր պատճառն այս դժկամության, ետ դառնանք երկու տարվան միջոց՝ երթանք Ռշտունիք և բացատրենք համառոտիվ։

Երբ Գրիգոր հաղթությամբ ետ դարձավ Հերաց կողմերեն, զՍեթա և բոլոր երկիրը շփոթած ու տխուր վիճակի մեջ գտավ։ Վասնզի մինչ ամենքը կ'սպասեին իշխանին դարձին, Թումայի դավաճանության և Թեոդորոսի շղթայակապ ի Բյուզանդիոն հուղարկվելուն լուրը կը հասներ Վասպուրական, և անմիջապես այն թղթի կտորը իշխանեն, որ կը պատվիրեր Սեթայի՝ «Հսկել երկրին և Ատոմ Շահունիե զատ ոչ ումեք հավատարմություն չընել»։ Բայց դժբախտություն մ'էլ այն էր Սեթայի վիճակին համար, որ Ատոմ կաթվածահար պառկած յուր ամրոցն ի Բզնունիս, Վարդ դեռ Սյունյաց երկիրն էր։ Ուստի երբ Գրիգոր հասավ յուր հաղթական գնդավ, Տիկինն իրեն լավ ընդունելություն ըրավ, վիճակը հայտնեց և բոլոր պատերազմական գործերն իրեն հանձնեց թե՛ զորաց կրթության, թե՛ նոցա թիվն ավելցնելու և թե՛ բերդերն ամրացնելու մասին։

Վասպուրականի բոլոր նավերը գնեց և փոքրիկ ծովուն տեր դարձավ, և Աղթամարա կղզին, որ այն ժամանակ շատ ավելի ընդարձակ էր, վասնզի ծովը հիմկու բարձրությունն չուներ, շտեմարաններն ընդարձակեց ու մեծ քանակությամբ պաշար և զենք համբարեց։ Դիտելով Գրիգորի անխոնջ աշխատության հետ սաստիկ տխրությունը՝ զՁավեն հուղարկեց առ Ներսեհ Կամբարական և Արփենին ուղեց հՈստան, ի մխիթարություն եղբորը։ Կասկածելով իրավամբ, թե Մամիկոնյանց Մուշեղեն և թե՛ դավաճան Մոկաց Արդուվեն, որ կը խլրտեին, զորաց մեծ մասը Գրիգորի հանձնելով՝ Բաղեշ նստուց և բացարձակ հրաման տվավ, որ ամենափոքր նշան թշնամության կամ հարձակումն տեսած ժամանակ նոցա կողմեն սանձահարե ամեն արարք։ Նույնպես Ոստանի շուրջը մեծ խումբ զորաց կը բանակեր Վարդի հանձնած։ Եվ ինք անձամբ շատ անդամ կ'երթար շրջակայքը տեսնելու, թե իրոք պետք եղած ամրություն և գյուղերու պատսպարանք ըստ արժանվույն շինվա՞ծ էին. ամեն գյուղ և ավան գանգատներ կը քններ. յուր ճանապարհորդությանց ընկեր առած երկու համեստ դատավոր և Ռշտունյաց եպիսկոպոսը՝ նոցա որոշմունքը շուտով ի գործ կը դներ. անիրավները, հարկահան, ավանապետ կամ գյուղապետ՝ ավազակները, ազատ կամ անազատ Աղթամարա բերդին մեջ շղթայակապ կ'ուղարկեր աշխատելու։ Ռշտունյաց գավառն այն օրերը տեսնողը կը զարմանար. երկրագործ, հովիվ, արհեստավոր, երիտասարդ և պատանի, ամենքը զինյալ, բայց ոչ ուրեք անկարգություն մը չէր նշմարվեր, վասնզի զենք քաշել կռվի կամ վեճի մեջ սաստիկ խստությամբ կը պատժվեր։

Ուստի Թեոդորոսի հեռավորության միջոցին ոչ մեկ թշնամի չտեսնվեցավ, որ համարձակեր մտնել այն երկիրը, իսկ երբ յուր Հայաստան դարձը լսվեցավ՝ Սեթայի սիրտը հանգստացավ բոլորովին, և օրավուր կ'սպասեր նորա դարձին, բայց տարին կ'անցներ, կը լրանար, և մեծ իշխանն այսօր, վաղը կ'ուշանար։ Գրիգորի հրաման եղած էր արդեն գալ բնակիլ հՈստան, վասնզի բանակը, որ Բաղեշ կ'սպասեր՝ ցրվելու

մխոք ուներ Տիկինը. շրջակայք բոլոր Թեոդորոսի գալստյամբ բարեկամ կը տեսներ ինք և զորքերն հեզգհետե տուներնին կը ճամփեր։ Գրիգոր կուզեր դառնալ երթալ Բագրևանդ, յուր հայրենի տան ավերակներուն, յուր մոր աճյուններուն այց ընել, ուստի թեպետ յուր սրտին մեծ մխիթարություն էր Թենի, և նույնպես ուրախ աչոք կը տեսներ նորա յուր մեկ հատիկ քրոջ վրա ցցուցած սերն ու բարեկամությունը, բայց երբ Թեոդորոս նստած էր Դվին, հոն էին յուր քեռիքն և հորեղբորորդին Համազասպ, հոն գրեթե հայոց բոլոր մեծ նախարարք, ինք զարմանքով կը մնար, թե ինչո՞ւ դինք չէին հրավիրեր գալ և հայրենի ժառանգության տիրանալ։ Ուստի Սեթայի հետ այս խոսակցությունն ունեցավ...

— Որովհետև իշխանը, կաղը աստուծո, ողջ-առողջ հասավ, և վտանգի սպառնալիք չմնաց մեզ համար, Տիկին, կարծեմ թե ինձ հրաման կրնաք տալ, որ երթամ և Դվին ու Բագրևանդ շրջան մը ընեմ։

— Գրիգոր որդյակ,— պատասխանեց Սեթա,— կարելի է մտքեդ անցավ, թե երբ դու այս երկու տարվան մոտ ժամանակ, որ աջ բազուկ եղար մեզ վտանգի օրեր, և ես երբեք չեմ կրնար մոռնալ, չեմ հիշեր քու օգուտդ, վասնզի քանի որ եկեր ես, օր մը այս նյութին վրա չի խոսեցա. բայց պետք է գիտնաս, որ իշխանին գրեցի քանի անգամ, իսկ նա ինձ իմացուց, թե՝ «Չէր մոռցեր երբեք քու իրավունքդ, բայց Մամիկոնյանք ազգային միաբանության թշնամի չընելու համար առժամս այս խնդիրը մեջտեղ հանել չէր կրնար» և զիս համբերության կը հորդորեր։ Իսկ հիմա կարելի՞ է, որ զքեզ ինք ուզե, վասնզի ինձ նոր հրաման կընե զորքերը չի ցրվել և պատրաստի պահել չգիտեմ ի՞նչ նպատակավ, վասնզի չի հայտներ։ Պետք է գիտնաս նաև, որ ամեն անգամ նամակաց մեջ մեծ գոհություն և սեր կը հայտնե քու ազնիվ ծառայությանցդ համար, և որ ես չեմ ուզեր կրկնել, վասնզի զքեզ իբրև գավակ համարել եմ հավասար իմ Վարդիս։

— Այս խոսքերուն բացի շնորհակալութենեն ես ոչինչ չունեմ պատասխանելու. ձեր ազնիվ մայրական սիրույն միշտ երախտագետ եմ, և ինչչա՞փ ծանր էլ լինի իմ սրտիս Ռշտունյաց տունեն կարճ բաժանմունք մը նաև, վարդանաբերդի ավերակներուն և մոր մը գերեզմանին այց մը դեռ հեռուն ձգել ինձ հանցանք կը թվի։

— Շատ իրավացի կը գտնեմ այդ զգացմունքդ, որդյակ, գու ինչպես որ գիտես, այնպես ըրե։

— Դեռ քանի մը օր ժամանակ ունինք, իշխանուհի, այս նյութիս վրա մտածելու։ Միայն խնդիրք մը նաև ունիմ. եթե կարելի էր, Հուսիկի հրաման ընեիք, որ Հերա կողմեն եկած ցորենի վաճառականներու, որ երկու տարվնե ի վեր իրենց առնելիքներն չեն ստացած, վճարե. ես քանի անգամ խնդրեցի, բայց ինք այսօր վսդը ըսելով միշտ կը հետաձգե, և մարդիկը ամեն օր կը դեգերին ու կը դանգատին։

— Ամիրայը երկու տարի է այդ մարդկանց դեռ չի վճարե՞ր, լա՛վ, ես հիմա իրեն կը հասկցնեմ,— ըսավ բարկությամբ և ոտք ելավ։

— Խնդրեմ, իշխանուհի, ես ամբաստանության մտոք չեմ ըսեր։

— Կ'իմանամ, որդյակ,— ըսավ Սեթա, յուր բարկության ծիծաղ մը խառնելով,— տարին քանի մը անգամ պետք է, որ ես Հուսիկի հետ կռվիմ. ուստի այս՝ դարձյալ առիթն է, վասնզի այդ մարդիկը քանի անգամ ինձ խնդրեք մատուցին, և ես հրամայեցի, որ վճարեն պետք է անձամբ ես ի գործ դնեմ։ Դու նստե, ես հիմա կուգամ։

Հազիվ իշխանուհին դուրս ելավ, Թենի ներս մտավ։ Թենի տխուր էր, սովորական կերպարանքը չուներ, և Գրիգոր տեսնելով նորա տրխրությունը՝ թեպետ կրկին և կրկին կը հարցներ տեղեկանալու համար, բայց որոշ պատասխան չառնելով, յուր տխրությունն էլ ավելցավ, և քիչ մը լռությենե վերջ ըսավ դառն ժպիտով.

— Կ'երևա, որ Թենի բալական վստահություն չունի մրաս, եթե Աստամ հայրիկ լիներ, կրնար թերևս այդ սև ամպը ճակտեն հալածել։

— Ինչո՞ւ, Գրիգոր, այդպիսի դրդարտություն մը կ'ընես իմ սիրույս, իմ սրտիս. կարելի չէ՞, որ ես առանց պատճառի նաև կուրացություն մը ունենամ, տկարություն մը, որ տխրություն երևա։

— Ո՛չ,— ըսավ Գրիգոր,— այսօրվան կերպարանքդ այն չի ցցներ, ուրիշ պատճառ մը ունիս և ինձմե կը ծածկես։

— Մի՞թե կարելի չէ, որ իրավունք ունենամ ծածկելու։

— Չեմ կարծեր, եթե իմ սրտես դատեմ քու սիրտդ։

— Հիմա քեզ պատճառը զրուցեմ. կարելի է քեզ շատ անձնապաշտ թվիմ, բայց որ այդչափ հետաքրքիր ես՝ զրուցեմ. խնդիրը երկուքնուս հավասար կը վերաբերի։ Առաջին...

— Ո՜հ,— ըսավ Գրիգոր,— երկուք կամ շատ են պատճառները, որովհետև առաջինեն կ'սկսի։

— Կը տեսնես հիմա։ Իմ պառկելու սենյակս բարակ ապխտակամած մը միայն կը բաժնե իմ պառավ դահեկիս խուցեն. հոն ինչ որ խոսվի, ես ամ դիմն ինք լսեմ. երեկ միջոց մը ես քնած էի, երբ հանկարծ արթնցա և լսեցի երկու պառավ իրարու հետ կը խոսեին, և խոսակցության նյութն մենք էինք։ Է՜հ,— կ'ըսեր մեկը մյուսին,— այդ անկարելի բան է, Գրիգորի հորեղբորորդին Համազասպը արդեն իշխանին (հորս) եղբոր աղջկան հետ ամուսնացյալ է, Համազասպն էլ Գրիգորի հորեղբոր որդին է, ուրեմն կարելի չէ, որ օրիորդը Գրիգորի հետ ամուսնանա...

— Իմացա. թե այդ է քու մտածությունդ, Թենի, ամենեին պետք չէ

հոգ ընես. Համազասպ Մամիկոնյան ցեղեն է, և մեր բոլոր ազգականությունն այսչափ է. յուր հոր անունն էլ Դավիթ է, ուստի օտարներեն ոմանք զմեզ եղբայր կարծած են նաև, բայց մենք ոչ յոթն աստիճան, այլ տասնյոթը աստիճան իրարմե հեռու ենք։ Գանք ուրեմն երկրորդ խնդրույն, եթե այդ էլ այսչափ ծանր է...

— Ոչ, կարծեմ քիչ մը ավելի ծանր է, Գրիգոր։ Քու քույրդ Արփենին գիտես, թե ես ինչչափ կը սիրեմ, բայց մեկ-երկու օր կա, որ կասկած մը սիրտս մտավ, ոչ Արփենիին համար, որ դեռ տղա է, այլ եղբորս՝ Վարդին համար, որ օրավուր Արփենիե չկրնար զատվիլ. շարունակ Արփենիի հետ կատակներ կ'ընե, և այն երիտասարդը, որ որսե զատ ուրիշ բանե զվարճություն չէր զգար, հիմա որսի երթալը նաև դադրեցուց, և նորա ընկերությունը միայն կը փնտրե։

— Այդ խնդիրն ավելի ծանր է։ Եթե մենք սիրով և հույսով կապված չլինեինք, հոգ չէր, բայց այդ նոր համակրությունը կամ զիրենք թշվառ կրնա ընել կամ զմեզ. այդ բանին ճար պետք է տեսնել։

— Ինչպե՞ս, իրավունք ունեի ուրեմն մտածելու և տխրելու։

— Ես մորմեդ խնդրեցի Բագրևանդ երթալ, բայց նա արգելիչ պատճառներ ցցուց և հորդ գրել խոստացավ, եթե յուր հրամանը զինք Շիրակ ղրկե, խնդիրը այսպես կը վերջանա։

— Եթե Ատոմ հայրիկ հոս լիներ և առողջ, ինչչափ մեզի կրնար օգնել։

— Ի՞նչ կըներ։

— Նա մորս կ'իմացներ ասան բան։

— Ի՞նչ կ'իմացներ։

— Կ'իմացներ, թե մենք զիրար կը սիրենք, Վարդ կը հուսահատեր և ամեն բան կը վերջանար։

— Մայրդ ինչ կ'ըսեր։ Միթե չէր ըսեր, թե անտուն անժառանգ երիտասարդի մը Ռշտունյաց Օրիորդ չէ կարելի տալ։

— Քու երկու տարվան ըրած բարձր ծառայությունքդ Ռշտունյաց տան համար իմ ծնողքս չեն կրնար սառնալ, և փոքրիկ վարձատրություն մը կ'ընեն՝ իմ ձեռքս քեզի կուտան...

— Որ ինձ համար շնորհաց ամենամեծն է։ Ո՜հ, սիրելի Թենի, այն օրն ե՞րբ պիտի գա...

— Լռե՛, մարդ կուգա,— ըսավ աղջիկը։ Եվ Ռշտունյաց Տիկինը ներս մտավ. երեսեն՝ աչաց փայլեն հայտնի էր, թե մեծ գործողություն մը կատարելե կը դառնար։

— Քու վաճառականներդ ասկից վերջ քեզ չեն նեղեր, Գրիգոր,— ըսավ,— ես երեկ պահանջներն ամբողջապես վճարեցի։

— Բայց Հուսի՞կ։

— Հուսի՞կ, լացուցի նաև այդ անպիտանը։

Ի՞նչ էր ուրեմն եղածը, որ այդ ահագին ժայռի պես աչքերեն ջուր բխեր էր։

Երբ Սեթա իջավ գանձատունը և հանկարծ մտավ ներս, Հուսիկ, որ նորա այցելություններեն գոհ չէր լիներ սովորաբար, կասկածոտ աչքերն անգամ մը վրան շրջելեն վերջ՝ յուր սիրուն ծիծաղը երեսին ոտք ելավ։

— Այս ի՞նչ մեծ պատիվ է, որ կ'ընեք, իշխանուհի,— ըսավ,— ի՞նչ հրաման ունիք։

Իսկ Սեթա փայտյա տախտակամածին վրա նստավ և ձեռք մերժելով ոչխարի մորթը, որով զինք կը պատվեր Հուսիկ՝

— Ի՞նչ ամոթ բան է,— զրուցեց,— որ շենք շնորհք բազմոց մը շինել տված չես, որ եկող հյուրը կարենա նստիլ։

— Բայց հոս գործքի տեղ է, իշխանուհի, եկողները, երբ իրենց գործը կը վերջացնեն, գոհ սրտով կ'երթան, ամենևին մտքերնեն չեն անցներ, թե հասարակ փայտի վրա նստած էին, թե կակուղ բազմոցի։

— Այդ քու խոսքդ կը նշանակե, թե հոս եկողները տանջարան կը մտնեն, և այս նաև սուտ չէ, վասնզի ամեն օր գանգատ գանգատի վրա կը տեղա, ամեն օր քեզի դեմ խնդրագիրներ կան։ Ոմանք ճամփու ծախք կը պահանջեն, ոմանք ոռճիկ, անկար սպասավորներ թոշակներ կ'ուզեն, որ դու դադրեցուցեր ես. իշխանը երբ իմանա, գանձատունը գլխուդ կը փլցնե։ Ես քանի՞-քանի՞ անգամ է, որ մեր ելից և մտից հաշիվն ուզեցի՝ միշտ փախուստ տվիր, ցույց չի տվիր։ Քանի որ տարիներ կ'ավելնան, կերևա, թե ագահությունդ կը շատցնես։

Իսկ Հուսիկ այս խոսքերուն յուր քաղցր ժպիտով պատասխանեց.

— Այնպես կը զրուցեն, իշխանուհի, դուք իրենց ուշ մի՛ դնեք, անխիղճ շուայլ մարդիկ շատ բան կը զրուցեն։ Ես ձեր գանձին հաշիվները ճիշտ կը բռնեմ, դուք ձեր սիրտը հանգիստ պահեցեք։ Նոքա, որ ճամփու ծախք կը պահանջեն, անպիտանն՛ը, ես գիտեմ, թե կամարները լեցուն եկան։ Այն անկար սպասավորները, որ թոշակ կ'ուզեն, ողջ-առողջ պղնձի պես մարդիկ են, կուգան՝ կուտեն, կը խմեն, փոքրիկ ծառայություն մը չեն ըներ։ Այո՛, ամենքն ինձմե կը գանգտին։ Ատոմ Շահունի

կը գանգտեր, Ինչո՞ւ Գրիգոր իշխանը չի գանգտիր. նա ինձմե գոհ է. ես էլ իրմե գոհ եմ։ Վասնզի իրավ երիտասարդ, բայց կատարյալ և ազնվական մարդ է։

— Խնդրեմ բացատրե՛, ո՞ւր է կատարելությունը։

— Դուք ինձմե լավ կը ճանչեք զինքը, Տիկին, ի՞նչ պետք կա բացատրությանց։

— Ո՛չ, կուզեմ քու կարծիքդ իմանալ։

— Շա՜տ բարի։ Նախ որ աչքը կուշտ երիտասարդ է, դրամի սեր չունի։ Զիս կը բամբասեն իբրև ագահ, ես ընդհակառակն՝ ագահները կատեմ, իշխանուհի, հավատացեք, որ չեմ ուզեր ագահ, ժլատ մարդու երես տեսնել. այն մարդկանց, որ ոսկին, արծաթը կը սիրեն անհագաբար։ Եվ ըսածիս ապացույց՝ ես Գրիգոր իշխանը կը սիրեմ, որովհետև ամենևին ագահ չէ։ Կը հիշեք, իշխանուհի, որ դուք իրեն առատ առձիկ նշանակեցիք, երբ Հերա կողմ հուղարկեցիք գնդավ, ես դիտողություն ըրի, թե այդ ռոճիկը չափազանց է. և դուք ինձ բարկացաք ու նախատեցիք. ես, որ ձեր համբերող և հնազանդ ծառան եմ, ձեր հրամայած ռոճկին արծաթը առաջը դրի, և զարմանքով տեսա, որ բուն, ճշմարիտ ազնվական ձևքն անգամ չերկնցուց, աչքը վրան չի դարձուց, այլ ըսավ քաղցրությամբ, թե՝ «երբ պետք ունենամ ստակի, Հուսիկ հայրիկ, ես քեզնե կ'ուզեմ»։ Այսօր՝ այնօր, գրեթե երկու տարի կը լցվի, փողի մը պետք չունեցավ։ Եվ ի՞նչ զարմանք... խնդրեմ, իշխանուհի, մի՛ բարկանաք, ամեն բան հաշվով է... փառք աստուծո, ձեր սեղանը փառավոր կ'ուտե, կը վայելե, ծառան, ձին նույնպես, հարդն ու գարին առատ...

— Ապրի՜ս, Հուսիկ,— ըսավ իշխանուհին լի բարկությամբ և ոտքի վրա ցատկելով,— այս ի՞նչ բան է ըրածդ. գերությենե դարձած տղու մը՝ երկու տարի փող մը չե՞ս տվեր... Եվ պարծանոք առանց ամաչելու կը պատմե՞ս... Տե՛ր իմ աստված... ե՞ս ինչպես այդ ազնվական երիտասարդին երեսը պիտի նայիմ...

Իսկ Հուսիկ անխռով, ամենայն հանդարտությամբ կ'ըսեր.

— Խնդրեմ, իշխանուհի, այսպես մի՛ շփոթիք, ես ամեն օր կը նայիմ, ամոթի բան չի կա, ինք շատ գոհ է, շատ էլ բարեկամ ենք իրարու, և շատ սիրով...

— Լռե՛, հիմար, ինք քեզնե շատ գո՜հ է, կը սխալիս. ինչպե՞ս կարելի է քեզնե գոհ լինիլ, երբ երկու տարի առաջ յուր զորաց ալյուրի և գարիի ստակը չես վճարած, և վաճառականք, որ ինձ խնդրագիր տվին, նույնպես Գրիգորի գանգտեր են, այս ամոթ չէ՞, որ մարդիկը զորավարին կնիքը յուր երեսին նետեն։

— Այո՛, իշխանուհի, շատ ամոթ բան է, այդ անպիտանները ես լավ կը ճանչեմ, հանցանքը զորավարին չէ, այլ այդ գողերուն, այդ ավազակներուն, որ զինք խաբեր են, մեկին տեղ երկուք կուզեն առնուլ... դուք հոգ մ'ընեք, իշխանուհի, նոքա կը կակղնան, ես գործը կարգի կը դնեմ, և այնպես որ ոչ ոք ձեր ազնվությունը չի նեղե։ Դուք, իշխանուհի, լավ-լավ կառավարել գիտեք, ամեն սիրտ շահիլ գիտեք, մեծին, պզտիկին, իշխանին և գյուղացիին տեղին խստություն, տեղին քաղցրություն գործածել գիտեք. բայց եթե, կը ներեք ըսել, ձեր հաշիվը, ձեր ծախքը չափավորել չեք գիտեր։

— Այս ի՞նչ կնշանակե,— կ'ըսեր Սեթա բարկության ծիծաղով,— կ'երևա, թե դու հիմա զիս կ'ամբաստանես. ես իմ հաշիվս չեմ գիտեր, հաշիվ տված ունի՞ս, որ գիտնամ։

— Կը ներեք, իշխանուհի,— ըսավ Հուսիկ յուր քաղցր ժպիտով,— այդ նաև հաշիվ է։

— Ինչպե՞ս,— ըսավ Սեթա այս անգամ կատարյալ բարկությամբ։

— Խնդրեմ, կիրք մ'ելնեք, իշխանուհի։ Ձեր հաշիվը ինչչափ չգիտնաք և չիմանաք, այնչափ օգտակար է ձեզ համար։

— Այս խոսքերով կ'իմացնես, թե գանձիդ վիճակը շատ լավ է, միայն կը վախես, թե ես, որ իմանամ, ավելորդ ծախքեր կ'ընեմ, ուստի ինձմե նաև պետք կը տեսնես ծածկելու։

— Դուք շատ խելոք տիկին եք։ Սաբա թագուհիի պես, որ Սողոմոնի հարստությունը լսելով...

— Լա՛վ, լա՛վ, իմացա, բավական է։ Ավելորդ և երկայն խոսքերու ժամանակ չունիմ, ես պետք է որ Սաբա թագուհվո պես գործ տեսնեմ, անցիր դու արկղիդ գլուխը նստե։

— Ես ձեր ամենախոնարհ ծառան չեմ համարձակիր...

— Ես երբ կը հրամայեմ՝ չե՞ս հնազանդիր,— ըսավ Սեթա այնպիսի բարկացայտ աչքերով, որ այլևս դիմադրություն չէր վերցներ, և Հուսիկ յուր ժպիտը, յուր քմծիծաղը, յուր քաղցր ճարտարախոսությունը ի

բաց թողլով՝ անցավ նստավ յուր տեղը, յուր ոչխարի հինավուրց մորթին վրա, բարակ շրթունքը բերնին մեջ ամփոփելով ի նշան մեծ համբերության՝ նման կատարյալ այն փոքրիկ տղուն, որ սրտահառաչ ակամա դպրոց կ'երթա և գիտե, թե թաթն ու չոր հացն իրեն կ'սպասեն։

Հերա վաճառականք և ուրիշ ամիսներով, տարիով սպասող պարտատերք վայրկենին վճարվեցան առանց քննության։ Խեղճ Հուսիկ, որ յուրաքանչյուր պահանջի դիտողություն ընելու հազիվ թե բերանը կը բանար, «բայց Տիկին...» ըսելու նաև ժամանակ չի տալով, իշխանուհին՝ «Դիտողությանց ժամանակ չի կա, վճարե» կ'ըսեր խիստ և կամաց ձայնիվ։ Երբ պահանջ և պահանջող չի մնաց, ելավ Սեթա անհայտ ակնարկ մը հազիվ ձգելով Հուսիկի վրա, որուն անմխիթար կերպարանքը, նվաղյալ աչքերը, տժգույն երեսը կը հայտնեին սրտին վիճակը։

Խեղճ գանձապետը տխուր նայեցավ մեկ մը յուր դատարկացյալ արկղին վրա, մեկ մը այդ դռան վրա, ուստից գնացեր անհետացեր էր Տիկինը, և ըսավ հառաչանոք.

— Ապրի՞ս, շա՞տ ապրիս, Ռշտունյաց Տիկին, ի՞նչ մեծ քաջություն էր, որ գործեցիր։ Փուճ տեղ չեն ըսեր պապերը՝ «Մազն երկան՝ խելքն կարճ»։ Եվ սա ամենե՞ն խելոքն է։ Ափսո՞ս, ափսո՞ս։

ԳԼՈՒԽ ԻԶ

Գրիգոր տխուր էր, վասնզի մարդուս կյանքին մեջ վիճակի անորոշությունը հիվանդություն մ'է, մանավանդ երիտասարդության մեջ երկայն են օրերը, որ կ'անցնին, և ժամանակը երբ կը թռչի՝ կը սլանա մեկ կողմեն, մյուսեն կ'ըսե երիտասարդին՝ «Սպասե, հուսա, քեզի էլ կուգա հաջողության կարգը, քու բույնդ էլ կը շինվի, կուգա ատեն, որ երազներդ իրագործվին»։ Եվ նա կը հուսա, կ'երազե, երջանկության դրախտներու մեջ կ'անցնե ծանր երևակայությամբ, առասպելներ կը շինե, և նույն միջոցին նյութական աշխարհքիս մեջ կը կռվի տաժանելի պատերազմը, կը ջանա կործանել արգելքները, որ պարագաներն իրեն դեմ կ'ստեղծեն, հաջողությունք և ձախողությունք իրարու կը հաջորդեն, կյանքն էլ կ'անցնի, մինչդեռ երիտասարդության գարունն էլ կ'անցնի շատերուն համար, գարուն, որո շատ անգամ ծաղկունք ջարդված կարկտի հարվածե, խամրյալ կիզիչ արևե, ամայի պարտեզի տխուր կերպարանքն կը ցցնեն։ Բարեբախտություն մի է նաև, երբ երիտասարդությունը ունի անուն մը, ունի ժառանգություն մը, ունի պաշտպան մը, ունի հայրենիք մը, ունի կին մը, որ զինք կը սիրե. կենաց դժվարությունք այն ատեն կը դյուրանան անոնց համար, որ իրենց բախտեն ավելի մեծ սիրտ մը կ'զգան հինքյանս, որ ուժով կը բաբախե։ Գրիգոր մեծ անուն մ'ուներ, բայց յուր հորեղբայրը զայն իրեն կը զլանար, ժառանգություն ուներ, որ յուր ազգականք գրեթե հափշտակեր էին, պաշտպան մ'ուներ, որ գրեթե երկու տարի էր, կորուսեր էր և կենաց նշան չէր տար, կին մը՝ դեռահաս աղջիկ մը կար, որ զինք կը սիրեր, ահա հոն էր յուր միմիայն մխիթարությունը։ Բայց այդ սերը նաև ուներ արգելքներ, և ինք քաջ թշնամյաց առջև՝ չէր զգար քաջություն համարձակիլ զրուցելու կնոջ մը՝ նորա մորը, թե «այդ աղջիկը կը սիրեմ, դա իմս է»։ Եթե յուր պաշտպանը՝ Սուրեն հոն լիներ... Բայց ուր էր Սուրեն, որ կռվի մը, զինուց շկահմանց մեջ կորսվեր ձայն չէր տար։ Եթե ողջ է, ինչպե՞ս մոռացեր էր յուր սիրելի քեռորդին։ Մեռա՞ծ կամ դարձյալ գերության էր մատնված։ Բայց այդ մարդը հաջողակ, հանդուգն, որ դժվարություն մը չէր արգիլեր, այդ մարդը չէր կրնար մեռնիլ. Գրիգորի համոզմունքն այդ էր։

Մենք Սուրեն թողինք յուր փրփրերախ երիվարին վրա, որ կը դիմեր սրընթաց Ամանոսի լեռը, արաբացի հալածիչ գունդը ետևեն, որու ձեռքեն ազատիլն հայտնի էր իրեն, երբ անգամ մը փոքրիկ միջոց թողուց յուր և նոցա մեջ։ Բայց միշտ այն կը խորհեր, թե այս իրարու հաջորդող խումբերը մի՞թե մեծ գունդի մը հառաջապահք չէին։ Այս մտածությամբ ահա ձիուն զորությունը կը խնայեր և կը փափագեր, թե ինչ որ պիտի գա, թող գա, որպեսզի այս տարտամ վիճակեն ազատի, քանի որ ինք և ձին դեռ կարեին տոկալ, վասնզի յուր և կենդանվույն պաշար չէր մնացեր։ Արևն սկսավ խոնարհիլ, և երկիրն սկսավ փոխվիլ. բարձունք երևեցան, և ինք վերջապես ավազը թողուց և ամուր հողի վրա սկսավ երթալ, վտանգը թեթևցած էր, վասնզի կ'երևակայեր, որ արաբն այդ երկրները կոխելով՝ քրիստոնյան բարձունքը քաշված էր. տեղ-տեղ հյուղեր կը նշմարվեին, և տեսավ երկու-երեք հետևակ մարդիկ, որ դեպի կիրճ մը կ'ուղղվեին, շտապեց ձին և հարցուց, թե մոտ բնակություն

կա՞ր. նոցա կասկածոտ նայվածքը, զգեստներուն ավելի մաքրությունը, զենքերուն ձևը հայտնի ըրին, թե քրիստոնյա ասորիք էին, ուստի առանց սպասելու նոցա պատասխանին՝ «Ես քրիստոնյա եմ,— ըսավ,— ինձմե՛մ կասկածիք, եթե դուք քրիստոնյա եք, զրուցեցեք համարձակ»։ Մարդկանց վստահ ձևը և ուրախությունը նաև հայտնեց, թե քրիստոնյա էին, ինչպես խոստովանեցան, բայց իմացուցին, թե այն օրերը շատ վտանգավոր հարձակումներ կրած էին հարաբաց, և թե մոտերը նոցա ավազակաց խումբեր կը թափառեին և թե իրենք Մարտայիթ ըսված քրիստոնյայք էին, որ Լիբանանու և Ամանոսի մեջ ամրացած կը կրռվեին՝ այն կողմերը միակ պատվար մնացած քրիստոնեության։

Սուրեն ապահովյալ էր հարաբաց, գնաց հյուր եղավ այն գիշեր նոցա լեռնային խրճիթներուն մեջ, իմացավ, թե Կիլիջայի մոտերն էր, ուստի հանգստացավ, և առավոտուն ելավ ուղղվեցավ Հանտիոք Կոմակենի, վասնզի կ'ուզեր ժամ առաջ հասնիլ քաղաք մը, որ կարենար յուր ազգայիններեն մարդ գտնել, և կը հուսար, բայց երբ հասավ, քաղաքը գրեթե անապատ էր, ինչպես բոլոր ասորվոց քաղաքները, ամեն ոք ինչքն առած լեռներն ելեր և հյուղաբնակ էր եղեր. հազիվ քանի մը կրպակ կային, ուր կենաց ամենակարևոր պիտույք կը գտնվեին, ուստի ինք նաև Գերմանիկ երթալու համար Ամանոսի ճամփան բռնեց, բայց հազիվ ժամվան չափ հեռացեր էր լքյալ քաղքեն, բլուրի մը վրա բարձրանալով տեսավ, որ երկու խումբ կատաղաբար կը կռվեին իրարու հետ։ Յուր վարժ և սուր աչքը որոշեց մահմեդական արաբացին և քրիստոնյա ասորին, առանց վայրկյան մը տատամսելու հարձակեցավ, մտավ այդ խառնուրդին մեջ, յուր զգեստներուն պերճությունը կամ արաբ նժույգը չէր, որ քրիստոնյա և մահմեդական զարմանոք և սոսկմամբ շփոթեց, այլ յուր ահագին սուրին փայլը և արագությունը, որ արյան գետեր կը հոսեցներ, երկու կողմը գերմարդկային էակ մը զինք կարծեցին, և երբ մահմեդական գնդին պարագլուխը նաև կայծակնահար ինկավ գլորեցավ յուր սուրեն երկու ճղքված, հեթանոսաց զորքը ցանուցիր սկսան փախչիլ, հաղթությունը քրիստոնեից եղավ, ամենքն օվսաննաներով Սուրենի ձիուն առջև կը տարածեին իրենց վերարկուները և գովասանության երգերով կառաջնորդեին Ամանոսի լեռը, որ այն ժամանակներեն և մահմեդականաց «Կյավուռ տաղը» անունն ստացավ։

Այդ օտարականը, որ քրիստոնյա էր և արաբական ոչինչ չուներ, բացի յուր զենքերեն, ձիեն և զգեստներեն, որ այն նեղ վայրկենին իրենց օգնության հասեր էր և որ այնչափ քաջություն և հաջողություն ուներ, իբրև սուրբ կամ իբրև երկնային էակ ոչան նկատել այդ լեռնականք և կը խնդրեին, որ չթողու, չերթա, այլ մնա իրենց քով, լինի իշխան և զորավար։ Հազիվ հասան իրենց լեռնային գյուղը, որ Ամանոսի բարձանց վրա գետեղյալ խրճիթներու հավաքմունք մի էր, ի՛նչ պատիվ և ի՛նչ հարգանք, որ կրնային մատուցին, կանայք, աղջկունք, երբ կանցներ, մատնանիշ զինք կը ցցնեին, և ծերերու պատկառելի խումբը բոկոտն կը մոտենար իրեն, մինչև եկավ հրապարակի նման տեղ մը, ուր ընդարձակ խրճիթ խաչի նշան վրան՝ կը հայտներ, թե եկեղեցին եկած էին։ Հոն ասորի եպիսկոպոս մը յուր եկեղեցական դասուն հետ խաչիվ և Ավետարանավ զինքն ընդունեց։ Սուրեն այս կրոնական նշաններուն առջև իջավ ձիեն և արժանի երկրպագությունը մատուցց, բայց խնդրեց, որ իրեն հանգստյան տեղ ցցնեն, վասնզի հոգնած էր, կ'ըսեր, և մանավանդ թե հոգնած էր այն ցույցերեն և չէր ուզեր հայտնել։

Գյուղին ամենալավ խրճիթը տվին Մարտայիթք Սուրենի, որ շենքովն թեպետ հասարակ և անտաշ փայտերու կերտված մի էր երկու դռներով, առանց պատուհանի, որոց մեկը պայծառ վտակի մը վրա կը բացվեր գարավոր կաղնիներով հովանավորյալ։ Ճաշի խորոված ու գինին առատապես առաջը դրին, և ոչ ոք սեղանին շմասնակցեցավ ի նշան հարգության և ոչ եպիսկոպոսն, որ խոնարհաբար նստած էր հեռու ժողովրդյան ծերակույտին հետ։ Սուրեն հարցուց իրենց վիճակը և իմացավ, թե այդ ժողովրդյան մեծ մասը մահմեդական կատաղութենեն փախած այդ լեռներուն ապաստանյալ՝ գրեթե շարունակ պատերազմի մեջ էին, և թե օրավուր հուսահատությունը կը տիրեր իրենց վրա, վասնզի Հերակլ կայսեր Ասորիք թողլով երթալեն և մեծին Անտիոքա իջնելեն վերջ՝ նոր կորուստ մը նաև ունեին, իրենց իշխանը, որ շատ քաջ մարդ էր, մեռեր էր դաղանամուտ մահմեդականաց ձեռք, և նոր դժբախտություն մը նաև հիմա կը հասներ իրենց՝ այն, որ Կոստանդին կայսրը՝ Հերակլի թոռը, իրենց ղրկեր էր հավատո դավանություն մը, և որ իրենց բոլոր աստվածաբանք հերետիկոսական գտնվելով չէին ընդուներ, բայց դարձյալ թուղթ մը հասեր էր կայսրեն նույն այն միջոցին, որ կը հրամայեր խստիվ ընդունիլ յուր առաջարկած դավանությունը՝ սպառնալով ջնջել զիրենք աշխարհքիս վրայեն։ Այսպես մեկ կողմեն մահմեդակա-

նությունն կ'սպառնար իրեն, մյուսներն՝ բյուզանդական նոր հերետիկոսությունը։ Ինչ ընելին շփոթած էին։

Սուրեն պարտավորյալ համառոտ պատմեց իր արկածքը, և երբ ամենքը քաշվեցան, գնացին, իջավ վտակը, լվացվեցավ, և քանի մը ժամ քունե վերջ՝ կազդուրյալ արթնցավ։ Երբ կը պատրաստվեր ելնել շրջան մ'ընելու դյուղին մեջ, ահա եպիսկոպոսը և ծերերու խումբը եկան դարձյալ, և այս անգամ կողովներով արմավ, փիստակ, չամիչ և ուրիշ այսպիսի շոր պտուղներու ընծաներով իրեն ներկայացան, խնդրելով, որ զիրենք չթողու, այլ մնա իրենց քով և հանգուցյալ իշխանին տեղ տիրե այդ լեռներուն, խոստանալով հավատարմությամբ ծառայել իրեն։

Այսպիսի առաջարկություն մը Սուրենի ծիծաղ և բարկություն բերավ միանգամայն. բայց ինքզինք սանձել խոհեմություն համարելով պատասխանեց, թե՝ «այդպիսի խնդիր մը մերժել յուր կողմանե այնչափ տմարդություն էր, ինչչափ այդ խնդիրն ընողներուն սրտի ազնվության հայտնություն էր, որ իր փոքրիկ մեկ օգնությունը այդպիսի մեծ պատվով կ'ուզեին վարձատրել։ Բայց խորհրդածելով, թե ինք ընտանյաց տեր էր, և յուրայինք տարիներով կ'սպասեին աչքերնին ճամփան, ո՞ր հայրը իրենցմե կրնար ներել յուր անտարբերության, եթե մոռնար ընտանիքը»։

Այս խոսքերը թեև քաղցր կերպով զրուցված՝ դարձյալ մերժումն էին, և ծերերը տխրեցան. իսկ եպիսկոպոսը, որ հայր չէր, սկսավ սուրբ գրոց հարմար կամ անհարմար վկայությամբք քարոզ մը տալ իրեն, ուր Հուդա Մակաբե՝ Փրկիչ զինք կ'ուզեր ընել, և յուր վերջին փաստը՝ անջրելին և անհակառակելին մեջ բերավ, երբ ըսավ.

— Հիմա դու, ո՜վ քաջդ և ազնվական, երբ կամա-ակամա այս մեր լեռները կենաս, մեր իշխանուհին տեսնես, որ քաջ է այր մարդու պես, որ շուշան յուր սպիտակ մորթով և վարդ յուր շրթանց կարմրությամբ, որու մեծ և գեղեցիկ աչքերը եղնիկի են, որու վիզը ջայլեման և հասակն արմավենյաց, դու կը մոռնաս քու մեռած կամ թողած կամ զքեզ մոռացած կինդ ու զավկներդ։ Աստված ձեզի նոր-նոր ընձյուղներ կուտա, որ յուր տան վայելչությունը շքեղանա, այս բարձունք կը զարդարվին փառավոր, քան զՍիոնի լեռը, կը ծաղկին, քան զՋիթենյաց պարտեզը։

Մարտայիթ եպիսկոպոսին ճառը, որ Սուրենի ճաշակին համար ախորժելի և անախորժ կողմերն ուներ և մանավանդ հետաքրքրական էր, իր սովորական լուրջ երեսին ժպիտ մը չի կրցավ արգիլել, և լեռնցի ծերակույտը այդ ժպտին ծիծաղներով, ուրախության ձայներով և շըշունջներով պատասխանեց։ Սուրեն տեսնելով, թե այդ մարդիկը այնչափով գոհ եղան, էլ պատասխան չի տվավ այդ ճառին։ Երեկոն սկսած էր, ընթրիքն ծառայեցին յուր դռան առաջ դուրսը, ուր մեծ կրակ մը կը լուսավորեր և միանգամայն կը տաքցներ, և լեռնային երաժշտություն մը և կաքավ գիշերվան մեկ մասը գրավեց։ Ինք քաշվեցավ կեսգիշերվան մոտ յուր խրճիթը, մտածելով Սև լեռան իշխանության և այրի իշխանուհվույն վրա, որ այնչափ գեղեցկություն հինքն կը պարունակեր, մինչև որ քունը աչքերուն իջավ։ Երկու-երեք ժամ քունե վերջ արթնցավ. դռան քով կամաց ձայնով խոսելու շշուկ կար, ուշ դնել սկսավ և լավ լսելու համար մոտեցավ դռան, նայեցավ, ծակե մը տեսավ դուրսի կրակին մոտ երկու զինյալ երիտասարդ պառկած քուն կը լինեին, երկուքն էլ ծնկվնին ծալլած նստած կը խոսեին, մին կ'ըսեր.

— Ո՞ւր պիտի երթա, ձին որ Միքայել հրեշտակապետի ձիուն կը նմանի, միայն թևեր կը պակսին, եպիսկոպոսին տունը կապված է, իշխանուհին կուգա վաղն առավոտ, կը տեսնե, կը հավնի այդ մարդուն անտարակույս՝ մեկ մաղ ճերմակ չունի ոչ գլխուն և ոչ ծնոտին վրա, թեպետ քիչ մը խորշոմյալ է ճակատը և դաժան՝ նայվածքը։ Բայց մեր վախճանյալ Ամիրն ավելի գեղեցիկ չէր, և ասկից ավելի քաջ չէր։ Այս մարդուն գեղեցկությունը բազկին վրա է։

— Լա՜վ, բայց կին ըսածդ յուր քմահաճույքն ունի, մանավանդ մեր իշխանուհին, որուն ներքին կյանքը զարմանալի կը պատմեն, ո՜ւր մնաց, որ այդ մարդն էլ յուր երկիրը կին, զավակ ունի եղեր։

— Բայց երբ իրեն կին, իշխանություն կուտան հոս, երբ իրեն ծառայելու համար այսչափ ժողովուրդ պատրաստ կը մնան, և ինք գոհ չլինիր, այն ատեն, երբ աղաչանք, պաղատանք բավական չլինին զինք համոզելու, բռնություն ի գործ կը դնեն։ «Քանի մը օր բանտ կը մնա՝ կը համոզվի»։ Այսպես կ'ըսեին ծերերը, ես լսեցի։

— Աստված խելք ու միտք տա այդ մարդկանց, զիս ուզեր իշխանուհին, ես ամենևին չէի նազեր, սիրով հանձն կառնուի իր հետ ամուսնանալ,— ըսավ մեկը ծիծաղելով։

— Նա էլ քեզպես ոչինչ երիտասարդն ի՞նչ պիտի ընե. սա սովորական մարդ չէ, վտանգի, պատերազմի ժամանակ մեզ կարող է կառավարել։ Մանավանդ, որ կայսրը մեր վրա կը բռնանա, մեզ հավատքե կ'ուզե հանել։ Բայց ժամանակ է, որ մեր ընկերներն արթնցնենք, բավական քնացան։

Սուրեն այդ խոսակցությունը լսելով, կամաց մը դարձավ յուր ընձեռիներուն վրա ընկողմանեցավ, սկսավ մտածել այս նոր վիճակին, որ իրեն շատ տխորժելի չէր։ Չորս տարի գերության շղթաներե ազատելեն վերջ՝ դարձյալ նոր տեսակ շղթաներու վտանգի ենթարկվիլ ծանր խնդիր էր, մանավանդ, երբ հայրենյաց դռան էր հասել։

ԳԼՈՒԽ ԻԷ

Առավոտն հասեր էր, և Սուրեն չէր կրցեր աչքերը գոցել, ուստի ելավ շրջան մ'ըրավ գյուղին մեջ, որ ոչ գյուղ էր և ոչ քաղաք, բոլոր լեռը շարունակություն մ'էր խրճիթներու, հյուղերու և բավական լավ տուներու. անտառ և պարտեզ իրարու էին խառնված, տեղ-տեղ պատվարներ և պատնեշներ ամրացուցեր էին ընիկ անառիկ դիրքեր, կանայք և աղջկունք, երիտասարդք և տղայք մրջյուններու պես կը վխտային, այր մարդիկ գրեթե բոլորն էլ անբաժան ունեին իրենց զենքերը։ Հայտնի կը տեսնվեր, թե ասորվոց զանազան քաղաքաց և գավառաց բնակիչք լեցվեր նոր ժողովուրդ մը կազմեր էին. հռչակավոր և մեծ Անտիոքի բնակիչքը իրենց քաղաքականացյալ նրբության հետ բերեր էին իրենց բարուց զերծմունքը, ինչպես երուսաղեմացին յուր կրոնասեր նախապաշարմունքը։ Ասորի լեզվին հետ գրեթե հավասար կը քալեր աղավաղյալ հունարեն մը։ Խեղճուկ եկեղեցյաց մեջ ոսկեղեն և արծաթեղեն ճոխ հանդերձանք և կարասիք կը փայլեին։ Մահմեդական երկրագործը ահագին տեղափոխություն բերած էր նյութական և բարոյական Ամանոսի և Լիբանանու լեռանց վրա, և երկայն դիտողությանց պետք չի կար Սուրենի սուր աչաց համար։

Կը տեսներ նաև, թե ինչպես ձիուն շուրջը իբրև թիկնապահք տասներկու լավ զինյալ մարդիկ կը պտտեին, գիշերվան խոսակցությենեն եպիսկոպոսին կամա-ակամա բառերն այդ փոքրիկ խումբին կրկնակի պաշտոնը իրեն հայտնի կ'ընեին։ Ուստի ինք յուր միամիտ կերպը առանց թողլու կը շարունակեր ընթացքը, երբ սրընթաց հասան քանի մը պատանիք իմացնելու, թե իշխանուհին հասած կ'սպասեր։

Քահինա էր այս կնոջ անունը, լեռնական խոշոր գեղեցկության մեջ բյուզանդական նրբամտություն ի նմա նշմարեց Սուրեն, առջի նայվածքով։ Մեծ հարգանոք ընդունելություն ըրավ Տիկինն իրեն, նույն տախտին վրա քովն առավ նստեցուց, շնորհակալությունք ըրավ յուր դյուցազնական օգնության համար, երկնառաք հրեշտակ զինք անվանեց։ Սուրեն՝ արաբական լեզվին մեջ յուր ակար գիտությունը հայտնելով՝ համառոտեց պատասխանը, և ինչպես կինը զինք կը դիտեր, ինք նաև կը դիտեր յուր շարժմունքը, որ ազատ էր, քան թե ինչ-որ կնոջ մը կը վայլեր։ Յուր զգեստները, ուր ծիրանին և բեհեզը և հնդիկ շալը կը փողփողեին հարուստ ապարանջաններու և մանյակներու հետ, մեջքը ոսկի գոտին, ուր ականակուռ դաշույն մը աչք կը շլացներ, յուր բարձր հասակը, մեծ և փայլուն աչքերը, թանձրկեկ շրթունքը՝ նշան սիրահորդ բնության, յուր գրեթե առնացի ձայնը, վերջապես ամեն բան Սուրենի ճաշակին հարմար չէին, մանավանդ, որ ինք անհամեմատ գեղեցկությամբ կին մը կորսնցնելեն ի վեր ամեն կնոջ երեսին անտարբեր էր և ամենևին եպիսկոպոսին հափշտակությունը չունեցավ և իրեն այնպես թվեցավ, որ Քահինա նաև իրեն համար նույն զգացմունք ունեցավ առաջին նայվածքին։

Թեթև ճաշ մ'ընելեն վերջ, որու մասնակցեցավ եպիսկոպոսը միայն, Քահինա հրավիրեց Կամսարական իշխանը յուր պալատը, որ մեկ-երկու ժամավ հեռի էր, գեղեցիկ ոսկեկազմ ջորիի վրա հեծած ինք առաջեն կը ձիավարեր, երեսունի չափ երիտասարդ թիկնապահք զինք կը շրջապատեին։ Հազիվ քառորդ մը ճամփա ըրին՝ երևցավ պալատը իբր թե օդին մեջ կախված, ժայռի մը գլուխ կանգնած, ամեն կողմե տեսանելի բերդ, որ շատ մոտ կը կարծվեր, բայց հոն հասնելու համար այնչափ կիրճերե, այնչափ նեղ և պտույտ ճամփաներե, այնքա՜ն ելևէջ պետք էր ընել, որ իրոք բարձրանալը երկու և ավելի ժամ տևեց։ Բավական ընդարձակ և վայելուչ էր ամրոցը, ահավոր տեսարան մը ժայռերու, գահավեժներու և անտառներու կը բացվեր նայողին, և հեռուն կ'երևար արծաթի պես ծովը և Կիլիկիո ընդարձակ դաշտը։

Քահինա արքայավայել մեծարեց յուր հյուրը. ինչ-որ պակասություն ուներ, ամենքը հոգաց. ծառաներ եկան զինք բաղանիս հրավիրեցին և անտի ելնելեն վերջ բազմախորտիկ ընթրյաց տարին զինքը, ուր հռոմեական ձևով բաստեռանց վրա տարածյալ իշխանուհին իրեն կ'սպասեր, և զինք ևս յուր դիմացը նույնպիսի բազմոցի մը վրա հրամցուց։ Ուրիշ կոչնական չի կար, այլ, որ ամեն բանե ավելի զարմացուց հայ իշխանը, այն էր, որ կնոջ հետք անգամ չէր երևեր, այլ ծաղկապսակ, նաբահաս և գեղեցիկ պատանիք կը ծառայեին սեղանին. Արաբիո քաղցրահոտ խունկեր կը բուրեին, զանազան գինիք խաղողի և արմավի սե-

զանը կը զարդարեին, աներևույթ և մեղկ երաժշտություն մը կը նվագեր. վերջապես ինչ որ շվայտությունը և պագշոտությունը կրնային ստեղծել՝ ամեն բան հոն կատարյալ կար։ Սուրեն առանց զարմանք հայտնելու կը տեսներ այդ ամենը իբր անտարբեր աչք, մինչև իսկ այդ կնոջ մատովակը՝ պատանյաց ամենեն գեղեցիկը, որ շարունակ Տիկնոջ գավաթը կը լցներ, և որ նա անդադար կը խմեր՝ հորդորելով Սուրեն յուր օրինակին հետևիլ։ Վերջապես ակնարկի ըրավ, և սպասավորք հեռացան, այն ատեն ըսավ Քահինա Սուրենի.

— Իշխան, զիս կը տեսնես այնպես, ինչպես եմ միշտ. կրնայի քեզ խաբել քանի մը օր, ծածկել իմ մոլությունքս, և երբ երեկ ինձ իմացուցին քու գալդ, առաջ այնպես շարժիլ որոշեցի, որ ծածկեմ քենե իմ այս շվայտ կյանքս, բայց վերջը մտածեցի, թե ո՞րն ավելի լավ էր. կեղծավորությո՞ւ, որ մարդկանց մեծ մասին ախտն է, թե ազատ համարձակ երևիլ ինչպես որ եմ. և այս վերջինն ընտրեցի։ Բնությունը զիս այսպես է ստեղծեր, դաստիարակությունն էլ օգներ է, վասնզի փոքր հասակես անսանձ, համարձակ աճեր եմ ըստ քմաց՝ մեր անտառներու կաղնիներուն պես։ Քու կերպարանքդ, քու նայվածքդ տեսնելով՝ մեկեն իմացա, որ ես քեզ համար ստեղծված չեմ, ինչպես դու ինձ համար. վասնզի դու էլ կը նմանիս իմ հանգուցյալ էրկանս՝ միայն այն մեն տարբերությամբ, որ քու գլուխդ այնչափ ուղեղ կա, ինչչափ նորա գլխուն մեջ ոչինչ չի կար. մարմնական ուժ մը միայն ուներ և հաջող զինաշարժություն. բարեբախտաբար հարված մը երկուքս էլ ազատեց. զնա՝ կյանքեն, զիս՝ գերությենեն։ Հիմա՝ այս հիմար ժողովուրդը և յուր ավելի հիմար առաջնորդներն եկեղեցական և աշխարհական՝ ծեր և երիտասարդ ամոթ կը համարին կնոջ մը իշխանության հնազանդիլ, ինձ, որ սովորական կին չեմ, այր մարդու պես ձի կը հեծնեմ, զենք կը շարժեմ, երկյուղ ըսված բանը չեմ գիտեր և կ'զգամ, թե կրնամ նաև իրենց առաջնորդել պատերազմի մեջ։ Քանի մը անգամ ուզեցի իրենց հասկըցնել, բայց իրենք խոնարհաբար իմացուցին (այնպիսի խոնարհությամբ, որ սպառնալիքե տարբերություն չուներ), թե պետք էր ինձ էրիկ մը ընտրեի, և երբ ես այս ընտրության վրա հնարք կը մտածեի, մեր եպիսկոպոսն ինձ իմացուց սուրհանդակավ քու գալդ, քու քաջությունդ, քու պատմությունդ և կերպարանքդ, վերջապես մինչև կեսգիշեր տասը պատգամավոր եկավ քու յուրաքանչյուր խոսքդ, յուրաքանչյուր շարժմունքդ ինձ իմացնելու. այս կը նշանակեր էրկան մը ընտրությունը ինձ թողելն վերջ, այդ հիմարները՝ կը ներես, այդ խելոքները՝ էրկան ընտրությունն էլ իրենք կը կատարեին, իբրև թե իրենք ամուսնանային։ Ուստի այս դատարկ գլուխներուն հետ խոսիլ ավելորդ համարեցի, և խոսելեն ավելի իմ ներքին կյանքս ցույց տալ քեզ պես սրամիտ մարդու կարևոր դատեցի։ Հիմա իբրև հին բարեկամի մը քեզ խորհուրդ հարցնեմ. ի՞նչ ընենք։ Դու, անտարակույս, կուզես այս կյանքեն ազատիլ, ես էլ նույնպես քեզմե ավելի, ես, որ այս լեռներուն մեջ ծնած և կենացս մեծ մասը անցուցած եմ, կը փափագիմ ժամ առաջ թողուլ ելնել աստից, բայց իմ պատրաստությունքս դեռ չեմ ամբողջացուցել. մինչև այն ատեն քեզ հետ ինչպե՞ս անցնենք, ահա խնդիրը։ Միայն համարձակ եղիր ինձ հետ, ինչպես ես եղա քեզ հետ։

— Բայց, իշխանուհի,— ըսավ Սուրեն ծիծաղելով,— ինչե՞ն հայտնի է, թե զիս փորձելու համար այս երկայն խոսակցությունը չբրիք, և այդ համարձակախոսության տակ ուրիշ գաղտնիք մը չի ծածկվիր։ Ինչե՞ն գիտեմ, թե քու իմ վրաս վստահությունդ անկեղծ է։

— Ես շատ և չափես ավելի գինի խմեցի այս իրիկուն, որ դու վրաստահանաս հարմար առակեն, որ կ'ըսե, թե գինին գաղտնապահ չէ։

— Լա՛վ, բայց ուրիշ փորձ մ'էլ կարելի է։

— Ի՞նչ, զրուցե։

— Դու ըսիր, թե վարժ ես զինավարժության մեջ։

— Փորձը դյուրին է, ե՛կ ինձ հետ, այս սենյակը մտնենք։ Տղաք, լուսավորեցեք մարզարանը։

Քանի մը վայրկյան ետքը մտան ընդարձակ սենյակ մը, ուր պատերեն կախված էին շատ մը զենքեր. երկու գուլ և ծայրերը բութ սուրեր առավ Քահինա և տվավ մեկը Սուրենի. թաշկինակով աջ ստինքը վեր բարձրացուց կապեց և աջ բազկեն բեհեզյա շապկին թևը ամփոփեց և՝ սկսինք, ըսավ։

Սկսան հարվածները և սուր սուրի հետ վեգ գալ. Սուրեն առաջ կարծեց, թե տղու մը հետ գործ ուներ. և թույլ կը կենար, բայց քանի կ'երթար, կը համոզվեր, թե սովորական ախոյան չէր դիմացինը, և այնպիսի միջոցներ եղավ, որ սկսավ կասկածիլ, թե չպիտի կարենա գլուխ գալ կնոջ մը հետ, որ երբեմն նենգությամբ տեղի կուտար, կը քաշվեր և բուռն հարձակմունք իրարու վրա կը պնդեր և միշտ լավ զգուշանալով։ Սակայն Սուրեն սովորական զինաշարժ չէր, յուր ջղերը և մկանունքը հոգնիլ չէին գիտեր։ Երբ կես ժամու չափ տևեց այս մենամարտը, և տեսավ դիմացինը շնչասպառ ու քրտինքը, որ ջուրի պես

կը վազեր, և տեղի չէր տար, հասկցավ, որ արհեստին չէր պակասութիւնը։

— Ճանչցանք զիրար, իշխանուհի,— ըսավ,— ապրիս, այսչափս բավական է,— և սուրը նետեց։

— Չիս կը խնայե՞ս,— ըսավ Քահինա նույնպես սուրը գետին նետելով։

— Ոչ,— պատասխանեց Սուրեն,— պետք է խոստովանեմ, թե իմ ցեղիս մեջ, ուր ժառանգական է զինաշարժութիւնը, շատ քիչ կը գտնվի մեկը, որ զիս այսչափ հոգնեցնե։ Ապրի՛ս, լավ պատերազմող ես դու։ Միայն թե...

— Շարունակե՛, ինչո՞ւ կեցար, մենք բարեկամներ ենք, ըսինք, տո՛ւր ձեռքդդ, համարձակ եղիր ինձ հետ։

— Կ'ուզեի ըսել պետք է միշտ վարժություն ընես չհոգնելու համար։

— Ես ամեն օր վարժություն կ'ընեմ։ Այս պատանիքը և երիտասարդը միայն զվարճությանս համար չեմ պահեր, այլ իրենց մարզարանն է այս սենյակը. վա՛յ անոր, որ իր մարզից մեջ թույլ գտնվի, նայե՛, տե՛ս սա խարազանները զենքերու քով կախված, առանց արյամբ ներկվելու տեղերնին չեն դառնար։ Այս գիշեր ես համարձակություն առնելու համար գինվույն չափն անցուցի, բարեկամ, իմ հևալս ու քրտինքս նորա հետևանքն է... Դառնանք սեղանատուն։

Զարմանքով կը նկատեր Սուրեն այս կինը, որ Մեսսալին չէր այլևս իրեն համար, այլ Զենոբիա մի էր, ո՞ գիտե, թե նորա սերունդներեն չէր, վասնզի վերջը պատմությունը զինք պիտի հիշեր դյուցազնուհի անվամբ, երբ դա՝ այդ կինը մահմեդականությունը Ափրիկեի մեջ, Կարքեդոնի ափանց վրա վայրկյան մը պիտի սարսեցներ և ընկրկեր։

— Հիմա,— կ'ըսեր Քահինա,— հայտնեմ քեզ իմ միտքս։— Այս հունաց կայսրերը այնպիսի վատ եղան, որ իրենց հնազանդիլ նախատինք է մարդու. ուստի ես որոշած եմ խումբ մը ընտիր զորք կազմել, շատ չէ, հազար հոգվո, ելնել Ափրիկեի այն կողմերը, ուր լսած եմ, թե նոցա կարողությունը տկարացյալ է, և ժողովուրդը դժգոհ, հոն խառն գոթացի, հույն, հին փյունիկեցի ազգություն մը կա, իմ լեռնականոքս ես դյուրությամբ կը տիրեմ երկրի մը, ուր ժամանակով իմ ազգես կին մը գնացեր և մեծ, զորավոր տերություն մը հաստատեր է, և այդ բանին համար սկսած եմ աշխատիլ. արդեն ունիմ հինգ-վեց հարյուր երիտասարդ, որ զիս կը սիրեն և կը պաշտեն, չորս-հինգ հարյուր մ'էլ կը հասցնեմ, բավական է։ Մնաք բարով կ'ըսեմ այս ափանց և կ'երթամ։

Բայց աս հիմար ժողովուրդն բոլոր խորհուրդներս կ'ապականե, ես անունով իշխանուհի եմ, իրենց բուն իշխանքն այդ եպիսկոպոսները, այդ ծերերն են։ Երևակայե՛, որ անցյալ օր կայսրը հրովարտակ մը ղրրկեր էր. չեմ հասկնար, հասկնալու էլ միտք չունիմ, հավատա խնդիր մը վերջապես, զոր Թիփա կ'անվանեն և այս ընդունեցեք կ'ըսեն. ես կը հավատամ, թե հիմար մի է ղրկողը, բայց տասն անգամ ավելի հիմա՞ր չեն այս մեր կրոնականք, որ «կը մեռնինք, այդ հերետիկոսություն է, չենք ընդունիր», պատասխանեցին։ Ինձ հասկցնել ուզեցին այնպիսի վերացյալ բաներ, որ խելքս պղտորեցավ։ Իրենց ըսի, թե մենք հազիվ կրնանք մահմեդականաց դեմ այս լեռները պաշտպանել, հույնք էլ ետևնուս մեր վրա եթե ընկնին, մեր վիճակն ի՞նչ կը դառնա։ Դարձյալ՝ «կը մեռնինք, չենք կրնար ընդունիլ»,— ըսին։ «Մեռնե՛ք, քարը գլուխնիդ»,— ըսի ես էլ մտքես, երեսնուն «շատ լավ կրնեք» պատասխանեցի։ Ուղածնին գրեցի, ղրկեցին Պոլիս, միտքս դրի, թե մինչև կայսրը յուր սպառնալիքը կատարե, տարի մը կանցնե, ես իմ գունդս կը պատրաստեմ և կ'երթամ, իրենք էլ կ'ուզե՛ն մեռնին, կ'ուզեն՝ սատկին։ Բայց հիմա դու մեջտեղ ելար, թե որ կ'ուզես հոս մնալ ասոնց իշխան դինիլ, ես քեզ չեմ արգիլեր. բայց ինձ տարի մը ժամանակ պետք է, ես իմ ազատությունս չեմ ուզեր ծախել երկրորդ ամուսնությամբ։ Կարելի՞ չէ՞ որ խաղաղությամբ տասը-տասներկու ամիս իրարու խոսք հասկնանք, վերջը դու քու ճամփադ երթաս, ես՝ իմս։

— Ես նաև ուխտ ըրած եմ չամուսնանալ, ուրեմն զիս թո՛ղ, ես կ'երթամ, և դու կ'ազատիս։

— Ես քեզ կը թողում, բայց այդ անպիտան եպիսկոպոսը և յուր բոլոր խորհրդակիցքը երկիրը լրտեսներով լցուցեր են, այնպես որ քայլ մը առնուլ անկարելի է առանց յուրյանց գիտությամբ, կիրճերուն պահապանք իրենց մարդիկն են, միայն իմ հրամանավ անցնիլ կարելի չէ. իսկ քեզի համար անշուշտ զգուշություն կան և մասնավոր հրամանք տրված են։ Ես նաև բանտյալ մի եմ, բավական չէ, որ ես ուր երթամ, կ'իմանան, կ'ուզեն նաև, որ աղախիններով լեցնեմ այս իմ պալատս, բայց ես ծառայող կանանց հետ այնպես վարվեցա, որ մեկը չդիմացավ, գնաց։ Մեկ քանի հատ որ կան, նոքա էլ իմ անձես հեռու և անարգ պաշտոններու կը գործածեմ, վասնզի այս լեռանց կանայք ամենն ալ գերի են եկեղեցականաց։

— Քեզ չեն կրնա՞ր թունավորել։

— Եթե ես քույր մը, ժառանգ մը, մերձավոր ազգական մը ունենայի, դյուրին էր, բայց ոչ ոք չի կա. իրենք զիս կ'ուզեն ամուսնացնել, որպեսզի զիս մեջտեղեն վերցնեն, երբ ժառանգ մը ունենամ, ես այս էրկանս մահվանեն վերջը իմացա։

— Բայց դու ի՞նչ ըրած ես իրենց այս ատելության արժանանալու համար։

— Իրենք կ'ուզեն, որ ես ուրիշ կանանց պես իրենց ամեն ըրածին հավնիմ, իրենց ամենախոնարհ աղախինն լինիմ, իրենց սուտ հրաշքներուն հավատամ, իրենց համար մեծածախ եկեղեցիք, վանքեր, առաջնորդական պալատներ շինեմ, իմ հայրենական գանձս վատնեմ բոլորովին։ Վերջապես ինձ ձանձրալի ըրին այս լեռները, սոցա մեծ և իշխող մասը օտար են. մենք առաջ խաղաղությամբ կապրեինք, հյուրասիրության պարտքն է, որ կը քաշենք, վասնզի քահանա և ժողովուրդ մահմեդականաց փախստականք են, որ մեր լեռներն ընդունած ենք։

— Ունի՞ս եկեղեցական հավատարիմ բարեկամ մը։

— Իմ հորս բարեկամ ավագերեց մի կա այստեղ՝ պատվական ծեր մը. նա միայն ես կը հարգեմ, և նա զիս կը սիրե, վաղն առավոտ ինք կուգա, իրեն խորհուրդ պետք է հարցնեմ։

— Եթե այդպիսի բարեկամ ունիս, նա կրնա մեր վրա հանգուցելոց ավետարան մը կարդալ և ժողովրդյան կարծեցնել, թե պսակի արարողությունն է, որ կատարվեցավ։

— Ես նաև այդ կարծիքեն եմ, այդ ծերը խելոք մարդ է, բան մը կը հարմարեցնե մեզ համար։ Ես շատ գոհ եղա, իշխան, որ քեզ պես անձ մը աստված ինձ ուղարկեց. առաջին ակնարկես իմացա, որ մարդու հետ գործ ունիմ, և ահա կը տեսնեմ, թե չի խաբվեցա։ Իրարու կ'օգնենք, կը պատրաստվինք, և երբ ժամանակը գա, կ'երթանք մեր նպատակին։ Ես բոլոր իմ գաղտնիքս քեզ հայտնեցի իբրև հին բարեկամի. իմ կենացս անառակ և լուրջ կողմը ցույց տվի. եթե ունիս դու հայտնելու բան մը, վստահացիր և ապահով եղիր. եթե պետք ունիս դու ստակի, զենքի, սպասավորի, մի քաշվիր. ի՞նչ որ կրնամ, կը ջանամ ընել։

— Շատ շնորհակալ եմ, բանի մը պետք չունիմ։ Միայն քու մեկ օրինակիդ հետևելու փափագ կ'զգամ, փոքրիկ գունդ մը կազմելու, բայց դժվարությունը հոն է, որ իմ ազգես մարդ չունիմ։

— Ի՞նչ ազգե ես դու։

— Հայ եմ։

— Հա՜յ... լսած եմ, թե հոս Գերմանիկ հայեր կան... Բայց քեզ խորհուրդ չեմ տալ օտարներ բերել այս լեռներուն մեջ, և կասկածելի երևալ մեր մարդկանց. ավելի լավ՝ իմ օրինակիս հետևե, այս տղաքը, որ կը տեսնես, կեսն արծաթագին ստրուկներ են, արաբաց որդիք, և մնացածն որբ տղայք, որ հայր, մայր, ազգական և բան մը չունենալով աշխարհքիս վրա, կամա-ակամա, հոգվով մարմնով ինձ անձնվեր էակներ են. գիտեն, որ ուրիշե հույս չի կա, ես եմ, որ կը պատժեմ, ես, որ կը վարձատրեմ։ Երբ փոքրիկ տկարություն մը, հիվանդություն մը կ'ունենամ, տեսնելու բան է իրենց հուսակտուր տխրությունը, և նոքա նաև որ օրերով երեսի վրա պառկած, չեն կրնար շարժիլ խարազանի հարվածներու սաստկութենեն և վերքերեն, կը հարցնեն անձկությամբ, թե «Տիրուհին ինչպե՞ս է»։

— Այդ խորհուրդը լավ է,— պատասխանեց Սուրեն մտածելով։

— Եթե մեր ամուսնության կատակերգությունը կատարենք, դու, իշխան, կրնաս քեզի համար առանձին ամրոց մը ունենալ Գերմանիկի մոտ, պատրաստել մարզել քու գունդդ ինչպես կուզես, և երբ ամեն բան կարգին գտնվի, ոչ իբր փախստական, այլ իբր իշխան և իշխանուհի յուրաքանչյուր ոք մեր ճամփան բռնենք։ Ես իմ նավերս կ'երթամ, դու էլ քու հայրենիքդ։ Ի՞նչ հարկ կա արտորալու և վտանգի դնելու քու անձդ։

Կեսգիշերն անց էր, երբ Սուրեն բարի գիշեր մաղթեց Քահինայի և գնաց յուր սենյակը, խորհրդածելով այդ նորանշան կնոջ և յուր հետևելու ճամփուն վրա։

Գրեթե տարի մը անցուց Սուրեն այդ լեռները, մահմեդականաց դեմ կատաղի պատերազմներ վարելով մեծին և փոքրին սիրելի եղավ, երեք հարյուրի չափ ձիավորաց ընտիր խումբ մը կազմեց սեփական յուր անձին։ Քահինա, որ շատ անգամ իրեն կ'ընկերանար պատերազմաց մեջ, ամեն վտանգ արհամարհելով, յուր երիտասարդ գնդին հետ վերջապես լեռնականաց համակրությունը և համարմունքն ստացավ, այլ ոչ երբեք գոհ եղավ իրենցմե, և այն օրը, որ Սուրեն դեպի Փոքր Հայոց կողմն ճամփա ելավ իր փոքր գնդով, Քահինա ևս իջավ Սկանդարուն յուր հազարաց ընտիր գնդով և գանձերով ու մտավ վարձված տասը նավեր, երկրորդ Դիդե՝ երթալով Կարքեդոնի ափունքը, ուր յուր բարեկամությունը և դաշնակցությունը պիտի խնդրեին Բյուզանդական կայսրության վերջին զորությունք։

Սուրեն Գերմանիկ հասավ առանց դիմադրության. մտավ Փոքր Ասիա, և երկրին վիճակին վրա նայելով կատարյալ անիշխանություն մը տեսավ, որ կը տիրեր։ Իբրև թե Հունաց կայսրության մեկ գավառն էր, բայց իրոք ոչ Հունաց, ոչ արաբաց կը վերաբերեր. ուստի նստավ Արապիսուս և սկսավ իր գունդը մեծցնել, կանոնավոր զորաժողով շինելով ի Հայոց։ Խիստ ընտրությամբ՝ շատերուն միայն երեսը և աչքին մեջ նայելով անդարձ կը մերժեր. կորովի, առողջ երիտասարդք էին ընդունյալ, շարունակ օրը հինգ-վեց ժամ կրթություն սովորական բան էր իրենց համար. ամենափոքր զանցառություն հրամայալ օրինաց կամ անիրավություն խստիվ կը պատժվեր, մաքուր և սննդարար էր իրենց ուտելիքը, իրենց զգեստներն ու զենքերն ընտիր։ Իրենց ռոճիկն ավելի էր Հունաց և արաբաց տրված ռոճիկեն, ավարին կեսն իրենց պիտի բաժնվեր արդարությամբ, կեսը զորավարին։ Պատերազմե փախչողի պատիժը մահ էր։

Արապիսուսի հույն իշխանը վախեն լավ ընդունելություն ըրավ Սուրենի և գաղտնի իմացուց Կեսարիո կուսակալին այսպիսի կասկածելի հյուրի մը ներկայությունը, որ առանց վնաս տալու արդեն զորավոր գունդ մը ավելի ևս կը զորացներ, թեև ամենեին բռնություն մը չէր տեսնված ոչ իր, ոչ իր զորաց կողմանե։ Կ'իմացներ նաև, որ յուր հյուրը միտք ուներ քանի մը օրեն Մալաթիո ճամփեն երթալ Հայաստան։

Կեսարիո կուսակալ Վասակ անուն հայ իշխան մի էր, և այնպիսի վտանգավոր դիրքի մը մեջ կը գտնվեր նույն միջոցին, որ այս լուրը լսելուն՝ շուտ մը բարելավման հրավեր գրեց Սուրենի, որ յուր գունդն առնու և գա Կեսաբիա, երդմամբ ապահովցնելով զինք ամեն կերպով գոհ ընելու։ Սուրեն ընդունեցավ հրավերը և երբ հասավ Կեսարիա՝ զարմացավ, որ Վասակ անձամբ հեծելոց փոքր գնդով կուգար զինք դիմավորելու. և երբ մոտեցավ, իջավ ձիեն և պագտվելով իբր հին բարեկամ՝

— Եղբայր,— կ'ըսեր,— ինչչափ ժամանակ է, որ քեզի կսպասեմ. Թեոդորոս Ռշտունի քանի՛ նամակավ է, որ զքեզ կը հիշե, Կամսարական եղբարքդ զքեզ կը հարցնեն, քեռորդի մը ունիս եղեր Մամիկոնյան, նա ողջ-առողջ հասեր է հայրենիք, զքեզ մեռած կը համարին, և ես ուրախ եմ, որ ոչ միայն ողջ-առողջ զքեզ կը տեսնեմ, այլև լավ գնդի

մը զորագլուխ։ Շատ լավ ըրիր, որ իմ հրավերս ընդունեցար և Հայաստան չգնացիր։ Երթանք, ցցնեմ քեզ նամակներ։

— Բայց ես հայրենյաց վրա լուր մը չունիմ, առաջին անգամ է, որ հինգ տարի ժամանակե վերջ, ինձի ծանոթ և սիրելի անուններ տվող հայ իշխան մը կը տեսնեմ,— պատասխանեց Սուրեն,— պատմե՛ ուրեմն Հայաստանի վրա, ի՞նչ վիճակի մեջ է։

— Երթանք տուն, իշխան, հոն կը պատմեմ քեզ և կ'իմացնեմ վիճակը, ուր կը գտնվին բուն Հայաստան և մեր Փոքր Ասիո գավառը։

Հոն Վասակ, Կոստանդին կայսեր աթոռ նստելեն ի վեր ամեն անգթությունքը, հիմարությունքը սկսավ պատմել Սուրենի, որ արդեն մեզ ծանոթ են, բայց երբ հասավ յուր հորեղբորը՝ Գևորգ Մագիստրոսի մահվան վրա, աչվները կատաղի փայլ մը առին և իմացուց նաև, թե ինք արդեն տաճկաց ամիրապետին հետ բանակցության մտած էր հունաց արքունիքը տապալելու համար։ Սկսավ համրել այդ հիմար ասսվածաբանական կատաղությանց արդյունքը, որ ամեն օր կրոնքի նորանոր փոփոխություն հնարելով՝ նոր հավատո հանգանակ ստեղծելով, դժգոհ վիճակի կը բերեր թե Կոստանդնուպոլսո ժողովուրդը, թե Իտալիո կողմերը, թե հայերը և թե մարտայիթները։ Եվ թե ինչպե՛ս հայք կայսեր առաջարկությունքը համարձակ մերժելուն համար, նա էլ Կոստանդնուպոլիս սկսեր էր պատերազմի պատրաստության, և որ ինք Վասակ իմացուցեր էր Թեոդորոս Ռշտունվո, և թե յուր որդին ղրկած էր առ նա դաշնադրություն մը կապելու համար միաբան գործելու, բայց հիմա կը տեղեկանար, թե կայսրը իմանալով խլրտմունքը՝ պատրաստի գտնված զորքով ուղղվեր էր Տրապզոն և իրեն նաև հրաման ղրկեր էր նույնպես զորքով Բարձր Հայք դիմել։

— Ուրեմն,— ըսավ Սուրեն,— ի՞նչ կեցեր ենք, պետք է ժամ առաջ երթանք, քանի որ կայսրը Կարին չէ հասեր։

— Այո՛,— պատասխանեց Վասակ,— բայց Մամիկոնյան. Մուշեղ միաբանություն կազմեր է ընդդեմ Թեոդորոսի, կաթողիկոսը և նախարարաց մեծ մասն էլ իրեն հետ համաձայն են, ինչպես ինձ կ'իմացնեն Մանանաղյաց գավառեն եկած նամակ մը. արդեն Եկեղյաց և Դարանաղյաց և Սպերո իշխանք սկսեր են ժողովվիլ իրենց զորքերով։

— Է՜հ, հիմարներ,— ըսավ Սուրեն,— միշտ միևնույն մարդիկն են, միշտ նախանձ, ատելություն։ Դժբախտություն հոն է, որ ոչ մեկը չի գտնվեցավ, որ ամենուն գլուխը միանգամայն կոտրե։

— Ի՞նչ կ'ըսես, եղբայր, երբ նոքա էլ վերնան, ի՞նչ կը մնա։ Համբերենք, այսօր-վաղը կուգա որդիս Տիգրան, նա արդեն Թեոդորոսի հետ տեսնված՝ մեզ ճիշտ տեղեկություն կը բերե։

Իրոք երկու օրեն եկավ Տիգրան՝ Վասակա որդին և պատմեց ամեն բան։ Նախ թե Դվին հասած ժամանակ գտեր էր ամիրապետին պատգամավորները, որ Թեոդորոսի և բոլոր հայ նախարարաց հետ դաշնադրություն կը կնքեին, ուստի ինք այդ տեսնելով, երբ Թեոդորոսի հետ առանձին խոսակցություն ունեցավ, նկատեց, որ նա գոհ չէր, թեպետ ամենեին բան մը չէր հայտներ. միայն նշանավոր խոսք մը զրուցեր էր. «Մենք կը խոստանանք, դաշինք կը կնքենք, բայց ոչ մեր խոստմունքը լուրջ է և ոչ դաշինքնիս ուղղություն ունի. տեսնենք, թե այս դաշանց ստորագրողներն ինչչա՞փ պիտի հարգեն իրենց խոստմունքը»։ Պատգամավորք դեռ Դվին էին, երբ լուր հասավ, թե կայսրը Տրապիզոն ելեր էր. Թեոդորոս ժողվեց զամենքը, հորդորեց միաբանել զորքը և ժամանակ չի թողել հարձակիլ հունաց վրա և դիմադրել, մինչև ամիրապետին զորքն օգնության հասնին։ Մուշեղ Մամիկոնյան և բոլոր արևմտյան նախարարք առաջինն եղան այս խորհրդին դիմադրելու, կայսեր զորությունն սկսան մեծցնել և ըսել, թե՝ «եթե մենք ամիրապետին հնազանդիլ խոստացանք, զմեզ պիտի պաշտպաներ ի կայսրե. կայսրը ահա հասավ, իսկ ամիրապետը դեռ Դամասկոս կը քնե. պատգամավորը ղրկելե դյուրին բան չի կա, մեզ զորք պետք է»։ Զարմանալի կը պատմեր այդ խիստ Թեոդորոսի համբերությունը, որ երբեմն քաղցրությամբ, երբեմն խստությամբ կ'ուզեր համոզել այդ մարդիկը, թե «Ստորագրյալ կնքյալ դաշնադրությանց դեմ կարելի չէ մեղանչել, անքավելի ոճիր է, և բարբարոս ավազակաց միայն կը վայելե»։ Բայց ամենքն անօգուտ ցրվեցան ըսելով. «Ամեն մարդ իր գլուխը միայն պարտավոր է փրկել այսպիսի պարագայի մեջ»։ Դարձյալ Թեոդորոս վերջին ճիգ մը թափեց, համոզեց արաբացի պատգամավորքը, որ ամիրապետին կողմեն երթան գտնեն կայսրը և զինք ջանան արգիլել մրտնելու Հայաստան։ Ուստի ես էլ իբրև անծանոթ այդ մարդկանց հետ ուղևորեցա Դերջան. հոն գտանք կայսրը և տեսանք, որ զորաց թիվը կ'ավելցներ։ Խրոխտ պատասխան տվավ պատգամավորաց. «Իմ աշխարհն է Հայաստան, կ'երթամ, ոչ ոք չի կրնար արգելուլ»։ Եվ կ'սպառնար հրով-սրով մաշել երկիրը։ Ահա վիճակը այսպես կը պատմեր Վասակա որդին։

— Հիմա, եղբայր,— ըսավ Վասակ Սուրենի,— լսեցիր պատմությունը. կարծեմ թե ամեն խելոք մարդ սպասելե զատ բան մը չի կրնար ընել։ Տեսնենք Թեոդորոս ի՞նչ պիտի ընե։

— Ի՞նչ կրնա ընել,— պատասխանեց Սուրեն,— երբ դավաճաններ չորս կողմը շրջապատեր են։

— Բայց դարձյալ,— ըսավ Տիգրան,— երբ ես Դվին էի և կայսեր գալստյան լուրն հասավ, և նախարարք ամենքը թողին ժողովն ու գնացին, Սյունյաց, Աղվանից և Վրաց նախարարաց հետ, որ միաբան մնացել էին իրեն, դիմադրություն որոշեց։ Անխռով և խրոխտ՝ իրենց հայտնեց, թե ինք միտք ուներ ամրանալու, ո՛ւր որ կրնար և դիմադրելու մինչև վերջին կետը, թողլով դաշտավայրը թշնամվույն. նույն խորհուրդը տվավ նաև յուր դաշնակցաց՝ հայտնելով, թե՝ «ա՛յդ Հունաց կայսրը երկար չէր կարող կենալ և պետք էր երթալ»։ Ուստի յուր օրինակին հետևեցան այդ երեք մեծ աշխարհաց նախարարքը։ Վահևունյաց Տերը յուր հրամանավ ամրացավ Արփայից բերդը. Վարազ Ներսեհ Դաշտակարի իշխանին հրամայեց առնուլ բոլոր աշխարհին, եկեղեցվույն, իշխանաց և վաճառականաց գանձերը և անմատույց լեռանց մեջ ամրանալ։ Իսկ ինք յուր զորքով անցավ Արածանի գետին ձախ կողմը և նստավ Աղիովիտ։ Յուր այս քաջասիրտ շարժմունքով Համազասպ Մամիկոնյան ևս եկավ իրեն միացավ. և ամեն օր զորաց կրթություն ընել կուտար յուր ներկայությամբ և այնպես զվարթ էր, որ ամենքը կը զարմանային։

— Ուրեմն,— ըսավ Վասակ Սուրենի,— մենք հոս այս աշունն ու ձմեռն կը պատրաստվինք, արաբաց օգնությամբ նաև կը զորանանք, և գարնան կը հարձակինք այդ Բյուզանդիո կայսեր վրա, վասնզի արդեն իմ չերթալովս յուր հրավերին, հայտնի է, թե որոշված վճռված բան մի է իր կողմեն, եթե իմ հորեղբայրս սպաննած օրեն այդ որոշմունքը չէր եղած։ Դու զորաժողով ելիր, ըրե՛ ինչ որ կրնաս այս երկրին մեջ, ամեն դյուրություն ես քեզ կուտամ, և ապահով եղիր, թե ամառը չի հասած՝ մեր բանակը կը միանա Թեոդորոսի բանակին հետ, և քու Հայաստան մտնելդ փառաց և հաղթանակի մուտք կը լինի։

— Եղբայր,— պատասխանեց Սուրեն,— ես ոչ փառք և ոչ հաղթանակ կը փնտրեմ, իմ փափագս թշվառ հայրենյաց օգտակար լինիլն է միայն և ցավով կը տեսնեմ, որ այդ անօրեն արաբաց օգնությունն ուղելու կը պարտավորինք ընդդեմ քրիստոնյա տերության։

— Ի՞նչ կարելի է ընել, երբ այդ քրիստոնյա տերությունն նույնպես անգութ, նույնպես բռնավոր է մեզ համար. Թեոդորոս Ռշտունի դավաճանությամբ շղթաներու մատնյալ, դարձյալ հավատարիմ կուզեր մնալ այդ քրիստոնյա տերության, հանկարծ ի՞նչ եղավ, որ ինձ կը գրե, թե՝ «վերջին յոթանասուն տարվան մեջ Բյուզանդական կայսրության դիվական խորհուրդները մեր ազգը ոչնչացնելու համար ինձ հայտնի եղան, երբ Թեոդորոս Երիզացին ինձ հաղորդեց Կարնո դիվանատան ամեն գաղտնի թղթակցությունք և հրամանագիրք. մեր նախարարաց անմիաբանությունք և վատությունք քիչ մը թեթևցան իմ աչքիս, վասնզի տեսա հայտնի, թե հունական ոսկին ի՞նչ մեծ դեր խաղացեր էր այդ անխելք ու կարճատես մարդիկը մոլորցնելու»։

Պատրաստությունքը շարունակեցան, և նույն միջոցին ինչ որ կ'անցներ Հայաստանը, Վասակ մանրամասն կ'իմանար։ Կայսրը Կարին հասած վայրկենին, հունաց զորավարք և հայոց իշխանք միաբան, Թեոդորոս Ռշտունի պատճառ ամեն չարյաց ամբաստանեցին. նա էր, որ Մարդոցեից պատերազմին մեջ պատճառ եղած էր հունաց պարտության, նա էր, որ զամենքը գրգռած էր հապստամբություն, նա էր, որ զամենքը վախցնելով պարտավորել էր արաբաց հետ դաշինք դնելու։

Հոն եկավ նաև Ներսես կաթողիկոս, Բագրատունի իշխանաց հետ՝ Տայոց գավառեն, ամրապնդելու համար այս ամբաստանությունը հունաց զորք վատության նախատինքն, հայոց իշխանք և կաթողիկոս ապստամբության հանցանքն արդարացան, և ամեն ինչ Ռշտունի զորավարին վերա բեռցնելով, նզովեցին և դատապարտեցին և ձգեցին զինք ամեն պատվո և իշխանութենե, և յուր փոխանակ իշխան մը ղրկեցին քառասուն հոգվով և կայսերական հրովարտակավ։ Իսկ Թեոդորոս բռնեց կապեց այդ մարդիկը և ղրկեց ոմանք կղզիները, ոմանք Բաղեշու բերդը։ Եվ Կոստանդին, իմանալով այս եղածները, կ'սպառնար ջնջել, ոչնչացնել բոլոր երկիրը։ Եվ Մուշեղ Մամիկոնյան, Ներսես կաթողիկոս և մյուս իշխանք գետնամած կ'աղաչեին, յուր բարկությունն իջեցնել կ'աշխատեին, մինչև տարին զինք Դվին և հոն կաթողիկոսական եկեղեցվույն մեջ, յուր եկեղեցիեն իբր հերետիկոս դատապարտյալ մարդուն ու քահանայից հետ հաղորդվեցան։ Իսկ զորքը ցրվեցավ Վրաց, Սյունյաց և Աղվանից երկրները, ավերեցին ո՞ւր որ կրցան, բայց Սյունիք և Աղվանք չխոնարհեցան այդ կայսեր առջև։

Երբ լուր հասավ կայսեր դեռ գարուն չեկած, թե Վասակ պատրիկ՝ կուսակալ Փոքր Հայոց ապստամբեցավ, և թե Կոստանդնուպոլիս նաև ապստամբության ցույցեր կան, առավ զորաց մեծ մասը, դիմեց Կապադովկիա Վասակի վրան։ Բայց հաղթվեցավ չարաչար և դարձավ գնաց Կոստանդնուպոլիս կոչակոր, շփոթված և հուսահատ. և հոն նոր անգթությամբք ավելի ատելի եղավ ամենուն։

Իսկ կաթողիկոսը Թեոդորոսի երկյուղեն Տայոց գավառը փախավ հունաց զորաց հետ, բայց նոքա ևս չկրցան դիմանալ, վասնզի հայոց զորավարը հասավ ետևնուն, հալածեց զիրենք անտից։ Եվ խմբվեցան բոլոր հունաց զորքերը Կարին. Մավրիանոս իրենց սպարապետը մեծ պատրաստությամբ կ'սպասեր և կ'ուշացներ պատերազմի գործը, որպեսզի յուր ցրվյալ զորքը ժողվե, ինչպես Թեոդորոս կ'սպասեր հայոց նախարարաց, որ մեկ կողմե կը հասնեին, ոմանք համոզված, թե իրենք իրենց վրա պետք էին հուսալ, ոմանք ակամա և ի հունաց հույսերնին կտրելով, ոմանք նաև տեսնելով, թե ամիրապետը Թեոդորոսի յոթ հազար հոգվո գունդ մը օգնության ղրկել էր։

ԳԼՈՒԽ ԻԹ

Կարնո դաշտը պատերազմի ասպարեզն էր, ուր երկու բանակ իրարու դեմ կանգնած՝ զիրար կը դիտեին օրերով։ Թեոդորոս իմանալով, թե իրեն օգնության կուգար տարոնացի մեծ խմբով Համազասպ Մամիկոնյան՝ գիշերով անցավ Եփրատ և բանակեցավ Կարնո քաղաքի հարավային բլրոց վրա, հույս ուներ նաև այդ դիրքով արգիլել թշնամվույն հասնելուն ո՛ևէ օգնություն, որ կրնար գալ արևմուտքե։ Մավրիանոս այս շարժմունքին կարևորությունն ուշ իմացավ. ուստի պատերազմը ուզեց գրգռել, վասնզի օրավուր կը տեսներ, որ հայոց բանակը կը զորանար, և իրեն նոր օգնություն չէր հասներ։ Բայց Թեոդորոս բացեիբաց մերժեց պատերազմը, և բավականացավ յուր բանակն ամրացնելով։ Գիտենալով, որ հունաց մեծ ուժը իրենց հետևակազորին վրա է, կը ցրվեր յուր հեծելոց խումբը դաշտին վրա, արգիլելով իրենց հասնել պաշար, պարեն և ճարակ անասնոց։ Մեծ հույսով կ'սպասեր նաև Փոքր Հայոց Վասակա և Սուրենի օգնության. ուստի պատերազմն ամենևին վտանգի դնելու հույս չուներ, թեպետ ոմանք նախարարք հայոց սկսան

գանգտիլ այս դանդաղության վրա։ Իսկ երբ հասավ Համազասպ, այն ատեն որոշեց պատերազմը, և առավոտուն, երբ փողերը պիտի հնչեցնեին, ահա երկու հազար Ռշտունյաց նոր գնդով կը հասներ Գրիգոր Մամիկոնյան, և այդպիսի վայրկենի եկած փոքր օգնությունը նաև հաջողության նշան համարվեցավ բանակին մեջ։

Մավրիանոս այն ժամանակի հույն զորավարաց առաջինը կը համարվեր յուր փորձառու հմտությամբ և հանդգնությամբ. ուստի պատերազմը համառ և արյունռուշտ եղավ, և մինչդեռ հայ նախարարաց հանդգնությունը, որ թշնամվույն աջ թևը հալածելու համար, իրենց կեդրոնեն հեռանալով վտանգի մեջ դրին հաղթությունը, և այս դեպքը Թեոդորոսի մեծ տագնապ կը բերեր, և Գրիգորի նորահաս ու հոգնած ռշտունականք հազիվ թե կը տոկային հունաց հարձակմանց դիմադրելու և կարկամյալ մնացեր էին՝ չի կրնալով վանել, ահա Եփրատա ափունքն ի վեր փոշի մ'է երևցավ. հազարի չափ ձիավորաց խումբ մը կը հասներ սուրալով, գոռալով, իրենց նշաններեն և դրոշակներեն իմացավ Թեոդորոս, թե Սուրենի խումբն էր, ուստի ըսավ Գրիգորի խումբին. «Ձեր հաղթությունը հափշտակելու համար գունդ կը հասնի, տղա՛ք, և դուք կը դանդաղի՞ք»։ Այս համառոտ խոսքերն ահագին ձայնիվ զրուցված և լսված ամենեն՝ կատաղությամբ լցուց զորքը, հույնք սկսան ընկերկիլ։ Իսկ երբ Սուրենի մոլեկան գունդն հասավ՝ բոլորովին խորտակեցան, խառնիխուռն փախան քաղաք. հազիվ հունաց քառորդ մասը կրցավ ազատիլ, մեծ մասը սրո ճարակ եղավ, և շատ քիչեր գերի ինկան։

Հաղթությունը մեծ էր, թշնամյաց բանակը ոչնչացեր էր և յուր մնացորդքը Կարնո հզոր պարիսպներու շնորհիվք կը մնար, ամենքը հաղթությամբ արբեր էին, ուրախության երգեր, սրինգ և տավիղ երկինք կը բարձրանային, մեծ և փոքր, զորապետ և զինվոր, Հայաստանի հյուսիսն և հարավը, արևելք և արևմուտք և մինչև Փոքր Հայոց բնակիչք ներկա էին, և զիրար կը տեսնեին օտարին դեմ, հարստահարողին դեմ, կրոնից և խղճմտանքի բռնաբարողին դեմ միաբան։ Հոն՝ տարիներով բաժանյալ ծանոթք, բարեկամք և մերձավորք իրարու հանդիպած, իրարու հետ գրկախառնյալ, հին ատելություններ կը մոռնային, սերը կը նորոգեին, եղբայրություն կը հաստատեին. ամեն մարդ գոհ էր և զվարթ։ Միայն մարդ մը անթափանց ամեն ուրախության, թշնամի արյամբ ներկված, քրտինքը ճակատը, փոշիով ծածկված, դեռ ձիեն

չէր իջած. ամեն կողմ կը դիմեր, մեռելները թաղման կը պատրաստեր, վիրավորները գյուղերը բաժնել կուտար և բանակին՝ պահապանաց խումբեր կը որոշեր։ Այդ մարդը Թեոդորոս Ռշտունին էր։

Կեսգիշերվան մոտ էր, երբ հասավ Վասակ պատրիկ փոքր, բայց ընտիր բանակավ, ճիշտ այն ժամուն, որ հայոց իշխանք և զորավարք հունաց սպարապետին վրանին մեջ պիտի ընթրեին։ Մեծ ուրախություն էր տեսնել հոն, հայոց պատմական ճոխ և փառավոր անուններ կրողները սեղանի մը շուրջ միացած եղբայրաբար. հոն էին Բագրատունիք և Արծրունիք, Սյունիք և Մամիկոնյանք, Կամսարականք և Ռշտունիք, Աղվանք, Խորխորունիք, Ամատունիք, Վահևունիք, Առավեղյանք, վերջապես ամեն անունք, որ քանի մը ամիս առաջ Թեոդորոսի ամբաստանող և զրպարտիչ նաև լինիլ չէին դանդաղեր, և անոնք, որ իրեն հետ միաբան բյուզանդացի կայսեր դեմ խիզախեր էին։ Նա ամենուն քաջությունը գովեց, ամենուն սիրալիր կերպարանք ցցուց, ամենուն եղբոր կամ որդվո քաղցր անուն տվավ. բայց դարձյալ ուրախ չէր, այնչափ տարվան ջանք, բանագնացություն, դաշնադրություն ընդունայն գնացած զինք լավ համոզած էին, թե այդ մարդիկը զորության, լուծի և անձնական ողորմելի շահու առջև միայն կը խոնարհեին, հայրենասիրության, կրոնասիրության սկզբունք արմատ չունեին իրենց սրտին մեջ։

Սուրեն և Գրիգոր նույն օրը պատերազմի դաշտին մեջ զբաղյալ՝ իրար տեսնելու համար ժամանակ չէին ունեցեր, հիմա իրարու քով նստած անցյալ ավուրց թշվառ արկածներու վրա կը խոսեին, և Սուրեն, տեսնելով Գրիգորի ուրախությունը, կը զվարթանար, վասնզի այդ երիտասարդը, որուն բնական սրամտությունը, կորովը զինք գերազանց կ'ընեին յուր ընկերակցաց մեջ, ազնիվ հոգի նաև ուներ և կը հիշեր յուր քեռվույն անմոռանալի երախտիքը։ Հոն՝ Կամսարական ցեղին մեծ ուրախություն էր տեսնել ոչ միայն իրենց եղբայրը, քեռորդին ողջ-առողջ գտնել, այլև զարմանքով կը տեսնեին, որ երկուքն էլ տարիներով մեռած համարվելե վերջ՝ հիմա փառազարդ ճակատ մը կը ցցնեին, վասնզի Վասակ պատրիկ Սուրենի քաջությունը կը գովեր և Թեոդորոս զԳրիգոր բարի օրինակ հայ երիտասարդության ցույց կուտար յուր քաջության հավասար իմաստության և գիտության համար։

Իսկ երբ ընթրիքը վերջացավ, Թեոդորոս ժողվեց նախարարաց գլխավորքը, հարցուց իրենց կարծիքը, և վերջապես միաբան միախորհուրդ որոշվեցավ թողուլ Կարնո մոտ քանի մը հազար զորաց խումբ

մը և հարձակիլ Պոնտոսի կողմն հունաբնակ գավառաց վրա։ Եվ ահա այդ հաղթող բանակը կը շարժեր, կ'իջներ Բարձր Հայոց գավառներեն, կը զարներ, կ'ավարեր, բոլոր ծովեզերը կ'առնուր ինչպես և Տրապիզոն քաղաքը, և կը դառնար մեծ ավարով և դերությամբ։

Թեոդորոս արաբացի խումբը ընծայուք լի կը դարձներ առ ամիրապետն և ինք հրավիրված կերթար Դամասկոս։ Մավիաս մեծարեց զինքն «Ոսկեթել և ոսկեղեն ընծայուք և դրոշակոք», տվավ իշխանություն Հայոց, Վրաց և Աղվանից և մինչև Ճորա պահակին վրա։

Գարնան գեղեցիկ օրերով Ռշտունյաց Ոստանը մեծ հանդես էր կրկին հարսանյաց Գրիգոր Մամիկոնյանի Ռշտունյաց Օրիորդին հետ՝ և Վարդի՝ Սյունյաց Օրիորդին հետ։ Վասպուրական և բոլոր Հայաստան երջանիկ օրվան արշալույս մը հասած կը կարծեին, վասնզի միաբանություն կը տիրեր հայ նախարարաց մեջ, և այնպես կը համարվեր, թե թշնամի չի կար, որ համարձակեր ոտնակոխ ընել հայուն հայրենիքը։

Բայց երբ հաստատ օրինաց և սահմանափակ իշխանությանց վրա չէ ամրապնդյալ երկրի մը վիճակը, ոչ երբեք երջանկության պետք է սպասել. դիպված մը, պարադա մը, արկած մը, որ ոմանք բախտ անվանած են, ամեն բան վեր ի վար կրնա ընել և ամեն հույս և ջանք ի դերև հանել։

Այսպես եղավ նաև Թեոդորոսի ծանր և երկար հիվանդությամբ։

Ինք ժողվեց հայ նախարարքը, դրավ իրենց առաջ երկրին վիճակը և երկու մեծ տերությանց՝ հունաց և արաբաց տկար ու զորավոր կողմերը, հայտնեց, թե ոչինչ կը համարեր ամիրապետին իրեն տված իշխանությունը և ամենևին գոհ չէր, թե ինք ավելի սիրով հանձն կ'առնուր հնազանդիլ ազգային իշխանության մը, զոր նախարարք իրենց ազատ կամոք ընտրեին, միայն թե այդ իշխանության սահման մը և չափ կը փափագեր, որպեսզի զեղծմանց չհանդիպեր և որպեսզի իմանան, թե ինք իշխանության աչք չուներ՝ երդում ըրավ, թե իրեն տրված ոիցե ձայն ինք պիտի չընդուներ։ Այս խոսքերն ըսելով թողուց ժողովքը և Խլաթա նավահանգստեն նավ մտավ և ելավ Աղթամարա կղզվույն պալատը, վասնզի սաստիկ հիվանդ կը գտներ ինքզինքը։

Ի՞նչ ըրին հայ նախարարք, մենք չենք ուզեր դատել, այլ ահա մեջտեղ կը դնենք ժամանակակից պատմագրի մը խոսքերը, և ընթերցողք թող դատեն։

«Իսկ իշխանքն Հայոց, որ ի Յունաց և ի Տաճկաց կողմանէ, Համազասպ և Մուշեղ, և այլն ամենայն եկեալ ի մի վայր միաբանեցան, և արարին ընդ միմեանս հաշտութիւն, զի մի եղիցի ի մէջ նոցա սուր և արիւնհեղութիւն, և անցուցին խաղաղութեամբ զաւուրս ձմերայնոյն,

զի և զշինականսն ապրեցուցանեն։ Քանզի Ռշտունեաց Տէրն անկաւ յախտս հիւանդութեան և չոքաւ անկաւ յԱղթամար կղզին։ Եւ ոչ գոյր նմա լինիլ կարողութիւն ելանել արտաքս կամ խորհիլ ինչ, և բաժանեցին զերկիրն ըստ թուոյ իւրաքանչիւր հեծելոց և կարգեցին հարկապահանջս ոսկւոյ և արծաթոյ։

Եւ աստ էր տեսանել զաղէտս տարակուսի, զօրէն հիւանդաց յորժամ տագնապեսցին ցաւն և հատանիցէ ի խօսից, այնպէս ինչ եղեն, զի ոչ գոյր մարդկան տեղի փախուստի և թաքստեան և ոչ խնայել ի ներքուստ, այլ որպէս ոք զի անկցի ի ծով և ոչ կարիցէ գտանել։

Եւ իբրև ետես զայս Ռշտունեաց Տէրն՝ խնդրեաց իւր զօրս յիսմայէլացւոց զի հարցէ զՀայն և հալածական արասցէ և զՎիրս սատակեսցէ ի սուր սուսերի»։

Ոնէ հայու ծանր է կարդալ այս տողերը, ծանր էր նաև այն մարդուն, որ բոլոր կենաց մեջ աշխատեր էր Հայաստան հայով փրկելու և միաբանություն այդ բանին համար հաստատելու, տեսնել այդ միաբանությունն ի վնաս ժողովրդյան դառնալ, անտանելի հարստահարությանց գործիք լինիլ և երկրին կործանմունքը հայ ձեռքերէ տեսնել։ Ուստի հուսահատ՝ այն դեղին կը դիմեր, որ թույն էր և ոչ դեղթափ, այն երկաթին կը դիմեր, որ վիրաբույժի դանակին առողջությունը չէր կրնար բերել՝ այլ մահ։

Եկավ արաբացին, երբ միաբանությունը քակտեցավ, տիրեց երկրին և առավ պատանդ տարավ նախ զԹեոդորոս բոլոր յուր ընտանյոք և ամբողջ հայ նախարարության ծաղիկը ժողվեց իջեցուց ի Դամասկոս։

Զանցավ շատ ժամանակ՝ Ռշտունյաց երկիրը կը տանեին հայրենական շիրմաց մեջ դնելու այն մարդուն մարմինը, որ յոթանասուն երկայն տարիներու մեջ առաջին մարդն եղած էր աշխարհին, սիրած էր իր հայրենիքը, մորմոքեր էր յուր ազգին ցավոց և տառապանաց վրա, յուր կյանքը չէր խնայեր ոչ պատերազմի և ոչ խաղաղության մեջ, ամեն ջանք, ինչ որ մարդկորեն կարելի էր, աշխատեր էր ի գործ դնել և վերջապես տխուր, դառնացյալ, բայց ոչ երբեք հուսահատ եղել էր։ Յուր վերջին խոսքերը փեսին Գրիգորին ասոնք եղան. «Իմ երկիր կենացս մեջ, որդյակ իմ, վասնզի թշվառության և ձախորդության տարիներն երկայն են միշտ, միմիայն զեղջ և ապաշավ այն եղավ, որ իմ հայրենակցաց անիրավությունը պատուհասելու համար օտարին զենքը հրավիրեցի, չի կրցի նախատեսել, թե օտարին շահասեր բարերարությունը ընտանյաց անիրավութենեն վատ է, և դորա պատիժը ահա կը կրեմ օտարության մեջ վերջացնելով կյանքս։ Այո, արդար են աստուծո դատաստանները։ Դու՝ այնպես կը հավատամ, որ Հայաստանի կյանքին

մեջ պիտի իսառնվիս և պիտի գործես։ Հորդորե՛, խրատե ամենքն, որ եթե չեն կարող պատժել, համբերությամբ տանին իրարու պակասությանց, հանցանաց և եղեռանց անգամ, այլ անքավելի ոճիր համարին օտարը հրավիրել, օտարին հայրենի երկիրն ոտնակոխ ընել տալ»։

ԳԼՈՒԽ ՎԵՐՋԻՆ

Այդպես է անտառաց մեջ տերևներու սերունդը, և այդպես նաև մանկանացվացը։ Տերևներեն ոմանք՝ քամին գետին կը թափե, և ոմանք կանաչ անտառը կը բողբոջե՝ երբ գարնան եղանակը հասնի,— այդպես մարդկանց սերունդք երբեմն կը ծաղկին, երբեմն կը վերջանան։

ՀՈՄԵՐՈՍ

Թեոդորոսի հետ իջած պատանդներն ի Դամասկոս հաղար յոթ հարյուր յոթանասուն և հինգ հոգի, բոլորն էլ աղնվական, բոլորն նախարարական, երբ Մուշեղ և Համազասպ ապստամբեցան չի կրնալով դիմանալ մահմեդական բռնության, մեկ օրվան մեջ ջարդվեցան հԱսորիս։ Եվ ինքն Մուշեղ Թեոդորոսի պես վերջացուց իր կյանքը օտարության մեջ, գերության դառն հացն ուտելով, հարավի խորշակեն հալած, աչքերը հյուսիս դարձուցած՝ փրկության սպասելով, որ չէր հասներ։

Նախախնամության խրատներն էին սոքա, բայց դժբախտաբար անօգուտ անցան։ Մարդ եթե չի խրատվիր յուր հարց, յուր նախնյաց օրինակեն, չուսնիր նոցա պատմությունը, կ'ինկնի նույն սխալանաց մեջ, կը մատնվի նույն տառապանաց, նույն տանջանաց։ Մարդուս հատկությունը և հանասնոց տարբերությունը՝ ասուն լինիլը չէ, այլ անցյալեն խրատվելով՝ օրավուր կատարելագործվիլն է, որուն հառաջադիմություն ըսեր են։

Հայոց իշխեցողք նախարար, կաթողիկոս և իշխան շատ անգամ կը տեսնենք պատմության մեջ, մանավանդ այն ժամանակին պատմության և նորա շարունակության մեջ, ամուր և անառիկ դիրքերու վրա իրենց վանքեր, դղյակներ, բերդեր և ոստաններ կը շինեին, իրենց առանձին և անձնական պահպանության համար, ընդհանուրին մտածող շատ քիչ կը գտնվեր, եթե գտնվեր, այդ՝ ընդհանուրը ծառայեցնելու նպատակ միայն ուներ։

Ընդհանուրի համար եթե մտածեին, իրենց շենքերը թերևս զիրենք պահպանեին, բայց իրենք հասկնալ չուզելով այդ, փառավոր շենքերը՝

վանք, եկեղեցի և պալատ ավերակ, հափշտակություն, ախոռ սրբապիղծներու և անօրինաց կը տեսնենք։

Մամիկոնյան Գրիգորի շինությունքը Զաքարեի և Իվանեի ձեռոք նորոգյալ, դարձյալ կիսաքանդ տեսանք, որ ժողովուրդն ընկերությամբ կը շիներ և ավերակներուն մեջեն կը կենդանացնեք, և ինչ որ Գրիգոր չէր ըրած, այն կը հավելուր։ Ուսումնարան ի Հառիճ։

Ժողովրդյան միաբանական ոգի և ուսումնարան, այս երկու բան կարող են հայ ազգին կենդանության շունչ բերել։

Համերաշխություն (solidarité) բառին գաղափարը չի կար, նոր բառ է, հայ երիտասարդությունը մտուց այս բառը լեզվին մեջ, ուստի գաղափարն էլ մտած է. վասնզի կ'օգնե յուր ազգի երկրին հավատարիմ եղբարց, յուր քիչ գիտությունը կուտա ձրիաբար նոցա, որ ծարավի են ուսման, յուր լուման կուտա նոցա, որ նոթի են հացի։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Պատմական հիշողության արդիական իմաստավորումը
Հակոբ Մարգարյան 8
Թորոս Լևոնի 27
Երկունք թ դարու 233
Թեոդորոս Ռշտունի 443

ՀԱՅ ԴԱՍԱԿԱՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ
ՍԵՐԵՆՑ

(Հովսեփ Շիշմանյան)
Երկեր

ЦЕРЕНЦ
(Овсеп Шишманян)
Сочинения
(На армянском языке)
Издательство «Советакан грох»
Ереван, 1985

Խմբագիր՝ Ռ. Գ. Սարգսյան
Նկարիչ՝ Մ. Ռ. Սոսոյան
Գեղ. խմբագիր՝ Գ. Խ. Գյուլամիրյան
Տեխ. խմբագիր՝ Վ. Գ. Ավագյան
Վերստուգող սրբագրիչ՝ Ս. Մ. Բալաթյան

ИБ № *5151*

Հանձնված է շարվածքի 18. 06. 85։ Ստորագրված է տպագրության 25. 10. 85։ Ֆորմատ 60×84 1/16։ Թուղթ՝ տպագր. № 1։ Տառատեսակ՝ «Գրքի սովորական»։ Տպագրություն՝ բարձր։ 37,2 պայմ. տպ. մամ., 37,54 պայմ. ներկ. թերթ., 35,3 հրատ. մամ.։ Տպաքանակ՝ 51.000։ (1 թողարկում, 1—30.000)։ Պատվեր 2001։ Գինը՝ 3 ռ. 30 կոպ.

«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91։

Издательство «Советакан грох», Ереван-9, ул. Теряна, 91.

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի № 1 տպարան, Երևան, Ալավերդյան 65։

Типография № 1 Госкомитета по делам издательств, полиграфии и книжной торговли Арм. ССР, Ереван, ул. Алавердяна, 65.

«Հայ դասականների գրադարանով» լույս են տեսել հետևյալ հեղինակները՝

Ալեքսանդր Շիրվանզադե, Դերենիկ Դեմիրճյան, Նար-Դոս, Մուրացան, Երվանդ Օտյան, Հովհաննես Թումանյան, Հակոբ Պարոնյան, Ղազարոս Աղայան, Սիամանթո, Դանիել Վարուժան, Սմբատ Շահազիզ, Հովհաննես Հովհաննիսյան, Ալեքսանդր Ծատուրյան, Վահան Միրաքյան, Երուխան, Ռափայել Պատկանյան, Պետրոս Դուրյան, Ղևոնդ Ալիշան, Ռուբեն Որբերյան, Ռուբեն Սևակ, Վահան Թեքեյան, Մատթեոս Զարիֆյան, Թլկատինցի, Լևոն Բաշալյան, Առանձար, Հակոբ Հակոբյան, Շուշանիկ Կուրղինյան, Մովսես Արազի, Եղիշե Չարենց, Պերճ Պռոշյան, Գաբրիել Սունդուկյան, Տիգրան Կամսարական, Տիգրան Չյոկյուրյան, Խաչատուր Աբովյան, Միքայել Նալբանդյան: